



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

**Մատենաշար**

**Հայ-վրացական հարաբերություններ**

**Գիրք Ա**

**Լ. Մելիքսեթ-Բեկ: Վրաց աղբյուրները  
Հայաստանի և հայերի մասին**

**Քաղվածքները վրացերեն բնագրերից  
հայերեն թարգմանությամբ.  
ներածություն-ծանոթագրություններով  
և հավելվածով**

**Աշխատությունը հրատարակության է երաշխավորել  
հայագիտական հետազոտությունների ինստիտուտի  
գիտական խորհուրդը**

**Մատենաշարի հիմնադիր  
ԵՊՀ ՀՀԻ վրացագիտության հայկական կենտրոն**

**Խմբագրական խորհուրդ՝ Սիմոնյան Ա.Յ. (նախագահ),  
Բայրամյան Հ.Ս., Մաղալյան Վ.Ս., Հովհաննիսյան Մ.Ս.,  
Մարգարյան Հ.Գ., Չոբանյան Պ.Ա.**

**Կազմեց և հրատարակության պատրաստեց Հրաչիկ Բայրամյանը**

Հ 240 Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (մատենաշար )  
Լ. Մելիքսեթ-Բեկ: Կազմ. Հ.Բայրամյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2013.  
Գիրք Ա.- 788 էջ

**Լևոն Մելիքսեթ - Բեկ**

Նշանավոր պատմաբան, բանասեր, մատենագետ, հնագետ, կովկասագետ  
Լևոն Մելիքսեթ-Բեկի գիտական ժառանգությունը մեծ արժեք և արդիական նշանակություն ունի հայագիտության համար: Կարևոր նվաճումներից է նաև նրա «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» եռահատոր աշխատությունը, որոնցում վրացական աղբյուրներից քաղված բնագրերի թարգմանությունն ուղեկցվում է պատմաբանասիրական, աղբյուրագիտական, մատենագիտական ծանոթագրություններով ու բանիմաց մեկնաբանություններով:

Աշխատության վերահրատարակությունը կնպաստի հայագիտության, վրացագիտության ու կովկասագիտության ասպարեզում դեռևս անհրաժեշտ խորությամբ չուսումնասիրված և վիճահարույց բազմաթիվ հարցերի լուսաբանման աշխատանքներին:

Պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը 20-րդ դարի հայագիտության վաստակաշատ ներկայացուցիչներից է: Այսօր նույնիսկ մահից հիսուն տարի անց, նրա հարուստ, բազմազան ու բազմաժանր գիտական ժառանգությունը մեծ արժեք է հայագիտության, վրացագիտության, առհասարակ, կովկասագիտության համար:

Լևոն Մելիքսեթ-Բեկը հայկաբանական ուսումնասիրություններն սկսեց այն ժամանակ, երբ ականավոր գիտնականներ Նիկողայոս Մառը (1865 – 1934), Նիկողայոս Ադոնցը (1871 – 1942), Ներսես Ակինյանը (1883-1963), Հովսեփ Օրբելին (1887 – 1961) և անվանի շատ ուրիշներ իրենց հեղինակության ու գործունեության գագաթնակետին էին, այդուհանդերձ, Մելիքսեթ-Բեկը՝ որպես արմատական իմացության տեր, սկզբունքային ու անաչառ հետազոտող, կարողացավ իր խոսքն ասել այդ ոլորտում՝ ժամանակակիցների կողմից արժանանալով համընդհանուր գովեստի ու հարգանքի, և ուրույն ու պատվավոր տեղ զբաղեցրեց գիտության տվյալ բնագավառի պատմության անդաստանում:

Լևոն Մելիքսեթեկի Մելիքսեթ-Բեկը ծնվել է 1890 թվականի սեպտեմբերի 26-ին Թիֆլիսում, ծառայողի ընտանիքում: 1897-1899 թթ. Օ. Կ. Օրբելիանիի պանսիոնում նախնական կրթություն ստանալուց հետո 1899-1909 թթ. սովորել է տեղի ռեալական ուսումնարանում: 1906-ին ընտրվել է էսպերանտոսիստների համաշխարհային լիգայի կազմի մեջ: Բարձրագույն կրթությունն ստացել է 1909-1913 թթ. Օդեսայի (Նովոռոսիյսկ) համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, միաժամանակ հաճախել է նույն բուհի պատմաբանասիրական ֆակուլտետի դասընթացներին՝ ունկնդրելով ճանաչված գիտնականներ Ա. Ալմասովին, Ա. Շպակովին, Ա. Թոմսոնին, Մ. Պոպրովսկոյին, Է. Ֆոն-Շտերներին և այլոց: Նա իր ավարտական աշխատանքը՝ «Հայոց Ծայրագույն պատրիարքի իրավաբանական կացությունը» թեմայով (ռուսերեն. Օդեսա, 1911, 38 էջ), գրել է ժամանակից երկու տարի շուտ՝ արժանանալով ականավոր հայագետ Գարեգին Հովսեփյանի գովասանքին: Ուսումնառության տարիներին հատուկ հետաքրքրություն է ցուցաբերել հնագիտության նկատմամբ, այդ նպատակով շրջագայել է Հայաստանում, այցելել է Ռուսաստանի և Ուկրաինայի հայաբնակ վայրեր: 1914-ին ընտրվել է պատմութ-

յան և հնությունների Օդեսայի ընկերության թղթակից անդամ: Վերադառնալով Թիֆլիս՝ վարել է մի շարք պաշտոններ, այդ թվում՝ Հայոց ազգագրական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ քարտուղար, Մոսկովյան հնագիտական ընկերության կովկասյան բաժանմունքի իսկական անդամ, ապա՝ գիտական քարտուղար, 1913-1918 թթ. զբաղվել է նաև մանկավարժությամբ:

Թիֆլիսի նորաբաց (հունվար, 1918) համալսարանում հայագիտական առարկաներ դասավանդելու և հայագիտությունը զարգացնելու նպատակով բուհի ռեկտոր Իվանե Ջավախիշվիլին 1918 թ. սեպտեմբերին աշխատանքի է հրավիրել տակավին երիտասարդ, բայց արդեն գիտնականի համբավ վաստակած Մելիքսեթ-Բեկին:

1922 թ. նույն համալսարանում հիմնադրվել է հայագիտության ամբիոն, իսկ 1935 թ. ամբիոնին առընթեր՝ հայոց լեզվի և գրականության բաժին՝ ուսանողների ամենամյա ընդունելություն կատարելու իրավունքով: Շուրջ երեսուն տարի՝ մինչև իր մահը (1963 թ. սեպտեմբերի 3), պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը ղեկավարել է ամբիոնը, խոշոր դեր կատարել Վրաստանում հայագիտության զարգացման գործում, վրաց իրականության մեջ ընդլայնել է հայ-վրացական բանասիրության շրջանակները՝ նրանում խորացնելով պատմական թեմատիկան, ինչպես նաև զգալի ջանք է գործադրել հայ և վրացի գիտնականների միջև համագործակցության կապեր ստեղծելու և այն ամրապնդելու համար՝ միշտ և ամենուր «սերմանելով կենսունակ հունդեր...»:

Հայագիտական առարկաներից այստեղ դասավանդվում էին գրաբար, ժամանակակից հայոց լեզու, հայ գրականության պատմություն (հին, նոր և նորագույն շրջաններ), Հայաստանի պատմություն, հայ բանասիրություն, հայ բարբառագիտություն, ինչպես նաև՝ համեմատական քերականություն, կառուցվածքային լեզվաբանության հիմունքներ, եվրոպական լեզուներ և, իհարկե, վրացագիտական առարկաներ:

Լայն են եղել Լևոն Մելիքսեթ-Բեկի գործունեության շրջանակները՝ հնագիտություն, ազգագրություն, աղբյուրագիտություն, բանահյուսություն, կրոնագիտություն, անծավագիտություն, վիմագրագիտություն, լեզվաբանություն, բարբառագիտություն, գրականագիտություն, իրավագիտություն, տեքստաբանություն, արվեստաբանություն և այլն: Բացի հայագիտության գրեթե բոլոր բնագավառներից և հայ-վրացական հարաբերություններից, զբաղվել է նաև հայ-ռուսական, հայ-բյուզանդական, վրաց-ռուսական առնչությունների պատմությամբ: Այս ամենի վերաբերյալ հայոց, ռուսաց և վրաց լեզուներով հեղինակել է ավելի քան 600 մենագրություն, հոդված, գրախոսություն ու հրապարակում, որոնց տպա-

գիր ծավալը կազմում է շուրջ 9000 էջ: Ահա ականավոր գիտնականի ստեղծագործական ժառանգության ոչ ամբողջական կշիռն ու ծավալը:

Պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկն աշխատակցել է հայկական բազմաթիվ պարբերականների («Արարատ», «Հովիտ», «Էջմիածին», «Ազգագրական հանդես», «Գեղարվեստ», Էջմիածնի Գիտական ինստիտուտի «Բանբեր») և ռուսական ու վրացական մի շարք հանդեսների:

Լևոն Մելիքսեթ-Բեկի երիտասարդական տարիների գիտական ուսումնասիրություններից որոշակի արժեք են ներկայացնում «Վրացիների ազգակցությունը իսպանացիների հետ ըստ հին աղբյուրների» (1911), «Հայկական հնությունները Ալեքսանդրիա. Բեսարաբիա» (1912), «15-րդ - դարի Շարականի մի ձեռագիր՝ հայտնաբերված Օդեսայում» (1912), «Հայկական հնագույն արձանագրությունները Օդեսայի պատմության համար Ռուսաստանի հարավում» (1914) և այլն:

Լևոն Մելիքսեթ-Բեկը դեռևս 1920 թ. վրացական բուհերի հումանիտար ֆակուլտետների համար հեղինակել է գրաբարի քերականության տարրական դասընթաց և քրեստոմատիկական ժողովածու («Ծաղկաբաղ բանից նախնի հայերէն հանդերձ հայ-վրացերէն բառգրքովք»), 1941-ին՝ Հայ հին գրականության պատմության ձեռնարկ (վրաց.), որտեղ գեղարվեստական արժեքներից բացի, ներառել է հայ պատմական մատենագրության գրեթե բոլոր նշանավոր երկերը: Կազմել է հայերեն-վրացերեն բառարան, վրացերեն է թարգմանել Սայաթ-Նովայի հայերեն խաղերը, կազմել և հրատարակել է Շամշի Մելքոյի երգերը, կատարել է գեղարվեստական արձակ և չափածո երկերի երկկողմանի թարգմանություններ, զբաղվել է թարգմանագիտությամբ:

Լինելով լայն մտահորիզոնի տեր՝ Լևոն Մելիքսեթ-Բեկը գիտական լայնածավալ գործունեությունից բացի, դասավանդել է Թբիլիսիի, Երևանի և Բաքվի պետական համալսարաններում, Քութայիսի, Գորիի, Ցխինվալիի մանկավարժական ինստիտուտներում:

Լևոն Մելիքսեթ-Բեկը գիտական ասպարեզ է մտել հայ-վրացական պատմամշակութային հարաբերությունների հիմնախնդիրներին նվիրված աշխատություններով: Շուրջ քսան տարի նա հատկապես ուշադրություն է դարձրել XI-XIII դարերի Հյուսիսային Հայաստանի գիտամշակութային, աստվածաբանական, կրոնադավանաբանական կյանքին, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և վրաց եկեղեցու միջև VI դարում սկիզբ առած և հետագայում թեժացած դավանաբանական և նվիրապե-

\* Մանրամասն տե՛ս «Полная библиография печатных работ Л. Меликсет-Бека за 1909-1960 гг.», Тбилиси, 1960.

տական անգիջում վեճերին, երբ իր խոսքերով՝ «Հայ-վրացական հարաբերությունների խաչաձևման այդ տարածքը դարձավ հայերի մշակութային ամենաակնառու անկյուններից մեկը», և երբ Հյուսիսային Հայաստանը «հայտնվեց Վիրքի պետականության ոլորտում»: Ձեռագրերից բացի, պրոբլեմի լիարժեք մշակման համար մասնակցել է հայաստանյան գիտական արշավախմբերին, շրջագայել հայոց պատմամշակութային ու ճարտարապետական հուշարձաններով հարուստ վայրերում՝ այցելել է Երևան, Էջմիածին, Պետերբուրգ, Վիեննա, Վենետիկ, ուսումնասիրել թեմային առնչվող հարյուրավոր բնագրեր, հրատարակել փոքրածավալ ու մեծածավալ հետազոտություններ, ի վերջո, այդ հետազոտությունների արդյունքները հանրագումարի է բերել և ներկայացրել դոկտորական ատենախոսությունում՝ «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետները և նրանց ինքնությունը» (վրաց. հրատ., 1928 թ.), որտեղ, ինչպես վերը նշեցինք, փորձել է հնարավորինս անաչառ և սպառիչ վերլուծել Հյուսիսային Հայաստանին (Գուգարաց աշխարհ) վերաբերող մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպես նաև հայ վարդապետների խմբակների շուրջ երկուհարյուրամյա պատմությունը՝ կապված հայ-վրացական պատմական, մշակութային, գիտագրական իրողություններին:

Նշված տարածքում և նշված դարերում հայ վարդապետների, մասնավորապես՝ Մխիթար Գոշի, Անանիա Սանահնեցու, Գրիգոր Տուտերդու, Գրիգոր Մագիստրոսի, Վանական Վարդապետի, Սամուել Անեցու, նրանց մերձավորների ու աշակերտների կենսագործունեության և հիմնադրված խմբակների, բարձրագույն դպրոցների ու կազմակերպությունների հանգամանալից ուսումնասիրությունը հայ գրականության պատմության որոշ հարցերի լուսաբանմանը զուգընթաց, նպաստել է հայ-վրացական գրական-մշակութային, քաղաքական, պատմական հարաբերությունների կնճռոտ որոշ հարցերի պարզաբանմանը ևս:

Պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը փաստական հարուստ նյութերի հիման վրա ապացուցում է, որ նշված դարերի ընթացքում հայ գրականության գրեթե բոլոր ճյուղերը չափազանց զարգացան, ստեղծվեցին համաշխարհային նշանակության գլուխգործոցներ: Այսպես՝ «Էգեգետիկական /մեկնաբանական/ գրականությունը ձեռք բերեց այնպիսի ինքնատիպ երկեր, ինչպիսիք են՝ Հովհաննես Սարկավազի «Ցուցակ Սուրբ գրոց»-ը, Գրիգոր Աբաստորդու «Գիրք պատճառաց»-ը, եկեղեցական հիմնոլոգիան՝ Հովհաննես Սարկավազի և Խաչատուր Տարոնացու շարականների շարքը, ջատագովական-դավանաբանական գրականությունը՝ Անանիա Սանահնեցու «Բան հակաճառութեան ըննդեմ երկաբնակաց»-ը, Հովհաննես Սարկավազի «Յաղագս քաղկեդոնացն»-ը և Մխիթար Գոշի «Գծագրու-

թին... յաղագս վրաց»-ը, տոմարական-տիեզերաբանական գրականությունը՝ Հովհաննես Սարկավազի բազմաթիվ աշխատությունները, իրավագիտությունը՝ Դավիթ Ալավկա որդու «Կանոնագիրք»-ը և հատկապես Մխիթար Գոշի «Ղատաստանագիրք Հայոց»-ը, որը հիմք է ծառայել XIII-XVIII դարերի ընթացքում հայերեն և օտար լեզուներով ստեղծված կանոնական գրքերի համար: Օրինակ՝ Կիլիկիայում, Մոլդովայում, Լեհաստանում, Ղրիմում, Հարավային Ռուսաստանում, Վրաստանում և այլն:

Մենագրության մասին հեղինակն անհրաժեշտաբար նշել է, որ հայ-վրացական եկեղեցական հակամարտությանը վերաբերող բնագրային նյութերը մեջբերում է հայերեն, մանավանդ եթե դրանք տպագրված չեն, իսկ եթե այդ նյութերը վերաբերում են հիմնական հարցին, այսինքն՝ վարդապետներին և նրանց գործունեությանը, ապա դրանց կցում է վրացերեն թարգմանությունները: Մնացած դեպքերում բոլոր տեղեկությունները մեջբերում է միայն վրացերեն թարգմանությամբ, իսկ թարգմանությունները, առանց բացառության, կատարել է բնագրին համարժեք:

Հեղինակը իր աշխատությունը համեստորեն դիտարկում է որպես պատմագրական հետազոտությունների փորձ և նկատի ունենալով աղբյուրագիտական համապատասխան նյութերի սակավությունը՝ նաև հույս է հայտնում, որ երբ հրատարակվեն հատկապես Էջմիածնի և Երուսաղեմի պահոցների ձեռագիր մատյանները, կշարունակի զբաղվել պրոբլեմի հետազոտությամբ, նորից կանդրադառնա իր առաջադրած հարցերին, որպեսզի վերանայի, խորացնի ու դարձնի առավել ամբողջական: Այսուհանդերձ, աշխատության հայերեն թարգմանությունը ժամանակավրեպ չէ, թեև անցել է ութ և կես տասնամյակ, քանզի հայագիտության համար այն հույժ կարևոր է: Հարակից խնդիրների ուսումնասիրության առումով ևս կծառայի որպես օգտակար ուղեցույց:

Լևոն Մելիքսեթ-Բեկի հայագիտական ժառանգության մեջ ներկա և ապագա հետազոտությունների համար խոշոր ծառայություն են նրա կողմից շրջանառության մեջ դրված «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» եռահատոր գրքերը (Գիրք Ա, Ե-ԺԲ դար, 1934: Գիրք Բ, ԺԳ-ԺԸ դար, 1936 և Գիրք Գ, ԺԸ-ԺԹ դար, 1955): Դրանք վրաց հին և միջնադարյան վկայաբանական-վարքագրական, պատմական, գեղարվեստական տպագիր թե անտիպ երկեր են, հարանց վարքեր, ժամանակագրություններ, որոնց վրացի հեղինակները (դրանց մեջ կան նաև հայ հեղինակներ) պատմական, հնագիտական, ազգագրական, աշխարհագրական, արվեստագիտական, լեզվաբանական ու այլևայլ բնույթի կարևոր, եզակի, երբեմն էլ անհայտ տեղեկություններ են հայտնում Հայաստանի և հայերի մասին, և որոնցից Մելիքսեթ-Բեկը կատա-

րել է քաղվածքներ, թարգմանել, հագեցրել է ներածական խոսքերով, համեմատական, բանասիրական և աղբյուրագիտական մեկնաբանություններով, ընդգրկուն ծանոթագրություններով, հավելվածներով ու ցանկով: Չորրորդ գիրքը, որտեղ ամփոփված են վիճական տարեգիրը, հայերենից վրացերեն թարգմանված երկասիրությունները՝ իրենց տարբերակներով, ժողովրդական բանահյուսությունը, հավելվածներն ու կարևորագույն ցանկերը, թեև աշխատության չափազանց կարևորությամբ, ցավոք, դեռևս անտիպ է:

Գնահատանքի արժանի է «Հայ գրողները և Վրաստանը» (1964) աշխատությունը, որտեղ նա, ըստ ամենայնի, ներկայացրել է շուրջ երեսուն հայ այն գրողներին ու մշակութային գործիչներին՝ արձակագիրներ, բանաստեղծներ, դրամատուրգներ, աշուղներ, պատմության, բանասիրության և արվեստի ու այլ բնագավառների ներկայացուցիչներ, որոնց կյանքն ամբողջովին կամ մասամբ անցել է Վրաստանում, և ովքեր իրենց բազմաբնույթ երկերում պատկերել են այդ երկրի անցքերը, միստ ու կացը, վարք ու բարքը, սովորույթները, ինչ խոսք, նաև հայ և վրաց ժողովուրդների ռազմական, քաղաքական, գրական, պատմական ու մշակութային առնչությունները: Հետաքրքիր տեղեկություններ կան գրողների անձնական ու ստեղծագործական հարաբերությունների, հայ և վրաց լեզուների փոխներթափանցման մասին: Գրեթե անթերի բերված են նաև հայ հեղինակների մասին եղած վրացերեն նյութերի և նրանցից կատարված թարգմանությունների ցանկերը: Հեղինակը, նկատի ունենալով ստեղծագործությունների ժանրային յուրահատկությունները, աշխատանքը շարադրել և բնութագրել է յուրովի, ինչպես ինքն է վկայում՝ դրանք տեղ-տեղ նկարագրական են, տեղ-տեղ՝ համեմատական, տեղ-տեղ էլ՝ ժամանակագրական: Աշխատությունը նախատեսված է եղել երկու գրքով, երկրորդը, սակայն, լույս չի տեսել:

Լևոն Մելիքսեթ-Բեկը հատուկ ուսումնասիրության նյութ է դարձրել «Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարակությունները» (Գիրք Ա, Թբիլիսի, 1949, ռուս. և վրաց.), որը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ներառված են V-XVIII դարերի հուշարձանները, իսկ երկրորդում՝ Վրաստանի վերաբերյալ, «Մեզալիթյան մշակույթը Վրաստանում» (1938, վրաց.): Միայն վերջերս իրականացվեց գիտնականի կազմած «Հայերեն-վրացերեն բառարանի» հրատարակությունը (Թբիլիսի, 1996): Այն պարունակում է ժամանակակից հայերենի շուրջ 22 000 բառ և դրանց վրացերեն համարժեքները: Բնականաբար, վերանայվել և մասնակի փոփոխությունների են ենթարկվել բառացանկերը, քանզի հայոց լեզուն տասնամյակների ընթացքում հարստացել է հազա-

րավոր բառերով ու դարձվածքներով, բազմաթիվ բառեր հնացել, դուրս են մնացել գործածությունից, շատերն էլ իմաստափոխվել են: Այն լույս է տեսել բառարանագրության պահանջմունքներին համապատասխան և, անշուշտ, կարող է օգտակար լինել ուսանողներին, թարգմանիչներին, գիտաշխատողներին, առհասարակ հայոց և վրաց լեզուներով հետաքրքրվող անձանց:

Պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը ուսումնասիրել և գիտական անհրաժեշտ չափանիշներով հրատարակել է վրացերեն թարգմանված հայերեն շատ ու շատ երկերի քննական բնագրեր՝ համապատասխան բացատրություններով, մասնավորապես՝ «Վարք Ս. Գրիգոր Պարթևի» (1920), Մխիթար Գոշի «Ղատաստանագրքի» այն հոդվածները, որոնք ներառված են վրաց արքա Վախտանգ VI-ի «Օրենսգրքում», Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքի՝ Վրաստանին առնչվող համապատասխան հատվածները (1952), Թովմա Մեծոփեցու Պատմության՝ Վրաստանին վերաբերող դրվագները և այլն:

Լևոն Մելիքսեթ-Բեկը կազմել և հրատարակել է «Ընծենավորը» հայ գրականության մեջ», «Նյութեր Ն. Մառի ամբողջական մատենագիտության համար», «Նյութեր հայկական ձեռագրերի քարտարանի մատենագիտության համար», «Գրիշաշվիլու հայերեն թարգմանությունները», «Իսահակյանը վրաց գրականության մեջ» և մատենագիտական այլ ցանկեր:

Բանահյուսական, պատմագիտական ու գրականագիտական հոդվածներից ուշագրավ են՝ «Արտավազդ և Միերի հետքերը Վրաստանում», «Ղավիթ «Անհաղթի» Վրաստանում լինելու շուրջը», «Չորրորդ Հայքի 774-775 թթ. գյուղացիական ապստամբության պատմության շուրջ», «Հայաստանում Կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից», «Հայերը Վրաստանում», «Հայերը վրաց հին գրականության մեջ» և հայերեն, վրացերեն ու ռուսերեն հեղինակած բազմաթիվ այլ աշխատանքներ:

Առհասարակ պետք է նշել, որ այս կամ այն խնդրին անդրադառնալիս Մելիքսեթ-Բեկը ուսումնասիրել է բոլոր աղբյուրները, նախորդների աշխատությունները և հետո միայն հայտնել իր կշռադատված ու տրամաբանորեն հիմնավորված կարծիքը:

Լևոն Մելիքսեթ-Բեկը հնարավորինս պայքարում էր այն տեսակետների դեմ, որոնցում կամա թե ականա խեղաթյուրվում էին պատմական իրողությունները, փորձ էր արվում կասկածի տակ առնել հայոց պատմագիրների աշխատություններն ու դրանց նշանակությունը, արժեզրկել կամ

ժխտել հայերի կամ հայազգի գործիչների՝ Վրաստանին մատուցած ծառայությունները:

Անվանի գիտնական մանկավարժը առանձնապես թբիլիսիի պետական համալսարանի համար աճեցրել է վրացի հայագետների մի ողջ փաղանգ:

Անգնահատելի է Լևոն Մելիքսեթ-Քեկի վաստակը հայագիտության, վրացագիտության, կովկասագիտության, հայ-վրաց գիտագործնական հարաբերությունների, երկու ժողովուրդների միջև կրթական ու մշակութային կապերի զարգացման և ամրապնդման գործում: Հաշվի առնելով այդ անուրանալի վաստակը՝ Վրաստանի կառավարությունը 1941 թ. նրան շնորհել է գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ 1945 թվականին Լևոն Մելիքսեթ-Քեկը ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

Լևոն Մելիքսեթ-Քեկի անտիպ թողունի հրատարակությունը՝ և ռուսերեն ու վրացերեն աշխատությունների թարգմանությունը հանրության, գիտաշխատողների, կովկասագիտությունն ընտրած ուսանողության և մագիստրոսների, այդ երկրներով հետաքրքրվող անձանց համար փնտրված ձեռնարկներ են:

*Հր. Ս. Բայրամյան*  
20. 09. 2013 թ.

**ՊՐՈՖ. ԴՐ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ՔԵԿ**

## **ՎՐԱՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ԲԱՂՎԱՅԻՆՆԵՐ ՎՐԱՑԵՐԵՆ ԲՆԱԳՐԵՐԻՑ ՀԱՅԵՐԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ.  
ՆԵՐՄՍԾՈՒԹՅՈՒՆ—ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՅԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ**

**Հ Ա Տ Ո Ր Ա.  
(Ե-ԺԲ ԴԱՐ)**

\* Կովկասագիտության մաս կազմող անձնական գրապահոցի հարյուրավոր գրքեր նրա մահից հետո հանգրվան գտան թբիլիսիի պետական համալսարանի հայագիտության ամբիոնին առջնթեր, իր իսկ անունը կրող աշխատասենյակում, իսկ արխիվն ու գրադարանը, որ մի ամբողջ հարստություն են, և որտեղ, անշուշտ, կան հրատարակության պատրաստ մեծ ու փոքր աշխատություններ, կոնսպեկտներ, սևագիր կամ անավարտ էջեր, ինչպես նաև նամակները, գիտնականի 80-ամյակի օրերին (1970) ժառանգները նվիրեցին նույն բուհի գիտական գրադարանին: Դրանց հետազոտությունն ու հրատարակությունը նախևառաջ հայ մասնագետների առաջնահերթ խնդիրներից պետք է լինի գոնե մոտ ապագայում:

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատութիւնը մենք ձեռնարկել ենք կազմելու՝ ոգտագործելով այդ նպատակի համար վրացերեն լեզվով մեզի հասած թե տպագիր և թե (ըստ կարելիութեն) անտիպ աղբյուրները, ինչպես զուտ պատմադրական և ժամանակագրականը, նույնպես և վարքաբանական-վկայաբանականն ու այսպես կոչված հայրախոսականը, նաև վիճական տարեգիրն ու ժողովրդական բանահյուսութիւնն ամենալայն իմաստով, մի խոսքով՝ այն ամենը, ինչ վոր իր մեջ Հայաստանի և հայերի մասին վորևէ նյութ և պարունակում, ում գրվածն էլ ուզում է լինի, միմիայն թե վրաց հեղինակի գրչից չելած ինքնուրույն կամ կոմպիլատիվ (վրացերեն գրվածք) լինի այն:

Ամբողջ աշխատութիւնը մենք ծրագրած ունենք 4 հատորով.

I հատորում մտնելու լեն V—XII դարու հեղինակները կամ անանուն գրվածքները:

II հատորում մտնելու լեն XII—XVIII դարերի հեղինակները:

III հատորը կազմելու լեն XVIII—XIX դարերի (մինչ 1829 թ.) հեղինակները: Վերջապես՝

IV հատորում կամփոփենք վիճական տարեգիրը, հայերենից թարգմանված յերկասիրութիւնների վարիանտները, ժողովրդական բանահյուսութիւնը, հավելվածներն ու կարևոր ցանկերը:

Ի նկատի ունենալով, վոր վրացերեն բնագիրներից կատարած մեր թարգմանութիւններին մենք կցում ենք ներածութիւն-ծանոթութիւններ, վորոնք մեծ մասամբ մեր իսկ հետազոտութեան արդյունքներն են կազմում, մենք լիահույս ենք, վոր այս մեր աշխատութիւնը պիտանի կարող է լինել վոչ միայն հայ ընթերցողի համար, վորը առաջին անգամն է հնարավորութիւն ստանում ի



մոտո ծանոթանալու վրայ աղբյուրների հետ, այլև վրայապետների համար:

Հայերեն խորհրմանությունները մենք տալիս ենք համաձայն «վերականգնած» բնագիրների, վոր մենք ենք կատարել, յիբեմն նույնիսկ մեր իսկ ձեռքով տպագրության պատրաստած նյութի հիման վրա (ըստ ձեռագիրների), վորը բավականին տարբերվում է ցարդ զոյություն ունեցող հրատարակություններից:

Ընդ սմին, թյուրիմացությունների տեղիք չտալու համար, անհրաժեշտ ենք գտնում մասնանշել, վոր թարգմանության ժամանակ մենք միշտ աշխատել ենք հատուկ անուններն (թե՛ աշխարհագրական և թե՛ անձանց) ու այսպես կոչված «եթնիկական» տերմինները ներկայացնել «հայկական հարադատությամբ» կողքին, կլոր փակագծի մեջ, դնելով այն և վրացերեն բնագրի արտասանությամբ. իսկ անկունավոր փակագծերի մեջ դնում ենք այն բառերն ու նախադասությունները, վորը մենք ենք ավելացնում իմաստը հասկանալի դարձնելու համար:

Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր՝ քանի վոր այնպիսի տերմինների գործածությունը նախնական շրջանի նկատմամբ, ինչպիսի չեն «Հայաստան» կամ «Վրաստան»-ը, կատարյալ անաքրոնիզմ կլինեն, մենք առհասարակ այդպիսիներից խուսափում ենք՝ գործածելով դրանց փոխարեն 1) «Հայք» (→ «Հայոց»), ինչպես եկվիվալենտ վրացերեն «Սոմխիթ»-ի և 2) «Վիրք» (→ «Վրաց»), ինչպես եկվիվալենտ «Քարթլի»-ի դիստատո գրությամբ. իսկ «հայ» — «հայեր» (→ «հայոց») և «վրայի» — «վրացիներ» || «վրացիք» (→ «վրաց») գուզընթացաբար գործածում ենք իբրև լոկ «եթնիկական» տերմիններ (փոքրատառ գրությամբ):

\* \*

Մեր ներկա աշխատության առաջին հատորի առաջին պրակի մեջ մենք ամփոփել ենք համապատասխան նյութեր վրաց գրականության զարգացման նախնական օրջանի չերկասիրություններից, վորոնք գրեթե բացառապես վարքաբանական-վկայաբանական հայրախոսական, յեկեղեցա-պատմական կամ ժամանակագրական բնույթ են կրում, ընդամենը 15 հեղինակությունից կամ 19 յերկասիրությունից քաղած, վորոնք V—XI դարերին են պատկանում կամ այդ դարերին վերագրվում: Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր նյութերը դասավորված են իբրև առանձին-առանձին հատվածներ, բացի մի-չերկու դոկումենտից, վոր մենք առաջ ենք

քերում կամ ամբողջությամբ (IX դարու անանուն հեղինակների համաստ Հայոց «պատմության» փորձերը), կամ չնչին կրճատումներով (IX դարու հեղինակ Արսեն Սափարացու «Հայոց և Վրաց բաժանման մասին»), վորոնք առանձնապես հետաքրքիր են իբրև դուռ գրական գործեր և վոչ ժամանակակցի ձեռքով կատարած պատմական անցքերի նկարագրություններ կամ պատմագրական չերկասիրություններ, վորոնք վրաց գրականության մեջ միմիայն XI դարում են ծնունդ առնում (XI—XII դարում յերևան յեկած վրաց պատմիչներին հատկապես նվիրվում է առաջին հատորի չերկրորդ պրակը):

Ինչպես ընթերցողը կնկատի, ներկա (առաջին) պրակում դետեղած նյութը կարծես թե գլխավորապես յեկեղեցական պատմությանն է վերաբերում, մասամբ՝ հայոց և վրաց բաժանման հարցի հետ կապված դավանաբանական վեճերին, վորի կողքին աննշան տեղ դնին դրաված Հայաստանի պատմական աշխարհագրության, ժամանակագրական պատմության և այլ և այլ պատմական անցքերի ու անձանց վերաբերյալ տեղեկությունները, իսկ տնտեսականի մասին և վոչ մի խոսք: Բայց սա հո՛ մեր մեղքը չե, յեթ ինքր ճյուրք հեճց այդ է մեզ մասնակառուցել...

Սակայն հայոց պատմության համար բոլոր այդ տվյալներն արժեք ունին այն տեսակետով, վոր՝ տեղեկություն լինելով հանդերձ՝ բղիում են իդոլոգիայես հակառակ, այսինքն հուշն-բյուզանդական տնտեսական-քաղաքական որիննտացիային չեթակա քաղկեդոնիկ (դիոֆիզիտ կամ չերկաբնակ) միջավայրից, մինչդեռ ամբողջ հայ գրականությունն այն ձևով, ինչպես ել այն հասել է մեզ՝ լինելով նույնպես ահնդհնցիող՝ ասորա-սյարսկական որիննտացիային չեթակա, պարզապես հակաքաղկեդոնիկ (մոնոֆիզիտ կամ միաբնակ) իդոլոգիայի դրոշմն է կրում. և հետևապես պետք է չեթադրել, վոր հայերեն լեզվով յերբեմն գոյություն ունեցող քաղկեդոնիկ իդոլոգիայի գրականությունն, մեծ մասամբ հունական ազդեցություն կրող կամ հունարենից թարգմանվածը, հակաքաղկեդոնականության հաղթանակով իսպառ վոչնչացրած է: Յեվ հենց այդտեղ է համապատասխան վրաց աղբյուրների արժեքը, նամանավանդ, վոր վերջիններն՝ չերբեմն դավանաբանական վեճերի հետևանքով անհետացած և մեզ չհասած հայկական աղբյուրների վրայ չեն հիմնված: Համենայն դեպս, այնպիսի գոկումենտների հրատարակումով, վորոնք հայ քաղկեդոնականության զարգացման հնագույն շրջանին են վերաբերում, հարց է ծագում հայ հին գրականություն

վերագնահատելու մասին\*)։ Յեւ իրոք, հայ և վրաց պատմապիւրները տվյալների տարաձայնութիւնը չէ՞ վոր արդյունք է այն հակասութիւնների, վոր նկատելի չե հին Հայաստանում և Վրաստանում շնորհիւլ առաջավոր Ասիայում միշտ մարտնչող չերկու տարբեր քաղաքական-տնտեսական սխտեմների (Մարք, Պարթևք, Պարսիկներ, Արարացիք՝ մեկ կողմից, Հուլնք, Հոռմայեցիք և Բյուզանդացիները՝ մյուս կողմից)։

Ինչ վերաբերում է նույն V—XI դարերին պատկանող այն գրվածքներին, վորոնք հայերենից վրացերեն թարգմանությամբ են հասել մեզ (ի նկատի ունենք Աթոնի Իվերոն վանքի X դարու «վարք հարանց»ի «հալոց» կամ «ասորվոց» սրբերի վարքերը) և վորոնց հայերեն բնադիրները կամ տարբերվում են թարգմանութիւնից կամ կորած են (որինակ Դավիթ և Տիրիճանի վկայաբանութիւնը), ուր՝ բնադիրների համեմատ, տարբեր կամ լրացուցիչ տեղեկութիւններ կան Հայաստանի և հայերի մասին, այդպիսիները մենք մտադիր ենք զետեղել «Հավելվածներին» մեջ, վոր մեր աշխատութիւն IV հատորն է կազմելու։

Լ. Մ.-Բ.

Տփղիս  
7. III. 1933

\*) Վորքան այս տեսակետից շահեկան ին Ն. Մառի, Իվ. Ջավախիշվիլու, Կ. Պեկեթիանի յեվ Ն. Ակիմյանի համապատասխան ուսումնասիրութիւնները, վոր մենք բավականին ողտազործած ունենք, նսւյնքան մեզ համար վրե է արժեքից զուրկ են այնպիսի աշխատութիւնները, ինչպիսի յեն Ազեթաճար Պալեյանի «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս» (Վիէննա 1878), S. Weber-ի Die Katholische Kirche in Armenien (Freiburg in Breisgau 1903) և այլն։ Մի կողմն ենք թողնում Կարապետ Տեր-Մկրտչյանի դոկտորական շարադրութիւնը՝ Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte Ketznerische Erscheinungen in Armenien, Leipzig 1893:

Ա.

## ՀԱԿՈՒ ՅԵՐԵՅ (V Դ.)

### «ՇՈՒՇԱՆԻԿԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

«Շուշանիկի վկայաբանութիւնը»-ը, վոր հայտնի չե հայերեն և վրացերեն լեզուներով, հասել է մեզ զույգ-զույգ խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ։ Հայերենը հրատարակված է «Սոփերք Հայկականք»-ի Թ. հատորի մեջ (Վենետիկ 1853), ընդարձակ խմբագրութիւնը 11—47 եջերում, իսկ համառոտը 49—55, չերկուսի ծանոթութիւնները 57—61 եջ. (համառոտի կրկնութիւնը տես նաև՝ Լ. Մելիքսեթ-Քեյ «Ծաղկաքաղ բանից նախնի հայերէն հանդերձ հայ-վրացերէն բառարովք», հատուած առաջին, Ծաղկաքաղ, Տփղիս 1920, եջ 100—103). վրացերենի ընդարձակ խմբագրութիւնը հրատարակել են նախ Միք. Սաբինին իր «Վրաստանի դրախտ» կոչված ժողովածուի մեջ (Ս.Պ. Բ. 1882), եջ 181—192, ապա Ս. Գորգաձեն առանձին գրքույկով՝ «Սուրբ Շուշանիկի վկայաբանութիւնը» (Տփղիս 1917), եջ 1—23, ծանոթութիւններն և հավելվածները 25—44, իսկ համառոտը հրատարակեց, ըստ Աթոնի Իվերոն վանքի X դարու «Վարք հարանց» ժողովածուի. Ալ. Խախանովր (Խախանաշվիլի) իր աշխատութիւն մեջ «Материалы по грузинской агрологии» [«Труды по востоковедению», изд. при Лазаревском институте вост. языков, вып. XXI] (Москва 1910), եջ 49—51. Հետագա (XVIII դարու) վրացերեն խմբագրութիւններից կատարած ողուերեն թարգմանութիւնը տես՝ (М. Сабинин «Полное жизнеописание святых грузинской церкви», ч. I, СПб. 1871, стр. 141—152):

Վաղուց Ն. Մառը (Из поездки на Афон, — «Журнал Министерства Народного Просвещения», 1899, март, стр. 19—20) այն կարծիքն էր հայտնել, վոր վկայաբանութիւն վրացերեն համառոտ խմբագրութիւնը բառացի թարգմանութիւն է համապատասխան Վրացերենի հայերեն թարգմանութիւնը։

տասխան հայերեն խմբագրութունից, իսկ ինչ վերաբերում է նույն վկայաբանության ընդարձակ խմբագրութունների առնչությանը իրար հետ, դրա մասին նույն Ն. Մառը վոչինչ չէր ասել:

1917 թվին, տալով Շուշանիկի վկայաբանության վրացերեն ընդարձակ խմբագրության գիտական հրատարակութունը, Ս. Գորգաձեն իր գրքույկի վերնագրի վերևից անհրաժեշտ էր գտել դնելու և հեղինակի անունը՝ «Հակոբ Յերեցի, V դար»: Սույն գրվածքն V դարու Հակոբ Յերեցին վերագրելը վոչ մի առարկություն չգառվ պրոֆ. Իվ. Ջավախիճվիլու կողմից՝ 1921 թվին լույս ընծայած ուսումնասիրության մեջ՝ «Հին վրացական պատմական գրականութունը (V—XVIII դ. դ.), լեռնորդ լրացրած հրատարակութուն», էջ 13—26, ապա և պրոֆ. Կ. Կեկելիձեյի կողմից՝ «Վրաց գրականության պատմության» I հատորում (Տփղիս 1923), էջ 119—124, վորոնք ավելի ևս պարզեցին վկայաբանության ավտենցիայի հարցը: Մասնավորապես Իվ. Ջավախիճվիլին ջանաց ապացուցել, վոր՝ մինչդեռ վկայաբանության համառոտ վրացերեն խմբագրութունը բառացի թարգմանություն է հայերենից, նույն հեղինակության մյուս՝ ընդարձակ վրացերեն խմբագրութունն ինքնուրույն գրվածք պիտի ճանաչել, վորն սղրյուր է ծառայել հայերեն խմբագրության համար, մի խոսքով, վրացերեն ընդարձակ խմբագրութունը հիմք է ծառայել (ա. աստիճան) հայերեն ընդարձակ խմբագրությանն (բ. աստիճան), վորը հետագայում համառոտվել է (դ. աստիճան) և ապա թարգմանվել է վրացերեն (դ. աստիճան):

Այս կարծիքն այժմ վրաց գրականության մեջ ընդունված է ու արածված, և գրեթե վոչ մի առարկություն չի հանդիպում:

Այժմ տեսնենք, թե ինչ տվյալների հիման վրա լին վրացագետներն (Ս. Գորգաձե, Իվ. Ջավախիճվիլի, Կ. Կեկելիձե և ուրիշները) ապացուցում Շուշանիկի վկայաբանության ինքնուրույն վրացերեն գրվածք և այն էլ V դարու հեղինակ Հակոբ Յերեցի հորինվածք լինելն, վորը միաժամանակ վրաց գրականության հնագույն հիշատակարանն է համարվում:

1. Դիմելով մի ինչ վոր հեղինակավոր անձի՝ վկայաբանութուն կազմողը մի ինչ վոր հատվածից հետո, վորը նույն վկայաբանության սկզբնական մասն պիտի կաղմեր կամ գուցե ներածութունը, ասում է (էջ 1). «Յեվ ահա հաստատապես պատմեմ Ձեզ սուրբ և լիրանելի Շուշանիկի մահվան մասին» (սրանով է նկատվում վրացերեն տեկատը): Ապա՝ խոսելով Վարդան Մամիկոն-

ցանի մասին՝ նա մատնանշում է (նույն տեղ). «Վորի մասին լես Ձեզ գրեցի»: Մի ուրիշ տեղ՝ բղեղխի դրան չեպիսկոպոս Ափուտի (Ափոցի) անունը տալով՝ հեղինակն ավելի վորոշակի ասում է (էջ 3). «Յես էլ՝ Շուշանիկ տիկնոջ (թագուհու) չերեցն՝ այն յեպիսկոպոսի մոտն էյի»: Յեվ ահա այստեղից պարզ է, վոր հեղինակը՝ առաջ բերելով իր և Շուշանիկի միջև տեղի ունեցած բազմաթիվ զրույցները (դիալոգները)՝ միշտ ընդգծում է, թե վեթջինս ինչպես էր դիմում իրեն, հեղինակին՝ «Յերեց», «Այ չերեց» ասելով: Վերջապես, վրացերեն խնագրում կա և մի այնպիսի տեղ (էջ 9—10), ուր մի վորմն պատանի՝ փնտուրով Յերեցին Շուշանիկի բնակություն տեղում՝ հարցնում է. «Հակոբն այդտեղ է», վորին ինքը՝ հեղինակը, պատասխանում է. «Ինչ կուղես», և նա ասում է. «բղեղին կանչում է»:

Ըստ լեռնույթին, այ՝ տվյալների հիման վրա լես, վոր նախ Մ. Սարիհինը (1882) և ապա Ս. Գորգաձեն (1917) վկայաբանության հեղինակ համարեցին Հակոբ Յերեցին, վորը նույն գրվածքի հայերեն վերսիայի մեջ անանուն «դրան քահանա» չի կոչվում (Սոփերք, թ., էջ. 29): Իսկ Իվ. Ջավախիճվիլին մանրամասն ապացուցեց այս կետը՝ հիմնվելով ինչպես վերև բերած տվյալների վրա, նույնպես և ամբողջ հորինվածքի, կաղմվածքի և վոճի վրա: «Հակոբ Յերեցի գրվածքը, — ասում է բաղմաշխատ վրացագետը, — ինչպես իր պատմական, աշխարհագրական [ու] ժամանակագրական տեղեկություններով, նույնպես և նխատուկացի նկարագրությամբ, պատմական բնույթով ու վոճով և, վիրջապես, հեղինակի պատմվածքի հոգեբանական ճշտությամբ իրոք վոր ժամանակակցի, ականատեսի և համապորձակյի կողմից գրված լեռնասիրություն պիտի ճանաչվի» (Հին վրացական պատմական գրականութունը, 19): Մոտավորապես նույն միտքն է արտահայտում և Կ. Կեկելիձեն, չնրբ պնդում է, վոր Շուշանիկի վարքը գրի լես առիվ «վոչ ին սովորական ժամանակակիցն ու ականատեսը, այլ [բղեղխի] սպարանքին շատ մերձեցած և, միաժամանակ, համեմատաբար պատրաստված անձն՝ Հակոբ Յերեցն, վորը դրան քահանա չեր և Շուշանիկի խոստովանահայրը. Հակոբն այն անձնավորութուններից մեկն էր, վորը վոչ մի բոպե չեր հեռացել իր հոգևոր զավակից անասնելի տանջանքի և նեղության ժամանակ, նրա հետ իր ապարանքում և ապարանքից դուրս՝ լեկեղեցում ու բերդում» (Վրաց գրականության պատմությունը, I, 119—120): Ընդ սմին, նույն Կ. Կեկելիձեն ի նկատի առնելով վկայաբանության մեջ

յեղած դանազան թվականները՝ գտնում ե, վոր այն հորինված պիտի լինի 474—484 թվականներին (ibid., էջ 123):

2. Իվ. Զավախիւիլիու հետազոտութեամբ, հայերեն և վրացերեն ընդարձակ խմբադրութունները (վորից ծագած են համառոտները), ակնհայտնի կերպով իրարից տարբերվում են պիտավորապես հետևյալ կետերում. Ա. մինչդեռ վրացերենը գրված է առաջին դիմքով, հայերենում հեղինակը սկի չի չերևում, և պատմըվածքն չերբորդ գեմքով է ներկայացրած. Բ. վրացերեն տեկստի ավագուն տեղերը, ուր այն ժամանակվա նիստուկացի ճշտագուն պատկերն է ներկայացրած, հայերենում բաց են թողնված: Գ. թվականները վրացերենում ավելի մանրամասնորեն և ճշտորեն են առաջ բերված, քան թե հայերենում, ուր այդպիսիներն չերբեմն (որինակ Շուշանիկի մահվան մասին) նույնիսկ բաց են թողնված: Դ. ժամանակագրական տվյալներն ու գործող սնձանց անունները (որինակ՝ բղիշիի դրան լեպիսկոպոսի և դրան չերեցի) վրացերենում ամենայն բարեխղճութեամբ են առաջ բերված, մինչդեռ հայերենում այդպիսիները բաց են թողնված: Ե. Հայերենում պակասում են մի շարք այնպիսի տեղեկութուններ, վորոնք այն ժամանակվա սլաւոնութեանն ու աշխարհագրութեանն են վերաբերում (որինակ Հերթի և Յուրտավի մասին), ինչպես և Շուշանիկի անձնավորութեան, բնավորութեան, մտածելակերպի և բնորոշ առանձնահատկութունների նկարագրութունը: Զ. հայերեն տեկստը՝ համեմատաբար վրացերենի հետ ավելի կրճատված լինելով հանդերձ՝ ավելի ընդարձակ ձևով է ներկայացնում դանազան աղոթքները, վորոնք վրացերենում քիչ տեղ ունեն դրաված, և այլն:

Շուշանիկի վկայաբանութեան վրացերեն ընդարձակ խմբագրութունից ստորև քաղած տեղեկութունները, ճիշտ և բուն Հայաստանին (Հայքին) չեն վերաբերում, քանի վոր ի նկատի ունեն Հայոց (Հայքի) և վրաց (Քարթլիի) սահմանակից Հերթի=Ռանը, բայց և այնպես մենք այդպիսիներն առաջ ենք բերում, վորպեսզի նպաստած լինենք Գուգարքի պատմութեանը, վորն այնքան սերտ կապված է նույն Հայոց և վրաց անյայլի հետ:

Քաղվածքների թարգմանութուններն առաջ ենք բերում համաձայն Ա. Գորգանի հրատարակութեան (համեմատութեամբ Մ. Սարխիճի հրատարակածի հետ), կողքին դնելով հայերեն վերսիայի համապատասխան հատվածն ըստ «Սուրբ»-ի:

## [ՇՈՒՇԱՆԻԿԻ ԾԱԳՈՒՄԸ ՅԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ]

Պարսից [Պերոզ] թագավորի [Իշխանութեան] ութերորդ տարին<sup>1</sup> զեպի արքունի դուռն ուղիվորվեց Վազգեն բղիշին (Վարսքեն պիտիախն)՝ Աշուշայի վորդին, վորը սկզբում քրիստոնյա չեր, քրիստոնյա հորիցն ու մորից ծընված, Յեվ նրա կինն էր հայոց սպարապետ Վարդանի դուստրը, վորի մասին ահա գրում եմ Զեդ. հորից նա Վարդան էր կոչվել, իսկ ըստ սիրո նրա անունն Շուշանիկ, ասածուց չերկուցած, ինչպես արդին ասայինք, մանկությունիցն իսկ...

Հեռանալով Պարսից թագավորից՝ բղիշին (պիտիախն)... մտեցավ վրաց (Քարթլիի) սահմաններին, Հերթի<sup>2</sup> յերկրին...

...[Յեվ նա] յեկավ Յուրտավ<sup>3</sup> կոչված ավանը...

Իսկ բղիշին (պիտիախն) դրան լեպիսկոպոսը, վորի անունն էր Ափուս<sup>4</sup>, այնտեղ չերգտնըվում, վորովհետև գնացել էր սրբաբուն (Շուշանիկի) մտերիմներից մեկի տունը... և լես էլ [Հակոբ]՝ Շուշանիկ տիկնոջ (թագուհու) յերեսս՝ այն լեպիսկոպոսի մոտն էլի...

Իսկ բղիշին (պիտիախն) ուղիվորվեց Զորդ<sup>5</sup>, բայց նրա յեղբայր Զոջիկը չհանդիպեց նրան [այնտեղ]... և՛ բղիշին (պիտիախն) յետևիցն ընկնելով՝ հասավ

Նա եղև ի ժամանակս Պարսից թագաւորութեանն՝ բղիշին Վասգեն, որդի Աշուշայ բղիշին, որ ի դուռն արքունի երթեալ՝ ուրացաւ զքրիստոնէութիւն, և կղիալ ընդ պարսկական օրինօքն ի կամաց և ոչ ի հարկէ և ի բռնութենէ: Նա կին ունէր զդուստր Վարդանայ Հայոց սպարապետի Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ Պարթևի և Հայոց հայրապետի՝ ի դստերէն Սահականուշայ, և անունն նորա Վարդանի ի ծնողացն կոչեցեալ, Շուշանիկ յորջորջանօք յետոյ անուանեալ. բարեպաշտոն և երկիւղած յաստուծոյ ի մանկութենէ իւրմէ...

նրան Հերեթի սահմաններում...

[Յերկիրն, ուր գտնվում է Յուր-տավը, նկարագրելի է ալյուվիալ ամուսն առանց արևի կեծուքունը կրակի պես և այրում, քամիները տաք և ջրերը միասարար. այդ-անդի բնիկները լի չեն անտույ, ջրով ուռած և զեղնած են, մար-մինը ծակծկած, չորացած, քոսոտ, կարմիր քամուց [փչացած], չերե-սը ուռած. և նրանց կյանքն և կարճատև. և վոչ մի ծեր չկա նը-րանց յերկրում ....

### ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ Ս. Գրգավեյի (Ս. Շուշանիկի վկայաբանությունը, էջ 26), 458 + 8 = 466 թվին, ըստ Իվ. Ջավախիշվիլու (Հին վրացական պատմական դրա-կանությունը, էջ 16), 456 կամ 457 + 8 = 464 — 465 թվին:

2. Նույն Ռասը:

3. Տես 6. ժանտություն:

4. Նույն Ախոցը ըստ «Գիրք թղթոց»-ի (էջ 178), վորը Յուրտավի թեմի առաջին յեպիսկոպոսն յեղավ (Կ. Կեկելիձե, Նվիրապետական կազմը հին Վրաս-տանում, վրացերեն, — «Bulletin de l'Université de Tiflis, X, 1930, էջ 313):

5. Չորդ կոչված ավանը, ըստ յերեմիայի, Տայբունն և յեղել, վորովհե-տև Տայբիցն ևր Չորդունել լիխանների տոհմը:

6. Յուրտավը դանազան հեղինակներ յերկար ու ձիգ դարերի ընթացքում սկսած դեռ ելի X դարուց՝ այլ և այլ տեղերումն ելին փնտոումն Այս հարցը, անկասկած, Հայաստանի և Վրաստանի պատմական աշխարհագրության հիմնա-կան պրոբլեմներից մեկն է, քանի վոր Գուգարաց ըզեթուության յերբեմնի կենտ-րոնի և սահմանների հարցին և վերաբերումն Ըստ Ուխտանեսի, այն X դարում կոչվելիս է յեղել Գաթենը, գտնվելով այդքո գետոյն՝ որ կոչի յիւր անունն Գա-թենագեա, ի նահանգին որ կոչի Վրաց-գաթ, որ է միջասահման երկուց աշխար-հացն Հայոց և Վրաց, ... հանդէպ լերինն Կաւկասու, որ է սահմանակից... մեծի մայրաքաղաքին Տիֆլեայ» («Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց», Վաղար-շապատ 1871, էջ 34): Ստեփաննոս Որբելյանի որոք ևլ Յուրտավը կոչվելիս է յեղել «Գաթեն», որոյ զթեմն — ասում է Ստեփաննոսը — այժմ ունի Հախպատ» («Պատմութիւն Նահանգին Սիւսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքե-պոսկոպոսի Սիւսեայ [«Ղուկասեան մատենագարան» Գ]. Թ. 1911, էջ 105):

XVIII դարու վրաց աշխարհագիր Վախուշտը փնտոում ևր Յուրտավը Ախ-տալա վանքից զիպի արեելք, Բերդուշ կամ Գերեզի լիսան զրջանում (Descrip-

tion géographique de la Géorgie par le Tsarévitch Wakhoucht, publiée par M. Brosset. S. P. B., 1842, p. 142, n. 1): Մեկնելով Վախուշտի խոսքերը. Ս. Բրոս-սեթ յեղել ևր այն յեղրակացութան, վոր Յուրտավը գտնվում է ca l' E. d' Akh- tala, sur le Berdoudj, la Kamenka de Busses» (M. Brosset, Deux historiens Arméniens, S. P. B. 1870, p. 295—296. n. 2. հմտ. Additions et éclaircissements à l' Histoire de la Géorgie, p. 109, n. 3), վոր ասանց այլևայլութան կրկնում է և վրացադեա Թ. Փարթամիան տարրինակ մեկնաբանությունը՝ «Յուրտավը, ալ- մյան (?) Գաթենը, Վախուշտի Գաթենը (Ախտալայից մոտ, ուստիան Каменка դուղը) գտնվում ևր Գուգարքում, Հերեթի և Գարթլիի սահմանում» (Քրոնիկաներ, վրացերեն, I, Տիֆլիս 1892, էջ 320, ծանոթ. 42): Ս. Ջանաշվիլին (Վախուշտի աշխարհագրությունը, վրացերեն, Տիֆլ. 1904, էջ 51, ծանոթ. 92), կանգ առնելով «Ջուրտակետ» անվան ստուգաբանությունը վրա, վորով հայտնի չէ Կարաբուլա- խի զրջանը, գտնում է «հայտնական, վոր Շուշանիկի քաղաքը հետագայում վե- բակոչվելը Ջուրտակետ»: Ըստ Ղ. Ալիշանի (Յուրտակետ հայերենաց Հայոց, I, 375) և ապա Ն. Ալիմյանի (Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա 1910, էջ 199), Յուր- տավը գտնվելիս է յեղել «Բողնոփոր գուռանին հարաւային ցածագոյն ծայրն» — «կիսաւուր ճամբով միայն հեռու» Տիֆլիսից: 1913 թվին Սարգիս Կախարանն: (Սուրբ Նունեն ու նրա նշանակությունը Վրաստանի պատմության մեջ, Վրա- ցերեն, էջ 8) այն կարծիքի յեր, վոր Յուրտավը այժմյան Մանգլիսից զեղել արեւմուտք ևր գտնվում: 1914 թվին հրատարակած իր «Վրաց ժողովրդի պատ- մությունը» (վրացերեն): II դրբում Իվ. Ջավախիշվիլին ուղղակի ասում է՝ «Հերեթումն ևր համարվում Յուրտավը, սակայն իսկապես գորտեղ ևր այն գտնվում, չգիտենք» (էջ 307): 1916 թվին հրատարակած մեր հատուկ փոքր հոդվածում «К вопросу о местонахождении Цуртава» (Известия Кавк. отд. Рус. Геогр. Общ., т. XXIV, № 3) մենք՝ ամփոփելով հարցիս դրականությունը՝ այն միտքն ելինք հայտնել, վոր «Յուրտավը պիտի վորոնել կամ այժմյան Ախ- տալայի մոտերը, Բերդուշի կամ Գերեզա-չայի (Կամենկայի) զրջանում, կամ հին Գաթենի տեղում՝ Գրիա կամ Խրամ գետի աջ ափին» (էջ 341—345, համ. նաև մեր «Гадженк-Гачман», — «Христ. Восток», т. VI, нгр. 1918, стр. 94-95): Չհամաձայնելով մեզ հետ՝ Սարգիս Կախարանն (Վրաց պետականության գենե- ղիսը հարցերը, վրացերեն, — «Bulletin Historique», Տիֆլիս 1924, Գ. I, էջ 74- 75) գտնում է, վոր Յուրտավը Պակեվիչի արշավանքի քարտեզում, վոր Ուշա- կովն ևր կազմել, Ջրոտ և կոչվում գտնվելով Խրամ գետի ձախ ափին, վոր, ըստ յերեմիայի, Յուրտավ անվան ազգագրումն է. նույնը Ս. Կախարանն կրկ- նում է և 1928 թվին (К истории названия города Тифлиса, — «Историче- ский сборник» II, 67) հետեյալ խոսքերով. «Эквивалент названия Гачиан-и — Цуртав (Ухтанес, как известно, считает эти названия идентичными) на- ходит объяснение на арм. яз., именно гурта холодный (само слово фран- ского происхождения) с суффиксом-ав, встречающимся и в других древ- них географических названиях на Юго-Кавказе (например, Тел-ав, Ман- ав, Зап-ав, Парт-ав и пр.). В этом же значении Гачиан-и при сопостав- лении с аварским коачан-холодный вполне покрывает термин Цурт-ав, который, таким образом, представляется простым переводом термина Гачиан-и в его аварском, так сказать, аспекте. Гачиан-и — Цуртав, повиди- жому, находился в районе нынешнего Хоша-Килиса на правом берегу р. Храм (притока Куры), у слияния с ним р. Машавер»:



### ԿՅՈՒՐԻՈՆ ՍԿՈՒՏՐԵՑԻ (ՍԿՈՒՐՏԱՑԻ)

(VI—VII դ.դ.)

Խոսելով Վրաց Կյուրիոն (Կիրիոն) կաթողիկոսի մասին, վորը ծագումով Զավախքի Սկուարի գյուղիցն էր, և տալով նույն Կյուրիոնի կենսագրութունը ըստ «Գիրք թղթոց»-ի և Ուխտանեսի պատմության, Հ. Նեքսես Ակիմյանը իր հատուկ ուսումնասիրության մեջ՝ «Կյուրիոն կաթողիկոս Վրաց. Պատմութիւն հայ-վրական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ» (Արգիշտի մատենադարան, Կ, Վիեննա 1910) համապատասխան ժ.Գ գլխում («Կիրիոն իբրև մատենագիր») առանձնապես կանգ է առնում Կյուրիոնի գրական գործունեության վրա: Հարց տալով՝ «արդեօք ստացած յունական կրթութիւնն և այն պաշտօնները, զորս ստանձնեց նա այլ և այլ ժամանակներ, չընծայեցի՞ն առիթ գրականութեամբ ալ պարապելու, ըլլալ ինքնագրութեամբ, ըլլալ թարգմանութեամբ յունարէնէ կամ հայերէնէ վրացերէն», Ակիմյանը պատասխանում է՝ «գժբախտաբար, սակայն, Վրաց հին գրականութենէ շատ քիչ բան ծանօթ ըլլալով՝ ոչինչ կրնանք ըսել այս մասին ստուգութեամբ: Բայց իւր գրական գործունէութենէն ունինք այլ և այլ նշխարքներ չալ Մատենագրութեան մէջ, որոնք բաւականաչափ կը պարզեն իւր ընդունակութիւնն այս ճիւղին մէջ ալ: Այս նշխարքները իւր թղթակցութիւններն են, պահուած Թղթոց գրիմ մէջ և Ուխտանեսի քով» (եջ 261—262), «Յայտարար այս թղթակցութեանց ոչ վրացերէնը գտնուած է և ոչ ասորերէնը», — ասում է Ակիմյանը, և ապա շարունակում. «Բայց ապահովապէս վրացերէն գոյութիւն ունէին հրեմն\*», գոնէ առաջին թուղթը Մովսէս կաթողիկոսին թղթին հետ ժ. դարուն վրացերէն կը գտնուէր\*, թարգմանուած, ինչպէս կը կարծեմ, հայերէնէ. այնպէս որ մեզ հասած օրինակը

\*) Հնդգծու մերն է:

(առ Ուխտանեսի) լետս թարգմանութիւն (Bückübersetzung) է լոկ» (եջ 262—263):

Իստելով Կյուրիոնին վրաց գրական գործիչները (մտավորականները և մեկնաբան-թարգմանիչները) շարքը և տալով, ինչպես և Ն. Ակիմյանը (թեև սրանից բոլորովին անկախ) նրա՝ Կյուրիոնի՝ կենսագրության փորձն ըստ Ուխտանեսի, Կորն. Կեկիլիձեն (Վրաց գրականության պատմություն, I, 124—125) առանձնապես մատնանշում է այն փաստը, վոր Կյուրիոնը «գրագրությունն և ունեցել Յերուսաղեմի և Հռոմի հայրապետների հետ» Քաղկեդոնի ժողովի քրիստոսաբանության (քրիստոլոգիայի) հարցի շուրջը և, ի միջի այլոց, Հռոմի պապին դիմել է նեստորականներին վերաբերյալ հարցով, ի հետևումն վորի Գրիգոր I պապից ստացել է ընդարձակ պատասխան Epistola S. Gregorü I Qurino vel Quirico Episcopo et ceteris Episcopis in Hybernia catholicis վերնագրով, վոր հասել է մեզի (P. Michel Tamarati, Histoire du catholicisme en Géorgie avec les documents justificatifs du XIII-e au XX siecle, Tiflis 1902, p. 575—577): Իր տեսութունը Կ. Կեկիլիձեն վերջացնում է հետևյալ լեղրակապությամբ. «Մի խոսքով, Կյուրիոնն առաջին վրաց գրողն է, վորը անկախ պալքար է մղել նեստորականության-միաբնակության դեմ, թեև նրա չերկասիրությունները մեզի չեն հասել (օր. cit., 125):

Ի հարկե, ցավալի յի, վոր այնպիսի հնագույն հեղինակի գրություններից, ինչպիսին է Կյուրիոնը, վոչ մի բան չի մնացել վրացերեն լեզվով, վորից մենք կարողանայինք ոգտվել Հայաստանի և հայերի մասին նյութեր քաղելով<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Մի քանի խոսք Կյուրիոնի ծննդյան տեղի՝ Զավախքի Սկուարի գյուղի մասին — Այժմ Զավախքում «Սկուարի» անունով գյուղ չկա, բայց կա «Կոտեխա», վոր գուցե նույն «[Ս]կո[ւ]արի»-ի հետագա ձևափոխությունը լինի: Ի դեպ, մատնանշելի յի նաև այն, վոր Կյուրիոնը, իբրև թունդ քաղկեդոնիկ, հայ հակառակեղոնիկների ատելությունն էր գրավել այն աստիճանի, վոր նույնիսկ Սկուարի գյուղից նրա ծաղուժը, ասոցիացիայով Սկարիսկտացի Հրեայանի հիշեցնելով՝ նրա հակառակորդները մատին փաթաթան էյին դարձրել: Յե՛վ այդպիսով միանգամայն հասկանալի յի Ուխտանեսի հետևյալ բնորոշումը, վոր նա տալիս է Կյուրիոնին. «գոր մերժեալ և հերձեալ հեռացոյց [գՎիրս] ի մէջ Կիրիոն Սկարտացի՝ հանդոյն և հաւասար լեալ Յուդայի Սկարսկտացոյ» (Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, եջ 35):

ԱՆԱՆՈՒՆ (IX Դ.)

«ՎՐԱՑ ԴԱՐՁԻ [ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ]»

«Վրաց (Քարթլիի) դարձը» կամ «Վրաց (Քարթլիի) դարձի պատմութիւնը», վրացերէն «Մոքցեվայ Քարթլիսայ», resp. «Քարթլիս մոքցեվա» կոչվածը, վրաց գրականութեան պատմութեան մեջ նույն նշանակութիւնն ունի, ինչ վոր «Հայոց դարձի պատմութիւնը» կամ «Ագաթանգեղայ պատմութիւնը» հայ գրականութեան պատմութեան մեջ: Այն հասիլ և մեղ չերկու վարիանտով, վորոնցից մեկը 973—976 թ. թ. գրված Շատրերդ վանքի հայտնի ժողովածուի մեջն և (այս պատճառով ել կոչվում և «Շատրերդի վարիանտ»), իսկ մյուսը՝ համեմատաբար ավելի ուշ ժամանակվա, այսպես կոչված Ճելիշի վանքի ձեռագրում (վորն ըստ այսմ «Ճելիշի վարիանտ» և կոչվում): «Պատմութիւնը» բաղկացած և չերկու մասից. առաջինը ներկայացնում և իրենից «Վրաց դարձի» ժամանակագրականը կամ քրոնիկոնը, իսկ յերկրորդ՝ հատկապես ս. Նունեցի (Նինոցի) վարքը, վորոնք, հավանական և, տարբեր հեղինակների կազմածն են, սակայն մեկի ձեռքով ի մի հավաքած. չուրաքանչյուր մասն, իր հերթին, պարունակում և, անշուշտ, հնագույն գրվածքներ այլևայլ հեղինակների (որինակ վոմն Գրիգոր սարկավազի VII դ., վորը, համեմատելով, «Դարձի պատմութեան» հորինող չի կարող համարվել. և այլն), վորոնք, սակայն, նրանից անկախ դեռ հայտնագործված չեն: Յերկու մասերից և վոչ մեկը մեծ պատմական արժեք ունեցող գրվածքներ չեն ներկայացնում, վորովհետև լի չեն սխալներով, անաքրոնիզմներով և այլն: Հրատարակվել և «Վրաց (Քարթլիի) դարձի պատմութիւնը» մի քանի անգամ: Սկզբներում, չերբ այն հայտնի չեր միակ՝ Շատրերդի ձեռագրում, նրա բնագիրը փոքրիկ ուսումնասիրութեամբ և ծանոթութիւններով հանդերձ լույս ընծայեց

Ս. Թաղայեվիլին՝ առաջին մասը ժողովածուի մեջ «Յերեք պատմական քրոնիկա» (վրացերէն), Տփղիս 1890, էջ 1—115, իսկ յերկրորդը առանձին գրքուկով՝ «Ս. Նունեցի վարուց նոր վարիանտը կամ Վրաց դարձի [պատմութեան] չերկրորդ մասը» (վրացերէն), Տփղ. 1892, էջ 1—74, նույն 1892 թվին Թ. ժողովանիան նորից հրատարակեց «Դարձի» միմիայն առաջին մասն իր աշխատութեան՝ «Քրոնիկաներ»-ի I հատորում, էջ 11—79: 1900 թվին վերոհիշյալ Ս. Թաղայեվիլին ներկայացրեց «Դարձի» ամբողջ տեկստի (այն և չերկու մասերի) ուսերեն թարգմանութիւնը իր հայտնի աշխատութեան մեջ՝ վերնագրով Источники грузинских Летописей — Три хроники („Сборник материалов для описания местностей и племен Кавказа“, вып. XXVIII, отд. I, стр. 1—116, և առանձին), ուր այն առաջին տեղն ունի դրաված. I. Обращение Грузии (в христианство), իսկ անգլիացի հայտնի վրացագետներ Marjory Wardrop and Y. O. Wardrop լույս ընծայեցին «Դարձի» չերկրորդ մասի, այն և Ս. Նունեցի վարքի, անգլիերէն թարգմանութիւնը՝ Life of st. Nino („Studia Biblica of Ecclesiastica“, Volume V, Part. I, Oxford 1900 p. p. 1—88). Ճելիշի վարիանտը հայտնագործելուց հետո նույն Ս. Թաղայեվիլին «Դարձի» տեկստն ամբողջութեամբ կրկին հրատարակեց զուգընթացաբար՝ ըստ Շատրերդի և Ճելիշի վարիանտների՝ սակայն առանց թարգմանութեան, իր սովոր աշխատութեան մեջ Описание рукописей «Общества распространения грамотности среди грузинского населения», т. II, Тифл. 1906 — 1912, стр. 708/710—727 (ա. մասը) և 727—805/813 (բ. մասը): Այսպիսով, այժմ մենք ունենք Շատրերդի վարիանտի ա. մասի չերեք, իսկ բ. մասի չերկու հրատարակութիւն, հանդերձ ուսերեն թարգմանութեան չերկու մասերի ևս, և անգլիերէնի՝ չերկրորդ միմիայն մասի, իսկ Ճելիշի վարիանտինը միմիայն մի հրատարակութիւն՝ չերկու մասերինը՝ առանց վորևե թարգմանութեան:

Ինչ վերաբերում և այն հարցին, թե ով և «Դարձի» հեղինակն և չերբ և այն գրված, դրա մասին դեռ ելի վերջնական լուծում չկա: Հեղինակի անունը կատարյալ մթութեան մեջ և իսկ գրութեան ժամանակի վերաբերյալ գոյութիւնն ունի մի քանի կարծիք. մինչդեռ հեղինակների մի մասն, այն և Ս. Թաղայեվիլին (Յերեք պատմական քրոնիկա, XCII—XCV) և Ս. Կակաբաձեցի (Պատմական պրպատումներ, վրացերէն, Տփղ. 1924, էջ 56—92, К истории названия города Тифлиса, — «Исторический Сборник»



II, 1928, էջ 69—70), վերագրում է այն VII դարուն, մյուս մասն, այն է ի վ. Ջավախիզիլին (Հին վրացական պատմական գրականությունը, էջ 85—91, 73—85) և Կ. Կեկելիսն (Վրաց գրականությունը պատմություն, I, 569—579). համարում են այն IX դարու գործ, վերջինս նույնիսկ IX—X դ. դ. (համենայն դեպս. վոչ ուշ քան 882—912 թ. թ.): Հիշատակելի չե նաև «Դարձի» տարբեր մասերի նախատիպի մասին գոյություն ունեցող հետևյալ կարծիքները. ըստ Ս. Կակաբաձեյի (op. cit., 67—71), ա. մասի սկզբնական հատվածը հավանական է հունարեն լինելը գրված 365—400 կամ 380—400 թ. թ., իսկ ըստ F. C. Conybeare-ի («Studia Biblica et Ecclesiastica», 1900), բ. մասը կարծես թե ասորերեն լինելը գրված:

Ստորև բերած քաղվածքների թարգմանությունը կատարված է համաձայն Ե. Թաղայեվիլու 1906—1912 թ. թ. հրատարակության:

#### Ա. ՄԱՍԻՑ

### [ՎՐԱՑ ԴԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ]

Այն որվանից (Կոստանդիանոս կայսեր պարտվելուց 310 թ.) տասներորդ տարին<sup>1</sup> գնաց Հեղինե [կայսրուհին] Յերուսաղեմ [Գրիստոսի] պատվական խաչը փնտռելու, և տասնուչորսերորդ թվականին<sup>2</sup> մի ինչ վոր պատճառով փախուստի դիմեց արքունի կանանցից մեկը՝ անունով Հռիփսիմե, իր դայակով հանդերձ:

Յեվ նրա հետ գտնվում էր վոմն գեղեցիկ գերուհի անունով Նունե (Նինո), վորի գործ[ունեություն]ը հետազոտել էր Հեղինե թագուհին, և եր նա (Նունեն) իշխանուհի Հոռմից, վորը ինքն էր սկսել իր ճանապարհորդությունը՝ բուժելով [հիվանդներին]՝ և հասել Հունաստան. նա [ինքն] ուսուցանում էր իր իշխանուհի Հռիփսիմեյին:

Անցնելով ծովով՝ Հռիփսիմե, Գայանե, Նունեն ու նրանց ուղեկիցները մտան Հալքի (Սոմխիթի) սահմանները, Տրդատ (Թրդատ) թագավորի բնակատեղը, և բոլորը մարտիրոսացան այնտեղ<sup>3</sup>:

Մնաց միայն Նունեն, վորն ուղեկորվեց հյուսիսային լեռների ուղղությամբ:

### [ԱՅԼ ՑԵՎ ԱՅԼ ԴԵՊԲԵՐ ՎՐԱՑ ԴԱՐՁԻՑ ՇԵՏՈ]

Յեվ թագավոր նստեց նրա (Բակուրի) լեղբայր Տրդատը (Թրդատը), իսկ լեպիսկոպոսապետ եր Ներսես (Ներսես) հայոց կաթողիկոսի Յոթ սարկավազը...

...Ապա պարսից թագավորի բղեղիս (պիտիախչ) Գրամ-խուար-Բոր-Ջարդը մտավ Տփղիս քաղաքաբերդն, և Գարթլին նրա հարկատու դարձավ, նույնպես և Հալքը (Սոմխիթը) և Սյունիքը և Վասպուրականը...

Յեվ նրանից (Փարսմանից) հետո թագավորում էր Բակուրը և կաթողիկոսն էր Մակարը. այս պահին էր Վազգեն բղեղիսը (Վարսգեն պիտիախչը և Շուշանիկը վկայեց ծուրտավում...<sup>4</sup> Այս Բակուրի որոջ վերջ լեղավ վրաց (Գարթլի) թագավորությունը...<sup>5</sup>

Պարսիկները տիրապետում էին Գարթլիին և Հալքին և Սյունիքին և Վասպուրականին...

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուրեմն 310+10= 320 թ.

2. Ուրեմն 310+14= 324 թ.

3. Ասկախ «Վրաց դարձի պատմություն»-ից, Հռիփսիմյանց և Գայանյանց պատմությունը գոյություն ունի վրացերեն դանազան վերսկաներով. ա. բրբե մասն Գրիգոր Գարթլի վարուց (տես Ա. Меликсет-Беков, Грузинская версия Агафангелия и ее значение для грузинской историкографии, — «Христ. Восток», т. IV 1915, стр. 155—170, հատկապես 168—169. Vita S. Gregorii Parthianensis, edidit Leo Melikset-Bek [Monumenta georgica, I, Scriptores ecclesiastici, № 2], Tiflis 1920), և բ. բրբե ուրույն վկայարանություն Հռիփսիմեյի, Գայանեյի և այլոց (տես А. Цагарели, Сведения о памятниках грузинской письменности, т. I, в. 3, стр. 160. М. Джанашивили, Каталог предметов церковного музея грузинского духовенства, Тфл. 1914, стр. 1, А. Меликсет-Беков, Новый список «Жития свв. Рипсимии, Гаянии и сподвижниц» на грузинском языке, — «Христ. Восток», т. III, 1915, стр. 313—314. Robert P. Blake, Catalogue of the Georgian Manuscripts in the Cambridge University Library, — «Harvard Theological Review», vol. XXV, July 1932, Number 3, p. p. 216, 220—221. E. Takaichvili, Les manuscrits Géorgiens de la Bibliothèque Nationale de Paris, etc, Paris 1933 p. 26):

Ի դեպ, անհրաժեշտ է մատնանշել, վոր «Հռիփսիմյանց» հիշատակության մասին վրաց դարձի պատմության մեջ՝ գոյություն ունին տարբեր կարծիքներ. վոմանք կարծու են, վոր սա արտահայտություն է հնագույն ավանդության, ըստ վորի հայերն ու վրացիները քրիստոնեացել են Գրիգոր Գարթլի քարոզչությանը. թեև ինքը Գրիգորը «Դարձի» պատմության մեջ սկի չի հիշվում, մինչդեռ նա ծանոթ է, ինչպես իր տեղում կոտաններ, Արսեն Սափարացու «Վրաց

և Հայոց իսթանբուլում մեջ, ուր, մյուս կողմից, Հոփսիմյանց մասին վոչ մի հիշատակութուն չկա, իսկ մյուսները այն կարծիքին են, զոր սա հետադա դա-  
րերում հորինված դասակարգային-իդեոլոգիական վորոչ մթնոլորտի արտա-  
հայտութուն է, ի հարկե, քաղկեդոնականության հաղթանակների հետ կապված  
(համաձայն Կեսարիա-բյուզանդական թեորիայի): Հմմ. հինգերորդ գլխի 7  
ժանոթութունը:

4. Ըստ այսմ, Շուրանիկի վկայութունը վերագրվում է Վ I դարուն, վոր,  
ի հարկե, անաբրոնիզմ է (հմմ. Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական  
գրականութունը 90):

5. Համաձայն 532 թ. «հավիտենական դաշնագրության», Իվ. Ջավախիշվիլի,  
վրաց ժողովրդի պատմութունը, I, 1928, էջ 226—227):

### Բ. ՄԱՍԻՑ

#### [Ս. ՆՈՒՆԵՆ ՀԱՅՔՈՒՄ]

Հասնելով Կիտեթ լեռերի Բուդի\* ավանը, [Նունեն] հիվանդ-  
դացավ և ապա վախճանվեց...

Իսկ [մինչ նրա մահը] ժողովեցան նույն լեռերի թագավորն  
և իշխան-իշխանուհիները, և ժողովրդի հոծ բազմութուն...

Սալոմե Ուջարմացի տիկինն (Թագուհին) և Պերոժավր Սյու-  
նեցին և նրանց հետ դառնալով բոլոր իշխանները դիմեցին Նունե-  
յին հարցնելով. «Տվե՞ս դու և ի՞նչպես յեկար մեր յերկիրը...»

Ապա Նունեն պատասխանեց. «...յեթե ցանկանում եք գիտե-  
նալ [թե ինչպիսի եր] իմ՝ ձեր խեղճ աղախնու՝ ուղին, կասեմ...»...

Ապա Սալոմե Ուջարմուցիցին և Պերոժավր Սյունեցին բերին  
թանաք ու գրիչներ, և Նունեն սկսեց պատմել. իսկ նրանք գրում  
եյին: Նա (Նունեն) սկսեց պատմել իր ծնողների մասին...

«...Իսկ պատրիարքն իմ մորս հանձնել եր թշվառ և հիվանդ  
կանանց ծառայելու, իսկ յես ծառայում եյի պառավ հայուհի  
Նիափորա\*\*) Դվինեցու մոտ յերկու տարի...»

«[Այդ Նիափորան, ի միջի այլոց,] ինձ ասաց. «Նյուսիսային  
յերկիրը [ուր Մցխեթում Քրիստոսի շապիկն է թաղված,] գտնվում  
է Հայոց [յերկրի] լեռնաստանում. այն հեթանոս յերկիր է, հու-  
նաց և խուժկաց պետությանն ստորադրվալ...»

«[Կոստանդիանոս կայսեր մկրտվելուց] չոթերորդ տարին  
տեղի ունեցավ Նիկիո ժողովը և մեր փախուստը Հուճաստանից:  
Հոփսիմե տիկինն (Թագուհին) և Իսլանե դաշակը, և հիսուն  
հոգի [ուրիշները] լեռանք առաջին ամսվա տասն և հինգին:

\*) Var. Բոգիսի: \*\*) Var. Միափորա:

«Յեվ յեկանք Հայքի (Սոմխիթի) սահմանները Տրդատ (Քրդատ)  
թագավորի պարտեզը, ուր նրանք և սպանվեցին առաջին ամսվա  
յերեսունին՝ ուրբաթ որը:

«Իսկ յես մնացի վարդենիի փշերի մեջ... և յես յեկա հասա  
Ուլուպորեթ\* 1, ուր և մեծ թշվառության մեջ անցկացրի ձմեռը:

«Յեվ չորրորդ ամսին անցա Ջավախքի (Ջավախեթի) լեռ-  
ների կողմը, վորպեսզի տեղեկանամ, թե ուր է Մցխեթը...» 2...»

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուլուպորեթի դերքը դեռևս անհայտ է, համենայն դեպս, այն չպետք է  
շփոթել Ալան-Ուրբան-Ալբանուպոլիս, Ուրբանուպոլիս-Քորքոնորոլիս-Արևբան-  
Աղբակի հետ:

2. Առասարակ «Վրաց դարձի պատմության» մանրամասնութունները  
նորագույն լուսաբանութամբ կարելի է գտնել Կորն. Կեկելիձեյի համապատաս-  
խան աշխատության մեջ, «Վրաց դարձի գլխավոր պատմա-ժամանակագրա-  
կան խնդիրները», վրացերեն, — «Միմոսիլվելի», I, 1926, էջ 1 — 53, գեր-  
մաներեն ռեզյումեյով. նույնը գերմաներեն՝ K. Kekelidze, Die Bekeh-  
rung Georgiens zum Christentum [«Morgenland», Darstellungen aus  
Geschichte und Kultur des Ostens, Heft 18], Leipzig 1928, S. S. 1—51, Նաև,  
Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմութունը, վրացերեն, I, 1928, էջ 162—216  
(ուր, ի միջի այլոց, կարելի է գտնել և Կեկելիձեյի յեզրակացութունների քննա-  
դատութունը):

\*) Var. Ուլուպորեթա:

## ԱՆԱՆՈՒՆ (IX Դ.)

## «ԿՈՆՍՏԱՆԴ-ԿԱՒԻ ՎԱՐՔԸ»

Կոնստանդ-Կախը վրաց այն իշխաններիցն էր, վորը «Ափ-խազաց» թագավորի գորարանակումն էր գտնվում Բուղայի 853 թվի ոգոստոսյան արշավանքի պահին Քարթլիի վրա և վորին՝ Տփղիսի ամիրա Սահակի պարտվելուց հետո, նույն թվի 26 ոգոստոսի ձերբակալեցին ու տարան Տփղիս Բուղայի մոտ, իսկ այստեղից Ա. Ասիայի Սամարիա քաղաքը, ուր և զխատեցին նույն 853 թվի 10 նոյեմբերի:

Յեվ անա այս պատմական անձնավորութւյան «վարք»-ն է, վոր գրվել է նրա ժամանակակից անանուն հեղինակի կողմից, Բյուզանդական «Թեոդորա թագուհու որոք», մինչ վերջինիս Մի-քայել վորդու չափահաս դառնալը, ուրեմն 853—856 թ. թ. (Վ. Կե-կեյիմե, Վրաց գրականութւյան պատմութւոյն, I, 566—567. հմմ. Իվ. Զավախիցիի, Հին վրացական պատմական գրականութւոյնը, 52—58):

«Վարք»-ի մեջ առաջ բերած տեղեկութւոյնները միանգամայն գուշակաբար են այն տվյալներին, վոր տալիս է Ատենի (Դորու մոտ) Միոն հինավուրց տաճարի 853 թվի հազվագյուտ արձա-նագրութւոյնն (տես *И. Джавахов, К вопросу о времени построения грузинского храма в Атене по вновь обследованным эпиграфическим памятникам.—«Христ. Восток», т. I 1912, стр. 277—285*) ու Թովմա Արծրունի (Պատմութիւն տանն Արծրունեաց, դպրու-թիւն Գ, գլուխ ԺԱ), մասամբ նաև արաբացի մատենագիր Ալ-Տարա-րին (հմմ. Բ. Խալաբյանց, Արաբացի մատենագիրները Հայաստանի մասին [«Ազգային մատենադարան», 27], Վիեննա 1919, էջ 98—101):

Ատենի արձանագրութւոյնն ուղղակի նշում է, վոր «ոգոս-տոս ամսի 5-ին, շաբաթ որը, քրոնիկոնի 73 [=780+73=853],

արաբական 239 թվին, Բուղան ավերեց Տփղիս քաղաքն և ձեր-բակալեց ու սպանեց Սահակ ամիրային, և նույն ոգոստոս ամսվա 26-ին, նույնպես շաբաթ որը, Զիրաքը ձերբակալեց Կախային ու նրա վորդի Թարխուշին» (*И. Джавахов, op. cit., 278—279, հմմ. Իվ. Զավախիցիի, Վրաց ժողովրդի պատմութւոյնը, II, Տփղ. 1914, էջ 376*):

Թովմա Արծրունուն (հրատ. Ղուկասյան Մատենադարանի №ԺԶ, Տփղիս 1917, էջ 304—305) ևս ծանոթ է «Կախայ վերին աշխար-հեցին», վորի մասին պատմագիրն ասում է, թե ինչպես նա և «Սողովմոն որ Սևորդին ճանաչի»՝ չկամենալով ուրանալ «աստուա-ծային օրինացն»՝ «մեծաւ համարձակութեամբ» պատասխանում էլին թագավորին, վորի հրամանով չենթարկվեցին չարչարանքի ու ճնահատակեցան արիաբար». «և եղեալ ի վերայ փայտին գերանելին Սողովմոն, — ասում է պատմագիրը (էջ 305—306), — և մօտ առ փայտն կայուցին զսուրբն Կահայ\*), զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թաղա-ւորին»: Ապա պատմվում է, թե ինչպես «նոյն ժամայն ել հրա-ման չարքունուստ, զի զսուրբն Սողովմոն ի նմին փայտի սպան-ցեն... իսկ զսուրբ Կահայ հրամայեաց սրով սպանանել» և այլն:

Կոնստանդ-Կախի «վարք»-ի վրացերեն ընդգիրը հրատա-րակել է Մ. Սաբիսիեր («Վրաստանի դրախտը», էջ 363—370). նույնը հրատարակած ունի և «վարք»-ի ռուսերեն թարգմանու-թյունը (*Полное жизнеописание свитых грузинской церкви, ч. III, СПб. 1873, стр. 89—96*)\*\*: Դժբաղդարար վերոհիշյալ միակ հրա-տարակութւոյնը գուրկ չէ ակներև աղավաղումներից, վորոնց մեջ առանձնապես աչքի չէ ընկնում «Կախ» անվան փոխարեն «կացի» բառի ընթերցումը, ինչպես վաղուց մասնանշեց *Y. Mar-quart*-ն (*Osteuropäische und Ostasiatische Streifzüge, Leipzig 1903, S. 413, B. 1*), թեև վերջինիս միանգամայն իրավացի ուղղումը միմիայն նորերս ընդունելութւոյն գտավ վրացագետների կողմից (տես՝ Իվ. Զավախիցիի, Հին վրացական պատմական գրակա-նութւոյնը, էջ 54, ծան. հմմ. *И. Джавахов, К вопросу о време-ни построения грузинского храма в Атене etc. стр. 283, прим. V*).

\*) Անհասկած, նույն «Կախայ»-ն է:

\*\* Իսկ *P. Peeters*-ը ավելի վրացերեն տեկտի լատիներեն թարգմանու-թյունը համապատասխան ուսումնասիրությամբ հանդերձ (*De S. Constantino, martyre in Babylonia, commentar. praevius.—«Acta sanctorum». Novembris, t. IV. Bruxellis 1925, p. p. 363—370*):

չ՞ վոր Marquart-ի առաջարկած ընթերցման հիման վրա միմի-  
այն հնարավոր դարձավ Կոնստանդ վկային նուշնացնել Կախա-  
իշխանի հետ, իսկ «Կոնստանդ» և «Կախա» անուններն ընդունել  
իրրև միևնույն անձի՝ առաջինը մկրտության, իսկ չերկրորդը հե-  
թանոսական՝ անուններ:

Ապա Կ. Կեկելիձեկն վերջերս իր հատուկ հոդվածում (Կոնստանդ  
Կախի մարտիրոսութունն ու ճվ լինելը, վրացերեն, — «Bulletin  
de l'Université de Tiflis», VII, 1926, հ<sup>9</sup> 160—173) մի շարք  
սրբագրութուններ մտցրեց վկայաբանական տեկտի մեջ, ապա-  
ցուցելով միաժամանակ, վոր հնագույն ձեռագրերում վոչ թե  
«Կոնստանտին Կախա» չե կարդացվում, ինչպես սովորաբար ըն-  
դունված էր, այլ «Կոնստանդ Կախ» (Կոնստանտին Կախի):

Ստորև բերած հատվածի թարգմանությունը կատարված է  
համաձայն Մ. Սաբինիցի հրատարակության:

### [ՀԱՅ ԻՇԽԱՆՆԵՐԸ ՍԱՄԱՐԻԱՅՈՒՄ]

...[Տփղիս բերելուց] մի քանի որից հետո կապեցին նրան  
(Կոնստանդ - Կախին) զարհուրելի չերկաթե կապանքներով և  
հանձնեցին Բարելոնյան<sup>1</sup> չերկիրը՝ Սամարիա կոչված քաղաքն,  
[ուր և] ներկայացրին իսմայելացվոց թագավորին, վորի անունն  
էր Զափար՝ վորդի Աբրահամի,.... վորը հրամայեց չենթարկել  
նրան (Կախիին) սաստիկ բանտարկության և ուղարկեց նրա  
մոտ այն չերկու իշխաններին, վորոնց գերելով բերել էին շալքից  
(Սոմխիթից) և վորոնք՝ Քրիստոսին ուրանալով՝ պատվելի էին  
դարձել թագավորից<sup>2</sup>. մոտենալով չերանելիին՝ նրանք (իշխան-  
ները) ասացին, «...Մի լինիր դյուրագրգիռ...»:

Ապա սուրբ Կոնստանդը պատասխանեց նրա մոտ ուղար-  
կած հայերին՝ «...հեռացեք ինձանից...»:

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Բարելոն» և կոչվում վրաց հին դրականության մեջ Բաղդադը Այս-  
պես և բացատրված «Բարելոն»-ը, ի միջի այլոց, Միխթար Մեքաստայովո բերա-  
կանության ցցանկի» հիման վրա կողմոված «հայ-վրացերեն բառարկում» (XVIII  
դարու), վորը առայժմ 6 ձևադիր որինակով և հայտնի մեզ:
2. Թովմա Արծրաևից (Պատմութիւն տանն Արծրունեաց, Տփղիս 1917, էջ  
310) մի առ մի հիշատակում և այն իշխաններին, վորոնց «խաղացուցին ի Սա-  
մառայ», այն է. «աէր Սմբատ սպարապետ շայոց, և Գրիգոր Քուրդկայ որդի  
Մամիկոնէից տէր, և Ատրնբրէէ Աղուանից իշխան, և Գրիգոր Սիւնեաց տէր,  
և Մանլ Սմբատայ որդի, Շարէոյ տէր, որ գհարանն կալու, և իշխանական վա-  
սակ Վայոց ձորոյ տէրն, և Փիլիպպէ իշխանն Սիւնեաց, և ներսէէ իշխան Գա-  
րիթայանից, և ապա նսայր Ապուսուսէէ»: Պարզ է, ուրեմն, վոր Կոնստանդ-Կա-  
խի «Վարք»-ի մեջ հիշատակված արաբացվոց թագավորին հավատարիմ չե-  
րու հայ իշխաններն, անկասկած, վերոհիշյալ իշխաններինն պիտի լինեյին:

Ե.

### ԱՐՍԵՆ ՍԱՓԱՐԱՑԻ (IX Դ.)

#### «ՎՐԱՑ ՅԵՎ ՀԱՅՈՑ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»

Արսեն Սափարացուն, վորը վրաց գրականության մեջ ավելի  
«Արսեն կաթողիկոս» կոչումով և հայտնի, վոմանք համարում  
էին X դարու, իսկ վոմանք XI կամ XII դարու գործիչ. իսկ  
պրոֆ. Ֆրանց - Նիկ. Ֆինկը (Franz Nikolaus Fink, Die georgi-  
sche Literatur, — «Die Kultur der Gegenwart», I. 7. Sonderabdruck  
Berlin und Leipzig 1906, S. 306) քաջեց նրան նուշնիսկ XIV դար:  
Վերջերս վրացագիտական գրականության մեջ այս հարցին վի-  
րաբերյալ նկատելի չե չերկու հոսանք, վորոնցից մեկը դասում է  
Արսենին IX դարու գործիչների շարքը, իսկ մյուսը՝ VII դարու:

Ինչ էլի 1920 թ. հունվարի 23-ին Մոսկվայի հնագիտական  
ընկերության կովկասյան ճյուղի հրատարակական նիստին կարդա-  
ցած մեր գեկուցման մեջ Трактаг грузинского католикоса Арсе-  
ния (IX века) о разделении Грузии и Армении, как памятник ар-  
мяно — грузинских церковных отношений, մենք ապացուցեցինք,  
վոր Արսենը IX դարու հեղինակ է (այս գեկուցման մասին տես  
«Известия Кавказского Отделения Московского Археологиче-  
ского Общества», вып. VI. Под редакциею Л. М. Меликсет-  
Бекова и Д. П. Гордеева, Тфл. 1921, стр. 55): 1921 թվին չերկ-  
րորդ բարեփոխված հրատարակությամբ լույս ընծայած իր «Հին  
վրացական պատմական գրականությունը (V—XVIII դ. դ.)» աշ-  
խատության մեջ իվ. Զավախիցիին առաջին անգամ վրաց գրա-  
կանության մեջ փորձեց վերագրել Արսենին IX դարուն (էջ 60—  
63), վորին ապա հետևեց Կոն. Կեկելիձեկն՝ 1924 թվին հրատա-  
րակած իր «Վրաց գրականության պատմության» I հատորի մեջ  
(էջ 134—135): Միաժամանակ՝ նույն 1924 թվին Սարգիս Կախ-  
բաձին իր հատուկ գրվածքում «Յերբ և գրված վրաց և շայոց

բաժանման մասին լեռկասիրությունը» (Պատմական պրպտումներ, վրացերեն, էջ 38—55) և ապա մի շարք այլ գրություններում (Պատմության ժողովածու, վրացերեն, I, 1928, էջ 124, Ասորի հայրերի վարուց նախատիպերը, վրացերեն, 1928, էջ 11) արձարձեց այն դրույթը, վոր Արսենը VII դարու գործիչ է:

Ինչպես 1920 թվին, նույնպես և այժմ մենք այն կարծիքի յենք, վոր Հայոց և Վրաց բաժանման պատմության հեղինակ Արսեն կաթողիկոսը IX դարու Մեծն Արսեն կոչվածն է՝ Գրիգոր Խանձթեցու (վախճանված 861 թ.) աշակերտը: Այդ լեռնում է հետևյալ տվյալներին:

Արսեն կաթողիկոսի լեռը կրում է հետևյալ ընդարձակ վերնադիրը. «Մեր սուրբ հոր՝ Մցխեթի կաթողիկոս Արսեն վարդապետի, վորը ծագումով Սափարայի շրջակայքիցն էր, վոր է Սամցխե, ճառ Վրաց (Քարթլի) և Հայոց (Սոմխիթի) բաժանման մասին»: Այսպիսով, այս վերնադիրը կարելի է չեղբակացնել, վոր Արսենը ծագումով Սամցխե, այսինքն Մեսխե (ապագայում Ախալցխեյի) պալատիցն է լեղել: Սա անկասկած, այն Արսենն է, վոր քանիցս հիշատակված է Գրիգոր Խանձթեցու «Վարք»-ի մեջ (տես *Георгий Мерцул. житие св. Григория Хандзтийского, грузинский текст, введение, издание, перевод Н. Марра [„Тексты и Разыскания по армяно-грузинской филологии“, VII] Спб. 1911):* Խոսելով Գրիգորի բարեկամների՝ Թեոդորոսի և Քրիստափորի մասին, «Վարք»-ի հեղինակ Գեորգ Մեռչուլը (վախճ. 951 թ.) նկատում է, վոր նրանք՝ «զալով Սամցխե՝ աստժու հրամանով աշակերտ վերցրին իրենց մոտ մեծն Միհրան (Միրիան) աղատի (ազնվականի) վորդուն Արսեն անունով, վորն ըստ արժանվուն կոչվեց մեծն Արսեն՝ կաթողիկոս վրաց (Քարթլի) և Մցխեթի աթոռի անթառամ պսակ» (ibid., էջ Վրաց. տեկստի ևք = ռուս. թարգմ. 100, գլուխ XIX): Բայց Գեորգ Մեռչուլը հաղորդում է Արսենի մասին ավելի մանրամասն տեղեկություններ: Այսպես, նույն «Վարք»-ից մենք տեղեկանում ենք, թե ինչպես Արսենը՝ Սամցխեյի «մեծ Միհրան աղատի (ազնվականի) վորդին» նախ քան կաթողիկոսանալը ստանձնած ունեի Աժդուրի չեպիսկոպոսական աթոռը և թե ինչպես նույն «մեծն Արսեն ապագայում չեղավ Վրաց (Քարթլի) կաթողիկոս, Մցխեթի կաթողիկե չեկեղեցում՝ Քրիստոսի շուպիլի «թեանում» (ibid., վրաց. մե = ռուս. 119, գլուխ XLII): Նույն «Վարք»-ից մենք տեղեկանում ենք նաև, թե ինչպիսի հանգամանքներում Արսենը դարձավ կաթողիկոս, ինչպես

բեկանվեցին առաջին ընտրությունները, վոր՝ վրաց չեպիսկոպոսների ու Տեր Գուրամ Մեծն Մամփալին հակառակ՝ անց էր կացրել նրա հայր Միհրանը (Միրիանը) միմիայն Սամցխեյի ուժեղ զինվորության աջակցությամբ ու մի քանի չեպիսկոպոսների ներկայությամբ, և թե ինչպես ծագեց անհրաժեշտություն հատուկ չեկեղեցական ժողով հրավիրելու չեպիսկոպոսների կանոնավոր թվի մասնակցությամբ, վորպիսի ժողովը, վոր իսկապես հրավիրել էր հիշյալ Գուրամ Մամփալը, Գրիգոր Խանձթեցու կրակոտ ճառից հետո վորոշեց վավերացնել առաջին ընտրությունն Արսենի ի կաթողիկոսություն: Հաղորդելով, վոր Արսենը «կամոքն աստուծո չեկաթողիկոս» (ibid., վրաց. մգ = ռուս. 121, գլուխ XLII), Գեորգ Մեռչուլը ապա մատնանշում է, վոր այս Արսենը «սփռեց ուրախություն Վրաց (Քարթլի) բոլոր չեկեղեցիների վրա, վորովհետև՝ հայրապետական աթոռը զարդարեց կատարելապես և [ինքը] զարդարվեց շնորհք» (ibid., վրաց. մք = ռուս. 123, գլուխ XLII): Ընդ սմին Գեորգ Մեռչուլը ավելացնում է. «[նա] կաթողիկոսեց քսան և չոթ տարի և ապա փոխվեց այս աշխարհից» (ibid.):

Այս բոլոր տեղեկությունները Գրիգոր Խանձթեցու «Վարք»-ից մենք առաջ բերինք միմիայն այն նպատակով, վորպեսզի պարզելինք վճրքան արդյոք հնարավոր է այս «Վարք»-ում հիշվող Սամցխեյի Միհրան (Միրիան) աղատի (ազնվականի) վորդի, մեծն Արսեն Մցխեթի կաթողիկոսին նույնացնել հայ-վրացական չեկեղեցական բաժանման պատմության հեղինակի հետ, վորը կոչվում է «Մցխեթի կաթողիկոս Արսեն վարդապետ, ծագումով Սափարայի շրջակայքից, վոր է Սամցխե»: Ի նկատի ունենալով, վոր «Սափարա»-ն, իրոք, Սամցխե (Մեսխե) չեկրուճն էր գտնվում, վոր ապա մայրավանքի վերածվեց և այժմ էլ գոյություն ունի (Ախալցխեյից մի քանի կիլոմետր հեռավորությամբ), այս հարցը մենք լուծում ենք դրական խմաստով:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե վճր ժամանակվա հեղինակ է Արսենը, սա շատ հեշտ լուծվում է նույն «Վարք»-ի տրվյալներով: Ըստ վերջինի, Գրիգոր Խանձթեցին ապրեց մինչև 861 թվականը, իսկ Արսենի մասին ասված է, վոր նա Աշոտ Կյուրապաղատի մահվան թվին (826) 6 տարեկան հասակում մտավ վանք, ուրեմն ծնված պիտի լիներ 820 թ., նաև այն, վոր նա հայրապետեց 27 տարի: Յեթե ի նկատի առնենք, վոր Արսենը իբրև կաթողիկոս անձամբ ոճեց Խանձթայի մենաստանի հին չեկեղեցին դեռ ելի իր ուսուցիչ Գրիգոր Խանձթեցու կենդանության

որոք և, բացի դրանից, ներկա չեղավ վերջինիս թողմանը, վոր տեղի ունեցավ 861 թվին, իսկ կաթողիկոս կարող եր դառնալ համաձայն չեկեղեցական կանոնների, առնվազն 35 տարեկան հասակում, այն և մոտավորապես 855 թվին, միանգամայն հասկանալի չե, վոր նույն Արսենի կաթողիկոսության ժամանակաշրջանը 855—882 թ. թ. մեջ պիտի ամփոփել, և ուրեմն «Վրաց (Քարթլի) և Հայոց (Սոմխիթի) բաժանման մասին» չերկասիրությունը գրված պիտի լինի վոչ ուշ քան 882 թ., ըստ Կորն. Կեկելիձեյի (op. cit., 137) հավանական և մինչև 862 թ.: Մի խոսքով, Արսեն Սափարացին պիտի համարվի IX դարու չերկրորդ կիսի հեղինակ:

Այժմ տեսնենք, թե վճր սովյալների հիման վրա չե Սաբգիս Կակաբաձեի սպացուցում Արսեն կաթողիկոսի VII դարու հեղինակ լինելը: Ըստ Ս. Կակաբաձեյի, հայ-վրացական չեկեղեցական բաժանման պատմության հեղինակը «VII դարու վերջերում կաթողիկոսական աթոռի վրա բազմած՝ մինչ այժմ անհայտ Արսեն Վրաց (Քարթլի) կաթողիկոսը պիտի լինի» (Պատմական պրպոտմեներ, 1924 թ., էջ 55): Այսպիսի դրույթի զլխավոր հեղինակն այն և, վոր Արսենի «պատմությունն ընդհատվում և Իսրայել կաթողիկոսով (667—683 թ. ըստ Կիրակոսի, 667—677 թ. ըստ Ասողիկի) և Գրիգոր մարզպանի (+ 682) շրջանով» (ibid., 43): Ապա նույն Ս. Կակաբաձեի ավելացնում ե. «Ջարմանալի չե, թե ինչպես պատահեց, վոր հեղինակը, չեթե նա Գ-երորդ դարումն եր ապրում, վորը կուսակցորեն, կարելի չե ասել, շահագրգռված եր պատմությունը շարունակելու, ընդհատեց իր աշխատությունն մի այնպիսի անհարմար տեղում, մինչդեռ Հայոց չեկեղեցիո 8-երորդ դարու պատմությունը նրան ավելի ձեռնառնչու թեք եր տալիս, որինակ Հովհան կաթողիկոսի շրջանը, չերբ 726 թ. գումարվեց Մանազկերտի ժողովը, վորը կրկին և արդեն վերջնականապես հաստատեց Հայոց չեկեղեցիո ընդունած գիծը» (ibid.): Մի ուրիշ տեղ իր աչս կարծիքը Ս. Կակաբաձեի կրկնում ե հետևյալ խոսքերով. «Այժմ պարզված ե VII դարու վերջերում հայտնի գրող՝ Վրաց լեվ Հայոց բաժանման մասին չերկասիրությունն հորինող Արսեն կաթողիկոսի գոյությունը: Հիշյալ չերկասիրությունը, բնագրում բերած տեղեկությունների համաձայն, հասցրած ե մինչ 680 թվականը: Այսու չենթադրելի չե, վոր չերկասիրությունը գրված պիտի լինի մոտավորապես 685—700 կամ 690—700 թվականներին: Յեվ իրոք, իր ընդհանուր բնույթով, իր ներքին իմաստով և, վերջապես, վոճով ել չերկասիրությունը շատ լավ համապատասխանում ե նշած շրջանին» (Ասորի հայրերի վարուց նախատիպերը, 1928 թ., էջ 11):

Ս. Կակաբաձեյի դրույթն ջրելու համար բավական ե մատնանշել, վոր, նախ՝ Արսենի չերկասիրությունն ընդհատվում ե վոչ թե VII դարու վերջերի դեպքերի արձանագրությամբ, այլ VIII դարու, չերկրորդ՝ նույն Արսենը 726 թվի Մանազկերտի ժողովի մասին վոչ թե չի լուծ, այլ վորոշակի հիշատակում ե այն, ինչպես և Հովհան Ոճնեցուն, և չերրորդ՝ մի վորևե չերկասիրության VII կամ VIII դարով ընդհատվելը դեռ ելի չի նշանակում, վոր այն անպայման նույն VII կամ VIII դարու հեղինակի հորինվածք լինի (չե վոր XX դարումն ևս կարելի չե գրել VII դարու պատմությունն՝ չհասցնելով մինչ մեր որերը):

Վոր Արսեն Սափարացին վոչ մի դեպքում չի կարող լինել VII (եվ վոչ ել VIII) դարու հեղինակ, այլ միմիայն IX դարուն ե պատկանում, կարելի չե սպացուցել նաև նրանով, վոր նրա չերկասիրությանն աղբյուր են ծառայել այնպիսի գործեր, վորոնք VIII դարումն են գրված:

Ինչպես իր ժամանակին Իվ. Ջավախիճվիլի (Հին վրացական պատմական գրականությունը, էջ 67) մատնանշեց, «Վրաց և Հայոց բաժանման մասին» չերկասիրության հեղինակը ձեռքի տակ և ունեցել զանազան աղբյուրներ, առաջին հերթին, բացի վրացերենից, հայերեն, նաև հունարեն, վորպիսիները նա, սակայն, չի հիշատակում: Վաղուց II. Goussen-ը (Die Georgische Bibelübersetzung, — «Oriens Christianus», VI, Roma 1906, S. 315) այն միտքն եր հայտնել, վոր նույն չերկասիրությունը շատ կետերում շփվում ե Combefis-ի հրատարակած Historia haeresis Monothelitarum-ի և մեծն Միքայելի «Ժամանակագրության» հետ: Իսկ Ն. Ակիմյանը (Կիւրիոն կաթողիկոս Վրաց, 289—290) կարծում ե, վոր «Արսեն հիմնուած է ընդհանրապէս... Narratio de rebus Armeniae գրութեան վրայ, որուն թէև այժմ միայն յունարէնն կայ, բայց եղած է երբեմն նաև հայերէնը»: Իսկ Narratio de rebus Armeniae-ն թեև ըստ նույն Ն. Ակիմյանի (ibid., էջ 99, ծանոթ. 1) «է դարու բ. կիսէն կ'երևայ», բայց իրոք VIII դարու գործ ե (S. Weber. Ueber die Versuche, den Verfasser der Invektiven gegen die Armenier:—Migne, Patrologia graeca 132, S. 1154 ff., zu bestimmen,— «Յուշարձան», Վիեննա 1911, էջ 175—180):

Առանձնապես հետաքրքիր ե Արսենի չերկասիրության՝ հայկական աղբյուրների հետ առնչության հարցը, վորի մասին մանրամասն խոսում ե Իվ. Ջավախիճվիլի (Հին վրացական պատմական գրականությունը, 67—72):

Մատնանշելով միմիայն մի-յերկու որինակի վրա, չերբ Արսենը վորեւ վրացական կամ հունական աղբյուրների աղբյուրների տակ և գտնվում, Իվ. Ջավախիսիլիին ասում է. «Ինչպես պարզվում է, մեր պատմաբանը (Արսենը), համենայն դեպս, գլխավորապես հայկական աղբյուրներով է ոգտվել. վոր նա տեղյակ է հայերենին, հաստատվում է այն հանգամանքով, վոր Արսենը չերբևն առաջ է բերում հայերեն բառեր, թեև վրացերեն ել ուղիղ թարգմանված, որինակ՝ Ներսես կաթողիկոսին անվանում էլին ԵՈՒԱՅ, վոր է հայերեն մթօթի, Վարդան Մամիկոնյանին անվանում էլին չոխի, վոր է ուր» (եջ 67): Բայց նույն գիտնականը ուզում է ապացուցել ել ավելին: Նրա ասելով, «Արսեն կաթողիկոսի տեղեկությունները հաճախ միանգամայն համաձայն են հայ պատմագիրների տեղեկություններին, իսկ հաճախ նրա խոսքերը հաստատվում են առանց այլևայլության» (եջ 67):

Գալով այն հարցին, թե հատկապես վճր աղբյուրներով է ոգտվել Արսենը իր չերկասիրությունները գրելիս, նույն Իվ. Ջավախիսիլիին ասում է. «Իսկապես պարզվում է, վոր Արսեն կաթողիկոսը կամ դուրս նրա հայկական գրավոր աղբյուրները Քաղկեդոնի ժողովին հետևող հայ կաթողիկոսների մասին վոչինչ վատ բան չեն ասում, նույնիսկ գովասանություններ ել են նրանց զարդարում, իսկ հայ պատմագիրները, վորոնց չերկասիրությունները պահպանվել են, չեթե այս չերեցապետներին հիշատակում են ամթալիից գատ վոչինչ լավ բան չեն ասում: Հավանական է, վոր վրաց պատմագիրն ել, կամ գուցե նրա աղբյուրը, կողմնապահություններ են վերաբերում իր դավանակիցներին, իսկ հանդիպ միաբնակ հայ պատմագիրների՝ իրենց դավանական հակառակորդներին՝ ցույց են տալիս անվստահելի վերաբերմունք» (եջ 70): «Իր հերթին, — շարունակում է նույն գիտնականը, — Քաղկեդոնի ժողովին հետևող «ուղղափառ» վրաց պատմագիրը և, հավանական է, նրա աղբյուրն ել սկի չեն վստահանում հակառակորդ «հերձվածող» միաբնակ հայ չերեցապետներին. շահամուտությունից ու քաղաքական բռնադատությունից կամ կողմնապահությունից գատ Արսեն կաթողիկոսն ու նրա աղբյուրները նրանց գործունեություն և ուղղություն մեջ ուրիշ վոչինչ չեն տեսնում» (եջ 70—71): Ապա, քննության չենթարկելով Արսենի հաղորդած տեղեկությունները հայ միաբնակ կաթողիկոսների մասին՝ նա ասում է. «Պարզ է, վոր այս տեղեկություններն վրաց պատմագիրը քաղած պիտի լինի հայ պատմական աղբյուրներից, սակայն այս պատմական

աղբյուրներն անպայման Քաղկեդոնի ժողովին հետևող «ուղղափառ» հայ հեղինակների գրածը պիտի լինի, և հենց այս պատճառով է, վոր այնտեղ Քաղկեդոնի ժողովին հակառակ միաբնակ հայ հոգևորականությունն այսպիսի ստորացուցիչ տեղեկություններով է առատ զարդարված. [Իսկ] քանի վոր մեզ հասած հայ պատմական գրականության մեջ, վորն ամբողջապես միաբնակ հեղինակներին է պատկանում, այսպիսի տեղեկություններ չեն գտնվում, մնում է չենթադրել, վոր նրանից հետո, չերբ հայ միաբնակությունը վերջնականապես հաղթող դուրս չեկավ, հակառակորդ չերկերնակ քաղկեդոնիկ դավանության հետևողների չերկասիրություններն իսպառ վոչնչացվել են» (եջ 71—72):

Իր տեսությունը Իվ. Ջավախիսիլիին վերջացնում է Արսենի չերկասիրության այսպիսի դնահատումով. «Անաչառ և անառիկ պատմական չերկասիրության փոխարեն Արսեն կաթողիկոսի գրվածքը, ինչպես և հայ հեղինակների չեկեղեցական պատմական աշխատությունները, դասակարգային կողմնապահություններ և դավանական ատելություններ են թելադրված և տողորված» (եջ 72):

Միանգամայն համաձայնվելով Իվ. Ջավախիսիլիու հետ, վոր Արսենը՝ չհիշատակելով իր աղբյուրները՝ «ձեռքի տակ է ունեցել վրացերեն, հունարեն և, մանավանդ, հույերեն աղբյուրներ», Կ. Կեկելիսեն (op. cit., 138—139) գտնում է, վոր «հայկական աղբյուրներից նա (Արսենը) ոչտվել է, մասնավորապես, վրաց և հայոց բաժանման ժամանակվա գրագրությունից (Գիրք բղթոցը), նաև Ղազար Փարպեցիու պատմությունից, քանի վոր Ղազարն ել, ինչպես Արսենը, պարսից քաղաքականությունն է ընդգծում վրաց, հայոց և աղվանից դավանական հալածանքների ժամանակը [Իսկ] նրա հայկական աղբյուրների մեծագույն մասը քաղկեդոնական Փրակցիայիցն է բղխում և այս պատճառով Արսենի աշխատության մեջ հարուցած հարցը կատարյալ անաչառություն չէ լուսաբանված»:

Ավելորդ համարելով «ժամանակագրական անհամաձայնություններ և այլն մատնանշել, որոնք այնպես կարկառուն կեցած են» Արսենի չերկասիրության մեջ՝ «տեսանելի ամէնուն», Ն. Ակիմյանը (Կիւրիոն կաթողիկոս Վրաց, 291) վաղուց այն չեղրակացությունն եր չեկել, վոր «Արսեն ուզածին պէս հասկացած է յոյն անանունի պատմածները և իւր ճառը յօրինած՝ ինչպէս թելադրած է իրեն ազգասիրութիւնը»:

Ըստ մեր հետազոտության, վորի արդյունքները իրենց ար-

տահայտութիւնն ունին գտած ստորև հրատարակվող մեր թարգմանութիւնը կցված բազմաթիւ ծանօթութիւններէ մեջ, Արսենը իր աշխատութիւնը գրելիս ոգտագործել է, մի կողմից, Արեւոսի և նմանորինակ հայ պատմիչների գործերը, վորոնք X դարուց աղբյուր են ծառայել, ի միջի այլոց, Հովհան Գրատաւանկերցուն և Ասողիկին, իսկ մյուս կողմից և, առավելապէս, հուլյն-բյուզանդական գրականութեան մեջ հայտնի անանուն (վրմն «Սահակ՝ Հայոց Մեծաց կաթողիկոսին» վերագրվող) գրվածքը, վորը Narratio de rebus Armeniae յե կոչվում: Ընդ սմին, վերջինս էլ, հավանական է, ոգտագործված լինի հայերեն թարգմանութեամբ, քանի վոր հայկական հատուկ անունները՝ թե՛ անձանց և թե՛ աշխարհագրականը, չնչին բացառութեամբ, ներկայացրած է հարազատութեամբ և վնչ թե՛ հունարեն բնագրի աղավաղումներով հանդերձ:

Ի նկատի ունենալով, վոր Արսեն Սափարացու «Վրաց և Հայոց բաժանման մասին» յերկասիրութեան միակ հրատարակութիւնը, վոր տվել է Թ. Ժորդանիան իր «Քրոնիկաներ»-ի I հատորում (եջ 313—332), հեռու յե կատարյալ գիտական հրատարակութիւն լինելուց, ստորև մենք տալիս ենք նույն յերկասիրութեան հայերեն թարգմանութիւնը՝ գրեթե ամբողջապէս կամ սղիղ աւանդ, չնչին կրճատումներով (վոր դավանաբանական ֆորմուլաներին են վերաբերում), ըստ վերականգնած բնաւրի, վոր մենք ունենք պատրաստած տպագրութեան՝ համաձայն մինչ որս հայտնագործված 3 ձեռագիրների, այն և Տփղիսի նախկին յեկեղեցական թանգարանի հավաքածուի № № 691 (XVII դ.), եջ 129—152, և 735 (XVII դ.), եջ 1r—10r, նաև Վրաց մեջ գրագիտութիւն տարածող նախկին ընկերութեան հավաքածուի № 3270 (XIX դ.), եջ 1—16, վորոնցից լավագույնն է № 735-ը:

## ՎՐԱՅ (ՔԱՐՔԼԻ) ՅԵՎ ՀԱՅՈՑ (ՍՈՄԻԹԻ) ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

... Բայց թե ինչպէս հեռացան հայերը ուղիղ դավանութիւննից<sup>1</sup>, պատճառն այս է...

Հունաց (բերձենների) Արկադ թագավորի և Հայոց (Սոմիթի) Արշակ թագավորի որոք<sup>2</sup> հայերն հաստատապէս հունաց (բերձենների) կրոնին ելին մասնակից, ինչպէս նրանց ուսուցել էր սուրբ Գրիգոր Պարթևացին, և [հուլյները] արիաբար [ու] բազում ջանքերով գրաված ունելին նրանց (հայոց) յերկիրը [ազատելով] պարսից ծառայութիւնից, իսկ հունաց (բերձենների)

թագավորներն ոգնում ելին [նրանց] զորքով և յիրբնն էլ մեծ ուժով պաշտպան ելին կանգնած նրանց մոտ. և այսպէս եր նրանց գործը: Իսկ Արկադ թագավորը, Թեոդոսի վորդին, անուշադիր յեղավ նրանց (հայոց) գործերի վերաբերմամբ, և պարսիկները հաղթեցին հայերին ու քեցին իրենց յերկրից, իսկ փախըստականները Յեկեղաց (Ելեկեցի) [գավառից] բազմիցս անցել են հարևան յերկիրները և աղաչել Արկադին, վորպէսզի զորք ուղարկի իրենց յերկիրը նվաճելու համար, սակայն տերը չլսեց նրանց աղաչանքը: Ապա հայերը հնար գտան և հարկատու դարձան պարսիկներին, և յերդումով ու յերաշխավորութեամբ հավաստիացրին պարսից թագավորին, վոր անջատվում են հուլյներից (բերձեններից) և միանում նրանց (պարսիկներին). և այսու շատ ուրախացավ թագավորը, վորը մեծ խնդութեամբ և նվիրատվութեամբ վերադարձրեց նրանց յերկիրը<sup>3</sup>: Յեվ մնացին հայերը մի առժամանակ խաղաղ [և] ուղիղ հավատով:

Իսկ սատանան, վորը մահով է պալքարում մարդկային սեռի հետ, անաստված Նեստորի աղանդակից մի ազգին զրդեց, վորպէսզի վոսկու մեծամեծ կաշառներով խնդրե թագավորից բարվոք դարձնելու Հայքը (Սոմիթը) դեպի իրենց կրոնը. և փոխեցին թագավորի սիրտը՝ հավատացնելով, վոր հայերը հենց վոր գտնեն [բարեպատեհ] ժամանակ, նորից հուլյների (բերձենների) կողմն կանցնեն... Յեվ Պերոզ թագավորը<sup>5</sup> ստիպեց հայերին պաշտել անաստված Նեստորի կրոնը. իսկ հայերը կտրականապէս հանձն չառան այս և դեսպանել միջոցով դիմեցին թագավորին՝ [հայտնելով.] վոր «այս չի իրագործվի վոչ միայն յերկրի, այլ և մեր և մեր զավակների գերութեան ու մահվան [գնով նույնիսկ]»: Իսկ թագավորը նորից այլ նենգութեան դիմեց և հայտնեց իր վճիռը [հայերին] հուլյներից (բերձեններից) բաժանելու մասին և՛ վերադարձնելով դեսպաններին՝ [առաջարկեց] անել յերկուսից մեկը. «Կամ ընտրեցեք ասորական բոլոր կրոն[ներ]ից [վորևե մեկը] բացի մելքիտներինը<sup>6</sup>, վորոնք կրոնով հուլյն (բերձեն) են, կամ թողեք ձեր յերկիրը և հեռացեք մեզանից»: Ապա հայերը շատ տխրեցին այս յերկու առաջարկութեան առթիւ, վորը նրանց հոգսեր պատճառեց, և խորհրդակցութիւններ ունեցան նրանք բազում որերի ընթացքում, և հանձնեցին այս գործը Ներսես (Ներսե) կաթողիկոսին, վոր կոչվում էր «Միջին»<sup>7</sup>: Յեվ ասաց Հայոց

\* Բերած և հայերին, սակայն վրացերեն տառերով և աւանց վորևե թարգմանութեան: Եւսը կրկնվում է և ներքև, բայց արդէն վրացերեն հոմանիշով հանդերձ:



Թագավորն ու ամբողջ ժողովուրդը հետևյալը. «Մեզանից լավ դու [ինքդ] գիտես. ինչ վոր լավագույնը հրամայես հոգվոց անքննության համար, կհնազանդվենք քո հրամանին»:

Իսկ նա՝ վոդորմելին (Ներսեսը)՝ հոգիները հնազանդեցրեց մարմիններին... և ասաց. «Մեզ համար ավելի լավ է մահը, քան թե այս պահին կրկին վերադառնալ հունաց (բերձենների) [կողմն] և նորից թողնել լեռկիրը և բնաջինջ լինել պանդխտությամբ»:  
Յեվ ամբողջ նրա մտածել[ակերպ]ը բողոքական էր և գոռոզամիտ: Յեվ [դեսպաններ] ուղարկեցին տրամությամբ թագավորի մոտ՝ խնդրելով հակոբյիկների կրոնը, քանի վոր բոլոր մյուսներին առավել նզովեցին: Իսկ փոքր մեղքը վերածվում է մեծի՝ պորտաբուժության մեջ, ինչպես գրված է:

Իսկ թագավորն վստահացավ և ուղարկեց նրանց մոտ հակոբյիկ չար[ամիտ] վարդապետներին [թվով] ինն, իբրև նենգ աղվեսների, ինչպես ասաց Սողոմոն՝ իմաստունն աստուծո. և նրանք ապականեցին Հայքում (Սոմխիթում) սուրբ Գրիգորի վաստակը, վորը վոռոզված էր նրա բազում յեռանդով ու արցունքներով. և սրանց անուններն են՝ Աբդիշո (Աբդիրո\*)<sup>8</sup>, Պետրոս թափիչ<sup>9</sup>, չար[ամիտ] Սիմեոն, Հակոբ, — վորոնք իրենց հետ բերին Փիլոքսենոսի (Փիլաքսոսի)[և] Հուլիանոս Ալիկաոնացվո գրությունները, — նաև Տիմոթեոս Կուզ<sup>10</sup>, Սեբրոս [և Փիլոքսենոս] Նարբոկադի\*<sup>11</sup>: Յեվ ժողով գումարեցին քաղաք Դվինում, ուր և ընդունեցին «խաչեցար»<sup>12</sup>... և այսու հեռացան ուղիղ և ճշմարիտ դավանությունից և ոտարացան սուրբ և մեծ առաքելական կաթողիկե լեկեղեցուց... և նույն Դվինում հաստատեցին առաջ[ավ]որ»-ն<sup>13</sup>, ասելով. «Այս է մեր հավատո առաջին որը»<sup>14</sup>: Յեվ չարը չարին ավելացրին ու նզովքով անիծեցին իրենց [գլուխը], քանի վոր չմիաբանեցան Քաղկեդոնի ժողովին<sup>15</sup>...

Յեվ յերբ Վրաց և Հերաց կաթողիկոսն Կյուրիոն (Կվիրիոն) Մցխեթացին<sup>16</sup> տեսավ, վոր հայերն Աբդիշո (Աբդիրո) Ասորվո

\* Յեկեղեցական վրացիներն այրուբենում ք և շ տառերն իրար նման են. ուստի և հաճախ ճիթության հետևանքով տեղի ունի անունների աղավաղումն. Աբդիշո-Աբդիրո, Արշակ-Արքակ, Արտաշիր-Արտաբիր և այլն:

\*\* Բնագրում՝ «Տիմոթեոս Կուզ և Սեբրոս Նազիկեցի (Նազիկիլի)», sic. յիթե «Նազիկիլի»-ն կարդալ «Նաբիկիլի», կստացվի «Նաբիկեցի», վորը մոտ է «Նաբոկա»՝ «Նաբրոկա»-ին, այսինքն «Նարբոկացի»-ին. իսկ վերջինս վաղ թի Սեբրոսի, այլ Փիլոքսենոսի հիշատակության հետ պիտի կապել, վոր բացակայում է վրացիներն բնագրում և վորը մենք վերականգնել ենք, անկյունավոր փակագծի մեջ դնելով:

ձեռքով ժողով գումարեցին քաղաք Դվինում և նզովքով հեռացան ս. կաթողիկե լեկեղեցվո դավանությունից ու բաժանվեցին չորս պատրիարքությունից, և դրժեցին այն ուխտին, վոր սուրբ Գրիգորը դրել էր Կեսարիայի լեկեղեցուց հավիտյանս չբաժանվելու՝ այնտեղից առնելով լեպիսկոպոսական ձեռնադրությունն չորից Հայոց (Սոմխիթի) համար<sup>17</sup>, Հայքն (Սոմխիթն) հրաման ստացավ պարսից թագավորից, վոր [իրենց] լեպիսկոպոսները իրենք ձեռնադրեն: Արդ, յերբ այս ճշմարտությամբ լսեցին Կյուրիոն (Կվիրիոն) [Վրաց և Հերաց] կաթողիկոսն, Աբաս (Աբազ) Աղվանից (Հերաց sic) կաթողիկոսն<sup>18</sup> և Գրիգոր Սյունյաց լեպիսկոպոսն<sup>19</sup>, մեծ վեճ ծագեց Հայոց (Սոմխիթի) և Վրաց (Քարթլիի) միջև: Վրացիք ասում էին, վոր «սուրբ Գրիգորը Հունաստանից բերել տվեց մեզ [այն] հավատքը, վորը՝ իբրև նրա սուրբ դավանություն՝ դուք թողեցիք և լենթարկվեցիք Աբդիշո (Աբդիրո) Ասորվոյն և այլ չար հերձվածողներին... և չհնազանդվեցիք սուրբ Գրիգորի դավանությանը<sup>20</sup> և կիրք հատկացրիք անչարչարիլի չերրորդությանը, ինչպես ձեզ ավանդեց ամբարիշտն Պետրոս թափիչ Անտիոքացին»: Ապա հայերն ամբաստանեցին վրացիներին (Քարթլին) պարսից թագավորի մոտ, թե նրանք հոռոմոց հավատքն են դավանում: Յեվ մեծ վեճ տեղի ունեցավ հայոց և վրաց միջև Ներսես (Ներսես) հայոց կաթողիկոսի որոք և [նույն] Ներսեսի մահվան պահին: Ներսեսը (Ներսեսն), վոր կոչվում էր միջին (չուալ), չարությամբ փոխվեց այս աշխարհից (կյանքից), և նրա աթոռը գրավեց Աբրահամը<sup>21</sup>: Յեվ քեց Կյուրիոն՝ Վրաց (Քարթլիի) կաթողիկոսն՝ Մովսես Յուրտավացուն<sup>22</sup> իր աթոռից, վոր հաստատված էր սուրբ Շուշանիկի մասունքներին կից՝ Հայքում (Սոմխիթում)<sup>23</sup>, և Աբրահամը պահանջեց Կյուրիոնից նրա աթոռը. բայց վերջինս չխոնարհվեց<sup>24</sup>: Յեվ խորացավ վեճը նրանց միջև<sup>25</sup>, և դիմեց Աբրահամը Արարատյան [լեռկիրի] քահանաներին, ասելով. «Կամ նզովեցեք ժողովն Քաղկեդոնի, կամ հեռացեք ձեր բաժնից»: Յեվ վորոնք հնազանդվեցին, ինչպես գրված է, մեծարելի դարձան... իսկ վորոնք չհնազանդվեցին, հանվեցին իրենց բաժիններից և ոտարության մեջ մահացան: Աբրահամից հետո [կաթողիկոս] նստեց Կոմիտասը (Կոմիտոսը)<sup>26</sup>, վորն ընչավետ էր և հարկատու զգեստների և գրաստների և վորն ազնիվ ըլուրեղաքարով էր զարդարում իր գավազանի ծայրն (գլուխն): Մա ամենից առավել ևս խորացրեց վեճը Քաղկեդոնի ժողովի մասին և լոթն լեպիսկոպոսություն զիջեց Աղվանից (Հե-

րաց) կաթողիկոսին, վորի [սիրտ]ն գրավեց և մերժել տվեց ժողովը Քաղկեդոնի. և խաչ շնորհեց Սլունյաց յեպիսկոպոսին, վորպեսզի խաչով ընթանան նրա առաջ՝ ինչպես կաթողիկոսի<sup>27</sup>, և ընդարձակեց նրա բաժինը, և ապա այլ յեպիսկոպոսներին ել ընդլայնացրեց նրանց բաժինները, և ոչսպես ամբողջ Հայքը Սոմխիթը) միացրեց Քաղկեդոնի ժողովի ընդդեմ: Յեվ Մայրագոմեցի (Մայրեգուեմեյի) վոմն անիծյալ Հովհաննին, վորն, յերևակայեցեք, վարդապետ կոչվեց, հակաճառական գրություններով զինեց Քաղկեդոնի սուրբ ժողովի ընդդեմ<sup>28</sup>: Յեվ սրան ուխտեց [Կոմիտասն] բազմել իրենից հետո իր աթոռի վրա<sup>29</sup> և մեկնաբանեց հերձվածողական գրություններն Տիմոթեոս Աղեքսանդրացվո, վորը Կուզ կոչվեց<sup>30</sup>, և Պետրոս Թափիչինը, վորը Փայլ կոչվեց<sup>31</sup>, և Սևերոսի (Սևերիոսի) և այլ հերձվածողների. և [այս գրություններն] մակագրեց [այնպես], իբր թե ուղղափառ վարդապետներն՝ սուրբ Սահակի և Մովսիսի՝ ճառերն են, և այսպիսի կեղծիքով հավատացրեց ամբողջ չերկիրն Հայոց (Սոմխիթը)<sup>32</sup>:

Յեվ շատ ընթերցվածքներ հորինել տվեց [Կոմիտասն] և իր անվանը վերագրեց<sup>33</sup>, նույնպես և առաջին [հայրերի] կանոններն ու կարգերը փոխեց, նրանց տեղը դնելով շեղը, վորով հինը խանգարվեց և նորն ել չհաստատվեց. սակայն ամեն մարդ իր համար ե հոգս քաշում՝ մինչև այժմ: Յեվ այս բոլորը [Կոմիտասն] իրագործեց կատաղած Հովհանն Մայրագոմեցվո (Մայրեգուեմեյի) ձեռքով<sup>34</sup>... Ապա [կաթողիկոս] նստեց վոմն Քրիստափոր, վորը թշնամի չեր Մայրագոմեցուն (Մայրեգուեմեյի), և տրտմեց Հովհանն: Յեվ չեր ինչ-ինչ պատճառով գահընկեց արին [Քրիստափորին]<sup>35</sup>, Հովհանն ուրախացավ, սակայն այս դեպքումն ել նա չարժանացավ աթոռին, քանի վոր այն գրավեց Յեզըը (Եզրան), վորն առավել ևս հուզեց նրա (Հովհանի) նենգ հոգին... Յեվ այսպիսի նենգությամբ մեծարեցին վերոհիշյալ Կոմիտասին (Կոմիտոսին), վորն տիրեց սուրբ Գրիգորի մասունքներին. և Մայրագոմեցվո (Մայրեգուեմեյի) ձեռքով Հայոց (Սոմխիթի) չերկիրը լցվեց մահուչափ խարեբայական ուսմունքով<sup>36</sup>:

Այստեղ արդեն կատարվեց սուրբ Գրիգորի տեսիլքը, վոր նրան հայտնագործեց սուրբ հոգին, իբր վոչխարների մի մասը՝ կերպարանափոխվելով և դալբրի վերածվելով՝ հարձակվեց վոչխարների վրա և անողորմ պատառոտեց նրանց: Նմանապես կատարվեց սուրբ Սահակի տեսիլքը, վորը տեսավ վոսկե գունդ և նափորտ սուրբ սեղանի վրա, քանի վոր Արշակունյաց (Արբակ-

յան\*) թագավորության անկումով բարձավ ե քահանայ[ապետ]ությունն սուրբ Գրիգորի զարմիցն<sup>38</sup>... Այսպես նրանք հարեցան Մայրագոմեցվո (Մայրեգուեմեյի) վարդապետությանն:

Սակայն վոչ անշան ուխտ տվեց Խոսրով (Պուսարո) թագավորը Ներսես (Ներսե) կաթողիկոսին, վորը կոչվում եր Եուլայ, այսինքն ե հայերեն «միջին», վորով խախտեց նրա [առանց այն ել] անխոհեմ սիրտը: [Յեվ Ներսեսը] գումարեց առաջին ժողովն Դվինում, վորով [հայերը] հեռացան կրոնով հույներից (բերձեններից) ու Յերուսաղեմից:

Իսկ ամբողջ Քարթլին և Չորրորդ Հայքը (Սոմխիթը) հրաժարվեցին հայերից քահանայական ձեռնադրությունն առնելուց: Իսկ աղվաններն (հերացիք) ու սյունեցիք մի առժամանակ հեռացան և կրկին հարեցան Ներսեսին<sup>39</sup>, վորն իր մորուքը վոսկվով եր ներկում<sup>40</sup>: [Ապա] ժողով գումարեց հայոց Հովհան կաթողիկոսն Մանազկերտում և ջրախառն [գինին] ու խմորահացը վտարեց սուրբ խորհրդից՝ հաստատելով բաղարջն ու անխառն [գինին]<sup>41</sup>...

Յեվ բազմատեսակ էյին նրանց (հայոց) հերձվածքները՝ Սաբելիանոսի, Հակոբի և Տիմոթեոս Կուզի հետևողների, վորոնց ախտը յուրացրել էյին մանիքեյացիք...

Յեվ լուր տարածվեց, վոր Հայքը (Սոմխիթը) հեռացավ սուրբ Գրիգորի դավանությունից և Կեսարիայից ձեռնադրությունն [առնելուց], ինչպես վերջինս եր ուսուցել<sup>42</sup>: Յեվ [դեսպաններ] ուղարկեցին [հայերն] Ներշապու Տարոնի յեպիսկոպոսի մոտ, վորին պարսից թագավորն եր նշանակել հանդերձ յերկու ընկերներով, և հայտնեցին, վոր «բոլորը [դավանա]փոխ են չեղել՝ ընդունելով Նեստորի աղանդն և հաստատելով Քաղկեդոնի ժողովն, և մենք չունինք աթոռ, ուր ձեռնադրություն կատարենք. ուստի և գիմում ենք քո բարեպաշտությանն, վոր մեզ յեպիսկոպոսներ նշանակես, քանի վոր բոլորը ճանաչեցին նրանց՝ աղանդի մեջ ընկեցելը»:

Յեվ քանի վոր պարսից թագավորները ստիպում էյին հայերին, վոր հեռանան հունաց (բերձենների) դավանությունից, ինչպես վերև հիշեցինք, և վորպեսզի կրոնափոխությամբ նրանց միջև թշնամությունն ընկնի, և այսու առավել ևս հնազանդ լինեն պարսից պետությանն, մեծամեծ կաշառներ խոստացան հայոց վար-

\* Տես 36-րդ յերեսի \* ձանթությունը:

դապետներին իրագործելու այս, յերբ բարձավ քահանայապետությունն Գրիգորի զարմիցն<sup>43</sup>։

Յեվ հենց վոր ներշապու չեպիսկոպոսը տեղեկացրեց ներսես (Ներսես) կաթողիկոսին, վոր եր Աշտարակեցի (Աշխարակ[ե]ցի?)<sup>44</sup> և չար հերձվածող, և վոմն Պետրոս Բերդողին<sup>45</sup>, այլ և ուրիշ յեպիսկոպոսներին և ազատներին (ազնվականներին), հրամայեցին յերկրորդ մեծ ժողովն դումարել նույն Դվինում<sup>46</sup> նույն ներսեսի [կաթողիկոսության] յերկրորդ տարին, Հուստինիանոս (Իստվինիան) թագավորի տասնուչորսերորդ տարին, Պոսրով (Պուսարո) պարսից թագավորի յերկրորդ տարին, այն տարին, յերբ վկայեց սուրբ Յիզտիրուզիտը (Ազիդ-բուզիտը)<sup>47</sup> և կրկին նզովեցին նույն սուրբ ժողովն Քաղկեդոնի<sup>48</sup>, վոր կոչեցին նեստորական՝ համաձայն անաստված Աբղիշոյի (Աբղիբոյի) և նույն թվին յերևան հանեցին մեկնողական գրությունն Տիմոթեոս և Փիլոքսենոս (Փիլաքսոն) հերձվածողներին, վորոնք ասորի եյին և առաջինները յեղան, վոր գրեցին Քաղկեդոնին ու Քրիստոս աստուծո յերկու ընտելյանն ընդդիմադրելու մասին և Կուղի գրվածքին<sup>49</sup> ստորադրվեցին իրենց իսկ մեռցնելու համար և սասցին «մի բնություն բանին աստուծո և մարմնոց», և անմահական բնությամբն խաչեցյալ և մեռյալ Քրիստոսն քարոզեցին, այսինքն՝ «խաչեցյալ» ավելացրին «սուրբ աստված»-ի մեջ, վոր ե «խաչեցար», համաձայն Պետրոս Անտիոքացվո<sup>50</sup>, վոր Սաբելիոսի (Սաբելի) ախտով եր վարակված։ Յեվ նզովքով կրկին սահմանեցին ուղիղ դավանությունից բաժանումը և վերոհիշյալ հերձվածող վարդապետներին ուղարկեցին՝ ամբողջ Ասորիքում ավետելու, վոր միաբանությամբ հավիտյանս ընդունել են նրանց աղանդն<sup>51</sup>։

Յեվ իրենց մետրապոլիտ կացուցին մահագործ (մահաձեռն) Աղիկառնացվո և մասամբ Աբղիշոյի (Սբղիբոյի) կողմնակից [համարվող] մեկին։

... [Յեվ] հեռացան ճշմարտությունից, վոր ուղիղ սովորել եյին սուրբ Գրիգորից։

Յերեք տարի անց Քաղկեդոնի ժողովից հետո սուրբ Մահակն ու Մաշտոցը (Մաստոցն)<sup>52</sup>, Գրիգորի շառավիղները (թուները), և նրանց բոլոր աշակերտներն ու վարդապետներն՝ առաջինները մեկնաբանեցին Ղևոնդ (Լեոնտի) և Հովսեփ Հայոց (Սոմխիթի) վարդապետների և այլ անթիվ սրբոց [վկայա]բանությունները (գրքերը), վորոնք բարի (սուրբ) սերմ[եր] ցանեցին նրանց (հայոց) մեջ<sup>53</sup>։ իսկ նրանք (հերձվածողները) ատրաշեկ տատասկով դիտ-

մամբ խոցեցին նրանց հողիներն ու անմեղ ժողովրդին և ինքն Մովսես Բերդողն [նախա]զգուշացրեց նրանց կործանումը<sup>57</sup>, բայց [հերձվածողները] նրան ել չլսեցին։

Սրանից հետո անցավ մի քանի ժամանակ, [և] մեռավ Վահան Մամիկոնյանը (Մամկունին), վորն իր քաջագործությամբ գրավեց պարսիկներից մարզպանությունն, ձեռք բերեց քրիստոնյաների իրավունքները, Տրդատ (Թրդատ) թագավորից սահմանված՝ յեկեղեցական և չքավորաց կարգերն, գավառներն վերադարձրեց ու առանց հարկի ազատեց<sup>55</sup>։ Այս ժամանակից պարսից մարզպանները գրավեցին Հայքն (Սոմխիթը), և քրիստոնեական կարգն արհամարհվեց ու յեկեղեցական վարչապետությունն վերացավ, և ազատների (ազնվականների) իշխանությունն տապալվեց պարսից մարզապաններից, և կաթողիկոսներն ու յեպիսկոպոսները ճշմարտությունից շեղվեցին և հանդգնություն սովորեցին պարսիկներից ազատների (ազնվականների) ընդդեմ [գործելու], և գավառների հարկն [ե]լ իրենք եյին վճարում՝ հանձնելով յերկիրն յեպիսկոպոսներին ու քորեպիսկոպոսներին, վորպես պարսից թագավորության հլուներին։

Յեվ կաթողիկոսներից ու յեպիսկոպոսներից վոմանք վորդեգրեցին պարսից թագավորներին և վորդեգիր եյին անվանում կավատին ու Պոսրովին (Պուսարոյին), վորի պատճառով կառավարության իրավասությունն յուրացրին և վարվում եյին վոչ թե համաձայն ճշմարտությանն որինաց, այլ ըստ իրենց քմահաճույքի, և յեկեղեցիների պետքերը սկի յեկեղեցիների համար չեյին սահմանված, այլ իրենց ծառայեցնելու նպատակով, [վոր] և մարդկանց ցույց տալու համար ցիրուցան եյին անում։ [և] այս [պատճառ]ով բոլոր յեպիսկոպոսներն ու բոլոր վանահայրերն՝ անաստված թագավորների հաճությամբ՝ աստուծո զայրույթն հարուցող ունայն գանձումների յետևիցն ընկան։ Յեվ ապա ազատներն (ազնվականներն) ու զինվորականներից վոմանք՝ նրանց որինակին հետևելով՝ միանգամայն հեռացան սուրբ ներսեսի<sup>56</sup> և սուրբ Մահակի<sup>57</sup> սահմանված կանոններից։ [ԶԲ] վոր Վահան Մամիկոնյանի (Մամկունիի) որոք վորոշվեց՝ բոլոր մեծամեծների տներում տարին մի անգամ տոնել սրբերից մեկի հիշատակը, վորպեսզի սիրո սեղանով (ագապով)<sup>58</sup> միխթարվեն նրանց տներում ի փառաբանություն աստուծո՝ չքավորները, տկարներն ու ցավազարները, վորբերն ու տնանկները։ Այս բոլորը նրանք վերացրին իրենց սեպհական գանձումների համար, և խանգարվեց ու խախտ-

վեց հոգեվորական բոլոր բարի սովորույթն ու կարգը, և որեցոր հաստատվեց չարն, և յեպիսկոպոսարանները դարձան կոստներ. և չերբ նախարարները գնում ելին յեպիսկոպոսական դուռն, ժամանակ չեյին գտնում այնտեղ մտնելու և ամթալի վերադառնում եյին ինչպես պարսից մարզպանի դռնից և ավելին<sup>59</sup>. Այս [պատճառ]ով այս մեծ անպատվությանը չհանդուրժեց Վարդան Մամիկոնյանը (Մամկունը), վորը Չոխ<sup>60</sup> եր կոչվում, այն է «կամակոր» (sic), և նրա ազգական ուրիշ նախարարները, վորոնց անպատվել եյին, սպանեցին վոմն պարսիկ Սուրեն մարզպանին՝ նրա տունը կրակի յենթարկելով, և ընտանիքով հանդերձ փախուստի դիմեցին դեպի Կոստանդնուպոլիս: Գնալով այնտեղ, նըրանք բարյաց[ակամ] ընդունելություն գտան Հուստինիանոս (Իսովինիան) թագավորի կողմից: Սակայն նրանք չմիաբանեցան հուլների (բերձենների) հետ. և թագավորը զարմացավ և հարցրեց պատճառը: Յեվ նրանք ասացին, վոր «վեճ յեղավ Քաղկեդոնի ժողովի մասին, վորը մեր վարդապետները չընդունեցին»: Յեվ թագավորը հրամայեց կանչել Հայոց (Սոմխիթի) վարդապետներին ու յեպիսկոպոսներին, վորպեսզի հարցուփորձի յենթարկվեն և ճշմարիտն ճանաչեն: Յեվ գումարվեց մեծ ժողով Կոստանդնուպոլսում, ուր մեծ քննություն արին և ճշտվեց այն, ինչ վոր իրավացի չեր, և բոլորը միաբերան ընդունեցին ժողովն Քաղկեդոնի, և ամբողջ Հայքն (Սոմխիթն) իսկ անիծեց և նզովեց նրա կշտամբողին և՛ միանալով հուլների (բերձենների) հետ՝ ինդրեց թագավորից բարվոք [ընդունի], վոր նրա (Հայոց) ծախքով շինվի Սոփիայի արևմտյան դուռն, վորն այն պահին եյին կառուցում: Յեվ թագավորն [իրավունք] շնորհեց կատարելու նրանց (հայերի) բաղձանքը, և նրանք տվին շինության գինը՝ մաքուր արծաթ հարյուր հազար (տասը բյուր) և կոչեցին այն «դուռն Հայոց», [ինչպես այն կոչվում է և] մինչ որս<sup>61</sup>:

Յեվ՝ վերադառնալով նույն ժողովից՝ [ժողովական հայերը] հասան Հայք, և վոմանք ջերմեռանդությամբ ընդունեցին [այն] և հնազանդվեցին միաբանությանն, իսկ վոմանք՝ իբրև ոճեր՝ առավել ևս ուժ տվին ժողովրդի գրգռմանն ու վրդովմունքին՝ Մալբաղու մեջ (Մալբաղու մեջ) դրամամբ. և այս յեղավ Հովհան կաթողիկոսի որոք:

Սրանից հետո Մորիկ (Մավրիկ) կայսրն<sup>62</sup> [Սոսրովի մոտ] ուղարկեց Հայոց (Սոմխիթի) մեծ զորավար Մուշեղ (Մուշեղ) Մա-

միկոնյանին (Մամկունին), և Հայոց (Սոմխիթի) թագավորությունը տվեց Սոսրովին (Սուսարոյին)<sup>63</sup>,

Իսկ ամբողջ [Հայքը՝ սկսած] Դվինից՝ Սոսրովը (Սուսարովը) յենթարկեց կայսեր, և խաղաղություն ընկավ նրանց միջև. իսկ Մուշեղին (Մուշեղին) մեծամեծ ընծաներ տվեց և ուղարկեց արքայանիստ [քաղաքն]: Յեվ հասավ Մուշեղն (Մուշեղն) Կոստանդնուպոլիս խաչվերացի տունին<sup>64</sup>, և [ինչպես] ինքը, [նույնպես] և նրա ուղիկիցները չհաղորդվեցին հուլների (բերձենների) հետ. և հարցրեց թագավորը [պատճառի մասին] և պատասխանեցին, վոր «Քաղկեդոնի ժողովի և Քրիստոսի յերկու բնության համար ես»: Իսկ թագավորն ասաց. «Քեզանից (Մուշեղից) առաջ Վարդանն ու նրա [կողմնակից] ազատները (ազնվականները) ձեր իսկ քահանայապետների ձեռքով ու գլոց բազմազան քննությամբ ընդունեցին [ժողովն Քաղկեդոնի]»: Մուշեղն (Մուշեղն) պատասխանեց. «Փուցե՞ տգիտությամբ կամ ձեզանից յերկուց կրելով [արին այդ]. իսկ յի՞թե քրիստոսասեր արքայությունդ հրամայե և ճշմարտությամբ լինիս միջնորդ, դու սրա մասին մեր վարդապետներից ճշմարիտն կգտնես»:

Յեվ հրամայեց թագավորն Հայոց (Սոմխիթի) կաթողիկոս Մովսիսին<sup>65</sup> և բոլոր յեպիսկոպոսներին, վորպեսզի գան Կոստանդնուպոլիս և նորից քննեն ու հաստատվի ճշմարիտն:

Բայց Մովսես կաթողիկոսը չհամաձայնվեց գնալու, այլ այսպես պատասխանեց դեսպաններին. «Չեմ անցնի Ազատ գետն<sup>66</sup>, վոր ե սահմանն պարսից, չեմ ուտի հունաց (բերձենների) թըխվածքը և չեմ խմի նրանց թերմոնը<sup>67</sup>»: Նույնպես և Վասպուրականի յեպիսկոպոսները, վորոնք պարսից պետության ներքո եյին, չկամեցան գնալ: Միմիայն Տարոնի յեպիսկոպոսն ու բոլոր [այն] յեպիսկոպոսները, վորոնք հունաց (բերձենների) ձեռքի տակ եյին, շտապ կիրպով ուղիվորվեցին դեպի արքայանիստ [քաղաքն] և՛ կրկին անգամ քննելով՝ նորից հաստատեցին ժողովն Քաղկեդոնի բոլորը միաձայն Մորիկ (Մավրիկ) թագավորի առաջ, և խոստովանեցին յերկու բնությունն Քրիստոսի ճշմարիտ, նույնպես և միաբանության յերդումն գրեցին, և վերադարձան: Բայց չերբ նրանք յեկան Հայք (Սոմխիթ), նրանց [վորոշումն] չընդունեց[ին] Մովսես կաթողիկոսն ու այլ յեպիսկոպոսները, վորոնք պարսից մասունն եյին<sup>68</sup>:

Յեվ բաժանվեց Հայքը (Սոմխիթը), և սրանք (քաղկեդոնիկները) կաթողիկոս կացուցին Հովհան Կողովրտեցուն<sup>69</sup>, և սրանից

հետո տասնևյերկու տարի մինչև Մորիկ (Մավրիկ) թագավորի մահը՝ բազում ընդդիմադրություններ եր ընթանում [Հայքը] Քաղկեդոնի ժողովի ու մեր տեր աստված Քրիստոսի լերկու բնության պատճառով:

Յեվ վերոհիշյալ Արրահամ կաթողիկոսն քչեց Ա[յ]րարատից [Քաղկեդոնի ժողովի կողմնակից] քահանաներին և Հովհան՝ վանահորն սուրբն կաթողիկեին, վոր կոչվում է նաև Շողակաթ (Շուկաթ), և [վանահայրերին] սուրբն Հովսիմի, և՛ Ոշականի (Ուշականի) և՛ Յեղվարդի (Ելիվարդի) և՛ Արամոնաց և՛ Գառնիի և բոլոր վանքերի ու ամբողջ Ա[յ]րարատի, իսկ վոմանց հարկադրեց նգովել սուրբ ժողովի [Քաղկեդոնի] <sup>70</sup>:

Յերեք տարուց հետո պատերազմ ծագեց Բասենում (Բասիանում), ուր հուլները (իոնները) պարտվեցին պարսիկներին, և [վերջինները] գրավեցին Կթուրի քաղաքն [Հ]աշտենից. իսկ չորրորդ տարին անաստված Փոկա կայսեր, վորը սրով սպանեց Մորիկ (Մավրիկ) թագավորին [ն ու նրա] վորդոց, Կարնո (Կարնու) քաղաքն [ևս] հանվեց ասպարեզին:

Սուլն թվին Ահմադը գրավեց [նուլն] Կարնո (Կարնու) քաղաքն [գերելով նա] և Հովհան կաթողիկոսին, վորը [Հայքի] հունաց (բերձենների) մասումն եր <sup>71</sup>, և սուլն թվին Մովսես կաթողիկոսը բաց թողեց (քչեց) իր ձեռքից Հովհանի կողմնակից քահանաներին, վորոնք գնացին՝ մի մասը հուլների (իոնների) մոտ, մյուսը՝ Տայք (Տաո) <sup>72</sup>, և սրանց կոչում են (?) «Շողակաթ» (Շուկաթ):

Ինչպես սուրբ Գրիգորին լերևաց տեսիլքում, վոր լերկինքը բացվեց և լույս իջավ այն տեղում <sup>73</sup> [նուլնը կատարվեց այժմ]: Յեվ մի առժամանակ անց Հերակլ կայսրը <sup>74</sup> լեկավ Հայք (Սոմխիթ) և՛ տեսնելով Հայոց հերձվածքն՝ շատ ցավեց նրանց կորժանման առթիվ, [վոր հետևանք եր նրանց իսկ] ակամա շեղման. և հրամայեց գոմարել մի մեծ ժողով Հայոց (Սոմխիթի) լեպիսկոսաների ու վարդապետների, և գիր գրեց Յեզր (Եզրա) կաթողիկոսին <sup>75</sup> ու ազատներին (ազնվականներին), վորպեսզի ժողովեն Կարնո (Կարնու) քաղաքն <sup>76</sup> և քննեն հավատքը, Քաղկեդոնի ժողովի առթիվ, և հայերը ճշմարիտ ճանաչեն Քրիստոսի լերկու բնությունը:

Յեվ լեկան բոլորը միասին թագավորի մոտ և յերրորդ անգամ մանրամասն քննեցին ու հաստատեցին ճշմարիտն և հնազանդվեցին հայերն լերդումով [ու] ստորագրութամբ, վոր նրա

(Քաղկեդոնի) մասին վիճելով՝ վոչվոքի չեն ընդդիմադրի. բայց չերբ Գվին վերադարձան, նուլն կործանիչ աղանդին չենթարկվեցին, վորովհետև նրանց (աղանդավորների) վարդապետության տեղն այն եր, ուր ամեն ինչ ճշմարիտն խեղաթյուրելով է ասվում:

Իսկ նուլն Մայրագոմեցին (Մայրեգուեմելին) գրգռում եր վոմն հերձվածող վանականներին (մոնոդոններին) և Ստեփանոս (Ստեփանե) Գարգմանից լեպիսկոպոսին <sup>77</sup> և Մաթուսաղա (Մաթուսալա) Սյունյաց քերդողին <sup>78</sup> և այլ պատահական մի վոմն քահանայի, վորոնք ներկա չեյին լեղել այն (Կարնո) ժողովին, վորպեսզի չհաղորդվեն Յեզր (Եզրա) կաթողիկոսից և [բոլոր նըրանցից], վորոնք նրա հետ եյին միացել: Մի քանի որից հետո Ստեփանոս (Ստեփանե) լեպիսկոպոսն ու Մաթուսաղան (Մաթուսալան) լեկան Յեզր (Եզրա) կաթողիկոսի մոտ և հաղորդվեցին նրա մոտ: Հենց վոր չար[ամիտ] Մայրագոմեցի (Մայրեգուեմելի) վանականը լեց, վոր նրանք միացան Յեզրին (Եզրային) և Մաթուսաղան (Մաթուսալան) Սյունյաց լեպիսկոպոս ձեռնադրվեց, մեծ վիրավորանքով հայնուում եր Ստեփանոսին (Ստեփանելին) և Քերդողին, ասելով. «Փոքր է Յեզրի (Եզրայի) ուրացումը ձեր սխալմունքի հանդեպ, քանի վոր նա՝ թագավորից լերկուող կրելով կամ գիտուն մարդկանց հետ մերձենալով՝ ուրացավ կրոնը, իսկ դուք սնափառության ու շողոքորթության համար անբուժելիորեն կործանվեցիք»:

Հենց վոր Յեզրը (Եզրան) իմացավ այս, դիմեց այն չար[ամիտ] վանականին և բոլորի ներկայութամբ ասաց. «Յես չերեք անգամ կանչեցի քեզ և չերեք անգամ Մաթուսաղային (Մաթուսալային) և Ստեփանոսին (Ստեփանելին), — քանի վոր դուք եք լերկրի[ս] վարդապետներն ու գիտնականները, — վոր գայիք և պատասխան տայիք թագավորին, բայց դուք չեկաք, և այժմ մեր վորոշմանը հանդիմանեցիք ընդդիմադրում ես, մեր [դեմ], վորոնք գրեքից ու վարդապետներից ճշմարտապես քննեցինք արդարացին, ընդունեցինք տեր մեր Հիսուս Քրիստոսի լերկու բնությունն կատարյալ աստվածութամբ և կատարյալ մարդկայնութամբ, մի դեմք և մի պատկեր, նախախնամութամբ անբաժան. և առաջին սուրբ հայրերի գրությունները, վոր կարդացինք, նուլնն եյին վկայում. և մենք հնազանդվեցինք նրանց (հայրերի) հրամաններին և արամադրվեցինք դեպի բարին. և այժմ վոչինչ չե անցած՝ աստվածային գրությունները մեզ մոտ են, վերցնենք և ճշմարիտն սովորենք»:

Յեվ գրոց վկայութիւնս փակեց նա (Յեզր) բերանը թե վոչ, [վանականը] գարշահոտութիւնս վորձկաց՝ նման չար հերձվածքին, և ասաց. «Ի վիճակի չեմ բնդունել այդ գիրը, վորովհետև սուրբ գրքերին նեստորականներն են այդ ավելացրել»: Յեվ գնաց բազում մարդկանց գալթակղեցնելու... և նրա աշակերտներն իր գյուղի անունով «Մայրեվանեցի» (Մայրենելի) եյին կոչում նրան<sup>79</sup>:

Իսկ նա (Մայրագոմեցին) գնաց Հունաստան նուչն ընդդիմադրութիւնն ցուց տալու համար և մի փոքր [հունարեն] լեզուն [եւ] սովորեց, վորպեսզի գրանով ավելի ևս հավատացնել տա [իրեն] հայերին, և վերագարձավ Հայք (Սոմխիթ). առաջվանից վատթար տարածում էր հերձվածքն և աշխատում էր՝ մեծամեծ մարդկանց աջակցութիւնս ու հերձվածողների ցանկութիւնս՝ Յեզրից (եզրայից) հետո գրավել նրա աթոռը, վոր նրան խոստացել էյին Քաղկեդոնի ժողովին ընդդիմադրութիւն ցուց տալու համար<sup>80</sup>:

Իսկ Յեզրից (եզրայից) հետո աթոռը գրավեց Ներսես (Ներսես) Իշխանցին, վորը կամոքն աստուծո արժանի և ուղղահավատ մարդ էր. և բոլորովին հուսախար չեղավ այն նենգ[ամիտ] Հովհան վանականը, նամանավանդ նրա համար, վոր Ներսեսին (Ներսեսին) տեսել էր Հունաստանում հաղորդվելիս Կոստանդին Փոքր թագավորի հետ, և վոչվոք չեղավ ընդդիմադրելու և ասելու, վոր «Քաղկեդոնից հետո Ներսեսն (Ներսեսն) եւ Յեզրի (եզրայի) պես սխալվեց»: Այս պատճառով եւ Ներսեսը (Ներսեսն) կանչեց նրան, և բազում յեպիսկոպոսների և վարդապետների ու ազատների (ազնվականների) ներկայութիւնս մեծ քննութիւնս արին նուչն վեճի առթիւ, և նրանք բոլորը վճիռ կայացրին կարգալուծ անել նրան (Մայրագոմեցուն) [և քչել] յերկրից իբրև խաբերայի. և սուրբ Ներսես (Ներսես) կաթողիկոսն ցասմունքով արտաքսեց նրան [Հայքից]<sup>81</sup>:

Յեվ թեոդորոս՝ Ռշտունյաց տերն, իշխանն Հայոց (Սոմխիթի), պղնձե աղվեսն տաքացրած նրա ճակատին կոյցրեց իբրև նշան հերձվածքի, հանդերձ նրա չիրկու ընկերակից — վանականներով (մոնոզոններով): Ապա նա փախուստի դիմեց դեպի Կովկասյան շեճները և այնտեղից շուտով վերագարձավ, վորովհետև լեոնականները նրան չեյին ընդունել, քանի վոր վերջիները կոապաշտներ էյին, և անցավ Կամբեչ[ովան]՝ տիրելով փոքր ձորին, վոր «Հայոց (Սոմխիթի) ձոր» է կոչվում, և շատերին աշակերտ վերցրեց վոչ այնքան այդ [ձոր]ում, վորքան Կուր [գետի] հայկուչս՝

Ալլարառում, Գարգամանում, Զորոփորում (Զորոփորում) և Սոմխիթում և շատերին վանական (մոնոզոն) դարձրեց նուչն անկանոն վարդապետութիւնս. և լցվեց յերկիրը վորոժով:

Յեվ Ներսես (Ներսես) կաթողիկոսի մահից հետո, Անաստաս կաթողիկոսի որոք<sup>82</sup>, [Մայրագոմեցին] յեկավ Ալլարառատ՝ աշակերտալներով հանդերձ:

անել փակվեց [ամբողջում] և հետն ուներ բազմություն զորաց:  
Բայց [Աբու-Ղասիմը] այդ բերդին ել մոտեցավ, վոր և պայքա-  
րից հետո գրավեց, և Հայոց (Սոմխիթի) բոլոր իշխաններին, իշ-  
խանուհիներին և ազատներին (ազնվականներին) գերեց:

Յեվ [Սմբատ] թագավորին յերկար տանջանքից հետո սպա-  
նեց և զլխատած կախազանի հանեց քաղաք Դվինի կենտրոնում:

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այսինքն քաղկեդոնիկ կամ յերկաքնակ (գլխփիզիտ):
2. Այսինքն հակաքաղկեդոնիկ կամ միաքնակ (մոնոփիզիտ):
3. Տես հինգերորդ գլխի 12-րդ ծանոթությունը:
4. Հայաստանի աշխարհագրության այս պատկերը վերին աստիճանի հե-  
տաքրքիր է, վորքան ել այդ՝ X դարու սկզբների նկատմամբ՝ չենք դատում վոչ-  
արաբական աշխարհագիրների և վոչ ել հայ պատմիչների նկարագրությանը:  
Մեզ, հմմ. M. Brasset. Histoire de la Géorgie. t. I, p. 276, n. 3:
5. Տես նախորդ ծանոթությունը:
6. Տես 1 ծանոթ:
7. Նույնը:
8. Վրաց «Կաետ»-ը, բայց եվ. Ջավախիշվիլու (Վրաց իրավունքի պատմու-  
թյունը, վրացերեն, դ. II, մ. 1, Տփղիս 1928, էջ 142), նույն արաբ «Գալիոն»  
վոր հազարապետ է նշանակում:
9. Սմբատ խոստովանողի մասին և խոսքը:
10. Աբխազիա (Աբխազեթ) ասելով, վրացի հեղինակը, անկասկած, հաս-  
կանում է արևմտյան Վրաստանը:
11. «Ղվիլի բերդ» (Ղուեկիս ցրխ) հատուկ անունը վոմանք՝ կապելով  
հասարակ «Ղվիլի» բառի հետ, վոր վրացերեն պահիր է նշանակում՝ մեկնել ևն  
ըստ այնմ և հասկացել «Պանրի բերդ» կամ «Պանրաբերդ», և այս և պատճառը,  
վոր Կոնստանդին Ծիրամածինը իր De administrando imperio-ի XLVI գլխում  
(Migne, Patrologiae cursus completus, series graeca, t. CXIII, 357) այդ բերդը  
կոչում է Τροχάστρον: Նույնը Աստղիկը, ինչպես ստորև կտեսնենք, անվանում է  
«Կուեկոյ բերդ»: Ինչ վերաբերում է այդ բերդի աշխարհագրական դիրքին, հայտնի  
յե, վոր այն գտնվելիս է յեղեյ Սամցխե-Մխախեթում (Իվ. Ջավախիշվիլի, Վրաց  
ժողովրդի պատմություն, II, 1914, էջ 323):
12. «Գորբոնի վկայաբանության» մեջ նկարագրած անցքերի մասին հայ  
մատենագրության մեջ, յիթե հաշիվ չառնենք Հովհան Գրապխանկերտեցվո, Սաւ-  
վել Անեցվո և Ստեփանոս Որբեյաթի կցկաուր տեղեկությունները, փորը ի շատե  
մանրամասն խոսում է Աստղիկը (Ստեփանոսի Տարոնիցւոյ Աստղիկան Պատմու-  
թիւն տիեզերական, էջ 164—165) և... Աարներսին Վրաց թագաւոր և Գաղիկ  
իշխան Վասպուրականի, որ էր քեռորդի Սմբատայ, և Աշոտ որդի Շապուոյ, եղ-  
բոր Սմբատայ, ամենայն զօրօքն իւրեանց միաբանին ընդ նմա (Յուսուփայ), թող-  
լով ի բաց զթաղաւորն Սմբատ՝ նենգազործն նախանձեալ ի շինութիւն աշխար-

նիս Հայոց: Չոր խմացեալ թագաւորն Սմբատ զնկնդաւոր խորհուրդս նոցա՝  
հանդերձ տերամբը Հայոց և ամենայն գորօք զնայ ի դաւառն Տաշրաց ի դիւղն  
Օձուն, և անդուստ յԱփսազս անցանէ: Եւ Յուսուփ հետամուտ լինի մինչ ցա-  
մուրն, և մարտուցեալ ընդ Կուելոյ բերդին՝ առնու զնա: Եւ յետ այնորիկ ի Տփղիս  
անցանէ: Իսկ թագաւորն անդրէն ի Շիրակ դառնայ: Եւ ի գալ ամին միւսոյ  
գարձեալ սաստկապոյն գորու ելանէ: Յուսուփ յերկիրս Հայոց: Արոյ ընդգէժ կը-  
թեալ ամենայն գորուն Սմբատայ ... և մարտուցեալ ընդ միմեանս .. պարտեալ  
գորն Հայոց՝ ի փախուստ դառնայ: Իսկ թագաւորն Սմբատ փախուսեալ ամրա-  
նայ յամուրն Կապուտայ: Եւ հետամուտ ելեալ տաճիկ գորուն՝ դան ի դաւառն  
Բագրեանդայ... և ապա երթեալ հասանին յամուրն Կապուտայ: Իսկ թագաւորն  
ի դաւոյ ազատացն, որք առ իւրն էին մնացեալ, գարհուրեալ՝ ցուպ ի ձնոն ա-  
ռեալ [երթայ] առ Յուսուփնո ըզի Արուսաճի: Եւ անորն Յուսուփ հանդերձ թա-  
ղաւորան ի Դուին չուեաց, և երթեալ մարտնչէր ընդ զդեակ բերդին, որում  
նրնջակ կոչեն, յորում ամրացեալ էին կանայք ազատացն և գանձք նոցին. և  
ասեալ զամբոցն՝ անդրէն դառնայ ի Դուին: Եւ ապա զթագաւորն Սմբատ զփայտէ  
Վախեալ սպանանէ ի Դուին քաղաքի յՅԿԻ թուականին»:

թ.

## ԱՆԱՆՈՒՆ (ՄԻՆՋ X Դ.)

### ՈՐՀՆԵՐԳՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՎԻՆ

Մի որհներգի մեջ, վոր պահված և Աթոնի Իվերոն կոչված  
մալրարվանքի վրացերեն ձեռագրաց հավաքածուի X-րդ դարու մի  
գրչագրում, վրացիները զիմում են Մ. Գրիգոր Պարթևին (լու-  
սավորչին) իբրև «լցնողի հայ աշխարհը աստվածային ուսման  
անուշահոտութլամբ», այս բառերով:

«Հավատով դեպի բոլորի աստվածը հաստատեցիր Բրիստոսի  
յեկեղեցին անդրգվելի ժայռի վրա»:

Մի ուրիշ որհներգի մեջ հին վրացիները Գրիգորին մաղ-  
թանք են ուղղում:

«Ո՛վ Գրիգոր, դու, վոր Հալաստանի աստղն ես, հիշիր քեզ  
հետ քո հոտին — փրկչի առաջ. շնորհիք մեզ վողորմություն և  
ծավալիր աշխարհում խաղաղություն»:

(Տես II. Մարթ. Крещение армян, грузин, абхазов и аланов  
св. Григорием (Арабская версия), — Спб. 1905, стр. 154 = նույնը,  
Մկրտութիւն Հայոց, Վրաց, Արխագաց և Ալանաց ի սրբոյն Գրի-  
գորէ, Թարգ. Յուսիկ աբխալիսկոպոս, Վաղարշապատ, 1911, էջ 92):

Փ.

## Ա Ն Ա Ն Ո Ւ Ն (X Դ.)

### «ԴԱՎԻԹ ԳԱՐԵՉԵՑՈՒ ՎԱՐՔԸ»

Դավիթ Գարեջեցին (Դավիթ Գարեջեյին), վորի անվան հետ են կապված Տփղիսի «Մամա-Դավիթ» կամ «Մթածմինդա» (Մթածմինդա) կոչված վանքը՝ նույնանուն լեռան լանջին, և «Գարեսջի բազմալերանց» (Գարեսջի մրավալմթա) այրիվանքերից մեկը, այն և Ս. Դավթի մայրավանք-անապատը - Ղարաչաղ կայարանից մոտ 30 կիլոմետր հեռավորութեամբ գեպի աչպես կոչված «Տվարածատափ» (Իվ. Չավախիսիսի, Վրաց ժողովրդի պատմութեանը, II, Տփղիս 1914, էջ 308) = «Տովարածատափ» (Н. Ашот, Армения в эпоху Юстиниана, стр. 314), այն և 5 վերստանոց քարտեղի «Տաուրատափ»-ն, — այն գործիչներին և, վորոնց սովորաբար «ասորի հայեր» են կոչում և վորոնք VI դարումն են մուտք գործել արևելյան Վրաստան (Գարթլ-Կախեթը) քարոզչական նպատակով: Այս «ասորի հայերի» մասին մինչև վերջին ժամանակները այն կարծիքն էր տիրապետում, վոր նրանք իբր թե 13 հոգուց բաղկացած խմբով ելին միաժամանակ չեկել Վրաստան քրիստոնեութունն հաստատելու նպատակով: 1925 թվին հրատարակած իր հատուկ ուսումնասիրության մեջ «Ասորի գործիչների Քարթլի գալու հարցի մասին» (Bulletin de l'Université de Tiflis, № 6, էջ 82—107, գերմաներեն ռեզյումեով) Կոն. Կեկելիսիսը բավականին հաջող կերպով ապացուցեց, վոր այդ «հայերը» չեկել են արևելյան Վրաստան վոչ թե 13 հոգուց բաղկացած մի խմբով, այլ զանազան խմբերով և ընդհանուր թվով վոչ պակաս քան 17 հոգի, և այն էլ վոչ թե միանվագ, այլ զանազան ժամանակներ, և նրանց թվում առաջին հերթին Դավիթ Գարեջեցու խումբը բաղկացած իրեն՝ Դավթից, Ղուենկիանոսից (Լուկիանոս) և Դողոյից, մոտավորապես 520 թվին: Ինչ վերաբերում է այդ

«հայերի» աղբյուրն (տոնմական) ծագմանը, դրա մասին տեղի ունի տարածաշնութուն. մինչդեռ վրացագետներն ընդհանրապես և Պ. Փերաձեն (Die Anfänge des Mönchtums in Georgien, Gotha 1927, S. 39—40) ու Իվ. Չավախիսիսի (Վրաց ժողովրդի պատմութեանը, I, 1928թ., 347) մասնավորապես այն կարծիքի յեն, վոր դրանք «ասորիներ» են չեղել, Պ. Բուրաձեն (Վրաստանի պատմութուն, վրացերեն, Տփղիս 1889, էջ 183) ու Կ. Կեկելիսիս (op. cit., 102—105) նրանց բուն վրացիներ են համարում՝ Ասորիքում կրթութուն ստացած: Նույնպես տարածաշնութունն է նկատվում այն հարցի վերաբերմամբ, թե ովքեր ելին «ասորի» կոչված հայերն ըստ դավանության: Ընդհանուր տարածված կարծիքն այն է, վոր նրանք բաղկենդունիկ-յերկաբնակներ են չեղել, վոր չեկել են վրաց միաբնակների դեմ պայքարելու (G. Peradze, Die Anfänge des Mönchtums in Georgien, S. 37—38, Իվ. Չավախիսիսի, op. cit., I, 342—343), մինչդեռ Կ. Կեկելիսիս (op. cit., 88—97) ջանում է ապացուցել, վոր նրանք հակաքաղկեդոնիկ-միաբնակներ ելին, վորոնք սպաստան ելին դեմ Վրաստանում՝ Ասորիքում ընդհանրապես միաբնակների դեմ սկսած հալածանքներից փախչելուց հետո:

«Ասորի» կոչված «հայերի» վարքերը գրված են զանազան հեղինակների ձեռքով, վորոնց թվում Դավիթ Գարեջեցունը, իբրև անանուն գրվածք, ըստ Կ. Կեկելիսիսի (op. cit., 84—85), X դարու առաջին կիսի գործ է, թեև Պ. Փերաձեն (op. cit., 6—8) կարծում է, վոր այն դրի յի անված վոչ առաջ քան 1074 թ. և վոչ ուշ քան XII դարու առաջին քառյակը:

Դավիթ Գարեջեցու «վարքը», ի թիվս այլ «վարքերի» հնագույն խմբագրութունների, հրատարակեց 1928 թ. Սարգիս Կախաբաձեն իր հատուկ աշխատության մեջ «Ասորի հայերի վարույն նախատիպերը» (վրացերեն, էջ 36—42): Իսկ հետագա խմբագրութունը հայտնի էր վաղուց համաձայն Մ. Սարխիսիսի 1882 թ. վոչ գիտական հրատարակության («Վրաստանի դրախտը», էջ 265—286): Վերջինիս ուսերեն թարգմանութունը ներկայացրած է նույն Մ. Սարխիսիսի գրքում Полное жизнеописание святых грузинской церкви (ч. I, Спб. 1871, стр. 133—140):

Ստորև բերած հատվածի թարգմանութունը կատարված է ըստ Ս. Կախաբաձեյի հրատարակության:

# ԴԱՎԻԹ ԳԱՐԵՉԵՑԻՆ ՅԵՎ ՀԱՅԵՐԵՆ (ՍՈՄԽՈՒՐԻ) ԼԵԶՈՒՆ

... Տեսնելով սուրբ Դավիթին, ինչպես նա կանգնած ազոթում երևալու նստած երևալու վրա մտաների կողքին, ոտարագգին (բարբարոսը) դիմեց նրան՝ ասելով. «Ո՞վ ես դու». և նա (Դավիթը) պատասխանեց հայերեն (սոմխուրի) լեզվով. «Յես մարդ եմ մեղապարտ, ծառայում եմ աստված Հիսուս Քրիստոսի...»...<sup>2</sup>

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Սոմխուրի»-ի մասին մանրամասն տես Բ. պրակի 2 գլխի 8-րդ ծանոթությունը

2. Կանգնած սուրբ Դավիթի կարգի վրա, թե ովքեր էին իրենց ազգային (սոմախան) ծառայում «սուրբ հայրերը», Ս. Կախարանե (օր. ԵՒ, 16), ի միջի այլոց, հայտնում է. «Այն փաստը, զոր Դավիթ Գարեջնցին բարբարոսի հետ հայերեն երևում, զոր հիշատակված է համապատասխան վարուց ինչպես նախատիպ, նույնպես և մետաֆրաստ խմբագրությունից մեջ, ինքնբնական վոչինչ չի ապացուցում»: Իսկ մենք, բնականապես, կարծում ենք, զոր այս հանդամանքը վորոշ բան կարող է ապացուցել, յեթե, ի հարկե, ի նկատի ունենանք այսպես կոչված «Կախիթի և Հերեթի գրությունը» այն տեղը, ուր X դարու անցքերի նկարագրության ժամանակ ասված է, զոր «մինչ Գրիգոր թագուհին ու սրա վորդի Իգնատիոսի Հերեթը հերձվածող եր» և այս Գրիգոր թագուհին փոխադրեց (ուղղեց) Հերեթը հայոց հերձվածքից դեպի ուղղափառություն» (Վրաց տարեգրությունը, վրացերեն, հ. II, Գ. Չարիբալի խմբ., ՄԳԲ. 1854, էջ 97. հմմ. H. Морр, Арк'аун-Монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах, — «Визант. Временник», т. XII, 1905, стр. 7): Վորոշ բան կարող է ապացուցել, ըստ մեր նկատողության, նաև այն, զոր Դավիթ Գարեջնցու մայրավանքը հնում «Նավատաղյալ» հայերի ամենաավերված ուխտատեղին և յեղի, զորը հրատարակել է դեպի իրեն ուխտավորներին վոչ միայն Տփղիսից ու Կախիթից, այլև Հայաստանից, և սրա ապացույց է 20-ի շափ հայերեն արձանագրությունները XIII—XVIII դարերի (սրանց թվում մի քանիսը հայերեն-վրացերեն, իսկ մեկը՝ 1352 թ.՝ վրացերեն-հայերեն-պարսկերեն-ուղղուրերեն), զոր մենք յերևման ենք հանել այդ մայրավանքի դանազան այրերում դեռ ելի 1921 թվին և ստուգել 1929 թվին և զորը պատրաստած ունինք ապագրության աշխատությունս մեջ «Հայերեն արձանագրությունները Վրաստանում» (այդ արձանագրություններից մի քանիսի մասին առայժմ տես. Լ. Մելիքաթ-Բեկ, Տփղիսի վանքի հիմնագրության հարցի շուրջը, վրացերեն, — «Bulletin de l'Université de Tiflis», IV, 1924, էջ 87 et pass. Լ. Մելիքաթ-Բեկ, Մայր-Նովա, վրացերեն, Տփղիս 1930, էջ 27, 60, ծանոթութ. 1): Ի դեպ, արժանի չե հիշատակել, զոր այս «Գարեջնի» վանահայրն է, զոր հիշվում է Ստ. Որբելյանի պատմության կնքվում (ամամթախարն Գարշտէուցն), Տփղիս 1911 թ. հրատ., էջ 355)՝ «ԳարսՏէուցն» — «Գարշտէուցն»:

ԺԱ.

## ԳԵՈՐԳ ՄԵՐՉՈՒԼ (X Դ.)

### „ԳՐԻԳՈՐ ԽԱՆՉԹԵՑՈՒ ՎԱՐՔԸ“

Գեորգ Մերչուլը (Գրիգորի Մերչուլին), վորն ապրում էր Ապրում, հեղինակ է «Գրիգոր Սանձթեցու վարք» կոչված հազվագյուտ յերկասիրության, վոր գտնվում է Յերուսաղեմի Հունաց պատրիարքարանի մատենադարանի վրացերեն ձեռագիրներից մեկում (իբրև unicorn): Այդ յերկասիրությունը վերստին հրատարակ հանեց և լույս ընծայեց հանդերձ ուսուիրեն թարգմանությամբ Ն. Մառի իր սովոր աշխատության մեջ „Георгий Мерчул. Житие св. Григория Хандзтийского. Грузинский текст. Введение, издание, перевод“ [Тексты и Разыскания по армяно-грузинской филологии, кн. VII], Спб. 1914: Իսկ Ն. Մառի աշխատության համաձայն նույնը լատիներեն թարգմանությամբ հրատարակեց Paul-Peeters-ն իր Histoire monastique Géorgiennes-ի մեջ [Extrait des „Analecta Bollandiana“, t. XXXVI—XXXVII], Bruxelles 1923:

Ինչպես ինքը հեղինակը՝ Գեորգ Մերչուլն ասում է (եջ պ), նա իր յերկասիրությունը գրել է Գրիգոր Սանձթեցու մահվանից իննսուն տարուց հետո: Բայց քանի վոր վերջինս, ըստ նույն հեղինակի, վախճանվել է 861 թվին (մ.), ուրեմն այդ յերկասիրությունը գրված պիտի լինի 861+90=951 թվին: Բայց սրանից, ուրիշ վոչ մի անդեկություն Գ. Մերչուլի մասին գոյություն չունի: Նույնիսկ նրա մահանունը՝ «Մերչուլ» դեռ լուսաբանած չե. այսպես Ն. Մառը վոչ մի խոսք չի ասում նույնիսկ նրա մասին, թե ի՞նչ է այս վերջինս նշանակում՝ ազգանուն թե՛ մականուն, իսկ P. Peeters-ը՝ համարելով այն աղավաղման հետևանք՝ ասաջարկում է (օր. cit., 209—210) ուղղել «Մերչուլ»-ը «Մերեուլի»-ի\*:

\* Սրա գեղ տես. К. Дондуа, Творение Мерчула в латинском переводе белгийского ориенталиста, — „Тексты и Разыскания по кавказской филологии, т. 1. Ангр. 1925, стр. 15, прим. 2:



հասկանալով Վերջինիս տակ, ըստ յերևույթին, տեղի անվան-  
ցուցիչ (Մերէ — Մերկուլի Մերեցի): Վերջապէս, Պ. Մլորիանաւովիին՝  
Ն. Մառի աշխատութեան վրա գրած իր գրախոսականում («Մա-  
ռալիսս գաղեթի» 1912 թ. № 503) առաջարկում է կապել այն  
«ընդ-ի» (= «ընդ-ի» || «սընդ-ի» || «ընդ-ի») բառի հետ, վոր նա-  
նակում է կրտս, և ըստ այսմ մեկնել այն իբրև կրտսագիտ, կրտս-  
նագիտ (կանոնիկոս):

Գեորգ Մերչուլի գրվածքի նշանակութեանը հայապիտական  
տեսակետով բավականին հաջող արված է Ն. Մառի աշխատու-  
թեան մեջ, ուր, ի միջի այլոց, կարգում ենք. „Житие Григория  
Хандзтийского впервые открыло, что грузины никогда не пре-  
рывали в древности близкого общения и в церкви со всем ар-  
мянским миром. Они ослабили связь лишь с одною его частью,  
конфессионально разномыслящею. Что же касается конфессио-  
нальных единомышленников, армян-халкедонитов, грузины под-  
держивали с ними интимную дружбу и самое тесное общение,  
завершавшееся постепенно полным слиянием этих армян с грузи-  
нами вплоть до утраты ими своей национальности. Из Жития  
Григория Хандзтийского узнаем, с каким уважением продолжали  
грузины относиться к памяти армянского католика Персеса,  
с каким благоговением вспоминали об его постройках, очевидно,  
в виду халкедонитских взглядов этого армянского патриарха“\*\*:

Ստորև մենք բերում ենք մի հատված Գեորգ Մերչուլի գրված-  
քից՝ Իշխանի աթոռին և Ներսես Իշխանյուն վերաբերյալ, համա-  
ձայն Ն. Մառի հրատարակած բնագրի:

### [ԻՇԽԱՆԻ ԱԹՈՐԸ]

Կամոքն տառուծո Սարան յեպիսկոպոս կարգվեց Իշխանում  
յերանելի Ներսես (Ներսէ) կաթողիկոսի կառուցած կաթողիկէ  
յեկեղեցում ու նրա աթոռին, վոր յերկար տարիներ այրիացած էր<sup>1</sup>:

\*\* Գեորգ Մերչուլի և նրա յերկասիրութեան մասին ընդհանրապէս տես,  
բայի վերև հիշած գրականութեանից՝ Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատ-  
մական գրականութեանը, 96—111. Կ. Կեկելիան, Վրաց գրականութեան պատ-  
մութեան, I, 148—153. մասամբ Н. Марр, Батум, Артаган, Карс — истори-  
ческий узел межнациональных отношений Кавказа, Пгр. 1922, стр. 13—16:

1. Ներսես Իշխանյու մասին ահասարակ տես հինգերորդ դիւի 81-րդ  
ժամոթութեան մեջ: Ինչ վերաբերում է Իշխանին, որտ մասին հետաքրքիր է  
հիշել Հակոբ Կարնեցու (Կ. Կոստանեանց, Յակոբ Կարնեցի, Տեղագիր վերին Հայոց-  
Յիշատակարան Փէ. դարու. Վաղարշապատ 1903, էջ 17—18) հետեյալ նշանա-  
կալից խոսքերը. «Եւ կայ ի մէջ ձորոյն [ձորոսի] մեծամեծ վանորոյք վրաց  
ի գիւղն Սախու[ւ], Ոշկ և Իշխան, որ յար և նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն  
սուրբ Սոփի ի Կոստանդինուպոլիս ևւ էին բնակիչք երկրիս կէսն հայ ազգա  
և կէսն կրտսիք վրացի, բայց հայի լեզուաւ խօսէին»: Իշխանի յեկեղեցու վրա-  
ցերեն արձանագրութեանները, վոր բնագրինակել էր Վենետիկի միթիարյան  
Է. Ներսես Սարգիսյանը, հրատարակել է Մ. Brasset — Notices concernant les  
inscriptions géorgiennes, recueillées par le P. Nerses Sargissian («Mémoires  
de l'Académie Imperiale des sciences», VII sér., t. VIII, № 10, p. p. 14—  
20, tabl. III, IV ibid.): Մանրամասնութեաններն ու հարցիս բխրիւղրաֆիան  
տես մեր հասուկ հոգիւմում. Ա. Մելիքեթ-Եօւ, Местечко Инхаи Эрзе-  
румского вилайета (Историческая справка), — «Тифлисский Листок»  
1915 № 107:

### ՅԵՓԻՄԻՈՍ ԱԹՈՆԵՑԻ (X—XI Դ.)

#### VI ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ (ՎՐԱՑԱԿԱՆ ՎԵՐՍԻԱ)

Յեփիմիոս Աթոնեցին (Ե.բվթ/մհ. Աթոնելին) կամ Սկրոնեցին (Մթածմիգելին) վրաց սբուստարի-յեկեղեցական դրականության խոշոր գեմբերից մեկն է, վորը վախճանվել է 1028 թվին 65 տարեկան հասակում, ծնված լինելով, ուրեմն, 963 թվին: Յեվ նրա մասնակցությունն այդ դրականության գրեթե բոլոր բնագավառներում այնքան բազմակողմանի չէ, վոր Կ. Կեկելիձենի (Վրաց դրականության պատմություն, I, 182—211) նույնիսկ նպատակահարմար է գտնում տալ այդ մասնակցության մանրամասն տեսությունը, բաժանելով 9 ճյուղի. 1) բիրլիոլոգիա, 2) ապոկրիֆներ, 3) եկեղեցական (մեկնաբանական), 4) գավանաբանական-հակաճառական, 5) ասկետիկա և միստիկա, 6) հոմիլետիկա (ներբողյաններ), 7) հագրոգրաֆիա (վարքաբանական), 8) լիտուրգիկա (աստվածաշատական կամ ծիսակատարության) և 9) յեկեղեցական իրավունքը: Միաժամանակ՝ Յեփիմիոսը հայտնի է վոչ միայն իրրև հեղինակ բազմաթիվ ինքնուրույն գրվածքների, այլև իրրև թարգմանիչ հունարենից վրացերեն և, նույնիսկ, վրացերենից հունարեն: Նրա «Վարուց» (կենսագրության) հեղինակ՝ Գեորգ Աթոնեցին (Սկրոնեցին) ուղղակի ասում է (Աթոնի Իվերոն վանքի 1073 թ. գրչաղիրն ազապներով, վրացերեն, Տիգրան 1901, էջ 4—«Վրաստանի դրախտը», 403), վոր Յեփիմիոսը «թարգմանեց վրացերենից հունարեն Բալամվորն ու Աբուկուրան և մի քանի ուրիշ գրություններ»: «Բալահվարը»՝ դա, անկասկած, Բալավարի և Հովասափի գրույցն է, իսկ «Արուկուրայ»-ի հարցը մինչ որս լուծված չէ (Ա. Меликсет-Бекоев. К вопросу о Феодоре Абукуре в древнегрузинской литературе. — «Известия Кавказ-

ского Историко-Археологического Института», т. IV, 1926, стр. 41—50):

Առանձնապես ուշագրավ է Յեփիմիոսի գործունեությունը յեկեղեցական իրավունքի բնագավառում: Այստեղ նրա անվան հետ կապված է մի շարք «կանոնական» գրությունների թարգմանությունը հունարենից վրացերեն, վորոնց թվում—1) այսպես կոչված՝ Հովհան Պահոզի կանոնագիրքն (Н. А. Заозерский и А. С. Хаханов, Помокамон Иоанна Постника в его редакциях грузинской, греческой и славянской, Москва 1902) ու 2) VI տիեզերական ժողովի կանոնները (А. С. Хаханов, Правила VI вселенского собора, в грузинской редакции, Москва 1903) Վերջինս Յեփիմիոսն վերամշակել է և յուրատեսակ դասավորել՝ այնպիսի նյութեր մտցնելով մեջը, վոր հունարեն բնագրում չկա և չի յեղել\*: Այսպիսի նյութերիցն է, ի միջի այլոց, 68-րդ կանոնը, վոր հատկապես վերաբերում է հայերին և վորի մասին Ա. Խախաճուր (Ա. Խախտցուցիլից) գրում է հետևյալը (Правила VI вселенского собора, стр. 84, 87): «В груз. тексте правило 68 предлагает чтение, не имеющее параллели в греко-слав. тексте. Оно объясняется результатом религиозных прений между грузинами и армянами... Сличение грузинского перевода Правил с греко-славянским текстом показывает их разницу в составе, распределении и деталях материала; некоторые правила первого отсутствуют во втором и обратно. Это обстоятельство в связи с другими фактами дает основание предположить, что грузинский перевод или восходит к особой неизвестной греческой редакции, или же представляет самостоятельную переработку их на грузинской почве. Внимательное рассмотрение грузинского текста склоняет меня ко второму предположению. Самостоятельной переработкой следует объяснить устранение полемики против римской церкви и усиление состава правил против церкви армянской»:

Ստորև մենք դնում ենք այլ և այլ կանոնների թարգմանությունը քաղվածաբար, համաձայն Ա. Խախաճուրի (Խախտցուցիլու) հրատարակու թյան:

\* Հմմ. նաև՝ Իվ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, գ. I, Տիգրան 1928, էջ 30—31:

[Կանոն] 16... Հարկավոր չե պահել յոթնյակի այն պատրվորին առաջիկա՝ եւ կոչում [և] վորը պահում են հակորկիները...

[Կանոն] 17. Նույնպես լսեցինք, վոր Հայոց (Սոմխիթի) յերկրում սուրբ պատերի շարաթ-կիրակի [որերը] ուսում են պահել և ձու և ամեն [տեսակ] կաթնեղեն. սա անթույլատրելի չե և անկանոն<sup>2</sup>...

Յեվ այս ել լսեցինք, վոր Հայոց (Սոմխիթի) յերկրում կաթնեղենը և ձուկը և գինին միա[տեսակ] են գնահատում, և սա անմտություն է և հիմարություն<sup>3</sup>...

[Կանոն 33]. Այս ել լսեցինք, վոր Հայոց (Սոմխիթի) յերկրում և մի քանի ուրիշ յերկրներում «սուրբ աստված» սրբատալությանն ալիլացնում են՝ «սուրբ [և] անմահ, վոր խաչեցար վասն մեր, վորորմյա մեզ», վորը նրանց լեզվով «խաչեցար» և կոչվում, ... վորը [տակախ] Քաղկեդոնում ժողոված հայերը... հանեցին<sup>4</sup>...

[Կանոն] 34. Այս ել լսեցինք, թե [ինչպես] Հայոց (Սոմխիթի) յերկրում քահանայության [աստիճանները] բաշխում են [նրանց], վորոնք քահանաների ազգակից եյին, և այս որևէքը յերբայական ե...

[Կանոն] 68. Այս ել հասավ մեր ականջին, վոր Հայոց (Սոմխիթի) յերկրում չեն ընդունում սուրբ և պատվական պատկերների նկարում և վոչ ել յերկրապագում են նրանց (պատկերներին)<sup>5</sup>...

Վորովհետև անորեն Պետրոս Թափիչն ինչպես «խաչեցար»-ն ուսուցեց նրանց (հայերին), նույնպես ել այդ շար հերձվածքը ցանկեց նրանց մեջ<sup>6</sup>...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես հինգերորդ գլխի 13-րդ ծանոթությունը:
2. Տես Ա. Меликсет-Бекон, Грузинский извод сказания о поете «ара-укавор», стр. 87—88, 103—105:
3. Ibid.:
4. Տես հինգերորդ գլխի 12-րդ ծանոթությունը:
5. Հարգիս վերաբերյալ տես Արիստակէս եպ. Սեդրակեան, Հայաստանեայց եկեղեցու պատկերայարգութիւնը, Պատմական տեսութիւն. ՍՊԲ 1904:
6. Պետրոս Թափիչի մասին տես՝ Ա. Меликсет-Бекон, ibid., էջ 100—108:

ԺԿ.

ՅԵՓԻՄԻՈՍ ՅԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ (XI Դ.)

ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԴԵՄ ՍՈՍԹԵՆԵՍ ՄԱՐՄԱՇԵՆՑՈՒ

Յեփիմիոս Յերուսաղեմացին կամ Յեփիմիոս Յերկարը (Եփիմիմե Գրձելին) հայանի չե իրրե ժամանակակից Բագրատ IV վրաց թագավորի (1027—1072), վորի պատվերով նա հասկապես կանչվել է Անչապից (Տալթ-Կղարջքից)՝ մասնակցելու 1046 թվի այն բանակավին հայոց Սոսթենես վարդապետ Մարմաշենցու հետ. վորը տեղի չե ունեցել Ղրախլայում: Այդ բանակավոր վորոշ արտահայտություն և գտել համապատասխան զրվածքի մեջ, վորը կրում է հետևյալ բնագրձակ վերնագիրը. «Կրօնավոր Յեփիմիոս Յերկարի (Եփիմիմե Գրձելի) հակաճառությունը Սոսթենես հայոց վարդապետի ընդդեմ» և վորը հրատարակել է Մ. Սաբինինը իր «Վրաստանի գրախոսը» ժողովածուի մեջ, էջ 615—621 (հմմ. նույնը համատեմ՝ Թ. Փորդանյա. Քրոնիկաներ, I, 126—127): Այսպես այս Յեփիմիոս Յերկարն կամ Յերուսաղեմացին վրաց գրականության մեջ սկի չի հիշատակվում և մինչ Կ. Անկեյիմեյի հասուկ ուսումնասիրության հրատարակումը (Յերկու Յեփիմիոս վրաց հին գրականության մեջ. Սելեսնեցի թԳ Յերուսաղեմացի. Վրացիներն, — «Չգինի մեցնիերեր», № 2—3, 1923 թ., էջ 102—121) նրան շվտթում էյին Յեփիմիոս Աթոնեցու կամ Սելեսնեցու հետ, վորը X—XI դարումն եր գործումն նույն Կ. Անկեյիմեյի (Վրաց գրականության պատմություն, I, 534—535) կարծիքով, Յեփիմիոսի Հակաճառությունը մեկն և այն յերկատիրություններից, վորոնց աղբյուր և ծառայել այսպես կոչված Պատմորիկ-ին (տես այս պրակի վեցերորդ գլխի ներածությունն ու Բ. մասը):

Հայոց գրականության պատմության տեսակետից այս Հակաճառությունը հետաքրքիր է նրանով, վոր գուզադիպում է մեկ կողմից, Անանիա Սանահնեցվո «Գիրք հակաճառութեան և

ընդդիմաբանութեան ընդդէմ երկարնակաց»-ին, զոր զրօլել է 1054—1060 թ. թ., և այսու կողմից, Հակոբ Քարաբնեցիո ընդդիմախոսութեանը հունաց գեմ կոստանդնուպոլսում 1059—1068 թ. թ. (մանրատանությունները տես Ն. Մելիքեթ-Յեզ. «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» ՎՊ., 97—120, ստանձնապետ 104—105):

Ստորև մենք գնում ենք Յեփիմիոս Յերուսաղեմացիո Հակաճառությունից քաղած համապատասխան կտորների թարգմանությունը համաձայն Մ. Սարիբիևի վերոհիշյալ հրատարակության

### ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԴԵՍ ՍՈՍԹԵՆԵՍ ՀԱՅՈՑ ԿԱՐԴԱՊԵՏԻ

Ասածո ծառա Բագրատ թագավորի սրբ ժողով կայացավ Ղրտիրայում<sup>1</sup>, վնչ իբր յեկեղեցական, այլ ստավիլ զինավորական<sup>2</sup>: Կար մի վանական (մոնողոն) ծաղուժով հայ (ստեխ), վարդապետ և ջատագով (առաջնորդ) նրանց (հայոց) կրոնի, անուշով Սոսթենես<sup>3</sup> (Սոսթենես), զորը ճարպիկ լեզու ուներ և հույժ գիտուն էր գրոց և նրանց (հայոց) անհավատախ ու թեք դավանության: Սա, ըստ սովորույթի, յեկավ Բագրատ թագավորի մաս, և սկսեց մեծամտությամբ ու հպարտորեն գովել իր (հայոց) կրոնը և կշտառել ու պախարակել մեր (վրաց) դավանությունը: Յեվ այն պահին (Բագրատին կից) վոչոք չգանցեցավ ուժեղ բնորոշմանու, բացի նրանցից, զորոնք՝ մի փոքր տեղյակ լինելով՝ հանդիպեցին նրան (Սոսթենեսին), (այն է) Մելքաձե Ծուրթդարեցին, Մանանո Ղվիլեցին, Գրիգոր Արվիսերի-ձենե [և] զամն Գարբիել Ուկիս-ձենե<sup>4</sup>: Սակայն սրանք չկարողացան ընդդիմադրել [Սոսթենեսին]՝ նրանց (հայոց) գրոց անուշյակ լինելու պատճառով: Ապա Գավթի Բիձիս-ձենե գիմեց թագավորին՝ տակով. «... Գիացիք, զոր մեր ուժերից վեր և կատարելապես ընդդիմադրել Սոսթենեսին (Սոսթենեսյին), յեթև չկանչես սյոտեղ Յեփիմիոս Յերկարին (Եփիմիոս Կրձեղիին)»: Թագավորը պատասխանեց Գավթին. «Իմ թագավորության վնչ տեղումն և գանձումն նա այժմ»: Գավթիք կրկին գիմեց թագավորին. «Լսել եմ, զոր նա այժմ Յերուսաղեմից յեկած է և գանձում է արքեպիսկոպոսական զրանը՝ Անչլայում»<sup>5</sup>: Թագավորը, հենց զոր լսեց այս, հույժ ուրախացավ և իսկույն և եթ գիմեց արքեպիսկոպոսին, զորպեսզի կրոնավորին իրեն մոտ բերի: Իսկ արքեպիսկոպոսն անհաղաղ յեկավ կրոնավորի հետ միասին թագավորի մաս: ... Հայոց (Սոսթիթի) մեծ վարդա-

պետ Սոսթենեսն (Սոսթենեսն) էլ յեկավ իր քվերորդու հետ միասին: ... Թագավորն կարգով վողջունեց նրանց և հրամայեց նստեր ըստ ծիսի: Ապա Սոսթենեսն (Սոսթենեսն) բացեց բերանը և տալի թագավորին... «Ինչ կանչեցիր քո թագավորության մեջ [գանձող] ըստ կրոնագետներին, զորպեսզի բոլորը միասին ավելին ինձ և այն ժամանակ դու կհասկանաս մեր (հայոց) դավանության ուժը և ձերի (վրացոց) թուլությունը. բայց յիս ձեր արքայությունից խնդրում եմ այնպիսի հրաման արձակել, զոր յեթև յիս քո կրոնագետների կողմից հաղթվեմ, տղոր դուրս հանեն ինձ քու պարսից. իսկ յեթև նրանք հաղթվեն ինձանից՝ կարգալույծ անես [և] տղոր [նրանց] հանես քո պալատից»: ... Ապա կրոնավորը գիմեց [Սոսթենեսին]՝ ... «Յես սուրբ քաղաք Յերուսաղեմիցն եմ գալիս, ... զորպեսզի մերկացնեմ ձեր (հայոց) շարափառությունը... իսկ դու գործեղից ես գալիս, չգրտեմ. Արգինայից<sup>6</sup> և Մարմաշենիցն<sup>7</sup> Էս գալիս ու հեռու բերում նեստրի, Սեկրոսի և Պեարոս Թափիչի սպանդը և քեզ թույլ ես տալիս բամբասել ասածո ժողովրդին և հակառակվել ուղիղ դավանությանը»: ... Ապա կրոնավորը (Յեփիմիոսը) նորից գիմեց նրան. «... Ինչ (հայերդ) ևս տիեզերական ժողովների հետն եյիք մինչ չորրորդ ժողովը. իսկ յերբ դուք ձեր թագավորին և յերկիրը մատնեցիք պարսիկներին և՛ բաժանվելով հույներից (բերձեններից)՝ միացաք պարսիկների հետ, Սոսրով (Սուսարոյի) ու նրա վորդի Շապուհի (Մարուրի) որոք ժողով դուժարեցիք Իվինում<sup>8</sup> և թեք դավանությունը գծեցիք ներշնչմամբ Արգիշտի (Արգիտոյի)<sup>9</sup>, զորը Պարսից թագավորի գործակալն (վեղիրն) էր Հակոբ Բրտանեցիո աղանդից<sup>10</sup>, քանի զոր ներշնչում էր Պարսից թագավորին թողնել կրակապաշտությունը, իսկ հայերին՝ հունաց (բերձենների) կրոնը. [և դուք (հայերդ) յենթարկվեցիք նրա միասնակցին]... համաձայնությամբ ձեր ներսես կաթողիկոսի. զորը զոսկով էր ներկում իր մարտքը և նրա վակակալ (լուսարար) Մարգսի, զորը նույն աղանդով էր վարակված<sup>11</sup>, և այսպես կատարում եյին սատանայի կամքը, և զորպեսզի սիրաշահեն ժողովրդի [սիրաք] պատվան շարաթ-կիրակին [հայտարարեցին] ուսիս՝ կաթնեղենով<sup>12</sup>, իսկ բարեկենդանը՝ մաղով, և այսպես միացաք պարսիկների հետ Յեվ այս էլ կատեմ, քաղելով ձեր գրքերից, թե ինչպես է գրված Գրիգոր Լուսավորչի տեսլան մեջ<sup>13</sup>, զոր դուք՝ վոչխարներ լինելով և ջուրն ընկնելուն պես վիրավորվելով՝ կերպարանավորվեցիք այժերի. նաև սուրբ Սահակի տեսիլքներից<sup>14</sup> ... [ուր նախադուշակիված էր], զոր վայ-

դելու յի հյուսիսային մեծ իշխանն Գալիի զարմից<sup>15</sup>, վորն և կաճի հոգվովն ստաւածո և բարվոք կգտի ամեն ինչ ձեր պատմութեան<sup>16</sup>-ից»։ Սոսթենիսը (Սոսթենան) ասաց կրօնավորին. «Անիծյալ լինի ով վոր քեզ ծանոթացրեց պատմութեան-դի հետ...»։ Կրօնավորը պատասխանեց. «Անիծյալ լինի Պետրոս Թափիչը, վորը քեզ սովորեցրեց «խաչեցար»-ը և սպառնացեց յերեքուրբայն սրբասացութեանը...»<sup>17</sup> Իսկ Սոսթենիսը (Սոսթենան) նորից սկսեց զիճել կրօնավորի հետ՝ գովարանելով Պետրոսի վարդապետութեանը. և կրօնավորն ասաց. «Չե՞ վոր նա (Պետրոսը) իրավացի և ըստ արժանվույն վաճառեց և անպատուութեան յենթարկեց ու կարգաւորեց յեղով յերեցասպետութեանից... սոցա՞ գարով ձեր (հայոց) յերկիրը՝ լցրեց այն շար սպանողով և մոլորեցրեց անկիրթ ժողովուրդը... [վորին] Միքայիլ Վրաց (Քարթլիի) կաթողիկոսն, ինչպէս յերբեմն Գալիի մարգարեն Գուլիաթի վրա, քարով գլուխը ջարդեց՝ բլուրավոր և հաղարավոր նրա հետևողների ներկայութեամբ...»<sup>18</sup>։

Ապա թագավորը դիմեց Սոսթենիսին (Սոսթենային) ասելով. «Ունի՞ս արդյոք եղի վորևէ ասելիք մեր դեմ թե՛ միանպաստան պարավիցիր»։ Սոսթենիսը (Սոսթենան) պատասխանեց թագավորին. «Յես վոչ թե մարդուց հաղթվեցի և վոչ ել հաղթվիլ եմ, այլ ճշմարտութեանիցն [եմ պարտված]»։ Կրկին դիմեց թագավորը Սոսթենիսին (Սոսթենային). «Եւ ինչո՞ւ չես լինում [ղափանակ]իս»։ Սոսթենիսը (Սոսթենան) պատասխանեց. «Ինչպէս ինչո՞ւնեմ Մարմաշենը»։ Իսկ թագավորն ասաց. «Նրա (Մարմաշենի) փոխարինը մեղանից ստացիր»։ Սոսթենիսը (Սոսթենը) պատասխանեց. «Այդպէս հեշտ չե ինձ համար թողնիլ Մարմաշենը»։ Ապա կրօնավորը դիմեց Սոսթենիսին (Սոսթենային). «Այժմ իրագործիր այն ուխտը, վորը քո իսկ բերանով արտահայտեցիր, և մերկ ու անքողարկված մարմնով գուրս յելիր, վորովհետեւ ուղիղ հավատքի քող չունիս»։ Իսկ թագավորն ասաց կրօնավորին. «Ինձ շնորհիր այդ պատիվը, և բաղնիկան և այն ամոթը, վոր թափվեց նրա (Սոսթենիսի) գլխին»։ Ապա Սոսթենիսը (Սոսթենան) վեր յեղով միանպաստան հաղթված, բնկճված ու ամոթահար բոլորի առաջ, և հեռացավ...

### ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս Ղրախան վրացագիտներն բնդհանրապես և վերջերս Կ. Կեղեկիանն մեկ մասնավորապես հայտնի չե թե ինչ պատճառով շորտի ազգաբանուհի ելին փնտրում նույնացնելով Արտանուջի հետ Բայց գա սխալ եւ Ինչպէս գեո 1914

թվին իրավացի մասնանշիկ եր Եվ. Ջավախիշվիլին (Վրաց ժողովրդի պատմութեանը, II, 322), «Ղրախան նույն Իխախան և Փարխանա [իճից] գետի հյուսիս-արևմուտք, վոր նշանակված և այժմյան 5 վերստանոց բարակի վրա»։ Իրախան այժմյան Ջավախուհի և գտնվում Բարախի-Սամարի մասերում և հայտնի և իր հուսկայններով (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XIII, Тиф. 1892, стр. 128—131)։

2. Համաձայն Եվ. Ջավախիշվիլու հետազոտութեան (op. cit., II, 438—439), Բագրատը Ջավախուհի և յեղել՝ գրավված լինելով պատերազմական գործողութեաններով մտափրարուեա 1046 թվին Այս իսկ պատճառով նրա ձեռներեցութեամբ հրավիրված «զինվորական» ժողովը, վորի մասին խոսվում և Յեփիմիոսի Հակահատութեան մեջ, նույն 1046 թվին սխալ վերագրել (հմմ. Կ. Կեղեկիան, Յերկու Յեփիմիոս վրաց հին գրականութեան մեջ, էջ 114)։

3. Սոսթենիսը Մարմաշենու մասին և, վորը հայտնի չե Մարմաշենի 1029 և 1033 արձանագրութեաններից (Надписи Мармашена. Сборник и приговоры к печати Иосиф Орбели [Надписи армянской эпитафии. I]. Тиф. 1914, стр. 1, 3), նաև Գրիգոր Մագիստրոսի թղթերից (Ս. Վասաղևանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրոպոլ 1910, էջ 101—104), իբրև «առաջնորդ սուրբ ուխտին Մարմաշենյ»՝ 1033 թվից։ Տես նաև՝ Կ. Կեղեկիան, Յերկու Յեփիմիոս վրաց հին գրականութեան մեջ, էջ 110—113, հմմ. Կ. Կեղեկիան-Բեկ, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց»՝ ՎՍ, էջ 105, ծան. 3։

4. Բայրն ել անհայտ զեմքեր են վրաց գրականութեան տապարիկում

5. Այսինքն Կյարջբուս

6. Հայոց կաթողիկոսների աթոռանիստն եր (Շիրակում) 944—992 թ. թ., հասարակ մի վանք և աման (Ղ. Այիշան, Շիրակ, 12—13)։

7. Մարմաշենի վանքը, վոր գտնվում և Ախուրյանի հովտում, անկասկած, շինված և (ուղիղ՝ հիմնադրված և) 988 թիին Գրիգոր Մագիստրոսի հրեղբոր՝ Վահրամ Պահլավունու ծախքով Արան տապալուց կարող և ծառայել Մարմաշենի կաթողիկոսի հարավային պատի արձանագրութեաններից մեկը, վորը սկսվում և այսպես. «Շնորհին աստուծոյ եւ Վահրամ իշխանայ իշխան եւ անթխապատ պատրիկ որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծաց ի ցեղէ Պահլաունի եւ ի զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Հուսաւորչի, որ յազազս ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ եւ զտիեկերական ուխտս Մարմաշեն սկսեալ ի նէ թուականին Հայոց...» (Պ. Օրբելու. Надписи Мармашена, стр. 1)։ Բայց նույն Մարմաշենում կա նաև մի ուրիշ արձանագրութեան, նույն կաթողիկոսի նույն հարավային պատի վրա, վորը սկսվում և այսպես. «Շնորհին աստուծոյ եւ Մարիամ Աստուղայ եւ Հայոց թագուհի, գուտար մեծին Սենիքերիմա եւ թոսն Գաղկա Հայոց արքայի, որ ետու գտարուս ի սուրբ եւ ի տիեկերական ուխտս Մարմաշեն տաջնորդութեամբ հար Սոսթենիսի...» (հմմ., 3)։ Ըստ այսմ, Կ. Կեղեկիանն (Յերկու Յեփիմիոս վրաց հին գրականութեան մեջ, էջ 113, ծան. 2) հետեւյալ սրամիտ կարծիքն և հայտնում Մարմաշենի անվան մասին. «Ինչպէս յերևում և, Մարիամ [թագուհին] շատ շահագրգրված և յեղել Մարմաշենով և կենդանի մասնակցութեան և զայց տվել նրա հիմնադրութեան-կարգավորման գործում. կարելի չե յենթադրել, վոր Մարմաշեն անունը վոչ թե «Մարմաշեն» նշանակի, ինչպէս Սեն-Մարտենն եր կարծում, այլ «Մարիամաշեն»՝ Յեկ իբր. մեր կարծիքով ել, «Մարմաշեն» անունը ավելի շուտ «Մարիամաշեն»-ից կարող եր առաջանալ քան թե «Մարմաշեն»-ից։

8. Տես հինգերորդ գլխի 15-րդ ծանոթությունը:
9. Տես նույն գլխի 8-րդ ծանոթությունը:
10. Այսինքն հակորիկ:
11. Տես հինգերորդ գլխի 10-րդ ծանոթությունը:
12. Տես տասնույնըրորդ գլխի (կանոն 17):
13. Տես հինգերորդ գլխի 37-րդ ծանոթությունը:
14. Տես հինգերորդ գլխի 38-րդ ծանոթությունը:
15. Ուզում ես ասել՝ Բաղրատունյաց վրաց խաղափորը:
16. Տես վեցերորդ գլխի ներածությունը:
17. Տես հինգերորդ գլխի 9-րդ և 12-րդ ծանոթությունը:
18. Մանրամասն տես *Л. Меликсет-Беков, Грузинский извод сказания о поете «араджавор», стр. 94—97, 100, 101—102, նաև հետևյալ գրությունը:*

ժԿ.

## ԱՆԱՆՈՒՆ (ՃԼ Դ.)

### „ՊԵՏՐՈՍ ԹԱՓԻՉԻ ՅԵՎ ԱԼԱՋԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ“, „ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒԲՈՒԼՅԱՆ ՎՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ ՄԱՍԻՆ“

Անանուն վրաց հեղինակի գրչին պատկանող գրվածքը տառաջավորաց պատի մասին թեև մի յերկասիրության ձևով և հասել մեզ, սակայն այն իրոք յերկու տարբեր հատվածներ և ներկայացնում՝ տարբեր վերնագրերների ներքո, վորոնցից մեկն է «Պետրոս Թափիչի և ալաջի պատմությունը», իսկ մյուսը՝ «Հաղորդագրություն Սուրուլյան վորդի Սարգսի մասին»: Յերկու հատվածների՝ իրրև ամբողջական յերկի՝ առաջին վոչ գիտական հրատարակությունն ըստ յերևույթին մի ձեռագրի հիման վրա տվեց Մ. Սարգիսիս իր «Վրաստանի դրախար» ժողովածուի մեջ, 1882 թվին, էջ 629—633: Իսկ յերկրորդ՝ քննական հրատարակությունը 5 ձեռագրերի համեմատությամբ և հանդերձ ուսեբեն թարգմանությամբ en regard տվինք մենք մեր աշխատության մեջ *Грузинский извод сказания о поете «араджавор» (Христ. Восток., т. V. в. II) 1917 թվին, էջ 85—96:*

Ինչպես 1917 թվին, նույնպես և այժմ մենք այն կարծիքի յենք, վոր յերկու հատվածներն ևս՝ իրրև մեկը մյուսի շարունակություն՝ առասպելական «դրույցներ» են, ուր տեղատեղ վորոչ արձագանք ունին գաած դանադան պատմական իրողություններ, թեև այդ իրողությունների նկարագրության ժամանակագրականը տակն ու վրա յե յեղած յեվ վո՛չ մի էննադատության չի պիտուում (տես *ibid.*, էջ 97—111, հմմ. նաև Մետրոպ վ. Մախուրյանցի գրախոսականը մեր աշխատության վրա, — «Արարտ» 1918 թ., էջ 148—150):

Ինչ վերաբերում և հեղինակի անձին, այդ հարցը կատարյալ մթության մեջ է: Իգուր հանդուցյալ Մետրոպ վ. Մախուրյանցի

ՄԵՏՐՈՍ ԹԱՓԻՉԸ ՀԱՅՔՈՒՍ

(եջ 148) մեզ վերադրում էր կարծիք (յենթևարութ յան), վոր «տասապիր... «տասջաու որայ» սրահքի նկատմամբ վրայ եկեղեցու մեջ... ծաղած է 1103-ից յետոյ, երբ վրայ Ռուխ-Ուրընխի ժողովում հայերը պաշտօնապէս յայտարարում են հերեօխութ»։ Ուրիշ խոսքով ասած, սա նշանակում է, վոր վերոհիշյալ «գրաւ յյնիրը» գրի յեն ասնված 1103 թվից հետո։ Այսպիսի կարծիք կամ յենթևարութ յան համապատասխան աշխատութ յան մեջ սենք հայանամ չունինք և այժմ էլ վոչ մի հակումն չունինք աչպիսի բան արտասայակու։ Բայց լսենք, թե ինչ և այս հարցի մասին գրել 1923 թ. Կ. Կեպիլմեն (Վրայ գրականութ յան պատմութ յան, I, 539). «Այս աշխատութ յանը (աստպելը, Լ. Մ.Ն.) փոխադրված պիտի լինի վրայերեն, ըստ լեզվի, այն ժամանակ, յերբ Արսեն Վաչեա-ձեն կազմում էր իր Գոլմասիկունը. հաշտակուն և նրա լակ ձևաքով լինի վերամշակված, վորովհետեւ, թեև սակաւ, բայց կան այնպիսի ձեռագիրներ, ուր Գոլմասիկունից քաղած հոգվածներն հետ միասին սրան էլ ենք հանդիպում»։

Մեր կարծիքով, վոչ մի անհրաժեշտութ յան չկա աստպելի հեղինակին քաշել XII դարու ասաջին քասյակը (Արսեն Վաչեա-ձեն, վորն ավելի հայտնի յե Արսեն Իգալթոյեցի անվամբ, իրոք, XII դարու ասաջին քասյակի գործիչ է), քանի վոր այն մի շարք մանրամասնութ յաններում շփում է նախորդ գլխից ընթերցողին արդեն ծանոթ Յեփիմիոս Յերուսաղեմացիս Հակա-ձաւութ յան հետ\*, այնպես վոր, յեթե մենք ունինք վորևէ հնարավորութ յան վերադրելու այս աստպելը վորևէ ժամանակաշրջանին, հարցն, անկասկած, պիտի լուծվի հոգուտ XI դարու ասաջին կիսի, կապվելով այն՝ ասայժմ յենթևարարը՝ Յեփիմիոս Յերուսաղեմացիս հեղինակութ յան հետ։

Ստորև մենք տալիս ենք յերկու հատվածներից քաղած համապատասխան կտորները համաձայն մեր հրատարակութ յան։

\* Որինակ, ընդդեմ Սուքեմեսի Հակսնուարյան մեջ կարգում ենք. «Միքայել վրայ կաթողիկոսն, ինչպես յերբեմն Դավիթ մարգարեն Գոլթաթի վրա», Սուրույան վորդի Սարգսի մասին Հաղորդագրութ յունն գրում է. «Սուրը հոգին գիտնեց Միքայելին, ինչպես յերբեմն Դավթին Գոլթաթի վրա», ելն։

[Կոստանդնուպոլսից] նա (Պետրոս Թափիչը) գնաց Հայոց (Սոմխիթի) յերկիրն իր բաղում համախոհներով և աշակերտներով հանդերձ, և սկսեց քարոզել հերձվածոց կրոնն ու բամբասել հուսոց (բերձենների) կրոնը, վորն ընդունել էյին սուրբ և մեծ ժողովներն ու աստվածաղգեսա հայրերը։ Յեղ բոլորը հավատում էյին նրա խոսքերին, քանի վոր աստվածանման հրեշտակ էյին տեսնում նրա մեջ՝ ասելով. «Ահա այս մարդն արքայանիսա քաղարի պատրիարքն է»։

Ապա Պետրոսը աստանայի ներշնչմամբ սկսեց կախարդութ յաններ անել և պատմել ամեն տեսակ հերձվածոցական գործերի մասին, ուսուցանելով ժողովրդին թե ինչպես պահել կաթողիկե պատերը... Յեղ այսպիսով նա (Պետրոսը) անրիժ հայ ժողովրդին թեթևացնում էր կրոնը և հերձվածքն ուսուցանում ու իր միտումներին յենթևարում։

ԱՊԱ ՊԱՏՄՎՈՒՄ Ե „ԱԼԱՉ“ ԿՈՉՎԱԾ ԴԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՄՓՈՓԵԼ ԱՅՄԵՍ

Պետրոսը հեան ունենում է մի շուն արաջ անունով<sup>1</sup>, վորին վարժեցրել էր գնալու վորտեղ հլլամայր։ Մի անգամ Պետրոսն արաջին ուղարկում է մի քահանայի մոտ, վորն իր աշակերտների ձեռով սպանել է տալիս շանը։ Պետրոսը գալիս է և հարցուփորձ անում շան մասին։ Քահանան չիմանալ է ձեռցնում։ Պետրոսը կարգադրում է հինգ որ պահք պահել, վորպեսպի աստված հայտնե արաջի տեղը. ժողովուրդն սկսում է պահել և արաջն յերևում է Պետրոսին տեսիլքում՝ ասելով. «Ահա այս ձորումն եմ բնկած մահացած»։

Ապա Պետրոսը կանչեց ժողովրդին և ասաց. «Ահա հրաշք մի մեծ և զարհուրելի. այսուհետև պաս պահեցեք արաջի համար այն որերին, վոր յես ձեզ համար սահմանեցի»։

Այսպիսի յե ասաջլալների կողմից նգոված և ժողովների կողմից սերժած Պետրոսի որևնքը, և թող նգովյալ լինին արաջի ու սուրբ Սարգսի համար բոլոր պաս պահողները։

# ՄԱՆՈՅՈՒԹՅՈՒՆ

1. Հաժախակուն և, վոր այս ճալաջ»-ն առաջացած լինի ճառաջ[ախոր] ևս...  
«առաջ[ախոր]»-ի աղաժաղումից: Հմմ. նաև ճալաջ» արմատն արխաղերն  
«ալըջ» (→ «ալըջ[կինար]»)»-ի հետ (Ա. Մելիքեթ-Բեկ, Մի բանի խոսք արեգի  
պաշտամունքի մասին, «Արարատ», 1918 թ., էջ 125-128):

## Բ. ՀԱՏՎԱԾԻՑ [ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ]

Նույն ժամանակներն ապրում եր մի վանն գյուղացին (հերոս)՝  
Սուրուլի՝ վորդի Սարգիս անունով, վորն՝ ընդունելով կուսակրո-  
նություն (գառնալով մոնոզոն)՝ մենաստան կառուցեց Արարատի  
ստորոտում, ուր և գիշեր-ցերեկ աղոթում եր: Իսկ այս մենաստանը  
կառուցված եր քաղաք Դվինի մոտերքում:

Այս պահին յեկավ ազարացվոց սպասալարը՝ և՛ մոտենալով  
[այլ] քաղաքին՝ գրավեց այն: Ապա այլ քաղաքի մարդիկ յեկան  
քաղաքից և ստացին Սուրուլ Սարգիսն. «Դուրս յեկ քո մենաս-  
տանից և մարտնչիր Քրիստոսի խճամբի ազարյան դավակների  
հետ, և յեթե հաղթես ու խաղաղ վերադառնաս, մենք բոլորը քո  
ծառաները (ստրուկները) կդառնանք, իսկ յեթե սպանեն, քո վո-  
խարեն՝ ի հիշատակ քո՝ խաչ կդնենք»: Ապա Սարգիսը դուրս  
յելավ պայքարելու ազարացիների հետ և հաղթեց և վերադար-  
ձավ՝ նետով վիրավորված:

Մի քանի ժամանակից հետո նորից գլուխ բարձրացրեց (դին-  
վեց) Սպահանի սպասալարը և մոտեցավ քաղաք Դվինին: Յեվ  
նրանց (ազարացիների) գեմ նորից դուրս յելավ Սարգիսը: Յեվ  
հենց վոր սկսվեց պայքարը, Սարգիսն գրավեցին և ամբողջ Հայքը  
(Սոմխիթը) ավերեցին ու ամայի դարձրին: Իսկ Սարգիսն բազում  
գերիների հետ միասին Սպահան տարան սուլթանի՝ մոտ: Իսկ  
սուլթանը տեսավ թե վոչ Սարգիսն՝ շատ ուրախացավ, վորովհե-  
տև լսել եր նրա արիություն և բարեմեղություն մասին, և խնա-  
յեց նրան, քանի վոր ծերացած եր: Յեվ սկզբից և եթ սկսեց  
նրան [գայթակղեցնել]՝ մեծ վարձաարույթյուն և քաղաքներ ու գյու-  
ղեր խոստանալով և ասելով. «Ամբողջ Հայքն (Սոմխիթն) և Ռանը  
ու նրանց թագավորությունները կթողնեմ քեզ, յեթե խոնարհվես  
ինձ և՛ ուրանալով խաչեցյալին՝ ընդունես Մահմեդ (Մուհամեդ)  
ստաբլայից՝ մեզ սված կրոնը»: Իսկ նա ամենևին հանձն չառավ

այդ, և քանի վոր նա (Սարգիսը) ծեր եր, [սուլթանը] հրամայեց  
անպատվարար մերկացնել նրան և ամիլիլ, փշրել ատամներն և  
անգլխարար ծեծել, ծակծակել վոտների կոճերը և՛ գլխիվայր կտրելով  
ուղտից՝ պատեցնել ամբողջ քաղաքը: Յեվ այս բոլորից հետո  
նորից նրան (Սարգիսն) պեցին արգելանոցը, ուր՝ արժանանա-  
լով հրեշտակի տեսլան՝ միանգամայն բուժվեց: Ապա նրան նորից  
ներկայացրին բռնավորին, գորն և հարցրեց կրոնի ու հաժախքի  
մասին: Իսկ նա ամենայն հանդուժելյամբ հայտնեց (մերկացրեց)  
սուլթանին, և տնա վերջինիս հրամանի համաձայն վճիս կայա-  
ցավ գլխատել նրան սրոգ: Յեվ այն վայրերի մարդկանց մեջ  
ծաղեց հաժախք, վոր այնտեղ, ուր նա (Սարգիսը) մահացած ընկած  
եր, յերևաց հրեղեն սի սյուն:

Յերկար տարիներ անց Սպահան գնացին [ուխաավորներ]  
Հայոց (Սոմխիթի) բոլոր քաղաքներից և բազում պատիվներով  
հանցին նրա (Սարգիսի) մասունքները, և նրա աչք գրին Գագի  
յեկեղեցում, վոր Պետրոսն եր շինել:

Յեվ լուր տարածվեց Յերուսաղեմում, Կոստանդնուպոլսում,  
մնախոքիայում, Աղեքսանդրիայում և Հռոմում, նաև ամբողջ աշ-  
խարհում, վոր Պետրոսը հերձվածուպական կրոնին հիմք դրեց  
Հայոց (Սոմխիթի) յերկրում: Յեվ ժողովեցան չորս պատրիարք-  
ներն ու Հռոմի պապը և նպովեցին Պետրոսին, նմանապես բոլոր  
նրանց, ով պաս կպահե ալաջի համար կամ կաղթե Սուրուլ  
Սարգիսն, կամ վերջինիս որեմքով կընթանա:

...[Այս] անորեն Պետրոս Թափիչը, վորն իր մորուքը վսակվով  
եր ներկում՝ և՛ քանիցս բազմելով Անախոքիայի աթոռի վրա՝  
իր չար հերձվածքի պատճառով սուրբ հայրերից յենթարկվել եր  
նպովքի ու դահընկեցության, յեկավ Հայք (Սոմխիթ) և արևելք...

Իսկ գալով մեր (Վրաց) յերկիրը՝ նա (Պետրոսը) բոլորին  
դարմայնում եր շքեղությամբ ու հպարտությամբ...

Ապա գոտողացյալ այս [Պետրոսը] յեկավ Կանգարբ և իրեն  
մոտ կանչեց յերանելի Միքայել Վրաց (Քարթլիի) կաթողիկոսին՝  
վորպեսզի վերջինս կամ նրա շարդապետությունը (կրոնը) ըն-  
դունի կամ՝ յեթե հրամարդի՝ նկատնա աթոռից: Իսկ սուրբ հոգին  
զինեց Միքայելին, ինչպես յերբեմն Դավիթին Իսլիմի վրա: Յեվ  
յելավ [Միքայելը] Մցխեթից իրեն յեթակա յեպիսկոպոսանքով  
և քահանաներով ու հավատացյալ ժողովրդով հանդերձ, և մոտեցան  
Կանգար[աց] յերկիրն: Յեվ հրեշտակի ցուցմունքով ազդ յեղավ,  
վորպեսզի նա (Միքայելը) ինքն և նրա ուղեկիցները սուր քարեր



Չոկին մերձակա ձորից և մտանաւ թի վոչ [ուր հարկն և], հաննե գլխարկները և լցնեն այն քարերով: Իսկ շնորհագարդ (աստվածային) Միքայելը սովորեցրեց բոլորին այսպէս. «Ինչ վոր կտանեք ինձ անելիս, նույնը արեք և դուք»:

Ապա Միքայել կաթողիկոսն յեկավ [Փայ] և յերկրպագեց Պետրոս Թափիչի աթոռին: Իսկ նա (Պետրոսը) ձգեց իր զգեստի թևքը, վորպեսզի Միքայելն ևս համբուրի այն ըստ նրա սովորութեան: Իսկ աստուծով քաջախելած Միքայելը՝ բռնելով թևքից՝ ուժով քաշեց այն զեպի իրեն և քարշ տվեց ու վայր պցեց [Պետրոսին] հոյի վրա, ապա զարկեց քար[եր]ով, վոր [ժողոված] ուներ գլխարկում և ճգմեց այն անորեն և գուսզ [Պետրոսին]՝ մահացու վերք հասցնելով նրան: Ապա նրա հետ յեղած բոլոր յեպիսկոպոսներն ու համախոնները պատեցին նրան (Պետրոսին) քարերով<sup>10</sup>: Յե՛վ այսպէս սպանեցին այն գայլին<sup>11</sup>:...

## ՇԱՆՌՔՈՒՅՈՒՆՆԵՐ

1. «Սուբուլ», անկասկած, հայերեն «սուբուլ» բառի ազատագրումն և հետևապէս «Սուբուլ Սարգիս»-ը նույն «Սուբուլ Սարգիս»-ն է, վորը հայոց հափառալիքներում հաճախօգտանների կամ հոռոմների թշնամի չե. «ս. Սարգիսը հոռոմ պիտ իբրդէ», ԲՍԲ, «ս. Սարգիսը հոռոմ չսրղգած չիրայ», կամ «ս. Սարգիսը հոռոմ պիտ փառցունէ», ԲՍԲ, «ս. Սարգիսը հոռոմ չը փառցրած չիրայ» (Ե. Եւհազի, Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք. — «Ազգագրական Հանդէս», Գ. IX, 1902, էջ 14—16. հմմ. և. Կալայեան, Բորչալուի գուգու, -Նուշնակ, Գ. X, 1903, էջ 257), հմմ. Ա. Меликсет-Бекоев, Грузинский извод сказания о поете «сараджавор», стр. 110—111:

2. Այս տեղեկութունը՝ քաղաք Բփինի մտա մենատան կուսուցանելու մասին՝ անհրաժեշտ և համեմատել Կիրակոսի (Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Փանծակեցոյ, 58) հետեյայ հազարդարութեան հետ ներսես Բշխմնոյ (641—661) շինարարութեան մասին նույն Բփինում. «Յետ եզրի առնու. զկաթողիկոսութիւն տէր Ներսէս ածա քան: Սա շինեաց զվիսյարան սրբոյն Սարգիս՝ որ ի Բուին. ի կոտորելն Իսմայելի զբազարն Բուին երկրասան հազար՝ արեամբ կոտորելոյն ծածկեցու սուրբ սեղանն և աւագանն, և զայլն զերեցին տւելի քան զերեսուն և հինգ հազար՝ և գոսկերս սպանւոյն ամփոփեաց հայրապետն ի նոյն վկայաստանն». հմմ. Ա. Меликсет-Бекоев, օր. cit., 97—98:

3. Մեարայ Վ. Մախուդյանցն իր գրախոսականում մեր աշխատութեան վրա («Արարատ», 1918 թ., էջ 149—150), ուղղորութեան դարձնելով այժ սպասալար բառի վրա, «որ երկիցս գործածուած է վրայերէն բնագրում, երկրորդին՝ Սպահան քաղաքի անուան հետ միասին», հարց և տալիս. «Արդեօք այս գուս պարսկական տխուրսը Սպահան քաղաքի նման գուս պարսկական մի կենտրոնի հետ

կապուած՝ իրաւունք չի տալիս մեզ ենթադրելու, [որ] հագարացոց մասին ելլած հիշատակութիւնը թիւրիմացութեան արդիւնք է, մինչդեռ պարսկական արշաւանք բրիտանեայ Հայաստանի վրայ հանգեւձ պարսկական ճնշումներով ընդդէմ բրիտանեայ պատմական միանդամայն պիտի համապատասխանէր և. դարու անցրեքին»: Այս առիթով մեզ միմիայն մնում է մատնանշել, վոր մեր աշխատութեան մեջ (էջ 100) ինչիբր հենց այսպէս էլ լուծված և հմմ. նաև հետեյայ ծանօթ.:

4. Այս՝ «սուլթան»-ի հիշատակութեան ևս ակներև անաբրանիզմ է Վ. դարու անցրեքի նկարագրութեան մեջ (տես. Թ. Փարզանիս, Քրոնիկաներ, I, էջ 318, ծան. 26., Ա. Меликсет-Бекоев, Грузинский извод сказания о поете «сараджавор», стр. 100):

5. Հմմ. նախորդ ծանօթ.:

6. Վոր Փայի յեկեղեցին ս. Սարգսի պաշտամունքի հետ և յեղել կայրված, որս մասին վիայուժ են և հայ պատմիչները: Կիրակոսը (Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Փանծակեցոյ, 238) ասում է. «Եր ի Փայ իայ մի սքանչելագործ առ ամենայն նեղեայս, և մանաւանդ առ դերիս. զի սրբ սպաւելնէին բոլորով սրալու, ինքն իսկ սուրբ վիայն Սարգիս բանայր զգուսն բանայր և արդեյանայ, և լուծանէր զերկաթն, և տաղտորդը մարմնուսը տուլեամբ ի տեղիս իւրեանց. և համբաւ սքանչելեացն տարածեալ էր ինչ ամենայն սղգս, զոր կանգնեալ ասէին սրբոյն Մեարոպայ վարդապետին մերայս: Վարդանը (հաւարունս պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, 145) հիշատակում է. «զՓայ անուանի բերդ և գուգու ի Գաղկայ թագուսը շինեալ, որ կայ հռչակաւոր և սուրբ ուխտն իայ և եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի գորվարին, օրհնեալ ի սրբոյն Մեարովրայ վարդապետին և թարգմանչէն հայոց, որ կայ ի դուստր Փայայ, և հայի ի գաշտն լայնանխտ և երկայնատարած»: Իսկ ս. Սարգսին նվիրված շարականում (Շարական, էջմիածին 1861, էջ 113) սոված է. «Ասաւել պայծաս ի գրչուիս Փայայ, ի գաղաթան տեղւոջն օրհնեալ սրբոյն Մեարոպայ, երազանաս սուրբ Սարգիս բազնեալ կործանիչ»: Փայի հնութեանները նկարագրութեանը տես՝ Ղ. Խնկիթեան, Ստորագրութիւն ին հայաստանի, Վենետիկ 1822, էջ 513—514. Ա. Զարպեան, Ճանապարհորդութիւն ի Մեծն հայաստան, I, 1842, էջ 157—158. Մակար Բարխուդարեան, Արցախի Բարու 1895, էջ 4, 393, 436, էն: հմմ՝ Ա. Меликсет-Бекоев, օր. cit., 98—99:

7. Տես ինչեկորդ գլխի 40-րդ ծանօթութեանը:

8. 471, 475—478, 485—488 թ. թ.:

9. 449—472 թ. թ. — ըստ այսմ, պարզ է, վոր այստեղ ևս անաբրանիզմի հետ ունինք գործ, քանի վոր Պետրոսը հայաստան և Վրաստան կարող էր գալ վոչ ասաջ քան իր վերջնական դահրնկեցութեանը, վորը տեղի ունեցավ 488 թ.: Ի դեպ, հիշենք, վոչ այս Միքայելին «Վրաց գործի պատմութեանը» (E. Такай-швили, Описание рукописей, II, 722) վերագրում է Վարդանոյ Գորգասայ թագավորի յերեսին փաքով զարկելու «քաջագործութեանը» հմմ. Ա. Меликсет-Бекоев, օր. cit., стр. 100:

10. Հմմ. աանաւերկույերորդ գլխի 18 ծանօթութեանը:

11. Այստեղ, անկասկած, շփոթած են իրար հետ Պետրոս Թափիչ Անտուրացին (X դ.) և Պետրոս հայոց յեպիսկոպոսը (VI—VII դ.): Այս իսկ պատճառով ավելորդ չէ լինի լսել, թե ինչ են ասում հայ պատմիչները վերջինը մատչիս Ախաւանքը (Պատմութիւն բաժանման Վրաց ի հայոց, էջ 91) հազարդու

և հետևյալը: «Պետրոս այս եպիսկոպոս լեալ ի սան գրան եպիսկոպոսին յաւարտ  
 Երրանամու հայոց կաթողիկոսի, այր կորովամիտ, և ճոխախօս, և ճարտարու-  
 լան, և բանիրուն գպիր: Չսա առաքեալ Աբրահամ առ Կիւրիան զկնի թղթոյն  
 յարոյ հանգերձ սգատ արամբք, զոր յերկրորդում նուազի անդ սպաննացեալ  
 նմա իշխանքն Վրաց՝ եթէ մի առնեք երթեկեկ ի մեզ վասն հուստոյ ինչ իրաց-  
 ապա եթէ ոչ՝ մեռանիս ի ձեռաց մերոց: Եւ կամ զի այդպէս յարձակեալ ես  
 ը վերայ մեր գայտարար գալով քս առ մեզ գրով և պատգամաւ: գոր յոյժով բանե-  
 պարժին դեռ ես բնակիչք վրաց աշխարհին, աւանդութեամբ ի միմիանց սոճե-  
 լով որդի ի հօրե. ուսեալք, եթէ գձեր Գայլ Պետրոսն սպանին իշխանքն մեր  
 ը վերայ լերինն՝ որ կոչի Կանգարք: քայց մեր ոչ գիտեմք այնպէս լեալ որդե-  
 նորայն ասեն: նաև հոտոմք կոչեն Գայլ զՊետրոս Անտիօքացին, որ վախեալ  
 ի շար մայրսոյն Քաղկեդոնի...»: և ոչ յնր կրկնում և և Կիրակաք (Պատմութիւն  
 արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, 46) յերբ՝ հենգելով Ախաւանսի  
 վրա՝ ստում և, վոր վերջուն (Սեբաստեալ) շարաց... զբաժանութիւնն Պե-  
 տրոսի եպիսկոպոսի, որ պատգամաւոր էր տեան Աբրահամու առ Կիւրիան, զոր  
 վերք վասն համարձակութեան նորա՝ Գայլ կոչեցին զնա: Իսկ Թեոդոր Ստո-  
 դիոր իր Doctrina chronica monasterii Studii կամ Catechisis chronica կոչված  
 գրվածքի մեջ (Higne, Patrologiae cursus completus, series graeca, t. XCIX.  
 p. 1700) անվանում և նրան «Πέτρος ἐπισκόπου Ἀρμενίων, ὃν καὶ Δουκόπετρον οἶδε-  
 ὁ λόγος καλεῖται»: Հմմ. Ա. Меликсем-Бекое, օր. cit., 100—101.

ժև:

**ԳԵՈՐԳ ԱԲԵՂԱ (XII Դ.)**

**„ԳԵՈՐԳ (ԳԻՈՐԳԻ) ՍԵՎԼԵՌՆԵՑՎՈ ՎԱՐՔԸ“**

Գեորգ (Գիորգի) արեղան կամ կուսակրոն քահանան (խույրևո-  
 տնոզոնի) հուշակալոր Գեորգ (Գիորգի) Սելեուսեցի կամ Աթոնեցի  
 աշակերան էր, վորը գրի յե առել իր ուսուցչի վարքը հետևյալ  
 մերնագրով. «Սուրբ և յերանելի մեր հոր Գեորգ (Գիորգի) Սելե-  
 սեցի վարքն ու գործերը»: Այս յերկասիրությունն, քսա Իվ.  
 Չախախովիու (Հին վրացական պատմական գրականությունը,  
 էջ 125—137, հասկապես 137), «վաստանության ստավել արժանի»  
 աղբյուր և, վորն, քսա Կ. Կեկելիձեյի (Վրաց գրականության  
 պատմություն, I, 257—259), 1065—1068 թ. թ. սլտի լինի գրված:  
 Հրատարակվել է այն 3 անգամ. նախ՝ 1846 թ. — Կ. Չուբինով.  
 Վրացերեն քրեստոմաթիա, վրացերեն, ա. հրատ., մասն I, ՍՊԲ  
 1846, էջ 255—301, ապա՝ 1882 թ. — Մ. Սարխիև. Վրաստանի  
 գրախոր, էջ 437—488, և վերջապես՝ 1901 թ. — «Աթոնի Իվերոն  
 վանքի 1074 թ. ձեռագիրն ազգայնորով», վրացերեն, Տիգրս,  
 էջ 282—351. սուսերեն թարգմանությունը (վոչ ճիշտ, ազավա-  
 դուհներով և հապավումներով)՝ М. Сабинин, Полное жизнеопи-  
 сание святых грузинской церкви. II. 161—212:

Ստորև մեր բերած քաղվածքների թարգմանությունը կա-  
 տարված է համաձայն 1901 թ. հրատարակության:

**| ՀԱՅՈՑ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ |**

...Սկզբից և ետ մենք (վրացիներս) ունե յինք գրականություն  
 (գրվածքներ) ու ճշմարիտ և ուղիղ գաղանություն. բայց մեր յեր-  
 կիրը հետու յեր հունաստան յերկրից (Բերձենոստանից). [այդ  
 պատճառով] մեր յերկրում իբրև վորում ցանկեցին հայոց (սամեխ-  
 ների) շար սերմերը՝ բմբոստ և նենդ...

Յեւ կյին այն պահին [Հունաց] թագավորի (Կոնստանդին Տուկիծի)՝ մոտ փոխանք մեծամեծներէն և յերևելիներէն, հոռոմէ և հայերը, վորոնց հետ եր Գաղիկ Կարոցն\* և թագավորութեան այլ իշխանները, քանի վոր ժամանակն ել հաջող եր և խաղաղ և... սկսեց թագավորը (Կոնստանդինը) հարցուփորձ անել սոցալփաստներին կրոնի մասին...

Ապա թագավորը հարցրեց [Գեորգին] հայերի մասին. «Ունի՞ն նրանք արդյոք վորևէ տոնչություն քրիստոնյաների հետ»: Իսկ սուրբը կարձ սլաատախանն ավեց. «Չար[ափառ] դաշխուժյա անուանը չպիտի տալ նույնիսկ»: Յեւ նրանց բոլորի ներկայութեամբ թագավորն ամոխահար զարձրեց հայերին...<sup>2</sup>

### ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կոնստանտին Տուկիծի 1059—1068 թ. թ.:

2. Հայոց պատմութեան քննութեան մասին, վորք տեղի չէ ունեցել Կ. Պոլսում Կոնստանդին Տուկիծի որտեղ հայոց Գաղիկ թագավորի ներկայութեամբ մանրամասն տեղեկություններ և հարցրում Մատթեոս Ուռհայեցին (Մատթեոս Ուռհայեցի. Փամանակագրութիւն, ք. տպ., Վաղարշապատ 1898). «Յայնժամ (չժող 1065) Տուկիծ թագաւորն Հոռոմոց և պատրիարքն և ամենայն կղերիկոսքն և ամենայն դասք ներքինեացն լծակիցք լեալ չարաշուհ և պիղծ խորհրդոյ անորէն թագաւորին և ամենայն մեծամեծ իշխանքն Հոռոմոց ձեռն տուեալ խաւարային խորհրդոցն. վասն զի կամէր թագաւորն չար միաբանելովք իւրովք բռնալ զհայոց հաւատոյ դաւանութիւնն և խորհէին կղծանել զհաւատս սուրբ Հուսաւորչին Գրիգորի. և կամեցաւ զիւր զիւարուն և զխառնափնիցոր և զիւրակատար զհաւատսն հոռոմոց ի Հայք...» (եջ 159—160): «...և արդ անտառիաց թագաւորն Տուկիծ ի Սերասիա քաղաքն և կոչեաց զորդինն թագաւորոց Հայոց զԱտոմ և զԱպուսահն գալ ի Կոստանդնուպոլիս և նորա ծանեան առ սակաւ մի զչար խորհուրդն և առեալ ընդ ինքեանս զՅակոբոս վարդապետն բառ աւելի անուանն Քարափնիցի, այր զիանական զբոց բանից, և զնային ի Կոստանդնուպոլիս և թագաւորն զառաջինն բարով ընկալաւ զորդիք թագաւորացն Հայոց և զկնի սակաւ առուրց սկսաւ յայանել զչար խորհուրդ մտաց իւրոց և ստէր, եթէ ճշմամբ է թագաւորութեանս մերում՝ զի զուք և ամենայն իշխանք Հայոց աշխարհին տոնուք յանձինս ձեր զկնուեր հաւատոյ ազգիս Հոռոմոց: և յայնժամ նորա ի մէջ Հոռոմոց անկան ի մեծ տաքակուսանք և առային ցթագաւորն Ատոմն և Ապուսահն. «Մեր առանց Գաղիկ Աշոտոյ որդւոցն ոչ ինչ կարեմք առնել, զի նա այր քաջ է և թագաւոր և մեր փեսայ. տատրեա և կոչեա զնա այր, զի եթէ մեր առանց նորա իւրք անեմք, նրով այրէ դմեղ ի դաւառն մեր: և լուեալ թագաւորն՝ ոչ կամեցաւ զգալն Գաղիկոս վասն զի այր հզոր էր յիմաստութեան ջսկին և անյազի ի սաստիմանին»:

\* Բնագրում «Գաղիկ Կարոցի»:

զի սա ի սուրբ Սոփի ի յամբիոնն նստէր ընդ ամենայն վարդապետն Հոռոմոց և յայնժամ Ատոմ և Ապուսահն զազա խնդիր հանին Գաղիկ ի Գոլծնակդատն: Իսկ թագաւորն Տուկիծ արար քննութիւն հաւատոյ իւր առաջի, և Յակոբոս վարդապետն՝ որ առի Սանահնեցի, արար զիմադրութիւն բարում յամենայն հարցմունքն ընդէմ Հոռոմոց. բայց սակաւ մի վասն երկբնութեանն Քրիստոսի ի կողմն Հոռոմոց դարձաւ: և յամենայն պատճառն հաւատոցն հաճեալ թագաւորն և հրամայեաց յայնք վերայ զիւր միաբանութեան դրել ընդ Հայք և ընդ Հոռոմք. և վարդապետն Հայոց Յակոբոս գրեաց զիւր միաբանութեան Հայոց և Հոռոմոց: և հաճեալ թագաւորին ի զիւր հաւատոյն, հրամայեաց զնել զգիրսն ի սուրբն Սոփի, զի անա յայնժամ հետէ եղիցին ի միասին միաբանեալ Հայք և Հոռոմք: և ի նոյն ժամայն իբրև զարժիւ թուրքեալ հասանէր Գաղիկ ի Կոստանդնուպոլիս, և լուեալ թագաւորն՝ ուրախ եղև յոյժ. և իբրև մտաւ առ թագաւորն, հրամայեաց բերել զգիրս միաբանութեանն. և առեալ ընթերցաւ Գաղիկ և իբրև ծանեաւ զգրեալսն Յակոբոսի, պատառեաց զնա առաջի թագաւորին յերկուս ծուէնս և ընկէց զնա յերկիր. և թագաւորն տեսեալ՝ ամաչեաց յոյժ: և ատէր Գաղիկ ցթագաւորն վասն վարդապետին, եթէ Ահա սա այր կրօնաւոր է, և այսպիսի բազումք կան յաշխարհն Հայոց, որք ոչ ընդունին. և ոչ ոք հնազանդի դրոյ սորա, և մեք ընդ կատարեալ վարդապետն Հայոց ոչ ունիմք զսա: և յայնժամ առաջի թագաւորին յանդիմանեաց զՅակոբոս և ասէր՝ թէ «Ձերպիւ համարձակեցար զայդ գործել, մտանիլ քեզ յաւելարանութիւն, զի այր կրօնաւոր էր ես: և ասաց Գաղիկ ցթագաւորն Տուկիծ. «Ահա ես այր թագաւոր եմ՝ որդի թագաւորացն Հայոց, և ամենայն Հայք հնազանդին հրամանաց իմոց, և ամենայն կտակարանացն աստուծոյ հնոյ և նորոյս հմուտ եմ, և ամենայն Հայք վկայեն բանից իմոց, զի հաւասար վարդապետացն ընդունին զիս. և անա ես խօսեցայց այսօր ընդ Հոռոմոց վասն հաւատոյ ազգիս Հայոց: և քրեաց Գաղիկ զիւր հաւատոյ ձեռամբ իւրով այսպէս և տայր զնա ի թագաւորն և ի պատրիարքն. և ունէր զիւրն պատճէն այսպէս...» (եջ 160—163): Ապա առաջ ե բերված այսպիս կոչված «զիւր հաւատոյ»-ի բովանդակությունը: Վերջապես, Հակոբոս Քարափնիցու մասին խոսելով՝ նույն Մատթեոս Ուռհայեցին գրում է. «այս Յակոբոս էր, որ խօսեցաւ ի Կոստանդնուպոլիս ընդ իմաստասէրն Հոռոմոց ի յաւուրն թագաւորին Տուկիծին, յորժամ գնաց զհա Սենեքարիմայ որդւոցն. սորա խօսեալ վասն հաւատոցս Հայաստանեայցս, և հաճեալ ի բանս նորա ամենայն տունն Յունաց» (եջ 227): Հմմ. Լ. Միլիտար. Ինկ, Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց, Եր. ԵՆ., 97—98:

ՓԶ.

ԵՓՐԵՄ ԿՐՏԱԵՐ (XII Դ.)

„ԸՆԴԴԵՄ ԱՐԻԱՆՈՍԱՑ ՅԵՎ ՅԵՎՆՈՍԻԱՆՈՍԱՑ ԳՐԻԳՈՐ  
ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ ՃԱՌԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ“

Յեփրեմ Կրտսերը (Յեփրեմ Մցիբեն) վրաց սքոլաստիկ-յեկե-  
զեցական գրականության խոշոր գեղեցիկ մեկն է XI դարում  
(Խվ. Ջավախիսի, Հին վրացական պատմական գրականությանը,  
145—169. Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմություն I,  
259—283): Նրա մասնակցությունն այդ գրականության գրեթե  
բոլոր բնագավառներում, ինչպես և Յեփրեմի Աթոնեցունը X—  
XI դարում, այնքան բազմակողմանի չէ, վոր Կ. Կեկելիձե (օր.  
սի.) նույնիսկ նպատակահարմար է գտնում տալ այդ մասնակ-  
ցության մանրամասն տեսությունը, բաժանելով 11 ճյուղի. 1) բիր-  
լիոսգիտ, 2) եկեղեցական (մեկնարանական), 3) դավանաբանա-  
կան-հակաճառական, 4) սակեաթիկա և միտաթիկա, 5) հապրոգրաֆիա  
(վարքաբանական) և պատմություն, 6) համբլեաթիկա (ներբողյան-  
ներ), 7) թղթակցություններ, 8) եպիստոլիաներ, 9) խնամաստի-  
րական, 10) քերական, 11) լիտուրգիկա (տաղամուկաշատական  
կամ ծիսակատարության), 12) տաղեր:

Յեփրեմի բազմաթիվ գործերից մեկ համար առանձնապես  
հետաքրքիր և մի գրվածք, վորը կոչվում է «Ընդդեմ արխանտապ  
և յեփումբանտապ Գրիգոր աստվածաբանի ճառի մեկնությունը»:  
Այդ գրվածքին հեղինակը կցած ունի մի հիշատակարան, ուր իր  
կարծիքն և հայտնում հայերենից վրացերեն թարգմանություններ  
կատարելու մասին, կարծես թե վորոշ նախապաշարմունքով:

«Մեկնությունը» դեռևս հրատարակված չէ, բայց մեկ հե-  
տաքրքրող հիշատակարանը քանիցս in extenso պատարժվել և  
վրաց գրականության մեջ (Թ. Փորթալիա, Քրոնիկաներ. I, 227.  
Խվ. Ջավախիսի, օր. սի., 147. Կ. Կեկելիձե, օր. սի., 166—167),  
վորն և հիմք և ծառայել ստարե բերած մեր թարգմանությունը:

Սրբա[կրճն] և քրիստոսանբք, ադոթեցեք Յեփրեմ թարգ-  
մանչի՛ մասին. վորը յերկրորդ անգամ թարգմանեց այս ընթերց-  
վածքը. վորովհետև յերանելի Գրիգոր Ողկեցվո՞՞ ձեռքով հայերե-  
նից թարգմանվածն այսպես [անբավարար] գտա. իսկ յես հար-  
կադրվեցի, հայերենի փոխարեն, կրկին թարգմանել հունարենից,  
քանի վոր հայերենի վորդուն և հունարենի թոռան փոխարեն,  
վորը տակավին անկասկած չի, անկասկածելի ու սեփական  
վորդիս գերադասեցի՞:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրում «թարգմանի», վոր նշանակում է ինչպես «թարգմանիչ»  
նույնպես և «մեկնիչ»: Թեև այս գեղեցիկ կարելի չէ հասկանալ առաջին խնամ-  
տով, քանի վոր Յեփրեմը, իրաք, թարգմանը էլ և յեղել, նույնիսկ հայերենին  
բավականին տեղյակ, վորովհետև հովհան Գամակեցու Օձղո՞՞-ի մեկնության  
մեջ առում է, վոր մի խոսք «չեքսի» վրացերեն անփոխադրելի չէ, իսկ հայերեն  
գա նշանակում է «քերական» (տես E. Такайшвили, Описание рукописей. I  
720. Ք. Ս. Բլաձկ, О древнегрузинских версиях Ветхого Завета. По поводу  
Codex Z'ordaniae Грузинского Университета. — «Известия Кавк. Отд.  
Моск. Арх. О-ва, в. VI, Тфл. 1921, стр. 37): Բացի դրանից, «Ընդդեմ արխ-  
նտապ և յեփումբանտապ ճառի» մեջ հայերեն «հրատարակի»-ք Յեփրեմը փոխ-  
դրել է «ուրակադարակի»-ի (Ք. Ս. Բլաձկ, ibid):

2. Գրիգոր Ողկեցին X դարու հեղինակ է, Տայք-Կղարջյան դպրոցի ներ-  
կայացուցիչ, հայապետ (տես Կ. Կեկելիձե, օր. սի., 166—167): այս Գրիգորի մա-  
սին անտիպ աշխատություն ունի Պ. Խնդրադ'վամ՝ կարգապատ գեղ 1918 թ. 15.  
XII Վրաց Պատմ-Ազգագրական ընկ. հրատարակական նիստին (որա մասին  
ասայժմ տես A. Меликсет-Бекон, Из истории культурных взаимоотноше-  
ний армян и грузин в IX—X в. в., — «Тифлисский Листок» 1918, № 273.  
Ք. Ս. Բլաձկ, օր. սի., 37): Տայք-Կղարջյան դպրոցի մասին հայերեն տես-  
Վ. Միլիբեք-Բեկ, Հայերը վրաց հին գրականութեան մեջ, — «Գեղարուեստ», դ. VII.  
Թիֆլիս 1921, էջ 34—35:

3. Ուզում է ասել, վոր յեթե հայերենից թարգմանել, վորն իր հերթին  
հունարենից և փոխադրած, այն ժամանակ վրացերենը հունարենի թոռն է հա-  
յերենի վորդին կլինելու. ուստի և թարգմանել և անմեղապես հունարենից, վոր-  
պեսզի վրացերենը հունարենի հարազատ վորդին լինի: Հմտ. այս պահի յոթե-  
րորդ գլուխը:

ժ. է.

**ՌՈՒԻՍ-ՌԻՐԲՆԻՍԻ ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
(1103 թ.) ԿԱՆՈՆՆԵՐԸ**

Ռուիս-Ռերբնիսի յեկեղեցական ժողովը վրաց մասնավոր յեկեղեցական ժողովներից մեկն է, վար կայացել է Դավիթ II Շինոպ թագավորի հրամանով 1103 թ. բացթիթյա՝ Ռուիս և Ռերբնիս յեպիսկոպոսանիսս գյուղերի միջև տարածվող դաշտում (այժմյան Դորու շրջանում, Սկրա կայարանի դիմացը, հայնկուլս Կուր գետի)։

Այս ժողովի կանոնները յերկու անգամ է հրատարակված. նախ՝ 1882 թ. Մ. Սաբինինի «Վրաստանի դրախա»-ում, էջ 518—530, իսկ յերկրորդ անգամ 1897 թ. Թ. Ժորդանիայի «Քրոնիկաներ»-ի II գրքում, էջ 54—72\*։

Կանոններից հայերին հատկապես վերաբերում է 12-րդ կետը (կանոնը), վորը ստորև մենք դնում ենք քաղվածաբար։

**| ԽԱՉԵՑԱՐ - ՉԱՅԵՐԸ |**

[Կանոն] 12... հերձվածողներից խաչեցարները<sup>1</sup> հայերն են... Սրանց մասին սահմանում ենք, վոր [ուղղափառություն ընդունելու գեպքում] սրանց լիովին մկրտեն ինչպես հեթանոսներին. վորովհետև պատար, վոր այլ մեծ յեկեղեցիներն այսպես են անում, ինչպես որինակ Անտիոքի պատրիարքական աթոռն ու նրան հեակող ամբողջ արևելքի յեկեղեցիները<sup>2</sup>։

\* Կանոնների ուսումնասիրությունը տես. Իվ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմությունը, I, վրացերեն, Տփղիս 1928, էջ 39—46, հմմ. բավականին ննացած և գիտական արժեքից միանգամայն պուրկ գրքույկը. Андроник Гзелица, «Дзегликъ нера» (Хартія) грузинскаго царя Давида III Возобнови телы, Тифлис 1898:

1. Հմմ. Նինգերորդ գլխի 12-րդ ծանոթ. «Յաչեցարներ», իբրև հայերի մականուն, վրաց գրականության մեջ մտած է հունարենի ազգեցությամբ, ուր մենք ունինք γαζῆ, ζῆροι. ինչպես այդ կարգում ենք. Quomodo recipiendi sunt Armenii haeretici-ի մեջ (Migne, PG. CXXXII, 1257), կամ γαζῆ, ζῆροι, ինչպես կարգում ենք այլուր, ճիշտ այնպես, ինչպես այն նույն հունարենից մտած է սլավոներենում «ханзиръ» ձևով (И. Моисеетов, О постах православной восточной церкви, 50). տես նաև՝ Л. Меликсет-Бекоев, Грузинский извод сказания о посте «сараджавор», стр. 106—107, 81, 73:

2. Այս խոսքերը վորոշ արձագանք են վրաց յեկեղեցու՝ նախնական շրջանում Անտիոքի աթոռից կախման և նույն Անտիոքի ինքնազիտություն (ալտոկեփալիան) ստանալու մասին հորինված թեորիայի, վորի աղբյուրը Յեփրեմ Կրտսերի (տես նախորդ գլուխը) յերկասիրությունն և հետևյալ վերնագրով «Հուրդագրություն [այն մասին], թե վրաց դարձի պատճառ վոր գրքերումն է հիշված» (Ն. Թաղ'այշվիլի, Ս. Նունիյի վարուց նոր վարխանուր կամ վրաց դարձի [պատմություն] յերկրորդ մասը, 1891, էջ XXXVIII—LVII - Թ. Ժորդանիա, Քրոնիկաներ, I, 1892, էջ 33—37 et pass.). հմմ. Н. Марр, Исторический очерк грузинской церкви с древнейших времен. — «Церковные Ведомости» 1907 г., прил., стр. 122.

ժԳ.

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Յ

Կանգ առնելով վրաց դավանաբանական-փիճարանական գրա-  
վանության վրա, վորն առանձնապես սկսեց զարգանալ IX դա-  
րուց ու իր գազաթնակետին հասավ XI—XII դարերում, Գ. Վե-  
կելիձենի (Վրաց գրականության պատմություն, I, 539—540)  
գրում է. «Առհասարակ պետք է նկատենք, վոր հայերի ընդդեմ  
ուղղված փիճարանական գրականությունը հունարեն լեզվով, վորն  
իններորդ դարուցն է սկսվում, առանձնապես սուր կերպարանք  
ստացավ XI—XII դարում: Այժմ հավաքում են ի մի յեկեղեցական-  
դավանական բոլոր այն սովորույթները, վորով հայերը տարբեր-  
վում են հույներից, քննադատության բովով են անցկացնում այլ  
և հաճախ այնպիսի պամփլետներ հորինում, ինչպիսի յե առա-  
ջ[ավ]որի (ալաջորի) մասին առասպելը: Այսպիսի հորինվածներից  
մի քանիսը վրացերեն էլ և թարգմանվելը»:

Այս նույն գիտնականը մասնանշում է (ibid.), վոր Արսեն  
Վաչեաձենի իր Դոդլեասիկոնի մեջ ունի մտցրած 3 այսպիսի  
հորինվածքներ. 1) «Հայոց հերձվածքի յերեսուն պոլիսներ»<sup>1</sup>,  
2) Յերուսաղեմի Թոմաս պատրիարքի թուղթը Հայոց հերձվածու-  
ների դեմ, վորը գրի յե առել Թեոդորոս Յեպիկուրան (Արուկու-  
րան) Սարանի յեպիսկոպոսը, և հունարեն թարգմանել Միքայել  
յերեցն՝ Յերուսաղեմի աթոռի միաբանը<sup>2</sup>, և 3) Նիկիտա Սաթիթա-  
տի՝ Ստուդիի վանքի աբեղայի՝ Յեղծ հայոց հերձվածքի (5 ճառ)<sup>3</sup>:  
Բացի դրանից գոյություն ունին վրացերեն նաև. «Ամենայերա-  
նելի Թեոդորոսի (Յեպիկուրայի [Արուկուրայի] ?) հակաճառու-  
թյուն ընդդեմ հայոց»<sup>4</sup>, «Մաքսիմիոսի ընդդեմ հայոց»<sup>5</sup> և «Թե  
սուրբ կաթողիկե յեկեղեցին ինչու յե նզովում հայերին»<sup>6</sup>:

Այս գրվածքներից և վոչ մեկը ինքնուրույն չէ, այլ բոլորն  
էլ թարգմանված են հունարենից. հետևապես դասել նրանց վրաց  
աղբյուրների շարքում անհնարին է: Այնուամենայնիվ, մենք նույն

տակահարմար դասնք տալ նրանց ցուցակը, և ի վերջո կուզե-  
լինք անել մի նկատողություն էս:

Ըստ մեր հետազոտության, «Հայոց հերձվածքի յերեսուն պոլի-  
սներ» և «Թե սուրբ կաթողիկե յեկեղեցին ինչու յե նզովում հայե-  
րին» գրվածքները, վորոնք հասել են մեզ, առաջինը՝ Վրաց մեջ  
գրագիտություն տարածող ն. ընկերության հավաքածուի № 1463  
և Տիգրիսի ն. յեկեղեցական թանգարանի № 205 ձեռագիրներում,  
իսկ յերկրորդը՝ Վրաց մեջ գրագիտություն տարածող ընկ. հավա-  
քածուի № № 312 և 248 ձեռագիրներում, փոխադրված են հու-  
նարենից (Թեև վոչ բառացի, այլ թեթև վերամշակված ձևով)<sup>7</sup>  
հույն-բյուզանդական գրականության մեջ հայտնի հետևյալ արակ-  
տասաններից. 1) Narratio de rebus Armeniae-ին կցված Quomodo  
recipiendi sunt Armenii haeretici-ի (Migne, PG. CXXXII, 1257—  
1265)<sup>7</sup>, և 2) Oratio invectiva adversus Armenios-ի Oratio I Contra  
Armenios-ին կցված Capita quorum ratione Armenii devoventur-ի  
(ibid., 1209—1217):

ՄԱՆՈՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հրատարակված չէ:
2. Նույնը: Առայժմ տես Ա. Меликсет-Бекос, К вопросу о Феодоре Абукуре в древнегрузинской литературе, — «Известия Кавк. Ист.-Арх. Института», т. IV, 1926, стр. 43—45:
3. Նույնը: Առայժմ տես .А. М.-Б., Никиты Стифата, иеромонаха Студийского, «Опровержение армянской ереси» (грузинская версия), — «Христ. Восток», т. VI, 1918, стр. 92—93:
4. Նույնը: Առայժմ տես .А. Меликсет-Бекос, К вопросу о Феодоре Абукуре в древнегрузинской литературе, стр. 45:
5. Հրատարակված չէ:
6. Հրատարակել է Մ. Սարիբեկը, «Վրաստանի դրախտը», էջ 633—635:
7. Հմմ. Կ. Կեկելիձե, op. cit., էջ 540, ծան. 7:

Մեր ներկա աշխատութեան ատաղին հատորի յերկրորդ պրակում մենք ամփոփել ենք յաղագծքներ XI—XII դարու վրաց պատմիչների այն յերկասիրութեաննսրից, վորոնք ի մի յեն յեղել ժողոված դեռ ելի XII դարում հիմք ծառայելով ուրույն խմբագրութեան, վորն այդ յերկասիրութեանների ձուլման և ապա համառոտութեան փորձն և ներկայացնում, ասել և՛ այն խմբագրութեան, վորը հասել և մեզ միմիայն հայերեն թարգմանութեամբ և հայանի յե՛ «Պատմութիւն Վրաց» կամ «Համառոտ պատմութիւն Վրաց» վերնագրով, նույնը Մ. Brosset-ի կողմից Փրանսերենի վերածած (հայերենից) Chronique Arménienne վերտառութեամբ (և ըստ այսմ՝ ուսուցիչն Армянская хроника և վրացերեն «Սովխուրի խրոնիկա» կոչված): Տարակուսանքն այն առթիւ՛ կատարվել և արդյոք հիշված համառոտութեանը վրացի խմբագրի ձևքով և ապա թարգմանվել հայերեն, թե՛ հայ խմբագիրն և ուղղակի կատարել այդ աշխատանքը, լուծվում և հայերեն տեկտի մեջ ներմուծած հետևյալ հիշատակարանի հիման վրա. «Եւ գտաւ պատմութիւնս համառոտ՝ ի ժամանակս շիոթման, և եղաւ ի գիրքս՝ որ կոչի Քարթլիս Յխորէպա, որ է՝ Պատմութիւն Քարթլայ. և եզիս գսա Ջուանշեր (ընագրում՝ Ջուանքեր. Վ. Մ.-Բ.), գրեալ մինչև ցՎախթանդ թագաւոր, և մինչև ցայսվայր ինքն յաւել Ջուանշեր (ըն.՝ Ջուանքեր. Վ. Մ.-Բ.), և զգալոցն՝ յանձնեաց տեսողացն և պատահելոցն ի ժամանակին» (եջ 104):

Ուրեմն պարզ և, վոր «Պատմութիւն Վրաց»-ը թարգմանութեան և վրացերեն լեզվով հնում գոյութեան ունեցող վրաց տարեգրութեան այն՝ նախնական՝ խմբագրութեանից, վորը «Քարթլիս ցխորեբա», այսինքն «Պատմութեան Վրաց (Քարթլիի)» յի կոչվել, թեև այս անունը հետագայում իրրե terminus technicus տարածվել և վրաց տարեգրութեան վրա ընդհանրապես՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև XIX դար, վորը վրացերեն նույնպես «Քարթլիս ցխորեբա» (Քարթլիս ցխորեբա) անունով և

հայտնի, իսկ ֆրանսերեն թարգմանութեամբ *M. Brosset-ի Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu' au XIX<sup>e</sup> siècle (սուլջն գիտնականի հորինածն է և Chronique Arménienne վերնագիրը)*:

Կար ժամանակ, չերբ գիտական աշխարհում այն կարծիքն էր տիրում, վոր իբր թե «Քարթլիս ցխորերա» կոչված վրաց տարեգրությունը միմիայն XVIII դարու առաջին կիսունն և կազմվել և խմբագրվել Վախտանգ VI թագավորի կոմիտայի ձեռքով: Բայց նրանից հետո, չերբ հրատարակ հանվեց, մեկ կողմից, այսպես կոչված «Պատմութիւն Վրաց»-ը (*Chronique Arménienne* ւր), իսկ մյուս կողմից՝ նույն տարեգրութեան այսպես կոչված «Մարիամ թագուհու վարիանտը», վորը հաղթվ մինչ XVII դար և հասնում, ուրիմն նախավախտանգյան շրջանին և պատկանում, գիտական աշխարհում նույն «Քարթլիս ցխորերա»-ի հանդեպ հեղաշրջում կատարվեց և այն կարծիքը հաստատվեց, վոր վրաց տարեգրությունը պատմական կամ ժամանակագրական բնույթ կրող այս ու այն հեղինակների յերկասիրությունների կոնսուլիդացիայի մի փորձ է, վոր կատարվել և հետզհետե, դարերի ընթացքում, սկսած XII դարուց:

Համենայն դեպս, վոր «Քարթլիս ցխորերա»-ի հնագույն խմբագրություններից մեկը հայտնի չե յեղել հայ պատմիչներին դեռ ելի XII—XIII դարերում, դա ակնհեր փաստ է:

Մխիթար Անեցիցի, վորը գրի չե առել Հայաստանի պատմությունը «ի սկզբանէ աշխարհի» մինչ 1193 թ.՝ յերեք գրքով, վորից մեկ հասել և միմիայն սկզբնական մասը (Հանդէսք բանից աշխարհագումարը կրուցաց, տիեզերապատում անցից, վիպասանեալ ի քաջ պիանականէն Մխիթարայ, աւապերիցու մեծ կաթուղիկէին Անուց հոյակապ քաղաքի. ի խնդրոյ հաւր Հառիճայի Կրիպորոյ վարդապետի), իր յերկասիրութեան մեկ շնաստծ մասերում, ի միջի այլոց, հիշատակելիս չե յեղել և վրաց աղբյուրները, վորից սոյա սգտվել և Սեփանու Ռբելյանը (*Պատմութիւն Արեւոսի և պիսկոպոսի ի Հերակլն և սկիզբ նորոպիւտ պատմութեան Մխիթարայ Անեցուց, ի լոյս էած Ք. Պատկանեան, ՍՊԲ. 1879, հավելված. էջ ա—բ., հմմ. Ք. Պատկանեան, Համառոտ տեսութիւն հայ պատմական գրականութեան, հավելված «Փորձ»-ի 1880 թ. № 1, էջ 24*):

Վարդանը նույնպես ծանոթ է վրաց տարեգրութեանը, յերբ ասում է. «Իսկ յազգս վրաց թագաւորացն սկզբանց, որ կայ ի գիւս նոցա», և մի փոքր հետո. «այս ըստ Մխիթարայ երիցու

տսիցն» (*Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանեալ, Վենետիկ 1862, էջ 91—92*),

Մխիթար Այրիվանեցիցի ևս ըստ այն տեղեկությունների, վոր տալիս է Վրաց պատմությունից, քաղում և վրաց տարեգրությունից կամ, ուղիղ ասած, վերջինիս հայերեն թարգմանությունից՝ նույն սխալներով և աղավաղումներով, վորոնք հասուկ են հենց այդ թարգմանութեանը (տես հատվածները՝ «Իշխանք վրաց», «Քաղաւորք վրաց» և «Շախիկոպոսք վրաց» վերնագիրների տակ. *Մխիթարայ Այրիվանեցուց Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեալ Մկրտիչ Էմին, Մոսկովա 1860, էջ 17—18*),

Իսկ Սեփանու Ռբելյանը, անտարակույս, ծանոթ է ինչպես Մխիթար Անեցու պատմութեան, նույնպես և վրաց տարեգրութեան հայերեն թարգմանութեան հետ, վորոնց մասին կրում և հետևյալը. «Եւ անա զայս ծանեաք ընդ աղօտ ինչ ի Վրաց պատմութեանէն... զի ժտեալ էր յիշատակ նախնական կրուցարանութեանց նոցա, նա և ամհնայն արութիւնք և գործք երևելիք ի տանն Վրաց ազգին Օրբէլեանց ի նոցին ժամանակագրոցն զոր Քարթլիս-ցխորերայ կոչեն, վասն այն մեք ոչ գիտացաք զորպէսն և զկարգ բանիցն զի և ըստ կարգի շարայարեալ էաք ի մատենիս, բայց զոր գտա՞ ի հայալեզու գիւս սակաւ ինչ յիւստակ՝ դիցուք, ևս և զգախճան կատարածի նորա, զոր հաւաստեալ ծանոց մեզ գեղեցիկ պատմութիւնն Մխիթարայ Անեցուց» (*Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեայ [Ղուկասեան Մատենադարան IV], թ. 1911, էջ 372—373*):

Մի կողմ թողնելով «Պատմութիւն Վրաց»-ի (*Chronique Arménienne-ի*) տեկստը, վորը մեկ հասել է առնվազն 3 դրչազիր որինակով (յերկուսն Եջմիածնի մատենադարանինը, վորոնցից մեկը Կարապետ արքեպ. Բաղրատունով ձեռքի տակ չեղածն է, վորտեղից ընդորինակված է Վենետիկի Մխիթարյանց ձեռագիրը, և մեկն ևլ Լենինգրադի Իստուքյանց ձեռարանի նոսխիին «Առիական թանգարանի», այժմ «Արևելագիտութեան ինստիտուտի»), բավական է ասել, վոր սրանցից հնագույնն և Եջմիածնի մատենադարանի հին հավաքածուի № 1902 (=1792), վորն ըստ *M. Brosset-ի* (*Histoire de la Géorgie. Introduction, SPB. 1858, p. XVIII. Voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, III rap., 1849, p. 2*) 1279—1311 թ. թ. և կրված, Այլ հարց է, թե ով է այդ խմբագրութեան հեղինակը կամ կազմողը, վորին ասայժմ վոչ



մի գրական պատմության շի կարելի առ, թեև Ք. Պատկանյանը (Ванские надписи и значение их для истории Передней Азии. О древней грузинской хронике, — «Журнал Министерства Народного Просвещения», 1883, декабрь, стр. 243—244) այն անգիտ մի հայ վանականի պորձ եր համարում (автор древней Грузинской летописи едва ли природный Грузин, вероятнее всего малограмотный армянский монах): Այնուամենայնիվ, այս խմբագրությունը, առել է «Պատմութիւն Վրաց»-ին, գրական աշխարհում միշտ կարևոր նշանակութիւն է ընծայվել. և այս է պատճառը, Վոր նրա շուրջը հասուկ գրականութիւնն էլ գոյութիւն ունի, այն է. 1. M. Brosset. Chronique Arménienne (Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, SPB, 1851) — հայերեն տեղատի ամբողջական ֆրանսերեն թարգմանութիւնը. 2. К. Патканов. Ванские надписи и значение их для истории Передней Азии. О древней грузинской хронике (Журнал Мин. Нар. Просв., 1883, декабрь, стр. 199—274) — հայերեն տեղատի ուսումնասիրութիւնը՝ սկզբնական մասի ուսուցիչն թարգմանութեամբ հանդերձ. 3. Համառոտ Պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի, Արամաւ վ. Թիքայեանի առաջաբանով (Մատենադրութիւնք նախնեաց, Վենետիկ 1884) — հայերեն տեղատի հրատարակութիւնը. 4. H. Marr. Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей. VII. Об армянском тексте Грузинских летописей («Записки Вост. Отд. Рус. Археолог. Общ-ва», т. V, 1890), նույնը հայերեն. Ն. Մառ. Ամսունային ուղեւորութիւնից դէպ ի Հայս, թարգմ. Ռ. Անուփեան («Ազգային Մատենագարան» է, Վիեննա 1892) — հայերեն տեղատի պարունակող եջմիածնի հնագույն ձեռագրի ուսումնասիրութիւնը. 5. Յուսէֆ Աբուլաձե. Վրաց տարեգրութեան հին հայերեն թարգմանութեան առթիվ, վրացերեն («Մոզգատուրի» ամսագիր, 1901, № IV) — գիտումներ հայերեն տեղատի ազավագումների մասին. ըստ իս՝ հեղինակը հայտնում է, Վոր ինքը հայերեն տեղատի «վրացերենի է վերածել IX—X դարու լեզվով» (ինչպես Ասրգիս Կապաբաձեան իր «Պատմական պրագմատիկներ» ժողովածուի մեջ, էջ 155, հայտնում է, Վոր «[Վրաց] մատենագրութեան] այս հին վերսիսան» ինքն է «վերածել է հայերենից հին վրացերենի» 1908 թվին). և 6. Յեղիա վ. Քատուհի. Վրաց ժամանակագրութիւնը («Հանդէս Ամսօրեայ» 1921 թ. № № 9—10, 11—12, 1922 թ. № № 2—3) — հայերեն տեղատի ուսումնասիրութիւնն ըստ ելութեան:

Ինչ վերաբերում է «Քարթլիս ցխորերա»-ի բուն տեղատի, այն հետզհետե կազմված ժողովածու չէ, Վորը պարունակում է բազմաթիվ յերկասիրութիւններ զանազան պատմիչների՝ սկսած XI դարուց (չեթե Վոչ ալելի հին) և մինչ XVIII—XIX դար: Այդ պատմիչներից հնագույններն են նրանք, Վորոնց դրվածքները համառոտվել են և ի մի ձուլվել դեռ էլի XII դարում՝ Վորոչ արտահայտութիւնն ստանալով «Պատմութիւն Վրաց»-ի (Chronique Arménienne-ի) մեզ չհասած վրացերեն բնագրի մեջ: Ահա և այդ պատմիչների անուններն այն հաջորդականութեամբ, ինչպես նրանց յերկասիրութիւնները գեղեղված են «Քարթլիս ցխորերա»-ի այսպիս կոչված «Մարիամ թագուհու վարիանում». 1. Լեոնիսու Ռուխեցի (Լեոնիս Մրավիք) — Վրաց թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմութիւնը, 2. Ջուանցեթ Ջուանցեթյան (ըստ Կ. Կեկելիձեյի՝ նույն Լեոնիսու Ռուխեցին) — «Վախասանդ Գորգասալի պատմութիւնը», 3. Լեոնիսու Ռուխեցի — «Արչիլ թագավորի վկայաբանութիւնը», 4. Անանուս — «[Վրաց (Քարթլիս) մատյանը]», 5. Անանուս — «Իսկիթ» արքայից-արքայի պատմութիւնը, և 6. Անբաթ Վորդի Իսկիթ — «Բագրատունյաց պատմութիւնը»: Ստորև, յուրաքանչյուր հեղինակի մասին առանձին խոսելիս, մենք նպատակահարմար գտանք այս հաջորդականութեանը չհետևել, այլ դասավորել նրանց ժամանակագրական կարգով՝ առաջնութիւնն տալով Իսկիթի Վորդի Սմբատին, ապա միմիայն Լեոնիսու Ռուխեցուն և Ջուանցեթ Ջուանցեթյանին և, ի վերջո, անանուս հեղինակներին:

Քաղվածքները վրացերեն բնագրիներից հայերեն թարգմանութեամբ մենք տալիս ենք համաձայն հետևյալ հրատարակութիւնների.

1. Ե. Թադայովիի. Քարթլիս-ցխորերա. Մարիամ թագուհու վարիանոր, վրացերեն, Տփղիս 1906, էջ 1—361:

2. Մ. Բրոսե, Քարթլիս-ցխորերա. վրացերեն, ՄՊԲ. 1849, էջ 15—263 (նույնը ստերեոտիպ արտատպութեամբ՝ Ն. Մառ. Քարթլիս-ցխորերա, Պետրոպոլ 1923, էջ 15—200, կիսատ մնացած):

Միաժամանակ ոգտապորժած ունինք և ֆրանսերեն թարգմանութիւնը վրացերենից՝ M. Brosset. Histoire de la Géorgie, I Partie, I-e Livraison, SPB 1849, ամբողջ (p. p. 15—381):

Ընդ մին, յուրաքանչյուր հասվածի կամ քաղվածքի կողքին, յեթե այն այսպես թե այնպես զուգարդիպում է «Պատմութիւն Վրաց»-ի (Chronique Arménienne-ի) հայերեն տեղատի, մենք

ամբողջապես առաջ ենք բերում և այդպիսին, փորձեսցի դրանով. մեկ կողմից, գյուղութիւնն տված լինինք ընթերցողին կարևոր համեմատութիւններ կատարելու համար, և մյուս կողմից՝ ցույց տանք, թե XII դարու հայերէն բարգմանութիւնը վորտն է շեղվում բնագրից և, ուրեմն, վորքան հաւատք կարելի չի ընծայել վերջինիս՝ այս կամ այն խնդիրները լուծելիս, նամանավանդ այն կետերում, յերբ հալ-վրացական փոխհարաբերութիւններն արձանագրելիս՝ աղբյուրներն իրենց լուսարանութեամբ իրարից շեղվում են և նույնիսկ բաց ելութեան մեկը մյուսին հակասում:

II.

## ՍՄԲԱՏ ՎՈՐԴԻ ԴԱՎԹԻ (XI Դ.)

### „ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ“

Քարթլիս-ցխորերայի Մարիամ Թագուհու վարխանտում «Իս-վիթ արքայից-արքայի պատմութեանը» (տես այս ոլորակի և. պոխը) անմիջապես հետևում է մի փոքր յերկասիրութիւնն հետեյալ վերնագրով. «Պատմութիւն և տեղեկանք մեր վրաց Բագրատունյաց (Բագրատունյան) Թագավորների մասին, թե վերտեղից յեկան նրանք այս յերկիրը կամ վեր ժամանակից ունին նրանք դրաված վրաց (Քարթլի) Թագավորութիւնը, վոր դրեց Սմբատ Իսվիթի վորդին»:

Այս յերկասիրութիւնն առաջին անգամ հրատարակեց և. Քա-դ՝այեվիլին իր հայտնի աշխատութեան մեջ «Յերեք պատմական քրոնիկա» (վրացերէն, Տփղիս 1890), էջ 41—79, տալով ասանձին և նրա ոտակերէն Թարգմանութիւնը համապատասխան աշխատութեան մեջ՝ Источники грузинских летоисей — Три хро-ники («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», в. XXVIII, 1900), стр. 117—182: Ապա յերկրորդ անգամ այն հայտնի դարձավ «Մարիամ Թագուհու վարխանտի» հրատարակումով, վորը նույն և. Քադ՝այեվիլին լույս ընծայեց (վրացե-րէն, Տփղիս 1906), էջ 337—361: Ինչ վերաբերում է Քարթլիս-ցխորերայի Վախտանգյան խմբագրութեանը, այնտեղ այդ յերկասիրութիւնն առանձին-առանձին պատասխիկներով և մուծած, էջ 161—163, 188 et pass., վորոնք գիտական արժեքից միանգամայն գուրկ են (հմմ. նույնը Փրանսերէն Թարգմանութեամբ՝ Histoire de la Géorgie, I, I. p. p. 216—220, 261 et pass.):

Թե սիկ եր Իսվիթի վորդի Սմբատը, դրա մասին չօչինչ հայտնի չէ. սրա մասին վեջ նրա յերկասիրութեան մեջ կա վորեւէ տեղեկութիւն և վեջ ել այլուր: Սակայն, ինչպես իր

ժամանակին և. Թաղ՝ուլալիլին (Յերեք պատմական քրոնիկա, CIX) նկատեց, «նա միանգամայն անձանթ և մեղ, թեև համա- նական և թվում, զոր նա Տայք-Կղարջյան Բաղրատունիներից (Բաղրատունիներից) լինի, և ապրում էր ատանուակերտորդ դարում»: Յեղ իրոք, Սմբատն իր պատմութ յունը սկսում է Ազա- մից և հասցնում մինչ Բաղրատ IV (1026—1062) թագավորու- թյունը՝ կիսատ թողնելով զերջինիս նկարագրութ յունը: Ուրեմն պարզ է, զոր նա XI դարու կիսի կամ առաջին կիսի հեղինակ պիտի լինի, նամանավանդ յեթի ի նկատի առնենք այն հանգա- մանքը, զոր նրա պատմութ յունը նույն XI դարու յերկրորդ կի- սում ուստագործած ունին Լեոնտիոս Ռուխեցին (տես այս պրակի Բ. գլուխը) և Ջուանչեր Ջուանչերյանը (տես Գ. գլուխը):

Իավիթ Կարինալիլին իր հատուկ հոգվածում «ՄՎ պիտի լի- նի Սմբատի (Սուամբատի) քրոնիկայի հեղինակը» (Վազեմի Վրաս- տան, վրացերեն, հ. 1, Տիպիս 1909, էջ 36—42) այն միաժեռ է հայտնում, զոր «Սմբատը (Սուամբատը) պիտի լիներ զորդի Իավ- թի, զորը Բաղրատ յերրորդի պապի չեղբոր՝ Ատրնեբեհն (Ադար- նասե) Կուրապալատի զորդին էր, զորը 1032 թ. դեռ ելի կենդա- նի յե յեղել» (էջ 41):

Իվ. Ջավախիլիլին (Հին վրացական պատմական գրականու- թյունը, ր. ապ., 195) իրավացիորեն նկատած ունի, զոր հեղինակը թշնամի յե և հակառակորդ ֆեոդալական կարգերի և հանդիսանում և ջատագով Բաղրատունյաց միահեծանութ յան: Մեր կարծի- քով, Իավիթի զորդի Սմբատի յերկասիրութ յունը վրաց պատ- մագրութ յան հանդեպ նույն դերն ունի ստանձնած, ինչ հայ պատմագրութ յան հանդեպ կատարած ունին Բաղրատունյաց շրջա- նի հայ պատմիչները՝ լինին նրանք աշխարհական (Շապհո Բաղ- րատունի, դեռ չհայտնագործված) թե հոգևորական (կաթողիկոս- վարդապետաւազերեցներ):

[ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՑ]

...Յեղ Սողոմոնի այս յոթ յեղբայրները յեկան Յեկեղեց (Եկեց) Թաքալի աթինոջ (Թագուհու) մոտ, և նրանից մկրավեցին: Յեղ մնացին նրանք Հայոց (Սոմխիթի) յերկրում, և այնտեղ այն սր- վանից ցայտոր նրանց զավակները ախրում են Հայքին (Սոմխի- թին): Նրանցից չորս յեղբայրները յեկան Քարթլի, զորոնցից մեկին՝ Գուարամ անուն՝ նշանակեցին իշխան (երթաթալ): Յեղ

այսպես Վրաց (Քարթլի) Բաղրատ[ւ]նիները այն Գուարամի սերունդն (զորդոց վորդիքն) ու աղպականներն են: Իսկ նրա (Գուարամի) յեղբայրը՝ Սահակ անուն՝ պնաց Կախք (Կախեթ) և խնամիացավ Ներսեսին (Ներսեյին), իսկ մնացած յերկու յեղբայր- ները՝ Ասամ և Վարդ[ա]վարդ անուն՝ գնացին Կամրեջովան, սպա- նեցին Պարսից սպասարարին և տիրեցին Կամրեջովանին:...

[Միմեոն-Պետրոս կաթողիկոսի սրոք<sup>1</sup>] պարսիկները ախրում էյին Քարթլին, Կախքին (Կախեթին), Հերքին (Հերթին), Հայ- քին (Սոմխիթին), Սյունիքին և [Վ]ասպո[ւ]րակ[ա]նին (Ասպո- րանգին):...

...[Այս հրեյա յեղբայրները՝ [ազատվելով] գերութ յունից [և] գալով Փլիսախմացոց<sup>2</sup> յերկրից, անցան Յեկեղեց (Եկեց), և Յեկեղայց (Եկեց) [զավառում] մկրավեցին Թաքալի աթինոջից (Թագուհուց), զորը նրանցից յերեքի անունները փոխեց, քանի զոր մեկին անվանեց Մուշեղ (Մուշեղ\*), մյուսին՝ Բաղրատ, զորը Բաղրատո[ւ]նյաց [նայց [նախա]հայրն է, և յերրորդին՝ Արդար\*\*; Մեկին իրեն փեսայացրեց, իսկ մյուս յերկուսին ինամիացրեց Հայոց (Սոմխիթի) թագավորների հետ:...

Քրոնիկոնի 228-ին<sup>3</sup> վախճանվեց Գուրգեն արքայից-արքան, Բաղրատ՝ վրաց (քարթլիների) թագավորի զորդին, թողնելով [Թագր] իր զորդի Բաղրատին՝ ափխազաց թագավոր և մեծն կու- րապալատին: [Այս Բաղրատը] տիրեց Տայքին (Տաոյին)<sup>4</sup> իր «հայ- րենիք»-ին\*\*\*, և լինքնակալութ յամբ գրավեց ամրոջ կովկասը՝ Ջիքայ [յերկրից] (Ջիքեթից) սկսած մինչ Վրկան (Պուրպան), իսկ Ատրպատականն (Աղբրադպանն) ու Շիրվանը հարկատու դարձրեց իրեն՝ իրրև Հայոց (Սոմխիթի) թագավորին\*\*\*\*:...

Գեորգ (Գիորգի) թագավորի յոթերորդ թվին՝ հունաց (րի- ձենների) Վասիլ թագավորը դուրս յերավ այս Գեորգի գեմ: Իսկ այս Գեորգն ուղղվեց մեծ զորքով [նրա գեմ], և յերկուսն էլ յեր- կար ժամանակ կանդ առան Բասեն (Բասյան) զավառում՝ չեյնի-

\* Բնագրում՝ Մոշալե (sic):

\*\* Բնագրում՝ Արգավար (sic):

\*\*\* Բնագրում՝ մամուլի:

\*\*\*\* Այս արդարի մի մտքը՝ սկսած իստրիլից «[Այս Բաղրատը] տիրեց Տայ- քին» մինչ այստեղ՝ կրկնվում է, ի միջև այլոց, և «Քարթլի-սխորեբայի Վախ- տանյան խմբագրութ յան մեջ (էջ 212), զորը իր տեղում մեծ քայլ ենք թող- նում, քանի զոր այն չկա Մարիամ Թագուհու և ուրիշ հնագույն վարկանան- քում նախաաղբուրդ, անկասկած, Սմբատի յերկասիրութ յունն է, ինչպես իր ժամանակին մասնաճեղ և Ե. Թաղ՝այլիլիլին (Ք. Ց., էջ 245, ծանոթ. 8):

յով կովի իրար դեմ: Սուսափելով Բասիլից՝ Գեորգը [յետ] դարձավ  
և ավերեց քաղաքն Ուլթյաց (Ուլթիւր): ապա նրան հետամուտ  
յեղավ հունաց (բերձենների) թագավորը... [Յեզ] վերադարձավ  
Վասիլը Թոնեղքով (Թրիալեթով), շրջեց Չավախքն (Չավախեթն)  
ու Արտանանը (Արտանը) ձմռան պահին, ... ապա դնաց և ձմեռեց  
Սաղայայ (Սալաղա) յերկրի Տրապիզոն քաղաքում: ...

Ապա Վասիլը կրկին վերադարձավ՝ գալով Բասեն (Բասիան),  
պահանջելով Գեորգ թագավորից [զիջել] նրան բերդերն ու դա-  
վառները և խոստանալով [փոխարեն] նաշտուխյուն և խաղաղու-  
թյուն: ...

...Արանից հետո (հունաց Կոստանդին թագավորի մահվան  
և Թոմանոսի զահակալության) չերրորդ թվին յերանելի Մարիամ  
թագուհին՝ Բագրատ թագավորի մայրը, վորը կորովամիտ և  
քաջարի յիր իբրև պայծառապեղ, հզոր և մեծ Արշակ[ուն]յաց  
թագավորների շառավիղ<sup>5</sup>, դնաց Կոստանդնուպոլիս Թոմանոս  
թագավորի մոտ, ինդրելու՝ խաղաղություն մտցնի արևելքում,  
վորպեսպի պատերազմ չլինի այլևս հունաց (բերձենների) և վրաց  
(քարթվեղների) միջև<sup>6</sup>...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մատավորագես 572—598 թ. թ.:

2. Փիլիսոփայության մասին հատկապես տես. А. Захаров, Филистимляне (Глава из истории Эгейского мира),—«Сообщения Российского Палестинского О-ва», т. XXIX, 1925, стр. 71—110. Н. Марр, Филистимляне, палестинские пеласги и расены или этрусски (Из мира лошадей от Пиренеев до Малой Азии, до Руси),—«Еврейская мысль», т. I, Лтвр. 1925, стр. 1—31:

3 Այսինքն 228+780 1008:

4. Ուլթյաց քաղաքի տուման և Սաղայայ յերկրով Վասիլի Կոստանդնու-  
պոլիս վերագառնալու մասին խոսվում է ի միջի այլոց, և նա պատմիչների՝  
Առաքիկի (Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Գատմութիւն արեգերական, ՍՊԲ.  
1885, էջ 278) և Արիստակես Լաստիվերսեցի (Գատմութիւն Արիստակեսայ վար-  
դապետի Լաստիվերսեոյ [Ղուկասեան Մատենադարան 6], Թ. 1912, էջ 5, 7, 12.  
16) յերկասիրությանց մեջ:

5. Վրաց պատմիչը, ոմնկասկած, սխալվում է՝ համարելով Բագրատի մայր  
Մարիամ թագուհուն Արշակունյաց սերնդից, մինչդեռ հայտնի չէ, ինչպե՞ս իր  
ժամանակին գեռ էլի Մ. Brosset (Histoire de la Géorgie, I, p. 314, n. 1) և  
ապա Ե. Քաղտյշվիլիս (Источники грузинских летописей, стр. 182 прим. 1)  
նշեցին, զոր նա Արժրուկյաց Սենեքերիմ թագավորի դուստրն կր: Այս Մարիամը՝

իբրև «Ափսազայ և Հայոց թագուհի, դուստր մեծին Սենեքերիմա եւ Թոնն  
Գաղկա Հայոց արքայի» հիշված և Մարմաշենի 1033 թ. մի արձանագրության  
մեջ (Н. Орбели, Надписи Маршанена. Пгр. 1914, стр. 3), և ըստ Կ. Կեկե-  
լիսի հեռագրության (Ցերկու Յեփիմիոս վրաց հին գրականության մեջ, վրա-  
ցերեն,—էջ 112—113 և ծանոթ. 1 էջ 113), կենդանի չէ յեղել 1065 թվին:

6. Վրաց Բագրատունյաց և նրանց ծննդաբանության մասին առհասարակ  
տես. М. Brosset, Histoire des Bagratides géorgiens d'après les auteurs armé-  
niens et grecs, jusqu'au commencement du XI s., SPB 1843—60, 366, Addi-  
tions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, SPB 1851, p. p. 188—  
188 (Add. IX. Histoire des Bagratides géorgiens etc.). Ղ. Ալիշան, Շիրակ, Վե-  
նետիկ 1881 (Ազգատուն Բագրատունեաց). А. Грек. Династия Багратидов в  
Армении,—«Журнал Министерства Народного просвещения» 1893 г.,  
ноябрь, стр. 52—139. А. Daghbaschian, Gründung des Bagratidenreiches durch  
Aschot Bagratuni, Berlin 1893. Y. Marquart, Osteuropäische und Ostasiatische  
Streifzüge, Leipzig 1903, S. S. 391—465. Ասլոը հայերեն՝ Բագրատունեաց ծա-  
ղուճը. Ա. Հայ Բագրատունեաց հիւղագրութիւնը. Բ. Վրական Բագրատունեաց  
ծագումը. [«Ազգային Մատենադարան» ՀԳ], Վիեննա 1915. Իվ. Ջավախիշվիլի.  
Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, գ. II, Տփղիս 1914, հավելված  
(Բագրատունյաց ծննդաբանական ճյուղը Դավթի վորդի Սմբատ պատմչի ավյալ-  
ների համաձայն). Քամար Լաճուրի, Դավթի վորդի Սմբատի և Գեորգ Մերչուփ  
տեղեկությունները IX—X դարերի վրացի Բագրատունիների մասին, վրացե-  
րեն,—«Arili», Տփղիս 1925, էջ 47—56: J. Markwart, Die Genealogie der Bag-  
ratiden und das Zeitalter des Mar-Abas und Ps. Moses Xorenathsi, „Cau-  
casica“, Fasc 6. Teil 2 (Leipzig 1930):

ԼԵՈՆՏԻՈՍ ՌՈՒԻՍԵՑԻ (ԼԵՈՆՏԻ ՄՐՈՎԵԼԻ) (X I Դ.)

„ՎՐԱՅ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՆԱԽԱՅԱՅՐԵՐԻ ՌԻՏՈՂՍԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ“

ՀԱՎԵԼՎԱՆՈՒՄ

«Արշիլ թագավորի վկայագրությունը»

Քարթլիս-ցխորերայի Մարիամ թագուհու վարխանար (ինչպես և բոլոր այլ վարխանաները) սկսվում է մի ընդարձակ յերկասիրությամբ, վորը կրում է (միմիայն Մարիամ թագուհու վարխանաում) հետևյալ վերնագիրը. «Վրաց թագավորների և նախահայրերի (նահապետների) ու տոհմերի պատմությունը»: Այդ յերկասիրությունը գրաված ունի և. Թագալյովլյու հրատարակության մեջ 1—116 էջերը, իսկ Մ. Brosset-ի (նույնը և Ն. Մանի)՝ 15—107 էջերը, վորին համապատասխանում են նույն Մ. Brosset-ի ֆրանսերեն թարգմանության 15—114 էջերը և «Համառոտ պատմութիւն Վրաց»-ի 7—72: Նույն վարխանաում՝ այնտեղ, ուր վերջանում է Ջուախեբ Ջուախեբյուցի «Վախտանգ Գորգասալի պատմությունը» և նախ քան «Արշիլ թագավորի վկայարանությունը»՝ կցված է հետևյալ հիշատակարանը. «Արշիլի վկայությունն ու թագավորների պատմությունը և Վրաց (Քարթլի) դարձը [ի քրիստոնեյությունն] Նուսեյի (Նինոյի) [ձեռք] գրեցի Լեոնտիոս Ռուխեցի (Լեոնտի Մրովելին)»: Այս հիշատակարանը միանգամայն գուղաղիպում է՝ «Աննա թագուհու վարխանաումն ու հայանի և պրոֆ. Իվ. Ջավախիեվիլուն պատկանող՝ հնագույն գրչագրի հիշատակարանին (Իվ. Ջավախիեվիլի. Նորագյուտ Քարթլիս-ցխորերան և Թամար թագուհու յերկրորդ՝ ցարդ անհայտ՝ պատմչի յերկասիրությունը, — «Bulletin de l'Université de Tiflis», III, 1923, վրացերեն, էջ 197), նույնպես և Թեյնուրադ արքայագնի վարխանաի հիշատակարանին, վորոնցից վերջինն

ավերացնում և. «Իսկ այժմ գրեցի յես՝ Հովհան ավագրեցի» (Ք. Յ., Ե. Թագ՝. հրատ., էջ 211 և ծանոթ. 11 ibid.):

Թե վոր դարու հեղինակ է Լեոնտիոս Ռուխեցին (Լեոնտի Մրովելին), գրա մասին հավաստի տեղեկություններ չկան: Միմիայն հայանի յե, վոր նա հիշատակված է Աթոնի Իվերոն կոչված մայրավանքի վրացերեն մի ձեռագրում (№ 61) իբրև «Լեոնտիոս (Լեոնտի)՝ արքեպիսկոպոս Ռուխի» (H. Margg. Агиографические материалы по грузинским рукописям Ивера. ч. I.—«Записки Вост. Отд. Рус. Арх. О-ва», т. XIII. 1900, стр. 84): Մյուս կողմից, Իվ. Ջավախիեվիլին նկատած ունի (Հին վրացական պատմական գրականությունը, ր. տպ., 170), վոր Լեոնտիոսի յերկասիրության մեջ խոսվում է Անդրեաս և Միմոն Կանանացի տաքյալների քարոզչության մասին Վրաստանում, վորն իբրև նորամուծություն միմիայն XI դարուցն է ծանուցում վրաց գրականության մեջ: Վերջուպես, նույն Լեոնտիոսը քանիցս հիշատակված է՝ իբրև դեռ ելի կենդանի և վոչ մեռած՝ Պարիզի Ազգային Մատենադարանի վրացերեն ձեռագրաց հավաքածուի № 9-ի մեջ, վորը XI դարուին է գրված (E. Takaičvili, Les manuscrits Géorgiens de la Bibliothèque Nationale de Paris et les vingt alphabets secrets Géorgies Paris 1933, վրացերեն, p. 42 et n. \*):

Ըստ այսմ, ուրեմն, Լեոնտիոս Ռուխեցին XI դարու հեղինակ պիտի համարվի:

Առանձնապես հետաքրքիր է Լեոնտիոսի յերկասիրության հայկական աղբյուրների հարցը, վորը վորոշ պատմություն ունի:

Գիտական շրջաններում վաղուց արվին այն կարծիքն էր հաստատվել, վոր Քարթլիս-ցխորերայի սկզբնական մասը, տակ և Լեոնտիոս Ռուխեցի յերկասիրությունը, ի միջի այլոց, հայ պատմիչների ազգեցության գրոջին և կրում: Նույն Ք. Յ.-ի մի գրչագրում, վորը XIX դարու սկզբներին է ընդորինակված և հայանի յե Վրաց մեջ գրագիտություն տարածող նախկին ընկերության հավաքածուի № 3665-ի ներքո, պրոֆ. Դ. Չուրխեովի ձեռքով լուսանցքներում մի քանի տեղ ծանոթություն և կցված Մովսես Խուրեմուցվա անվան հիշատակությամբ, վորը վրաց տարեգրության նախաաղբյուրներից մեկն է ճանաչված (տես ձեռագրի էջ 5 a, 18, հմմ. նաև E. Takaičvili, Описание рукописей «Общества распространения грамотности среди грузинского населения». т. II, стр. 8): Նույնը հարկանցիորեն ակնարկած ունի և Մ. Brosset-ն (Histoire de la Géorgie, I, p. 16, n. 1, et pass.): Իսկ

Փ. Բախրաննի (Об источниках и характере первоначальных преданий «Картлис-Цховреба» или Грузинских летописей, — «Известия Кавказского О-ва Историчи и Археологии», т. I, в. 1, Тифл. 1882, стр. 36—37) ջանում եր ապացուցել, Վոր Բ. Ց.-ի սկզբնական մասը, անշուշտ շփման կետեր ունի Մար ~ Արաթ, Մովսես Խորենացվո և Ագաթանգեղոսի պատմութեանց հետ:

1908—1910 թ. թ. լույս ընծայած իր «Գրութեաններ Վրաստանի պատմութեանից» վրացերեն աշխատութեան II մասի մեջ (եջ 21—23) Ս. Գաբաձենի աշխատում եր ապացուցել, Վոր Բ. Ց.-ի սկզբնական մասի հեղինակը, անպայման, հայկական աղբյուրների և մասնավորապես Մ. Խորենացվո աղբյուրութեան տակ և յեղել գտնվելիս: Ապա 1915 թ. լույս ընծայած մեր ուսումնասիրութեան մեջ՝ Грузинская версия Агафангелия и ее значение для грузинской историографии («Христ. Восток», т. V, стр. 155—170)՝ մենք միտք հայտնեցինք, Վոր Բ. Ց.-ի նույն մասի հեղինակը ձեռքի տակ և ունեցել վնչ թե Մ. Խորենացվո, այլ Ագաթանգեղոսի պատմութեանը, այն ևլ վնչ թե սկզբնական կամ VIII դարու խմբագրութեամբ, այլ Սիմեոն Լոպոթեանոսի ձեռքով միաստորապես վերածածը, հավանորեն X դարու հունարեն բնագիրը և վնչ թե վերջինիս՝ 1081 թվի վրացերեն թարգմանութեանը, Վորը մենք հրատարակեցինք 1920 թվին: 1916 և 1921 թ. թ. հրատարակած իր «Հին վրացական պատմական գրականութեան» աշխատութեան մեջ Լվ. Զախարեվիչի մեղանից միանգամայն անկախ այն կարծիքն ունի հայտնած, Վոր Լեոնտիոսը հայկական աղբյուրներից ձեռքի տակ և ունեցել Գրիգոր Լուսավորչի վկայարանութեանը, Վորին նա յերբեմն «Հայոց պատմութեան» և յերբեմն «Հայոց դարձի պատմութեան» և կոչում (ա. հրատ., 125, ր. հրատ., 184—185): Ապա Կուրի. Կեկելիձենի իր հասուկ ուսումնասիրութեան մեջ «Լեոնտիոս Թուխեցվո (Լեոնտի Մրովելու) գրական աղբյուրները» («Bulletin de l'Université de Tiflis», III, 1923, վրացերեն եջ 4—14)՝ արծարծելով այն զրույթն, Վոր Լեոնտիոսն իր յերկասիրութեանը գրելիս ձեռքի տակ և ունեցել 4 տեսակի աղբյուրներ՝ հայերեն, պարսկերեն, հունարեն և վրացերեն, յենթադրում և, Վոր հայկական աղբյուրներից նրան նյութ պիտի ծառայեյին «Հայոց դարձի» կամ Ագաթանգեղոսի պատմութեանը, Հռիփսիմյանց վկայարանութեանն և «Հայոց պատմութեան» կամ Մովսես Խորենացվո անվամբ հայտնի պատմութեանը: Նույնը Կ. Կեկելիձենի կրկնում և և իր «Վրաց գրականութեան պատմութեան»

I հատորի մեջ (1923, եջ 245—246), միայն այն տարբերութեամբ, Վոր Հռիփսիմյանց վկայարանութեանն այլևս չի հիշատակում:

Ընդամեն, առանձին պիտի հիշատակել Ս. Կոկարանի անունը, Վորը 1912 թ. հրատարակած իր բրոշյուրի մեջ () древне-грузинских летописцах XI столетия (стр. 23, 26—27) համարում եր Լեոնտիոսին XI դարու պատմիչ. մինչև 1924 թվից սկսած հետզհետե փոխեց իր կարծիքը՝ դասելով նույն Լեոնտիոսին X դարու սկզբների (900—920) գրողների շարքը (տես Պատմական պրպատումներ, 1924, եջ 191. Պատմական ժողովածու, II, 1928, եջ 68): Միաժամանակ նա կարծում և, Վոր «Խաղավորաց պատմութեան»՝ Մովսես Խորենացվո հետ ունեցած առնչութեան հարցը պիտի հանվի (Պատմական պրպատումներ, 150). «Վոր թաղավորաց պատմութեան հեղինակը հայկական գրական աղբյուրների վրա չեք հենվում և այդպիսիներն ոգտագործելուց խուսափում եր, — ասում և Ս. Կոկարանն (ibid.), — սա պարզ յերևում և այն հանգամանքից, Վոր պատմիչն ոգտվում և, ինչպես գրականութեան մեջ արդեն հայտնի յե (ակնարկում և մեր վերոհիշյալ հոդվածը, եջ 162), և Ագաթանգեղոսով, սակայն վնչ թե նրա հայկական վերսիայով, այլ հունարենով»:

### [ԹՈՐԳՈՍՅԱՆՔ]

Նախ և առաջ հիշատակենք այսպես, Վոր հայոց (սոսեթներին) և վրաց (քարթվելներին)\*, ասանց և մովսեղանաց, հերաց և լեզգիներին (լեկաց), յեգերաց (մեդրելներին) և կովկասյաց՝ սոցա բոլորի հայրը մր եր Թորգոմ (Թորգոմոս) կոչեցյալը: Այս Թորգոմը (Թարգոմոս)՝ եր Վորգի Թարգլի, Վորգվո [Յ]ավանա, Վորգվո Յարեթի, Վորգվո Նոյի:

Յեկ այս Թորգոմը (Թարգոմոս) բազ մարդ եր: Յեկ լեզուների բաժանումից հետո, յերբ Ներսիսը Բաբելոնում աղտարակ շինեց և լեզուները բաժանվեցին՝ ի սիյուսս ամբողջ աղ-

Յիշատակ արտացույց այսմ՝ Վր հայոց և Վրաց և Ռանայ և Մովկանաց և Հեթանայ և Լեկաց և Կովկասաց և Եգերաց հայր՝ մր էր սոցա, Թորգոմ կոչեցալ, որդի Թլրտայ, որդույ Գամերայ, որդույ Յարեթի, որդույ Նոյի:

և և էր նա այր բազ և հակայ ի յայսմ կործանման աղտարակին և բաժանման յեզուացն, և ի սիյուս մարդկան ի վերայ երկրի, և կն բնակեցաւ ի մեջ լեռանց Մասեաց և Արագածու:

\* Վագ. հայոց և վրաց] վրաց և հայոց. Так., Опяс. II, 11:

խարհի, այս Թորգոմը (Թարգամոսը) իր ամբողջ ժողովրդով յեկավ և բնակութեան հաստատանց յերկու լեռներն՝ Արարատի և Մասիսի՝ միջև, վորոնք անմատչելի յեն մարդկանց համար\*:

Յեղ նրա ժողովուրդը մեծ եր և անհամար, քանի վոր եյին բազում կանայք, ուսաներք և դասերք, վորդիք և թոռներ ուստերաց և դասերաց նորա, [և] քանի վոր նա (Թորգոմն) ապրեց վեցհարյուր տարի:

Յեղ այս՝ Արարատի և Մասիսի՝ յերկիրը, վոր վիճակվել եր նրանց, այլևս չեր կարողանում նրանց տեղավորել: [Յեղ] նրա (Թորգոմի) յերկրի սահմաններն այս են. արևելքից՝ ծովն Գուրգանի\*\* արևմուտքից՝ ծովն Պոնտոսի\*\*\*, հարավից՝ լյառն Որեթի\*\*\*\*, և հյուսիսից՝ լյառն Կովկասու (Կովկասիս):

Բայց Թորգոմի (Թարգամոսի) որդւոց մեջ ութը հայտնի դարձան [երբև] բաջարի և անվանի հսկաներ, վորոնց անուններն են. առաջինն կոչվում եր Հայկ (Հասու), յերկրորդը՝ Քարթլոս\*\*\*\*, յերրորդը՝ Բարդուս, չորրորդը՝ Մովսէս, յինգերորդը՝ Լեկոս, վեցերորդը՝ Հերոս, յութերորդը՝ Կավկաս, ութերորդը՝ Եգրոս [Յեղ] այս ութ [յեղբայրները] հրականեր եյին:

Բայց Հայկը (Հասուը) ամենքից հսկան եր, վորովհեան նրա նման վոչոք չի յեղել յերկրք վոչ ջրհեղեղից առաջ [և] վոչ էլ հետո՝ հասակով (բոյով), ուժով և արիութեամբ:

Բայց Արարատի և Մասիսի՝ յերկիրն այլևս չեր կարողանում [նրանց] տեղավորել:

\* Var. յերկու լեռներն՝ Արարատի և Մասիսի միջև, վորոնք անմատչելի յեն մարդկանց համար [և մեջ Կովկաս (Կավկասիս), Արարատ և Մասիս լեռների, վոր ամուր է[ն] և անմատչելի մարդկանց համար: Так., Опис. II, 11:

\*\* Var. + վոր այժմ կոչվում է Գիլանիս  
\*\*\* Var. + վոր այժմ կոչվում է Սև ծով:  
\*\*\*\* Var. + վոր քյուրդերի յերկրումն է:  
\*\*\*\*\* Var. 1. Հասու. 2. Քարթլոս] 1. Քարթլոս. 2. Հասու. Так., Опис. II, 11—12:

Որոյ էին բազում կանայք. և ծնան նմա ուստերք և դասերք որդւոց և դասերաց նորա. և եկաց ամա վեցհարիւր տարի:

և և չբաւէր երկիրն բազմութեան տիւն նորա. վասն որոյ տարածեցան և բնակարձակեցին գահմանս լեռեանց ի ծովէն Պոնտոսու մինչև ի ծովն Հերթիայ և Կասպից, և առ լեռամբն Կովկասու:

և և բնակեցան յորդւոց նորա արք ութ արիադոյնք և անուանիք. առաջինն Հայկն, երկրորդն Քարթլոս, երրորդն Բարդուս, չորրորդն Մովկան, հինգերորդն Լեկան, վեցերորդն Հերոս, եօթներորդն Կովկաս, ութերորդն Եգրէս:

և և Հայկն առաւել էր ուժով և քաջութեամբ, որ չեղև նման նմա ի վերայ երկրի, ոչ յառաջ քան զջրհեղեղն և ոչ յետոյ՝ մինչև ցայսօր ժամանակի:

Թորգոմը (Թարգամոսը) բաժանեց իր յերկիրն ու ժողովուրդն այս ութն հսկաների միջև. իր ժողովրդը կեան և իր յերկրի լավագույն մասը (կեսը) ավեց Հայկին (Հասուին). իսկ մյուս յութին ավեց նրանց հասնելիքն ըստ յերկրութեան\*...:

Բայց Հայկը (Հասուը) ժառանգեց իր հորը՝ Թորգոմին (Թարգամոսին) պատկանյալ յերկիրը, և տիրեց [սահմանակից] յերկիրն իրն. հյուսիսից՝ ինչպես մասնանշել ենք, հարավից՝ Որեթ (Siv) լեռամբ, արևելքից՝ մինչև ծովն Գուրգանի, արևմուտքից՝ մինչև ծովն Պոնտոսի: Յեղ այս յսին հսկաների կատարելին ու իշխանն եր Հայկը (Հասուը), և այսպես բոլորը հպատակ եյին Հայկին (Հասուին), և բոլորը մի լեզու ունեցին՝ հայերենը (սամիտերենը): Իսկ ութներջան միտսին եյին ի ծառայութեան ներքոյ հսկայի, վորն առաջին արքան եր ամբողջ աշխարհում\*\*:

Մրանից հետո մի քանի տարի անց Հայկը (Հասուը) դիմեց նույն յոթն հսկաներին, ժողովեց նրանց և ասաց. «Բարձրրյալ ստավածը տվեց մեզ ուժ և բազմութեան մեր ժողովրդի. այժմ ոգնականութեամբ տրտրելչ աստուծո չլինենք այլևս վոչորի ստրուկ և վոչորի չճառայենք, բայց արտրելչ աստուծուց: Յոթն հսկաները՝ հավատարմ սրան՝ հաստատեցին նրա (Հայկի) մատարութեանը,

Սոցա բաժանեաց Թորգոմ գաշխարհն իւր. ետ զկէսն Հայկին. և զկէսն եւթանց որդւոցն՝ ըստ արժեպոց նոցա...:

Իսկ Հայկն զհաստարակն ժառանգեաց հայրենիս՝ սասցեայ սահմանօքն. և էր իշխան եւթանցն եղբարց, և կային ի ծառայութեան ներքոյ թեայ հսկայի, որ նստի թագաւորեաց ամենայն երկրի:

Իսկ զինի սուղ ամաց անցելոյ՝ ի մի հաւաքեաց Հայկն զեղբարս իւր և ասաց նոցա. Լուարուք ինձ, հարազատելի՛մ. անաւանիկ ետ մեզ Աստուած զօրութիւն և ժողովուրդ բազում. և արդ՝ վասն ողորմութեանն որ ի վերայ մեր՝ մի ծառայեացուք օտարի, այլ Աստուծոյ ճշմարտիւ և և հաւանեցան ամենեկան, անցատաքեալ՝ շտուռն զհարին, արկեալ յինքեանս զջրհեղեղ ապգան: և լուեալ

\* Var. Թորգոմը (Թարգամոսը) բաժանեց... ըստ յերկրութեան [Թորգոմը (Թարգամոսը) բաժին հանեց իր վորդվոց [հետեայ] տեղերն ու սահմանները. Քարթլոսին տվեց իշխանութեան Կասպից ծովից մինչև ծովն Պոնտոսի և դարձրեց նրան իշխան բոլոր յեղբայրների, և այս յեղբայրներին էլ յարարանչաբին բաժին հանեց հետեայ տեղերը... իսկ Հայկին (Հասուին) հաստատեց այնտեղ, ուր ինքը Թորգոմն (Թարգամոսն) եր ապրում, Արարատ լեռան մոտ, և ավեց նրան Մասիս սարից, վոր այժմ Արագաց և կոչվում, մինչև Մարաց սահմանները... Так., Опис. II, 12:

\*\* Var. Յեղ այս յսին հսկաների... ամբողջ աշխարհում՝ Քարթլոսը տիրում եր իր մյուս յեղբայրների վրա, իսկ Հայկը (Հասուը) իր բաժնում. և բոլորը մեծ սիրով եյին կապված իրար հետ. և հպատակ եր Հայկը (Հասուը) իր ժողովրդով Ապրեստանի արքա ներքոյին: Так., Опис. II, 13:

և ուրացան ներքոթին՝ հարկ չապով նրան այլևս: Մրանց հետ մի քանի այլ ժողովրդներ ել համամիտ յեղան, իսկ մյուսները յերկախրտ դարձան: Ապա բարկացավ ներքոթը, ժողովեց իր հսկաներին, և բոլոր հավատարիմ զորավարներին, և դուրս յեկավ ընդդեմ Քորզոմյաններին (Քարզամոսյաններին): Իսկ Հայկը (Հատուր) զիմեց յոթնեքյան հսկաներին, և Քորզոմի (Քարզամոսի) ժողովրդին, և նրան ոգնությունն ցույց տվին արևմտյան այլ և այլ ժողովրդներն ևս: Մրանց բոլորին ժողովեց Հայկը (Հատուր) և կանգնեց Մասխի ստորտուն: Յեվ յերբ մտակցավ ներքոթը Ատրպատական (Ադրբայջան) աշխարհին և կանգնեց այնտեղ, վաթսուն հսկա և՛ նրանց հետ՝ հզոր զորավարներ ուղարկեց Քորզոմյաններին (Քարզամոսյաններին) կարդի կանչելու: Համար Հենց վոր ներքոթի զորավարները մտակցան, Հայկի (Հատուր) յոթն հսկաները մեծ զորքով զիմավորեցին [նրանց], իսկ Հայկը (Հատուր) հզորագույն զորքով կանգնեց յետևից՝ թիկունքում: Նրանց միջև տեղի ունեցավ սաստիկ պայքար, վոր նմանվում եր ոչի սաստիկությանը, քանի վոր նրանց վտանքի փոշին նման եր կուտակված ամպերին, նրանց զրանի փայլատակումը՝ յերկնքի կայծին, նրանց բերանի ձայնը՝ վորուման ձայնին, նրանց նետերի բազմությունն ու քարերի ձգումը՝ խիտ կարկուտին, և նրանց արյունահոսությունը՝ կարկուտի առուն: Շարունակից պայքարը նրանց միջև, և յերկու կողմից ել յեղան անթիվ կատարվածներ:

Իսկ Հայկը (Հատուր) նույն հսկաների յետևիցն եր կանգնած, քաջալերում եր նրանց և մխիթարում ահաբկու ձայնով, վոր կայծակի ձայնյունին եր նման: Ապա Քորզոմյանք (Քարզամոսյանք) հաղթահարեցին և կոտորեցին ներքոթյան հսկաներին և նրանց զորավարներին: Իսկ Քորզոմյան (Քարզամոսյան)

ներքոթայ՝ բարկացաւ, և արար ամբոխ բազում հսկայից և խառնադանջից, և դիմեաց ի վերայ նոցա, և եկն յԱտրպատական յաշխարհնս: Եւ Հայկն կայր իւրայովքն առ սան Մտակց. և առաքեաց ներքոթ վաթսուն հսկայ՝ յոյրովից բազմութեամբ. և խառնեալք ի միմեանս՝ ահաբէին և սաստիկ բախմամբ իբրև զձայն որտամամբ ամբոց. և եղին կոտորուած յերկողունց կողմանցն անթիւ և անհամար:

Եւ Հայկն կայր յետուտ կողմանէ իւրոցն, և սրտապնդեալ քաջալերէր և ինքն իբրև զկայծակն սաստակէր շուրջանակի, և ընկնուոր զհսկայան վաթսուն՝ զօրօքն իւրեանց մինչև իսպառ. և թաներին հարագատվքն ողջ մնացեալ ճորհօքն Աստուծոյ, և փառք տալին փրկողին իւրեանց ամենակալին Եւ

յոթն հսկաները՝ Քարթլուս, Բարզոս, Մոսխուս, Հերոս, Լեկան, Կովկաս (Կովկասան ?) [և] եզրոս՝ կենդանի մնալով և չվերափոքվելով, զորավիպ եյին և փառաբանում ասածուն: Հենց վոր ներքոթն այս լսեց, բարկացավ և արշավեց նրանց դեմ իր ումրողը ուժով: Իսկ Հայկը (Հատուր) ներքոթի չափ զորք չուներ. նա ամրացավ Մասխի դերբուկներում: Ներքոթը ցածիլը մտակցավ, և եր նա վտարեց մինչև դուրս զինված յերկախով և պղնձով: Նա յեկավ մի սարի վրա խոսեղու Հայկի (Հատուր) հետ և պահանջեց նրանից հնազանդություն, վորպեսզի իր կամքով դա նրա մտա: Իսկ Հայկը (Հատուր) զիմեց հսկաներին \* և Ամբացբեք թիկունքս, վոր յես գնամ ընդդեմ ներքոթի: Յեվ նա դնաց և դեմ առ գեմ մտակցավ ներքոթին, ձգեց նետը, վորն՝ անցնելով պղնձե թախտակով՝ սուցեց կուրծքը և դուրս յեկավ քամակից: Ապա ներքոթն ընկավ, և նրա բանակը փախուստի դիմեց: Յեվ Հայկն (Հատուր) իրեն արքա հայտարարեց իր յեղբայրների և սահմանակից այլ ժողովրդներին վրա: Իսկ յոթնեքյան յեղբայրները դնացին յուրաքանչյուրն զեպի իր յերկիրը, և նրանք Հայկի (Հատուր) հպատակ եյին \*\*...»

լուեալ ներքոթ խոսիցաւ յոյժ, և զիմեաց ինքնին ի վերայ, Հայկին: Իսկ նա ոչ ունեկով զօրս իբրև զնորոյն, ամբանայր ի դերբուկս ձորոցն Մասխաց: Իսկ ներքոթայ սպառազինեալ կուտ վառեալ յերկախոյ յասիցն մինչև զգաղաթն՝ ելանէր յստ մի բլրոյ, կոչէր զՀայկն յառաջին հնազանդութիւնն: Իսկ Հայկն ոչ ետ պատասխանի նմա, այլ սուկ ցեղբարսն իւր. Ամրացուցէր զիս յետուտ կողմանէ, և իջանեմ ևս առ ներքոթի: Եւ ինքն երթայր մերձենայր առ նա, և նետիւ հարկանէր ի վերայ տախտակաց սրաին, և շէտակի անցուցանէր թափ ի յոյսոնցոյցո արեգակնայայտս, և զըջեալ թաժամայն փչէր գունչն, և անկեալ բոլոր բանակն իւր, և առնն Քորզոմայ յանոգս եղեալ հանգչէին. և թագաւորէր Հայկն եղբայր իւրոց, և ամենայն եզրակոնացոյն ազգաց:

[ԱՅՆ ՅԵՎ ԱՅՆ ԴԵՊՔԵՐ „ԽԱՉՐԱՑ“ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՆՐՁԱՆԻՑ]

... [Յեվ] ուժեղացան խոզարներն և Յայնժ ժամանակի զորացիալ ազգն սկսեցին կովկ յեզգիներին (լեկերի) և Խազրաց կուռէին ընդ աղբին Լեկաց կովկասոյանների (կովկասիոսների) հետ և Կովկասու: որք անկեալ ի կարխ՝

\* Var. Իր յեղբայրներին:  
 \*\* Var. Յեվ Հայկն (Հատուր) իրեն թագաւոր հայտարարեց... և նրանք Հայկի (Հատուր) հպատակ եյին] Ապա Հայկը (Հատուր) մեծ շուրախությունն առաջ բերեց և տիրեց իր զըջեալայքին և իր մասում յեզավ թագաւորս Իսկ նրա մյուս յեղբայրները դանվում եյին Քարթլոսի իշխանության ներքո. և Քարթլոսն ու Հայկը (Հատուր) և նրանց յեղբայրներն իրենց ամբողջ կյանքի բնթացքում փոխադարձաբար սեր եյին տաժում իրար և ոգնում ամեն տեսակ կարիքները ժամանակը Իսկ Քարթլոսն ամենբնից ավագագույնն եր և զլիաւորը, և այսպես բոլորը պատվում եյին նրան իբրև իրենց տիրոջ: Така, Оупе. II, 16:



Այս պահին թորգոմյանները (Քարգամայանները) բոլորը խաղաղ էին և սիրով առ միմյանու իսկ Կովկասի վարդապետը անընդհատ եր Տիրիխի վարդի Գուրգուհը նրանք (չեզդիններն ու կովկասյանները) այս մասին հաղորդեցին թորգոմյան(Քարգամայան)վեց ժողովուրդներին ե՛ր՝ սքանաթյուն խնդրելով խաղաղների գեմե իսկ թորգոմյան (Քարգամայան) բոլոր ժողովուրդները ժողովեցան և՛ անցնելով լյաոն Կովկասի (Կովկասիա)՝ դերեցին ամբողջ յերկիրն խաղաղ և քաղաքներ շինեցին խաղաղ սահմաններում, ապա վերադարձան:

Մրանից հետո խաղաքներն ունեցան թագավոր, և բոլոր խաղաքները հպատակվեցին իրենց այդ անվանի թագավորին: Յեվ առաքելին նրան և դուրս բերին դրամը ծավալ, վոր այժմ կոչվում է Դարսուբանդ: Թորգոմյանները (Քարգամայանները) չկարողացան զիմազբել, քանի վոր խաղաղներն անթիվ բազմություն էլին կազմում: Գերեցին թորգոմյանները (Քարգամայանները) յերկիրներն ու ավերեցին քաղաքներն Արարատի և Մասիսի... և բոլոր թորգոմյանները (Քարգամայանները) խաղաղները հարկատու դարձան: [Յեվ] խաղաղների թագավորն... շնորհեց իր վորդուն Հայրի (Սամխիթի) ու Քարթլիի գերի[ները]: ..

[Քեկապոս պարսից թագավորի որսք] հարմար առիթ դտան հայերն (սոմեխներն) ու վրացիներն և՛ անջատվելով պարսիկներին՝ ամբարջին իրենց բերդերն ու քաղաքները, և միացան թորգոմյան (Քարգամայան) բոլոր ժողովուրդները:

Մրանից հետո մի քանի տարի անց Քեկապոս պարսից թագավորն ուղարկեց Փարջուրտ\* կոչյալ իր վարդուն՝

\* Var. Փարբորտո. Քաղ., 11. սոսջացած պիտի լինի յեկեղեղտիան վրացիներում Էջ և Էբ-ի զփոթությունից, վորնք շատ են նման իրար: \*\* Նույնը:

խնդիր սրարին և սուսն թորգամայ վեց ուղարկ, որք և ինքութեան և ի խաղաղութեան կային յառարան յայնսովի, պալ օգնել նոցա: Որք և չոպան իսկ յօժարութեամբ և կազմ պատրաստութեամբ, և տնցին ընդ յառն Կովկասու, և գերեցին գերիկին Պաղրայ և ձեռն Գուրգուհին, սրբայն Տիրիխիայ՝ սրկոչեաց գնոսս յօղնականութիւն:

Ջինի այտորիկ պարձեալ ժողովեցան Պաղրբք, և եղին լուրևանց թագաւոր, և եղին բանակ մեծ, և էլին ընդ Գուրգուհին Դարարատու և Մասիայ, և կատորեցին և գերեցին գնոսսա, զի էին անբաւք... և սրարին [զՔորգոմեանսն] ընդ հարկաւ: և և զաւաջին գերեւալան ի Հայոց և ի Վրաց՝ կտ թագաւորն Պաղրայ որբայ իւրոյ...

... մխարանեալ ընդ Հայոց՝ ամենայն ազգին թորգոմայ, ի մայ կացին ի Պարսից, ամբարայուցեալ զքաղաքս և զգղեակս:

և և զարեալ Քեկապոս՝ առաքեաց ի վերայ թորգոմայ զգորադուլին իւր զՓուրայրտ\*\* զօրօք բազմօք, և գնացեալ

և և զարեալ Քեկապոս՝ առաքեաց ի վերայ թորգոմայ զգորադուլին իւր զՓուրայրտ\*\* զօրօք բազմօք, և գնացեալ

ընդ մեծ զորքով, ընդգիւմ հայոց (սոմեխների) և վրաց և բոլոր թորգոմյանները (Քարգամայանները): Իսկ թորգոմյանները (Քարգամայանները) բոլորը ժողովեցան և զիմեցին Ատրպատական (Ադրբայջան). հաղթահարեցին Փարջուրտին, վորը փախուստի զիմեց, իսկ նրա զորքը վոչնչացրին:

Սողոմէ կին իւր, սրբ կային յՈւջարմա,  
եկին տեսանել դնա (զնունէ)... Ապա  
եկն առ նա... և Պելուժավր Սիւնեցին,

... Եւ սաէ ցնոսա սուբբն. Զք՝ կամիք  
տեղեկանալ յաղագս տառապեալ աղախ-  
նոյս Քրիստոսի, որ այսուհետե կոչէ զիս  
առ ինքն, և ի մայրն իմ յաւիտենից. և  
պատմեալ է իմ յականջս Սողոմեայ,  
գասերդ արքային Հայոց, համառոտ  
զօրինակ դալոյն իմ այսր...

... Եւ յաւորսն յայնոսիկ մեռաւ  
Րէվ որդի նորա (Միհրանի), կեցեալ  
ամս կրեսուն և չորսու...

### [ Ս Ա Ս Ա Ն Յ Ա Ն Ք ]

(ՇԱՐՈՆԱԿԱՆՔՈՒՆ)

Յեկ [Թագավոր] նստեց նրա (Միհ-  
րանի) վորդի Բաքարը... [Յեկ նրա որոք]  
թշնամությունն ծագեց նրա (Բաքարի)  
ու հայերի միջև, քանի վոր հայերն աշխա-  
տում էին թագավորեցնել Քարթլիում  
Բաքարի\*\*\*\*\* յեղբոր Ռեկի ու Տրդատ

Բայց ոչ տային Հայք թագաւորե  
Բահարայ, զի կամէին զորդի դասերն  
Տրդատայ թագաւորեցուցանել, Իսկ  
Բահարայ ապաւինեցաւ ի Պարս՝ աալով  
նոցա երկիր. և Պերոզի ետ ի Շամոյ-  
տոյ մինչև ի գլուխ Աշոցաց. և նոյնպէս

\* Var. քույր:  
\*\* Բնագրում սխալմամբ՝ Պերոժ (var. Հերոժ) Ավրիսիսեցի:  
\*\*\* Բնագրում՝ Պերոժ Ավրիսիսեցի (var. Հերոժ Ավրիսիսեցի):  
\*\*\*\* Var. Թարդատ:  
\*\*\*\*\* Var. Բահարի:

Թրդատ\*) թագավորի դասեր Վոլ դուն  
Իսկ այս Բաքարը բունակեցեց պարսից  
թագավորի՝ իր հոր յեղբորորդու հետ,  
ինամիացեալ ու փոխանակեց յերկիրը,  
և նրա փեսա Պերոզին (Փերոզին),  
վորը տիրում եր Միհրանից (Միրիա-  
նից) նրան ճորհեցեց Ռանր մինչ Պար-  
տավ (Բարդավ), տիեց Սամզվիլդեյից  
սկսած մինչ Աշոցքի \*\* գլուխը: Ապա  
Պերոզն (Փերոզն) ու նրա մոյրվորդը  
քրիստոնյացաւ՝ ուժ ստանալով Խոսրո-  
վից. հայերը գավթեցին Պավսաթը (Պա-  
վսաթը), [իսկ վրացիք] հաղթեցին ու  
բռնեցին հայերին: Ապա Բաքար թագա-  
վորը, հունաց (բերձենների) և պարսից  
թագավորների միջնորդությամբ, նա-  
մակ գրեց իր յեղբորորդոյն ու նրանց  
մորն Սալոմեյին...

... [Բաքարի վորդի Միհրդատ թագա-  
վորի որոք] մեռավ Հակոբ յեպիսկոպոսն,  
և [նրա տեղ] յեպիսկոպոս նստեց Հովիկ  
(Իոք) հայր՝ Ներեսս (Ներես) կաթողի-  
կոսի սարկավազը...

Ահա և պարսից թագավորն ուղար-  
կեց իշխան [նեբից մեկ]ին մեծ զորքով,  
վորպեսզի հարկ դնի հայերի (սոմեխների)  
և վրացիների վրա: Ապա հայերն (սո-  
մեխներն) զեսպան ուղարկեցին [վրաց]  
Վարագ-Բաքար [Թագավոր]ի մոտ՝ ա-  
սելու, վոր ժողովեն և ոգնություն  
խնդրեն հույներից (բերձեններից), և՝  
չայելով դուռն Կովկասայց (Կովկաս-  
այց)՝ բերին սակրին ու լեզզիներին (լե-  
կերին) պարսից ընդդիմադրելու: Յեկ  
նրա յերեկելներն ել խորհուրդ էյին  
տալիս ընդդիմադրելու պարսիկներին:  
Բայց նա չլսեց վնչ հայերին (սոմեխ-  
ներին) և վնչ ել իր յերեկելներին, վո-  
րովհետե համարձակ չեր ու գախող  
եր և թաք կացաւ Կախը (Կախիթի)  
ձորում... Ետև և առաջ պարսիկներն  
յեկան Հայք (Սոմխիթ), վորն և ավե-

պաշանս արձակեալ ի Յոյնս, և յամե  
նայն կողմանց ժողովեալ զօրս՝ առեթ  
պատերազմ ընդ Հայս ի Զուախեթ, և  
հալածեցին զնոսա. և թագաւորեաց  
Բահար՝ ուժովն Յունաց և Պարսից  
Գիր էաւ ի Սողոմեայ և յորդույ իւրմէ..

... Եւ յետ նորա (Յակոբ եպիսկո-  
պոսի)՝ Ներսէս կաթողիկոսն Հայոց  
ձեռնադրեաց զսարկաւազն իւր զՅակոբ  
(ուղիղ՝ զՅովիկ)՝ եպիսկոպոս Վրաց, և  
ստաքեացու...

... Յաւուրսն յայնոսիկ եկն զօրա-  
գլուխն Պարսից՝ մեծաւ ուժով ի սահ-  
ման Հայոց և Վրաց, յաւուրս Խոսրո-  
վայ՝ արքայի Հայոց, որդւոյ քաջին  
Տրդատայ, և խնդրէր հարկս ի Հայոց և  
ի Վրաց: Եւ հրամայեաց Խոսրով թա-  
գաւորին Վրաց՝ ածել զքնակիչս Կով-  
կասու՝ զԼեկս և զՕսա, զի կուռեացին ընդ  
Պարսու եւ կնամարդին այն Վարդաբարք  
երկիւլայից եղեալ՝ թագեաւ ի Զորն  
Կուխեթոյ. և եկին Պարսիկք և չինե-  
ցին բերդ ի զրանն Տփիսեայ՝ հակառակ  
Մցիսիթոյ...

\* Var. Թարդատ:  
\*\* Բնագրում՝ Արցոյի. հմմ. 148 յեր. \* ծանոթ.:

րեցին Ապա մտան Քարթլի, և պարսից գործադեար (ընթանը) կառուցից Տփղիսը (Տփղիսը) «դռները» միջև (Կասպից և Դարեալանի) ընդդեմ Մցխեթին...»

[Վարազ-Քաջարի վորդի Փարսմանի մահից հետո] Թագավոր նստեց նրա յիզրայր Միհրդատը (Միհրդատը) Տրբ-դատի (Թարգատի) դատեր և Վարազ-Քաջարի վորդին, նորով Քաջարյան և մորով Ռեյան, վորսնը Միլիանի որդոց սերնդիցն էլին...

... եւ թագաւորեցուցին իշխանքն զՏրբատ, զորդի զատերն Մեծին Տրբ-դատայ՝ աշխարհին Հայոց արքայի...

### ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հմմ. Մ. Խորենացի տված ծննդաբանությունը (I, 5):
2. Ասել է՝ «Արարալի և Արագածի», կամ դուրս «[Մ]արարադի և Մասիսի». հմմ. F. Murad, Ararat und Masis. Studien zur armenischen Altertums-kunde und Literatur, Heidelberg 1901. նաև՝ Ա. Կանայեանց, Անյայտ դատաւներ հին Հայաստանի, Հջմիրածին 1914, էջ 76—88: Հմմ. Վրաց մեջ գրագիտաւարածող ընկ. հավաքածուի № 3226 ձեռագրի լուսանկարում տված գիտողությունը՝ «Արարալի Արագադի» Արարատը՝ Արագազն է (E. Takahawailu, Описание рукописей, II, стр. 3):
3. Տես նախորդ ծանոթությունը:
4. Տես նույնը:
5. Այն հանգամանքը, վոր Լեոնտիոս Ռուխեցին կովկասյան ժողովրդների եպոնիմները հորինելիս առաջնությունը՝ հանձնելու Հայկի՝ հայերին և ընծայուած և վոչ թե՛ հանձնելու Քարթլոսի՝ վրացիներին, — այնինչ Ք. Յ.-ի վարիանտներից մեկում, վորը Մոսկվայի Ռուսլանցիի անվան թանգարանում եր գտնվում և այդ պատճառով «Ռուսլանցիյան վարիանտ» եր կոչվում, այդ կարգը փոխված եր հոգուտ վրացիների (նույնը հետագայում յերեան յեկավ և Վրաց մեջ գրագիտություն տարածող ն. ընկերություն հավաքածուի № 3666 ձեռագրում), — հիմք եր տվել վրաց չովին բանակի գաղափարախոս-բանասերներից մի քանիսին, որ. Ռերսեմեյիշվիլուն (Սերբրյակովին), Ա. Խոխանաշվիլուն և Մ. Ջանաշվիլուն վայնասուն բարձրացնելու վրաց ժողովրդի «պատիվ» վտանատակ անելու և վրացագիտության հիմնադիր՝ բազմավաստակ ահադ. Մ. Brosset-ին մեղադրելու Ք. Յ.-ի վրացերեն բնույթը խեղաթյուրելու մեջ: Սակայն այդ յերուշխներին իր ժամանակին արժանի պատասխանը տվին՝ առաջին յերկուսի նկատմամբ Ն. Թաղաշվիլին (Описание рукописей, II, 92—96), իսկ վերջինի նկատմամբ Իվ. Ջավախիշվիլին (Հին վրացական պատմական գրականությունը, ա. հրատ., էջ 119, ր. հրատ., էջ 177): Յեկ իրոք, Ն. Թաղաշվիլուն ասելով, «никакого наказания текста... Броссе в данном месте не допускал, и во всяком случае, прежде чем обвинять в некажении этого места Броссе, следовало в том же обвинить царевича Вахушта, который в своей Истории Грузии (издание Баградзе, стр. 35) точно воспроизводит известие К.-Ц. в пользу

армянского языка. Известно, что первая часть Истории Грузии Вахушта есть сокращенное повторение содержания К.-Ц. Что касается первого существенного отличия Румянцевского списка от других, по которому первенство между сыновьями Таргамоса отдается Картлосу, а не Аосу, то это явление исключительно свойственно Румянцевскому списку и его копии. Ни в одном другом списке не только довахтанговском, но и вахтанговском мы такого явления не наблюдаем. Нет этого и в Истории царевича Вахушта (стр. 28—32). Стало быть, это тенденциозное изменение текста не есть дело Вахтанговской комиссии. Это изменение, без сомнения, позднего происхождения, начала XIX века. Поэтому оно не повлияло на списки XVIII века» (op. cit., 96): Իվ. Ջավախիշվիլին էլ (op. cit., 172) համարում է Ն. Թաղաշվիլուն, վոր «այստեղ, ի հարկե, վոչք վոչ մի դեղձում չի կատարել» և վոր «այստեղեկությունն առաջնական իրեն՝ Լեոնտիոս Ռուխեցունն է», վորն «ընդհանրապես հայոց նախահորը և հայերեն լեզվին և առաջնությունն ընծայումն: Բայց «ինչն»: «Վորովհետև, — պատասխանում է նույն դիտնականը, — Լեոնտիոս Ռուխեցին գրեթե ամեն բանի մեջ հետևում է մի յերկատիրություն, վորը սխալմամբ Յեփրեմ Ասորվո հորինված եր համարվում և կոչվում է «Արբո հորն մերը Յեփրեմի ասացյալ՝ մեկնություն ստեղծագործություն յերկնի և յերկրի և Ադամի մասին...» «Վերջինս, վոր հրատարակել է Ն. Թաղաշվիլին իրեկ հավելված Ք. Յ.-ի «Մարիամ Թագուհու վարիանտի» (էջ 786—846), ըստ Իվ. Ջավախիշվիլու հետազոտության, այն շարքը՝ պարակասոն համարված՝ դրվածքներին և, ինչպիսի յեն ասորական «Գանձանձավ»-ը (գանձուց անձավ, այդ գանձուց) և եթովպական «Ադամադիրք»-ն, թեև իրոք առաջինի ուրույն խմբագրություններից մեկն եր Յեկ այս «Գանձանձավ» կամ «Այր գանձուց» դրվածքն է, Յեփրեմ [Կրտսեր]ի ձեռքով վրացերենի վերածած, ուր ասված է, վոր «յերբ նոյան տոհմերն ու վորդիք Սեմ, Քամ և Հարեթը... դնացին արևելքից, մը դաշտ դոտան վողովված յերկրում, ուր և հաստատեցին բնակություն, և եր նրանց լեզուն մի, և սկսած Ադամից մինչ այդ որը նրանք խոսում էլին ասորերեն լեզվով, վորը հույժ տարածված է մինչ Հայք (Մոսխիթ) և [վորը] բոլոր լեզուները թագավորն է... իսկ յերբ Բաբելոնում աշտարակ շինեցին, այնտեղ բոլոր լեզուներն իրար հետ խառնվեցին, և յեր ու ցան յերան յերկրիս յերեսն... և այս ժամանակից սկսած աշխարհումս յեզով յոթանասուն լեզու և յոթանասուն իդիսան, և յուրաքանչյուր լեզվին տվին թագավոր» (Ն. Թաղաշվիլին, Քարթլիս - ցխորերա, Մարիամ Թագուհու վարիանտը, էջ 812—813, հավելված): «Մըջին դարերի պատմչի համար այս որինակելի յերկատիրությունից Լեոնտիոս Ռուխեցին նկատած պիտի լիներ, վոր սկզբում յերկար տարածության վրա, վորը «մինչ Հայք» եր հասնում, իջնում եր մի լեզու՝ ասորերենը, ուրեմն Հայքում ասորերենը չի յեղել տարածված, այլ հայերենը, այսպես պիտի դատեր և հենց այսպես ել դատել և մեր պատմչիքը, — նկատում է Իվ. Ջավախիշվիլին (ibid., 179), և ապա շարունակում. «Քանի վոր վերահիշյալ յերկատիրություն մեջ Հայքից դատ ուրի՞ վոչ մի յերկիր հիշատակված չե, այս պատճառով Հայքն ու հայերեն լեզուն նա (Լեոնտիոսը) համարել է մեծ նշանակություն ունեցող», և «սրանով է քայտարվում, վոր Լեոնտիոս Ռուխեցին «Հատուկն» և հայերեն լեզվին այսպիսի առաջնություն և ընծայում»: Իվ. Ջավախիշվիլու յեղբրակացությունն այս կետում սկի համարում չէ Կ. Կեկելիան (Լեոնտիոս

*Ռուսաց զրահան աղբյուրները, 10—11), վորը՝ հետևելով Ք. Պատկանյանին (Ванские надписи etc., ЖМНПР, 1883, декабрь, 240—242), սակայն վերջինիս անունը չհիշելով՝ արժարժում է այն միայն, վոր հայերին և հայերենին առաջնություն տալու դադարվարը Լեոնտիոս Ռուսացին յուրացրած պիտի ունենա Մ. Խորենացու պատմության ազդեցությանը: Վորքան էլ ուզում է սրամիտ չինի տեսականորեն ել. Ջավախիշվիլու կարծիքը՝ մի կողմից, և հավանական լինի ըստ էության և. Կեկելիսինը՝ մյուս կողմից, մենք, սակայն, կարծում ենք, վոր յերկուսն էլ խնդիրն լուծելիս աչքաթող են արել այն կարևոր հանգամանքը, վոր Լեոնտիոսի գրվածքում կամ գուցե նրա ձեռքի տակ յեղած վրացերեն աղբյուրում եպոնիմների անունները հունարեն վերջավորություններ են գործածված, հետևապես հունականի ազդեցության գրոգմն են կրում (հմմ. Կ. Ստեփանյան, Ванские надписи etc., ЖМНПР, 1883 г., декабрь, стр. 239—240):*

6. Հաստի պատերազմը ներքոթի դեմ, ինչպես ուղիղ դիտած ունի, ի միջի ալոց, և Կ. Կեկելիսինը (Լեոնտիոս Ռուսացին զրահան աղբյուրները, էջ 11—14), հիշեցնում է հայտնի առասպելը Հայկի և Բելի կովի մասին, վորի մանրամասն նկարագրությունը տալիս է Մ. Խորենացին (I, 11). հմմ. Կ. Ստեփանյան, Ванские надписи etc., ЖМНПР, 1883 г., декабрь, стр. 242:

7. Տես 2-րդ ծանոթությունը:

8. «Սոմխուրի» և «սոմխու» (այստեղից «Սոմխիթ»-ի) տերմինների մասին, յեթե մի կողմը թողնենք Մ. Brossel-ի ստուգարանությունը վրացերեն «ամխուրիթ» հարավ բառից (Histoire de la Géorgie, t. I, p. 15—16, n. 5; Introduction, p. IV—VI), վորը լիզվարանորեն, ի հարկե, անընդունելի յե, անհրաժեշտ է հիշատակել ն. Մառի կողմից այլ և այլ ժամանակ այլ և այլ առիթով առաջարկված հետևյալ յերեք ստուգարանությունները. 1. «սոմխու» ← «սոմխի» || «սոմխուս», այսինքն մեխ || մեխ (История термина «абхаз», — «Известия Академии Наук», 1912, стр. 705): 2. «սոմխու» ← «սո[ն]-մե[ս]խ» պլան և մեխի ժողովրդների հիսթորի, ինչպիսի յեն, որինակ, Պիմիուսի հիշատակած Armenochalybes, Պոպուսի Σοβαροχάλχοι և Փավստոս Բյուզանդացու «Եգերուականք»-ը (Из поездки в Сванию, — «Христ. Восток», т. II, 1913, стр. 22—23; Яфетические названия деревьев и растений, — «Изв. Акад. Наук», 1915, стр. 945; К дате эмиграции мосохов из Армении в Сванию, — ibid., 1916, стр. 1690; Грузинская поэма «Витязь в барсовой шкуре» Шоты из Рустова и новая культурно-историческая проблема, — ibid., 1917, стр. 439—442, հմմ. նաև մեր՝ Несколько слов о термине «сомех», — «Христ. Восток», т. VI, 1918, стр. 93—94. Հայերը վրաց հրն գրականությունից մեջ, — «Գեղարուեստ», VII, 1922, էջ 36. Введение в историю государственных образований Юго-Кавказа, Тфл. 1924, стр. 97—98). ընդ սմին հատկապես Լեոնտիոսի այս տեղեկությունից առիթով մեծ գիտնականը 1913 թվին գրում եր. «... в одном списке Грузинских летописей утверждается, что первоначально грузины говорили по-сомехски, а потом они заговорили по-грузински. При намеченном ходе научных приобретений это значило бы, что первоначально у грузин церковно-литературным языком служил сомехский, т. е. сванский язык (омехия, а с известного момента они свой родной картский язык обратили в литературный язык церкви» (Из поездки в Сванию, — «Христ. Восток», т. II, стр. 24): Ապա 1921 թվին նույն գիտնականը գրում եր հետև-

վյալը. «Грузины... называли и продолжают называть армян не особым каким-либо этническим термином, а тем, точнее, слиянно теми двумя терминами, какими армяне раздельно пользовались для именовании двух армянских народов, haу'ев (|| son'ov) и haуk'ov (|| mes'qov), отложившихся основными слоями природной своей речи в двух реально сохранившихся языках Армении, haуеген (haуеген) и haукакан (haукакан). Для Армении грузинский гибридный термин someq' (|| \*haу-haуk) более реально историчен и об'ективен, чем простые армянские названия, суб'ективные, будут ли это по народному самоопределению — haу, или по культурно-историческому, т. е. национальному самоопределению — haуk, resp. haуkazep || haуkazin. Но тот же термин someq' у грузин являлся с известного момента камнем преткновения в отношении Грузии. Имея в крае до-историческую давность с точки зрения национальной истории и грузинской, и армянской, someq' первоначально означал гибридное племенное об'единение или первичного населения Армении, чисто яфетического, или вторичного ее населения — мешанного уже с ариосвроейдами, яфетьдо-ариосвроейдами. Позднее, по мере дальнейшего перерождения части того же со-мехского || \*haу-haуkского населения в пределах Грузии в грузин, этнический термин someq' стал означать грузинское племя, сохранив однако исторически-преемственно первоначальное свое значение как этнического термина, наименования населения Армении (Астрономические и этнические значения двух племенных названий армян, — «Записки Восточного Отд. Рус. Арх. О-ва», т. XXV, стр. 242—243): 3. «սոմխու» ← «սոմխի» || «սոմխու» || «սոմխի» || «սոմխու» (Скифский язык, — «По этапам развития яфетической теории. Сборник статей Н. Я. Марра», М.-Л. 1926, стр. 358—361):

9. Լեոնտիոսի մեկնությունը վրացերեն լիզվի ծագման ինչըրում այն լիմաստով, վոր նա այն համարում է Քարթլիում յերբինն տարածված լիզուների «խանուրդ», հիշեցնում է Սարաբանի (XI, 14, 5) մեկնությունը հայերեսի նկատմամբ, վորը նմանապես «խանուրդ» եր ճանաչված: Սակայն, հետաքրքր է թի ինչպիսի կարծիքի էլյն վրաց հրն գործչներն իրենց մայրենի լիզվի մասին. «Վրացերեն լիզուն թաղված է մինչ յերկրորդ գալուստն նորա (Քրիստոսի)՝ դատելու, վորպեսզի այս լիզվով աստված մերկայնի բոլոր լիզուները», — այսպես է սկսում X դարու անանուն վրացի հեղինակն իր «Վրացերեն լիզվի գովասանքը» («Գավկասիոնի» հանդես, № 1—2, Տիգ. 1924, էջ 269) և ապա վորջում ավելացնում. «Յեկ պճնադարդ և տիրոջ անվամբ որհնյալ այս գանձիկ և խոսանած (գրանած) լիզուն սպասում է տիրոջ յերկրորդ դալսայան և ունի նշան, վոր իննսուն և չորս տարով մեծ է ուրիշ լիզուները քրիստոսի գալուստը մըջ այսոր»: Գեորգ Մերչալը (Н. Марр, Жизнь св. Григория Хандзтийского, էջ մթ) նույնպես X դարում՝ գրում է. «Քարթլի յե համարվում ընդարձակ յերկրը, ուր ժամասացությունն կատարվում է և սղոթքներն արտասանվում են վրացերեն լիզվով և միմուայն կվրբիելիյսոնը (տեղ ողորսեա-ն) հունարեն»:

10. Տես նախորդ ծանոթությունը:

11. Ըստ Մ. Brossel-ի (Histoire de la Géorgie, I, p. 40, n. 1) պիտի լինի «Անձհանցձոր»: Քայց մենք կարծում ենք, վոր գուցե Անանուն աղխարհագրի



{Պորենացիո ?) «Անձաճիձոր»-ը լինի, վորը Վասպուրականի սահմաններումն Ե-ցույց տրված (Աշխարհացոյց Մովսէսի Պորենացոյ, հրատ. [Արաէն վ. Սուկրեանի], Վենետիկ 1881, էջ 32): Հմմ. նաև Ղ. վ. Ինճիճեան, Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Վենետիկ 1822, էջ 208—209. **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, стр. 315, 317:

12. «Վրաց դպրութիւն» (մծիգնորորա քարթուլի) ասելով՝ Լեոնտիոսը, անկասկած, ակնարկուած և այն այբբենի մասին, վորը գոյութիւն պիտի ունենար վրացոց մեջ նախաքրիստոնեական շրջանում: Ծիշտ և, վերջերս Կ Կեկե-լիճեմ (Վրաց գրականութեան պատմութիւն, I, 1923, էջ 28—31) ցանց վրացիներն այբբենի մշակումն և ձևավորումը վերագրել, համաձայն Կորյունի ցուցմունքներին՝ Մեսրոպի վերահսկողութեամբ և վոմն Զաղայի անմըջական մասնակցութեամբ և ղեկավարութեամբ Վրաստանում գործող՝ հատուկ կոմիտիային 412—429 թ. թ. մ. ջոզին, սակայն պարզ է, վոր ինչպես վրացիներն, նույնպես և հայերն տառերի «գյուտի» հարցը կարոտ և նոր լուսաբանութեան բոլորովին այլ հիմքերի վրա Բայց՝ համեմատած հայերն նշանադրերի հետ՝ վրացիներն հարցն ավելի բարդանում և շնորհիվ այն հանգամանքի, վոր վերջինումս յերեք տեսակի այբբեն և հայտնի. 1. «խուցուրի սոսմթավորուլի» գլխառա կամ գլխագիր յեկեղեցական (յերկաթագիր), 2. «խուցուրի նուսխա» փոքրատա յեկեղեցական, և 3. «միւնդրուլի» զինվարական կամ ուղխարհիկ: Այդ յերեք այբբենների առնչութիւնն իրար հետ վրացագիտները պատկերացրած ունեյին այսպես. մրնչեթ բանասերների մի խումբը Ի. Ռեթմեղիշվիլու-Սերբրյակովի գլխավորութեամբ (Об изобретении грузинского алфавита, — Труды V археологического съезда в Тифлисе в 1881 г., Москва 1887, стр. 221—229) ապացուցում եր, վոր «զինվորական» կամ «աշխարհիկ» այբբենն և ավելի հինը, վորը հորինվել և ղեկելի Փառնավազ Թագավորի որոք, իսկ ապա քրիստոնեայութեանն ընդունելուց հետո վրացիք հնարել են նորը կամ վերածել հինը նորի, վորը «յեկեղեցական» անվամբ և հայտնի, բանասերների մի ուրիշ խումբ Ի. Բաբրանյի գլխավորութեամբ (Грузинская палеография, — նույն հրատարակութեան մեջ, էջ 207—214. Վրաստանի պատմութիւնը, վրացիներն, Տիգ. 1889, էջ 82—85) ապացուցում եր ընդհակառակը, վոր սկզբնական այբբենն և «յեկեղեցական գլխագիրը», վորից եզրուցիւնն ճանապարհով նախ սուաջացել և «յեկեղեցական փոքրատառը», իսկ ապա X—XI դ.դ. «զինվորականը» (աշխարհիկը): Այս յերկուրդ խմբակի կողմը արծարծված տեսակետն ավելի կայուն հանդիսացավ գրականութեան մեջ, քանի վոր նրա ջերմ պաշտպանը և նույնիսկ ջատագովը հանդիսացին նախ XIX դարու վերջերը՝ պրոֆ. վ. Բալտովը (О сочинении студента Георгия Гамрекелова «Древнейшая история церкви в Грузии etc», — «Христианское чтение», 1898 г., в. IV), իսկ ապա XX դարու շեմքից սկսած և մինչ մեր որերը գրեթե բոլոր վրայադիտները: Սակայն այս խնդրում առանձնապես հիշատակելի յե ն. Մառի և Իվ. Զավախիշվիլու կարծիքները: Ն. Մառը 1925 թվին գրում եր (Грамматика древне-литературного грузинского языка [Материалы по яфетическому языкознанию, XII], Ангр., стр. 2). «Вообще церковный алфавит как анициальный, так строчный есть письмо грузинской христианской культуры, возникшее с нею и обслуживавшее религиозно-просветительные, а затем и общественные интересы грузинской христианской среды. Письмо, обслуживавшее культурные интересы грузин-

ской языческой среды, до нас не дошло. Вероятно, военный или рыцарский алфавит есть его пережиток, получивший развитие в светской военной среде под воздействием церковного письма, в свою очередь влиявший на него, на выработку его строчного вида»: Հատկապես կանգ առնելով Լեոնտիոսի ցուցմունքի վրա, Իվ. Զավախիշվիլին 1928 թ. (Վրաց հնագրութիւնը, վրացիներն, Տիգ., էջ 188) գրում եր. «Վրացական պատմական գրականութեան մեջ առայժմ միմիայն Լեոնտիոս Ռուխեցի» (Լեոնտիոս Մրովելու) յերկասիրութեան մեջ ենք հանդիպում տվյալին վրաց այբբենի հորինման ժամանակի և հորինողի անձնավորութեան մասին: Նա վրաց «դպրութեան» հորինումը Փառնավազ Թագավորին և վերագրում: Բանի վոր այս Փառնավազին XI դարու այս՝ վրացի պատմ., չը պատկերացնում և իբրև Վրաստանի պետութեան և հասարակալարգի, ինչպես և կրոնի հիմնադիր, վորն առասպելական անձնավորութեան և վերածված, այս պատճառով Լեոնտիոս Ռուխեցի» վրաց այբբենի մասին [տված] տեղեկութիւնն իր արժեքը կորցնում և: Այստեղ միմիայն այն հանդամանքն և ուշագրավ, վոր XI դ. վրաց պատմը չը վրաց այբբենը պատկերացրած ունի իբրև նախաքրիստոնեական շրջանը մի գյուտ, վորը, նրա կարծիքով, հնից հին եր և ուրիշներն նման քրիստոնեայութեան շահվածք չի համարում: Գուցե ապագայում պարզվի, ունեք արդոք Լ. Ռուխեցին այս առթիվ վորեք հիմնական աղբյուրներ կամ պատմական «ավանդութիւն»: Սրանից հետո Իվ. Զավախիշվիլին հատկապես շոշափում և վրաց այբբենի՝ այս կամ այն այբբենների և, ի միջի այլոց, հայերենը հետ (ibid., էջ 189—196) ունեցած առնչութեան հարցը, վորը, սակայն, լուծում և՛ գոնե հայերենի նկատմամբ՝ բացասական իմաստով: Վրացիներն տառերի հայերենի հետ առնչութեան մասին տես. Լ. Անտան Հայոց գրերը [«Известия Госуд. Акад. Ист. мат. культуры», вып. 62], Ангр. 1933, стр. 60) դիտողութիւնը կովկասյան ժողովուրդների այբբենների ծագման ժամանակի մասին ընդհանրապես. «Поскольку Закавказье в первом тысячелетии до н. э. не представляло еще в своей социальной структуре классового расчленения, постольку же всякие поиски в нем «настоящей», т. е. фонемной, письменности заранее обречены на неудачу»:

13. «Մայրենի կրոն» (սջուլի դեգուլի) դարձվածքը Լեոնտիոսը «հայրենի կրոն» (սջուլի մամուլի)-ի հակադրութեամբ և գործածում, ակնարկելով յերբեմնի մայրիշխանական կամ մայրապետական (մատրիարքատային) կարգերի վրա, վորի ամենացայտուն ապացույցները մինչ մեր որերը պահպանել և վրաց իրականութիւնը, առանձնապես և շեշտակի կերպով լեզվական տվյալներում արտահայտված փաստերը (այս հարցի մասին մանրամասն մեր համապատասխան աշխատութեան մեջ K вопросу об обычае кувалды на Кавказе, վոր տպագրվում և:

14. «Մուսբերիդ» նույն արար. «մուսբերազ»- վրաց «բուսբերազ» բառն և գյուցագն-ի իմաստով, նույն և և Լեոնտիոսի յերկասիրութեան մեջ:

15. Վոր Անդրեաս (նախակոչյալ) առաջալը փոջ մի առնչութիւն չի ունեցել Վրաստանի (նաև Հայաստանի) հետ, և նրա վերաբերմամբ ամբողջ գրույցը միմիայն X դարումն և առջանում վրաց գրականութեան մեջ, տես հետևյալ գրականութիւնը. **И. Джавахов**, Проповедническая деятельность св. Нины и апостола Андрея, — «Журн. Мил. Нар. Просв», 1901 г., январь, նույնը

վրացերեն, «Մոսկով» հանդիսում 1900 թ., № IV և առանձին. 4. Կեկելիս, Վրաց դարձի գլխավոր պատմական-ժամանակագրական խնդիրները, վրացերեն, — «Մեթոդիկա» I, 1926, էջ 3—9, նույնը գերմաներեն՝ Die Bekehrung Georgiens zum Christentum, Leipzig 1928, S. S. 9—15:

16. «Բկրնիս-խեխ», իրոք, յերկաթաձոր և նշանակում

17. Սկսած արգացից «Ապա թաղավոր դարձավ Հայքում (Սոմխիթում) մեծն Յերվանդո և ին մինչ այստեղ Լեոնտիոսը կամ գուցե նրա նախադրյունը ընդհանուր գծերով հիշեցնում են Մ. Խարենացին տվյալները (II, 37—61) հմմ. Ս. Գրգավն, Գրություններ վրաց պատմությունից, վրաց., էջ 23—26, 4. Կեկելիս, Լեոնտիոս Ռուխսեցիո գրական աղբյուրները, էջ 14:

18. Անակի, Խորոզի և Տրդատի մասին խոսելիս Լեոնտիոսը, անկասկած, ոգտագործած ունի Ագաթանգեղոսի Պատմությունը, սակայն սոց հայերեն բնագիրը, այլ X դարու հունարեն թարգմանությունը, վորը յերկու խմբագրություններ է հայտնի. 1. բնագրի և 2. համառոտ (Vita et conversatio et martyrion sancti martyris Gregorii Magnae Armeniae, — Migne, Patrologiae cursus completus, series graeca, t. CXV, p. p. 143—906; Acta sancti Gregorii, interpretatae Ioanne stiltingo, — «Acta sanctorum» septembris, t. VIII, Antverpiae 1762: V. Lenglois, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. I, Paris 1867; Paul de Laparde, Agathangelus und die Akten Gregors von Armenien, — «Göttingische Gelehre Anzeiger» XXXV, 1887. հմմ. XI դարու վրացերեն թարգմանությունը L. Melikset-Bek, Vita s. Gregorü Parthianensis, T. 1920). հմմ. նաև՝ Ա. Մելիքսեթ-Բեկոս, Грузинская версия Агафангеля и ее значение для грузинской историографии, — «Христ. Восток», т. V, 1915, стр. 168—170. 4. Կեկելիս, Լեոնտիոս Ռուխսեցիո գրական աղբյուրները, 4—5. Ս. Կախարան, Պատմական պրպուռներ, 150:

19. Այսինքն Ագաթանգեղոսի պատմության մեջ. տես նախորդ ծանոթությունը:

20. Հայոց (Հայքի) Որբնիթի մասին տես. այս աշխատության բ. հատորի ժե. գլխի 2 ծանոթությունը:

21. Հմմ. «Փարվանա»-ի մասին լեզունը՝ Յ. Կառամանյան, Շիրակի լեզուն-դաներից և ժողովրդական կիանքից, Աղեքսանդրապոլ 1896. նույնը Լ. Թումանյանի կողմից ոգտագործած:

22. Հմմ. 20-րդ ծան.:

23. Այս կտորի մանրամասն վերլուծումը տես. Ա. Մ[ելիքսեթ]-Բ[եկոս], По поводу одного из анахронизмов в грузинских летописях, — «Христ. Восток», т. III, 1915, стр. 200—203:

24. Հռիփսիմյանց մասին խոսելիս, Լեոնտիոսը, անկասկած, ոգտագործած ունի Ագաթանգեղոսի պատմությունը:

25. Ասինքն՝ փրանկ:

26. Նույնը:

27. Ասել է Սղնախ քաղաքից 4 կլ. հեռավորությամբ գտնվող Բողբեն (սրանից մի փոքր հեռու կա և Բողբեն-խեկ գյուղը), ուր հետագայում կառուցվեց Նուենյի անվան վանքը, վորը բազմիցս վերանորոգված ձևով հասել է մինչ մեր օրերը: Յեկեղեցու միջի պատկերագրությունը, վորը ներկա վիճակում այն-

քան հին էլ չէ, համաձայն նկարիչ Գ. Ծարբարյանի մեզ հայտնի տեղեկության, կատարված պիտի լինի XVIII դարու վերջերում նկարիչ Հովնաթան Հովնաթյանի ձեռքով (սրա մասին Ծարբարյանը պատրաստած ունի հատուկ հոդված. իսկ առաջին տես. Լ. Մելիքսեթ-Բեկ, Հովնաթան, վրացերեն, — «Մնաթոր» ամսագիր, 1933 թ. № 5, էջ 185): — Վերջերս Ս. Կախարան (Бюлетень Кавк. Ист.-Арх. Института, № 4, Тфл. 1928, стр. 6—7) կարծիք հայտնեց, վոր Բողբեն վոչ թե Սղնախի մոտ գտնվող Բողբեն է հանդերձ ս. Նուենյի մենաստանով, այլ «Նինո-ժմիդա» դուղը Սաղարեջոյի մոտ՝ հնագույն տաճարի բեկորներով (վերջինիս մանրամասն նկարագրությունը տես. Լ. Մելիքսեթ-Բեկ, Հնագիտական ուղեորություն Գարե-Կախեթ և Ճերմի հովիտը, վրացերեն, — «Սախալխ սաքմե» 1920 թ. № № 964, 974):

28. Հռիփսիմյանց մասին տեղեկությունները Լեոնտիոսը քաղած ունի գլխավորապես յերկու աղբյուրից, վորոնցից մեկն է ս. Նուենյի վարքը (տես ա. պրակը), իսկ մյուսը նույն Հռիփսիմյանց վկայաբանության վրացերեն թարգմանությունը, վորը մի քանի խմբագրություններ է հասել մեզ, դրանց մեջ ամենահնագույնն է, ինչպես Իլիա Արուստանյանը նորիս պարզեց, Վրաց յեկեղեցական նախկին թանգարանի հավաքածուի № 511-ը (Փ. Ջորժանյան, Описание рукописей Тифлисского Церковного Музея, Кн. II, Тфл. 1902, стр. 63), ապա գալիս են Գիտությունից ձեռնարանի նախկին Ասիական թանգարանի, այժմ Արևելագիտության Ինստիտուտի Georgica հավաքածուի № 53 (Ա. Ըաղարելի, Сведения о памятниках грузинской письменности, т. I, в. 3, стр. 160) և Վրաց մեջ դրադիտությունը տարածող նախկին ընկերության հավաքածուի № 3640. սրանց կողքին անպայման հիշատակելու յի Պարիզի Ազգային Մասնագրարանի Georgica հավաքածուի № 3 (Է. Կախարան, Les manuscrits Géorgiens de la Bibliothèque Nationale de Paris et les vingt alphabets secrets Géorgiens, Paris 1933, p. 26, վրացերեն) և Կեկելիսի համալսարանի գրադարանի Georgica հավաքածուի № 5 (Robert P. Blake, Catalogue of the Georgian Manuscripts in the Cambridge University Library, — «Harvard Theological Review», Vol. XXV, July 1932, № 3, pp. 216, 220—221). վերջպես, նորագույն ժամանակվա յի վրաց յեկեղեցական ն. թանգարանի № 1043 (Մ. Ջանասուվա, Каталог предметам Церковного Музея грузинского духовенства, Тфл. 1914, стр. 1. Ա. Մելիքսեթ-Բեկոս, Новый список «Жития свв. Рипсимии, Гаинии и сподвижниц» на грузинском языке, — «Христ. Восток», т. III, 1915, стр. 313—314): Ընդ սմին ավելորդ չի լինի մատնանշել, վոր Դավիթգարեջա մայրավանքի վիմափոր մեծ սեղանատան հյուսիսային պատի վրա մի ուշադրավ fresco կա, ուր ներկայացրած է 2 աղջիկ համապատասխան մակադրություններով վրաց յեկեղեցական յերկաթազիբ տառերով. 1. «ժյ. Բրիսիմե», և 2. «մոյլբուլի բարթ...» (մեր 1921 և 1929 եքսպեդիցիաների նյութերից), վոր մենք կարդում ենք և մեկնում այսպիս. 1. «ժմիդայ Բիփսիմե» առք Հռիփսիմե, և 2. «մոյլբուլի բարթ [ուելթա Նինո]» վր[աց] առաքելուի [Նուեն]: Իր տեղում, Դավիթ Գարեջեցու վարքի մասին խոսելիս, մենք արդեն ցույց ենք տվել, թե ինչպիսի գիրք ունի գրաված միջին դարերում Դավիթգարեջայի վանքն իր շրջակա Ռյրիվանքերով հանդերձ հայ «ուխտավորները» աչքում:

## ՀԱՎԵԼՎԱԾ

Ինչպես ընթերցողը հիշում է, այս գլխի ներածականում մենք առաջ ունինք բերած այն հիշատակարանը (Թարգմանարար), վորը Քարթլիս-ցխորերայի Մարիամ Թագուհու վարիանտում նախորդում է «Արչիլ Թագավորի վկայարանությանը» և վորից պարզվում է վերջինիս հեղինակի անունը՝ «Արչիլի վկայարանությունն ևլն... գրեցի Լեոնտիոս Ռուխսեցիս (Լեոնտի Մրովելին)», — ասում է իր մասին Լեոնտիոսը։ Նույնը մենք գտնում ենք և հիշյալ Արչիլի վկայարանության ընդարձակ խմբագրության մեջ, ուր ասված է, վոր վերջինիս «յերանելի վարքն ընդարձակ կերպով գրել է, ինչպես «Վրաց մասյան»-ն է հաղորդում, սուրբ Լեոնտիոս յեպիսկոպոսը» (Մ. Զանաւիթի, Վրաց գրականությունը, վրացերեն, I, Տփղ. 1900, էջ 258)։ Հետևապես Լեոնտիոս Ռուխսեցին՝ «Արչիլ Թագավորի վկայարանության» հեղինակ լինելն ամենայն կասկածից դուրս է։

Ինչ վերաբերվում է «վկայարանության» տեկատին, այն հասել և մեղ յերեք խմբագրությամբ, վորոնցից հնագույնն է Ք. Ց.-ի մեջ մուծածը՝ Ս. Թաղ՝ ալյուհու հրատարակությամբ 211—215 եջերում, իսկ Մ. Brosset-ի (նույնը և Ն. Մառի)՝ 181—184, վորին համապատասխանում են նույն Մ. Brosset-ի ֆրանսերեն թարգմանության 253—255 եջերը («Համառոտ պատմութիւն Վրաց»-ի մեջ բացակայում է). մյուս խմբագրությունն է ընդարձակը, վորին հիմք է ծառայել հնագույն համառոտը և վորը հայտնի յի Մ. Զանաւիթի հրատարակությամբ՝ «Վրաց գրականություն», I, 253—292. վերջապես յերրորդը՝ դարձյալ համառոտ՝ համեմատաբար նոր ժամանակների (XVIII դարու), վոր հրատարակել է Մ. Սաբիին՝ «Վրաստանի գրախորը», վրացերեն, էջ 321—332. նույն Մ. Սաբիին պատկանում է և «վկայարանության» ուսերեն թարգմանությունը՝ «Полное жизнеописание святых Грузинской церкви», ч. III, СПб. 1873, стр. 71—84:

«Վկայարանությունն» ի նկատի ունի արաբական արչաֆանքի դեպքերը և Արչիլ II Թագավորի (668—718) նահատակությունն «ի ձեռն ճիճում-Ասիմի»:

... [Արչիլին արպեյանոցի մեջ ձգելուց հետո] Աս[ի]մին ներկայացավ Գարդարանցի իշխան[ներից] մեկը (var. † ապով հայ), վորը սարկինոզ<sup>1</sup> էր դարձել...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Այսինքն մահմեդական

Գ.

## ՋՈՒԱՆՇԵՐ ԶՈՒԱՆՇԵՐՅԱՆ (XI Դ.)

### „ՎԱԽՏԱՆԳ ԳՈՐԳԱՍԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ“

Քարթլիս-ցխորերայի Մարիամ Թագուհու վարիանտում Լեոնտիոս Ռուխսեցին «Վրաց Թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմությանն» անմիջապես հետևում է մի ընդարձակ չերկասիրություն հետևյալ վերնագրով. «Պատմություն Վախտանգ Գորգասալ Թագավորի ծնողների, ապա և հենց իրեն՝ մեծ և աստվածապաշտ Թագավորի, վորը վրաց բոլոր այլ Թագավորներից առավել ևս հռչակավոր հանդիսացավ»: Այդ չերկասիրությունը գրաված ունի Ս. Թաղ՝ ալյուհու հրատարակության մեջ 117—211 եջերը, իսկ Մ. Brosset-ի (նույնը և Ն. Մառի)՝ 108—161, 163—181, վորին համապատասխանում են նույն Մ. Brosset-ի ֆրանսերեն թարգմանության 114—216, 220—253 եջերը և «Համառոտ պատմութիւն Վրաց»-ի 72—104: Վոր այս յերկասիրությունն, իրոք, Զուանդերինս է, յերևում է այն հիշատակարանից, վորն ինչպես նույն Մարիամի վարիանտում, նույնպես և Վախտանգ VI-ի հանձնաժողովի խմբագրության բովոյ անցած գրչագրերի մեջ անմիջապես կցված է «Արչիլ Թագավորի վկայարանությանն», հետևյալ բովանդակությամբ. «Վրաց (քարթվելներ) պատմության այս գիրքը մինչ Վախտանգ [Գորգասալ] գրվում էր հետզհետե, իսկ Վախտանգ Թագավորից սկսած մինչ այստեղ գրեց Զուանդերյանը, սուրբ Արչիլի (sic) յիղորդ գտեր ամուսինն, Միհրանի (Միրիանի) վորդի մեկ սերնդից. իսկ այսուհետև թող գրեն յեկող սերունդներն՝ ինչպես դիտեն» (Ս. Թաղ՝ ալյուհու հրատ., 215, Մ. Brosset-ի, 184, հմմ. ֆրանսերեն թարգմանության 256), նույնն ըստ «Համառոտ պատմութիւն Վրաց»-ի տես այս պրակի ներածականում:

Այն հանգամանքը, վոր այս հիշատակարանում Զուանդերն Արչիլ Թագավորի յիղորդ փեսա յի անվանված, հիմք տվեց բանասեր-

ներին կարծելու, վոր իբր այդ Ջուանշերր VIII դարու պատմիչ եւ Այսպես եր դատում, ի միջի այլոց, և «Համառու պատմութիւն Վրաց»-ի հրատարակիչ Հ. Ալբանալ Թ[իրոյան]ը, իբր իր հրատարակութեան առաջաբանում («Տեղեկութիւն»-ում) գրում եր. «Առաջիկայ Պատմութեանս Վրաց... ոչ է յայտ սվ եկաց մատենագիր, թէ և ի բարձրագ հաւաստի՝ թարգմանութիւն լինել երկասիրութեանն Ջուանշերի (Ջուանբերի) Վրաց պատմչի, որ եկաց առ ժամանակօք, որպէս թուի Արչիլ Բ-ի (688—718), զի և յիշատակիւնուն նորին ի պատմութեանս»: Ապա հրատարակիչն առաջ և բերում համապատասխան memento-ն ըստ նույն պատմութեան, վորը նա վերջ ի վերջո Ջուանշերին և վերագրում և ըստ այնմ ել խմբագրում իր հրատարակութեան վերնագիրը՝ «Համառու պատմութիւն Վրաց բնծայեալ Ջուանբերի պատմչի», թեև Ս. Կակարաձեմ (О древнегрузинских летописях XI столетия, Тфл. 1912, стр. 22—26, 36) սկզբում բոլորովին այլ կարծիքի յեր Ջուանշերի մասին՝ համարելով նրան XI դարու պատմիչ, սակայն վերջերս՝ սկսած 1924 թվից՝ պնդում ե, վոր «Վախտանգ Գորգասալի պատմութեան» հեղինակն «8-րդ դարու չերկրորդ կիսին, ավելի ճիշտն՝ յերրորդ քառյակին պիտի վերագրել» (Պատմական պրպտումներ, 1924, էջ 190, Պատմական ժողովածու, II, 1928, էջ 68): Իսկ Իվ. Ջավախիճվիլին՝ Ս. Կակարաձեյից ել առաջ և մինչ որս՝ թե իբր բանավոր յիւր յթներում (դասախոսութիւն-գեղեցուցուցներին) և թե 1916 և 1921 հրատարակված «Հին վրացական պատմական գրականութիւն» աշխատութեան ա. և բ. սպազրութեանց մեջ ապացուցում եր, վոր Ջուանշերը վնչ թե VIII դարու պատմիչ ե, այլ XI-րդի. քանի վոր ոգտագործած ունի X—XI դարերում յերևան յեկած աղբյուրները: Ճիշտ ե, Ջուանբերի յերկասիրութիւնն իբրև պատմագրական գործ ցածր վորակի գրվածք ե, բայց և այնպես նույն Ջավախիճվիլին այսպես և այն բնթրոշում. «Ջուանշերի գրած «Վախտանգ Գորգասալի պատմութիւնը» այնպիսի վոճով ե գրված և այնպիսի անհավաստի տեղեկութիւններով լցված, վոր ավելի առասպելին ե նման, քան թե իսկական պատմութեանը» (բ. սպ., 189): «Ջուանշերի յերկասիրութիւնը Վախտանգի ժամանակվա պատմութեան համար, բացի մի քանի տեղեկութիւններէց, գրեթե պիտանի չե և ուղագրով ե միմիայն իբրև բնորոշոյ նրա, թե ինչպիսի տեղեկութիւններ և ինչպիսի պատկերացում ունեյին XI-րդ դարում վրաց ուսյալ շրջանները Վախտանգ Գորգասալի անձի և թագավորութեան մասին. թեև VII—VIII

դարերի [անցքերի] մասին [նրա մեջ] ավելի ուղագրով տեղեկութիւններ կան» (ibid., 194):

Ըստ Կ. Կեկելիձեյի («Վախտանգ Գորգասալի պատմիչն ու նրա պատմութիւնը, վրացերեն», — «Չվենի մեցնիբրերա», № 4, 1923, էջ 46) ևս, «Վախտանգ Գորգասալի պատմութիւնն իրոք XI դարումն ե գրված, բայց նրա հեղինակը վոչ թե Ջուանշերն ե, այլ հենց նույն անձնավորութիւնը, վորը գրել ե «Թագավորների պատմութիւնը» և վորը հայանի յի Լեոնտիոս Թուխսեցվո անվամբ»:

Ով ուզում ե լինի «Վախտանգ Գորգասալի պատմութեան» հեղինակը, մեզ համար իյականն այն ե, վոր այդ գրվածքը պատմագրական լուրջ գործ չի կարող համարվել. բավական ե հիշել, վոր Վախտանգ Գորգասալի կյանքի՝ նկարագրութիւնն այնպիսի առասպելաբանութիւններով ե զարդարված, վոր ուղղակի հակասում ե Ղազար Փարպեցվո տված միանգամայն հավաստի տվյալներին: «Վախտանգի մասին մենք ունինք ուրիշ տեղեկութիւններ ևս», — ասում ե այս առթիվ Իվ. Ջավախիճվիլին (op. cit., 191), ակնարկելով Ղազար Փարպեցվո վրա և ապա շարունակում. «և այս տեղեկութիւնները մեզ ցույց են տալիս, վոր Վախտանգը յերեկի թագավոր ե յեղել. սակայն, ուր այն Վախտանգը և ուր Ջուանշերի նկարագրած Վախտանգ Գորգասալը Ջուանշերի պատմութիւնն այն աստիճան առասպելական գծերով ե զարդարված, վոր հետազոտողի մեջ ակամա միտք ե ծագում՝ մի՞ գուցե Վախտանգ թագավորի պատմութեան մեջ սխալմամբ մտցրած լինին այն դուցազներգութիւնները, վորոնք, Գրիգոր Մագիստրոսի ասելով, գոյութիւն ունեյին Վրաստանում Վահրամ (Բահրամ) Պահլավունու մասին» (ibid.)\*:

\* Տես հատուկ գրականութիւնն այս առթիվ Կ. Կատանևաճց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը. Ալեքսանդրապոլ 1910, էջ 40. Н. Марр, Грузинский извод сказки о трех остроумных братьях из «Русудавани», — «Восточные Заметки», Спб. 1895, стр. 228. Գալցե, Вступительные и заключительные строфы Витязя в баревой коже Шоты из Рустава [«Тексты и Разыскания по армяно-грузинской филологии», XII], Спб. 1910, стр. XXXVII—XXXVIII и прим. 1. стр. XXXVIII: Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր այստեղ մրկույն թողնելու չե Թ. Փարպեցվոյի (Բրոնիկաներ, I, էջ XXXIV) անհեթեթ կարծիքը, իբր Վախտանգ Գորգասալի պատմութեան հեղինակը վերջինիս ժամանակակից պիտի լինի և համապատասխան անցքերի ականատես:

... Վախտանյզը մաքդ ուղարկեց իր մորեղբայր Վարազաբակուրի մոտ, վորն իջխան եր Ռանուս, և՛ հազարդելով Ոսաց (Ոսեթի) արշավանքի մասին՝ ոգնու- թյուն խնդրեց նրանից... Ապա Վախ- տանյզը դիմեց Վրաց (Քարթլի) գոր- քին, և բոլորը ժողովեցան... [Յեվ]՝ հանձ- նելով թագավորությունն իր մոր Սա- [հա]կղուխտին (Սագաղուխտին)<sup>2</sup> Ովա- րանձն քերամբ հանդերձ՝ գրեց հետևյալ կտակը. «Յեթե կենդանի չվերադառնամ [պատերազմից], իմ քույր Ովարանձնյին ի կնուխյուն վերցնի Միհրանը (Միրի- րանը), վորը Վախտանյզի հորեղբոր վորդին եր Միհրանի (Միրիանի) վորդի Ռեի զարմից, վորը հայոց, (սոմեխների) Տրդատ (Թրդատ) թագավորի փեսան եր...»:

... Յեվ խնդրեց [Վախտանյզը] Պար- սից թագավորից տալ իր դուստրը նրան ի կնուխյուն: Յեվ Պարսից թագավորը տվեց նրան ի կնուխյուն իր դուստրն, վորի անունն եր Բալինդուխտ. նաև Հայքն (Սոմխիթը) և Կովկասյան բոլոր թագավոր[ություն]ները տվեց նրան ոճիտ: [Յեվ] նամակ գրեց նրան, վորի մեջ ասված եր հետևյալը. «Որմիդդ ամենայն արքայից արքայի առ Վախ- տանյզ՝ Վարանխորով-թանգն՝ տասն թագավորների ակոյանին: Յեվ պատ- վիրեց նրան կովիկ [Բյուզանդացվոց] կայսեր դեմ, վորովհետև կայսրը պա- տերազմ եր սկսել պարսից հետ:

Ապա Վախտանյզը հազորդեց իր բո- լոր զորքերին և Կովկասյան բոլոր թա- գավորներին, և սրանք ժողովեցան և կանդ առան Կուր [գետի] հայնկույս և հասկույս՝ ընդամենը յերկու հարյուր հազար: Յեվ նրան, Պարսից թագավորի հրամանով, միացավ նրա մորեղբայր Վարազ-Բակուրը, վորը Ռանի իջխանն եր, Ատրպատականի, Ռանի և Մովականի գորքով հանդերձ՝ թվով յերկու հարյուր

... և առաքեաց [Վախթանյզ] առ եղբայր մոր իւրոյ Վարազաբակ[ուր] խնդրել օգնութիւն ի վերայ Օսաց... Եւ ինքն Վախթանյզ ձայն տուեալ յամե- նայն Վիրտ... Եւ յանձն արար զթագա- ւորութիւնն մօրն, և թէ մեռանում, ասէ, ի պատերազմիս, աոցէ զթագաւորու- թիւնս Միհրան՝ թոռն Տրդատայ, ա- ւեալ զքոյր իմ Ոորանձէ ի կնութիւնս:

... Եւ խնդրեաց [Վախթանյզ ի թա- դուստրէն Պարսից] զդուստր նորա իւր ի կնութիւնս... Եւ թագաւորն Պարսից տեսեալ զաջողութիւն նորա, ետ նմա զդուստր իւր Բալինդուխտ, և դեառն Կովկասու ի հրամանս նորա. և զրեաց զնախերգանս թղթոյն աւսպէս. ՅՈՐՄՈՂԷ Ծահիջանայ (ուղիղ՝ Ծահինջահէ) առ Վախթանյզ Վարանխորովթանդ, տխո- յեան տասն թագաւորաց՝ խնդալ: Արա- րի զոր խնդրեցերն. այլ զօրացիր և քաջ լե՛ր՝ կալով ընդդէմ Յունաց, առեալ զքեռին քո ընդ քեզ:

Եւ արար Վախթանյզ հանդէս զօրաց երկուհարիւր հազարաց, և ել ընդ Հայս, զի և նոքա ևս առեալ էին զնոյն պատու- էր: Եւ ելին նախարարքն Հայոց ընդ նոսա՝ Տրդատ Արշակունի և Արե Սիւ- նեաց տէր և Ջուանքեր (ուղիղ՝ Ջու- անյեր) Վասպուրականի և Համաղասոյ Տաթուռոյ, Գրիգոր և այլքն ընդ նոսա. և չոգան ի Կարախուրուա, և թողին ի վերայ նորա իջխանս երկուս՝ երկու-

հազար հեծյալ... [Յեվ] արշավանքի յելալ Վախտանյզն ընդդէմ Հունաց (Հունաստանի) և հասավ (ընդդուրմ՝ հասան) Հայք (Սոմխիթ). և Պերովկա- փարուս, ուր բերդ եր կառուցել վերո- հիշյալ Պերովքը, նրան միացան Հայոց (Սոմխիթի) իջխանները՝ Սյունյաց Արևը, [Վ]ասպուրականի (Ասփորագնեցի) Ջու- անյերը\*, Տարոնեցի [Հ]ամաղասուր, Գրիգորաշեն քաղաքից Տրդատը (Թըր- դատը\*\*)՝ Մեծն Տրդատի (Թրդատը\*\*) զարմուցն: Յեվ [բոլորը միասին] մոտե- ցան քաղաքին\*\*\*, վոր կոչվում եր Կարախուրուա, այժմ Կարնոյ\*\*\*\*-քաղաք սնվանյալը: Յեվ կովում էյին նրա (Կա- րախուրուա) դեմ, ոսկալին զրավիլ այն չկարողացան, քանի վոր վերջինս յերեք շաբթ՝ բարձր պատերով եր [չբացատ- ված]: Յեվ թողեց [Վախտանյզն] այն- տեղ յերկու իջխան [յուրաքանչյուրը] տաներկու հազար [հեծելա-]զորքով՝ այն քաղաքն պաշարելու համար: [Իսկ ինքը] Վախտանյզը գնաց դեպի Պոնտոս և ճանապարհին ավերից յերեք քաղաք- ներ՝ Անձիանձոր\*\*\*\*\*, Յեկեղեց (եկ- լեց) [և] Խաստեր\*\*\*\*\*: ... [Յեվ] Վախտան ղը Հայոց (Սոմխիթ) զորքին և [առհա- սարակ] բոլոր զորքերին պատվիրեց, վոր կրոնավորներեց վոչօքի չսպանեն, այլ [միմյալն] դերձ վերցնեն. [ապա] ասաց. «... Առաջին ընդդուրումը թագավորների միջև յեղավ Անձիանձորում, ուր այժմ գտնվում է մեծն վարդապետ Գրիգորի՝ գերեզմանը... իսկ դուք, Հայք: (Սոմխիթի) ընակընդհարու, Արշակունյաց բզեզիս (պարտի- ախշ) Բյուրատայանք, միթե չեք հիշում Գրիգոր Պարթևը ու նրա հակառակորդ- ները՝ զործերը, ընչպես Տրդատ \*\*\*\*\*

տասան հազար հեծելօք՝ պատերազմել- ընդ նմա, ուր է Կարնոյ քաղաք. և չո- գան ընդ միջերկրայս մինչ ի Պոնտոս, և առին երևս քաղաքս: Եւ պատուէր ետ Վախտանյզ զօրացն մի զոք սպա- նանել զանօրինացն պարտն (ուղիղ՝ զկրօնաւորացն [ղան] պարտն), որք Քրիս- տոսի յերկրպագութեան իբրև զմեզ: Քանզի հաւն իմ յորժամ ել ընդ Պար- սից թագաւորին ի Յոնյս և հասին մինչև յԱնձիանձուր, ուր դերեզման սրբոյն Գրիգորի է... Եւ մեծն Տրդատ թագա- ւորն Հայոց պատուհասեալ ի Տիառնէ, վասն տանջելոցն զտուրը Հուսաւորին և զսուրբ տիկնայսն, և ծանուցեալ զՔրիստոս՝ ոչ յաղթահարեցաւ յուսմքէ մարդոյ. զոր դիտէք դուք իսկ, քաջք Հայոց, թէ որպէս հակայն և նշանաւորն յամենայն ազգս Տրդատ՝ թիկամբբ բռնաբրկեալ՝ շինէր տուն աստուծոյ... Եւ թողեալ [Ներքովթեանք] զքաղաքն և զառտարակն՝ զոր շինէին, գնացին յաջխարհն իւրեանց. Թորդոմ ի Թոր- դոմեանսն, Սիւրոն ի Սիւրէթ, Բերձեանք ի Բերձանս, Յոնյք ի Յունէթ, Ազ և Մագ՝ յԱրձադուդէթ (ուղիղ՝ Գաւգ և Մագ[ոգ]՝ ի Գաւգամարդեթ), Պարսք ի Պարսս, և այլք յայլաւ...

\* Var. Ջունքեր. հմմ. 148 յեր.\* ծանոթի,  
\*\* Var. Թարդատը:  
\*\*\* Var. Քաղաքաբերդին:  
\*\*\*\* Var. Տարնո:  
\*\*\*\*\* Var. Անձրձոր, Անձորիթ:  
\*\*\*\*\* Var. և Ստեր (դա ստերի):  
\*\*\*\*\* Var. Մըրդատ

Արշակունյաց\* Թագավորն ամբարտա-  
 վանութունից զլորվեց և խող դարձավ,  
 իսկ Գրիգորը նրան [քրիստոնյա] դարձ-  
 րեց<sup>5</sup>, և այնուհետև յեղավ նա յեկեղե-  
 ցիների սպասավոր (մշակ), և մեծ յե-  
 կեղեցի կառուցեց Տրդատը (Թրդա-  
 տը)\*\* իր թիկունքով, քանի վոր նա  
 հսկա յերս... Իսկ [Ներբությանները] բո-  
 լորը թողեցին այն քաղաքը և տվեց  
 հնդկերեն խոսողներին Հնդկաստանը,  
 սինդացիներին՝ Արնդը, հռոմայեցիներ-  
 րին՝ Հռոմը, հույներին (բերձեններին)<sup>3</sup>  
 Հունաստանը, Գոգ և Մագոգին՝ Մա-  
 գոգքը (քնազրում՝ Ագ և Մագոգին՝  
 Մագոգիթը), պարսկներին՝ Պարսկաս-  
 տանը և այսպես Ներբութի որոք յԹը  
 լեզվով եյին խոսում<sup>6</sup>...»:

Յեվ զարթելով քնից՝ Թագավորը  
 փառաբանեց աստծուն... և դիմեց [իրեն  
 մոտ գտնվող Գրիգոր աստվածաբանի  
 աշակերտներ Պետրոս քահանային և  
 Սամվել մոնոզոնին, ասելով] «...Տես-  
 նում ենք\*\*\*, վոր Պարսից զորքն ավելի  
 շատ է, քան թե Հայոց (Սոմխիթի) և  
 Վրաց (Քարթլիի) զորքերը, և մեր մեջ  
 չկա վոչոր Հշմարիտ հավատացյալ [այն  
 հավատքը], վոր սերմանեց մեր հայր Միհ-  
 րանը ((Միհրանը) կամ՝ մորով ըմ ազ-  
 դական ճրդատը (Թրդատը)\*\*\*\*... Ապա  
 [Վախտանգ] Թագավորը դրմեց իր մոր-  
 եղբորն ու բոլոր Թագավորներն՝ ասե-  
 լով. «Բանակ հաստատենք ծովից դեպի  
 հարավ\*\*\*\*\*, վոր պեսզի մենք յեղբ ունե-  
 նանք աղետուց և խնդությունից» [Յեվ]  
 նա հանեց այն զորքը յաղաքի շրջա-  
 պատուց, և անցան հինգորյա ճանապար-  
 հով դեպի հարավ\*\*\*\*\* և կանգ  
 առան Սպերի շրջանում...»

\* Var. Արթակունյաց. հմմ. 148 յեր. ծանոթ.:  
 \*\* Var. Թարդատը:  
 \*\*\* Var. Գրտենք:  
 \*\*\*\* Var. Թարդատը:  
 \*\*\*\*\* Var. Դուպի Հայք (Սոմխիթ):  
 \*\*\*\*\* Var. Դեպի Հայք (Սոմխիթ):

... Ապա փող փչեցին, և դուրս յելան  
 ամբողջ Հայքը (Սոմխիթը) և Պարսիկք  
 և Դարբանդի Թագավորը...

Յեվ վերադարձավ Վախտանգը [Հու-  
 նաստանից] Կղարջքի (Կլարջիթի) ճա-  
 նապարհով, իսկ իր զորքը թողեց Հա-  
 յոց (Սոմխիթի) ճանապարհով...

Յեվ յերեք տարուց հետո Պարսից  
 Թագավորը պատերազմի յելավ Վախ-  
 տանգի դեմ... իսկ Վախտանգը մարդիկ  
 ուղարկեց հույների (բերձեններ) մոտ՝  
 հաղորդելով հետեյալը. «...Ահա պար-  
 սիկները՝ թվով մոտ յերեք հարյուր  
 հազար՝ նիրս խուժեցին Վրաց (Քարթ-  
 լիի) սահմանները. թեև նա (պարսից  
 Թագավորը) հուսով էր, վոր Հայոց (Սոմ-  
 խիթի) և Կովկասյանների Թագավորների  
 զորքով ևս կուժեղանա, սակայն վեր-  
 ջինները հանձն չառան նպաստելու  
 նրան, քանի վոր նրանցից վրձանք հա-  
 վատարիմ եյին խաչեցյալին, իսկ վո-  
 մանք սատանայի դրդամաք (սատանա-  
 յից հաղթահարվելով) Դարբանդի Թա-  
 գավորին միացան...»:

Յեվ ընդլայնացրեց Վախտանգը  
 Մոզվթա<sup>7</sup> [կոչված] կամուրջն իբր  
 վաթսուն կանգուն՝ նրանով զորք անց-  
 կացնելու համար: Յեվ ինքը Թագավորը  
 և Ջուանշեր\* սպարապետը կանգ առան  
 Մցխեթում, իսկ Նասր և Միհրդատին  
 (Միհրդատին) թողեց Հայոց (Սոմխիթի)  
 և Վրաց (Քարթլիի) զորքի հետ, վորոնք  
 կանգնած եյին Արմազի մոտ<sup>8</sup>...

... Յեվ չորս ամիս շարունակ նրանց  
 (վրաց և պարսից) միջև տեղի ուներ  
 սաստիկ պատերազմ. ապա [վրաց մոտ]  
 հասավ կայսեր դեսպանը, վորը մատու-  
 ցեց Վախտանգին ընծաներ և հասցրեց  
 սւթսուն հազարանոց հեծելազորք հույ-  
 ներից (բերձեններից), նաև կայսեր դերն  
 առ Վախտանգ, ուր ասված էր. «Վի-  
 րադառնալով պատերազմից ընդդեմ խա-  
 կանի, ահա ուղարկում եմ քեզ ութ-

\* Var. Ջուանքեր. հմմ. 148 յեր.\* ծանոթ.:

...նւ ինքն (Վախթանգ) Հայոք և  
 Վրոք առանձնացաւ նւ մարտեան Պարսք  
 և Կովկասեանք ընդդէմ կայսեր...

սուն հաղարանոց հեծելագործը և դրել  
եւմ Լեոնին՝, վոր՝ յիթե կարիք ունե-  
նաս գործի, քո առաջն ե Մելիտիոսից \*10  
սկսած մինչ Համդե \*\*11 և զեպի վեր  
մինչ Կարնո-քաղաքը, և հրամայել եւմ  
Լեոնին լինի քեզ մտտ»:

... Յեզ տվեց Վախտանգն ի կնու-  
թյուն պարսկեց թագավորին իր քույրն,  
վորի անունն եր Միհրանդուխտ և վո-  
րին զերի եյին վերջրել ոսերը, իսկ  
Վախտանգն աղատել եր: Յեզ Խվաման-  
ձեյին շտվեց այն պատճառով, վոր վեր-  
ջինս գրավ եր Հայոց (Սոմխիթի) բռնախի  
(պիտիախի) մտտ...:

Յեզ Վախտանգի հրամանատարու-  
թյան ներքո ժողովվեց հիսուն հազար  
ընտիր հեծելագործ՝ հույնը (քիւրձներ),  
վրացին (քարթլին) և հայը (սոմխիթի)\*\*\*:

Յեզ Պարսկաստան մանկուց ութե-  
րորդ տարին Վախտանգ թագավորը  
հասավ Անտիոքի, ապա յեկավ Ուր-  
հա... Յեզ Վախտանգը վողջ և առողջ  
գտավ իր մորն ու քրոջը. իսկ [նոս  
գործը] հասավ մինչ հունաց (քիւրձնե-  
ներ) և հայոց (սոմխիթի) սահմա-  
նագիծը...:

Յեզ [հունաց] թագավորը մեծամեծ  
ընծաներ ուղարկեց Վախտանգ թագա-  
վորին, նաև ի կնություն տվեց նրան  
իր գուտար Հեղինեյին, վորին [և] ու-  
ղարկեց մեծ գործով հանդերձ մինչ  
Հայքի (Սոմխիթի) սահմանները, ուր  
[հույներին] զիմավորեց Վախտանգ թա-  
գավորը. ապա հունաց (քիւրձներ) թա-  
գավորը վերագարձավ, իսկ նա (Վախտան-  
գը) յեկավ Մցխիթի...:

... Յեզ նստեց ինքը Վախտանգն  
Ուջարմոյում, վորը մեծ կառուցվածք-  
ներով զարդարեց, և իր քույր Խվարան-  
ձեյին ի կնություն տվեց Հայոց (Սոմ-  
խիթի) բռնախի (պատիախ) Բակուրին...:

\* Var. Մելիտից:

\*\* Var. Բնագրում՝ Լամդե (sic): Ըստ յերևույթին առաջացած է յեկեղե-  
ցական վրացիերենում eho և «լ»-ի շփոթությունից, վորոնք իրար նման են:

\*\*\* Var. հույները (քիւրձներ), վրացիք (քարթլիներ) ու հայերը (սո-  
մխիթի):

Իսկ հունաց (քիւրձներ) թագավոր  
[Լեոնը]՝ Վախտանգի աները՝ մեռավ, և  
թագավոր նստեց նրա վորդի (sic) Ջե-  
նոնը<sup>12</sup>, վորը գեպի Սպեր ուղղվեց Գարթ-  
լի գալու նպատակով: Յեզ՝ լսելով [Վախ-  
տանգ] Գորգասալի ծանր վիճակը՝ նա  
կանգ առավ Կարնո-քաղաքում: Այնտեղ  
դիմեց և [պարսից] Խոսրով (Խվամար)  
[թագավորը]: Խոսրովն (Խվամար) ու  
կայսրն [իրար հետ] կովեցին Կարնի-  
փորում, ուր մեծ կոտորած յեղավ յեր-  
կու գործիցն ել, վորից արյան յերկու  
հոսանք կազմվեց. և այդ պատճառով ել  
այն Կարնիփորա<sup>13</sup> կոչվեց:

... Ապա Վախտանգը՝ զպստով իր  
մահ [վան մերձեցումը]՝... գիմեց իր վորդի  
Դաչին. «Դու իմ անգլորանիկ վորդին  
ես. քեզ եւմ տալիս իմ թագավորության  
թագը, իսկ քո յեղբայրներին բաժին  
եւմ հանել Տասիսիսից<sup>14</sup> և Մունդից<sup>15</sup>  
սկսած մինչ Հայք (Սոմխիթ) և Հու-  
նաստան...»:

... Յեզ մեռավ Փարսմանը, և թագա-  
վոր նստեց նրա վորդի Բակուրը... Յեզ  
սրա որոք Պարսկաստանում թագավո-  
րում եր Ուրմիզդ կոչեցյալը, իսկ Հայ-  
քում (Սոմխիթում) կար մի իշխանաց  
վորդի Վազգեն (Վասքեն) անուն, վորն  
սմուսնացած եր իշխանագն Շուշանիկ  
կոչեցյալի՝ Վարդանի դստեր՝ նուս Սա-  
կայն սատանան տիրեց այս Վազգենին  
(Վասքենին) և միտք հղացրեց կրակա-  
պաշտ դառնալու: [Յեզ Վազգենը] պնաց  
պարսից թագավորի մոտ և հրամար-  
վելով քրիստոնեյական կրոնից՝ դարձավ  
կրակապաշտ: Իսկ պարսից թագավորը  
յեւ ուղարկեց նրան (Վազգենին) մե-  
ծամեծ ընծաներով [նշանակելով նրան]  
Թանի իշխան: Յերը նա (Վազգենը) վե-  
րագարձավ, նրա կին Շուշանիկը նկա-

Յայնմ ժամանակի մեռաւ կայսրն  
Յունաց, և թագաւորեաց Ջենոն որդի  
(sic) նորա, և եկն օգնել Վախթանգայ.  
և հասեալ ի Սպեր՝ լուաւ զբոթ վիրա-  
ւորելոյն ի մահ զՎախթանգայ, և դար-  
ձաւ ի Կարնոյ քաղաք ..

Եւ մեռաւ Վախթանգ, յուով պատուի-  
րանաւ՝ որդւոյն՝ Դաչի, որոյ եւս զթա-  
գաւորութիւնն...

... եւ եւս Վախթանգ զքոյր իւր Միհ-  
րանդուխտ՝ թագաւորին Պարսից Խոս-  
րովու ի կնութիւն. զի միւս քոյրն  
Խորագնէ՝ առ Հայոց Պատիախոյն  
(ուղիղ բռնախի) զրաւ էր...

Սե եկին ի սահմանս Հայոց և Յու-  
նաց...

... եւ նստաւ Վախթանգ ի յՈւջար-  
մա, ու զԽորանձէ՝ զքոյր իւր գաւաղ՝  
եւ ի կնութիւն Հայոց բռնախի՝ Բա-  
կուրայ:

\* Var. + ... Սուրբ Անտոն [Միջագետցին] [խոսքը Անտոն Մարտոզոփե-  
լու, այսինքն Մենակյացի մասին և. Ն. Մ.-Բ.) հարցուփորձ արավ իր ուսուցչի  
ուղի [ի մասին], և սովորեց ճշմարտան, և իմացավ, վոր նա (ուսուցչիը՝ Հովհան  
Ջեղազնեցին) պնացել է Հայք (Սոմխիթ), վորը հյուսիսումն է:

տեց, վոր իր ամուսինն ուրացել է քրիստոնեական կրոնը, այլևս չեր խոնարհվում նրան իբրև ամուսին, և մոռացության ավեց սերն առ իրեն ամուսինն, և վողջ սրտով նվիրվեց Քրիստոսին՝ նրա պատգամները կատարելու համար: Ապա Վազգենն (Վասքենն) ամենայն ճիգ ու ջանք գործ դրեց [վերադարձնելու սերը]՝ նախ շողոքորթությամբ և աղերսանքով ու ընծաներ տալով: ապա յենթարկեց նրան (Շուշանիկին) մեծամեծ տանջանքներ: թեև սուրբ Շուշանիկի վարքը չկարողացա [նկարա]գրել վարքաբանության ընդարձակ լինելու պատճառով<sup>16</sup>. [Ե վ.բջո] նա սպանվեց իր ամուսին Վազգենն (Վասքենն) իշխանից... \*17

Ապա վրայ բակուր թագավորը դիմեց Վրայ (Քարթլի) բոլոր իշխաններին և՛ դադանաբար զորք ժողովելով՝ դադատողի յիլավ Վազգենի (Վասքենի) դեմ: Իսկ Վազգենը (Վասքենը) կանգնած էր դաշտից դուրս, Կուր [գետ]ի ափին, ուր Անակիրտ \*\* 18 դեռ մրանում էր վերջինիս, հարձակվեց նրա վրա և՛ կալանավորելով նրան՝ մաս-մաս արավ նրա մարմինը, վորն ապա ծառից կախեցին: Իսկ սուրբ Շուշանիկի մարմինն առանձին մեծարանքով բերին և թաղեցին Տոլա]րտավում<sup>19</sup>...

... Ապա պարսիկները՝ դրավելով ամբողջ Քարթլին, Հայքը (Սոմխիթն) ու [Վ]ասպուրականը (Ասփուրականը)՝ սկրոնցին պատերազմել հույները (բարձեններ) դեմ...

... Հերակլ կայսրն հկավ [Քարթլի] և մոտեցավ Տփլիսին...

... Ապա Հերակլ կայսրը Մանգլիսից և Երուզիթլից<sup>20</sup> տարավ մեր տեր Հիսուս Քրիստոսի վոսնիլի տախտակները և բնանները, վոր կոստանդիանոս նոս Մրհրանայ թագաւորն...

\* Var. Ռանի իշխանից:

\*\* Var. Անակիրտ:

[կայսրն] եր տվել Մրհրան (Միրիան) թագավորին...\*

Իսկ այդ պահին ապականյալ եր Քարթլիի, Հայոց (Սոմխիթի) և Ռանի յերկիրնեքը, քանի վոր վոչ մի տեղ այլևս չկար վոչ շինություններ և վոչ էլ ուտելիք մարդկանց և անասունները համար<sup>21</sup>...

... Ապա Արշիլ թագավորը կանչեց [իրեն մոտ] Քարթլիի բոլոր իշխաններին և նրանց հանձնեց իր [հանդուցյալ] յեղբոր՝ Մրհր<sup>22</sup> թագավորի՝ վորդոց. մեկին տվեց հորեղբորդի Գուրամ Կուրապալատին, վորը տիրում էր Կղարջին (Կլարջիթին) և Ջավախքին (Ջավախեթին), իսկ մյուսին՝ Գերոզի ազգական բղեշխուն (պիտիախուն), վորն ընտրում էր Թուրքում (Թրալսթում), Տաշիրում և Արոցում \*\* յերբորդն՝ Երեսես (Նիւսես) Ներսիանը, վորը Վախտանգ թագավորի ընտրյալն էր...

... Ապա նրա (Արշիլ թագավորի) մոտ յեկավ վոմն իշխան, վորը Դավիթ մարգարեյ, սերնդիցն էր, Ատրնբրսեհ (Աղարնասեհ) անուն, Ատրնբրսեհ (Աղարնասեհ) կուրբ յեղբորորդին, վորի հայր ինամուրացի էր Բազրատ[ա]նյանները հետ և նշանակված էր հույներուց (բերձեններից) Հայոց (Սոմխիթի) կողմանց իշխան. սա [Մուրվան] Ոռլի արշավանքի ժամանակ Գուրամ Կուրապալատը վորդոց մոտ էր անցել Կղարջ (Կլարջիթ) ու մնացել այնտեղ՝ ձեզ ա, ս Ատրնբրսեհը (Աղարնասեհ) ինդրեց Արշիլը... տալ նրան [վորեկ] յերկրք և [Արշիլը] տվեց նրան Շուլավին \*\*\*<sup>23</sup> ու Արտահանը (Արտանը)...

... Իսկ արաբացիք (սարկինոցները) ուժեղացան Ռան յերկրում և տրեցին Դաղլըին և Հայքին (Սոմխիթին)<sup>24</sup>...

\* Var. + ... Մուրվան Ոռլը դերեց Հունաստան և Հայաստան (Սասոմ-իսթո) յերկիրները մրոչ ծովը...

\*\* Բնագրում՝ Արոցում. հմմ. 148 յեր.՝ ծանոթ:

\*\*\* Var. Շուլավիրը:

Յաւուրն յայնոսիկ իշխան ոմն ի տանէ Դաւիթ մարգարէի, Աղբնաս կոչեցեալ, եկն առ Արշիլն, որ լեալ էր ի Հայս, և գերեալ որդւովքն յայլազգեացն, և գերծալ անտի՝ ինդրէր ի նմանէ տիլի բնակութեան. և ետ նմա դիտիչա և զՇողեք և զԱտոնէ: Եկին և ի Տար[ո]նոյ եղբարք երեք և բնակեցան մինչև ցՊաղգաղ՝ հրամանաւ Արշիլն...



Ատրնեբոսին (Աղարնասի) Կուլյրի յեղ-  
բորորգիք, յերեք յեղբայրները, վորոնք  
այրենցին հորեղբոր աչքերը, Տարոնից  
եյին յեկեկ Շակի\* ու հաստատվել  
այնտեղ Արշիլի հրամանով, քանի վոր  
Կովկասի բոլոր ծայրերը Ռանի կող-  
մից անբնակ էին դարձել, ... և յերեք  
յեղբայրները հաստատվեցին մինչ Գուզ-  
գուզ (Գուզգուզ):

Նույն ժամանակներում բղեղիները (սպախախնեղից) վոմասք, վորոնց ներս  
չթողին Կղարջը (Կլարջիթ), գրավեցին  
Տայքում (Տաոյում) մի ժայռ, վոր կոչ-  
վում էր Կալիմախ՝, և ջինեցին այն-  
տեղ ամրոց ...

... և ոմանք ի նոցանէ (յերեկելի ա-  
բանց) դնացին յերկիրն Տայոց, և դտին  
քար մի, և ջինեցին զնա ամրոց, և կո-  
չեցին զնա Կամախ (ուղիղ՝ Կալմախ) ...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վորքան առասպելական դժերով և լի Վախտանդ Գորգասալի ժամանակվա  
(V դարու) անցքերի նկարագրությունը, վորը տալիս և Ջուաճեքը, նույնքան  
իրական է նույն Վախտանդի պատմությունը, վորը՝ թեև համառոտ՝ տալիս և  
Ղազար Փարպեցին:

2. Այս Սահակդուխտ-Սագդուխտ՝ իբրև Վախտանդի մայր՝ հայտնի յե վոչ  
միայն Ջուաճեքի յերկասիրություն մեջ, այլ և Համառոտ պատմութիւն Վրաց-ի  
համապատասխան տեղերում, ուր կարդում ենք. «Եւ կլինն Միրզատայ հաւատաց  
ի Քրիստոս և մկրտեցաւ. և ջինեաց զսուրբն Սիոզիլ ի Շամշոյտէ, և էշ անուն  
նորա Սակդուխտ» (եջ 73). «Եւ մեռաւ Միրզատ, և քնաց Վախթանդ եօթնամեայ  
եւ զահի հարաւ մայր նորա Սակդուխտ ի հորէ իւրմէ՝ թէ քինախնդիր լինի վասն  
թողոյն իմ զմոգութիւնն և աւերմանն Պարսւց՝ յանէ նորա Միրզատայ»  
(եջ 74). «Իսկ Սակդուխտ վարէր զթաղաւորութիւնն կամօք հօր իւրոյ, մինչև  
մեռաւ նա. և էառ զիշխանութիւնն նորա Վարդաբակուր որդի նորա, եղբայր  
Սակդուխտայ» (ibid.): Վարդան պատմչն այս առթիւ գրում է (Հաւաքումն պատ-  
մութեան Վարդանայ վարդապետի լուսարանայ, Վենետիկ 1862, էջ 91). «Եւ տի-  
բեցին [վիրքն] ի ժովէն Պոնտոսի մինչև ցժովն Կասբից՝ մինչև ցՄիհրան, և  
ցԱրբակ (ուղիղ՝ Արշակ) թոռն իւր, որ էառ կլին ի Պարթեայ՝ Սահակդուխտ  
անուն ի Պարտաւայ. որ և ամուլ գոլով հաւատաց ի Քրիստոս, և ետ նմա գա-  
ւակ՝ զՎախտանդ, որ և Գուրգոսարն կոչեցաւ, որ է Գայտաղուխ ի Պարսից  
բառն»: Արևմտյան Վրաստանի Ռանայի նախկին գավառի ուսմաններում Ջվա-  
րիսա կոչված գյուղում 1925 թ. յերևան հանած մը ուղարկով արձաթեւ ճիւղի»  
վրացերեն յեկեղեցական գլխատառ արձանագրությունն ևս, վորը թերևս VI դա-  
րուն է պատկանում, հրատարակում է այս անունը. «Սուրբ Գրիգոր Աբանշեղա-  
գործ, քեզ ազոթող քո աղախին Սահակդուխտին պահպանիր ամենայն չարից»:

\* Var. Բակիւ հմմ. 148 յեր.\* ծանոթ.

(Գեորգ Բոնարիս, Ջվարիսայի հուշարձանը, վրացերեն — «Վրաստանի Արխիվ»,  
գ. III, Տիգ. 1927, էջ 205—208):

3. Տես այս պրակի Բ. գլխի 11-րդ ծանոթությունը:
4. Այսինքն Աստվածաբանի կամ Նազիանզեհի:
5. Հմմ. այս պրակի Բ. գլխի 18-րդ ծանոթությունը:
6. Հմմ. Լեոնտիոս Ռուխեցիւ համապատասխան ցուցմունքը Քարթլիում  
յերբեմն վեց լեզուները գործածության մասին («Այլ և այլ դեպքեր «Նազրայ»  
արշավանքների շրջանից» հատվածում):

7. «Մոզու»-ի «մոգվ»-ի մագ բառից. հմմ. նույն արձատից կազմված  
«Թ-մոգվ-ի» բերդի անունը (հայերեն արդի ֆոլկլորում «Թմրուկ»-«Թմբկա-  
բերդ»-ի վերածված):

8. Մյսիսթի և Արմազի հակադրության մասին տես մանրամասն. Ա. Ме-  
ликсет-Бекоев, В поисках Страбоновой Севсаморы, Тифлис 1917, стр. 3—4:

9. Հուսայ գորպակտի անունն է, վորին Վախուշադ (XVIII դ.) պատրիկ  
է կոչում, իսկ «Համառոտ պատմութիւն Վրաց»-ը (էջ 86, 89)՝ «գորպակուխ»:  
Հմմ. M. Brosset, Histoire de la Géorgie, t. I, p. 179 et n. 1:

10. Միլիսա-Մալատայի մասին տես. Y. Sandaljian, Les inscriptions  
cupéiformes Urartiques, Venise 1900, p. 396, И. Мещанинов, Халдоведение,  
Баку 1927, стр. 22, 24, 34, 36, 167:

11. Հմմ. M. Brosset, ibid., p. 179, n. 2:
12. Այստեղ Ջուաճեքը շինթած է Հուսայ (Բյուզանդական) կայսրների  
ճննդաբանությունը:

13. Այսինքն «Կարմիր փոր». հմմ. M. Brosset, ibid., p. 199, n. 2:
14. Այժմյան Բորջոմի կովտը:
15. Կոմուրդո դյուղից ցած, Կուրի կովտում:
16. Ակնարկում է Հակոբ յերեցի (V դ.) կազմած «Ս. Շուշանիկի վկա-  
յաբանություն» վրա, վորի մասին մանրամասն տես մեր աշխատության այս հա-  
տորի առաջին մասի Ա. գլխում:

17. Տես նույնտեղ:
18. Անհայտ է:
19. Ցուրտավի մասին մանրամասն տես նույնտեղ 6-րդ ծանոթությունը:
20. Երուշեթը նույն Արտահանն է. հմմ. «Ե-րուշ-եթ»-Ռոտ-ուն-իք Agas-  
ton-ի հետ (H. Marr, Надпись Сардура II, сына Аргистия в Даш-Керпи  
на Чалдырском озере [Записки Кавказского Музея, Серия В.—I], Пгр. 1919,  
стр. 7, 15, 36, 38):

21. Այս արդացի մեկնությունը տես՝ Իվ Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի  
պատմությունը, վրացերեն, II, Տիգ. 1914, էջ 352:

22. «Միհր», «Միհրան», «Միհրդատ» ևլն անունների մասին տես. Լ. Մե-  
լիքսեթ-Բէկ, Արտուազդ և Մհերի հետքերը Վրաստանում,—«Բանբեր էջմրածնի  
Գիտական Ինստիտուտի», գ. I—II, էջմրածին 1921—1922, էջ 98—104. Թաղէոս  
Աղայրեզեցան, Միհրը հայոց մէջ [«Ազգային Մատենադարան», Ճի]. Վիեննա 1929:

23. Հատ յերևույթին, Արտահանին սահմանակից մի վայրի (գավառի) ա-  
նուն է, վորին հանդիպում ենք նաև արևելյան Վրաստանում (նախկին Բորչալ-  
վում, այժմյան Շահումյանը), նաև հարավային Ոսեթում, վերջինում «Շուշաուր»

և «Շեկուր» ձեռքով. հմմ. Ա. Меликсет-Беков, К археологии и этнологии Туальской Осии,—сборник «Юго-Осетия», Тфл. 1925, стр. 260, 276:

24. Ջուաթըրի տեղեկությունն արաբական արշավանքների մասին, ըստ Իվ. Ջավախիշվիլու («Վրաց ժողովրդի պատմությունը», II, 1914, էջ 351), «վերաբերում է VIII դարու առաջին քառյակի անցքերին և վոչ թե արաբացվոց առաջին արշավանքի պատմությանը»:

25. Կալմախ-Կամախի մասին մանրամասն տես. Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вишаны, Ленгр. 1931, стр. 19—21 (ն. Մառի հոդվածը):

Դ.

## ԱՆԱՆՈՒՆ (XI Դ.)

### „ՎՐԱՑ (ՔԱՐԹԼԻ) ՄԱՏՅԱՆԸ“

Քարթլիս-ցխորեբայի Մարիամ Թագուհու վարիանտում «Արչիլ Թագավորի վկայաբանությունը», ինչպես նախորդ (Գ-րդ) գլխի ներածականում տեսանք, կցված է մի հիշատակարան, ուր, ի միջի այլոց, ասված է, վոր Վախտանգ Գորգասալի պատմությունը գրել է Ջուանշեր Ջուանշերյանը, «իսկ այսուհետև թող գրեն յեկող սերունդներն՝ ինչպես դիտեն»։ Այդ հիշատակարանին անմիջապես հետևում է մի նոր՝ բավականին ընդարձակ՝ յերկասիրություն, վորը հասնում և մինչ «Դավիթ» արքայից-արքայի պատմությունը։ Այս յերկասիրությունը, ճիշտ է, վերնագիրը չունի, և վոչ էլ նրա հեղինակի անունն է հայտնի, սակայն ինքնըստինքյան պարզ է, վոր այստեղ մենք գործ ունինք մի նոր գրվածքի հետ, վորը տալիս է մեզ Վրաստանի անցյալի նկարագրությունը սկսած VIII դարուց և մինչ XI դար (Գեորգ II-ը) և, իբրև XI դարու յերկասիրություն, անշուշտ, ծանոթ է յեղել «Դավիթ» արքայից-արքայի պատմության» հեղինակին XII դարու առաջին կեսում, վորն՝ ոգտագործելով այդ յերկասիրությունը՝ «Վրաց (Քարթլի) մատյան» (մատիանե քարթլիսա) յե կոչում այն։ Յեվ այս հիման վրա Իվ. Ջավախիշվիլին (չին վրացական պատմական գրականությունը, բ. հրատ., էջ 200) նպատակահարմար է գտնում այս գրվածքը հենց այդպես էլ կոչել՝ «Վրաց (Քարթլի) մատյան» (մատիանե Քարթլիսա):

Անանուն հեղինակը, անտարակույս, XI դարու գրող է։ Սա յերևուս է նրանից, վոր իր յերկասիրության մեջ նա քանի հեռանում է VIII դարուց և մոտենում XI-ին, ավելի և ավելի ընդարձակ կիրպով է նկարագրում այլ և այլ անցքերը, իսկ իրեն ժամանակակից դեպքերի մասին պատմում է ամենայն մանրամասնությամբ և բարեխղճությամբ:

«Վրաց (Բարթիլի) մատյանը» գրաված ունի Ե. Թաղ՝ այսպիսի ու հրատարակուելու մեջ 216—280 եջերը, իսկ *M. Brosset-ի*՝ 184—236 եջերը (ըստ Ն. Մառի միմիայն 184—200, քանի վոր Ք. Ց. հրատարակուելու են այդ 200 յերեսով առհասարակ ընդհատված են), վորին համապատասխանում է նույն *M. Brosset-ի* Փրանսերեն թարգմանության 256—345 եջերը և «Համառու պատմութիւն Վրաց»-ի 104—114:

[ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ <sup>1</sup>]

... Յերկար տարիներ անց [արաբացիներին Տփղիսը գրավելուց հետո՝ Տփղիս՝] յեկավ հազարացվոց ամիրան, վորն իշխում էր Հայքում\*, Բարթիլում, Հերքում (Հերեթում)՝ Պոսրով (Պլասրո) անուն, վորը խաղարներից ավերած Տփղիսը<sup>2</sup> [վերա]շինեց...

Յեզ նրանից հետո յեկավ Պալիլ Յեզիզի (Իզիզի) վորդի՝ արաբացին, վորը դրավեց Հայքը (Սոմխիթը), Բարթիլն և Հերքը (Հերեթը)<sup>3</sup>...

Ապա յեկավ Բուզա\*\* թուրք սորուկը Բաղդադից, վորն մեծ զորքով հանդերձ ուղարկել էր ամիր Մուսլը. սա ավերեց ամբողջ Հայքը (Սոմխիթը) և դերեց նրա բոլոր իշխաններին, ապա՝ [մտնելով Բարթիլի՝] մոտեցավ Տփղիս քաղաքին, քանի վոր վերջինը նրան չեր հպատակվում, և սպանեց Տփղիսի ամիրա Սահակին. և ավերեց Տփղիսը և... Իսկ Աբուլ-Ալաս (Աբուլբազ) հայոց (սոմեխներին) իշխանն և Գուարամ\*\*\* Աշոտի վորդին\*\*\*\* հաղորդեցին իրենականներին, վորպեսզի նրան (Բուզային) [իրենց մոտ] ներս չթողնեն...

... Ապա իբրև ամիրա յեկավ Պալիլի

... Ձկնի երկերիւր ինն և տասն ամաց առաջին Մահմետի, եկն Բուզայն, վշտացոյց զերկիրն Հայոց. և հասեաց ի Տփղիս՝ սպան զՍահակ ամիրայն, զի ոչ հնազանդէր նմա...

\* Var. Հայքում abs.

\*\* Var. Շուզա. հմմ. 148 յեր.\* ծանոթ.

\*\*\* Var. + Մամփալ:

\*\*\*\* Var. + Բագրատ Կուրապալատի յեղբայրը:

վորդի Մոհսեզը\*, վորն ավելի ևս կամայականորեն գրավեց ամբողջ այս յերկիրը՝ Հայքը (Սոմխիթը), Բարթիլն և Ռանը... Յեզ ամիրա յեղավ վորն՝ Սահակի ծառաներից\*\* մեկը՝ Գաբուց անուն, [վորը]... մեծարեցաւ [հույներին] և վորին հպատակվեցին դարդբանեցիք. սա կոչում էր իր հորեղբոր որդի\*\*\* և Գուարամի յեղբայր (sic) Աշոտի հետ: Իսկ Գուարամը՝ տիրելով Չափախքին (Չափախթին), Թոնդրին (Թրիախթին), Տաշիրին, Արոցքին\*\*\*\* և Արտահանին (Արտանին)՝ կոչում էր սարկինոզների գեմ: Յեզ յերբեմն հաղթում էր Գուարամը և յերբեմն սարկինոզները. իսկ Գուարամը բաժանեց յերկրներն իր յեղբայրներին՝ Ատրներսեհին (Ադարնասեյի) և Բաղրատին միջև, և Արոցքը\*\*\*\*\* բաժին հանեց իր աներորդի (Կնոջ յեղբայր)՝ հայոց (սոմեխներին) թագավորին...

Ապա Գալիթ Կուրապալատի հետ թշնամացավ Նասրան, Գուարամ Մամփալի վորդին, վորը սույն Գալիթի հորեղբայրն էր: Իսկ այս Նասրան՝ նույն Գալիթ Կուրապալատի քեռորդին՝ և Գուրգենը ափխազներին կողմնակցեց իրն. և Գալիթն ու Լուսպարիտն ոգնում էին հայերին (սոմեխներին). և հայերն (սոմեխներն) ու ափխազները կոչում էին Բարթիլում: ... [Յեզ] ժողովեցան ընդգեմ Նասրայի հայերն (սոմեխները), և Լիսպարիտն ու վրացիք, և՛ Աշոտ՝ Գալիթի յեղբայրը, և՛ նրանց հետ սարկինոզները: ... [Ապա] Ատրներսեհ (Ադարնասե) թագավորի [կոչում նույն Նասրայի դեմ] հայերն (սոմեխներն) [ևս] նրա (Ատրներսեհի) հետ էին: ...

\* Var. Մուսեզը:

\*\* Var. Աղգահաններից:

\*\*\* Var. + Հայոց (սոմեխներին) Սմբատ թագավորի վորդի:

\*\*\*\* Բնագրում՝ Արոցքին. հմմ. 148 յեր.\* ծանոթ.

\*\*\*\*\* Նույնը:

Այն ժամանակ, [յերբ Քարթլիում իշխում էին ազատները (ազնվականները)] դուրս յեկավ Կոնստանդին փիլազաց թագավորը, վորը գրավեց Քարթլին սրան թշնամացավ հայոց (սոմեխներ) Մաբատ Տ[ի]եզերակալ<sup>6</sup> թագավորը, վորը մեծ զորքով յեկավ արշավանքի և մոտեցավ Ուփլիսցիխեյին<sup>7</sup>... և գրավեց այն. իսկ Մաբատն ու Կոնստանդինը բարվոք խնամիացան<sup>8</sup>, և [Մաբատը] վերադարձրեց նրան (Կոնստանդինին) Ուփլիսցիխեն ու ամբողջ Քարթլին<sup>9</sup>: Սրանցից հետո յեկավ հագարացվոց ամիրան՝ Աբուլ-Կասիմ անուն, Աբու-Սաջիի վորդին, արաբացին. սրան ուղարկել եր Ամիր-Մուսլին մեծ և անհամար զորքով, վորին յերկիրը չեր տեղավորում նա նախ մտավ Հայք (Սոմխիթ) և ավերեց ամբողջ Հայքը (Սոմխիթը), Սյուլնիքը, Վայոց-Ձորն ու [Վ]ասպուրականը (Ասիուրադանը): Չդիմանալով նման ավերածութանը՝ Մաբատ հայոց (սոմեխներ) թագավորը փախուստի դիմեց և ուղղվեց Ափխազաց լեռների կողմը, և այնտեղ ել մնաց: Յեվ [Աբուլ-Կասիմ] Աբու-Սաջիի վորդին յեկավ Տըփղիս, ուր ամիրա յեր Ալիի վորդի Ջափարը, ... ապա մտավ Քարթլի և ավերեց Քարթլին, ... այնտեղից մտավ Սամցխե, և ավերեց Սամցխեն ու Ջավախքը (Ջավախեթը), ապա մոտեցավ Թմոզվիի բերդին<sup>10</sup>. տեսնելով վերջինիս անսուիկ և ամուր դիրքը, այնտեղից քաշվեց և յեկավ Ղվիլիի մոտ, վորը սկսեց պաշարել: Նրա (Ղվիլիի) մեջ եր մի պատանի՝ Գորբոն անուն... վորին կալանավորեցին և նահատակեցին, և վորի վկայաբանութիւնը մանրամասն գրած ունի մեր սուրբ հայր Ստեփան Տրեթի (Ստեփանե Մաբեվարի) յեպիսկոպոսը<sup>11</sup>, [Ապա Աբուլ-Կասիմը] այնտեղից [ել] քաշվեց և գնաց Դվին քաղաքը. իսկ այնտեղ նրան լուր հասցրին, վոր Մըմբատ թագավորը մտած էր Կապույտ (Կապոետ) բերդը, իսկույն և յեթ տեղից

...ի ժամանակ Մաբատայ՝ Հայոց արքայի տիեզերակալի, որ մարտ եղիալ ընդ Կոնստանդինայ՝ թագաւորին Ափխազաց՝ էառ զՔարթլ և զՈւփլիսցիխէ. և դարձեալ հաղտեալ՝ խնամիք եղեն, և դարձոյց անդրէն: Յաւուրսն յայնոսիկ եկն Բուլկասիմ (ուղիղ՝ [Ա]բուլ-Կասիմ)՝ զօրապետն Սարակինոսաց՝ ի Հայս, և ապա ի Տփիսիս... և... անդէն ի Դուլին: Եւ Մաբատ արքայն Հայոց խոյս ետ ի նմանէ, և եկն շրջէր ի լերինս Ափխազեթայ. իսկ բռնաւորն սպասէր նմա, քանզի պերճացեալ էր յաղթութեամբն Վրաց. քանզի առեալ էր զամենայն Քարթլ, և յուրով բերդս, զԹմօք և զՊուլիլա, յորում եսպան զգեղեցիկ և զքաջ մանուկն Գորբոն (ուղիղ՝ Գորբոն)՝ վասն Քրիստոսի, զի ոչ ուրացաւ զնա. զորոյ վկայութիւնն գրեաց սուրբ հայրն մեր Ստեփանոս Վկայեաց և սուրբ թագաւորն Մաբատ՝ ի նոյն բռնաւորէն՝ ի Դուլին քաղաքի. բոլոր տարի մի չարչարեալ, և ապա խեղդամահ սպանին և կախեցին զփայտէ, զի մահակից և խաչակից լիցի Քրիստոսի:

չարժվեց և դիմեց դեպի այն բերդը, ուր գտնվում էր հայոց (սոմեխների) Մաբատ թագավորը. և պատվրեց իր բանակին, վորպեսզի ամեն մեկին, վորին կենդանի կդանեն, բերեն իրեն մոտ: [Յեվ Աբուլ-Կասիմը] յեկավ և մոտեցավ Կապույտ (Կապոետ) բերդին, և կալանավորեց բերդակալները կանանց, վորոնց գտավ զբոսում: Գրավելով բերդը՝ [արաբացիք] կալանաւորեցին Մաբատին\*, վորին ապա տարան Դվին, ուր և կախեցին փայտից. և նա մեռավ<sup>12</sup>: ...

### [X—XI ԴԱՐՈՒ ԱՆՑՔԵՐԸ]

...Յեվ Հերքում (Հերեթում) սկզբնորում՝ մինչ Իշխանիկի թագավորութունն՝ բոլորը հերձվածոց էին: Իսկ Իշխանիկը Գուրգեն Իշխանաց-Իշխանիքով վորդին եր. և նրա մայր Դինար թագուհին դարձրեց նրան ուղղափառ<sup>13</sup>...

...Յայնմ ժամանակի Իշխանիկն էր թագաւոր ի կողմանս Հերեթոյ, և ունէր նա հերձուած, և մայր իւր դարձոյց յուղղափառութիւնս...

...Յեվ Իշխան եր Կղեկարում Ռատը, վորը գրավել եր Ատենի բերդը և Քարթլից սկսած Կուր [գետ]ի հարավային մասը՝ Թուղթը (Թրիալեթը), Մանդլայփորը (Մանդլիսի ձորը) և Սկվրեթը<sup>14</sup>, և չեր հնազանդվում Բագրատ թագավորին: Ապա Բագրատ թագավորը շտապ\*\* զորք հավաքեց և յեկավ Քարթլի... Յեվ Բագրատի հայր Գուրգենն ել զորք ունեւ ժողոված և միանդամայն պատրաստ իր վորդու մոտ գնալու համար: Իսկ Դավիթ Կուրապալատն արագ դիմեց [նրանց դեմ]՝ ժողովելով իր զորքը և կանչելով Հայոց (Սոմխիթի) բոլոր թագավորներին<sup>15</sup>...

...Եւ Ռատն էր ի Կարս (ուղիղ՝ ի [Կղեկ]կար), և ունէր զբերդն Ատենոյ և զհարաւակողմն Կուր դետոյ. սա ոչ հնազանդէր Բագրատայ. և Գուրգեն հայր նորա եկն առ ուրդին, և կամեցան զնալ ի վերայ Ռատին: Եւ քսեցին առ Դաւիթ կուրապաղատն՝ եթէ զգլուխ քո խնդրեն. և հաւատաց բանիցն, և ձեռնատուութեամբ Հայոց՝ փախոյց զգորսն...

Այդ ժամանակ ուժեղացավ Գանձ- [ակ]ի ամրա Փաղլոնը, վորը սկսեց հպատակեցնել իրեն Հերթի (Հերեթի) և Կախբի (Կախեթի) իշխաններին, ժամա-

...Յայնմ ժամանակի զօրացաւ Փաղլուն՝ ամրայն Գանձակայ, և հարկանէր զիշխանսն Կախեթոյ և Հերեթոյ: Եւ առաքեաց Բագրատ թագաւոր Ափխա-

\* Var. Մաբատ թագավորին:  
\*\* Բնագրում՝ գարմանակի կերպով:

նակ առ ժամանակ ավագակորեն և գաղ-  
տազողի ավերելով և գերելով այլ և այլ  
տեղեր: Իսկ Բագրատ մեծն թագավորը՝  
տեսնելով նրա (Փաղլունի) հանդգնու-  
թյունը՝ իր ամբողջ զորքով պատրաս-  
տեց [նրա վրա հարձակվելու], դեսպան  
ուղարկեց Գագիկ շա[հ]նշա[հ] հայոց (սո-  
մեխների) թագավորի մոտ, վորպեսզի  
գրեժխնդիր լինի Փաղլունին: Յեվ նա  
(Գագիկը) հույժ ուրախացավ [սրան], և  
շտապ կանչեց իր ամբողջ զորքը և դի-  
մեց Ափխազաց թագավորի մոտ, [և]  
յերկուսը [միասին] ժողովեցան Զորա-  
կերտում<sup>16</sup>, Փաղլունի դեմ յերկուսու...<sup>17</sup>

...Իսկ նրա (Գեորգի) թագավորու-  
թյան յոթներորդ տարին հունաց (բիւ-  
ձենների)<sup>18</sup> Վասիլ թագավորը հունա-  
ստանի ամբողջ զորքով՝ անթիվ այլազ-  
գիններով հանդերձ՝ յեկավ նրա (Գեորգի)  
դեմ: Գեորգ թագավորն ել մեծ զորքով  
յեկավ նրա (Վասիլի) դեմ. և յերկուսն  
ել յերկար ժամանակ կացան Բասեն  
(Բասիան) յերկրում՝ կովի չելնելով իրար  
դեմ: Խուսափելով [Վասիլից]՝ Գեորգ  
թագավորը յեկավ և ավերեց քաղաքն  
Ուղթյաց (Ութին), ապա այնտեղից հա-  
սավ Կողա (Կոլա): Նրան հետամուտ յե-  
ղավ հունաց (բիւձենների) Վասիլ թա-  
գավորը. և ժողովեցան թե վոչ Գեորգուն  
հետամուտ յեղողներն ու Վասիլը առաջ-  
ընթաց զորքերը՝ տեղի ունեցավ մեծ  
ընդհարում Շիրիմք կոչված գյու-  
ղում<sup>19</sup>...

...Յերկրորդ անգամ յեկավ Վասիլ  
թագավորը Թուրքով (Թրիալեթով), զըր-  
ջեց Զավախքն (Զավախեթն) ու Արտա-  
հանը (Արտանը) ձմռան պահին... ապա  
վերադարձավ Սաղտայց (Սաղա Թա-  
լազ) յերկիրն՝ Տրաղիզոնին կից<sup>20</sup>...

...Նորից յեկավ Վասիլը Բասեն (Բա-  
սիան)՝ պահանջելով Գեորգ թագավո-  
րից դավառներ և բերդեր, և խոստանա-  
լով համերազխություն և խաղաղու-

գաց, առՊագիկ՝ թագաւորն Հայոց՝ երթալ  
ընդ նմա ի վերայ Փատոյայ ամիրային:  
Եւ չորան երկոքեան ի Գանձակ, և արա-  
րեալ ընդհարկաւ՝ դարձան աւարաւ...

...Ի հինգերորդ (ուղիդ՝ յիաւթնե-  
րորդ) ամի թագավորութեան սորա  
(Գէորգեայ)՝ եկն Վասիլ կայսրն. և ընդ-  
գէմ գնաց նորա ի դաւառն Բասենոյ.  
և իբրև ետես եթէ քաղումք են՝ դար-  
ձաւ անդրէն. և Վասիլն գնաց զհետ նո-  
րա, և այրեաց զքաղաքն Ուխտեաց. և  
գարձաւ Գէորգի և կուուեցան. և ան-  
կան յերկուց կողմանց բազումք ի տեղ-  
ուջն՝ որ կոչի Շիրիմք...

...Եւ գնաց Վասիլն ի Տրապիզոն. և  
կոչեցեալ առ ինքն զմեծ կաթուղիկոսն  
Հայոց զՊետրոս՝ ի տօնի յայտնութեանն,  
և օրհնեաց զՂուրն առաջի նորա. և ե-  
տես կայսրն մեծ սքանչելիս ի վերայ  
ջրոյն, և դովեաց զհաւատս Հայոց, և  
գնաց ի Կոստանդնուպօլիս...

\* Հմմ. այս պրակի Ա. գլուխը (եջ 137, ծանոթ. \*\*\*\*):

թյուն\*... Յեվ տվեց Գեորգ թագավորը  
[Վասիլին] յերկիրը, վորը Դավիթ Կու-  
րապալատինն էր, Տայբում\*\*, Կողա-Ար-  
տահանում (Կոլա-Արտանում) և Զա-  
վախքում (Զավախեթում)\*\*\*21...

[Հունաց Կոստանդին թագավորի  
մահվան և Ռոմանոսի դահալալութեան]  
յերբորդ տարին<sup>22</sup> գնաց Մարիամ թա-  
գուհին՝ ափխազաց [Բաղրատ] թագա-  
վորի մայրն՝ հունաստան խաղաղություն  
հաստատելու\*\*\*, նաև կուրապալատու-  
թյան պատիֆն խնդրելու. իր վորդու  
համար, ինչպես նրանց տան սովորու-  
թյունն էր ու կարգը\*\*\*\*23...

Յեվ սրանից հետո իր վերին և ներքին  
«հայրենիք»-ին տեր դարձավ Բագրա-  
տը\*\*\*\*\*24... [Յեվ] սրա թագավորության  
զորքերը ժողովեցան և կալանավորեցին  
Լիպարիտին և Աբաղա վորդի Հովհա-  
նին (Իվանեյին): Յեվ յեկավ մեծն Կո-  
րիկե (Կվիրիկե) Ռանից (աաների) և  
Կախից (կախերի) թագավորը, Դավիթ<sup>25</sup>  
հայոց (սոմեխների) թագավորը և Տփղի-  
սի ամիրա Զավաքը. սրանք բոլորը ժո-  
ղովել ելին Կորիկեյի (Կվիրիկեյի)\*\*\*\*\*  
պայմանի համաձայն Յեկեղյաց (Եկեղ)  
[դավառ]ումն...

...[Ապա] թագավոր էր Կախքում  
(Կախեթում) Գագիկը՝ Սամշվիլեյի և  
Զորակերտի\*\*\*\*\* հայոց (սոմեխնե-  
րի) Դավիթ թագավորի վորդին [և] Կո-  
րիկեյի (Կվիրիկեյի) քեռորդին...

Ապա կրկին ուժեղացավ և հզորա-  
ցավ իր «հայրենիք»ում Բագրատ թա-  
գավորը: Յեվ Բագրատի բազմ բանեց  
թե վոչ՝ Վեստը [նրան] միացավ Անվո  
կիչք նորա՝ ի թագուհին Մարիամն...

Եւ էառ զթագաւորութիւնն Բագ-  
րատ. և չորաւ մայրն նորա Մարիամ  
ի Կոստանդնուպօլիս, և եբեր թուղթ  
դաշանց խաղաղութեան և պատիւ կը-  
րապաղատութեան՝ որդւոյ իւրոյ...

...Թագավորն Կախեթոյ [էր] Գագիկ,  
որդին Հայոց արքայի...

...զի մայր նորա (Բագրատայ) Մա-  
րիամ՝ պուտար էր Սենեփերիմայ Հայոց  
արքայի, ետուն զքաղաքն Անի՝ բնա-  
թե վոչ՝ Վեստը [նրան] միացավ Անվո  
կիչք նորա՝ ի թագուհին Մարիամն...

- \* Var. +... և անյով Բասենի (Բասիանը) սահմանը...
- \*\* Var. + Բասենում (Բասիանում):
- \*\*\* Var. + Շավչեթում:
- \*\*\*\* Բնագրում՝ փնտռելու:
- \*\*\*\*\* Այս արգացը գրեթե կրկնություն և Սմլատի յերկասիրության համա-  
պատասխան հատվածի (տես այս աշխատություն 138 եջը):
- \*\*\*\*\* Var. Բագրատ թագավորը:
- \*\*\*\*\* Var. կայսեր:
- \*\*\*\*\* Var. սամշվիլեցվոց և զորակերտեցվոց:

ինն բերդով, բացի Ամբերդից: Յեզ անե-  
ցիք ավին Անին Բագրատի մորն, քանի  
վոր այն հայերի (սոմեխների) շայրե-  
նիքն էր, [իսկ] Բագրատի մայր Մա-  
րիամ Թագուհին հայոց (սոմեխների)  
Սենեքերիմ Թագավորի դուստրն էր<sup>26</sup>...

...Յեզ Լիպարիտը ...հանեց Անիից՝  
Թագուհուց՝ Աբուսեր Արտանուշը իշ-  
խանին, ...և Հովհան (Իվանե) իշխանըն,  
Հովհան (Իվանե) Դադիանուն և Գուա-  
րամ Գողերծիս-ձեյին, ...վորոնց և կա-  
լանավորեց Անիի դռանը ...

...Յեզ Լիպարիտի դաշնակիցներն էյին  
[ընդդեմ Բագրատի]՝ կախերը իրենց  
զորքով և Դավիթ հայոց (սոմեխների)  
Թագավորն իր զորքով...

Յեզ մի քիչ ժամանակից հետո դադ-  
նակից յեզան Կալմախի իշխան Սու-  
լան և Ա. տանուշի իշխան Գրիգորը,  
վորոնց մրացան մեսխ ազնվականներն  
(ազնաուրներն) յեզ՝ ոգնելու Բագրատ  
Թագավորին... Լսելով այս՝ Լիպարիտը  
ժողովեց իր զորքը և կանչեց կախերըն  
ու հայերըն (սոմեխներըն). և հույներն  
(բերձեններն) [եւ] սրա հետ էյին ...

Յեզ սահմանի դրսով դնալով՝ Լի-  
պարիտը նույն զորքով մտավ Դվին և  
առաջնորդեց հուսաց (բերձենները) Թա-  
գավորին գլխնեցվո վրա. ապա վերա-  
դարձավ իր յերկրը: Իսկ նրա վերա-  
դարձից մը տարուց հետո Բասեն (Բա-  
սիան) գավառում յերևեցան Բահրամ-  
Լամյան սուլթանական թուրքերը: ...

...Ապա Լիպարիտը հարձակվեց թուր-  
քերի վրա և մտավ Անի...

...Մը քիչ հետո սրա (Բագրատի) Թա-  
գավորության մեծամեծները ձանձրա-  
ցան Լիպարիտի տըրապետությունից:  
Սուլա Կալմախեցին և բոլոր մեսխները  
փախան Լիպարիտից, և կալանավորեցըն  
Լիպարիտըն ու նրա հորը՝ Դիվում: Իսկ  
Նիանիան դադթեց և դնաց դեպի Կլե-  
կար (Կլեկարնը), ուր, սակայն, նրա  
հոր (Լիպարիտը) բերդապահները ներս  
չթողըն նրան, և նա անցավ Անի՝ հույ-  
ները (բերձենների) մոտ: ...Յեզ մի քա-

նի տարուց հետո Նիանիան վախճանվեց  
Անիում...

Սրա (Բագրատի) Թագավորության  
պահին յերևաց սուլթան Արփ-Ասլան  
(Արփարասան || Արփասարան)՝ պար-  
սից Թագավորը: ... [Յեզ] յեկան [պար-  
սիկներն] անակնկալ կերպով\* և ավե-  
րեցին Կանգարքն ու Թուեղը (Թրիալե-  
թը): ...

...Յեզ դիմեց սուլթանը (Արփ-Աս-  
լանը) դեպի Անի և զրավեց Անին, ավե-  
րեց այն և անթիվ ժողովուրդ դերեց ու  
գնաց իր յերկիր՝ Պարսկաստանը: Նա  
[յեր, վոր] Ասին խեց հույներից (բեր-  
ձեններից) և ավեց Աբուլասավարի վորդի  
Մանուշարին: Իսկ Բագրատի քեռորդին,  
վորին խնդրում էր սուլթանը ի կնու-  
թյուն, հայոց (սոմեխների) Կորիկե (Կվե-  
րիկե) Թագավորի յեղբորորդին էր: Բագ-  
րատը սրան խնդրեց, բայց հայոց (սո-  
մեխների) Թագավորը նրան չտվեց: [Ա-  
պա] Բագրատը մեծ զորքով հանդերձ  
գետպան ուղարկեց [Կորիկեյի մոտ]  
Վարադ-Բահուր Գամրեկե իշխանին:  
[Նույն Բագրատը] հայոց (սոմեխների)  
Թագավորի մարդկանց էլ զրդոնեց, և  
Սամշիլդե մանող հայոց (սոմեխների)  
Կորիկե (Կվերիկե) Թագավորին ու նրա  
յեղբայր Սմբատին կալանավորեցին  
Քվիլդե պուրակում<sup>27</sup>: Յեզ հայորդեցին  
Բագրատին, [վորը]... պահանջեց Սամ-  
շիլդեան, սակայն [հայերն] այն չտվին,  
և նրանց (Կորիկեյի ու Սմբատի) մի  
ուրիշ յեղբայրը՝ Ատրնիբահը (Աղտը-  
նասեն)՝ մտել էր Սամշիլդե: Իսկ [Կո-  
րիկե և Սմբատին] տարան Սամշիլ-  
դե. և սարքեցին [խաչա]փայտեր, և հա-  
յոց (սոմեխների) Կորեկե (Կվերիկե) աբ-  
քային յերեք որ [կախված] թողըն: [Հա-  
յեր] [խնդրեցին խաղաղություն և ավին  
Սամշիլդեան<sup>28</sup>: Յեզ յեկել էյին հայոց  
(սոմեխների) Թագավորի յերկու իշխան-

...և դայր [սուլթան Արփասլան] առ-  
նոյր զամենայն տունն Քարթլայ, կոտո-  
րէր և դերէր. և խաղացեալ գնայր ի  
մայրաքաղաքն Հայոց ի յԱնի, և առնոյմ  
գնա, և լնոյր արեամբ կոտորելոցն: Եւ  
այլ և սպառնայր Վրաց աշխարհին, եթէ  
ոչ տացէ: Նմա Բագրատ՝ զգուստը քեռ  
իւրոյ ի կնութիւն. որ էր նա դուստր  
եղբօր Կլեկիկէի Հայոց արքայի. յորմէ  
խնդրէր Բագրատ աղաչանօք, և ոչ տայր  
գնա Կլեկիկէ. մինչ զործեցին նմա ու-  
րոգայթ Վարադբահուր և Գամրեկէ զօ-  
րակալուն Վրաց, և ըմբռնեցին գնա  
յանտառին Քուելոյ. և աղք արարին  
Բագ[ա]րատայ. և գնաց առ նա, և էառ  
զաղջիկն և զՇամշոյտէ ի ձեռաց նո-  
րա, և ապա արձակեաց: Իսկ Սուլթանն  
գլխի երից ամաց դարձաւ ի վերայ  
Վրաց, և ելեց արեամբ գերկիրն: Եւ  
առեալ զՏփիլիս՝ ետ ի յամիրայն Գան-  
ձակայ ի Փատլուն: Եւ Ասխալթան  
որդի Գագկայ Թագաւորին Կախեթոյ՝  
եկն առ նա, և շրջէր ընդ նմա՝ մինչև  
գնաց Սուլթանն...

\* Բնագրում՝ անզգալիորեն:

ները՝ Լուկի\*<sup>28</sup> իշխանը և Կակվաբարինը՝ Կորիկեյի (Կվիբիկեյի) յեղբայր Սմբատը ապրիս եր և հանձնում յերեք բերդեր՝ Ոփրեթն<sup>30</sup>, Քորա[յր]ն\*\*<sup>31</sup> ու Վարդաբարը։ Իսկ Բագրատ թագավորը խղճաց նրանց, և ազատեց ու վերադարձրեց նրանց բոլոր բերդերը բացի Սամզվիլդեյից, և վոչ ել այլ բերդերի տերերին՝ մեծամեծներին թույլ տվեց ներս մտնելու այնտեղ, այլ դրավեց Սամզվիլդեն, [վորը և միացրեց] իր թագավորութանն։ Յեվ այսպես հայերը (սոմեխները) [վրաց] հպատակ դարձան<sup>32</sup>...

[Ապա սուլթանը] յեկավ ափիսագաց թագավորի դեմ, և նրան միացան հայոց (սոմեխների) Կորիկե (Կվի Իկե)<sup>33</sup> թագավորը, Տփղիսի ամիրան և Աղսարթանը, [վորսնք]՝ ողակ [կազմել]ով՝ մտան Քարթլի... քրոնիկոնի 288-ի դեկտեմբերի 10-ին, յերեքաբարթի որը<sup>34</sup>...

...և ափիսագաց [Բագրատ] թագավորը դրավեց Գագը։ Ապա Փաղոնը... գողցավ Քավազնը...

...[Բագրատի վորդի Գևորգ թագավորը] շնորհեց Հովհաննիս (Իվանիսին) [Նիպարիտի 'վորդուն]՝ Սամզվիլդեն... սակայն Հովհաննը (Իվանեն) չկարողացավ նսալ բերդի ներսում [և] հեռացավ դեպի Հայոց (Սոմխլթի) լեռները...

[Ապա] Հովհաննը (Իվանեն) նորից ուրացավ [Գևորգին], խաբուսիկ կերպով խլեց Գագը Գևորգ թագավորի բերդապահներին և ծախեց [այն] Գանձ[ակ]ի տեր Փաղոնին...

Մի քիչ հետո Սարանդն իր ամբողջ զորքով՝ դաջնակից ունենալով Գանձակի, Իվինի և Դմանիսի ամիրաներին՝ դնաց Գևորգի դեմ...

...[Ապա Գևորգ թագավորը] գրավեց հույներից (բերձեններից) Անակոփիան՝ Ափխազեթի բերդերի գլուխն, և ջատ բերդեր Կվարջբում (Կլարջ թում), Շավրջ-

... և էառ [Բագրատ] ի նմանէ (ի Փաղոնն ամիրայէ) զՏփիսիս և զԳագ և զՔոզլինն՝ զոր առեալ էին Պարսք ի Հայոց և ի Վրացի...

... և ապստամբեաց ի նմանէ (ի Գէորգեայ) Իւանէ՝ որդին Լիպարտի. և յինքն յանկուցեալ զպահապանս դղելին Գագայ՝ վաճառեաց զնա զարձեալ տեառն Գանձակայ...

...և էառ Գէորգ ի Յունաց զամենայն բերդսն՝ զոր առեալ էր նոցա, զԱնակոփի ի գլուխն Ափխազեթոյ, և իրկիրն Կլարձէթոյ և ի Շաւրջեթոյ և ի

\* Բնագրում՝ Լուկիս  
\*\* Բնագրում՝ Կորա (Կոշա). հմմ. 148 յեր.\* ծանոթ...

բում (Շավրջեթում), Չավախբում (Չավախախեթոյ և յԱրտանանայ՝ յուլիս խեթում) և Արտանանում (Արտանում)։ ամբոցս, և զԿարս և զՎանանդ, նոյս- Յեվ սրանից հետո... գրավեց Կարս (Կարիս) քաղաքը, Վանանդի բերդն և գավառն, ու Կարնիփոր-Ալքսիանու ամրոցները, և մաքրեց յերկիրը թուրքերից...

ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արաբական արշավանքների շրջանի Հայաստանի պատմութեան վերաբերյալ տես հետևյալ հատուկ զրականությունը M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft bis zu Entstehung des Bagratidenreiches Marbourg 1903. H. Thopdschian, Armenien vor und während der Araberzeit — «Zeitschrift für armenische Philologie», II. B., I. H., Marbourg 1903 S. S. 50—71. Բագրատ խալափեանց, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին [«Ազգային Մատենադարան» ԶԻ], Վիեննա 1919. J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886, Paris 1919. Հակոբ Ջորյան. Արաբների հարկային քաղաքականությունը ավատական Հայաստանում, — «Հ. Ս. Ն. Պետական Համալսարանի Գիտական Տեղեկագիր» № 2—3-Յերևան, 1927, էջ 319—349. Նույնը, Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը, — «Տեղեկագիր Հ. Ս. Ն. Գիտություն և Արվեստի Ինստիտուտի» № 2, Յերևան, 1927, էջ 179—203. № 3, էջ 3—38. Հակոբ Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստանում (ժամանակագրական դիտողություններ) — նույնի «Մանր հետազոտություններ»-ի մեջ, իրատ. Միլլեոնյան ֆոնդի, Յերևան, 1932, էջ 22—74. R. Vasmier, Chronologie der arabischen Statthalter von Armenien unter den Abbasiden, von as-Saffach bis zur Krönung Aschots I., 750—887, Wien 1932:
2. Տես Մովսես Կապանկատվացի, II, 11:
3. Հատ Ասադիկի (Մտեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական, 106)՝ «ի ...յմզ թուականին Ոսլթ լալն Եղիտ՝ Հայոց ամիրայ եկն և էանց բազմութեամբ ի Վիրս և մեռա ի Չաւախս, ի գիւղն որ կոչի Սողարի (այժմյան Սիլվաբաճիլա. Լ. Մ.-Բ.)»
4. Մանրամասնությունները տես. И. Джавахов, К вопросу о времени построения грузинского храма в Атене по вновь обследованным эпиграфическим памятникам, — «Христ. Восток», т. I. 1912, стр. 277—297. Պ. Չավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, II, 1914, էջ 374—377 հմմ. նաև մեր այս աշխատությունն ա. պրակի Գ. գլուխը:
5. Հմմ. Ասադիկը (ibid., 158):
6. Պետք է լինի «Պատմականոց». հմմ. հաջորդ ծանոթության մեջ հիշատակվող հողվածը Քվախրելիի մասին, էջ 218: նաև՝ M. Brosset, Histoire de la Géorgie, I, p. 274, n. 8.
7. Ուփլիսցիների՝ իբրև հայոց դադթականության հնադույն վայրերից մեկի մասին Վրաստանում առայժմ տես. П. Исселиани, Города, существо

вашия не существующие в Грузии, Тфл. 1850, стр. 65—66. Н. Пактлюхов, О пещерных и позднейших жилищах на Кавказе. Тфл. 1896, стр. 34—35. «Известия Кавказского Музея», т. XI, 1918, стр. 208—218. [Л. Меликсет-Бекоев] Прошлое и настоящее Грузии по древним памятникам Мцхетского района и Улиссихе (Краткий путеводитель экскурсий), изд. Культотдела Совпрофа Грузии [Тфл. 1929], стр. 4. նույնը, վրացերեն, էջ 4: Հայկական արձանագրությունների և մասնավորապես 1585 թ. արձանագրության ընդորինակումը տես՝ M. Brosset, Voyages archéologiques dans la Géorgie et dans l'Arménie, II rapp., livraison II, SPB. 1850, p. p. 161—162. Գ. Գաբրիելանց, Հայկական արձանագրություն մը Ուփլիս ցիխե գիւղում (Վրաստան), «Հանդես ամսօրեայ» 1907 թ., էջ 300. հմմ. նաև բանահյուսական նյութը՝ Ե թաղ՝ աշխարհի, [Վրաց] ժողովրդական դրականությունը, I [Տփղ. 1909—1915], էջ 256, 257:

8 Վրացերեն բնագրում «Իմձախիս», վորը վերլուծությունը տես՝ M. Brosset. Histoire de la Géorgie, I, p. 274, n. 9:

9. Մմբատի և Կոստանդնի թշնամության և ապա համերաշխության մասին հմմ. Հովհան Իրասխանակերտեցի տվյալները (Յովհաննու կաթողիկոսի Իրասխանակերտեցու Պատմություն Հայոց [«Ղուկասեան Մատենադարան» Ե], Տփղ. 1912, էջ 200—201:

10. Հայ բանահյուսության մեջ Թմբկաբերդ կոչվածը. հմմ. «Թմբկաբերդի առումը» (Ե. Կալանյան, Ջալալքի բուրմուռը, Թիֆլիս 1892, էջ 57). նույնը Հովհ. Թումանյանի կողմից ոգտագործած:

11. Մանրամասն տես մեր յերկասիրությունյան ա. պրակի Ը. գլուխը

12. Տես նույն տեղ, հմմ. նաև Ասողիկ (էջ 164—165):

13. Հմմ. ա. պրակի Ժ. գլխի 2 ծանոթ:

14. Թոնդըի և մասնավորապես Կլեկարիի և Մանգլյաց մասին տես. E. Такоянцели, Археологические экскурсии, разыскания и заметки, в. IV, Тфл. 1913, стр. 1—79, 130—144. Լ. Մելիքեան-Բեկ, Մանգլիսի ջրմանր պատմահնադիտական տեսակետով վրացերեն, — «Ախալ սկոլիտակեն» 1924 № 2—3, էջ 71—80. նույնը, Կլեկարիի, վրացերեն, — «Bulletin Historique 1924, № 1, էջ 167—172. նույնը, Մանգլիսի նեկրոպոլը, վրացերեն, — «Զվենի մեցնիբերթ», № 13, 1924, էջ 82—87:

15. Հմմ. Ասողիկի (էջ 252) ցուցմունքը. «Եւ կիւրապադատն Տայոց Գաւիթ և թագաւորն Վրաց Բաղարատ առաքին առ թագաւորն Հայոց Սմբատ [Տիեղերակալ]՝ կոչել յօգնականութիւն իւրեանց...»:

16. Զորակերտը այժմյան Զուրտակեան և կամ Դարարուլախի դաշտավայրը (Ստորին Մալխան), ուր՝ VI—VII և հետագա դարերի վրացական բազմաթիվ հնությունների կողքին՝ հանդիպում ենք և հայկական հնություններին համեմատաբար ավելի ուշ ժամանակներին, XVIII դարու հայերեն կամ հայերեն-վրացերեն արձանագրություններով (1718, 1721 և 1795 թ. թ.), վոր մենք ընդորինակեցինք 1932 թվի ամառվա գիտական արշավանքի միջոցին (պատրաստվում և տպագրություն ժողովածուի մեջ՝ «Հայերեն արձանագրությունները Վրաստանում» վերնագրով):

17. Հստ Ասողիկի (ibid., 252—253), Սմբատ Տիեղերակալ «առեալ զամենայն զօրս Հայոց և զԳաղիկ զեղբայր իւր՝ զնայ առ նոսա ի գաւառն Ջաւախաց և բանակին ի գիւղն, որ կոչի Դլիփեկն, և մանուկն Արատ թագաւորն Կորուց... եւ ամենայն զօրն Վրաց և Վասպուրականի, Սիւնեայ և Այուանից իշխանն միահաւաք ինէկն ընդդէմ Ափխազաց զօրուն Որոց երկուցեալ զխաղաղութիւն խնդրեն և սէր հաստատեն առ միմեանս Կիւրապադատն Գաւիթ խնդրէ ի թագաւորէն Ափխազաց զբերդն Սակուրէթ, և առեալ տայ թագաւորին Հայոց Սմբատայ՝ շնորհ նմա արարեալ վասն օգնականութեան. զոր ի մահուն Սմբատայ զարձեալ հանին ի Հայոց զբերդն Սակուրէթ»:

18. Հստ Արիստակես Լաստիվերտեցի (Պատմություն Արիստակեսի վարդապետի Լաստիվերտեցու, Տփղ. 1912, էջ 11) Հայոց 470 թ.—1021 թ. ք. հմմ. Խվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, II, 424, M. Brosset. Hist. de la Géorgie, I, p. 306, n. 2:

19. Այս արդացում նկարագրած զեղբերի մասին տես. Արիստակես Լաստիվերտեցի, I և II գլուխները, նաև Յաշա Անտիոնացի (B. P. Rosen, Император Василий Болгаробойца, Петербург 1883, стр. 61—62). հմմ. Խվ. Ջավախիշվիլի, ib., 425: Մասնավորապես «Շիրիքը»-ի մասին տես. Ասողիկ, XVII (էջ 196—197). նաև՝ M. Brosset. Histoire de la Géorgie, I, p. 306, n. 4. Ղ. Ինճինեան, Ստորագրություն հին Հայաստանեայց, 402:

20 Հմմ. B. Rosen. II, c., 65—66:

21. Տես նույնը:

22. 1030—1031 թ. թ. (Խվ. Ջավախիշվիլի, op. cit., II, 431):

23 Տես Գավթի վորդի Սմբատի յերկասիրությունը (այս պրակի Ա. գլուխը):

24. Հստ Վարդանի (Վեն., 106)՝ «Վրաց թագաւորն Բաղարատ զարձեալ ի կայսերէ՝ առնու զհայրենիսն իւր»:

25. Անհողին:

26. Տես այս պրակի Ա. գլխի 5-րդ ծանոթությունը:

27. Այս Կորիկի (Կվիրիկի) և Սմբատ Լոռու-Տաշիրի Կորիկյանց հարբատություններից զհնարներն են, վորոնց ազգաբանությունը վրացի եղինակը չիթած և՛ համարելով նրանց յեղբայրներ, մինչդեռ Կորիկին (Կվիրիկին) Գաւիթ Անհողինի վորդին էր, իսկ Սմբատը յեղբայրը կամ Կորիկիի հորեղբայրը. Կորիկյանց ծննդաբանությունն ընդհանրապես տես. M. Brosset, Monographie des monnaies arméniens, SPB. 1839. նույնը, Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, p. p. 277—279. Ղ. Ալիշան, Շիրակ, 96—97. նույնը Հայապատում, Վեն. 1901, II, 392. Ե. Կալանյան, Բորչալուի գաւառ, — «Ազգագրական Հանդես», դ. VII—VIII, Տփղ. 1901, էջ 312—318. Անտոն վ. Մովսէսեան, Հոսիի Կլեկարիեանց թագաւորներու պատմությունը [«Ազգային Մատենադարան» ՂԵ], Վիեննա 1923. E. Пахомов, О монете Корика Куропалата, — «Известия Кавказского Историко-Археологического Института», т. III, Тфл. 1925, стр. 43—45. Լ. Մելիքեան-Բեկ, Քորերն և նրա հայերեն ա. վրացերեն արձանագրությունները, վրացերեն, — «Bulletin de l'Université de Tiflis», VII, 1926, էջ 60—73. նույնը, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» etc., էջ 25—32, հատկապես 31: Մասնավորապես Կորիկի (Կվիրիկի) և Սմբատի մասին պետք



և ասել, զոր սրանք Սանահնի վանքի Ամենափրկիչ կոչված տաճարի կառուցող-ներն են, զորն մասին վկայում է նույն տաճարի արևելյան պատի համապատասխան քանդակագործությունը, ուր յերկու թաղարներ ձեռնն բռնած ունեն յեկեղեցու կաղապարը, հետևյալ արձանագրությունը՝ «[Կորիկէ թաղաւոր, Սապատ թաղաւոր» (H. Marp, Санахинская скульптурная группа ктиторов,— «Христ. Восток», т. I, 1912, стр. 350 и табл. XX): Հմմ. Լ. Մելիքեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» etc., 49: Ըստ այսմ և ի նկատի ունենալով, զոր նույն Կորիկեն և Սմբատը հիշատակվում են նաև նույն Սանահնի 1063 թվի մի արձանագրության մեջ (Ս. Ջալալեանց, օր. cit., I, 32 — Description des monastères arméniens d'Haghat et de Sanahin, par archim. Jean de Crimée, avec notes et Appendice, par M. Brosset, SPB, 1863, p. 49 — Կ. Կոստանեանց, Վիճակն տարեգիր, 24), մենք յեկած ենք այն յիզրակացությունը, զոր Սանահնի Ամենափրկիչի կառուցումը պիտի վերադրել հենց այդ Կորիկե և Սմպատին XI դարու կրիսն և, համենայն դեպս, զոչ ուշ քան 1065 թ.: Ինչ վերաբերում է Հաղբատի Սուրբ Նշան տաճարի հյուսիսային պատի 991 թ. արձանագրությանը (Ջալալեանց, I, 79 — Jean de Crimée, p. 11 — Կոստանեանց, 10), ուր հիշատակված են Սմբատ և Գուրգինը, դրանք Բաղրատունյաց Աշոտ Վոզորմածի վորդիքն են, զորոնցից Գուրգինը Կորիկյանց հարստության հիմնադիրն է համարվում, բայց, ի հարկն, զոչ իրավացի (այս առթիվ մանրամասն տես. Լ. Մելիքեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» etc., էջ 25—27, ժան. 6):

28. Սամշվիլեյի՝ իբրև Կորիկյանց յերբեմնի մայրաքաղաքի մասին՝ վկայում են մի շարք հայկական հնությունները, զորոնք մինչ որս պահպանված են և զորոնց բնոգհանուր նկարագրությունը կարելի յե գտնել հետևյալ գրականություն մեջ. M. Brosset, — «Mélanges Asiatiques», t. II, p. 92—103. Սարգիս Վ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, II, 1858, էջ 78—79. С. Мажников, Памятники древности города Самшвилде, — «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», в. XIII, 1892, отд. I, стр. 3—13. E. Такайшвили, Археологические экскурсии, разыскания и заметки, II, 40—46. հմմ. Լ. Մելիքեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» etc, էջ 31, ժան. 1: Այդ հնություններից առանձնապես հետաքրքիր է հինավուրց վիշապաքար-Փալուսը, զորը XI դարում վերածած է խաչքարի՝ հայերեն արձանագրությամբ ՆՃ 400 + 100 500 (1051) թվականով, ուր հիշատակված է «Սմբատ իշխանաց իշխանը» (հմմ. Լ. Մելիքեթ-Բեկ, օր. cit., էջ 28, ժան. 5), և զորը հետագայում ներփակվել է աստվածածնա անվամբ կառուցված և հայերին հատկացրած փոքրիկ մատուռում: Այդ արձանագրության մասին է, զոր Ս. Ջալալեանց 1858 թվին գրում էր (օր. cit. II, 79)՝ «...էի միջոց միոյ մասրան արտաքին բերդի զոր կոչեն Ծամբուղե կանգնեալ կայ միաձոյլ և բարձր խաչ քար, ի բատ (ուղիդ՝ Սմբատ. Լ. Մ. Բ.) իշխանէ (ուղիդ՝ իշխանաց իշխանէ. նույնը) ի թուրն Հայոց ՆՂԳ (ուղիդ՝ ՆՃ. նույնը), յորում առնեն զուխտադրութիւնս դենմամբ խոյոց և զուարակաց»: Այդ արձանագրութիւնն ամբողջությամբ հրատարակած ունի M. Brosset («Mélanges Asiatiques», t. II, p. 97—98): Մի ուրիշ արձանագրութիւն փորագրված է Սիոն կոչված մայր յեկեղեցու (վրացականի) հարավային պատի վրա, հետևյալ բովանդակությամբ. «[հր]ամա[ն]աւ տն Գե[ո]րգ[ե]ա հա[յո]ց կաթա[ղիկոսի]...» (մինչ այժմ գրականության մեջ բուրբուրին անհայտ), ուր, անկասկած, հիշատակված է Գեորգ Գ. Լորեցի կոչված

կաթողիկոսը՝ Գրեգոր Վկայաբերի հակաթոոր՝ 1069—1072 թ. թ.: նույն Սիոնի արևելյան պատի արձանագրությունն է, ուր հիշատակվում է բղձյաների (պլիտիախնների) սերունդը:

29. «Լոկի» ընթերցվածքը աալիս և «Քարթլիս-ցիտրիբա»-ի Աննա թագուհու վարիանտ կոչվածը, զորն ամենանապունն է համարվում և զորն Իվ. Ջավախիշվիլուս է պատկանում ու դեռ հրատարակված չէ տես Իվ. Ջավախիշվիլի. Վրաց ժողովրդի պատմությունը, II, 449 և ծան. \*. նույնը, Վրաստանի սահմանները, 22: Ղ. Ազայանի «Տորք-Անդեղ»-ում հիշված նույն «Լոքի» կամ «Լոք»-ն է:

30. Ղ. Ազայանի «Տորք-Անդեղ»-ի նույն «Ուփրէթ»-ը:

31. «Կորա»-«Կոշա»-ն «Քորա[յր]»-ի յե վերականգնում, թեև հարցական նշանի տակ, Իվ. Ջավախիշվիլին, Վրաց ժողովրդի պատմությունը, II, 449.

32. Ըստ Իվ. Ջավախիշվիլու (Վրաց ժողովրդի պատմությունը, II, 448—449 Վրաստանի սահմանները, 21—22), մոտավորապես 1065 թվին:

33. Կորիկե Բ.

34. Այսինքն 1068 թվին,

Ա Ն Ա Ն ՈՒ Ն (XII Դ.)

«ԴԱՎԻԹ ԱՐՔԱՅԻՑ-ԱՐՔԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Քարթլիս-ցխորեբայի Մարիամ Թագուհու վարիանտում անանուն հեղինակի անվերնագիրը յերկասիրութեանը, ուր վրաց պատմութեանը մինչ Գեորգ II-ի Թագավորութեանն և հասցրած, անմիջապես հեռուում և բավականին ընդարձակ «[Դավիթ] արքայիցարքայի պատմութեանը», վորի հեղինակի անունը վոչ մի տեղ չի հիշվում: Այդ պատմութեանը գրված ունի և. Թալ՝այեվիլու հրատարակութեան մեջ 281—335 էջերը, իսկ M. Brosset-ի 236—263, վորին համապատասխանում են նույն M. Brosset-ի Փրանսերեն Թարգմանութեան 346—381 էջերը և «Համառուտ պատմութիւն Վրաց»-ի 114—123, նույնը վարքաբանութեան վերածված՝ վրացերեն Մ. Սաբինիի «Վրաստանի գրախոս»ում, էջ 489—512, և ուսերեն արձակ Թարգմանութեամբ՝ նույն Սաբինիի գրքում Полное жизнеописание святых грузинской церкви. ч. III. СПб. 1873, стр. 103—140: Այս յերկասիրութեանը պարունակում է իր մեջ մանրամասն նկարագրութեան այլ և այլ քաղաքական և պատերազմական անցքերի սկսած Գեորգ II-ից մինչ Դավիթ Շինողի\* մահը, այսինքն 1125 թիվը:

Վոր «Դավիթ արքայիցարքայի պատմութեան» հեղինակն, իրոք, նույն Դավիթի ժամանակակից է, այս գրութեան միանգամայն անվիճելի յե վրացագիտութեան մեջ (Թ. Ժորդանիա, Իվ. Ջուվախիսիսի, Ս. Կապաբան): Վրացագիտների կողմից հայտնված կարծիքների միջև տարբերութեանը միմիայն մանրամասնութեաններին և վերաբերում: Ըստ Թ. Ժորդանիայի (Քրոնիկաներ, I. XLV—XLVI), «մատենագիրը հոգևորական անձն է, վոր յերևում

\* Վրացերեն «աղմուկներով» շինող строитель և վոչ թե վերաշինող возобновитель.

և յուրաքանչյուր տողից», քանի վոր «նրա ամբողջ պատմվածքն աստվածաբանական [դասողութեան] դրոշմն է կրում». միաժամանակ՝ նա «հույժ կրթված և զարգացած մարդ է», դիցուք «Հովհան կաթողիկոսը կամ Սիմեոն Ճղոնգիդեցին կամ Արսեն Իդալթոյեցին լինի»: Մի ուրիշ տեղ նույն Ժորդանիան (ibid., 248) վորոշում է նույնիսկ յերկասիրութեան գրութեան ժամանակը. «Դավիթ Շինողի պատմութեանը գրված է Գեղարի [տաճարի] ավարտումից, այսինքն 1130 թվից հետո»: Միանալով Թ. Ժորդանիայի կարծիքին, Սարգիս Կապաբանին իր հատուկ գրքույկում՝ վերնագրով «Դավիթ Շինողի պատմչի սով լինելը» (վրացերեն, Տիգրա 1913, էջ 3--7)՝ այն մտքն է հայտնում, վոր հեղինակը վոմն Արսեն վանականը պիտի լինի, վորը 1115 թվից Դավիթի խոստովանահայրն էր համարվում: Յեվ այս հիման վրա յի, ըստ յերեվութիւն, վոր Կ. Կեկելիանին (Վրաց գրականութեան պատմութեան, I, 315—316), այս յերկասիրութեանը վոմն Արսեն Սաղիրիսան էր և վերագրում:

Ըստ Իվ. Ջավախիսիսի (Քին վրացական պատմական գրականութեանը, բ. տպ., 216), «Դավիթ արքայիցարքայի պատմութեանը» գրված պիտի լինի 1123—1126 թ. թ. միջոցին. անանուն պատմիչն ընդհանրապես լայն և աչալուրջ մտքի տեր մարդ է, և միմիայն առ հայերն տաժած թշնամանքն է, վոր,— նույն գիտնականի ասելով (215—216), — աչքի յե բնկնում: Սակայն հեղինակի այս զգացմունքն էլ, ըստ յերևութիւն, կրօնական հողի վրա չէ բաժ. ընդհակառակը, այնտեղ, ուր նա նկարագրած ունի վրաց և հայ հոգևորականութեան աստվածաբանական վիճերի ընթացքը, յերկու հոգևորականութեանն ևս համահավասար կերպով մեղադրում է և պախարակում՝ «յերկու կողմն էլ տարված էր իրար ճնշելու և վատաբանութեամբ պայքարելու միտումով, քանի վոր նրանք մտնում էյին անանց և դժվար չեղանելի դործերի մեջ». մի խոսքով,— շարունակում է նույն գիտնականը,— «պատմիչը, այնուամենայնիվ, աստվածաբանութեան ջատագով չի յեղել և հենց այս հանգամանքը ցույց է տալիս, վոր Դավիթ Շինողի պատմութեան նկարագրողը կամ աշխարհիկ անձն է, կամ, յեթև հոգևորական է, կրթված և՛ մտածելակերպով միանգամայն աշխարհականացած գրող է յեղել»: Միաժամանակ Իվ. Ջավախիսիսի (էջ 216) մատնանշում է, վոր հեղինակը Դավիթի կողմնակից է և իր յերկասիրութեան մեջ տեղատեղ պայքարում է վերջինիս հակառակորդների հետ կամ վիճում:

Ի վերջո, հիշատակենք, վոր «Դավիթ արքայից-արքայի պատմութիան» վրացերեն բնագրի քննական հրատարակութիւնը վաղուց պատրաստած ունի տպագրութիւն Իվ. Զավախիւիի\*:

[ԳԵՈՐԳ ՈՒ ՅԵՎ ԴԱՎԻԹ ՇԻՆՈՂ ՔԱԳԱՎՈՐՆԵՐ]

...Ապա յեկավ Սուլթան Մելիք-Շահը և մտտեցաւ Սամշվիլցիին, վորն և դրավեց. և Լիպարտի վորդի Իվանելին գերեց, և ամբողջ Հայքը (Սոմխիթն) ավերեց: Ապա նույն տարին Սարանդը՝ դալով սուլթանական զորքով հանդերձ՝ կանգ առավ Սամշվիլցիի դաշտում, ուր յեկան և Գեորգ թագաւորի զորքերը, և բնգհարում ունեցան Փարցխիսում: Գեորգի զորքը հաղթեց և փախուստի մենթարկեց պարսիկներին... Իսկ Գեորգը դնաց իր հայրենիք՝ Տայքը, ապա հասավ Բանա՝ Յեվ նույնտեղ նրա մոտ յեկավ արևելքի զորավար (զորավար) Գրիգոր՝ Բակուրյանի<sup>3</sup> վորդին, վորը տեղ եր Ուղթյաց (Ութիլի), Կարնո-քաղաքի և Կարսի. և նրանք հույժ ուրախացան և հանդարտվեցին: Յեվ հանձնեց [Գրիգորը] Գեորգ թագաւորին քաղաքաբերդն Կարսի ու նրա շրջակա դավաւր. ապա բաժանվեցին: Իսկ Գեորգ թագաւորը թողեց Կարսում շալջ (շալջ[եթ]-ցի) ազատներին (ազնվականներին) և տուն վերադարձավ...

Մինչ այս ժամանակ Տփղիս քաղաքը, Ռուսթավը, Հայքը (Սոմխիթն) և ամբողջ Սամշվիլցին<sup>4</sup> ու Աղարա[կ]ները՝ թուրքերի ձեռին էին. Իսկ Թոնդրն (Թրիալեթն) ու Յլղեկարը ձղճնդիդելի<sup>6</sup> քեռորդվո ձեռին եր...

Ապա թուրքերն՝ իմանալով Սամշվիլցիի առումը [Թեոդորոս, Աբուլեթ և Հովհան (Իվանե) Որբելների կողմից]՝ Հայքի (Սոմխիթի) բազում բերդերը թողին և գիշերով փախան... Իսկ մինչ այդ

Իբրև լուաւ դայս (գքաջագործութիւնս Գէորգեայ) Մելիք Շահ Սուլտանն՝ եկն և անդրէն էառ գճամշոյտէ, և գերեաց զՎիրս և զԻւանէ իշխան, և չոգաւ Յաւուրսն յայնոսիկ՝ մինչև էր Գէորգի ի բանակս, եկն առ նա Գրիգոր՝ որդին Բակուրյանայ, տէրն Ութտեաց և Կարուց և Կարնու քաղաքի՝ և խնդրեաց ի նմանէ զԿարս, և եթող նմա լինել զիրսն...

թուրքերն իրենց վրաններով աշնանը հայքով (Սոմխիթով) էյին անցնում՝ կանգ առնելու Գաջենքում (Գաչիանում)<sup>7</sup> ու Կուր գետի յեզերքին՝ Տըփղիսից մինչ Պարտավ (Բարդավ)<sup>8</sup> և Իսրի ափին և ձմեռային արոտատեղ [ծառայող] բոլոր այս սքանչելի տեղերում<sup>9</sup>, ...Իսկ գարնանը սկսում են [կրկին] վեր բարձրանալ դեպի Հայոց (Սոմխիթի) և Արարատյան լեռները, ուր ամռան պահին նրանք դառնում էին հանգիստ և ուրախութիւն՝ խոտով և դաշտավայրով, սքանչելի աղբյուրներով և ծաղկապաճույճ տեղերով...

...Յերբ վոր Սամշվիլցին գրավեցին\*, նույն տարին սուլթանի զորքը և բովանդակ թուրքութիւնն յեկավ ...[ապա] վրաց զորքն աներկյուղած հարձակվեց [այն] թուրքերի վրա, վորոնք նստած էին մինչ Բասեն (Բասիան) և Կարմիր փորայի<sup>11</sup> լեռն[եթ]ում\*\*...:

Յեվ մյուս տարին [Դավիթ թագաւորը] կալանավորեց Ասամ և Շոթա՝ Դրիգորի վորդից, և գրավեց բերդն Գիշո, և իր վորդի Դեմետրին մեծ զորքով ուղարկեց Շարվան... Իսկ մյուս տարին<sup>13</sup> ծաղկաղարդին դուրս յեկավ [Դավիթ] թագաւորն Ղանուխից՝ դնալու Արաքսի (Ռախսի) յեզերքը, և դատիկը տոնեց Նախիդուրում<sup>14</sup>... և հարձակվեց Արաքսի (Ռախսի) յեզերքին կանգնած թուրքերի վրա, վորոնց մի մասը կոտորեց: ...Սույն թվին [Դավիթը] գրավեց Հայոց (Սոմխիթի) քաղաքաբերդ Լոպին, և նույն տարին, հուլիսին, լուսադեմին, կրկին վերցրեց Ագարա[կ]ները<sup>15</sup>, քանի վոր առաջին անգամ այս բերդը նրա պապ Բագրատն եր գրավել...

...Յեվ սկսեց [Դավիթն] արևմտանքներ կատարել Պարսկաստանի, Շարվանի և մեծ Հայքի (Սոմխիթի) վրա... [Դավիթը] հարձակվեց Սուլթանի

...էսո [Դաւիթն] և դբերդաքաղաքն Հայոց՝ գլօսէ:...

\* Տես Գիտութիւնաց ձեմարանի հրատարակութեամբ 1911—1913 թ. Թ. Պետերբուրգում լույս ընծայած Bibliotheca Armeno-Georgica շարքի I—V դրքերի շապկի վերջին յերեսի annonce-ները:

\* Var. + քրոնիկոնի 330-ն եր<sup>10</sup>,  
\*\* Var. + քրոնիկոնի 336-ին<sup>12</sup>:

վրա. և զորք[ով] լցրեց [ամբողջ յերկի-  
րը] լեռն[եր]ից սկսած մինչ Կուր և Գա-  
ղից<sup>18</sup> սկսած մինչ Բերդուջ ...քրոնիկո-  
նի 340 թվին<sup>17</sup>...

...[Ապա սուլթանը] հրամայեց թուրք-  
մենուկյանը, ուր ել վոր լինի, ժողովել  
հեծելազորք՝ Դամասկից և Հալեպից  
սկսած մինչ վեր, և սրանց հետ Գան-  
ձ[ակ]ի աթաբեկին՝ իր ուժով և Հայքի  
(Սոմխիթի) բոլոր ամիրաներին\*...

...Յեղ ստվառնելով իբրև արծիվ՝  
[Իսախիթ թագավորը նույն թվի] մայի-  
սին<sup>18</sup> վերջրեց Հայքի (Սոմխիթի) բեր-  
դերը՝ Գաղք (Գաղ[իք]ը), Տերունակահնր  
(Տերունակալը), Քալազինները, Նոր[ա]-  
բե[ր]դը, Մանիգոմերը (Մանասգոմերը)  
և Նալինջաբարը (Պալինջաբարը),<sup>19</sup> և  
հունիսին [նորից] յեղավ զորքով և ան-  
ցավ Ջավախքը (Ջավախիթը), Կողան  
(Կողան), Կարնիփորը<sup>20</sup>, Բասենք (Բասիան-  
ները)՝ մինչ Սպեյր. և ուր ել դտավ  
թուրքմեններ, բոլորին կոտորեց կամ  
զերի վերցրեց. անցավ Բուխարա՞ղուրը  
և ավերեց Ուղտիքը (Ութին), ապա մեծ  
հաղթանակով յեղավ Թուրք (Թրեալեթ):  
...Յեղ ոգոստոսի քսանին Բոժանա աղ-  
բյուրներին մոտ կանգնած [Իսախիթ թա-  
գավորի] մոտ յեկան Անեցի ավաղների  
[դիվանա]դպիրները և հայտնեցին քա-  
ղաքն ու բերդերը նրան (Իսախիթին) տա-  
լու մասին: Յեղ նա շտապ կերպով հրա-  
վիրագրեք ուղարկեց բոլորին. և յեր-  
րորդ օրը նրա (Իսախիթի) առաջ կանգ-  
նած եր վաթսուհի հազար հեծյալ. ու-  
ղևորվեց և յերրորդ օրը հեղտուկյամբ  
դբավեց Անի քաղաքն ու նրա բերդերը,  
և Անվո գյուղերն ու դավառները. հա-  
նեց [Անից] Բուլասիարին\*\* իր ութն  
վորովով, կանանց և հարսներով հան-  
դերձ, վորոնց ուղարկեց Ափխազք (Ափ-  
խազեթ), և Անվո պահապան թողեց  
մեսխեցի ազատներին (ազնվականներին),

\* Var. 341:  
\*\* Var. Շուլասիարին. հմմ. 148 յեր.\* ծանոթ.:

իակ ինքը վերադարձավ Քարթլի... և  
կարգավորեց բոլոր գործերը Քարթլի,  
Հայքի (Սոմխիթի) և Անվո<sup>21</sup>...

...Յեղ ժողովվեց [Իսախիթ] թագավորի  
շուքը նենդ և ամենուրեք չարամիտ  
ազգն հայոց<sup>22</sup>, [նրանց] յեպիսկոպոս-  
ներն ու վանքերի առաջնորդները բա-  
ղում<sup>23</sup>, վորոնք պարծենում էին թե  
վրենք ինչպես հասել են ամենայն ուս-  
մանց և դիտուեթյան գաղաթնակիտին<sup>24</sup>,  
և զեկուցին, վորպեսզի նրա (թագավո-  
րի) հրամանով ժողով<sup>25</sup> դուստրվի, ուր  
տեղի ունենա հակահառուեթյուն և  
քննուեթյուն հավատով. և յեթև հաղթ-  
վեն, խոտտովանեն նրանց (վրաց) կրոնը  
և իրենց (հայոց) կրոնը նզովեն. իսկ  
յեթև հաղթեն, նրանց [յորավուեք] շնորհ-  
վի այլևս հերձվածող չհամարվել և վնչ  
եղ նզովքի յենիարկվեն: Իսկ թագավո-  
րը նրախից Հովհան (Իոանես) Քարթ-  
լի կաթողիկոսին և նրան յենթակա  
յեպիսկոպոսներին ու անապատական-  
ներին, և՛ Արսենիոս (Արսեն) Իդալթո-  
յեցուն՝ թարգմանչին և հունարին ու  
վրացիներն լեզուներում հմուտին և բո-  
լոր յեկեղեցիներին լուսավորչին<sup>27</sup>, նաև  
ուրիշ գիտուն և իմաստուն մարդկանց:  
Յեղ տեղի ունեցավ հակահառուեթյուն  
նրանց միջև լուսադեմից սկսած մինչ  
իններորդ ժամը և չկարողացան վեր-  
ճացնել, քանի վոր յերկու կողմն ել  
[տարված եր] իրար ճնշելու և վատաբա-  
նուեթյամբ պայքարելու միտումով, քա-  
նի վոր նրանք մտնում էին անանց և  
զժվար յելանելի գործերի [քննու-  
եթյան] մեջ: Չանձրանալով սրանով՝ թա-  
գավորը դիմեց նրանց. «Ի՞նչ, հայրեր,  
այնպիսի խորուեթյանց մեջ եք մտել և  
այնպիսի խորուեթյանց տեսողություն  
ունիք, իբրև փելիստովաներ, վար մենք՝  
թերուաներս և կատարյալ աշխարհիկ-  
ներս՝ չենք դիմանում ձեզ հասկանալու.  
և դուք զարմանում եք, վոր յես՝ զին-  
վորականության մեջ սնվածս՝ նեռու  
յեմ ուսումնականությունից և դիտու-

...Այլ և կամեցաւ [Իսախիթն] միա-  
ւորել զհայս և զՎիրս. և կոչեաց զՅով-  
հաննէս կաթողիկոս Քարթլայ և զԱր-  
սենիոս Քարթլեցի՝ զթարգմանն Վրաց  
և Յունաց լեզուին, և զեպիսկոպոսս և  
զվարդապետս Հայոց, և արար ժողով-  
և քննէին յառաւօտէ մինչև ցերեկոյ,  
և ոչ հաւանէին միմեանց: Ապա ասէ  
թագաւորն. Մենք անվարժ հմբ ի խո-  
րագոյն բանող՝ զոր արկեալ էք առա-  
ջի, և ոչ կարէք դուք ելանել ի դուրս  
եւ. ինքն պարզ և յայտնի բանիւ խա-  
ղապացուցեալ զերկոսին կողմանս՝  
արձակեաց զժողովն:

Այլ ինքն սիրէր զագգն Հայոց և  
զեկեղեցիսն և զոմն հետոր վարդա-  
պետ ի Հայքատ՝ Սարկաւազ անուն.  
խոտտովանէր նմա դյանցանս իւր, և  
կորացուցեալ զպատուական գլուխն՝  
օրհնէր ի նմանէ. և նստէր ընդ նմա  
և վարէր պարանոցաւ նորա. և նա  
ասէր. Լուծեալ եմ և հոտեալ ի ծերու-  
թեանս ես. ի բաց գնա յինէն՝ զի մի  
աշխատ լիցիս եւ թագաւորն համբու-  
րէր և ասէր. Անպակաս լիցի հոտս այս  
յինէն, հոյր պատուական եւ պար-  
զեկաց նմա դիւզ առնիկեր վանացն<sup>28</sup>.  
ի ծառայութիւն նմա եւ ի յօրհնելն  
զթագաւորն՝ զայս ասէր՝ եղեալ զձեռս  
ի վերայ գլխոյն: Դաի գիտալի ծառայ  
իմ, և իւզով սրբով օծի գնա մինչև  
յտասներորդ տուն: Եւ գուարձանայր  
արքայն և զովք զզեկեղեցիկերոյ թարգ-  
մանութիւնն Հայոց<sup>29</sup>...

իյունից. այս պատճառով անպետ, հասարակ և պարզ խոսքերով կզրուցեմ ձեզ հետ: Ասաց թե վոչ այս՝ [Թագա-վորն] այնպիսի բառերով սկսեց խոսել նրանց (հայերի) դեմ, վոր միմիայն աստված կարող եր դնել նրա բերանը այնքան առականեր... [Յեզ] գոցեց [աստված] նրանց (հայերի) բերանն [այնպես, վոր] նրանք անկարող յեղան պատասխանելու, և միանգամայն համբ [չարձրեց նրանց], ինչպես յերբեմն մեծն Բարսեղը (Վասիլին) Աթենքում հերձվածողներին, և այն աստիճանի յերկյուղած և բոլորովին տկար զարձրեց, վոր նրանք (հայերը) իրենց հաղթահարված ճանաչեցին և միմիայն կարող եյին ասել. «Մենք, արքան, կարծում եյինք, վոր դու այս ձեր վարդապետներն աշակերտն ես. իսկ այժմ տեսնում ենք, վոր դու ինքդ ես վարդապետների վարդապետը, վորի յեղունգին նրանք (վարդապետները) հասած չեն: Յեզ այսպես իրենց իսկ մեղադրելով՝ [հայերն] ամոթահար վերադարձան [իրենց տեղերը և] այլևս չեյին համարձակվում յերբեցիկ [կրկնել] այն (հակաճառությունը)՝...  
...[Դավիթ արքայից-արքայի] հովանու ներքո ժողոված եյին ժողովրդներ, լեզուներ, թագավորներ և արքաներ Ռսիթի և Ղփչախի, Հայքի (Սոմսիթի) և Փրանկոտանի (Փրանգեթի), Շարվանի և Պարսից յերկրի՝ համաձայն տեսլյան նաբու քողոնսորի՝»...

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հմմ. Վարդանի (Վեն., 106) տեղեկությունն այս ասթիվ. «զկնի նորա (Բագարատայ) առնու Գէորգ որդի իւր. որ և գնացեալ զկնի Կիւրիկէի ի Ռորասան առ Մելիք-չահն, զարձան պատուով»:
2. Բանա գյուղը Տայքումն եր իր հրաշալի ճարտարապետական կոթողով՝ Ատրնեբսեհի (IX—X դ.) տաճարով, վորն իր հատակագծով և ընդհանուր կոնստրուկցիայով նման է Ջվարթնոցին (և Անիի Գուգիկի տաճարին 1001 թ.) տես E. Такайшвили, — «Материалы по археологии Кавказа», в. XII, М. 1909, стр. 88—117.
3. Գրիգոր Բակուրյանը, վորը ծագում եր «կրոնով վրացացած անվա-

նի հայ տոհմից» (из огузинившегося по религии армянского знатного рода), Տայք-Վղարջեցի յեր, մի ժամանակ Անիի ամիրա, ապա Բյուզանդական պետական և վարչական գործիչ. տես. Н. Марр, Арк'аун, монгольское название Аристан, в связи с вопросом об армянах-хакелонитах, — «Византийский Временник», т. XII, 1905, стр. 17—18. Նալբը, Иоанн Петрицкий, грузинский неоплатоник XI—XII века, — «Записки Вост. Отд. Рус. Арх. о-ва», т. XIX, 1909, стр. 54, և այլուր. Լ. Միլիխեր-Բէկ, Հայերը վրաց հին գրականութեան մէջ, — «Գեղարուեստ», VII, Տփղ. 1922, էջ 35: Հմմ. նաև M. Brosset, Histoire de la Géorgie, t. I, p. 346, n. 1.

4. Տես նախորդ՝ Գ. գլխի 28-րդ ծանոթությունը:

5. «Ագարակ» || «Ագարակն դարապատ» .. «Ագարակն տիղի դարապատ» || «Ագարակն կոչեցեալ դարապատ» լավ ծանոթ է Ստ. Որբեյանին (Պատմութիւն նահանգին Սիսական, 1911 թ., 379, 383—385), իրրև վրաց Որբեյանների կալվածք Լոռիի մոտ. սրա մասին մանրամասն տես. А. Ерицов, Монастырь Ахтала, — «Кавказская старина» № 1, 1872, стр. 21—22 и прим. 16.

6. Այսպես եր կոչվում վրաց արքունիքի առաջին աստիճանավորը՝ «վազիրապետն» և «ավագ դիվանագիրը», վորը Ճղ'ոնդիդի (Մարտվիլի) մետրապոլիտի կոչման հետ եր սովորաբար կապված (Իվ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, գ. II, մ. 1, Տփղ. 1928, էջ 124—140): Այս «Ճղ'ոնդիդի» տիտղոսն է, վոր հետագայում աղավաղված ձևով հիշատակվում է և հայ աղբյուրներում, որինակ՝ «Ճղունտիլի»՝ Հաղարծնի 1184 թ. արձանագրության մեջ (Մետրապ եպ., Հայկական արձանագրութիւնները, — «Ազգագրական Հանդէս», XXV, 1914, էջ 71. А. Меликсет-Бекоев, Одна из надписей в Агартинского монастыря, — «Христ. Восток», т. III, 1915, стр. 197—198), կամ «Ճղաւնդիտէլ»՝ Ստ. Որբեյանի պատմության մեջ (Պատմութիւն նահանգին Սիսական, 355):

7 Տես ա. պրակի Ա. գլխի 6-րդ ծանոթությունը:

8. Հմմ. «Տմարածատափ» կոչված վայրը, վորը հայտնի յե Գեորգ Աթոնեցի վարքաբանությունից (Աթոնի Իվերոն վանքի 1074 թ. ձեռագիրն ազգայնելով, վրացերեն, Տփղիս 1901, էջ 291), վորն, ըստ Իվ. Ջավախիշվիլու (Վրաց ժողովրդի պատմությունը, II, 308) 5 վերստանոց զինվորական քարտեզի նույն «Տաուրոտափ»-ն պիտի լինի այժմյան Ղարայաղից դեպի հյուսիս-արևելք նաև՝ Н. Алонц, Армения в эпоху Юстиниана, стр. 314 и прим. 1 там же):

9. Հմմ. Ղազար Փարպեցի անկարագրությունն Արարատյան դաշտի և լեռների (Պատմ., VII գլ.):

10. Այսինքն 1110 թ.

11. Տես այս պրակի Գ. գլխի 13-րդ ծանոթությունը:

12. Այսինքն 1116 թ.:

13. 1117 թ.:

14. Տես ա. պրակի Ա. գլխի 6-րդ ծանոթությունը «Նախիդուր»-ի (խիդլի — կամուրջ) վրացերեն նշանակում և կամրջատեղ. հետևապես վնչ մի կարիք չկատուգարանելու այն հայերն՝ ի նախէ դրան, ինչպես M. Brosset-ն է յենթադրում (Histoire de la Géorgie, t. I, p. 160, n. 4):

15. Տես 5-րդ ծանոթ.:

16. Տես ա. պրակի ԺԷ. գլխի 6-րդ ծանոթությունը:

17. Այսինքն 1120 թ.:

18. 1123 թ. (Իվ. Ջավոխյանի վրաց ժողովրդի պատմությունը, II, 525):

19. Այս առթիվ վարդապետը (Վերնատիկ 1862, էջ 119) գրում է. «Եւ ընդարձակեալ Դաւիթ զսահմանս Վրաց, առեալ զՍուխիսիս և զսահմանս իւր, և զՓայ և զՏէրունական, և զՏայուշ և զԿայեան և զԿայծոն, և զՇոտէ և զՏաշիր, և զՄանսկանաբերդ, և զբոլոր իշխանութիւնն Հայոց Կիւրիկէի և Արասայ: Ըստ Ստ. Որբեյսմի (Տփղ. 1911, էջ 379) «առին [վիրք]... զՏաւուշ, զՓայ, զՏէրունական, զՀաււէ և զԱնի ի 572 [ -1123] թուականին»:

20. Տես այս պրակի Գ. գլխի 13-րդ ծանոթ.:

... Յեվ վորդումածություն ցույց տվեց [Թամարը] բոլորին իրենց կարգով, վումանց նորից շնորհելով և վումանց ավելադնելով. և այսպես [շնորհալի յեղան] վրացիք (քարթվեխները), սոմխիթցիք, թորեցիք, մեսխերն ու տայեցիք...

... [Ապա վրացիք] դիմեցին Պարտավ (Բարդավ)՝ հինավուրց մեծ քաղաքը, և կործանեցին Առանը և սաստիկ պատերազմներով նվաճեցին... Հայկի (Հասի) յեղբայր\* Բարդոսի յերկիրը\*\*...

Յեվ՝ վերադառնալով աշտեղից՝ [վրացիք] նույնիսկ մի ամիս էլ չհանգստացան, շտապ գնացին և արշավեցին Արդրումի վրա, վոր է դուռն Կարնո-քաղաքի. և աշտեղ էր բազմություն պատերազմներին... ուր [վրացոց] ոգնական էյին [դրսից՝] սուբմարեցիք\*\*\*, կարսեցիք, սպերցիք, և ներքուստ՝ Սուլդուխի վորդի նասրադինը:

... [Ապա վրաց] միացյալ ուժերն յիւն Գեղարքունիք (Գելաքուն) և՛ անցնելով Սաչենն (Սաչխանն)՝ իջան Կարկար (Ղարղարի\*\*\*\*) յերկիրը<sup>22</sup>. համեմտվ Բայլական (Բալղուն\*\*\*\*)՝ ավերեցին ամբողջ Առանը... իսկ Կարկարից (Ղարղարից\*\*\*\*) վեց որման յեկան մինչ Շամքոր (Շանքոր)...

[Յեվ] նորից գնացին Լոռիից Սարգսի վորդիք՝ յերկու յեղբայրներ՝ Զաքարիա ամիրսպասալարն ու Հովհան (Իվանե) գործակալն (մսախուրթուխուցեան)՝ ավերելու Արաքսի (Ռախսի) յեզերքը. և աշտեղ էր, վոր քարավանները հսկելու և կողոպտելու յեկել էյին Կվինեցիք, բժնեցիք և ամբերդեցիք, վորոնց հետ նրանք կես ճանապարհին հանդիպեցին և կովի կպան իրար հետ. և մեծ պատերազմն ու քաջարի պայքարը գովելի յեր. [և վրաց վորքն] ամեն ինչով լի և անվանի վերադարձավ [Թամար թագուհու ու նրա ամուսին Դավիթ թագավորի մոտ]...

\* Բնադրում՝ վորդի:  
\*\* Բնադրում՝ հայրենիքը:  
\*\*\* Բնադրում՝ սուբմանեցիք:  
\*\*\*\* Var. Ղուարղուար:  
\*\*\*\*\* Var. Բլաղուն:  
\*\*\*\*\* Var. Ղուարղուար:

Սրանից հետո Կայենի տեր Հովհան (Իվանե) գործակալը (մսախուրթուխուցեան) դրդեց Դավիթ [թագավոր]ին վճռական, անվանի և մեծ ուժով արշավանք ձեռնարկել ավերելու մեծ Գեղարքունիքը (Գելաքունը), Պարսից-բազարն ու Գորլաքունը\* [վորը դարձյալ վրաց հաղթությամբ վերջացավ]։...

... [Յեվ] ամիր- [Ա]բուբաքրի ձեռք էր Ատրպատականը (Ադարբադազանը) մինչ Հայք (Սոմխիթ)...

... Ապա ամիր-Միհրան՝ Փալավանդի վորդին, և Աղսարթան շիրվանշահը (շարվաշե) ամբողջ Առանի մեծամեծներով հանդերձ յեկան... [և] կանգ առին... Ագարա[ի]ի պուրակում...

... [Յեվ արքայական տոնախմբությանն] Թամար և Դավիթ [թագավոր]ին ու նրանց վորդի Գեորգին... Տփղիս քաղաքից դուրս նախ և առաջ վորջունեցին ոսերն ու զփչախները՝ հներն ու նորերը, ապա՝ հերացիք և կախք, ապա՝ վրացիք (քարթվեխները), վորից հետո թորեցիք, շավշ-կղարջ-տայեցիք, ապա՝ սոմխիթցիք (սոմխիթարնի), վորից հետո՝ ափխազներն և սվան-մեղրել-գուրխացիք...

... [Ապա] աթարակին ծանուցին, վոր պարսիկները՝ ժողովելով Նախիջևանում (Նախճևանում)՝ յեկել են Առան...

... [Յեվ] բոլորը ժողովեցան Սոմխիթում, ուր գնաց և Թամարն, ու տեսավ, վոր աշտեղ էր շիրվանշահը (շարվաշե) և ամիր-Միհրանը, նաև Ղփչախի թագավորի յեղբայրը մեծ գորքով, ուր նրանք մի քանի որ մնացին աղոթելու համար...

... Յեվ կանգ առան [վրաց գորքերը] Յեկեղյաց (Ելեկեցիի\*\*) գետի վրա և՛ հանվելով աշտեղից՝ գնացին Շամքոր (Շանքոր\*\*\*)...

... Ապա զինված նստեց թագավորը քուրանի վրա, վորը՝ լ՛բրև հուշակ ստացած՝ նա գնել էր Վախտանգ Սաչենցուց (Սաչխենցուց), հատուցանելով վերջինիս բերդով և ավանով, վոր են Դարդմանք\*\*\*\* 23...

... [Յեվ փախուստի դիմելով՝ պարսից գորքի] մի մասն ապաստան գտավ Գեղարքունյաց (Գելաքունի) լեռներում...

... Աբուբաքր (Բուբուբար) նախկին աթարակը՝ Նախիջևան

\* Var. Գորալաուքը.  
\*\* Var. Ելեկեցիի:  
\*\*\* Var. + ... հազար հազարաց և բյուր բյուրոց, թվով մեծագույն, իբրև մորեխներ և ավազը ծովի, Շամքորից (Շանքորից) մինչ լյառն Շոթի և Վարդուհաշտի (Վարդանաշտի), մինչ դուռն Գանձա[ի]ի...  
\*\*\*\* Բնադրում՝ ճարմանք:

(Նախճեան) ցաղթամբ՝ ինունսուրեց... ամիր Միհրանին (ամիր-Միրանին)<sup>24</sup>...

... Հովհանն (Իվանն) Միտրոպոլիտ, վորը քաջամարտիկ եր պատերազմում՝ փոքր արշավախմբով անցավ Գեղարքունիք (Գեյրայուն)... [Այդ մամանակ իշխումու գործը] գալիս եր Գանձա[կ]ից՝ դիմելով պեպի Սուրմարի (Սուրմանի) յերկիրն և [Սոր]~Վիրապի վանքը<sup>25</sup>... [ուր գտնվում եր] Դվինի և Հայքի (Սոմխիթի) տեր՝ Աելակուց<sup>26</sup>՝ ակարակի սնած առյուծ դյուցազնը՝ Սուրմարեցու (Սուրմանեցու) յեղբայրը...

... [Ապա] Թամարն իջավ մինչև Դվին... և վերադարձին կանգ առավ Ագարա[կ]ում՝ լի փառք և յերջանկությամբ<sup>26</sup>... [Իսկ] Հովհանն (Իվանն) գործակալը (մսախուրթուխուցեսը)՝ մեծ գորքով [արշավելով] և անթիվ ավար ուղարկելով՝ Խաչենեցի (Խաչինեցի) մեծամեծներին բերեց թագավորի մոտ...

... [Ապա վրաց գորքը]՝ ամեն ինչ ավերելով՝ հասավ Բասեն (Բասիան)<sup>27</sup>...

\* \* \*

... Ապա թագավորի մոտ յեկան ծառայելու յերկու յեղբայրներ՝ Սարգիս ամիրսպասալարի վորդիք, վորոնք այն ժամանակ հույժ մեծարյալ եյին թագավորի կողմից՝ Չաքարիա ամիրսպասալարն և Հովհանն (Իվանն<sup>28</sup>) գործակալը (մսախուրթուխուցեսը)<sup>28</sup>, և Վրաստանի բոլոր մեծամեծները թագավորի մոտ եյին. և Հովհանն (Իոանն) կաթողիկոսն՝ հրեշտականմանն<sup>29</sup> և աստվածային հոգավով լի, և այլ յեպիսկոպոսներն ել նվազ չափով ժողովել եյին թագավորի մոտ: Մի որ պատարագում եր Հովհանն (Իոանն) կաթողիկոսն, և յերբ [սուրբ] խորհուրդը վերջացավ... բոլոր արժանավորները հաղորդվեցին նշխարով. նշխար վերցնել ցանկացավ նաև Չաքարիա ամիրսպասալարը. սակայն քահանաներն այն չտվին նրան, քանի վոր նա կրոնով հայ եր՝ նզովյալներից, և ամոթխած ուզեց վերցնել նշխար և հաղորդվել (ուտել): Այս եր պատճառը, վոր [կաթողիկոսն] իբրև բոց գրգռվեց և սկսեց սաստիկ մերկացնել նրան, ասելով՝ «ուղղափառներից վոչոք թույլ չի տա քահա-

\* Բնագրում՝ «միմավալնի քուեղ՝անասա դա վանիսա Սուրմանս միսիսի գուիրաբխա»:  
\*\* Բնագրում՝ «Նրիթ Գուզ» (sic):  
\*\*\* Var.՝ Իոանն:  
\*\*\*\* Բնագրում՝ հավասարն հրեշտակաց:

նայագործության [ժամանակ] տալ նշխար ձեզ, յոթն անգամ նըզովյալ հայերին. իսկ շունը վոր գտնի, լայեղ ել չի անի ձեզանից փախցնի»: Այս պատճառով Չաքարիան ամոթխած գնաց իր վրանը: Յեվ յերբ Չաքարիա ամիրսպասալարին հրավիրեցին դահլիճ ընթրիքի, նա համառոտ ճառով դիմեց անհավատներին, քանի վոր խոսքով կշտամբում եր մեր (վրաց) դավանությունը: Ապա հոգավով սրբով լի կաթողիկոսը պատասխանում եր և բացատրում: Իսկ Չաքարիան՝ չկարողանալով ընդդիմադրել՝ ասում եր. «Յես՝ արշավանքներում սննվածս՝ ի վիճակի (բարեկիրթ) չեմ քեզ պատասխանելու, և կդիմեմ մեր դավանության (հավատքի) վարդապետներին, վորոնք իմ փոխարեն կամաչացնեն՝ քեզ»: Իսկ Հովհանն (Իոանն) կաթողիկոսը պատասխանեց՝. «Թող լինի Քրիստոսի և միշտկույս աստվածածին Մարիամի կամքը, վորը կամաչացնի նրանց ժխտողներին»:

Հսելով այս՝ Չաքարիան մարդիկ ուղարկեց իրենց (հայոց) կաթողիկոսի, նաև յեպիսկոպոսների, վարդապետների ու գիտունների մոտ: Իսկ Հովհանն (Իոանն) ընդդիմադրում եր սրան՝ ասելով. «Հրաժարվիր այդ անելուց, քանի վոր պետք ե իմանաք, վոր ճշմարիտ դավանությունն (հավատն) այս ե»: Բայց Չաքարիան նրան չլսեց: Ապա յեկավ կաթողիկոսն Վանի, և բոլոր յեպիսկոպոսներն ու վարդապետները, և սկսվեց քննությունը: Յեվ նստեց թագուհին՝ հուսով առ սուրբն թագուհին, և Դավիթ թագավորն և բոլոր մեծամեծները Վրաստանի (Սաքարթվելոյի). մի կողմը [նստացրին] Մխարզթեյներ Չաքարիա և Հովհաննին (Իվանեյին), [և] մյուս կողմը հրավիրեցին [Հովհանն] կաթողիկոսին, [վորը] մտավ ասելով հետևյալ սաղմոսը. «դատ արա ինձ, աստված, և ինձ»: Յեվ յերբ նա մտավ, թագավորները վոտքի յելան և պատվով նստացրին, նաև հայոց (սոմեխների) վարդապետներին, վորոնց նույնպես հարգանք ընծայեցին՝ ըստ կարգի:

Յերբ հարցուփորձը վերջացավ՝ բոլորը լուեցին. ապա հայոց (սոմեխների) դավանության (հավատի) մասին սկսեցին խոսել, ճառել և յերկարաբանել. և բարեհիշատակ [Հովհանն] կաթողիկոսը, աստվածային ներշնչմամբ ի վերուստ, խելացի բացատրում եր և իմաստնորեն պատասխանում՝ հերքելով նրանց (հայերի) ասածները: Իսկ նրանք (հայերը) վեճի մեջ ելի իրենցն եյին պնդում (հաստատում): Յեվ շարունակվեց բանավեճը մինչ հսկումն:

\* Var. կպատասխանեն:

Յերկյուզ կրելով, վոր պատմությունս [կարող ե] յերկար լի-  
նել\*, բավականանում եմ ասելով [այսքանը]։ Ինչպես գիտեք, հա-  
յերը մեծ վախասուն բարձրացրին... և [Հովհան կաթողիկոսը]  
դիմեց նրանց՝ ասելով. «Թորգոմյան (Թարգամոսյան) տան [զա-  
վակներ], վոր համախմբվել էք ճշմարիտ հավատի դեմ, գիտցեք,  
վոր մարդկությանը տիրել և ստտանան...» և ին...

... Իսկ հայերը դիմեցին նրան՝ ասելով. «Այսպես ե...»: Հով-  
հան կաթողիկոսն ասաց. «Այժմ գիտցեք, յեթե ձեր հավատը մե-  
րից լավն է, հացը ձեզանով տիրոջ մարմնի կվերածվի. իսկ յեթե  
մեր հավատն է ձերից լավ, մեր մատուցածը (քահանայագործածը)  
տիրոջ մարմնի կվերածվի»: Իսկ հայերն ասացին. «Այսպես լինի»,  
Կաթողիկոսը լսողության համար սոսկալի բան ասաց. «Գործով  
հրապարակենք և վոչ խոսքով»: Նրանք ասացին. «Ինչ վոր կա-  
նես, կանենք»: Կաթողիկոսն ասաց. «Յես ձեզ մի շուն կտամ և  
յերեք որ ժամանակ, վորպեսզի թափորով և աղոթելով լուսացնեք,  
և [այդ] յերեք որը նրան (շանը) անոթի պահեք. և մի շուն ել  
դուք ինձ տվեք, և յերեք որ անոթի պահեմ, և թափորով ու ա-  
ղոթելով լուսացնեմ, ապա կերեա ճշմարիտ դավանությունը (հա-  
վատը): Յերրորդ որն յես կկատարեմ անարյուն զոհ[աբերու-  
թյուն]ը և ձեռովս կվերցնեմ նշխարն և, թեև անվայել է, կնե-  
տեմ շան առաջ, վորը դուք ունիք: Նույնպես և դուք բերեք ձեր  
նշխարը և նետեք շան առաջ, վորն յես ունիմ. և վոր նշխարն ել  
ուտվի, այն դավանությունն է վատ. յեթե ձերն ուտվի, դուք ա-  
մաչեցեք, և յեթե մերն ուտվի, մենք ամաչենք»:... Թեև հայերը  
չկամեցան, սակայն յերկուսն ել տվին իրենց շները և գնացին  
դեպի իրեց վրանները:...

Ուրբաթ որն եր. սկսեցին թափորը: Մի կողմը գտնվում էին  
թագավորն ու կաթողիկոսն և ամբողջ քահանայական դասն, և քիչ  
էին այնտեղ յեպիսկոպոսները, քանի վոր թագավորը ժողովի  
չեր կանչել: Յեվ մյուս կողմը գտնվում էին հայերն և Մխարզը-  
ձեհները՝ Չաքարիան ու Հովհանը (Իոանեն): Յեվ պիշերը յերկո-  
քյան կողմերն ել լուսացրին: Յեվ շարաթ որը կրկին սկսեցին  
թափորը, և հսկումով ել լուսացրին միաշարաթը. ապա արևն յե-  
լավ, և բոլորը դիմեցին յեկեղեցի՝ արտասովալից աղոթելով աստ-  
ծուն: Պատրաստեցին սուրբ սեղանը: Յերկու կողմունն ել տեղի  
ունեք լացը: Անարյուն զոհաբերությունը վերջադավ թե վոչ,...

\* Մտ. վոր [բանավեճը] կարող ե մինչ ղիշեր շարունակվել:

կաթողիկոսը գնաց դեպի ժողովականները՝ ճանապարհին յերգե-  
լով. «սուրբ, սուրբ, սուրբ, տեր զորությանց ևն», ապա դիմեց  
բոլորին՝ յեպիսկոպոսներին ու Մխարզըձեհներին, և նրանց (հա-  
յերի) դավանակիցներին ասավ. «Լսեք այժմ, Թորգոմյան (Թար-  
գամոսյան) տան [զավակներ]... յեթե ձեր հավատը ճշմարիտ է,  
այս սուրբ հացը Քրիստոսի մարմին կդառնա, իսկ յեթե մեր հա-  
վատն է հաճո աստծուն, մեր որհնածը տիրոջ մարմին կդառնա:  
Յեվ թեև անվայել է, բերեք այն շունը, վորը յես ձեզ տվի, և  
այս սուրբ հացը նրա առաջը կդնեմ: Յեթե շունը մոտենա նրան  
և վերցնի, վոչինչ է մեր (վրաց) հավատը: Ապա ձեր տված շունը  
բերեք, և ձեր որհնած հացը դնենք նրա առաջ, և տեսեք թե ինչ  
կլինի, և նրանով կրացահայտվի, թե ում հավատն է հաճո Քրիս-  
տոսին»: Իսկ հայերը՝ թեև չկամեցան, բայց արդարացի պա-  
տասխան չունեցին, [և] հարկադրված ասացին կաթողիկոսին. «Քո  
նշած այս գործը քեզ ե վայել կատարելու»:... Յեվ կանգնած եր  
կաթողիկոսն իբրև կոթող (աշտարակ) աննկուն (անդրդվելի)՝ յե-  
րեսը պճնազարդ: Ապա պատվիրեց բերել յերեք որ անոթի մնա-  
ցած շունը... իսկ հայերը տկարացած շվարել էյին, և զարմանում  
էյին:

Ապա կաթողիկոսը խնդրեց թագավորից, վոր հրամայի ժո-  
ղովրդին լուր. և լուսեցունը հաստատվեց թե վոչ, լուսափայլ բե-  
րանով դիմեց Հայոց (Սոմխիթի) վարդապետներին\* և Մխարզը-  
ձեհներին... Յերբ քահանաները շարվեցին, բերին այն շունը, վորը  
կաթողիկոսի մոտն եր, և նետեցին նրան (հայոց) նշխարը (զոհը):  
Իսկույն յետ վերցրեց: Ապա վրացիք սկսեցին փառաբանել աստ-  
ծուն... իսկ հայերն՝ ինչպես գորդերը (դողդիները) լճից դուրկ՝  
կանգնած էյին լուռ ու մունջ... իսկ թե վրացիներին ինչպիսի  
ուրախություն, հույս և աստվածային փառք վիճակվեց, անկա-  
րելի յե պատմել:

Յեվ ներս մտան թե վոչ, թագավորն և կաթողիկոսը մեծ ընթ-  
րիք պատրաստեցին: Իսկ ամոթխած հայերը գնացին Մխարզը-  
ձեհների վրանը: Հովհան (Իոանեն) գործակալը (մասխուրթուխու-  
ցեան) ասում եր իր յեղբայր Չաքարիա ամիրսպասալարին.  
«Չուզեցի ընդդիմախոսել վրացիներին, քանի վոր ճշմարիտ հա-  
վատի տեր են: Այժմ ինչը պետք է ինձ լինի խոչընդոտ (կանգ-  
նեցնի), վոր յես չընդունեմ ճշմարիտ հավատն և չմկրտվեմ վրաց

\* Բնագրում «մարդասնթա» և «մրիսանիթա» (sic). պետք է լինի՝ «մոձղ-  
վարթա»:

կաթողիկոսից»։ Իսկ նա (Զաքարիան) պատասխանում էր. «Հասկացա, յեղբայր, վոր ճշմարիտ հավատը վրացիներինն է. սակայն [վերջին] դատաստանի որը թող նրանց հարցնեն, ով առաջինները ցանկացան հերձվածող լինել. յես չեմ միանա վրացիներին»։ Լսելով այս՝ Հովհանն (Իվանեն) պատասխանեց նրան. «Զարմանում եմ քո իմաստությունից, վոր հասկացար և լավագույնը չես ընտրում. իսկ յես չեմ հպատակվում քո դիտավորությանը, այլ մկրտվում եմ՝ [ընդունելով] վրաց հավատը»։ Յեվ իսկույն և յեթ յեկավ ու մկրտվեց մեր (վրաց) հավատով Հովհանն (Իոանն) կաթողիկոսից և հայերից շատ շատերն էլ յեկան մկրտվելու, և յեղավ ուրախություն ու խնդություն։ Իսկ Զաքարիան նույն անհավատության մեջ մնաց<sup>29</sup>։...

\* \*

... Մինչ այժմ Կարսը (Կարին) թուրքերի ձեռին էր. [Թամարը] զորք ուղարկեց պաշարելու այն. թուրքերը՝ լսելով այս՝ թողին Կարսը (Կարին) և փախան։ Իսկ թագավորը գրավեց Կարսը (Կարին) և Կարսի (Կարիի) հսկող թողեց Հովհանն (Իվանեն) Ախալցխեցուն և նշանակեց նրան կուսակալ՝ տալով աթաբակություն և ամիրաց-ամիրայություն... և իսկ թուրքերից շրջակա յերկրները... և [նույն] Հովհանին (Իվանեյին) շնորհեց Կարսի ու նրա մերձակա յերկրները<sup>30</sup>։...

... Հունաստանի (Բերձենստանի) ծայրագույն սուլթանը՝ Զարասլանի վորդի Ռուքնադդին (Նուքրադդին\*) կոչեցյալը, վորը գերիշխում էր բոլոր այլ սուլթաններին և տիրում էր մեծն Հունաստանին (Բերձենստանին) Ասիայում և Կապադովկիայում մինչ Պոնտոսի ծովը, դիմեց իր բազում զինվորականներին և ժողովեց ութսուն բյուր, վոր է չորսհարյուր հազար\*\* (sic) \*\*\*<sup>31</sup>։...

... Յեվ Վարձիի աստվածածնի առաջ արտասովից աղոթեցին Դավիթ-Սոսլանն ու նրա զորքը... և արշավախումբ ուղարկեց

\* Var. նուբարդին։

\*\* Var. ութ հազար (sic)։

\*\*\* Var. ավելացնում է. «... վորոնց ուղարկեց Միջագետք, Կալոնբրո, Գաղատիա, Գանգրա, Անկյուրիա, Իսավրիա, Կապադովկիա, Մեծ Հայքը, Բիթլինիս և Պաֆլագոնիայի կողմերը... սպա միացրեց Յերզնկայիցվոց (Յերզնկայիցվոց), Խարբերդցվոց (Խարիբերդցվոց) և Կարնո-քաղաքացվոց... և Սալուխի վորդու փոխարեն իր յեղբորը նշանակեց Կարնո-քաղաքում»։

Վարձիից\*... Յեվ առաջապահ [գնդուն] եյին Զաքարիա Մխարգրձել ամիրսպասալարը և Ախալցխեցի յերկու յեղբայրներ Շալվա և Հովհանն (Իվանեն), վորոնցից Շալվան մանդատութուխուցես էր, [և] Ճիաբերը, և այլ թորեցիք. և դիմեցին Բասենի (Բասիանի) կողմերը... Իսկ Դավիթ թագավորը [զորքով]... դիմեց, Բոլոստիկե\*\*<sup>32</sup> կոչված տեղը Բասենում (Բասիանում), և յեկան սուլթանի բնակատեղը...։

Այսպես որեցոր բարգավաճման և մեծարման մեջ էր բոլոր գահակալներից (գայխոն ունեցողներից) պայծառագույն Թամարը՝ առավելապես աստվածպաշտությամբ, յեկեղեցիներ և վանքեր հիմնելով ու կառուցելով, վորբերին և վորբևայրիներին սփոփելով ու արդարադատությունը տարածելով։ Սրա որոք ուրախության և խնդության մեջն էր նրա թագավորությունը (թագավորությունները)։ Յերբեմն [Թամարն ու Դավիթն] անցնում էյին [հայնկույս Լիխի] և վարում այնտեղի գործերը, նաև վորսում Գեգուլթ և Աջամեթում. ապա անցնում էյին [հայնկույս Լիխի]՝ Քարթլի, Հայք (Սոմխիթ), և կանգ առնում Դվինում\*\*\*<sup>33</sup>, ուր նրանց մոտ գալիս էյին հարկեր (խարաջա) [տալու] Գանձ[ակ]եցիք և վերին քաղաքացիները։ Գարնանը բարձրանում էյին Հայք (Սոմխիթ), ստանալով հարկեր (խարաջա) Նախիջևանեցուց (Նախճեվանեցուց), և [ապա] գնում Կողա (Կոլա)՝ Արտահանի (Արտանի) գլուխը, ստանալով և այնտեղից հարկ (խարաջա), նաև Կարնո-քաղաքից, Յերզնկայից (Յերզնկայից) և այլ շրջակա քաղաքներից\*\*\*\*։...

... Յեվ ամենուրեք խաղաղություն էր, և թագավորը գանվում

\* Var. + վորին ինքը Թամարն էր առաջնորդում բորիկ վոսներով ... և առաջնորդեց Բասենի (Բասիանի) կողմերը, և մոտեցան Կարսին (Կարիին) [ու] կանգ առան։

\*\* Var. Բոլոստիկե | Բոլոստիկե։

\*\*\* Var. Դուրում։

\*\*\*\* Var. + նրա (Թամարի) գահակալության քսանյերեքերորդ թե քսանչորսերորդ տարին<sup>34</sup> հարց յեղավ Կարսի (Կարիի) [գրավման] մասին, քանի վոր վաղուց արդեն Սարգսի Թմոզվեցին, Շալվա Ախալցխեցիին և մեսիները սայքարում էյին, բայց ի վիճակի չէին գրավելու այն... Ապա Դավիթ [Սոսլանը]... հրամայեց Զաքարիա և Հովհանին (Իվանեյին) գնան և սաստիկ պատերազմեն... Յեվ յերկարատե յեղավ այս գործը, իսկ ինքը Թամարը կանգ առավ Զավախում (Զավախեթում), ուր և սպասում էր նրանցից լուր ստանալուն... [Յերբ Կարսը պաշարեցին և անջուր մնացած քաղաքացիներից շատերը կոտորվեցին]՝ մնացածները խնդրեցին Դավիթից, վոր Թամարն ինքը հասնի նրանց մոտ, վոր-



եր Գեգութում, քանի վոր սուրբ պասն եր, և յերկու Մխար-  
գրձեխներն ել թագավորի մոտն եյին: Տեղեկութունն ունենալով  
սրա մասին՝ Արտավիլի (Արդավելի) սուլթանը թշնամություն  
սկսեց քրիստոնյաների հետ: Կանչելով իր զորքը՝ շարժվեց դեպի  
Անի, և ավերեց այն, քանի վոր լսել եր Մխարգրձեխների բացա-  
կայությունը տանից, և բարձրանալով Արաքսի (Ռախսի) յեզեր-  
քով՝ անդգալիորեն յեկավ Անի, ճանապարհին վոչոքի չփնասեց և  
ավագ շաբաթ յերեկոյան յեկավ Անի-քաղաք, և հենց վոր սկսեց  
լուսանալ (լուսադեմը մոտեցավ)՝ զարկեցին գերանին, և քաղաքի  
դռները լացվեցին... [Սուլթանի զորքերը] մտան քաղաք և սկսեցին  
կոտորել և գերել [քնակիչներին], ժողովրդի մեծ մասն յեկեղեցի-  
ների մեջն եր՝ համաձայն քրիստոնեյական կրոնի, վոմանք փա-  
խան դարպասներն ու այնտեղ ամրացան և վոմանք փախան այ-  
րերը, վորոնց «քարտուն» եյին կոչում: Անմատչելի մնացին  
[միմիայն] նրանք, վորոնք բերդի կամ քարտունների<sup>35</sup> մեջն եյին,  
վորոնց մեջ [թշնամին] չմտավ, քանի վոր յերեք կողմից քարափ  
եր, ժայռոտ և քարայրներով լի: [Սակայն] գրավելով ամբողջ  
քաղաքը՝ մի բյուր և յերկու հազար մարդ յեկեղեցիների մեջ կո-  
տորեցին ինչպես վոչխարներին, բացի նրանցից, վորոնք հրապա-  
րակներում և փողոցներումն եյին: [Յեվ] այսպես վայրագաբար  
ավերեցին Անին, և բեռնակիր ու անհամար ավարով լի տուն վե-  
րադարձան<sup>36</sup>:

Յեվ Անիի ավերման մասին համբավաբերները լուր հասցրին  
Գեգութ նոր-կյուրակեյի (ախար-կիրակի) որը: Ամիրսպասալար  
Չաքարիան և գործակալ Հովհանը (Իվանեն)՝ լսելով այս՝ շատ  
տրտմեցին... Ապա Մխարգրձեխները դիմեցին թագավորին. «...Դու,  
արքան, ծանուցիր քո զորքին, վոր պատրաստ լինի գնալու Ար-  
տավիլի (Արդավելի) սուլթանի դեմ. նախ գնանք Անի...»: Հավա-  
նելով նրանց (Մխարգրձեխների) ասածը՝ թագավորը հրամայեց

պեսզի անձնատուր լինեն նրան... Իսկ յերբ [Թամարը] հասավ [բերդի] բանա-  
լիները հանձնեցին նրա վորդի Գեորգին (Գիորգիին), ապա Թամարին՝ խնդրե-  
լով խաղաղություն հաստատի, և յերդվեցին, վոր վոչոքի չհանձնի Կարսը  
(Կարի), ինչպես Անին (Անիսը) և Դվինը, այլ իր թագավորությանը կցի:  
[Թամարն] այս առթիվ հաստատ խոսք տվեց և հրամայեց իր վորդի Գեորգին  
(Գիորգիին)՝ վոր մտնի և ստանա քաղաքն ու բերդը: Յեվ յեղավ այսպես, այս  
մի քաղաքն ու բերդը [Թամարն] իրեն վերապահեց բոլոր նրանցից, վոր գրա-  
վեց՝ Չորակերտից մինչ Արաքս (Ռախս), Գաղից մինչ Գանձա[կ] և Չավսի-  
քից (Չավսիսթից) մինչ Սպեր...

իր զորքին, վոր պատրաստ լինի, և յեկան Մխարգրձեխներն Անի,  
և սկսեցին կազմակերպվել, ապա մոտեցավ նրանց (հայոց) պիղծ  
կրոնի պասը. մարդ ուղարկեցին թագավորի մոտ՝ զորք խնդրելով  
Արտավիլի (Արդավելի) սուլթանի դեմ: Ապա թագավորը հրա-  
մայեց մեսխերին, թորեցիներին, թմոզվեցիներին, հեր-կախերին  
[և] սոմխիթցիներին [յեխել],... վորոնք ժողովեցան Անիում և գնա-  
ցին Արտավիլի (Արդավելի). անցան Գեղարքունիքը (Գելաքունը)  
և՝ անցնելով Սիսականը\* դիմեցին դեպի Արտավիլի (Արդավելի)...  
[վորն և] պաշարեցին... Իսկ Արտավիլի (Արդավելի) սուլթանին և  
նրա կանանց ու զավակներին գերի վերցրին ու տանն և յերկու հա-  
զար ընտրյալ մարդիկ սպանեցին մզկիթի մեջ [ճիշտ] այսպես, ինչ-  
պես նրանք նույնն արին Անիի յեկեղեցիներում\*\*... և հաղթող վե-  
րադարձան Անի ու հույժ մխիթարվեցին... Այս ժամանակ թագա-  
վորը գտնվում եր Կողայում (Կոլայում) [և] նրա ամբողջ թագա-  
վորությունը լցվեց անթիվ հարստությամբ, վոսկով, արծաթով  
ու այլ ամենայն հարստությամբ, վոր բերեցին Չաքարիա և  
Հովհանը (Իվանեն), [և] վորի պատճառով մեծապես շնորհապարս  
թագավորը նրանց շնորհեց շատ բերդեր և քաղաքներ ու յերկըր-  
ներ: Յեվ այսպես՝ աստծուն փառաբանող, ուրախությամբ լի ապ-  
րում եյին նրանք (Մխարգրձեխները), վորոնք շրջակայում գտնը-  
վողներից ստանում եյին հարկ[եր] (խարաջա) և անհամար ընծա-  
ներ:...

Ապա թագավորի մոտ յեկան Մխարգրձեխ Չաքարիա ամիր-  
սպասալարն և Հովհան (Իվանե) գործակալը (մասխուրթուխու-  
ցեան), և Վահրամ (Վարամ) Գագեցին, և զեկուցին. «...Այժմ  
հրամայեցեք Վրաստանի զորքին, վորպեսզի պատրաստ լինի ար-  
շավելու Խորասան (Խվարասան)...»: Լսելով Մխարգրձեխների այս  
խոսքերը՝ թագավորը դիմեց իր թագավորության հայսկույս և  
հայնկույս [գտնվող] բոլոր յերեկելիներին, և հաղորդեց նրանց  
(Մխարգրձեխների) ասածի մասին: Յեվ բոլորը՝ լսելով Մխարգր-  
ձեխների կոչն արշավանքի յեխելու մասին՝ հավանեցին այս, և վո-  
րոչեցին արշավել:... Աղոթելով Վարձի աստվածածնի առաջ՝ [թա-  
գավորն] որհնեց դրոշակն ու արշավազորքը, և ուղարկեց Պարս-  
կաստան: Տվեց դրոշակը Չաքարիա ամիրսպասալարին, և նրանք  
(զորքերը) գնացին Պարսկաստան: Իջնելով Նախիջևանի (Նախձե-  
վանի) կողմերը՝ [վրաց զորքն] անցավ Չուղա և Արաքսի (Ռախսի)

\* Բնագրում Սիսպան: Var. Իսպիան:  
\*\* Var. յեկեղեցում:

յեզերքը, ապա մտավ Դարագուզի նեղ ձորը, վորտեղից վեր յեկավ դեպի Մարանդա... [Ապա՝ հաղթելով Արտավիլի սուլթանին՝ վրաց զորքն] անցավ Արաքսը (Ռախսը) և Նախիջևանի (Նախճեվանի) կողմերը, և յեկավ Տփղիս՝ Թագավորի մոտ<sup>37</sup>։...

Ապա առաջ յեկավ մեծ տրտմություն, քանի վոր վախճանվեց Ջաքարիա ամիրսպասալարը՝ Սարգիս ամիրսպասալարի վորդին՝ վորը հույժ մեծարեցավ և լի յեր ամենայն բարիքներով, հաղթող, քաջ և հույժ մաքառող... Սրան (Ջաքարիային) վողբացին Թագավորն [և] Վրաստանի ամեն մի մարդ, քանի վոր այս ժամանակներին իշխանների միջև նրանից ավելի քաջարի վոչոք չեր յերևացել, ինչպես նաև տոհմական ծագումով։—Նա Արտաքսես Յերկայնաբազուկի տոհմիցն էր, և դավանությամբ հայ էր, [և] ոժտված էր աստվածային և մարդկային բոլոր բարիքներով։ [Յեվ] այս քաջարի հայրը մի վորդի թողեց, վորը Շ[ահ]ին[2]ա[հ]\* էր կոչվում<sup>38</sup>։ Ապա [Թագավորը] կանչեց Ջաքարիայի յեղբայր Հովհան (Իվանե) գործակալին (մսախուրթուխուցեսին), և կամեցավ շնորհել նրան նրա յեղբոր պատիվն, ու տվեց նրան ամիրսպասալարություն։ Իսկ Հովհանը (Իվանեն)՝ դարմանալով այս առթիվ՝ ասաց Թագավորին. «Այն պատիվը, վոր դու ինձ շնորհեցիր, շատ և շատ մեծ է. բայց յես արժանի չեմ իմ յեղբոր անունով կոչվել ու չեմ ուզում ամաչել՝ գրավելով նրա տեղը. ուստի և շնորհիր ինձ աթաբակություն, քանի վոր Վրաստանում դուք՝ Թագավորներդ՝ տակավին սահմանած չունիք աթաբակություն։ Սրանով դու կզորացնես քո շնորհն առ ինձ, քանի վոր կարժանացնես բարձրագույն նոր պատվի, և աթաբակություն կշնորհես ինձ, ինչպես ընդունված է սուլթանների մոտ, քանի վոր սուլթանների որենքով աթաբակը Թագավորների և սուլթանների հայր և դաստիարակ է [համարվում, և այդ պատճառով էլ] կոչվում է «աթաբակ»։ Սրանով կզորացնես քո շնորհը նախ և առաջ առ ինձ»։ Լսելով այս՝ Թագավորը շնորհեց նրան աթաբակություն, վոր մինչ այն Վրաստանի արքունիքում (Թագավորների առաջ) վոչոքի չեր տրվել, և գործակալություն (մսախուրթուխուցեստոբա) շնորհեց [Թագավորը] Ջաքարիա Գագեցու վորդի Վահրամին (Վարամին), վորը պատվական մարդ էր և արշավանքներում հաղթող։ Յեվ այսպես նրանք միշտ Թամար Թագուհու (Թագավորի) մոտ էյին։

\* Բնագրում Շինա (sic). Var. Շավա։

Իսկ Թամար Թագուհին (Թագավորը) ձմեռը Դվինումն\* էր լինում և ամառը Կողայում (Կոլայում) ու Ցելի լճի [մոտ], յերբեմն անցնում էր Ափխազք (Ափխազեթ), Գեզութ և Ցխում\*\*։...

## ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Աշոոնի»-ն նույն Աշոոնիք կամ Աշարունիքն է (Յերասխաձորը). «Ի գաւառն Աշորնիս... ի գիւղն, որ ասի Կաղեզունն»՝ այսպես է այն հիշատակում Մ. Ուռնայեցին (Ժամանակագրութիւն, Բ. տպ., Վաղ. 1898, էջ 268—269)։ Հմմ. M. Brosset, Histoire de la Géorgie, I, 2, p. 384, n. 4.

2 Հմմ. Վարդանի (Վեն. 1862, էջ 123—124) տեղեկությունը. «Շահի-Արմէնն... տիրեալ երկսասան քաղաքաց, կոչեցաւ Թագաւոր Հայոց, որ է Շահի Արմէն՝ ըստ իւրեանց լեզուին»։

3 Անտարակույս, «Հագար ու մի գիշերի» աղբեցությամբ և ասված։

4 Հմմ. Ս. Որբեյանի (Տփղիս 1911, էջ 382) վկայությունը. «Գէորգի էառ զԱնի քաղաք ի 610 (=1161) թուականին և դամենայն տունն Շիրակայ»։

5 Անիի առումը Գեորգի կողմից, համաձայն վերոհիշյալ հայ պատմիչների, տեղի պիտի ունենար 1161 թվին։ Այս առթիվ Մ. Ուռնայեցին (op. cit., 426) գրում է. «Ի թուականութեան Հայոց ՈԺ (=1161) Թագաւորն Վրաց Գորգի որդի Դեմետրի՝ որդւոյ Դաւթի, եկն ի վերայ Թագաւորաբնակ մեծի քաղաքին Անւոյ յաւուրս ամարայնոյ, յաւուր երկուշաբաթի և... ի վաղիւն առեալ զքաղաքն բռնութեամբ... Եւ եղեալ պահապանս քաղաքին արս ընտիրս երկու հագար, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ և գնաց ի Թագաւորութիւնն իւր. իսկ Տէր Խլաթայ, որ Շահի-Արմէնն կոչեն, ժողով արարեալ արս ութսուն հագար, եկն պաշարեաց զքաղաքն Անի. դայն լուեալ Թագաւորն Վրաց՝ եկն ի վերայ նոցա և կոտորեաց գնոսս, և արար գնոսս փախըստական ...և առին [վիրք] ծառայս երկու հագար և հինգ հարիւր, զխաւորս՝ որք էին հարիւր յիսուն ի նոցանէ. ամիրայք մեծամեծք. և ձիս և ջորիս և ուղտս անհամար, և վրան և ջօշան, և այլ սլեհ որ ոչ գոյ թիւ, և ոչխար բազում. և լցաւ քաղաքն Անի ամենայն հարստութեամբ, զոր յառման վրացւոյն էին կորուսեալ՝ կրկնապատիկ շահեցան, մինչև զընտիր ջօշանն երկու դանկ ծախէին։ Եւ զկնի բազում աւուրց գնացին մարդիկ քաղաքին Անւոյ ի տեղի պատերազմին և գտանէին զրահս բազումս ի մէջ խոտին և բերէին։ Եւ Թա-

\* Var. Դերում։

\*\* Թվելով ապա մի առ մի միանեծան Թամարի «ազգագուտ» և «ժողովըրդասեր» գործերը, վարիանտը (Վախտանգյան խմբագրությամբ) նշում է. «Սրան վկա յեն Շարվանշահների (Շարվանշեթի) և Դերբենտցվոց (Դարուբանդեցվոց), Խունձախների (Ղունձերի), Ոսերի, Կասագների (Քաշագների), Կարնո-քաղաքացվոց և Տրապիզոնեցվոց յերկիրները (տները), վորոնք սրա (Թամարի) շնորհիվ ազատ կյանք էյին վայելում և միանգամայն ապահով էյին թշնամիներից...»։

դաւորն զայս բարութիւնս արար քաղաքին Անուոյ, զի յորժամ էառ զնա՝ երես քառասուն հազար դահեկան և գնեաց ի հեծելէն զգերեալ ծառայան Անուոյ՝ քրիստոնեայ և զայլազգի: Այս եղև ի պահն սուրբ Գրիգորի, որ ի միջինքն ամառան աղուհացիցն՝ յորժամ առաւ Անի, և ամստանն օգոստոսի կոտորեցին զամիր Միրայն, որ էր Շահի-Արմէնո:

Ինչ վերաբերում ե Դվինին, նրա առումը նույն Մ. Ռուկայեցիին (եջ 429) այսպես ե նկարագրում. «Յայսմ ամի (ՌԺԱ = 1162) առաւ մեծանուն քաղաքն Դուին ի թագաւորէն Վրաց Գորգէ. բռնութեամբ ի ներքս մտեալ զկնի փախտական զօրաց այլազգեացն, որք ելեալ էին ի քաղաքէն ընդդէմ նորա պատերազմել, և նա ի փախուտ դարձուցեալ կոտորեաց զնոսա. և զմնացեալքն գէմս ի քաղաքն արարեալ, միաբան մտեալ ընդ պուռն քաղաքին կոտորեցին զամենեսին յանխնայ, գերեցին և այրեցին զբնակութիւնս նոցա, և ինքեանք դարձան մեծաւ աւարաւ և գերութեամբ յաշխարհն իւրեանց»:

Նույն Դվինի առման մասին Վարդանը (127) գրում ե. «Իսկ թագաւորն Վրաց [Գէորգի] կուտէ առ ինքն զկողկասային զօրսն, և գայ առնու զԴուին՝ խստագոյն խայտառակեալ զնոսա ի սուր և ի հուր, բաց ի քրիստոնէիցն որ անդ»:

6 Հմմ. Վարդանի (եջ 127) հետեյալ խոսքերը. «Ելտկուզն դայ յայրեցեալն և ի քանդեալն Դուին, և խոցտեալ սրտիւ և մըմռեալ իբր զգսզան կատաղի՝ գայ ի Մրեն և այրէ անդ զամրոցն... և դառնայ ի դաշտն Գագայ... Եւ զկնի ի թագաւորէն Վրաց անաբեկեալ փախչի, թողով զկարասին և զգերիսն անդէն» ևլն: Ս. Ռբեյլանն էլ (եջ 382) գրում ե. «Թագաւորն Գէորգի... մի անգամ փախոյց գմեծ աթաբէկն Ելտկուզ ի դաշտին Գագայ, որ եկեալ էր 100.000-աւ ի վերայ Գէորգիի. և կամէր կոտորել զամենայն վիրս, և ըմբռնել զթագաւորն. զոր մեծաւ հնարիւք և արիական քաջութեամբ անջբան ի նեղ էարկ Իվանէ, զի ի գիշերի թողին զվրանս և զգէնս և զանհուն կարասիս իւրեանց և զբեռնակիրս. և փախեան մագապուր»:

7 Այս տեղեկութիւնները, զուգադիպելով Իրն-Այ-Աթրի տվյալներին, վերաբերում են 1162 թվին (Հմմ. Իվ. Զավախիւսի, Վրաց ժողովրդի պատմութիւնը, II, 1914, եջ 562—563):

8 Այս առթիվ Վարդանը (եջ 127) նկատում ե. «Սակայն [Գէորգի թագաւորն] գրգռէ զժողով սուլտանն, զորդին Մահմուդի զԱսլան և ածէ յԱնի, և զամս չորս պահէ ի տառապանս անվար և անհանգիստ. մինչ թագաւորն Վրաց Գէորգի ողորմելով քաղաքին՝ կոչէ առ ինքն զսուլտանն և տայ ի նա զԱնի. զի չէր ձեռնհաս պահել ի բաղմութենէ անօրինացն»: Քանի վոր Մահմուդի վորդի Ասլանն ամբողջ 4 տարվա ընթացքում Անիին հանգիստ չեր տալիս, ուրեմն պետք ե յենթադրել, վոր Գեորգ թագաւորը շնորհած պիտի լինի Անիին նույն Ասլանին 1161 + 4 = 1165 թվին (Հմմ. M. Brosset, op. cit., p. 395, n. 1. Իվ. Զավախիւսի, Վրաց ժողովրդի պատմութիւնը, II, 564):

9 Իրն-Այ-Աթրի համաձայն, այս զեպքերը տեղի պիտի ունենային 1165—1166 թ. թ. (Հմմ. M. Brosset, op. cit., p. 396, n. 1. Իվ. Զավախիւսի, op. cit., 565):

10 Վրաց. «Ղաղվ»-ն անհասկանալի յե. ուստի և Մ. Բրոսսէ այն ուղղում ե «Գեղամ»-ի. Le lac de Gégham, ou Goghtcha (M. Brosset, op. cit., p. 397, n. 6):

11 Գեորգ թագաւորի՝ Որբեյլանների դեմ մղած պայքարի մասին հայ պատմիչներից մանրամասն խոսում են Վարդանն (եջ 130) ու Ս. Ռբեյլանը (եջ 383—389): Ըստ Վարդանի, այսինքն ժամանակի յայտնեաց Իւանէ զչարութիւնն իւր, գեղբորորդի թագաւորին իւրեանց զԴեմնէն և զյորովս յազատացն ինքն յանկուցեալ խորհեցաւ սպանանել զթագաւորն, մինչ կայր ի Սախատէ (տպ. Սախատա. sic. Լ. Մ.-Բ.): յանհոգս. զոր իմացեալ յառնէ միողէ՝ փախեալ ի Տփղիս, զի սակաւամարդ էր. և անդ հաւաքեցան առ նա բազումք՝ թողով զչար խորհուրդն: Եւ յորժամ զօրացաւ կողմն թագաւորին, և կամէր գնալ ի վերայ ապստամբացն՝ որք ի Սախատէ, փախեան յամուրս իւրեանց, և ապստին ի Լոռէ, բացի Լիպարտն՝ որ չողաւ ի Պարսից կողմն երկու որդւովք. և էառ թագաւորն զամենայն գանձ Օրբէյլանց, և ամենեքեան անկան յոտս թագաւորին, եղբորորդին և ընդ նմա այլքն, մինչև ինքն իսկ Իւանէ. զորոյ զաչսն կուրացոյց, և զկրտսեր որդի նորա զՔաւթար և զԻնէն, զորդի Լիպարտին սպան, և յոչինչ եղեն չար խորհուրդքն ամենայն, ի վեցնարիւր քսան և վեց թուին: Համեմատաբար ավելի մանրամասն խոսում ե Որբեյլանների ապստամբութեան մասին Ս. Ռբեյլանը, վորն իր տեսութիւնը սկսում ե հետեյալ խոսքերով. «Իսկ ի թուականին Հայոց 626 եղև այժմուկ շիրթի ի մէջ թագաւորութեանն Վրաց. և բնաջինջ կործանեցաւ տունն Օրբէյլանց», և այլն: Ս. Ռբեյլանի տեղ-տեղ տված սխալ լուսաբանութիւնների քննադատութիւնը տես. Իվ. Զավախիւսի, op. cit., 571, ծանոթք:

12 Մխարզաձևների կամ «Յերկայնարագուկների» մասին տես. M. Brosset, Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, Add. XVII, p. p. 266—279 (Notice et détails historiques sur la famille des Mkhargrdzélidze), Ղ. Ալիսան, Շիրակ, 175. Ե. Լալայեան, Բորչալուի գաւառ, «Աղագորական Հանդէս», գ. VII—VIII, Տփղ. 1901, եջ 319—329. Ասլան Շահնազարեան, Զաքարեան (Երկայնարագուկ) տոհմի ծագումը, զաղթը գեպի Չորագետ և նախորդները, «Շողակաթ», I, էջմ. 1915, եջ 66—83. Ն. Մառի քննադատականը վերջինիս մասին՝ Отчет о состоянии и деятельности С.-Петербургского Университета за 1908 г., СПб. 1909, отд. II, стр. 73—77. Ս. Լիսիցյանի քննադատականը՝ Տեղեկագիր Թիփլիզու Վանայ աւազ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մնայուն յանձնաժողովի 1908 ապրիլ 5—1910 ապրիլ 5, Տփղ. 1910, եջ 11—18, նախորդ քննադատութեան արտատպութեամբ հանդերձ՝ եջ 19—24. «Վագրենավորը», Ս. Կախարաձեյի խմբագրութեամբ, վրացերեն, բ. տպ., Տփղ. 1927, եջ XCIV: Հմմ. նաև՝ Լ. Մելիքեթ-Բեկ, Հայերը վրաց հին գրականութեան մէջ, «Գեղարուեստ», VII, Տփղ. 1921, եջ 40 և ծանոթ. 1. հուլիսը, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց», վրացերեն, Տփղ. 1928, եջ 36—41 (մանրամասն լրբլիւզագրաֆիայով). Գարեգին ա. Ե. Հովսեփյան, Պաղատական կամ Պոռչյանք Հայոց պատմութեան մեջ. Պատմա-հնարիտական ուսումնասիրութիւն. Վաղարշապատ 1928, եջ 1—26:

13 Ասել ե՝ հակաքաղկեդոնիկներ (միաբնակներ):

14 Ասել ե՝ քաղկեդոնիկ (յերկարակ):

15 Վրաց պալատական պաշտոնեյութեան մասին մանրամասն տես. Իվ. Զավախիւսի, Վրաց իրավունքի պատմութիւնը, վրացերեն, գ. II, հատված I, Տփղ. 1928:—Սարգիս Մխարզաձեյը, համաձայն Սանահնի արձանագրութեան, վախճանվել է 1187 թ. (Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, ՍՊԲ 1911, եջ

36), Հեռակայես, Իվ. Զավախիեվիլու կարծիքով (Վրաց ժողովրդի պատմությունը, II, 590—591), Գամրեկելն ամիրսպասալար կարող էր դառնալ նույն 1187 թվին:

16 Այժմյան Չըլդըր-գյուլը կամ Չըլդըր լիճը:

17 «Որհնություն ստացած» և «չորհնված» ենք մենք թարգմանում վրաց-«դալոցվիլինի» և «դաուլոցափլի», վոր Ֆրանսերեն Մ. Բրոսսե (M. Brosset, Hist. de la Géorgie, I, 2, p. 414, n. 3) թարգմանել է՝ proclamé և non proclamé.

18 Ըստ Մ. Բրոսսեի (op. cit., p. 416, n. 2) 1187—1192 թ. թ. միջոցին:

19 Տես 15 ծանոթությունը:

20 Ըստ Իվ. Զավախիեվիլու (Վրաց ժողովրդի պատմությունը, II, 596—597) 1190—1191 թ. թ.:

21 Ըստ Իվ. Զավախիեվիլու (ibid., 597) 1191 թ., քանի վոր Սանահնի նույն՝ 1191 թ. արձանագրության մեջ (Վ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, 37), Ջաքարիան արդեն «ամիրսպասալար» է կոչված: Ընդ սմին, նույն գիտնականին տարրինակ է թվում, վոր Հոռոմայրի 1187 թ. արձանագրության մեջ (Վ. Կոստանեանց, 36) Ջաքարիան «ամիրսպասալար» է կոչվում, մինչդեռ նույն Սանահնի 1187 թ. արձանագրության մեջ (ibid.) նրա «ամիրսպասալարության» մասին խոսք չկա. Իվ. Զավախիեվիլի (ibid., էջ 597, ծանոթ.\*):

22 Այսինքն՝ «Գարգարացվոց» յերկիրը:

23 «Գարգման» ենք մենք վերականգնում համաձայն Մ. Բրոսսեի (op. cit., p. 441, n. 6) միանգամայն իրավացի լուսաբանության. «Dcharmani doit être le Gardman des Arméniens»:

24 Հմմ. M. Brosset, op. cit., p. 447, n. 2:

25 Հմմ. ibid., p. 448, n. 2 (p. 447):

26 Ըստ Վարդանի (էջ 138), վրացիք «ի վեցհարիւր յիսուն և երկու թուին առին գրուին», այսինքն 1203 թվին: Մնացած պատմիչները Դվինի առման տարին չեն ցույց տալիս: Հմմ. Իվ. Զավախիեվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, II, 609:

27 Հմմ. Ս. Որբեյանի (էջ 391) խոսքերը. «Ջաքարէ և Իվանէ» բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից. և առին յԱռանայ մինչև ցնեքքին Բասնէ և ի Բարկուշատայ մինչ ի Մժնկերտ»: Հմմ. Իվ. Զավախիեվիլի, op. cit., II, 610.

28 Մխարզրձեղների մասին տես 12 ծանոթությունը:

29 Հովհան (Իվանե) Մխարզրձեղու «դավանափոխության» մասին հայ պատմիչներից խոսում են, ինչպես հայտնի յե, Վարդանն ու Կիրակոս Գանձակեցին: Վարդանը (Վենետիկ 1862, էջ 138) գրում է. «Իլանէ խաբեալ ի թագուհւոյն թամարայ՝ տկարացաւ ի հաւատոյն, և անյաջողեալ նմա ըմբռնեցաւ գերի ի Ութ... Իսկ Ջաքարէ եղբայրն Իլանէի մնաց ի սեփական հաւատն. սակայն կամեցաւ զտօն Տիրամօրն և զխաչին ի պատկեր աւուրն տօնել, և զճրագալոյցսն շլուծանել, և կրօնաւորաց միս չուտել, և կենդանոյն պատարագ մատուցանել. և վրանով պատարագել ի բացեայ՝ դպրօք և սարկաւազօք: Կիրակոսը (Տփղիս 1909, էջ 157) գրում է. «Իլանէ խոտորեցաւ յաղանդն Գաղկեպոնի, յոր կործանեալ էին Վիրք. զի սիրեաց նա զփառսն մարդկանց առաւել քան զփառսն Աստուծոյ, հրապուրեալ նա ի թագուհւոյն՝ որ թամարն կոչէր,

ի դատերէն Գէորգեայ: Իսկ Ջաքարէ յուղղափառութեանն եկաց, զոր դաւանեն Հայք. վասն այսորիկ առաւել մեծարէին զՎիրք»:

Վրաց պատմիչի ակնարկած «ընկալը», վորքան ել այն, իրոք, առասպելական գծերով է նկարագրած, ստանում է իր ռեալ գնահատումը քաղկեդոնականների (յերկրնականների) և հակաքաղկեդոնականների (միաբնականների) միջև թամարի որոք ծագած վեճերին վերաբերյալ ամբողջ գրականության քննությամբ. իսկ այս վեճերը, ինչպես և նախորդ դարերի ընդդիմախոսությունները, ինչպես հայտնի յե, արգասիք է այն հակասությունների, վոր տեղի ունեւր ավատական մթնոլորտում, այս դեպքում՝ միահեծանության (աբսոլուտիզմի) հասած Վրաստանում, վորի էքսպանսիան տարածվել էր Սև ծովից մինչև Կասպից ծովը, և Կովկասյան լեռնաշղթայից մինչ Առաջավոր Ասիա:

Ինչպես հաղորդում է ասորի պատմիչ Գրիգոր Բարեբրեյ կամ Աբուլփաւաջը (ապրում էր 1226—1286 թ. թ.), հայ-վրացական մի ընդհարում տեղի յե ունեցել 1197 թվին «ժուազատիկ» առթիվ, հավանական է, Տփղիս քաղաքում (Gregorii Barhebraei Chronicon ecclesiasticum, edid. J. B. Abbeloos et Th. J. Lam y, t. II, 1874, p. p. 599—604. Bibliotheca Orientalis, ed. Assemanani, t. II, p. 369), Հմմ. Մ. Չամձեան, Պատմութիւն Հայոց, III, էջ 161—162, նաև Л. Меликсет-Бекон, О междоусобице в Тифлисе в 1197 г. по поводу Кривой пасхи,—Изв. Кавк. Ист.-Арх. Инст., т. II, 1925, стр. 49—60: Իսկ Մխարզր Գոբի «Գծագրութիւն... յաղագս Վրաց» կոչված գրությունը լավագուրն ապացույցն է այն հանգամանքի, վոր այսպիսի ընդհարումներ ու վեճեր հայոց և վրաց, ուղիղ Բասած հայ (հակաքաղկեդոնիկ) և վրաց (քաղկեդոնիկ) հոգևորականության միջև քանիցս է տեղի ունեցել թամարի թագավորության որոք, վորն և զրդել է Մխիթարին համապատասխան դիմում անել Ջաքարիա և Հովհան (Իվանե) Մխարզրձեղներին: Այս գրությունը սկսվում է հետևյալ «ձոն»-ով. «Չայս գծագրութիւն խաղաւոր հարկաւոր կարծեալք եղաք յաղագս Վրաց, որ ոչ սակաւ թշնամութեամբ ընդ մեզ վարին, քան զՅոյնս, աշակերտելով նոցա: Եւ արդ, զի նախ առ ձեզ է նախագրութիւն բանիս, ով աստուածասէր և բարեպաշտ իշխանք իշխանաց Ջաքարէ և Իլանէ, ծնունդք սիրոյ աստուծոյ ի բարեզարդ ծնողաց. զի ես յամենայնի նուաստ Մխիթար ի բանս և ի գործս սպասաւորաց բանին, որ յաւուրս մեր՝ տեսանելով և լսելով զբամբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէի [ի] հոգի, մանաւանդ զի հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ, յայսոսիկ եկի [ի] միտս՝ գրել սակաւուք զճշմարիտ հաւատոյս մերոյ զաւրինակ, և զոր ամբաստանիմք, թէ ոչ միաբանին ընդ Յոյնս և ընդ Վիրք ցուցանել փութացաք զանհնարութիւն...» (ձեռագիր Եջմիածնի մատենադարանի № 631, էջ 17 r = «Աբարատ» ամսագիր 1900 թ., էջ 497 = Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց», վրացերեն, Տփղ. 1928, էջ 240): Վոչ պակաս հետաքրքիր է և նույն գրության վերջաբանը, ուր, ի միջի այլոց, կարդում ենք հետևյալը. «Եւ արդ թէպէտ բարեպաշտ թագաւորքն մեր չեն բաւական՝ թամար և Գաւթ՝ տիեզերական ժողով առնել ամենայն ազգաց, վասն հեռաւորութեան Յունաց և Հոռոմայեցւոց և այլոց ազգաց, այլ աստուծոյ շնորհաւքն կարող են զՀայոց և զՎրաց թշնամութիւնն բառնայ, որ զՔրիստոս չհայնոյն. զի այն Քրիստոսի է ատելութիւն [և թշնամութիւն], որ զխաչ և խատ և զեկեղեցի միմեանց հայնոյն և նախատեն: Եւ որպէս ցուցաք յառաջագոյն՝ այն էր աստուծոյ հաճոյ և Քրիստոսի կամք, զի

ամենայն ազգ քրիստոնէից միակրան էին յեայ, բայց չէ հնար [var. արժան է], որպէս գրեցաք, այլ զկարելին չէ հնար խափանել: Զի դուք իշխան էք Հայոց և Վրաց կամաւքն ստուածոյ, և թէ կամիր՝ ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ արքայական իշխանութեամբ սաստ զնեն, որ ոչ զեկեղեցի աստուածոյ [var. Հայոց] չբակեն և զխաչ այրեն, և այսմ ժամանակեայ իշխանութեամբս և յաւիտենական թագաւորութիւնն առնուն ընդ բարեպաշտ թագաւորացն ընդ Կոստանդիանոսին, ընդ Թէոդոսի և ընդ Տրդատայ և ընդ Նախնի թագաւորացն ինքեանց, աստուածասիրացն Բագրատունեաց, և պատկին ի Քրիստոսէ՝ ի ճշմարիտ թագաւորաց թագաւորէն, և հաստատուն ունիցին զթագաւորութիւնն ինքեանց, բարի շառաւեղան, գեղեցիկ ամրակալաւն, ի խաղաղական կենաւք և յաղթութեամբ պատերազմաց և բարեպաշտութեամբ կեալ յաշխարհի. հանդերձ քրիստոսասէր իշխանաւքդ՝ քաղցր կամաւք և իրաւամբ դատաստանի, և առողջութեամբ հոգոյ և մարմնոյ, և բարի անուամբ Քրիստոսի հաճոյանալ և ժառանգել զարքայութիւնն աստուածոյ...» (Նույն ձեռագիրը, եջ 45 r—45 v = «Արարատ» 1901 թ., եջ 126—127 = Լ. Մելիքեթ-Բեկ, op. cit., 240—241):

Ձաքարիայի ձեռներեցութեամբ վրաց արքունիքը հրավիրված հայ յեկեղեցականների մասին խոսելիս՝ վրաց պատմիչը նշում է, վոր «հավատո քննութեանը» ներկա գտնվեցին «կաթողիկոսն Վանի և բոլոր յեպիսկոպոսներն ու վարդապետները»: Վանի կամ Վանա կաթողիկոսի հիշատակութեանը Մ. Բրաւեի (Hist. de la Géorgie, I, 2, p. 451, n. 1) կասկածի տակ է գնում. «Je ne sais ce que peut signifier cette phrase, puisque alors les catholicos arméniens résidait dans la forteresse de Hromcla, sur l'Euphrate. S'il s'agit, au contraire, d'un des catholicos d'Aghthamar, l'il de ce nom est en effet au milieu du lac de Van, mais nous ne possédons aucune liste des titulaire, de ce siège, dont la fondation remonte à l'année 1144»: Այստեղ իրոք Աղթամարի կաթողիկոսն է հիշված, վորի անունը, սակայն, բաց է թողնված (հմմ. Մեւրուպ վ. Մախուրեանց, Հաւաքարան անուանց կաթողիկոսաց [Աղթամարայ], Էջմիածին 1916. Ներսէս վ. Ակիմեան. Գաւազանադիրք կաթողիկոսաց Աղթամարայ. Պատմական ուսումնասիրութեան [«Աղգային Մատենադարան», 22], Վիեննա 1920. Լ. Մելիքեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց», եջ 65, ծան. 1): Ինչ վերաբերում է «բոլոր յեպիսկոպոսների ու վարդապետների» մասնակցութեանը նույն «հավատո քննութեանը», սրտնց մասին անուղղակի տվյալներ կարելի չէ գտնել Կիրակոս Գաղանակեցու մոտ (Տփղիս 1909, եջ 161) Լոռվա ժողովի (1204—1205 թ. թ.) առնչութեամբ, վորի մասին ասված է. «... յարքայէն Լեոնէ և ի կաթողիկոսէն Դավթէ եկին պատգամք և հրամանաբերք: Ընդ որ յոյժ ուրախացեալ Ձաքարիայ, ժողով հրամայեաց առնել ի Լոռէ քաղաք զեպիսկոպոսն Հաղբատայ՝ զԳրիգորէս, զԻւրեանց աղպական, և զեպիսկոպոսն Անուոյ, և զեպոսկոպոսն Բջնոյ, և զԴիմայ, և զԿարուոց, և զայլս որք զիպեղան: Նոյնպես և զվարդապետս և պառաջնորդս վանորէից հանդերձ քահանայիւք և այլ աշխարհական ամբոխիւ, կամել կանգնել զվրանն և պատարագ մատուցանել: Համեմատաբար ավելի գնահատելի յ. մեզ համար Լոռվա ժողովի ժամանակակից հաշակավոր վարդապետներն անունները, վոր մի առ մի թվում է նույն Կիրակոսը (ibid., 161—162). «Նու էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երեկիք, որ Դոնն կոչուր, շինող վանացն Գետկայ, այր իմաստուն և հեզ, և վարդապետն ուսմամբ հոգակալ Իգնատիոսն, և Վարդան,

և Դավթ Քարայրեցին ի Հաղբատայ, Յովհաննէս հայր Սանահնին, վոր գկնի մահուան Գրիգորոյ, զոր Տղաւայ որդին կոչէին, սնուցող նոցուն իշխանացն, Գրիգոր՝ զոր Մոնոնիկն կոչէին, ի Կեչառուաց, Տուրքիկն ի Թեղիսեայ, որ բարուք կարգաւորեաց զվանքն, զամենայն ինչ հասարակաց լինել, և առանձին ինչ ոչ ստանալ: Եղիայ ի Հաւուց Թառոյ, այն՝ որ գեղեցիկ կարգաւորեաց զպաշտօն վանից իւրոց, որպէս թէ ամենեցունց ընդ մի բերան հնչել, եթէ բարձր և թէ ցած. և ոչ հարստահարել ընկեր զընկեր: Գրիգոր Դիւացին. Սարգիս միակեացն ի Սեանայ. այսոքիկ արք երեկիք և այլք բազումք. Գրիգորէս եպիսկոպոս Հաղբատայ, Վրթանէս Բջնոյ և Դիւայ, Սարգիս ամրակալ Անուոյ, Յովհաննէս Կարուց, և այլք յուրք աստի և անտի, հանդերձ երեկիք քահանայիւք վանաց և քաղաքաց և գիւղից»: Հետևապես, պետք է յենթադրել, վոր «հավատո քննութեանը» ներկա գտնվող հայ «բոլոր յեպիսկոպոսներն ու վարդապետները» Կիրակոսի հիշատակածներից պիտի լինէին՝ Մելիքար Դոնի վարդապետները» Կիրակոսի հիշատակածներից պիտի լինէին՝ Մելիքար Դոնի վարդապետները (մանրամասն տես. Լ. Մելիքեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հյուսիսային կողմանց», եջ 62—63, 175—180, 238—249, 258—260): Իսկ «Վանի կաթողիկոսը» Կիրակոսի հիշատակած Դավթ Աղթամարցին պիտի լինի:

80 Ըստ Վարդանի (եջ 138), վրացիք «ի վեցհարիւր յիսուն և հինգ թուին առին զԿարս թագաւոր[ան]ի[ստ]ն», այսինքն 1206 թվին, վորին համամիտ է և Կլեմ-Ալախիը (Համմ. Իվ. Ջավախիւզի, վրաց ժողովրդի պատմութեանը, II, 611—612):

81 Համաձայն Իվ. Ջավախիւզի (op. cit., 612—617), 1205—1206 թ. թ., ըստ Գաբելի մ. և Լավսիլյանի (Պաղարկայանք կամ Պոռչյանք Հայոց պատմութեան մեջ, եջ 10, ծան.—) 1204—1205 թ. թ., վերջինն ըստ Մշու Առաքելոց Վանքի Տոնականի հիշատակարանի, ուր ասված է. «Նու ի կատարման վրոցս (1204/5 թ.) սուլտանն Սեւաստիոյ ժողով արարեալ անհուն բազմութեամբ, նմանեալ ամբարշտին Յուլիանէս, քրտեալ լեռնացեալ ենաս ի Թէպուկուղիս, եւ անտի կամեցեալ անցանել յաշխարհս հայոց և վրաց եւ ամենեկին մոռացաւ զաստուած. եւ յուսացաւ ի նանրութիւն իւր, կամէր յաւարի առնուլ զաշխարհս ամենայն: Իսկ աւգնականութեամբն աստուածոյ եկին հասին զաւրքն վրաց, եւ մեծն Ձաքարէ հանդերձ Իւանէի հարազատան իւր, և այլ աստուածասէր իշխանաւք և նախարարաւք, եւ յոգնախումբ խառնիճաղանջ բազմութեամբ հասին ի վերայ անաւրէն զաւրացն տաճկաց, եւ յանխնա կոտորեցին զնոսա, զոմանս ձերբակալ արարին եւ ոմանք ի փախուստ դարձան. բայց սուլտանն անվրէպ մնաց. սակայն զաւարոյն զթիւս ս կարէ գիտել զսուլտոյ եւ զարծաթոյ եւ զմտաքսի, զերամակս ուղտուց, ձիոց եւ ջորուց» (Պաղարկայանք կամ Պոռչյանք Հայոց պատմութեան մեջ, ibid.):

82 Հիշատակելով այս տեղանվան (Ortsname) յերկու ձևերը՝ Bolositec և Bolortci, Մ. Բրաւեի (op.cit., I, 2, p. 460, n. 3) գրում է. «Ce nom et ses deux formes me sont inconnus». Վոչինչ չի ստում սրա մասին Իվ. Ջավախիւզի (op. cit., 614):

83 «Դուր»-ի փոխարէն «Դվլին» ընթերցման մասին տես. M. Brosset, Hist. de la Géorgie, I, 2, p. 465, n. 1:

84 Այսինքն 1184+23 = 1207 կամ 1184+24 = 1208 թ.:  
 85 Վրացերեն բնագրի «բարտուն»-ը հայերեն ըստ է՝ «բար+տուն»:  
 86 Անիի այս ավերման մասին, վորը տեղի պիտի ունենար 1207—1208 թ. թ.,

մանրամասն պատմում ե Կիրակոսը (եջ 244—246) հետևյալ վերնագրի տակ՝ «Վասն քաղաքին Անևոյ, թէ որպէս մատնեաց տէր ի ձեռս նորոս»:

87 Արտավիլի արշավանքի մասին Վարդանը (եջ 139) գրում ե. «Ի վեցհարիւր յիսուն և ինն թուին մորեխն աւերեաց զբազում գաւառս, յորում ժամանակի մեծն Ջաքարէ աւերէր զառնն Պարսից մինչև ցԱրտաւիլ քաղաք, առնելով ի նոցանէ զվրէժ արեան քրիստոնէից, ըստ որում և զաղօթատուն նոցա լցեալ արամբ՝ այրել հրամայէր, զո՛ր լինել իշխանացն՝ որք ի նախնուանու եկեղեցիսն, և կուռայքն և մուղրիքն՝ սուրբ քահանայիցն, վոր ի Բագուան գնեցան, և արեամբ նոցա ներկաւ պարիսպ եկեղեցւոյն»: Կիրակոսը (եջ 175) գրում ե. «Յետ քազում քաջութեանց յաղթութեանց՝ զոր արարին մեծամեծ իշխանքն Ջաքարէ և Իւանէ, չոգաւ զօրօք բազմօք ի քաղաքն Մարանդ, և առին զնա և աւերեցին զգաւառսն՝ վոր շուրջ զնոքօք. և ապա գնացին յԱրտաւիլ քաղաք, նմանապէս առին զնա, և աւերեցին զգաւառսն՝ որ շուրջ զնոքօք. և բազումք ի նոցանէ հանդերձ աղօթկոչօքն իւրեանց՝ զոր Մուրջի անուանեն, ապաստանեալք էին յաղօթարանն իւրեանց. հրամայեաց Ջաքարեայ բերել խոտ և ցօղուն, և արկեալ զնովաւ ձէթ և նաւթ, և բորբոքեալ հրով, այնպէս, այրեաց զնոսա, և ասէ. «Իշխանքն և աշխարհականքն՝ փոխանակ իշխանացն Հայոց, զոր այրեցին ի նախնուանի Տաճիկք, և կուռայքն՝ փոխանակ Հայոցն քահանայից Բագուանայ՝ զոր մորթեցին, և զարիւնն արկին զպարսպով եկեղեցւոյն, որ մինչև ցայսօր սկացեալ երևի տեղին»: Եւ ինքն դարձաւ յաշխարհն իւր»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր Վրաց պատմագիրը յերկու արշավանք ե նշանակուած դեպի Պարսկաստան, և յերկրորդ անգամ Ջաքարիային հասցնում ե մինչև Թորասան և Վրկանաց աշխարհը», Գաբեգին ա. ե. Հովսեփյանը (Պատգաւայանք կամ Պոռչյանք Հայոց պատմութեան մեջ, եջ 11, ծան.+) գտնում ե, վոր այս շահապահանցութուն ե և չի ստուգվում հայ աղբյուրներով. մինչդեռ Իվ. Զաւլախիւիլի (op. cit., 629—630) այն կարծիքի յե, վոր հայ պատմիչները՝ Վարդանի ու Կիրակոսի, ինչպես և Իբն-Խալիկանի վկայութիւնները մեկը մյուսի հետ շփոթած ունին յերկու արշավանք, վարոնցից «մեկը տեղի պիտի ունենար 1207—8 թվին, իսկ մյուսը 1210 թվին»:

38 Ջաքարիայի (Ջաքարեյի) մասին հայ պատմիչներից տեղեկութիւններ են տալիս Վարդանն ու Սս. Որբեյանը: Վարդանը (եջ 140) գրում ե. «Եւ դարձյալ յայնր կոտորուածէ՝ կատարի [Ջաքարէ] ի տէր ուղղափառ և ամբիժ հաւատով, և թաղի ի սուրբ ուխտն Սանահնին, ի վեցհարիւր վաթսուն և մի թուին, թողով տղա մի հնգամեայ Շահնշահ անուն»: Սս. Որբեյանը (եջ 398) գրում ե. «Իսկ մեծ սպասարն Ջաքարէ մեռանի ի 661 թուին... Եւ զսպասարութիւնն Ջաքարէի առեալ էր որդին իւր Շահնշահ»: Ուրեմն, Ջաքարիայի մահը տեղի յե ունեցել 1212 թվին, վոր մասամբ ստուգվում ե Սանահնի արձանագրութիւններով, ուր 1211 թվի արձանագրութիւններում նա կենդանի յե յերևում, մինչդեռ 1213 թվի արձանագրութիւններում արդեն մեռած ե (Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, եջ 51—55), համ. Իվ. Զաւլախիւիլի, op. cit., 630—631:

Բ.

## ԱՆԱՆՈՒՆ (XIII Դ.)

### «ԹԱՄԱՐ ԹԱԳՈՒՀՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Վրաց պատմագրութեան այս ուշագրավ հուշարձանը յերևան հանեց պրոֆ. Իվ. Ջավախիշվիլին 1923 թվին, յերբ հրապարակեց և իր նախնական հաղորդագրութիւնը սրա մասին հետևյալ ընդարձակ վերնագրով. «Նոր հայտնաբերած Գարթիս-ցիտվերեան ու Թամար թագուհու ցարդ անձանոթ պատմչի յերկասիրութիւնը», վրացերէն («Bulletin de l'Université de Tiflis», III, 1923, եջ 186—216): Այս յերկասիրութեան անանուն հեղինակին, վորը մասամբ կրկնում ե և մասամբ ել լրացնում նախորդ գլխից մեզ ծանոթ վրաց անանուն այլ պատմչի հորինվածքը, Իվ. Ջավախիշվիլին պայմանապես «Թամար թագուհու յերկրորդ պատմիչ» ե կոչում, քանի վոր ընդհանուր առմամբ յերկուսն ել նպատակ ունին ներքոյել Թամարին:

Համեմատաբար «Թագակիրների պատմականն ու գովասանքը» գրվածքի հետ այս՝ Թամարի յերկրորդ պատմչի յերկասիրութիւնն ավելի լուրջ պատմագրական գործ ե ներկայացնում իրենից, միանգամայն հեռու լինելով այն Փանատիկոսութիւնից, վորով առաջին գրվածքն ե ոժտված, յերբ պամփիլեոսային ընույթ ե տալիս հայ-վրացական կրոնական պայքարին Թամարի որով: Յեվ հենց այս պատճառով, թվում ե մեզ, գոցեց այս՝ յերկրորդ յերկասիրութիւնը լինի հիմնական գործ Թամարի պատմութեան վերաբերյալ, վորն ապագայում ամբողջապես ոգտագործած լիներ «Թագակիրների պատմականն ու գովասանքը» յերկի հեղինակը:

Այս յերկասիրութիւնից, վորը դեռ հրատարակված չե և վորը նույն Իվ. Ջավախիշվիլին պատրաստած ունի տպագրութեան, քաղվածքները մենք անմիջապես կատարել ենք Վրաստա-

նի պետական թանգարանի համապատասխան ձեռագրի (№ 207 Q) հիման վրա՝ հիշյալ թանգարանի վարչության և անձամբ Ի վ. Ջ ա-վ ա խ ի շ վ ի լ ու ս իր ա լ իր թ ու յ լ տ վ ու թ յ ա մ ք :

### [ԹԱՄԱՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Բերեցին Մխարզրձեի Սարգիս ամիրսպասալարի յերկու վորդոց՝ Ջաքարիա և Հովհաննիս (Իվանեյին), վորոնք շատ փորձված եյին պատերազմներում և ազգովին հավատարիմ թագավորներին: Այս պատճառով սրանք հույժ սիրված եյին թամարի նախնիների (պապերի և հայրերի) կողմից: Թամարն ել սրանց հանդեպ ուշադիր յեղավ, աստուծն հանձնեց և վորդոմած եր: Յեվ շնորհեց [Թամարն] Ջաքարիային՝ ամիրսպասալարություն, և կըրտսեր [յեղբորը] (կրտսերին որոք) Հովհաննիս (Իվանեյին)՝ գործակալություն (մսախուլթութուցեսորա): Սրանք արժանի մարդիկ եյին, թեև կրճնով հայեր (սոմեխներ), բայց ուղղափառությամբ միանգամայն լի: Իսկ Հովհաննը (Իվանեն) հույժ տեղյակ եր գրականությանը, վորի պատճառով զգաց հայոց (սոմեխների) կրճնի թյուրությունը, [վրացադավան] մկրտվեց, և դարձավ ճշմարիտ քրիստոնյա...

... Ներքին [մասում] առաջին կուսակալությունն Գագուսն եր, վորը վահրամի հոր՝ Ջաքարիա Մխարզրձելի ձեռքն եր. և սրանք [եյին, վոր] կուսակալություն եյին անում, քաջարի մարդիկ և պատերազմներում միանգամայն փորձված ու հաղթող, և յերկուղածությամբ աստծո և հավատարմությամբ առ պատրոնն հույժ գովելի: [Սրանից] վերեն եր Ջորակերտն ու Տաշիրը, ուր Ջաքարիան ու Հովհանն (Իվանեն) առաջին անգամ սկսեցին իբրև առյուծ պայքարել՝ վերև ու ներքև և ամեն տեղ: Յեվ վերեն եր Ջավախքը (Ջավախեթը), ուր կուսակալներ եյին Սարգիս Մխարզրձեի Թմոզվեցին և Շալվա Թորեցին, կից՝ Արտահանը (Արտանին), ուր կուսակալ եյին մեսխերը... [Յեվ] Շավչք-Սպերի (Շավչեթ-Սպերի) կողմից Բանասկերտն եր...

... Յեվ նրանց եր տալիս [Թամարն] Անին, ինչպես վկայում ե հայոց (սոմեխների) թագավորների մեծ և հոչակավոր անունը, վորը պարսից շահնշահությունից (շանշեորա) եր վերցրած, ... և Պարսից տան անվանի Դվինը...

... [Պաշարածները]՝ մտնելով Սոմխիթ՝ վորսի եյին դիմում...  
... Մինչ այս Կարսը (Կարի) թուրքերի ձեռին եր. [Թամարը]

զորք ուղարկեց այն պաշարելու. իսկ թուրքերը՝ լսելով այս՝ իսկույն և յեթ թողին Կարսը (Կարի) ու փախան: Իսկ թագավորը գրավեց Կարսը (Կարին) և Կարսի (Կարիի) հսկող թողեց Հովհանն (Իվանե) Ախալցխեցուն և նշանակեց կուսակալ՝ տալով աթաբաղություն և ամիրաց-ամիրայություն... և իւրեց թուրքերից շրջակա յերկրները... և նույն Հովհաննին (Իվանեյին) շնորհեց Կարսի (Կարուի) և նրա մերձակա յերկրները...

... [Ռուքնադղինը գինվորներ] ուղարկեց իր [պետության] բոլոր սահմանները՝ Միջագետք, Գաղատիա, Գանգրա, Անկյուրիա, Իսավրիա, Կապադովկիա, Մեծ Հայք, Բիթինիա և Պաֆլագոնիայի կողմերը... ապա միացրեց Յերզնկայեցվոց (Եզնկայեցվոց), Պարբերդեցվոց (Պալբերդեցվոց) և Կարնո-քաղաքացվոց... և Սալդուխի վորդու փոխարեն իր յեղբորը նշանակեց Կարնո-քաղաքում...

... Ապա [Տփղիս] բերին Ռուքնադղինի (Նուքարդինի) դրոշակը, և նախ մտցրին Յերզնկայեցուն (Եզնկայեցուն) և ապա այլ յերևելիներին... Յեվ Յերզնկայեցուն (Եզնկայեցուն) [Թամարը] պահեց Տփղիսում իբրև բանտարկյալի...

Այսպես որեցոր բարգավաճման և մեծարման մեջ եր բոլոր գահակալներից (գայիսոն ունեցողներից) պայծառագույնը՝ Թամարն՝ առավելապես աստվածպաշտությամբ, յեկեղեցիներ ու վանքեր հիմնելով և կառուցելով, վորբերին ու վորբեայրիներին սփոփելով և արդարադատությունը տարածելով: Սրա որոք ուրախության և խնդության մեջ եր նրա թագավորությունը (թագավորությունները): Յերբեմն [Թամարն ու Դավիթն] անցնում եյին [հայնկույս Լիխի] և վարում այնտեղի գործերը, նաև վորսում Գեգութ և Աջամեթում. ապա անցնում եյին [հայնկույս Լիխի]՝ Քարթլի, Հայք (Սոմխիթ) և կանգ առնում Դվինում, ուր նրանց մոտ գալիս եյին հարկեր (խարաջա) [տալու] Գանձ[ակ]եցիք և վերին քաղաքացիները: Գարնանը բարձրանում եյին Հայք (Սոմխիթ), ստանալով հարկեր (խարաջա) Նախիջևանեցուց (Նախճեվանեցուց), և [ապա] գնում Կողա (Կոլա)՝ Արտահանի (Արտանի) գլուխը, ստանալով և այնտեղից հարկ (խարաջա), նաև Կարնո-քաղաքից, Յերզնկայից (Եզնկայից) և այլ շրջակա քաղաքներից...

... Նրա (Թամարի) գահակալության քսանյերեքերորդ թե քսանչորսերորդ թվին հարց յեղավ Կարսի (Կարիի) [զրավման] մասին, քանի վոր վաղուց արդեն Սարգիս Թմոզվեցին, Շալվա Թորեցին և մեսխերը պայքարում եյին, բայց ի վիճակի չեյին

գրավելու այն... Ապա Դավիթ [Սոսլանը]... հրամայեց Ջաքարիա և Հովհաննիս (Իվանեյին) դնան և սաստիկ պատերազմեն... Յեվ յերկարատե յեղավ այս գործը, իսկ ինքը Թամարը կանգ առավ Ջավախքում (Ջավախեթում), ուր և սպասում եր նրանցից լուր ստանալուն... [Յերբ Կարսը պաշարեցին և անջուր մնացած քաղաքացիներից շատերը կոտորվեցին՝] մնացածները խնդրեցին Դավթից, վոր Թամարն ինքը հասնի նրանց մոտ, վորպեսզի անձնատուր լինեն նրան... իսկ յերբ [Թամարը] հասավ՝ [բերդի] բանալիները հանձնեցին նրա վորդի Գեորգին (Գիորգիին), ապա Թամարին՝ խնդրելով խաղաղություն [հաստատել], և յերզվեցին, վոր վոչոքի չհանձնի Կարսը (Կարի), ինչպես Անին (Անիսը) և Դվինը, այլ իր թագավորությանը կցի: [Թամարն] այս առիթով հաստատ խոսք տվեց և հրամայեց իր վորդի Գեորգին (Գիորգիին), վոր մտնի և ստանա քաղաքն ու բերդը: Յեվ յեղավ այսպես. այս մի քաղաքն ու բերդը [Թամարն] իրեն վերապահեց բոլոր նրանցից, վոր գրավեց՝ Չորակերտից մինչ Արաքս (Ռախս), Գազից մինչ Գանձա[կ] և Ջավախքից (Ջավախեթից) մինչ Սպեր...

(Շարունակությունը միանգամայն զուգադիպում է «Թագակիրների պատմականն ու գովասանքը» յերկի տվյալների հետ, վոր մենք ավելորդ ենք համարում այստեղ կրկնել):

Գ.

## ԱՆԱՆՈՒՆ (XIII Դ.)

### «ՀԱՄԱՌՈՏ ՎՐԱՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

«Համառոտ Վրաց պատմություն»՝ այսպես ենք կոչում մենք պատմագրական այն փոքրիկ գրվածքը, վորին պրոֆ. Ե. Թաղ՝ ա յ շ վ ի լ ի ն («Վաղեմի Վրաստան», II, Տփղիս 1911—1913, էջ 54) անվանում է «Համառոտ տեղեկություններ Վրաստանի պատմությունից», և վորը հետագա դարերում ծառայել է իբրև աղբյուր թե այսպես կոչված «Քարթլիս-ցխորեբա»-յին և թե Վախուշտ արքայազնի պատմության: «Պատմությունը» սկսվում է Վրաց դարձից և հասնում մինչ խաչակրաց արշավանքներն ու Յերուսաղեմի գրավումը (1213 թ.): Տեկստը հրատարակել է նույն Ե. Թաղ՝ ա յ շ վ ի լ ի ն (ibid., 59—66):

### [ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐ IV—XIII Դ. Դ.]

Քարթլին դարձավ [ի քրիստոնեյություն] Նունեյի (Նինոյի) քարոզչությամբ՝ Քրիստոսի համբարձումից յերեք հարյուր յերեսուն և ութ թվին, արարչության հինգ հազար ութ հարյուր յերեսուն և ութին, և մնաց Նունեն (Նինոն) Քարթլիում յերեսուն չորս [տարի], և նրա որոք եր մեծն Կոստանդին հունաց (բերձենների) թագավորը, և Տրդատ (Թրդատ) հայոց թագավորը դարձավ սուրբ Գրիգորի ձեռքով<sup>1</sup>:...

... Քրոնիկոնի յերեք հարյուր յերեսուն յոթին [Դավիթ] Շինողը մահմեդականներից (թաթարներից) խլեց Լուվա բերդը<sup>2</sup>:...

... Քրոնիկոնի յերեք հարյուր քառասուն յերեքին<sup>3</sup> նույն [Դավիթ] Շինողն Անի քաղաքը խլեց Արփասլանից և կոտորեց նրանց, վորոնք Անվո մեծ կաթողիկեն մզկիթի էյին վերածել և քրիստոնյաների արյամբ նույն կաթողիկեն ու քաղաքը վողողել. աստվածասեր Դավիթ Շինողն [արժանին] հատուցեց նրանց, և ահա



նա մոլլաների և դարիմանների արյամբ վողողեց այն, նորից ոձեց այն կաթողիկեն, վոր կառուցել եր հունաց (բերձենների) [թագավորի] դուստր Կատրամիդե (Կատրոնիտե) թագուհին՝ նույնտեղ թաղվածը: Ապա թագավորն և կաթողիկոսը, յեպիսկոպոսներն ու միացյալ զորքն յեկան թագուհու գերեզմանի մոտ, նորից այն որհնեցին, և ինքը թագավորն յերեք անգամ ձայն տվեց գերեզմանին. «Ուրախացիր, թագուհի, քանի վոր աստված ազատեց քո կաթողիկեն անորենների ձեռներից»: Ի պատասխան սրա հանգուցյալը գերեզմանից ձայն հանեց և գոհացավ աստծուն: Թագավորն ու միացյալ ժողովուրդը զարմացան: Մի քանի ժամանակ անցավ, [և] Դավիթ Շինողը վախճանվեց:

Յեվ նրանից հետո թագավոր նստեց նրա (Դավթի) վորդի Ջուրաբը<sup>5</sup>, և Դեմետրը (Դեմետրեն) գրավեց ամբողջ թագավորութունը: Նույն քրոնիկոնին՝ յերեք հարյուր քառասուն հինգին<sup>6</sup> [նա] գրավեց Դմանիսի բերդը և կոտորեց Կարսում Ուղուղիանին: Այս պահին Սալդուխ-դ'անն յեկավ Անի քաղաք. Դեմետր թագավորն ել այստեղից գնաց այնտեղ, կռվեցին: Կամոքն աստծո թագավորը հաղթեց, կոտորեց և բնաջինջ արավ նրանց (ուղուղիաններին)<sup>7</sup>:...

## ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այս տվյալներն, ըստ Ե. Թաղ'ալեվիլու («Վաղեմի Վրաստան», վրացերեն, հատոր II, Տփղիս 1911—1913, յերրորդ բաժ., էջ 59, ծան. 6), «համաձայն են Վրաց Դարձի և Վրաց տարեգրության հետ»:

2 Քրոնիկոնի 337 թ. = 1117 թ., մինչդեռ վրաց տարեգրության համաձայն (Քարթլիս ցխովրեբա, հրատ. Մ. Բրոսեյի, էջ 246 = M. Brosset, Histoire de la Géorgie, I, 360), Լոռու առումը Դավթի կողմից տեղի յե ունեցել 1118 թվին:

3 Այսինքն 343 + 780 թ. = 1123 թ.:

4 Դավիթ Շինողի կողմից Անիի գրավումը Մասթեոս Ուռհայեցին դնում ե ՇՀԳ—1124 թ. ներքո, տալով հետևյալ տեղեկությունները, վորոնցից մի փոքր հեռու յե վրացական այս աղբյուրի հաղորդածը. Մ. Ուռհայեցին գրում ե. «Յայսմ թուականութեանս Դավիթ Վրաց թագաւորն արար դարձեալ սաստիկ կոտորածս զգօրսն պարսից իբրև բիւրս երկու. և էառ զթագաւորաբնակ քաղաքն Հայոց զԱնի և զորդիսն Մանուչէի հանեալ ի յԱնույ և տարաւ ի Տփղիս. և ազատեցաւ ի ծառայութենէ թագաւորաբնակ քաղաքն Անի, որ կացեալ էր ի ծառայութիւն դամս վաթսուն. և զհրաշափառ և զմեծ եկեղեցին Անույ զսուրբ Կաթողիկէն, զոր մաքիթ էին արարեալ, ժողովեաց զեպիսկոպոսունսն և զքահանայս և զկրօնաւորս Հայոց աշխարհին, և օրհնեաց զսուրբ Կաթողիկէն մե-

ծաւ հանդիսիւ. և եղև ուրախութիւն ամենայն տանն Հայոց, զի տեսին ազատեալ զսուրբ Կաթողիկէն ի ծառայութենէ» (Մասթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն. ք. տպ., Վաղարշապատ 1898, էջ 359):

5 Ինչպես Ե. Թաղ'ալեվիլին (op. cit., էջ 63, ծան. 2) իրավացի նկատում ե, «Ջուրաբին վրաց աղբյուրները չեն ճանաչում»: Այլուր բոլորովին չի հիշատակվում:

6 Այսինքն 345 + 780 թ. = 1125 թ.:

7 Այս տվյալները, ինչպես նկատած ունի Թաղ'ալեվիլին (ibid., էջ 63, ծան. 3), «բացակայում են Բրոսեյի հրատարակած Քարթլիս-ցխովրեբայում, ինչպես և Մարիամ թագուհու վարիանտում, սակայն կա Վախտանգյան խմբագրութեան Քարթլիս-ցխովրեբայի մի հին ձեռագրում, վոր Մ. Ջանաշվիլին հանձնեց գրագիտութուն [տարածող] ընկերութեանը, № 4730. այս տվյալները կան և Վախուշտի պատմության մեջ». ուրեմն, «պետք ե յենթադրենք,— շարունակում ե նույն գիտնականը,— վոր այս տվյալները մեր տեկստի որինակից են մուծած ինչպես Քարթլիս-ցխովրեբայի Վախտանգյան խմբագրութեան, նույնպես և Վախուշտի պատմության մեջ»: Սրտ մասին տես նաև մեր այս աշխատութեան III հատորում:

... Յեվ Բարսեղը (Բասիլը) քարակոփ էր, վոր [նաև] կալատող է կոչվում, և գնաց Սոմխիթյան յերկիրը՝ Տփղիսին կից....

Դ.

### ԱՐՈՒՍԵՐԻՁԵ ՏԲԵԹՑԻ (XIII Դ.)

#### «ՄԵԾԱՎԿԱ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳԻ ՇՐԱՇԱԳՈՐԾՈՒՅՈՒՆՆԵՐԸ»

Արուսերիձե Տբեթցին (Արուսերիձե Տբեթին) XIII դարու հեղինակ է, Ջալալադդինի արշավանքների ժամանակակից, վորի գրչին պատկանում է մի քանի մանր գրվածքներ յեկեղեցապատմական բովանդակությամբ և սրանց թվում «Մեծավկա սուրբ Գեորգի հրաշագործությունները», վոր հրատարակել է Թ. Ժորդանյանի իր «Քրոնիկաներ»-ի II մասում (վրացերեն), Տփղիս 1897, եջ 111—122: Նույն Թ. Ժորդանյան (ibid., 122—123) վերոհիշյալ գրվածքին կցած ունի մի ծննդաբանական տախտակ, ուր ներկայացրած է Արուսերիձեների ճյուղագրությունը 950—1233 թ. թ: Կ. Կեկելիձեյի (Վրաց գրականության պատմություն, I, 347—349) խոսքով, «Արուսերիձե Տբեթցին (Արուսերիձե Տբեթին) ազնվազարմ տոհմիցն է յեղել, Խիխթա-Աճարայի իշխանաց-իշխան Հովհանի (Իվանեյի) վորդին և Վարդան ու Արուսերի յեղբայրը: Մականունը Տբեթցի (Տբեթի) հիմք է տալիս կարծելու, վոր նա Մտբեվարի, այսինքն Տբեթի յեպիսկոպոս է յեղել:

Թ. Ժորդանյան Արուսերիձեյի գործին պատմական գրչվածք է կոչում. մինչդեռ, ըստ Իվ. Ջավախիշվիլու (Հին վրացական պատմական գրականությունը, ա. հրատ., 190—191), այն «պատմական յերկասիրությանը նման չե, թեև, այնուամենայնիվ, ուշագրավ պատմական աղբյուր պիտի համարվի, քանի վոր մեծ տաղանդով հորինված՝ հրաշագործությանց նկարագրության մեջ այն ժամանակվա ներքին նիստուկացն ունի պատկերացրած և այս տեսակետից շատ նոր և ավելի քան ուշագրավ տեղեկություններ է պարունակում»:

Ստորև բերած փոքրիկ հատվածի թարգմանությունը, կատարված է համաձայն Թ. Ժորդանյանի հրատարակության:

[ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐ XII—XIII Դ. Դ.]

... Յերբ մեծն Դավիթ Տփղիսը գրավեց, Հերքն (Հերեթն) ու Կախքն (Կախեթն) ել կցեց նրան. բերդերից ու քաղաքներից և վոչ մեկում մարդ չկար: Հերքը (Հերեթը), Սոմխիթը, Տաշիրը, Ջավախքը (Ջավախեթը), ներքին Արտահանն և [վերին] Արտահանը սրա (Դավթի) թագավորության որոք շենացան, ինչպես և Տալքի (Տաոյի) ծայրա[զավանները]:...

[Գեորգը] գրավեց Անին, [վորը] վաղուց առել էին թուրքերը, քրոնիկոնի յերեք հարյուր ութսունին, ձերբակալեց Սալդուխին [և] բնաջինջ արավ նրա ամբողջ զորքը:...

Մխարզը և Ջաքարիան՝ մանդատուրթուխուցեսն ու սպասալարը, [և] նրա յեղբայր Հովհան (Իվանե) աթարակը գրավեցին Դվինը [Թամարի] թագավորության իններորդ տարին, [յերբ] քրոնիկոնի [չորս] հարյուր տասնյերեքն\* եր²:

Հենց նրանք գրավեցին [և] Գեղարքունիքը (Գելաքունին), Բջնին (Բիջնիսի), Ամբերգն³ ու Բարկուշատը, Անիի վերին [մասը] (sic), մինչ Սուլդափրիդի կամուրջը. վոչոք չի լսել և վոչ ել յեղել է թագավորի ծառա [այնպես], ինչպես սրանք (Մխարզը-ձեռներն) անձնվեր ծառայությամբ բարեհաջող և հաղթող [եյին]:

Յեկավ Ռուքնադղինը, վորը հետն ուներ Դիմուշկից և հայսկույս Ալաբից [ժողոված] զորք՝ այս [Թամարի] թագավորությունը կործանելու համար: [Մխարզը-ձեռները] դուրս յելան նրանց հանդեպ Բասեն (Բասիան) յերկրում, փախուստի յենթարկեցին, կոտորեցին և բնաջինջ արին նրանց, վայր գցեցին սուլթաններին և գերեցին Յերզնկայի, Շամի և Բյուրիտյան ամիրաներին:...

Սրանից հետո [Մխարզը-ձեռները] գրավեցին Կարսը (Կարի) և բերդերը Կարնիփորի ու Վանանդի, և Արաքսի (Ռախսի) ափին [գտնվող] բերդերը:...

[Թամարը] թագավորեց քսան և յերեք տարի և վերհամբարձավ առ աստված, ուր բնակվում են մարգարեները, հայրապետներն ու արքաները, հունվար ամսվա տասն և յերկուսին, չորեք-

\* Բնագրում [չորս] հարյուր յերեսուն յերեքը (sic):

Ե.

ԱՆԱՆՈՒՆ (XIII Դ.)

«ԴԵՄԵՏՐ, ԳԵՈՐԳ, ԹԱՄԱՐ ՅԵՎ ԼԱՇԱ-ԳԵՈՐԳԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Քարթլիս-ցխորբրայի Աննա թագուհու ձեռագրում, վորը պրոֆ. Ի վ. Ջավախիշվիլու անձնական գրադարանին է պատկանում, «այստեղ, ուր Դավիթ Շինողի պատմությունն է վերջանում, Դեմետր I, Դավիթ III, Գեորգ III, Թամարի և Լաշա-Գեորգի թագավորությանց պատմագրական տեսությունն է ներկայացրած» (Ի վ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականությունը, ա. տպ., 191—192): «Այս տեսությունն, — ըստ Ի վ. Ջավախիշվիլու (ibid., 192), — տարեգրություն է և չորս մասի յե բաժանված, վորոնցից յուրաքանչյուր մասն իր՝ կարմիր թանաքով գրած՝ վերնագիրն ունի: Առաջին մասն է՝ «Դեմետր թագավորի պատմությունը», յերկրորդը՝ «[Գեորգ] թագավորի պատմությունը», յերրորդը՝ «Մեծն արքայից-արքա Թամարի պատմությունը» և չորրորդը՝ «Թամարի վորդի Գեորգ թագավորի պատմությունը»: Ապա սկսվում է Ռուսուդանի թագավորության տեսությունը, վորը հենց սկզբում ընդհատվում է վոչ թե այն պատճառով, վոր նա թերի յե, այլ միմիայն այն պատճառով, վոր ինքը մատենագիրը սրանից ավելի վոչինչ չի գրել»:

Ինչպես Ի վ. Ջավախիշվիլին (ibid., 192) պարզած ունի, այս յերկասիրությունը գրված պիտի լինի անանուն հեղինակի կողմից, վորին նա «Լաշա-Գեորգի ժամանակվա մատենագիր» է կոչում, «Ռուսուդան թագուհու գահակալության առաջին ինդիկտիոնին կամ տարին, այն է 1222—3 թ.»: «Լաշա-Գեորգի (Գիորգիի) ժամանակվա մատենագիր» անունով հրատարակված է այն նույն Ի վ. Ջավախիշվիլու կողմից առանձին գրքույկով՝ Chronicon anonymum tempore regis Las'a-Georgii scriptum edidit Joannes

շարժի որը, Սոմխիթի Ագարա[կ]ում քրոնիկոնի չորս հարյուր քսան և յոթին, [և] թաղեցին Գեղաթի նոր[ակառույց]վանքում<sup>4</sup>...

Յեվ եր նրա (Թամարի վորդի՝ Գեորգ-Լաշայի) թագավորությունը մեծ խաղաղության մեջ, և նրա բոլոր գործերի վարիչ և խորհրդական եյին, [գեռևա] նրա ծնողից սկսած, Մխարզըձե[նեբր] Ջաքարիա մանդատուրթուխուցես և ամիրսպասալարն ու Հովհան (Իվանե) աթարակը: Առաջինին նրա\* ծնող՝ մեծն Թամար արքայիցարքան՝ արշավանքի ուղարկեց, ուր [Ջաքարիայի] բաղդը բանեց, և նա գրավեց Կարսը (Կարի). ապա՝ շարունակելով արշավանքը՝ գնաց և մտավ մեծ Պարսկաստանը, կոտորեց Արտավիլը (Արդարիլը), տակնուվրա արավ բերդաքաղաքներն և ավարով լցրեց արքունիքը:

Սրանից հետո [Ջաքարիան] այրեց ու ավերեց Խլաթի յերկիրը, ստիպեց Խլաթեցուն (Խլաթի սուլթանին) [խոնարհվել], և հաղթությամբ զարդարված առաջարկեց վերջինին հաշտության հիմունքները... Նմանապես Կարնո-քաղաքացին (Կարնո սուլթանը) խնդրեց խնամություն և անձնվեր յեղավ նրան. [Ջաքարիան] մտավ Բասեն (Բասիան), և այնտեղ նրանք զվարճացան ու հանգրստացան:...

Թագավորը գրավեց Որոտը (Որոտո) և նրա բերդերն ու շրջակայքը մինչ Նախիջևան (Նախճևան) և Գանձա[կ]ի դուռն, [նաև] գրավեց Շամքորը (Շանքորը)<sup>5</sup>:

Ապա ներս խուժեցին Սոմխիթ ու Հերեթն այլազգիները... վոտքի յելավ (ժողովեց) նրա թագավորությունը, վորին միացավ և Կարնո-քաղաքի գորքը...

Այսպիսի հաջողության և յերջանկության մեջ [եր Վրաստանը, յերբ] նրա (Գեորգի) քույր Ռուսուղանին խնդրեց\*\* Խլաթ բերել մեծ սուլթան Մելիքը, վորը տիրում եր Պարսից յերկրին Յեգիպտոսից սկսած մինչ Խլաթ...

Սրանից հետո մեծ աղերսով խնդրեց [նույն Ռուսուղանին և] Շարվանշահը... [ապա] Գեորգ թագավորը գնաց Բագավան<sup>6</sup>... [և] մեռավ Գեորգ թագավորը Բագավանում հունվարի տասնևութին, չորեքշաբթի որը, [յերբ] քրոնիկոնի չորս հարյուր քառասուն և յերկուսն եր<sup>7</sup>...

\* Բնագրում նրանց:  
\*\* Բնագրում խնդրեցին:

- 1 Այսինքն 380+780=1160 թ.:
- 2 Այն է 1184+9 կամ 413+780=1193 թ.:
- 3 Մասնավորապես Ամբերդի գրավման մասին տես. Աբխաթեբեգ Քալանթար, Արագածը պատմության մեջ, Յերեվան 1935, էջ 25—26 et pass.:
- 4 Այս հեղինակի ժամանակագրությամբ Թամարը վախճանվել է 1184+23 կամ 427+780=1207 թ., մինչդեռ ավանդական ժամանակագրությամբ նույն Թամարի մահվան թվականը 1213-ի ներքո յե հայտնի. Թեյե այս հարցի շուրջը կան և այլ տվյալներ՝ հոգուտ 1206, 1208 և 1210 թ. թ.: Հարցին վերաբերյալ մանրամասն գրականությունը տես. Թ. Ժողաճիա, Քրոնիկաներ (վրացերեն), I, Տիգ. 1892, էջ 294—302. Ս. Կակաբաձե, ՅԷՐՐ վախճանվեց Թամար թագուհին,—«Թեմի» (վրացերեն) Թերթը, 1912 թ. № 56 (այս առթիվ հմմ. А. Шанидзе, Библиография отд. изданий и статей на грузинском языке, появившихся в 1911 и 1912 г. г.,—«Христ. Восток», т. II, 1913, стр. 256). С. Какабадзе, Год смерти грузинской царицы Тамары Великой,—«Известия Тифлиссских Высших Женских Курсов», кн. I, в. 1, Тифл. 1914, стр. 163—168. Իվ. Զավախիցի, Վրաց ժողովրդի պատմությունը (վրացերեն), II, Տիգ. 1914, էջ 618—619, 632—635. Ս. Կակաբաձեյի գրախոսականն Իվ. Զավախիցիու աշխատության մասին՝ «Նոր հայտնաբերած Քարթլիս-ցխովրեբան ու Թամար թագուհու ցարդ անձանոթ պատմչի յերկասիրությունը», վրացերեն—«Bulletin Historique», 1924 թ., դ. I, էջ 289. Ուլմի գրախոսականը Իվ. Զավախիցիի աշխատության մասին «Լաշա-Գեորգի ժամանակվա մատենագիրը», վրացերեն,—«Պատմ. ժողովածու», դ. II, Տիգ. 1928, էջ 110 և ծան. 1 նույնտեղ. Գարեգին ա. Ե. Հովսեփյան, Խաղաղությանը կամ Պոռչյանք Հայոց պատմության մեջ, I, էջ 11 և ծան. \*\*, և նա:—Ի դեպ, հետաքրքիր է, վոր Հայաստանում գտնվող հուշարձաններից և վոչ մեկը չի վկայում հոգուտ ավանդական՝ 1213 թվականի: Յեվ, իրոք, Հաղթատի 1210 թ. արձանագրության մեջ կարդացվում է. «... Յամս աւծելոյ ասուծոյ թագաւորաց թագաւորին Գեորգէ որդւոյ մեծ թագաւորին Թամարին... որ թիւ Հայոց է ոժթ», և նա: (Ռ. Երզնկեանց, Հնախօսական տեղագրութիւն Հաղթատոյ աշխարհահռչակ վանից սրբոյ նշանի, Վաղարշապատ 1886, էջ 27—28. Հմմ. Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, էջ 50—51): Ապա վերին աստիճանի հետաքրքիր է Հոռոմայրի արձանագրությունը, վոր մենք անձամբ ստուգած ունինք տեղնուտեղը, հետևյալ բովանդակությամբ. «Ի թու[իս] ոժե, ի թագաւորութեանն Լաշայի եւ յամիրսպասալարութեանն Ջաքարէի և որդւոյ իւրոյ Շահնշահի եւ եղբաւր իւրոյ Իւանէի, ես հայր Սամուէլ եւ այլ միաբանքս շինեցաք զեկեղեցիս վասն յերկար կենդանութեան պատրոնաց մերոց, | ի յիշատակ հոգւոց մերոց եւ ծնողաց մերոց. որք երկրպագէք, սուրբ գյաղաւթս (sic) [յ]իշեցէք» (Հմմ. նաև Ս. վ. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, I, 101. Ղ. Ալիբան, Այրարատ, 62. Կ. Կոստանեանց, op. cit., 47, վորոնցից Ղ. Ալիբան և նրա հետևողությամբ Կ. Կոստանեանցն այս արձանագրությունը «Մարմետի» արձանագրություն են կոչում, իսկ Կոստանեանցին սխալմամբ հետևում են և վրաց արդի պատմաբաններ Իվ. Զավախիցիին ու Ս. Կակաբաձեին): Ըստ Իվ. Զավախիցիի (op. cit., 634) Թա-

մարի մահվան թվականը 1213—1214 պիտի ընդունել. իսկ ինչ վերաբերում է մնացած թվականներին, նրանք բոլորը կամ Քամարի գուգակից Դավիթ Սոսլանի մահվան թվականը պիտի համարել, կամ յենթադրել, վոր Գեորգ (Գիորգի) Լաշան թագավոր է ոծվել դեռևս իր մոր կենդանության որոք, վորի պատճառով ել հիշատակվում է իբրև «թագավոր»: «Ըստ յերևույթին,—ասում է այս առթիվ վրաց պատմաբանը,—նրանից հետո, ինչ Լաշա-Գեորգուն (Գիորգիին) Քամարի աթոռակից դարձրին, վերջինս իր մոր՝ Քամարի որոքն ել թագավոր եր կոչվում, այնպես վոր յերբեմն արձանագրությունների մեջ Քամարն այլևս չի հիշատակվում: Իսկ Լաշա-Գեորգուն աթոռակից հռչակելն, անսպասան, պիտի կապել Դավիթ Սոսլանի մահվան հետ, վորից հետո Քամարն այլևս չի ամուսնացել:

5 Բասենի և այլ տեղերի գրավման մասին մանրամասն հաղորդում է և Ս. Որբելյանը (եջ 391—392) հետևյալ կերպով. «[Զաքարէ և Իւանէ] բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից. և առին յԱռանայ մինչև ցնեբրքին Բասեն և ի Բարկուշատայ մինչև ի Մժնկերտ: Առին զԿարս, զՎաղարշակերտ, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲջնի և զԳառնի, զԴվին մայրաքաղաք, զԳարդման, զԳանձակ, զԶարեք, զՀերթ, զՇամքոր, զՇաքի, զՊարտաւ, զԶարաբերդ: Առին ի 660 թուին զՍիւնիս, զՈրոտն, զՌորոտան, զԳեղն, զԲարկուշատ: Նույնը հմմ. ըստ Վարդանի (եջ 140—141). «Ի վեցհարիւր վաթսուն և ութ թուին առնու [մեծն Իւանէ] զՈրոտն և զմերձակայ գղեական, թէպէտ ոչ զըովանդակ: Ուրեմն, այս առումները տեղի պիտի ունենային 1211—1219 թ. թ.:

6 Այս դեպքի առնչությամբ կարևոր է հիշատակել Բագավանի մի արձանագրությունը, վորն, ըստ Հ. Որբելու (И. Орбели, Багаванский храм и его надписи,—„Христ. Восток“, т. V, 1916, стр. 141) կարգացվում է այսպես. «Ի թագաւորութեանն Ալաշայ | յուսով բարերարին աստուծոյ ես Զաքարէ ա՛միրսպասալարս եկի ի Քլաթայ ի սուրբ | ուխտս Բագուանու եւ տեսի զայս հրաշափառ եկեղեցիս. բացի զիմ գանձ եւ գնեցի զխոշարտախի իւրեանց հողով | ու տովի (sic) [յ] այս եկեղեցոյս յ[իշատակ]...»: Բագավանի մասին առհասարակ տես. Ղ. Ալիւան, Այրարատ, 527—535. И. Орбели, Багаванская надпись 639 г. etc.—„Христ. Восток“, т. II, 1913, стр. 105—130. Նույնը՝ Багаванский храм и его надписи,—„Хр. Восток“, т. V, стр. 128—143.—«Ալաշա» || «Լաշա» հորջորջման մասին հատկապես տես. Н. Марр, К определению племенного происхождения Георгия, сына Тамары,—„Известия Академии Наук“ 1926 г., стр. 473—478:

7 Այսինքն 442 + 780 = 1222 թ.:

2.

## ԱՆԱՆՈՒՆ (XIII Դ.)

«ԹԱԳԱՎՈՐԻ ՈՏՄԱՆ ԿԱՐԳԸ»

Անհայտ հեղինակի կազմած «Թագավորի ոծման կարգն», Ի վ. Ջավախի շվիլու ասելով (Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, գ. I, Տփղիս 1928, եջ 70), «վոչ թե յեկեղեցական ոծման կարգն է ներկայացնում, այլ նրա պետական սահմանադրումն»: Այս դոկումենտը, համաձայն Ն. Բերձենի շվիլու հետազոտության (Արևմտյան Վրաստանի յեկեղեցական կազմակերպությունը, վրացերեն,—«Միմոմխիլվելի», I, Տփղ. 1926, եջ 105—106, ծան. 1), վորին միանգամայն համամիտ է և Ի վ. Ջավախի շվիլին (op. cit., 69—70), գրի պիտի լինի առնված վոչ առաջ քան XIII դարու 40-ական թվականները: Վրացերեն բնագիրը հրատարակել է ըստ Վրաց մեջ գրագիտություն տարածող նախկին ընկերության հավաքածուի № 352 ձեռագրի (XVII դարու), Ս. Կակաբաձեն առանձին գրքույկով՝ «Թագավորի ոծման կարգը, XIII-երորդ դարու սկզբում կազմված» (վրացերեն), Տփղիս 1913, եջ 1—8, ուր այս դոկումենտը սխալմամբ 1204—1205 թ. թ. է վերագրվում: Այս դոկումենտի ոտւերեն թարգմանությունը, համաձայն նույն № 352 և Վրաց նախկին յեկեղեցական թանգարանի № 450 ձեռագրի (XVI դ.), տրված է Կ. Կեկելիձեյի մագիստրական շարադրության մեջ (Корн. Кекелидзе, Литургические грузинские памятники в отечественных книгохранилищах и их научное значение, Тифл. 1908, стр. 174—176, 128—131; տեկտի անալիզը՝ 467):

## ԻՇԽԱՆԻ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԱԳԱՎՈՐԻ ՈՇՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

... Յեվ յերբ ավագ սարկավագն ասի քարոզ և կարգան ավետարանը, դուրս գա [խորանից] Ափխազքի (Աբխազեթի) կաթողիկոսն ու յպիսկոպոսապետն. իսկ յեթե Ափխազքի (Աբխազեթի) կաթողիկոսը չլինի, Իշխանցին<sup>1</sup>: Յեվ Իշխանցին ու յեպիսկոպոսապետն ձեռները դնեն [Թագավորի գլխին] մեկն աջից և մյուսը ձախից՝ յերիցապետական կարգի համաձայն, և բազմեցնեն յեկեղեցու միջում ամբիոնի վրա...

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1 Այսինքն Իշխանի քաղկեդոնիկ յեպիսկոպոսը, վորը վրաց յեկեղեցական նվիրապետության մեջ՝ «Թագավորական ոծման ծիսակարգության» համաձայն՝ մի վարիանտով 10-րդ, մյուսով 8-երորդ և յերրորդով 11-երորդ տեղն ունեւր գրաված (տես սույն հատորի Թ. գլուխը):

է.

## ԱՆԱՆՈՒՆ (XIV Գ.)

### «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

Քարթլիս-ցխորեբայի Մարիամ Թագուհու վարիանտում անանուն հեղինակի յերկասիրությանը «Թագակիրների պատմականն ու գովասանքն» անմիջապես հետևում է մի այլ՝ բավականին ընդարձակ յերկասիրություն, վորի հեղինակին՝ Իվ. Ջավախիշվիլին (Հին վրացական պատմական գրականությունը, ատպ., 197) անանուն «Ժամանակագիր» է անվանում, քանի վոր վերջինս պատմությանն ու պատմագրությանը «Ժամանակագրություն» է կոչում, ճիշտ այնպես, ինչպես «Թագակիրների պատմականն ու գովասանք»-ի հեղինակը նույն իմաստով «խտորիա» բանն է գործածում:

Այս յերկասիրությունը, վորին մենք, ըստ այսմ, «Ժամանակագրություն» ենք կոչում, գրաված ունի Ե. Թաղաշվիլու հրատարակության 536—785 էջերը, իսկ ըստ Մ. Բրոսեյի՝ 339—447 էջերը. նույնի Ֆրանսերեն թարգմանությամբ (Histoire de la Géorgie I, 2) 481—643 էջերը: «Ժամանակագրության» մեջ նկարագրված են պատմական զանազան անցքեր սկսած Լաշա-Գեորգի (Գիորգիի) Թագավորությունից (1213—1223) մինչ Գեորգ (Գիորգի) Պաթառի Թագավորությունը (1318—1346), մոտավորապես մի ամբողջ դարու սահմաններում:

Այս «Ժամանակագրությունն», ի միջի այլոց, հետաքրքիր է այն տեսակետից, վոր այստեղ, ինչպես իրավացի Իվ. Ջավախիշվիլին էլ մատնանշած ունի (op. cit., 196), առաջին անգամն է հիշվում «Ղարաբաղ» տեղանունը: «Ըստ յերևույթին, — ասում է նույն գիտնականը, — իբրև աշխարհագրական անուն Ղարաբաղը նոր եր մուտք գործել [վրաց] գրականության մեջ և XIII-րդ դարում այս վայրն ուրիշ անունով է յեղել հայտնի: Յեվ իրոք, «Ղարաբաղ»-ն իբրև Ռանի անուն XIV-րդ դարումն է ծնունդ

առնում և պարսկական գրականության մեջ այս աշխարհագրական անունն առաջին անգամ կարծեմ Համդալահ Դազվինին (վախճ. 1349 թ.) և հիշում իր աշխարհագրության մեջ (В. Бартольд. Историко-географический обзор Ирана, 152)»:

Անանունի «ժամանակագրությունը» մենք բաժանած ունինք հետևյալ մասերի. 1. Գեորգ-Լաշայի թագավորությունը (1213—1223), 2. Ռուսուդանի թագավորությունը (1223—1247), 3. Դավթ՝ Լաշա-Գեորգու վորդու, և Դավթ՝ Ռուսուդանի վորդու թագավորությունը (1243—1259, 1243—1269), 4. Դեմետրի թագավորությունը (1273—1289), 5. Դեմետրի վորդվոց՝ Դավթի և Գեորգի թագավորությունը (1292—1310, 1299—1301), 6. Վախտանգ՝ Դեմետրի վորդու թագավորությունը (1301—1307), և 7. Գեորգ-Պայծառի թագավորությունը (1318—1346):

### [ԳԵՈՐԳ-ԼԱՇԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

[Գեորգ (Գիորգի) Լաշային] հնազանդ էլին բոլոր հակառակորդները [ճիշտ այնպես], ինչպես բարեհիշատակ և աստվածասեր նրա մոր [Թամարին հնազանդվեցին]... Գանձա[կ]եցինք և նրանց հարևան Նախիջևանցիք (Նախճևանցիք) և Կարնո-քաղաքացիք և շատ ուրիշները, վորոնք ընծաներով և հարկերով (խարաջով) գալիս էլին նրա մոտ...

... [Յերբ Գանձակեցիք դադարեցին հարկ (խարկ) տալ թագավորին], Լաշան դիմեց Վրաստանի հայսկույս և հայնկույս [գրտնվող] զորքերին, [նաև] Մխարզրձեկ Հովհանին (Իվանեյին\*), վորը նրա մայր Թամարից ստանձնած ունեք աթաբակության պատիվը, քանի վոր աթաբակությունը բոլոր իշխաններից (երիթաֆներից) առավել գերազանց էր և նա արքունիքի վաղիրն (վեղիրն) էր<sup>1</sup>...

... [Գանձակեցիների հետ սկսած պատերազմում] թագավորն ունեք մոտ չորս հազար մարդ, վորոնց թվում առավելապես մեսխերն էլին, քանի վոր մի կողմը Մխարզրձեկներն էլին կանգնած, մյուս կողմը՝ հեր-կախերն ու սոմխիթցիք, վրացիք և թորեցիք, և յերրորդն՝ ափխազները, դադյան-բեդյանները և Լիխի հայնկույս բնակվողները...

... [Լաշան իր անբարոյական կենցաղով և հարբեցողությունը իր դեմ հարուցեց] Վրաստանի իշխաններին (թավազներին)<sup>2</sup>... և

\* Var. Իոանեյին:

առավելապես Հովհան (Իվանե) աթաբակին և Զաքարիայի վորդի Վահրամ (Վարամ) Գագեցուն<sup>3</sup>...

... [Լաշան յերբեմն] անցնում էր Աջամեթ և վորսորդում էր Ցխումում և Ափխազքում (Ափխազեթում),... աջանը իջնում էր Տփղիս, իսկ ձմեռը լինում էր Հայքի (Սոմխիթի) Դվինում\* և այնտեղից կոճում էր Գանձա[կ]եցիների հետ. ամառը բարձրանում էր Կուրի վերին մասը՝ մնալով Կողայում (Կոլայում), ուր նրա մոտ գալիս էլին ընծաներով նրա հարկատուները Նլաթից և Հունաստանից (Բերձենստանից)...

... [Զալալադդինի զորքերը] մոտեցան Վրաստանի սահմաններին [և] սկսեցին ավերել Գագի յերկիրը: Լսելով այս՝ Վահրամ (Վարամ) Գագեցին և Հովհան (Իվանե) աթաբակը դիմեցին Լաշա թագավորին [և] հաղորդեցին այլախոս այլազգիների գալու և Հայքի (Սոմխիթի) ավերման մասին: Իսկ թագավորը դիմեց իր հայնկույս և հայսկույս [գտնվող] զորքերին, և՛ ժողովելով իննսուն հազար հեծելազորք՝ գնաց թաթարների դեմ, վորոնք Գագի ծայրին էլին կանգնած. այնտեղ նրան (թագավորին) միացան Հովհան (Իվանե) աթաբակն և սրա յեղբորորդի՝ Զաքարիա ամիրսպասալարի վորդի Շահնշահը (Շահնեն), նաև Վահրամ (Վարամ) Գագեցի գործակալն (մասխուրթուխուցեան) իրենց զորքերով, և գնացին [պատերազմելու]՝ կանգ առնելով Բերդուջ գետի վրա, վորն այժմ Սագիմ է կոչվում<sup>4</sup>... [Վրաց զորքը՝ պարսուկուն կրելով՝ վերադարձավ Տփղիս. սրանց] հետամուտ յեղան թաթարները, վորոնք հասան մինչ Սամշվիլդե և ապա վերադարձան\*\*...

\* Var. Դերում (sic):

\*\* Var. + ... Գեորգ-Լաշայի քույր Ռուսուդանին ի կնուկուն խնդրեց Նլաթում բազմեցնելու մեծ Մելիք սուլթանը, վորը տիրում էր Յեզիպտոսից մինչ Պարսկաստան, սակայն աստվածային շնորհը սրան արգելք հարուցեց... Գեորգ թագավորը Բագավան գնաց, վորպեսզի իր ջրոջն ամուսնացնե, և տան որ էր մնացել մինչ նրա (Ռուսուդանի) ուղեվորումը, սակայն աստված այստեղ էլ խափանեց... Լաշա թագավորը Բագավանում յեղած ժամանակ զգաց մահվան մոտեցումը... Յեվ վախճանվեց Լաշա-Գեորգը (Գիորգին) Բագավանում գտնվելու պահին հունվար տմսվա 18-ին, չորեքշաբթի որը<sup>5</sup>...

[ՌՈՒՍՈՒԴԱՆԻ ՔԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... [Թաթարները] հարյուր քառասուն հազար հոգուց բաղկացած՝ մոտեցան Ատրպատականին (Ադարբադազանին), ապա մոտեցան Մխարզրձեհների յերկրին: Դվինը Հովհան (Իվանե) աթաբակի ձեռին եր, իսկ Անին տրված եր Շահնշահ (Շանշե) մանդատութութուհեցեսին: Խվարազմացիք յեկան Լաշա-Փեորգի (Գիորգիի) մահվան յերրորդ տարին գերելու և ավերելու Դվինի և նրա մերձակա յերկրները: Լսելով այս՝ Հովհան (Իվանե) աթաբակն և Վահրամ (Վարամ) Գագեցին գնացին Ռուսուղանի մոտ և գեկուցին խվարազմեցվոց ու մեծն սուլթան Ջալալադդինի գալու մասին... [Այդ ժամանակ] Հովհան (Իվանե) աթաբակը ծերացած եր, և վոչ բացահայտ, այլ գաղտնի կերպով կուսակրոնութուն եր ընդունել... Այս Հովհան (Իվանե) աթաբակին Ռուսուղան թագուհին (թագավորը) զորքերի գլուխ նշանակեց՝ տալով դրոշակ, և ուղարկեց սուլթան Ջալալադդինի դեմ կովելու: Սրանք մոտեցան Դվինին և Ամբերդին. իսկ խվարազմեցիք կանգ եյին առել Գառնի գյուղում... Առաջընթաց զորքում [աթաբակը] նշանակեց թորեցվոց և Ախալցիխեցի յերկու յեղբայր Շալվա և Հովհանին (Իվանեյին)... [Վրացական զորքը պարտութուն կրելուց հետո] փախուստի դիմեց. Շալվան կալանավորվեց... իսկ [վերջինխ] յեղբայր Հովհանը (Իվանեն), վորն ապաստան եր գտել Գառնիի այրերում, քարով սպանվեց: Ապա Շալվային ներկայացրին Ջալալադդին սուլթանին, և նրան ճանաչեցին Նախիջևանցիք (Նախճևանցիք) և Ատրպատականցիք (Ադարբադազանցիք)...

Ապա Հովհան (Իվանե) աթաբակը վերադարձավ Բջնի, իսկ սուլթանն՝ Ատրպատական (Ադրբադազան) և Նախիջևան (Նախճևան)... Յեղ յերկու տարուց հետո վախճանվեց Հովհան (Իվանե) աթաբակը, և [զորա]գլուխ նշանակեցին Ավագին (Ավաքին)՝ շորհելով նրան ամիրսպասալարութուն...

[Ապա սուլթանն] յեկավ և ավերեց ամբողջ Դվինի յերկիրը, Անին և ամբողջ Անվո յերկիրը, Սոմխիթը, Գագը մինչ Գանձա[կ]. իսկ մինչ այս Շամքորը (Շանքորը) Վահրամ (Վարամ) Գագեցու ձեռին եր, վորը խելամիտ և պատերազմներում անուն հանած մարդ եր...

... Լսելով, վոր Ավագ (Ավաք) աթաբակն ու ամիրսպասալարը Բջնիումն ե գտնվում, Ջալալադդին սուլթանը կամեցավ նրա հետ

տեսնվել: Դեսպան ուղարկեց նրա մոտ ասելու. «Ինձ՝ թագաւորի վագիրապետ (վագիրթուխուցես)»... [արի]. մի-մի մարդ հետներս վերցնելով, ժողովենք, քանի վոր խոսք ունիմ քեզ ասելու»: Ավագին այս դուր յեկավ և տեսակցության... գնաց զինված: Իսկ հայնկույս, Բջնիի ձորում, [յերկաց]՝ հետն մի մարդ ունենալով՝ սուլթանը, վորը նույնպես զինված եր, և մեկը մյուսին մոտեցան: Ապա սուլթանն ապաց. «Յես չեմ յեկել Վրաստանն ավերելու, այլ հաշտություն և խաղաղություն կնքելու»... Լսելով սուլթանի այս խոսքերն՝ Ավագն (Ավաքն) վոչինչ չպատասխանեց, այլ միմիայն ասաց. «Յես կցեկուցեմ թագավորին և նրա վագիրներին»... Ռուսուղան թագուհուն (թագավորին) այս տարրորինակ թվաց և պատվիրեցին Ավագին (Ավաքին) չսեղ այսպիսի գործերի մասին, այլ միանգամայն մերժել: Յեղ Ավագն (Ավաքն) այս հայտնեց սուլթանին: Իսկ վերջինս՝ լսելով այս՝ իր ամբողջ զորքով տեղից շարժվեց և դիմեց դեպի Տփղիս քաղաքը... [Ապա] սուլթանը յեկավ Սոմխիթ և ավերեց ամբողջ Սոմխիթը, [հրի և] սրի յենթարկելով նրա ընակիչներին, այնպես վոր [այնտեղ] ել տղամարդ չմնաց: Ապա նա անցավ Տփղիսի կողմը...

... Ավերելով Տփղիսը՝ [խվարազմացիք] սկսեցին կրկին ավերել, գերել և ընաջինջ անել Սոմխիթն ու Կամբեչխանն Իորի յեզերքին, Քարթլին ու Թոնեղը (Թրեխթն\*)<sup>6</sup>, Ջավախքն (Ջավախեթն) ու Արտահանը (Արտանը), [նաև] վոմանք Սամցխեն ու Տայքը (Տաոն), և Կարնիսիորի ու Անվո մերձակա յերկրները...

[Ռուսուղանի վորդի Դավթի գահակալության պահին Վրաց] թագավորութունն ապահով եր խվարազմացիներից, քանի վոր Շահնշահ (Շանշե) մանդատութութուհեցեսն Անիումն եր, Ավագ (Ավաք) ամիրսպասալարը Բջնիում, նմանապես և Վահրամ (Վարամ) Գագեցին, հերացիք (հերք), կախք, սոմխիթցիք, վրացիք, թորեցիք, շավչ-կղարջեցիք և տայեցիք իրենց ամրոցների մեջ՝ հնազանդ լինելով Ռուսուղան թագուհուն (թագավորին)...

[Ապա Ջալալադդին սուլթանն] յերկրորդ անգամ դիմեց դեպի Տփղիս: Լսելով այս՝ Ռուսուղանը հրամայեց իր ամբողջ՝ հայնկույս և հայսկույս [գտնվող] զորքին, Շահնշահ (Շանշե) մանդատութութուհեցեսին և Ավագ ամիրսպասալարին, նաև գործակալ (մսախուրթուխուցես) Վահրամ (Վարամ) Գագեցուն, հերաց, կախերին, սոմխիթցվոց, Ջավախներին, մեսխերին, տայեցիներին,

\* Var. Թրեխթ:



Յոսոնա Դադյանին, ... ասիականներին, ջիբերին և ամբողջ թագավորութանը... ժողովել: ... Իսկ սուլթանը մուտք եր գործել Սոմխիթ՝ Բողոնոփոր (Բոլնիսի ձորը)..., ապա մտավ Տփղիս:...

... Ապա չորեք Նոյինները՝ Չարմաղանը, Չաղատան, Իոսուրն ու Բիչոն... անցան Արաքսն (Ռախան) և յեկան Գանձա[կ]...

... Հսկելով այս՝ Չալալադղին սուլթանը շտապ տեղահան յեղավ իր գերդաստանով հանդերձ և գնաց Հոռնաստան (Բերձենստան)։ Իսկ թաթարները հետամուտ յեղան և հասան Բասեն (Բասիան)...

... Խվարազմացիներին փախուստի մատնելով՝ թաթարները գնացին և ավերեցին Խլաթի և Ալաշկերտի (Վալաշկերտի) յերկրները, և Խլաթի սուլթանը չկարողացավ ընդդիմադրել... ապա անցան Պարտավ (Բարդավ), Գանձա[կ] և Մուղան, և այնտեղից սկսեցին ավերել Վրաստանը, Դարուբանդի ստորև Շիրվանի յերկիրը, Կապադակը (Ղաբալը), Հերքը (Հերեթը), Կախքը (Կախեթը), Սոմխիթն և Արշակունյաց յերկիրը՝ Դվինն ու Անին...

Իսկ վերև հիշված Նոյինները (Չարմաղան, Չաղատա, Իոսուր և Բիչոն) մտան Քարթլի, Թոեղք (Թրիալեթ), Սոմխիթ, Չավախք (Չավախեթ), Սամցխե, Շավշք (Շավշեթ), Կղարջք (Կլարջեթ), Կոդա (Կոլա), Արտահան (Արտան), Անի\*, և մորեխի պես տարածվեցին այնտեղ՝ ավերելու և կոտորելու [յերկիրը]... Շահնշահ (Շանշե) մանդատուրթուխուցեան ապաստան գտավ Աճարական (Աճարա) յերկրում, Ավագ (Ավաք) ամիրսպասալարը մտավ Կայենի բերդն և Վահրամ (Վարամ) Գագեցին գնաց Քուլթայիս (Քուլթաթիս)։ Նմանապես և հերք, կախք, սոմխիթցիք, վրացիք, մեսխերը, տայեցիք, թորեցիք-արտահանցի (արտանցի)-կողայեցիք՝ բոլորը մտան բերդերը, սարերն ու անտառները և կովկասցիների ու լեռնականների բոլոր ամրոցները...

Տեսնելով Նոյինների չարագործութունները՝ Հովհան (Իվանե) ասթարակի վորդի՝ Ավագ ամիրսպասալարը դեսպաններ ուղարկեց Պարտավ (Բարդավ), ուր վերոհիշյալ իշխանները կանգ եյին առել, քանի վոր ձմեռը նրանք այդտեղ եյին անցկացնում, իսկ ամառը՝ Գեղարքունյաց (Գելաքունի) և Արարատյան լեռներում։ Յեվ այդ ժամանակ եր Չարմաղանը\* գրավել Անին։ Սրանց մոտ ուղարկեց Ավագը դեսպան՝ հաշտութուն խնդրելու... Նրանք ուրախությամբ ընդունեցին Ավագի դեսպանին և հաստատ յերդու-

\* Var. + և Դվին:

\*\* Բնագրում՝ Չարմաղանը:

մով կատարեցին խնդիրը... Հենց վոր Ավագի դեսպանները վերադարձան և հաղորդեցին սրա մասին, Ավագը... գնաց Չարմաղանի\*, Չաղատայի, Բիչոյի և Իոսուրի մոտ, վորոնք պատվեցին և սիրեցին նրան՝ նշանակելով պահապաններ նրա քաղաքներում և յերկրներում...

Յերբ յերկիրը խաղաղվեց և Շահնշահ (Շանշե) մանդատուրթուխուցեաք տեղեկացավ թաթարների և Ավագի միջև կնքված հաշտության և յերկիրն անվաս պահելու մասին... ինքն՝ Շահնշահը (Շանշեն) յեվս գնաց թաթարների տեսության, վորոնք նրան (Շահնշահին) շատ պատվեցին և վերադարձրին իրենց նվաճած Անին շրջակա յերկրով... Տեղեկանալով սրա մասին՝ Վահրամ (Վարամ) Գագեցին՝ Չաքարիայի վորդին՝ յեվս կնքեց հաշտություն, և սրանով յերկիրը խաղաղվեց:

Իսկ Հերքը (Հերեթը), Կախքը (Կախեթը), Սոմխիթն ու Քարթլին և վերևում [գտնվող] ամբողջ յերկիրը մինչ Կարնո-քաղաք գերության և ավերման եր յենթարկված... և ձմեռը [թաթարները] կանգ առան Պարտավում (Բարդավում), Կուրի յեզերքին, Իորի յեզերքին\*\* և վերևում՝ մինչ Գագ...

... Յերբ հայսկույս [գտնվող] յերկիրն (արևելյան՝ Վրաստանը) թաթարները գրավեցին, Ռուսուղան թագուհին վորոշեց իր վորդի Դավթին ուղարկել թաթարների մոտ՝ յերկիրը չվնասելու մասին պայման կապելու համար, և ուղարկեցին դեսպաններ թաթարների մոտ Շահնշահին (Շանշեյին), Ավագին, Վահրամին (Վարամին) և [Հ]երքի ([Հ]երեթի) իշխան Շոթային, վորին մանի աղանդին հարելու պատճառով Կուլպր եյին կոչում... [Յեվ] Բաչի-Նոյինն իր հետն տարավ Վրաստանի մեծն իշխանավորներին, [և] յերբ նրանք մոտեցան Սեբաստիո և Յերզնկայի (Եզնկի) յերկրներին, [թաթարները նորից] սկսեցին ավերել...

... [Ապա] թաթարները... գնացին դեպի Խլաթ. իսկ Խլաթի սուլթանն ընդառաջ գնաց նրանց... [Յեվ թաթարները] հեռացան իրենց ամառնային բնակավայրը՝ Գեղարքունյաց (Գելաքունի) և Արարատյան լեռները, և դեսպան ուղարկեցին Ռուսուղան թագուհու (Թագավորի) մոտ հաշտություն կնքելու համար...

... Յեվ ինքը թագուհին (Թագավորը) յեկավ հայսկույս, ուղարկելով իր վորդի Դավթին յեվս, վորոնց ընդառաջ գնացին Շահնշահը (Շանշեն), Ավագը, վորին թաթարները մեծ պատիվներով

\* Բնագրում՝ Չարմաղանի:

\*\* Var. Իորի յեզերքին abs.:

բավարարեցին, ... Շոթա Կուպար\* Թորեցին<sup>7</sup>, Վահրամ (Վարամ) Գարթլի իշխանը...

... Ավագը, վորին Ռուսուդան թագուհին (Թագավորն) ամիր-պասալարուժյան փոխարեն աթարակ եր նշանակել, ուղարկվեց Չաղատ-Նոյինի մոտ... Յեվ Սլաթի սուլթանն ել տարորինակ ճանապարհով գնաց... [Յեվ] Ավագն ու Սլաթի սուլթանն... առաջիններն եյին, վոր ուղարկվեցին թաթարների մոտ...

[Ռուսուդանի մահից հետո] Շահնշահին (Շահնշեյին) հանձնեցին նրա և Ավագի կալվածքը, Վահրամ (Վարամ) Գագեցուն հանձնեցին ամբողջ Սոմխիթն... և Թորեցի Գամրեկելիին... Ջավախքը (Ջավախեթը), Սամցխեն և վերին յերկիրը մինչ Կարնու-քաղաք...

[Յեվ Եգարսլանի հպատակության ներքո եյին] մեծ և պատվական Շահնշահ (Շահնշե) մանդատութուխուցեան և Վահրամ (Վարամ) Գագեցին և բոլոր այլ իշխանավորները...

... Ասորիքում (Շամում) գտնվող թուրքերը՝ լսելով վրաց անտերուժյան (անթագավորության) և վրաց զորքի Ալմութ\*\* գնալու մասին թաթարների մոտ... ժողովեցին բազմություն մարդկանց, մոտ վաթսուն հազար, վորոնց ղեկավարն (տերն ու տնորենն) եր հռչակավոր Ղարախանը, Վրաստանն ավերելու համար, և յեկան Ալաշկերտի (Վալաշկերտի) յերկիրը, վորն այն պահին Շահնշահն (Շահնշեն) ուներ գրաված, և սկսեցին ավերել Վրաստանն ու Ալաշկերտն (Վալաշկերտն) և Արաքսի (Ռախսի) հայնկույս [գտնվող] յերկիրը մինչ Սուրմար (Սուրման), վորը նմանապես [նույն] Շահնշահ (Շահնշե) մանդատութուխուցեան ուներ գրաված: Վերջինս՝ տեսնելով [այս յերկրների] ավերումը՝ հրամայեց իր և Ավագ աթարակի զորքին ժողովել, և՛ յերեսուն հազար ընտիր հեծյալներով անցնելով Արաքսը (Ռախսը)՝ հասավ Ալաշկերտ (Վալաշկերտ), ուր կանգ եր առել Ղարախանը... Տեղի ունեցավ սոսկալի պատերազմ, ուր անթիվ բազմություն կոտորվեց [թուրքերից]: Իսկ Շահնշահի (Շահնշեյի) զորքը փրկվեց բարեխոսությամբ կենարար խաչին (ճշմարիտ փայտին)... Ղարախանն ու նրա զորքը պարտվեց, վորոնք փախուստի դիմեցին. իսկ [Շահնշահի զորքը] հետամուտ յեղավ նրանց մինչ Սլաթ... ապա հազթող վերադարձավ Անի, վորը [Շահնշահի] տունն ու աթոզանիստն եր:

Քանի վոր լուրը Վրաստանի անտերության (անթագավորության) մասին ամենուրեք տարածվել եր, բոլոր ազգերը գլուխ

եյին բարձրացրել վրացոց ավերելու նպատակով. ապա վոտքի յեկան Հունաստանում (Բերձենստանում) գտնվող թուրքմեններն ու Յերզնկայի (Եզինկի) սուլթանն և ուրիշ քաղաքներում գտնվող ամիրաները. և ժողովեցավ անթիվ բազմություն [զորաց], վորը դիմեց Վրաստան: Լսելով այս՝ տայեցիք և շավշ-կղարջք և կողաարտա[հա]ն-կարնիփորեցիք հուզվեցին և մարդ ուղարկեցին Սամցխեն՝ Ղվարդ՝ վարեցի իսխիշվարեցի Ջաղ՝ելու մոտ, վորպեսզի ոգնի նրանց... Իսկ թուրքմեններն յեկել եյին Բանա, վորն և պատել եյին, քանի վոր Ուղթիքն (Ութիսն) և Բաղաթուրն (Բալթաղ՝ուրն)\* արդեն գրաված ունեյին, և ավերում եյին Տայքը (Տաոն)... [Ապա տեղի ունեցավ պատերազմ], ուր հույներն (բերձեններն) ու թուրքմենները պարտվեցին, վորոնք և սկսեցին փախչել... [Ապա վրաց զորքը] պատերազմ ունեցավ Ուղթիքում (Ութիսում), վորն և գրավեց, նաև՝ Բաղաթուրի\*\* բերդը, և հույժ հաղթող... խաղաղ տուն վերադարձավ...

... Այս խառնակության պահին Վրաստանի հայնկույս և հայսկույս գտնվող բոլոր իշխանավորները ժողովեցան Կոխտայի ծայրին՝ [Շահնշահը (Շահնշեն)], Եգարսլանը, Տոտնե Դադյանը, Վահրամ (Վարամ) Գագեցին, Ղվարդ՝ վարեն, Շոթա Կուպրին..., Թորեցի Գամրեկելը, Սարգիս Թմոզվեցին... [սրանք բոլորը] վորոշեցին պատերազմ սկսել [թաթարների դեմ]... Իսկ թաթարները՝ լսելով վրաց [իշխանավորների] ի մի ժողովելու մասին... յեկան Կոխտայի ծայրը... և կալանավորեցին ու քշեցին նրանց Անի յերկիրը՝ Շիրակավան կոչված տեղը... [Ապա] Տոտնե Դադյանը [վորը գնացել եր զորք ժողովելու], իր զորքով հանդերձ յեկավ Բկինիսջվարի կոչված տեղը, վորը Սամցխեյի և Ղազոյի միջևն ե գտնվում: Լսելով Վրաստանի բոլոր իշխանավորների Անի քշելը... սա յերկու մարդու [ուղեկցությամբ] գնաց Անի... Անցավ Սամցխեն, Ջավախքը (Ջավախեթն) և հասավ Անի:

Այս ժամանակ վերոհիշյալ Նոյինները (Բիչու և Անգուրգը) մտել եյին քաղաք, իսկ [վրաց] իշխանավորները, վորոնք կալանավորված եյին և կապանքներով կապած, մերկացյալ նստած եյին հրապարակի վրա...

... Յեվ Ուլո-ղ՝անի որդը... չորս Նոյինները կառավարում եյին ամբողջ նրա տերությունը. նախ ... Խորասանն, Իրազն, Ատրպա-

\* Var. Կուպրի:  
\*\* Var. Արմութ:

\* Var. Բուղաթաղ՝ուրը:  
\*\* Var. Բուղաթաղ՝ուրի:

տականը (Ադարբադագանը), Մովականը, Պարտավը (Բարդավը), Շիրվանը (Շարվանը), Վրաստանն, ամբողջ Խլաթն և մեծն Հուսաստանը (Բերձենստանը) մինչ Ասիա...

### ԴԱՎԻԹ՝ ԼԱՇԱ-ԳԵՈՐԳՈՒ ՎՈՐԴՈՒ, ՅԵՎ ԴԱՎԻԹ՝ ՌՈՒՍՈՒԴԱՆԻ ՎՈՐԴՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

... Յերբ Ռուսուդանի վորդի Դավիթն Ալտաղումն եր Ուլոյի մոտ, նրան ձերբակալեցին և ուղարկեցին ձմրան [բնակա]տեղն՝ Պարտավ (Բարդավ)։ հասնելով Նախիջևան (Նախճևան)՝ Ռուսուդանի վորդին յերկու մարդով ուղևորվեց դեպի Ափխազք (Ափխազեթ)...

... Յեվ յերբ Նարին-Դավիթը մոտեցավ Ավագ աթաբակի յերկրին, ... նրան նկատեց վորսի գնացած Սմբատ (Սուճբատ) Որբելը։ [Գեորգ] Թագավորի կողմից Որբելների դեմ սկսած հալածանքի (բնաջնջման) պատճառով Նախիջևան (Նախճևան) եր փախել Լիպարիտ կոչվածը։ Վերջինս յեկավ Ելիկումի յերկիրը։ Ելիկումը՝ տեսնելով Լիպարիտ Որբելուն՝ իբրև փեսա ընդունեց և իր դստեր հետ ամուսնացրեց, վորից ծնվեցին յերկու տղաներ, վորոնց կոչեցին՝ մեկին Ելիկում և մյուսին՝ Սմբատ (Սուճբատ)։ և [այս] Սմբատին Ելիկումն իբրև վորդի ընդունեց. և այս Սմբատի թոռն Սմբատի հետ հանդիպեց Դավիթ [Թագավոր]ը, վորն և տարավ նրան իր յերկիրը։ Յեվ Դավիթն աղաչում եր Սմբատին չհայտնագործել իր մասին...

... [Դավիթ Թագավորը]՝ շրջեց Հովհան (Իվանե) աթաբակի վորդու՝ Ավագ աթաբակի յերկիրը. և այդ ժամանակ վախճանվել եր Ավագը, վորը չեր թողել տղա, այլ միմիայն աղջիկ՝ Խվաշագ անունով։ Յեվ Թագավորը գնաց Բջնի (Բիջնիս)<sup>8</sup> վողբալու, և տեսավ Ավագի կնոջը, վորը Ռաճի իշխանների՝ Կախաբերների դուստրն եր՝ Գվանցա անունով, հույժ գեղեցիկ։ Սիրահարվելով վերջինիս վրա՝ [Դավիթը] մի քանի ժամանակից հետո իր հետ տարավ նրան իբրև կին և թագուհի, և բերեց իր յերկիրը։ Իսկ Ավագի դստեր թողեց հայրենյաց հողում՝ խնդրելով Սաղուն Մանկաբերդեցուն, վորն իմաստուն և խելոք մարդ եր, բարեմիտ, հաջող, բարձրահասակ և գեղեցկադեմ, ուժեղ և մրցող, [հովանավորել նրան]...

... Յեվ Գվանցա թագուհին ու նրանից [ծնված] վորդի Դեմե-

տրին (Դեմետրին) [Դավիթը] թողեց Ավագի տանը՝ Բջնիում (Բիջնիսում)...

... Ուլո-ղ՝անը... գնաց ձմրան բնակատեղը, վորն այժմ Ղարաբաղ<sup>9</sup> և Մուղան ե կոչվում...

... Արդուն-[խանը]<sup>10</sup> քսան հազար հեծելազորքով յեկավ և պատեց Գանձա[կ]ն ու Սոմխիթն, ապա մոտեցավ Տփղիսին...

... [Յերբ Արդունը] մտավ Տփղիս, նրան ընդառաջ գնացին Վրաստանի բոլոր իշխանավորներն ու իշխաններն և վոմն Բադին\*<sup>11</sup>, վորը հայ եր ծագումով...

... [Յեվ] բերին Սաղունին իբրև թարգմանիչ, վորին Ուլոն շատ եր սիրում և պատվում, քանի վոր նա խելոք մարդ եր և քաղցրալեզու... [Յեվ այս] Սաղուն Մանկաբերդեցին քաղցր ճառում եր...

... [Յեվ Ուլո-ղ՝անը] Սարգիս Ջաղելուն շնորհեց Կարնո-քաղաքն ու շրջակա յերկիրն, Իրաղ՝ով հանդերձ... Յեվ գնաց [Դավիթ Թագավորն] Ելզոն-Նոինի մոտ՝ ասելով. «Յեթե դ՛աննը Սարգսին կտա Կարնո-քաղաքը, թող թագավորությունն ել նրան տա»։... Յեվ չտվին [Սարգսին] այլևս Կարնո-քաղաքը։...

... Այս պահին Ուլո-ղ՝անին դավաճանեց Շահնշահի (Շանշեյի) վորդի Ջաքարիա ամիրսպասալարը...

... Յեվ սպանեցին Գվանցա թագուհուն, վորը Ավագի նախկին կինն եր, ինչպես ասում են, նրա դստեր՝ Խվաշագի ձեռքով, վորը Սեվիփարդավի Խոջա-Շամաղինի կինն եր, վերջինիս դրդամար...

... Ապա թաթարներն անցան Ջավախքն (Ջավախեթն) ու Թոեղքն (Թրիալեթն) և Ռուսթավում անցան Կուրը, և շատ տեղերին մոտեցան թաթարներն ու Սոմխիթի գորքերը...

... Գարնանը [Ուլո]-ղ՝անը յեկավ Սաքո և նրա վորդի [Թան]-քուն յեկավ Գեղարքունիք (Գելաքուն), քանի վոր Գեղարքունիքը (Գելաքունին) նրա ամառվա բնակավայրն եր... [Ապա Թան-քունն] յեկավ Տփղիս և կարգավորեց Վրաց (Քարթլի) և Հայոց (Սոմխիթի) գործերը...

... Աբաղա-ղ՝անը... զորք կանգնացրեց [այնտեղ], ուր Կուրն և Արաքսը (Ռախսը) միանում են, և այնտեղից մինչ Մցխեթ...

... Այս պահին Սաղուն Մանկաբերդեցին սկսեց ուժեղանալ. սրան նախ Ուլո-ղ՝անն յեղավ հովանավոր... ապա Աբաղա-ղ՝անն ել պատվեց, ինչպես և Ս[ահ]իբ-ղիվանը, քանի վոր նրա կնոջ՝

\* Var. Շաղին։

Ավագի դուստր Խվաշագի (Խվաշաքի)՝ շնորհիվ սենեկապանի (հեջիբի) պաշտոն ստացավ...

... Աբաղե[-ղ'անը թաթարներին] տրամադրեց՝ իբրև ամառվա բնակատեղ՝ [ամրող լեռնաստանը] մինչ Արարատյան լեռները, իսկ իբրև ձմրան բնակատեղ՝ Արաքսի (Ռախսի) յեզերքն ու Նախիջևանը (Նախճևանը)։...

... [Ապա Թեգութարը] շարժվեց և ուղղվեց դեպի Ղաղոյի, Կարցխալի և Կարսի լեռները, վորոնք Շավշբի (Շավշեթի) և Աճարայի միջև են գտնվում...

Այս պահին Սաղուն Մանկաբերդցին ուժեղացավ առավել քան ժամանակակից բոլոր այլ իշխանավորները, քանի վոր նրան Աբաղա-ղ'անը սիրաշահեց, և նա խնամակալ դարձավ Վրաստանի գործերին։ ... Յեվ Խվաշագն սենեկապետութուն (հեջիբութուն) տվեց նրան։...

[Յերբ Դեմետրին] նստացրին հայրենյաց գահի վրա, ... ներկա էին բոլոր իշխանավորները Վրաստանի, Հերքի (Հերեթի), Կախքի (Կախեթի), Սոմխիթի, Քարթլիի, Ջավախքի (Ջավախեթի) և Տայքի (Տաոյի)։...

### [ԴԵՄԵՏՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... [Յեվ] հույժ մեծարեցավ Սաղունը զ'աննի կողմից, և ի խնամակալութուն ստացավ Թելաֆու ու Բելաքանն և բազում յերկրներ. և Սաղունը բարվոք վարում էր Վրաստանի գործերը...

... Յեվ Ավագ աթաբակի մեծ Ս[ահ]իր-գիվանը սրա (Դեմետրի) մոտ էր, և նրա դուստր Խվաշագին (Խվաշաքին) բերել էր ի կնութուն։ Այսպես մեծարեցավ Ուլու-ղ'աննի կողմից, և Սաղունն էլ նրանից էր մեծարյալ. և զ'աննի ամբողջ պետութունը սրա ձեռք էր և սրա հրամաններին էր հնազանդ։ Յեվ սա գնեց բազում յերկրներ, և արքաներն էլ նրան նվիրեցին Կարսը. և նա նստեց Կարսում ու նրա հարևան յերկիրն էլ նենգարար խլեց Ախալցխեցվոց ձեռից. [և] Ախալցխեցվո գուստրն էլ ի կնութուն բերեց... և վրաց, և սոմխիթցի, և հեր-կախեթցի իշխանագուհներն թագավորի կից եյին...

Այս պահին ուժեղացավ Սամցխեյի սպասալարն և գանձարանապետ Սարգիս Ջաղ'ելին ու նրա վորդի Բեքան, վորոնք տիրում էյին Սամցխեյին։... [Յեվ] Բեքան գրավեց յերկիրը Տասխակարից սկսած մինչ Կարնո-քաղաքը, Սամցխեն, Աճարան, Շավշքը

(Շավշեթը), Կղարջքն (Կլարջեթն) և Տայքի (Տաոյի) մեծագույն մասը, Վաշլովանը, Նիգալի-ձորն, Արտանուջն, յերկոտասան անապատները, Կողան (Կոլան), Կարնիփորան և յերկու Արտահանները (Արտանը), նաև Ջավախքի (Ջավախեթի) բազում գյուղերը...

... Արղունն ուղևորվեց Սամցխե՛ Սարգիս Ջաղ'ելու տեսության..., անցնելով Սոմխիթը, Տփղիսն ու Քարթլին... Վերադառնալով Սամցխեյից՝ [Արղունն] յեկավ Սոմխիթ...

### [ԴԱՎԹԻ ՅԵՎ ԳԵՈՐԳԻ ԴԵՄԵՏՐԻ ՎՈՐԴՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Յեվ գնաց Դավիթ [թագավորը] Թուքալ[-ղ'անի] մոտ, վորը կանգ էր առել Արարատյան լեռներում..., քանի վոր Արարատյան լեռներն էր յեկած։

... Ապա Թուքալը՝ լսելով Բայդու-ղ'աննի մահն՝ անցավ Սամցխե Բեքայի մոտ, վորը տիրում էր Տասխակարից մինչ Կարնո-քաղաք...

[Նավրոզի ուղարկած մարդը՝ կամենալով ավերել Վրաստանը]՝ նախ և առաջ յեկավ Նախիջևան (Նախճևան)...

... Ղազան[-ղ'անն]ն անթիվ զորքով ուղարկեց Խուստու-շա[հ] զորապետին, [վորն] յեկավ Սոմխիթ... [Թաթարներն] ավերեցին Սոմխիթը, Քարթլին, Թիանեթը, Երժոն...

[Ապա Ղազանն] ուղարկեց Ղուրումշին և վոմն Աղինջին... և Շահնշահ (Շանշե) Մխարզրձեյին...

... [Յեվ] ուժեղացավ Բեքան, վորը գրավել էր Տասխակարից սկսած մինչ Սպեր և մինչ ծովը, Սամցխեն, Աճարան, Շավշքը (Շավշեթը), Կղարջքը (Կլարջեթը), Նիգալի-ձորը... [իսկ Կոմնենոս Միքայել թագավորինն էր] Տայքի (Տաոյի) մեծ մասն, Արտահանը (Արտանը), Կողան (Կոլան), Կարնիփորան (Կարնիփոլան), Կարսը (Կարի)...

[Խուստու-շահի Տփղիս գալուն պես] այնտեղ դիմեցին բոլոր թաթարներն, և վրացիք, և Սամցխեյի տեր Բեքայի վորդի Սարգիս սպասալարը, թորեցիք, թմոզվեցիք և սոմխիթցիք, քանի վոր Շահնշահ (Շանշեն) արդեն այնտեղ էր։

[ՎԱԽՏԱՆԳԻ ԴԵՄԵՏՐԻ ՎՈՐԴՈՒ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Յեզվ հաստատուն յեղով Վախտանգի թագավորութունը\*, քանի վոր Ղազանը նրան հանձնեց [Վրաց] թագավորութունն, և նա գրավեց Տփղիսն ու ամբողջ Սոմխիթը, Դմանխն և Սամշվիլը...

... [Թուրքերն Ազատ-Մովսեսի ղեկավարութամբ կամեցան] ավերել բովանդակ Վրաստանը. և նա (Ազատ-Մովսեսը) մտավ Բասեն (Բասիան) և Տայք (Տաո), և սկսեց այն նենգորեն ավերել... Իսկ Բեքան՝ լսելով թուրքերի գալու մասին՝ կոչեց իր բոլոր հպատակներին սկսած Տասիս-կարից մինչ Բասեն (Բասիան)՝ մեսխերին, շավշերին, կղարջերին, կողա-արտահան-կարնիփորեց-վոց և տայեցոց մեծամասնությանը..., նաև թմոզվեցվոց և թորեցվոց..., [վորոնք] և զնացին թուրքերի դեմ:... [Իսկ] թուրքերն յեկել եյին Բեքայի յերկիրը՝ Սամցխե, Քարթլի և Սոմխիթ...

... Լսելով թուրքերի փախուստը Վաշլովանից՝ Բեքան հույժ ուրախացավ և շտապ-շտապ դիմեց դեպի Սպեր և Բաբերդ, ուր կանգ եյին առել թուրքերը...

... Յեզվ թուրքերի չնչին մասն ապաստան եր գտել Սպեր քաղաքում ու բերդում և վոմանք նոր-քաղաքում\*\*...

... [Թաթարական արշավանքներին մասնակցող Վախտանգի զորքի հետ] մասնակցում եյին սոմխիթցիք, վորքան ել նրանց մեջ կային ձիավորներ...

... Յեզվ վերադարձին Վախտանգը մտավ Նախիջևան (Նախճևան\*\*\*)...

\* Var. + Սամցխեյի յերկրում:

\*\* Var. + Բեքան շրջապատեց Սպեր քաղաքն, ... իսկ Սարգիսն... ավերեց նոր-քաղաքը... Դանձելով անթիվ հարստութուններ Սպեր և Բաբերդում [Բեքան] հաղթող վերադարձավ տուն. և [ճանապարհին] վողջունեցին Կարնո-քաղաքի տերերը, և մատուցին նրան ընծաներ և ավար. և սրանց վոչնչով չփախեց...

\*\*\* Var. + Նույն Նախիջևանում (Նախճևանում) նա (Վախտանգը) հիվանդացավ փորացավով և մեռավ՝ արքայական թագով պսակյալ. և [նրա աչյունը] բերին և թաղեցին Դմանխում: Յեզվ թողեց նա յերկու վորդի՝ Դեմետր (Դիմիտրի) և Գեորգ (Գիորգի). Դեմետրը (Դիմիտրի) իշխում եր Դմանխում, իսկ Գեորգը (Գիորգի) Սամշվիլը...

... [Ապա] անհամար զորքով յեկավ Չոփան, ... [վորը] նախ մտավ Կողա (Կոլա) և Արտահան (Արտան), ... ապա անցավ և իջավ Սոմխիթ...

[ԳԵՈՐԳ ՊԱՅԾԱՌԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Ուշաթ սուլթանը [հրամայեց] ... ամբողջ Վրաստանը միավորել Գեորգու (Գիորգի) թագավորության ներքո՝ նշանակելով նրա մոտ Շահնշահ (Շանշե) Մխարզրձեղուն և Ավագի դուստր Խվաշազից ծնված Ջաքարիային\*...

ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Աթաբակության» մասին տես. Իվ. Ջավախիցվիի, Վրաց իրավունքի պատմութունը (վրացերեն), գ. II, մ. I, Տփղիս 1928, էջ 179—182:

2 Վրաց արքունիքի և կեղեքիչ ռաբար դասի» անվայել բարքի մասին, ինչպես հայտնի յե, կցկտուր տեղեկութուններ կան նաև հայ պատմիչ-վարդապետների մոտ: Որինակ, Մաղափա արեղան (Պատմութիւն վասն ազգին նետողաց, ի լոյս ընծայեաց Ք. Պատկանեան], ՍՊՔ. 1870, էջ 20) գրում ե. «Իսկ բարեսէր և գեղեցիկ թագաւորն Վրաց Դաւիթ հանապաղ իւր ամենայն թագաւորութեամբն կայր ի մեծ ուրախութեան և ի գինարբուս յիւր թագաւորանիստ քաղաքն Տփղիս. և յաւուր միում էր մեծ ճաշ և ուրախութիւն առաջի թագաւորին. և սովորութիւն է վրաց հանապաղ ամբարտաւանել և մեծամեծ բանս խօսել: Նույն իմաստով խոսում ե մի այլ դեպքի առնչությամբ և Թովմա Մեծոփեցին (Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, ի լոյս ընծայեաց Կարապետ Վ. Շահնազարեան, Պարիս 1860, էջ 122—123):

3 Ըստ Մ. Բրաւեյի (Histoire de la Géorgie, I, 2, p. 92, n. 2) 1220 թ.:

4 Սազիմ թերևս այժմյան Ձեզամ գետն ել Համենայն դեպս, Լեոնիսիոս Ռուխեցվա (XI դ.) խոսքերը, թե Վրաստանի սահմանն արևելքից Բերդուջ գետն եր, պիտի մեկնել այն իմաստով, վոր վերջինս նույն Սազիմ կամ Ձեզամն ե և վոչ թե Դեբեդն (Դեբեդա-չայն), ինչպես մինչ այժմ կարծում եյին, հմմ. Լ. Մեխիսեթ-Բեկ, «Վարդապետը Հայոց չհիւսիսային կողմանց» etc.

\* Var. + ... Այս Պայծառ Գեորգը (Գիորգի) տիրեց Վրաստանին, Սոմխիթին, Հեր-Վախերին, Քարթլին, Մեսխերին, Տայոց, Շավշ-Կղարջներին՝ մինչ Սպեր և ծովը...

... Նոյիններից մեկը տիրեց Ատրպատականին (Ազրբայճանին), և սկսեց գրավել Սոմխիթը, Ռանն ու Մովականը...

... Սակայն ապագայում [Գեորգ թագավորն] առավել ևս հնազանդեցրեց Ռանը, Մովականն ու Սոմխիթը...

վրացերեն, Տփղ. 1928, էջ 7—8, ծան. 2: Նաև Ս. Կալարաձեյի գրախոսականն էլ: Զարվախիցիու խմբագրութամբ հրատարակած Վրաստանի պատմական քարտեզի մասին, վրացերեն, — «Bulletin Historique» 1924, գ. I, էջ 294—295:

5 Հմմ. Ե. զլխի 6 ծանոթությունը:

6 «Թրեխթ» ձևը՝ սովորական «Թրիալեթ»-ի փոխարեն՝ ինչպես Մ. Բրուսեմի յես (op. cit., p. 507, n. 1) մատնանշեց, հիշեցնում է հայկական «Թռեղք»-ը:

7 Ինչպես այս՝ «Կուպար», resp. «Կուպրի», նույնպես և վերևում հիշված «Կուպր» մականունը, համաձայն պրոֆ. Յուսից Արուստանյանի հետազոտության (տես նրա հրատարակած «Վագրենավորը». հատկապես նորագույն հոդվածը՝ «Ինչպես պետք է հասկանանք Շոթա Կուպրի», վրացերեն, — «Կոմմունիստ» որսթերթ, 1935 թ. 12. IV № 87) նույն իրանական-արաբական «քուֆրի»-ն է, վոր նշանակում է անհավատ, անսոված, անոբն, քանի վոր Շոթա Ռուսթավելու յերկում պարզապես արաբական-մանեղական աշխարհն է ներկայացրած: Հմմ. նաև Պ. Ինգրոդ՝ Վա, Rusthveliana, վրացերեն, I, Տփղիս 1926, էջ 199—215, ուր Շոթան մանիքեյացի յե հոչակված, ապա՝ Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմությունը, վրացերեն, II, Տփղիս 1924, էջ 98—99 և այլուր: Ընդ սմին հետաքրքիր է մատնանշել, վոր Պ. Ինգրոդ՝ Վա (Rusthveliana, էջ 205—242, մանավանդ 213—215) կարծիքով, Շոթա Ռուսթավելին (Ռուսթավելին) ծագումով վրաց Բագրատունյաց տոհմիցն պիտի լիներ: «Շոթա» անվան առնչության մասին «Աշոտ»-ի հետ տես. Ա. Խախանով, Очерки по истории грузинской словесности, в. II, Москва 1897, стр. 244. Н. Марр, Грузинская поэма „Витязь в барсовой шкуре“ Шоты из Рустава и новая культурно-историческая проблема, — «Изв. Акад. Наук» 1917 г., стр. 446. Հմմ. Լ. Մելիխեթ-Բեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ, — «Գեղարուեստ» № 7, Տփղիս 1921, էջ 35—37:

8 Կիրակոս Գանձակեցի (Ղուկասեան Մատենադարանի հրատ. III, Տփղիս 1910, էջ 305), խոսելով վասն կոտորածին՝ զոր արար զօրն Թաթար յաշխարհին Վրաց, 1249 թվականի ներքո հաղորդում է հետևյալը. «Ի ՈՂԸ Թուականին Հայոց ... մեռաւ իշխանաց իշխանն Աւագ. և Թաղեցաւ ի Պղնձահանքն ի գերեզմանի հօր իւրոյ Իւանէի»: Վարդանը (Վենետիկ 1862, էջ 148) դնում է այս դեպքը 1250 թվի ներքո, յերբ գրում է. «Ի վեցհարիւր իննսուն և ինն թուին մեռաւ Աւագն՝ որդին Իւանէի, և Թաղեցաւ ի Պղնձահանքն ընդ հօր իւրում, այր անազան և պատերազմասէր և աղօթական»: Հստ իս, պետք է ընդունել, վոր Բջնիի Պղնձահանքումն է վոր միայն Ավագի, այլև Հովհաննի (Իվանեյի) գերեզմանը: Յեվ, անշուշտ, այդ իմաստով պետք է հասկանալ նույն Կիրակոսի խոսքերը Հովհաննի (Իվանեյի) մասին (էջ 210): «Վախճանեյալ... Իվանէ, եղբայր Զաքարէի, և Թաղեցաւ ի Պղնձահանքն ի դուռն եկեղեցւոյն՝ զոր շինեաց ինքն, առեալ ի Հայոց՝ զՎրացի վանս արար. և մինչ մեռանէր նա, յանձնեաց զորդի իւր և գտուն յիշխան ոմն իւր սնուցած՝ Գրիգոր անուն, զոր Տղայն կոչէին: Սա խնդրեաց յԱւագէն, յորդուոյն Իւանէի, զվանքն Գետիկ, իւր տեղի գերեզմանի. և վասն յոյժ սիրելոյ զնա՝ ետ նմա. զնեաց գիւղ մի ի նմանէ, Վաշխէ անուն, մերձ յԱղստե, ետ զայն ի վանքն, և այլ բազում արդիւնս, զրեանս և խաչս և անասունս»: Ապա Կիրակոսը խոսում է Հաղարծնի մասին: Մի այլ տեղ՝ խոսելով վասն աւերածոյ Հայոց աշխարհիս և Վրացի [ի

[Թաթարէն], նույն Կիրակոսը. (էջ 224) գրում է. «Յառաջ զքան զսակաւ ժամանակս մեռեալ էր Իվանէ, տարան Թաղեցին զնա ի Պղնձահանքն՝ զոր իւր շինեալ էր վանս (վասն. sic) Վրաց, առեալ ի Հայոց»:

Չնայած այն հանգամանքին՝ վոր Կիրակոսն ու Վարդանը վորոշակի պատմում են, վոր Ավագը Թաղվել է նույնտեղ, ուր և վերջինիս հայր Հովհաննի (Իվանեյի), կապելով յերկուսի ևս գերեզմանն Աղստեի շրջանի և մասամբ Գետիկի ու Հաղարծնի մոտերքում գտնվող Պղնձահանքի հետ, վորը նույն թուրքերեն «Միսխանա»-ն է (այստեղից է, ի միջի այլոց, «Միսխանա» կոչված լեռնաշղթայի անունը), հայ և ոտարագրի բանասերներն այդ Պղնձահանքը վորոնում են Լոռի-Տաշիրում, իսկ վոմանք նույնիսկ նույնացնում են այժմյան Ախտալայի հետ: Այսպես, որինակ, Վենետիկում 1862 թվին հրատարակված «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ»-ի համապատասխան ծանոթության մեջ (էջ 148) կարդում ենք. «Պղնձահանքը են ի Հալվար լերինս Սոսիէթու, ընդ մէջ Տաշրաց և Սորոփորայ, ուր եկեղեցի և վանս կանգնեալ էր յաւուրս իշխանութեան Զաքարեայ և Իւանէի»: Ա. Յերիցյանը 1872 թվին (А. Ерицов, Монастырь Ахтала, — «Кавказская Старина» № 1, стр. 21)՝ մեկնելով հայ պատմիչների սովորները Պղնձահանքի մասին՝ նշում էր, վոր «ныне он известен под именем Ахтала»: Դ. Բախրաձեմ 1875 թվին (Д. Бахрадзе, Кавказ в древних памятниках христианства, — «Записки Общества Любителей Кавказской Археологии», I, стр. 34), մի կողմից, համաձայնվում է Ա. Յերիցյանի հետ, վոր «очень может быть, что Ахтала есть армянский Пгндзаханк», մյուս կողմից, անհրաժեշտ է գտնում անել և այսպիսի մի նկատողություն. «При всем том, пока Ахталский храм и окружающие его церкви не будут обстоятельно исследованы в археологическом отношении, мы не можем считать себя в праве высказать по этому вопросу решительное слово»: Ապա 1901 թվին Ե. Թաղայեւիլի (Е. Такайшвили, Грузинские надписи Ахталы, — «Сборник материалов для опис. м. и п. Кавказа», в. XXIX, отд. I, стр. 30) գրում էր. «Местность Ахтала, где всегда добывалась медная руда, могла называться Пгндзаханком»: Հստ յերևույթին, այս տեսակետի ազդեցությամբ է, վոր Յե. Լալայանն ևս նույն 1901 թվին (Բորչալուի գաւառ, — «Ազգագրական Հանդէս», VII—VIII, էջ 420) գրում է. «Ախտալի պղնձահանքում հին ժամանակից, V դարից (sic. Լ. Մ.-Բ.) կանգնած է եղել եկեղեցի, որի մօտ հետզհետէ շինուել են միւս եկեղեցիները, և ի վերջոյս. Աստուածածին մայր եկեղեցին, հաւանականօրէն Իւանէի ժամանակ և սրա ջանքով (sic. Լ. Մ.-Բ.): ապա և Լեոն (Սահմանավէճեր, Տփղիս 1919, էջ 65). «Իւանէն... Թաղում է Ախտալայի վանքում, որ ինքն էր շինել և որ այսպիսով ներկայացնում էր միակ (sic. Լ. Մ.-Բ.)՝ հայ-քաղկեդոնիկ եկեղեցին Լօռու սահմաններում»:

Համեմատաբար ավելի զգուշ վերաբերմունք են ցույց տալիս դեպի Պղնձահանքի ուր գտնվելու հարցը Մ. Զամլյանը, Լ. Շահխաթունյանը, Լ. Ալիբանն ու Լ. Տաւրյանը: Մ. վ. Զամլյանը (Պատմութիւն Հայոց, III, 1786, էջ 179, հմմ. 204, 225) նշում է. «Պղնձահանք [է] աւան և վանք ի Տաշիրս»: Լ. յեպ. Շահ-

\* Լոռի-Տաշիրի քաղկեդոնիկ մենաստանների մասին տես. Լ. Մելիխեթ-Բեկ, Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց, էջ 57—59:

խաթունյանը (Ստորագրութիւն Կաթողիկէ Եջմիածնի II, 1842, էջ 200—201) գրում է. «Հեռի յեկեղեցեացն Կեչարուաց ընդ արևմտեան հիւսիս աւելի քան զմի ժամ հանդէպ Թայշարուի գեղջի ի հարաւակողմն գետակին ի հիւսիսային լանջի անդ անտառախիտ առապարին ի տափարակ գիրս է եկեղեցի բարձրակամար և անսիւն օրոցածե կառուցեալ՝ միջակ մեծութեամբ. ուր հետախոյզ եղեալ մեր չգտաք զարժանաւոր գրուած ինչ հայացի, այլ ի բարձրութեան անդ եկեղեցւոյն արտաքուստ յստորե քան զքուէսն տանեաց տեսանէր միակարգ գրուած շրջապատեալ զեկեղեցաւն վրացի տառիւք. ունէր տաճարն շուրջ զիւրե սենեկաց թաղեալ ի մացառուստ և ի թուփս, ուստի և եղեալ է յառաջագոյն մենաստան՝ Թերևս յիշխանութեան Վրաց ի ժամանակա Չաքարիա մեծանուն սպտապարի հայագաւոյ: Աստի ի վեր անդր ի ձորամիջի՝ ուր փոքր ինչ հեռի յարևմուտս, է Պրննահանգն՝ որ այժմ կայ անգործ, և առ նովաւ աւերակք շինուածոց՝ Թերևս գործաւորաց նորին: Ի ձորամիջի աստ ընթանայ ջուր փոքր և մինչև ցմնտամալ գիւղ Վարաժնուհեաց անի բաւականաչափ և է առաջին ճիւղ սկզբնաւորող զՀրազդան գետ: Գրեթե նույնը կրկնում է և Ղ. Ալիսանը (Այրարատ, 1890, էջ 258—259). «Որպէս յարեւմտակողմն Բջնոյ լերին յայտնեցան կապարահանք, նոյնպէս և ի հիւսիսային արեւելակողման ճանաչին Պրննահանգ անգործք, և աւերակ բնակութեանց առ նոքօք՝ Թերևս գործաւորաց նոցին, ի ձորամիջի. ընդ որ վտակ մի խաղացեալ յարեւելս կոյս՝ վարարէ զՀրազդան գետ, հանդեպ Ռնտամալ գեղջի Վարաժնուհեաց, և համարի մի յաղբերաց նորին: Սակաւուք ի ստորեւ ի Հր. Ել. Պրննահանգիցն և ի հարաւոյ գետակին՝ յառապար լանջակողման լերին՝ կայ հին և լքեալ մենաստան, օրոցածեւ անսիւն բարձրակամար եկեղեցեալ, չափաւոր մեծութեամբ, զորոյ ստորոտս քուստ տանեացն շուրջ առեալ պատէ մեծատառ արձանագիր վրացի. իսկ ի ստորեւ զեկեղեցեաւն ածեալ կայ պարիսպ քառակուսի, և սենեակք բնակութեան, այլ ծածկեալ վայրենամոլ թփովք և մացառօք: Նման իմն է տեղիս հոչակաւոր Պրննահանգիցն Տաշրաց, սեփականութեան և գերեզմանի Իւանէի Աթաբէկի»։ Պատկերով վրաց վանքի մասին, «որուն անունն էր Պրննահանք», Հ. Վ. Տաւյանը (Մատենադարանի մանր ուսումնասիրութիւնք, հետազօտութիւնք և բնագիրք, մ. I [Ազգ. Մատ. ԺԶ], Վիեննա 1895, էջ 30)՝ հենվելով Ալիսանի վրա՝ նշում է. «Այս անուամբ տեղ մը եւ նաեւ աւերակ հին մենաստան կայ նաեւ Բջնոյ հիւսիս-արեւելեան կողմը: Վերջապես, Տաշիր-Մոքոփորումն և ցույց տալիս Պրննահանքը H. Hübschmann-ը (Die altarmenischen Ortsnamen, Strasbourg 1904, s. v.):

Պրննահանքի մասին տարբեր կարծիքների գոյությունը բացատրվում է նրանով, վոր, իրոք, հնում յերկու կամ, գուցե, ել ավելի Պրննահանքեր եյին հայտնի, մեկը Բջնիի, իսկ մյուսը Ձորագետի (Բորչալուի), վորոնցից առաջինը կոչվում էր նաև «Միսխանա» և «Միսխանե», իսկ յերկրորդն ինչպես «Միսխանա», նույնպես և «Միշան» (Հմմ. П. БУТКОВ, Материалы для новой истории Кавказа, I, СПб. 1869, стр. 337): Իսկ վրաց աշխարհագիր Վախուցը XVIII դարում վերջինիս մասին գրում է (Description géographique de la Géorgie, par. M. Brosset, p. 148). «Այստեղ, Միսխանայում արդյունահանվում է պղնձի շատ հանքեր, նաև արդյունահանվում է հողից կարմիր և շատ ամուր, փայլուն և մաքուր քար»:

Հարցիս բազմակողմանի լուսարանության համար, մեր կարծիքով, պիտի

ոգտագործել վոչ միայն հայ պատմիչների ցուցմունքները Պրննահանքի մասին, այլև ձեռագրաց հիշատակարանների և արձանագրությունների ցուցմունքներն այս առթիվ: Սեփանու Ռրեյյանը (Տփղիս 1911, էջ 355—357) հիշատակում է Պրննահանքն, ուղիղ ասած՝ Պրննահանքի վանահորն և Բջնիի յեպիսկոպոսին այն անձանց շարքում, վորոնք Հովհան (Իվանե) աթաբակի կողմից հրավիրվել էյին Դվին քննելու այն վեճը, վոր ծագել էր «վասն սուրբ Պաշին»:

Ր Ս Տ Ս. Ո Ր Բ Ե Լ Թ Ա Ն Ի

գրուբակն և զմարծուանն, գիվան դըպէլն և զմեմնաշաղէլն, զմեծ ճղաւնդիտէլն, որ եկեալ էր ի թագաւորութեանէն, զծիրամ ծղաւրն Վարձէոյ և զծիրաւ ծղաւրն Պրննահանգիցն և զմեծ մամթավարն Գարշաէուցն, զԳագեցին և զՄածնաբերդեցին և այլ բազում զէգեպուլք ևս և զղատին Տփղեաց և զղատին Անւոյ և զղատին Դվնայ և զանունի շեխն Սուրմարուոյ. ընդ որոց և զմեծ եպիսկոպոսն Անւոյ և զեպիսկոպոսն Բջնոյ և զեպիսկոպոսն Հախբատայ»:

Վ Ե Ր Ա Կ Ա Ն Գ Ն Ա Ս

գիդեբուլք և զՄարդպանն, գիվան Տրեխն և զՄեմնա Չաղ'ելն, զմեծ ճղաւնդիդեխն, որ եկեալ էր ի թագաւորութեանէն, զծիրամ ծղաւրն Վարձէոյ և զծիրաւ ծղաւրն Պրննահանգիցն և զմեծ մամթավարն Գարշաէուցն, զԳագեցին և զՄածնաբերդեցին և այլ բազում զիդեբուլք ևս, և զղատին Տփղեաց և զղատին Անւոյ և զղատին Դվնայ և զանունի շեխն Սուրմարուոյ, ընդ որոց և զմեծ եպիսկոպոսն Անւոյ և զեպիսկոպոսն Բջնոյ և զեպիսկոպոսն Հախբատայ»:

Պրոկլի Դիադոխոսի «Շաղկապք աստուածբանականք»-ի հայերեն թարգմանության հիշատակարանում (Յ. Վ. Տաւեան, օր. cit., 29) ասված է. «Թարգմանեցաւ գիրքս Պրոկլի Դիադոխոսի պղատոնական իմաստասիրի ձեռամբ Միմէօնի անպիտան քահանայի և կրօնաւորի ի վրաց լեզուէ ի հայ լեզուս յերկիրս Հայոց, ի Վանս Վրաց, որ կոչի Պրննահանգ, ի յաւիտենից թուականին 8202 (= 6756 կամ 1248 Յ. Ք.)» (հմմ. նաև ձեռագիր Եջմիածնի մատենադարանի հին հավաքածուի № 3016, էջ 143 ա, նոր հավաքածուի № 1532, էջ 247 v):

Գրիգոր Նյուսացվո «Ժողովողին Մեկնութիւն» կոչված գրության հայերեն թարգմանության հիշատակարանում կրկնվում է գրեթե նույնը (տես ձեռ. Եջմիածնի մատենադարանի հին հավաքածուի № 1013, էջ 241 v). «Գրեցաւ և աւարտեցաւ գիրքս Գրիգոր Նիւսացոյ եպիսկոպոսի յ[ը]նդիր և լաւ աւրինակաց հնոց, որ թարգմանչացն գրած էր, ձեռամբ մեղապարտ և անարժան կրաւնաւորի Միմէոնի, յերկիրս հայոց, մերձ ի Լաւուէ ի վանքն, որ կոչի Սալէննահանգ \*\*, ընդ հովանե[աւ] սուրբ աստուածածնին, յիշխանութիւն Իվանէ աթապակին շինողի վանիցս, զոր յերկար ժամանակ արասցէ տէր որդովքն իւրով հանդերձ. արդ աղաչեմ, որք ընթեռնոյք կամ աւրինակէք, յիշման արժանի արարէք և որք յիշէք, յիշեալ լիցիք ի տէր»:

«Պրննահանք»-ը հիշվում է նաև հայերեն արձանագրությունների մեջ՝ յերկու անգամ: Սրանից մեկն է այսպես կոչված Ձուխտակ վանքի 1247 թ. արձանագրությունը (Մախար վ. Բարխուդարեան, Արցախ, էջ 363 = Կ. Կոս-

\* Հմմ. Իվ. Ջավախիւիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, II, 654—655. Գույնը, Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, II, 2, Տփղիս 1929, էջ 480:

\*\* Ավելի մոտ վրացական ձևին՝ սպիւննէի պղինձ բառից:

տանեան, Վիմական տարեգիր, 92) հետևյալ բովանդակութեամբ. «Կամաւն աստուծոյ [ես] տէր Յորդանան շինեցի զկեղեցիս ի թվին ՈՂԶ. իշխանութեան Աւագին, ողորմութեամբ և տրաւք Պիմանախանցն Ասուածածնի և առաջնորդութեամբ Պետրէի և Համագասպայ... Ըս Պետրէ եւ Համագասպ համարեցաք զծովքն, եղաք սահման ժողովուրդ աստուածածնիս...»:

Ախտալա կայարանից դեպի համանուն վանքը տանող կես ճանապարհից դեպի աջ, Այր կոչված տեղում, խաչքարի վրա կարդացվում է հետևյալ արձանագրութիւնը 1188 թ. (Լ. Մելիխսեթ-Բեկ, Գորերն ու նրա հայերեն և վրացերեն արձանագրութիւնները, — «Bulletin de l'Université de Tiflis», VII, 1926, հջ 67—68, ծանոթ. 3). «Ըս, Մարիամ, Կուսար Կիւրիկէի, կանգնեցի զՊղնձահանացս Հողհատի սուրբ ասուածածնիս. որք երկրպագէք զմեզ, յաղաթս յիշեցեք. թու[ին] ՈՂԷ. է»:

Սակայն Պղնձահանքին վերաբերյալ հարցը բարդանում է շնորհիվ այն հանգամանքի ևս, վոր ինչպես Բջնիում, նույնպես և Ջորազետում մենք գտնում ենք քաղկեդոնիկ դավանութեան վանքեր վրացերեն արձանագրութիւններով հանդերձ, իսկ Ջորազետինը, բացի դրանից, նաև քաղկեդոնիկ հայերի թողած հայերեն արձանագրութիւններով:

Բջնիի Պղնձահանքի վրացերեն արձանագրութիւնների այն լուսանկարները, վոր մեր տրամադրութեան տակ են, տալիս են մեզ վորոշ հիմք արտահայտվելու, վոր այն վոչ միայն քաղկեդոնիկ վանք է յեղել, այլև, իրոք, Ջաբրիայի և Ավագի շրջանի կառուցվածք: Այս վանքն է, վորի բավականին մանրամասն նկարագրութիւնը տալիս է մեզ, ինչպես վերև տեսանք, Ղ. Ալիբեանը՝ Բջնոյ Պղնձահանք անվան ներքո: Անտարակույս, նույն վանքի մասին է խոսքն, յերբ նույն Ղ. Ալիբեանը մի այլ տեղ (Այրարատ, հջ 279—280) Ռընտամալ անվան ներքո գրում է. «Մերձ ի խառնուրդսն առ Ջանկեալ՝ յահեկէ. որ է յիւր կուէ, մեծ աւանագետն Հայոց Ռնտամալ իբր 120 տամբք, և ս. Կարապետ եկեղեցեալ—Առ սովաւ Ֆայ կիսաւեր եկեղեցիս՝ Կիւրծի Գիլիոս (Վրաց եկեղեցի) կոչեցեալ յայլազգեաց». նաև տալիս է (հջ 278—279) 2 պատկեր. նույն վանքի հարավային տեսարանն (110 Ռնտամալ. Կիւրծի Գիլիոս) ու հատակագիծը (111. Յասակաձեւ եկեղեցւոյն ի Ռնտամալ):

Տարվ Նոր-Բայազետի նախկին գավառի Թայարուխ գյուղի նկարագրութիւնը, Յե. Լալայանը (Նոր-Բայազետի գաւառ, — «Ազգագրական Հանդէս», XX 1910, հջ 45) նշում է. «Թայարուխ գիւղից դէպի հարաւ — հազիւ 2 կիլոմետր հեռու—մի անտառապատ բլրի տափարակի գագաթին բարձրանում է մի հին՝ վրացական վանք»: Ապա «Թայարուխ վանքը» խորագրի տակ նույն Յե. Լալայանը («Ազգ. Հանդէս» XXIV, 1913, հջ 60) տալիս է նույն հուշարձանի հետևյալ մանրամասն նկարագրութիւնը.

Դարաշիջակի Թայարուխ գիւղից դէպի հարաւ, հազիւ 2 կիլոմետր հեռու, մի անտառապատ բլրի տափարակ գագաթին բարձրանում է մի հին, վրացական տաճար՝ սև, տաշած քարից շինած: Տաճարը օրորոցած է, անգմբէթ, և ունի հարաւային և արևմտեան կողմերում մի-մի գաւիթ, իսկ հիւսիսայինում մի մատուռ, որ բացում է տաճարի մէջ:

«Տաճարի երկարութիւնն է 13,60 մետր, լայնութիւնը 7,65 մետր, և բարձրութիւնը՝ 11 մետր: Արևելեան ճակատին կայ մի երկար և նեղ պատուհան, որի վերև երկու բարձրաքանդակ աղանի, կողքերին մի մի ուղաս: Փոքր ինչ ներքև վրաց խուցուրի տառերով մի եղծուած արձանագրութիւն:

«Տաճարը ներքուստ անսիւն է, պատերին կից բարձրանում են չորսական, հասարակ, քառանկիւնի որմասիւններ, որոնց վրայ բոլորում են ուսմանական կամարներ (sic. Լ. Մ.—Բ.): Ձեղունը ներքուստ բոլորակաձև է, արտաքուստ եռանկիւնի: Սեղանը բոլորակաձև է, շատ ցածր, առանց խորանների: Երկու կողքերին ունին քառանկիւնի փոքրիկ բացուածքներ, որոնք բացում են գաղանի պահարանների մէջ:

«Տաճարի հիւսիսային պատին կից, կարծես յետոյ, շինուած է մի մատուռ, որ թերևս իբր խորան է ծառայել: Սա մի փոքրիկ, կամարակապ շէնք է, երկու նեղ պատուհաններով արևելեան և արևմտեան պատերին և մի դռանով, որ բացում է տաճարի մէջ: Արևելեան կողմում կայ մի ցածրադիր սեղան:

«Հարսուսային կողմի գաւիթը մի հասարակ շէնք է, միայն միակ դռան վերև կայ մի բարձրաքանդակ աղանի, աջ կողքին արևի մի ժամացոյց:

«Տաճարի մէջ կան մի քանի գերեզմանաքարեր, որոնցից երկուսի վրայ կան վրաց խուցուրի տառերով տապանագիրներ:

«Տաճարի հանդէպ կայ մի մացառուտ, որի ծառերն այնպես կարգին դասուորուած են, որ իսկոյն նկատուած է երբեմն ծառուղի կազմելը»:

Այս նկարագրութեանը Յե. Լալայանը (հջ 60, ծանոթ.) կցում է այսպիսի մի ծանոթութիւն. «Իմ այս վանքը այցելուած միջոցին սաստիկ մշուշը թոյլ չը տուեց լաւ լուսանկարելու»:

Նկարագրութեանը, դժբախտաբար, վաչ մի լուսանկար կցված չէ:

Բայց և այնպես, ոյս մանրամասն նկարագրութիւնն էլ, բոլոր վերևում ասածի հետ, միանգամայն բավական է, վորպեսզի Թայարուխի (ըստ Ալիբեանի՝ Ռնտամալի) յեկեղեցին մենք քաղկեդոնիկ դավանութեան հուշարձան ընդունենք, վորը հնարավորութիւնն է տալիս Մխարրձեղներ Հովհաննի (Իվանեյի) և նրա վորդի Ավագի անվան հետ կապել ինչպես Ջորազետի Պղնձահանքն, այսինքն այժմյան Ախտալան, նույնպես և Բջնիի Պղնձահանքն, այսինքն այժմյան Թայարուխի (Ռնտամալի) յեկեղեցիները: Հարցը միմիայն այն է, թե յերկուսից վճրն է իսկապես Հովհաննի (Իվանեյի) և Ավագի գերեզմանների տեղը: Թայարուխի վրացերեն արձանագրութիւնները դեռևս կարոտ են ստուգման, վոր մենք մտադիր ենք սնհապաղ ի կատար ածել, ապա և արձանագրութիւնները հրասարակել մեր աշխատութեան մեջ՝ «Վրացերեն արձանագրութիւնները Հայաստանում»: Իսկ Ախտալայի վրացերեն արձանագրութիւններէից մեկը, վորը գտնվում է բլրի փոքր յեկեղեցու ճակատին, հիշում է միմիայն Պետրոս վանահոր (Պետրե ծինամձղվարի) կառուցած «պատրոն Ավագ աթաբակի աղոթարանի» շինութիւնն առանց թվահամարի:

Այս հարցին մենք էլի կանդրադառնանք հիշյալ աշխատութեան մեջ:

Յ Այս դեպքում և հետագայում ամեն տեղ Ղարաբաղի՝ իբրև ձմերոցի՝ մասին խոսելիս պատմիչներն ընդհանրապես և վրաց հեղինակները մասնավորապես ի նկատի ունեն վոչ թե ներկա, այսինքն լեռնային Ղարաբաղը, այլ դաշտային Ղարաբաղը կամ Արցախը (Աղվանքը): Հմմ. Թովմա Մեծոփեցու (Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Պարիս 1860, հջ 20) խոսքերը. «Եկն սա (Թագաւորն Վրաց Բագարատ) բազում ընծայիւք ի հնազանդութիւն պիղծ թագաւորին (Լանկ-Թամուրայ) և նա լցեալ շարութեամբ սատանայի ուրացոյց զնա, և առեալ զնաց ի Ղարաբաղ՝ ի ձմերոցն առաջին թագաւորաց մերոց»: Սրա մասին խոսում ենք և մեր հատուկ աշխատութեան



մեջ «Հայկական աղբյուրները Վրաստանի մասին. Թովմա Մեծոփեցի» (վրացերեն), վոր հանձնված է տպագրության Տփղիսի պետ. համալսարանի հրատարակչության:

10 Ի դեպ, անհրաժեշտ ենք գտնում մատնանշել, վոր այս Արղուն-խանն է, վորն Ավանի 1285 թվի մի արձանագրության Հով. յեպ. Շահխաթունյանի (Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի, II էջ 160) սխալ ընթերցման հետևանքով «Արղութեան»-ի է վերածվել թե նույն Շահխաթունյանի և թե նրա հետևորդների՝ Ղ. Ալիեանի (Այրարատ, 293) և Կ. Կոստանյանի (Վիմական տարեգիր, 127) մոտ: Ինչպես Ավանի, նույնպես և Արուճի 1285 թ. արձանագրությունների մեջ պարզորոշ կերպով կարդացվում է «Արղուն-խան». Ավանի մի արձանագրության մեջ՝ «[Յաշխ]արհակալութեան արքայից արքային | Ա[րղունին] ես ամիրսպասալար Խութլու Բաղայ | որ[դի սպա]սալար Սադունին» etc., մյուսում՝ «Ի թվիս ՉԼԴ յաշխարհակալութեան արքայից արքային Արղունին, ի թագաւորութեան Վրաց և Հայոց Դէմէտրի, ես Դաւիթ որ[դի Դէմէտրէ թագաւորին]» etc.: Արուճի արձանագրության մեջ՝ «Ի թուիս Հայոց ՉԼԴ, ի փառչանութեանն | Արղ[ւ]ն խանին, ի թագաւորութեան Դէմէտրէի, ի պարոնութեանն սպասալար Խարկրծեալին եղբաւրն Իվանէի որդւոցն մեծին Շա[հնշահի]» etc.:

11 Հետաքրքիր է պարզել, ունի՞ արդյոք այս անունը վորեւէ կապ «Բուզ», resp. «Բուս» անվան հետ, վորը VII դարուց սկսած ծանոթ է հայերեն արձանագրությունների մեջ. տես. Н. Март, Имя Бут или Буд в армянской надписи VII в. по р. Хр.—«Зап. Вост. Отд. Рус. Арх. О-ва», т. VII, 1893, стр. 322—326. И. Орбели, Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII века,—«Христ. Восток», т. II, 1913, стр. 126—130. Арх. Гарегин Овсепян, Потомство Тарсаич'а Орбеаяна и Минахатуны,—«Христ. Восток», т. II, стр. 241, ևլն:

Ը.

## ԱՆԱՆՈՒՆ (XVI Դ.)

### «ԿԱՐԳԱԴՐՈՒՄՆ ԱՐՔՈՒՆԻ ԴՐԱՆ»

«Կարգադրումն արքունի դրան»՝ այսպես ենք մենք կոչում այն պատմա-իրավաբանական վավերագիրը, վորը հայտնի է վրացերեն «խելմժիփիս կարիս գարիգերա» անվամբ: Վավերագիրն յերևան հանեց և ապա հրատարակեց Ե. Թաղաճյանը՝ Institution des cours royales [Monumenta Georgica. IV. Leges. № 1, Publicatio Universitatis Tphilisiensis], վրացերեն, Տփղիս 1920, էջ XXXVIII + 32:

Այս վավերագիրն, ըստ նույն Ե. Թաղաճյանի (ibid., III—IX, հատկապես VIII), կազմված պիտի լինի 1295—1469 թ. թ. միջոցին, ավելի ուղիղ՝ Գեորգ (Գեորգի) Պայծառի թագավորության որոք՝ 1318—1346 թ. թ.: Հեղինակն անհայտ անձնավորություն է, վորը, համենայն դեպս, մոտ պիտի լիներ կանգնած վրաց արքունիքին, հավանական է նրա աստիճանավորներից մեկը (Ե. Թաղաճյանը, op. cit., XIV—XVI; հմմ. Իվ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, I, Տփղիս 1928, էջ 62—68):

### [ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՐՔԱՆԵՐԻ ՏԵՂԸ ՎՐԱՑ ԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ]

...Տրապիզոնի [արքա]ներն և Շարվան-շահն ու հայոց (սոմելիների) արքան<sup>1</sup> [յերբ գալիս են Վրաց արքունիքը], չորեքյան հավասար չեն նստում... Չե՞ վոր ոսաց (ոսերի) յերկու արքաները, և կախից (կախերի) արքան, և աղվանից (աղվանների) արքան, ծանարաց արքան, [և] տայոց յերեք արքաները, և հայոց

(սոմեխների) արքան<sup>2</sup>, և տրապիզոնցիք և Շարվան-շահն\* յերբ գալիս են Նաճարմագև, տամներկունն ել տեղ են գտնում նստելու, հապա չորեքյան ինչու չպիտի տեղավորվեն:

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> «Հայոց (սոմեխների) արքայի» հիշատակութիւնն այստեղ, անկասկած, անաքրոնիզմ ե, քանի վոր XIII—XV դարերում հայ Բագրատունյաց կամ Կորիկյանց «արքաների» մասին խոսք չի կարող լինել, իսկ Ռուբինյանները դժվար թե գալիս լինեյին Վրաց արքունիքը:

<sup>2</sup> Նույնը:

թ

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ (XV Դ.)

«ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՈՇՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ».

«ՍԱՄՑԻԵ-ՍԱԱԹԱԲԱԳՈՅԻ ԹԵՄԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ».

XV դարում, համենայն դեպս նույն XV դարուց վոչ առաջ պիտի լինին սահմանված այն յերկու վավերագրերը, վորոնց մեջ ներկայացրած են վրաց թեմերի ցուցակները: Այդ վավերագրերից մեկն է «Թագավորական ոծման ծիսակարգութիւնը» (վրացերեն՝ «գանգերա դարբազորիսա», այսինքն սահմանադրումն պալատական ցերեմոնիայի), իսկ մյուսը՝ Սամցխե-Սաաթաբազոյին յենթակա թեմերի ցուցակը: Յերկունն ել մեզ համար հետաքրքիր են այն աստիճան, վորքան ել պարունակում են իրենց մեջ վրաց յեկեղեցուն յենթակա քաղկեդոնիկ թեմերի անունները թե Վրաստանում և թե Վրաստանից դուրս, մասամբ Հայաստանում:

Առաջին վավերագիրը՝ «Թագավորական ոծման ծիսակարգութիւնը»՝ հայտնի յե մի քանի վարիանտով, վորոնցից մեկը հրատարակել է Թ. Ժորդանիան իր «Քրոնիկաներ»-ի I հատորում, Տփղիս 1892, եջ 45—46, մյուսը՝ Ա. Յագարելին՝ А. Цагарели, Сведения о памятниках грузинской письменности, т. I, в. 3, Спб. 1894, стр. 294—295, նաև XXXVI, յերրորդն ու չորրորդն Ե. Թադ՝ ա յ շ Վ ի լ ի ն՝ Հնագիտական ուղեվորութիւններ և ծանոթագրութիւններ, վրացերեն, գ. I, Տփղիս 1907, եջ 78—80, 83—85:

Յերկրորդ վավերագիրը՝ Սամցխե-Սաաթաբազոյին յենթակա թեմերի ցուցակը՝ հայտնի յե յերկու վարիանտով, վոր հրատարակել են, նախ Դ. Բաքրաձեն՝ Д. Бакрадзе, Археологическое путешествие по Гурии и Адчаре, Спб. 1878, стр. 81—82, ապա վերոհիշյալ Ե. Թադ՝ ա յ շ Վ ի լ ի ն՝ Հնագիտական ուղեվորութիւններ և յն, եջ 76—77: Ռուսերեն թարգմանութիւնը տես՝ Н. Марр, Исторический очерк грузин-

\* Բնագրում՝ Շարվան-շահները:

ской церкви с древнейших времен,—«Церковные Ведомости», 1907, стр. 137—138, прил.:

Ստորև մենք առաջ ենք բերում յերկուսից կատարած այն քաղվածքները, վորոնք հայ-քաղկեդոնիկ թեմերին են վերաբերում:

### [ՔԱՂԿԵԴՈՆԻԿ ՅԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ՀԱՅՔՈՒՄ]

#### I

Յերբ ոծվում է ու գահ բարձրանում թագավորը, յեպիսկոպոսները պիտի նստեն հետևյալ կարգով.

1. Հրամայե Վրաց (Քարթլիի) կաթողիկոսը, և նստի թագավորի աջ կողմը բազմոցով ու բարձով...

3. Ներս մանի Մեծ Հայքի (Սոմխիթի) մետրապոլիտն\* և նստի կաթողիկոսից ցած բազմոցով ու բարձով...

10 || 8 || 11 Իշխանցին...

15 Արտահանի (Երուշնելի)...

25 || 23 || 26 Ալաշկերտցին (Վաղարշակերտցին)...

— 26 || 27,29 Անեցին...

27 || 25 || 28 Կարուցն (Կարելին)...

#### II

3. Իշխանցու հոտը՝ Գուրջի-Բողազից սկսած այս կողմը (հյուսիս), ամբողջ Թորթումը, Տասիս-կարիի ներքև, Արտանուշի՝ Սակրուլավի կոչվածից այս կողմը, Որդոխի լեռան լանջի այն կողմը, Սակավկասիձոն ամբողջ, Իսպիր-Տրապիզոնի լեռան այս կողմը:

8. Արտահանցու (Երուշնելի) հոտը՝ Տալաշոյի վերին մասը, Արտահանը մինչև Կողայի (Կոլայի) սահմանը:

9. Ալաշկերտցու (Վաղարշակերտցու) հոտը՝ Կաղզվանի վերին մասը, Ալաշկերտի (Վաղարշակերտի) այս կողմը, Խնուան և Դեվա-Բոխի այս կողմը:

10. Անեցվո հոտն՝ ամբողջ Զարիշատը (Զարիշտիանին) և Շիրակավանն (Շիրակոանի) և Մաղասբերդը (Մաղասբերթի):

11. Կարսեցվո հոտն՝ ամբողջ Կարսն և Կողայի (Կոլայի) ու

Ուլթյաց (Ոլթիի) սահմաններից այս կողմը գտնվող Գզչեվանքն (?) ու Կաղզվանը:

13. ...

Բոլոր այս յեպիսկոպոսները ձեռնադրվում են Վրաց (Քարթլիի) կաթողիկոսից, վորը սրանց տերն է, իսկ նրանք սրա ստորադրյալներն...

\* Բ. վարիանտում «Մեծ Հայքի մետրապոլիտ»-ի փոխարեն՝ «յեպիսկոպոսապետը (Սամթավրոյի)»:

1 Այսինքն Գեորգ (Գիորգի) VII, 1395—1407,

2 Այսինքն Յերնջակը:

Ժ.

ԱՆԱՆՈՒՆ (XV Դ.)

«ՀՈՒՇԱՐՁԱՆՆ ԻՇԻԱՆԱՑ»

«Հուշարձանն իշխանաց» (ձեզլի երիսթավթա)<sup>1</sup> այսպես է կոչվում անանուն հեղինակի այն յերկասիրությունը, վորն՝ իբրև յուրատեսակ պատմագրական գրվածք՝ առաձնահատուկ տեղ ունի գրաված վրաց գրականության մեջ: Գրվածքը հրատարակել է Թ. Ժորգանիան իր «Քրոնիկաներ»-ի II մասում (վրացերեն), Տփղիս 1897, էջ 1—19: Իսկ համեմատարար ավելի վաղ Մ. Բրոսետն հրատարակեց նրա Ֆրանսերեն թարգմանությունը՝ M. Brosset, Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, SPB, 1851, p. p. 372—384 (Addition XXI. De l'origine des éristhaws du Ksan): Մանրամասն ուսումնասիրությունը տես՝ Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականությունը (վրացերեն), ա. տպ., էջ 213—218:

Այս յերկասիրությունը, վորը Քսանի իշխանների (երիսթավաների) տոհմային պատմությանն է վերաբերում, ըստ յերևույթին, XIII դարուցն է սկսվում և հասնում մինչ XV դարու սկզբները՝ Լանգ-Թեմուրի արշավանքներին հետևող անցքերի նկարագրությամբ (Իվ. Ջավախիշվիլի, 216): Այս պատճառով հեղինակը XV դարու պատմիչ կարող է համարվել:

[ԳԵՈՐԳ VII-Ի ԱՐՇԱՎԱՆՔՆ ԱԼԻՆՋԱՅԻ ՎՐԱ]

... Ապա Գեորգ (Գիորգի) թագավորն<sup>1</sup> արշավեց Ալինջա[յի վրա] վրաց, իմերցոց, մեսխերի և շիրվանցոց ամբողջ զորքով, հասավ Ալինջա<sup>2</sup> և կոտորեց սուլթանի վորդու զորքը, վորն Ալինջա (Ալինջանի) բերդուսն էր կանգնեցրած, և նրան հանեց [այնտեղից], Քրիստոսի 1396 թվին, [կոտորեց] Թեմուր-ղանի [հեծելազորքն] և հաղթող վերադարձավ...

ԺԱ.

## ԲԱԳՐԱՏ ԹԱԳԱՎՈՐ (XVI Դ.)

### «ՆԻԿՈՐԾՄԻԴԻ ՍԻԳԵԼԸ»

«Ափխազաց, վրաց, ռանաց, կախից և հայոց, շահնշահ և շարվան-շահ, արքայից արքա... Բագրատն ու կողակիցն՝ Հեղինե թագուհին» 232 քրոնիկոնին կամ 1544 թվին տված իրենց սիգելում (հրովարտակում), վորը վերաբերում է Նիկործմիդի տաճարի վերանորոգման, մի առ մի թվում են այդ գյուղերն ու ճորտերին, վորոնց նրանք նվիրաբերել են այդ տաճարին: Այդ սիգելն, ուր առանձնապես մեզ համար հետաքրքիր է «նզովքներ» պարունակող վերջին մասը, հրատարակել է Ս. Կակաբաձեն՝ «Կանոնադիր Բագրատ Կյուրապաղատը» (վրացերեն), Տփղիս 1912, էջ 6—8:

### [ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ՅԵՆՔԱԿԱ ԻՇԽԱՆԱՎՈՐՆԵՐԸ]

[Նիկործմիդի յեկեղեցվո իրավունքները խափանող ով ել ուզում է լինի՝ դրսի պատրիարքները, կամ Ափխազքի (Աբխազեթի) պատրիարքը, կամ Վրաց (Քարթլիի) պատրիարքը, կամ Ափխազքի (Աբխազեթի)<sup>1</sup> արքայից-արքան, կամ իշխանաց-իշխանները, թեկուզ աթաբակներն ու սպասալարները, կամ Դադյանն ու Գուրիելը, կամ Շ[խ]րվանի և Հայքի (Սոմխիթի) իշխանաց-իշխաններն ու իշխաններն<sup>2</sup> և կամ Ռաճի իշխանը կամ բերդապետները կամ հսկիչներն և կամ տանուտերներն կամ ամիրաց-ամիրան, ... [նզովյալ լինին] ...

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1 «Ափխազք»-ը արևմտ. Վրաստանի իմաստով է գործածված:

2 Թե այս դեպքում Հայոց վճիռ իշխանաց-իշխաններին և իշխաններին ունի ի նկատի այս վավերագիրը, դժվար է ասել:

ԺԲ.

## ԱՆԱՆՈՒՆ (XVI Դ.)

### «ՄԵՍԻԱԿԱՆ ՍԱՂՄՈՍԻ ՄԱՏՅԱՆԸ»

«Մեսիական սաղմոսի մատյանը» (մեսիուրի դավիթնիս մատիանե) նույնպիսի նշանակութուն ունի վրաց պատմագրության համար, ինչպես մեզ արդեն ծանոթ «Հուշարձանն իշխանաց»-ը, գուցե ել ավելի, քանի վոր պարունակում է իր մեջ տեղեկություններ վոչ միայն Սամցխե-Սաաթաբագոյի, այլև Վրաստանի այլ շրջանների մասին: Այս ուշագրավ գրվածքից միմիայն մի ջնջին մասն է հասել մեզ, ուր պահպանվել են տվյալներ գա-նազան անցքերի մասին սկսած 1561 թ. մինչև 1587 թ.: «Մատյանը» հրատարակել է Ե. Թադաջավիլին՝ Յերեք պատմական քրոնիկա (վրացերեն), Տփղիս 1890 թ., էջ 81—115 (Մեսիական սաղմոսի քրոնիկան), ուսումնասիրությամբ հանդերձ, էջ CXXVII—CXLIX. նույնը ռուսերեն թարգմանությամբ՝ Е. Такай-швили. Источники грузинских летописей—Три хроники (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, в. XXVIII, 1900), стр. 183—214 (III. Хроники Месхийской Псалтири):

Ի վ. Ջավախիշվիլու (Հին վրացական պատմական գրականությունը, ա. տպ., 231) ասելով, «Միսիական սաղմոսի մատյանը, իբրև ժամանակակցի և [անցքերին] մասնակցի գրած յերկասիրություն, մեծ՝ ուղղակի անգնահատելի նշանակութուն ունի» վրաց պատմության համար, «քանի վոր յուրաքանչյուր դեպքի մասին [խոսելիս] վորոշ թվահամար ունի ցուցադրած»:

### [ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐ XVI ԴԱՐՈՒՄ]

... Քրոնիկոնի 266-ին<sup>1</sup>... ուրումք ավերեցին Գորին և կանգ առան Ջարիշատում...  
... [Ոգոստոսի] 9-ին, շարաթ առավոտ, Ջուրձանի և Մինծալի միջև յեկան Ա[ր]զրումի և Վանի փաշա[ները] ...

... [Նույն ոգոստոսին] Լոռի մտավ [և այնտեղից] Տփղիս հասավ [Լալա]-փաշան... Սոմխիթեցիք շատ փնասեցին [վերջինիս]...

... [Հոկտեմբերին] Լալա-փաշան կանգնած եր Քարթլիում, [վորտեղից] յեկավ Սոմխիթ, [ուր սկսեց] բանակցել [Քարթլիի Միմեոն թագավորի հետ], վորն ել հիվանդ եր...

... Պատրոն Ղվարղ՝վարեյի մոտ [Լալա-փաշայից] մարդ յեկավ, [և] նրան այլևս չթողին Ուղթիքում (Ութիում), [այլ] տարան Ա[ր]գրում՝ ծննդյան [տոնի] նախորդակին...

Քրոնիկոնի 267-ին<sup>2</sup>, մարտի 23-ին, պատրոն Մանուչարն ուղևորվեց Ա[ր]գրում, [իսկ] Ա[ր]գրումից պատրոն Ղվարղ՝վարեն և պատրոն Մանուչարը գնացին Կոստանդնուպոլիս. նրանք մեկնեցին ապրիլի 20-ին, յերկուշաբթի [որը]...

[Նույն քրոնիկոնին] Լալա-փաշան յերկրորդ անգամ յեկավ և վերանորոգեց Կարսը (Կարի)...

Քրոնիկոնի 268-ին<sup>3</sup>... հունիսի կեսին վերադարձրին Բեքային, և յերկոքյան տերերը (Ղվարղ՝վարեն և Բեքան) գնացին Լոռի, վորն ավերեցին. ապա հաղթող վերադարձան...

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Այսինքն 266 + 1312 = 1578 թ.:

<sup>2</sup> Այսինքն 267 + 1312 = 1579 թ.:

<sup>3</sup> Այսինքն 268 + 1312 = 1580 թ.:

ԺԳ.

### ԱՆԱՆՈՒՆ (XVII Դ.)

#### «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՔ»

XVII—XVIII դ. դ. անանուն բազմաթիվ ժամանակագիրներից մեկն է այն, վորը կցված է «Վրաց պատմա-ազգագրական ն. ընկերության» հավաքածուի № 342 ձեռագիր խորհրդատետրին («Ժամն-գուլանի»-ին): Ժամանակագրությունը սկսվում է 1388 թվից և հասնում մինչև 1656 թ.: Ըստ հիշյալ ձեռագրի, վոր արտագրված է 1661 թվին, տեկտը հրատարակել է Ե. Թաղաչյանը՝ 2 Վիլիսի՝ «Վաղեմի Վրաստան» (վրացերեն) II, 1911—1913, եջ 77—79:

Մնացած նմանորինակ «Ժամանակագրությունները», վոր կազմված են XVIII դարում կամ XIX-ի սկզբներում, մենք կղետեղենք հետևյալ հատորում:

### [ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐ XVI ԴԱՐՈՒՄ]

227<sup>1</sup>—այստեղ հայերը (սոմեխները) շեղվեցին<sup>2</sup> և Թեոդորյան կյուրակեյին ուտիս ունեցան:

323<sup>3</sup>—այստեղ հայերը (սոմեխները) կրկին շեղվեցին<sup>4</sup>:

325<sup>5</sup>—այստեղ խոնթքարը դուրս յեկավ և Յերևանը գրավեց, և նույն թվին շա[հ]-Սեփին խլեց այն նրանից:

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Այսինքն 227 + 1312 = 1539 թ.:

<sup>2</sup> Պոքը ծոպատկի մասին է, վորն առաջներում պատրվակ եր հանդիսացել հայ-վրացական ընդհարումների, այն է 1197 թ. (տես. Л. Меликсет-БЕКОВ, О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу Кривой пасхи,— «Из. Кавк. Ист.-Арх. Инст.», т. III, Тифл. 1925, стр. 49—60), նաև 1102 թ., ինչպես և հետագայում:

<sup>3</sup> Այսինքն 323 + 1312 = 1635 թ.:

<sup>4</sup> Տես ծանոթ. 2:

<sup>5</sup> Այսինքն 325 + 1312 = 1637 թ.:

Ժ Դ.

### ՓԱՐՍԱԴԱՆ ԳՈՐԳԻՉԱՆԻՁԵ (XVII Դ.)

«ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»,  
«ՈՍՄԱՆՑՈՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Փարսադան Գորգիջանիձեն XVII դարու վերջերի աչքի ընկնող հեղինակներից մեկն է, վորի գրչին են պատկանում մի շարք պատմագրական և բանասիրական գրվածքներ, ինչպես ինքնուրույն, նույնպես և թարգմանական (պարսկերենից) և սրանց թվում «Վրաստանի պատմութունը» (մի քանի մասից բաղկացած՝ ստվար հատորով), «Ոսմանցոց թագավորների պատմութունը», «Ջամի-Աբաս» (մահմեդական որենսգիրքը)\*, «Վրաց-արաբերեն-պարսկերեն բառարանը» ևն:

Այս Փարսադանն իսկապես Գորեցի էր, բայց թե ո՞վ էր իր տոհմական ծագումով, սրա մասին հավաստի տեղեկություններ չկան: Հանգուցյալ Մ. Ջանաշվիլու (Փարսադան Գորգիջանիձեն և նրա յերկերը, վրացերեն, Տփղիս 1896, էջ 21—22) կարծիքով, նա բնիկ վրացի պիտի լիներ, և ազգանունն՝ «Գորգիջանիձե»՝ Գորգի Ջանիձե կամ Գեորգ (Գիորգի) Ջանաշվիլի յե նշանակում. մինչդեռ M. Brosset (Histoire de la Géorgie, t. II, livr. 1, SPB 1849, p. 510) ու, նրան հետևելով, Ի վ. Ջավախիշվիլին (Հին վրացական պատմական գրականութունը, ա. հրատ., 1916 թ., էջ 234—235) այն կարծիքի յեն, վոր նա հայ պիտի լիներ: Մասնավորապես հետաքրքիր է Ի վ. Ջավախիշվիլու (ibid.) գրույթը:—Չնայած այն հանգամանքին, վոր Փարսադանն իր «Ջամի Աբաս»-ի վրացերեն թարգմանության մեջ ինքն իրեն անվանում է «գորելի քարթվելի» գորեցի վրացի (M. Brosset, op. cit., 513), հարգելի վրացագետն, այնուամենայնիվ, համոզված

\* Վարը Վրաց մեջ գրագիտութուն տարածող ն. ընկերության № 174 ձեռագրում «Մուսուլման դավանութուն» է կոչվում:

է, վոր նա «հայ» պետք է լինի, քանի վոր իր «Վրաստանի պատմութուն» յերկի մեջ պատվավոր տեղ է տալիս հայոց պատմության ավյախներին. բացի դրանից, Փարսադանի «հայ» լինելն, ըստ Ի վ. Ջավախիշվիլու, նկատվում է նրանում, վոր նա իր այդ յերկի մեջ՝ յերևի իր վաղեմի ազգային զգացմունքից դրդված՝ ձայն է բարձրացնում ի պաշտպանութուն վոմն թումանիշվիլու, վորին Բարաթաշվիլիները մեղադրում էյին Լուարսաբ արքայազնի սպանությանը մասնակցության մեջ: «Բարթիլում վրացիք,—ասում է Փարսադանն իր պատմության մեջ,—բազմաթիվ են և հզոր, [իսկ] հայերը (սոմեխները) փոքրաթիվ և անզոր, և նրանցից (հայերից) այսպիսի բան դժվար է սպասել (ասել). սպա թե վոչ վրացիք ուզում էյին այս (արքայազնի) արյան [մեղքը] հայու վզին փաթաթել» (համ. Ի վ. Ջավախիշվիլի, op. cit., 235. տեկատը տես ստորև, էջ 114):

«Ջամի Աբաս»-ի թարգմանության մեջ Փարսադանը վորոշակի տեղեկություններ է տալիս իր կենսագրության զանազան կետերի մասին: Այսպես, որինակ, նա նշած ունի, վոր 1691 թվին, յերբ նա ավարտել է այս յերկի թարգմանութունը, 65 տարեկան է յեղել (M. Brosset, op. cit., 511, 513). հետևապես, պետք է յեղրակացնել, վոր նա ծնված պիտի լինի 1626 թվին: Մյուս կողմից, իր «Վրաստանի պատմութուն» յերկի մեջ Փարսադանը նշած ունի, վոր այն ավարտել է 70 տարեկան հասակում, ասել է 1696 թվին (համ. Ի վ. Ջավախիշվիլի, op. cit., 235—236): Նույն յերկից տեղեկանում ենք, վոր նրան սնել է՝ իբրև հարազատ վորդուն՝ Վրաց Ռոստոմ թագավորը, վորը քրոնիկոնի 344 = 1656 թվին նրան Սպահան է ուղարկել, ուր և նա հաստատել է մշտական ընակութուն՝ մնալով Պարսկաստանում 40 տարի, և ծառայելով շահ Աբասին ու նրա վորդի Սուլեյմանին, ուրեմն 1656 թվից մինչև 1696 թ.:

Ինչպես իր ժամանակին ևս M. Brosset (op. cit., p. 511) կարծիք հայտնեց, Փարսադանը Պարսկաստանում մահմեդականութուն պիտի ընդուներ, քանի վոր այս առթիվ վորոշակի խոսում է պարսից պատմիչ Իսկանդեր Մուսնչին: Յերբ շահը Վրաստանի խանից (Վրաց թագավորից) պահանջեց, վոր իր ներկայացուցիչը նշանակե Սպահանում, Ռոստոմն առաջարկեց Փարսադան-բեգին. սրան շահը պատասխանեց, վոր կհամաձայնվի, յեթե Փարսադան-բեգը Իսլամ ընդունի. Փարսադան-բեգը համաձայնվեց և ստանձնեց պաշտոնը (B. A. Dorn, Beiträge zur

Geschichte der Kaukasischen Länder und Völker, aus morgenländischen Quellen. III. Erster Beitrag zur Geschichte der Georgier. Hauptsächlich nach Iskander Munschi und Geschichte der Szafiden [„Mémoires de l'Académie Impériale des sciences de SPB“, VII série, t. VI, livr. 4—5, 1844, p. 431], Հմմ. Ի վ. Ջավախի շվիլի, op. cit., 236—237): Նույն Փարսադանն, ըստ M. Brosset-ի (op. cit., 514), վախճանված պիտի լինի 1703 թվին 77 տարեկան հասակում:

Հայաստանի և հայերի մասին տվյալները Փարսադանն ամփոփած ունի գլխավորապես «Վրաստանի պատմություն» յերկի մեջ, վորը նրա գլուխ գործոցն է, մասամբ էլ «Ոսմանցոց թագավորների պատմության» մեջ: Առաջինը դեռ ամբողջապես հրատարակված չէ. նրա միմիայն վերջին՝ չորրորդ մասը նախ հրատարակեց Դ. Չոլբինով, մի փոքր կրճատված՝ «Քարթլիս Տխովրեբա», Կ. II, ՍՊԲ 1854, էջ 517—569. նույնը ֆրանսերեն թարգմանությամբ M. Brosset-ի՝ Histoire de la Géorgie, II partie, 1 livr., SPB 1856, p. p. 514—515. ապա յերկրորդ անգամ հրատարակեց լրիվ՝ կցելով յերրորդի մի մասն էլ՝ ըստ Վրաց Պատմա-Ազգագրական նախկին ընկերության հավաքածուի № 2140 ձեռագրի՝ Սարգիս Կակաբաձեն. «Փարսադան Գորգիջանիձեյի պատմությունը», — „Bulletin Historique“, վրացերեն, Տփղիս 1925 թ., Կ. II, էջ 198—320 (բնագիրը՝ 209—316), նաև առանձին արտատպությամբ, Տփղիս 1926, էջ XIII + 112 (բնագիրը՝ 1—108): Իսկ «Ոսմանցոց թագավորների պատմությունն» ի թիվս Փարսադանի մասը յերկերի և, ի միջի այլոց, «Վրացերեն-արաբերեն-պարսկերեն բառարանի», հրատարակել է Մ. Ջանաշվիլին՝ «Փարսադան Գորգիջանիձեն և նրա յերկերը», վրացերեն, Տփղիս 1896, էջ 72—78:

Փարսադան Գորգիջանիձեյի «Վրաստանի պատմության» հիմնական ձեռագիրը, վոր գտնվում է Լենինգրադում՝ Գիտությանց Ճեմարանի Արևելագիտության Ինստիտուտի (նախկին «Ասիական Թանգարանի») Georgica № 6-ում, իրոք, մի քանի մասից է բաղկացած, վորոնց ընդհանուր բնութագիրը տալիս է Ի վ. Ջավախի շվիլի (op. cit., 234—251):

«Նայած թե վեր աղբյուրների վրա յե հիմնում հեղինակն իր պատմությունը, նրա յերկասիրությունը, —ասում է Ի վ. Ջավախի շվիլի (ib., 240), — կարելի չէ չորս մասի բաժանել»: I—Վրաց և Հայոց դարձից սկսած մինչ Թամարի թագավորությունը

(IV—XIII դ. դ.), II—Թամարից սկսած մինչ Լանգ-Թեմուր (XIII—XIV դ. դ.), III—Լանգ-Թեմուրից սկսած մինչ 1636 թ., և IV—1636—1696 թ.: Այս վերջին՝ IV մասն է, վոր հրատարակել է Դ. Չոլբինով, իսկ Ս. Կակաբաձեն՝ յերրորդի մի մասը: Ի վ. Ջավախի շվիլի վաղուց պատրաստած ունի տպագրության III մասն ամբողջապես:

Պոսելով Փարսադանի «Վրաստանի պատմության» զանազան մասերի մասին, վորոնք տարբեր արժեք ունին՝ նայած թե ինչ աղբյուրների վրա յեն հենվում և վորպես են գրված, ի նկատի պիտի ունենալ հետևյալը:

«Առաջին մասը... գլխավորապես բանավոր և «լսած» տեղեկությունների վրա յե հիմնված և այս պատճառով նա հեքիաթային բնույթ է կրում, քանի վոր նրա յերկու գրական աղբյուրներն ևս, ինչպիսի յեն, որինակ, Հայոց պատմությունն և Պոսելովի ու Շիրինի գրույցն, ավանդությունների վրա յեն հիմնված» (Ի վ. Ջավախի շվիլի, op. cit., 243): «Քանի վոր Փարսադան Գորգիջանիձեյից առաջ այս շրջանի մասին արդեն գոյություն ունեյին, համենայն դեպս ավելի լավ, իսկ VIII—XII դ. մասին արժեքավոր պատմական յերկասիրություններ, այս պատճառով Գորգիջանիձեյի գրվածքի այս առաջին մասն, — ըստ Ի վ. Ջավախի շվիլի իրավացի գնահատման (ibid.), — վոչ մի նշանակություն չունի և վոչ էլ ժամանակակցի համար է ունեցել: Անալի՝ զարմանալի տգիտությամբ լի այս մասը վնասից դատ ընթերցողին վոչ մի ոգուտ չեր տա: Այն միմիայն մի բանով է ուշադրավ. յեթե այսպիսի մի բարձրաստիճան և թագավորին մերձակա ծառայողն ու պատմիչն, ինչպիսին յեր Փարսադան Գորգիջանիձեն, այսպես խառնախորտիկի նման ուներ խառնած հայրենի յերկրի անցյալն ու անցքերն, այսպես հեքիաթաբար ուներ ներկայացրած այն, իսկ վրացական լավագույն պատմական աղբյուրները վոչ միայն կարդացած, այլև նույնիսկ աչքով տեսած չունեն, մնացած ժողովուրդը, սովորական, միջակ կարողության և ուսման տերն՝ էլ ի՞նչ պատկերացում պիտի ունենար: Ի հարկե, վոչ մի... Այս բանը պարզ ապացուցում է Փարսադան Գորգիջանիձեյի աշխատության առաջին մասը»:

«Յերկրորդ մասը, — նույն Ի վ. Ջավախի շվիլի և հետազոտության համաձայն (op. cit., 242—244), — ամբողջապես հենված է Քարթլիս-Տխովրեբայի վրա: Այստեղ հեղինակն իր աղբյուրին է հետեվում, և բնագրի բովանդակությունն յերբեմն մոտավորա-



պես ունի առաջ բերած, յերբեմն ավելի ուամկորեն»: Իսկ «ընդհանրապես, այս՝ յերկրորդ մասն ել պատմութեան համար վոչ մի նշանակութեան վոչ ունեցել ե և վոչ ել ունի, քանի վոր լավագույն արժեքի ընագիրը նրա աղբյուրի՝ հասել ե մեզի»:

Համեմատաբար արժեքավոր ե, ըստ Ի վ. Ջավախիշվիլու, պատմութեան յերրորդ մասը, վորը «XIV—XVII դարերին ե վերաբերում», քանի վոր «հենց այս շրջանն եր, վոր չեր նկարագրված Քարթլիս-Յխովրեբայի մեջ մինչ Վախտանգ VI-ը [և] հենց այս շրջանն եր, վոր Վախտանգ թագավորի կողմից ժողոված գիտնականների հետազոտութեան առարկան եր կազմում: Հետևապես Փարսադան Գորգիջանիձեն և Վախտանգյան հանձնաժողովն այս տեսակետից միևնույն նպատակն են ունեցել՝ վերականգնել Վրաստանի պատմութեանը» (ibid., 249): «Ինչպէս կատարեց Փարսադան Գորգիջանիձեն իր պարտականութեանը: Վոչ մի վրացական աղբյուր և վավերագիր, վորի գտնելը հեշտութեամբ կարող եյին Վախտանգի գիտուն մարդիկն և իրոք ձեռին ել ունեյին, նա (Փարսադանը) Սպահանում չուներ: Այս պատճառով Գորգիջանիձեն այս շրջանն ևս կամ համաձայն բանավոր ավանդութեանների պիտի գրեր, — հապա նրա յերկասիրութեան այս մասն ել իր նշանակութեանն կկորցնէր, — կամ թե չե պարսկական պատմական աղբյուրներից պիտի քաղեր բոլոր տեղեկութեաններն, ինչ վոր Վրաստանի վերաբերյալ այստեղ կգտնվեր: Բարեբաղդաբար, Գորգիջանիձեն այս յերկրորդ ճանապարհով գնալն ե գերադասել» (249—250): «Նրա տեղեկութեանները քաղված են գլխավորապես Միրոն Հուսեյնի և Իսկանդեր Մունչիի յերկասիրութեաններից: Ընդ սմին, նա հաճախ բառացի յե թարգմանում բնագիրը: Նրա ժողոված տեղեկութեաններն ընդարձակ և նոր նյութեր են տալիս Վրաստանի պատմութեան այնպիսի՝ մթութեամբ պատած շրջանի մասին, ինչպիսին յեն XIV—XVII դարերը» (եջ 250):

Յեվս առավել արժեքավոր ե Փարսադան Գորգիջանիձեյի վերջին՝ չորրորդ մասը, վորը պարունակում ե 1636—1696 թ. թ. անցքերի նկարագրութեանը, վորը նա գրի յե առել իբրև ժամանակակից և ակնատես, քանի վոր հենց ինքն այս առթիվ ասում ե. «Յես, Փարսադանս, ասում եմ այս. ճշմարիտ աստվածն վկասաս տարեկան հասակից սկսած մինչ յոթանասուն տարին ինչ վոր ինձ պատահել ե և արժանի յե գրոց մեջ գրելու համար, ճշմարիտն այս ե» (հմմ. Ի վ. Ջավախիշվիլի, op. cit., 235):

Չնայած այն հանգամանքին, վոր Փարսադան Գորգիջանիձեյի

«Վրաստանի պատմութեան» ա. մասը լուրջ պատմական յերկասիրութեան տպավորութեան չի թողնում, այլ առասպելի բնույթ ե կրում, այնուամենայնիվ այն առանձնապես հետաքրքիր ե հայագիտական տեսակետով, քանի վոր պարունակում ե, ի միջի այլոց, Հայոց դարձի պատմութեանն ու Սոսրովի և Շիրինի զրույցն ամենայն մանրամասնութեամբ, վորը հեղինակը գրի յե առել գըլխավորապես բանավոր ավանդութեանն երի հիման վրա, մասամբ ոգտագործելով (Հայոց դարձի վերաբերմամբ), ինչպես մենք պարզած ունինք, և գրավոր աղբյուրները, բայց այլանդակ ձեւով (Ագաթանգեղոս, Սորենացի, Գաշնց թուղթ, Վարագա Սաչի պատմութեանն ըստ «Յայսմաւուրք»-ի ևն): Այս նյութից Հայոց դարձի պատմութեանը մենք ամբողջական թարգմանութեամբ դնում ենք ստորև, իսկ Սոսրովի և Շիրինի զրույցը, վորն ավելի գեղարվեստական քան պատմական յերկի նշանակութեան ունի, տանում ենք IV հատորն, ուր, ի միջի այլոց, ամփոփած կունենանք համապատասխան նյութեր վրացական գեղարվեստական գրականութեանից ու բանահյուսութեանից: Բացի դրանից, ներկա հատորում մենք տալիս ենք մի կտոր՝ քաղված նույն Ա. մասից՝ Բագրատունյաց ծագման վերաբերյալ: Իսկ նույն Ա. մասի մնացած նյութն, ինչպես և Բ. մասի ամբողջ նյութը մենք դիտմամբ բաց ենք թողնում, քանի վոր այն լուկ կրկնութեանն ե Քարթլիս-ցխորեբայի մեջ ներմուծած յերկերի հայտնի տվյալների, վոր մենք արդեն տված ունինք ներկա հատորիս սկզբնական գլխներում: Իսկ ինչ վերաբերում ե յերրորդ և չորրորդ մասերին, վորոնք նախորդ մասերի հետ համեմատած ավելի արժեքավոր են, այն մենք ոգտագործած ունինք ինչպես հարկն ե:

Քաղվածքների թարգմանութեանը «Վրաստանի պատմութեան» Ա. անտիպ մասից մենք կատարած ունինք անմիջապես Լենինգրադի Գիտութեանց Ճեմարանի Արևելագիտական Ինստիտուտի (նախկին Ասիական Թանգարանի) Georgica № 6 ձեռագրից (in folio՝ շքեղ կազմով, վորը հետևյալ վոսկեզոծ մակագրութեանն ունի. „Исторія Грузии собранній Фарсадана Георги Джанизева“), նաև Գ. և Դ. մասերից՝ համաձայն Ս. Կակաբաձեյի հրատարակութեան՝ «Փարսադան Գորգիջանիձեյի պատմութեանը», Տփղիս 1926, եջ 93—106 և 1—92: Իսկ քաղվածք-

ները «Ոսմանցոց թագավորների պատմութիւնից» համաձայն Մ. Ջանաշվիլու հրատարակութեան՝ «Փարսադան Գորգիջանիձեն և նրա յերկերը», էջ 72—78\*.

Ի վերջո, անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, վոր Փարսադան Գորգիջանիձեյի Պատմութեան Ա. մասից քաղած [1—9] գլուխները, վոր վերաբերում են «Հայոց դարձի» պատմութեանն և հատկապես Տրդատին, Հռիփսիմեյին, Գրիգորին և ին, բացի նրանից, վոր տենդեցիոզ են, նաև ըստ եյութեան ամբողջապես առասպելի բնույթ են կրում:

\* Փարսադան Գորգիջանիձեյի մասին տես, ի միջի այլոց. Լ. Մելիքսեթրեկ, Հայերը վրաց հին գրականութեան մէջ, — «Գեղարուեստ» VII, Տփղ. 1922, էջ 44—45:

Ջարմանալի զուգադիպութեամբ վոնն Փարսադան-բեզ վորաջ դեր է խաղում Վրաստանի պատմութեան մեջ XVIII դարու սկզբներին: Բայց այդ Փարսադանը Տփիսիսցի յե՛ ազգանունով Ղուզանենց, վորին որևս պատմաբան Ս. Սալովյեվը «Форседан-Док» է անվանում. Տես. С. Соловьев, История России с древнейших времен, т. XVIII, М. 1868, стр. 31. Մեղսոպ եպիսկոպոս [Տէր-Մովսիսեան], Ջափարիա նկարչի ձեռագիրը և Դավիթ-բէկի մասին յիշատակարան, — «Բանբեր Էջմիածնի Գիտական Ինստիտուտի», I—II, 1922, էջ 135. Լես, Խոջայական կապիտալ, Յերեվան 1934, էջ 265: Հետևապես, այդ յերկու Փարսադաններին չպետք է շփոթել իրար հետ:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ա. Մ Ա Ս Ի 8<sup>1</sup>

### [1.] ԱՅՍԵՂ ՓՐԱՆԳՍԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՈՒՍՏՐ ՀՈՒՓՍԻՄԵՅԻ (ՀՈՌՈՄ-ՍԻՄԵՅԻ) ՈՒ ՆՐԱ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ\*

Հռիփսիմեն (Հոռոմ-սիմեն) թողեց աշխարհիս հաճույքներն ու թագավորութիւնն և քառասուն անրիժ կանանց հետ հանդերձյալ աշխարհն վորոնելու յեկավ (յեկան) Հայոց յերկիրը (սոմեխների թագավորութիւնը): Նրանք յեկան Վաղարշապատ (Վաղարշափաթ) քաղաքն՝ Տրդատ (Տրդադ) թագավորի հողը (յերկիրը), այստեղ, ուր այժմ Եջմիածնի (Եջմիածինի) յեկեղեցին է գտնվում (կանգուն է), և ուր հայոց (սոմեխների) պատրիարքի [աթոռա]-նիստն է: Յեվ այս կանանց պատմութիւնը\*\* ստորև կգրվի, թե ինչպես անարդարացի կերպով նահատակվեցան իրենց ուղեկիցներով հանդերձ: Այն կինը, վորը վիրապի (հորի) մեջ Գրիգորին հաց ու ջուր (ջուր ու հաց) էր հասցնում՝ հապաղելով՝ ժամկետն անց յեկավ և յերկար սպասելուց հետո նույնպես հաց ու ջուր (ջուր ու հաց) բերեց և վիրապի (հորի) մեջն իջավ. իսկ Գրիգորը վիրապից (հորից) ձայն տվեց. «Մեղ ինչո՞ւ մոռացար»: Նա այսպես զեկուցեց. «Անիժյալ է Տրդատ թագավորը, վորն այսպիսի անարդար և անիրավ գործ կատարեց, վոր ամբողջ այս յերկիրն այն ամենից, ինչ վոր կատարվեց, զթութիւնից և կարեկցութիւնից լաց է (են) լինում»: Այն կանանց գործն ամբողջապես Գրիգորին զեկուցեց: Նա ևս հույժ վշտացավ և այն կնոջը ձայն տվեց. «տակավի՛ն կենդանի յե՛ այն խողը»: Բավական էր, վոր նա այս ասեր, յերեք որ անց Տրդատը խող դարձավ և գահընկեց յեղավ (գահից վայր ընկավ) և նրա ծառաներն (հպատակներն) ու իշ-

\* Բնագրում ամբավի (հմմ. հայերեն «համբավ» բառը):  
\*\* Նույնը:

խանները մոլորվեցան և իրենց վրա հագած շորերը պատառոտեցին ու իրենց ատամներով իրենց միսն ելին կրծում (ուտում). գիտունները տգետ դարձան. թագավորի յերեսը դարձավ մազոտ և ատամներն ու կնիակներն՝ ինչպես խոզի: Յեվ թագավորի կանանոցում լացի ձայն բարձրացավ. գլուխները թակում ելին... Տըրդատի (Թրդադի) քույր Խոսրովիդուխտը (Խոսրով դուխտը) յերազ տեսավ. հինգ որ և հինգ գիշեր շարունակ հրեշտակներն այս ելին ասում (ասացին). «Քո յեղբայրն ու նրա ծառաներն (հպատակներն) անիծված են սուրբ Գրիգորից. մարդ ուղարկեցեք փոսից հանեն. նա կոգնե քո յեղբորը»: Յերազներ տեսնելով՝ նրանք (sic), մարդիկ ուղարկեցին (sic) իր դայակին, վորի անունն եր Ավետ (sic): Վերջինս հասավ ախտեղ, ուր Գրիգորը գերի յեր [և] այն վիրապի (հորի) մեջ ձայն տվեց. «Գրիգոր, Գրիգոր, յեթե կենդանի յես, ձայն տուր ինձ»: Նա միջից ձայն տվեց. «Վողորմությամբ աստծո կենդանի յեմ»: Սա ուրախացրեց. «Քո աստծո հրամանն յեղավ, վոր այստեղից քեզ հանենք»: Այս նրան դուր յեկավ: Ապա պարանով քթոց իջեցրին և դուրս հանեցին ինչպես նրան (Գրիգորին), նույնպես և նրա հետ գցած ոճերին և կարիճներին, վորոնց [գարշա]հոտությունից նա սևացել եր իր գերության պահին. [խակ գեռունները] տեսքով զարհուրելի ելին: Իսկույն և յեթ Գրիգորի մազերը խուզեցին և տաք ջրով լողացրին և յեղունգները կտրեցին, [ապա] իր շորով զգեստավորեցին ու մեծ պատվով տարան Վաղարշապատ (Վաղար շաբաթ): Տըրդատ (Թրդատ) թագավորը խոզի դեմքով և իշխանները մոլորված ընդառաջ գնացին Գրիգորին և վայր ընկան գետնի վրա: Գրիգորը ձեռները վերամբարձ, լալով դիմեց աստծուն ու նրա ոգնությունը խնդրեց: Աստծո հրամանով մոլորությունը նրանցից հեռացավ և նրանք խելքի յեկան, տեսան իրենց մարմինները մերկ, [ուստի և] ժողովրդից ամաչում ելին, և թագավորը նրանց առջևն եր կանգնած խոզի դեմքով և ծնկաչոք աղաչում՝ արտասուք թափելով աչքերից: Իշխաններին շորեր հագցրին և խոզացած թագավորի վրայից թագավորական մորթին ձգեցին, [և այդպես նրա] խոզ լինելը ծածկում ելին: Գրիգորը նրանց հարցրեց. «Ո՞ւր են Գրիստոսի համար նահատակված այն անբիծները... և իշխանները գնացին այն այգին, վորի հնձանի շուրջը նրանք (կույսերը) նահատակվեցան իրենց արյունոտ հին զգեստով, թաղեցին ախտեղ, վորը Եջմիածին (Եջմիածին) ե կոչվում և ուր յերեք վանքեր կան, [վորոնց թվում] մեկը վկայարանների վրա: Հենց վոր

սրանց (կույսերին) թաղեց, [Գրիգորը] սկսեց քարոզել [և] մեկնել աստվածաշունչ գրքով, սաղմոսով և ավետարանով: Յեվ ճանաչեցին (ճանաչեց) աստվածային ուղիի խոսքն, և խոզացած թագավորի մարդ դանալու համար վաթսուն որ պաս պահեցին: Յեվ [թագավորն] աղոթեց, և աստծո հրամանով ավելի ևս, քան առաջ, գեղեցկացավ նրա դեմքն ու բոյին, խոզությունից ազատվեց. սույնպես հատակացան և մեծամեծները: Հինգ որ պաս պահեց: Թագավորն արքունիք կանչեց հայոց (սոմեխների) նախարարներին\* և իշխաններին, վորոնք աղաչեցին սուրբ Գրիգորին, վոր քրիստոնյաների պատրիարք ձեռնադրվի: Վերջինս զեկուցեց. «Այս՝ մեծ գործ ե և յես ի վիճակի չեմ այդ անել»: Այս պահին աստվածային հրեշտակն յերազում յերևաց սուրբ Գրիգորին և ասաց այսպես. «Թագավորի հրամանը լսիր»: Յերազը տեսնելուց հետո Գրիգորը թագավորի հրամանին ունկնդիր յեղավ և այսպես զեկուցեց. «Պետք ե գնալ պապի մոտ»: Թագավորը լսեց և հրամայեց պատրաստվել և ճանապարհ ընկնել, և յերեք մեծամեծ իշխաններ յերեք հարյուր ձիավորներով ու թագավորի ընծաներով, պարզկներով և նամակով հանդերձ առ կայսրն [Հռոմի]՝ գնացին Լևոն պատրիարքի մոտ: Յերբ սրանք մոտեցան [Հռոմին], սրանց գալստյան մասին տեղեկացրին կայսեր, վորը սրանց ընդառաջ մարդիկ ուղարկեց, և մեծ պատվով ընդունեցին պատրիարքական տանը. ապա ժողով գումարեցին՝ կանչելով ամեն տեղից յեպիսկոպոսներին ու քահանաներին: Լևոն պատրիարքը սուրբ Գրիգորին կաթողիկոս ձեռնադրեց և շորհեց իրավունք ձեռնադրության և նզովքի ու մեռն յեփելու, և նրան շատ պարզկներ մատուցին ու ճանապարհ գցեցին: Յերբ նրանք (Գրիգորն ուղեկիցներով) հայոց յերկիրն (սոմեխների պետությունն) հասան, սրա մասին զեկուցին Տըրդատ (Տրդադ) թագավորին, վորը յերեք որվա ճանապարհի սահմանին ընդառաջ գնաց [Գրիգորին] մեծ հրճվանքով Յեփրատ գետի վրա: Ապա ժողովեցան Արաքսի (Արազ) գետի վրա, ուր յեկավ (յեկան) և սուրբ Գրիգորը, [վորն և] զգեստավորվեց իբրև պատրիարք: Թագավորին մերկացրեց ու ջրի մեջ մտցրեց և ավետարանը վերցրեց ձեռը, և մկրտության կարգը կարդաց ու մեռոնը ջրի մեջ կաթեցրեց (ածեց) և թագավորին ու նրա զորքին մկրտեց: Յեվ յերեք ժամ Արաքսի (Արազի) ջուրը յետ հոսեց և իբրև ծով կուտակվեց: Յեվ Հիսուս Գրիստոսի գործերի մասին եր

\* Բնագրում թագավորներին:

պատմում [և] քարոզում: [Յեւ] բոլորը փառաբանեցին աստծուն՝ իբրև ստեղծողին, ու նրա սրբերին: Այն որը բոլորը սուրբ Գրիգորի ձեռք մկրտվեցան: Յեւ ջրից դուրս գալով՝ բոլորը հարյուր քսան հազար եյին, և բոլորը սպիտակ շորեր հագան: Սրանից հետո սուրբ Գրիգորը սկսեց յերկրներ շրջել, ամեն տեղ շինել տվեց յեկեղեցիներ և քարոզությամբ [նոր] կրոնը ներմուծեց, մեռոն տվեց [հայերին]:<sup>2</sup>:

## [2.] ՀՈՒՍԻ ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (ԿՈՍՏԱՆՏԻՆԵ) ԹԱԳԱՎՈՐԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԱԼՈՒ ՈՒ ՆՐԱ (ՆՐԱՆՑ) ԳՈՐԾԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ\*

Տրդատի (Տրդադի) թագավորության տասնևյոթ տարին լրանալուն պես լուր (ամբավի) հասավ, վոր Հռոմի Կոնստանդին (Կոստանտին) թագավորը քրիստոնյացավ: Այս լուրը շատ դուր յեկավ Տրդատին (Տրդադին) ու Գրիգոր Աստվածաբանին (sic)\*\*: Յեւ Յերեվանի յերկրից (sic) վաթսուն հազար մարդ յերեք տարվա պաշարով ու ոռճիկով, ձիով, գնաքով ու շորով ապահովված՝ իրենց հետն տարան Տրդատ (Տրդադ) թագավորն ու Գրիգորը մեծ ընծաներով հանդերձ՝ բազում գանձերով, ձիր ու պարզաներով (փեշքաշով), և գնացին Հռոմ (Ռհոմ?) Կոնստանդին (Կոստանտին) թագավորի տեսության: Հենց վոր վերջինիս զեկուցին, վոր հայոց (սոմեխների) թագավորը ձեր տեսության ե (են?) յեկել վաթսուն հազար մարդով և Գրիգոր Աստվածաբանն (sic)\*\*\* ել առաջնորդում ե նրանց, հրաման յեղավ Կոնստանդին (Կոստանտին) թագավորից և Պետրոս (Պետրե) պապից՝ իրենք իրենց զորքով ընդառաջ գնան նրանց: Յերբ [յերկոքյան թագավորներն ու հայրապետներն] իրար տեսան, հույժ հավանեցին (սիրեցին) Տրդատի (Տրդադի) ու Գրիգորի հեղությունը և սրանց քրիստոնյանալով ուրախ եյին, քանի վոր վաթսուն հազար մարդով յերեք տարի ժամանակով այսպես տքնել եյին մի տեսության համար. և ինչ աշխարհս հիմնավորվել ե, այսպիսի գործ ուրիշ վոչոք չի կատարել, վոր Հայքից (Սոմխիթից) վաթսուն հազար մարդով Հռոմ գան քրիստոնյությունն ու ժեղացնելու նպատակով: Յեւ

\* Բնագրում՝ տմբավի, հմմ. սույն հատորի եջ 89, ծանոթ.:

\*\* Ուզում ե ասել՝ Լուսավորչին:

\*\*\* Տես նախորդ ծանոթ.:

ինամիյաբար և յեղբայրաբար յերդվեցին և բազում թանկարժեք պարզաներ նրանց (հայերին) ել մատուցին: Վաթսուն հազար մարդկանց վեց ամիս հյուրասիրեցին: Ինչ վոր [հայերն] ուզում եյին, [յերեք] մերժում չեյին ստանում. [ամեն ինչ] տալիս եյին նրանց (հայերին) անհաշիվ: Բազում գանձեր մատուցին Տրդատ [Տրդադ] թագավորին, և նմանապես սուրբ Գրիգորին մատուցին պատրիարքական զգեստն և գլխին դրին ականակուռ թագը, և ականակուռ խաչն ու գավազանն ել տվին ձեռին: Յեւ Կոստանդնուպոլսից (Կոստանտինուպոլսից) հայսկույս [բոլոր կողմերում] պապը նրան իրեն փոխանորդ-պատրիարք ձեռնադրեց և շնորհեց նրան իրավունք ապաշխարանքի ու նզովքի, այնպես վոր ում թողություն տա, կապաշխարվի, և ումն [ել] ճշմարիտ դատաստանով նզովե, անիծյալ կլինի: Այսպես հարստացյալ՝ ճանապարհ գցեցին նրանց: Պաղատ և ուրախ վերադարձան իրենց պետությունն, և ուրախություն ընկավ [նրանց] յերկրում: Բազմեցին իրենց գահի վրա [և] սկսեցին ճշմարիտ կերպով [կառավարել], յերկիրը [վերա]շինեցին. և հենց վոր յերկիրը խաղաղվեց, Տրդատը (Տրդադը) զորքն ու թագավորական տունը կարգավորեց. ապա ցանկացավ իր հոր արյան վրեժն հանել Արտաշի (Արտաշի) փոխարեն Շապուհ (Շափր?) թագավորից<sup>3</sup>:

## [3.] ԱՅՍԵՂ ՏՐԴԱՏ (ՏՐԴԱԴ) ԹԱԳԱՎՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆ [ԻՐ] ՀՈՐ ԱՐՅԱՆ ՎՐԵԺՆ ՀԱՆԵԼՈՒ\* ԱՐՏԱՇԻ (ԱՐԴԱՇԵՐԻ) ՎՈՐԴԻ ՇԱՊՈՒՅԻ (ՇԱՓՈՒՐԻ) ՎՐԱ

Այս ժամանակ Արտաշի (Արդաշերը) վախճանված եր: Նրա վորդի Շապուհին (Շահփուրին) թագավոր կացուցին: Տրդատը (Տրդադը) մեծ զորք ժողովեց, Շապուհի (Շահփուրի) դեմ յելավ և ավերեց նրա յերկիրն՝ ամայի դարձնելով քաղաքներն ու քանդելով բերդերը: Այս լուրը կուսակալները շտապով ծանուցին թագավորին, [այն ե]՝ վոր Տրդատը (Տրդադը) մեծ զորքով հարձակվել ե ու ավերել յերկիրը: [Շապուհը] շտապեց, ամեն տեղից զորք ժողովեց և գնաց ընդդեմ [Տրդատի]: Յեւ հանեցին զորք յերկու կողմից և կազմեցին ռազմեր, նշանակելով աջակողմյան ու ձախակողմյան և առաջապահ ու վերջապահ [գնդեր]: Յեւ սկսվեց պայքար... Շապուհը (Շահփուրը) [ստիպված յեղավ] փախչել, իսկ

\* Բնագրում՝ վորոնելու:

Տրդատին (Տրդադին) իրավամբ տրվեց [իր] հոր արյան [վրեժն] հանելն [ու] հաղթելը: Յեվ փախավ Շապուհն (Շահփուրն) և նրա զորքը. և հայոց (սոմեխների) զորքը հետամուտ յեղավ՝ ամենուրեք զրավելով բերդեր ու քաղաքներ: Յեվ Տրդատը (Տրդադը) հետամուտ յեղավ մինչ Հնդկաստան նահանջող Շապուհին (Շափուրին): Յետևից ընկան, և Իրանի յերկրում ել վոչ մի տեղ չըմնաց, վոր նա չգրավեր. և ամեն տեղ իր մարդկանց նշանակեց թագավոր ու իշխան, և ինքն իր աթոռանիստն (թախտն) վերադարձավ: Ապա նրա (Տրդատի) մոտ դեսպաններ յեկան Շապուհից (Շափուրից) աղաչանքով, բայց նա ունկնդիր չեղավ, և դեսպանները հուսահատ վերադարձան: Շապուհը (Շափուրը) հույսը կրտրեց և այլ ճանապարհով, Կոնստանդին (Կոստանտիլ) արքային դեսպան ուղարկեց աղաչելու և շատ ձիր (նվերներ) ուղարկեց և նամակ գրեց, վոր միջնորդ հանդիսանա [նրա ու] Տրդատի (Տըրդադի) միջև և հաշտեցնի նրանց, վորպեսզի [Տրդատը] սրանից ել ավել չավերի նրա (Շապուհի) յերկիրը: Կոնստանդին (Կոստանտիլեյ?) արքան այսպես գրեց Շապուհին (Շահփուրին). «Յեթե դուք հաշտվել եք ուզում, պահ տվեք ինձ Դավիթ մարզարեյի թագը, վորը ձեր գանձարանումն է պահվում, վորպեսզի նրա տեսակ մի թագ շինել տամ ինձ համար, և ձեր թագն ելի ձեզ կվերադարձնեմ: Յես իմ թագը նրա հորինվածքով պիտի շինեմ: Այս՝ Դավիթ թագավորի թագն՝ առաջներում, յերբ Նաբուքոդոնոսոր (Նոփոքտինեյ?) Բաբելոնի\* արքան Յերուսաղեմն ավերեց, այնտեղ գտավ և նրանից հետո այն ժառանգությամբ Իրանի արքաներն ունեյին»: Յերբ կայսեր պատասխանն ու թագ խնդրելը Շապուհին (Շափուրին) զեկուցին, վերջինիս այս դուր յեկավ, և նա վստահելի մարդու ձեռքով ուղարկեց այն թագը կայսեր: Կայսրը՝ տեսնելով թագը՝ չափազանց հավանեց այն. և հրավիրեց լավ վարպետներ, վորոնց ձեռք գցեց թագը և հրամայեց նրանց մի այսպիսի թագ շինել, այնպես վոր վոչոք չկարողանա ասել վճրն է նոր և վճրը՝ հին: Վարպետները սկսեցին շինել և այնպես շնորհքով շինեցին, վոր հին և նոր թագերը բերողի առաջն դրին և ասացին. «Քո բերածն ելի յետ տար»: Սա նորը վերցրեց և հինը թողեց: Յեվ Կոնստանդինն (Կոստանտիլեն) ել այս եր ուզում: Ապա [Կոնստանդինը] դեսպան ուղարկեց և Տրդատ (Տրդադ) արքային ու Շապուհին (Շահփուրին) հաշտեցրեց:

\* Բնագրում՝ Բաղդադի: XVII—XVIII դ. դ. վրաց աղբյուրներում Բաբելոնի փոխարեն սովորաբար Բաղդադ է գործածվում:

[4.] ԱՅՍՏԵՂ ՏՐԴԱՏ (ՏՐԴԱԴ) ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՀՆ ՅԵՎ ՆՐԱ ՎՈՐԴՈՒ՝ ԽՈՍՐՈՎԻ՝ ԹԱԳԱՎՈՐԱՆԱԼԸ

Տրդատը (Տրդադը) վաթսուն վեց տարեկան վախճանվեց: Նրա վորդին Հոռմի (Հոռոմի) արքայի աջակցությամբ դարձավ թագավոր. իննը տարի թագավորեց: Շարդիզը (sic) սրա ձին եր և Շիրինն ել սրա աղջիկն եր. զավակները փոքր մնացին. և Պոսրովը վախճանվեց և թագավորում եր նրա քույր Մահբանուն (Մհրանուն) (sic): Շարդիզի և Մահբանուի ու Շիրինի պատմությունն ու գործերը, [նաև] Իրանի Պոսրով թագավորի Շիրինի վրա սիրահարվելը տես ներքև: Իրանի թագավորների [ցանկ]ում դասված է (գրվում է). Մահբանուն (Մահբանուն) Տրդատի (Տրդադի) աղջիկն է և Պոսրով յերկրորդ թագավորի քույրը: Յեվ Պոսրովից հետո նրա վորդի Տիրանը (Տերանը) թագավորեց: Սա ևս յերկու վորդի թողեց. մեկի անունն եր Արշավիր (Արշվիր) և մյուսինը Վաղարշակ (Վաղար շափաթ): Արշավիրն (Արշվիրն) [իր] հորից հետո թագավորեց. իշխեց քսան տարի: Սրանից հետո սրա վորդի Պապին Ներսես հայրապետ\* թագավորեցրեց, [և Պապը թագավոր դարձավ] նրա (Ներսեսի) վկայությամբ: [Իսկ Պապը] սպանեց մեծն Ներսեսին՝ սուրբ Գրիգորի ազգականին: Սա (Պապը) վատաբարո յեր: [Ներսեսը] սրան արգելում եր [վատ բաներ անել], և նա չեր հրաժարվում այդ անելուց: Յեվ լավ բաներ սովորեցնելու համար [Պապը] Ներսես պատրիարքին թույնով մահացրեց: Հենց վոր Հոռմի մեծ արքա Թեոդոսը (Թեվաթորսը) լսեց այս լուրը՝ պատրիարքին թույնով մահացումը, ձերբակալել ավեց հայոց (սոմեխների) արքային և նրան ել սպանել տվեց և արքայությունն Արշակունյաց շառավիղ Վարազդատին (Վարազային) տվեց: Սա (այստեղ) Վարազդատը (Վարազան) յոթը տարի իշխեց հայոց (սոմեխների) յերկրում և գնաց կայսեր մոտ ու Իրանի արքա Շապուհի (Շափուրի) հետ սկսեց բանակցել՝ այսպես ասելով. «Յեթե ձեր քրոջն ինձ կտաք [ի կնություն], յես ել [ձերը կլինեմ] և իմ յերկիրն ել ձերը կլինի: Վումանք ծառաներից (հպատակներից)՝ յերկմիտ լինելով՝ այս լուրը ծանուցին կայսեր: Վերջինս զորք կանչեց, և խաբուսիկ կերպով տարան Վա-

\* Բնագրում՝ «հախրապետ» բառն է, վորը հայերենի վրացերեն տրանսկրիպցիան է Տփղիսի հայերի արտասանությամբ:

բազմաթիւն (Վարազաշին) և սպանեցին: Սրա սերունդն էլին յերեք յեղբայրներ. սրանց իշխեցրեց. մեկի անունն էր Պապ, մյուսինը Արշակ, յերրորդինը Վաղարշակ (Վաղարշաբաթ): Այս պահին Հոռմի արքա Թեոդոսը (Թեվաթորսը) վախճանվեց: [Յեվ] մինչ այս հայոց (սոմեխների) արքաներն ու կաթողիկոսները Տրդատից (Տըրդազից) և Գրիգորից հետո Հոռմի արքային ու պապին հնազանդ էլին: [Իսկ] նրանից հետո, ինչ Թեոդոս (Թեվաթորս) կայսրը վախճանվեց, Իրանի արքայի հրամանով իշխեցին [Արշակունիք]: Թեոդոսից (Թեվաթորսից) հետո հայոց (սոմեխների) յերկրում իշխեց Շապուհը (Շափուրը)՝ Արշակունյաց շառավիղը:

### [5.] ՅԵՐՐՈՐԴ ԽՈՍՐՈՎԻՆ ԻՇԽԵՑՐԻՆ

[Այս Շապուհը] կարճ ժամանակ տիրեց և սա ել սխալմունք գործեց, և սրան ձերբակալել տվեցին ու գերի տարան: Յերբ Շապուհին (Շամփուրին) իշխեցրին, այն ժամանակ Իրանի արքա յերրորդ Շապուհը (Շամփուրը) վախճանվեց, և նրա յեղբայր Զաքիին (sic) թագավորեցրին. և սա ել իր վորդի Շապուհին (Շահփուրին) թագավորեցրեց հայոց (սոմեխների) յերկրում. վեց տարի կացավ Զաքիին՝ Իրանի արքան, ապա մեռավ: Նրա վորդին՝ հայոց (սոմեխների) արքան՝ հենց վոր լսեց իր հոր մահվան մասին, թողեց հայոց (սոմեխների) թագավորութունն և գնաց՝ [իր] հոր գահի (թախտի) վրա բազմելու (թագավորելու). և հայոց (սոմեխների) տերութունն յերեք տարի անտեր էր: Յեվ Սահ[ա]կ պատրիարքն Իրանի արքայից խնդրեց հայերի (սոմեխների) համար թագավոր [նշանակել]: Շապուհը (Շափուրն) իր վորդի Վահրամին (Վարամին) հայոց (սոմեխների) տեր նշանակեց (տվեց), սակայն հայոց (սոմեխների) իշխանները՝ չընտելանալով նրա հետ՝ չուզեցին նրան ու վոնդեցին: Կրկին մնաց հայոց (սոմեխների) տերութունն անտեր՝ յերեսուն տարի: Արշակունյաց հարստութունը (տոհմը) ընաջինջ յեղավ, [նաև] նրանց թագավորութունը: Մինչ այս հայերի (սոմեխների) և վրացիների (քարթվեխների) վրա թագավորում էլին Արշակունյաց շառավիղները, և այդ ժամանակ հայոց (սոմեխների) քրոնիկոնն էր համարվում (գրվում) յերեք հարյուր յերեսուն և վեցն՝ Արշակունիներից հետո: Արշակունիներից հետո [ամբողջ յերկիրն] այս ծովից մինչ այն ծովը Բագրատունիները գրավեցին: Մն գլխից Աշոտը (Աշոթանը) տիրեց, հինգ տարի լավ տիրեց և վախճանվեց: Ապա տի-

րեց Աշոտի (Աշոթանի) վորդի Սմբատը (Սունբատը). սա քսան և չորս տարի տիրեց, և սա ել վախճանվեց: Յեվ սրա յեղբորորդի Աշոտը (Աշոթան) տիրեց, սա յոթը տարի տիրեց, և սա ել վախճանվեց: Ապա տիրեց Աշոտի (Աշոթանի) յեղբայր Աբասը (Աբազը), և սա քսան և չորս տարի տիրեց: Յեվ սրա տերության [որոք] շենացավ հայոց (սոմեխների) տերութունը: Յեվ սա շինեց Սանահնի ամենասրբուհու տաճարն և այլ շատ բարություն և վողորմություն արավ: Յեվ սրանից հետո սրա վորդի Աշոտը (Աշոթանը) տիրեց, և սա ել բարվոք տիրեց քսան և հինգ տարի, ապա վախճանվեց: Յեվ սրա վորդի Սմբատը (Սունբատը) տիրեց, և տիրեց տասն և յերեք տարի ու վախճանվեց: Յեվ սրանից հետո սրա քեռորդի Մուշեղը (Մուշեղը) տիրեց, տասը տարի տիրեց և մեռավ: Սրա վորդի Աբասը (Աբազը) տիրեց, տասնուամեկ տարի տիրեց, և վախճանվեց: [Յեվ տիրեց]... և ապա վախճանվեց: Յեվ տիրեց Սմբատի յեղբայր Գագիկը (Գոգին). սա տիրեց տասնևյերեք տարի և վախճանվեց: Յեվ սրա վորդի Սմբատը (Սունբատը) տիրեց հայոց (սոմեխների) քրոնիկոնի չորս հարյուր վաթսուն և չորսին<sup>6</sup>: Մինչ այս վերոհիշյալ տերերը հայեր (սոմեխներ) էլին: Ամենից առաջ Քարթլիի տեր (sic) Իվանեն վրացի դարձավ, և տիրեց յոթը տարի, և վախճանվեց. և վրացիք իրենց կրոնի ծիսակատարությամբ հանձնեցին նրան հողին: Յեվ սրա վորդի Գեորգին (Գիորգին) տեր դարձրին, և սա լավ կառավարեց յերկիրը Վրաստանի և իրենն էլ: Սա իր կենդանության որոք իր վորդի Դավթին տվեց [յերկիրն] և սա շինեց շատ տաճարներ և վանքեր, և կոչվեց Դավիթ Շինող. քսան և հինգ տարի թագավորեց, և վախճանվեց և իրեն իսկ [ձեռա]կերտ Խախուլի [աստվածածնա] Գելաթում թաղվեց: Յեվ սրա վորդի Գեորգը (Գիորգին) թագավորեց, և ուր ել սրա հայրը շենք էր սկսել կառուցել և անավարտ թողել՝ տաճարներ թե վանքեր, սա վերջացրեց և նշանակեց յերեցներ-վարդապետներ... և վախճանվեց: Յեվ սրա վորդի Դեմետրը (Դեմետրեն) տիրեց, և սա շինեց Մետեխի տաճարը... Յեվ սրա վորդի Դավիթը տիրեց՝ հայոց (սոմեխների) քրոնիկոնի յոթը հարյուր քառասուն չորսին<sup>7</sup>: Մինչ այս ժամանակ հայերից (սոմեխներից) հետո տիրում էլին վրացիության մեջը (sic). յերբեմն ուժեղ թշնամուց շատ անգամ (sic) անտեր են մնացել և ցիր ու ցան յեղել՝ կազմելով յոթն [իշխանություն] (?): Վերոհիշյալ թագավորներն յերեք հարյուր քսան տարի յեն տիրել: Մինչ հայոց (սոմեխների) քրոնիկոնի յոթը հարյուր քառասուն յերկու թվա-

կանը՝ վերոհիշյալ տերերն են տիրել: Սակայն սրանցից հետո բաժանման առաջ և հետո ել շատ Բագրատունիներն են տիրել, վորոնց բոլորի գործերն ու անուններն և ծագումն (հայր և վորդիությունն) և նրանց ժամանակն և նրանց հայրերի անունները մասամբ չեմ գտել և մասամբ ել, ինչ գտել եմ, ստորև կգրվի աստուծով՝:

**[6.] ՓՐԱՆԳՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՈՒՍՏՐ ՀՈՒՓՍԻՄԵՅԻ (ՀՈՌՈՍ-ՍԻՄԵՅԻ) ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍՈՒՐԲ ՆՈՒՆԵՅԻ (ՆԻՆՈՅԻ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ\***

Ավելի վերեն ե [այս] պատմությունը\*\*, բայց այստեղ ել վորինչ չի խանգարի [գրել], այն պատճառով, վոր նախ մեծն արքա-կայսեր դստեր Վաղերիա (Վեղեթո) թագուհուն ենք հիշում, նրա բարիքներն ու աստված[ասիր]ությունը ... [վորը] Պետրոս առաքյալի քարոզչությամբ քրիստոնեյացավ, յեկավ Յերուսաղեմ աղոթելու... Սուրբ Հակոբի յեղբորից ստացած ունեք կենարար խաչի (ճշմարիտ փայտի) նշանը, [վորը] հասցրեց Հոռոմ (Հոռոմ), և այնտեղ մնաց, ուր նրա վորդիք ու սերունդը հասան մինչ սուրբ Հռիփսիմեն (Հոռոմ-սիմեն): Այս Վաղերիա (Վեղաթո) թագուհին քրիստոնյաներից եր ծնված: Սա թողեց հարսնությունն և յերկրիա բարիքներն, ու սքեմ հագավ և խուզեց անցողական [կյանքից], և նրա վորին գիմեց կանանց ու կուսանց, նամանավանդ ամենասրբուհի Մարիամին ու նրա յեկեղեցուն: Յեվ այնտեղ նրան հանդիպեց, իբրև ծնող մայր, Գայանեն՝ աստվածային գործոց ուսուցանող կինը:... Այս ժամանակ Հոռոմում (Հոռոմում) նրատած եր Դիոկղետիանոս (Դեվա-կլիտիանե) կայսրը, [վորը] կուսպաշտ եր: Սա ամուսնանալ (կին ուզել) ցանկացավ: Կանչեց նկարիչներին, վորոնց իր թագավորության [ղանազան կողմերն] ուղարկեց. և ամեն տեղ այսպիսի հրաման գրեցին. «Ով վոր անբիծ աղջիկ ունենա, ցույց տվեք, վորպեսզի այս նկարիչներն այսպես նրանց տեսնեն ու ամբողջ կազմվածքը պատկերագրեն [և] վորպեսզի իբրև կենդանի յերևա, վորին հարսնացու յենք ուզում»: Ուր ել գնացին, թագավորի հրամանը կատարեցին, և ամբողջ յերկիրն ու քաղաքները շրջեցին, յեկեղեցում, տանը և դաշտի

\* Բնագրում՝ ամբավի: Հմմ. եջ 89, ծանոթ.՝  
\*\* Նույնը:

վրանումը նստածներին դիտեցին. և ով վոր աղջիկ ունեք, բոլորին կենդանի պատկերագրեցին և վորոնք՝ անբիծներն՝ անցողական կյանքն զիջեցին և աշխարհից հեռացան՝ աղերսելու ամենասրբուհու տաճարին, սրանց յեվս պատկերագրեցին. և վոր տաճարումն ել սուրբ Հռիփսիմեն (Հոռոմ-սիմեն) մտած եր, նույն տաճարի դուռն կոտրեցին: Հռիփսիմեյին (Հոռոմ-սիմեյին) ամբողջ կազմվածքով և գեղեցկությամբ իբրև կենդանի պատկերագրեցին և ուղարկեցին թագավորին: Թագավորը հենց վոր տեսավ Հռիփսիմեյին (Հոռոմ-սիմեյին), վորը աշխույժ և գեղեցիկ եր, չափազանց դուր յեկավ: Հրաման արձակվեց թագուհու կայարանը բերել Հռիփսիմեյին (Հոռոմ-սիմեյին) և թագավորի հարսանիքն անել: Այս լուրը ծանուցին Հռիփսիմեյին, և նա կանչեց՝ իբր իր ծնողին՝ իր դայակ Գայանեյին և նրա դաստիարակներին (վարդապետներին) ու կից գտնվողներին<sup>10</sup>:

**[7.] ԱՅՍՏԵՂ ՀՈՒՓՍԻՄԵՅԻՆ (ՀՈՌՈՍ-ՍԻՄԵՅԻՆ) ԽՐԱՏ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՏԱԼԸ**

[Հռիփսիմեն] դայակով ու դաստիարակով և ուղեկիցներով հանդերձ այնտեղից փախավ (փախան) և հասավ (հասան) Յերուսաղեմ: Յեվ կենարար խաչի (ճշմարիտ փայտի) նշանը նա կախած ունեք վզից և կանգ առավ այնտեղ, ուր [Քրիստոսի] սուրբ գերեզմանն եր: Սրանք ևս գնացին համբուրելու այն և աղոթելու. շատ զոհեր ընծայեցին և աղաչում եյին իրենց վորդիների փրկության մասին, վորպեսզի սատանայի վորոգայթից պահպանվեն և ծածկած մնան: Գնացին Գեթսեման (Գեսամանիա), դայակ Գայանեն սուրբ Հռիփսիմեյին (Հոռոմ-սիմեյին) ձեռից բռնեց և յերկրպագեց, և հողի վրա ընկավ, և զոհաբերեց, և սկսեց աղոթել-աղերսել կանանց մեջ գոված ամենասրբուհի Մարիամին, [և] արտասովալից աչքերով ու ծնկաչոք աղաչեց նրան (Մարիամին). «Հռիփսիմեյին (Հոռոմ-սիմեյին) պահիր քեզ ծառա, և վորչքի չզիջես՝ վոր հզոր արքաներին և վոր ել գայթակղիչ սատանային. այս՝ մեծ արքայի դուստրն՝ անբիծությամբ քո հարսն ու ծառան դարձրու»: Նույն գիշերն ամենասրբուհի Մարիամն յերազում յերևաց և այսպես հրամայեց. «Այստեղից գնացեք Միջագետք յերկիրն՝ Ասորիք (Ասորիստան), այնտեղ քաղաք Ուռհայում (Հուռապարում?) կտավի վրա պատկերագրած ե Հիսուս Քրոստոսի յերեսն, [այն ժամանակ], յերբ հայոց (սոմեխների) արքա Արգա-

րը (Աքբարը) ստրկութեան եր կարոտ և այն կտավի վրա յերեսը նկարել տվեց»: Հենց վոր այս յերազը տեսան, գնացին Ասորիք (Ասորիստան), տեսան կտավի վրա անձեռագործ պատկերը, հայտնապես յերկրպագեցին, շատ զոհաբերութիւն արին և այնտեղ ել ամենասրբունուն տեսան յերազում: [Ամենասրբունին] հրամայեց. «Այստեղից գնացեք հայոց (սոմեիների) պետութիւնն, ուր սուրբ Թադեոսն (Թաթեոսն)՝ Հիսուս Քրիստոսի աշակերտն՝ Եթադած»: Այնտեղից (Ուռհայից) յեկան և հասան Վաքազա (Վարաքի) բարձր սարը. դեպի արևելք այն սուրբ սարից տեսան (տեսավ) կենարար խաչի (ճշմարիտ փայտի) նշանը<sup>11</sup>. [ամենասրբունին] դարձյալ յերկաց յերազում և հրամայեց. «Յես ցանկացա կանգ առնել այստեղ. դուք գնացեք. աւտված ձեզ կառաջնորդեք»: Սրանցից ծերերն ու տկարներն այնտեղ կենարար խաչի (ճշմարիտ փայտի) նշանին ապավինեցին: [Իսկ] Հռիփսիմեն (Հոռոմ-սիմեն) ու Գայանեն յերեսուն և վեց քահանաներով ու վարդապետներով և անբիծներով ու ուղեկիցներով հանդերձ հասան Վաղարշապատ (Վաղարշաբաթ) քաղաքն, ուր այժմ Եջմիածնի (Իեզմիածնի) տաճարն Ե կանգուն Յերևանյան յերկրում. այնտեղ մի այգու հնձանին [կից] տանն իջան. սրանցից վոմանք մի քիչ ուլունք ու մանրուք ունեյին հետն, հաց առնելու գնացին, առան և բերին ու կերան, քաղցից ազատվեցին: Այսպես թե այնպես, առաջվա պատմութեանը\* հասանք, նույն տեղը հասանք: Դիոկղետիանոս (Դեվակլիտես) արքան իր ամուսնութեան գործը կարգադրեց, և թագավորներին ու իշխաններին մեծապես զարդարելով ուղարկեց, վորպեսզի Հռիփսիմեյին (Հոռոմ-սիմեյին) հարսնացու բերեն: Յերբ գնացին այնտեղ, այլևս չհանդիպեցին նրան: Տեղացիները գեկուցին. «Վաղուց ե, ինչ այստեղից գնացին»: Այս լուրը ծանուցին Դիոկղետիանոս (Դեվակլիտիանես) արքային, [վորը] չափազանց ցավեց և բարկացավ, և ամեն տեղ գիր ու մարդիկ թըոցրեց նրան վորոնելու, և այլ թագավորներին ու արքաներին յեվս նամակներ գրեցին այսպես. «Այս կանայք մեզանից գնացին. ում գավառն (թեմն) ել մտնեն, մեզ մոտ ուղարկեցեք»: Յեվ մի նամակ [ել] Տրդատ (Տրդադ) արքային գրեցին: Սրանք (հայերն) ևս կազմակերպեցին վորոնում ու հարցուփորձ: Յեվ քաղաք Վաղարշապատի (Վաղարշաբաթի) ծայրի մի այգու հնձանին [կից] տանն եյին իջել: Վորոնողները տեսան Հռիփսիմեյի (Հոռոմ-սի-

\* Բնագրում՝ ամբաստան: Հմմ. էջ 89, ծանոթ.:

մեյի) գեղեցկութիւնն ու սքանչելիութիւնը, զարմացան և նրա մեծ զովասանքը Տրդատ (Տրդադ) արքային գեկուցին: [Տրդատն] ուրախացավ և սա յեվս նրան իրեն հարսնացու [ունենալ] ցանկացավ: Այստեղ Տրդատ (Տրդադ) արքան հարսանիքի պատրաստվեց [և] հրամայեց իր նախարարներին ու զործակալներին (վեզիր-վեքիլներին) ու արքունականներին գնալ Հռիփսիմեյի (Հոռոմ-սիմեյի) մոտ:

### [8.] ԱՅՍԵՂ ՓՐԱՆԳՍԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՈՒՍՏՐԻ ՍՈՒՐԲ ՀՈՒՓՍԻՄԵՅԻ (ՀՈՌՈՄ-ՍԻՄԵՅԻ) ՅԵՎ ՏՐԴԱՏ (ՏՐԴԱԴ) ԹԱԳԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ \*

Յերբ Հռիփսիմեյի (Հոռոմ-սիմեյի) չքնաղութիւնն ու գեղեցկութիւնը Տրդատին (Տրդադին) գեկուցին, սա հրամայեց, վոր թագավորներն ու իշխանները գան և հարսնացուի զարդարանքը մատուցեն և մեծամեծների մայրերն ու կանայք առջևից ընթանան, մեծ պատվով հարսնացուին տունը բերեն: Սրանք այսպես եյին կարծում, վոր որիորդին դուր կգա, ավետաբեր ուղարկեցին [հայտնելու], վոր՝ «Թագավորն իր յերկրի թագուհութիւնը ձեզ մատուցեց, այդ հնձանից դուրս արի և թագավորի տունը գնա՝ գահի (տախտի) վրա նստիր ու թագ դիր գլխիդ»: Հռիփսիմեն (Հոռոմ-սիմեն)՝ լսելով այս խոսքերը՝ լաց յեղավ և սկսեց ասածուն աղաչել. «Դու ստեղծեցիր ինձ. ուրիշներին մի տար ինձ. այսքան իմ աշխատանքն ու հոգսերն ապարդյուն մի համարիր»: Այս աղերսանքի և աղոթքի մեջն եր [Հռիփսիմեն], յերբ թագավորից ուղարկած բազում այլ և այլ թանկարժեք գործվածքներ, վոսկի, արծաթ, ակներ և մարգարիտներ մատուցին մի մասն որիորդին և մի մասն՝ ուղեկիցներին: Առավել լաց յեղավ Հռիփսիմեն (Հոռոմ-սիմեն), սկսեց գլխին վայ տալ և դիմեց ասածուն լացուկոծով ու աղերսանքով: Չայն լսեց յերկնքից. «Մի վախիր, յես քոնն եմ և դու իմն ես, զորացիր»: Յերկնքի այս ձայնը թագավորն ել լսեց և զորքն ել, և բոլորն յիրեսի վրա վայր ընկան և վոմանք փախան, գնացին ու թագավորին գեկուցին. «Վոչ ձեր ուղարկածը հագավ, և վոչ ել յեկավ ձեզ մոտ»: Թագավորը բարկացավ և հրամայեց. «Գնացեք թրևելով բերեք, քանի վոր հոժարակամ չի գալիս»: Գնացին և ուժով բերին: Յեվ նրա ուղեկիցները լացու-

\* Բնագրում՝ ամբաստան: Հմմ. էջ 89, ծանոթ.:



կոծ բարձրացրին ու սկսեցին գլխին վայ տալ, հողի վրա ընկան և աղաչեցին աստծուն ու ոգնություն խնդրեցին Հիսուս Քրիստոսից. «Ազատիր Հռիփսիմեյին (Հոռոմ-սիմեյին), թագավորություն և բարիքներ չցանկացողին, վորը քեզ ծառայելու յեկավ այս ոտար և անհայտ՝ աղքատ յերկիրը. հզոր և անորեն արքայից ազատիր»։ Տրդատն (Տրդադն) որիորդի մոտ մտավ սենյակը: [Իսկ] ովքեր ել մեջն եյին, դուրս վաճակեցին: Յեվ հարսանյաց ձայները բարձրացրին, սկսվեց գոռում-գոչում և յերգեցողություն ու յերաժըշտական գործիքների ձայնակցություն, ուրախություն և խաղ: Յեվ արքան զգվելու փաթաթվեց որիորդին, ուզում եր համբուրել: Որիորդն յետ քաշվեց: [Թագավորը] նրան բռնեց, դժվարացավ, ինն ժամ մարտնչում եյին: Ոգնականությամբ աստծո թագավորը հոգնեց: Իսկ որիորդը նրան անձնատուր չեղավ: Այնպիսի ուժեղ և անվեհեր մարդն, ինչպիսինն եր, վորպես ամենքը գիտեն, Տըրդատը (Տրդադը), վորից վորքան քաջարի և անվեհեր հզոր մարդիկ են ծեծվել, այժմ Հռիփսիմեյից (Հոռոմ-սիմեյից) նեղվեց աստծո ուժով: Արքան դուրս յելավ և կանչեց որիորդի դայակ Գայանեյին, վորպեսզի սա հանգստացնե որիորդին, վոր ամուսնանա արքայի հետ: Գայանեն գնաց և արքայական ննջարանի դրանը նստեց [և] Փրանկերեն լեզվով սկսեց խոսել որիորդի հետ: Տրդատն (Տրդադն) այնպես եր կարծում, իբր թե հանգստացնում ե իր հետ ամուսնացնելու համար: Իսկ Գայանեն ասում եր նրան (Հռիփսիմեյին). «Յերանի՛ քեզ, վորդյակ Հռիփսիմե (Հոռոմ-սիմե), վոր Հիսուսի վորդի յես հիշվում և ամենասրբունի Մարիամին հյուր ես լինում: Յերանի՛ քեզ, վորդյակ, վոր սրբությամբ սընվեցիր: Յերանի՛ քեզ, վորդյակ, վոր անցողական արքայությունը զիջեցիր և մեծ համբերությամբ թողիր զահ (տախտ) [և] պսակը, հեռացար մերձավորներից ու ազգականներից և չցանկացար այս աշխարհի բարիքները՝ Հիսուս Քրիստոսի համար: Զորացիր, դրախտում Հիսուսից կորհնվես»: Այլպես ել [աստված նրա] լայն սիրտըն ամրացրեց: Թագավորը մի մարդ ունեւր, վորը Փրանկերեն լեզուն գիտեր. ինչ վոր Գայանեն Հռիփսիմեյին (Հոռոմ-սիմեյին) ասում եր, բոլորը լսում եր [և] ամեն ինչ թագավորին զեկուցեց. «Դուք այս կնոջը (Գայանեյին) բերիք, վորպեսզի որիորդին խաղաղացնե. սա ավելի յեվս ամրացրեց նրան»: Թագավորը բարկացավ և դուրս թրևել ու ատամները փշրել տվեց Գայանեյին, վորին ուրիշ տեղ տարան. իսկ թագավորը նորից որիորդի մոտ մտավ և ձեռները ձգեց զգվելու: Բայց որիորդն ինչպես առաջ,

այժմ ել ել ավելի ընդդիմադրում եր. ցերեկվա ինն ժամն անցնելուց հետո մինչև գիշերվա ժամի յերեքը [նրանք] մարտնչում եյին, թագավորի շորերն ամբողջ պատառտեց, մերկացրեց: Ապա որիորդն անցավ դռնով և գնաց այն այգին, ուր կանգ եր առել, բարձր ձայնով իր ուղեկիցներին կանչեց. «Ուրախացեք, սուրբ մայրեր, աստծո ուժով հաղթահարեցինք կարող և հզոր թագավորին»: Նաև շատ ուրիշ սրտառուչ խոսքեր ասաց, և հեռանալով նրանցից՝ մի բարձր ժայռի վրա բարձրացավ և լացուկոծով ու ծնկաչոք սկսեց աստծուն աղաչել: Ինչ վոր նա աստծուն գանգատվեց և խոստովանեց, բոլորի գրի առնելն անհնարին ե: Նա աղաչում եր իր հոգու համար և տակավին ծնկաչոք եր, յերբ թագավորի դահիճներն յեկան և անվայել վերաբերվեցին դեպի Հռիփսիմեն (Հոռոմ-սիմեն), շատ ծեծեցին և քնքույշ ձեռներն ու վոտները մազե պարանով կապեցին և նախ և առաջ լեզուն կտրեցին և մարմնից սքեմը պատառտեցին և յերեսով հողին զարկեցին, չորս տեղ ցից դրին և նրաց վրա ձեռներն ու վոտները կապեցին, շուրջը կրակ վառեցին՝ նրան, ով իր որում վարդի տերեկին անգամ չի դիպել, և [մարմնի] արտաքո մասերն այրեցին: Սրանից ավել ել վոչինչ չեր ասում. «Մարիամի վորդի՛, ոգնիր այս ծանր տանջանքներում կարեկցությամբ առ իմ յերիտասարդությունը: Հոգիս պարզելի՛ր ամենասրբունին՝ ձեր մորը: [Ահեղ] դատաստանի որը կատարվելիք տանջանքը հատուցիր այստեղ»: Այսպիսի բաներ ասաց և վախճանվեց: Մինչ նա հոգին կավանդեր, փորը ճղեցին և աչքերը հանեցին: Հենց վոր հոգին իր տիրոջը հանձնեց, մարմինը պատառ-պատառ արին: Լացով և գլխին վայ տալով յեկան նրա ուղեկիցները: Ուզում եյին սուրբ և նահատակ Հռիփսիմեյի (Հոռոմ-սիմեյի) մասունքը մի տեղ հավաքելին և գերեզմանին հանձնելին. յերեսուն յերկու սուրբ կանայք և անբիծ որիորդներ եյին նրանք: Յեվ սրանց ել զարկեցին: Յեվ մեծ ուրախությամբ նահատակվեցին: Սրանց [ևս] կոտորեցին և սրանց միսը շներին շարտեցին: Յեվ շները վոռնոց սկսեցին ու չմոտեցան, և փախան ու այն քաղաքից հեռացան: Նահատակուհիներն իրենց սքեմով յերեսները հողին ընկած եյին: Մյուս որը դայակ սուրբ Գայանեյին իր յերկու ընկերներով դուրս հանեցին ձախ կողմն [և] ընկերների հետ միասին բազում տանջանքով սրանց ևս նահատակեցին: Սրանցից յերեք քահանա [և] մեկ կին՝ սուրբ Նունեն (Նինոն) փախուստի դիմեցին: Նունեն (Նինոն) գնաց Քարթլի, [ուր] և տարածեց քրիստոնեյությունն և Միհրան (Միրիան) թա-

գավորի յերեք որվա ննջեցյալ վորդուն կենդանացրեց: Նմանապես Նունեյից (Նինոյից) Գորգասալուժյամբ մկրտվեց Վախտանգը (sic): ... [Յեվ] այս[պիսի] հրաշագործությամբ քրիստոնեյացան Գիլանի ծովից սկսած մինչ Ափխազք (Ափխազեթ). Հնավատացին [միմիայն] դիզոնները, [վորոնք] տեղահան յեղան Արմազից (sic) և դեպի Յալբուզի բարձր սարը գնացին և ամուր տեղում բնակվեցին: Յեվ յերբ Տրդատ (Տրդադ) թագավորը խոզ դարձավ՝ սուրբ Հռիփսիմեյին (Հոռոմ-սիմեյին) նահատակելու պատճառով, Գրիգոր Աստվածաբանն (sic)\* Արաքսի (Արազի) ափին [Սոր]~Վիրապի վանքումն եր: Իբրև գերի՝ նրան այնտեղից Տրդատի (Տրդադի) ոգնության Վաղարշապատ (Վաղարշաբաթ) քաղաքը բերին: [Գրիգորը] ձայն տվեց թագավորին, [վորը] խոզ եր դարձած ու տասն և հինգ որ մնում եր իբրև խոզ: Ձղջաց իր գործերը: [Իսկ] Գրիգորը նրան որհնեց, [և] նա (Տրդատը) մարդ դարձավ՝ առաջվանից ավելի լավ, և քրիստոնեյացավ՝ [ինչպես] ինքն, [նույնպես] և նրա [ամբողջ] յերկիրն ու զորքը: [Գրիգորը] վեր յելավ և զեկուցեց թագավորին. «Քանի վոր այսպիսի անարդարացի կերպով կոտորեցիր [այն]՝ աստծուն ծառայելու համար իշխանությունն ու յերկրի բարեքնները զիջող՝ անբիծ սրբերին ու նրանց ուղեկիցներին, պարտ ե քեզ, վոր դու նահատակության ծիսակատարությամբ նրանց հանձնես գերեզմանին և վկայից տաճար կառուցես»: Թագավորին [այս] դուր յեկավ և Հռիփսիմեյին (Հոռոմ-սիմեյին) իր դայակով և ուղեկիցներով հանդերձ իրենց հին սքեմով [հրապարակ հանեցին] ու նրանց թաղման կարգն կատարեցին և նույն հնձանում թաղեցին ու վրայից մենաստան շինեցին, [վորն] այժմ ել կա. [և] յեպիսկոպոսներ և այլ աստիճանավորներ ու ծառաներ նշանակեցին այնտեղ, և շատ գյուղեր շնորհեցին: Յեվ պարտ ե քրիստոնյաներին, ով վոր կարողություն ունենա, նրա (Հռիփսիմեյի) նահատակության որը նրանց (Հռիփսիմեյանց) գերեզմանի մոտ գնա աղոթելու, համբուրե այն և զոհաբերություն անի և վորդորմություն տա: Սակայն [այն որվանից], ինչ մահմեդականները (մուսուրմանները) քրիստոնյաներից իշխանությունը խլեցին, պարագեած գյուղերը խլեցին: Բայց և այնպես, սրանց գերեզմանի վրա քրիստոնյաները գալիս են աղոթելու, և զոհաբերություն են անում, և մոմի ու խնկի գին մոեծում, այնտեղ ապրող վանականներին ու աշխարհականներին, սքեմավորներին և ծառաներին ապրուստ տալիս՝ ով ինչի տեր ել ե...:

\* Ուզում ե ասել՝ Լուսավորիչը: Հմմ. վերև՝ էջ 92, ծան.\*\*:

[9.] ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ (ԲԱԳՐԱՏՈՆՆԵՐԻ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ\*,  
ՎՈՐ ԶԱՅՈՑ (ՍՈՄԵՆՆԵՐԻ) ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ Ե  
ԳՐՎԱԾ. ՆՐԱՆՑ ԳԱԼԸ ՎՐԱՍՏԱՆ

... Յոթն յեղբայրներ Հրեյից սերնդից, վոր յեկան Փիլիստիմացվոց (Փիլիստան) յերկրից Ռաքիելի (Արաքիելի) հետ միասին, փոխեցին իրենց անունները. մեկն անվանեցավ Մուշեղ (Մուշիեղ), յերկրորդը՝ Բագրատ, վորը Բագրատունյաց (Բագրատոնյաց) [նախա]հայրն ե, յերրորդը կոչվեց Աբգար (Ափգար): [Այս Ռաքիելը] մեկին տարավ տան փեսա իրեն մոտ. [իսկ] սրանցից յերկուսին փեսայացրեց հայոց (սոմեխների) թագավորին: Յեվ չորս յեղբայրները գնացին Քարթլի... Գուրամին նշանակեցին իշխան (երիսթավ) և կուրապալատ. սա Մցխեթում [սուրբ] խաչ յեկեղեցու հիմքը դրեց: [Իսկ] մնացած յերեք յեղբայրները գնացին փեսայացան Ներսեսի վորդի Բակուրին<sup>12</sup>...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Փարսազան Գորգիշանիձեյի նկարագրած Հայոց դարձի պատմությունը տարբերվում ե վրացերեն լեզվով վաղուց գոյություն ունեցող համապատասխան աղբյուրներից, վորոնք են՝ «Գրիգոր Պարթևի վկայաբանությունն» ու «Հռիփսիմեյանց վկայաբանությունը» (սրանց մասին տես այս մեր աշխատության Ա. հատորի Գ. գլխի 3-րդ ծանոթությունը, էջ 20—23): Սա փայլուն ապացույց ե նրան, վոր հեղինակը բավականին անտեղյակ և յեղել վրաց հին գրականությանն ու նրա առանձին նշմարներին, իրեն հետաքրքրող մասնավոր հարցերումն անգամ:

2 Վորջան ել առասպելական լինի այն վոճը, վորով Փարսազան Գորգիշանիձեյի նկարագրում ե Հայոց դարձի պատմությունը, մի բան վոր սկզբից և յեթ աչքի յե ընկնում ընթերցողին, այդ՝ այն ե, վոր նա անմիջապես թե միջնորդաբար (հավանական ե յերկրորդը) դտնվում ե, բացի Ագաթանգեղոսից և Պորենացուց, այսպես կոչված «Դաշանց Թղթի» ազգեցության ներքո: Հմմ. Կաբապետ վ. Շահնազարեան, Դաշանց Թուղթ. Քննութիւն և հերքումը, Պարիս 1862:

3 Տես նախորդ ծանոթ.:

4 Պոսրով և Շիրինի զբույցը տես այս աշխատության IV հատորում:

5 Այսինքն 336 + 551 = 887 թ. (?):

6 Այսինքն 464 + 551 = 1015 թ. (?):

\* Բնագրում՝ ամբավի: Հմմ. էջ 89, ծան.:

7 Այսինքն 744 + 551 = 1295 թ. (?):

8 Այսինքն 742 + 551 = 1293 թ. (?):

9 Այս գլուխն ևս, առավել քան նախորդ և հետագա գլուխներն, առասպելի բնույթ է կրում:

10 Այս գլխում նկատվում է Դիոկղետիանոսի կնոջ Պրիսկայի և դստեր Վաղերիայի անցքի նկարագրության ազդեցությունը (Dictionnaire universel et complet des conciles, par l'abbé A. d. Ch. Peltier, Paris 1847, t. II, p. 514), «որոնք հալածուեցան քրիստոնէութիւնը չուրանալու համար, սակայն անոնք ըստ ոմանց տկարացան և կուռքերու զոհեցին» (Մաղափա ա. Ե. Օրմուեան, Ազգապատում, I, 81):

11 Այս գլխում նկատվում է «Յայամաւուրք» գրքում «մեհեկի Ի և փետրվարի ԻԶ» ներքո մուծած հատվածի՝ «Տօն երևման Վարազայ սուրբ նշանին և սքանչելեաց նորին»՝ ազդեցությունը: Տես՝ Յայամաւուրք, Կ. Պոլիս 1834. J. B a y a n, Le Synaxaire Arménienne, Paris 1930, pp. 94—95 (1138—1139):

12 Այս տեղեկությունները կրկնություն են Սմբատ՝ վարդու Դավթի «Բագրատունյաց պատմության» համապատասխան տվյալների, վերոնք կրկնվում են և Քարթլիս-ցխորեբայում (տես այս աշխատության Ա. հատորի յերկրորդ պրակի Ա. գլուխը, էջ 135):

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Գ. Մ Ա Ս Ի Ց

### [ԼԱՆԳ-ԹԵՄՈՒՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ]

... Թավրիզում նստած Թեմուրին լուր հասավ. «Վրացիք մոտեցան Նախիջևանին (Նախչավանին). սուլթան Մահմադի վորդի սուլթան Թահրից Ալինջի բերդը խլեցին և Արաքսի (Արազի) հայնկույս [գտնվող յերկրները] գրավեցին»...

... [Ապա] Թեմուրը գնաց Ղարաբաղ ու ձմեռն այնտեղ անցկացրեց. և գարնանը նրան լուր հասավ, վոր Բագրատ [Վրաց] թագավորը՝ Տփղիսուումն է գտնվում առանց զորքի. աննկատելի կերպով Թեմուր արքան Ղարաբաղից գնաց... [Գրավելով Տփղիսը՝ Թեմուրը] հանվեց քաղաքից, և Բագրատ թագավորին հետն վերցնելով՝ գնաց Ղարաբաղ... [Իսկ] Բագրատ թագավորը Թեմուրի (Թեյմուրի) զրդամբ (հրավերով) մահմեդականացավ (թաթարացավ) Ղարաբաղում...

... Թեմուր արքան իր վորդի Մի[հ]րան-շա[հ]ի հետ խոովեց այն պատճառով, վոր վրացիք սուլթան Թահրից Ալինջի բերդը խլեցին...

... Թեմուր արքան գրավեց Թուրքստանը, Հնդկաստանը, Ռուսաստանը, Ղիչախի դաշտը (դաշտի Ղիչախի), Խորասանը, Ջարուստանը, Խորասանը, Գիլ[ա]ն-Մազանդարանը, Իրան (Երան)-Արազը, Փարսն ու Արաքստանը, Լորստան-Քյուրդստանը, Շիրազն ու Քիրմանն, Ադրբեջանն ու Հայաստանը (Սոմխիթը), Դաղստանն ու Գուրջստանը, Մալաթիայից հայսկույս [գտնվող] Անատոլիայի յերկիրը... [և] յերբ Մալաթիայից հայսկույս [գտնվող յերկիրը] գրավեց՝ Դիարբեքիրով իջավ...

... [Յերբ Թեմուրը գտնվում էր] Բաղդադ քաղաքում, ... Ազրբեջանից լուր ստացավ. «Տասը տարի յե կովում ենք և Ալինջի բերդը չենք կարողացել գրավել. դարձյալ վրացոց ձեռին է այն»: Ջայրացավ Թեմուր արքան և Բաղդադից Թավրիզ յեկավ և չորս

ամսվա հանգիստ տվեց զորքերին Վրաստանի վրա յեխելու համար...

... [Յերբ թեմուրն] յեկավ թավրիդ, նրան զեկուցին. «Արդեն տասը տարի յե, վոր [թաթարաց] զորքն Ալինջի բերդի համար պատերազմ ե մղում և չի կարողանում այն վերցնել. դարձյալ վրացիք ունին այն գրաված»: Այս լուրն արքային վիշտ պատճառեց, և Վրաստանի վրա արշավեց: Յերբ [թեմուր] արքայի արշավանքի մասին Ալինջայում գտնվող վրացիք իմացան, հոժարակամ դատարկեցին բերդը, նաև դատարկեցին Գեղարքունյաց (Գելաքունի) ծովի շրջակայքն ու Անի քաղաքն շրջակա բերդերով, հանվեցին տեղից և գնացին Վրաստան...

Այս տեղից մեծ զորք կանչեցին Յերզնկայի (Երզնգի) յերկրի վրա: Այս կողմերում, ուր քրիստոնյաներ եյին բնակվում, վոմանց կոտորեցին, վոմանց գերի տարան և ավերեցին, և յեկեղեցիներն ու վանքերը քանդեցին, տներն այրեցին, ծառերն ու այգիները կտրատեցին, քաղաքներն ու բերդերն և գյուղերը քանդեցին ու ավերեցին, և ուր ել տղամարդ ընկավ նրանց ձեռը, կոտորեցին և կանանց ու յերեխաներին գերի տարան: Այս այն պատճառով յեղավ, վոր Ալինջի բերդում գտնվող վրացիք նրանց յերկիրն եյին յեկել, արքան խնդրեց [հանձնել այն իրեն] և նրանք մերժեցին ասելով, թե նրանք մեր յերկրումն չեն գտնվում...

Թեմուր արքան Հովհան (Իվանե) աթաբակին և [Վրաց] թագավորի յեղբայր Կոնստանդին զորագլուխ նշանակեց և Սամցխեյից (sic) Ափխազք (Աբխազեթ) կանչեց... Լաշա-Գեորգի (Գիորգի) վորդի Դավիթը... լեռն(աստան)ից հայսկույս [գտնվող] յերկրին մինչ Արաքս (Արազ) գետն ինքը տիրեց...

... [թեմուրը] Քարթլիով անցավ, Տփղիս քաղաքում հյուրասիրվեց Բագրատ թագավորի կողմից և ձիաներին ու զորքին հանգստացրեց, Ղարայագում վորսի յելավ... և այստեղից հանվեց ու վորսով Ղարաբաղ գնաց...

... Արաքս (Արազ) գետից մեծ առու անցկացրին, յերկայնությամբ վեց աղաջ, լայնությամբ տասն հինգ աղլի<sup>2</sup>, խորությամբ տեղ-տեղ յերեք աղլի, տեղտեղ հինգ աղլի և տեղտեղ վեց և ութ աղլի փորեցին, ակունքը պինդ կապեցին, այնպես վոր ծանծաղուտի ժամանակ Արազի ջրի յերրորդ մասին կհավասարվեր: Քառասուն որվա ընթացքում փորեցին...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն Բագրատ V, 1360—1395:

2 Յերկարության չափ եր հին Վրաստանում, հավասար 10,160 մետրին (Իվ. Ջավախիսվիլի, Վրացական նումիզմատիկա-մետրոլոգիան, վրացերեն, Տրփղիս 1925, էջ 134—135):

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Գ. և Դ. Մ Ա Ս Ի Ց

### [XVI—XVII ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... Գասկրի տեր և Աստարայի տեր Մուրադ սուլթանը թալիշի գործով... Աստարայից Շիրվա[ն]ի վրա գնացին և հեշտությամբ վերցրին Բագվի բերդը, նաև գրավեցին Շիրվան-Շամախիան. այստեղից անցան Ղարաբաղ, ուր նրանց առանց պատերազմի ներկայացան այստեղի իշխաններն ու զորապետները. այստեղից [ել] Նախիջևան (Նախչվան) հասան և՛ այստեղի գործն ել հետը վերցնելով՝ գնաց[ին] Թավրիզ...

Շահ-Իսմայելի վորդի Շահ-Թամազն իր հորից հետո թագավոր նստեց քրոնիկոնի 190-ին<sup>1</sup>: [Այս] Շահ-Թամազ ղ'աննը գնաց Ղարաբաղ, ուր տերերից վոմանց փոխեց և վոմանց ել բեգար և խարաջա դրեց, իր անվամբ փող կտրել տվեց վրացիներին, մեսխերին, կախերին և շամախեցոց...

... Լուարսար (Լվարսար) Քարթլիի թագավորը<sup>2</sup> չհանգստացավ, և վոչ ել ընծաներ մատուցեց [Շահ-Թամազին], և ավերում եր Գանձակը (Գանջան), Յերեվանն (Երեվա[ն]ն) ու Շիրվանը...

Շահ-Թամազ ղ'աննն արշավեց Քարթլիի Լուարսար (Լվարսար) թագավորի վրա քրոնիկոնի հարյուր ութսուն ութին<sup>3</sup>. Շահ-Թամազ ղ'աննը գնաց Ղարաբաղ... տասն և յերկու հազար ընտիր ձիով... և ... առանց զգուշացնելու Լուարսարին (Լվարսարին) մուժ գիշերը կանչեց... Մտնելով Տփղիս քաղաքն և՛ [այնտեղ] բերդապան ու բերդապահներ նշանակելով՝ Ղարաբաղ վերադարձավ...

[Շահ-Թամազն] Անիի ճանապարհով գնաց Շորագյալ (Շորեկալ), վորտեղից անցավ Սամցխե...

... Արզրումի բեգլարբեգ Սկանդար-փաշան [քրոնիկոնի 235-ին]<sup>4</sup> յեկել եր... ու Արտանուշի բերդը պատել...

... Շերմազանը, վոր Լուարսար (Լվարսար) թագավորից եր

[կարգված] Լոռի-Փամբակի (Լորի-Փանրագի) տեր, Շահ-Թամազը սպանել տվեց, [և] նրա տեղը՝ Լոռի-Փամբակն (Լորի-Փանրագն) ու Աղջա-ղալան՝ ղ'աննը տվեց Ղվարդ՝ վարեյի (Ղորդ՝ որեյի) վորդի աթաբակ Քայխոսրովին... ապա [ղզլբաշները] Ղարաբաղ վերադարձան, ուր թագավորը ձմեռը [ք]իշլաղ (եշլաղ) եր սարքել...

... Յերբ Լուարսար (Լվարսար) թագավորն Աչաբեթի ամրոցում եր կանգնած, ղ'աննը Գորուց հանվեց և գնաց դեպի Ղարաբաղ...

... Շա[հ]վերդ սուլթանը՝ Գանձակի (Գանջայի) տերը՝ վորը ղ'աննից կուսակալ եր նշանակված... [քրոնիկոնի 240-ին]<sup>5</sup>... Արաքսի (Արազի) հայսկույս [գտնվող] գործերը ժողովեց և յեկավ [Լուարսար] թագավորի դեմ...

[Յերբ Լուարսարի (Լվարսարի) վորդի Սիմեոն (Սվիմոն) թագավորը<sup>6</sup> մտադրվեց Տփղիսը գրավել], այս լուրը Ղարաբաղի աիրոջը հասավ. [և] նա ել Արաքսի (Արազի) հայսկույս [գտնվող] գործերը ժողովեց և ոգնության յեկավ քաղաքին...

... Քրոնիկոնի յերկու հարյուր քառասունին<sup>7</sup>... [Տփղիս] քաղաքի ու Սոմխիթ-Սաբարաթիանոյի թագավորութունը [ղ'աննը Սիմեոնի յեղբայր Դավթին] շնորհեց... իսկ Սիմեոն (Սվիմոն) թագավորը հանգիստ չեր թողնում նրան և... Սոմխիթ-Սաբարաթիանոն ավերում եր և ջանում եր քաղաքը գրավել, սակայն չվերցրեց: Քրոնիկոնի 250-ին<sup>8</sup> Սիմեոն (Սվիմոն) թագավորը գործ ժողովեց՝ Վրաստանի հեծելազորն և հետևակ զորքը, և քաղաքի վրա յեկավ. և այս լուրը Դավթի թագավորին ղեկուցին, և նա ել գործ ժողովեց՝ Սոմխիթ-Քարաթյաններին, քաղաքացիներին և թաթարներին, և իր յեղբոր դեմ գնաց պատերազմելու...

... Մեծ գործով յեկավ Լալա-փաշան և գրավեց Աղբբեջանը, Քյուրդստանն և Յերեվանը (Երվանը), և Նախիջևանը (Նախչևանը), և Ղարաբաղը, և Շիրվանը (Շրվանը), [Տփղիս] քաղաքն ու Գորին, Լոռին (Լորեն) և Աղջա-ղալան, և Ախալցխեն, և մեսխերի յերկիրը, և բոլոր բերդերում պահապան[ներ] նշանակեց...

... [Ապա] յետ կանչվեց Լալա-փաշան, վորը գրաված ուներ Կախքը (Կախեթը), Շիրվանը (Շրվանը), Դաղստանը, Գանձակը (Գանջան) և Աղբբեջանը, Քյուրդստանը, Վանն ու Նախիջևանը (Նախչվանը), Սամցխեն ու Յերեվանը...

... Շահ-Աբաս արքան այն ձմեռը թավրիզում մնաց, գարնանը Յերեվանի (Երեվանի) բերդը պատեց, Գեորգ (Գիորգի) թա-

գավորը<sup>9</sup> Քարթլիի զորքով և Կախքի (Կախեթի) տեր Աղեքսանդրը (Ալեքսանդրեն) զորքով նրան ոգնության հասան:

Գեորգ (Գիորգի) թագավորի և Աղեքսանդր (Ալեքսանդրե) տիրոջ Յերեվանին (Երեվանին) ոգնության հասնելը զորքով: Գեորգ (Գիորգի) թագավորը Քարթլիի զորքով և Կախքի (Կախեթի) տեր Աղեքսանդրը (Ալեքսանդրեն) զորքով ոգնության գնացին Յերեվանին (Երեվանին) և բերդը գրավեցին. և դ'անը վրացիներին և կախերին շատ բաներ ընծայեց:...

... Մեծ գայրույթով և բազում զորքով [Շահ-Աբաս] դ'անը յեկավ Ղարաբաղ...

... Ութսուն հազար ծուխ վրացիներից, հայերից և հրեաներից, նաև իշխաններին և ազնվականներին տեղահան արին և Մազանդարանում տեղավորեցին և վոմանց այլ յերկրները ցրեցին...

... Յերեվանի խանի մի յերամակ (թաբուն) սուլթանը խընդրել եր դ'անից...

... Ղարաբաղի բեգլարբեգն անմիտ և հպարտ մարդ եր...

... Վրացիք, իմերներն (իմերեներն) և կախերը Գանձակը (Գանջան), Պարտավն (Բարդան) ու Ղարաբաղն ավերեցին...

Թեյմուրազ տերը Գանձակ (Գանջա)-Ղարաբաղն ավերեց. Լևոն (Լեվան) Դադյանը (Դադիանը) Ողիշի զորքով, Աղեքսանդր (Ալեքսանդրե) թագավորն Իմերքի (Իմերեթի) զորքով, մեսխերի իշխաններն ու ազնվականները, վրացիք և կախերը՝ բոլորը ժողովեցան և ավերեցին Գանձակ (Գանջա)-Ղարաբաղը մինչ Արաքս (Արազ): Թեյմուրազ-տերը Պարտավումն (Բարդայումն) եր նստած և Գանձասարի հայոց կաթողիկոսը<sup>10</sup> մեծ զորքով և պարզեով Թեյմուրազ տիրոջ մոտ յեկավ և այսպես զեկուցեց. «Խոնթքարն ու դ'անը վոտքի յեն յելել. սրանից լավ ժամանակ այլևս չի կարող լինել յոթնեքյան Վրաստանի զորքերը հետդ ունիս, քառասուն հազար թվանքչի յես կտամ քեզ, սույն զորքով Թավրիզ գնա և յոթնորում Թավրիզն ավերիր... և մինչ վոտեղ ել դ'անը զորք ժողովի, Աղբրեջանի տերերին փոխեցեք, ամեն տեղ ձեզ հյուներին նստացրեք և ինձ ել խոնթքարի մոտ ուղարկեցեք, վորպեսզի նրանից զորք հասցնեմ ձեզ ոգնության: Յեթե դ'անը վոտքի յեղի, կռիվ սկսեք և նրանք վրացիների հետ չեն կարողանա պատերազմել, այն պատճառով, վոր վրացիք փախչելու ճանապարհը հեռու ունեն. իսկ յեթե փախչեն, գիտեն, վոր չեն փրկվի:

նրանց ճանապարհին կհոտորեն. ուրեմն փախչելու միտք վոչոք չի ունենա. նրանք հարկադրված կլինեն պատերազմ սկսել և պայքարել, և հաղթանակը ձեզ կմնա, և իշխանավոր արքաներիդ ել կորհնեք և քրիստոնեյական աշխարհն ել քեզնով կազատվի ու կուժեղանա»:

[Թեյմուրազ]-տերն այս հեռու [տանող խոսքերն] ըմբռնեց և այսպես պատասխանեց. «Դեռ Ղարաբաղն ունիմ գրաված և Շիրվանում իմ հպատակի վորդին ե տիրում. այս ձմեռը կգնամ Քարթլի, խոնթքարին ընծա կուղարկեմ, զորքս կհանգստացնեմ և գարնանն ավելի մեծ զորքով կգամ»: Կաթողիկոսն հասկացավ այս և իր լեզվով ասաց. «Կոկի գուղեո» (sic): Տերը նկատեց, թե ինչ ասաց, ժպտաց և այսպես պատասխանեց. «Քեզ ել և Դաուդխանին ել հետս կտանեմ, Գորի կհամանեմ: Զորքն ընչավետ կհամարի սուլուն»: Վանականը նորից բացահայտ զեկուցեց. «Տավար-վոչխարի համար Դադյանին (Դադիանին) և իմերցոց թագավորին վոր հետդ չբերեյիր, Քարթլիում և Կախքումն (Կախեթումն) ել կզրտնեյիր այդ. և Իրանի (Երանի) արքան միթե այդքան քեզ թույլ կտա, վոր դու այսպիսի զորք կրկին ժողովես: Այսոր-վաղը զորքիդ կվնասեն և տավար-վոչխարի փոխարեն քեզ գերի կտանեն»: Չեղավ, [Թեյմուրազը] վանականին չսեց, Գանձակից (Գանջայից) տեղահան յեղավ, և Դաուդխանին ընտանիքով և նրա ամբողջ իրերով ու կայքով, նաև հայոց կաթողիկոսին ել իր աթոռի վարդով Գորի տարավ<sup>11</sup>... Դաուդխանի յերկմտությունը, Ղաջարների բնաջինջ անելը, Թեյմուրազ-տիրոջ կողմից Գանձակ (Գանջա)-Ղարաբաղի ավերումը, Դաուդխանին Քարթլի տանելը՝ այս բոլորը Շահ-Սեփի-դ'անին զեկուցին:

... Դաուդխանն Իման-դ'ուլի-խանի յեղբայրն եր, դ'անին դավաճանեց, Ղարաբաղն ավերել տվեց և ինքն Ուրում գնաց...

... Ղանի մոտ եյին... մելիք Սադաթը, Սոմխիթի մելիք Աթաբեգն իր յեղբայրներով... Սոմխիթի մելիքին նամակ գրել տվեցին Վրաստանի իշխանների հասցեյին...

... Հրաման ստացվեց դ'անից, վոր սարդարն իր զորքով գնա Վանի բերդի վրա և Շիրվանի բեգլարբեգը Ղարաբաղի զորքով Ռոստոմ թագավորի<sup>12</sup> պահապան կանգնի...

... Զխարում բնակվում եյին հայ վաճառականները...

[Ռոստոմ] թագավորը ժողովեց Սոմխիթի ու Սաբարաթխանոյի զորքերն, և գնաց Գորի...

Սուլթան Մուրադ խոնթքարի գալը և Յերե-

վանի (Երեվանի) բերդի գրավումը քրոնիկոնի 325-ին<sup>13</sup>: Քոնսթ[ա]նդուպոլիսի թագավորը գրավեց Յերեվանը (Երեվանը), հասավ Թավրիզ, ավերեց Ադրբեջանը, և Քյուրդստանի ճանապարհով վերադարձավ: ութերորդ ամսին Շահ-Սեփի-ղ'անն յեկավ և բազում զորքով ու պայքարով Յերեվանը (Երեվանը) կրկին գրավեց, և շատ մարդ կոտորվեց...

... [Ռոստոմ] թագավորը հրամայեց [Տիգրիս] քաղաքի մոտրավին: «Չորքի մեջ կանչիր, ով վոր պատրաստ լինի՝ թաթարներին, վրացոց և հայերին (սոմեխներին)...»:

... Դիասամիձե կաթողիկոսն և Ռեվազ Բարաթաշվիլին ու Սոմխիթի մելիք Ղորխմազ-բեգը բազում սպառնալիքների տակ խաբվեցին...

... Սոմխիթի մելիքը Ղ'աննից վախեցավ և նրա ցանկացածն ու գրած նամակները [Ռոստոմ] թագավորին մատուցեց...

... [Մարիամ] թագուհին... Սոմխիթի Դարբազ գյուղը [Մցխեթի] Ավետի-ցխովելի [տաճարին] նվիրեց...

Այս պահին Բարաթաշվիլի Սիաոշն ու Թումանիսշվիլի Բայանդուրը (Բախնդուրը) իրավացի իրար կպան: Բոլոր որենսդրությանց մեջ ճշմարտապես ընդունված է, վոր թագավորներին չպետք է վիրավորել և պետք է խուսափել նրանց դատելուց, նամանավանդ չպետք է համարձակվել նրանց անվայել բան ասել և նրանց արյան մեջ խառնվել: Քարթլիում վրացիք բազմաթիվ են և հզոր, [իսկ] հայերը (սոմեխները) փոքրաթիվ և անզոր, և նրանցից (հայերից) այսպիսի բան դժվար է սպասել (ասել): ապա թե վոչ վրացիք ուզում են ինչ այս (արքայազնի) արյան [մեղքը] հայու վզին փաթաթել: Այս պատճառով ի վիճակի չեն հայերը (սոմեխները), վոր այլապես՝ յերդումով և հավաստիացումով կլուծվեր [հարցը], և Սիաոշ Բարաթաշվիլին հայտնեց, վոր Թումանիշվիլի Բայանդուրը (Բախնդուրը) հրացանով զարկեց արքայազնին<sup>14</sup>: Նա ասաց՝ հեռացիր: Այս պատճառով դատի կանչեցին Բայանդուրին, և ասածո հրամանով յեղավ դատաստան: Յերկու կողմերն յեվս ըստ իրենց կրոնի ծիսակատարություն արին: Թագավորն ու թաթարները հայերի (սոմեխների) կողմը կանգնեցին և թագուհին ու վրացիները Սիաոշի կողմը կանգնեցին... [Յերբ] Բայանդուրը (Բախնդուրը) սուրը վերցրեց և... Սիաոշի քեթին դարկեց..., թաթարներն ու հայերը բարձրաձայն սկսեցին ազադակել՝ ալմհ, ալմհ<sup>15</sup>...

Քրոնիկոնի 344-ին<sup>16</sup>... Ռոստոմ թագավորը Սպահանի (Իսպահանի) մոտրավությունն ինձ՝ Փարսադանիս՝ տվեց...

[Ապա] Ադրբեջանի վեզիրից չափար յեկավ [հաղորդելու, վոր] Ռոստոմ թագավորը վախճանվել է Գորում և Ադրբեջանի վաչկատուն[ները] գլուխ են բարձրացրել ու Արաքսի (Արազի) ջուրն անցել...

... Սոմխիթի մելիքի յեղբայր Մահմադ-սուլթանին հյուրընկալ (մեհմանդար) կարգեցին և ուղարկեցին իբրև չափար, վոր Թեյմուրազ-տիրոջն առաջնորդե և մեծ պատիվներով Ղ'աննի մոտ գա...

... [Աղեքսանդր (Ալեքսանդր) արքայազնի] քույրը Լոռիի տեր՝ Շահ[ի]վե[ր]դ-խանի հետ ամուսնացավ...

... Գուրիելը հասցրեց Բագրատին Արզրում... Արզրումի փաշան Շիխալի-խանն [եր]...

... Իրանի (Երանի) սարդարը Ղարաբաղումն եր կանգնած [իր] զորքով...

... Մինչ դեսպանը Յերեվան (Երեվան) կհասնե, սուլթան Սուլեյման խոնթաբարը վախճանվեց...

... Գանձակի (Գանջալի) խան Աբաս-Ղուլի-խանը յերբ իշխում եր Կախքում (Կախեթում), նրան հրամայեցին. «Նազարալի-խանի մոտ գնա Տիգրիս»: Յերեկոյան Տիգրիսում հավաքվեցին, և Գուրգի-խանն յերբեմն Քարթլիումն եր լինում և յերբեմն Սոմխիթ-Սաբարաթիանո յեր գնում...

... Ղ'աննի մայրը... Հեղինե (Ելենե) թագուհուն այսպես եր հրամայել... «Այժմ արքան վողորմած է [դեպի քո վորդին], վորին Քարթլիի թագավորությունը շնորհեց, և Կախքը (Կախեթը), և Թուշերին. և Գանձակի (Գանջալի) խանն ու Արաքսի (Արազի) հայնկույս [զտնվող] զորքը ոգնության հասավ»...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն 190 + 1312 = 1502 թ.

2 Այսինքն Լուարսաբ I, 1534—1558:

3 Այսինքն 188 + 1312 = 1500 թ. (sic):

4 Այսինքն 235 + 1312 = 1547 թ.

5 Այսինքն 240 + 1312 = 1552 թ.

6 Այսինքն Սիմեոն I, 1558—1600:

7 Այսինքն 240 + 1312 = 1552 թ.

8 Այսինքն 250 + 1312 = 1562 թ.

9 Այսինքն Գեորգ X, 1600—1605:

10 Նույնը:

11 Հիշատակելով այս դեպքը համաձայն Քարթլի-ցխովելի քրոնիկոնի

Թարգմանութեան, Լեոն իր վերջին աշխատութիւններէից մեկում (տես յետմահու հրատարակութիւնը. Լեո. «Նորջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ», Յերևան 1934, էջ 150) կցում է հետևյալ մեկնարանութիւնը. «Հետաքրքրական, իհարկե, այդ մերժումը չե, այլ այն, վոր Գանձասարի կաթողիկոսն իր հոգևոր պաշտոնին միացրել եր աշխարհական իշխանութեան գահերեցութիւնը: Ուրեմն, պահպանվել եր այդ հին հիմնարկութիւնը (Գանձասարի կաթողիկոսութիւնը. Լ. Մ.-Բ.), թեև այլափոխված, կարկատնած ձևի տակ: Յե՛վ յեթե սկսենք վորոնել այդ վեղարակիր գահերեց իշխանի ստորադրված «վասսալներին», այստեղ կգտնենք ավելի բազմակողմանի ձևափոխումներ, կարկատաններ: Այս բոլորը թելադրում եր միջավայրի այն կերպարանավորումը, վոր ստեղծվել եր անկման և ավերման խուլ շրջանում»:

12 1634—1658 թ. թ.:

18 Այսինքն  $325 + 1312 = 1637$  թ.:

14 Այսինքն Գարթլիի Լուարսաբ արքայազնին՝ 1656 թվին:

15 Այս դեպքի մասին համառոտ տես. С. Какабадзе, Крестьянский вопрос и крестьянские движения в восточной Грузии в XVIII веке, («История классовой борьбы в Закавказьи». Сборник статей. Книга первая, Изд. ЗКУ, 1930, стр. 157):

16 Այսինքն  $344 + 1312 = 1656$  թ.:

## ՈՍՄԱՆՑՈՑ ՔԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Տասն ու յ երկու երորդ թագավոր նստեց [ոսմանցոց յերկրում] յերրորդ սուլթան Մուրադը<sup>1</sup>: Սրա զորքը գրավեց Նախիջևանը (Նախչվանը), Աղբբեջանը, Շիրվանը, Ղարաբաղն և Տփղիսի ու Գորու բերդերը...

Տասն և յոթ երորդ թագավոր նստեց նրա (սուլթան-Ահմադի) յեղբայր սուլթան Մուրադը<sup>2</sup>: Սա գրավեց Յերեվանն ու Բաղդադը...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 1574—1595 թ. թ.:

2 1623—1635 թ. թ.:



ԺԵ.

### ՍՈՒԼԽԱՆ-ՍԱԲԱ ՈՐԲԵԼՅԱՆ (XVII—XVIII Դ.)

„ԲԱՌԱՐԱՆ“, „ՃԱՆԱՊԱՐՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՅԵՎՐՈՊԱ“, „ԳԻՐՔ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԻՔԻ“

Սուլխան Որբելյանը, վորը՝ կուսակրոնություն ընդունելով՝ Սաբա կոչվեցավ և, այդ պատճառով, Սուլխան-Սաբա Որբելյան (Սուլխան-Սաբա Որբելյանի) անունով է հայտնի, վերածնություն շրջանի վրաց հին գրականության ամենանշանավոր դեմքերից մեկն է: Հայտնի չէ բազմակողմանի բեղմնավոր գործունեությունը գրականության զանազան բնագավառներում:

Ծագումով վրաց իշխանական Որբելյան տոհմիցն լինելով (նրա ծննդաբանությունը տես. Գ. Չիտախա. Պիտարեթի և Գուդարեխի տապանաքարերը, վրացերեն, — Bulletin du Musée de Géorgie, III, 1927, էջ 126. Գ. Լեոնիձե, Սուլխան-Սաբա Որբելյան, Գիրք իմաստության կեղծիքի, վրացերեն, Տրփղիս 1928, հավելված), Սուլխան Որբելյանը ծնվել է 1658 թ. և վախճանվել 1725-ին, ուրեմն 67 տարեկան հասակում: Ահավասիկ և նրա ինքնակենսագրությունն յերրորդ դեմքով գրված, վորը կըցված է նրա «Բառարան»-ին, համաձայն Վրաց Պատմա-Ազգագրական ն. ընկերության հավաքածուի № 1658 և Վրաց մեջ գրագիտություն տարածող ն. ընկերության № 1510 ձեռագիրների (տես Սուլխան-Սաբա Որբելյան. Վրացերեն բառարան, պրոֆ. Հովսեփ Դիփշիձեյի և պրոֆ. Ակակ Շանիձեյի խմբագրությամբ, Տփղիս 1928, էջ 477—478, curriculum vitae).

«Գրքիս աշխատասիրողին Սուլխան-Սաբա Որբելյանուն հիշեցեք աղոթքով՝ Արչիլ թագավորի և Գեորգ (Գիորգի) թագավորի ու արքայազն Լևոնի (Լեոնի) մորեղբոր վորդուն, Վրաստանի դատավոր, պատրոն Որբելու վորդուն: Այս թագավորների հրամանով գրվեց այս գիրքը բազում աշխատանքով և հոգսերով, քանի վոր Վրաց (Քարթլի) յերկրում բառարան այլևս չէր

գտնվում և յերեսուն տարում հազիվ կազմեց՝ մեկնաբանություն, քանի վոր աշխարհական եր և ազնվատոհմ և աշխարհիկ գործերից ազատ: Այն պահին քրոնիկոնի\* 1658 եր: Սրանից հետո կուսակրոն (մոնազոն) դարձավ և Գարեսջի բազմալեռանց սուրբ [Հովհաննու] Մկրտչի վանքը մտավ, քրոնիկոնի 1698 մարտի 18-ին յեղավ կուսակրոն (մոնազոն): Քրոնիկոնի 1710 դեկտեմբերի 1-ին գնաց Խորասան (Խվարասան) Քայխուրո թագավորի հրավերով, և փետրվարի 20-ին յետ ճանապարհ գցեցին բազում ընծաներով, մայիսի 11-ին յեկավ Քարթլի: Քրոնիկոնի 1712 ապրիլի 23-ին Վախտանգ թագավորի հետ միասին Սպահան գնաց, նոյեմբերի 2-ին յետ ուղարկեց, դեկտեմբերի 20-ին յեկավ Քարթլի: Քրոնիկոնի 1713 ոգոստոսի 17-ին փախավ Փրանգստան, տեսավ Ֆրանսիա, Ճենովա, Սիկիլիա. Ֆրանսիական թագավորը, Հոմի պապն և մեծ դուքսը (գրանդուկան) շատ լավ ընդունեցին. բոլոր մարդիկ զարմացան: Ինչ վոր նրանց յերկրներում հազվագյուտ և թանկագին բան կար տեսնելու, բոլորը ցույց տվին: Սրբազան (սուրբ) պապը սուրբ խաչի մասը, սուրբ նահատակ Կղեմեսի (Կլեմենտոզի) գլուխն և շատ ուրիշ մասունքներ ընծայեց, ոգոստոսի 18-ին ճանապարհ գցեց: Ճանապարհին սուրբ տանն ու շատ սուրբ տեղերին ուխտ յեղավ: Հոկտեմբերի 20-ին հասավ Մալթա: Դեկտեմբերի 8-ին Ֆրանսիական թագավորի նախն յեկավ, ճանապարհ ընկավ: Քրոնիկոնի 1715 հունվարի 19-ին յեկավ Կոստանդնուպոլիս: Մի տարով այնտեղ ուշացավ. Ֆրանսիական դեսպանատանն եր իջել ամենայն աջակցությամբ:

«Այնտեղ սկսեց [արտա]գրել բառարանն ոգոստոսի տասին և քրոնիկոնի 1716 հունվարի քսանին ավարտեց»:

Այլ ձեռագիրներում կան, ի միջի այլոց, և հետևյալ լրացուցիչ տվյալներ (ibid., 478).

«Ծնվել է Սուլխան-Սաբա Որբելյանը վրաց 348 քրոնիկոնին [= 1658] հոկտեմբերի 24-ին, յերբ լատինացվոց չորս նոյեմբերն է[ր], կիրակի որը, կես գիշերվա պահին»:

«Սաբան վախճանվեց Քրիստոսի 1725 [թվի] հունվարի 26-ին մեծն Մոսկվայում, Սեսենցկայում, Արչիլ թագավորի պալատում և նույն [պալատի] յեկեղեցում թաղվեց Դարեջան արքայադստեր հրամանով և շատ ծախքերով և հուղարկավորություն և մեծ պատվով»:

\* Այստեղ և ստորև քրոնիկոնը պետք է հասկանալ իբրև թվական Ք. Մ.-ից հաշված:

Որբելյանի կենսագրութիւնից առանձնապես հետաքրքիր են նաև տեղեկութիւններ, վորոնք սփռած են ուրիշ հիշատակարաններում. 1. վոր նա կուսակրոնութիւնն է ընդունել կրկնակի ամուսնութիւնից հետո. 2. վոր նա կաթողիկոսութիւնն է ընդունել Յեվրոպա յեղած ժամանակ, իսկ ըստ Մ. Թամարաշվիլու (Histoire du catholicisme en Géorgie etc., վրացերէն, Տփղիս 1902, էջ 311—347), նոյնիսկ մինչ Յեվրոպա գնալը. 3. վոր նրա ճանապարհորդութիւնը դեպի Յեվրոպա վոչ թե փախուստ է յեղել, այլ դեսպանութիւն քաղաքական նպատակով պապական միսիոներներին ուղեկցութեամբ, յերբ նա քանիցս ներկայացել է Հռոմի պապին, Լյուդովիկոս XIV-ին՝ Վերսալում (1714 թ. մայիսին), յերբ առիթ ունեցավ ծանոթանալու հռչակավոր առակախոս Լաֆոնտենի հետ, և յն:

Որբելյանի գրեթե բոլոր յերկերում մենք այսպես թե այնպես տվյալներ ենք գտնում Հայաստանի և հայերի մասին:

Այս յերկերն են.

1. «Վրացերէն բառարան». ա. հրատ. Ռ. Երիսթավի խմբ., Տփղիս 1884. բ. հրատ. Հ. Ղիփշիձեյի և Ա. Շանիձեյի խմբ., Տփղ. 1928.

2. «Ճանապարհորդութիւնն դեպի Յեվրոպա», հրատ. «Ցիւկարի» հանդիսի 1852 թ., հունվար (№ 1), էջ 1—16, փետրվար (№ 2), էջ 17—31, մարտ (№ 3), էջ 32—65, ապրիլ (№ 4), էջ 45—81 (թերի): Բացի դրանից, մեր տրամադրութեան տակ եր Տփղիսի պետ. համալսարանի զնած նորագյուտ ձեռագիրն, ուր, ի միջի այլոց, գետեղված է այս «Ճանապարհորդութեան» տեկստն ավելի ընդարձակ, քան 1852 թվին հրատարակածը, հետևյալ վերնագրով. «Հանուն հոր և վորդվո և հոգույն սրբո. Սաբա-Որբելյանի վերադարձը Ֆրանսիայից և մուտքն Իտալիա 1711 (sic.) թվի հունիսի տասնհինգին»:

3. «Գիրք իմաստութեան կեղծիքի»\*, ա. հրատ. ՍՊԲ 1857. բ. հրատ. Պ. Ումիկաշվիլու խմբ., Տփղ. 1871. գ. հրատ. (ընտիր առակներ), Ստ. Չարափովի, Տփղ. 1874. դ. հրատ. Գ. Չարկվիանի և ընկ., Տփղ. 1881. ե. հրատ. Ն. Մթվարելիշվիլու խմբ., Տփղ. 1892. զ. հրատ. Գ. Լեոնիձեյի խմբ., Տփղ. 1928: Բացի դրանից, կան թարգմանութիւններ. ո ու ս եր են՝ Книга мудрости и лжи (Грузинские басни и сказки

\* Յեզ վոչ թե «Իմաստութեան և կեղծիքի», ուս. мудрости и лжи:

XVII—XVIII стол.) Саввы-Сулхана Орбелиани. Перевод и объяснения Ал. Цагарели. Спб. 1878. ա ն գ լ ի եր են՝ The Book of Wisdom and Lies, a Georgian Handbook of the Eighteenth Century, by Sul Khan-Saba Orbeliani, translated with notes by Oliver Wardrop. Printed by Wil. Morris at the Kelmscott Press, 14, 1895. գ եր մ ա ն եր են՝ Die Weisheit der Lüge. Gesprochen von Sulchan-Saba Orbeliani. Übersetzt aus dem Georgischen von Prof. Dr. M. von Tseretheli. Einleitung von Dr. Surab Awalischwili.

Առաջինում մեզ համար հատկապես հետաքրքիր է «կտակագրութիւնը» (անդերձ-նամակի), այսինքն առջաբանը, ուր հեղինակը խոսում է ոգտագործած աղբյուրների մասին, ապա՝ բուն բառարանում մի շարք բառեր, վորոնք Հայաստանին և հայերին են վերաբերում: Իսկ յերկրորդում ուշագրավ է հեղինակի տպավորութիւններն Յեվրոպայում (Հալիկոնիայում, Հռոմում, Կ. Պոլսում) գտնվող հայերի մասին: «Բառարան»-ից քաղած տեղեկութիւններն առաջ ենք բերում համաձայն 1928 թ. հրատարակութեան, իսկ «Ճանապարհորդութիւն»-ից քաղածը՝ համաձայն 1852 թ. հրատարակութեան և վերոհիշյալ նորագյուտ ձեռագրի: Ինչ վերաբերում է «Իմաստութեան կեղծիքի» գրքից հանած առակին (№ 99. Գլխատապակներ), այդպիսին մենք տանում ենք այս աշխատութեան IV հատորը, գեղարվեստական գրականութեան բաժինը\*:

Ա. Բ Ա Ռ Ա Ր Ա Ն Ի Ց

[ԲԱՌԱՐԱՆԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ]

Յես, Սուլխան-Սաբա Որբելյանս, պատանեկութեան և ջահելութեանս պահին, շատ աշխատանք թափեցի այս գրքի վրա, քանի վոր վրացերէն լեզվով բառարան այլևս չկար [և] քանի վոր

\* Որբելյանի բազմաթիվ յերկերից հիշատակելի յե նաև Քիլիա և Դամասկի չափածո թարգմանութիւնը, վորը մինչ այդ սկսել էր Կաթիլի թագավոր Դավիթը (վախճ. 1604 թ.) և ապա շարունակել, Վախտանգ VI թագավորի հրամանով, վո՞ն պարսիկ և ավարտել վո՞մն հայ՝ Սպահանում: Որբելյանի թարգմանութիւնը 1839 թ. կրճատել է վո՞ն Մելիքզադ Աշխարհբեգի Բերութովը (Е. Такайшвили, Описание рукописей «Общества распространения грамотности среди грузинского населения», т. I, стр. 347).

այն, վորին Վախտանգ հինգերորդ թագավորը վրացերեն բառափունջ (սիտղ՝վիս-կոնա) կոչեց, ժամանակի ընթացքում անհետացել եր: Քանի վոր այս պատվական գիրքը կորել եր, վրացերեն լեզուն [ել] ըստ իրենց քմահաճույքի այլանդակել էյին. [ապա] Վախտանգ թագավորի քեռին՝ Գեորգ (Գիորգի) թագավորը հրամայեց ինձ ձեռնարկել սրան. և յես մի փոքրիկ բառարան տեսա, վորը նրանց (հայերեն) լեզվով բառգիրք ե կոչվում<sup>1</sup>, և յես ել նրանց որինակով ձեռնարկեցի [սրան] և կազմեցի, վորքան ել ուժս ներում եր...

... Աշխատեցի, վորքան ել ուժս ներում եր, [ոգտվել] հելլեն, լաթին, հայերեն (սոմխուրի), ռուսերեն և արաբերեն գրքերից և քաղվածքներ անել այնտեղից...

## ՁԱՆԱԶԱՆ ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազրուժ—Կարնո-քաղաք (Կարնու-քալաքի):

Արազ գետի ափունքը—(°)\*:

Արմենիա (ոտար)—յերբայերեն Արարատ:

Բարթոլոմեոս (Բարթոլոմե)—առաքյալ Գալիլեյեցի. Հնդկաստանում եր, Քրիստոս քարոզեց. յեկավ Հայք (Սոմխիթ), և այնտեղ հայերը (սոմխիները) նրանից՝ կենդանուց՝ կաշին պլոկեցին<sup>2</sup>. Նրա մարմինը Ջերիփա կղզում եր և ապա Բենվենթոս քաղաքում, իսկ հետո յերրորդ անգամ Ոտոն (sic) կայսրը Հոռոմ տարավ:

Բիթլիս—(°):

Յեփրատ (Եփրատ) գետը—(°):

Յերզնկա (Երզնիս) —(°):

Թոն[ն]դրակեցի (Թողրակեի)—առանց քաղվելու չարություն անող. «սիրում են թոն[ն]դրակեցությունը (Թողրակեի) առավել քան լավությունը». «Թոն[ն]դրակեցի (Թողրակեի) լինի թե՛ աղանդավոր» — Կանոնագիրք:

Կարնո-քաղաք (Կարնու-քալաքի)—Ազրում:

Նվիրակ (նիվիրակի || նիրակի) յերկունս ել հայերեն (սոմ-

խուրի) են, նվիրակ կոչվում ե գործակալը (+ Ֆրանկերեն նու[ն]ցա)\*:

Նվիրակ\*\* — վարդապետ (նիրակթմոձղուարի) —(°)<sup>3</sup>:

Սոմեխ (սոմեխի)—հայկազն (հոսսիանի) (3,38 Յեսայա):

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ի նկատի ունի XVII դարու վերջերում գոյություն ունեցող մի ինչ վոր «բառգիրք» հայերեն լեզվով հավանական ե ձեռագիր որինակներից մեկը, կամ Յերեմիա վարդապետի «Բառգիրք Հայոց»-ը (տպ. Յալիսոնայ 1698): Համաձայն դոց. Իլիա Աբուլաձեյի անտիպ հետազոտության, Ս. Որբեյանն, ի միջի այլոց, ոգտագործել ե նաև 1686 թ. Ամստերդամում հրատարակած Աստվածաշնչին կցված «Ցանգ մատենական»-ը (եջ 774—829):

2 Իպպոդիս Հոռոմի պապը (II—III դ.) իր հատուկ գրվածքում Περι τῶν εἰς ἀποστολῶν (Migne, Patrologiae cursus completus, series graeca, t. X, col. 952), գրում ե. «Բարթոլոմեոս առաքյալը՝ քարոզելով հնդկաց մեջ և տալով նրանց Մատթեոսի ավետարանը՝ գլխիվայր խաչեցավ և թաղվեց Ալանում, վորը մեծ Հայքումս ե: Նույնը կրկնվում ե Իպպոդիսի գրության վրացական վերսիայում (տես Տիգրիսի ն. Յեկեղեցական Թանգարանի հավաքածուի № 445 ձեռագիրը, եջ 316 V—317 ռ). «Բարթոլոմեոսը (Բարթոլոմեոս) հնդկաց քարոզեց, վորոնց տվեց Մատթեոսի ավետարանը, և գնաց Հայքի (Սոմխիթի) և Ալանաց (Ալանեթի) կողմերն ու խաչեցավ գլխիվայր և թաղվեց Հայքի (Սոմխիթի) Ալվանում: Հետագա հեղինակները, որ. Իոռոբեոս Տյուրացի (VI դ.), Սոփրոնիոս Յերուսաղեմացի (VII դ.) և Նիկիսա Պաժլագնեցի (IX դ.) համապատասխան գրվածքներում նույն հարցի շուրջը կրկնում են Իպպոդիսոսի խոսքերը միմիայն այն տարբերությամբ, վոր Բարթոլոմեոսի թաղման տեղն անվանում են «Քորթոնոպոլիս» (Κορθονόπολις), «Ալբանոպոլիս» (Ἀλβανοπόλις), «Ուրբանոպոլիս» (Ουρβανοπόλις), ևյն: Մասնավորապես, Իոռոբեոսի գրության վրացական վերսիայում (տես Տիգրիսի ն. Յեկեղեցական Թանգարանի հավաքածուի № 95 ձեռագիրը, եջ 162) կարդում ենք. «Բարթոլոմեոս (Բարթոլոմե) առաքյալը Հնդկաստանում ընտրյալներին առատ քարոզեց Քրիստոս և տվեց նրանց Մատթեոսի ավետարանը և ննջեց մեծ Հայքի (Սոմխիթի) Ուրբանա քաղաքում: Հայ մատենագրության մեջ տես. Մ. Խոսեմացի Պատմությունն (Տիգ. 1913, եջ 31) և պատասխանը Սահակ Արծրունու թղթին (Մովսիսի Խորենացույ Մատենագրութիւնք, Վեն. 1865, եջ 295), Հայամավուրդը (Մ. Վ. Ազգեեան, Լիակատար վարք և վկայարանությունք սրբոց, հատ. Թ. Վեն. 1813, եջ 441. Ղ. Ալիսան, Սոփերք Հայկականք, հ. ԺԹ, Վեն. 1854, եջ 26). նաև՝ Միսայել Ասուրի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ 1871, եջ 101—Մանրամասնությունները. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, I, Վեն. 1785, եջ 298, 586. Ղ. Իննիսեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց,

\* Հարցական նշան ենք դնում այստեղ և ստորև, յերբ բառին կից չկա նրա մեկնությունը:

\* Բնագրում նույն (sic).

\*\* Բնագրում նվիրակաց:

Վեն. 1822, էջ 509—510. Գ. Սրուանձեան, Համով-հոտով, 1904, էջ 95—96. Մ. Օրմանեան, Ազգապատում, I, Կ. Պոլիս 1912, էջ 29, § 10:

8 Թոսքը եղմիածնական նվիրականութանն է վերաբերում, վորի մասին հետագայում գրում է և Անտոն Ա. Կաթողիկոսն իր «Հակահառության» մեջ (տես ՎՄԳամետղ՝վելեբա, վրացերեն, Պ. Կարբելովի խմբ., Տփղ. 1892, էջ 596):

## Բ. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԻՑ

### [ՀԱՅԵՐԸ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ]

#### [1.] ՀԱԼԻԿՈՒՆԻԱ

...[Այստեղ] տեսա՝ կապանքներում ձգած չորսի չափ վրացի (քարթվելի) քաղաքացիներ էյին, մեկ տերտեր (տերտերա), [և] յերեք ուրիշներ. ինձ գովեցին մի հայոց (սոմեխի) յեկեղեցի, վորը սակայն՝ չտեսա ...

#### [2.] ՀՈՌՄ

[1714 թ.] հուլիս ամսվա 30-ին նրանց (լաթինացվոց) տոմարով ոգոստոսի տասն եր, սուրբ Լավրենտիոս (Լավրենտի) սարկավազի տոնը. նախ ինձ տարան ցույց տալու [նրա վանքը], և նրա տներն ու յեկեղեցին տեսանք, պատարագն այնտեղ լսեցինք. այնտեղ դաստիարակվում են հույների (բերձենների) և հայերի (սոմեխների) վորդիք՝ պապի հաշվին, վորոնք փախչելով էյին յեկեղ կամ նեղն ընկած լինելով. յերիտասարդ տղաները մեր այցելության պահին քառասունի [չափ] էյին: ...

Ոգոստոս ամսվա 4-ին ... զնացինք Մարիամ Յեզիպտացվո յեկեղեցին. ասում էյին փոքր է, սակայն հին էր և լավ կառուցված. հայերից (սոմեխներից) ովքեր վոր գալիս են [Հոմ], այնտեղ են իջնում, այնտեղ են սնունդ ստանում (խմում և ուտում), ովքեր մեռնում են, այնտեղ են թաղվում: [Այնտեղ] նկարած է Գրիգոր Պարթևն ու նրա տանջանքները: ...

Ոգոստոս ամսվա 8-ին ... Ճաշից հետո զնացինք այնտեղ, ուր պապի հաշվին դաստիարակվում են հույն (բերձեն), հայ (սոմեխ) և արաբ տղաները, նաև ուրիշները՝ [եթիովպացի], լաթին (\*), ռուս, յեզիպտացի, գերմանացի (նեմսա), բոսնացի (բոշնաղ), պարսիկ, յեբրայացի, թուրք, ասորի ևն ...

Ոգոստոս ամսվա 9-ին զնացինք մի տեղ, ուր կարդինախներից մեկը վանք էր կառուցել. յեկեղեցին փոքր էր, ուր յերկու

քահանա կար. քանի աղքատ և վոնդված լութերան կար, կամ հայ (սոմեխ), թե ասորի, վորքան էլ աղանդավոր կգար, [բոլորին] այստեղ էյին պահում, ուտեցնում-խմեցնում (խմեցնում-ուտեցնում), հազցնում, կրոն սովորեցնում ու արձակում<sup>3</sup>: Քառասուն մեկ տարի յե, ինչ շինել էյին, յերեք հազար չորս հարյուր ինըսուն և ութ հոգի յեն [կաթողիկ] դարձրել և Գրիստոսին նվիրել. իմ այցելության պահին վաթսունի չափ էյին, բայց բոլորին չտեսա, վոմանք դրսումն էյին...

#### [3.] Կ. ՊՈԼԻՍ

Հարկատու յեն տասնևհինգ տարեկանից մինչ վաթսուն տարեկանը.—

Հ ու յ ն (բերձեն)՝ քառասուն յերեք հազար.

Հ ա յ (սոմեխ)՝ տասն և յոթ հազար.

Հ ր ե ա յ՝ տասն և յերկու հազար.

Ֆ ր ա ն կ ամբողջն՝ յերկու հազար.

Ք ր ի ս տ ո ն յ ա յեկվորները՝ չորս հազար.

Գ Ե ր ի տաժանակիր\* և այլ՝ յերկու հազար.

Թ ու ր ք (թաթար) [ամբողջը]՝ չորս հարյուր յոթանասուն և հինգ հազար.

Ֆ ր ա ն կ Ե ր ն և Թ ու ր ք Ե ր ք (թաթարները) հարկ չեն վճարում...

\* Բնագրում՝ «կատարդի»-ի, այսինքն капога.

ՎԱԽՏԱՆԳ VI (XVII—XVIII Դ. Դ.)

ՈՐԵՆՍԳԻՐՔԸ

Լևոն (Լեվան) Վրաց (Քարթլիի) թագավորի վորդի՝ Վախտանգ արքայազնը պատվավոր տեղ ունի գլխաված վրաց գրականության մեջ իբրև բանաստեղծ. բայց համեմատաբար ավելի մեծ է նրա հուշակն իբրև «մեկենասի», վորի ձեռներեցությամբ 1709 թ. կազմակերպվեց առաջին տպարանը Վրաստանում և ամբողջ Այսրկովկասում (ուրեմն 67 տարով առաջ քան Սիմեոն կաթողիկոսի հիմնածն Եջմիածնում)՝ Տիդիսում, ուր, ի թիվս բազմաթիվ գրքերի (մեծ մասամբ յեկեղեցական), 1712 թվին արտադրվեց *Շոթա Ռուսթավեցու* (Ռուսթավելու) «Ընձենավոր»-ի կամ, ուղիղ, «Վագրենավոր»-ի անդրանիկ հրատարակությունն իր իսկ խմբագրությամբ, վորը մինչ որս չի կորցրել գիտական նշանակությունը: Նրա պատվերով թարգմանվեց պարսկերենից «Քիլիլա և Դամանա»-ն (վորն ի վերջո գլուխ բերեց Սուլիսան-Սաբա Որբելյանն), և մի շարք այլ յերկեր ու բառարաններ. խմբագրվեց հսկայական՝ «Քարթլիս-ցխորերա» կոչված Վրաց տարեգրությունն և, վերջապես, կազմվեց 7 զանազան որենագրքերից ժողոված «Վրաց Որենագիրք»-ը:

Ծնված լինելով 1675 թվին, Վախտանգ արքայազնն իր հոր՝ Լևոն (Լեվան) թագավորի Պարսկաստան լինելու պատճառով 1703—1712 կառավարում էր Վրաստանը. և հենց այս ժամանակաշրջանին է պատկանում ամբողջ այն շինարարական գործունեությունը, վորը՝ նրա անվան հետ կապելով՝ ամենայն մանրամասնությամբ նկարագրած ունին հետագա վրաց պատմիչները՝ Վախուշտն (Քարթլիս-Ցխովրերա, II, 70—73 = M. Brosset, Histoire de la Géorgie, II, p. p. 99—104) ու Սեխնիա Չխեիձեն (Ք. Ց., II, 323), վորոնք, ի միջի այլոց, շեշտում են և նրա «հոգսերը» Քարթլիում ջրաբաշխութիւնը զարգացնելու նկատմամբ

(Առելյոյի և Ղարայազի շրջաններում շինած առուները նրա անունով կոչվում էյին «Վախտանգի առուներ») \*; 1712—1719 թ. թ. միջոցին նա ապրում էր Պարսկաստանում (Սպահան, Քիրման)՝ ստանձնելով 1716 թվից Իրանի սպասալարի պաշտոնը, վորին միաժամանակ շնորհված էր Թավրիզն ու Պարտավը: 1719—1724 թ. թ. նա կրկին կառավարում էր Քարթլին իբրև Վախտանգ VI թագավոր, 1724-ին ամբողջ ընտանիքով և բազմաթիվ շքախմբով ու ուղեկիցներով քաշվեց Ռուսաստան, ուր բնակվում էր յերբեմն Մոսկվայում և յերբեմն Պետերբուրգում, իսկ վերջերն Աստրախանում, ուր և վախճանվեց 1737 թվին. թաղված է նույն քաղաքում՝ ռուսաց մայր յեկեղեցում:

Վախտանգ VI-ի գրական ժառանգությունից առայժմ հրատարակված են, բացի «Վագրենավոր»-ի խմբագրությունից, «Քարթլիս-Ցխորերա»-ն (հրատ. Մ. Բրոսե, ՍՊԲ. 1849 = Ֆրանսերեն թարգմ. M. Brosset, Histoire de la Géorgie, t. I, SPB, 1849—1850), «Վախտանգ արքայազնի որենագրություն» կոչվածը (Դ. Չուբինովի «Վրացերեն Քրեստոմատիա», ա. հրատ. ՍՊԲ 1846, էջ 394—455) \*\* և Պարսկերեն-վրացերեն բառարանային նյութերը (տես Յուրի Մառի և Կ. Դոնդուալի հոդվածները ժողովածուում. Etudes persanes-géorgiennes. I. Publication du Commissariat de l'Instruction Publique de la République Géorgienne de l'Union Soviétique. Leningrad 1926):

Վախտանգ VI-ի ձեռներեցությամբ թարգմանած գործերից մեզ համար հատկապես հետաքրքիր է այսպես կոչված «Հայոց որենագրությունը», վորն իսկապես 2 մասից է բաղկացած, ընդամենը 451 հոդվածով, վորոնցից առաջինը՝ 1—150 հոդվածները՝ «Ասորա-Հոռմեյական Դատաստանագրքի» թարգմանությունն է հայերենից (Ներսես-Լամբրոնյան խմբագրությամբ), իսկ յերկրորդը՝ 151—451 հոդվածները՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ի:

Այս գործն է, վոր մենք հրատարակեցինք 1927 թվին հետևյալ ընդարձակ վերնագրով. Corpus juris armeniaci. Versio Georgica jussu regis Wachtangi VI facta. Edidit Leo Melikset-

\* Հմմ. մեր այս աշխատության I հատորի ա. գլխի 6-րդ ծանոթությունը (էջ 14):

\*\* Տես այս «Որենագրության» նոր լույս տեսած ֆրանսերեն թարգմանությունը՝ Joseph Karst, Code Géorgien du roi Vakhtang VI [«Corpus juris Ibero-Caucasici I, 1, 2], Strasbourg 1934, 1935:

Be k [«Monumenta georgica». Leges. № 2], sumptibus universita-  
tis Tphilisiensis, Tphilis 1927=I. *Օրէնք* [յաղթող] թագաւո-  
րաց քրիստոնէից Կոստանդիանոսի, Թէոդոսի եւ Լեւոնի՝ թագաւո-  
րաց Հռովմայեցւոց [եջք 3—41]. II. *Մխիթարայ Գօշի Դատաս-  
տանագիրք* Հայոց [եջք 42—156]. Ի հայերէն բնագրաց համա-  
հաւաքեալ և ի բարբառ վրաց հանդերձ այլայլութեամբք վերա-  
ծեալ յաւուրս արքայորդւոյն Վրաց Վախթանգայ և հրամանաւ  
նորին ի միջոցի 1703 և 1711 ամաց տն. ի լոյս էած Լեւոն Մե-  
լիքսեթ-Բէկ: Արդեամբք Համայարանին Հանրապետականի  
Վրաց որ ի Տփղիս ի թուին Հայոց ՌՅՀԶ և ի Մ. Ք. 1927 (տես  
եջ XIV):

Համաձայն Ե. Թաղ՝ այլ վիճակ (Описание рукописей, т.  
II, стр. 615) և մեր հետազոտութեան, «Հայոց Որենսդրութիւնը»  
թարգմանված պիտի լինի հայերենից վրացերէն 1703—1711 թ. թ.:  
Այս դրույթի հետ համաձայն եւ Ի վ. Ջավախիշվիլին (Վրաց  
իրավունքի պատմութիւնը, վրացերէն, գ. I, Տփղ. 1928, էջ 121).  
մինչդեռ Ս. Կակաբաձեան մեր վերոհիշյալ աշխատութեան մասին  
գրած գրախոսականում (տես նրա ժողովածուն. Recueil historique,  
վրացերէն, II, Տփղ. 1928 էջ 131—132, հատկապես 132, ծան. 1)  
ջանում եւ ճշտել հիշյալ թվերը, վերագրելով այդ աշխատանքը  
1706-ի մոտերքին:

Վախտանգայն «Որենսգրք»-ից և մասնավորապես «Հայոց  
որենսդրութիւն»-ից քաղած տեղեկութիւնները մենք ստորև  
առաջ ենք բերում համաձայն Վրաց մեջ գրագիտութիւն տարա-  
ծող ն. ընկերութեան հավաքածուի № 3683 ձեռագրի, վորը հիմք  
ե ծառայել 1927 թվի մեր հրատարակութեան, մասամբ նաև  
№ 107 բ. ձեռագրի (տես մեր հրատարակութեան IX—X և 3, 100  
էջերը):

\* Այս աշխատութեան առաջաբանում տրված է, ի միջի այլոց, մանրա-  
մասն քիբրիոգրաֆիա Վախտանգ VI-ի «Վրաց Որենսգրքի» առանձին հատ-  
վածների հրատարակութեան, վոր կատարվել է զանազան ժամանակ զանա-  
զան անձանց ձեռքով, այն է՝ այսպես կոչված «Գեորգ Պայծառի», «Բեքա և  
Աղբուղայի», «Կաթողիկոսական» և «Վախտանգ VI-ի», ներառյալ և մեր հրա-  
տարակած «Հայոց»-ը (ուրեմն ընդամենը 5), մինչդեռ մնացած յերկուսն, այն  
է՝ այսպես կոչված «Մովսիսական» և «Հունական»-ը, դեռ հրատարակված չեն:  
Ամբողջական «Որենսգրքի» ուսական թարգմանութիւնը հրատարակվել է  
յերկու անգամ. Сборник законов грузинского царя Вахтанга VI, ա. հրատ-  
կառավարիչ Սենատի, ՍՊԲ 1828 թ., բ. հրատ. Ա. Փրեմիկի և Դ. Բաբաձեյի  
խմբագրութեամբ, Տփղիս 1870 թ.:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

«Վախտանգին» միտք հղացավ և նա ջանաց ի մի ժողովել  
որինաց բոլոր գրքերը, վորոնք ժամանակի ընթացքում ցրված  
էին այլ թագավորութիւններում կամ Քարթլիում: Յեվ այսպես  
նա փնտոց, գտավ և ձեռք բերեց՝ շատերին հարկադրելով այն  
և բազում աշխատանքով ստացավ [պատվիրածը] ... Յերրորդ [հեր-  
թին] <sup>1</sup> Մեծ Հայքի (Սոմխիթի) հովվապետ՝ Գրիգոր Լուսավոր-  
չի դամբան Եջմիածնից բերել տվեց՝ հայոց (սոմեխների) թա-  
գավորների դատաստանագրքերն, և այնտեղից թարգմանել տվեց  
լրիվ և առանց հապավման» (որենսգրքի ներածութիւնը):

«Հայոց (սոմեխների) որենսդրութիւնը փոխադրված է հենց  
այն լեզվից Վախտանգ վեցերորդ վրաց (քարթվեղների) թագա-  
վորի որոք և տրված է նրանից վրաց (քարթվել) ժողովրդին  
նրա՝ արքայազն և Քարթլիի կառավարիչ յեղած ժամանակ, 1703 և  
1711 թվականներ ի միջոցին» (հայոց որենսդրութեան վերնագիրն,  
ըստ № 107 բ. ձեռագրի):

«Ցանկացանք դատաստանաց գիրք գրել. նախ աստվածաշն-  
չից Մովսիսի սահմանած որենքներն, ապա հունաց (բերձենների)  
և հայոց (սոմեխների) գրքերից թարգմանածը, նույնպես և կա-  
թողիկոսի և Գեորգ (Գիորգի) թագավորի ու Բեքայի սահմանած  
որենսդրութիւնները ժողովեցինք...» (Վախտանգ արքայազնի  
որենսդրութեան ներածականը):

## ՀԱՅՈՑ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ 291 ՀՈՂՎԱԾԸ

Յեթե տիրոջն ուխտ անե վանականը կամ քահանան կամ  
սարկավազը, պետք է վոր այն պահե և հեռու մնա մսակե-  
րութիւնից: Յեթե առանց ուխտի ել պահե, լավ է: Իսկ յեթե  
իրենց կամքով չկարողանան պահել, պետք է բացահայտ կերպով  
ուտեն, և յեթե ուզում են, պահեն: Ով փարիսեցիութեամբ պիղծ  
ընդունի թե հացին կամ պասվան կերակուրին միս է դիպել,  
այսպիսիներին որենքը չի ցանկանա: Յեկեղեցուն ուխտ տվողը  
հայտնի է: Յեվ յեթե մեկը՝ կնոջից բաժանված կամ ամուսնա-  
ցած՝ միանգամ յեկեղեցու անունը մեծարե, առավել յեկեղեցա-  
կան կղառնա, վանականները՝ սուրբ և անարատ: Սակայն հույ-  
ները (բերձենները) և անորեն ու վատագրի հայերը

(սոմեխնեբը)\* իրար վոր բամբասում են, յերկուսն ել հա-  
վատայի յե: Ըստ կանոնաց միս չուտելն ուտելուց լավ ե, բայց  
չբամբասեն: Հայի (սոմեխի) մեջ\*\* ել շատ կգտնվի որինա-  
պահ, դրսում յեթե վոք իրար ասեն՝ դու ուտում ես և յես վոչ<sup>4</sup>:

## ՄԱՆՈՔՈՒՅՈՒՆՆԵՐ

1 Առաջինը՝ Մովսիսական, յերկրորդը՝ Հունաց. ապա չորրորդը՝ Կթողի-  
կոսի որենագիրքը, հինգերորդը՝ Գեորգ (Գիորգի) Թագավորի որենագիրքը, վե-  
ցերորդը՝ Աղբուղայի որենագիրքն և, վերջապես, յոթերորդը՝ Վախտանգ ար-  
քայանի որենագիրքը (տես. E. Такайшвили, Описание рукописей, II,  
614—616):

2 Հավանական ե հայրապետանոցից, քանի վոր ձեռագրատուն այն ժամա-  
նակ չկար:

3 Թե վորքան «լրիվ և առանց հապավման» ե կատարած հայոց Թագավոր-  
ների, ասել ե՝ «Ասորա-Հոռմեական Դատաստանագրքի» և Մխիթար Գոշի «Դա-  
տաստանագիրք Հայոց»-ի Թարգմանությունը հայերենից վրացերեն, ցույց ե  
տալիս մեր կազմած համեմատական աղյուսակը (տես մեր վերոհիշյալ աշխա-  
տության 238—245 եջերը):

4 Այս հոգվածը համապատասխանում ե Մխիթար Գոշի Դատաստանա-  
գրքի ա. մասի 52 հոգվածին, վորը կարդացվում ե այսպես. «Յաղագս դասա-  
սանաց մսակերութեան ուխտականաց. Որք յուխտի անդ իցեն երիցունք կամ  
սարկաւազունք և կամ այլոք ի պաշտօնէիցն եւ հեռի իցեն ի մսոյ և միտք  
իւր յօժարեսցին ի ճաշակել համարձակ կերիցէ հւ մի գաղտաբար. ապա թէ  
կամեսցին՝ պահեսցեն. ընդունին կանոնք գերկոսին: Ապա թէ ոք պիղծ հա-  
մարեսցի կամ զբանջար և զհաց որ մսոտ իցէ, ոչ ընդունի զնա կարգ եկե-  
ղեցոյ: Ուխտական՝ յայտ է, զի զամուսնացեալս և զկուսանս եւ որք միանգամ  
յեկեղեցի են՝ անուանէ. ապա ուրեմն վայրապար է ազգացն Յունաց եւ մեր  
զմիմիանս բամբասել, զի գերկոսին ասէ ընդունիլ կանոնաց: Արդ՝ բարիք է  
չուտելն, քան ուտելն, թէպէտեւ ոչ բամբասի, որպէս ի մեզ գտանին բազում  
պահողք. այլ արտաքոյ դատաստանի է զմիմեանս դատելն» (հրատ. Վահան  
վ. Բասախեանցի, էջ 151—152):

\* Ընդգծած բառերը համապատասխանում են Մխիթար Գոշի «մեր»  
բառին:

\*\* Ընդգծած բառերը համապատասխանում են Մ. Գոշի «ի մեզ» բառե-  
րին:

ԺԷ.

## ԱՆԱՆՈՒՆ ՇԵՂԻՆԱԿՆԵՐ (XVII—XVIII Դ. Դ.)

### „ՔԱՐԹԼԻՍ-ԳԽՈՐԵՐԱ“-ՅԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՅՈՒՆՆԵՐԸ

XIV դարու անանուն հեղինակի «Ժամանակագրության» մա-  
սին խոսելիս (է. գլուխ) մենք նշել եյինք, վոր այն՝ սկսվելով  
Գեորգ (Գիորգի) Հաշայի Թագավորությունից՝ հասնում ե մինչ  
Գեորգ (Գիորգի) Պայծառի Թագավորությունը: Գեորգ (Գիորգի)  
Պայծառի ժամանակվա անցքերի նկարագրությամբ վերջանում ե  
վնչ միայն հիշյալ «Ժամանակագրությունն», այլև այսպես կոչ-  
ված «Քարթլիս-ցխորեբա»-յի հին խմբագրությունն, ինչպես այն  
հասել ե մեզ, որինակ, Մարիամ Թագուհու վարիանտում (հրատ.  
Ե. Թաղաճյալի լու, Տիգրիս 1906, էջ 1—785): XIV—XVII դա-  
րերի Վրաստանի պատմությունը գրի առնելու համար XVIII դա-  
րու սկզբներին Վախտանգ VI Թագավորի ձեռներեցությամբ «գի-  
տուն մարդկանցից» գումարված հանձնաժողովը սկսել եր ի մի  
հավաքել բոլոր այն տեղեկությունները, վորոնք հիմք պետք ե  
ծառայելին նույն «Քարթլիս-ցխորեբա»-յի լրիվ խմբագրությանը:  
Այդ նպատակով կազմվեցին «Քարթլիս-ցխորեբա»-յի շարունա-  
կությունները, վորոնցից առ այժմ, ինչպես Ի վ. Ջավախի շվի-  
լին (Հին վրացական պատմական գրականությունը, ա. տպ., էջ  
273) իրավացիորեն նկատում ե, հայտնի յե չորսը.—

1. Առաջին շարունակությունն առանց վերնագրի, վորը  
սկսվում ե 1220 թվից և հասնում ե մինչ 1453 թ., հրատարակել  
ե Ե. Թաղաճյալի լին «Քարթլիս-ցխորեբա»-յի Մարիամ Թա-  
գուհու վարիանտի հավելվածների բաժնում՝ հավելված II, էջ  
850—891:

2. Յերկրորդ շարունակությունը, վորն «Բագրատունյաց  
Թագավորության պատմությունը» վերնագիրն ե կրում, սկսվում  
ե 1452 թվից և հասնում մինչ 1605 թ., հրատարակել ե նույն Ե.  
Թաղաճյալի լին նույն հավելվածների բաժնում՝ ibid., 892—

973. տես նաև Ք. Յ. I, Բրոսսեյի հրատ., 476—477 և (շարունակությունը) Ք. Յ., II, Չուբինովի հրատ., 259—306. Փրանսերեն թարգմանությունը՝ M. Brosset, Hist. de la Géorgie, II, 1856, p. p. 322—376 (Suite des Annales).

3. Յերրորդ շարունակությունը՝ «Վրաստանի պատմությունը» վերնագրով՝ սկսվում է 1373 թվից և հասնում մինչ 1703 թ.: Առաջին անգամ հրատարակեց Մ. Բրոսսեն միաժամանակ վրացերեն (վիմատիպ) և ֆրանսերեն թարգմանությամբ՝ Chronique Géorgienne, par M. Brosset, Paris 1829, 1830, p. p. 1—150 (վրացերենը), LV + 106 (ֆրանսերենը): Նույնի վրացերեն տեկստն յերկրորդ անգամ հրատարակեց (իբրև արտատպություն առաջինից) Չ. Ճիճինաձեն հետևյալ վերնագրով՝ «Վրաստանի պատմությունը Մեծն Մոուրավի տվյալներով», Տփղիս 1910, էջ 1—77: Այս «Պատմությունը» հայտնի է գրականության մեջ առանձնապես «Պարիզի Քրոնիկա» (Պարիզիս Խրոնիկա) անվամբ:

4. Չորրորդ շարունակությունն այն է, վոր՝ պարունակելով իր մեջ այսպես կոչված «Բագրատի թագավորության պատմությունն» և սկսվելով XIV դարուց՝ հասնում է մինչև Գեորգ (Գիորգի) XI թագավորի Սպահան գնալը 1696 թվին. հրատարակել է Մ. Ջանաշվիլին, «Նոր Քարթլիս Տխովրեբա» վերնագրով, գրքույկում՝ «Նաչրոմի», I, Տփղիս 1907, էջ 1—54 («Բագրատի թագավորության պատմությունը», 36—54):

## I

### [XIII—XIV ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... Լանգ-Թեմուրի ընդարձակ պատմությունը գրի է առնված մեկնաբանություններով հանդերձ պարսից մատյաններում<sup>1</sup>, և հայերն էլ այլ կերպ ունին նկարագրած այն<sup>2</sup>...

... Լանգ-Թեմուրը նվաճեց արևելյան բոլոր յերկրները... և յեկավ Հայք (Սոմխիթ), ու գրավեց ամբողջ Հայքը (Սոմխիթը)՝ հրի ու սրի յենթարկելով, նաև գերելով ու իսպառ ավերելով Հայքը (Սոմխիթը), ինչպես մանրամասն (մեկնաբանություններով) գրված է Հայոց պատմության մեջ<sup>3</sup>: Նվաճելով բովանդակ Հայքն (Սոմխիթն)՝ նա (Լանգ-Թեմուրը) շատերին գերեց, շատերին հրի ու սրի յենթարկեց, և շատերին էլ տիրեց՝ դարձնելով իր իշխանության ներքո. ապա՝ այնտեղից գնալով՝ նվաճեց Կարսը (Կարթ) և գրավեց նրանց բոլոր բերդերն ու ամրոցները. իսկ հակա-

ռակորդներին և անհնազանդներին ամբողջապես յենթարկեց հրի ու սրի. և մնաց այնտեղ մի ձմեռ, քանի՜ վոր վերջինս սաստիկ եր և դաժան: Յեվ աթաբալին էլ գնաց նրա մոտ և հնազանդվեց նրան, քանի՜ վոր ի վիճակի չեր հակառակվել նրան. և նա շատ պատվեց աթաբալին:...

... Իսկ ձմեռն անցնելուց հետո [Լանգ-Թեմուրը] շարժվեց Քարթլիի վրա, ... անցավ Աշոցքը (Արոցը)՝ գերելով և իսպառ ավերելով բոլոր շրջակայքն, [ապա]՝ կանգ չառնելով այնտեղ՝ յեկավ և անցավ Թուեղքն (Թրիալեթն) ու Սաբարաթիանոն... Քրիստոսից 1393 թվին:...

... [Ղարայա[զ]ում (Ղարախայում) վորսորդություն անելուց հետո Լանգ-Թեմուրը] մտադրվեց գնալ Ղարաբաղ, յեկավ ու գնաց և հետն տարավ ձերբակալված Բագրատ [Վրաց] թագավորին, և համնելով Ղարաբաղ՝ մի առ ժամանակ բնակվեց այնտեղ:...

... [Յերկրորդ անգամ՝ արշավելով Վրաստանի վրա՝] Լանգ-Թեմուրը գնաց Ղարաբաղ, ուր և մնաց մի առ ժամանակ... [Լանգ-Թեմուրն] յեկավ Ղարաբաղ ահ ու յերկյուղ զցելով և բազմաթիվ զորքով, և նրա զինվորները չեյին տեղավորվում վոչ քաղաքներում և վոչ գյուղերում. և զինվորներն [այնքան] շատ եյին, վոր անհնարին եր համրել:...

... Յերբ Լանգ-Թեմուրն յեկավ Ղարաբաղ, նրան շատ ընդդիմադրեց Թիր-սուլթանը և շատ չարիքներ արավ անձամբ Լանգ-Թեմուրին ու նրա զորքին:...

Ապա Վրաստանը գրավեց Գեորգ (Գիորգի) թագավորը: Լանգ-Թեմուրը՝ լսելով այս՝... անհամար զորք պատրաստեց և իր վորդվոց հետ միասին ... ուղարկեց այն այստեղ:... Նրանք յեկան Յերնջակ (Երինջագ) և շրջապատեցին Յերնջակի (Երինջագի) բերդը, վորն այն պահին Վրաց (Քարթլիի) թագավորի ձեռին եր, և սաստիկ պատերազմ սկսեցին բերդապահների դեմ: Սկզբում նրանք չկարողացան գրավել բերդը, և մի առ ժամանակ մնացին այնտեղ, բայց հետո գրավեցին, քանի՜ վոր բերդապահներին վոչոք ոգնություն չհասավ և նրանք շատ նեղն ընկան, ապա հենց իրենք թողին բերդն ու դուրս յեկան, և հետևեցին Լանգ-Թեմուրին: Իսկ Լանգ-Թեմուրի վորդիք ուղղվեցին Վրաստանի կողմը, հասան Մանգլիս, ուր և կանգ առան:...

... Յերբ Լանգ-Թեմուրը գտնվում եր Թավրիզում, յեկավ, վորպեսզի տեսնի այն բերդը, վորն առաջներում նրա վորդիքն էյին գրավել և վորն Ալինջա եր կոչվում: Անհամար զորքով և բազում



իրերով ու պեսպես վրաններով դուրս գալով այնտեղից՝ հասավ և տեսավ այն Ալինջա բերդը, վորն առավել ամրացրեց, ապա գնաց և կանգ առավ Գեղարքունյաց (Գելաքունի) լճի շրջանում: Լսելով այս՝ Գեորգ (Գիորգի) թագավորն ուղարկեց իր յեղորը բազում ընծաներով...

... Այդ պահին Հայքի (Սոմխիթի) շրջակայքի մի տեղում, վոր կոչվում էր Մերդին (Մարտին), կար մի իշխան, վորի անունն էր Յեսայա (Եսայա):...

... Ապա Աղբուղայի վորդի Հովհան (Իվան) աթարակը բազում ընծաներով գնաց Լանգ-Թեմուրի մոտ, վորը վողորմած յեղավ նրա հանդեպ, պատվեց և [իր հերթին] շատ պարգևներ շնորհեց:

Յեվ գնացին [նույն Լանգ-Թեմուրի] մոտ Հայքի (Սոմխիթի), Սամցխեյի և Կարսի բոլոր իշխանները...

... Ապա Գեորգ (Գիորգի) թագավորը Լանգ-Թեմուրի մոտ ուղարկեց Յեսայա Հայոց (Սոմխիթի) իշխանին, վորպեսզի նա (Լանգ-Թեմուրը) չարչավի Քարթլիի վրա, քանի վոր հնձի և բերքահավաքի ժամանակն էր...

... Բայազիթն Ոսմանի սեռիցն էր: Իսկ Լանգ-Թեմուրը պատերազմ սկսեց նրա հետ և հաղթեց՝ ձերբակալելով Բայազիթ-խոնթքարին:...

Իսկ բռնակալ Լանգ-Թեմուրի մահից հետո [թաթարները] նորից նվաճեցին Արարատանը [և] Անատոլիան, [վորոնք Բայազիթ-խոնթքարի վորդոց ձեռին էյին]...

## ՄԱՆՈՔՈՒՅՈՒՆՆԵՐ

1 Ի նկատի ունի Շերեֆադդինի պատմությունը:

2 Հեղինակն ուզում է ասել, վոր Լանգ-Թեմուրի պատմությունը գրելիս ոգտագործած ունի պարսկական և հայկական աղբյուրները. իսկ հայկական աղբյուրներից, Ս. Կակաբաձեյի կարծիքով, ոգտագործած պիտի ունենա Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց»-ը (տես. Կարապետ վ. Շահնազարեանի հրատ., Պարիզ 1860) վորը, սակայն, վիճելի չէ:

3 Նույնը:

... Բագրատ թագավորը հզոր էր և հռչակավոր: Սա տիրում էր Քարթլիին և Սոմխիթին. և [սրան] հնազանդ էյին Լոռիի բղեշխներն (պատիախչները), Կախքի (Կախեթի), Շիրվանի (Շարվանի) և Սամցխեյի [տերերը]:...

Քրոնիկոնի 164-ին<sup>1</sup> դ'անն Ուզուն-Հասանը զորք ժողովեց և յեկավ Սոմխիթ՝ մոտենալով Բարաթյանների և Որբեթի ստորոտին:...

... [Ապա] թաթարները թողին Տփղիսն ու Սոմխիթը, վորը գրավեց Բագրատ թագավորը:...

Քրոնիկոնի 173-ին<sup>2</sup>... [թաթարներն] յեկան և մոտեցան Տաշիրին:...

... Քրոնիկոնի 174-ին<sup>3</sup> յեկավ դ'անն Յաղուբը, [վորը] հրամայեց, վոր Սոմխիթն ավերեն:...

... [Ապա] Նալիբեգ [կոչվածը՝ դ'աննի իշխաններից մեկն]... յեկավ Սոմխիթի և Որբեթի ստորոտը:...

Լուարսաբ թագավորը գրավեց Տփղիսն և՝ իր ձեռքն գցելով Տփղիսի բերդն՝ ամրացրեց այն: Այս պահին Շահ-Թամազը գլտնվում էր Ղարաբաղում, և՝ լսելով Տփղիսի առման մասին՝ ընտիր զորք հավաքեց և գաղտագողի շարժվեց Տփղիսի վրա... Գրավելով և ամրացնելով այն բերդը՝ Շահ-Թամազը վերադարձավ Ղարաբաղ: Ապա սրա (Շահ-Թամազի) հետ հաշտվեց Կախքի (Կախեթի) տեր Լեվոն (Լեվան) բատրոնը, և Շահ-Թամազը գնաց Հայոց (Սոմխիթի) յերկրի Նախիջևանը (Նախչևանը), և հնազանդեցրեց բոլոր անհնազանդներին, վորոնց իր իշխանությանն յենթարկեց:...

Քրոնիկոնի 223-ին<sup>4</sup>... Բագրատ Իմերքի (Իմերեթի) տերը Սամցխեյումն էր և՝ լսելով Սոմխիթի գրավումը՝ նա յեկավ Շահ-Թամազի մոտ:...

Քրոնիկոնի 231-ին<sup>5</sup> խոնթքարի փաշաներն յեկան:...

Սրանից հետո [խոնթքարը] նորից ուղարկեց Արզրումի փաշային, և Իհարբեքիի և ուրիշ շատերին:...

Իսկ բազմաթիվ ոսմաններ յեկան քրոնիկոնի 233-ին<sup>6</sup> Բասեն (Բասիան) և հասան այնտեղ, ուր կանգ էյին առել ոսմանները:...

Քրոնիկոնի 241-ին<sup>7</sup>... Ղաննը (Շահ-Թամազը) գնաց և իջավ Սոմխիթ:...

... Խոնթքարը տվեց [Ստամբոլ փախած Դադյանին] բազմաթիվ զորքեր Արզրուձեցվոց և Տրապիզոնեցվոց, վորոնք յեկան Սատղեպեյա...

... Ապա Շահ-Թամազը ժողովեց բազմաթիվ զորք և յեկավ Ղարաբաղ, ... [վորտեղից] անցավ Շիրվան...

Ապա Շահ-Թամազը գնաց Ղարաբաղ և մի քիչ ժամանակից հետո նորից շարժվեց Տփղիսի վրա...

... Այդ պահին [Քայխոսրո] աթաբաղի դեմ թխամարար յեկել էր Արզրուձի փաշա Իսկանդարը... քրոնիկոնի 244-ին<sup>8</sup>:

Սրանից հետո խոնթքար Սուլթան Սուլեյմանը ղուրս յելավ և [սկսեց] դ'աննի վոխը հանել, շինեց Կարսը (Կարի) ու վերադարձավ, և յեկավ\* Բասեն (Բասիան): Ապա Շահ-Թամազ-դ'աննը բազմաթիվ զորք ժողովեց և յեկավ Արտահան (Արտան): Ապա Շահ-Թամազն իր վորդի Միրզա-Իսմայելին (Իսմեյիլին) ուղարկեց Կարս (Կարի), և նա նվաճեց Կարսը (Կարի), գրավեց բերդեր ու ամրոցներ, և [բոլոր] նրանց, վորոնք խոնթքարի հպատակներն (ձորտերն) էյին, հրի ու սրի յենթարկեց և ցիր ու ցան արավ, իսկ ինքը նվաճեց Կարսը (Կարի)\*\*:...

Քրոնիկոնի 244-ին<sup>9</sup>... դ'աննը հանվեց տեղից և գնաց Ղարաբաղ՝ տանելով հետը [Վրաստանից վերցրած] բազմաթիվ գերիներ: ... Յեվ չգնաց Շահ-Թամազն Յերեվան:...

... Յեվ նշանակեց [Շահ-Թամազը] խաներ Ղազախում, Շամշադինում (Շամշադիում), և սուլթան նշանակեց Գանձակում (Գանջալում):...

Շահվերդ սուլթանը՝ Գանձակի (Գանջալի) խանը՝ դ'աննից այս վայրերի պահապան էր նշանակվել. ևս լսելով, վոր Լուարսաթ թագավորը զորք է ժողովել, նա ևս Արաքսի (Արազի) հայսկույս [գտնվող կողմերից]՝ զորք ժողովեց և յեկավ թագավորի դեմ...

Քրոնոկոնի 248-ին<sup>10</sup> թաթարները կալանավորեցին Մուխրանի տեր Բագրատի վորդի Արչիլին. Սիմեոն (Սվիմոն) թագավորն յելավ ղզլբաշներին վրեժն հանելու, և սկսեց իր զորքերը ժողովել, վորպեսզի Տփղիսի բերդը վերցնի: Լսելով այս՝ Ղարաբաղի տեր կուսակալը ժողովեց Արաքսի (Արեզի) գետի հայսկույս [գտնվող յերկրներ] զորքերն և [Տփղիս] քաղաքին ոգնության յեկավ:

\* Var. հասավ:  
\*\* Var. և խոնթքարը գնաց:

... [Սիմեոն (Սվիմոն) թագավորի յեղբայր Դավթին թաթարները] քաղաքի (Տփղիսի) և Սոմխիթ-Սարարաթիանոյի թագավորությունը շնորհեցին...

Իսկ Սիմեոն (Սվիմոն) թագավորը չեր հանգստանում, և ավերում էր Սոմխիթ-Սարարաթիանոն և աշխատում էր գրավել [Տըփղիս] քաղաքը... 1568 թվին Քրիստոսի... Տեղեկանալով Սիմեոնի (Սվիմոնի) դալու մասին [Տփղիս] քաղաքի վրա՝ Դաուլթխանն ևս ժողովեց սոմխիթ-բարաթյաններին, թաթարներին և քաղաքացիներին...

Իսկ Դաուլթխանը հաղորդեց սրա (Սիմեոնից՝ Տփղիսի գրավման) մասին Շահ-Թամազին, ... իսկ Շահ-Թամազը հաղորդեց Շամխալին, վորին կոչում էյին Չերքեզ, և Շաքիի սուլթանին ու դարբաղցվոց...

Ապա խոնթքարին բաժին մնաց Իմերքն (Իմերեթն), Ողիշը, Գուրիան և Սաաթաբագոն մինչ Քարթլիի սահմանները, մնաց Կարսը (Կարի) մինչ Աշոցքի (Աբոցի) և Յերեվանի սահմաններն և Հայքը (Սոմխիթը) մինչ այն սահմանը, վորին այժմ Թուրքըստան են կոչում, մինչ Բաղդադ:

Իսկ Շահ-Թամազը նվաճեց Քարթլին, Կախքն (Կախեթն), Յերեվանը, Քյուրդստանի (Գուրթիստանի) հայսկույս մասը. և այսուհետև միմյանց (խոնթքարի և շահի) միջև միություն էր և խաղաղություն...

Քրոնիկոնի 266-ին<sup>11</sup>... խոնթքարի զորքն յելավ և նվաճեց Թավրիզն, Յերեվանը, Գանձակը (Գանջան), Ղարաբաղը մինչ Սուլթանիա և Ատրպատականի բոլոր տեղերը...

Սուլյն քրոնիկոնին (266-ին)<sup>12</sup>... Արզրուձի և Վանի փաշաներն [եկան] և սուլթանն ու Ղարախան Բաղուքլուն...

... Դաուլթխանն անցավ Լոռի և Տփղիս մտավ, ուր փաշա նստացրին, իսկ Գորում սանջաղ...

Յերբ Տփղիսում փաշա նստացրին և Գորում սանջաղ, ... Լալափաշան... սոմխիթցիներին շատ նեղացրեց...

... Սիմեոն (Սվիմոն) թագավորը վերադարձավ..., [յերբ] Լալափաշան Քարթլիումն էր գտնվում. և յեկան Սոմխիթ՝ բանակցելու...

... Պատրոն Ղվարղվարեյի մոտ մարդ յեկավ, Ուղթիքում (Ութիսում) չպահեցին, տարան Արզրում՝ ծննդյան տոնի նախորյակին...

Քրոնիկոնի 267-ին<sup>13</sup> պատրոն Ղվարղվարեն և պատրոն Մա-

նուչարն Արզրումից Կոստանդնուպոլիս գնացին... Յերկրորդ անգամ յեկավ Լալա-փաշան և նորոգեց Կարսը (Կարի)...

Քրոնիկոնի 268-ին<sup>14</sup>... իրենք՝ յերկուքյան տերերը՝ գնացին Լոռի, վորն ավերեցին և հաղթող վերադարձան...

Քրոնիկոնի 272-ին<sup>15</sup>... սարգար Վարադ-փաշան յեկավ Ախալցիխեն շինելու, բայց չգիմացավ, գնաց և թեմը մեզ (վրացոց) մնաց...

Մի փոքր ժամանակից հետո [սարգարն] իր զորքերը ժողովեց և գնաց Լոռի, քանի վոր այն ոսմանցոց ձեռին եր:... Յեվ աստված նորից հաջողութուն շնորհեց Սիմեոն (Սվիմոն) թագավորին և կոտորեց շատ ոսմանցիներին՝ թվով չորս հարյուր յոթանասուուն յերեք, Քրիստոսի 1586-ին, քրոնիկոնի 274-ին. և վերջրեց Լոռու ամրոցներն ու այրերը թվով ինն, վորոնք ոսմանցոց ձեռին եյին: [Ամեն ինչ] գրավել եր ինքը՝ բացի միմիայն այն բերդից (Լոռուց), վորն ոսմանցոց ձեռին եր: Ապա [Լուարսաբը] մոտեցավ Լոռու բերդին՝ ապրիլի 1-ին, և գրավեց [այն]՝ հունիսի 10-ին:

... Լսելով այս բանը՝ խոնթքարը շատ տխրեց և ուղարկեց մեծ զորք, վորին ամիրսպասալար նշանակեց յերևելիներից մեկին, վորն և յեկավ Լոռի. սա գրավեց Լոռու բերդն և նվաճեց Լոռին: Ապա կանգ առավ Պատիս-սոփելիի ծայրին...

... Շահ-Աբասն յեկավ և գրավեց Թավրիզն ու ամբողջ Ատրպատականը (Ադրբայջանը), բացի Յերեվանից և Բաղդադից...

Իսկ Լոռու բերդում յեղողները լսեցին Սիմեոն (Սվիմոն) թագավորի պարտութունը: Ապա դուրս յեկան և ավերեցին Վրաստանի մի քանի մասերն և տիրեցին Տաշիրին: Յեվ մեծ ուրախութուն եր ոսմանցոց մեջ: Իսկ Սիմեոն (Սվիմոն) թագավորը նորից ժողովեց Քարթլիի սակավաթիվ զորքը, վորքան ել մնացել եր, և ոսմանցոց համար աննկատելի գնաց Լոռի: Յեվ [ոսմանցիք ու վրացիք] իրար կպան, և տեղի ունեցավ մեծ պատերազմ. և թագավորը հաղթող հանդիսացավ, և [վրացիք] վերջրին Լոռու բերդը, և հրի ու սրի յենթարկեցին նրանց (ոսմանցոց): Յեվ [թագավորը] գրավեց Լոռին և հաղթող տուն վերադարձավ:

... Քրիստոսի 1600-ին... [վրացիք<sup>1</sup>] իմանալով [Սիմեոն] թագավորի հաջողության մասին՝ հույժ ուրախացան... և գնացին Լոռի: Ապա վրացիք՝ լսելով նրա մասին, վոր Սիմեոն (Սվիմոն) թագավորի վորդի Գեորգը (Գիորգին) այնտեղ եր վրացոց մեջ, ոսմանցոց յետևից ընկան և հետամուտ յեղան նրանց, սակայն

չհասան: Ապա ոսմանցիք գրավեցին Լոռու բերդն, ուր և մտցրին իրենց պահապաններին, և գնացին՝ տանելով հետն Սիմեոն (Սվիմոն) թագավորին, վորին և հասցրին Ստամբուլ:...

Իսկ Գեորգը (Գիորգին) նվաճեց Քարթլին և թագավորում եր բարվոք, վորն ապա ժողովեց վրացիներին և գնաց Լոռու վրա, և Գեորգ (Գիորգի) թագավորը վերջրեց բերդն ու գրավեց Լոռին...

Այս ժամանակներին ղանն Շահ-Աբասն յեկավ Յերեվանը գրավելու համար: Ապա ղաննը կանչեց [այնտեղ] Գեորգ (Գիորգի) թագավորին և Կախից տեր Աղեքսանդրին իրենց զորքով, վորոնք և գնացին: Յերբ նրանք հասան այնտեղ, Շահ-Աբասը շատ հավանեց վրաց և կախից զորքերն, և ամբողջ իր զորքին հրամայեց գրոհ տալ Յերեվանի բերդին: Այդ ժամանակ վրացիք զվարձներից առավել քաջութուն ցույց տվին և գնացին իբրև առաջընթաց [գունդ] և վերջրին Յերեվանի բերդը: Յեվ գրավեց Շահ-Աբասն Յերեվանն և իր զորքը մտցրեց բերդը: Սակայն Շահ-Աբասը Գեորգ (Գիորգի) թագավորից խնդրեց Լոռին և Լոռու բերդը: Յեվ [Գեորգը] զիջեց այն, քանի վոր չեր կարող մերժել Շահ-Աբասին: Յեվ [Գեորգը] թողեց Լոռին, և Լոռու բերդը գրավեց Շահ-Աբասը, վորն և մտցրեց այնտեղ իր զորքը. ապա տուն վերադարձավ...

... Շահ-Աբասը [Վրաստան] ուղարկեց [Կախից տեր Աղեքսանդրի վորդի] Կոնստանդին, և հետն առաքեց Շիրվանի և Լարսբաղի զորքերը...

### ՇԱՆՈՔՈՒՅՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն 164 + 1312 = 1476 թ.
2 Այսինքն 173 + 1312 = 1485 թ.
3 Այսինքն 174 + 1312 = 1486 թ.
4 Այսինքն 223 + 1312 = 1535 թ.
5 Այսինքն 231 + 1312 = 1543 թ.
6 Այսինքն 233 + 1312 = 1545 թ.
7 Այսինքն 241 + 1312 = 1553 թ.
8 Այսինքն 244 + 1312 = 1556 թ.
9 նույնը:
10 Այսինքն 248 + 1312 = 1560 թ.
11 Այսինքն 266 + 1312 = 1578 թ.
12 նույնը:
13 Այսինքն 267 + 1312 = 1579 թ.
14 Այսինքն 268 + 1312 = 1580 թ.
15 Այսինքն 272 + 1312 = 1584 թ.

III  
[XIV—XVII ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... Քրոնիկոնի 82-ին<sup>1</sup> Սամարղան[դ]ցի Թեմուրը գերեց Սոմ-խիթն ու Քարթլին և ավերեց բոլոր բերդերը...

Քրոնիկոնի 119-ին<sup>2</sup> Աղեքսանդր թագավորը գրավեց Լոռին...

Քրոնիկոնի 233-ին<sup>3</sup> Բասենի (Բասիանի) Սախոյի վրա իրար հետ կռվեցին իմերցի Բագրատ թագավորն և Քարթլիի Լուարսաբ թագավորն, և աթաբակ տեր Քայխոսրոն...

Քրոնիկոնի 243-ին<sup>4</sup> խոնթքար սուլթան Սուլեյմանը դուրս յելավ դ'աննի դեմ, կառուցեց Կարսը (Կարի), և վերադարձին հենց վոր հասավ Բասեն (Բասիան)՝ հանդես յեկավ Շահ-Քամազ դ'աննը, վորն յեկավ Արտահան (Արտան), իսկ դ'աննի վորդի Իսմայել-միրզան Կարսը (Կարի) քանդեց, խոնթքարը գնաց...

[Քրոնիկոնի 266-ըն]<sup>5</sup>... փետրվարի 26-ին, չորեքշաբթի որը, ուրումները Գորին այրեցին, և կանգ առան Զարիշատում...

[Նույն քրոնիկոնի]<sup>6</sup>... ոգոստոսի 17-ին Դաուդխանն այրեց [Տփղիս-քաղաքն] և հեռացավ՝ անցնելով Լոռի... սոմխիթցիներին շատ նեղեցին...

[Նույն քրոնիկոնի]<sup>7</sup>... հունիսի 15-ին Լալա-փաշան յեկավ Քարթլի և Սոմխիթ, ուր, ինչպես ասում են, [արդեն] հիվանդ եր... [և] հոկտեմբերի 1-ին հեռացավ իր գորքով...

[Նույն քրոնիկոնին]<sup>8</sup>... մարդ յեկավ պատրոն Ղ'վարդ'վարեյի մոտ, [վորին] Ուղթիքում (Ութիում) այլևս չթողին, [այլ] տարան Ա[ր]գրում, ծննդյան [տոնի] նախորյակին...

Քրոնիկոնի 267-ին<sup>9</sup>, մարտի 23-ին, պատրոն Ղ'վարդ'վարեն և պատրոն Մանուչարն Ա[ր]գրումից գնացին] Կոստանդնուպոլիս, [իսկ] հունիսին... նորից յեկավ Լալա-փաշան և վերանորոգեց Կարսը (Կարի)...

Քրոնիկոնի 265-ին<sup>10</sup>... հունիսի 15-ին Բեքային վերադարձրին և իրենք՝ յերկոքյան տերերը (Ղ'վարդ'վարեն և Բեքան)՝ գնացին Լոռի...

Քրոնիկոնի 273-ին<sup>11</sup> Սիմեոն [Քարթլիի] թագավորն և [սարդար Վարադ]-փաշան կռվեցին Լոռում, և թագավորը հաղթեց, վորը կոտորեց [հակառակորդի գորքը]՝ անթիվ՝ իբր չորս հարյուր յոթանասուն և յերեք [հոգի]։ նույն քրոնիկոնին<sup>12</sup> թագավորը գրավեց Լոռու քարայրը 9 [հարյուր հոգով]...

Քրոնիկոնի 287-ին<sup>13</sup>... պարսիկները (թաթարները) գրավեցին Սոմխիթն ու Լոռին...

Քրոնիկոնի 291-ին<sup>14</sup> դ'անն Շահ-Արամն յեկավ կռվելու նրանց (սամանների) հետ, վերցրեց թավրիզն ու Նախիջևանն (Նախչվանը) և մոտեցավ Յերևանին. սամանները սաստիկ կռվում էին բերդից դուրսն, և [պարսիկները] չկարողացան վերցնել բերդը։ Ղ'աննը՝ մեկը մյուսի յետևից դեսպաններ և գրություններ ուղարկելով՝ [վրացիներին] դիմեց [խնդրելով ոգնություն] Յերևանին. և Գեորգ Քարթլիի թագավորը զորքով, հետն ունենալով իր խոստովանահայր՝ Զերեգե արքեպիսկոպոսին, և Աղեքսանդր Կախից թագավորը Կախեթի զորքով, գնացին դաժան և սառնամանիք ձմրան պահին, և հասան ոգնության Պարսից թագավոր դ'աննին և վերցրին ուրումներից Յերևանի բերդը...

...Քրոնիկոնի 297-ին<sup>15</sup>... Մահմուդ-խանն յեկավ յոթը հարյուր զինված մարդով. [վրացիք] սրտալի տեղահան յեղան գնալու Ղարաղաջից, և մուրավը զեկուցեց [Լուարսաբ] թագավորին. «... մի տերտեր (տերտերա) Գորուց գալիս եր, վոչինչ չգիտեր, զորքը նրա առաջն յերևաց, նա վերադարձավ դեպի Դուեսի դաշտը. իսկույն և յեթ Գորու կամուրջը քանդեց և անցավ Գորին, հազորդեց վիրին Քարթլիի յերկրին, զորք ճարեց, բոլորը տեղահան յեղան և գնացին թագնվելու. յեթե տերտերն առաջ չընկնեք, սնմտարար կանցնեյին գետն, և յերկիրը կփչանար...»։

... Քրոնիկոնի 303-ին<sup>16</sup>... Փեյքնի-խանն իր գերդաստանով ձոյեթի բերդից Ղարաբաղ անցավ...

Քրոնիկոնի 323-ին<sup>17</sup>... [դ'աննը շնորհեց Ռոստոմ Քարթլիի թագավորին հետևյալ թավադներին և ազնաուրներին, վորոնք են՝]... Սասանբեգ, և Մելիքսեթ (Մելքիսաղեգ) Սոմխիթի մելիքն, Աթաբեգն ու նրա յեղբայրներն... Պարսից (թաթարաց) զորքը հասել եր Աղջաղալա, և բարաթյաններ-սոմխիթցիք գնացել էյին նրանց մոտ...

...[Ռոստոմ թագավորը] դ'աննից հրաման ստացավ, վոր սարդարը Վան գնա...

Քրոնիկոնի 324-ին<sup>18</sup> խոնթքար սուլթան Մուրադն յեկավ, Յերևանը գրավեց և վերադարձավ, իսկ ութ ամսից հետո դ'անն Շահ-Սեփին յերևաց, վորն Յերևանը [նրանից] խլեց...

Քրոնիկոնի 346-ին<sup>19</sup>... դ'աննը հրամայեց... Ալահվերդի-խանը գնա Ղարաբաղ...

# ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Այսինքն 82 + 1312 = 1394 թ.
- 2 Այսինքն 119 + 1312 = 1431 թ.
- 3 Այսինքն 233 + 1312 = 1545 թ.
- 4 Այսինքն 243 + 1312 = 1555 թ.
- 5 Այսինքն 266 + 1312 = 1578 թ.
- 6 նույնը:
- 7 նույնը:
- 8 նույնը:
- 9 Այսինքն 267 + 1312 = 1579 թ.
- 10 Այսինքն 265 + 1312 = 1577 թ.
- 11 Այսինքն 273 + 1312 = 1585 թ.
- 12 նույնը:
- 13 Այսինքն 287 + 1312 = 1599 թ.
- 14 Այսինքն 291 + 1312 = 1603 թ.
- 15 Այսինքն 297 + 1312 = 1609 թ.
- 16 Այսինքն 303 + 1312 = 1615 թ.
- 17 Այսինքն 323 + 1312 = 1635 թ.
- 18 Այսինքն 324 + 1312 = 1636 թ.
- 19 Այսինքն 346 + 1312 = 1658 թ.

## IV

### [XIV—XVII ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... [Լանգ-Թեմուրը] մոտեցավ Հայքին (Սոմխիթին) և ավերեց ու գերեց Հայքն (Սոմխիթն) և մեծ դժբաղդություն առաջ բերեց նրանց (հայերի) վրա, ինչպես ել նրանց (հայերի) անցուդարձը (կյանքը) գրված է նրանց պատմության մեջ<sup>1</sup>. և՛ տիրապետելով նրանց՝ իրեն իշխանության ներքո դարձրեց: Յեվ գնալով ախտեղից՝ [Լանգ-Թեմուրն ու իր զորքը] հասան Կարս (Կարի), վորն և նվաճեց ու սրի յենթարկեց ամենքին, քանի վոր վոչվոք ուժ չունեի նրան դիմադրելու վերջինիս զորքի բազմության պատճառով. և բնակություն հաստատեց և ձմեռեց այստեղ, և ձմեռը դաժան եր... և ձմեռն անցնելուց հետո դիմեց Քարթլիի վրա, քանի վոր այս եր նրա տենչանքը, անցավ Արցոն\* և ավերեց ամեն ինչ Քրիստոսի 1393 [թվ]ին...

... [Տփղիսից Լանգ-Թեմուրն] անցավ Ղարաբաղ՝ հետը տանելով բանտարկյալ Բագրատ թագավորին...

... [Յերկրորդ անգամ ավերելով Վրաստանը՝ Լանգ-Թեմուրը... կրկին անցավ Ղարաբաղ, ուր մնաց մի առ ժամանակ...]

... [Ապա Լանգ-Թեմուրը նորից] յեկավ ու կանգ առավ Ղա-

\* Այսինքն՝ «Աշոցն»:

րարադում, և լցվեց Ղարաբաղը զորքով. ապա մոտեցավ Վրաստանի սահմանին, ուղարկելով Գեորգ (Գեորգի) թագավորին գրություն, ուր հաղորդում եր հետևյալը... և՛ [ավերելով յերկիրն՝] յեկավ Ղարաբաղ...

... Լանգ-Թեմուրը՝ լսելով, վոր Գեորգ (Գեորգի) թագավորը նորից տիրել է Քարթլիին՝ վորոշեց իր զորքն ուղարկել [վրաց դեմ]. ուղարկեց իր վորդի Սուլթան [Հ]ուսեյինին, Փիր Մահմադ Ամիր շահին [և] Աբուբեքրին... դուրս յելան, յեկան և հասան Յերնջակ (Երինջագ), վոր է բերդ, քանի վոր վերջինս այն ժամանակ Քարթլիի թագավորի ձեռին եր. և յերկար ժամանակ կանգնած եյին այստեղ: Բերդի մեջ յեղդները բավական ժամանակ նեղվեցին, դուրս յելան այստեղից և թողին բերդը. այդ բերդի պահապաններն յեկան և աղաչեցին բերդապետին և ավագ բերդապաններին յեղևել [բերդից] և հանձնել այն Լանգ-Թեմուրին...

... Ապա Լանգ-Թեմուրի վորդիք գնացին Բաղդադի վրա... և ցանկացավ Լանգ-Թեմուրն առնել Թավրիզն և յեկավ տեսնելու այն բերդը, վորը նախ գրավեցին, Ալինջա [կոչվածն]. և անթիվ զորքով ու պիսպես վրաններով դուրս յելավ [Լանգ-Թեմուրն], յեկավ և տեսավ Ալինջա բերդը. ապա գնաց և հասավ Գեղարքունյաց (Գելաքունիի) լճին...

... Յեվ յեկան [Լանգ-Թեմուրի մոտ] շրջակա իշխանները Հայքի (Սոմխիթի), Սամցխեյի և Կարսի (Կարի)... ապա [Լանգ-Թեմուրը] գնաց Քյուրղաստանի կողմն, և գրավեց Քյուրղաստանը (Քուրթիստանի)...

... [Ապա Լանգ-Թեմուրն] յեկավ Կարս (Կարի). իսկ Գեորգ (Գիորգի) թագավորը՝ լսելով այս՝ մարդ ուղարկեց նրա մոտ, վորի անունն եր Յեսայի [Եսայա] և վորը Հայոց (Սոմխիթի) իշխանն եր<sup>2</sup>...

... Յեվ այս Լանգ-Թեմուրը գրավեց Քյուրղաստանը (Քուրթիստանի), Հնդկաստանը, Պարսկաստանը, Շիրազն, Ատրպատականն, և բանտարկեց Բրուսայում (Բուրսայում) նստող խոնթարին, վորի անունն եր Բայազիթ...

... Յեվ մեռավ Գեորգ (Գեորգի) թագավորը, և նրա տեղ նստեց նրա վորդի Բագրատը. և այս՝ Բագրատ թագավորի որոք դ՛անն Ուզուն-[Հ]ասանն իր զորքն ուղարկեց. և այս դ՛անն Ուզուն-[Հ]ասանը թուրքմենների սերմիցն եր: Լանգ-Թեմուրի վորդոց մահից հետո սա գրավեց Թավրիզը և այլ բազում գավառներ (Թեմեր). և բազում ավերածություն և զնաս հասավ Հայոց (Սոմ-

խիթի) գավառներին (թեմերին), և Քարթլիի վրա ել յեկան սրա գորքերը...

... Բագրատ թագավորը հզոր եր [և] հռչակավոր. նա տիրում եր Քարթլիին, Սոմխիթին. և նրան ստրուկ եյին Լոռի բղեջխները (պիտիախ[շխները], Կախքի (Կախեթի), Շիրվանի և Սամցխեյի [տերերը]...

[Բագրատի որոք] արշավանքի յելավ զ'անն Ուզուն-Հասանը, [վորն] յեկավ Սոմխիթ... [ապա] յեկավ Տփղիս, [վորն] և գրավեցին թաթարները... [իսկ յերբ] զ'աննը մեռավ, թաթարները թողին Տփղիսն ու Սոմխիթը, վորը գրավեց Բագրատ թագավորը...

[Բագրատի վորդի Կոնստանդին թագավորի որոք] թուրքմենների անթիվ բազմութուն յեկավ Սամցխե և մոտեցավ Տաշիրին... և հրամայեց զ'աննն ավերել Սոմխիթը... [ապա թաթարները] դիմեցին Սոմխիթ...

... Իսկ Կոնստանդինի վորդի Դավիթ թագավորը տիրում եր... Կարսի (Կարի) յերկրի հայսկույս [զտնվող մասին] մինչ Յերևանի (Երեւոնի) սահմանը, վոր տարածվում ե մինչ Բամբակ և Լոռի [և] մինչ Ղազախի սահմանը. [և այս]՝ Քարթլիի թագավորի ձեռին եր... իսկ [Սամցխեյի] աթաբակը տիրում եր... մինչ Կարսի (Կարի) սահմանն [և] Արզրումի կողմի Գուրջիբողազի հայսկույս [զտնվող մասին]...

[Դավիթի յեղբայր Գեորգ թագավորի որոք]... Յերևանի (Երեւոնի) խանն և Քալբալիխանը նախանձախնդիր եյին իրար, և այս պատճառով Յերևանի (Երեւոնի) խանը. միտք հղացավ նամակ գրել Գեորգ (Գեորգի) թագավորին... իսկ [Գեորգ] թագավորը՝ չհավանելով [Քալբալիխանի վարմունքն]՝ Յերևանի (Երեւոնի) խանի կողմն անցավ ու նրա մտերիմը դարձավ: Իսկ Յերևանի (Երեւոնի) խանն այս բոլորը զեկուցեց զ'աննին. և մեծ ուրախությամբ լցվեց Շահասուլթան [Հ]ուսեյն-զ'աննն և [սկսեց] գովել Գեորգ (Գեորգի) թագավորին, և շնորհեց Յերևանի (Երեւոնի) խանին թոփանքչի-աղայություն... և [նույն] զ'աննի հրամանով [Վրաստան] ուղարկվեցին Յերևանի (Երեւոնի) նախն և այլ մեծամեծներ, վորեպեսզի բազում մեծարանքով ծառայեն թագավորին...

### ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հմմ. այս գլխի I հատվածի 2 ծանոթությունը (եջ 134):  
2 Հմմ. այս գլխի I հատվածը (եջ 134):

### ՑԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

— Աբաղա- ՝ Աբաղե դան 59, 60	Ալեքսանդրի արքայազն. տես՝ Ալեք-
Աբաղ ՝ Աբաս 97	սանդր արքայազն
Աբաս-Ղուլի-խան 115	Ալեքսանդրի թագավոր. տես՝ Աղեք-
Աբաս [Շահ- 83, 111, 112; 138, 139, 141	սանդր թագավոր
Աբաս [Ջամի- տես՝ Ջամի-Աբաս	Ալինջ 107, 108, 143
Աբգար 99—100, 105	Ալինջա 76, 108, 133, 134
Աբխազեթ 48, 78, 108	Ալիշան Ղևոնդ 27, 45, 46, 65, 66,
Աբոց 133, 137, 142	68—70, 123
Աբուբաքր 15	Ալիջան 76
Աբուբեքր 143	Ալմութ 56
Աբուլաձե Իլիա 123	Ալվան 123
Աբուլաձե Յուսուֆի պրոֆ. 64	Ախալցիխե 111, 138
Աբուլփարաջ 29	Ախալցիխեցի 60
Աբուսեբ 40	Ախալցիխեցի Հովհան (Իվանե). տես՝
Աբուսեբիձե Տրեթցի 3, 40	Հովհան (Իվանե) Ախալցիխեցի
Ագաթանգեղոս 86, 105	Ախալցիխեցի Շալվա. տես՝ Շալվա Ա-
Ագարա ՝ Ագարակ 10, 13, 15, 16, 44	խալցիխեցի
Աղարբաղազան 15, 52, 58	Ախալքալաք 13
Աղարբաղազանցիք 52	Ախտալա 65, 69
Աղարբեղաջան 7	Ալինյան Ներսես 30
Աղարբաղազան 63	Ահմատ-սուլթան 117
Ագրբաղազան 138	Աղբուղա 128, 130, 134
Ագրբեջան 7, 107, 111, 112, 114, 115,	Աղեքսանդր արքայազն 115
117	Աղեքսանդր I թագավոր Քարթլիի 140
Ադատ-Մովսես 62	Աղեքսանդր՝ թագավոր Կախից 112,
Ազրում 122	139, 141
Աթաբեգ 113, 141	Աղթամար 30, 31
Ալբա 43	Աղինջ 61
Ալանվերդի-խան 141	Աղջա-դալա 111, 141
Ալան 123	Աղսարթան 15
Ալանք ՝ Ալանեթ 123	Աղստե 64, 65
Ալաշա 46	Աղվաններ 71
Ալաշկերտ 54, 56	Աղվանք 69, 71
Ալաշկերտցի 74	Ահարա 40, 54, 60, 61
Ալբանոպոլիս 123	Ահարական յերկիր 54

Ամբերդ 43, 45, 52  
Ամբերդցիք 14  
Ամիր [Փիր-Մահմադ. տես՝ Մահմադ-ամիր  
Ամստերդամ 123  
Այր 68  
Այսրկավկաս 126  
Այրարատ 45, 46, 66, 68, 70  
Անանիա Դվինցի 10  
Անատոլիա 107, 134  
Անբերդ 46  
Անգուրդ 57  
Անի 4, 8—10, 22, 23, 25, 26, 30—32, 34, 36—38, 43, 46, 52—57, 67, 108, 110  
Անեցի 74  
Անիսի 22, 36  
Անկյուրիա 20, 35  
Աննա թագուհու ձեռագիր 42  
Անտոն կաթողիկոս Վրաց 124  
Աշարունիք 25  
Աշխարհեզ Մելիքզադ Բերութով. տես՝ Բերութով Աշխարհեզ.  
Աշունի 25  
Աշունիք 7, 10, 25  
Աշոտ 64  
Աշոտ Բագրատունի 96, 97  
Աշոթան 96, 97  
Աշորնիք 25  
Աշոցք 133, 137, 142  
Աշաբեթ 111  
Աջամեթ 21, 35, 51  
Առան 14, 15, 28, 46  
Առաքելոց վանք 31  
Առաքիել 104  
Առբլու 127  
Ասիա 20, 58  
Ասիա Առաջավոր 29  
Ասիական թանգարան 84, 87  
Ասլան՝ Մահմուդի վորդի 26  
Ասորա - Հոսթեյական Դատաստանագիրք 127, 130  
Ասորի 124, 125  
Ասորի Միջայել. տես՝ Միջայել Ասորի  
Ասորիստան 99, 100  
Ասորիք 8, 9, 12, 56, 99, 100

Աստարա 110  
Աստուածարան Գրիգոր 92, 104  
Աստուածաշունչ 123  
Ասարախան 127  
Ավագ և Ավաք 52—56, 58—60, 63—65, 68, 69  
Ավան 70  
Ավես 90  
Ագրգատական 15, 52, 57—58, 63, 137, 138, 142  
Ատրպատականցիք 52  
Արաբ 124  
Արարական 6, 64  
Արարացիք 9  
Արարերեն 82, 84, 122  
Արարատան 107, 134  
Արազած 55  
Արազ 91, 104, 107, 108, 111, 112, 114, 122  
Արազ 107, 136  
Արարատ 7, 122  
Արարատյան լեռներ 54, 55, 60, 61  
Արաքս 12, 14, 21—24, 36, 43, 54, 56, 59, 60, 91, 104, 107, 108, 111, 112, 114, 136  
Արդաբիլ 44  
Արդաշեր 93  
Արդավել 22, 23  
Արդոխ 8  
Արեզ 136  
Արզրուժ 9, 14, 72, 80, 110, 115, 135—138, 140, 144  
Արզրումեցիք 136  
Արծրունի Մահակ 123  
Արդուն-խան 59, 61, 70  
Արմազ 104  
Արմենիա 122  
Արմութ 56  
Արշակ թագավոր 96  
Արշակունիք 95, 96  
Արշակունյաց յերկիր 54  
Արշավիեր և Արշավիր 95  
Արուժ 70  
Արչիլ թագավոր 118, 119  
Արչիլ Մուխրանի տեր, Բագրատի վորդի 136

Արսլան[-Ղութլու. տես՝ Ղութլու-Արսլան  
Արտահան 21, 34, 35, 53, 54, 61, 63, 74, 136, 140  
Արտահան ներքին 43  
Արտահան վերին 43  
Արտահանեցի 74  
Արտահաններ 61  
Արտահանցիք 54, 57, 62  
Արտան 21, 34, 35, 53, 54, 61, 63, 136, 140  
Արտանուջ 61, 74, 110  
Արտանցիք 54  
Արտաշիլ և Արտաշեր և Արտաշիր 93  
Արտավիլ 21, 23, 24, 32, 44  
Արտաւիլ 32  
Արտաքսես Յերկայնարագուդ 24  
Արցախ 67, 69  
Արփասլան 37  
Աւագ 64, 68  
Ազերեան Մ. 123  
Ափխազեթ 25, 51, 58, 104  
Ափխազք 25, 48, 51, 58, 78, 104, 108  
Ափքար 105  
Աքբար 100  
— Բարելուն 9, 94  
Բաբերդ 62  
Բազավան 44, 46, 54  
Բազարատ 69  
Բազուան 32, 46  
Բազրատ՝ Մուխրանի տեր 136  
Բազրատ. I՝ թագավոր Վրաց 105  
Բազրատ V՝ » » 3, 107—109, 132, 133, 135, 143, 144  
Բազրատ. Թագավոր (XVII դ.) 115  
Բազրատ Կյուրապատ 78  
Բազրատ՝ տեր Իմերքե 78, 135, 140  
Բազրատունիներ 105  
Բազրատունիներ 96—98, 131  
Բազրատունիք 5, 30, 64, 72, 87, 105  
Բագու 110  
Բագին 59  
Բագուքլու [Ղարախան. տես՝ Ղարախան-Բագուքլու  
Բախնդուր 114  
Բալթասղու 57  
Բալղուն 14  
Բակուր 105  
Բաղաթուր 57  
Բաղդադ 94, 107, 117, 137, 138, 143  
Բամբակ 144  
Բայազիթ 134, 143  
Բայանդուր 114  
Բայուդ-ղան 61  
Բայլական 14  
Բանա 10, 57  
Բանասկերտ 34  
Բաչի-Նոյին 55  
Բասեն 10, 11, 16, 21, 28, 43, 44, 46, 54, 62, 76, 135, 136, 140  
Բասեն ներքին 46,  
Բասիան 10, 11, 16, 21, 43, 44, 54, 62, 135, 136, 140  
Բասիլ քարակոփ 41  
Բաստամյան Վահան 130  
Բարաթաշվիլի Ռեվազ 114  
Բարաթաշվիլի Սիառ 114  
Բարաթաշվիլիներ 83  
Բարաթյաններ 135, 137, 141  
Բարդա 112  
Բարդավ 14, 54, 55, 58  
Բարդոս 14  
Բարթլուժե 122, 123  
Բարթուղիմեոս 122, 123  
Բարխուդարյան Մակար 67  
Բարկուշատ 28, 43, 46  
Բարնեբեյ Գրիգոր 29  
Բարսեղ քարակոփ 41  
Բաքրածե Դ. 65, 73, 128  
Բերութով Մելիքզադ-Աշխարհեզ 121  
Բեդյաններ 50  
Բելաքան 60  
Բենեվենթոս 122  
Բերդուջ 51, 63  
Բերձենիշվիլի Ն. 47  
Բերձեններ 8, 37, 38, 57, 123, 129  
Բերձենստան (Մաքերձենթի) 20, 51, 54, 57, 58  
Բեքա 80, 140

**Բեքա Որենսդիր** 128, 129  
**Բեքա՝ Սարգիս Զաղեղու վորդի** 60—61  
**Բիթինիա** 20, 35  
**Բիթլիս** 122  
**Բիչո** 54, 55  
**Բիչու** 57  
**Բիջնիսի** 43, 58, 59  
**Բլաղուն** 14  
**Բղեն** 46  
**Բյուզանդական** 6  
**Բյուրիտյան** 43  
**Բոնիսի ձոր** 54  
**Բոլոսիակ** || **Բոլոսիկե** || **Բուրակե** 21  
**Բողոսիս** 54  
**Բոշնաղ** || **Բոսնացի** 124  
**Բորոտան** 46  
**Բորչաղու** 27, 65, 66  
**Բուբակ** 67  
**Բուբաբար** 15  
**Բուզ** 70  
**Բուզա** [**Սուբլու**-. տես՝ **Սուբլու-Բուզա**]  
**Բաղաթաղուր** 57  
**Բուզ** 70  
**Բուբա** 143  
**Բջնեցիք** 14  
**Բջնի** 30, 31, 43, 46, 52, 53, 58, 59, 64, 66—69  
**Բրասե Մ. ակադ.** 5, 26, 28, 30, 31, 38, 39, 49, 63, 64, 127, 132  
**Բրուսա** 143  
  
**— Գադ** 9, 13, 22, 26, 34, 36, 51, 52, 55  
**Գագեցի** 67  
**Գագեցի Վահրամ (Վարամ)**. տես՝ **Վահրամ (Վարամ) Գագեցի**  
**Գագեցի Զաքարիա**. տես՝ **Զաքարիա Գագեցի**  
**Գագիկ Թագավոր** 97  
**Գալիլեական** 122  
**Գաղատիա** 20, 35  
**Գամբելեի Թորեցի** 11, 13, 28, 56, 57  
**Գամբելեի՝ Կախայի վորդի** 12  
**Գայանե** 98—100, 102, 103  
**Գանգրա** 20, 35

**Գանձա** || **Գանձակ** 10, 13, 15, 16, 22, 36, 43, 46, 52, 54, 59, 110—113, 115, 136, 137  
**Գանձակեցի Կիրակոս**. տես՝ **Կիրակոս Գանձակեցի**  
**Գանձակեցիներ** || **Գանձակեցիք** 21, 35, 50, 51  
**Գանջա** 110—113, 115, 136, 137  
**Գանձասար** 116  
**Գառնի** 46, 52  
**Գասկր** 110  
**Գարգարացվոց յերկիր** 28  
**Գարգման** 28, 46  
**Գարգմանք** 15  
**Գարեգին Հովսեփյան**. տես՝ **Հովսեփյան Գարեգին**  
**Գարեգին Սրվանձայան**. տես՝ **Սրվանձայան Գարեգին**  
**Գարեսջա** 119  
**Գարեսջիք** 67  
**Գարմիան** 8  
**Գարմնացիք** 12  
**Գարշաէք** 67  
**Գգչեկանք** 75  
**Գեգութ** 21, 22, 25, 35  
**Գեթսեման** 99  
**Գելաթ** 44, 97  
**Գելաթի քրոնիկոն** 3  
**Գեորգ III՝ Թագավոր Վրաց** 5, 7—11, 25—27, 29, 42, 43, 58  
**Գեորգ IV Լաշա** 3, 15, 22, 36, 42, 44—46, 49, 50—52, 58, 97, 108, 131  
**Գեորգ կրտսեր՝ Թագավոր Վրաց** 50, 61, 62  
**Գեորգ մեծավկա** 40  
**Գեորգ V Պայծառ** 49, 50, 63, 71, 97, 128, 129, 131  
**Գեորգ VII** 76, 77, 134, 143  
**Գեորգ X** 111, 112, 115, 138, 139, 141, 144  
**Գեորգ XI** 118, 122, 132  
**Գեորգ Ռուս** 12, 13  
**Գեսամանիա** 99  
**Գետիկ** 30, 64, 65  
**Գերմանացի** 124

**Գէորգ** || **Գէորգի**. տես՝ **Գեորգ**  
**Գիլան** 104, 107  
**Գիորգի**. տես՝ **Գեորգ**  
**Գոգի** 97  
**Գոշ Մխիթար**. տես՝ **Մխիթար Գոշ**  
**Գորալաուք** 15  
**Գորգասալություն** 104  
**Գորգի Թագավոր** 25, 26.  
**Գորգի Զանիձե** 82  
**Գորգիջանիձե Փարսազան** 3, 82—88, 105, 114  
**Գորգէ**. տես՝ **Գեորգ**  
**Գորեցի** 82  
**Գորի** 79, 111, 113, 115, 117, 137, 140, 141  
**Գորլաբուն** 15  
**Գուգարեխ** 118  
**Գուգրամ** 105  
**Գուգրի-խան** 115  
**Գուրիա** 137  
**Գուրիացիք** 15  
**Գուրիել** 78, 115  
**Գուրշի-բողազ** 74, 144  
**Գուրշիստան** 107  
**Գլանցա** 58, 59  
**Գրիգոր Բարհեբրեյ** 29  
**Գրիգոր Դմնացի** 31  
**Գրիգոր Մոնոնիկ** 31  
**Գրիգոր Նյուսացի** 67  
**Գրիգոր Պարթև** 8, 26, 37, 88—93, 96, 104, 105, 124, 129  
**Գրիգոր Տղայ** 64  
**Գրիգոր Տուսայ որդի** 31  
**Գրիգորէս Հաղբատայ** 30, 31  
  
**— Ղաղիան**. տես՝ **Ղաղյան**  
**Ղաղյան** 113, 136  
**Ղաղյաններ** 50  
**Ղաղյան Լեան** || **Լեվան** 112  
**Ղաղյան Շանշե** 8  
**Ղաղյան Վարդան** 12, 13  
**Ղաղյան Տոանա** || **Տոանէ** 54, 57, 78  
**Ղաղստան** 107, 111  
**Ղամանա** 121, 126  
**«Ղաղանց Թուղթ»** 87, 105

**Ղաուդ-խան** 113, 137, 140  
**Ղավիթ Աղթամարցի** 30, 31  
**Ղավիթ-բեկ** 88  
**Ղավիթ՝ Թագավոր Կախքի** 121  
**Ղավիթ՝ հայր Սմբատի** 5, 106  
**Ղավիթ մարգարե** 31  
**Ղավիթ II Շինող** 5, 25, 37, 38, 42, 43, 97  
**Ղավիթ Սոսյան** 14, 15, 17, 20, 21, 29, 35, 36, 46  
**Ղավիթ՝ վորդի Լաշայի (Ռուս Ղավիթ)** 50, 58, 63, 108  
**Ղավիթ՝ վորդի Ռուսուղանի (Ղավիթ-Նարին)** 50, 53, 55, 58, 59  
**Ղավիթ Գորայրեցի** 31  
**Ղավիթ VI Թագավոր** 50, 61, 70  
**Ղավիթ VII Թագավոր** 109  
**Ղավիթ IX Թագավոր** 144  
**Ղավիթ X** 111, 137  
**Ղարաղուզ** 24  
**Ղարաչիչակ** 68  
**Ղարբազ գյուղ** 114  
**Ղարեջան արքայադուստր** 119  
**Ղարուբանդ** 54  
**Ղարուբանդցիք** 25  
**Ղեբեդ** || **Ղեբեդա-չայ** 63  
**Ղեմետր** 10, 11  
**Ղեմետր I** 25, 38, 42  
**Ղեմետր II** 50, 58—59, 60—62, 70, 97  
**Ղեմետրե**. տես՝ **Ղեմետր**  
**Ղեմէէ** 27  
**Ղեվա-Բոին** 74  
**Ղեվա-Կլիտիանե** 98, 100  
**Ղեր** 25, 51  
**Ղերբենացիք** 25  
**Ղիադոստո Պրոկղ** 67  
**Ղիասամիձե կաթողիկոս** 114  
**Ղիարբազ** 8  
**Ղիարբեքի** 8, 107, 135  
**Ղիդոներ** 104  
**Ղիմիտրի**. տես՝ **Ղեմետր**  
**Ղիմուշկ** 43  
**Ղիոկղետիանոս** 98, 100, 106  
**Ղմանիս** 10, 38, 62  
**Ղոնդուա Կ. պրոֆ.** 127  
**Ղորսթեոս Տյուրացի** 123



Գուհի 141  
Գուհին 26, 28  
Գուր 21, 31  
Դվին 7, 12, 16, 17, 22, 25, 26, 28, 30, 31, 34—36, 43, 46, 51, 52, 54, 66, 67  
Դվինացի Գրիգոր 31  
Դվինացի Անանիա. տես՝ Անանիա  
Դվինացի  
Դվինացիք 12, 14

— Եզարայան 56, 57  
Եզինկայեցիք 20, 35  
Եզինկա 21, 35, 55  
Եզինկի 57  
Եթիովացի 124  
Ելզազուզ 11  
Ելզիզուզ 10  
Ելեկեցի 15  
Ելենե 115  
Ելիա կացի 9  
Ելիկում Որբել 58  
Ելիկում Որբել կրասեր 58  
Ելեկեցի 15  
Ելակուզ 26  
Ելիայ 31  
Եջմիածին 29, 67, 89, 90, 100, 126, 129  
Եջմիածնական 124  
Եջմիածինի 89, 90  
Եսաիա 134, 143  
Եվփրատ 122  
Երան 107, 113, 115  
Երեուն 144  
Երեվան 110—112, 114, 115, 144  
Երզնկանի 122  
Երզնգի 108  
Երիթ-Գուզ 16  
Երինջազ 133, 143  
Երիսթավի Ռ. 120  
Երծո 61  
Երկայնաբազուկ 27  
Երուշնելի 74  
Երվան 111

— Զարափով Սա. 120  
Զարիշատ 74

Զարիշատ Գարթլի 79, 140  
Զարիշատի 74  
Զաքարէ. տես՝ Զաքարիա  
Զաքարիա Գազեցի 12, 13, 24, 34, 55  
Զաքարիա՝ վորդի Խվաշազի 63  
Զաքարիա Մխարզրձեղի (Բ.) 11, 12, 14, 16—24, 28, 30—32, 36, 43—46, 51, 59, 64—66, 68  
Զաքարիա Նկարիչ 88  
Զերեզե արքեպիսկոպոս 141  
Զորակերտ 22, 36  
Զուրաբ 38, 39

— Էջմիածին. տես՝ Եջմիածին

— Քաղեստ առաքյալ 100  
Քաթար || Քաթարներ 37, 51, 52, 54—57, 59—62, 64, 65, 108, 111, 114, 125, 134, 135, 137, 141, 144  
Քաթարանալ 107  
Քաթեստ 100  
Քալիչ 110  
Քաղայշիլի Ե. պրոֆ. 5, 37—39, 49, 65, 71, 73, 79, 81, 128, 131  
Քահր սուլթան 107  
Քամազ [Շահ- 110, 111, 135—137, 140  
Քամար Քազուհի 3, 5—7, 11—15, 21, 22, 24, 25, 28, 29, 33—36, 42—46, 50, 64, 84, 85  
Քամարաշիլի Մ. 120  
Քայլարուկ 65, 68, 69  
Քանքուզ 59  
Քավրիզ 107, 108, 110—112, 114, 127, 133, 137, 138, 141, 143  
Քարգամոսյան տուն 18, 19  
Քեզուխար 60  
Քելավ 60  
Քեղինիք 31  
Քեմուր-շահ 78, 107, 140  
Քեյմուր 107, 108  
Քեյմուրազ Քազավար 112, 113, 115  
Քեոզուս 95, 96  
Քեոզուրյան կյուրակի 81  
Քեվաթորոս 95, 96  
Քէոզուս 30, 128

Քէոզուսաւզիս 31  
Քիանեթ 61  
Քիր-սուլթան 133  
Քիֆիլիզ 27  
Քմոզվի 13  
Քմոզվեցի || Քմոզվեցիներ 21, 23, 61, 62  
Քմոզվեցի Սարգիս 34, 35, 37  
Քոնդրակելի 122  
Քոնդրակելուրա 122  
Քոնդրակեցի 122  
Քոնդրակեցություն 122  
Քովմա Մեծոփեցի 63, 69, 70, 134  
Քարգամյան տուն 18, 19  
Քորեցի Գամրեկելի 11, 56; 57  
Քորեցի զորավար 9  
Քորեցի Հովհան (Իվանե). տես՝ Հովհան Քորեցի  
Քորեցի Շալվա. տես՝ Շալվա Քորեցի  
Քորեցի Շոթա Կուպր. տես՝ Շոթա Կուպր  
Քորեցիներ || Քորեցիք 10, 14, 15, 21, 23, 50, 52—54, 61, 62  
Քորթում 74  
Քումանիշիլի 83  
Քումանիշիլի Բայանդուր (Բախնդուր) 114  
Քուշեր 115  
Քուրք || Քուրքեր 11—12, 20, 34, 35, 43, 56, 62, 124, 125  
Քուրք-Դարմնացիք 12  
Քուրքերեն 65  
Քուրքմեններ 12, 13, 57, 143, 144  
Քուրքմենություն 12  
Քուրքստան 107, 137  
Քուրալ-դան 61  
Քոնդր 13, 53, 54, 59, 64, 133  
Քրդաստ 4, 37, 90  
Քրեկեթ 53  
Քրիստեթ 13, 53, 54, 59, 64, 133

— Փորդանիս Բ. 40, 45, 73, 76

— Իբն-Ալ-Աթեր 26  
Իբն-Ալասիր 31

Իբն-Պալիկանի 32  
Իգնատիոս վրդ. 30  
Իեջմիածին 100  
Իման-դուլի-խան 113  
Իմերեթ 112, 135, 137  
Իմերեցիներ || Իմերներ 112  
Իմերցի 140  
Իմերցիք 76, 113  
Իմերք 112, 135, 137  
Ինգորոզվա Գ. 64  
Ինէ՝ որդի Հիպարիտի 27  
Ինճիճեան Է. 123  
Իշխան 48  
Իշխանցի 48, 74  
Իոանե կաթողիկոս 16—20  
Իոանե Մխարզրձեղ 50  
Իոսուր 54, 55  
Իովանե դպրապետ. տես՝ Հովհան դպրապետ  
Իոր 53, 55  
Իպոողիա 123  
Իսավրիա 20, 35  
Իսլամ 83  
Իսկանդեր-Մուսչի 83, 86  
Իսկանդեր փաշա 136  
Իսմայելացիք 8  
Իսմայել-Միրզա 136, 140  
Իսմայել [Շահ- 110  
Իսպահան 114  
Իսպիան 23  
Իսպիր 74  
Իվան Տրեկի 67  
Իվանե Ախալցխեցի. տես՝ Հովհան Ախալցխեցի  
Իվանե վորդի Աղբուղայի. տես՝ Հովհան վորդի Աղբուղայի  
Իվանե դպրապետ. տես՝ Հովհան դպրապետ  
Իվանե Խիխթա-Անարայի իշխան. տես՝ Հովհան Խիխթա-Անարայի իշխան  
Իվանե Կայենի տեր. տես՝ Հովհան Կայենի տեր  
Իվանե Մխարզրձեղ. տես՝ Հովհան Մխարզրձեղ  
Իվանե Որբել. տես՝ Հովհան Որբել

Իվանն Վարդանի վորդի տես՝ Հովհան  
Վարդանի վորդի  
Իրադ 9, 57  
Իրան 9, 34, 95, 96, 107, 113, 115, 127  
Իրանական 64

— **Լաթին** 122  
**Լաթինացի** 124  
**Լալա-փաշա** 80, 111, 137, 138, 140  
**Լալայան Յե.** 27, 65, 68, 69  
**Լալվար** 65  
**Լամբրոնյան ներսես. տես՝ ներսես**  
**Լամբրոնյան խմբ.**  
**Լանդ-Քամուր** 85, 107, 132—134, 142,  
143  
**Լանկ-Քամուր** 63, 69, 85  
**Լաշա** 46, 51  
**Լաշա-Գեորգ. տես՝ Գեորգ Լաշա**  
**Լավրենտի || Լավրենտիոս** 124  
**Լառնէ** 67  
**Լաֆոնտեն** 120  
**Լենինգրադ** 84, 87  
**Լես** 65, 88, 116  
**Լեոն (Լեոն) արքայազն** 118  
**Լեոն (Լեվան) բատոն** 135  
**Լեոն (Լեվան) Գադյան. տես՝ Գադյան**  
**Լեոն**  
**Լեոն (Լեան) թագավոր** 126  
**Լեոն (Լեան) կայսր** 30, 128  
**Լեոն պատրիարք** 91  
**Լեոնտիոս Ռուխսեցի** 63  
**Լիխ** 21, 35, 70  
**Լիպարիտ Որբելյան** 27, 58  
**Լիպարիտ Սմբատի վորդի** 10  
**Լիսիցյան Ս.** 27  
**Լյուդովիկոս** 120  
**Լոսի** 10, 11, 14, 30, 37, 38, 65, 80,  
111, 115, 135, 137, 141, 144  
**Լոսէ** 27, 30, 65  
**Լորե || Լորի** 111  
**Լուարսաբ արքայազն** 83, 116  
**Լուարսաբ I** 110, 111, 115, 135, 136,  
138, 140, 141  
**Լուսեբրան** 125  
**Լուսավորիչ** 92, 104, 129

**Լորստան** 107  
**Լվարսաբ. տես՝ Լուարսաբ**  
— **Խալիբեդ** 135  
**Պարիերդիք** 20, 35  
**Պարուլ** 97  
**Պաղրակյունք** 27, 31, 32, 45  
**Պաշեն** 14  
**Պաշենեցի** 16  
**Պաշենեցի Վախտանգ** 15  
**Պաշիան** 14  
**Պաշինեցի** 16  
**Պատիս-ստիկի** 138  
**Պարբերդիք** 20, 35  
**Պարկրծեալ** 70  
**Պիլիթա** 40  
**Պլաթ** 25, 28, 44, 46, 51, 54—56, 58  
**Պլաթեցի** 44  
**Պնուա** 74  
**Պաշա-Շամշադին** 59  
**Պոսրով I** 85, 87, 95, 105  
**Պոսրով II** 95  
**Պոսրով III** 96  
**Պոսրով դուխա || Պոսրովիդուխա** 11, 90  
**Պորասան** 9, 23, 32, 57, 107, 119  
**Պորենացի** 86, 105, 123  
**Պոր-Վիրապ** 16, 104  
**Պուդափրիդի կամուրջ** 43  
**Պութլու-բուղա** 70  
**Պունձախներ** 25  
**Պուլտու-շահ** 61  
**Պվաշազ || Պվաշաք** 58—60, 63  
**Պվարազմացիներ || Պվարազմացիք** 52—  
54  
**Պվարասան** 9, 23, 119  
— **Սանարք** 71  
**Սինձալ** 79  
**Սորոփոր** 65, 66  
— **Կաթիրեվան** 7  
**Կաթուղիկէ Անվոյ** 38, 39  
**Կաթուղիկէ Էջմիածնի** 66, 70  
**Կալուներո** 20

**Կախա Գամրեկել. տես՝ Գամրեկել Կա-**  
**խալի որդի**  
**Կախարբեր** 58  
**Կախեթցիք || Կախեր || Կախք** 15, 23, 50,  
204. ... Շահ-Արասը (Շարազը)<sup>23</sup> գրավեց Թավրիզը և, որքան էլ Ատրպատականը տարածութուն ուներ, այն եվս ամբողջ գրավեց, բացի Երևանից և Բաղդադից:

220. ... Ուռումներն եկան Լոռի և գրավեցին Լոռվա բերդը ու մտցրին այնտեղ իրենց զորքը. ապա գնացին և Սվիմոն Թագավորին<sup>24</sup> տարան Ստամբուլ:

222. Գիորգի Թագավորը<sup>25</sup> մոտեցավ Լոռվա բերդին և վերցրեց բերդն ու գրավեց Լոռին:

226. ... Շահ-Արասն եկավ Երևանը գրավելու համար և կանչեց Գիորգի Թագավորին և Կախեթի Ալեքսանդրե բատոնին օգնության՝ Երևանը գրավելու համար: Եվ սրանք երկուսով իրենց զորքով գնացին: Եվ երեք անկյունում ինքն (Շահ-Արասն) էր կանգնած, իսկ մեկում սրանց (Գիորգիի և Ալեքսանդրեի) զորքերը տեղավորեց: Եվ երբ դ'աննը հրամայեց գրոհ տալ, այն ժամանակ առավելապես վրացիներն աշխատեցին և անցան պարիսպների մեջ և խիստ պատերազմեցին. մինչև որ զզլրաշները կմտնեին, վրացիները գրավեցին ամրոցները, ցույց տվին դ'աննին [իրենց] ուժն ու կորովը, և գրավեցին բերդը:

227. Ապա՝ գրավելով Երևանը՝ դ'աննը սկսեց բանակեցել Գիորգի Թագավորի հետ, այսպես ասելով. «Քանի որ խոնթքարը և՛ իմ և՛ քո թշնամին է, այժմ, քանի որ ես ջանք եմ թափել ու եկել այստեղ, Լոռին թող իմը լինի»: ... Գիորգի Թագավորը... զիջեց: Ապա Շահ-Արասը գրավեց Լոռվա բերդը և իր զորքը մտցրեց բերդի մեջ, և վերադարձավ իր տերութունը:...

247. ... Ղրիմեցիք եկան հասան Դոես: Երբ որ նրանք հասնում էին [այդտեղ], գորեցի մի տերտեր (տերտերա)<sup>26</sup> մեն-մենակ ոչինչ չզգալով՝ գալիս էր Գորուց: Եվ այս ու այն կողմն հայելով՝ [հանկարծ] նկատեց, որ Դոեսը և նրա դաշտերը զորքով է լցված: Ապա տերտերը դիտի ընկավ, որ նրանք վրացիներ չէին: Տերտերը զգաց, որ նրանք անօրեններ են և երկիրն ավերողներ: Եվ այն տերտերը շտապ վերադարձավ և վազեց Գորու ուղղությամբ, անցավ Կուրի կամուրջը և հանեց կամրջի բոլոր տախտակները, որ և ջուրը թափեց, և կամուրջը քանդեց: Իսկ երբ զրիմեցիք ուղղակի կամրջին հասան, տեսան այն քանդված, նեղ տեղն ընկան և չկարողացան կամրջով անցնել<sup>27</sup>:

300. ... [Սամցխեի] աթաբակ էր Մանուչար աթաբակի որդի Մանուչարը, որ Սվիմոն Թագավորի<sup>28</sup> քեռորդին էր: Եվ Թեյմուրազ [Կախեթի] տերը Օլթիսում բնակեցրեց իր ընտանիքը:

Հենց որ նրանք գնացին, զ'անենին հաղորդեցին թեյմուրազ բատոնիի գնալը խոնթքարի մոտ և նրա ընտանիքի քնալը Սաաթարագոյում: Այն ժամանակ [զ'անենը] նամակ գրեց Երեվանի խան Ամիրզունա-խանին... Ապա Ամիրզունա-խանը գնաց [Օլթիսի]... Իսկ նույն գիշերը թեյմուրազ բատոնիի կինը Խորաշանն երազ էր տեսել, իբր թե զզլրաշները հարձակվել էին նրա վրա և կողոպտել նրա գանձարանը և ունեցվածքը. և՛ զարթնելով՝ Խորաշան տիրուհին հենց նույն գիշերն և եթ շարժվել էր տեղից ու Օլթիսի քաղաքից անցել էր դեպի բերդը. և ամեն ոք և ամեն ինչ, որ հետն ուներ, բոլորը տարել էր բերդը, քանի որ մինչ այդ բերդից ցած էին կանգ առել: Եվ գնաց Ամիրզունա-խանն այն գիշերը, հասավ այնտեղ, ուր թեյմուրազ բատոնի կինն ու երեխաներն էին գտնվում, և հենց նույն գյուղի վրա հարձակվեց, և ավերեց այն գյուղը:

319. ... Եվ տեսավ աթարակն Երևանի խան Ամիրզունա-խանին՝ իր սնոգին, սպառնաց նրան և թրով խփեց նրա սաղավարտի ծայրին, սաղավարտը ձեղքեց, գլխին խիստ խփեց և վայր ձգեց: Ամիրզունա-խանը կանչեց. «...Ինչո՞ւ ես ինձ սպանում, չէ՞ որ քեզ ես եմ մեծացրել»...

323. Եկավ զզլրաշների զորքը, և մտավ Սարարաթաշիլիս և Սուխիթ, որ և կողոպտեց, ու քնաց այնտեղ:

328. ... Երբ Շահ-Աբասը մեռավ<sup>29</sup>, զզլրաշների մեջ հուզում սկսվեց, և Կարսի բեգլարներն ուղում էին Էրանը կործանել: Իսկ Խոսրո Ղ'ուլարաղան ամրացրեց Կարսը և դուրս բերեց Շահ-Աբասի որդի Շահ-Սեֆիին (Շահ-սեֆի)<sup>30</sup> և զ'անն նստացրեց, ապա՝ վերադառնալով՝ ամրացրեց Կարսը և շատ հնազանդ քնաց առ զ'անենը: Եվ զ'անեն էլ ողորմած էր դեպի նա:

345. Ապա [Կախեթի թեյմուրազ բատոնը] գլխեց վրացիներին և կախեթցիներին, որոնք հավաքվեցին, և գնաց գերելու և ավերելու Ղարաբաղը. և անահնկալ կերպով հարձակվելով՝ [նրանք] ամբողջապես թալանեցին ու ավերեցին Ղարաբաղը, շատ գերիներ վերցրին ու հաղթական վերադարձան Կախեթ:

353. ... Խոստում թագավորին<sup>31</sup> օգնության եկան Լոռվա խանը, Ղազախի խանը և Շամշադիլի խանը:...

356. ... Խոստում [թագավորը]... այգի տնկեց [Տիգրիսում] Իշխուրատուքի<sup>32</sup> տակը...

365. ... Գիորգիի որդի Ալեքսանդրե [Իմերեթի թագավորը] Դադիանուց խնդրեց ազատել իր հորը և խոստացավ փրկանք

առաջ, Իսկ Դադիանին պահանջեց, որպեսզի Չիխորիի և Չխարիի հայերը տրվեն նրան իբրև փրկանք: [Ալեքսանդրեն] տեղահան արավ և տվեց [Դադիանուն] այն, ինչ որ նա ապսպրել էր և ազատեց իր հորը, որին և բերեց Իմերեթ:...

459. ...Երևանի խանը և Քալբալիխանը նախանձում էին իրար և այդ պատճառով Երևանի խանը որոշեց նամակ գրել Գիորգի թագավորին:... [Գիորգի] թագավորը ...Երևանի խանին հարեց և նրա բարեկամը դարձավ: Իսկ Երևանի խանը տեղեկացրեց այս մասին զ'անենին, և շատ ուրախացավ շահ Սուլթան Հուսեյն զ'անենը<sup>33</sup> Գիորգի թագավորի հետ հաղթութուն կնքելու մասին և շնորհեց Երևանի խանին թովանգչի-աղասու-թյուն, որ է բոլոր հրացանակիրների տեր և տնօրենը:... Եվ Երևանի նախարին և այլ մեծամեծներին, զ'անենի հրամանի համաձայն, ուղարկեցին... [Իմերեթի] թագավորին ծառայեցնելու:...

Մ Ա Ն Ո Ւ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Գիորգի կրտսեր կոչված Վրաց թագավորի և այս հատվածում հիշված պերսոնաժի ժամանակագրությունը ճշտելու համար (համտ. մեր «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», II, 50, 61) կարևոր է նշել, որ առ Դավիթ VI-ի, այսինքն Ուլու-Դավիթի որդին էր: Էգնատաշվիլին (նոր Քարթլիո ցեղովորացի XVIII դ. սկզբ., վրացերեն, հրատ. Ի վ. Ջավախիշվիլու, Քր., 1940, էջ 1) սրան համարում է Բագրատունյաց (Բագրատունիների) 67-րդ թագավորը: Համաձայն Ի վ. Ջավախիշվիլու հետադու-տություն (Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, գիրք երրորդ, (XIII—XIV դդ.), Քր., 1941, էջ 149, Վրաստանի պատմությունը (XI—XV դդ.), համառոտ տեսություն, վրացերեն, Քր., 1949, էջ 188, 277), այս Գիորգին գահ է բարձրացել Օլթիսի խանի հրամանով Վախտանգ III-ի մահից (1308) երրորդ տարին, հետևապես 1310 թվին: Հստ Վախուշտի ժամանակագրություն (Ք. Ց., II, Գ. Չուբինովի հրատ., ՍՊՔ., 1854, էջ 237) վախճանված պիտի լինի 1318 թվին: Համտ. Ի վ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, գիրք երրորդ (XIII—XIV դդ.), վրացերեն, Քրիլիսի, 1949, էջ 258—259,

<sup>2</sup> Լանկ-Քիմուր կամ Քեմուր-Լենդ մոնղոլական խան, 1360—1405 թթ.:

<sup>3</sup> Այստեղ, հավանական է, ակնարկած է թովմա Մեծոփեցու Պատմու-թյունը (տես Պատմութիւն Լանկ-Քիմուրայ և յաջորդաց իւրոց արարեալ թովմա վարդապետի Մեծոփեցու), ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք կարապետ վարդապետ Շահնազարեան (Շար հայ պատմագրաց), Փարիզ, 1860: նաև թովմա Մեծոփեցի (Վրաստանի պատմության աղբյուրներ. Սերիա III, Հայ չեղինակներ), թարգմանություն, ներածական և կոմենտարներ պրոֆ. Լ. Մելիքսեբ-Քեկի, հայերեն և վրացերեն, Քր., 1937):

<sup>4</sup> Բագրատ V, մեծն, Վրաց թագավոր, 1360—1393 թթ.: Այս Բագրատի մասին մանրամասն տես Ի վ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատ-

մուսթյունը, III, Քր., 1941, 179—191, էջ 223—225, նույնի՝ Վրաստանի պատմությունը (XI—XV դդ.), համառոտ տեսություն, վրացերեն, Քր., 1949, էջ 204—205, 277, նույնի՝ Վրաց ժողովրդի պատմությունը, գիրք երրորդ (XIII—XIV դդ.), վրացերեն, Քր., 1949, էջ 282 և այլն:

5 Գիրքի VI, Վրաց թագավոր, 1393—1407 թթ.: Այս Գիրքի մասին մանրամասն տես Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, գիրք երրորդ, 1941, 191—193, 223—225: Նույնի՝ Վրաստանի պատմությունը (XI—XV դդ.), 1949, էջ 209—210, 277:

6 Հմմտ. Մեսրոպ արքեպ. Սմբատեանց, Նկարագիրս. Կարապետի վանուց Երնջակայ, Քիֆիս, 1904: С. Тер-Аветисян. Крепость Еринджак (Алинджа-кала), „Бюллетень Кавк. Ист.-Археол. Института“, № 8, Лнгр., 1931, стр. 16.

7 Սոսը Գիրքի V Պայծառի մասին է, 1314—1346 թթ.:

8 Տես 4-րդ ծանոթ.:

9 Ուզուն-Հասան կամ Հասան-բեյ Ակ-կոյունլու թուրքմենական ցեղի խան, 1466—1478 թթ.: Մանրամասն տես Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, հատոր IV, պրակ I (XV դար), Քր., 1924, էջ 125—132, նույնի՝ Վրաց ժողովրդի պատմությունը, գիրք չորրորդ (XV—XVI դդ.), վրացերեն, Քր., 1943, էջ 119—120:

10 Այժմյան Սուրամի լեռնաշղթան:

11 Նույն Սամշվիլին է:

12 Կոստանտին I, Վրաց թագավոր, 1407—1411 թթ.:

13 Ի նկատի ունի Կոստանդին II-ին, 1479—1505 թթ.: Մանրամասն՝ Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, IV—1, էջ 133—183, նույնի՝ Վրաց ժողովրդի պատմությունը, գիրք չորրորդ (XV—XVI դդ.), 1948, էջ 127—172:

14 Այսինքն՝ Դավիթ VIII, 1505—1525 թթ.:

15 Լուարսար I, 1534—1558 թթ.:

16 Իսմայիլ I, Պարսից շահ, 1499—1525 թթ.:

17 Քամազ, Պարսից շահ, 1525—1576 թթ.:

18 Սուլեյման կամ Սյուլեյման, Օսմանցոց սուլթան, 1520—1566 թթ.:

19 Լեվան, Կախեթի թագավոր, 1520—1574 թթ.:

20 Իսմայիլ, հետագայում Պարսից շահ՝ 1576—1577 թթ.:

21 Սվիմոն I, Վրաց թագավոր, 1558—1600 թթ.:

22 Պատիս-սոփելի՝ Բոլնիսի հայոց հռչակավոր ուխտատեղին է:

23 Աբաս I, Պարսից շահ, 1587—1629:

24 Տես 21-րդ ծանոթ.:

25 Գիրքի IX, Վրաց թագավոր, 1600—1605 թթ.:

26 «Տերտերա» ազգագրած՝ «տեներա» հայ քահանայի հոմանիշն է վրացերենում՝ տերտեր բառից:

27 Այս էպիգոզը, որ տեղի է ունեցել Վրաց Լուարսար II թագավորի օրոք (1605—1616), նկարագրած է նաև Քարթլիս-ցխովրեբայի III շարունակության մեջ (տես Վրաց ազդեցությունը, II, 141), նաև Վախուշտիի պատմության տեքստում (տես սույն հատորի Գ զուգը, էջ 63):

28 Սվիմոն II, Վրաց թագավոր, 1619—1629:

29 1629 թվին:

30 Սեֆի կամ Սաֆի I, պարսից շահ, 1629—1642:

31 Ռոստոմ I, Վրաց թագավոր, 1632—1658 թթ.:

32 Իշխուհուհուհի նույն Իշխուհուհուհու է, որ հայտնի է և աշխարհագիր Վախուշտիի «Քարթլիի պատմություն» և «Աշխարհագրություն»-ից (տես սույն հատորի Գ զուգը, էջ 64), այժմյան Մամադավթի կամ Մթածինդայի լեռը՝ Քրիլիսիի արևմուտքից: Այս անունը, անտարակույս, հայկական ծագում ունի (Լ. Մելիքսեբ-Քեկ, Վախուշտիի «Իշխուհուհուհու»-ի մասին. Հին Տփղիսի շուրջը, վրացերեն, — «Պատմության Տեղեկագիր», 1924, գիրք II, էջ 229—232: Ս. Меликсет-Бекоев, Тифлис, его основание и краткий исторический очерк, — Путеводитель „Тифлис и его окрестности“, Тифлис, 1925, стр. 21. Լ. Մելիքսեբ-Քեկ, Դավիթ Անհագթի Վրաստանում լինելու հարցի շուրջը. «Գրական-բանասիրական հետախուզումներ», I, Երևան, 1946, էջ 256: Հմմտ. նաև Ս. Иоселани, Гора св. Давида в Тифлисе, Т., 1858, стр. 3—4. Նույնի Описание древностей города Тифлиса, Т., 1866, стр. 43.

33 Հուսեյն կամ Հյուսեյն, Պարսից շահ, 1694—1722 թթ.:

Բ

Մ Ե Խ Ե Ի Կ Ա Չ Խ Ե Ի Ը Ե

«ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» (1739)

Մեխնիա Չխեիձեն Գիորգի XI Քարթլիի թագավորի (1676—1688) պալատական գործիչներից մեկն է. հայտնի է իրրե հեղինակ պատմական երկասիրության, որ «Թագավորների պատմությունը» (ցխովրերա մեփեթա) վերնագիրն է կրում: Պատմությունն ամփոփում է պատմական տեղեկություններ Վրաստանի և հարևան երկրների մասին շուրջ 1653—1739 թթ., ուր սկզբնական մասը՝ շուրջ 1653—1687 թթ.՝ գրի է առնված ըստ ուրբիշների հաղորդած տվյալների (այս մասում Հայաստանի և հայերի մասին ոչինչ չկա), ապա՝ 1687—1739 թթ. ներքո՝ իրեն իսկ հեղինակի, իրրե ականատեսի, նկարագրածն է:

Մեխնիա Չխեիձեի երկասիրությունը հրատարակված է պրոֆ. Դ. Չուբրինովի լույս ընծայած «Քարթլիս ցխովրերա»-ի II մասում, ՄՊԲ., 1854, էջ 307—342, նաև արտատպված է Չ. Ճիճինաձեի հրատարակած «Վրաստանի կյանքը» (Սաքարթվելոս ցխովրերա) գրքում, Թբ., 1913, էջ 1—52: Նույնը կա և Ֆրանսերեն թարգմանությունը ակադ. Մ. Բրոսսեի (M. Brosset) Histoire de la Géorgie, II Partie, II livraison, SPB. 1857, pp. 7—54:

Հեղինակի ու նրա երկի մասին տես Իվ. Ջավախիշվիլի. Հին վրացական պատմական գրականությունը, V—XVIII դդ., վրացերեն, ա. տպ., Թբիլիսի, 1916, էջ 320—327, բ.—գ. տպ., Թբ., 1945, էջ 362—368:

Քաղվածքների թարգմանությունները բերում ենք համաձայն Դ. Չուբրինովի հրատարակության:

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1687—1739 ԹԹ.]

384 [=1696] թ... Ամիլախորին Իմերեթում պարտվել էր, ձևացած [իշխաններ]ին էրեկլե թագավորն<sup>1</sup> յուրաքանչյուրին իրեն կալվածքում թողեց, քանի որ ղ'անը<sup>2</sup> հրամայել էր. «Յու-

րաքանչյուրին իրեն կալվածքը տուր:» [Ուստի] և նրանք իրենց ընտանիքները տեղում թողին, և իրենք Գիորգի թագավորին<sup>3</sup> ուղեկցեցին, անցան Թուրքիթը և հասան Երևան, տեղեկացրին ղ'անին...

391 [=1703] թ. ... Վախտանգ արքայազնը<sup>4</sup> լսելով [իր հոր գալու մասին] և ժողովելով վրացական զորքեր՝ ընդառաջ գնաց հորը Տաշիրում...

407 [=1719] թ. ... քորոնիկոնի 407, օգոստոսի 7-ին Վախտանգ թագավորը՝ դուրս գալով Ղազվինից՝ հասավ Այդար-բեկի սահմանը Հոռիում, ուր նրան ներկայացավ նրա որդի Բաքար թագավորը՝ վրացական զորքով...

410 [=1722] թ. ... ղ'անը խալաթ և ղ'ուլարաղասություն\* շնորհեց Բաքար թագավորին և խնդրեց օղնություն: Բաքար թագավորը ցանկացավ գնալ և կանգ առավ Տաշիրում. Սակայն Վախտանգ թագավորը խորհուրդ չտվավ իր որդուն գնալու և վերադարձրեց: Եվ մի փոքր ժամանակում Կախեթը, Երևանը, Շամշադինը... (Շամշադիլս) և Ղազախը տրվեց էրեկլե թագավորի որդի Կոստանտինին (Կոստանտինին), որ պարսկերեն Մա[ն]մադ-ղ'ուլի-խան էր կոչվում: Էրեկլե թագավորի որդին եկավ Շամշադին...

Այս պահին Վախտանգն ստացավ ղ'անից խալաթ և արծաթե դուրդ (լախտ) և զորապետության (սարգլորա) կոչում, նաև պահանջ, որպեսզի նա Շիրվանի վրա արշավի, քանի որ Շիրվանը լեզգիների ձեռին էր: Ժողովվեց վրացական զորքը: Այս պահին եկավ Ռուսաստանի Պետրոս կայսեր՝ դեսպանը Վախտանգ թագավորի մոտ, որին մատուցեց ողորմածություն հրովարտակ և [առաջարկ] ներկայանալ իրեն (Պետրոսին). «Օգնականությունը Քրիստոսի ելա իմ աթոռանիստից, արմատախիլ արի թշնամիներին և դայիս եմ Շիրվանի կողմերը, տես զորքիս փայլն ու մեծությունը»: Թագավորին այս դուր եկավ, մեծ ուրախություն մը [ընդունեց նրան], քանի որ քրիստոսասեր էր... Վախտանգ թագավորը ճանապարհ ընկավ, հասավ Գյանջայի երկիրը, կանգ առավ Շամխորում (Շանքոր), կայսրն ուշացավ: Ինչպես պարզվեց, կայսրը Աստրախանից (Աշտարխանից) վերադարձել էր: Թագավորը շատ վշտացավ, [նրա] թիկունքում ըմբոստացավ Կախեթի բառոն Կոստանտինին, քանի որ Ղազախն ու Շամշա-

\* Ֆրանսերեն թարգմանության մեջ՝ le titre de qoular-aghas (M. Brosset, Histoire de la Géorgie, II, 36).

դինը նրանն էին: Սկսեցին պարենավորման հափշտակումը և մարդկանց կոտորածը, [ուստի և Վախտանգը] Շիրվանի կողմը շանցավ...

411 [=1723] թ. ... սարասքյար Իբրահիմ-փաշան գտնվում էր Ղարսում:... Բաքար թագավորը և նրա քեռին (բիձա) Իեսե թագավորը<sup>7</sup> հանդիպեցին իրար Տաշիրում:...

412 [=1724] թ. ...Այս պահին սարասքյարը գնաց Երևանի վրա... Սարասքյարը հասավ և դրավեց Երևանի բերդը, և Երևանի խան Ալիդուլի-խանին դուրս հանեցին այնտեղից:...

413 [=1725] թ. ... խոնթքարը շնորհեց Քարթլին Իսաղ-փաշային և Երևանը Ռաջա-փաշային, սարասքյարու թյունը՝ Սարի Մուստաֆա-փաշային: Սա գրավեց Լոռվա բերդը, իջավ Գյանջա:...

417 [=1729] թ. ... հայերը Ջատիկը կրկնապատկին (ախարկյուրակեին) լուսացրին և Թեոդորոսի կյուրակեին միս կերան<sup>8</sup>:...

418 [=1730] թ. ... դուրս եկան ճարեցիք [և] ավերեցին Բոլնիսները (Բոլնիսերի) և Սոմխիթը, [շատերին] կոտորեցին և տարան շատ գերիներ և տավար-ոչխար:...

420 [=1732] թ. ... լեզգիները մտան Սոմխիթ և մոտեցան Սամշվիլդեին: Սամշվիլդեի տերն էր Իեսե թագավորի որդի Աբդուլա-բեկը, որն այն ժամանակ Սոմխիթումն էր գտնվում: Հենց որ զորքի գալու մասին տեղեկացրին, նրան օգնության հասան Ղափլանիշվիլի Քայխուսրոն, Սարարաթաշվիլոյի զորապետը (սարդալի) և նրանց ընտանիքները ու Սոմխիթի զորքը:...

Սուլյն թվին Իսաղ-փաշային տվին Քարթլին, սրա որդի Ուսու-փաշային՝ Ախսայցիխեն և Օսման փաշային՝ Ալր]դրումը:...  
... Իեկտեմբերին... լեզգիներն ավերեցին Սոմխիթը:...

421 [=1733] թ. ... Իսաղ-փաշան կառուցեց Մուխրանի բերդը՝ սկսած ալրիլից մինչև հունիսի 20-ը, աշխատում էր վեց հարյուր բանվոր Քարթլիից և Սոմխիթ-Սարարաթաշվիլոյից:

423 [=1735] թ. Թամազ-խանը<sup>9</sup> հասավ Ղարսի երկիրը... Հուլիսի 10-ին լեզգիներն ավերեցին Սոմխիթը:...

... Թամազ-խանը գտնվում էր Երևանի Ղրխրուլախում (Ղ'իրսրուլախի)... Ուսուլները թողին Երևանը, և ոչինչ չփասեցին ուսուլները... Սոմխիթից փախել էր Ամիլախավարի Գիվին, Մուխրանի տերը, Ավալիսշվիլի Քայխուսրոն:...

... Նոյեմբերին [Թամազ-խանը] դատարկեց Գյանջան, Ղարարազը, [քշելով] Քարթլիի և Կախեթի քոչվորներին, Երևանը,

Ղարսը, Ղալուլին, Փանրակը (Փամրակի), և որքան էլ ուռումների թովխանա էր մնացել, [բոլորն] ուղարկեց Խորասան:...

424 [=1736] թ. ... դ'անից եկավ հրաման, սրով Քարթլին տրվեց Աբդուլա-բեկին, որ և Վրաց թագավոր դարձավ Աբշիլ անունով<sup>10</sup>, Կախեթը՝ Ալի Միրզային, որ կարճ ժամանակ Քարթլիի թագավոր էր, Երևանը՝ սուլթան Սեֆի-խանին, [Վերջինս] գնաց Երևան:...

425 [=1737] թ. ... դ'անը Ղանդասար էր կանչել վրացիներ՝ Ամիլախավարի Օթարին, Սարարաթասշվիլոյի զորապետիս (սարդալի) Ղափլանիսշվիլի Քայխուսրոյին, Յիցիշվիլի Կիրիլե արքեպիսկոպոսին, Ջավախիշվիլի Քայխուսրոյին, Փալալանդիոշվիլի Ալթանդիլին, Փեշանգ՝ Լոռվա մեկիքին, Փարսադան՝ Սոմխիթի մեկիքին, Բայանդուրին (Բադուրի), Ալիդուլի-բեկ ախուսպետին (ամիրեջիրի):...

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

- 1 Էրեկի 1, Նագար-Ալի-խան, Վրաց թագավոր, 1688—1703 թթ.:
- 2 Հուսեյն կալ Հյուսեյն, Գարսից շահ, 1694—1722 թթ.:
- 3 Գիորգի IV Գուշիա, Իմերեթի թագավոր, 1696—1698 թթ.:
- 4 Խոսրո Վախտանգ VI-ի մասին է, որ վրաստանի կառավարիչ էր 1703—1712 թթ. և թագավոր 1719—1724 թթ. (Վախճանվեց՝ և թագվեց Ասարախանում 1737 թ.): Մանրամասն տես մեր՝ «Վրաց աղբյուրները», II, 126—130:
- 5 Բաքար, Վրաց թագավոր, 1716—1719 թթ., Վախտանգ VI-ի որդին էր:
- 6 Պյոտր I, 1682—1725 թթ.:
- 7 Վախտանգ VI-ի եղբայր Իեսե, Վրաց մահմեդականացած թագավոր, 1714—1716 թթ.:
- 8 Խոսրո Մազսուտի մասին է:
- 9 Թամազ II, Գարսից շահ, 1729—1736 թթ.:
- 10 Աբշիլ II, Կախեթի թագավոր:

Գ

### Վ Ա Ն Ո Ւ Շ Տ Ի Բ Ա Գ Ր Ա Տ Ի Ո Ն՝ Ա Ր Ք Ա Յ Ա Չ Ն

«ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1744), «ՔԱՐԹԼԻԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1744), «ԿԱԽԵԹԻ ԵՎ ՀԵՐԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1744), «ԻՄԵՐԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1745), «ՍԱՄՅԻԵ-ՍԱԱԹԱՐԱԳՈ-ԿԼԱՐՋԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1746), «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (1755), «ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (1745), «ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶ» (1735)

Վախուշտի Բագրատիոն արքայազնը, Վախտանգ VI թագավորի (տես մեր «Վրաց ազբյուրները», II, 126 և այլն) գործունեության շարունակողն է գրականության և, հատկապես, պատմագրության ասպարեղում: Այս Վախուշտին իսկապես Վախտանգ VI-ի հանձնաժողովի կողմից Վրաստանի պատմության վերաբերյալ ժողոված բազմաթիվ նյութերի ուսումնասիրող-զննողն է, Վրաց տարեգրության («Քարթլիս-ցխովրերա»-ի) II մասի շարունակության գրի առնողը, Վրաց ժամանակագրության կարգավորողը, Վրաստանի աշխարհագրության և աշխարհագրական քարտեզի ու ատլասի կազմողը և բազմաթիվ այլ գիտական միջոցառումների նախաձեռնողը:

Վախուշտին Վախտանգ VI թագավորի «արտամուսնական» զավակն էր. ծնվել է մոտավորապես 1694—1696 թթ.: 1717—1724 թթ. միջոցին ակտիվ մասնակցություն է ունենում քաղաքական կյանքում: 1721 թ. նա նշանակվեց Սարարաթիանոյի կառավարիչ և ապրում էր Թրիալեթի Ախալքալաքում, որ երբեմն Տաշրաշ կամ Դաշրաշ անունով էր հայտնի: 1724 թվին Վախուշտին իր հոր Վախտանգ VI թագավորի և եղբայր Բաքարի հետ միասին, օսմանցիներից պարտություն կրելուց հետո, դադարում է Մոսկվա, ուր նվիրվում է գրական-գիտական գործունեության: Ապրելով «Պրեսնյա»-ում, նա վախճանվում է մոտավորապես 1770-ական թվականներին:

Վախուշտիի գրական գործերից նախ և առաջ հիշատակելի է «Վրաստանի պատմությունը», որ նա ավարտել է 1744թ.: Այս

աշխատության մեջ տրված է Վրաստանի անցողարձի սխտեմատիկ նկարագրությունը՝ հենվելով գրական հարուստ ժառանգության վրա, ինչպիսիք են՝ ամենայայն կերպով նրա կողմից օգտագործած բազմաթիվ ժամանակագրությունները (խրոնիկաները), «Կինկլոսները» և արխիվային դոկումենտները (սիգել-դուջարները): «Պատմությունը» բաղկացած է 2 մասից, որոնցից առաջինում տրված է Վրաստանի պատմության ամփոփումը հնագույն ժամանակներից սկսած մինչև Վրաստանի բաժանումը XV դարում, իսկ երկրորդում՝ նույնը Վրաստանի բաժանումից հետո մինչ XVIII դարի կեսը ըստ Վրաստանի առանձին քաղաքական-վարչական բաժանումների:

Առաջին մասը հրատարակված է Դ. Չ. Բաքրաձեի կողմից. «Վախուշտի. Վրաստանի պատմությունը. մասն առաջին», վրացերեն, Թբիլիսի, 1885, էջ 1—307: Երկրորդ մասը մուծված է պրոֆ. Դ. Չուբինովի հրատարակած Վրաց տարեգրության երկրորդ մասում՝ «Քարթլիս-ցխովրերա», վրացերեն, ՄՊԲ. 1854, էջ 11—258: Երկուսը միասին վերահրատարակված են Չ. Ճիճինաձեի կողմից, 392 էջ, նույնը Ֆրանսերեն թարգմանության մեջ. Մ. Բրոսսեի (M. Brosset)՝ „Histoire de la Géorgie“, II Partie, SPB. 1856, pp. 11—321: Վերջինը բաղկացած է հետևյալ գլուխներից.

1. «Քարթլիի պատմությունը», ըստ Դ. Չուբինովի հրատ., էջ 11—94, Չ. Ճիճինաձեի 16—145, Մ. Բրոսսեի թարգմանության, էջ 11—138 (Histoire et actions des rois de Kartli depuis la divizion du pays en trois royaumes et cinq principautés).

2. «Կախեթի և Հերեթի պատմությունը», ըստ Դ. Չուբինովի՝ 95—145, Չ. Ճիճինաձեի՝ 146—221, Մ. Բրոսսեի՝ 139—198 (Histoire du Héreth, du Coukheth et du Cakheth).

3. «Սամցխե-Սաթարագո-Կլարջեթի պատմությունը», ըստ Չուբինովի՝ 177—236, Չ. Ճիճինաձեի՝ 222—268, Բրոսսեի՝ 199—238 (Histoire du Samtzhé ou Saathabago et du Clarjeth).

4. Էգրիս-Աբխազեթ-Իմերեթի պատմությունը, ըստ Չուբինովի՝ 177—236, Չ. Ճիճինաձեի՝ 269—359, Բրոսսեի՝ 239—321 (Histoire de l'Égris, Aphkazeth ou Iméreth).



Այս պատմութեան բնական հավելվածն է «Ժամանակագրութիւնը», որ ընդգրկում է ժամանակագրական տեղեկութիւններ սկսած XIII դարից մինչև XVIII-ի կեսը (1201—1755): Վերջինս հրատարակված է նույն Դ. Չուբինովի կողմից՝ «Քարթլիս-ցխովրեբա», II, 237—258, Չ. Ճիճինաձեի՝ 360—392, ֆրանսերեն թարգմանութիւնը Մ. Բրոսսեի՝ Histoire de la Géorgie, II, 377—406 (Dates recueillies par Wakhoucht).

Պատմութեանը և ժամանակագրութեանը հաջորդում է «Վրաստանի թագավորութեան նկարագրութիւնը», որ նույն «Վրաստանի աշխարհագրութիւնն» է: Այս աշխատութիւնը հայտնի է կրկնակի հրատարակութեամբ վրացերեն բնագրի (չհաշված Մ. Ջանաշվիլու կողմից 1892 և 1895 թթ. մաս-մաս հրատարակած «Սամցխե» և «Քարթլի» գլուխների), և մի-մի էլ ֆրանսերեն ու ռուսերեն թարգմանականի. 1. Description géographique de la Géorgie, par Tsarévitch Wakhoucht, publiée par M. Brosset, SPB. 1842, վրացերեն և ֆրանսերեն, ատլասից ընդօրինակած մի քանի քարտեզներով հանդերձ. 2 «Վախուշտի արքայագն». Վրաստանի աշխարհագրութիւնը, Մ. Գ. Ջանաշվիլու խմբագրութեամբ, վրացերեն, Թբ. 1904. 3. „Царевич Вахушти, География Грузии. Перевод, примечания и редакция М. Г. Джанашивили [„Записки Кавказского Отдела Русского Географического Общества“, кн. XXIV, вып. V], Тифлис, 1904. 4. «Վախուշտի. Վրաստանի թագավորութեան նկարագրութիւնը (Վրաստանի աշխարհագրութիւնը), Ն. Լոմոնոսով և Ն. Բերձենիշվիլու խմբագրութեամբ = Вахушти. Описание Царства Грузинского (География Грузии), под редакцией Т. Ломоури и Н. Бердзенишвили», վրացերեն, Թբ. 1941:

Վախուշտիի Վրաստանի աշխարհագրական քարտեզն ու ատլասը, որոնց բնագրերը պահվում են Վրաստանի պետական թանգարանի ձեռագրական բաժնում (առաջինը) և Վրաստանի պետական կենտրոնական պատմական արխիվի հին վավերագրերի բաժնում (երկրորդը), զեռես, դժբախտաբար, հրատարակված չեն:

Վախուշտիի մասին մանրամասն տես Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականութիւնը, V—XVIII դդ., վրացերեն, ա. տպ., Թբ. 1916, էջ 283—310, ր.—գ. տպ., Թբ. 1945, էջ 328—351:

Մեր թարգմանութիւնները Վախուշտիի երկասիրութիւններից կատարված են հետևյալ հրատարակութիւններից. «Պատմութեան» ա. մասի՝ ըստ Դ. Բաքրաձեի, «Պատմութեան» բ. մասի և «Ժամանակագրութեան»՝ ըստ Դ. Չուբինովի, վերջապես «Աշխարհագրութեանը»՝ ըստ Թ. Լոմոնոսով և Ն. Բերձենիշվիլու հրատարակութեան: Նյութի՝ գլուխների վերածումը մեզ է պատկանում:

«ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ

(Անհիշատակ ժամանակներից մինչև XV դ.)

I<sup>1</sup>

Քարթլոսը Նոյի որդի Հաբեթի սերնդիցն էր, քանի որ Հաբեթը ծնեց Ավանանին, Ավանանը ծնեց Թարշին, Թարշը ծնեց Թորգոմին (Թարգամոսին), Թորգոմը (Թարգամոսը) ծնեց ութ հսկաներին, որոնք են Հայկ (Հասս), Քարթլոս, Բարգոս, Մովականոս, Լեկանոս, Հերոս, Կավկասոս և Էգրոս: Նոյի որդիք բաժանվեցին ի սկզբանե աշխարհի 1758, հունական 2785, վրացական 221 թվին: Թորգոմին բաժին ընկավ երկիրը հետևյալ սահմաններում՝ արևելքից Գուրգանի ծովը, արևմուտքից Պոնտոսի ծովը, հարավից Օլփիթի կամ Քուրթի լեռը, հյուսիսից Կովկասի լեռը. և հնազանդ էր նա Ներրոթին: Ապա Թորգոմը (Թարգամոսը) բաժանեց իր երկիրն իր որդոց միջև և տվեց նրանց հասանելիքը. և ութ եղբայրներն այլևս չուզեցին հնազանդվել Ներրոթին, քանի որ իրենք հսկաներ (հերոսներ) էին: Հսկելով այս և վիրավորվելով՝ Ներրոթը հարձակվեց նրանց վրա, և պատերազմը երկար ժամանակ տևեց: Իսկ երբ Ներրոթը նետով սպանվեց Հայկից Արարատ լեռան վրա ի սկզբանե աշխարհի 1829, հունական 2856 և վրացական 292 թվին, եղբայրներն ազատագրվեցին ստրկութիւնից: Ազատվելուն պես Թորգոմը բաժանեց իր որդոց միջև երկրներն ու սահմանները:

Հայկին (Հասսին) տվեց [այն երկիրը, որի] արևելյան սահմանն էր Կասպից ծովը, հարավից՝ Օլփիթի լեռն, հյուսիսից՝ այն լեռը, որ սկսվելով Պոնտոսի ծովից՝ պտտում է Բասենի (Բասիանի) դռնով, հասնում է մինչև Պարտավ (Բարդա) և Արագ, իսկ արևմուտքից՝ Պոնտոսի ծովը:

Փառնավազ թագավորը<sup>2</sup>... բաժանեց Վրաստանը (Սաքարթ-  
վելոն) ինն նախարարության (սաէրիսթավո) ... հինգերորդին  
նստացրեց Սամշվիլդեում, որին ավեց [երկիրը՝ սկսած] Սկվի-  
րեթի գետից Գաջենքի (Գաշխանի) վերի [մաս]ով մինչ Փարվա-  
նա (Փանավրա) [լիճը], հանդերձ Աշոցքով (Արսցի)։...

Միրվան թագավորը<sup>3</sup>... բանակեցելով Հայոց Արշակ թագա-  
վորի հետ, իր գուսարը ավեց [կնուսթյան] Արշակի որդի Արշա-  
կին։...

Հայոց թագավորի որդի Արշակ Արշակունուն (Արշակունիա-  
նի) բերին ու համայն Վրաստանի թագավոր նստեցրին<sup>4</sup>։...

[Արշակից] հետո թագավոր նստեց [Վրաստանում] նրա որ-  
դի Արտակը (Արտաքը)<sup>5</sup>։...

Բարտոմ թագավորը<sup>6</sup>... ամուսնացավ [հայ] Արշակունիների  
գատեր հետ, գորք ժողովեց և<sup>3</sup> օգնություն ստանալով Հայքից՝...  
կանգ առավ Սունանում։...

... Քարթամի կնոջը, որը հղի էր, տարան Հայք, և այնտեղ  
նա ծնեց որդի՝ Ադերկին [Միրվան II-ի թագավորության օրոք<sup>7</sup>]։...

Թագավոր դարձավ [Միրվան II-ի] որդի Արշակը, որ գեղե-  
ցիկ էր, քաջարի, գորեղ և հսկա։ Իսկ երբ Ադերկը (Ադերկի)  
դաստիարակվում էր Հայքում, Արշակը ժողովեց Հայքի գորքը...  
և եկավ Թոխալեթ։... Ապա Ադերկը կոչ արեց Արշակին իրեն հետ  
պատերազմելու։... Ադերկը... դիմեց վրացիներին՝ ասելով. «Ես ձեր  
թագավորի որդին եմ. բայց ես չեմ թողնի, որ հայոց գորքը ձեզ  
կտորի»։ Ապա վրացիները վեր բերին թագն Արշակի գլխից և  
դրին Ադերկի գլխին<sup>8</sup> և նրան թագավոր դրին հոսմեական 3947,  
հունական 5506, վրացական 282 թվին, առաջին ինդիկախոնին։

Ադերկը գրավեց ամբողջ Վրաստանը և ամուսնացավ հայոց  
թագավորի աղջկա հետ։... Նրա օրոք Պարսկաստանում սկսեց  
թագավորել Ժղալանը (sic)։... որին հնազանդ էին հայերն ու  
վրացիները։...

[Կասս և Փարսման թագավորները<sup>9</sup>]... սիրով էին Հայոց  
[թագավորներ] հետ։ Իսկ Հայոց Միրվան թագավորը մտացու-  
թյան մատնեց նրանց սերը և գրավեց Քարթլիի սահման[նե-  
րից] Ծուն[դ]ան և Արտահանը (Արտանի) մինչև Կուրը, և Ծուն-  
[դ]ան կոչեց «Քաջաց-տուն» (Քաջթա-տունի), որ է գեղերի տուն։

[Արմազել և Ազարկ թագավորները<sup>10</sup>]... որոշեցին վերա-  
կանգնել Քարթլիի սահմանը և բերին օսերի (օվսերի) թագա-  
վորի երկու եղբայրներ Բազուկ և Ամբազուկին գորքով, նաև լեզ-

դիներին (լեկերին)։ Նրանց (հայերի) համար աննկատելի կեր-  
պով [թագավորները] մտան Հայք և ավերեցին այն. անցան  
Կուրը և եկան Կամբեճովան։ Տեղեկանալով սրա մասին՝ Մմբատ  
Բյուրատյանը (Բիվրիտանի) փոքրաթիվ զորքով հետապնդեց  
նրանց։ Ապա [Հայոց] թագավորը դիմեց նրանց՝ առաջարկելով,  
որ [քարթլերը] ետ դարձնեն գերիներին, [ասելով]՝ «Թողավարը  
ձերը լինի, և ես ես կդառնամ»։ Ապա հյուսիսականները պա-  
տասխանեցին. «Մենք քեզ էինք փնտրում և չգտանք. այժմ  
ելիք, սրպեպի շուտ սպանվեա մեր կողմից»։ Մմբատը՝ լսելով  
այս՝ զինվեց ու գուրս եկավ։ Այստեղ կանգ առավ Բազուկը.  
Մմբատն երկու անգամ դարկեց Բազուկին և անցավ այն կողմը.  
Թամքից վեր բերեց նրան գետնի վրա ու սպանեց... Ապա բոլոր  
հյուսիսականները միասին հարձակվեցին և երկու կողմիցն էլ  
անթիվ գահեր եղան։ Սակայն հյուսիսականները պարտվեցին, և  
թագավորները դիմեցին դեպի Մցխեթա և Արմազ ու ամբացրին  
քաղաքաբերդերը։ Իսկ Մմբատը ներս մտավ Քարթլի, որն և գե-  
րեց, քանի որ [երկիրը] չէր պատրաստվել բերդերի պաշարման  
համար, և Դեմոթում ու Սամցխեում գորք թողեց իրրև օգ-  
նություն Ծունդային և ընդգեմ Օձրախոսի, ու գնաց։ Բայց  
[Քարթլիի] թագավորները, քանի որ քաջարի էին՝ չվախեցան և  
օսերի (օվսերի) հետ բարեկամացան իրենց թագավորների ար-  
յան համար, որոնք սպանվեցին, և միշտ աշխատում էին տիրել  
Հայքը։ Եվ Կլարջեթի և Օձրախեի (Օձրախոսի) նախարարները  
(Լրիսթափները) հաստատ էին Արմազելի հետ համերաշխություն  
պահպանելու մեջ։ Սրանց օգնում էին էգրիսացիք և ախրում էին  
Հայքը։ Ապա եկավ Հայոց Արտաշան<sup>11</sup> թագավորը և Մմբատն  
էլ նրա հետ, որոնց դեմ քարթլները դուրս չեկան, այլ ամրաց-  
րին քաղաքաբերդերը. և մոտ չորս ամիս [տևեց] Մցխեթայի  
պաշարումը։ Նեղ տեղն ընկան քարթլները և հաշտություն կըն-  
քեցին. հայերը գնացին։ Ապա հայերը սկսեցին պատերազմել  
պարսիկների դեմ, և քարթլները՝ գտնելով [հարմար] ժամանակ՝  
սկսեցին Հայքն ավերել։ Այդ պահին հայոց թագավորն ուղարկեց  
իր որդի Ջարպեին<sup>12</sup> գորքով։ Քարթլներն և օսերը զինված ելան,  
փախուստի մատնեցին Ջարպեի գորքը, իսկ Ջարպեին կալանա-  
փութեցին։ Իսկ օսերն ուզում էին նրան մահացնել՝ արյան փո-  
խարեն, թեև քարթլները սրա իրավունք չտվին. ուստի և նրան  
կալանավորեցին Դարխալում։ Քարթլները՝ լսելով այս՝ ամրաց-  
րին քաղաքաբերդերը։ Ապա հայոց թագավորի երկու որդիները

և Մմբատն էլ [հետն] եկան թուեղք և սկսեցին բանակցել, որից հետո հաշտություն կնքեցին, և հայերը վերադարձրին Քարթլիի սահման[ներ]ը: Իսկ քարթլները վերադարձրին արքայազն Ջարդեին և խոստացան թշնամի լինել նրանց (հայերի) թշնամիների հետ և փող կտրել հայոց թագավորի պատկերով, և հայերը գնացին: Եվ ուրախ էին մեր (Քարթլիի) թագավորներն՝ իրենց արիությամբ Քարթլիի սահմանները վերականգնելու առթիվ:... [Արմազել և Ազորկ թագավորները] մեռան ի սկզբանե աշխարհի 4052, վրացական 387 և Քրիստոսից 103 թվին:

Մցխեթայում թագավորն ստեց [Հ]ամազասպի որդի Մի[հ]ըրզատը, իսկ Արմազում Գերոկի որդի Փարսմանը: Չնայած նրան, որ Մի[հ]ըրզատ և Փարսման թագավորներն իրար հանդեպ սիրով էին համակված, Մի[հ]ըրզատը թշնամություն սկսեց Փարսմանի դեմ:... Մի[հ]ըրզատը գնաց Պարսկաստան, քանի որ Պարսից թագավորի ազգականուհու հետ էր ամուսնացած, և այնտեղ բազմաթիվ զորք կազմեց պարսիկներից ու եկավ Երկաթաձորը (ըկինիս-խեվի). իսկ Փարսմանը դուրս ելավ այնտեղ ընդդեմ նրա՝ Քարթլիի զորքով, և հայերն էլ օգնության կանչվեցին. և ստատիկ էին կռվում ճերտները. նրա (Փարսմանի) սպարապետ (սպասպետի) Փառնավազը, որ Փարսմանի դայակն էր, մարտի ժամանակ քսան և երեքին սպանեց:... Ապա Փառնավազ սպարապետը Փարսմանի կնոջն և որդուն փախցրեց Հայք. իսկ պարսիկները դուրս բերին Մի[հ]ըրզատին, և Քարթլին դրավեցին՝ Փարսմանի մասը պարսիկները, իսկ Մի[հ]ըրզատին իրեն մտաք վերադարձրին: Ապա, երբ Փարսմանի որդի Ադամը չափահաս դարձավ, սա հավաքեց հայերին և հույներին ու եկավ Քարթլի: Այստեղ Մի[հ]ըրզատը Քարթլիի և պարսկական զորքով կռվի բռնվեց [նրանց հետ] Ռեխայում: Մի[հ]ըրզատը պարտվեց, նրա զորքը կոտորվեց ու Մի[հ]ըրզատին էլ սպանեցին... 129. թվին:

[Համազասպ թագավորին<sup>12</sup>]... ուրացան Օձրախեի, Կլարջեթի և Էզրիսի նախարարները (էրիսթաֆները), որոնք խորհրդակցեցին Հայքի թագավորի հետ, որպեսզի սա իր որդի Ռեվին, որ [Հ]ամազասպի քեռորդին էր, թագավոր ուղարկի [Քարթլի]. [Հայոց թագավորը] տվեց իր որդուն. ժողովվեցին հայերը և վերոհիշյալ նախարարները (էրիսթաֆները), ու գիմեցին օտերին:...

Բերին հայոց թագավորի որդի Ռեվին և Արշակունի (Արշակունիանի) թագավոր դարձրին<sup>14</sup>...

... Հայոց թագավոր դարձավ Խոսրովը (Կոսորը): Այս Խոսրով թագավորը սկսեց պատերազմել Քասրե [Սասանյան] թագավորի դեմ ու օգնության կանչեց [Միհրդատի որդի] Ասփագուր [Վրաց] թագավորին<sup>15</sup>: Իսկ Ասփագուրը բացեց Գարիալի դուռն ու հանեց օտերին ու լեզգիներին, որոնք՝ միանալով հայերի հետ՝ գնացին պարսից դեմ, ավերեցին ու կոտորեցին շատերին:... Իսկ Խոսրով թագավորի որդի՝ մանուկ Տրդատին (Տիրիդատին)՝ փախցրին Հունաստան: Լսելով այս՝ Պարսից Քասրե թագավորն անթիվ զորք ժողովեց ու ներս մտավ Հայք: Արա կապակցությամբ Ասփագուր թագավորն ամրացրեց [Քարթլիի] քաղաքաբերդերը:...

Թագավոր դարձավ Միրվանը, որին Միրվան կոչեցին, ի սկզբանե աշխարհի 4214, հունական 5773, վրացական 17, ինգիլիտիոնի 13-ին, Իվերիայում, Ռանում (Բանի), Մովսիկանում և Հայքում: Իսկ երբ սա 15 տարեկան դարձավ,... ընդհատվեց Թորգոմյան (Թարգամոսյան) — Ներրոթյան — Արշակունյաց հարստությունը [Քարթլիում]<sup>16</sup>:...

... Խոսրովի (Կոսորոսի) որդի Տրդատն (Տիրիդատն) եկավ Հայք, իր հայրինիքը, հունական զորքով, և գրավեց Հայքը, քանի որ այս Տրդատն իր հերոսությամբ սպանեց գութերի թագավորին, որ [հունաց] կայսեր հետ էր պատերազմում, և այս պատճառով կայսրը նրան զորք տվեց: Լսելով այս՝ Միրվանն ընդհատեց կռիվը խաղարների հետ և Պարսկաստանից բերեց արքայազնին, որին իր ազջկա հետ ամուսնացրեց և Ռանի նախարարությունը (էրիսթավությունը) տվեց նրան: Ապա նա (Միրվանը) պարսիկներից ևս զորք ստացավ և միշտ պատերազմում էր Տրդատի դեմ: Իսկ երբ Տրդատն օգնություն էր ստանում հույներից, Միրվանը պարտվում էր, ճիշտ այնպես, ինչպես Միրվանի՝ պարսիկներից օգնություն ստանալու դեպքում պարտվում էր Տրդատը: Եվ ոչ ոք չկար միայնակ մարտնչող Տրդատի դեմ. և նրանց միջև միշտ տեղի ունեցավ պատերազմ: Արա (Միրվանի) օրոք Մցխեթա եկավ սուրբ Նինոն՝ Քրիստոսի ավետարանը քարոզելու համար՝ ի սկզբանե աշխարհի 4263, հունական 5922, Քրիստոսից 314, վրացական 66 թվին:...

... Սուրբ Նինոն ծառայում էր Նիսիսի Գլխեցի հայուհու մոտ երկու տարի:...

... Սուրբ Նինոն հետևեց այդ կնոջը, և նրանք եկան Հոռոմֆիսացի կնոջ տունը, ու տեսան այնտեղ թագավորազն տիկ-

նոջն (թագուհուն) Հոփոսիմեին (Րիփսիա) և նրա դայակ Գայանեին (Գաիանա), որոնք գանձում էին կուսանոցում (կույսերի վանքում)՝ սպասելով մկրտությունն Երուսաղեմից: Այն կինը ծանուցեց Նինոյի գործերի մասին Հոփոսիմեին, և Հոփոսիմեին գթալով հաճոյացավ Նինոյին, և նույն տարին Հոփոսիմեին և Գայանեն սպասուհիներով հանդերձ թվով 50 մկրտվեցին սուրբ Նինոյի ձեռքով. և մնաց [Նուհեն] այնտեղ երկու տարի: Այդ կանանց մոտ կայրը մարդիկ էր ուղարկել, որպեսզի նրա համար գեղեցիկ ու սքանչելի հարսնացու գտնեն, և եկան այն վանքը: Երբ տեսան Հոփոսիմեին և տեղեկացան նրա ծագման և թագավորապն լինելու մասին, նրա գեղեցկությունից հիացան և ընդօրինակեցին նրա սլտակերը, որն և մատուցին կայսեր: Կայսրը նայեց, սքանչացավ և որոշեց հարսանիք սարքել: Իսկ Հոփոսիմեին՝ նկատելով թշնամու նենգությունը՝ տրամեց ու աղերսում էր ասածուց փրկություն: Ապա [Հոփոսիմեին] 93 հոգով փախավ, նրանք մտաեցան Հայքի նոր[ակառույց] քաղաք<sup>1</sup> Գլինին, որ Հայոց թագավորների բնակավայրն էր, և մտան հնձանի հյուսիս-արևելյան կողմում գանձող սագավարը, և այնտեղ ծածուկ ապրում էին՝ պարսպելով ձեռագործով: Իսկ կայսրը, տեսնելով, որ իր ցանկությունը չիրականացավ, փնտրողներ ուղարկեց ամեն տեղ և նամակ գրեց Տրդատին, թե՛ Վեղիկ ցանկացա անել կնություն քրիստոնյաներից, որոնք խաչեցյալին ապավինեցին, բայց մեր տերությունն աստվածներին գրպարտում են. իսկ նա (Հոփոսիմեին) ինձ միջոցառանք հասցրեց ու ինձանից փախավ: Արդ, իբրև եղբայր, [օգնիր] ինձ նրան գտնելու ու՛ երբ գտնես Հոփոսիմեին, ուղարկիր ինձ մոտ. իսկ եթե ինքդ հավանես, ամուսնացիր հետը, քանի որ նրա նմանը չես գտնի հունական (իոնների) երկրում. և մնաս բարով: Հսկյով այս՝ Տրդատը սկսեց փնտրել [կույսերին] և գտավ նրանց այն հնձանում, և հահատակվեցին Հոփոսիմեին (Րիփսիա) և Գայանեն (Գաիանա) ընկերուհիներով, ինչպես Հայոց պատմությունն է սովանդում: Ապա սուրբ Նինոն, որ թագնվել էր վարդի փշերի մեջ, որ դեռևս չէին ծաղկել, ուղղեց իր աչքն դեպի երկինք... ձանապարհ ընկնելով՝ [Նինոն] հասավ Օրբանը՝ Հայքի սահմանում, ուր և ձմեռեց: Ապա հունիս ամսին նա եկավ Չավախեթ Փարվանա (Փանավարի) լճի մոտ և տեսավ հյուսիսային կողմանց լեռները, որոնք ձյունով էին ծածկված, տրամեց ու ասավ՝ «Տե՛ր, այն իմ հագին»: Սակայն նա այնտեղ՝ երկու օր մնալով՝

սնունդ խնդրեց լճի ձկնորսներից: Նույն տեղ և հովիվներն արածացնում էին իրենց հատերը և պաշտում էին Արմազին և Չապենին, իբրև աստվածների, զոհաբերություններով... որոնք խոսում էին հայերեն (սոսխուրի) լեզվով, որ Նինոն սովորել էր մի փոքր նիսիտրայից, և հարցրեց նրանց՝ մրտեղացի եք դուք: Եվ նրանք պատասխանեցին, որ Սափուրցից, Քինծարից և քաղաք Մցխեթայից են, ուր աստվածներն աստվածություն են անում և թագավորները թագավորում<sup>18</sup>...

Թագավոր նստեց Միրիան թագավորի որդի Բաքարը: Սա իր հոր Միրիանի պես հավատացյալ էր... Բայց սրա և հայերի միջև թշնամություն ընկավ, քանի որ հայերը թագավոր էին ուղղում Ռեվի որդի Տրդատին, որ Տրդատ Հայոց թագավորի որդու որդեգիրն էր: Այս պատճառով Բաքարը խնամխացավ Պարսից թագավորի՝ իր հորեղբորորդու հետ, և զիջեց երկիրը Փերոզին՝ իր բրոջ ամուսնուն, որը Միրիանից ստացել էր Ռանը, և նրան տվեց Սամշվիլդեն մինչև Աշոցքի (Արոցի) գլուխը, և մկրտեց ու քրիստոնյա դարձրեց նրան՝ ժողովրդի հետ միասին և կրթում էր հայերի դեմ: Ապա հայերը՝ հավաքվելով՝ եկան Թոխալեթ: Իսկ Բաքարն օգնություն էր խնդրել խոսրովյաններից: Սրանք եկան ու տեղի ունեցավ սաստիկ կռիվ Թոխալեթում...

...[Միրիան թագավորի օրոք<sup>19</sup>] վախճանվեց ճշմարտա[հավատ] Հակոբ (Իսկոբ) [կախկոպոսը], և թագավորն [կախկոպոս] կորգեց հայ[ազն] Հորին (Իորին)՝ Ներսես կաթողիկոսի սարկավազին<sup>20</sup>...

...[Վարդա-Բաքար II-ի օրոք<sup>21</sup>] Պարսից թագավորը զորք ուղարկեց հայերի և վրացիների դեմ, որպեսզի սրանց իրեն նարկատու դարձնի: Սրա կապակցությամբ հայերը խորհրդակցեցին Վարդա-Բաքարի հետ, որպեսզի երկօքյան [ժողովուրդները] ժողովեն ու Պարսից դեմ դնան: Այս կարծիքին էին և սրանց մեծամեծները, այսինքն որ օսերին ու լեզգիներին դուրս բերեն և հայերի հետ միասին կռվեն Պարսից դեմ: Սակայն Վարդա-Բաքարը չհամաձայնվեց, քանի որ վախկոտ էր ու թուլասիրտ, և թաքնվեց Կախեթի ձորում: Ապա Պարսից զորագլուխն եկավ, չրջապատեց Հայքը, ավերեց այն ու ներս խուժեց Քարթլի<sup>22</sup>...

...[Տրդատ թագավորի օրոք<sup>23</sup>] վախճանվեց հայազն Հոր (Իոր) կախկոպոսը...

...[Արչիլ թագավորի օրոք<sup>25</sup>] Պարսից թագավորը... ժողովելով իր հպատակներին ատրպատական[ցիներ]ի հետ միասին եկավ Բերդուջ գետի մոտ...

...[Վաստանդ Գորգասալ թագավորը<sup>26</sup>] առաջարկեց [Պարսից թագավորին], որպեսզի իր ազջիկն կնուծյան տա նրան, քանի որ Քարթլիի սահմանները հույներն էին գրավել։ Իսկ Պարսից թագավորն ուրախուժյամբ տվեց իր ազջիկը կնուծյան նրան, Հայքն և կովկասյան թագավոր[ուժյուն]ներն իբրև օժիտ, և պատերազմ հայտարարեց հույներին... [Վաստանդն] անցավ Հայքի ճանապարհով, ուր նրան միացան Հայքի նախարարները (էրիսթավները) և այնտեղից մոտեցան Կարնո քաղաքին, բայց չկարողացան այն գրավել...

Պոսրով (Պոսրո) թագավորի և Միրիանի դարձը Հունաստանից և Տրդատի (Տիրիդատի) ու Գրիգոր Պարթևի (Պարթավեցու) գործերն... վերևում հիշատակեցինք<sup>27</sup>...

...Անտիոքից վերադառնալիս Վախտանդն եկավ Ուոհաքաղաքը, ուր նրան դիմավորեցին նրա մայրն ու քույրը. ապա ելան ու եկան Հայք. այստեղից... եկան Մցխեթա...

...Լսելով [հունաց] կայսեր գալը՝ պարսիկներն ընդդիմադրելու գնացին Կարնիֆորա...

[Փարսման V[-ի<sup>28</sup>] փոխարեն թագավոր դարձավ նրա որդի Բակուրը<sup>29</sup>: Սա հույժ հավատացյալ էր և եկեղեցիներ կառուցող: Սա մաքրեց Գիորգիան<sup>30</sup> անհավատներից և աճեցրեց քահանաներ[ի] և սարկավագներ[ի թիվը]:

... Սրա (Բակուրի) օրոք Հայքում կար մի իշխան (մթավարի) անունով Վազգեն (Վասքեն): Սա գնաց Պարսից թագավորի մոտ, ուրացավ Քրիստոսին ու կրակապաշտ դարձավ: Իսկ Պարսից թագավորը տվեց նրան Ռանի նախարարությունը (էրիսթավությունը) և ետ ուղարկեց: Այս Վազգենի (Վասքենի) կինն էր Շուշանիկը, որին նա ստիպում էր ուրանալ Քրիստոսին, իսկ Շուշանիկը չհամաձայնվեց ու սպանվեց՝ ծանր տանջանքների ենթարկվելով: Լսելով այս՝ Բակուր թագավորը ժողովեց իր զորքը և աննկատելի կերպով գնաց: Իսկ Վազգենը (Վասքենը) կանգնած էր դաշտում՝ Կուր [գետ]ի ափին, ուր Անակերտ գետն է միախառնվում: Այստեղ Բակուր թագավորը հարձակվեց Վասքենի վրա, որին և կալանավորեց ու [խաչա]փայտի վրա կախեց:

Իսկ Շուշանիկի աճյունը տեղափոխեց ու դրեց Յո[ւ]րտավում<sup>31</sup>, Ապա [Բակուրը] դեսպան ուղարկեց Պարսից թագավորի մոտ և ներումն խնդրեց: Իսկ Պարսից թագավորը չէր ցանկանում, որ [Բակուր] թագավորը հույների հետ միանա: Այս պատճառով նա պարսավեց Վազգենին (Վասքենին) և առաջարկեց Բակուրին հանգիստ մնալ, և մի ուրիշ նախարար (էրիսթավ) ուղարկեց Ռանի...

...[Գվարամ կուրապալատի օրոք<sup>32</sup>] պարսիկները գրավեցին ամբողջ Քարթլին, Հայքը և պայքարում էին հույների դեմ...

...[Մինչ թագավորի օրոք<sup>33</sup>] Մուրվան Պուլը... պաշարեց Հայքը (Սամխիթը), Քարթլին, Ռանը և ամբողջ Կովկասը...

...[Ատրնեբսեհ II կուրապալատի օրոք<sup>35</sup>] միացան հայերն ու վրացիները... Գվարամ [Մամփալն] օգնեց Ատրնեբսեհին (Ագարնասեհին) և հայերին... Իսկ Գուրգեն կուրապալատը՝ Մեծն Աշոտի քեռորդին՝ գնաց Տաո... և բնակվում էր Շավշեթում և Արտահանում...

... Ելավ Կոստանդին Ափսաղաց թագավորը և գրավեց Քարթլին: Սրան թշնամացավ Հայոց Սմբատ թագավորը, որ կկավ ու պաշարեց Ուփլիս-ցիխեն<sup>36</sup>. ապա նրանք հաշտուծյուն կնքեցին, և Կոստանտինն ու Սմբատը խնամիացան: Սմբատը զիջեց Ուփլիս-ցիխեն Կոստանտինն ու գնաց<sup>37</sup>: Սրանից հետո կկավ արարացոց ամիրա արար Կասիմի որդի Հազարացին: Սրան չդիմացավ Հայոց Սմբատ թագավորը, որը քաշվեց Ափսաղաց<sup>38</sup> լեռները: Իսկ ամիրան ավերեց ամբողջ Հայքը ու եկավ Տփղիս... [Ապա] նա ավերեց Քարթլին և մտավ Սամցխե. ավերեց Ջավախեթը ու մոտեցավ Թմոզվիին, որ չկարողացավ վերցնել, և մոտեցավ Ղ՛վելիին... [Գորբոնի նահատակությունից հետո ամիրան] այնտեղից եկավ Դվին: Այնտեղ նա տեղեկացավ, որ Հայոց Սմբատ թագավորը Կապուլյտ (Կապսետի) բերդումն է, շտապ դիմեց այնտեղ ու պաշարեց, կարճ ժամանակում դուրս բերեց բերդից Սմբատի ընտանիքը, իսկ Սմբատին [խաչա]փայտի վրա կախեց Դվինում<sup>39</sup>...

... Մինչ Իշխանիկ՝ Հերեթը հերձվածող էր: Իսկ Իշխանիկը Գվարամ Իշխանաց-Իշխանի (էրիսթավթ-էրիսթավի) քեռորդին

էր. Գվարամի քույր Գինար թագուհին ուղղափառ դարձրեց այն (Հերեթը)<sup>40</sup>: Ապա Սալարյանները գրավել էին Պարտավը (Բարդավը) և Ատրպատականը...

...Վրաց Բագրատիոն թագավորները նստած էին Քարթլիի թագավոր... և տիրում էին Սամցխեին, որ է վերին Քարթլի, Տաոյին, Ջավախեթին, Թախախեթին, Սամշվիլդեին, Խուսանի էրիսթավություններին, բացի Գարդարանից, Կլարջեթին, իրենց պատկանելիք բերդատեղիներին և երբեմն Հայքին և ներքին Քարթլիին...

...[Կվիրիկե՝ Կախեթի տերը (քորիկոզը)<sup>41</sup>]... Գրավեց Կախեթի բերդերը, բացի Նախճեվան—Բոճորմայի և Լորձորանի<sup>42</sup>...

... [Դավիթ կամ Բագրատ II Ապուշը<sup>43</sup>] տիրում էր Բասենին...

...[Բագրատ III թագավորի օրոք<sup>44</sup>] Դավիթ կուրապալատը հավաքեց իր բոլոր ուժերը և հայերին ես կանչեց... ապա եկավ Թախախեթ՝ Կախեթ անցնելու նպատակով...

...[Գիորգի I թագավորը<sup>45</sup>] պորք հավաքեց ու գնաց Բասեն (Բասիան):

... [Բագրատ IV թագավորի օրոք<sup>46</sup>] Բագրատի մայր Հեղինե (Էլենա) թագուհին, Արշակունի [թագավորի] աղջիկը<sup>47</sup>, գնաց Թոմանոս [կայսեր] մոտ...

Բագրատ թագավորի հետ միացան Լիպարիտ [Օրբելյը], Իոանե Արագածեն, Կվիրիկե Կախեթի թագավորը, Դավիթ Հերեթի և Հայոց թագավորը և Տփղիսի ամիրան, որոնք հարձակվեցին Փաղոնի վրա Եկեղյաց (Եկեցի) [գավառում], ուր տեղի ունեցավ պատերազմ:...

... Կախեթի թագավոր էր Գա[գի]կը՝ Սամշվիլդեի Հայոց թագավորի<sup>48</sup> որդին:...

Ապա ուժեղացավ Բագրատ թագավորը, որ գրավեց Վեստը (sic) ինն բերդով, և Անին (Անիսի) էլ Բագրատի մորը տվին...

... Լիպարիտը... խարուսիկ հնարով վերցրեց թագուհուց Անին:...

Լիպարիտն եկավ Կախեթից Հայոց թագավորի հետ [Բագրատի դեմ]. ճակատամարտը տեղի ունեցավ Սասիրեթի պուրակում: Բագրատի կողմնակիցները (Բագրատյանները) սլարտվեցին:...

... Լիպարիտը զորք ժողովեց, [սրա հետ միասին] նաև իրեն օգնող կախերին, հայերին և հույներին, հարձակվեց թագավորի

վրա և տեղի ունեցավ սաստիկ պատերազմ: Թագավորը նորից սլարտվեց: Լիպարիտը կալանավորեց Սուլային, պահանջեց Կալմախը: Նա չտվեց Արտանուշը: Ապա Լիպարիտը հույներին ուղարկեց Դվին, և այնտեղից վերագարձավ: Իսկ վերագարձի տարին Բասենում երևացին թուրքերը:...

... Նիսանիան հույների մոտ վախճանվեց Անիում:

... Բազրատի քրոջ աղջիկը, որի հետ ուղում էր ամուսնանալ սուլթանը, Հայոց Կորիկե (Կվիրիկե) թագավորի եղբոր աղջիկն էր, և Բագրատը չտվեց [նրան]: Այս պատճառով Բագրատը գրգռեց մարդկանց, որոնք կալանավորեցին Սամշվիլդե մտնող Կորիկեին (Կվիրիկեին) և նրա եղբայր Սմբատին, և ներկայացրին Բագրատ թագավորին: Թագավորը Սամշվիլդեին մոտեցավ: [Սամխիթցիք] զիջեցին Սամշվիլդեն, Օփրեթն և այլ բերդերը: Իսկ Բագրատը խնայեց Կորիկեին (Կվիրիկեին) և բոլորը վերագարձրեց՝ բացի Սամշվիլդեից, և նրան իր արքունիքում պահեց:... Գաղը ծախեց Ֆաղուսին:...

[Գիորգի II թագավորի օրոք<sup>49</sup>] Իոանե Լիպարիտի որդին... փախավ Հայք... Ապա թագավորը մտավ Սամշվիլդե և Կլգեկարի<sup>50</sup>...

... Գիորգի թագավորը խլեց հույներից Անակոսիան, նաև Կլարջեթը, Շավչեթը, Ջավախեթը, Արտանուշը, և գրավեց Կարս (Կարի) քաղաքը, Վանանդը, Անին, և այն երկրի թուրքերին քշեց՝ օգնականությամբ աստուծո: Սրանից հետո նորից եկավ սուլթան Մելիք-Շահր, պաշարեց Սամշվիլդեն, կրկին գերեց Իոանե Լիպարիտի որդուն, ավերեց Հայքը և գնաց:... Ապա Գիորգի թագավորը գնաց Տաո, ուր նրան միացավ Գրիգուլ Բակուրիսձեն, որ գրավել էր Օլթիսը և Կարնո-քաղաքը, թագավորին ավեց Կարսը և նրա շրջակայքը: Ապա թագավորը թողեց Կարսում շավչեթցի ազնվականներին և ինքը հեռացավ: Իսկ այս պահին ուժեղացան թուրքերը. քանի որ հույները թողնում էին արևելքը և հեռանում, թուրքերը գրավում էին նրանց պատկանող երկրները: Սրանք սկսեցին նեղել քրիստոնյաներին՝ մեր մեղքերի պատճառով: Եվ քրիստոնյաների զավաճանության շնորհիվ Ղ՝վելիում գտնվող [Գիորգի] թագավորի վրա հարձակվեց Անմալ (Ախմալ) Ամիրն իր զորքով, որ այդ պահին վերցրել էր Կարսը, ու փախուստի ենթարկեց Գիորգի թագավորին:...

IV<sup>51</sup>

[Դավիթ Շինող թագավորը]... գրավեց Տփղիսը, Ռուսթավը, Սուսիսիթը, Սամշվիլիքեն. իսկ ամբողջ Ագարակները (Ագարանի)<sup>52</sup> թուրքերի ձեռին էր...

... Թուրքերն իջնում են Կուր և Խորա գետերի ափերը Դիլոմից սկսած մինչ Գանձա[կ] իրենց տուն ու տեղով, քանի որ այս տեղերը ձմռան պահին լի են խոտով և փայտով և վայրի կենդանիներով, ... իսկ ամռանը [թուրքերը] բարձրանում են դեպի Արարատ և Աշոցք (Արոցի):...

... [Դավիթ թագավորը] հարձակվեց, Տառյուժ թուրքերի վրա, որոնց կոտորեց տուն ու տեղով՝ մինչ Բասեն (Բասիան)-Կարնիֆորա, բերեց ավար, որով լցրեց ամբողջ Գիորգիան<sup>53</sup> 1116 թվին:... Ապա թագավորը Ղանուխից գնաց Երասխի (Ռասխ) ափը: Ջատիկը նախկուրում<sup>54</sup> տոնեց... Թագավորը Երասխի ափին հարձակվեց թուրքերի վրա, շատերին կոտորեց և գերիների բազմություն ու մեծ ավար բերեց հետը: Սրանից հետո նա գրավեց Լոսվա բերդն ու Ագարակները (Ագարանի):...

... Սուլթանը սպասարար կարգեց Ելվ[գ]ուզին՝ Արդուզի որդուն, որ մեծ ուժի տեր մարդ էր. սրան հանձնեց բովանդակ թուրքությունը՝ Գամասկոսը, Հալեպը (Ալսիբը) և բոլոր այլ շատ հարուստ [քաղաքները], Գանձ[ակ]ի աթաբակին և Հայքի ամիրաներին:...

... 1125 թ. (sic)<sup>55</sup> մայիսին Դավիթ թագավորը գրավեց Հայքի բերդերը՝ Գազը, Տերուռնականը, Գավազանը, Նոր-Բե[ր]-դը, Մանասպուր և Ղալինջաքարը (Տալինջաքարը?): Հունիսին նա գրավեց Ջավախեթը, Կոլան, Կառնիֆորան, Բասենը (Բասիանը) մինչև Ապեր և ընաջինջ արավ թուրքությունը, իսկ ուժ էլ գտնում էր, գերի էր վերցնում... [Ապա] նա հրի ենթարկեց Օլթիսը և հաղթող եկավ Թոխալեթ: Ապա օգոստոսի 20-ին Բոժանոյում գտնվող թագավորին դիմեցին՝ Անի քաղաքը գրավելու համար: [Թագավորն] իսկույն և եթ զորք ուղարկեց և ինքն էլ ուղևորվեց... Հասնելով այնտեղ, նա երեք օրում գրավեց քաղաքը, բերդը և գյուղերն՝ առանց դժվարություն, կալանավորեց և կոտորեց Ալփասառլաններին (Ալփասարիաննի), որոնք մզկիթի էին վերածել Անիի եկեղեցին, որ բյուզանդական (Հունաց) թագավորի դուստր Կատրամիգե (Կատրոնիկա) թագուհին էր կառուցել: Թագավորը ժողովեց կաթողիկոս-եպիսկոպոսներին և

օծումով այն նորոգեց: Ապա թագավորը ձայն տվեց Կատրամիգեի գերեզմանին. «Ուրախ լեր, թագուհի, քանի որ աստված փրկեց քո եկեղեցին հագարացոց ձեռից»: Իսկ նա գերեզմանից բացականչեց. «Փնոք ասածո»: Եվ լսողները զարմանում էին: 1129 թվին (sic)<sup>56</sup> [Թագավորն] Անին ազնվականներին հանձնեց, [իսկ այնտեղից] բերեց [Ա]բուլասավարին 8 որդով, հարսով, աղասիհներով և ուղարկեց նրանց Ափխազեթ:

... Մի ժամանակ ցանկություն կար հայերին վրացիների հետ դավանությամբ միացնել, և հավաքվեցին Քարթլիի կաթողիկոս Իոանեն, եպիսկոպոսները և անապատականները և հայերն էլ իրենց բոլոր [գիտուններով] և սկսեցին վեճը, [որ տեղեց] մինչև իններորդ ժամը, քանի որ նրանք մտնում էին անանցանելի [զործերի քննության մեջ] և դժվարությամբ էին [այնտեղից] գուրս գալիս: Թագավորը՝ նկատելով այս՝ սկսեց վիճել նրանց հետ և նրանց բերանը փակեց, և նրանք ասում էին. «Արքա, մենք կարծում էինք, որ սրանց աշակերտն եք, իսկ այժմ իմացանք, որ դուք սրանց վարդապետն եք [եղել]...»<sup>57</sup>,

V<sup>58</sup>

... [Դեմեոսի ] թագավորի օրոք<sup>59</sup> Սալբուխ զ'անը հարձակվեց Անի քաղաքի վրա և պաշարեց այն: Լսելով այս՝ Դեմեոսի թագավորն իր զորքով հարձակվեց [նրա վրա]: Տեղի ունեցավ սաստիկ ճակատամարտ, և Սալբուխն ու նրա զորքը փախուստի դիմեցին, Դեմեոսին շատերին հուր ու սրի ենթարկեց, ձևք գցեց մեծ ավար և հաղթությամբ վերադարձավ:...

... [Դիորգի III թագավորը<sup>60</sup>], ստանձնելով իր թագավորությունը սկսած Սպերի ծոցից մինչև Կասպից ծովը, դիմվեց՝ հագարացոց դեմ գնալու նպատակով... նա դիմեց Կաղզվան (բնագրում՝ Կաթիրևան) քաղաքը, ավերեց ժայռոտ ձորերը և [Շահ]ի արմեն (բնագրում՝ Ամսրանի) կոչված Հայոց թագավորի քաղաքը. ապա գնաց Արարատի փեշին գտնվող քաղաքը. կովով գրավեց քաղաքը, ավերեց այն ու բազմաթիվ գերիներ ու ավար վերցրեց, այնքան՝ որ Տփղիսում գերին մի դրամով էր ծախվում: Դրանից հետո նա ղվարձությամբ և որսորդությամբ էր պարսպում, քանի որ ընտիր նետաձիգ էր: Ապա նա արշավեց դեպի Անիի դուռն, քանի որ այն Շաղադյանների (բնագրում՝ Շանշե Դաղիանի) օրոք անջատվել էր [Վրաստանից], մոտեցավ նրան

և քաղաքը Շագագյանների (ընագրում՝ Շանշե Դադիանի) հետ միասին իր ձեռքը դեցեց, կարգի հրավիրեց տեղացիներին ու թողեց այնտեղ Իոանե Օրբելուն, իսկ ինքը սրսի գնաց: Այս պատճառով գրուխ բարձրացրին հագարացի իսմայելացիք և Շա[հ]-րիեր սուլթան կոչվող Յասը (Իասը). սա զորք հավաքեց Ասորիքում (Շամ) Դիարբեքիր-Գարմիանացոց թուրքերի մեջ: Սրանք բոլորը՝ ատամները սրելով՝ շարժվեցին և մոտեցան Անիին: Լսելով այս՝ նաճարմագեղում գտնվող Գիորգի թագավորը զորաշարքերը կարգի բերեց... և շտապով եկավ Շիրակ:... [Իսմայելացիք] շարժվեցին և մոտեցան Հայքին, վերցրին Գազն և ավերեցին նրա շրջակայքը (սահմանները):... Ապա նրանք Գազից շարժվեցին ու հեռացան: Երբ նրանք Եկեղյաց (Եկեցի) գետովն էին անցնում, նրանց բնագիմարեց թագավորի զորքը, հագարացիներից շատերին ջուրը դցեցին ու սպանեցին: Իսկ իսմայելացիք բարձրացան դեպի Գեղարքունիք (Գելարքունի), և այնտեղից Անիի դռանը մոտեցան սուլթանը, աթարակը և արարները. իսկ Անին ամրացնում էր մեծն Թորեցին պես-պես հնարագործություններով (մեքենաներով): Թագավորը կանգ էր առել Տաշիրում և սուլթանի դեսպանը խաղաղություն հաստատելու նպատակով թագավորի մոտ էր գտնվում:... Ապա իսմայելացիք... շտապ վերադարձան Անիից և գնացին իրենց երկիրը Իսկ թագավորը շնորհեց Անին իր հայրենակցին...

... Թագավորի զորականները նորից խնդրեցին ուղարկել իրենց արշավանքի: Լսելով նրանց՝ թագավորը մի օր որոշեց [հրամայել] տայեցի-կլարջեթցի-շավջեթցիներին՝ պաշարել Օլթին, մեսխերին [և] թորեցիներին՝ Կարսն և Աշոտնին (Աշորանի), ամիր-սպասալարին՝ սոմխիթցոց [երկիրը] Կուր [գետի] հարավում մինչև Գանձա[կ], հեր-կախերին՝ Ալաղան [և Կուր գետերի] միաստանման տեղից մինչև Շիրվան (Շարվան), իսկ ինքը թագավորը՝ Գեղարքունիքի-Մասիսի հայսկույս-հայնկույս տեղերը...

Շարերան քաղաքը գրավելուց հետո [Գիորգի թագավորը] գնաց և ավերեց Բասենը (Բասխանը)... և հաղթող վերադարձավ: Ապա ժամանակ սո ժամանակ նա զորք էր ուղարկում մինչ նախիջևան, Կարս-Մասիսը, Լաղվ (sic), Պարտավ-Բայդուն, և զորքը հաղթող էր վերադառնում:...

... Օրբելյանները (sic), տայեցիք, սամցխեցիք, հեր-կախերը սկսեցին ավերել ու գրավել երկրներ: Տեղեկանալով սրա

մասին՝ Տիգրիսում գտնվող Գիորգի թագավորը զորք ժողովեց և պատերազմի ելավ Դեմետրեի դեմ, և աստժո դատաստանը փախուստի ենթարկեց Դեմետրեին, որ ապաստան գտավ Լոռվա բերդում: Իսկ թագավորը՝ գրաված տեղերում գերելով բոլորին և տանելով այնտեղից՝ ինքը կանգ առավ Ագարակներում: Այստեղ նրա հետ միացան Սարգիս Մխարզրձեղին իր եղբորորդով և սիրեցյալ Օրբելին (sic): Իսկ Դեմետրեն դանձարանապետին (մեծորձեթութուցեսին) ուղարկեց և զորք ժողովեց. հեր-կախերից, լեզգիներից և կովկասցիներից... [որոնք փախուստի մատնեցին թշնամուն]:... Ապա [թագավորը] ելավ Ագարակից (Ագարա) և մոտեցավ Լոռվա բերդին: Այդ ժամանակ Դեմետրեն իշխան (էրիսթավ) Լիպարիտի որդի Սմբատին և Իոանեի որդի Քավթարին ուղարկեց Շահ-Արմենի (Շաերմանի) և Ելբիուզի (Ելգիուզի) որդոց մատ՝ խնդրելով օգնություն: Սրանք խոստացան [օգնություն հասցնել], սակայն աստված չթողեց սրանց, քանի որ բերդապահներն անդոր էին [դիմադրելու] ու նեղ տեղն էին ընկել: Այսպիսի հանգամանքներում Դեմետրեն պարան կապեց իրեն և բերդից իջավ ու իր հորեղբորը դիմեց: Սրանից հետո շատ ուրիշներին էլ դուրս բերին. [թագավորը] գրավեց բերդը, որին և տիրեց, իսկ Օրբելներին բնաջինջ արավ, մնացած հանցավորներին էլ այլևայլ երկրներ աքսորեց<sup>61</sup>:...

... [Թամար թագուհու օրոք<sup>62</sup>] վասնճանվեց սպասալար Ղուրասարը, և սպասալարությունը տվին Սարգիս Մխարզրձեղուն:

... Թամարի թագավորության սկզբում իշխանավորներ էին սպասալարը՝ Սարգիս Մխարզրձեղին...

1177 թվից հետո... [Վրաց զորքն] արշավեց Կարսի և Կառնիֆորայի վրա, [զորականներն] ավերեցին [այն կողմերը] և հաղթող վերադարձան: Իսկ թուրքերը նախ եկան Գեղարքունիք և ավերեցին Պալակացիի (Պալակացիոսի) Շնաձոր (Ձաղլիսխևի) կոչված [երկիրը]:... Այս ժամանակներում կարնո-քաղաք[ացի]ք, ասորիներ (շամեցիք), թուրք-գարմնացիք (գարմիալներին) ձիավոր-հետիոտք եկան և տիրեցին շավջ-կլարջներին: Գուգան Տայեցին ժողովեց իր երկրի զորքը. սրանց կցվեցին մեսխերն ևս..., որոնք փախուստի ենթարկեցին [թուրքերին, շատերին] կոտորեցին և գերիները բերին ու ներկայացրին թագավորին: Ապա Մխարզրձեղի Սարգսի որդին արշավեց դեպի Դվին, [շատերին] կոտորեց ու ավարով վերադարձավ: Սրանց հետապնդեցին դվինեցի [և] սուրմանեցի զորքերը, սրանց հետ տեղի ունեցավ սաս-



տիկ պատերազմ. սպա փախուստի ենթարկեցին նրանց, [շատերին] կոտորեցին և հաղթող վերադարձան:

Ապա թագավորը<sup>63</sup> զորք հավաքեց և ուղարկեց Դվին. այն ավերեց Պարսից երկիրը, գրավեց քաղաքներ. [զորականները] մեծ գանձեր բերին ու մատուցին թամարին:...

Ապա թագավորը զորք ժողովեց և ուղարկեց Գեղարքունիք, [որ] լցվել էր թուրքերով, կոտորեցին թուրքերին ու բազմաթիվ գերիներ բերին:

[Ապա վրացիք] մեծ արշավանք կազմակերպեցին դեպի Գանձա[կ], Բայդուկից ցած, [Ե]րասխի եզերքը դեպի վեր մինչ Մասիս. Վարդան Գոգիանին, չորս Մխարզբձեղները և մեծամեծներ-ազնվականները հույժ հաղթող ու մեծ ավարով վերադարձան:...

[Թամարի նախկին ամուսին Գիորգի] Թուսն<sup>64</sup> եկավ Կարնո-քաղաք: Նրան սկզբից և եթ միացան Կլարջեթի էրիթավը, սպա մեռիսերը և հայնկույս Լիխի բնակիչները:... Տեղեկանալով սրա մասին՝ թամարը դիմեց վրացիներին, հեր-կախերին, սոմխիթցոց և սաստիկ երդումով համոզեցրեց չմիանալ նրանց հետ:... [Իսկ նրանք] աշխատում էին գրավել Ջավախեթը, Թոխալեթը, Սոմխիթը:...

Գամբեկել ամիրսպասալարի մահից [հետո]... ամիրսպասալարու թյուն շնորհեցին Ջաքարիա Մխարզբձեղուն: Այս պահին Գուգանը գավաձանեց և անջատեց [Վրաստանից] Վաչլովանը, Տաոն, Կարսը և շատ բերդեր, ու գնաց Շահի-Արմենի (Շաերմանի) երկիրը:...

[Վրաց զորքն] արշավեց Արզրում Կարնո-քաղաքի վրա:... Իսկ [վրացիներին] օգնության ելան սուրմանեցիք, կարսեցիք, սպերացիք և Սարլուխի որդի Նասարդինն իր երկու եղբայրներով:...

[Վրացիք] դարձյալ համախմբվեցին և եյան դեպի Գեղարքունիք, անցան Պաշենը (Պաշին), Իջան Դարաղ'ար և հասան Բալդուն (sic), ավերեցին ու գերեցին [տեղացիներին], սպա դարձան ետ՝ պտակելով Գանձա[կ]ի դռնով:...

... Ապա Լոսից ելան Սարգսի երկու որդիները՝ Ջաքարիան և Իվանեն սասպատակելու [Ե]րասխի եզերքը, նմանապես եկել էին դվինեցոց, բջնեցոց և ամբերդեցոց զորքերը, որոնք սասպատակորեն հսկում էին քարավաններին: Սրանք կես ճանապարհին հարձակվում էին [Թշնամու վրա] ու սաստիկ պատերազմում:

Թամարի զորականները չնչին բացառությամբ վերադարձան... և ավարով լի ներկայացան աստվածապահ Թամարին... Ապա մարդկության (բնագրում՝ կացնիս, sic) տերն արժանացրեց Գավթին<sup>65</sup> ավերել Գեղարքունին, Պարսից-Բաղարը (Սպարսի բաղարի) և Գուլարաուլը (sic)... հրի ու սրի ենթարկեցին [այն տեղերը] և անհամար գերիներ և խոստակներ [խվաստագնի]<sup>66</sup> դցեցին ձեռքը... սպա եկան թամարի մոտ:... Ապա աքսորված Թուսը<sup>67</sup> Կոստանդնուպոլսից Պարսից աթարակի մոտ եկավ ու նրանից ստացավ Թանիի երկիրը:...

... Ղրղըլ-Արսլան աթարակին սպանեցին, և նա թողեց երեք որդի-փանչվաններ, որոնք և բաժանեցին երկիրը. ավագագույնին՝ Սուլտու-Ինանչիին՝ տվեց Իրակը (Երազը), Պորասանը և Բարեկունը, Բուրաքարին՝ Ատրպատականը և Հայաստանը, Ամիր-Միհրին՝ Գուրգանի ծովից սկսած մինչև Գեղարքունիքը:...

... Հունիս ամսին Գավթիթ հասավ Եկեղյաց (Էկլեցի) գետ[ի ավ]ին, ուր նրան դիմավորեց հեռախուզողը, որ ասաց. «Անթիվ զորք կա կանգնած Շաքորիտից մինչև Շոփի լեռը և Վարդանաշ[ա]տից մինչև Գանձ[ակ]ի դռն»... Ջաքարիա ամիրսպասալարն իր եղբայր Իվանեի հետ միասին շտապեց [օգնության]... հասան մինչև Գանձ[ակ]ի դռն և Գեղարքունիքը, ուր և գերեցին մեծ ամիրաներին՝ իբրև հավերի, 1193 թվին:...

Ապա տեղի ունեցավ մի մեծ հրաշք: Երբ Իոանե կաթողիկոսը պատարապ [մատուցեց և] ավարտեց [այն], Ջաքարիա ամիրսպասալարը ցանկացավ նշխար վերցնել, մինչդեռ կաթողիկոսը չտվեց այն, քանի որ նա հայադավան էր: Ջաքարիան տրտմեց և հանդիմանեց կաթողիկոսին: Իսկ վերջինս սոսախի մերկացնում էր նրան, և նա չկարողացավ պատասխանել, այլ բերելով երկու շալապանի կաթողիկոսին և նրանց կրոնագետներին (գավանաբաններին), որոնց հետ տեղի ունեցավ երկար վիճարանություն... Եվ քննեց Ջաքարիան անվտանգության մեջ, այսպես ասելով. «Թող պատասխանատու լինի աստծուն նա, ով սերմանեց (առաջ բերեց) հերձվածքը»: Իսկ նրա եղբայր Իոանեն խոստովանեց ճշմարիտն<sup>68</sup>:

Այս պահին Կարսը դեռևս թուրքերի ձեռին էր: Թամարը զորք ուղարկեց և քշեց թուրքերին: Իսկ այնտեղ թողին ավալցիխեցի Իոանեին, որն և գրավեց շրջակա երկրները ու ավերեց բոլորը: Եվ թագավորը տվեց նրան Կարսը և աթարակությունը:... Գավթիթ [թագավորը]՝ անցնելով Բասեն (Բասիան)՝ նկա-

տեց, որ սուլթանի զորքը բնակություն էր հաստատել Բուրկեր-  
տում (sic)<sup>69</sup>... Ապա Դավիթը [նկող] նշանակեց Մխարգրձել Զա-  
քարիային, ախալցիխեցի Շավա և Խոանեին և թորեցոց։...

...Թամարն իր թագավորության քսանչորսերորդ թվակա-  
նին<sup>70</sup> հետաքրքրվեց Կարսի դուռնամբ, քանի որ Մխարգրձել-  
ներն երկար ժամանակ պայքարում էին և չէին գրավել այն։  
Այս պատճառով նա (Թամարն) այնտեղ ուղարկեց Սոսլան-Դավ-  
թին և ինքը գնաց ու կանգ առավ Զավախեթում։ Դավիթը մո-  
տեցավ Կարսին և սաստիկ կռվում էր։ Բերդապահները՝ նեղ  
տեղն ընկնելով՝ ասում էին. «Թող գա Թամարը, և նրան կհանձ-  
նենք [բերդը]», քանի որ ուրիշներից վախում էին։ Տեղեկանա-  
լով սրա մասին՝ Թամարը գնաց, և նրան տվին բերդը, և Թա-  
մարը, կարսեցիների աղաչանքի համաձայն, հանձնեց այն իր  
որդի Գիորգիին և գրավեց [երկիրն] [Ե]րասխից մինչև Սպեր...

... Սակայն այս ուրախության պահին Թամարի ամուսին  
Սոսլան-Դավիթը մեռավ, լի ամենայն բարություն, 1199 թվին  
(sic), վրացական 419-ին (sic)<sup>71</sup>, որին մեծ սուգ հետևեց։ Ապա  
ձմռան պահին, երբ թագավորը<sup>72</sup> գտնվում էր Գեգութում, սա-  
տանան ոտքի բարձրացրեց Արտավեղի սուլթանին, որն լույս  
[Զատիկ] կյուրակեին կհավ Անի քաղաքի դեմ։ Անեցիների վրա  
որոնք տոնական հանդիսակատարության ու դավաճանքի համար  
էին պատրաստվել, լուսադեմին աննկատելի կերպով հարձակվեց  
սուլթանը և անթիվ քրիստոնյաներ կոտորեց. իսկ որոնք թաքնվել  
էին քարանձավներում, ժայռերում ու փոսերում, աղատվեցին։  
Եկեղեցիներում 12.000 [նոգի] կոտորեց. և գնաց սուլթանը գե-  
րիներով և ավարով լի... Ապա Ռամազան կոչված դարձելի  
պահին Զաքարիա ամիրսպասալարը հավաքեց հերեթ-կախեթ-  
սոմխեթցիներին, անցավ Գեղարքունիքը... և շրջապատեց Ար-  
գերիլը (Արդեվիլը)։...

... Թամարը հիվանդացավ, և նրան չկարողացան  
բժշկել ու օդափոխության նպատակով տարան Տփղիս, ապա՝  
Դասո<sup>73</sup> և Ագարակ (Ագարա). սակայն ոչինչ օգուտ չստացավ և  
անցավ հանդերձյալ աշխարհ առ Քրիստոս 1201 թվին (sic), վրա-  
ցական 421-ին (sic)<sup>74</sup>, հունվարի 18-ին։

[Գիորգի Լաշայի<sup>75</sup> շուրջը] համախմբված էին դանձ[ակ]ե-  
ցիք, [նաև] մի կողմից՝ հեր-կախերը, մյուս կողմից՝ վրացիք,  
սոմխեթցիք և հայերը, ապա՝ հայնկույս Լիխի՝ բերդացի-դա-  
դիանները։...

...Դեռևս Թամարի օրոք [Վրաստանի]... հպատակ էին և  
հարկատու խլաթեցիք։...

...Զինգիս-խանը... գրավեց Զինմաչինը և մեծ Մոնղոլը  
(Թաթարի) 1202 թվին, վրացական 422-ին (sic)<sup>76</sup>, ապա նրա  
զորքերը մոտեցան Քարթլիի սահմաններին ու ավերեցին Հայ-  
քը և Գագը։ Թաթարների գալը հայտնեցին [Գիորգի] թագավո-  
րին։ Ապա թագավորը ժողովեց 400.000 (sic)<sup>77</sup> հեծելազորք ու  
գնաց նրանց դեմ. ճանապարհին նրան դիմավորեց Խոանե աթա-  
բախը մեծ զորքով. իսկ թաթարները կանգ էին առել Սագիմ գե-  
տի վրա<sup>78</sup>... Սակայն թաթարները հասան մինչ Սամշվիլդե, ապա  
վերադարձան։...

...[Գիորգի] թագավորը գնաց Բագավ[ան]... [ուր] և վախ-  
ճանվեց<sup>79</sup>։...

...Զալալ[ա]դինը 140.000 զորքով եկավ Ատրպատական և  
սկսեց ավերել Հայքը, Գագը, ուր փոքրիկ երեխաներին նույն-  
իսկ կոտորում էր։ Ռուսուգան թագավորը<sup>80</sup> լսելով այս՝ զորք  
ժողովեց, [չեկավար] նշանակելով նրանց Խոանե աթաբախին,  
որի ձեռքը տվեց սեպուհական դրոշը (սեփե-գրոշա) և առաքեց  
սուլթանի դեմ։ Սրանք հասան Դվին. իսկ խորասանցիք կանգ  
էին առել Գառնիում։ [Վրացիք] կազմակերպվեցին և առաջընթաց  
զորքով առաքեցին ախալցիխեցի Շավային և Խոանեին և թո-  
րեցոց։ Այնտեղ եկավ սուլթան Զալալ[ա]դինը, որ քաջարի էր,  
ախոյան և պատերաճներում փորձված։ Երբ առաջընթաց զորքը  
մոտեցավ, աթաբախը դուրս չեկավ նրանց օգնության. իսկ Շալ-  
վան և Խոանեն մարդիկ էին ուղարկում նրա մոտ օգնություն  
խնդրելով, քանի որ, ասում էին, [թշնամուց] մոտիկ ենք. և աթա-  
բախը չուզեց նրանց օգնել՝ դրդված նախանձից և ոչ թե երկյու-  
ղից։... Ապա դադարի կերպով կուսակրոն դարձած... Իվանե  
աթաբախը վախճանվեց 1214 թվին, վրացական 434-ին (sic)<sup>81</sup>,

... Սույն թվին<sup>82</sup>... սուլթան [Զալալադինը] ավերում էր  
Դվինը, Անին և [նրանց] շրջակայքը։...

...Ապա Զալալ[ա]դինը հայտնեց Ալազ աթաբախին թա-  
ղավորի վազիր կարգվելու մասին... ապա ներս մտավ Հայք,  
ավերեց այն, այնպես որ այնտեղ այլևս տղամարդ չմնաց. ու  
այնտեղից շարժվեց դեպի Տփղիս։ Ապա սկսեց ավերել ու գերել  
Քարթլին, Կախեթը, Հերեթը, Զավախեթը, Տաոն, Արտանանը,  
Սամցխեն, Անին, Կառնիֆորան, որոնց վրա բռնությունը տևեց

հինգ տարի... Եվ սուլթանը Տփղիսից հանվեց 1233 թվին, վրացական 453-ին (sic)<sup>83</sup>...

...Սուլթանը նորից շարժվեց դեպի Տփղիս 1234 թվին, վրացական 454-ին (sic)<sup>84</sup>: ...Նոինները՝... անցնելով ամբողջ Պարսկաստանը՝ դուրս եկան [Ե]րասխի մոտ և մոտեցան Գանձա- [կ]ին... Ջալալ[ադ]դինը, թողնելով Տփղիսը<sup>85</sup>, անցավ Բյուզանդիա (Հունաստան), իսկ թաթարները՝ տեղեկանալով սրա մասին՝ հետամուտ եղան նրան ու հասան Բասենում (Բասիանի) և ցրեցին Ջալալ[ադ]դինի զորքերը... Թաթարները... ավերեցին Խլաթը (Խալաթի), Ալաշկերտը (Վալաշկերտի) և անցան Թավրիզ (Թավրիս) ու գրավեցին այն. ապա մյուս տարին եկան Պարտավ (Բարդա) և սկսեցին ավերել Հայքը, Քարթլին, Գարուբանդը, Ռանին, Հերեթ-Կախեթը, Իվինը... Եկան թաթարները և տարածվեցին, Իմերեթից դատ, ամբողջ Գիորգիայում<sup>87</sup> և Հայքում, իբրև մորեխներ, անողորմ նետողներ...

... Ղիսս[ադ]դին սուլթանը<sup>88</sup> հաշտություն կնքեց և հարկադրեց [վրացիներին] հնազանդ և հարկատու լինել: Այնտեղեց վերադարձողներին դիմավորեց Խլաթի (Խալաթիի) սուլթանը... և եկան Գեղարքունիք՝ լի ավարով: Իսկ Խլաթի (Խալաթիի) սուլթանը... և ուրիշները դնացին Բաթու-ղ'աննի մոտ...

Նոինները բաժանեցին ամբողջ Իվերիան<sup>89</sup> բազմաթիվ իշխանությունների, և տվին Շահնշահին (Շանշե) իր և Ավագ [աթարա-կ]ի հայրենիքը, Վա[ն]րամ Գագեցուն ամբողջ Հայքը...

...Հաշայի սրբի Դավիթը<sup>90</sup> Տփղիսում էր գտնվում: Նա-րին-Դավիթը<sup>91</sup> մոտեցավ Ավագի երկրին, և Սմբատ Օրբելյանը տարավ նրան իր տունը...

... Ղ'անը հրամայեց [Վրաց] թագավորին պատրաստ լինել իր զորքով: Թագավորն եկավ ու հասավ Ավագ աթարակի տունը, մինչդեռ Ավագը վախճանվել էր և ժառանգ չէր թողել, այլ մի-միայն մի աղջիկ Խվաշագ [անունով]: Ավագի [մահը] ողբացող թագավորը տեսավ Ավագի կին Գվանցային և սիրահարվեց նրա վրա, ապա բերեց [Վրաստան] և ամուսնացավ հետը (հարսանիք սարքեց): Իսկ Ավագի դուստրն ամուսնացավ Մանկանաբերդում (Մանկաբերդում) Սագունի հետ՝ [ժառանգելով] Ավագի տունը<sup>92</sup>...

...Ջաքարիայի որդի Շահնշահն ուրացավ Ղ'անին և գնաց Նարին-Դավիթի մոտ, ապա սպանեց Ջաքարիային: Ապա Շահնշահն էլ մեռավ վշտալի, և Գվանցա թագուհին ևս մեռավ թաթարների մոտ՝ իր դուստր Խվաշագի կողմից թունավորվելով<sup>93</sup>...

... Ղ'անը այգեկույթի գնաց Շիրվան... [Թաթարներն] անցնում էին դեպի Գեղարքունիք: Ապա Ուլու-ղ'անը կալանավորեց Ղ'աննի երեք որդիներին և սպանել տվեց նրանց: Լսելով այս՝ Հունաստանում գտնվող նրանց զորքերը հավաքվեցին ու ելան Հունաստանից, անցնելով Բասենը (Բասիանի), Տառ, Արտահանը, Սամցխեն, Ջավախեթը, Քարթլ-Սոմխեթը, Ռանին և մտան Ղ'ունգուր...

... [Վրաց թագավորը]՝ գարնան հասնելով Գեղարքունիք՝ աղաչեց Ուլու-ղ'աննի որդի Թանգուշին, որպեսզի բաց թողնի նրան Տփղիս...

... Այս պահին Գարուբանդի ճանապարհով դուրս եկավ Բերքա-ղ'անը: Լսելով այս՝ Արաղ'ա-ղ'անն իր շուրջը հավաքեց մեծաքանակ զորք, կապեց Քոխ (Մակվարիի) բերանը և Արաղ'ինն (Արեղի) էլ մինչև Մցխեթա: Եկավ Բերքան, ավերեց Մովականն ու Հերեթը մինչև Տփղիս...

... Ղ'անը շնորհեց [Դավթի որդի Դեմետրեին<sup>94</sup>] թագավորություն և ամբողջ Վրաստանը. բացի Սարգիս Ջաղելուց, մոտեցրեց [նրան] Սագունին, որ ամուսնացած էր Ավագ աթարակի դուստր Խվաշագի հետ. ուստի և մեծարեցավ. և Ղ'անը վրաստանեց ամենքին. և Ավագի Սա[ն]իթ-դիվանը նրա մոտ էր. և թագավորները (sic) տվին նրան Կարսը (Կարի)<sup>95</sup>...

... [Դեմետրե թագավորի շուրջը] երբ նա վերադարձավ Տրփիս, ժողովեցան կաթողիկոս-եպիսկոպոսները և մեծամեծները Սոմխեթ-Քարթլիից, հերեթ-կախեթից, Ջավախեթից-տայեցի-կլարջեթից... և օժեցին Դեմետրեին թագավոր 1272, վրացական 492 թվին<sup>96</sup>...

... Սագունը... ծառայում էր Դեմետրե թագավորին ամենայն հնազանդությամբ, և այս պահին ուժեղացավ Սամցխեի սղասալար Սարգիս Ջաղ'ելին ու նրա որդի Բեքան. և գրավեց նա Տաշխա-կարիից<sup>97</sup>: մինչև Կարնո-քաղաք, քանի որ նա իր ամբողջ էությամբ աստվածապաշտ էր...

... Արդուն [խանը] մտավ Հայք...  
... Վախտանգ [և թագավորը<sup>98</sup>] գրավեց Կարնիֆորայից մինչև Գարուբանդ, բացի Բեքա-Ջաղ'ելիի [երկր]ից...

... Նավրուզն՝ ուղեորվելով [դեպի Վարձիա]՝ հասավ Նախիջևան: Խուտուլ-Բուզան<sup>99</sup>՝ մոտենալով նրան՝ սպանեց նրան ու արմատախիլ արավ նրան որդով ու աղխով, և ոչնչացրեց նրա (Նավրուզի) հիշատակը...

...Պուտուլ-Քուղան երգվեց և մատանի տվեց զ'անին, իսկ Պուտուլ-Քուղայի սղան և այլ զավակները տարվեցան պատանդ։...

...Հազան-ղ'անը<sup>100</sup> Պուտուլ-Քուղային ուղարկեց մեծ զորքով, որ և եկավ Հայք... ավերեց Սոմխիթը, Քարթլին, Էրծոթիանեթը։...

... Դավիթ [VI] թագավորին<sup>101</sup> մեծ հավատարմությունը ունեցավ ինչ վրացական (քարթվելական) և Սոմխիթի (սոմխիթարնի) ազնվականները, երբ Պուտուլ-Քուղան իր զորքն երկու մասի էր բաժանել։...

...Թուրքական բռնակալն էր Ազատ-Մովսեսը... Եվ Ազատ-Մովսեսն եկավ ավերելու ամբողջ Վրաստանն ու հասավ Բասեն (Բասիան) և Տաո... Բեքան կոչ արավ [յուրայիններին] Տաշիսկարիից<sup>102</sup> սկսած մինչև Բասեն (Բասիան) և 12000-ի [չափ] հեծելազորք հավաքեց։...

... Նոյինը դիմավորեց Վաստանգ [III] թագավորին<sup>103</sup> նախընթացում զորքով հանդերձ։...

...Գիորգի [V] Պայծառը<sup>104</sup> գրավեց Վրաստանը, Հայքը, հերթ-կախեթցիներին, Քարթլին, մեսխերին, Տաոն, շավշեթ-կլարջեթցիներին՝ մինչև Սպեր և [Պոնտոսի] ծովը։...

[Գիորգի] թագավորն ազատեց իր էրիսթամլներին Կլարջեթում, Սպերում, Կալմախում, Արտանուջում և Սամցխեում, Արտահանում և Մուշ[դ]այում։...

... Նոյիններից մեկը գրավեց Ատրպատականը. նույնը սկսեց գրավել նաև Հայքը, Ռանին և Մովականն, ու եկավ Գյանջաւ... Ապա նա առավել ևս հպատակեցրեց իրեն Ռանին, Մովականը և Հայքը, որոնք ընդմիջտ հարկատու էին նրան։...

...Բագրատ [V թագավորը<sup>105</sup>]... Օդիշիից էծերի դեմ ուղարկեց Դադիան-Գուրիելներին, փխսազներին ու սոմխիթցոց (սոմխիթարնի)։...

... [Բագրատ թագավորին, երբ նա Քութայիսուեմն էր գտնվում], տեղեկացրին, որ թուրքերն ավերեցին Սամցխեն։ Լսելով այս՝ թագավորը շտապ ելավ 12000 հեծելազորքով, անցավ Փերսաթը և՛ երեք օր ու գիշեր շարժվելով՝ հասավ [Ե]րասխի հայնկույս։...

... [Բագրատ թագավորի ժառանգ Ալեքսանդրի օրոք<sup>106</sup> վերջինիս] հարկատու էին Ռանին, Մովականը և Դվինը։...

...[Լանկ-]Թեմուրը<sup>107</sup> գրավելով Պարսկաստանը՝ ուղևորվեց մեր (Վրաց) կողմը, մտավ Հայք, [որն և] ավերեց, ամայացրեց, ... պաշարեց ամրոցներն ու գերեց [քերդապահներին], ապա նոյեմբերին մոտեցավ Կարսին (Կարի), պաշարեց այն և մնաց այնտեղ [ամբողջ] ձմեռը, քանի որ այնտեղ սաստիկ սառնամանիք էր ու մեծ ձյուն էր դրած։...

...Լանկ-Թեմուրը... գարնանը շարժվեց տեղից ու՝ անցնելով Աշոցքը (Արոցը)՝ եկավ ու մոտեցավ Տփղիսին։...

...Բագրատ թագավորն եկավ ու կանգ առավ Պուլսանի դիմացը՝ Բերդուշ [դեա]ի արևելյան փինյ... Բագրատը կանգ էր առել իր զորքով՝ ամեր-իմերցիներին, մեսխ-կլարջեթցիներին, հեր-կախեթցիներին և սոմխիթցոց (սոմխիթարնի)։... Թեմուրի զորքը... ավերեց Մցխեթան ու բոլոր եկեղեցիները, Քարթլիի ու Հայքի բոլոր բերդերն ու ամրոցները։...

... Ապա [Գիորգի VII թագավորի օրոք<sup>108</sup> Թեմուրը] վերագարձավ Հարաբադ։...

... Թեմուրին զայրացնում էր Ալիջան բերդի<sup>109</sup> պաշարումը [Գիորգի թագավորի կողմից]։...

... Սուլթան [Հ]ուսեյնը, Փիր-Մահմադը, Ամիր-Շահն ու Աբուլբեքիբը և նրանց այլ զորապետները (սպասապետները) մոտեցան Էրիջանի<sup>110</sup> բերդին, որ գրավել էր Գիորգի թագավորը։...

... Թեմուրն հասավ Թավրիզ՝ Ալիջանի բերդը դիտելու նպատակով, ապա անցավ Գեղարքունիք։... Իվանե աթարակն ընծաներով ընդառաջ դնաց Թեմուրին, որ [մեծ] պատվով ունկընդրեց նրան։ Լսելով այս՝ սոմխիթար-վրացիներն էլ ներկայացան Թեմուրին։...

...[Ապա] Թեմուրն եկավ Կարս (Կարի)։ Տեղեկանալով սրա մասին՝ [Վրաց] թագավորն ուղարկեց նրա մոտ Սոմխիթի իշխան Իեսեին՝ խնդրելով, որ երկիրը չավերի, ասելով. ինչ որ նա մեզ կպատվիրի, կկատարենք։...

...[Ապա] Գիորգի թագավորը հավաքեց Քարթլին, Սոմխիթը, հերթ-կախեթցիներին և սկսեց վերանորոգել ավերված [տեղերը]... և Ալեքսանդրի [Իմերեթի] թագավորի որդի Դեմետրեին... ուղարկեց Քարթլի-Սոմխիթը։...

[Գիորգի] թագավորը քրեց թաթարներին և Քարթլի-Սոմխիթի բոլոր բերդերը գրավեց։

...Գիորգի թագավորը նեղ տեղը գցեց (սև օրի հասցրեց) շրջակա մահամեղականներին մինչև [Ե]րասխի եզերքը՝ ավերելով և թալանելով նրանց։...

...[Երբ] Ալեքսանդրե [Իմերեթի] թագավորն եկավ Քարթլի, [նրա շուրջը] համախմբեցին վրացիները (քարթվելները), սոմխիթցիք (սոմխիթարնի) և հերեթ-կախեթցիները, որոնք և կանգ առան Կոխտայուս։...

1430 թվին, վրացական 118-ին, ... սարկինոզներն (sic) եկան ու անսպասելիորեն գրավեցին Լոռին, ավերեցին Սոմխիթը մինչև Սամցխե, ապա վերադարձան։...

...1431 թվին, վրացական 119-ին, [Ալեքսանդրե] թագավորն<sup>111</sup> եկավ Քարթլի, ... ապա՝ զորք ժողովելով՝ եկավ Ամբերդ, կարգավորեց տեղական [գործ]երը և հնազանդեցրեց [Թշնամուն] 1432 թվին, վրացական 120-ին։ [Ապա] թագավորը մոտեցավ Լոռիին, առավ այն և բնաջինջ արավ սարկինոզներին ու գրավեց Լոռին, կրկին հարկատու դարձրեց Թանին, Մովսիկանը և Շիրվանը։

...1433 թվին, վրացական 121-ին, երևաց ոմն Շա[ն]-Ռուխը, որ տիրեց Պարսկաստանի մի քանի մասերին, [ապա] եկավ ու գրավեց Աղրբեջանը և մտավ Հայք։... [Ապա] Շա[ն]-Ռուխը... թողեց [Հայքն] ու վերադարձավ։...

...Ալեքսանդրե թագավորը՝ զորք ժողովելով՝ մտավ Լարբաղ 1437 թվին, վրացական 125-ին։... Տեղեկանալով սրա մասին՝ շիրվանցիք և դարուբանդցիք վախեցան նրա (Ալեքսանդրեի) ուժից և եկան նույն Լարբաղը մեծամեծ բնծաներով։...

...Ալեքսանդրե թագավորը [սովորաբար] շրջում էր ամբողջ թագավորութունը, ձմռան [լինում էր] Իմերեթում, ամռան՝ Սամցըխեում, Կլարջեթում և Թախալեթում, աշնանն ու դարնանը՝ Սոմխիթում, Քարթլիում, Հերեթ-Կախեթում։...

1441 թվին, վրացական 132-ին (sic), Վաստանդ [IV] թագավորը<sup>112</sup> շտապ կերպով ժողովեց հայնկույս և հայսկույս [Լիխի], հերեթ-կախեթցիների և սոմխիթցոց (սոմխիթարնի) զորքերը և գնաց դեպի Սամցխե։...

...1462 թվին, վրացական 150-ին, ... Գիորգի [VII] թագավորը<sup>113</sup> ... ժողովեց Քարթլ-Սոմխիթի և հերեթ-կախեթցիների զորքը և հրամայեց [Սամցխեի] աթաբակին գալ Սամցխեի զորքով։... [Այդ պահին] Գիորգի թագավորին... տեղեկացրին, որ

«Թավրիժ, Գիլաքն ու Թեմուրը (sic) եկել են Քարթլի և ավերում Հայքն ևս։... Գիորգի թագավորը սկսեց նրանց դեմ պատերազմ, և հաղթեց նրանց... 1463 թվին, վրացական 151-ին։...

...Գիորգի թագավորը ժողովեց իր շուրջը վրացոց, սոմխիթցոց (սոմխիթարնի) և հերեթ-կախեթցիների զորքերը, եկավ ու կանգ առավ Փարվանի (Փանավարի) վերևը... 1465 թվին, վրացական 153-ին։...

...1466 թվին, վրացական 154-ին, ... Իմերեթի Բագրատ թագավորը՝ տեսնելով Գիորգի [Քարթլիի] թագավորի կալանավորումը [Սամցխեի Ղվար-ղվարե աթաբակի կողմից]՝ զորք ժողովեց, ... սրպեսզի տիրի Քարթլիին, Սոմխիթին, հերեթ-կախեթցիներին։... [Սակայն] Գիորգի թագավորն անզոր էր։... [Մինչդեռ] Բագրատ աթաբակը ժողովեց Սամցխեի ու Կլարջեթի ամբողջ զորքը ու բերեց Գիորգի թագավորին Սոմխիթ, ուր բոլոր սոմխիթցիք (սոմխիթար)-վրացիները միացան թագավորին։... Ապա Գիորգի թագավորը գրավեց Քարթլին ու Սոմխիթը։...

Սրանից հետո Գիորգի թագավորը տիրում էր և կառավարում էր Քարթլին, Սոմխիթը և Հերեթ-Կախեթը։

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Վախուշտի «Վրաստանի պատմության» առաջին մասը (ըստ մեր բաժանման) գրեթե բառացի կրկնություն է, տեղ-տեղ պերիֆրազ, XI դարի պատմիչ Լեոնտի Մրովելու հյուսած տեղեկությունների։ Սրա մասին տես «Վրաց ազբյուրներ» I հատորը, էջ 143 և այլն։

<sup>2</sup> 301—237 թթ. նախ քան մեր թվականը։ Այստեղ և ստորև մինչև վերջը տարեթվերը նշվում են համաձայն Վախուշտի ժամանակագրության՝ ըստ Գ. Բաբրաձեի հրատարակության (Թբ. 1885)։

<sup>3</sup> Միրվան (Միրվանի), Վրաց թագավոր, 162—112 թթ.։

<sup>4</sup> Արշակ թագավոր, 93—81 թթ.։

<sup>5</sup> Արտակ (Արտադի), Վրաց թագավոր, 81—66 թթ.։

<sup>6</sup> Բարտոմ, Վրաց թագավոր, 66—33 թթ.։

<sup>7</sup> Միրվան II, Վրաց թագավոր, 33—23 թթ.։

<sup>8</sup> Ադերկ (Ադերկի), Վրաց թագավոր, 2 թ. ն. Գ.—65 թ. Գ. հետո։

<sup>9</sup> Կաոս և Փարասման, Վրաց թագավորներ, 72—87 թթ.։

<sup>10</sup> Ադորկ (Ադորկի) և Արմազել (Արմազելի), Վրաց թագավորներ, 87—103 թթ.։

<sup>11</sup> Հավանական է, որ Արտաշեսի մասին է խոսքը։

<sup>12</sup> Հայոց արքայազնի անունը «Զարդե» ուղղակի հիշեցնում է II դա-

րի նախ քան մեր թվականը Հայոց Զարեհ թագավորի անվան հունական ձևը «Զարեհադրես», որ պահպանել է Ստրաբոնը՝ Geographica, XI, 14, 5 և 15 (հմմտ. Օտար ազգությունների մասին. № 1. Հունական աղբյուրներ. Ստրաբոն... Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան. Երևան, 1940, էջ 56[57], 64 [65]). հմմտ. նաև՝ Ա. Բորիսով, Հայաստանի Արտաշես թագավորի արձանագրությունները, — «Սովետական Հայաստան», 1941 թ. № 39. И. Орбели, Расшифровка древних надписей, „Известия“, 1941 г. № 27 (= „Заря Востока“ 1941 г. № 19). Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա. Երևան, 1944, էջ 128—133. Л. Меликсет-Бек. Армепо-Небраиса, — „Труды Гос. Ист.-Этногр. Музея евреев Грузии“, т. III, Тб. 1945, стр. 229—232 (և առանձին). К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э.—IV в. н. э.), М.-Л. 1953, стр. 162—174. Վախուշտի տեղեկություններն ուշադրով են այն տեսակետից, որ համարում են Զարեհին Հայոց Արտաշես (= Արտաշես) թագավորի որդի, մինչդեռ ըստ պրոֆ. Ա. Բորիսովի վերջնական արձանագրության՝ Զարեհը Արտաշեսի հայրն է:

13 Համադասակ (Ամդասակ), Վրաց թագավոր, 182—186 թթ.:

14 Ռեվ, Վրաց թագավոր, 186—213 թթ.:

15 Ասփազուր, Վրաց թագավոր, 262—265 թթ.:

16 Վրաց թագավորների շարքի, ծննդաբանության և ժամանակագրության ստուգումը սկսած 284 թ. նախ քան մ. թ. մինչև IV դարի սկիզբը մ. թ. հետո, տե՛ս Պ. Ինգոբովյայի ուսումնասիրության մեջ՝ Հին վրացական մատյանը «Քարթլիի դարձը» (մոթցեվայ Քարթլիսայ) և անտիկ դարաշրջանի Իբերիայի թագավորների ցանկը, վրացերեն, — «Վրաստանի Պետ. Թանգարանի Տեղեկագիր», XI—B, Թբ. 1941, էջ 259—320, հատկապես 314—317:

17 «Եր-քաղաք» = հունարեն «Կայնոպոլիս», Վաղարշապատի նախնական անունն է, որ Վախուշտին շփոթել է Դիլիի հետ:

18 Տես 1 ծանոթությունը. հմմտ. «Վրաց աղբյուրներ» | հատորը, էջ 166—174:

19 (Միրիան), Վրաց թագավոր, 364—370.:

20 Հմմտ. Վրաց դարձի պատմությունը և Լեոնտի Մրովելի՝ «Վրաց աղբյուրներ» | հատորը, էջ 21, 175:

21 Վարդա-Բաքար (Վարդա-Բարբարի), Վրաց թագավոր, 379—393 թթ.:

22 Հմմտ. «Վրաց աղբյուրներ» | հատորը, էջ 174—176:

23 Տրդատ (Տիրիզատի), Վրաց թագավոր, 393—405 թթ.:

24 Վախուշտի «Վրաստանի պատմության» երկրորդ մասը (ըստ մեր բաժանման) վերամշակում է XI դարի Վրաց պատմիչ Ջուանշեր Ջուանշերյանի հաղորդած տեղեկությունների: հմմտ. «Վրաց աղբյուրներ» | հատորը, էջ 188—196:

25 Արչիլ, Վրաց թագավոր, 410—434 թթ.:

26 Վախտանգ Գորգասալ (Գորգասլան), Վրաց թագավոր, 446—499 թթ.:

27 Հմմտ. 20 ծանոթությունը:

28 Փարսման VI, Վրաց թագավոր, 542—557 թթ.:

29 Բակուր, Վրաց թագավոր, 557—570 թթ.:

30 Գիորգիա = Վրաստան Georgia, այստեղից la Géorgie, Georgien, Georgia. հմմտ. Л. Меликсет Бек ов. Страна св. Георгия. — „Известия Кавк. Отд. Рус. Геогр. О-ва“, т. XXIV, № 2, 1916, стр. 222—228 (և առանձին):

31 Ճուրտավի, ինչպես և Շուշանիկի մասին, «Վրաց աղբյուրներ» | հատորում (էջ 12—13) հիշված գրականությունից զատ, տե՛ս հետևյալ նորագույն գրականությունը. Լ. Մելիքյան-Բեկ, Թոխալեթ-Մալիայի նյութական կուլտուրայի մնացորդների և սոպոսիմիկայի ուսումնասիրության համար, վրացերեն, — „За марксистское языкознание“, ժողովածու, Թբ. 1934, էջ 38—44. P. Peeters, Sainte Sousanik, martyre en Armeno-Géorgie (14 décembre 482—484), — „Analecta Bollandiana“, Bruxellis, LIII, 1935, pp. 5—48, 245—307. Յակոբ Ճուրտավեցի. Վիսարանութիւն Շուշանկայ. վրացական և հայկական բնագրերը ուսումնասիրությանը, վարիանտներով, բառարանով և ցանկերով լույս ընծայեց Իլիա Արուստանյան, Թբ. 1938, 063 + 120 էջ:

32 Գվարամ (Գուրամ) կուրապալատը, 576—600 թթ.:

33 Միհր 663—668 թթ.:

34 Վախուշտի «Վրաստանի պատմության» երկրորդ մասը (ըստ մեր բաժանման) հիմնականում վերամշակում է XI դարի անանուն վրաց պատմիչի հաղորդած տեղեկությունների: հմմտ. «Վրաց աղբյուրներ» | հատորը, էջ 200—209:

35 Ատրնեսես (Ադարնասես) կուրապալատը, 881—923 թթ.:

36 Ուփլիսցիների մասին տե՛ս «Վրաց աղբյուրներ» | հատորը, էջ 209—210, ծան. 7:

37 Այստեղ, ժամանակագրությունը խախտելով, Վախուշտին խոսում է Ափխազաց կոստանտին թագավորի և Սմբատ Խոստովանոզ Հայոց արքայի միջև եղած պայքարի մասին X դարի սկզբին: Նույնը Վախուշտին կրկնում է և իր «Իմերեթի պատմության» մեջ (տե՛ս ստորև, էջ 69): հմմտ. «Վրաց աղբյուրներ» | հատորը, էջ 202, 209—210, ծան. 6, 8 և 9:

38 «Ափխազը» (Ափխազիթ) սովորաբար արևմտյան Վրաստան է նշանակում:

39 Այս էպիգրադը, որ Վախուշտին կրկնում է իր «Կախեթի պատմության» մեջ (տե՛ս ստորև), XI դարի անանուն վրաց պատմիչից է բխում: հմմտ. «Վրաց աղբյուրներ» | հատորը, էջ 203 (նաև 93):

40 Տե՛ս նախորդ ծանոթագրությունը. հմմտ. «Վրաց աղբյուրներ» | հատորը, էջ 203, 98, ծանոթ. 2:

41 Կվիրիկե, Կախեթի տեր (բորիկոզ), 929—976 թթ.:

42 Կախեթի սահմաններում գտնվող «Նախնեվան» և «Լործորանի» տեղանունները կարող են հատուկ ուսումնասիրության և ստուգման:

43 Բաղրատ II, 958—994 թթ.:

44 Բաղրատ III, Վրաց թագավոր, 980—1014 թթ.:

45 Գիորգի I, Վրաց թագավոր, 1014—1027 թթ.:

46 Բաղրատ IV, Վրաց թագավոր, 1027—1072 թթ.:

47 Պետր է լինի՝ Մարիամ Արծրունյաց թագավորի աղջիկը. հմմտ. նաև «Վրաց աղբյուրներ» | հատորը, էջ 138—139:

- 48 Հմմտ. «Վրաց աղբյուրների» I հատորը, էջ 205, 207, 211—212, ծանոթ. նակ՝ 27 Լ. Մելիքսեթեկ, Գ. Աղայանի «Արուսթուն և Մանվելն» ու Սամշվիլիզի որձաքարը, — «Արշավ» (Թբ.), 1910 թ. № 4, էջ 52—55:
- 49 Գիորգի II, Վրաց թագավոր, 1072—1089 թթ.:
- 50 Գլղեկարնիի մասին տե՛ս Լ. Մելիքսեթեկ, Կլղեկարնի, վրացերեն, — «Պատմ. Տեղեկագիր» (Թբ.), 1924 թ. № 1, էջ 167—172:
- 51 Վախուշտիի «Վրաստանի պատմութեան» շարժող մասը (ըստ մեր բաժանման) վերամշակումն է XII դարի անանուն հեղինակի «Դավիթ արքայից արքայի պատմութուն» երկի: Հմմտ. «Վրաց աղբյուրների» I հատորը, էջ 216—220:
- 52 Ըստ Ն. Բերձենիշվիլու ենթադրության (չին թրխիսիի տողոնիմիկայից. Աղարանի. «Միմոսիվելի», II, Թբ. 1951, էջ 38—60. վրացերեն) Աղարանիի տակ պիտի հասկանալ թրխիսիի շրջակայքը՝ Շինդիսի, Տարախեյա, Կոջորին, որոնք XII—XIII դդ. ծառայել են իբրև ամառանոց Վրաց թագավորների և մեծամեծների համար:
- 53 Տե՛ս 30 ծանոթագրութունը:
- 54 Նախիզուրին, ըստ մեր հետազոտութեան («Վրաց աղբյուրների» I հատոր, էջ 14), նախկին Ցուրտափն է:
- 55 Պիտի լինի 1123 թ.:
- 56 Տե՛ս նախորդ ծանոթագրութունը:
- 57 Այս վեճի շուրջը մանրամասն տես Լ. Մելիքսեթեկ, Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց ՃԸ., վրացերեն, Թբ. 1928, էջ 133—139:
- 58 Վախուշտիի «Վրաստանի պատմութեան» հիմնգեոռոգ և վերջին մասը (ըստ մեր բաժանման) մի տեսակ կոմպիլացիա-պերիֆրազ է XIII—XIV դդ. վրաց անանուն պատմիչների և ժամանակագիրների հաղորդած տեղեկութունների, որ մենք ամփոփած ունինք սույն աշխատութեան II հատորում:
- 59 Դեմետրե I, Վրաց թագավոր, 1125—1164 թթ.:
- 60 Գիորգի III, Վրաց թագավոր, 1166—1184 թթ.:
- 61 Մանրամասնութունները տե՛ս նակ Դ. Բորայրեցու հիշատակարանում (Հայկական ՄԱԻ ԳԱ-ի «Տեղեկագիր», 1952, № 2, էջ 113—120) և Ստ. Օրբելյանի «Պատմութիւն Տանն Սիսական»-ի 66-րդ գլխում:
- 62 Թամար, Վրաց թագուհի, 1184—1213 թթ.:
- 63 Քանի որ Թամարն ինքն էր գահակալ, այլ ոչ գահակալի ամուսին-թագուհի, ուստի և վրաց աղբյուրներում կոչվում է «մեփե», «մեփա»—քազավոր, արհա, և ոչ «գեղգոփայի» թագուհի: Այսպես էր և Թուսուղանը:
- 64 Նույն Յուրին՝ Անդրեյ Բոգոլյուբսկու որդին:
- 65 Այսինքն՝ Դավիթ Սոսլանին (Օս-Այանին):
- 66 Վրացերեն «խվաստագին»-ն քանիցս գործածված է վրաց հին գրականութեան մեջ: Մննդոց գրքի XLVII, 18, հայերեն տեքստի «եթէ արծաթ էր՝ պակասեաց, և եթէ խաչինք և ստացուածք՝ առ քեզ են տեր» նախադասութեանը վրացերենում համապատասխանում է. «գաղաթու մոակլղա վեցիլի շուենի դասաբոնելի դասխուսագի շենդա միմարթ ուփլիսայ շուե-նիսայ» (նույնը սլավոնական-ռուսականում, «серебро истощилось и стада скота нашего у господина нашего», ուր վրացերեն «խվաստագին»-ին համապատասխանում է СКОТ բառը): XI դարի վրաց պատմիչ Լեոնտի Մրովե-

լին այս բառը բազմիցս գործածում է Փառնավագ թագավորի մասին խոսելիս (Քարթլիս-ցխովբերա, Աննա թագուհու գրչագիրը, վրացերեն, 1942, էջ 15—16, հմմտ. Բրոսսեի հրատ., էջ 30), ինչպես և նույն դարի մյուս պատմիչ Ջուանշեր Ջուանշերյանը՝ Վախտանգ Գորգասալի մասին պատմելիս (նույն տեղ, էջ 98, ըստ Բրոսսեի՝ 116), վերջապես և XIV դարի անանուն ժամանակագիրը՝ մոնղոլական արշավանքների Վրաստանի գրութունը նկարագրելիս (Բրոսսեի հրատ., 344, 379, 412)՝ «խոստակի», «խուստակի», «խուստագի», «խվաստագի» ձևով:

Առանձնապես հետաքրքիր է XIV դարի ժամանակագրի հիշատակութունները «խվաստագի»-ի՝ հետևյալ կոնտեքստներում. ա. «թողեց և՛ աղիբ, և՛ ինչքը, և՛ խվաստագի՛ն» (էջ 344), ըշատ զորք ափեց իր աղխով, ընչքով և խվաստագի՛ով» (էջ 379), «սուկու և արծաթի և երամակներին և խվաստագի՛ին հաշիվ չկար» (էջ 412):

Թոստոմ I Վրաց թագավորի (1634—1658) 1645 թ. մի գույարում, ըստ վկայութեան Դ. Բաքրուձեի (Վախուշտիի «Վրաստանի պատմութունը», էջ 40, ծանոթ.), խվաստագի նշանակում է «մանր եղջերավոր անասուն»:

Բառարանագետ Սուլիան-Սարա Օրբելյանը (Սուլիան-Սարա Օրբելիանի վրացերեն բառարան, Թբ. 1940, էջ 466) «խվաստագի»-ն մեկնաբանում է՝ «սաբոնելի դասաղ՝ ուլիլի», այսինքն անասուն և աղխ (ինչք), մինչդեռ Քիլիլա և Դամանայի վրացերեն վերսիայում նա նշանակում է փող, ապրուստ կամ գանձ:

Ըստ Մ. Բրոսսեի (M. Brosset, Rapport sur l'ouvrage intitulé etc., 1847, p. 15—16 և ծանոթ. 4, նույնի — Histoire de la Géorgie, I Partie, l-e livraison, SPB., 1849, p. 38, n. 4) և Վ. Լանգլուայի (V. Langlois, Essai de classification des suites monétaires de la Géorgie, 1860, p. 12) «խվաստագի»-ն նշանակում է թե՛ շորքոտանի անասուն-մալ, խաչն (pecus, pecunia) և թե՛ դրամ, գանձ: Բառարանագետ պրոֆ. Դ. Չուրի-նովը (Грузино-русский словарь, СПб. 1887, стр. 742) նշում է, որ «խվաստագի»-ն ունի 2 իմաստ՝ տավար-ոչխարի (անասունի) և դրամի, ինչպես լատիներենում՝ pecunia; скот, животное; сокровище, богатство, деньги»:

Ըստ Ն. Մանի (Грамматика древнелитературного грузинского языка, Jnгр. 1925, стр. 018) «խուստակի»—скот, скотина:

Ամենայն կասկածից դուրս է, որ «խվաստագի»-ն նույն հայերեն-փակ-լավերենի «խոստակն» է, որտեղից առաջացած է «խոստակ-դար»-ը, այսինքն «խոստակ ունեցող», «խոստակին տիրող», համենայն դեպս շարժական և ոչ թե անշարժ գույթի, կայքի տեր և տնօրենի իմաստով:

Հայերեն «խոստակ» և «խոստակդար» բառերի ստուգաբանությունը տե՛ս Նոր բառգիրք հայկազյան լեզվի, I, էջ 967. Առձեռն բառարան, 387. H. Hüb-erschmann, Armenische Grammatik, 161, չր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, III, 595—597. Я. А. Манандян, Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении, Тифлис, 1932, стр. 9—11. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 9, 17, 104—118, 122, 124, 133, 135, 145, 147. Խ. Սամուելյան, չին հայերկրային պատմութունը, I, Երևան, 1939, էջ 190—191, Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, II, Երևան, 1944, էջ 286:

67 Տե՛ս 64-րդ ծանոթագրութունը:

- 68 Այս հատվածը կրկնություն է «Թագակիրների պատմական ու դավասանքը» երկի XIII դ. Ֆանատիկ պատմիչի կողմից հյուսածի. հմմտ. «Վրաց ազգյուրների» I հատորը, էջ 16—20 (հատվածը բերում ենք համառոտաբար):
- 69 Հմմտ. նույն պատմիչի երկում գործածված «Բոլոստիկե» վարիանտով «Բոլոստիկե» և «Բոլոստիկե», «Վրաց ազգյուրների» II հատորը, էջ 21 և ծանոթ.:
- 70 Այսինքն 1184 + 24 = 1208 թ.:
- 71 Իսկապես պիտի լինի 1208 թ.:
- 72 Հմմտ. 63-րդ ծանոթ.:
- 73 Բառացի՝ «Առճուտ», «Փիճուտ»:
- 74 Իսկապես պիտի լինի 1213 թ.:
- 75 Գիորգի-Լաշա, Վրաց թագավոր, 1213—1222 թթ.:
- 76 Ուղիղ՝ 1211 թվից սկսած (Զինգիս-խանը զ'անն 1206—1227 թթ.):
- 77 Այլ ազգյուրներում՝ 90.000:
- 78 Տե՛ս «Վրաց ազգյուրների» II հատորը, էջ 51, 63—64, ծանոթ. 4:
- 79 Ըստ Ի վ. Ջավախի շվիլու հետազոտության (Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, III, Թբ. 1941, էջ 5, նույնի՝ Վրաստանի պատմությունը (XI—XV դդ.), վրացերեն, Թբ. 1949, էջ 101)՝ 1222 թ. 18 հունվարին. հմմտ. «Վրաց ազգյուրների» II հատորը, էջ 44:
- 80 1222—1247 թթ., հմմտ. 63-րդ ծանոթ. (Ջալալադդինը Խորեզմշահ 1220—1231 թթ.):
- 81 Իվանե աթաբախի մահը տեղի է ունեցել 1225 թվին. հմմտ. «Վրաց ազգյուրների» II հատորը, էջ 52:
- 82 Ըստ Ի վ. Ջավախի շվիլու հետազոտության (նույն տեղ, III, 10)՝ 1225 թվին:
- 83 Ուղիղ՝ 1226 թ. (նույն տեղ, 14):
- 84 Ուղիղ՝ 1226—1227 թթ. (նույն տեղ, 15):
- 85 1227 թ. (նույն տեղ, 15):
- 86 Տե՛ս 30-րդ ծանոթ.:
- 87 Իկոնիայի (Ռուսի) սուլթան 1237—1247 թթ.:
- 88 Իվերիա = Վիրք (Քարթլի) = Արևելյան Վրաստան, հմմտ. Л. Меляксет-Бекоев, Новый взгляд на происхождение названия «Иверия». — Известия Кавк. Отд. Рус. Геогр. О-ва, т. XXIV, № 1, 1916, стр. 36—40 (և առանձին):
- 89 Ուլու-Դավիթը, Վրաց թագավոր, 1243—1259 (ուղիղ՝ 1243—1271) թթ.:
- 90 Նարին-Դավիթը Ռուսուղանի որդին՝ աթոռակից 1230 թ., թագավոր 1247 թ., վախճ. 1293 թ.:
- 91 Հմմտ. «Վրաց ազգյուրների» II հատորը, էջ 58:
- 92 Նույնը, 59:
- 93 Դեմետրե II, Վրաց թագավոր, 1273—1289 (ուղիղ 1270—1289) թթ.:
- 94 Հմմտ. «Վրաց ազգյուրների» II հատորը, էջ 59—60:
- 95 Ըստ Ի վ. Ջավախի շվիլու հետազոտության (նույն տեղ, III 105)՝ Դեմետրեն պետության կառավարությունը ստանձնեց 1278 թվին:
- 96 «Տաշխ-կարի» այժմյան Բորջոմիի հովիտն է Խաչուրիի մոտ:
- 97 Վախտանգ II, Վրաց թագավոր, 1289—1292 թթ.:

- 98 Խուսուր-Բուդայի մասին, ի միջի այլոց, տես Н. Марр, Фресковое изображение парона Хутлу-буги в Ахпате, — Христ.-Еостск., т. I, 1912, стр. 350—353:
- 99 Մոնղոլական զ'ան 1295—1304 թթ.:
- 100 Դավիթ VI, Վրաց թագավոր, 1292—1310 թթ.:
- 101 Տե՛ս 97-րդ ծանոթ.:
- 102 Վախճ. 1304 թ.:
- 103 Գիորգի V, Վրաց թագավոր, 1318—1346 (ուղիղ՝ 1314—1346 թթ.):
- 104 Բագրատ V, Վրաց թագավոր, 1360—1395 թթ.:
- 105 Ալեքսանդրե I, Վրաց թագավոր, 1413—1442 թթ. (ուղիղ՝ 1412—1443 թթ.):
- 106 Լենկ-Թեմուր կամ Թեմուր-Լենկ, մոնղոլական զ'ան, 1360—1405 թթ.:
- 107 Գիորգի VII, Վրաց թագավոր, 1395—1407 թթ.:
- 108 Ալիջան = Ալիջա-զ'ալա = Երնջակ (նույն էրիջանն է):
- 109 Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:
- 110 Տե՛ս 106-րդ ծանոթագրությունը:
- 111 Վախտանգ IV, Վրաց թագավոր, 1445—1445 թթ.:
- 112 Գիորգի VIII, Վրաց թագավոր, 1445—1469 թթ.:

«ՔԱՐԹԼԻ ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ  
(1469—1744)

1469 թ. [հետո]... Կոստանտինե [Քարթլիի թագավորն<sup>1</sup>] ամրացրեց Տիգրիսը, Սոմխիթն և Լոսին... Կոստանտինեն տիրում էր Տիգրիսին, մթիուլ-մոխեկցիներին<sup>2</sup>, Սոմխիթին և Լոսին...

1468 թ. [հետո]... Բայազետի որդիք, Ստամբուլի՝ նախկին Կոստանդնուպոլսի՝ սուլթանները կոչում էին Ֆրանկների դեմ... Ուզուն-Հասան զ'անը՝ եկավ Հայաստան, ավերեց այն և մտավ Քարթլիի Սոմխիթը... Իսկ Կոստանտինե թագավորն ուժեղացավ և գրավեց Տիգրիսը և թուրքերի (թաթարների) կողմից ավերած բերդերը, ապա հրամայեց բարաթյաններին և սոմխիթեցոց հարձակվել այն ցեղերի վրա, որոնց զ'անը Քարթլիի սահմաններումն էր թողել...

1529 թ. ... սուլթան Սուլեյմանն<sup>4</sup> եկավ Երևանի դեմ և գրավեց այն: Սրանից Վրաստանի բնիկները վախեցան. սակայն աստված նրանց փրկեց և խոնթքարը վերադարձավ Բաղդադ...:

1536 թ. ... [Շահ-Թամազը<sup>5</sup> գրավելով Տիգրիսը՝] զվարձ պահապաններ մտցրեց բերդի մեջ, իսկ ինքը գնաց Արարազ-



1539 թ. ... Հայերը լիալուսնի հաշվում շեղվեցին<sup>6</sup>... Քանի որ այդ պահին Սամցխեն իմերների Բագրատ թագավորն<sup>7</sup> ուներ գրաված, օսմանցիք Բագրատի հետ կովելու եկան Բասեն (Բասխան)։... [Բագրատ և Լուարսար<sup>8</sup>] թագավորները հասել էին Բասեն։...

1548 թ. ... [Լուարսար] թագավորն իր ժողոված զորքով դնաց, աթարակից խլեց Սամցխեն, Ջավախեթը, Կոլան և Արտահանը, որ և գրավեց իր համար։ Այս բոլորի մասին աթարակը ծանուցեց ղ'աենին, և Շահ-Քամազը շտապ շարժվեց՝ նրան օգնություն հասցնելու նպատակով։ Եկավ ու ավերեց Շաքին, շրջեց Քարթլիի Սոմխիթը։ Լուարսար թագավորը չկարողացավ ընդդիմադրել։ Ապա [Շահ-Քամազը] մտավ Սամցխե և գրավեց այն, կալանավորեց Իջուին և Շերմազանին, որոնց և սպանեց, իսկ ուրիշներին գերեց, անցավ Հայաստան և դնաց Երևանի վրա։...

Ապա ելավ խոնթքար սուլթան Սուլեյմանը։ Լսելով որ մասին՝ Շահ-Քամազն եկավ ու կանգ առավ Արտահանում, ղ'աենը ավերեց Սամցխեն, գրավեց Կարսը (Կարի), որ և ավերեց։...

1556 թ. ... ղ'աենը խաներ կարգեց Թանում, Մովականում, իսկ Երևանում բեգլարբեգ, և սրանց ստորազրյալներ. ապա կարգեց խաներ և սուլթաններ, որոնք են. բեգլարբեգը՝ էրիսթավների էրիսթավ, խանը՝ էրիսթավ, սուլթանը՝ խելիսբերի։... Լուարսար թագավորը՝ պատերազմելով՝ քշեց թուրքերին (թաթարներին) և գրավեց Քարթլին և Սոմխիթը և բոլոր բերդերը։...

1577 թ. ... խոնթքարի զորքը գրավեց Երևանը, Գյանջան և Թավրիզը։...

1578 թ. ... սոմխիթցիք շատ փասեցին օսմանցիներին։... Հոկտեմբերին Սվիմոն թագավորը<sup>9</sup> կանգ առավ Սոմխիթում։...

1580 թ. ... աթարակ Ղ'վարդ'վարեն և Բեքան հարձակվեցին Լոռիի վրա, ավերեցին ու գնացին։ Ապա եկավ Մահմադ-փաշան կամ Սինան, և սրա զորքը գրավեց Լոռին. սա ինքն գրավեց և Գորվա բերդը։...

1581 թ. [Սվիմոն] թագավորն եկավ Լոռի և այն գրավեց ապրիլի 1-ին։...

1583 թ. ... խոնթքարը մեծ զորք ուղարկեց. [օսմանցիք] եկան ու մոտեցան Լոռուն, որն և գրավեցին։... Իսկ... թագավորը՝ [վերցնելով] Դբանիսը՝... կարճ ժամանակում գրավեց բոլոր բերդերը, բացի Գորուց և Լոռիից։...

1590 թ. ... օսմանցիք՝ դուրս գալով Լոռվա բերդից և ենթադրելով, որ [Սվիմոն] թագավորը նրանցից հեռու է դտնվում՝ գվարճանում էին Տաշիրում, երբ հանկարծ Սվիմոն թագավորը հարձակվեց նրանց վրա և բնաջինջ արավ նրանց։...

1600 թ. ... օսմանցիք վերցրին Լոռին և տեղավորեցին այնտեղ պահապաններ, իսկ իրենք գնացին ու Սվիմոն թագավորին սարան Ստամբուլ։ Ապա Գիորգի [արքայազնը<sup>10</sup>] գրավեց, բացի Լոռիից, ամբողջ Քարթլին ու վերջինիս բերդերը։...

Սվիմոն թագավորի մահից հետո նրա որդի Գիորգին թագավոր օծվեց Տիգրանում 1600 թվին։... Ապա [Գիորգին] զորք ժողովեց ու մոտեցավ Լոռիին 1601 թվին, և գրավեց այն։...

Ապա եկավ Շահ-Աբասը<sup>11</sup> և մոտեցավ Երևանին 1602 թվին... կանչեց իրեն մոտ Գիորգի թագավորին և Կախեթի րատոն Ալեքսանդրին։ Սրանք՝ ժողովելով իրենց զորքերը՝ դնացին Երևան՝ ներկայանալու ղ'աենին։ Շահ-Աբասի զորքը երեք կողմից մոտեցավ Երևանին, իսկ մի կողմն էլ բռնեցին սրանք (վրացիները)։ Մի քանի օրից հետո Շահ-Աբասը հրամայեց գրոհ տալ բերդին։ Այդ պահին վրաց զորականներն առաջինները ներխուժեցին բերդը, կոտորած կազմակերպեցին ու խլեցին քաղաքներ։ Ապա պարսիկները մտան և Շահ-Աբասը բերդաքաղաքը գրավեց։ Շահ-Աբասը դիմեց Գիորգի թագավորին. «Եթե խոնթքարն իմ թշնամին էր, առավել ևս քոնն էր. ուստի և պարտ է քեզ իրրև պարգև տաս ինձ Լոռին Բերդուջ<sup>12</sup> գետից սկսած»։ Թագավորը սաստիկ տրտմեց ու պատասխանեց. «Ես քեզնից էի սպասում իրրև պարգև մի որևէ քաղաք իմ հոր և իմ ծառայության համար, և ոչ թե իմ սահմաններում եղածից խլելը»։ Իսկ Շահ-Աբասը նենգ էր և ուզում էր Քարթլին նվաստացնել, մանավանդ որ Լոռվա իշխան-խանը (էրիսթավը), որ փախել էր ու մահմեդականացել, զրգոսում էր Շահ-Աբասին թուլացնելու Քարթլիի մեծ ուժը և առավել ստիպում էր, որպեսզի [թագավորը ղ'աենին] զիջի Լոռին՝ Բերդուջ գետի ափունքից սկսած։... Ուժասպառ եղած Գիորգի թագավորը զիջեց Լոռին [Շահ-Աբասին]։

...Երբ թուրք (թաթար) խաները Դոնսի գաշտով էին անցնում, գորեցի մի տերտեր (տենտերա<sup>13</sup>)՝ նկատելով այդ շտապ վերադարձավ և Գորվա կամուրջը քանդեց<sup>14</sup>։ Թուրք (թաթար) խաները՝ գտնելով կամուրջը քանդած՝ մտան Սացիցխանու։...

1615 թ. ... Շահ-Աբասը... ասաց [Լուարսար թագավորին]. «Դու ասպետ ես և քաջ նետող, սրսի գնանք Արարաշ»։...

1619 թ. ... [Բազմաթիվ թագավորի<sup>15</sup>] ամուսին Աննան իր սր-  
դի Սվիմոնի հետ գտնվում էր Տիգրիսում և Սոմխիթում...

1623 թ. ... վրաց զորքը... ավերեց Գյանջան, Ղարաբաղը և  
մեծ ավարով վերադարձավ Քարթլի...

1624 թ. ... Ամիրգունա-խանը՝ Երևանի բեգլարբեգը՝... եկավ  
Մարաբախի լեռան մոտ... Ապա [ղզլրաշները գնացին] ավերե-  
լու Սոմխիթ-Սարարաթիանոն... Սոմխիթի մելիք Աթաբեգն ու  
Չաքունը համախոհ էին զ'աենին...

1626 թ. ... Մոսկովի<sup>16</sup> դուստրը Ֆառ Ա[ր]զրումում...

1634 թ. ... [ղզլրաշները] Ռոստոմ թագավորին<sup>17</sup> ուղարկե-  
ցին օգնության Ղազար-Շամշադին-Լոռիի խաներին:

1635 թ. ... եկավ խոնթաբար Մուրադն և գրավեց Երևանը,  
[և] 1636-ին վերադարձավ: Ապա Մուրադ խոնթաբարն ու Շահ-  
Սեֆին<sup>18</sup> հաշտություն կնքեցին. խոնթաբարին Ֆառ Իմերեթը,  
Սաաթարագոն և Քյուրդստանի կեսը, իսկ զ'աենին մնաց Երևա-  
նը, Քարթլին, Կախեթը և Քյուրդստանի [մյուս] կեսը...

1638 թ. ... Ռոստոմը այցելում էր Գորին, Յիսրեթը, Տիգրի-  
սը, Սոմխիթը և միշտ վարձանում էր և ուրախ էր... Իորամին  
[Ռոստոմ] թագավորը բերեց Ա[ր]զրումից...

1664 թ. ... Վախտանգ թագավորը<sup>19</sup> վերաշինեց և ընդար-  
ձակեց Քարթլին, Թոխաթը, Տաշիրը, Աշոցքը (Աբոցի), որոնք  
ամայի (անմարդաբնակ) էին դարձել...

1667 թ. ... Շահ Սուլեյմանը<sup>20</sup> ցանկացավ ամուսնացնել  
Շահ-Աբասի այրիին (նախկին կնոջ) Աջուկային, որ [Շահնավազ]  
թագավորի դուստրն էր, և նրա հետ ամուսնանալ ցանկացան և՛  
Շիխիլիսանը, և՛ Լորիստանի խանը... Իսկ թագավորը նրան...  
Լոռվա խանին<sup>21</sup> տվեց:

1669 թ. ... Յիցին... հանդիպում ունեցավ Իշխուստուրուքի  
(Իշիշուստուրուքի)<sup>22</sup> կամրջի մոտ...

1687 թ. ... Սոմխիթի մելիքն [էր] Քյամար-բեկը...

1691 թ. ... [Երեկոյն] թագավորն<sup>28</sup> եկավ Սոմխիթ-Սարարա-  
թիանո...

1695 թ. ... Նազարալի խանն ու Քալբալիխանը շրջեցին  
Սոմխիթը, Իմանիսի ձորը և կանգ առան Ղարաբուլախում: Քա-  
բալիխանն և Երևանի խանն [իրար] թշնամիներ էին... Երևանի  
խանը շտապ տեղեկացրեց զ'աենին [Վրաց] թագավորի [Իմերեթ]  
գնալու մասին: Լսելով այս՝ զ'աենը շնորհեց [Երևանի] խանին  
թոփանչի-ազատություն, իսկ թագավորի մոտ ուղարկեց մեհ-

մանդար-հյուրընկալին: Սա եկավ Ալի<sup>24</sup>. Թագավորն ևս, որ տե-  
ղյակ էր սրան, հասավ Ալի: Մեհմանդարը մեծ պատիվներով  
առաջնորդեց թագավորին, որ անցավ Քարթլին, շրջեց Ատենի  
կողմը, անցավ Թոխաթ, Աշոցքը (Աբոցի) և հասավ Երևան  
1696 թվին: Ապա գնաց Սպահան ու ներկայացավ զ'աե-  
նին...

1709 թ. ... Վախտանգ [թագավորը]<sup>25</sup> ձմռան պահին որսոր-  
դում էր Ղարաջա[ղ]-Սոմխիթում, աշնանը և գարնանը Գորիում  
և Տիգրիսում, ամռանը Թոխաթի Շամբիանում...

1719 թ. ... [Վախտանգ թագավորը] կալանավորեց Սոմխի-  
թի մելիք Քյամար-բեկին, որին հրացանով գնդակահարեց...

1722 թ. ... Մահմուդ-զ'ալի խանը<sup>26</sup> [Տիգրիսն առնելու հա-  
մար] հետը բերել էր, իրրև օժանդակողներին, Գյանջայի խանին,  
Երևանի զորքը և լեզգիներին...

[Վրաց զորքը Վախուշտի ղեկավարութայն] կոտորածի  
ենթարկեց Բորչալու ցեղերին. իսկ երբ խանն Աղջաղալա բեր-  
դից դուրս եկավ, զորքը վերադարձավ [Բորչալուից] և կանգ  
առավ Ծոփիսում<sup>27</sup>, Երկրորդ օրը թալանն ընդհատեցին: Սոմխիթ-  
ցիք տեղեկացրին խանին, որ Վախուշտին պուրկ է զորքից...  
Ա[ր]զրումի փաշան Ղարսուսն (Ղարսի) էր գտնվում, նպատակ  
ունենալով պաշարել Երևանն ու գրավել Ազրբեջանը...

1723 թ. ... սարասքյարը գտնվում էր Ղարսում (Ղարսի) և  
դուրս ելավ այնտեղից...

1724 թ. ... Գոմենտի կաթողիկոսը<sup>28</sup> գնաց Լոռի, քանի որ  
այն դեռևս օսմանցիք չէին գրավել...

1728 թ. ... Իսաղ-փաշան բաժանեց Քարթլին. Սոմխիթ-Սա-  
րարաթիանոն տվեց Հրասա Ղափլանիշվիլուն... Իսաղ-փաշան  
մեծարեց Տիգրիսի մելիք Աշխարհբեկին... Բնակչություն չէր  
մնացել Մուխրանում, Քարթլիում, Սացիցիաոնոյում և տեղ-տեղ  
Սարարաթիանո-Սոմխիթում ոչ մի բան, բացի ամրոցներից...

1734 թ. ... օսմանացիք գրավեցին Թավրիզը, և [Շահ-Թա-  
մազ] զ'աենն<sup>29</sup> ընդհատեց պայքարն Երևանի համար և ինքը  
գնաց Խորասան: Շահ-Թամազին ուսումները փախուստի ենթար-  
կեցին [դեպի] Երևան, և հա՛ փախչելով՝ հասավ Սպահան...

... Թամազ-խանը գարնանը թողեց Գյանջան, շրջեց Սոմ-  
խիթը, Իրանիսը, անցավ Ղաջուլուն և հասավ Ղարս (Ղարսի):  
Այդ ժամանակ այդտեղ էր եկել իրրև սարասքյար Բոֆրուլը մեծ  
զորքով: Իսկ Թամազ-խանը, որ ոչ մի բանով չփրկուեց Ղարսին

(Ղարսի), վերագարձալ և կանգ առալ Երևանից վերև: Երրորդ օրն առավոտյան Քոֆրուլն էլ եկավ զորքով. շարժվեցին, և այնտեղ տեղի ունեցավ սաստիկ կռիվ, սպանեցին Քոֆրուլին, և օսմանցիք փախան:... Օսմանցիք գիջեցին Երևանը, Գյանջան, Լոռին, Տփղիսը Թամագ-խանին, որը և գրավեց [այդ տեղերը]: Վերջինս Երևան կանչեց վրացիներին, որոնց և կալանավորեց, բացի միմիայն Քայխուսրո Ղափլանխուջվիլուց, որ այդ պահին սպարապետ (սպասպետի) էր, և կալանավորվածներին Տփղիս ուղարկեց:...

1737 թ. ... լեզգիները մտան Տաշիր: Լսելով այս՝ Սեֆի-խանը, որ Ղաղայսուհն էր նստած, իսկ մինչ այդ խան էր Տփղիսում ծանուցեց վրացոց:... Քայխուսրո սպարապետը (սպասպետը) հետամուտ եղավ Տաշիրից անցնող լեզգիներին, որոնց հասավ, հետները կովի բռնվեց ու բնաջինջ արավ նրանց, և շատ քչերը փախուստի գիմեցին:

**Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր**

- 1 Կոստանտինե III, Վրաց թագավոր, 1468(1478)—1505: Մանրամասն տես Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, հ. IV, պրակ I, Թբ. 1924, էջ 133—183. նույնի՝ Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, հ. IV (XV—XVI դարեր), Թբիլիսի, 1938, էջ 127—172. նույնի՝ Վրաստանի պատմությունը (XI—XV դդ.), Թբիլիսի, 1949, էջ 255—258:
- 2 Վրաստանի լեռնականներն են:
- 3 Ուզուն-Հասան կամ Հասան-բեյ, Ակ-կոյունլու թուրքմենական ցեղի խան, 1466—1478 թթ.:
- 4 Սուլեյման կամ Սյուլեյման I, Օսմանցոց սուլթան, 1520—1566 թթ.:
- 5 Շահ-Քամազ, Պարսից շահ, 1525—1676 թթ.:
- 6 Խոսքը ծոպատիի մասին է:
- 7 Բագրատ, Իմերեթի թագավոր, 1511—1548 թթ.:
- 8 Լուսրասբ I, Վրաց թագավոր, 1534—1558 թթ.:
- 9 Սվիմոն I, Վրաց թագավոր, 1558—1600 թթ.:
- 10 Սվիմոն I-ի որդին, հետագայում Գիորգի IX Վրաց թագավոր, 1600—1605 թթ.:
- 11 Աբաս I մեծն, Պարսից շահ, 1587—1629 թթ.:
- 12 Բերդուշ գետը տվյալ կոնտեքստում նշանակում է Ձորագետ-Դեբեզը (Դեբեդա-չայ). հմմտ. «Վրաց աղբյուրներ» II հատորը, էջ 63—64:
- 13 Տես սույն աշխատության Ա. զլխի 26-րդ ծանոթագրությունը (էջ 19, 23):
- 14 Հմմտ. «Վրաց աղբյուրներ» II հատորը, էջ 141:
- 15 Բագրատ VI, Վրաց թագավոր, 1616—1619 թթ.:

16 Խոսքը Գիորգի Սասկանին է վերաբերում, որ «մեծ մոուրավ» կոչումով է հայտնի: Մանրամասն տես Առաքել Դավրիժեցու պատմության գլ. IX—XII:

17 Թոստոմ I, Վրաց թագավոր, 1632—1658 թթ.:

18 Մուրադ IV Ղազի, Օսմանցոց սուլթան, 1622—1639 թթ., և Սեֆի կամ Սաֆի I, Պարսից շահ, 1629—1642 թթ.:

19 Վախտանգ V Շահնավազ կոչված, Վրաց թագավոր, 1658—1675 թթ.:

20 Սուլեյման կամ Սյուլեյման I, Պարսից շահ, 1666—1694 թթ.:

21 Հավանական է, որ Լորի(ստան)ի խանի մասին լինի խոսքը և ոչ թե Լոռիի խանի:

22 Հմմտ. սույն հատորի Ա. զլխի 32-րդ ծանոթագրությունը (էջ 20, 23):

23 Էրեկլե I, Վրաց թագավոր, 1688—1703 թթ.:

24 Ալիի ձորում (Գոմի կայաքանի մոտ, Սուրամից դեպի արևելք), ուր երբեմն՝ XV դ. հայտնի էր հայկական զազուլ բազմաթիվ եկեղեցիներով և գերեզմանատներով:

25 Խոսքը Վախտանգ VI-ի մասին է, որ Վրաստանի կառավարիչ էր 1703—1711 թթ. և թագավոր 1719—1724 թթ.։ Մանրամասն տես «Վրաց աղբյուրներ» II հատորը, էջ 126—130:

26 Մահմադ կամ Մահմուդ, Պարսից բռնակալ, 1722—1725 թթ.:

27 Մոփիի մասին մանրամասն տես С. Т. Еремян, Заметки к тексту „Хроники Сумбата“. — «Տեղեկագիր ՍՍՌՄ Գիտ. Ակադեմիայի Հայկական ֆիլիալի», 1941 թ. № 9, Երևան, 1942, էջ 27—30:

28 Խոսքը Վախտանգ VI-ի եղբայր Դոմենտի IV Վրաց կաթողիկոսի մասին է, որի հայրապետության ժամանակամիջոցը 1705—1742 թթ. է ընկնում. Michel Tamarati. L'église géorgienne des origines jusqu'à nos jours, Rome, 1910, p. 375): Այս Դոմենտին 1739 թ. գերի է տարվել օսմանցոց կողմից Կ. Պոլիս (հմմտ. նույնի՝ Histoire du catholicisme en Géorgie avec les documents justificatifs du XIII-e au XX siècle, Tiflis, 1902, p. 353, հմմտ. 308):

29 Թամազ կամ Թահմազ II, Պարսից շահ, 1729—1736 թթ.:

**«ԱՆԵՔԻ ԵՎ ՀԵՐԵՔԻ ՊԱՏՄՈՒՔՅՈՒՆ»-ԻՑ**

(687—1744)

917 թ. ... հիշատակ է անվան Ատրներսեհ (Ագարնասե) պատերիկի և նրա որդու՝ Դինար թագունու ամուսնու, և նրանց որդի Իշխանիկի:...

918 թ. ... Դինար թագունին Հերեթն հերձվածքից ուղղափառ դավանության դարձրեց<sup>1</sup>:

1039 թ. Կվիրիկե Կախեթի թագավորը զավակ չունենալով՝ որդեգրել էր իր քեռորդուն՝ Սամշվիլդեի Հայոց Դավիթ թագա-

վորի<sup>2</sup> որդի Գա[գի]կին<sup>3</sup>, և Կվիրիկե թագավորի մահից հետո այս Գա[գի]կը Կախեթի թագավոր նստեց: Այս Գա[գի]կն օդնեց Բագրատ թագավորին<sup>4</sup>, Տփղիսի վրա արշավելու պահին... և ներկայացավ Բագրատ թագավորին, երբ Բագրատը Տփղիսը գրավեց:... Բագրատ թագավորը գրավել էր Հերեթը, իսկ Գա[գի]կը՝ Կախեթը: Ապա 1058 թվին<sup>5</sup> Գա[գի]կը մեռավ:

Գա[գի]կից հետո Աղսարթանը նստեց Կախեթի թագավոր<sup>6</sup>: ... Ալեքսանդրե [թագավորը]<sup>6</sup> բաժանեց իր որդոց [երկրները]. ավագագոյնին՝ Բագրատին՝ տվեց Իմերեթը, երկրորդին՝ Գիորգիին՝ տվեց Քարթլին, Սոմխիթն ու Սամցխե-Կլարջեթը, երրորդին՝ Դավթին՝ տվեց Հերեթը ու Կախեթը:...

1547 թ. ... [Աևան Կախեթի թագավորն] անցավ Հարարադ ղ'աննի մոտ<sup>7</sup>:...

1548 թ. ... Դավթիշ-Մահմադը փախավ Գյուլստանի բերդը... իսկ Շահ-Թամազը գրավեց Շիրվանը, ուր նստացրեց Բեդլարբեգին և իր սուլթաններին, այսպեւ նորից անցավ Հարարադ:...

1574 թ. հետո... Շահ-Թամազն եկավ Հարարադ:...

1602 թ. Շահ [հ] Աբասն<sup>8</sup> եկավ Երևանը գրավելու նպատակով:... Երևանը վերցնելուց հետո [Շահ-Աբասը] տվեց Ալեքսանդրե [Կախեթի թագավոր]ին Կակը:...

1616 թ. հետո... աթաբակը տվեց [Մանուչարին] Օլթիսը. Թեյմուրազ [Կախեթի թագավորն] ևս գնաց այնտեղ ու թողեց Խվարեշան թագուհուն և Կախեթի արքայադուստրներին Օլթիսում:...

1620 թ. հետո... Շահ [հ]-Աբասը հրամայեց Երևանի բեգլարբեգ Ամիրգուլունա-խանին. «Գնա և հարձակվիր Օլթիսի վրա ու Թեյմուրազի կնոջը (Թագուհուն) բեր ինձ մոտ իբրև գերի»:... Թեյմուրազը հաղթական եկավ Օլթիսի:...

1629 թ. հետո... [Թեյմուրազ թագավորը] զորք ժողովեց, գնաց ու գերեց Աբազի [ավագանի] ներքին [մասը], Պարտավը (Բարդա), Հարարադը, Շամշադինն ու Հազախը, և բազմաթիվ ավարով հաղթող վերադարձավ:...

1661 թ. ... Շահ [հ]-Աբասը ուղարկեց Թեյմուրազին Աստարաբադ (Աստարաբաթ):...

1663 թ.... Աստարաբադ (Աստարաբաթ) գնացած Թեյմուրազը հենց նույն ձմեռը վախճանվեց:...

1712 թ.... լեզգիներն ավերում էին Քարթլին, Հազախը, Շամշադինը, Հարարադը և Շիրվանը:...

1716 թ. ... [Ճարեցիք]... ավերեցին Հարարադը, Շաքին:...

1723 թ. ... Էրեկլե թագավորի<sup>9</sup> որդի Մահմադ-ղ'ուլի-խանը, որ ծառայուհուց էր ծնված և որին Կոստանտինե կոչեցին, ... եկավ ու կանդ առավ Հազախում, քանի որ ղ'աննը նրան էր տվել Երևանը, Շամշադինը և Հազախը:...

1734 թ. ... Թամազ-խանը<sup>10</sup> կանչեց Թեյմուրազին<sup>11</sup> Երեւան:...

Մ Ա Ն Ո Ւ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 911 և 918 թթ. ներքո այստեղ հիշատակած դեպքերը Վախուշտիից շատ առաջ նշված են «Վրաց (Քարթլի) մատյան»-ում, որ գրված է XI դ. անանուն հեղինակի կողմից: Հիմա՝ «Վրաց աղբյուրներ» I հատորը, էջ 203, հմմտ. 98:

2 Դավիթ Անհողին կոչված Հայոց Կորեկյանց թագավոր, 989—1048 թթ.: Հայոց Կորեկյան հարստության (Լոռի-Տաշիրում) և Դավիթ Անհողինի մասին տես Ղևոնդ Վ. Մովսեսեան, Լոռիի Կիւրիկեան թագավորներու պատմութիւնը [«Աղղոյի Մատենադարան», 95], Վիեննա 1923, 93 էջ, ազգացուցակով. E. A. Пахомов, О монете Корики Куропалата, — «Известия Кавк. Ист.-Арх. Института», т. III, Тифлис, 1925, стр. 37—45 (մեր հավելվածով, էջ 46—48), Լ. Մելիքսեթեկ, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» etc., վրացերեն, Թբ. 1928, էջ 24—32. նույնի՝ Ղ. Աղայանի «Արուսթուն և Մանվելն» ու Մամշվելիի որձաքարը, — «Արշավ» (Թբ.) 1940 թ. № 1, էջ 54—55:

3 Գաղիկ (Գակ), Կախեթի թագավոր, 1039—1058 թթ.:

4 Բագրատ IV, Վրաց թագավոր, 1027—1072 թթ.:

5 Աղսարթան, Կախեթի թագավոր, 1058—1084 թթ.:

6 Ալեքսանդրե I մեծն, Վրաց թագավոր, 1412—1443 թթ.:

7 Ի նկատի ունի Թամազ կամ Թահմազ I, Գարսից շահին, 1525—1576 թթ.:

8 Աբաս I մեծն, Գարսից շահ, 1587—1629 թթ.:

9 Էրեկլե I, Վրաց թագավոր, 1668—1703 թթ.:

10 Թամազ կամ Թահմազ II, Գարսից շահ, 1729—1736:

11 Թեյմուրազ II, Վրաց թագավոր, 1745—1762:

«ԻՄԵՐԵՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-ԻՅ

(686—1745)

921 թ. (sic) ... Կոստանտինե [Ափխազաց թագավորը] և Սմբատ Հայոց թագավորը կոլում էին Քարթլիում: Ապա նրանք հաշտություն կնքեցին և Քարթլին գրավեց Կոստանտինեն<sup>1</sup>:...

1392 թ. [Իմերեթի թագավոր] Կոստանտինեն՝ Բագրատի որդին և Ալեքսանդրի ու Գիորգի թագավորի եղբայրը, և Դեմետրեն՝ Ալեքսանդրի թագավորի որդին ղեզեքում էին Բասենում (Բասիանում) ու Ֆնացին այնտեղ չորս տարի:

1401 թ. Գիորգի թագավորը<sup>2</sup> Կոստանտինեի եղբորորդուն և Ալեքսանդրի թագավորի որդի Դեմետրեին հատկացրեց Սոմխիթը:...

1470 թ. Կոստանտինեն<sup>3</sup> ամրացրեց Տփղիսն ու Սոմխիթը:...

1535 թ. ... Շահ-Քամաղը<sup>4</sup> կանգ առավ Ղարաբաղում. Բագրատ՝ [Իմերեթի] թագավորը գնաց Շահ-Քամաղի մոտ, խնդրելով օգնություն:... Խոնթքարն ուղարկեց Ա[ր]զրում-Դիարբեքիբի փաշային Սուլալի հայսկույս գտնվող զորքով:...

1545 թ. ... օսմանցիք մտել էին Բասեն:...

1568 թ. ... Դադիանուն օգնություն հասցրեց խոնթքարը ուղարկելով Ա[ր]զրում-Տրապիզոնի զորքը:...

1660 թ. ... Ասլան-փաշան Վախտանգին<sup>5</sup>, Դարեջանին և Քեթևանին<sup>6</sup> ուղարկեց Օլթիս:...

1678 թ. ... Ասլան-փաշան... ուղարկեց Ա[ր]զրումի փաշային Սուլալի հայսկույս գտնվող զորքով:... Արչիլ՝ Կախեթի թագավորն<sup>7</sup> եկավ Կուլբիթ (sic) և իր բոլոր գործերի մասին ղեկուցեց Ա[ր]զրումի փաշային: Ապա Ա[ր]զրումի փաշան Ասլան-փաշային գլխատեց:...

1687 թ. ... Ա[ր]զրումի փաշային հրամայվեց, որպեսզի Արչիլին թագավոր նստացնի [Իմերեթում]<sup>8</sup>: Ապա Ա[ր]զրումի փաշան ուղարկեց Քենա-Յուսուփ-բեկին մեծ զորքով:...

1691 թ. ... Ղիլիզդո [չեքեզներ] տերն ուղարկեց [Իմերեթի] թագավորին Բասեն (Բասիան):...

1701 թ. ... խոնթքար Մուստաֆան<sup>9</sup> զայրացավ և ուղարկեց Ա[ր]զրումի փաշային մեծ զորքով [Իմերեթ]:...

1716 թ. Ա[ր]զրումի փաշան զորք տվեց Ա[ր]զրում գնացած Գուրբեկ-իշխանին:...

1721 թ. ... Գիորգի [Իմերեթի] թագավորի նախկին կին Քամարը և Գարբիել Ճղոնդիզելին<sup>10</sup>... գնացին Ա[ր]զրումի փաշայի մոտ:... Ա[ր]զրումի փաշան դիմեց Իսաղ-փաշային:...

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Այստեղ ժամանակագրության խախտումով խոսվում է Ափխազաց (արեմտյան Վրաց) Կոստանտինե թագավորի և Սմբատ Խոստովանող Հայոց

արքայի պայքարի մասին Քարթլիում, Գորի-Ուփլիսցիների շրջանում, Մաթի սկզբին: Այս հարցի շուրջը աղբյուրների և գրականության տեսությունը տե՛ս «Վրաց աղբյուրների» I հատորը, էջ 202, 203—210, ծանոթ, 6, 8 և 9, նաև սույն աշխատության Գ. գլուխը՝ «Վրաստանի պատմություն»-ից հատված III և ծանոթ. 37 (էջ 39, 57):

<sup>2</sup> Գիորգի VII, Վրաց թագավոր, 1395—1407 թթ.:

<sup>3</sup> Կոստանտինե III, Վրաց թագավոր, 1469 (1478)—1505 թթ.:

<sup>4</sup> Քամաղ կամ Քանմաղ I, Պարսից շահ, 1525—1576 թթ.:

<sup>5</sup> Դարեջան թագուհու ամուսինը, թագավորացյալ:

<sup>6</sup> Դարեջան թագուհու եղբորորդու՝ Բագրատ թագավորի կինը:

<sup>7</sup> Արչիլ I (1647—1713), երբեմն Կախեթի և երբեմն Իմերեթի թագավոր, զահակալում էր 1664—1675, 1678—1679, 1690—1691, 1695—1696 և 1698 թթ.:

<sup>8</sup> Տես նախորդ ծանոթագրությունը:

<sup>9</sup> Մուստաֆա II, Օսմանցոց սուլթան, 1694—1703 թթ.:

<sup>10</sup> Ճղոնդիզի (Մարտվիլի) մեթրապոլիտը:

«ՍԱՄՑԵՆ-ՍԱԱԹԱՔԱԳՈ-ԿԼԱՐՁԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-ԻՅ

(508—1746)

... Ասուրը ծնեց Իսահակին, Իսահակը ծնեց Դանին, Դանը ծնեց Սողոմոնին, Սողոմոնը ծնեց յոթն եղբայրներ, որոնք են՝ Բագրատ, Արգավար, Բորալ, Գուրամ, Սահակ, Ասամ և Վարդավարդ: Սրանք ելան փղշտացոց երկրից (Ֆիլիստիմից) և եկան Ռաքայել տիկնոջ (թագուհու) մոտ: Այս Ռաքայել տիկինը (թագուհին) մկրտեց սրանց և Բագրատին իրեն փեսա դարձրեց, իսկ Արգավար և Մուշեղին (Մոսրալին) Հայոց թագավորի հետ խնամիացրեց<sup>1</sup>:

619 թ. հետո... հույները խլեցին [վրացիներից] Սպերը... Ատրնեքսենն (Ադարնասեն)... նշանակված էր Հայքի կողմերում:...

826 թ. ... Գուրամ մամփալը տիրեց Ջավախեթին, Թոխալեթին, Աշոցքին (Արոցին) և Հայքի այլևայլ տեղերին, քանի որ Գուրամ մամփալն ամուսնացած էր Հայոց թագավորի դստեր հետ և [հայերը] հնազանդ էին Բագրատին:...

983 թ. ... Դավիթ [Ատրնեքսենի որդին] տիրեց Տայքին (Տաոյին), Բասենին (Բասիանին), Թորթումին, Հայքին և տեղտեղ Կլարջեթին, Շավշեթին. Ջավախեթում գրավել էր բերդեր և հողեր:... Բագրատիոնները տիրում էին Տաոյին, Կլարջեթին, Իսպիրին, Շավշեթին, Արտահանին<sup>2</sup>:

1268 թ. ... Դեմետրե թագավորն<sup>3</sup> իր կրտսեր որդի Գիոր-  
գիին ազարկեց իշխան. և Դեմետրեից հետո, ինչպես գրված է,  
Վախտանգը<sup>4</sup> գրավեց Կարնիֆորայից մինչ Դարուբանդ:

1486 թ. (sic)... Յաղուր զ'աննն<sup>5</sup> անցավ Աշոցքով (Արուցով)  
և մոտեցավ Ախալքայաքին և ավերում էր շրջակա երկրները: ...  
Սեպտեմբերի 25-ին զ'աննի գորքը կտրված էր Քարթլիի Սոմ-  
խիթից: ...

1500 թ. հետո... Ա[ր]զրուս-Տրապիզոնի փառաները սկսե-  
ցին ավերուճներ կատարել Մաթարագոյում և Ճանեթում: ...

1545 թ. ... սուլթանն... ուզարկեց Ա[ր]զրուսի և Դիա[ր]մե-  
քիի փառաներին՝ Սուլազի հայսկույս երկրների գորքով: ... Լսե-  
լով այս՝ Բագրատ [Իմերեթի] թագավորը բերեց Լուարսար թա-  
գավորին<sup>6</sup> և Բասենի (Բասիանի) Սոխոստայում (sic) հարձակ-  
վեց սահմանների վրա:

1552 թ. ... օսմանները գրավեցին Փարսկանը (sic) և ամ-  
բողջ Արտահանը և շինեցին Փարսկանը (sic): ...

1553 թ. ... Շահ-Թամազը<sup>7</sup> [վերագառնալով Սամցխեից]՝ լիցավ  
Երևան ու գնաց Պարսկաստան: ...

1556 թ. ... սուլթան Սուլեյմանը<sup>8</sup> [վերա]կառուցեց Կարսը  
(Կարի), կոտորեց անհնազանդներին, վերագարձավ ու կանգ  
առավ Բասենում (Բասիանում): ... Մրան հետևեց Շահ-Թամազը  
և կանգ առավ Արտահանում, Իսկ սուլթան Սուլեյմանը գնաց  
Ստամբուլ:

Ապա Շահ-Թամազը ուզարկեց իր որդի Իսմայելին<sup>9</sup>, որը  
պաշարելով գրավեց Կարսը (Կարի), ավերեց, սրի ու հրի են-  
թարկեց այն: ...

1563 թ. հետո... աթարակ նստեց Քայսոսորոյի որդի Ղվար-  
զ'վարեն և աթարակություն էր անում: Իսկ նրա մայր Դեզիս-  
իմեզին և Վարազա Օթար Շալիկասչվիլիի որդին առաջին գոր-  
ծակալներն էին ամեն բանի: Եվ Դեզիս-իմեզին էր հպարտ, ան-  
ամոթ, քմահաճ, վայրագ և անխոհեմ: Երբ Շահ-Թամազը զայ-  
րացած եկավ Կախեթի բատոնի Ալեքսանդրիի վրա Գյանջայում,  
այն ժամանակ խորամանկություն բանեցրեց Օթար Չոլազ'ա-  
շվիլին... Իսկ Դեզիս-իմեզին՝ նենգարար տեղեկանալով այս բան-  
սարկության մասին՝ կալանավորեց Վարազային և սպանեց  
նրան, քանի որ այս Վարազան Շահ-Թամազի կնոջ եղբայրն էր<sup>10</sup>:

1574 թ. հետո... Շահ-Թամազը խոնթքարին զիջեց Սամցը-  
խե-Մաթարագոն, Կարսը (Ղարսի) և Իմերեթը: ...

1578 թ. օգոստոսի 9-ին Չուբմանի և Ծինծալայի մեջտեղն  
Ա[ր]զրուս-Վանի փառաներն եկան: ... Ամիլախորիի որդի  
Քոխան Լալա-փառային զիմավորեց Արտահանում: ... Ապա  
փառան չհեռացավ (տեղահան եղավ), Ղվարզ'վարենն տարավ  
հետն ու այլևս չվերագարձրեց, Օլթիսը տվեց նրան իբրև սան-  
ջակ: ...

1579 թ. Մանուչարին Ա[ր]զրուս տարան: ...

1580 թ. Բեքան Վալիից գնաց, Լալա-փառան գնացել էր և  
Բեքան գրավել էր Օլթիսը: ... Մարտին եկավ Ղվարզ'վարեն,  
հոկտեմբերի 15-ին Բեքան էլ եկավ, երկուսով գնացին Լոռի, Լո-  
ռին ավերեցին, հաղթող վերագարձան: ...

1588 թ. ... Շահ-Արասն<sup>11</sup> Երևանը գրավելու եկավ: ... Վե-  
րագառնալով՝ Շահ-Արասն աթարակի որդի Մանուչարին թողեց  
Երևանում Ամիրգուենա-խանի մոտ, որն և դաստիարակում էր  
նրան: ...

1614 թ. ... մեսխերը խոնթքարի հրամանով Մանուչարին  
բերին Երևանից և աթարակ նստացրին: ... Թեյսուրազ [Կախե-  
թի], բատոնը կանգ առավ Օլթիսում: ... Օսմանները բնիկներին  
բռնի կերպով մահմեդականացնում էին ու անհնազանդ դարձ-  
նում դեպի աթարակը, իսկ Մանուչարը բռնի ուժ էր գործադրում  
նրանց նկատմամբ և չէր հովանավորում նրանց: Այս պատճա-  
ռով նրանք դանդաղեցին օսմանցիներին, որոնք [իր հերթին]  
Ա[ր]զրուսի փառային: Ապա Ա[ր]զրուսի փառան գորք ուզարկեց  
1624 թ. ...

1635 թ. հետո... [Յ]ուսուֆ-փառան... կառավարում է Մաթա-  
րագոն... կամոքն օսմանցիների և մանավանդ Ա[ր]զրուսի փա-  
ռայի: ...

1647 թ. հետո... դժվարին գործերի մասին [իմերեթը] տե-  
ղեկացնում էին Ա[ր]զրուսի փառային: ...

1659 թ. հետո... Ասլան-փառան իմերեթի ցանկությամբ  
եկավ Իմերեթ, թագավոր նստացրեց Բագրատ կույրին, կալա-  
նավորեց Դարեջանին և Վախտանդին, բերեց նրանց ու եկավ  
Ախալցիխե, ապա նրանց Օլթիսում բնակեցրեց: ... Ախալցիխեում  
և Օլթիսում աթարակ էր Ախալցիխեի փառա կոչեցյալը: ... Չայ-  
րացած խոնթքարն Ա[ր]զրուսի փառային ուզարկեց Սուլազի  
հայսկույս երկրի գորքով: ...

1677 թ. ... Ա[ր]զրուսի փառան և մեսխերն եկան Սամ-  
ցըխե: ...

1701 թ... խոնթքարն իբրև սարասքյար ուղարկեց Ա[ր]զը-  
րումի փաշային մեծ զորքով հանդերձ։...

1703 թ... Քեհան զորքով գնաց Ա[ր]զրում, քանի որ Գոս-  
րիայից գնացած սարասքյարն էլ Ա[ր]զրում էր գնացել։...

1705 թ.... Քարթլիից և Հայաստանից տեղահան եղածները  
ընակություն էին հաստատում Ջավախեթում՝ այս ու այն տե-  
ղերում։...

1723 թ.... խոնթքարն իբրև սարասքյար ուղարկեց Ա[ր]զրու-  
մի փաշային մեծ զորքով՝ Ադրբեջանը գրավելու համար։ Նա  
եկավ Ղարս (Ղ'արս) ու դիմեց Իսաղ'-փաշային, ապա... [թուր-  
քերն] եկան Տփղիս։...

... Իսաղ'-փաշան խոնթքարի կողմից կառավարում էր ամ-  
բողջ Վրաստանը, Սամցխե, Սաաթարագոն, ամբողջ Իմերեթը,  
Քարթլին, Լոռին, Ղազախ-Շամշաղիլը և Կախեթը։...

1742 թ.... Շա[հ]-Ն. ադիբը<sup>12</sup> սարասքյար ուղարկեց Ղարս  
(Ղ'արս) և ավերել տվեց Ջավախեթը, Արտահանը, Կոլան։...

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Այս հատվածը Վախուշտին գրել է, հետևելով XI դարի վրաց պատմիչ  
Սմբատին. տես «Վրաց աղբյուրներ» I հատորը, էջ 137. հմմտ. Ս. Мелнк-  
сет-Бек, Армен.-Hebraica, — Труды Гос. Ист.-Этногр. Музея евреев  
Грузии. т. III, Тб., 1945, стр. 237—238.

<sup>2</sup> Հայ Բագրատունիների և Վրաց Բագրատիոնների մասին տես «Վրաց  
աղբյուրներ» I հատորում նշած գրականությունը, էջ 139.

<sup>3</sup> Դեմետրե II Անձնագոհ, Վրաց թագավոր, 1270—1289 թթ.:

<sup>4</sup> Հետագայում Վրաց թագավոր Վախտանգ III, 1301—1307 թթ.:

<sup>5</sup> Յաղուր՝ Ակ-կոյունյուղ'անն, 1478—1490 թթ.:

<sup>6</sup> Լուարսար I, Վրաց թագավոր, 1534—1558 թթ.:

<sup>7</sup> Թամազ կամ Թահմազ I, Պարսից շահ, 1525—1576 թթ.:

<sup>8</sup> Սուլեյման կամ Սյուլեյման I, Օսմանցոց սուլթան, 1520—1566 թթ.:

<sup>9</sup> Հետագայում Պարսից շահ, Իսմայել II, 1576—1577 թթ.:

<sup>10</sup> Այս էպիգրադը թեև Հայաստանի և հայերի մասին ոչինչ չի պարու-  
նակում, սակայն մենք նպատակահարմար գտանք այստեղ բերել իբրև միակ  
աղբյուր Թմկաբերդի առժան մասին գոյություն ունեցող ժողովրդական  
ավանդության (գրույցի), որ՝ Նազըր-շահի հետ կապելով՝ օգտագործել է  
Հոգհ. Թ ու մ ա ն յ ա ն ը (տես՝ Լ. Մ ե լ ի ք ս ե ք - Բ ե կ, «Ջավախքի բուր-  
մուշքը» Հովհաննես Թումանյանի երկերում և պատմա-լեզվա-հնագիտությու-  
նը», — «Խորհրդային Վրաստան», 1938 թ., № 36. Հոգհ. Թ ու մ ա ն յ ա ն, Թ մ կ ա -

բերդի առումը. պոեմ, պրոֆ. Լ. Մ ե լ ի ք ս ե ք - Բ ե կ ի Թարգմանությամբ  
և ներածականով, վրացերեն, Թր., 1939):

<sup>11</sup> Արաս I մեծն, Պարսից շահ, 1587—1629 թթ.:

<sup>12</sup> Նազըր, Պարսից շահ, 1736—1747 թթ.:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(1201—1755)

1430 թ. Շա[հ]ուսեյր<sup>1</sup> հայտնվեց ու գրավեց Լոռին:

1432 թ. Ալեքսանդրե թագավորը<sup>2</sup> գրավեց Լոռին:

1437 թ. Ալեքսանդրե թագավորն եկավ Ղարաբաղ:

1444 թ... մեռավ Փանասկերտցու դուստր Սիթի-խաթուն  
Թագուհին, Վախտանգ թագավորի<sup>3</sup> կինը։...

1454 թ. «Մեք. Գիորգի թագավորն<sup>4</sup> համայն Վրաստանի,  
Ռանի, Շարվանի և Շահանշահի (Շաանշի) [երկրի]...» (Գիորգի  
թագավորի տիտղոսը):

1463 թ. Թավրիժ-Գիլաքն ու Թեմուրը հաղթեցին Գիորգի  
թագավորին, Քարթլին, Սոմխիթն ու թագավորի գանձարանն  
ավերեցին։...

1536 թ. Շահ-Թամազը<sup>5</sup> գաղտագողի եկավ Տփղիս, պաշարեց  
և գրավեց այն, վերադարձին կանգ առավ Ղարաբաղում, ուր  
նրա մոտ եկավ Բագրատ [Իմերեթի] թագավորը, որին նա ողոր-  
մածարար ետ ուղարկեց: Նույնտեղ գնաց և Կախեթի թագավոր  
Լևանը և նրան ևս պատվով ետ ուղարկեց:

1539 թ. հայերը լիալուսնի հաշվում շեղվեցին<sup>6</sup>:

1545 թ. Լուարսար<sup>7</sup> և Բագրատ թագավորները կովի բռնվե-  
ցին Բասենի (Բասիանիի) Սոխոխստայում երկու փաշաների և  
Քայխոսրո [Սամցխեի] աթարախի հետ, վրացիները պարտվեցին,  
Քայխոսրոն գրավեց Սամցխեն:

1548 թ. Շահ-Թամազն եկավ Ղարաբաղ, նրա մոտ եկավ  
Լևան [Կախեթի] թագավորը, [երկոքյան] մտան Շիրվան, նա  
(Շահ-Թամազը) վերցրեց Գյուլստանը, գրավեց Շիրվանը, ապա  
եկավ՝ Տփղիսը վերցրեց:

1552 թ. օսմանցիները գրավեցին Արտանուշը, մինչ Ար-  
սիան, Փանավարը շինեցին, Արտահանը գրավեցին, չկարողացան  
անցնել Սամցխեով:

1533 թ. ... դ'անն (Շահ-Թամազն) անցավ Սոմխիթ, սպա-  
նեց Իջու, Շերմազան և Վախուշտ Գիասամիձեներին։...

1556 թ. սուլթան Սուլեյմանն<sup>8</sup> եկավ, վերաշինեց Կարսը (Կարի) և կանգ առավ Բասենում (Բասիանում): Սրան զուգընթաց Շահ-Քամազն եկավ Արտահան, Շահ-Քամազի որդի Իսմայելը<sup>9</sup> դրավեց Կարսը, [որ] և քանդել տվեց. խոնթքարը հեռացավ, դ'սենն անցավ Քարթլի:...

1569 թ. Սոմխիթի Փարցխիսում պարսիկները Սվիմոն թագավորին<sup>10</sup> գերեցին ու տարան Ալամուտ:

1579 թ. Մանուչար աթարակին տարան Ա[ր]զրում:

1580 թ. ... հոկտեմբերի 15-ին Ղ'վարդ'վարեն ու Բեքան հարձակվեցին Լոռի վրա և ավերեցին այն:

1582 թ. Սվիմոն թագավորը հարձակվեց Լոռի վրա, քաղանձամբները գրավեց:

1590 թ. ... Սվիմոն թագավորը Լոռին վերցրեց, օսմանցիներին կոտորեց:

1601 թ. Գիորգի թագավորը<sup>11</sup> Լոռին վերցրեց ու իրեն վերապահեց:

1602 թ. Գիորգի թագավորը և Ալեքսանդրե Կախեթի թագավորն Երևանին մոտեցող Շա[հ]-Աբասի<sup>12</sup> մոտ գնացին:

1636 թ. Երևանը խոնթքար Մուրադը<sup>13</sup> դրավեց:...

1663 թ. ... Թեյմուրազ [Կախեթի] բատոնը մեռավ Աստրաբաթում:...

1679 թ. ... Ա[ր]զրումի փաշան դարձյալ եկավ Իմերեթ... Ա[ր]զրումի փաշան սպանեց Ախալցխիսի փաշա Ասլանին... ու հեռացավ:

1722 թ. դ'սեն Մա[հ]մադ-դ'ուլի-խանը<sup>14</sup> մարտ [ամս]ին... եկավ Ղաղախ:...

1729 թ. հայերը յիսուսնի հաշվում դարձյալ շեղվեցին<sup>15</sup>:

1735 թ. Քամազ-խանն<sup>16</sup> Երևանում հաջողութուն ունեցավ սարասքյար Քոֆուլ-դադեի վրա:...

1751 թ. ... Էրեկլե [թագավորն]<sup>17</sup> Երևանում հաջողութուն ունեցավ Ազատ-խանի<sup>18</sup> վրա:

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Շահուլի, Միջին Ասիական մոնղոլական դ'սեն, Լանկթեմուրի որդին, 1404—1447 թթ.:  
2 Ալեքսանդրե I մեծն, Վրաց թագավոր, 1412—1443 թթ.:  
3 Վախտանգ IV, Վրաց թագավոր, 1443—1445 թթ.:

4 Գիորգի VIII, Վրաց թագավոր, 1445—1469 թթ.:  
5 Քամազ կամ Քահմազ I, Պարսից շահ, 1525—1576 թթ.:  
6 Պոսքը ծնագատի մասին է:  
7 Լուարսաբ I, Վրաց թագավոր, 1534—1558 թթ.:  
8 Սուլեյման կամ Սյուլեյման I, Օսմանցոց սուլթան, 1520—1566 թթ.:  
9 Հետագայում Իսմայել II, Պարսից շահ, 1576—1577 թթ.:  
10 Սվիմոն I, Վրաց թագավոր, 1558—1600 թթ.:  
11 Գիորգի X, Վրաց թագավոր, 1600—1605 թթ.:  
12 Աբաս I մեծն, Պարսից շահ, 1585—1629 թթ.:  
13 Մուրադ IV Ղազի, օսմանցոց սուլթան, 1622—1639 թթ.:  
14 Մահմադ կամ Մահմուդ, Պարսից բռնակալ, 1722—1725 թթ.:  
15 Տնս 6-րդ ժանոթ.:  
16 Քամազ կամ Քահմազ II, Պարսից շահ, 1729—1736 թթ.:  
17 Էրեկլե II, նախ Կախեթի թագավոր, 1744—1762, ապա հոր Թեյմուրազ II-ի մահից հետո միացյալ Քարթլ-Կախեթի արքա, 1762—1798 թթ.:  
18 Ազատ-խան, 1747—1761 թթ.:

«ՎՐԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ  
(«ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ)

ԱՌԱՋԱՐԱՆ

... Ադերկը թագավոր նստեց<sup>1</sup> Քրիստոսի ծննդյան տարին, և նրա գործերն (քնագրում՝ թագավորութունն) էլ հայտնի է: Սակայն նրան հաջորդող թագավորները մինչ Միրիան<sup>2</sup> նստում էին [Հունա-հռոմեական] կայսրների, Պարսից և Հայոց թագավորների վավերացումով (վկայությամբ):... Հենց այսպես՝ սկսած Բաքարից<sup>3</sup> մինչև Վարազ-Բաքար<sup>4</sup> կայսրների և Հայոց թագավորների հաստատմամբ թագավոր էին նստել:...

ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՐՔ ՈՒ ՎԱՐՔԸ

...Իշխանության կարգերը Վրաստանում սկզբից և եթ այնպես են, ինչպես գիտենք. ... Հայկն (Հասոն) իր եղբայրներին բաշխեց երկրների [նրանց հասնող] մասերը<sup>5</sup>:...  
Թագավորական հարստութուններն էին. առաջին՝ Քարթլոսյաններ, և Ներրոթյաններ, և Արշակունյաններ, և թագավորում էին սրանք 566 տարի... Սրանցից հետո Բագրատիոնները:...



[Եվ] Քարթլոսյան-Ներրոթյան-Արշակունիները հայտնի էին հերոսութամբ...

Իսկ իշխանական տոհմերը հնում սրանք էին՝... Մխարգրձե-լի, Օրբելիանի, Գագելի, ... Ներսիանի, ... Ջուանշերիանի, ... Սոմխիթում Մանկարեր Սադունը...

... Ամբողջ Իվերիան կամ Գիորգիան<sup>6</sup> չորս գրոշակի ներքո էր բաժանված... [որոնց թվում] սոմխիթցիք, որոնց տիրում էին [վրացիները]...

... Բարաթաշվիլիները... տիրում էին Գաջենքի (Գաշխանի) և Գարգարանի նախարարութուններին (սաէրիսթաո) Տփղիսից դեպի հարավ, մինչ Լոռի և Փարվան (Փանավրա):... Սոմխիթի մելիք[ութուն]ը տոհմական [առանձնաշնորհում] չէ, այլ այն, որ հայերից մեկին Շա[ն]արասը<sup>7</sup> շնորհեց [այս կոչումը] մահմեդականանալու առթիվ: Արդությանները (Արդութաշվիլի)՝ այժմ ազնվականներ՝ [նույն] Մխարգրձեիներն են<sup>8</sup>:... Յիցիշվիլի[ները] հնուց Փանասկե[ր]տից են եկել:...

Վերոհիշյալ իշխաններից զատ հնում առաջավոր, հզոր և անբաժան տներ էին... Ղ'ափլանիշվիլիներ... և Սոմխիթի մելիքը:...

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՐԹԼԻ ԵՎ ԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

... Կուր (Մտկուարի) գետին միանում են բոլոր գետերը՝ Կուլայի, Արտահանի, Ջավախեթի, Սամցխեի, Քարթլիի, Կախեթի, Հերեթի, Ռանիի, Մովսկանի և Արագն իսկ:...

... Քարթլիի սահմանը Բերդուջ գետն է:... Այս Բերդուջ գետը սկիզբ է առնում Աշոցքի (Արոցի) սարից և հոսում է դեպի արևելք մինչ Ճոճկան, ապա շուտ է տալիս և գնում դեպի հյուսիս և միախառնվում Քցիա գետի հետ: Եվ երեք անունով է կոչվում սա. առաջինը՝ Բերդուջ, երկրորդը՝ Սագիմ, երրորդը՝ Դերեգ: Եվ Բերդուջ կոչվեց սա ավան Բերդիկից, իսկ Սագիմը հավանական է Ինջան կամ Աղսուկը լինի<sup>9</sup>:...

Հնում այս շրջանի անունն էր Քուրդիվաճրիս-խելի<sup>10</sup>, իսկ այժմ կոչում են Աղջաղ՝ալա՝ Սպիտակաբերդ, ինչպես կոչվեց Յաղուր դ'աենից, որը առաջին անգամ կառուցեց այս բերդը... և ապա բերեց Բորչալու ցեղը և բնակեցրեց այստեղ, և այս պատճառով [երկրամասը] կոչվեց Բորչալու: Իսկ այնտեղ, ուր Բերդուջը դեպի արևելք է հոսում, խիտ անտառ կա ժայռերով, ուր մարդ [երբեք] չի մտել: Այստեղ բնում են ամեն տեսակ

հատիկներ, նույնիսկ բրինձ և բամբակ, կան խաղողի այգիներ, նուռը, թուզը և այլ շատ մրգեղեն: Իսկ Լոռվա բերդի վերեք ցուրտ է, բայց ամռանը հրաշալի է, բազմազան ծաղիկներով և սառ ու անուշ աղբյուրներով լի: Իսկ Բամբակի ձորում ոչինչ չի բսնում (չկա) բացի ցորենից, գարուց և կտավատից, և չոր խոտով է սնվում ոչխարը, կովը, գոմեշը, ձին, էջը, այծը, [որոնք] շատ են աճում: [Կան նաև] գազաններ՝ ժայռերում քարայծ և լեռնայծ, ... անտառներում շատ և շատ եղջերու, եղն, արջ, գայլ, վագր, աղվես, նապաստակ: Այստեղի ձուկն ու միսը համեղ է: Լոռվա բերդից ցած տաք է ու ամառն անտանելի, իսկ ձմեռը նեղ տեղադրության պատճառով հրաշալի է: Իսկ Հաղբատն (Ախպատի) և Սանահինը (Սանահինի) Վրաց թագավորների կառուցվածն են (sic), թեև հայերը գրում են, որ երբ Հայոց թագավորների ձեռին էր այս տեղերը, [այն ժամանակվա] կառուցվածքներ են նրանք: Եկեղեցիները գմբեթավոր են և հոյակապ<sup>11</sup>: Իսկ այժմ այստեղ բնակվում են հայերը, և Քարթլիի թագավորն եպիսկոպոս է կարգում [նախօրոք] գրելով հոգևոր տիրոջը (օքիվարտերին)<sup>12</sup>, քանի որ որքան էլ Քարթլիում հայեր են բնակվում, [բոլորը] նրա (հոգևոր տիրոջ) հոտն են կաղմում: Այստեղ շատ բորակ է հանվում ոչ թե հողից, այլ ժայռի խոնավութունից: Սրա վերևից գտնվում է մի փոքր վանք, սակայն մեծաշեն, Քորայրի (Քորերի)<sup>13</sup>, որը հայերի ձեռին է<sup>14</sup>: Նաև՝ սրա արևմուտքից կա մի վանք՝ Կենարար փայտի (ձելի ճեշմարիտիսա), սքանչելի, Բերդուջ գետի վրա, որը հայերի ձեռին է<sup>15</sup>: Այստեղ բարձր ժայռում կան բազմաթիվ այրեր, և այդ այրերում գտնվում են բազմաթիվ հին գրքեր, որոնք [սակայն] անգործածելի են՝ մարդկանց համար [այրերն] անմատչելի լինելու պատճառով<sup>16</sup>: Սրա (Քորայրի) արևմուտքից գտնվում է Լոռվա բերդը և մի փոքր քաղաք, ամառը սքանչելի, ձմեռն անտանելի, երկու գետերի միջև, քարքարոտ (քարափոտ) ժայռի վրա<sup>17</sup>: Սրա (Լոռու) արևմուտքից ժայռոտ դաշտ է, որտեղից էլ այն բազմիցս վերցրել են [թշնամիները]. այժմ հայերի ձեռին է:

Իսկ Բամբակի ձորը լեռնոտ է և սքանչելի [ու] պտղավետ: [Այստեղ] բսնում է ցորեն, գարի, կտավատ, վարսակ և ուրիշ ոչինչ: Ինքը Բամբակը փոքր քաղաք է: Այստեղ կենդանիների առատութուն կա՝ բացի ուղտից: Խոտն առատ, մեղրը շատ: Սոմխիթի, Երևանի և այս [կողմերն] իրարից բաժանողը մեծ լեռն է, բարձր ու միշտ ձյունապատ, իսկ լանջերում անտառա-

պատ, դազաններով լի: Սա տարածվում է դեպի արևմուտք՝ մինչ Արտահան, իսկ արևելքից Ռանիի և Գեղարքունիքի միջոցով է անցնում և հասնում մինչ [Ե]րասխ: Այս լեռան հարավային մասը Հայաստան-Ներկանինն է, իսկ հյուսիսայինը՝ Բերդուջինը և Ռանինը: Եվ Բերդուջ գետի արևելյան կողմը գրաված ունին բորչալուեցիք, իսկ արևմտյան կողմի մի մասը մինչ Խունան գրաված ունի Քարթլիի թագավորը: Իսկ Բերդուջի փոքր լեռը գտնվում է դեպի հյուսիս և հարավ ու Ներկանի վերահիշյալ լեռանն է մոտենում: Այս լեռան արևելյան մասը Ռանին է [պատկանում], իսկ արևելյան մասը Բերդուջինն է:...

Հաղբատից ցած գտնվում է Ճոճկանի ձորը՝ Լավար (Լելվար) լեռան տակ, այգիներով լի, մրգառատ, պտղավետ և օգուտ սքանչելի: Նրանից ցած դեպի հյուսիս գտնվում է Ագարակի եկեղեցին, ուր [Վախտանգ] Գորգասալն եպիսկոպոս կարգեց, որ հետագայում Սոմխիթի մետրապոլիտ և [վրացագավաններ] թեմակալը [գարձավ], և որի հոան էին կազմում Խունանը, Գարգարանը և Բերդուջ գետ[ի ձորը]: Եկեղեցին գմբեթավոր, մեծակառույց, այժմ կոչվում է Ախտալա, և երեցի տեսչության ներքո է<sup>18</sup>: Ախտալայի դիմացը, դեպի արևելք, Բերդուջի լեռան մեջ գտնվում են զույգ վանքեր, որոնցից մեկը խելագարին խելքի է բերում, որ կարծում եմ, թե այդ Ցուրտավը պիտի լինի, և սքանչելագործություններն էլ նրանից են. իսկ մյուսում բըխում է աղբյուր, որի ջուրն՝ եթե 40 օր [անընդհատ] կատաղածին խմացնեն, կծած մարդուն կատաղությունը ոչինչ փրաս չի պատճառի<sup>19</sup>: Իսկ Ախտալայից ցած գտնվում է Խոճոռնի ձորը: Խոճոռնիում կա եկեղեցի գմբեթավոր, իսկ Ծոփիում փոքր բերդ<sup>20</sup>: Այս ձորն այգիներով լի է, մրգառատ, ամեն սերմբ բերք տվող: Սրանից ցած դաշտում մինչ Քցիա [գետն]<sup>21</sup> ապրում են քոչվորներ, ցանում են ամեն տեսակ հատիկներ:...

...Շուլավերի ձորի... վերևից գտնվում է Օփրեթը<sup>23</sup>:... Բերդիկի բերդի... վերև գտնվում է Հուջարի վանքը, գմբեթավոր, սքանչելի տեղում և այժմ դատարկ է: Իսկ այս տեղերն ու Բերդուջի գետը բաժանում է իրարից Լավարի լեռը, որ արևելքից դեպի արևմուտք է տարածվում: ... Իսկ Լավարը բարձր սար է, որի կատարը անտառազուրկ է, իսկ լանջերն անտառապատ և գազանով լի, մինչ Լոք, որ [գտնվում է] Բերդուջից դեպի հարավ և Հայաստանից դեպի հյուսիս: Իսկ Լոքի սարը բաժանում

է Տաշիրն ու Կազրեթը, Բալաճն ու Դրանխի ձորը. և սա ևս Լավարի սարի պես է և նայում է Աշոցքի (Արոցի) լեռան, որ նույն Իրջանի [լեռն] է: Այս տեղերին, սկսած Դերեգից մինչ Բուխի արևմուտքում [գտնվող] փոքր լեռը և Քցիի գետից մինչ Լավար-Լոքի սարը, այժմ կոչում են Սոմխիթ. [իսկ] հնում սա Խունանի նախարարությանն (էրիսթավությանն) էր պատկանում:... Այս տեղերի բնակիչները դավանությամբ հայեր են, փոքրամասնությունը Քարթլիի [եկեղեցու] դավանանքին [է հետևում]:...

Իսկ Լոքի սարի հարավակողմի գետերը հոսում են ու միախառնվում Տաշիրի ջրին, որ Լոռվա բերդի մոտ միանում է Դերեգին: Իսկ Լոռիից վերև ու Լոռիից դեպի հարավ մինչ Դերեգ ու Արջանի լեռը՝ [բոլոր] այս տեղ[եր]ը կոչվում են Տաշիր՝ հարթ լինելու պատճառով, և պտղավետ է՝ ցորենով, գարիով, կտավատով, վարսակով [և] անասուններով առատ: Ամռանը վերին աստիճանի սքանչելի է, ծածկված խոտով ու ծաղիկներով, բազմաթիվ սքանչելի աղբյուրներով. թռչուններն էլ բազմաթիվ՝ բացի փասիանից ու կաքավից: Գետերն իշխանաձևով լի, իսկ մյուս ձրկները՝ սակավ: Մրգավետ ու պտղատու ծառեր բուրրովին չկան: Մեղրը շատ է և սպիտակ՝ ինչպես ձյունը և անփրաս: Կտավատից շատ ձեթ են հանում, նաև չորացնում, այրում և ծախում են: Չմեռը ցուրտ է ու ձյունոտ, և ձյունի բարձրությունը երկու աղլի<sup>23</sup> է լինում, և սառնամանիքներով, թեև [տները] տաքացնում են առանց վառարանի: Այստեղ չկա անտառ և ոչ էլ ծառ, և [իսայտը]. Լոք-Լավարից են բերում: Դերազանցապես գործածում են աթար՝ թե կերակուր [եփելու] և թե տաքություն [ստեղծելու] համար: Այստեղ՝ Միսխանայում<sup>24</sup> հանում են մեծ քանակությամբ պղինձ-մետաղ: Նույնպես հողից հանվում է կարմրագույն և շատ ամուր քար, փայլուն և մաքուր: Բնակիչները դավանությամբ հայեր են, սակայն ենթակա են Դրանխին<sup>25</sup>, հազնված են կեղտոտ և ճարպոտ են, երկար չուխայով, վատ գույն ունեն, բայց բարձրահասակ են և վայելչակազմ, կարող, պատերազմներում անփորձ և ոչ պիտանի:

Իսկ Տաշիրը, Աշոցքը (Արոցը) և Բերդուջ-Բամրակը բաժանվում են իրարից Իրջանի և այժմ Ղարաղաջ կոչված լեռով, որ միշտ ձյունով է ծածկված, անտառից զուրկ, լանջերը խոտավետ ու ծաղկավետ. աղբյուրները բազմաթիվ [և] համեղ: Տարածվում է հարավից դեպի հյուսիս: Այստեղ արտահանվում է սպի-

տակ քար, որ մարմարիոնի նման է: Այս լեռան արևմուտքից գտնվում է Աշոցքը (Արոցը), որ այժմ Ղ'ախղ'ուլի է կոչվում և որ ամբողջապես լեռներով է պատած. իսկ մեջտեղը հարթ է, և լեռնակողմը բլրանման, իսկապես բերքատու. ցորեն, գարի, կտավատ, վարսակ, և ուրիշ ոչինչ՝ ոչ մրգեղեն և ոչ էլ բանջարեղեն: Խոտի առատության պատճառով անասունները շատ են: Զուկը պակաս է, բայց եղածն իշխանաձուկն է: Ղազանջին փոքր քաղաք էր<sup>26</sup>: Պալակացիոսի<sup>27</sup> և Աշոցքի (Արոցի) միջև Ազրարի ուարն է, և այդ սարը Քարթլիի և Ղարսի (Ղ'արսի) միջասանմանն է, մինչ Սպիտակաբերդ (Թեթր-ցիխե)<sup>28</sup> և Տաշաղանի լիճը: Իսկ Աշոցքն (Արոցն)՝ ավերված՝ վերաշինեց 90-րդ թագավոր Վախտանգը<sup>29</sup>, և այժմ գրավեց Շա[ն]-Նազիրը<sup>30</sup>: [Բնակիչները] դավանությամբ հայեր են, բարձրահասակ և վայելչակազմ տղամարդիկ, թեև անճուճի՝ իրենց հագուստով, տաշիրեցոց նման, պատերազմում պիտանիներ. սրանք ևս ձիթագործությամբ են պարապում:

Իսկ Ղարաղաջի և Տաշիրի լեռան հյուսիսային կողմում գտնվում է Դրանխի ձորը և Մաշավեր գետը, որ նրանց միջև է հոսում:... Այս ձորը բաժանում է հարավից Ղարաղաջի և Լոքի սարը, արևելքից Բոլնխի փոքր լեռը, հյուսիսից Լուկուների սարը, որ տարածվում է դեպի արևելք մինչ Նախիգուրի<sup>31</sup>:

... Օրմոզդանի լճի [շրջանը]... Տաշիրի պես պտղավետ է... [Դրանխուում] նստում է եպիսկոպոս, որ Տաշիրի և Դրանխի ձորի [վրացադավան բնակիչների] հովիֆն է:... Փինեզաուրի ձորը սկիզբ է առնում Լոքի սարից, և նույնպես պտղավետ է, ինչպես Տաշիրն ու Դրանխի ձորը:... [Լոքից] ցած միանում է նրան Դետաձորը (Դետիս-խեվի<sup>32</sup>) և Քվիշաձորը<sup>33</sup> (Քվեշիս-խեվի):... Սև աղբյուրի (Շավի ծղ'արո) — Ղարաբուլխի դաշտում կա մի ավան:... Կուսիսից պեպի արևելք, Կուրի կողմը, գտնվում են Թեթրները (Թեթրերի) և սքանչելագործ եկեղեցի [հանուն] սուրբ Գեորգի<sup>34</sup>:...

.... Խունանի էրիսթավությունն [ընդգրկում էր]... Գարգարանը, Սոմխիթը, Բերդուջ գետ[ի ձոր]ը, Տաշիրն ու Բամբակը, իսկ մյուս էրիսթավությունը՝ Սամշվիլդերնը՝ Սարարաթիանոն, Դրանխի ձորը, Սկվիրեթը, Թոխալեթը, որ Գաշիոսի ժառանգության [մասն] էր կազմում, Գարգարանից վերև: Սա (Գաշիոսը)<sup>35</sup> կառուցեց Գաշիան քաղաքը<sup>36</sup>:... Ղարայա[զ]ի (Ղ'արայա)...

բնակիչներն են Սոմխիթ-Սարարաթիանոյի իշխաններն ու աղնը-վականները:...

... Տփղիսի... [քաղաքային] պարսպից դուրս [տարածությունը] կոչում են Գարեթուրանի<sup>37</sup>:... Այստեղ կա 2 եկեղեցի գմբեթավոր, 2 էլ անգմբեթ, որը հայերի ձեռին է<sup>38</sup>:...

... Տփղիսի բնակիչներն են՝ Բերդում և Սեյդարագում պարսիկ-մահմեդականները, իսկ բերդից դուրս առավելապես հայերն ու նվազ չափով վրացիները, որոնք վրացական վարք ու բարք ունին:... [Քաղաքի] արևմուտքից Իշխուուտուք ժայռն է<sup>39</sup>:...

... Ատենիում<sup>40</sup>:... բնակիչներն են վրացիները, հայերը և հրեաները:...

... Իմերխեվից դեպի արևմուտք, Չամ [գետ]ի ափին, գտնվում է փոքր քաղաք Մձորեթը<sup>41</sup>, որի բնակիչներն են հայերը [և] հրեաները:...

... Ախալգորին<sup>42</sup> փոքր քաղաք է, որի բնակիչներն են հայերը:...

Գորիում... 8 եկեղեցի կա հոյակապ, որոնցից մեկը՝ տաճկահայերինը (օսմանցոց հայերի)<sup>43</sup> ավերվեց [պատերազմական դործողությունների պահին]:...

... Ցխինվալում (Քցխիլվանում)<sup>44</sup>:... բնակիչներն են վրացիները, հայերը, հրեաները:...

Ալին փոքր քաղաք է, որի բնակիչներն են նայերն ու հրեաները, պակաս՝ վրացիները<sup>45</sup>:...

... Սուրամը<sup>46</sup> փոքր քաղաք է, որի բնակիչներն են վրացիները, հայերը և հրեաները:...

ՀԵՐԵԹԻ, ԿԱՆԵԹԻ ԵՎ ԿՈՒԿԵԹԻ, ՆԱԵՎ ԹՈՒՇԵԹԻ ԵՎ ԴԻԴՈՑԻ  
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս երկիրն երեք անուն ունի՝... Հերեթ<sup>47</sup> կոչվեց Թորգոմի (Թորգամոզի) որդի Հերոսի անունով:

ԱՅԺՄՅԱՆ ՕՍԵԹԻ ԿԱՄ ՄԻՋԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս երկիրը... բաժին է Թորգոմի (Թորգամոսի) որդու Կավկասոսի... Խաղարների թագավորը տվեց իր որդի Ուրրանոսին Կավկասոսի երկիրը ու Քարթլիի [և] Հայաստանի (Սոմխեթի) գերիները<sup>48</sup>:...

ՍԱՄՑԵՆԵ-ՍԱԱԹԱՐԱԳՈՅԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՏԵՂԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

... Այս երկիրը տարածվում է [երկայնությամբ] Քարթլիի սահմանից սկսած մինչ Գուրջի-բողազը (Քարթլիս-դ'ելի) և Բայբուրդ ու Ճանեթի սահմանները, լայնությամբ՝ Դեվարոսիի, Իրիջուի և Ղանլուի լեռներից սկսած մինչ Ղադոյի և Գուրիայի լեռներն ու ծովը: Եվ այս երկրի սահմաններն են. արևելքից՝ Քարթլիի հողը... և Ղարսի (Ղարսի) լեռը, Արտանան-Կողայի (Արտան-Կոլա) և Ղարսի (Ղարսի) միջև, հարավից՝ վերոհիշյալ լեռը, Հայաստան-Քարթլիի սահմանը, որ այժմ Իրիջուի և Դեվարոսիի լեռ է կոչվում, հյուսիսից՝ Ղադոյի կամ Փերսաթի լեռը և Աճարա-Գուրիայի միջև լեռն ու Պոնտոսի ծովը, արևմուտքից՝ Ալրզրումի, Երզնկայի (Էզինգի) Գուրջի-բողազի (Սաքարթվելոս-դ'ելի) միջև...

... Ածղ'ուրը քաղաք է և մեծաշեն բերդ, որի բնակիչներն են մեսխեր, հայեր և հրեա վաճառականները, իսկ իշխողները մահմեդականներ են:...

... Ախալցխի բնակիչներն են մեծամեծ և երևելի մահմեդականներ և վաճառականներ. [Այստեղ] բնակվում են նաև հայեր, հրեաներ և մասամբ մեսխերն ևս<sup>49</sup>:...

... Գոկիան փոքր քաղաք է, որի բնակիչներն են մեսխեր, հայեր և հրեա վաճառականները<sup>50</sup>:...

... Բարալեթը փոքր քաղաք է, որի բնակիչներն են մեսխեր, հայեր և հրեա վաճառականները<sup>51</sup>:...

... Իշխանի բերդը շատ ամուր է, մեծաշեն եկեղեցին գրեթե ավոր է, հոյակապ և փառաշեն<sup>52</sup>: Այստեղ էր նստում եպիսկոպոսը, հովիվն Իսպիրի, Թորթումի և Բայբուրդի մինչ Տրապիզոնի լեռները. այժմ թափուր է:...

...Արտանուջի գետի՝ [Ճորոխին] միախառնվելու տեղից վերև Ճորոխին միանում է Թորթումի լեռից հոսող ջուրը, որ ուղղվում է դեպի արևելք: Այս ձորի վրա է Կալմախի բերդը, որ կառուցել են բյուզնդները (պատիախյանի) մեծաշեն, ամուր և անանց, [և] որ Տաոյի էրիսթավության [կենտրոնն] էր: Սրա վերևից Ճորոխին միանում է Բանա-Փանասկե[ր]տի գետը<sup>53</sup>:...

Այս գետի վրա, Ճորոխից դեպի արևելք, գտնվում է Փանասկե[ր]տի բերդը, ժայռի վրա [կառուցված], մեծաշեն, ամուր: Այստեղ նստում էր Փանասկե[ր]տ-Օլթիսի էրիսթավը, այժմ ավան է: Սրանից վերև, սուլյն գետի վրա, սարում, գտնվում է

Բանան, [որ] այժմ կոչվում է Փանաք: Այստեղ կա գմբեթավոր Զեկեղեցի, մեծ, փառաշեն, սքանչելի տեղում [կառուցված]. այս շինեց Ատրնեբսեհ (Ադարնասե) թագավորը և այստեղ թաղված են թագավորները<sup>54</sup>: Այստեղ նստում էր եպիսկոպոսը, Փանասկե[ր]տի և համայն Տաոյի, Օլթիսի և Նարումակիի հովիվը, այժմ թափուր է:...

Սրա վերևից, Ճորոխի արևելյան ափին, գտնվում է Օլթիսին՝ բարեկարգ և լավ օդով օժտված քաղաքը:...

Օլթիսի-Նարիմանի... հարավից, Իրիջուի լեռան հայնկույս, գտնվում է Բասենը (Բասիանի): Այս Բասենը (Բասիանի) թեև Հայաստանինն է, սակայն՝ Բագրատունյաց թագավորութայն [անկումից] հետո գրավված լինելով [մեսխերի] կողմից՝ այժմ Սամցխեինը դարձավ: Եվ այս Բասենը (Բասիանի) [Ե]րասխի (Ռասխի) կամ Արազի ակունքներումն է: Սկզբում այս քաղաքը կոչվեց Բասեն (Բասիանի) և այս պատճառով այս անունով կոչվեցին և [ուրտը] այս տեղերը: Իսկ այժմ այս անունով կոչվում է քաղաք [Հ]ասանդ'ալան, որ Բասենի (Բասիանի) միջումն է, Արազի ափին, դեպի հյուսիս, և մեծ քաղաք չէ: Եվ այս Բասենի սահմաններն են. արևելքից՝ լեռը, որ իջնում է հարավակողմի սարից, որ է Հայաստանի սարը, արևմուտքից՝ Իրիջու-Դեվարոսի լեռը, հյուսիսից՝ Իրիջու-Ղալնուսի լեռը, հարավից՝ Դեվարոսի իջած Հայաստանի լեռը: Եվ այս տեղերում [Ե]րասխին միանում են հայնկույս և հայսկույս լեռներից հոսող գետերը: Այստեղ շինված են ավաններ: Խաղողի այգիներ չկան, մրդից ու [հացա]հատիկից զուրկ է... սակայն լավ օդ ունի: Անտառազուրկ է, չհաշված փոքր թվով կեչիից: Գործածում են աթար, իսկ փայտն ու վառելիքը բերում են [Ե]րասխի ձորից: Այս [Հ]ասանդ'ալայից ցած կա կամուրջ [Ե]րասխի վրա, որով անցնում են քարավանները: Եվ [այս կամրջից] դուրս անցնել Արազն անհնարին է:

Իսկ Իսպիր ձորի գետը հոսում է Բայբուրդի վերևից, Տրապիզոնի սարից: Երկայնությամբ Տրապիզոնի սարից մինչ Ճորոխ է հասնում:... Իսպիրի գետի ափին փոքր քաղաք կա՝ Իսպիրա:... Սրա վերևից միանում է Սաքարթվելոս-դ'ելիի կամ Գուրջի-բողազի գետը. և այս գետից վերև կա լեռ, որ բաժանում է Բայբուրդն ու Իսպիրը:... Արևմուտքից սահմանն այն լեռն է, որ Իսպիրի սարերից է իջնում մինչ նույն Իսպիրի գետը, հարավարևմուտքից, Բայբուրդի և Սպերի միջև: Եվ այս լեռներն ան-

տառապատ են, ժայռոտ. այս տեղով ճանապարհներ են անց-  
կացրած մինչև Բայրուրդ։...

Այնտեղ, ուր Իսպիրի գետին Գուրջի-բողազն է միանում,  
և սրա վերևից էլ կան Իսպիրի սարերից իջած լեռներ, որոնք  
Իսպիրի և Բայրուրդի [միջա]սահմանն են կազմում։... Այս լեռ-  
ներից վերև գտնվում է Բայրուրդը, ամեն կողմից լեռներով  
ըջապատված և ինքն էլ լեռն[աստան] է։ Սրա միջով անցնում է  
Իսպիրի գետը։ Այս գետի վրա, մեջտեղում, գտնվում է Բայրուրդ  
քաղաքը, որը մեծ չէ, և այստեղի բնակիչները մահմեդական-  
ներ են կամ քիչ թվով նաև քրիստոնյաներ։ Այս քաղաքի պատ-  
ճառով է, որ այս կողմերն ևս կոչում են Բայրուրդ։ Բայրուր-  
դի տեղում Իսպիր գետին միանում են Աճարա-Երզնկայի (Էջին-  
գայի) լեռներից հոսող գետերը և այստեղ շինված են ավաններ։  
Իսկ Բայրուրդի սահմաններն են. արևելքից՝ Իսպիրի և սրա մի-  
ջում եղած լեռները, հարավից՝ Երզնկայի (Էջինգայի) և Բայ-  
րուրդի միջև [եղած] լեռը, որ տարածվում է արևելքից գեպի  
արևմուտք և անտառապուրկ է, արևմուտքից՝ Տրապիզոնի լեռը,  
հյուսիսից՝ Ճանեթի, Բայրուրդի և Ճանեթի միջում եղած լեռները։  
Եվ այս Բայրուրդը, ինչպես և Ջավախեթը լեռնոտ է՝ բերքով և  
անասուններով [ի]։ Նրա շուրջն անտառապուրկ լեռներ են, և  
փայտն ու վառելիքը Ճանեթի սարից են բերում, գերազանցապես  
գործածում են աթար։ Ամռանն օդը դուրեկան է և սքանչելի, ձմե-  
ռը ցուրտ է, ձյունոտ և անտանելի։ Երջապատի լեռներով անց-  
նում են ճանապարհներ։... Բնակիչները բոլորը մահմեդականներ  
են իրենց [հատուկ] վարք ու բարքով։

Իսկ Բայրուրդի և Փորջխից հեպի հարավ, Ճանեթի լե-  
ռան հայնկույս, գտնվում է Ճանեթը, որ այժմ կոչվում է  
Հազ<sup>56</sup>,...

ԷԳՐԻՍԻ ԿԱՄ ԱՓՆԱԶԵԹԻ ԿԱՄ ԻՄԵՐՆԵԹԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

... Չխարիի... վերևից գտնվում է պուրակ-անտառ (ճալա-  
տղ՝ե). այստեղի բնակիչներն են հայեր և հրեաներ, որոնք և  
զբաղված են առևտրով։...

... Չիխորը փոքր քաղաք է, որի բնակիչներն են իմերներ,  
հայեր և հրեա վաճառականները։...

... Սաչխերեում... բնակիչներն են իմերներ, հայեր և հրեա  
վաճառականներ, որոնք և զբաղված են առևտրով։...

... Քութայիսում... բնակիչներն են իմերներ, հայեր [և]  
հրեա վաճառականները։...

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Ըստ Վախուշտի ժամանակագրության 2 թ. նախքան մ. թ.—55 թ.  
մեր թ. հետո։

2 Միրիան, Քարթլիի թագավոր, 265—342 թթ.։

3 Բաբար, Քարթլիի թագավոր, 342—364 թթ.։

4 Վարազ-Բաբար, Քարթլիի թագավոր, 379—393 թթ.։

5 Այստեղ Վախուշտին հետևում է Լեոնտի Մրովելու թեորիային, տես  
«Վրաց աղբյուրների» I հատորը, էջ 143 և այլն, հմմտ. այս աշխատության Գ  
գլուխը («Վրաստանի պատմություն»-ից, I)։

6 Տես այս աշխատության Գ գլուխը («Վրաստանի պատմություն»-ից,  
ժանոթ. 30 և 89),

7 Արաս I, Պարսից շահ, 1585—1629 թթ.։

8 Հմմտ. Լ. Մելիքսեթ-Քեկ, Երկայնարարություններն տրված էրեկ-  
լե II արքայի և Պավել I կայսեր հրովարտակները, վրացերեն,—«Պատ-  
մության Տեղեկագիր», I, Թբիլիսի, 1945, էջ 22—32 (Л. Меликсет-Бек.  
Грамоты царя Ираклия II и императора Павла I на имя Долгоруких)։

9 Հմմտ. «Վրաց աղբյուրների» II հատորը, էջ 63—64, ժանոթ. 4։

10 Ստույգ տվյալների հիման վրա, որ մանրամասն բնութագրում են  
առնված մեր կողմից (Լ. Մելիքսեթ-Քեկ, «Վարդապետք Հայոց հիւ-  
սիսային կողմանց» etc., վրացերեն, Թբ. 1928, էջ 42—55), Սանահնի և  
Հաղբատի տաճարները կառուցված են Բագրատունյաց Աշոտ Ողորմած թա-  
գավորի ամուսին Սոսրովանույշ թագուհու հոգատարությամբ 937 թ. (Սա-  
նահնը) և 987 թ. (Հաղբատը), հետագայում ենթարկվելով ճոխացման, որի  
կապակցությամբ և զարգարվել են բարձրաքանդակներով՝ Հոգբատի սուրբ  
Նշան տաճարը 991 թվին Սոսրովանույշի և Աշոտի գույք որդոց Սմբատի և  
Գուրգենի կողմից, իսկ Սանահնի Ամենափրկիչ տաճարը՝ 1063—1065 թթ.  
միջոցին հորիկյանց հորիկե և Սմբատ թագավորների կողմից։ Հետևապես,  
Վախուշտի ցուցմունքը հիմք պիտի ունենա մի այլ հանգամանք, կապված  
Հաղբատի և Սանահնի հետագա վերաշինության հետ՝ սկսած XII դարի Դա-  
վիթ II Շինող Վրաց թագավորից (1123 թվից) և մինչ էրեկլե II (վախճ.  
1798 թ.)։ Ընդ սմին հաշվի պիտի առնել և Հաղբատի ու Նշան տաճարի արև-  
մրտյան մուտքի գլխին փորագրված արձանագրությունը, որը կարգացվում է  
այսպես. «Ի ժամանակս ինքնակալ արքային Դավիթ բարեպաշտի և յաղթաւղի՝  
որդւոյ Գիորգեայ, որդւոյ Բագրատայ, ... որ տիրեաց զաւառս և ազինս, ... եղև  
խնամաւղ Հաղբատայ և Սանահնի... ընթացեալ քաղցր և բարեսէր աստուածա-  
պաշտութեամբ... զՀաղբատս ի մթութենէ աւերութեանս պատեաց, զրով և վըճ-  
սով ընծայեաց ի սուրբ եկեղեցիս զայգիս..., զպեղն... և ամենայն հոգով և վի-  
ճակով... զնկեալ կարուածս ամենայն վերահաստատեաց... Գրեցաւ զիրս յարքե-  
պիսկոպոսութեան... առաջնորդի Հաղբատայ, որ է եղբայր Գրիգորի... ի  
թուին ՇՀ[ր? գ? դ?] (= 112[3? 4? 5?])» (տես Описание монастырей Ах-

патского и Санагинского, архим. Иоанна Крымского=Description des monastères arméniens d'Haghat et de Sanahin, par archim. Jean de Crimée, avec notes et appendice, par M. Brosset [„Mémoires de l'Académie des sciences“, VII sér., t. VI. № 6], СПб, 1863, էջ 4. А. Ерицов, Ахпатский монастырь,— „Кавказская Старина“, № 2, Т. 1872, стр. 51. Ռոստոմբէզ Երզնկեան, Հնախոսական տեղագրութիւն Հաղարատայ աշխարհահոչակ վանից, Վաղարշապատ, 1886, էջ 32. Կոստանեանց, Վիճական տարեգիր, ՍՊԲ, 1913, էջ 28. Լ. Մելիքսեթ-Քեկ, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» etc, վրացերեն, Քր., 1928, էջ 136—137 և 34):

11 Սանահնի և Հաղարատի ճարտարապետութեան մասին տես А. Ерицов, Ахпатский монастырь. „Кавказская Старина“, Тифлис, № 2 (1872), стр. 49—52, № 3 (1873), стр. 83—88. Памятники древнеармянской архитектуры в фотографиях и чертежах, под редакцией Г. Д. Гримма. Составили и издали Л. Егиазаров и Р. Мартиросянц — Հայոց հին ճարտարապետութեան նշմարների լուսանկարներ և դժանկարներ, գ. Դ. Գրիմմի խմբագրութեամբ կազմեցին և լույս ընծայեցին Լ. Եղիազարեանց և Ռ. Մարտիրոսեանց, տետր I—V. ՍՊԲ, 1904, տախտ. I—XXV. Լ. Մելիքսեթ-Քեկ, Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց և այլն. վրացերեն. Քրիլիսի, 1928, էջ 42—55 և նկ. 1 և 2, էջ 90—94 և նկ. 3 և 4. Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, стр. 169—173 и рис. 52—55, 90—93. Р. Я. Агабабян, Композиция купольных сооружений Грузии и Армении= Ռ. Աղաբաբյան, Վրաստանի և Հայաստանի զմրեթափոր շէնքերի կոմպոզիցիան, Երևան, 1950, էջ, 89 etc., նկ. 73. А. Л. Якобсон. Очерки истории зодчества Армении V—XVII веков, М.—Л., 1950, стр. 84—87, 110—112, 129—134 и рис. 67—70, 89 107, 108, 111, 112. О. Х. Халпахчян, Архитектурные памятники Ахпата, „Архитектура республик Закавказья“, М. 1951, рис. 321—355. В. М. Арутюнян и С. А. Сафарян. Памятники армянского зодчества, М., 1951, стр. 55—58 и стр. 101—110.

12 Վրաց աղբյուրներում XVII—XVIII դդ. ամենայն հայոց կաթողիկոսը սովորաբար «օրբիվատերի» է կոչվում, որ հայերեն «հոգևոր տէր»-ի ուրույն արտահայտությունն է, կամ աղավաղումը, որ ակադ. Մ. Բրոսսեն ճիշտ կերպով թարգմանում է ֆրանսերեն իբրև père spirituel: Հատուկ գրականությունն այս խնդրի շուրջը՝ Description géographique de la Géorgie, par Tsarévitch Wakhoucht, publiée par M. Brosset, SPB, 1842, p. 139—140. p. 2. Լ. Մելիքսեթ-Քեկ — «Պատմության Տեղեկագիր», վրացերեն, Քր., 1924 թ., № 2, էջ 229. Նույնի— «Վրաց լեզվագիտական բնկերություն Տարեգիր», վրացերեն, I—II, Քր., 1925, էջ 370; Հիմա. ստորև ժՆ գլխի. 23-րդ ծանոթ., ժՔ գլխի 7-րդ ծանոթ.:

13 «Քորեր» || «Քորայր» — «Քվար-ի» (վրաց). + «այր» || «էր» (հայերեն):

14 Ինչպես հայտնի է, Քորայր-Քորերը սկզբում XII դարում եղել է հայադավան (հակաքաղկեդոնիկ) վանք, իսկ XIII—XIV դդ. վրացադավան (քաղկեդոնիկ): Վախուշտի օրոք այն նորից հայերի ձեռին է եղել. բայց Վրաց աշխարհագիրը տեղյակ չի եղել նրա նախնական կառուցման պատմու-

թյանը: Տես հատուկ գրականությունը՝ Լ. Մելիքսեթ-Քեկ, «Քորերն ու նրա հայերեն և վրացերեն արձանագրությունները, վրացերեն.— «Քրիլիսի պետ. համալսարանի Տեղեկագիր», VII, 1927, էջ 60—73. Նույնի՝ Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց, էջ 57—58:

15 Ի նկատի ունի այսպես կոչված «Հնեվանքը». Լ. Մելիքսեթ-Քեկ, Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց, էջ 34—35 և ծանոթ. 3, նաև 57—58; Հիմա. նաև այս հատորի ԻՆ գլուխը (էջ 270):

16 Այս այբերի կամ բարանձափների, ինչպես և Հաղարատ-Սանահնի «էր»-երի մասին տես Գրիտ. Բան. Աղանեանց, Հնից-նորից. Հնախոսական ուղեորութիւն, Ք. 1900, էջ 11—21. С. Тер-Аветисян, Важность археологического исследования пещер Ахпата и Санаина,—Известия Кавказского Музея“, т. IX, в. 2, Т. 1915, стр. 130—134 (Հիմա. „Известия Кавк. Отд. И. Моск. Арх. О-ва“, вып. III, Т. 1913, стр. 52, прот. № 55). Н. М[арр], К исследованию пещер Ахпата и Санаина,— „Христ. Восток“, т. IV, в. 2, Пгр., 1916, стр. 194—195. Լ. Մելիքսեթ-Քեկ, Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց, էջ 51—54:

17 Հիմա. А. Муравьев, Грузия и Армения, ч. II, СПб, 1849, стр. 52. П. Иоселиани, Города, существовавшие и существующие в Грузии, Т., 1850, стр. [52. Л. М.-Б., Об экспедиции в Лори-Ташир и по ущелью Машавери летом 1926 г. — „Известия Кавк. Ист.-Арх. Института“, т. IV, Т., 1926, стр. 135—136.

18 Հիմա. А. Муравьев, Грузия и Армения, ч. II, стр. 313—331. П. Иоселиани, Путевые записки от Тифлиса до Ахталы, Т., 1850, стр. 23—33. А. Ерицов, Монастырь Ахтала,— „Кавказская Старина“, № 1, 1872, стр. 20—24. Е. Такайшвили, Грузийские надписи Ахталы,— „Сборник материалов для описания местностей и племен Кавказа“, вып. XXIX, Т. 1901, стр. 138—145. Н. И. Толмачевская, Фрески древней Грузии, Т., 1931, стр. 15. Լ. Մելիքսեթ-Քեկ, Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց, 58—59. Նույնի՝ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, 64—70; Հիմա. վերև՝ Վախուշտի «Վրաստանի պատմությունից» գլխի 52 ծանոթությունը Թղարանի մասին:

19 Հիմա. Л. Меликсет-Бекоев, Целебные источники исторической Грузии,— „Целебный Кавказ“, (Т.), 1916 г., № 3, стр. 24—26, и отдельно.

20 Հիմա. С. Т. Еремян, Заметки к тексту „Хроники Сумбата“, — „Տեղեկագիր ՍՍՏՄ Գիտ. Ակադեմիայի Հայկական ֆիլիալի», 1941 թ., № 9, էջ 27—30:

21 Այժմյան Խրամի:

22 Հիմա. П. Иоселиани, Города, стр. 60.

23 «Աղլի»=1,016 մ. (Իվ. Զավախիշվիլի, Վրացական շափ ու վշիտների զիտությունը կամ նուսիրդատիկա-մետրոլոգիա, վրացերեն, Քր., 1925, էջ 133, հիմա. Л. Меликсет-Бекоев, Армази,— „Материалы по истории Грузии и Кавказа“, 1938 г., вып. II, стр. 86, прим. 4):

24 «Միսխան»-ն նույն «Միսխան» || «Միշան»-ն է. տես այս աշխատության II հատորը, էջ 66:

25 Դրանիսը նույն Դմանիս-Դուամանիսն է, ուր բավական թվով հայերեն արձանագրություններ կան խաչքարերի վրա (տես Լ. Մելիքյան-Քեկ, Դմանիսի հայերեն արձանագրությունները, վրացերեն, «Труды Института языкознания АН Груз. ССР. Серия восточных языков». т. I, Т. 1954, стр. 153—161):

26 Նույն պատմական Ղաչղուլին:

27 Այժմյան Չըլդըր լիճը, որ նշանակում է «հյուսիսային» (վրաց. չըրդլի) լիճ. տես Ս. Ջիբիա, Սամցխե-Սաթարագոյի տոպոնիմիկայի և պատմական աշխարհագրության մի քանի խնդիրները, վրացերեն, «Քրիտիկի պետ. համալսարանի Աշխատություններ», XLI, թր., 1950, էջ 190—195:

28 Տես Ե. Такайшвили. «Материалы по археологии Кавказа», вып. XII, М., 1909, стр. 56—57 (Тетр-цихе или Агджо-кала):

29 Վախտանգ V, Շահնավազ կոչվածը, 1658—1675 թթ.:

30 Նազըր, Պարսից շահ, 1736—1747 թթ.:

31 Նախիդուրին նույն Ցուրտաֆն է, ըստ մեր տեսության (Լ. Մելիքյան-Քեկ, Քրիստիան-Մալկայի նյութական կուլտուրայի մնացորդների և տոպոնիմիկայի ուսումնասիրության համար, վրացերեն, թր., 1934, էջ 38—44: Նույնի՝ Վրաց աղբյուրները I, էջ 12—15, ծան. 6):

32 «Գետիս-խեվի» «գետ» (հայերեն) + «խեվի» (վրաց.) բառացի Գեսաձուր (հմտ. Լ. Մելիքյան-Քեկ, «Վրաց լեզվագիտական ընկերության Տարեգիր», վրացերեն, I—II, թր., 1925, էջ 370):

33 Նույն «Քուեշ փոր»-ն է՝ ըստ Անանիա Շիրակացու Աշխարհացույցի (պրոֆ. դ-ր. Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 348):

34 Թեխիթի հայկական հնությունները 1002 թ. արձանագրությամբ հանդերձ՝ Լ. Մելիքյան-Քեկ, Հայկական հնությունները Քրիստիանի մոտիկ շրջակայքում: Շավնարազ-Թեխիթ-Մավկիսի, վրացերեն, «Վրաստանի թանգարանի Տեղեկագիր», I, 1922, էջ 90—100. Л. Меликсет-Беков. Кистории удин (Ulta- Argentiaca). — «Քրիտիկի պետ. համալսարանի Աշխատություններ», XXIII, թր., 1942, էջ. 39, 41:

35 Գաշիոսը՝ Գաջենք-Գաշիանիի կառուցողը՝ առասպելական անձնավորություն է, որի անունը տեղանունից է բխում և ոչ թե բնդհակառակը:

36 Նույն Ցուրտաֆը, այժմյան Նախիդուրի-Արըլիոն. տես «Վրաց աղբյուրներ» I հատորը, էջ 12—15, նաև մեր հոդվածը За марксистское языкознание донесение, վրացերեն, թր. 1935, էջ 38—44. հմտ. այս աշխատության Գ զուլի, «Վրաստանի պատմություն»-ից, II, ծանոթ. 31:

37 «Գարեթուրանի» «Գարեուրանի» (վրացերեն) - Դրսի քաղ, որ կոչվել է նաև «Կալոուրանի» (այստեղից աղավաղված «Կոլուրանի» և ազգանուն «Колубанский») = Կալի քաղ, նույնն է, ինչ որ հայերը անվանել են «Տափի թաղ»: Այստեղից է նախկին եկեղեցիների անունները՝ «Կալոուրանի» = Колубанская և «Տափիթաղի» (Քամոյանց):

38 Սրանցից մեկը, հավանական է, այսպես կոչված, «Ջրկինյան»-ը լինեք, որ՝ հակառակ Վախուշտիի ցուցմունքի, հայերի կոչվից հիմնած և կառուցած է եղել: Մյուսն անհայտ է:

39 «Իշխուրտուր» նույն «Իշխուրտուր»-ն է, որ հիշված է Վախուշտիի «Քարթլիի պատմության» մեջ (տես այս աշխատության Գ զուլի, ծանոթ. 22) և էլ նատաղվիլու: «Քարթլիս-ցխովրեբա»-ում (տես նույնտեղ Ա զուլի, ծանոթ. 32): Մանրամասն՝ այս աշխատության Ա զուլի, ծանոթ. 32: Հմտ. Լ. Մելիքյան-Քեկ, Դավիթ Անհաղթի Վրաստանում լինելու հարցի շուրջը, Երևան, 1946, էջ 256—257:

40 Ասեմի մասին տես՝ Լ. Մելիքյան-Քեկ, Մաղկաբաղ բանից նախի հայերէն հանդերձ հայ-վրացերէն բառգրովը, I, թր., 1920, էջ 112—113: Նույնի, VII դարի հայերեն արձանագրությունները Վրաստանում (Ատենի Սիոն), «Տեղեկագիր Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի», հասարակական գիտություններ, 1945 թ., № 5, էջ 3—8, «Ատենի» անունը կապվում է «Տանա» գետի անվան հետ, որի իմաստը ճիշտ ստուգարանված չէ:

41 Մձորեթը հին քաղաք է. տես՝ П. Иоселиани, Города, 52—53.

42 Ախալզորիում արտագրված է, ի միջի այլոց, Հայաստանի Մատենադարանի № 4642 ձեռագիր Քարոզգիրքը, 1631 թվի, և № 2480 Ավետարանը 1640 թվի:

43 Սոսըր Գորիի հայություն այն շերտերին է վերաբերում, որոնք զաղթել են Տաճկաստանից (Օսմանյան պետությունից) XV—XVIII դդ. բնթացքում, և ոչ թե հիմնականին, որի առկայությունը նշվում է գեոև XI դարում (Պատմություն Շապուրի Բ պարտունույ, ի լոյս ածին Գ. Տեր-Մկրտչեան և Մեսրոպ Եպիսկոպոս, էջմ., 1920, էջ 81) կամ XII-ում (Մատթէոս Ուսահայեցի. Ժամանակագրություն, բ. տպ., Վաղարշապատ, 1898, էջ 356):

44 Այժմյան Ստալինիերն է:

45 Ալիում մեղ հասել են մի շարք եկեղեցիներ և գերեզմանատներ խաչքարերով և հայերեն արձանագրություններով:

46 Ալիից գեպի արևմուտք:

47 Հմտ. Հայաստանի պատմական աշխարհագրությունից հայտնի Հեր և Ջարեվանդ գավառների հիշատակությունը:

48 Այս տեղեկություններն առասպելական բնույթ են կրում:

49 Ախալցխի և առհասարակ Մեխիթ-Ջավախեթի հայերը պատմականորեն մի քանի շերտ են կազմել, որոնցից ամենաբազմամարդը 1829 թ. հարնո գաղթականներից բաղկացածն է (Акты Кавк. Археогр. Комиссии, т. VII, стр. 830—832. 852 etc: Հովակիմ Գեղամեանց, Կարապետ արքեպիսկոպոսի կենսագրությունը, «Փորձ», 1876 թ., № 1, էջ 163—206, 1877 թ., № 1, էջ 81—112: Ե. Լալայեան, Ջավախք, Ա. հատոր, Շուշի, 1897 (արտատպ. «Աղղ. Հանդեսից», I, Շուշի, 1895, էջ 117—378): Ե. Յ. Քոսեան, Ախալցխա, «Հանդէս ամսօրեայ», 1902 թ., էջ 79—85: Լ. Մելիքյան-Քեկ, Կարնո հայ գաղթականների 1829 թ. գնեկալ Պասկեիչին ուղղած գրությունը, «ՍՍԻՄ Գիտ. ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Տեղեկագիր», 1940 թ., № 3, էջ 37—40: Հայերեն արձանագրություններն Ախալցխիում, որ ցարդ պահպանվել են այլևայլ եկեղեցիների պատերի մեջ, հետևյալ տարեթվերն են կրում՝ 1351, 1356, 1442, 1451. Հայաստանի Մատենադարանի № 415 (430) ձեռագիրը գրված է լի եպիսկոպոսութեան տէր Գրիգորի, որ է առաջնորդ Սամցխեու երկրիս», 1473 թվին:

50 Ջավախեթի հայության անցյալի մասին տես նախորդ ծանոթության մեջ հիշված գրականությունը:

51 Տես 49-րդ ծանոթագրութիւնը:

52 Կառուցվել է Ներսես Շինողի, հետագայում հայոց կաթողիկոսի (641—661) կողմից, Զվարթնոցի և Անիի Գաղկազեն տիպի կլորաձև, որ մեզ չի հասել և հետագայում վերաշինվել: Տես Գ. Մ. Կլոպինսկի և Մ. Ս. Սեբերով, Пути развития грузинской архитектуры, Т., 1936, стр. 58—70. Լ. Մելիքետ-Բեկով Местечко Ишхан Эрзерумского вилайета, — «Тифлисский Листок», 1915 г., № 107. Հմմտ. նաև Ա. Սարգսյան, Վիրահայրի Տայք և Գղարջը գաւառների հին հայ և վրացական վանքերը, — «Հանդէս Թամարեայ», 1939, էջ 104—105. Մ. Ս. Սեբերով, Памятники грузинского зодчества, Москва, 1947, стр. 95 (рис. 89), 97 (рис. 90). Ե. Կայիշվիլի. О грузинских землях, захваченных Турцией, — «Заря Востока», 1946 г., № 107 (նույնը վրացերեն «Կոմունիստի» 1946 թ. № 104 և 105 — Իշխանի տաճարի նկարով № 104-ում, որ ուսերենին կցված չէ. հայերեն թարգմանութիւնը՝ Քյուրքիայի զավթած վրացական հողերի մասին, — «Սովետական Վրաստան», 1946 թ., № 49): Հմմտ. նաև Ներսէս վ. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վեներիկ, 1864, М. Grosset, Mémoires de l'Académie Imperiale des sciences, t. VIII, № 10 pp. 19—20, et tabl. III, IV. Н. М. Токарский. ц. с., стр. 200—214: Լ. Մելիքետ-Բեկով, Некоторые памятники армянской эпиграфики на территории Турции. «Эпиграфика Востока», IX, Липр. 1954, стр. 78—82. Ե. Կայիշվիլի. Археологическая экспедиция 1917-го года в южные провинции Грузии, Тб. 1952, стр. 37—38, 42:

53 Իսպիր-Սպերից մեզ հասել է մի հայերեն ձեռագիր, որ Հայաստանի Մատենադարանի № 2409—Շարահանն է, հետևյալ հիշատակարանով՝ «Գրեցաւ գիրքս» որ Շարահնոց կոչի, ի յերկիրս Ըսպերուռի ի յանապատս սուրբ Միքայէլի և սուրբ Կարապետի և սուրբ Նշանաց, որ աստ կան հաւաքեալ՝ 1592 թվի:

54 Վրացական Բոնա տաճարի մասին տես՝ Ե. Կայիշվիլի, «Материалы по археологии Кавказа», вып. XII, М., 1909, стр. 88—117 и рис. 62—71 и табл. XVII—XXa. Գ. Մ. Կլոպինսկի և Մ. Ս. Սեբերով, ц. с., Ե. Կայիշվիլի, «Заря Востока», 1946 г. № 107 (նույնը վրացերեն «Կոմունիստ»-ի 1946 № 104, հայերեն թարգմանութիւնը, — «Սովետ. Վրաստան», 1946 թ., № 48): Մ. Ս. Սեբերով, Памятники грузинского зодчества, Москва, 1947, стр. 85 (рис. 77), 86 (рис. 78), 87 (рис. 79).

55 Ճորոխի ավազանի և առնասարակ Տառ-Կլարջեթի հայերի մասին տես, Георгий Мерчул, Житие св. Григория Хандзтийского, Грузинский текст, введение, издание и перевод Н. Марра, с Дневником поездки в Шавшию и Кларджию [«Тексты и Разыскания по армяно-грузинской филологии», кн. VII], СПб., 1911. Ատրպետ, Ճորոխի ավազանը [«Ազգային Մատենադարան» 118], Վիեննա, 1929:

Գ

### ԳԵՈՐԳ ԿԱԿԱԲԵՆՏ՝ ԳՈՐԵՑԻ

«ԺՈՂՈՎԱԾՈՒ» (1748)

Գեորգ Գորեցին, ազգանունով Կակարենց (Կակարաանթ), վրացախոս հայ է, հայադավան և նույնիսկ Հայոց եկեղեցու սպասավոր՝ Վասպուրականի Կառուց անապատի միաբան-վարդապետ, հռչակավոր Սայաթ-Նովայի ժամանակակից, որը գրի է առել մի սովոր ժողովածու վրացերեն լեզվով հիշյալ անապատում:

Ինչպես հիշյալ ժողովածուի հիշատակարաններից երևում է, Գեորգն եղել է Ավթանդիլի և Մի[հ]րանդուխ[տ]ի որդին, ունեցել է մի եղբայր՝ Դավիթ անունով և 3 քույր՝ Թինաթին, Խանում և Ռուսագամ, որոնցից վերջինը 1748 թվին հիշվում է որպես ննջեցյալ, իսկ մնացածները՝ ամուսնացած:

Ձեռագիրը, որ գրված է մաս առ մաս՝ 1740, 1747, 1748 և 1750 թթ., իսկ հիմնականում 1748 թվին, ներկայացնում է իրենից դավանարանական բնույթի մի տեսակ ժողովածու, որին կցված են մի շարք տաղեր ու ներբողյաններ հայերեն և վրացերեն լեզուներով: Դավանարանական մասը հիմնականում կոմպիլացիա է Գրիգոր Տաթևացու (XIV—XV դդ.) «Գիրք հարցմանց»-ից և «Քարոզգրքի» Ամռան հատորից, ինչպես և Ղազար Ջահկեցու (XVIII դ.) «Դրախտ ցանկալի»-ից, որոնց կողքին տեղ են գտել թարգմանչի և հեղինակի՝ Գեորգ վարդապետի՝ բազմաթիվ հիշատակարաններն ինքնակենսագրական տվյալներով (վրացերեն): Ներբողյաններից երկուսը հայերեն է՝ նվիրված Հովհան Ոսկեբերանին ու Քրիստոսին, մնացածները՝ 6 հատ՝ վրացերեն են, նվիրված Գրիգոր Տաթևացուն, Սեղբեստրոս Հոռմի պապին և Գրիգոր Պարթևին, կրկին Գրիգոր Պարթևին և Ներսես Լամբրոնացուն, յուրաքանչյուրը մի-մի տուն, վրաց այբբենին (գովասանք)՝ 37 տող, տաղեր՝ Վարագա Խաչին՝ 27 տուն (108 տող), Քրիստոսին (Քրիստոսի կենսագրութիւնը)՝ 30 տուն (120 տող):

Գրիգոր Տաթևացու Քարոզգրքից կատարած վրացերեն թարգմանութիւններից աչքի է ընկնում «Քարոզ վարդապա-



սին» (ընդգրկում են՝ Գիրք քարոզութեան որ կոչի Ամոան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն Եօթնալոյս վարդապետի, Կ. Պոլիս, 1741, էջ 485—486), իսկ Ղազար Զահեկեցու «Դրախտ ցանկալի»-ից պամֆլետ պապականների մասին (Գիրք աստուածարանութեան որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածարան վարդապետէ Ճահեկեցոյ, Կ. Պոլիս, 1734, էջ 520—530): Իսկ Գեորգ վարդապետի ինքնուրույն թե կոմպիլատիվ գրվածքներն են այն կտորները, որ նվիրված են սուրբ Սարգսի կամ առաջավորաց պատին, Ծոպատկին, Հայոց եկեղեցիների տեսութեանը, հայ-վրացական և հայ-ազովանից եկեղեցական փոխ-հարաբերութեանների պատմութեանը և այլն: Գեորգի սլաքը հիմնականում ուղղված է ֆրանկների, այսինքն կաթոլիկների դեմ:

Մանրամասնութեանները Գեորգ Գորեցու կենսագրութեան և գրական գործունեութեան մասին տես մեր հոդվածում՝ «Գեորգ Գորեցի, վրաց և հայոց անձանոթ գրողը XVIII դարու առաջին կիսի» = Георгий Горели, неизвестный грузинский и армянский писатель первой половины XVIII века, վրացերեն, ռուսերեն ամփոփումով՝ «Վրաստանի պետ. թանգարանի Տեղեկագիր», հ. X—B, 1941, էջ 89—122, ուր 104—121 էջերում արված է և հեղինակի ինքնուրույն գրվածքների անգլանիկ հրատարակութեանը: Նույն հոդվածում (էջ 89—90 և ծանոթ. 1 և 2 նույնտեղ) արված է մեր մեկնարանութեանը եվրոպական ճանապարհորդների՝ John. Cartwright-ի (1590) և Amédée Jaubert-ի (1806) նշած փաստերի, որ Ջուղայում և Վանի շրջակայքում՝ Վարագում, հայերին կից եղել են և վրացիներ (իմա՝ վրացախոս հայեր կամ Վրաստանցի հայեր):

b

**ԱՆՏՈՆ Ի ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐՔԱՅԱԶՆ**

«ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ» (1750—1752), «ԶԱՓԱԲԵՐԱԿԱՆ» (1753), «ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (1753), ՆԱՄԱԿ ՀԱՅՈՑ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ (1786)

Անտոն Ի կաթողիկոսը՝ Քարթլիի Իեսե թագավորի (Վախտանգ VI-ի եղբոր) որդին էր, ծնված էրեկել Ի-ի դուստր էլիսաբեդից, որ Թեյմուրազ II-ի քույրն էր: Ծնված լինելով 1720 թ.՝ նա մկրտութեանից կոչվել է Թեյմուրազ. սկզբնական կրթութեանը ստացել է Դավիթ-Գարեսյեցու անապատում, ուր սովորել է սուրբ գիրքը, աստվածաբանութեան, փիլիսոփայութեան և հունարեն լեզու: 1739 թ. Գելատի վանքում (Քութայիսի մոտ) ընդունել է կուսակրոնութեան՝ կոչվելով Անտոն, և շուտով նույն վանքի վանահայր է կարգվել, իսկ 1740 թ., հետևապես 20 տարեկան հասակում՝ ձեռնադրվելով եպիսկոպոս՝ նշանակվել է Քութայիսի մետրապոլիտ. 1743 թ. վերադարձել է Դավիթ-Գարեսյեցու անապատը և 1744 թ., հետևապես 24 տարեկան հասակում, գրավել է Մցխեթայի կաթողիկոսական աթոռը: 1755 թ., գահընկեց լինելով կաթողիկոսյանը հարելու պատճառով, անցել է Ռուսաստան, ուր ստանձնել է Վլադիմիրի արքեպիսկոպոսական թեմի տեսչութեանը, մնալով այնտեղ մինչև 1762 թ.: Այդ թվին, պատիվը վերականգնելուց հետո, Անտոնը վերադառնում է հայրենիք ու կրկին ստանձնում կաթողիկոսական աթոռը և մնում այդ կոչման մեջ ցմահ՝ մինչև 1788 թ.: Թաղված է Մցխեթայի «Կենարար սյունի» (Սվետի ցխովելի) կաթողիկոսական մայր տաճարում:

Անտոն Ի կաթողիկոս Բագրատինն արքայազնը պատվավոր տեղ ունի գրված վրաց գրականութեան ասպարեզում: Նրա գրական գործերը հիմնականում, ըստ Կ. Կեկելիձեի (Վրաց գրականութեան պատմություն, Լ, 1951, էջ 345—358, հատկապես 349—358), ընդգրկում են հոգևոր գրականութեան հետևյալ ճյուղերը. մեկնարանական, դավանաբանական-ընդդիմախոսա-

կան, աստվածաշնորհական-ծիսական, ներքողյաններ, հովվական-քարոզչական, կանոնադիտական, վարքագրական-վկայարանական, պատմական, քերականագիտական և փիլիսոփայական: Սրանցից Անտոնի ինքնուրույն և թարգմանական սովոր հատորների թիվը հասնում է 23-ի, որոնցից մի քանիսը պարունակում են հետաքրքրական նյութեր Հայաստանի և հայերի մասին, առանձնապես Հայոց եկեղեցու, եկեղեցական գործիչների և եկեղեցական գրականության մասին:

Անտոնի դավանաբանական-ընդդիմախոսական երկերից նախ և առաջ հիշատակելի է նրա մեծածավալ «Հակաճառությունը» (Մզամեող՝ վելերա, բառացի՝ «Պատրաստարանություն»), որ 3 գրքից է բաղկացած և գրվել է 1750—1752 թթ.: Մեր ձեռքի տակ է այդ աշխատության հրատարակությունը՝ Պոլիեվքոս քահանա Կարբելաշվիլու խմբագրությամբ, Թբիլիսի, 1892, XXXVIII+617 էջ: Այստեղ հատկապես հայերին վերաբերում է Բ գրքի IV գլուխը (էջ 107—121) և Գ գրքի XXIII գլուխը (էջ 593—603), որտեղից մենք ստորև թարգմանաբար բերում ենք լոկ մի երկու հատված:

Այս աշխատության կողքին նշելու է Անտոնի թարգմանությունները հայերենից, Թբիլիսիի հայոց կաթողիկե եկեղեցու = Բերդի մեծ եկեղեցու (այժմյան Ս. Գեորգի) միաբան Փիլիպպե քահ. Հայթիմազաշվիլու աշխատակցությամբ, 2 մեծ գործի, որոնք են՝ 1. «Եփեսոսի պատմությունը», որ նույն «Առաջին 3 տիեզերական ժողովների պատմությունն» է, թարգմանված 1776 թ., և 2. Կյուրեղ Աղեքսանդրացու «Գանձը», թարգմանված 1788 թ. (սրանցից և ոչ մեկը հրատարակված չէ):

Վարքարանական-վկայարանական գործերից ամենանշանավորն է «Մարտիրիկա»-ն, այսինքն «Վկայարանություններ», ուր բավական պատվավոր տեղ է հատկացված ինչպես հայ-վրացական, նույնպես և հայոց վկաների կենսագրություններին, օրինակ՝ Շուշանիկին, Սուքիասյանց, Իսահակ և Հովսեփի, Գրիգոր Պարթևի և այլն (սա ևս հրատարակված չէ): Ընդ սմին, Անտոնը թարգմանել է հայերենից Հովհան Ոսկերեքանին վերագրվող ապոկրիֆիկ ներքողյանը Գրիգոր Պարթևի մասին, որին, ըստ մեր հետազոտության, հիմք է գրվել Երուսաղեմի 1734 թ. հայերեն հրատարակությունը (տես մանրամասն սրա մասին և վրացական վերսիայի տեքստը մեր հրատարակությամբ մեր աշխատության մեջ. Грузинская версия апокрифической гомилии

о Григории Парфянском, приписываемой Иоанну Златоусту, վրացերեն, ուսերեն ամփոփումով, — «Литературные Разыскания», II, 1944, էջ 39—61, տեքստը՝ 46—59):

Ըստ էության ներքողյաններ է պարունակում Անտոնի «Չափաբերական»-ը (Մզ'որիլսիտղ՝ վաորա) ուր, ի միջի այլոց, գտնում ենք այսպիսիները (ներքողյաններ), նվիրված հիշյալ սրբերին՝ Շուշանիկին, Սուքիասյանց, Իսահակ և Հովսեփին, նաև Դավիթ և Տիրիճանին, ինչպես և հիշատակություններ (հեգնանքով) Հովհան Օձնեցու և Գրիգոր Տաթևացու: Այս «Չափաբերական»-ը հրատարակվել է Պ. Իոսելիանու խմբագրությամբ, Թբիլիսիում, 1853 թվականին:

Քերականագիտական երկերից նշանավոր է «Քերականության» առաջին փորձը (խմբագրությունը), որ ներկայացնում է իրենից գրեթե բառացի թարգմանություն, վերոհիշյալ Փիլիպպե քահ. Հայթիմազաշվիլու ընկերակցությամբ, Մխիթար Սեբաստացու «Քերականության» Վենետիկի 1730 թ. հրատարակության, թարգմանչի ընդարձակ առաջաբանով հանդերձ, որ ստորև թարգմանաբար բերում ենք (այս փորձը ևս դեռ հրատարակված չէ):

Եթե իր «Քերականության» առաջին խմբագրությունը ձեռնարկելիս 1753 թ. Անտոն կաթողիկոսը հետևել է Մխիթար Սեբաստացու «Քերականության» 1730 թվականի հրատարակությանը, հասկանալի գլուխ գործոց՝ «Հակաճառություն»-ը գրելիս նա, բացի վրացական աղբյուրներից, որպիսիք են Արսեն կաթողիկոս Սափարացու (IX դ.) «Վրաց և Հայոց բաժանման մասին» և Արսեն Իդ'ալթոնցու (XII դ.) «Իոգմատիկոն»-ը, օգտագործել է նաև բազմաթիվ աղբյուրներ հայերեն լեզվով, այն է՝ Կղեմես Գաղանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հոովմայ» (=Consiliationis Ecclesiae Armenae cum Romana), հ. II, մասն I (Հոովմ, 1658), որտեղից ամբողջապես թարգմանված է Բ գրքի Գ գլուխը, նաև ժամանակակից գրականությունից՝ Հաղար Զահեկցու «Իրախոցանկալի»-ն (Կ. Պոլիս, 1734), Հակովբ վ. Նալյանի Ակնեցու «Վէմ հաւատոյ»-ն (Կ. Պոլիս, 1733), «Յայամաւուրք»-ը (Կ. Պոլիս, 1706, 1730), «Մաշտոց»-ը (Կ. Պոլիս, 1714, 1726, 1744) և այլն: Այս աղբյուրները մանրամասն քննված են մեր հոդվածում. Латинско-армянские источники «Готового ответа» Антония I, վրացերեն, ուսերեն ամփոփումով. «Թբիլիսիի Պետ. համալսա-

րանի Աշխատություններ», XXX B—XXXI B, Թբ. 1947, էջ 97—112:

Հայոց Ղուկաս կաթողիկոսին ուղղված Անտոն Վրաց կաթողիկոսի 1756 թվակիր (?) նամակը նորերս հրատարակվեց Վրաստանի պետ. թանգարանի վրացերեն ձեռագրերի ցուցակում (վրացերեն, հ. Վ, Թբ. 1946, էջ 176—177):

Թարգմանություններն Անտոն Վ-ի երկասիրություններից մենք կատարել ենք ըստ հրապարակի վրա եղած հրատարակությունների, բացի «Քերականություն»-ից, որ օգտագործել ենք ըստ Թբիլիսիի նախկին եկեղեցական թանգարանի հավաքածուի № 785 գրչագրի:

«Հ Ա Կ Ա Ճ Ա Ռ Ռ Ի Թ Յ Ո Ւ Ն»-Ի Ց

Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

...Մանթթացա Հովհան Օձնեցու, Պողոս Տարոնեցու, Ստեփանոս Սյունեցու, Գոշիկ Վանականի, Վարդանի, Սարգսի, Մաշտոցի, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Կեչառեցու (Կեսարացու?), Ղազար Զահեկեցու, Հակոբ Ակնեցու (Անգեղի?) հայոց վարդապետների գրքերի հետ: Սրանցից ոմանց գրություններին լիովին համաձայն եմ, իսկ ոմանց գրություններից... խոցոտվեց սիրտս, և «Նախանձ տան Աստուծոյ եկեր զիս» [Սաղմոս LXVIII, 9 (10), Աւետ. Յովհաննու II, 17].... Սրանց դեմ ինձանից շատ առաջ ելույթ են ունեցել նախկին աթոռակալները, համայն Վրաստանի հայրապետներ՝ աստվածա(հաճո) Կիրիոնը և երանելի Արսենը, որոնք շնորհոք ամենասուրբ հոգվուն ընդդիմադրեցին իրենց ժամանակակից միաբնակ հայերին: Իսկ եթե ցանկանում ես իմանալ, թե ինչպես եմ աշխատել այս գրքի վրա, այդ միմիայն իմաստությունն գիտե:

Ինձ օժանդակում էր Փիլիպպե հայազգի երեցը՝ Թարգմանություններ (կատարել)ով հայերեն գրվածքներից, իսկ լատիներեն գրվածքների թարգմանությունները [հասցնում էր ինձ] լատինացոց ոմն կուսակրոն քահանան, քանի որ ես, բացի վրացերենից, ուրիշ ո՛չ մի լեզու չգիտեի, իսկ հայերեն գիրը թեև գիտեի, սակայն շատ թույլ և թուուցիկ կերպով...:

Այս՝ «Հակաճառություն» գրքի առաջին, երկրորդ և երրորդ գրքերում բերած են վկայություններ հետևյալ սուրբ գրվածքներից... իսկ հայոց վարդապետներից՝ 1. Սուրբ Գրիգոր Լուսա-

վորիչը, 2. Ներսես Մեծն, 3. Սահակ (Իսահակ) Մեծն, 4. Դավիթ փիլիսոփան, 5. Հովհանն Մանդակունին, 6. Հայ եպիսկոպոսների ձեռնադրության գիրքը [Մաշտոցը], 7. Ներսես Կլայեցի, 8. Ներսես Լամբրոնացի, 9. Շիրակավանի ժողով[ի որոշումներ]ը, 10. Սարգիս հերձվածողը, 11. Իգնատիոսը, 12. Տարսոնի ժողովի [կանոնները], 13. Գրիգոր Սսի [կաթողիկոսը], 14. Սսի ժողովի [կանոնները], 15. Մովսես Սսեցին, 16. Ազարիա Սսեցին, 17. Ազանայի (Ատենի) ժողովի [կանոնները], 18. Հայոց Հայամավուրքը (ասամավուրքի), որ է Սվինաքսար...

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ա. Փ Ո Ր Ձ Ի Ց

Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

1

...Բաղմաթիվ թարգմանական գրվածքներ գտնված են... սուրբ քաղաքում<sup>3</sup> և մեր՝ վրացական սուրբ լեռան վանքում<sup>4</sup> բայց քերականության մասին ոչինչ չեմ լսել...

Լևոնի (Լէօնի)<sup>5</sup> որդի՝ Վախտանգ թագավորն<sup>6</sup> կամեցավ; գտնել այս[պիս]ի մի գիրք... և նրա օրոք կար մի վանական Օրբելիանի տոհմից Սարա անունով<sup>7</sup>, որը իմաստ[ասիրության] հետևող էր. ...Ոչ նվազ չափով քերականությունը որոնում էր մանավանդ իմ ազգական Վախուշտին<sup>8</sup>: Եվ քանի որ այդ [քերականությունը] չգտնվեցավ՝ ...դիմեցին Թբիլիսի քաղաքացիներից մեկին, որին այժմ Չաքարիա վարդապետ են կոչում<sup>9</sup>, և ազերսեցին, որ օգնի: Եվ համաձայն նրանց ազերսանքին, նա (Չաքարիան) ձեռնարկեց քերականության թարգմանելուն [հայերենից]<sup>10</sup>: Սակայն երբ Արչիլ թագավորի<sup>11</sup> օրոք այդ թարգմանությունն ավարտվեց, պարզվեց, որ այն քերականությունն է, և որ գտնվածն այն է, ինչ որ փնտրում էին...

2

... Հասավ մեզ Թեյմուրազ երկրորդի<sup>12</sup> և նրա որդի Իրակլիի<sup>13</sup> թագավորությունը... և թագավորներն իսկ չկարողացան գտնել քերականությունն...

...Մի քանի տարուց հետո ես հանդիպեցի ոմն քահանայի, որ ազգով էրմանյան, այսինքն հառոյան էր<sup>14</sup>, ազգանունով Ղա՛յթմազ՝ առջվիլի Փիլիպպե և ազնվական ծագումով՝ մեծ իշխան

Օրբելիանների իշխանության սահմաններից: Եվ մենք երկուսով օրըստօրե պրպտուհներ էինք կատարում, և հս շատ մտերմացանք հետ: Մենք նախ և առաջ թարգմանեցինք հայերենից Արիստոտելից...

Իրար հետ խորհրդակցելով՝ մտադրվում էինք քերականության փոխադրությունն ևս սկսենք, սակայն ինձ դսպում էր այն, որ իմ միտքը քերականագիտական կրթությունն չէր ստացել: Իսկ այն Փիլիպպե քահանան խիստ հմուտ էր քերականական արվեստին, և՛ ապավինելով աստվածային իմաստությանը՝ Թեյմուրազ թագավորի և նրա որդու հրամանով ձեռնարկեցինք այս [գործը]:

Նախ Փիլիպպեն ծանոթացրեց ինձ, թե՛ ինչ է մասունքը րանին և ապա քերականության սահմանների, տառերի, վանկերի, բառերի և խոսքի էությունն հետ, հետագայում մասունքը րանի ու նրանց հատկությունների, այսինքն պարագաների հետ, և աստիճանաբար մացրեց ինձ իմաստության դուռն:...

Սակայն հս և այն Փիլիպպեն միայն հայերեն քերականությամբ չէինք բավականանում, այլ կարգում էինք և լատիներեն քերականություններն ևս... և՛ հայերենի հետ համեմատելով՝ նմանապես թարգմանում էինք:

Իսկ համաձայնությունը (սինտաքսիս), որ է շարանյութություն, ... նույնպես բացատրեց մեզ այն գովելի անձնագրությունը, մեզ կարեկից բարեկամ Փիլիպպեն:...

Մ Ա Ն Ո Ւ Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Անտոն I կաթողիկոսի «Քերականության» ա. փորձի մասին հետաքրքիր է լսել հանգուցյալ պրոֆ. Ա. Ցագարելու (А. Цагарели, О грамматической литературе грузинского языка, СПб. 1873, стр. 21—22) գնահատականը.

«Антоний... придерживался армянской грамматики известного вардапета Мхитаря, основателя братства мхитаристов. Антоний следовал ему в распределении и расположении грамматического материала, заимствовав многие общие определения грамматических категорий целиком, ... но то, что составляет грамматическую особенность каждого языка, — звуковые особенности, этимологические формы и словообразование, в обширном смысле слова, главным образом склонение и спряжение, — изложено автором самостоятельно и сообразно с духом грузинского языка, резко отличающегося от грамматического строя армянского языка.

Но насколько Антоний в изложении грамматических форм собственно грузинского языка отстает от мхитаровой грамматики, настолько

же он придерживается этой последней в общем плане изложения грамматических положений и определений разных грамматических категорий, которые он иногда приводит слово в слово»:

Իրրև ապացույց այս թեզի, Ա. Ծագարելին առաջ է բերում մի շարք համեմատություններ, ուր, ի միջի այլոց, ցույց է տալիս Անտոնի սխալները, որոնք նախադասությունները հայերենից վրացերեն բառացի թարգմանելու հետևանք են (նույն տեղ, 22—30):

Միաժամանակ, հետաքրքիր է Ցագարելու մի նկատողությունը, որ վերաբերում է տերմինաբանությանը.

«Терминология, как в этом трактате, так и в других грамматических трудах Антония, больше приближается к греческой и латинской, но падаются и такие технические названия, которые позволяют заключить, что они переведены с армянского языка, а не непосредственно с греческого или латинского; так, слово «падеж» не переведено на груз. словом «ղացեմա», «չեմթխուէվա». (соотв. русскому «падение, случай», нем. Fall), как следовало ожидать, судя по греч. πτώσις, лат. casus, но переведено словам «բրունուա» — «кружение, верчение», как и в арм. հոլով, букв. «катание, кружение, обращение». Равно и слово «склонение» не переведено словам «դարբա», как в греч. κλίσις, лат. declinatio, но словом «բրունուէրա» — «скатывание, кружение, обращение», как и в арм. հոլովում» (стр. 39).

Ի միջի այլոց, հոլովումների թվին Անտոնն ավելացնում է բացառական «ղածղ'երիթի» (= լատ. ablativus), որ վրացերենում գոյություն չունի, ինչպես և բ տառը և հնչյունը, որ զրական վրացերենին խորթ է:

2 Ըստ նախկին Թր. եկեղեցական թանգարանի (այժմ Վրաստանի պետ. թանգարանում) հավաքածուի № 785 դրչազրի, էջ 1a — 6b. հմմտ. Փ. Жордания, Описание рукописей Тифлисского Церковного Музея, кн. II, Т. 1902, стр. 221—223, նաև Լ. Մելիքսեթեկ, Հատված XVIII դարի Վրաց գրականության պատմությունից. Փիլիպե Ղայթմազազիլի, վրացերեն, — «Լոմխի», 1932 թ. № 16: Թարգմանությունները՝ ուսուցիչ Ա. Ագարելի, О грамматической литературе грузинского языка, стр. 6—7, հայերենը՝ Լ. Մելիքսեթեկ, Հայերը Վրաց հին գրականութեան մեջ, — «Գեղարվեստ», № 7, Թ. 1921, էջ 46—47:

3 Այսինքն՝ Երուսաղեմում և նրա Սուրբ Խաչ վանքում, որ հնուց վրացիներին էր պատկանում:

4 Այսինքն՝ Աթոնում (Քաղկեդոնի թերակղզում):

5 Լեոն (Լեվան), Կախեթի թագավոր:

6 Վախտանգ VI, Քարթլիի կառավարիչ՝ 1703—1712 թթ., թագավոր՝ 1719—1724 թթ. (վախճ. Աստրախանում 1757 թ.):

7 Տե՛ս «Վրաց աղբյուրների» II հատորը, էջ 118—125:

8 Վախուշտի մասին տե՛ս այս գործի Գ գլուխը:

9 Խոսքը Չաքարիա Մաղինաշվիլու մասին է. Լ. Մելիքսեթեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ, — «Գեղարվեստ» № 7, էջ 44. տե՛ս նաև ստորև՝ ԻԳ գլուխը (էջ 257):

10 Դեռևս տպված չէ: Խնդրի շուրջը անտիպ աշխատություն թողեց

հանդուցյալ վրացահետ Դավիթ Գ. հարիճաշվիլին (զեկուցված վրաստանի Պատմա-ազգագրական ընկերության հրատարակական նիստերից մեկում՝ 1923 թ.):

11 Արշիլ I (1647—1713) Կախեթի, երբեմն Իմերեթի թագավոր ընդմիջումներով՝ 1664—1675, 1678—1679, 1690—1691, 1695—1698, 1698 թթ.:

12 Թեյմուրազ II, Կախեթի թագավոր, 1744—1762 թթ.:

13 Էրեկլե II, նախ Կախեթի թագավոր, 1744—1762 թթ., ապա միացյալ Քարթլիի և Կախեթի արքա՝ 1762—1798 թթ.:

14 Այսինքն Հայկազն կամ Հայազն, հայազգի, հայ:

### ՆԱՄԱԿ ՂՈՒԿԱՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

«Ղուկաս ամենայն հայոց սրբազնագույն հայրապետին, ս. Բարդուղիմեոս և Թադեոս առաքյալներին աթոռակալին, սիրելի եղբոր և լիովին արժանահավատ մտերիմիս:

«Ամենամեծ հարգանքով և կատարյալ սիրով դեպի Ձերդ Սրբությունը սկսում եմ գրել Ձերդ Սրբությանն ուրախ հոգով և ամենալայն բարեմաղթություններով հոգվույս, հայտնելով Ձեզ մաքրափայլ սերս և նվիրվածությունս Ձեզ, իրրե երես առ երես զբուցողս Ձերդ Սրբության հետ:

«Սրբազնագույն Հայր... ստացա Ձերդ Սրբության ուղարկած նամակը, որ լի է սիրով և մխիթարությամբ դեպի ինձ, և շնորհակալությամբ առ Աստված ուրախացա... և Ձեր մխիթարանքն ուրախություն ներշնչեց հոգուս:

«...Ձերդ Սրբության կողմից ինձ ուղարկած նամակին ժամանակին չպատասխանելն այն էր, որ չգտա մեկին, որ այդտեղ եկող լիներ՝ Ձերդ Սրբության մոտ, որի համար խնդրում եմ Ձեր ներողամտությունը: Իսկ իմ՝ կաթողիկոսական գահի վրա բազմելու առթիվ Ձեզանից ինձ ուղարկած մի շարք ընծաները ստացա՝ իրրե հատուցումն Աստուծոց... խնդրում եմ Ձերդ Սրբությունից, որ ինձ չմոռանաք և ինձ մխիթարելու նպատակով նամակով ինձ հիշեք, քանի որ ինձ համար շատ հաճելի էր Ձեր նամակը: Եվ սրանով ավարտում եմ Քրիստոսիվ եղբայրական սիրով լի խոսքս, մնալով կատարյալ հավատարմությամբ առ Ձեզ»<sup>1</sup>:

### Ծ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<sup>1</sup> Այս նամակը հրատարակված է 1756 թվականի ներքո (Описание грузинских рукописей Государственного Музея Грузии, т. I. Тбилиси, 1946, стр. 174, 176—177). որ, սակայն, կասկածելի է: Այդ թիվը պետի ուղ-

ղել 1786-ի՝ ելնելով այն հանգամանքից, որ Անտոն I կաթողիկոս է եղել 1744—1755 և 1762—1788 թթ., իսկ Ղուկասը ամենայն հայոց կաթողիկոս էր 1780—1799 թթ.: Կարճ ասած, զույգ կաթողիկոսների գրադրությունը կարող էր տեղի ունենալ միմիայն 1780—1788 թթ. միջոցին, զուցե 1780 կամ, որ ավելի հավանական է, 1786-ին, բայց ոչ մի դեպքում 1786-ին:

Օգտվելով առիթից, կարևոր ենք համարում նշել, որ Անտոն I կաթողիկոսը լավ տեղյակ է էջմիածնի աթոռի գործերին: Այսպես, օրինակ, իբր «Հակաճառության» մեջ մի տեղ հիշում է իր ժամանակակից կաթողիկոս Ղազար Զահկեցուն (1737—1751), որի մասին գրում է. «Սա (Ղազարը), որ ապրում է մեր օրոք, իմ մեծ բարեկամն է, քանի որ բաղմիցս սիրո նամակով բարևներ հղեց ինձ». ապա նշում է, որ «Ղազարը գրեց մի գիրք, որ կոչեց Դրախտ ցանկալի»,... որը «հակառակ է Քաղկեդոնի ժողովին և Լեոնի [առումար]-ին»:

Մի տեղ ևս Անտոնը խոսում է առանց քեմի եպիսկոպոսներ ձեռնադրելու սովորույթի մասին, ապա մի առ մի թվում է անվիճակ եպիսկոպոսների պաշտոննությունը էջմիածնում, ինչպիսիք են Գվիբակները (հետագա նոմենկլատուրայով նույն հայրապետական պատվիրակները), ավագերեց կամ վանահայր եպիսկոպոսը (ժամօրհնողը), փակակալ եպիսկոպոսը (լուսարարապետը), արոտակալ-եպիսկոպոսը (տեղակալը) և քաղվարաց-եպիսկոպոսը (հյուրընկալը), որոնցից վերջինը էջմիածին եկող քարավանների, վաճառականների, ճանապարհորդների, ուխտավորների և առհասարակ բոլոր այցելուների հսկողն էր: Վերջինս, ի միջի այլոց, կարևոր դեր էր խաղում էջմիածնի Փինանսական օպերացիաների գծով:

2

## ՕՐԱՐ ԹՈՒՄԱՆՈՎ

ՋԵԿՈՒՅԱԳՐԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՆԳԻԱՅԻՆ (1754—1756)

Օթար Թումանովը մեկն է Վրաստանի այն իշխաններից, որոնք անցել էին Ռուսաստան Վախտանգ VI Թագավորի գաղթի միջոցին՝ նրա բազմամարդ շքախմբի կազմում 1724 թվին: Հասնելով Պետերբուրգ՝ նա մտել էր ռուսական զինվորական ծառայության մեջ: Ռուսաց զորքում էր ծառայում նաև նրա որդի Իվանը. այնպես որ 1750 թվականին հայրը կապիտանի աստիճան ուներ, իսկ որդին՝ պրապորշչիկի:

1750 թ. սեպտեմբերին Օթար Թումանովը դիմել է ռուսաց արտաքին գործերի պետական կոլեգիային մի հայցագրով, ուր նա՝ առաջարկելով իր պատրաստակամությունը գաղտնի հետախուզություններ կատարել Պարսկաստանի և Տաճկաստանի սահմանակից Վրաստանում և վերջինիս մայրաքաղաք Տփղիսում հիշյալ երկրների քաղաքական և զինվորական դրուժյան և իրադարձությունների մասին, որպեսզի հետևանքները հաղորդի կոլեգիային՝ խնդրել է 2 տարի ժամանակով գործուղեն իրեն Վրաստան: Այս հայցագրի մեջ, որը ռուսերեն է գրված և հասել է մեզ Մոսկվայի՝ ֆեոդալական էպոխայի Արխիվի «Գրուզինские дела» ֆոնդի № 11 գործում, նա իրեն անվանում է «գրուզинского гусарского полку капитан Отар Томанов», իսկ իր որդու մասին գրում է. «...сын мой князь Иван Туманов служит в оном же полку прапорщиком, и оной сын мой обязан чтоб в России вечно останца»:

Նույն խնդրագրի մեջ Օթար Թումանովը մանրամասն բացատրում է իր գործուղման կարևորությունը և խնդրում հետևյալը. «...меня нижайшего онного отправить в Грузию в город Тифлиз, а оной в Грузии столичной город на границе между турков и персианов состоит, а у меня племянник родной... и при грузинском царе оной мишкарбашом нахо-

дитца, и других многих свойственников в Грузии имею и могу азейские, а особливо персидских ведомостей чрез Грузию достать; в каком обстоятельстве та Персия находитца будет, и кто шахом зделаетца и против турков и против проте их войну объявят или с кем мир заключат, сверх же того могу из Грузии под секрет отправить разных... людей в Испаани и в Ереване, и те посланные в оных персидских местах тамошние ведомости получать и ко мне в Грузию писать будут». Ապա իր մասին ավելացնում է. «Закон содержу я армянской\* и в Грузии тамошними армянами я почитателен, к тому ж в Грузии у меня дом и деревня, а для лутчего к тому делу уверения оставляю здесь, в России, жену и детей моих»:

Այսպիսով, Օթար Թումանովը ոչ միայն խոստովանել է տալիս ռուսաց կառավարությանը, այլև շեշտում, որ իր կնոջը և երեխաներին թողնում է իրրև պատանդ, միայն թե նրան թույլ տրվի գալ Վրաստան, ուր նա թողել է իր տուն ու տեղը՝ հայրենի գյուղը:

Հակառակ դեպքում Օթար Թումանովը խնդրում է՝ «...буде государственная коллегия иностранных дел... меня к тому делу отправить не дозволит, тоб дать одного человека такого, который бы знал говорить по грузинский или по персидский или ж по армянский, и такого человека отправить от коллегии в Грузию во оный город Тифлиз к царю грузинскому или племяннику моему...»:

Արտաքին գործերի պետական կոլեգիան Օթար Թումանովին անմիջապես ոչ մի պատասխան չի տալիս, այլ միմիայն 1754 թվականին որոշում է օգտագործել նրան, համաձայն վերջինիս պատրաստակամության, ի հետևումն որի 1754 թ. մարտի 21-ին կայացած բարձրագույն հրամանով առաջադրվում է. «Грузинского гусарского полку капитана князя Отара Томанова, для поручаемого ему от той коллегии секретного разведывания и примечания, отпустить в Грузию на два года, а для скрытности сего намерения дать ему из военной коллегии паспорт в такой силе, что он по желанию своему для исправления домашних нужд в отечество его отпущен. А

\* Ուղում է ասել, որ հայադավան է — Լ. Մ.-Բ.:

в небытность его, остающейся здесь, в России, жене его с детьми на пропитание давать из войсковой казны обыкновенное жалование с рационами и порциями, сколько он по своему чину получает“.

Հաղորդելով մարտի 21-ին կայացած բարձրագույն հրամանի մասին Օթար Թումանովին, արտաքին գործերի պետական կոլեգիան հանձնում է նրան 7 կետից բաղկացած մի ընդարձակ հրահանգ, ուր սկզբում կարդում ենք. «Выписка, для объезда отправляющемуся в Грузию грузинского гусарского полку капитану князю Отару Туманову, чего ему тамо наблюдать надлежит и которая имеет ему служить вместо инструкции... по высочайшему Ея И. В. соизвелению повелено вас в Грузию на два года отпустить под претентом исправления домашних ваших нужд, а в самом деле поручить вам прилежное разведание о всем нижеследующем...“.

Գալով Տփղիս, Օթար Թումանովը սխառմատիկ կերպով գեկուցագրեր է գրում վրացերեն լեզվով և ուղարկում Պետերբուրգ՝ արտաքին գործերի պետական կոլեգիայի հասցեով և իր ստորագրութամբ՝ «կապիտան կնյազ Օթար Թումանով» կամ «կապիտան կնյազ Օթար Թումանովս եմ ստորագրել»:

Մեզ հասել է 9 գեկուցագիր Օթար Թումանովի գրած՝ սկսած 1754 թ. հուլիսի 17-ից մինչև 1756 թ. հուլիսի 13-ը, որոնց մեջ (մեկից զատ) բավականաչափ տեղեկություններ կան Հայաստանի և հայերի մասին: Այս գեկուցագրերն են՝ 1754 թ. հուլիսի 17 և 24, դեկտեմբերի 1, 1755 թ. փետրվարի 7, մարտի 21, նոյեմբերի 20, 1756 թ. մարտի 23, մայիսի 22 և հուլիսի 13-ի թվահամարով, գրված Տփղիսից:

Չեկուցագրերը համառոտ ներածականով հանդերձ, ուր տրված են կարևոր տեղեկություններ Օթար Թումանովի մասին, հրատարակել է պրոֆ. Յասե Յինցաձեն հատուկ հոդվածում՝ «Կապիտան Օթար Թումանովի գեկուցագրերը Վրաստանից (1754—1756)», վրացերեն, — ՎՊ. պետ. համալսարանի Աշխատություններ», հ. XXVII—B, 1946, էջ 1—32\*:

\* Հմտ. նույն Յ. Յինցաձեի մյուս հոդվածը՝ «Մի քանի տեղեկություն ուսաց ինքնակալության հետախուզությունների և նրա գործակալների գործունեության մասին 18-րդ դարի երկրորդ կեսի Վրաստանում», վրացերեն, — Քուլթայի Մանկավարժական ինստիտուտի Աշխատություններ», հ. II, Քուլթայի, 1941, էջ 85—86:

## ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐԻՑ

1

1754 թ. հուլիսի 17

... Հափլանի որդոց Իովաներն և Ջալին Աղատ-խանն<sup>1</sup> է ուղարկել այստեղ: Նրանք եկել են Նրևան: Այնտեղից մի թարաքյամա է ուղարկել...

2

1754 թ. դեկտեմբերի 1

... Լեզգիները... սեպտեմբերի 6-ին Մծղ'նեթից<sup>2</sup> դարձյալ 3 գերի տարան... Հոկտեմբերի 20-ին Մծղ'նեթում դարձյալ սպանել են կամ գերել 4 հոգի:...

... Անցյալ տարիները էրեկլե թագավորը Նրևանում է եղել ավղան Աղատ-խանին էրեկլե թագավորը սակավաթիվ զորքով հաղթել է:...

... Հայերը գտնվում էին Սղնախում՝ Գյուլստանի (Կուլխտանի) բերդում: Նրանց գլխավորները մելիք Յուսուֆ (Ուսուֆ) և մելիք Աթամ են կոչվում<sup>3</sup>: Սրանք մինչ 1500 [զինված] մարդ ունին: Այս հայերի վրա հարձակվել է Փանա-խանը, հայերը հաղթել են, Փանա-խանի մարդկանցից 300-ի չափ սպանել են: Այս պատերազմը եղավ 1754 [թվի] օգոստոսի 26-ին:...

1754 [թվի] հուլիսի 28-ին լեզգիները հարձակվել են սաճկական հողերի վրա, ... քրիստոնյաներին էլ են տարել գերի, օգնություն չեն ցույց տվել ոչ Ախալցխի փաշան և ոչ էլ Հարսի [փաշան]:...

3

1755 թ. փետրվարի 7

... Պարսկաստանում (Փերսիա) իսկապես խառնակություն է: Քարթլիից գնացած մի քանի ցեղերը դարձյալ մտադիր են Թորչալու-Նրևանի [երկր]ից Քարթլի վերադառնալ: Այս պատճառով...

առվ Պարսկաստանում (Փերսիա) խառնակութունն է: 1755 [թվի] հունվարին Ախալցխիսեից լուր եկավ, որ խոնթքարը՝ մեռել է և նրա տեղ ուրիշին են նստացրել: Նախկին խոնթքարը Ախալցխիսեի փառային փոխել էր և Ախալցխիսեի փառայութունը տվել նրա եղբորը, որը Ափուղ-Մա[հ]մադ-փառա է կոչվում: Իսկ այն՝ նախկին փառային Վանի փառայութունն էր հանձնել: Ղարսից ևս լուր հասավ, իբր թե նոր խոնթքարից՝ 2 փարման է եկել՝ մեկը՝ խոնթքար դառնալու մասին, մյուսը՝ էգիչարի ոռճիկի մասին: ... Սուլթանս լսեցինք, իբր թե այս աշնանը Ա[ր]զրուսում ժանտախտ է եղել, որը այժմ ձմռանը չքացել է: Ղարսում, Ախալցխիսեում, Պարսկաստանում (Փերսիա), Քարթլիում ողջ և առողջ են: ...

4

1755 թ. մարտի 21

1755 [թվի] փետրվարի 18-ին Երևանից լուր ստացվեց, որ թուրքերը պատրաստվում են հարձակվելու, խոնթքարը հրամայել է հարձակում կատարել, նույնիսկ երկյուղ են կրում՝ որևէ տեղից [թուրքերը] այս կողմը չչարժվեն: Դարձյալ՝ մարտի 7-ին Թոխաթից Տփղիս քաղաք եկավ հայ Հարություն Դասպարյանը (Արութինա Գասպարաշվիլի), որը Թոխաթից դուրս էր եկել դեկտեմբերի 27-ին. սա ասաց, թե Թոխաթում լուր ստացվեց Կոստանդնուպոլսից (Կոստանդնուպոլի), որ ոռուսաց դեսպանին և Ֆրանսիայի դեսպանին արձակել են: ...

Սղնախի հայերը մեկուսացած են իրենց տեղում, ներկայումս Փանա-խանին և թուրքերին չեն ծառայում: Կարծում եմ՝ Քարթլիի թագավորը և Կախեթի թագավորը, որքան էլ սրանք ի վիճակի են, [լավ են] տրամադրված դեպի քրիստոնյաները: ...

5

1755 թ. նոյեմբերի 20

... Այստեղ լուր հասավ, որ թուրքական (թուրեժկիս) հողում՝ Բայազետում և Ղարսում ժանտախտ է սկսվել: ... Ասում են, որ լեզգիներն ավերում են թուրքական հողը, ավերել են Գուկիան (Կոկիա) և Բարալեթը. քրիստոնյաներին թալանում են և գերի տանում, նույնպես և Ղարսում ասպատակում: ... Ճիշտ է՝ որ Բայազետում և Ղարսում ժանտախտ է սկսվել: ...

... Սղնախի հայոց մեկիք Յուսուֆը (Ուսուփը) այստեղ թագավորների մոտ եկավ իր ընտանիքով՝ 60-ի չափ մարդկանց ուղեկցութամբ: Սղնախը դատարկվել է: Իրոք հացի թանկութունն է եղել [այնտեղ]... Գյուղացի-ռայաթը Փանա-[խան]ին է մնացել: Մեկիք Աղամն իր ընտանիքը Գյանջա է ուղարկել, ինքը դեռևս իր բերդումն է գտնվում. սակայն ներկայումս ոչ մի տեղից օգնություն չի երևում:

6

1756 թ. մարտի 23

... Քաղաք Տփղիսում գտնվում էին [լատինական] պատեր, որոնք 8 եկեղեցի ունեին... սրանք դավթել էին մի քանի հայոց, և մի քիչ էլ վրացական եկեղեցիներ: Ժողովրդի սիրտը՝ Քարթլիի կաթողիկոս Անտոնը՝, որը Թեյմուրազ թագավորի քոջորդին է, պատերին երես էր տվել: Վրաստանի ժողովուրդը ասում էր, թե կաթողիկոսը Հոռմի դավանությանն է հարել, որը արդարացի դուրս եկավ: ... 1755 թ. դեկտեմբերի 16-ին էրեկլե թագավորը Կախեթից ժամանեց [Տփղիս], և նույն իսկ գիշերը ժողովեցան եպիսկոպոսները, վարդապետները, քահանայական դասը, նաև իշխանները: ... Անտոնը ... խոստովանեց հունարավանությունից հեռանալը և Հոռմի դավանությանն հարելը: Եվ նույն պահին բերին կաթողիկոսի մեծավորներին՝ հինգ քահանաներին և մի հայ տերտերին՝, որոնք նույնպես խոստովանեցին Հոռմի դավանության հարելը: Այս Անտոնին նույն ժամին կաթողիկոսությունից հեռացրին և արգելեցին պատարագել, հինգ քահանային և մի հայ տերտերին ևս մյուս օրը կարգալույծ արին: ...

1756 թ. հունվարի 7-ին Երևանից մարդ եկավ և ասաց, որ Ազատ-խանը՝ պարտվել է, իսկ ոմանք ասում էին, որ սպանվել է: Երևանի ժողովուրդը տարակուսանքի մեջ է: Առաջին լուրը հենց որ իմացա, այն դեռ ևս ոչ ոք չէր ստացել: Պարսկաստանում (Փերսիա) իրոք խառնակութուն է: Դարձյալ հայերից իմացա, որ թուրքական (թուրեժկի) երկրում խոնթքարը Չաթաչի Արզուլա-փառային սարասքյար է նշանակել: ...

... Բայազետում, Ղարսում, Ախալցխիսեում ժանտախտ է, Քարթլիում խաղաղություն է տիրում, ոչ ժանտախտ կա և ոչ էլ որևէ այլ հիվանդություն, բոլորը ողջ և առողջ են: ...



1756 թվի հունվարի 12-ին քաղաքից ելա, փետրվարի 8-ին հասա Ղազախ։...

Հայոց ծայրագույն (նախամեծար) պատրիարքը, որ էջմիածնուհան է նստում, որին թուրքերը Ուչքիլիսա են կոչում, նոյեմբերի 11-ին մեռավ։...

Վրաստանի թագավոր Վաստանգի որդին, որը աղախնից էր ծնված և Պա[ա]տա էր կոչվում և որը Ռուսաստանում էր, այժմ Գյանջա է անցել և Շա[հ]վերդ-խանի մոտ է գտնվում։... Նրա Գյանջա հասնելու պահին Քարթլիի հայերին Շա[հ]վերդ-խանը կալանավորել է։...

7

1756 թ. մայիսի 22

[Հիշվում են] Ղազախի խանությունը և Բորչալուի խանությունը։...

8

1756 թ. հուլիսի 13

Քարթլիի թագավորին և Կախեթի թագավորին [ամենա]-խոնարհ զեկուցում կապիտան կնյազ Օթար Թումանովից։ Ապա զեկուցում եմ, և դուք ևս տեղյակ եք, ... իմ կալվածքը իմ փեսա Աշխարհ-բեկին<sup>10</sup> էր հանձնված։...

Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Ազատ-խան, 1747—1761 թթ.։

<sup>2</sup> Մծղ'նեթի նույն Մղ'նեթի գյուղն է Բորչալուում, որի անունը մենք մծղնեթյան աղանդի և աղանդավորների via armeniaca Վրաստան անցնելու փաստի հետ ենք կապում։ Սրա մասին մանրամասն տե՛ս Լ. Մելիքյան-Բեկ, Նոր նյութեր թոնդրակեցիների մասին, II. Մծղնեթ-թոնդրակեցոց շարժման արձագանքները Վրաստանում, — «Արշավ» 1940 թ., № 2, էջ 52—54։ Նույնի, Հայոց հին գրականության պատմությունը, վրացերեն, Քր. 1941, էջ 107։

<sup>3</sup> Հմմտ. Բաֆֆի, Խամսայի մեղիքությունները. Թիֆլիս, 1882, էջ 78—102, մանավանդ 90, 102։

<sup>4</sup> Խոսքը Մահմուտ Ա Ղազիի (1730—1754) մասին է։

<sup>5</sup> Խոսքը Օսման Գ-ի (1754—1757) մասին է։

<sup>6</sup> Անտոն Վրաց կաթողիկոսը 1744—1755, 1762—1788 թթ. Հմմտ. այս աշխատության Ե գլուխը։

<sup>7</sup> Հավանական է, Պետրոս Թիֆլիզեցու մասին լինի խոսքը։

<sup>8</sup> Հմմտ. 1 ծանոթ.։

<sup>9</sup> Աղեքսանդր Բ Բյուզանդացին (1753—1755)։

<sup>10</sup> Այս Աշխարհբեկին չպիտի շփոթել մեղիք Աշխարհբեկի հետ, որը Կախաղանի մատնվեց 1734 թվին։

է

Տ Ի Մ Ո Յ Ե Գ Ա Ր Ա Շ Վ Ի Ի Ի

«ԱՅՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԱՆՑ ՍՐԲԱՏԵՂԵՐԻ»  
(1754—1757), «ԱՔՑԱՆ» (?)

Տիմոթե Գարաշվիլին XVIII դարի Վրաց գրականության ահանավոր դեմքերից մեկն է՝ Անտոն I կաթողիկոսի կողքին ունրանից հետո, իբրև վրացական աստվածաբանական մտքի ներկայացուցիչ:

Տիմոթեի ծննդյան թվականը հայտնի չէ: Գիտենք միայն, որ նա եղել է Բեսարիոն կաթողիկոսի աշակերտը, մինչ 1738 թ. եղել է Գութայիսի եպիսկոպոս և մետրապոլիտ, հետագայում Քարթլիի արքեպիսկոպոս: 2 անգամ ճանապարհորդել է Ռուսաստան. նախ՝ 1738 թվին Իմերեթի թագավոր Ալեքսանդրի հանձնարարությամբ, իբրև դեսպան՝ կայսրուհի Աննա Իվանովնայի մոտ, և Թևոսից է այնտեղ մի քանի տարի (սրանցից 2 տարի ուսուցաց Սինդոլում աշխատանք տանելով). իսկ երկրորդ անգամ 1756 թվին՝ Անտոն I-ի գահընկեցութունից հետո: Իսկ մինչ այդ նա շրջել էր արևելյան կողմանց սրբատեղերը, որ և նկարագրել է առանձին գրքով: Վախճանվել է ու թաղվել Ասարախանում 1764 թվին:

Տիմոթեի գրչին պատկանում է առնվազն 2 երկասիրություն: Մեկն է «Այց (բառացի՝ Տեսություն) արևելյան կողմանց սրբատեղերի», որ լույս է բնծայվել Պլատոն Իոսելիանու խմբագրությամբ Թբիլիսիում 1852 թ., իսկ մինչ այդ մի մասը այդ «Այց»-ից հրատարակվել է Գ. Չուբրինովի՝ Վրաց գրականության «Ծաղկաքաղ»-ում (ա. հատոր, ՍԲՊ, 1846, էջ 137—160): Այստեղ հիմնականում տրված է Աթոնի լեռան վանքերի և հունական այլ մենաստանների ու անապատների նկարագրությունը, որոնց նվիրված է ընդարձակ ներածականն ու սկզբնական 30 գլուխները, ապա և ճանապարհորդությունը Կ. Պոլսից մինչ Երուսաղեմ, և Երուսաղեմի սրբավայրերի տեսությունը, ուր տեղ-տեղ խոսվում է և հայերի մասին: Ինչ վերաբերում է

երկրորդ երկասիրությանը, դա՛ «Աքցան» կամ «Ունեղիք» (Մարծուխի) վերնագիր կրողն է. դա զուտ դավանաբանական մի գործ է, որ ուղղված է օտար դավանությունների և, ի միջի այլոց, միաբնակների դեմ, և որի մշակման պրոցեսում հեղինակը ձեռքի տակ է ունեցել XVIII դարի ընթացքում քանիցս հրատարակված ներսես Կլայեցու-Շնորհալու «Յիսուս Որդի»-ն (Վենետիկ 1643, Ամստերդամ 1660, Վենետիկ 1660, 1686, Մարսել 1702, Կ. Պոլս 1724, 1746): Այս վերջինը, այսինքն «Աքցան» կամ «Ունեղիք»-ը, մեզ հասել է նախկին Վրաց մեջ գրագիտություն տարածող ընկերության (այժմ Վրաստանի պետ. թանգարանում) հավաքածուի №№ 118 և 120 գրչագրերում (մա նրամասնությունները տե՛ս Մ. М е л и к с е т - Б е к о в, К биографии Тимофея Габашвили Кутатели, на груз. и русск. яз., — «Сообщения Груз. Филнала Академии наук СССР», т. 1, № 8, 1940 г., стр. 637—640. նույնի՝ К биографии сподвижника Исраэля Ори — Минаса вардапета, — «Известия Академии наук Армянской ССР», обществ. науки, 1946, № 1, стр. 78, 80).

«ԱՅՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԱՆՑ ՍՐԲԱՏԵՂԵՐԻ»-ԻՑ

[ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԱՆՑ ՍՐԲԱՏԵՂԵՐՈՒՄ]

[Նեո-Կեսարիայից] եկանք՝ հասանք Կոմանա՝ Հայքի Կոկիսոն (Կուկուսը), ուր տեսանք մեր սուրբ հայր Հովհան Ոսկերեանի գերեզմանը, որ աքսորված էր այստեղ ու հենց այստեղ էլ վախճանվեց<sup>1</sup>. և սրանից շատ հեռու չէ Հայքի Կոկիսոն (Կուկուս) մեծ քաղաքը, որ այժմ թուրքերը Թոխաթ են կոչում...

[Կ. Պոլսից] նավով անցա կաթողիկոսների եկեղեցին... [հայերն] ինձ մոտեցան և ասում էին, որ ֆրանկներն ու հայերը կնունք չգիտեն<sup>2</sup>: Պետք ունին կրկին մկրտության, և մենք սրա դեմ ելանք...

[Երուսաղեմի սրբավայրերը շրջելուց] հետո գնացինք հայոց վանքը և նրա վայելուչ տեսքը մեզ ապշեցրեց, քանի որ այսպիսի փառավոր տաճար և ոչ էլ այդպիսի զարդարանք երբևէ չեմ տեսել<sup>3</sup>: Սա՛ այն վանքն է, որ կառուցեց Գիորգի [III] թագավորը<sup>4</sup>, քանի որ Վրաստանի թագավորների ուժեղ [զարկող] թուրք բարձրացնել տվեց նրանց (քրիստոնյաների) ձայնը և դերի բնկած Քրիստոսի գերեզմանը պարսիկների ու տաճրիկ-

ների ձևից խլեցին, աղատեցին, տիրեցին, և այսքան սրբատեղեր ու վանքեր կառուցին հորվո փրկութեան համար...

...Ահա մոտեցան Ծաղկազարդի և Ջատիկի հանդիսավոր օրերը... [Քրիստոսի գերեզմանի տաճարում] լսվում էր լատինացի օրգանի ուժգին ձայնը, և հայոց երգիչները ներգաշնակ ձայները քաղցր ձայնակցում էին [նրանց], նույնպես և հալոբիկները, ասորիները, հարաշները՝ համաձայն նրանց ծիսի, և հունաց երգեցիկ խմբի [մասնակից] երգիչներն ևս ներգաշնակ երգում էին...

Ծ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Հովհան Ոսկերեքանի վարքից հայտնի է (Joannis Chrysostomi archiepiscopi Constantinopolitani Opera omnia quae exstant, t. XIII. Venetiis 1741, p. 37), որ դահրնկեցութունից հետո Կ. Պոլսից դեպի աքսորավայրը (Պիտիուս, այժմյան Պիցունդա-Ֆիեփինթան, Արխադիայում) ուղեվորվելիս և Փոքր Ասիայով անցնելիս՝ Հովհան Ոսկերեքանը կանգ է առել Փոքր Հայքի Կոկկուս կամ Կոկկուս (հայերեն՝ Կոկիսոն) քաղաքում, ուր հիվանդացել է ու վախճանվել 401 թվին: Կոկկուս-Կոկկուս քաղաքում եղած պահին Ոսկերեքանին վերադրում են Փրիգոր Լուսավորչի հիշատակին նվիրված ներբողյանի հորինումը և արտասանումը՝ իբրև ճառի, որ մեզ հասել է 1141 թվի հայերեն թարգմանությամբ «ի յունականէ... ի ձեռն Արրահամու Ղրամատիկոսի, ի հին և յեղծ օրինակաց»: «Կոկիսոն Հայոց»-ը հիշված է ներբողյանի վերնագրում: «Երանելւոյն [սրբոյն] Յովհաննու Ոսկերեքանի հաստանքնուպօլսի եպիսկոպոսապետի՝ Ներբողեան ասացեալ յաղագս վարուց և նահատակութեան սրբոյն Փրիգորի Հայոց Մեծոց հայրապետի ի Կոկիսոն Հայոց մի՞նչև յազտորանս էր, ի խնդրոյ հայազին ուրումն եպիսկոպոսի և վարդապետի համազգևոյ նորին Դիոսկորոս անուն կոչեցելոյ և այլիս յօգնախումբ բաղմութեան, որք ժողովեալ էին յաւուր յիշատակի մեծահոշակ տօնի նորին սուրբ Լուսաւորչին արեւելեան աշխարհի» (Ներբողեանք ասացեալ այլն աստուծոյ Ոհան Ոսկերեքան ապաշխարութեան վարդապետն ի վերայ սրբոյն Փրիգորի Լուսաւորչին մերոյ, Երուսաղէմ 1734, «Սոփերք Հայկականք», IV, 1853, էջ 1: Երանելւոյն Յովհաննու Ոսկերեքանի Կոստանքնուպօլսի եպիսկոպոսապետի Ներբողեան ասացեալ յաղագս վարուց և նահատակութեան սրբոյն Փրիգորի Հայոց Մեծոց հայրապետի, հրատարակեալ հանգերձ լատին թարգմանութեամբ, Վենետիկ 1878: Հմմտ. նաև՝ Ս. Меликсет-Беков, Древнейшая Пицунда у Понта Евксинского, — «Записки Одесского О-ва Ист. и Древностей», т. XXXII, Одесса 1914, стр. 7—8 = «Записки Кавк. отд. Рус. Геогр. О-ва», кн. XXIX, вып. 4, Тифлис, 1916, стр. 64—65. Նույնի՝ Грузинская версия апокрифической гомилии о Григории Парфянском, приписываемой Иоанну Златоусту, վրացերեն՝ ուղեբեան ամփոփումով, — «Литературные Разыскания», II, 1944, էջ 39, 40, 42, 60.

2 Անհասկանալի է, թե որ կնունքի մասին է խոսքը (կամ գուցե «կոն-Փիրմացիայի»):

3 Սոսքը Հակոբյանց պատրիարքանիստ մայրավանքի տաճարի մասին է, որի լուսանկարը տե՛ս Ն ո ր ա յ ր Ե պ ի ս կ ո պ ո ս Պ ող ա ր յ ա ն. Համառոտ ակնարկ հայ Երուսաղեմի վրա, «Էջմիածին», 1951 թ. ապրիլ—հունիս, էջ 79,

4 Այսինքն՝ Փրիգորի III Վրաստանի թագավորը (Թամարի հայրը): 1156—1184 թթ.:

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐՐ 1739—1758 ԹԹ.]

Ը

Պ Ա Պ Ո Ւ Ն Ա Օ Ր Բ Ե Լ Ի Ա Ն Ի

«Ք Ա Ր Թ Լ Ի Ի Ա Ն Ց Ք Ե Ր Ը» (1759)

Պապունա Օրբելիանին հեղինակ է բավական ընդարձակ պատմական երկասիրության, որին ինքը «Քարթլիի անցքեր» (Ամբասիի Քարթլիսանի) է կոչում. մինչդեռ այս երկասիրությունը 1773 թվին արտագրող՝ Ավետյաց եկեղեցու ավագերեցի որդի Դավիթն «Համառոտ Քարթլիս Ցխովրերա» է անվանում: Այս երկը ներկայացնում է իրենից շարունակություն Սելանիա Չխեիձեի «Թագավորների պատմության» (տևս այս աշխատության ր. գլուխը)՝ սկսած 1739 թվից և մինչև 1758 թիվը: Իրրև Վրաց արքունիքին մոտիկ կանգնած անձնավորություն և բազմաթիվ ռազմական գործողությունների մասնակից, հեղինակն իրազեկ է եղել պատմական բոլոր անցքերին. ուստի և նրա գրվածքն ականատեսի գրչից ելած ժամանակագրության տպավորություն է թողնում (հաճախ հեղինակը իրեն էլ է հիշում):

Պապունա Օրբելիանիի երկասիրությունը հրատարակված է պրոֆ. Դ. Չուբինովի լույս ընծայած «Քարթլիս-Ցխովրերա»-ի II մասում, ՍՊԲ. 1854, էջ 343—474, նաև արտատպված է Զ. Ճիճինաձեի հրատարակած «Վրաստանի կյանք» (Մաքարթվելոս Ցխովրերա) գրքում, Թբ. 1913, էջ 53—240: Նույնը կա և Ֆրանսերեն թարգմանությամբ ակադ. Մ. Բրոսսեի՝ M. Brosset, Histoire de la Géorgie, II Partie, II<sup>e</sup> livraison, SPB, 1857, pp. 55—202.

Հեղինակի ու նրա երկի մասին տևս Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականությունը V—XVIII դդ., վրացերեն, ա. տպ., Թբ. 1916, էջ 327—335, ր. տպ. Թբ. 1945, էջ 368—375:

Քաղվածքների թարգմանությունները տալիս ենք համաձայն Դ. Չուբինովի հրատարակության:

427 [=1739] թ. ...Լեզգիներն ավերեցին Սոմխիթը և մոտեցան Դմանխի բերդին...

429 [=1741] թ. ...Իմամ-ղ'ուլի խանը<sup>1</sup> Քայխուրո Օրբելիանուն շնորհեց վեքիլություն, իսկ Սոմխիթ-Սարարաթաշվիլոյի գորքը նրա որդի Ռեվազին հանձնեց...

430 [=1742] թ. ...Արդուլա-բեկ արքայազնը<sup>2</sup> ուղևորվեց [Պարսկաստան]... և նրա հետ էր գորապետ (սարգալ) և դիվանապետ (մդիվան-բեկ) Քայխուրո Օրբելիանին, նաև Սոմխիթ-Սարարաթաշվիլոյի ավագանիները...

Իմամ-ղ'ուլի-խանի շուրջը համախմբվեց Երևանի և Գյանջայի գորքը...

...[Պարսից շահն] երեք հազար թուման պակեցրեց երկրին, վրացու հարկը զիջեց, իսկ հային . . . կրկին ծանրաբեռնեց:

431 [=1743] թ. ...Քարթլիի խանը, Երևանի խանը և Դոնրուլի (sic) խանը մեծ զորքով գնացին [Պարսից շահին օգնության]...

Հրաման հասավ, և Քարթլիի խանությունը Խոջա-խանից խլվեց, և նա [Պարսից] արքունիքը կանչվեց: Քերիմ-խանը<sup>3</sup>, որ երևելի մարդ էր, վարմունքով արքայի նման, ...և Երևանի ու Դոնրուլի (sic) խաներն ևս կանչվել էին [արքունիք]...

Քարթլին տրվեց Ալիխանին (Ալիա-խանին sic), որը ծագումով Խորասանցի էր և որը մի ձմեռ մնացել էր քաղաք [Տիդլիս]ում. [նրան] տրվեց Կախեթում գտնվող ավանական գորքը և Ղազախ-Բորչալուն ու Քարթլիի գորքը...

Չորապետ (սարգալ) Քայխուրոյի գորքով ուղարկեցին Սոմխիթ-Սարարաթաշվիլո, ասելով՝ «Դու քո կողմերն (երկրներն) ամրացրու»: Չորքն եկավ և՛ բաժանվելով՝ Սոմխիթ-Սարարաթաշվիլոյի բերդերը մտավ: ...Չորքն անցավ Դմանխի ձորը՝ հասան Մանասկերտ, այրերն ամրացրած էին...:

...Լեզգիները հարձակվեցին Սանահնի վրա և այն երկիրն ամբողջապես փխսեցին, տարան անթիվ գերիներ: Չորապետ (սարգալ) Քայխուրոն Քվեշիի բերդում էր և Լոռվա խանն էլ այնտեղ էր: Հենց որ այս իմացան, իսկույն և եթ ելան, գեմ առ դեմ դնացին, կոտորեցին լեզգիներին և՛ ինչ որ վերջինները տանում էին՝ ձգել տվին...:

Լեզգիները մեծ դորք դուրս եկավ... և Լոռվա երկրին [կըր-  
կին] զնասեցին: Նրանց հետամուտ եղավ [Հ]աջի-խանը: Սակայն  
լեզգիները փախան Ջավախեթ...:

...Այդ պահին սարասքյարն եկել էր Ղարսի երկիրը: Այն-  
տեղից նա քշեց փաշային... [Ուռուճները] հարձակվեցին Ղազախի  
երկրի վրա, շատ գերիներ և տավար[-ոչխար] տարան, պտտեցին  
Սոմխիթի շուրջը, զվլրաշների սակավաթիվ գորքը դուրս դնաց,  
Սոմխիթ-Սարաբաթասչվիլոյի գորքը հանգիպեց Մարթիշի (sic)  
կամրջի վրա, նրանց հոռու առաջ գեցեցին, հետո մեջը խրվե-  
ցին և առածո պատիժը հասցրին, թողնել տվին տավար[-ոչ-  
խարը], կոտորեցին ուռուճներին, սրանք հաղթող վերադարձան  
իսկ ուռուճները պարտված հասան Ղարս...:

132 [= 1744] թ. ...Ղ'աննի որդիներից մեկը դարձյալ երևաց  
ուռուճների երկրում, խոնթքարը տվեց գորք և միջոցներ, սա-  
րասքյար[ի հետ], և եկան Ղարսի երկիրը...:

...Նորահայտ շահագրեհ<sup>4</sup> չկարողացավ մնալ այն երկրում,  
մոտ հարյուր մարդկանցով գողունի կերպով եկավ, ուզեց Ամի-  
լախվարի մոտ գնալ և այնտեղից անցնել ուռուճների Ղարսը,  
մի գուցե Ղ'աննի որդուն հայտաբերեն, ասելով՝ «Իմ եղբայրն է  
նա»...:

...Ղ'անը հրամայել էր. «Այդ շահագրեհի աչքերը հանեք, և  
Ղարսում որ եղբայր ունի, նրա մոտ ուղարկե՛ք և ես երկուսին  
միասին կտեսնեմ»...:

...Լեզգիների դորքն եկավ և հարձակվեց Սոմխիթի վրա,  
մեկիքից կալվածքը խլեցին...:

...Թեյմուրազ թագավորը<sup>5</sup>... կարգի բերեց Քարթլիի և Ղա-  
զախ-Բորչալուի գրուճյունը...:

Բոլոր իշխանները՝ տանելով Թեյմուրազ թագավորի հայ-  
ցազիրը (արզա)՝ ժողովեցան [Պարսից] արքայի մոտ Նախիջևա-  
նում<sup>6</sup>...:

[Պարսից] գորքը, որին առաջնորդում էր Ֆրիդոն-բեկը,  
[Տիգրիսից] անցավ Լոռի և միացավ Երևանյան երկրում արքային,  
Ալի-խանն ևս գնաց Շամշադիլ (Սամշադիլո) Ֆաթալի-խանի  
մոտ...:

...Թեյմուրազ թագավորը... ուղևորվեց Ղազախ: Ֆաթալի-  
խանն այնտեղ էր կանգնել, լեզգիներն էլ իջել ու մոտեցել էին  
Կուրին. խաները հավաքվեցին և հետամուտ եղան լեզգիներին...:

Ֆաթալի-խանը կրկին վերադարձավ Ղազախ, իսկ Թեյմուրազ  
թագավորը ժամանեց Տիգրիս քաղաքը...:

...Թեյմուրազ տեր-[թագավոր]ը... շնորհեց Դեմետրե Օրբե-  
լիանուն... Քարթլիի և Ղազախ-Բորչալուի մանդատուրթուխու-  
ցեսությունը...:

[Վրաց] արշավախումբն ավերեց Չլքըրը (Չիլդուրի) և Ախալ-  
ցիխեից ներքև... Ղ'անն շահան-շահը (շանշեն) գտնվում էր Ղար-  
սի բերդում, և օր առօր տեղի ունեցող սաստիկ սպառնալից, և  
զվլրաշները կոտորում էին ուռուճներին, ինչպես կատունների:  
Ղվլրաշների արշավախումբը Ղարսից գնում է և ավերում Ա[ր]-  
ղըրումի հայկույս կողմը և գալիս է անթիվ տավար[-ոչխար]ով:  
Ջուրն այնպես կտրեցին, որ բերդում գտնվողները մի շալակ  
(փալա) ջուրը մի գրամով չէին կարողանում ճարել. ուռուճ-  
ները նեղ սեղոն էին բնկել: [Պարսից] արքան ապսպրել էր քա-  
ղաք [Տիգրիս]ից չորս հարյուր հոգի աշխատավոր, որոնց առաջ-  
նորդեց քաղաք [Տիգրիս]ի Մեկիք աղան, և հասան Ղարս, մի  
ամիս աշխատեցին ու ետ վերադարձրին: Հազար լեզգի սոճիկով  
ուռուճների մոտ էր գտնվում Ղարսի բերդում, և քանի որ ջուր  
այլևս չգտան, թնդանոթն էլ լսեցրին. և որքան էլ գոռ էին  
անում, լեզգիները չգիմացան ու փախան՝ ետ եկան: Արքան  
հենց որ լսեց այս, գորք ուղարկեց ետևից, բայց ոչ մի սեղ  
նրանց (լեզգիներին) չհասան. զվլրաշները վերադարձան, ավե-  
րեցին Ախալցիխեի երկիրը և գրոհ տվին Ղարսին...:

...Ալի-խանը Ղազախում և Կախեթի տերը Կախեթումն էին  
գտնվում...:

[Կախեթի] բառուն<sup>7</sup> ուղևորվեց Դմանիս. ուղևեցում էին  
Արդուլա-բեկ արքայազնը, Լուվա սուլթան Մա[ն]մադ խանը և  
վրացիները: Ղանն վերադարձավ Ղարսից, ձմեռը հասավ, գորքը  
ցրտին չգիմացավ, թողեց բերդը, եկավ ու կանգ առավ Ախալ-  
քալաքում:

...[Կախեթի] տերը Դմանիսից եկավ, [Պարսից] արքային  
միացավ Ջավախեթի երկրում... [ապա] հանվեց Ջավախեթից, ան-  
ցավ Ղախ'ուլիով և իջավ Տաշիր. երկու օր մնաց այնտեղ, թո-  
ղեց Լոռիում Օգրեկի և Բուլուճի գորքը, ինքը հեռացավ ու ան-  
ցավ Սոմխիթով և իջավ Ազջաղ'ալա...:

[Կախեթի] տերն ետ ուղարկեց թագուհուն Ղազախից բազ-  
մաթիվ բնձաներով...:

...[Պարսից] արքան հեռացավ և գորքեր թողեց Ղազախում

և Բորչալուում և հրամայեց. «Ինչ որ Թեյմուրազ-խանը ձեզ հրամայի, հնազանդվեք»: Օգրեկի և Բուլուճի զորքը, որ կանգնած էր Լոռիում, գնաց և ավերեց Չլբըրի (Չիլբուրի) երկիրն. շատ տավար [-ոչխար] ու գերի բերին...

433 [=1745] Թ... Բուլուճի և Օգրեկի զորքը... ավերեց Ղարսի երկիրը և անթիվ գերիներ ու տավար[-ոչխար] բերեց...

... հասավ [Պարսից] արքայի հրամանը. «Քանի որ Լոռիում Օգրեկի և Բուլուճի զորքերն են կանգնած, թող [ղլլբաշները] իջնեն Դմանիս ու կանգ առնեն այնտեղ»: Իսկույն և եթ տեղահան եղան ու Դմանիսի մոտերքում կանգ առան:

...Հասավ [Պարսից] արքայի հրամանը... և զղլբաշի զորքն արձակեցին և այս զորքից երկու խանին իրենց զորքով Լոռվա արվարձաններում՝ բնակեցրին: Հասավ արքայի հրամանը... [և] Գիվի Ամիլախորին... արքայի մոտ ուղարկեցին Կախեթի տիրոջ մորդալ Սուլոմոնի և Ղազախի սուլթանի հետ միասին:

...Սուլթանը ներկայացրեց [Պարսից] արքային (Քարթլիի) Թագավորի հայցագիրը (արդա): Իսկույն և եթ լսեց Թագավորի խնդիրը և հանձնեց Ամիլախորուն մայարբաշին, որն արքայի մոտիկ ծառան էր, ծագումով Արղութաշվիլի՞:

...[Պարսից] արքան գնացել էր մեծ զորքով ու Երևանում ապսպրել Քարթլիից ամալներին<sup>10</sup>: Գնացին վեքիլը, վեգիրը, մուստաֆան և [Տիդիս] քաղաքի մելիքը: Հրամայեց արվարձաններում զորք կանգնեցնեն: Ճանապարհ գցեցին Լոռվա սուլթանին և Փամբակի շրջակայքում թողին: Նույնպես և Թեվազ Օրբելիանուն է Սումխիթ-Սարարաթաշվիլոյի զորքով ու Ջաալ Օրբելիանուն Դմանիսի ավաններում բնակեցրին: Եկավ սարաքյարը մեծաքանակ զորքով Արփաշայի վրա և կանգ առավ Ալագյազի լեռան ստորոտում: Ղանեն էլ եկավ, կանգ առավ ուղղակի Մուրադ-Թափայի վրա ...Պուոյա լավին, փչացրին Բոլնիսները. ժամանեց [Կախեթի] տերը, ևտից ընկան ու լեզգիների ճանապարհը կտրեցին Ջավախեթում:

Ուռումների և լեզգիների մեծ զորքը հարձակվեց Լոռիի վրա, շատ մարդիկ դերեցին, իսկ քշած տավար[-ոչխար]ի ու անասունների թվին հաշիվ չկար. Լոռվա սուլթանը հետամուտ եղավ ու հետապնդեց նրանց Տաշիրում, շատերին կոտորեց և նույնպես շատերին կենդանի բռնեց, և ինչ որ տանում էին, հրամայեց թողնել:

Ներքևից գուրս ելավ լեզգիների զորքը, որի [պարա]գլուխը

Մաշադ-խանն էր, ծագումով լեզգի. շրջեցին Ղազախը և դնացին Ղարս սարաքյարի մոտ:

[...Իմերեթի] օգնության ուղարկվեց Ղազախի սուլթան Սաֆան-Վերդի-բեկը...

...Լեզգիների զորքը մտավ Սումխիթ-Սարարաթաշվիլոյ...

[Թեյմուրազ Թագավորի օման արարողության ժամանակ, որ տեղի ունեցավ Մյխեթի պատրիարքական տաճարում], նախ [Թագավորին] կացուցին սեղանի մուտքից ցած, և եպիսկոպոսներն աջ ու ձախ կողմից կանգնեցին, նմանապես հայոց [հոգեվորական] դասը և կաթողիկոսները (Փրանկները)՝ ընդհանուր զգեստավորված, և երկյուղածությամբ ունկնդիր էին [ծխակատարությանը]...

Լուր հասավ Իմերեթից, որ Ղազախի սուլթանը և Մաշարելի Իասեն Ալեքսանդրե Թագավորին օգնության հասան իրենց զորքով:

Իմերեթից ուռումները կալանավորած տարան Ղազախի սուլթանին, Մաշարելի Իասեին և Վերին Քարթլիի մի քանի իշխանների աղաներին և Ախալցխեում կալանավորեցին:

Թագավորը մեկնեց Սագուրամո, հանդիպեց լեզգիներին, սրոնք Սումխիթից էին գալիս, բնաջինջ արավ լեզգիներին և ինչ որ տանում էին՝ հրամայեց բոլորը թողնել:

434 [=1746] Թ. ...Ուռումների և լեզգիների զորքը գիշերով անցավ Սումխիթով, որ և անփսաս թողեց...: Ուռումների և լեզգիների զորքը դարձյալ եկավ, ավերեց Փամբակը...

...Սուլթան Օրբելիանու փոքր ջոկատը հարվածեց Արգահանի երկրին և շատ դերիներ ու տավար[-ոչխար] բերեց...

Գնաց Սուլթան Օրբելիանին Սարարաթաշվիլոյի զորքով... և հասավ Ղարսի երկիրը: Քարթլիի զորքից Օսմանյան երկր[ացիք] այնքան վախեցան, որ ամբողջ երկրի մարդիկ բերդերն ու ամրոցներն էին անցել: Ղարսի բերդի մոտ մի ամուր բերդ կար և հնուց տաշած քարով շինած [այնպես], որ այդ բերդի գեղեցկությունն ամեն մի ականատեսին գրավում էր, և որը Ջարիշատի բերդ էր կոչվում: Հենց որ [վրացիները] հասան, զորքն ամբողջապես շրջապատեց [բերդը]. սկսվեց սաստիկ պատերազմ... Գարաշվիլու ճորտ Թամազաշվիլին հասնելուն պես սանդուխթ դրեց և մեն-մենակ ներս մտավ բերդը: Հենց որ իջավ [այնտեղ], երեքին սպանեց և մի քանիսին էլ վիրավորեց, բերդի միջում գտնվող զորականներից խլում էր զենքը ու շարտում գրսի զոր-

քի կողմը: Երբ որ մարտում հոգնեց, սպանվեց: Ապա Սարա-  
րաթաշվիլոյի զորքը մտնեցավ, բոլոր [զորականները] սանդուխք-  
ներ գրին ու բերդի ներսը խուժեցին, գրավեցին բերդը, կոտո-  
րած սարքեցին և անթիվ տավար[-ոչխար] գցեցին իրենց ձեռքը:  
Սուլխան Օրբելիանու առաջնորդությամբ հաղթական զորքն ան-  
ֆուսա Քարթլիի երկիրը վերագարձավ...:

...Բորչալուի զորքը գնաց, ավերեց Ղարսի բերդի հայակույս  
երկիրն և բերեց բազմաթիվ գերիներ ու տավար[-ոչխար]...:

Ուռուճների և լեզգիների զորքը, որ Ախալքալաքումն էր  
կանգնած, արշավանքներ էր կազմակերպում դեպի Քարթլիի եր-  
կիրը: Այստեղից և Քարթլիից արշավելով՝ ավերում են Ախալցի-  
խի երկիրը: Երկու կողմից էլ լինում է դրո՞ն և պատերազմ՝  
ավերվում է ամբողջ երկիրը: Բերդերից և ամրոցներից դուրս  
[ժողովուրդը] ոչ մի տեղ չէր մնում՝ ոչ Ղարսի և ոչ էլ Ախալ-  
ցիխի երկրների մարդ[իկ]...:

...Ղ'աենի մոտ գնացող... ուռուց գետպանին դիմավորելով,  
Վրաց բառոնը՝ Էրեկի [Թագավորը] ուղեկցեց նրան մինչև Ղա-  
պիս...:

...Ախալցիխեով վերագարձավ Ղաղախի սուլթան Սուփնե-  
վերդի-բեկը, որ կալանավորված էր... Տերը շնորհեց նրան խա-  
լաթ... և Ղաղախի սուլթանությունը...:

435 [=1747] թ... Ղաղախի վեքիլը վեքիլ էր Քարթլիում...:

[Պապունա և Ղափլան Օրբելիանները] իրենց տուն ու տե-  
ղով դնացին իրենց ժառանգական Դմանխի բերդը, տեղահան  
արին իրենց կալվածքի [բնակիչներին] ու հավաքեցին բերդի  
մեջը...: Նմանապես տեղահան արին Տաշիրի երկրի [բնակիչնե-  
րին] և մտցրին բերդի մեջը...: Քանի որ զ'աենը Լոռվա խանից  
շատ գանձումներ էր պահանջել արծաթով և խանը Լոռուց հե-  
ռացել էր, երկիրը մնացել էր անտեր. [ուստի և] Լոռվա քեթ-  
խուզներն եկան Դմանխ ու աղերսեցին սրանց. «Մենք միշտ  
Օրբելու որդու և ընտանիքի աջակցությամբ ենք դիմացել և  
այժմ այսպես անտեր ենք մնացել, հողացե՛ք մեր մասին»: Ապա  
Ղափլանը զորքով գնաց ու Լոռվա բերդը մտավ. խաղաղվեց  
Լոռվա երկիրը և նա իր մարդկանց մտցրեց բերդի մեջ, իսկ  
ինքը գնաց Դմանխ...:

[Ագրբեջանի երկրի, քարթվեյների և կախեթցիների՝ զ'աե-  
նից անջատվելուց հետո] Երևանի խանը և այն երկրի երևելի-  
ները հայցագիր (արդ) էին ուղարկել [Թեյմուրազ] տիրոջը. «Քա-

նի որ դուք այդ բանն արել եք, մենք ձեզ կծուտայենք ինչպես  
ճորտեր և մեր զորքն էլ՝ ուր էլ ցանկանաք՝ այնտեղ կուղար-  
կենք»: [Թեյմուրազ] բատոնն էլ սրան համապատասխան պա-  
տասխան գրեց նրանց ու ճանապարհ գցեց [նրանց] մարդուն:  
[Իսկ] երեք ամիս սրանից առաջ սպասալար Ամիր Ասլան-խանն  
եկել էր մեծ զորքով և Երևանումն էր գտնվում, ամեն օր տեղի  
ուներ թնդանոթների ու ուսմբերի հրաձգություն. սակայն ոչ  
մի բանով Երևանի բերդին չհիասեցին: Իսկ Քարթլիի և Կախե-  
թի անջատումով [երևանցիք] ավելի ևս ոգի առան:

Լեզգիների մեծ զորք դուրս եկավ, անցավ Սումխիթով, հար-  
ձակվեց: Ղաղախի և Բայազարի քոչվորները միասին էին կանգ-  
նած, շատ անասուն և գերիներ քչեցին դեպի սարը և Զալա-  
խեթ փոխադրեցին:

...[Թեյմուրազ] բատոնը մեկնեց [քաղաքից], իջավ Լոռվա  
հողում. Լոռվա բերդը Ղափլան Օրբելիանու ձեռին էր. տերը  
խլեց նրանից ու դարձյալ Լոռվա քեթխուզներին հանձնեց և  
Լոռվա սուլթանությունը Քալբի- [Հ]ուսեյն խանի որդի Մուսային  
ավեց:

Արգուլ-բեկ արքայազնը Լոռվա բերդից դուրս հանեց թըն-  
դանոթներ և զինարանը, մտցրեց Սամշվիլդեի բերդը, և վրացի-  
ներն ու կախերը հրաժեշտ տվին Փամբակին ու վերագարձան:  
[Թեյմուրազ] տերը մեկնեց [Տիգրիս], Արգուլ-բեկ արքայազնը  
եկավ Սամշվիլդեի բերդը և սկսեց բերդի ամրացումը:

Երբ որ Թեյմուրազ Թագավորը դեպի Երևանյան հողը մեկ-  
նեց, առաջուց Մա[հ]մադ- [Հ]ուսեյն սուփրաջի ամիր Ասլան-խանին  
ուղարկեց [Պարսից] զորապետի (սարգարի) մոտ, որն Երևանյան  
բերդն էր պաշտպանում: Եվ ամեն օր տեղի ուներ սառտիկ պա-  
տերազմ: Հենց որ իմացավ Թեյմուրազ Թագավորի ժամանումը՝  
[զորապետը] հույժ ուրախացավ և շնորհեց Մա[հ]մադ- [Հ]ուսեյ-  
նին թանկարժեք խալաթ և անհամար արծաթե փող: Ինքը գո-  
րոպետը (սարգարը) ձիու վրա հեծավ և երեք մղոն (աղաջ) ընդ-  
առաջ գնաց, խոնարհությամբ ողջունեց նրան և իր հեծկան ձին  
մատուցեց, քանի որ Երևանի և շրջակա երկրներն անջատվել  
էին [Պարսից արքայից], որն այս զորապետին (սարգալին) ուղար-  
կել էր և [այժմ] աշխատում էր նրան բռնել՝ բոլորովին հույս  
չդնելով Քարթլիի վրա...: [Թեյմուրազ] տերը Երևանով մեկնեց  
գա'ենի մոտ:

...Երբ սպասալար Ամիր-Ասլանը կանգ էր առել Երևանյան.

ընդհանուր գրավելու համար, սրա դեմ թշնամություն սկսեց Սաամ-  
շահը, և այս սպասարարն էլ Երեանից հեռացավ, իսկ Սաամ-շահը  
ոխր հանելու գնաց: Քանի որ այս երկրներում այսպիսի խոտ-  
վություններ տեղի ունեցան, Թեյմուրազ թագավորը դ՛աենի մոտ  
չհասավ...:

Լեզգիների զորքը Սամշվիլցեով անցավ, հարձակվեց Սոմ-  
խիթի մելիքի վրա և ավերեց երկիրը: [Լեզգիները] շատ գերիներ  
ու տավար[ոչխար] հասցրին Սամշվիլցե:

...Ղազախ-բորչալու[եցիք] Արգուլ-բեկի մոտ էին գնում ու  
ծառայում նրան: Էրեկլե թագավորը մեծ զորքով Բորչալուի և Ղա-  
զախի քոչվորներին վստահացրեց...[այսպ] Բորչալուի և Ղազա-  
խի քեթխուղներն եկան Էրեկլե թագավորի մոտ, մատուցին  
նվերներ (փեշքաշ) և խնդրեցին ներումն (փարվան) իրենց հան-  
ցագործություններին...:

Քանի որ Սարարաթաշվիլուն նրա (Էրեկլեի) հետ էր, իսկ  
Սոմխիթը նրան չէր հարել, [Վրաց] զորքին հրամայվեց (արձա-  
կեց դաստուր) [հնազանդեցնելու] այն: [Եվ զորքը] գնաց, արշա-  
վեց Սոմխիթի ձորը, անցավ Հաղբատ-Սանահնույ, ավերեց ու  
գերեց [այն տեղերը] և անթիվ տավար-[ոչխար] բերին Սամշվիլ-  
գեի բերդը: Պապունա, Ղափլան և Սուլխան Օրբելիանիներն  
իրենց՝ Խուլուտ բերդում էի նստած և այնտեղից կառավարում  
իրենց երկիրը (հայրենիքը): սրանց զորքը հարձակվեց Ղարսի  
երկրի վրա, և անթիվ գույք բերին: Այսպես վախացրին [վրա-  
ցիներն] Օսմուր երկրի [բնակիչներին]: Եվ եթե չլինեին ամ-  
բոցներն ու բերդերը, այլուր ոչ մի տեղ չէին գիմանա ջալա-  
խեթցիներն ու զարսեցիները:

Ալիխանը, որը երբեմն խան էր Քարթլիում, սա ևս նագըր-  
շահի մահից հետո սկսեց այս ու այն կողմը հարձակվել ու ավե-  
րումներ կատարել: Երբ որ Թեյմուրազ թագավորը Քարթլիի  
ներքին [մասումն] էր գտնվում և կարծում էր, որ նա ոչ մի  
հակառակորդ այլևս չունի, սա (Ալի-խան) եկավ Ղազախ, ժողո-  
վեց Ղազախի զորքը, իսկ Ղազախի սուլթանի եղբայր Թալի-բեկը  
խոստացավ. «Քարթլիին ես քեզ տիրել կտամ»:

Արգուլ-բեկ արքայազնը ընծաներ (փեշքաշ) ուղարկեց սպա-  
սարարին Աղաջան-Յուզբաշի ձեռով և խնդրեց զորք ու աջակ-  
ցություն: [Սպասարարն] ետ էր ուղարկել Աղաջանին և՛ հույս  
դնելով նրա վրա՝ խոստացել էր աջակցություն ցույց տալ: Փա-  
նա-Յուզբաշին ուղարկեցին, հանդիպումն ունեցան Լոռիում. նախ

Աղաջան-Յուզբաշուն սպանեցին, [իսկ] մյուսներին բոլորին կա-  
լանավորեցին:

Լոռվա սուլթան Մա[հ]մադը, որ Սամշվիլցեումն էր գտնը-  
վում, ստացավ կարգադրություն՝ հանձնել այն (Լոռին) Գյան-  
ջայի իսանին. գնաց Սամշվիլցեից ու հասավ Գյանջա...: Լեզգի-  
ները...միշտ ավերում էին Սոմխիթը և նույնիսկ Դմանխի ձորը  
և ավարը Սամշվիլցե էին տանում:

[Վրացիները] տեղահան արին Ղազախի սուլթան Մուսա-բե-  
կին և քաղաք [Տփղիս]ում պահեցին. նույնպես և Բայդարի և Ղա-  
զախ-Բորչալուի քեթխուղներին հավաքեցին քաղաք:

...[Ալի-շահն] ապսպրել էր Ղազախ-Բորչալուի և քաղաք  
[Տփղիս]ի քեթխուղներին...

...Արգուլ-բեկ արքայազնը գնաց սպասարարի մոտ, ան-  
ցավ Ղազախով: Ղազախն ուրացավ Էրեկլե թագավորին. Ար-  
գուլ-բեկի հետ գնաց Թալի-բեկը Ղազախի քեթխուղներով...:

...Արգուլ-բեկ արքայազնը, Թալի-բեկը և Ղազախի զորքը  
միասին գնացին:

...Ղազախի կողմերը սկսեցին աղաչել Էրեկլե թագավորին  
իրենց հանցանքը ների (շնորհի փարվան), մատուցին նրան անթիվ  
ընծաներ և նա ներեց, նրանց քեթխուղներին հանեց ու բնակեց-  
րեց քաղաքում նրանց հետ, որոնք Ղազախի սուլթանի հետն  
կին գտնվում քաղաքում ընտանիքներով հանդերձ. նույնպես և  
Բորչալուի և Բայդարի քեթխուղներին տեղահան արին և քա-  
ղաքում բնակեցրին:

Ղազախի կողմերն եկավ Զուբեյդալան՝ լեզգիների առաջ-  
նորդը՝ յոթհարյուր հոգով, որոնք շատ տեղեր վստասեցին, դուրս  
հանեցին գերիներ ու ավար և եկան հաշտվեցին Արգուլ-բեկ  
արքայազնի հետ: նրանց բնակեցրին Սամշվիլցեի բերդում ու  
այնտեղից սկսեցին Քարթլիի կողմերին զարկել: Էրեկլե թագա-  
վորն ուղարկեց ինն հազար մարդ վրացիներ և կախեթցիներ,  
որոնք հարձակվեցին Շամշադիլի (Սամշադիլի) վրա, ավերեցին  
այն ու անթիվ ավար բերին: ...Լեզգիների զորքը Սամշվիլցեից  
եյնում՝ ավերում է Սոմխիթի ձորը ու [ավար] բերում Սամշվիլ-  
ցեի բերդը: Նեզվեց Սոմխիթի ձորը, [սոմխիթցիք] չկարացին  
ապրել իրենց տեղերում. Սոմխիթի մելիքն ևս տեղահան եղավ  
իր առն ու տեղով և ձորտերով, նմանապես և Արգուլթասշվիլի-  
ները<sup>11</sup>, բովանդակ Սանահնի ձորը և Հաղբատի ձորը, իջան քա-  
ղաք [Տփղիսը] և քաղաքից միասին գնացին Մուխրան, ուր Մուխ-



րանի տեր Կոստանտինեն նրանց տեղ տվեց ու իր հողում բնակեցրեց: Ամբողջ Սոմխիթում՝ Բոլնիսից և Սամծեվր[իս]ից զատ՝ ոչ մի տեղ այլևս շինություն չկար: Օրբելիանների երկիրն (հայրենիքը) ևս այնպես դատարկվեց, որ Դամանիսի և Փիթարեթից զատ ոչ մի տեղ այլևս շինություն չկար:

...Էրեկլե թագավորի բերած Ղազախի ու Բորչալուի քեթխոսեզներն իրենց ընտանիքներով հանդերձ, Բորչալուի սուլթանը և Բայգարի սուլթանն իրրև պատանդներ մնացին [Տըփ-դիսի] բերդում:...

Ամիլախավարի տերն Ամիրոնդոյին ուղարկեց և ապսպրեց Գորուց [բերել] մեծ թնդանոթը, որ զ'անն Շա[հ]նադիրն<sup>12</sup> Երեվանից էր բերել Քարթլի, և ասում էին. «Երկու հազար հազարանոց լիտր [ծանրություն] ունի»:...

...Ազրբեջանի կողմանց մարդիկ սաստիկ վախեցած, իսկույն և ևթ ընծաներ (փեշքաշ) ուղարկեցին Գյանջայի խանին և Երեվանի խանին Էրեկլե թագավորի համար:...

...Էրեկլե թագավորը զ'աննի մոտ ուղարկեց Սոմխիթի մեղի քին:...

...Արդույա-բեկ արքայագնին էր [պատկանում]... Սոմխիթ-Սարարաթաշվիտն ու Բոլնիսները, Ծինդղ'արոն և այլն:

Էրեկլե թագավորը Սոմխիթ-Սարարաթաշվիտյի զորապետությունը (սարգլորա) Ռեվազ Օրբելիանուն շնորհեց:...

...[Հ]ասան-Միրզա արքայագնը... երեք հարյուր աշխատավոր (նոքար) էր խնդրել նաև Ղազախ-Բորչալուից:...

...Ղազախեցիք շատ երկերեսանություն թույլ տվին իրենց ու զղջացին:...

437 [=1749] թ. ... Թեյմուրազ թագավորը զ'աննի [մոտից] վերադառնալով՝ Թավրիզով անցավ [1749 թ.] մարտի 29-ին... ապա Ղազախ-Բորչալու ժամանեց, ուր նրա ղուլբեկն էր գտնելովում:... Շահ-Սուլթան-Իրբեհիմը Թեյմուրազ [թագավոր]ին այսպիսի հրահանգ էր տվել. «Ինչպես Վրաստանը, նույնպես և Ղազախ-Բորչալուն ծառայեցրու քեզ»:

...[Թեյմուրազին] ընդառաջ գնացին Ղազախի և Բորչալուի սուլթանները, իրենց զորքերով, իրրև ճորտեր դիմավորեցին ու մատուցին ընծաներ: Ժամանելով Ղազախի հողը, բատոնը այստեղից մտավ Բայգար:...

Դադասանում տեղի ունեցավ համաժողով: Լեզգիների զորքերը մեծ [քանակով] հավաքվեցին, այնքան, որ այսչափ զորք

միասին դեռ ևս չէր ժողոված: Ելան. նախ մտադրվեցին իջնել Կախեթ: Թեյմուրազ թագավորը հավաքեց Քարթլիի և Ղազախ-Բորչալուի զորքը և իսկույն և ևթ մեկնեց Կախեթ:...

Երևանի խանը հավատարիմ մարդիկ էր ուղարկել [Թեյմուրազ թագավորի մոտ]՝ խնդրելով օգնություն: Երևացել էր բնիկ երևանցի մի մարդ, որ դավաճանությամբ սպանել էր Շա[հ]-նապր զ'աննին՝ Մա[հ]մադ-խան [անունով]: Սա զորք էր ճարել և Երևանի խանի կզորը կալանավորել, ընտանիքը կողոպտել և Երևանի բերդի դուրսն ամբողջ երկիրը հնազանդեցրել էր իրեն ու պահանջում էր, որպեսզի բերդն ևս նրան զիջեն ընդմիջտ: [Թեյմուրազ և Էրեկլե] բատոնները շատ ցավեցին, որ [Երևանի խաների] ազգակիցն այդպես բռնությամբ գրավել է երկրներ, և հրամայեցին օգնություն հասցնել Երևանին: Լսելով, որ Երևանի խանը վրաց տիրոջն է դիմել օգնություն խընդրելով՝ Մա[հ]մադ-խանը նույն բատոնի մոտ մարդիկ ուղարկեց սպաննալիքով. Վիրավորվելով սրանից՝ Քարթլիի բատոնը և Կախեթի բատոնը մեծ զորքով ուղևորվեցին դեպի Երևան: Երբ նրանք հասան Ղազախ, նրանց մոտ եկավ Գյանջայի խանի մարդը՝ առաջարկելով իր ծառայությունը և նա ևս խնդրում էր օգնություն: Այնտեղ ևս երևացել էր ջավանշիրցի մի մարդ, Ֆանա անունով, որ ժողովել էր զորք և գովում-գջում էր Գյանջա-Ղարաբաղի կողմերում: [Վրաց թագավորի մոտ] եկան նաև Սղնախի մեղիքի որդիք մոտ հարյուր հողով և նրանք ևս խնդրեցին օգնություն Ֆանայի դեմ [կովելու համար]: Բայց, քանի որ [վրացիք] Երևան գնալու էին պատրաստված, այլևս չցրվեցին. սրանց ևս օգնություն խոստացան և ուղևորվեցին դեպի Երևան: Հենց որ իմացվեց զորքի հասնելու մասին, մեծ ուրախություն առաջացավ Երևանի բերդում. մարդիկ ուղարկվեցին դիմավորելու և զեկուցին Մա[հ]մադ-խանի արարքը: Երևանի բերդին մի կայանի չափ որ մոտեցան, Մա[հ]մադ-խանն իմացավ այդ և զորք ժողովեց. նա ևս եկել էր ու բերդից կես մղոնի հեռավորությամբ կանգնել: Արքաներն (բատոնները) ևս մամանեցին և նրանց Երևանի խանը դիմավորեց: Իրար դեմ կանգնեցին: Վրաց և Կախեթի զորքը չորս դրոշի բաժանեցին. սոսաթապահ [գնդում]՝ Օրբելիանի Ռեվազ զորապետը (սարգալը) Սարարաթաշվիտյի զորքով և Քարթլիի թյուրք քոչվորներով, Քիլիզի մոսուրավ Թամուզը Քիլիզի զորքով և համապատասխան թվով գրոշակակիրներով. աջակողմյան գնդում՝ Ամիլախորի

Ամիրինդոն Վերին Քարթլիի զորքով... և Կախեթի և Ղաղախի զորքին էլ հրամայվեց սրանց հետ լինել. ձախակողմյան [գըն-գուս]՝ Մուխրանի բատոնը, սախլթխուլցես Կոստանտինեն զույգ իշխանության (սաէրիսթաո) զորքով և Բորչալուի զորքով: Չեր-քեզ[ներ]ի տիրոջն էլ իր զորքով հրամայեցին ձախակողմյան դրոշի տակ լինել: Երկոքյան արքաների դրոշակներն իրենք տե-րերն էին կրում՝ յուրաքանչյուրն իր զորքին կից: Եվ այսպես սազմական շարքերով դուրս ելան պատերազմի վայրը: Թեյմու-րազ թագավորը սազմաշարքով շարժվում էր, իսկ էրեկլե թա-գավորը երբեմն մի դրոշին էր հետևում, երբեմն մյուսին, զոր-քին հրահանգում էր. ոգևորում էր և ողորմածության հույս ներշնչում: Սկսվեց սաստիկ պատերազմ: Չորապետ (սարգալ) Ռե-վազն ու մուուրավ Թամազն առաջապահ զորքը դուրս տարան ոգե-վորված: Եվ սրանք այնպես ներս խրվեցին զղրաշների զորքի մեջ, ինչպես ճուռակն աղափսիների երամի մեջ, և Մա[հ]մադ-խանը փախավ: Գրոհ տվին աջակողմյան և ձախակողմյան գնդերն ևս, խառնվեցին վրացիք և կախերը, թրատեցին սուսերով, նաև անթիվ կենդանի թուրքերին բռնեցին: Առանց հրամանի՝ տիրոջ դրոշակի ներքո գտնվող զորքը ցրվեց ու հետամուտ եղավ փախ-չող [թշնամու] զորքին: Սաստիկ վրդովվեց Թեյմուրազ թագա-վորը և խռովեց իր դրոշակի ներքո գտնվող մարդկանց հետ: Վրա-ցիներն ևս հետևեցին չորս մղոն (աղաջ) և այսպես փախուստի ենթարկեցին Մա[հ]մադ-խանին. այնպես որ նա [այլևս] չկարո-ղացավ իր բերդը մտնել ընտանիքի մոտ: Արքաները (բատոն-ները) կանգ առան մի լեռան վրա, պատերազմը վերջացավ մին-չև արևի մայր մտնելը. երբ [նրանց] մատուցին [Մահմադ-խանի] գլուխը և հազար յոթ հարյուր հոգի կենդանի: Սկսվեց ուրախություն և թնդանոթածություն: Արքաներն (բատոն-ները) ուղևորվեցին դեպի Երևանի բերդը, [ձիուց] իջան բերդի դրսում: Այսպիսի սուսերամարտ և վրացիների հաղթանակ էրանի երկրում [երբեք] տեղի չէր ունեցել:

Հենց նույն գիշերը էրեկլե թագավորը մեկնեց իր զորքով-հարձակվեց Մա[հ]մադ-խանի բերդի վրա, ուր վերջինիս ընտա-նիքն էր պատսպարվել, գրավեց բերդը, կոտորեց նրա կնոջ և երեխաներին, ավերեց գույքը, դուրս բերեց Երևանի խանի եղ-բորը, որին Մա[հ]մադ-խանը կալանավորել էր: Թեյմուրազ թա-գավորն ևս մեկնեց և գրավեց մյուս բերդը, ուր Մա[հ]մադ-խանի հավատարիմ մարդիկն էին պատսպարել. ներեց նրանց

գերի վերցնելն ու մարդ սպանելը, իսկ գույքը հափշտակեց: Էրեկլե թագավորը ժամանեց իր հոր մոտ մեծաքանակ ավարով. ի մի հավաքեցին երկու բերդերի ավարը և բաժանեցին զորա-պետներին (սարդալներին), իշխաններին, ազնվականներին, գյու-ղացիներին: Յուրաքանչյուրին, ինչպես հարկն էր, այնպես մա-տուցին արծաթը, գանձերը և գույքը: [Վրացիք] տեղահան եղան, նորից ժամանեցին Երևանյան բերդը, հինգ հազար թուման տվին երևանցիներին. նույնքան՝ իբրև պարգև՝ բաժանեցին զորքին, ապա ժամանեցին Քարթլիի երկիրը: Ղաղախով որ անց-նում էին, Երևանի խանն էլ հետներն էր: Փանան, որ Շամա-խու երկրումն էր, Մա[հ]մադ-խանից աղաչել էր [օգնություն], և նրանց գործն էլ մի էր: Մեծ զորք էր հավաքել ու եկել Գյան-ջաու... Արքաները (բատոնները) որ ժամանեցին Ղաղախ, Փա-նան Ալաքուլա [կոչված տեղն] էր եկել, սկսվեց պատերազմի պատրաստություն, ճանապարհին Կախեթի արքայազն [Հ]ասան-միրզան պարսվեց, և այդ պատճառով երկոքյան թագավորներն ընկճված էին, թեև պատերազմը նրանց համար հաճելի էր: Քարթլիի և Կախեթի զորքը նույնպես պատրաստված էր... Հենց որ Փանահխանն այս լսեց, սկսեց բանակցել, որ ուզում է հաշտ-վել: Փանահխանը մարդ էր ուղարկել... [իսկ մեքոնք՝] իբրև պա-տանդ վերցնելով Շիրվանի և Գյանջա-Ղարաբաղի երկրների մեծամեծներին՝ ուղարկեցին Մուխրանի բատոնին... Փանայի հետ էր [Հ]աջի-Չալաքը ծագումով լեզգին... Սա ըմբոստացավ [ասելով]. «Մա[հ]մադ-խանի ընտանիքի գույքը մեզ տվեք և Ղաղախի երկիրն էլ ինձ թողեք և կհաշտվեմ ձեզ հետ»: Այս բանը սաստիկ տրտմեցրեց Թեյմուրազ թագավորին և էրեկլե թագավորին... Եվ ի պատասխան սրա՝ Փանային հաղորդեցին. «Ինչ որ ապսպրել ես, [նրանից] և ոչ մեկը չի լինի... Քանի որ Մա[հ]մադ-խանն երևանցի էր, նրա ընտանիք[ի գույքը] Երևանի խանին կտանք. իսկ սա ումն որ ուզի, նրան կտա»: Փանահ-խանը տեղահան եղավ, իջավ Գյանջա, վրաց բատոնը և Կախեթի բատոնը Տփղիս քաղաքը ժամանեցին. Երևանի խանն էլ հետ-ներն էր...

Եկավ Գյանջայի խանի քեռին (բիճան) Խոջա-խանն և Ջա-ֆար-խան Երևանցին, որի ընտանիքը գերի էր ընկել Մա[հ]մադ-խանին, և իրենց ընտանիքների մասին խնդրեցին արքաներին: [Վերջիններն] ամեն ինչ տվին Երևանի խանին, որին և վերա-հաստատեցին բոլոր իրավունքների պայմանով, ճանապարհ

զցեցին. Երևանի խանին շատ բանով պարգևատրեցին, հետն էլ Զազա Քարխինշվիլուն ուղարկեցին, իբրև հյուրընկալի (մեմանդար), որին գեպի [Երևանի] բեգլարբեգությունը ճանապարհ զցեցին:

Նախիջևանի խան՝ Բա[հ]ման-խանը չափար էր ուղարկել և աղաչել երկոքյան արքաներին՝ Քարթլիի և Կախեթի, խնդրելով զորք և օգնություն: Հրամայեցին Զաալ Օրբելիանուն, որ թվանջի-աղասի էր, փոքր զորքով գնալ, և նա հասավ Նախիջևան: Բա[հ]ման-խանին շատ դուր եկավ Զաալը, որին հույժ պարգևատրեց, նույնպես և՛ նրա մարդկանց, և պահեց նրանց Նախիջևան քաղաքի մեծամեծների շարքում:...

438 [=1750] թ. Փանահխանը և Գյանջայի խան Շա[հ]վերդ խանը սկսեցին խռովություններ սարքել: Փանան ուզեց Գյանջայի խանությունը ձեռքը գցի, նաև աշխատում էր Ադրբեջանի սարգարությունն ևս յուրացնի: Սրան Շա[հ]վերդ-խանը չհամաձայնվեց և Փանան իր շուրջը զորք ժողովեց. ինքն էլ լավ քոչվորներ ուներ, Զվանշիրի և Ղարաբաղի մեջը մտավ, զորքն այնպես ժողովեց, որ Գյանջա քաղաքից դատ [տեղ] չմնաց, [որ նրա ձեռքը չանցներ]: Գյանջայի խանն ուղարկեց իր եղբայր Ռազի-Ղուլի-բեկին Քարթլի և աղաչեց Թեյմուրազ թագավորին և նրա որդի Էրեկլե թագավորին. «Այս մարդուց ինձ ազատե՛ք, ևս և իմ երկիրը ձեր ծառան կդառնանք, զորքին էլ ոռձիկ կտանք»: Եվ Սղնախի երկու մելիքներն էլ այստեղ էին ու աղաչում էին. «Քրիստոնյա արքաներ եք, տիրեք մեզ, թուրքի ձեռքից ազատեցե՛ք»: Այս պահին մի հայ եպիսկոպոս<sup>13</sup> ևս եկավ: Փանահխանը մտել էր Սղնախ, սաստիկ նեղացել էր: Եպիսկոպոսն ևս աղաչեց և արքաները (բատոնները) հանձն առան. սկսեցին զորքի պատրաստություն տեսնել: Այս ժամանակ եկավ Գյանջայի խանի չափարը՝ [հաղորդելով], որ Փանահխանը շրջապատել է Գյանջայի բերդը, ավերել է քաղաք Գյանջան ու բերդում գտնվողներին հայածել: Թագավորները հրամայեցին Քարթլիի և Կախեթի զորքերին, և շտապեցին օգնություն հասցնել Գյանջային: ԶԷ որ Փանահխանը պայմանավորվել էր. «Իմ քոչվորներին վստահանամ և ոչ մի երկիրն այլևս թշնամի չլինեմ»: Այս պայմանը նա խախտել էր: Ապա՝ եթե Գյանջան ուժով գրավեր, Ղազախ-Բորչալուն ևս կուզեր: Այս պահին ոչ մի տեղ դ'ան չկար, և այս պատճառով տեղի ունեին շատ խռովություններ:... Թեյմուրազ թագավորը և Էրեկլե թագավորը 438 քրո-

նիկոնի [=1750] 8 փետրվարին [դուրս ելան Տփղիսից]: Երբ որ նրանք կոտրած կամրջով անցան, նրանց Բորչալուի զորքը միացավ, Ղազախի զորքը՝ Ղազախում, և մեկնեցին Շամշադին (Սամշադիլո). Երևանի զորքերն էլ սպասամբել էին և սպասում էին նրանց. եկան շամշադինցիք (սամշադիլոնցիք) և մատուցին ընծաներ երկոքյան արքաներին (տերերին):...

Հենց որ Փանահխանը լսեց, թե՛ «Վրաց բատոնը եկել է քո դեմ», քանի որ չէր կարող ընդդիմադրել վրացիներին, իսկույն և եթ գիշերով տեղահան կզավ Գյանջայից ու գնաց՝ անցավ իր քոչվորների մեջ, սկսեց նրանց ևս տեղահան անել ու ամրանալ:

Գյանջայի խանը դիմավորեց արքաներին (բատոններին) մինարայի ծայրին. արքաները (բատոնները) ժամանեցին, իջան քաղաք Գյանջայի մոտերքում, զորքով եկավ Երևանի խանը, բոլորը ժողովեցան, և Գյանջայի խանը մատուցեց Թեյմուրազ թագավորին և Էրեկլե թագավորին ձիաներ, լավ թամբած, ինչպես վայել է արքաներին մատուցանելու համար: Նմանապես բոլոր մեծամեծներին լիացրին ավարով և թանկարժեք իրերով:

... Փանահխանի զորքը Գյանջան այն սաստիճանի էր հասցրել, որ բերդից դատ ոչ մի տեղ ոչ մի շինություն չէր թողել, նույնիսկ մզկիթները քանդել էր... Արքաները (բատոնները) վեցերորդ օրը շարժվեցին ու Փանահխանի դեմ ելան: Զվանշիրը (Զաֆնշիրի) իր քոչվորներին տեղահան էր արել և դեպի Արագի ավազ քշել, վեց հազար մարդով ճանապարհը կտրել: Ղարաբաղի զորքը, Զվանշիրի (Զաֆնշիրի), Շամշադինի, Սղնախի, Բարգուշատի և Շ[ա]հսևանի, նաև այս երկրների զորքերը բոլորը նրա հետ էին. ինքն եկել էր ու ծառուղիի մեջ թաքնվել, աշխատում էր խարդավանքով կռվի կպչել: Իջնելով ծառուղիի մեջ՝ [վրացիներս տեսանք], որ նա այնտեղ բերել էր [Հյաջի-Չալարի որդուն հեծելազորքով]: Եկավ Թեյմուրազը, Սղնախի մելիքը և Գանձասարի հոպևոր տերը (օքեվարտերը)<sup>14</sup>, մատուցին արքաներին (բատոններին) ընծաներ և հանձն առան ծառայել ու զորքի համար բերին մթերք, որ է պարեն:

Գնալով հայնկույս և անցնելով մոտ մի մղոն (աղաջ)՝ [վրացիներս] տեսանք Փանահխանի զորքը: Դու մի ասե՛ք՝ թաքնված կանգնել էին, իսկ մեր հսկիչը (դ'արաուլը) չէր նկատել. իրենք էլ երևացին: Բայց պատերազմի տեղը չեղան, անտառի ետևն էին կանգնած, և անտառ ու ամրոց ունեին թիկունքում: Այդ օրը կռիվ տեղի չունեցավ: Արքաները (բատոնները)

մեկնեցին, իջան Սղնախի երկրում, այնտեղ նրանց մատուցին այն երկրի մթերքները, իսկ քեթխուղները սկսեցին սպասավորել:...

[Փանահխանը] շամշադինցիներին ապստրել էր (գրել էր), և նրանց զորքն էլ հետն ուներ... Շամշադինցիները մեր ճանապարհները կտրեցին. մենք ինչ գիտեինք, գնացինք Սղնախից և ուղղվեցինք [այն կողմ], ուր Փանահխանի կայանն էինք ենթադրում... [Սակայն] Փանահխանը... իսկույն և եթ փախել էր:...

... Այս հաղթանակներում մասնակից չի եղել զզրաշների, Երևանի, Գյանջայի կամ [Հ]աջի-Չալաբի զորքը, շաքեցիք և շիրվանցիք. սրանք բոլորը հեռվից էին դիտում: Իսկ ովքեր Վրաստանի զորքի կազմի մեջ էին՝ Դեմուրչա-Ալիի<sup>15</sup> [մարզիկ], զազախեցիք և բորչալուեցիք՝ սրանք մեծ արիություն ցուցաբերեցին և շատ մարդիկ էլ խնայեցին:...

Երկրորդ օրն արքաները (բատոնները) մեկնեցին՝ հաղթող և ուրախալից. ժամանեցին [այնտեղ], ուր Փանահխանի խրամատն էր գտնվում, Սղնախի ծայրին՝ Թուլում<sup>16</sup>, ուր Փանահխանը թողել էր իր թոփխանան ու գինարանը (ջաբախանան):... Եկավ Թուլի մեկիքը, որը մեծ զորքով գտնվում էր Փանահխանի մոտ, և խնդրեց իր հանցանքի ներումն, և հանձն առավ ծառայել արքաներին: Ներեցին նրա հանցանքը. հրամայեցին սղնախցիներին զորքի վեց օրվա պարենը տալ և պարտավորեցրին նրան գնալ դեպի Բարգուշատ՝ Փանահխանի փախած քոչվորների դեմ: Համբավաբերներ ուղարկեցին Գյանջա, Շիրվան-Շաքի, Ճար, Կախեթ, Քարթլի, Ղազախ-Բորչալու, Երևան և Նախիջևան և հաղորդեցին հաղթության մասին: Ամենուրեք սկսվեց ուրախություն, և ճարեցոց զորքը, որ հավաքվել էր վրացիներին բնդդիմադրություն ցույց տալու, քայքայվեց. և ամոթահար մնացին շամշադինցիք, որոնք փչացրել էին ճանապարհները և մտադիր էին դավաճանել վրացիներին ու կախեթցիներին:

Ընտրելով ազամատենչ մարզիկ, թագավորներն բնաիր զորքով մեկնեցին դեպի Արազի ափն՝ արմատախիլ անելու իրենց հակառակորդներին: Թուլայում թողին էշերը, ուղտերը, իրերը, բեռները և թոփխանան. Բերին զորքը, որի գլուխ կանգնեցրին միսկարբաշի-աղասուն<sup>17</sup>, Երկու օր շարժվելուց հետո, երրորդ օրը բաց թողին արշավախումբը, զորքը գնաց, պատեցին Բարգուշատի տեղերն և Արազի հայնկույս և հայկույս կողմերը, ձեռքըցեցին անթիվ ավար: Փանահխանին քիչ մարդկանցով նկա-

տեցին Խոզափերինի (Խոզափունի) կամրջի վրա, մտադիր էր պատերազմել: Սակայն՝ լսելով վրացիների գալը, իր քոչվորներին թուլեց ու փախավ, քիչ մարդկանցով հանդերձ ազատվեց: Արքաներն (բատոններն) իջան Արազի ափին, գորքը գնաց և ավերեց Մուղանի դաշտի (չոլի) վերին [մասը]. ավարի շատության մասին սրանից ավելի ի վիճակի չեմ գեկուցելու: Այս մեծ անեղ զորքը Վրաց բատոնի և Կախեթի բատոնի հետն էր և ավարը տնորինելու ի վիճակի չէր: Երկրորդ օրը Երեկլե թագավորը՝ Կախեթի տիրակալը՝ մեկնեց Բարգուշատի երկիրը: Սրան դիմավորեց Բարգուշատի խանը, որն աղերսեց նրան. «Ինձ մի փաստի»: [Երեկլեն] զիջեց նրան նրա տունն ու քաղաքը, և հրամայեց ավերել երկիրը: [Վրացիներս] այնքան [ավար] բերինք, որ առաջինից շատ էր, և այս երկուսը միասին որ հավաքվեց, ավարն այնքան շատացավ, որ նրա պահելն ոչ ոք ի վիճակի չէր: Երկու շահով ոչխար էին ծախում և հինգ արասով՝ կով, երկու մինալթունով՝ գերի: Զորքին տվին արծաթ, երեք հազար գերի ետ վերցրին՝ փրկանք [տալով]:... [Մերոնք] մի առ ժամանակ Բարգուշատի երկրում մնացին:...

... Մեկնելով Բարգուշատից, [մերոնք] դարձյալ եկան Թուլ:...

... Բոլոր գյուղացիներին, որոնք [իրենց տեղերից] փախել էին ու գտնվում էին Վրաստանի (Սաքարթվելո), Կախեթի, Ղազախ-Բորչալուի կամ Երևանի, Ղարաբաղի և Սղնախի երկրներում, մեր թագավորների հրամանով տեղահան արին:

... Երբ [վրացիներս] եկանք Գյանջա, տերն Երևանցի գյուղացուն շնորհեց Երևանի խանին, զազախեցուն՝ Ղազախի սուլթանին, բորչալուեցուն՝ Բորչալու, քարթլեցուն՝ Քարթլի և կախեթցուն՝ Կախեթ, և ճանապարհ դրին:...

... [Հ]աջի-Չալաբի և Շիրվանի զորքը [Վրաց բատոնը] հենց Բարգուշատից արձակեց և այլ զորքերով ժամանեց Գյանջա, [ուր] նրան մատուցին տաս հազար թուման, [մնացած] հազար հինգ հարյուրը պակասեց, որ չէին կարողացել կորզել, և՛ իբրև գրավական այդ հազար հինգ հարյուր թումանի՝ մատուցին Շամշադինի երկիրը: Մեկնեցին Գյանջայից, ժամանեցին Շամշուդին: Գյանջայի խանը բերել տվեց Շամշադինի քեթխուղներին, որոնց ներկայացրին [Վրաց] բատոնին. բատոնն արձակեց խանին, որը վերադարձավ Գյանջա. արձակեցին նաև Երևանի խանին, որը գնաց Երևան. արքաները (բատոնները) Քարթլիի և Կախեթի զորքով ուղևորվեցին դեպի

Քարթլի: Երբ նրանք ժափանեցին Ղազախ, այնտեղ նրանց դիմավորեց Բա[ն]ման խանն և Աղվանից երկու խաները՝ ... որոնք ուղեկցեցին նրանց մինչև Քարթլի:...

... Արձակեցին Նախիջևանի և Աղվանից խաներին, տալով նրանց հասանելիքը, և նրանք գնացին իրենց երկրները, հնազանդ մնալով մեր թագավորների հրամաններին:

... Թեյմուրազ օծյալ թագավորը հրամայեց Դեմետրե էշիկադասրաշ Օրբելիանուն գնալ և կառուցել բերդեր ու ամրոցներ Սոմխիթի և Սարարաթասշվիլոյի երկրներում:...

... Վրաց տերը հավաքեց Քարթլիի, Ղազախ-Բորչալուի զորքերը և մեկնեց Կախեթ:...

... Թեյմուրազ թագավորի... շուրջը համախմբվել էր Քարթլիի և Ղազախ-Բորչալուի զորքը:...

... Բա[ն]ման խանի ընտանիքը Նախիջևանով քաղաք [Տրփիլիս] եկավ:...

... Ա[ր]դրումի քարվանն Ալգեթ [գետ]ովն էր անցնում:...

... Լեզգիների զորքն ավարը բերում էր Օրբելիանների երկիրն (հայրենիքը) և Սոմխիթ:...

... Չաալ Օրբելիանին Նախիջևանով եկել էր քաղաք Տփղիսը: Ազատ խանը, որ սպասալար էր Ադրբեջանում, խոտվել էր Բա[ն]ման՝ Նախիջևանի խանի հետ, և վերջինս իր ընտանիքով հեռացել էր այնտեղից, իր ընտանիքը Քարթլի էր ուղարկել, իսկ ինքն անցել Երևան. [հապա] Չաալն ունի մոտ պիտի մնար, և իր զորքով, որ Քարթլիից էր տարել, եկավ: Նախիջևանը մնաց Ազատ խանին. իրեն համար վստահելի մարդուն խան կարգեց Նախիջևանի երկրում:...

... Լեզգիների զորքն յոթ հազար հեծյալից բազկացած՝ գնաց և հարվածեց Ղազախի երկրին, շատ ավար և գերի տարավ:... Վրաց բատոնի մոտ, որ Սադարեջոյունն էր գտնվում, մարդիկ եկան Ղազախից և զեկուցին Ղազախին փաստելու մասին:...

... Մեր թագավորների տեսութայան էին եկել Երևանի խանի եղբայրն և Այրումների (Այրումուի) խանը:...

... [Էրեկլե թագավորի հարսանիքին Դարեջան՝ Դադիանու դստեր հետ] հրավիրված էին Գյանջայի և Երևանի խաները, նաև Հաջի\*-Չալարի եղբորորդին:...

[Թեյմուրազ և Էրեկլե թագավորները] հավաքեցին Քարթլիի Կախեթի և Ղազախ-Բորչալուի զորքը և մեկնեցին Կեպի Ճարե

\* Բնագրում՝ Ահջի:

Ապսպրեցին և Գյանջայի խանին... [Ապա] նրանց միացավ Գյանջայի խանը Ղարաբաղի զորքով:...

Այս հանգամանքներում երես առան զզլրաշները և ուղեցին ֆասսել Քարթլիին: Բայց քանի որ Գյանջան ու Երևանը Վրաց բատոնի շուրջն էին, [ուստի և] նախ այն երկրներին ցանկացան տիրել: Ազատ-խան Աղվանը, որն իր ուժով Ադրբեջանի երկրներին էր իշխում, զորք ուղարկեց Երևանը գրավելու նպատակով, և Մա[ն]մաղ-խանը, որ Երևանցի էր, [գործին] գլուխ կանգնեց: [Ազատ-խանն] եկավ և կանգ առավ Երևանյան երկրներում: Երևանի խանն և ավազանին եկան ու աղաչեցին մեր պատրոններին՝ զորք և օգնություն խնդրելով: [Մերոնք] իսկույն և եթ մարդիկ ուղարկեցին չերքեզների մոտ, Օսեթ և լեռնային երկրները, զորք հավաքեցին և այստեղ ևս սկսեցին զորքերի պատրաստություն տեսնել. որովհետև՝ եթե զզլրաշներն Երևանը ուժով գրավեին, Գյանջան և Ղարաբաղն էլ նրանց ձեռին կմնար և ապա Ադրբեջանի բոլոր երկրները թշնամություն կսկսեին Քարթլիի դեմ: Սահմանապահ զորքի ղեկավար նշանակեցին Բա[ն]ման-խանին, որ մի առ ժամանակ խան էր Նախիջևանում և իշխում էր այս երկրներին իբրև սպասալար՝ Վրաստանի (Սաքարթվելոյի) Թեյմուրազ թագավորի հրամանով: Այս Բա[ն]ման-խանը Քսանի էրիսթավի փեսան էր, թշնամու շնորհիվ հեռանալով Նախիջևանից, այլևս ի վիճակի չէր [վերադառնալ] այնտեղ կենալու, եկավ քաղաք [Տփղիս] և մեր բատոնի հրամանի ներքո էր գտնվում: Սրան տվին թուրքերից [կազմված] զորք, նույնպես և Չաալ Օրբելիանուն տվին Քարթլիի զորքը և ուղարկեցին՝ [այսպես] հրամայելով. «Մինչև որ մենք կպատրաստվենք, տեղեկացրեք մեզ բոլոր հանգամանքների մասին, և մենք ևս, օգնությամբ աստծո, շուտով կգանք և ցասում կրերենք մեր թշնամիների վրա»:

Գնացին, հասան Փամբակի ձորը, ուղեցին Երևանյան երկիրն անցնել: Մակայն Երևանյան երկրներն արդեն ավերված էին ու մեջն աղվանական զորք էր կանդնած, և մի բերդից դատ ոչինչ չէր մնացել, բոլորը թշնամու ձեռին էր: [Իսկ] սրանք կանգ առան Փամբակում և զեկուցին մեր թագավորներին Երևանի զրուժյան մասին: Թագավորները պատրաստվեցին և հավաքեցին Քարթլիի և Կախեթի, [նաև] Ղազախ-Բորչալուի զորքը և նրանց, որ լեռներից էին [իջել ու] հասել... Էրեկլե թագավորը մեկնեց Երևան, անցավ Սոմխիթով, ժամանեց Փամբակ, [ուր և]

նրան դիմավորեցին իրենց զորքերով Բա[հ]ման-խանն և Ջաալ Օրբելիանին: Քաղաք [Տփղիս] եկան հյուսիսային (հայնկույս) Օսեթի մարդիկ: [Թեյմուրազ] թագավորը տվեց նրանց պարեն և ուղեկիցներ ու իր որդու մոտ ուղարկեց: Նրանք հասան ու միացան էրեկլե թագավորի [զորքի]ն Փամբակում: [էրեկլե թագավորը] Փամբակից մեկնեց: Եվ երբ որ նա անցնում էր Երևանյան [երկրի] տեղերով, աղվանները զգուցին այդ և տեղահան եղան Քանաքեռից և ներքև իջան՝ կանգնելով Երևանի բերդի մոտերքում: Էրեկլե թագավորը հասավ և կանգ առավ Քանաքեռում: Երևանի բերդից դուրս եկան ուժասպառ եղած զզլրաշներն և սկսեցին նրան գովել: Անկասկած, սովը ստիպել էր բերդում եղողներին [այսպես վարվել]: Քանի որ հունձի ժամանակ էր, [թագավորը] հրամայեց իր զորքին հնձել և կալսել, և տաս հազար կող հաց վերցրեց իր զորքից և Երևանի բերդին ուղարկեց: Այնպես ավերված էր Երևանյան երկիրը, [որ] հնձող չէր ձարվում: Երևանից ու էջմիածնից (էջմիատի. sic) գատ՝ ոչ մի տեղ ոչ մի շենք չէր մնացել: Այս աղվանական զորքը և Մա[հ]մադ-խանը նույնպես Երևանյան երկրում էին կանգնած: Ինքն առ դեմ պատերազմել չէին համարձակվում և հարձակվում էին իրրե զաչաղներ (զաղախներ), ձի և մարդ փախցնելով: Մեր զորքն անցնելիս գրոհ կտան, աղվանները կփախչեն և չեն սպասի պատերազմի: Էրեկլե թագավորը շարժվեց տեղից, մեկնեց գեպի Շարուր և Սարազապի յայլաները: Կանգ առավ լեռան գլխին ու այնտեղից զորքեր ուղարկեց արշավելու: Ուր էլ աղվանների կողմնակից մարդ կար, բոլորին կողոպտեցին, կործանեցին: Վրացիք և կախեթցիներն ավերեցին Նախիջևանի հայսկույս գտնվող երկիրը մինչև Արազի ափը, նրանք լցվեցին ավարով, և այսպես ավարով լցված եկան: Բատոնն իջավ Ղըրխբուլախում<sup>18</sup>, Երևանի բերդից հանեց Ջերդախի-խանին ընտանիքով, Երևանի մինբաշ Բադիմ-բեկին և չորս ևս այլ մեծամեծ մարդկանց, զորքն ուղարկեց Բորչալու և մի մասը Սարարաթաշվիլո ուղարկեց իր օձյալ հորը քաղաք Տփղիսում պահ[պան]ելու համար: Մրանց մեղադրում էին դավաճանության և մատնության մեջ Երևանի բերդի [պաշարման ժամանակ], Իսկ ինքը՝ էրեկլե թագավորը նույնտեղ մնաց, և Երևանի գործերն էր կարգավորում:

Հենց որ լուրն այս [գեպերի] մասին հասավ Աղատ-խանին, [վերջինս] կատաղեց՝ [իրրե] մուլեգին գաղան, և ... ելավ էրեկլե թագավորի դեմ. աշխատում էր գաղտնի կերպով հար-

ձակվել նրա վրա, եկավ Ղըրխբուլախ և, ուր էրեկլե թագավորն էր կանգնած, [նրա գիմաց] լեռների վրա կանգնեց: Հսկիչներն եկան և ղեկուցին թագավորին: [Թագավորը] հրամայեց զորքին պատրաստվել, իսկ ինքը սկսեց աղոթել... և կաթոգին աղաչեց աստծուց հաղթություն [շնորհել] ագարյանների վրա: Հենց որ աղոթքը վերջացրեց, հեծավ ձին..., ... ելավ պատերազմի տեղն առաջնորդությամբ ամիր-սպասալար Ռեվազ Օրբելիանու և առաջապահ զորքի, որոնց հետ էր խառնված և Քիսիղ'ի զորքը, նույնպես և ձախակողմյան և աջակողմյան միացյալ զորքը Քարթլիի և Կախեթի, որոնք շարվեցին ըստ կարգի: Արքան (բատոնը) իր զորքով մերձակա զորքերի թիկունքում էր կանգնած: Երևանի [պարսկական կայա]զորը Բա[հ]ման-խանի [ղեկավարությամբ], պարսկական զորքի հետ միասին, սմանք առաջապահների հետ, սմանք աջակողմյանների կամ ձախակողմյանների հետ՝ զնացին պատերազմելու: Աղատ-խանն ևս դուրս եկավ հրանոթների (ղամբուրակներ) հրաձգությամբ և հպարտորեն, այնպես, որ նրանց մեջ ոչ մի երկչոտություն չէիք նկատի: Եվ նրա զորքը հինգ-վեց գնդի էր բաժանված. մինչդեռ վրացական զորքը հազիվ նրա հինգերորդ մասը կլիներ: Առաջին ելույթով նրանք հարձակվեցին ձախակողմյան ջոկատի վրա: Նախ հաղթեցին վրացիները, սպա աղվանցիները, որոնք վրաց ձախակողմյան ջոկատը փախուստի ենթարկեցին: Վրաց հետիտան զորքը մի գյուղատեղում ամրացավ, և երկու կողմերի միջև մեծ պատերազմ տեղի ունեցավ և երկուսի կողմից էլ զոհեր եղան:

Այս հանգամանքներում մաս առ մաս (գունդը գնդի ետևից) եկավ Աղատ-խանի զորքը, որը էրեկլե թագավորի երեքյան զրոշակի տակ գանձող զորքը շրջապատեց: Աղվանցիներն այնպիսի գրոհ տվին, որ հենց մեր զորքի մեջ [սրվելով] նիզակով շատերին վայր գցեցին: Էրեկլե թագավորը հրամայեց ամիր-սպասալար Ռեվազ Օրբելիանուն իրեն մոտ լինել: Հասան առաջապահներն և բատոնի զորքին միացան... Էրեկլե թագավորն՝ իրրե անգուպելի առյուծ՝ թե՛ ինքն էր կովում և թե՛ իր զորքին էր կովացնում: Կոտորեցին [չատ] աղվանցիներ և զզլրաշներ... [Թշնամին] թողել էր թովխանան, զինարանը (ջութախանան), անթիվ հրանոթներ (ղամբուրակներ) ուղտերի վրա բարձած, բազմաթիվ էջեր և ուղտեր, իրեր և վրաններ, ամեյթարխանեք-ն<sup>19</sup>, և [բոլորն], ինչ որ Աղատ-խանի ու նրա զորքինն էր, վրացիներին մնաց, այնպես, որ նրանք մի-մի ձիուց ավել հետներն ոչինչ

չէին տարել: Ազատ-խանն այնպիսի մարդ էր, որ պատրաստուում էր դ'անն դառնալ, Ազրբեջանի երկիրներին տիրել էր և այդ փառքով էլ տարված էր: Այս բոլոր ավարը վրացոց ձեռքն անցավ, սակայն այդ այնքան շատ էր, որ չկարողացան տեղափոխել: Ազատ-խանի վրանը դրին, էրեկլե թագավորը մեջը բազմեց: Եկան Երևանի, Նախիջևանի, Այրումուլուի և այլ խաները, և շնորհավորեցին ու գովեցին նրան: Նույնպես եկան վրացիները, կախեթցիները, և շնորհավորեցին հաղթանակը և մատուցին կենդանի [գերիներ] և [սպանվածներ] գլուխները: Սկսվեց թնդանոթների կրակոց Երևանյան բերդում և մեծ խանդավառութուն: Եվ այս լուրն իսկույն և եթ տարածվեց Ազրբեջանի բոլոր երկրներում: Ամեն տեղ թուղթ ուղարկվեց և շրջակա քաղաքների խաներին ևս ծանուցվեց [այս] հաղթանակի մասին:...

... էրեկլե թագավորը մտավ Երևան իր հոր՝ Թեյմուրազ թագավորի հրամանով. Երևանի բեղլարբեգութունը նա շնորհեց Արդուլա-խանին, որ բերդումն էր նստած իբրև մի՛նրաշ, որ է հազարապետ: Նմանապես Վրաց իշխաններից նշանակեց Երևանի գործերի վարիչներ, Ղազախ-Բորչալուի և Երևանի զորքը ավեց Բա[ն]ման-խանին, նաև վրացական զորքը՝ Չաալ Օրբեկխանուն, որին Նախիջևան ուղարկեց: Վրացիք հենց որ հասան Նախիջևան, իսկույն և եթ գրավեցին այն ու մնացին մեջը:

էրեկլե թագավորը դուրս ելավ Երևանից, ժամանեց Սոմխիթ: Ճանապարհին հանդիպեց լեզգիների զորքին, որը շատ դերիներ և ավար էր հետը տանում: Հրամայեց զորքին [շրջապատել նրանց], շրջապատեցին և բոլորին — ձեր արևը վկա — կենդանի պցեցին ձեռքը: Այսպես երկիցս հաղթող էրեկլե թագավորը ժամանեց Տփղիս:...

Քարթլիի բատոնը զորք ժողովեց վրացիներից և Ղազախ-Բորչալուից:... Լեզգիներին լուր հասավ. «... Մի զորք եկավ, Ղազախին խփեց»:

Սղնախեցիք հաշտվեցին [Հ]աջի-Չալարի հետ, իսկ Փանախանն ուժեղացավ: Սրա մասին տեղեկացնելու մեր թագավորների մոտ չափարներ ուղարկեցին. Ղարադաղի խանին ևս թուղթ գրեցին: [Հ]աջի-Չալարն եկավ, Գյանջային մոտեցավ, շուրջը ամեն ինչ ավերեց, քոչվորներին տեղահան արավ Ղարաբաղից ու իր երկիրը փոխադրեց: Մեր չափարներն եկան Սղնախից, հետն էլ մի վարդապետ եկավ, [Հ]աջի-Չալարի մոտ էր եղել և աշխատում էր նրան [վրացիների հետ] հաշտեցնել, իբրև միջնորդ էր եկել:...

... Ազատ խանը հարձակվեց Նախիջևանի վրա. մեր զորքը հեռացավ: Բա[ն]ման խանն եկավ Գյոքչա:...

Գյանջայից եկավ մոուրավ Քայխոսրոն, որի հետն էին Գյանջայի վեքիլը, Փանահխանի հորեղոր որդին, Ղարաբաղի քեթխուղները և Չվանշիրի (Չավանշիրի) ու Բարգուշատի խանի եղբորորդին:... Սոմխիթում գտնվող լեզգիների զորքը մեծ ավարով գնաց:...

Երևանի ավագանիներին կանչել էին [Տփղիս]:...

440 [= 1752] թ. ... Թեյմուրազ թագավորն և էրեկլե թագավորը մեկնեցին Գյանջա: Ուզում էին այնտեղից հարվածել [Հ]աջի-Չալարին: Դուրս գնացին քաղաքից հունվարի 9-ին: Կտորած կամրջի վրա հավաքել էին Բորչալուի զորքը, նաև Բորչալուում կանգնած լեզգիներին:... Ժամանեցին Ղազախ, ուր մի քանի օր մնացին և ժողովեցին Ղազախի զորքը, ապա մեկնեցին Շամշադին, ուր ընդունեցին բնծաներ և զորք, և զորքի համար բավականաչափ պարեն: Նրանց դիմավորեց Գյանջայի խանի եղբայրը և Երևանի զորքն ևս հավաքվեց:...

Վրաց տերը դուրս եկավ Գյանջայից, հասավ Ազարմաթա. Գյանջայի խանը հետն էր. սրանց միացվեցին Սղնախի մելիքները՝ զորքով, բացի երկու մելիքից, որոնք մատուցին զորքի ծախսը, որքան էլ պետք էր:

Այս պահին Ալագան [գետ]ը մեծացել էր, [և Վրաց թագավորները] չկարողացան գնալ [Հ]աջի-Չալարի դեմ: Խաները հրավիրում էին [թագավորներին] ներքևում [կանգնած] աղվանների դեմ [գնալ], դու մի ասի՝ ուզում էին վրացիներին դավաճանել: Մեր թագավորները՝ նկատելով այս՝ ընտրեցին այսպիսի [միջոցառում]. «Այս խաներին կալանավորենք և սրանց ունեցածը (տավարը) զորքին տանք»: Այսպես վերջացրին խորհրդակցութունն և հրավիրեցին խաներին: Գյանջայի խանն իր եղբոր հետ, Քաղում-խան Ղարադաղցին, Բարգուշատի խանը, Շահսեվանի խան Փանահխանն ու սրանից հետո նրանց երկրների ավագանիները և Սղնախցի Չանախչիի մելիքը՝ բոլորը նստեցին վրաց բատոնի վրանում: Սրանք խրախճանք և քեֆ էին անում և չնկատեցին, թե ինչպես Քարթլիի և Կախեթի ածղահա մարդիկ [յուրաքանչյուր] խանին էին կցել: Երկոքյան թագավորները գրասուճն էին գտնվում: Պայմանավորված ժամին սկսեցին ծխել դալիան, և սուրճ (դավա) մատուցին. հենց այդ ժամանակ Վրաց և Կախեթի իշխանները հարձակվեցին խաների վրա ու կալա-

նափորեցին նրանց: Երբ որ գինավորները լսեցին «Պաներին բըռնեցին», այնպիսի խառնակութուն և իրարանցում տեղի ունեցավ, որ վերջին դատաստանի (երկրորդ գալստյան) օրին նմանվեց...

... Գարթիի թագավորը հրամայեց Երևանյան զորքին... փախչել... Վրացիք պարտվեցին, կոտորվեցին. ոմանք գնացին դեպի Սղնախ, ոմանք դեպի Երևան, իսկ ոմանք էլ եկան Տփղիս քաղաքը...

Երկոքյան թագավորները բարձրացան Գյանջայի լեռը: Երբ մթնեց, իջան Շամշադինի ծայրին, և ով էլ մնացել էր, նրանց հետ միասին ժամանեցին Ղազախ, այնտեղից պարտված մտան քաղաք [Տփղիսը]... Փախած զորքին դիմադրեցին շամշադինցիք, որոնցից ոմանց սպանեցին, ոմանց մերկացրին. այսպիսով Վրաստանի [թափած] արյունը շամշադինցիք իրենց վրա վերցրին...

[Հ]աջի-Չալարը... թուղթ դրեց Ղազախ-Բորչալու, Դեմուրչառալիի քոչվորներին, Բայդարին. «Վրաց բատոնին այլևս մի ծառայեք. հակառակ դեպքում կոտորած կանեմ. չեմ թույլ տա, որ թաթարը վրացու ճորտ լինի»: Թաթարներին այս լուրը դուր եկավ, Վրաստանի բոլոր քոչվորներն ու Ղազախ-Բորչալուն ընծաներ պատրաստեցին, գնացին, մատուցին [Հ]աջի-Չալարին և հանձն առան ծառայել նրան և խոստացան լինել նրա ճորտն և համախոհը: Վերագարձան տուն, նորից զորք հավաքեցին, սկսեցին ֆլասել Սոմխիթ-Սարարաթաշվիլոյին. Բորչալու-բայդարցիք ևս դալիս էին ու քաղաքի շրջակայքն ավերում. լեզգիները նույնպես և զազախեցոց զորքը դուրս բերել տվին...

Ղազախի, Բորչալուի և Բայդարի զորքը հարձակվում էր քաղաքի շրջակայքի վրա և անթիվ ավար տանում. նույնպես և լեզգիների զորքը բերին և կանգնեցրին Ղազախում և Բորչալուում. սրանց միանում էին տեղական զորքերն ևս, և վերջինների առաջնորդութամբ ավերում էին Սոմխիթն ու Սարարաթաշվիլոն:... Որքան էլ Սոմխիթ-Սարարաթաշվիլոյում հաց կար, բոլորը տարան: Այսպիսի ֆլասս զղլրաշն էլ չի հասցրել, ինչ որ սրանք արին: Ղազախ-Բորչալուն և Բայդարն ավարով լցվեց: Ղազախ-բորչալուեցիք և բայդարցիք երկերեսանություն արին Վրաց տիրոջ նկատմամբ և սկսեցին ֆլասել Ջավախեթի և Ղարսի երկրներին:...

... [Հ]աջի-Չալարը զորք հավաքեց, իր որդուն ուղարկեց

Գյանջա ու այնտեղ ևս հավաքեց Ղարաբաղի ու Սղնախի զորքը:

[Հ]աջի-Չալարի որդին և Գյանջայի խան Շա[ն]վերդ-խանը մեծ զորքով եկան Գարթիի վրա. սրանց ընդառաջ գնացին Ղազախ-Բորչալուի և Դեմուրչասալիի զորքերը, որոնք եկան Շամշադին: Ղազախում Ղազախ-Բորչալուի քեթխուղներին ասել էին:...

[Հ]աջի-Չալարի որդի՝ Աղա-քիշին և Գյանջայի խանը հեռացան Ղազախից և կանգ առան Բայդարում:...

[Վրաց թագավորներին] լուր հասցրին... [որ թշնամին] մտել է Ղազախ:...

Գարթիի և Կախեթի թագավորները գնացին [Հ]աջի-Չալարի որդու և Գյանջայի խանի դեմ, որոնք կանգնած էին Ղազախում:... Ղազախի խանն և զազախեցիներից ոմանք տերերին միացան: Երբ [Հ]աջի-Չալարի որդին Ղազախի և Շամշադինի (Սամշադիլոյի) սահմաններին մոտեցավ, այդ ժամանակ էրեկլեթ թագավորը հասավ:...

Թագավորները հաղթող մեկնեցին և իջան պատերապմական [գործողութունների] տեղը Շամշադինի (Սամշադիլոյի) վայրում, [իսկ] լեզգիները գնացին պարտված: Գյանջայի խանը գնաց Գյանջա, [Հ]աջի-Չալարի որդին հասավ Շաքի, կենդանի մնացած զորքը ցիրուցան եղավ, բոլորն իրենց տեղերը գնացին, կողոպտիչներ ուղարկեցին Շամշադինի երկիրը, կողոպտեցին երկիրը, այրեցին, ավերեցին. իսկ վրացիները տեղահան եղան այնտեղից, փոխադրվեցին Ղազախ [և] նրանց շուրջը համախմբվեց Ղազախի ավազանին: Նրանց, ովքեր հանցանք ունեին, մատնեցին մեր թագավորներին. հանցավորներին և ուխտագրուժներին խեղդեցին ջրում, ոմանց գլխատեցին և ոմանց կալանավորեցին, հավատարիմ [մնացած]ներին ողորմածություն խոստացան:

Մուսա-ղ'ուլի-խան՝ Բորչալուի նախկին խանին, որը քաղաքում մնաց և [Հ]աջի-Չալարին չմիացավ, Բորչալուի խանություն տվին ու ճանապարհ դրին դեպի Աղջաղ'ալա: Բորչալուի խանը [և] Մուսան՝ Բայդարի սուլթանը, իբրև հանցագործներ և ուխտագրուժներ, դեպի Երևանյան երկրները փախան:

Հաղթող թագավորները դուրս եկան Ղազախից և ամեն ինչով լի հասան Սողանլուխ, այնտեղ մնացին ու կարգավորեցին:



Ղազարի-Բորչալուի գործերը, թողութուն տվին սխալանքի համար և ներեցին հանցագործներին...

Մեր թագավորները Ջեյգալ-խանին ուղարկեցին Երևան այն պատճառով, որ Վրաց արքայի (բատոնի) կողմից խան նշանակված Արգուլ-խանին Ազատ-խանն իրեն մոտ էր կանչել և պահել ու այլևս ետ չէր թողել, Երևանի խանութունը խլել էր և դարձյալ [Հ]ասան-Ալիխանին էր տվել, որը նրանից առաջ էր խան, այս խանին էլ ազվանական գործով ուղարկել էր ու Երեվանի բերդում տեղավորել: Այս բոլորը մեր բատոնին ընդդեմ էր սարքել: Ջեյգալ-խանն Երևանի բերդը պիտի մտներ և թագավորի անունից Ազատ-խանի հետ բանակցեր. «Եթե հաջողութուն ուզեիր, արքաներն (բատոններն) ևս կհաշտվեն, Շահ[ա]-բաս խանն(\*) Ազատ-խանի կողմից էր Երևան ուղարկված, անվանի մարդ էր»: Այսպես դիմեց Ջեյգալ-խանը, որին Հասան-Ալիխանը մեծապես պատվեց ու Երևանի բերդում տեղավորեց, և Ազատ-խանի հետ սկսեց բանակցել:

Սուլխան էշիկ-աղաս-բաշին ուղարկեցին Ղազար՝ այնտեղի գործերին տեղեկանալու համար...

... [Հ]աջի-Չալարի որդի Աղա-քիշին... գործով ... շարժվեց դեպի Ղազար: ... [Հ]աջի-Չալարի որդին մեծ գործով և Հարաբաղի գործն եկան Ղազար, սկսեցին ավերել, դադախեցիք տեղահան էին եղել, ամբոցները մտել: Սակայն ամբոցները խորտակեցին, ... շատ տեղեր ավերեցին, ավարով լի դարձյալ իջան Ղազար: Այս պատճառով թշնամաբար էր վերաբերում Ղազարին և ստում. «Դուք ինձ [այստեղ] բերիք ու պարտվեցի, և վրացիք իմ գործը բնաջինջ արին, ես ձեր արյունն եմ ուզում»: Մտադիր էր էլ ավելի թշնամութուն անել և դեռևս չէր ուզում գնալ. նույն տեղում կանգ էր առել ու ավերում էր: Վրաց տերը սրանից ավել գործ չհասցրեց. Սոմխիթ-Սաբարաթաշվիլոյի գործը հապճեպ կանչեցին... Ղազար հասցրին... հասան Ղազար... Ղազարում կանգնեցին... հարձակվեցին Շամշադինի վրա...

Ազատ-խանի չափարն եկավ, արքաներին (բատոններին) մատուցեց դաշինքի և հաշտության գիրը: Ջեյգալ-խանն այստեղից որ Երևան էր դնացել, լսեց էր...

441 [=1753] թվի հունվար ամսին էրեկլե թագավորը Քարթլիի և Կախեթի գործով մեկնեց Բայդար... մտադիր էր անցնել Ղազար... [որպեսզի] դադախեցիք իրենց հավատարմութունը հայտնեին [նրան], Ղազարեցիք լսեցին այս. եկան սուլ-

թանի եղբայր Թադի-բեկն և Ղազարի քեթխուզներն ու մատուցին ընծաներ... Բա[հ]ման-խանին իր մարդկանցով ուղարկեց Ղազար...

... [Հ]աջի-Չալարը... գործ ժողովեց և մտադրվեց դալ Քարթլիի և Կախեթի վրա, երկու թևի բաժանեց գործը. գործի մի մասին Բա[հ]ման-խանն էր ստաջնորդում Քարթլիի վրա, երկրորդին՝ Չուբար էրիսթավիս-շվիլին Կախեթի վրա, սրանց հետ էին ճարեցիք, Շաքի-Շիրվանի, Գյանջա-Ղարաբաղի, Բարդ[ա]յի, Բարգուշատի և Սղնախի գործերը... Ազատ-խանը բռնի կերպով ուզում էր գրավել Երևանը...

[Լեզգիները] բաղամթիվ գործով իջան Դաղստանից, հասան Բամբակի երկիրը, ավերեցին բերդերը, գերեցին, բնաջինջ արին, անթիվ գերի ու ավար տարան. հարձակվեցին Հարսի երկրների վրա, շատ տեղեր փլասեցին, ոչ մի տեղ ընդդիմադրության չհանդիպեցին, գնացին Գյոթչա, գրավեցին բերդը և այնտեղի բոլոր բնակավայրերն ավերեցին: Հարձակվեցին Երևանի երկրի վրա, սկսեցին ավերել Տիգրիս քաղաքի շրջակայքը...

442 [=1754] թվին... Լեզգիների գործը մտավ Սոմխիթ... [Լեզգիներն] անցան Սոմխիթով, հասան Հաղբատ, այնտեղից ելան Ղազարի լեռներն ու իջան Գյանջա...

... Երևանի խանի դեսպաններն եկան. շրջակա երկրների մարդիկ աշխատում էին հաշտ մնալ ու դաշնակից լինել վրացիների հետ:

Դիվանբեգ Իվանե Օրբելիանու և Չաալի մարդիկ, որոնք Սպահանումն էին Ազատ-խանի մոտ, եկել էին Երևան... Լեզգիների գործի մի մասը գնաց Երևանյան կողմերը, մյուսը՝ Սոմխիթի կողմերը, իսկ երրորդը՝ Վերին Քարթլի... Իսկույն և եթ թագավորը չափար ուղարկեց Երևան... նա մնացել էր Երևանում, ուր Երևանի խանը նրան լավ պատվել էր. նմանապես նրան լավ էր ընդունել Հայոց պատրիարքը Էջմիածնում (էջմիատի. sic)<sup>20</sup>, Երբ Լեզգիների գործը գնաց դեպի Երևան, նա փչացրեց Սադաբադը<sup>21</sup>, կոտորած սարքեց. [Լեզգիներն] այնքան ավար և գերի վերցրին, որ շատ լինելու պատճառով հազիվ էին տանում, անցան Ղազարով և գնացին ամեն ինչով լի: Ղազարի գործն էլ այդ Լեզգիների գործի հետն էր...

... Սոմխիթ-Սաբարաթաշվիլոյի տեղերն ավերակ էին դարձած և թշնամի[ներ]ով լի... [Մդիվան-բեգին և Չաալ Օրբելիանուն] Երևանում դիմավորեցին...

... Լեզգիների գորքը ... Ծալկայի Բեդենիի սարից ... անցավ Դմանխի գլուխը, լեռան ստորոտին Տաշիրով անցավ և մտավ Հաղբասի ձորը: Հետախույզներն [սրա մասին] գեկուցին թագավորներին: Վերադարձան Բեդենիից և իջան Նախիգուրի<sup>22</sup>, այնտեղից մարդիկ ուղարկեցին Հազախ և Բորչալու:...

Երբ լեզգիների գորքը Հաղբաստունն էր կանգնած՝ լի ավարով, սրա մասին հաղորդեցին Քարթլիի թագավորին:...

443 [=1755] թվին... Երկոքյան թագավորները մեկնեցին դեպի Բորչալուի կողմերն և շրջեցին Սոմխիթի երկիրը. ոչ մի տեղ թշնամու չհանդիպեցին և՛ որսորդութամբ զբաղվելով՝ վերադարձան Տիգրիս քաղաք:...

Բա[ն]ման-խանը լեզգիների գորքով եկավ Հազախի երկիրը, ... և Հազախից սկսեց թագավորների հետ բանակցել: ... Բա[ն]ման-խանը և լեզգիների գորքը Սոմխիթի մեկիքի հողում (հայրենիքում) էր կանգնած... Շիռշ Արղութաշվիլուն իբրև պատանդ ուղարկեցին լեզգիներին: ... Բա[ն]ման-խանը և լեզգիների գորքը դարձյալ Սոմխիթի անտառունն էին կանգնած: ... էրեկլե թագավորն իջավ Բայգար: ... Արղութաշվիլի Շիռշին, որը պատանդ էր լեզգիների մոտ, սպանել էին ճանապարհին:...

Մի փոքր ժամանակից հետո լեզգիների գորքը դարձյալ եկավ Դյանջայից և՛ կանգ առնելով Սոմխիթի երկրում՝ սկսեց ֆլասել այս ու այն կողմը, բռնեց ճանապարհներն ու բազմաթիվ գնացող-եկող քարավաններին ֆլաս սպառնացեց:...

Այս հանգամանքներում Հարաբաղի Փանախանն ուժ էր գործադրել Սղնախի [մեկիքների] նկատմամբ. հայերն այլևս չէին կարողացել դիմանալ. մի ձորի մեկիք [Յ]ուսուֆ-բեկը հարյուր ծուխից բաղկացած խիզաններով տեղահան էր եղել ու, գալով Վրաստան, [տեղ] խնդրել [Վրաց] թագավորներից: Այս հանգամանքները գեկուցին թագավորներին Թելավում. իսկույն և եթ մարդ կցեցին նրանց և այս սղնախցիներին բնակեցրին [Տիխիա] քաղաքի քարափի թաղի կողմը, իսկ իրեն [մեկիքին] կանչեցին Կախեթ: Դնաց մեկիք [Յ]ուսուֆ-բեկն իր գորքով Կախեթ, միացավ թագավորներին: Հրամայեցին ողորմածութուն ցույց տալ նրան և պատվելով պահեցին:

... Լեզգիների գորքն ավերել էր Դեմուրչասալիի բնակատեղերն ու կողոպտել Դեբեդի հայսկույս գտնվող Բորչալուի գյուղերը: ... Ապա [լեզգիներն] ելան Հաղբասի ձորով: ... Այս գորքը Փամբակով անցավ Հարաբաղիսա, [ուր] և բաժանեցին ավարը:

Խունձախի տերն և Շամխալն իրենց մարդկանցով գնացին Գյանջա, ավարը հետը տարան [ու] իրենց երկրները գնացին: Դադստանի մյուս գորքը ֆլաց Փամբակի Հարաբաղիսայում, ավարն այստեղ թողին, իրենք գնացին, Երևանյան երկիրն ավերեցին. հետո գնացին, ֆլասեցին Հարսի երկրներին՝ բերին բազմաթիվ ավար ու գերի, նմանապես անցան Ջավախեթ, ավերեցին Բարալեթը, բերին բազմաթիվ ավար, փոխադրեցին Փամբակ և ոչ մի բնդգիմադրողի չհանդիպեցին:...

... Լեզգիների գորքը Սոմխիթի և Սարարաթաշվիլոյի անտառներն ու ժայռերը մտան ու այնտեղից սկսեցին ավերել քաղաք [Տիգրիս]ի շրջակա գյուղերը: ... Լեզգիները գիշերով... սանդուխտներով բարձրացան Սոմխիթի Սամծեվրիսի բերդը: ... [Տիգրիս] կանչեցին Հազախի և Բորչալուի խաներին ու քեթխուղներին: ... ապա [վերջինները՝ վերադառնալով] վարեցին Հազախի երկրի և Բորչալուի գործերը:...

Ազատ-խանը, որ տիրում էր Արագի և Աղբեջանի երկրներին, իր մի ղուլին ուղարկեց Երևանյան երկիրն ասելու. «Որքան էլ Վրաստանի քոչվորներից այն երկրում մարդ է բնակվում, բոլորին տեղահան արա և Վրաց տիրոջը հանձնիր: ... Ապա այդ ղուլն եկավ [Քարթլի] և սրա մասին [Վրաց] թագավորներին գեկուցեց: Սրանք ուղարկեցին Կախեթի բառոնի էշիկադասուրաշ Սուլխանին և հետը կցեցին Սոմխիթի մեկիքի որդի Ավթանդիլին [և] հրամայեցին երգումի տակ ներեն բորչալուեցոց բոլոր հանցանքները: Սուլխան էշիկադասուրաշը գնաց: ... Հազախի, Բորչալուի, Դեմուրչասալիի ավագանիներին բոլորին հետը տարավ, հասավ Երևան. հավաքվեցին Բորչալուի խանն և քեթխուղները, այնտեղ էին և Լոռիի ու Բամբակի քեթխուղները: Երդվել տվեց Սուլխան էշիկադասուրաշը: ... ու վերադարձավ Տիգրիս: ... Ազատ-խանը: ... Էլիզբարին շնորհեց գանձարանապետի (մուարեթուլուցեսի) [պաշտոնը]: ... Քարթլի ուղարկեց [Հ]ասան-միրզային. [իսկ] մայրը՝ Քեթևան խանումը՝ բազմաթիվ ընծաներով մտավ Երևան, ուր և լավ ընդունելութուն գտավ: ...

444 [=1756] թվին... Հազախի խանն ևս Հազախի բոլոր քոչվորներով տեղահան եղավ ու անցավ Փամբակ: ... Նրանք անցան Տաշիրով՝ Դմանխի բերդի հանդեպ [ճանապարհով]: ...

... Յուզբաշ Ռելվազ Խոթամխաշվիլուն Հազախի խանի... բերդում սպանեցին: ... [Վրացիք] պատանդներ պահանջեցին... Հազախի ավագանիներից: ... [Թաթարական ցեղերը] Հարսի եր-

կիրն ավերել էին ու մեծ ավար բերել [այնտեղից]: Երբ նրանք էրեկի թագավորի մեկնումն իմացան, ... Երևանի խանն Երևանի մեծամեծներին ուղարկել էր գիմալորելու [թագավորին] և մատուցանելու նրան [լավ] ցեղի ձի և թանկագին ընծաներ (փեշքաշ): Նույնպես և Ղարսի փաշան ուղարկել էր ընծաներ և իր երկրի մարդկանց՝ ասելով. «Ձեր ցեղերն իմ երկրին ֆասեցին. քանի որ ձեր և մեր մեջ համերաշխություն է, արդար դատաստան արած: Սա [մեր] թագավորներին [մեծ] վիշտ պատճառեց. [ուստի և] ինչ որ Ղարսի երկրից ավար էին բերել, բոլորը խլեցին, և էրեկի թագավորը դարձյալ Ղարսի փաշային ուղարկեց:...

445 [=1757] թվին դատարկվեց Սարարաթաշվիլուն, Սոմխեթը, Օրբելիանների հողը (հայրենիքը) և ոմանք գնացին Կախեթ, ոմանք անցան վերին Քարթլի և [այլ] իշխանությունները (սաէրիսթոերի). ոչ մի տեղ այն կողմերում այլևս շինություն չէր մնացել:...

446 [=1758] թվին եկավ Բա[ն]ման-խանը, Վրաց աիրոջ հետ հաշտվեց: Նրան ավին Բորչալուի խանությունը: Որքան էլ Քյանջալում Քարթլիի քոչվորներ կային, Ղազախ-Բորչալու-Դեմուրչասալիում... իրենց տեղերում բնակեցրեց:...

**Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր**

1 Պարսկական խան Քարթլ-Կախեթի պարսկական տիրապետության 1738—1747 թթ. ժամանակաշրջանում:  
 2 Արդուլարեկը Վրաց մահմեդական Իսսե թագավորի (1714—1716 թթ.) որդին էր:  
 3 Քերիմ-խան, Պարսից շահ Չենդական հաբսուտությունից, 1750—1779 թթ.:  
 4 Շահադե—շահի որդի, թագածառանգ:  
 5 Քեյմուրազ II, Քարթլիի թագավոր, 1744—1762:  
 6 Խոսքը հին Նախիջևանին է վերաբերում, որ չպիտի շփոթել Կախեթի Նախիջևանի հետ:  
 7 էրեկի II, Կախեթի թագավորը, 1744—1762 թթ.:  
 8 Բնագրում՝ «սարոթերը» (էջ 480), որ Մ. Բրոսսեյն (M. Brosset, Histoire de la Géorgie, II, 97) թարգմանում է «sur les frontières», կցելով նրան այսպիսի ծանոթագրություն. «սարոթերի—սարոթերի limite, on pourrait aussi traduite: dans les districts»: Մինչդեռ այս բառը՝ «սարոթի» մեկնաբանված է իրրե մոզաիկա (Д. Чубинов, Грузино-русский словарь, 1110, հմմտ. Մ. Օրբելյանու բառարանը, 1928 թ. հրատ., էջ 298): Հավանական է արվարձան կամ արջակայք նշանակել:

\* Հմմտ. Լ. Մելիքսեթ-Քեկ, Երկայնաբազուկներին տրված էրեկի II արքայի և Պավել I կայսեր հրովարտակաները, վրացերեն, — «Պատմության Տեղեկագիր», I, Թբ., 1945, էջ 22—32 (Л. Меликсет-Бек, Грамоты царя Иракля II и императора Павла I на имя Долгоруких): Հմմտ. նաև այս հատորի Գ զլխի վերջին հատվածի 8-րդ ծանոթ. (էջ 87):

1) Բնագրում «ամալերի» (էջ 380), այսինքն բեռնակիրներ. միաժամանակ «ամալի» || «ամալա» նշանակում է և «խալուս» (СВИТА), «խալմբի անդամներ»:

- 11 Նույն Արդուլթյանները:
- 12 Նազըր, Պարսից շահ, 1736—1747 թթ.:
- 13 Անունը չի հիշված:
- 14 Տե՛ս այս աշխատության Գ զլխի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. (էջ 88):

15 Մ. Բրոսսեյի Ֆրանսերեն թարգմանության մեջ Démourthasalıs (M. Brosset, Hist. de la Géorgie, II, 150):

16 Թուլի || Թուլա || Թուլա: Հստ Մ. Բրոսսեյի (M. Brosset, Hist. de la Géorgie, II, p. 151, n. 1). գուցե Վարանդայի Տուգը լինի. «un lieu nommé Tong, un peu au S.-E. de Choucha»: Հմմտ. Թուլայեցոց հիշատակությունը Գրիգոր Մագիստրոսի թղթերում (Կ. Կոստանեանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղ., 1910, էջ 161, 164): Մեր կարծիքով, գուցե այստեղ «Թալ[իշ]» կամ «Թալի» մասին լինի խոսքը:

17 Թարգմանում ենք համաձայն վերականգնած բնագրի, որ տվել է Մ. Բրոսսեյն (M. Brosset, Hist. de la Géorgie, II, 151, n. 2),

18 Հստ Մ. Բրոսսեյի (նույն տեղ, 162, n. 2)՝ «les 40-sources, lieu situé à l'O. d'Erivan, dans le canton actuel de Sourmali; toutefois il y a encore, m'a-t-on dit, un autre lieu de même nom, au N. de Kanakir»:

19 Հստ Մ. Բրոսսեյի Ֆրանսերեն թարգմանության (նույն տեղ, II, 163)՝ «meithar-khaneh, որին կցված է այսպիսի ծանոթագրություն. La tente où sont déposés les instruments de musique militaire»:

2) Աղեքսանդր Բ. Բյուզանդացին (1753—1755):

21 Մ. Բրոսսեյի Ֆրանսերեն թարգմանության (նույն տեղ, II, 160)՝ «s'était portée contre Erivan raagea Sadarag»:

22 Այժմյան Աղբյուր, նախկին Ցուրտավը (հմմտ. սույն աշխատության I հատորը, էջ 12—15):

### Ի Ո Վ Ա Ն Ե Պ Ե Ն Տ Ե Լ Ա Շ Վ Ի Լ Ի

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԴԱՎԹԱՐՈՒՄ (1765)

Իովանե Պենտելաշվիլին XVIII դարի երկրորդ կիսի և XIX դարի սկզբների գրականագետ-գրիչն է, որի անվան հետ կապված է «Աղվեսաղբի» թարգմանությունը հայերենից վրացերեն: 1798 թվին. նրա գրչագիրներից ամենահնագույնն է 1765 թ., իսկ ամենաուշը՝ 1808 թ.: Հետևապես Իովանեն ծնված պիտի լինի XVIII դարի առաջին կեսում և վախճանված XIX դարի առաջին քառորդում (Լ. Մեղիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, վրացերեն, Թբ., 1935, էջ 19, ծանոթ. 2. Ա. Լ. Բարամիձե, Հետազոտություններ վրաց գրականության պատմությունից, II, XV—XVIII դդ., վրացերեն, Թբ., 1950, էջ 436—437):

Իովանե Պենտելաշվիլու գրչին է պատկանում, ի միջի այլոց, վրացերեն սիրուն բոլորագիր տառերով (մխեդրուլի) գրված մի հիշատակարան, որ կցված է Սայաթ-Նովայի երգերի ինքնաձեռագիր դավթարին (որ այժմ Հայկական ՍՍՌ Մատենադարանում է պահվում և որը քանիցս հրատարակվել է (Գեորգ Ախվերդյան, Սայաթ-Նովայ, Մոսկվա, 1852, էջ ԺԳ: Ի. Գրիշաշվիլի, Սայաթ-Նովա, վրացերեն, Թբ., 1918, էջ 41. Լ. Մեղիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա. Քննական-կենսագրական էտյուդ, վրացերեն, Թբ., 1930, էջ 86—87. Գ. Լեվոնյան, Սայաթ-Նովա, Եր., 1932, էջ 46 (լուսանկարը). Լ. Մեղիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, Թբ., 1935, էջ 19): Հայերեն թարգմանությունը Թբիլիսիի բարբառով տվել է Գ. Ախվերդյանը (հիշյալ գրքում), որ կրկնում է Գ. Լեոնյանը:

Մենք տալիս ենք նույն հիշատակարանը մեր՝ աշխարհաբար թարգմանությամբ:

#### [ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ]

«Այս խաղերը բոլորը Սայաթ-Նովայի ասած[ներն] և[ն]:  
«Ք. Ո՛վ, ուղղահավատք և քրիստոսասերք: Սրա գրողն ու

այս խաղերի ասողն շատ օր է մթնացրել ու գիշեր լուսացրել սրանց ասելուհի: Այժմ, սրա ընթերցողներ, այս եմ աղաչում, որ սրա[նց] ասողին բարվոք և ողորմի ասելով հիշատակեք: Եվ դուք ևս Քրիստոսի բերանով բարվոք հիշվեք: Ես, Պենտելենց (Պենտելանթ) Իովանեն, գրեցի այս հիշատակարանը մայիսի 1-ին քրոնիկոնի 453-ին [=1765 թ.]»<sup>1</sup>:

#### Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Բացի այս հիշատակարանից և հայերեն խաղերին կցած վրացերեն post-scriptum-ներից, նույն ձեռագիր մատյանում կա 2 հիշատակարան վրացերեն անվարժ գրչի (հավանական է, Սայաթ-Նովայի երեխաներից կամ բարեկամներից մեկի), որ կարդացվում է այսպես (Լ. Մեղիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, էջ 88—89):

ա. «Բ. երանի աստված տեր-Ստեփանին ողջ և առողջ վերադարձնի, այս դավթարը ինձ կարդացնի. այս խնդիրն [անկատար] չմնա և ևս նրան ծառայեմ» (էջ 24):

բ. «Բ. երանի տեր-Ստեփանը ողջ և առողջ դա, այս դավթարն ինձ կարդացնի՝ իր երեխաների կենաց համար. իմ խնդիրն [անկատար] չմնա և ևս՝ մեղապարտ՝ նրան ծառայեմ. ամեն» (էջ 84):

Ինչպես Իովանե Պենտելաշվիլու 1765 թ., նույնպես և անսուսն գրչի այս զույգ հիշատակարանները գալիս են մի անգամ ևս ապացուցելու, որ Սայաթ-Նովայի խաղերի ինքնաձեռագիր մատյանը (դավթարը) գրված և ավարտված է եղել 1765 թվին, երբ Սայաթ-Նովան դեռևս աշխարհական է եղել, և որ մոտավորապես այս թվականի շուրջն է տեղի ունեցել նրա հեռացումը ոչ միայն վրաց երեկի և թագավորի արքունիքից (երբև պալատական աշուղ-սագանդարի), այլև Թբիլիսիից բռնաբերվելու, հավանական է, հասարակական-քաղաքական բնույթ ունեցող հանդամանքների կապակցությամբ, եթե, ի հարկե, ճշովի մեր նոր գիտողությունը, որ Սայաթ-Նովան, իբրև Թբիլիսիի հայ համայնքի աչքի բնկնող ներկայացուցիչներից մեկը, կարող էր այս կամ այն չափով մասնակից լինել Հովսեփ Էմինի՝ երեկի թագավորին ոչ հաճելի գործերակերպի հետ (հմտ. А. Р. Иоаннисян, Иосиф Эмин. Ереван, 1945, стр. 252), որի հետևանքով սա ևս բռնվել է վրաստանից:

Իսկ անսուսն գրչի զույգ հիշատակարաններին, որ գրված պիտի լինեն 1765 թվից հետո, երբ Սայաթ-Նովան քահանա է ձեռնադրվում տեր-Ստեփանոս անունով, միանգամայն զուգադիպում են Սայաթ-Նովայի մյուս ինքնաձեռագիր ժողովածուի հիշատակարանները 1766 թ. ներքո, որ գրված են նրա՝ Ջաքաթալայի կախավանում եղած միջոցին (Լ. Մեղիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, էջ 82—83, 05—015):

ա. «Ստեփանոսի քահանայ]իս է գիրքս այս. ողորմ[ի ասէք]» (էջ 1ա):

բ. «Առ նոյն յայնմանէ տուշութէ, զի այսպէս ունէր. Սայադ-Նովույ գրէլ է» (էջ 37 բ):

գ. «Գրեցաւ ի կախոյ քարվասարէն: Ով, ընթերցող, յիշեայ ի սր աղօթս բոյ զգծող մեղայաբա զՍտեփանոս քահանայեայս և իւր

ժնողացն մահտեսի կարապետն, մօրն Սառային եւ այլ ամ այր-  
կանց մե[րոց...» (էջ 100 ք):

դ. «Ով, ընթերցող, յիշեա զՍտեփանոս քհանայայս Քփսցի. զրեցաւ  
կախ. ՌՄԺԾ» (էջ 170 ք):

ե. «Թուին հայոց ՌՄԺԾ: Գիր տարւոյն ցօն է. տանուտէրն Այծեղ-  
ջիւրն է: Իսկ խեցդետինն և կարիճն և ձուկն նահանջեն. երբ գիր  
տարւոյն ի նոցա կարգն հասանիս ի մարտի ամիսն, թէ քէ է, զու-  
փիւրն բանեցոյ. և թէ փիւր է, զու գհիւնն. սոյնպէս մինչև ցայրն.  
Ի տարւոջն. ա. գիր յառաջ տուր. և թիւ մի աւելի կալ զթուականն.  
և ուղիղ գաս: Գրեցաւ ի կախոյ քարվասարէն: Ո՛վ, ընթերցող,  
յիշեայ զգծող գրոյս մեղապարտ Ստեփանոս քայհանայս, որ Սաեազ-  
նովայ կոչեն, և հայրն իմ մահտեսի կարապետն և մայր իմ Սար-  
բայ. և զուք յիշեալ լինիք յառաջի Այ. ամէն» (էջ 276 ք):

(Հմմտ. նաև Հ ք. Ա ճ ա ո ե ա ն, Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի-  
Վիեննա 1910, էջ 97):

ժ

### Ա Ն Ա Ն Ո Ւ Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ի Ր

«ՎՐԱՍՏԱՆԻՆ ԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» (1769)

Անանուն աշխարհագիրը, որ Անտոն I կաթողիկոսին մտ-  
կանգնած մարդկանցից մեկը պիտի լինի և որը XVIII դարի երկ-  
րորդ կիսի գործիչ է, 1769 թ. 14 հունիսին ավարտել է վրացե-  
րեն և ուսերեն լեզվով մի զեկուցագիր՝ «Վրաստանին կից եր-  
կըրների նկարագրությունը» վերնագրով, որ ուղարկվել է  
Ղզլարի կոմենդանտ գեներալ-մայոր Ի. Լ. Ֆոն-Ֆրասուենդոր-  
ֆին Ռուսաց արքունիքին ներկայացնելու համար:

Նկարագրության վրացական տեքստը հրատարակվել է 2  
անգամ, նախ՝ ըստ միակ ձեռագրի՝ պրոֆ. Ա. Յագարելու կող-  
մից, գրքում՝ А. А. Цагарели, Грамоты и другие истори-  
ческие документы, относящиеся до Грузии, т. II, вып. 1.  
Грузинские тексты с 1768 по 1801 год, СПб. 1898, էջ 8—13,  
այսա ըստ 3 ձեռագրի (Վրաց մեջ գրագիտություն տարածող  
նախկին ընկերության [այժմ Վրաստանի պետ. թանգարանում]  
հավաքածուի №№ 4989 և 2316, և Քութայիսի դավառագիտական  
թանգարանի № 203) մեր գրքույկում՝ Լ. Մելիքսեր-Քեկ,  
Վրաստանին կից երկրների նկարագրությունը XVIII դարի երկ-  
րորդ կիսի, իբրև նյութ Այսրկովկասի պատմական աշխար-  
հագրության քարտեզով, վրացերեն, Վրաստանի Աշխարհագրա-  
կան ընկ. հրատ., Թբ., 1936, էջ 15—31 (ձախ սյունակ):

Ռուսերեն տեքստը ևս 2 անգամ է հրատարակված. նախ՝  
А. А. Цагарели, Грамоты и другие исторические доку-  
менты, относящиеся до Грузии, т. I, с 1768 по 1774 год, I,  
СПБ, 1891, стр. 433—438. այսա՝ Л. Меликсет-Беков, «Опи-  
сание сопредельных с Грузией стран» второй половины XVIII  
века, — Труды Тбил. гос. университета, т. XVIII, 1940, стр.  
125—137 (ձախ սյունակ):

Նկարագրության բնութագիրը տես նաև մեր գրքույկում.

Обзор источников по истории Азербайджана. Выпуск II. Л., Меликсет-Беков, Источники грузинские. Баку, 1939, стр. 19—20.

Նկարագրությունը բաղկացած է 16 գլխից, հետևյալ հաջորդականությամբ. նկարագրություն՝ 1. Ախալցխի, 2. Ղարսի, 3. Բայազետի, 4. Երևանի, 5. Գյանջայի, 6. Խամսայի, 7. Ղուբայի, 8. Կուսուխի, 9. Շաքիի, 10. Ալի-սուլթանի, 11. Ճարի ձորի, 12. Զինիխի, 13. Թալիսի և Բելաքանի, 14. Խուստի, 15. Գերիմ-խանի [գործերի] և 16. Ասորոց:

Սրանցից մի մասը անմիջապես Հայաստանի անցյալին է վերաբերում, չհաշված այն դուռները, ուր հայերի մասին ևս կան տեղեկություններ, մանավանդ վիճակագրական տվյալներով: Թե որտեղ, որքան հայ է ապրում կամ ո՞վ և որքան զորք կարող է դուրս բերել պատերազմի ժամանակ:

Հայաստանին և հայերին վերաբերյալ դուռները կամ առանձին մասերը բերում ենք մեր թարգմանությամբ անմիջապես վրացերեն բնագրից:

[ՀԱՅԵՐԸ ՎՐԱՍԱՆԻՆ ԿԻՑ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ]

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ղ Ա Ր Ս Ի

Ղարսն (Ղարսի) Արարատ լեռան մոտ գտնվող երկիր է: Սա՝ Հայաստանի թագավորության մասն է, [թե]և [նրա բնակիչներն] այժմ մանակեղանացած են: Սակայն այստեղ շատ քրիստոնյաներ [ևս] կան դավանությամբ հայեր, սակայն թիվ [նա]և վրացիներ: Ունի ամուր լեռ և բնդարձակ հարթավայր: Գաղտը [ի] [առատ] է արտերով [և] անտառազուրկ է. ուղղված է դեպի հարավ և մի փոքր թեքված արևմտյան կողմից: Այստեղ նստած է փաշա՝ երկնշանակիր և երբեմն եռանշանակիր. ի վիճակի է իր երկրում հավաքել երկու հազար ռազմիկ: Եվ մեր (Քարթլիի) երկրի և Ղարսի սահմաններն իրար կպչում են: սա նույնպես [Սամցխե-] Սաաթարագոյի սահմանակից է: Այստեղ ևս շատ տեղեր կան լիզգիներից ավերված: Եվ սրանք (զարսեցիները) պատերազմում բավական խիզախ չեն:

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Բ Ա Յ Ա Ջ Ե Տ Ի

Բայազետը երկիր է, ուր նստած է փաշա՝ երկնշանակիր: Սա ևս Հայաստանի թագավորության մասն է և ի վիճակի է իր

երկրից դուրս հանելու, առանց ոռճիկի, հազար հինգ հարյուր ռազմիկներ: Այստեղ կան շատ քրիստոնյաներ՝ դավանությամբ հայեր: Այս Բայազետի քրդերը խոնթքարին այլ կերպ չեն ծառայում, բայց եթե իրենց [հոժար] կամքով: [Բայազետը] գտնվում է հարավում, Արարատի հետևը, սահմանակից է Երևանին, Սալմաս[տ]ին և Ղարսին: Եվ սրանք (բայազետցիք) նրանցից (զարսեցիներից) ավելի փորձված են պատերազմում: Եվ սրանց երկիրը շեն է ու թշնամուց չփասված:

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Ր Ե Վ Ա Ն Ի

Երևանը Իրանի (Էրանի) մասն է՝ բեգլարբեգություն, ուր առաջներում եղել է հայոց արքայի գահը (թախտը)<sup>1</sup>: Այստեղ նրստած է բեգլարբեգ, սակայն ոչ ժառանգաբար: Եվ այստեղ է հայոց կաթողիկոսի գահը (թախտը)<sup>2</sup>: Սա (Երևանը) ունի և՛ սար, և՛ դաշտ շատ, և պտղավետ-բերքավետ է: Այստեղ բնակվում են շատ քրիստոնյաներ, դավանությամբ հայեր: Սրանց (երևանցիների) երկիրը մի տասը-տասնհինգ տարի սրանից առաջ<sup>3</sup> փասված էր լիզգիներից և զղրաշներից, մինչև որ մեր (վրացիներիս) ձեռքը չընկան: Այժմ, երբ մեր ձեռքի տակ ընկան, ամեն ինչից ապահով են և մեղ են ծառայում<sup>4</sup>. սակայն անշեն տեղեր ևս շատ ունին: [Երևանը] գտնվում է հարավային կողմում, Քարթլիի և Բայազետի միջև: Մեր երկրի (Քարթլիի) և այստեղի ասորիներն իրար հետ շփվում են: Մեր (Քարթլիի) և նրանց (Երևանի) միջև այնպիսի լեռ կա, որով սայլ և քարավան է անցնում: Եվ [Երևանը] ի վիճակի է դուրս հանելու երկու հազար ռազմիկներ, սակայն սրանք ևս պատերազմում ու մարտերում վախկոտ են, անպեն են և մանավանդ անփորձ:

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Գ Յ Ա Ն Ջ Ա Յ Ի

Գյանջան Իրանի (Էրանի) մասն է՝ բեգլարբեգություն, չոչակալոր քաղաք՝ գոլված բերդով... Այստեղ շատ քրիստոնյաներ կան, դավանությամբ հայեր: ...Այս երկիրը գտնվում է արևելքից, հարավից [և արևմուտքից] Շիրվանի, Ղարաբաղի, Երևանի, Խամսայի և Քարթլիի միջև: ... [Գյանջեցիները] երևան[ցիներ]ի պես ըստ կարողության հնազանդ են մեղ վրացիներիս... պատերազմում երևանցիներից ավելի արիություն և փորձառություն ունեն:

\* Բերում ենք կրճատումով: — Լ. Մ.-Ք.

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՄՍԱՅԻ

Պամսան՝ երկիր է, որի մեջ մտնում են յոթը (sic) մելիքություններ<sup>5</sup>: Այս [տեղի բնակիչները] քրիստոնյաներ են՝ դավանությամբ հայեր և սրանք ևս ունեն [իրենց] կաթողիկոսը<sup>6</sup>: Սրանք ևս Պարսից թագավորի արքունիքի հարկատու են եղել: Երբ Պարսից թագավորությունը քայքայվեց, այստեղի քոչվորներից մեկը, որ մահմեդական էր, Ջվանշեր (Ջոանշեր) ցեղից, ուժ հավաքեց: Եվ այս Պամսայի մեջտեղը հնուց կա մի ամուր բերդ, որն և գրավեց [Ջվանշերը]: Մեր (վրացոց) և Ջվանշերի (Ջոհանշիրի) միջև տարածայնություն ծագեց: Եվ օգնականությամբ աստծո՝ մեր և մեր զորքից պարտվեցին ու ավերվեցին ոչ թե այն քրիստոնյա-հայերը, այլ միմիայն այն Ջվանշերը (Ջոհանշիրը): Այժմ այնպիսի պատճառներ առաջացան, որ մեր (վրացոց) և նրանց (ջվանշերցիների) միջև խաղաղություն է տիրում: Պամսան ունի մեծ ամրոց, շատ լեռներ, թեև ժայռոտանտառոտ, և դաշտ էլ ունի ջրաբաշխ, հույժ բերքատու: Իր երկրում Ջվանշերը (Ջոհանշիրը) ի վիճակի է դուրս հանելու երկու հազար և հինգ հարյուր ռազմիկներ և հայերն ևս դուրս կդան չորս հազար հինգ հարյուր: Այս երկիրը՝ տարածվելով արևելքից արևմուտք՝ հասնում է մինչև Ղարադաղի և Գյանջայի սահմանները, և գտնվում է Շիրվանի ու Նախիջևանի, Գյանջայի և Ղարադաղի միջև: Այս՝ Պամսայի մարդիկ, որոնք հայեր են, հույժ քաջարի են, ռազմատենչ և խիզախ: Եվ այս մելիքների միջև փոխադարձ նախանձի և թշնամության առաջացումը Ջվանշերի (Ջոհանշիրի) ձեռքը գցեց այս[տեղի] հայերին<sup>7</sup>:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՔԻԻ\*

Շաքիի խանի պապը Հաջի-Չալար էր կոչվում, և այս Հաջի-Չալարի հայրը հայ երեց էր, և ինքը Հաջի-Չալարը մահմեդականացել էր: ...Այս երկրում բնակվում են շատ քրիստոնյաներ [դավանությամբ] հայեր՝ բացահայտ, և վրացիներ՝ դաղտն[արար], մահմեդականներից երկյուղ կրելու պատճառով<sup>8</sup>...:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՃԱՐԻ ՁՈՐԻ, ՋԻՆԻՆԻ,  
ԹԱԼԻ ԵՎ ԲԵԼԱՔԱՆԻ\*

Թալիի ձորը, Ջինի[խ]ի ձորը և Բեյաքանի ձորը անտեր են

\* Տես նախորդ ծանոթությունը:—Լ. Մ.—Բ.

և սրանց ժողովուրդը տափաստանի ռայաթ-թյարաքամա է, որոնց մեջ գտնվում են սակավաթիվ քրիստոնյաներ, ոմանք ուղղափառներ՝ գաղտն[արար], և ոմանք հայեր՝ բացահայտ...:

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Հեղինակը ուզում է ասել, որ Հայոց թագավորների աթոռանիստը Երևանյան երկրում է եղել:

<sup>2</sup> Հեղինակը ուզում է ասել, որ Հայոց կաթողիկոսի աթոռանիստը Երևանյան երկրում է:

<sup>3</sup> Ի նկատի ունի Երևանի խանության առումը էրեկլե 11-ի կողմից 1752 թվականին և Երևանի ավերումները մինչ այդ թվականը: Հմմտ. այս աշխատության ժՅ գլուխը, 18-րդ ծանոթ. (էջ 181):

<sup>4</sup> Տես նախորդ ծանոթությունը:

<sup>5</sup> Այստեղ, անկասկած, սխալ է պիտի լինի հինգ մելիքություններ:

<sup>6</sup> Ի նկատի ունի Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոսությունը:

<sup>7</sup> Հմմտ. Բ ա Փ Ֆ ի, Պամսայի մելիքությունները (1600—1827), Թիֆլիս, 1882:

<sup>8</sup> Հավանական է, որ հայադավան և վրացադավան քրիստոնյաների ներքո հեղինակը ի նկատի ունի ոչ միայն հայերին և վրացիներին, այլև հայադավան և վրացադավան ուտիացիներին (Հմմտ. Л. Меликсет-Бекоев, К истории удин. Utica-Armeniacae, — Труды Тбилис. Гос. Унив., т. XXIII, 1942, էջ 52—53):

ԺԱ

### Ա Ն Ա Ն Ո Ւ Ն Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ի Ր

«ՔԱՐԹՆԻ ԵՎ ԿԱՆԵԹԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» (1770)

XVIII—XIX դդ. վրաց գրականությունը պահպանել է մի շարք անանուն հեղինակների գրչից ելած «վիճակագրություններ» գեոգրաֆիային վերաբերող տեղեկություններով հանդերձ:

Ահա այդպիսի «վիճակագրություն»-ներից մեկը, ուր գտնում ենք տեղեկություններ և հայերի մասին, էրեկլե II թագավորի կարգադրությամբ 1770 թվի 5 ապրիլին կազմված՝ Քարթլի և Կախեթի բնակչության վիճակագրությունն է, որ հրատարակել է պրոֆ. Ա. Խախաճյանը, հոսիվածում՝ «Վրաստանի անցյալի վիճակագրական և տնտեսական ուսումնասիրության համար», վրացերեն, — «Կվալի», 1898 թ. № 11, էջ 194—195 (հմմտ. Սարգիս Կակարաձե. Պրատուսներ Վրաստանի պատմության խնդիրների մասին, վրացերեն, Թբ., 1920, էջ 27—29):

#### [ՀԱՅԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ]

Տիգրիս քաղաքը: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, հայեր, կաթոլիկներ (ֆրանկներ) և աղբրեջանցիներ՝ 4090 ծուխ:

Քաղաք Գորին: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, կաթոլիկներ (ֆրանկներ) և հայեր՝ 500 ծուխ:

Ծիլկանի քաղաքը: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, հայեր և հրեաներ, խիզանների հետ միասին՝ 700 ծուխ:

Քաղաք Սուրամը: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, հայեր և հրեաներ՝ 200 ծուխ:

Կախեթում՝ քաղաք Թելավը: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ և հայեր խիզաններով ու Թելավի ծայրին [գլտնվող] գյուղացիներով՝ 740 ծուխ:

Քիզիդումն է քաղաք Սղնախը (Սիզնաղի)<sup>1</sup>: Այստեղ բնակվում են հայեր՝ 100 ծուխ:

Արագվի վրա է փոքր քաղաք Անանուրը: Այստեղ բնակվում են [ուղղափառ] վրացիներ և հայեր՝ 100 ծուխ:

Քուանի վրա է փոքր քաղաք Ախալգորին<sup>2</sup>: Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ և հայեր՝ 140 ծուխ:

...Քարթլում [այլ և այլ տեղերում] կան 500 ծուխ հայեր: Բորչալուն և Փամբակի ձորը մի ամբողջ խանություն է: Այստեղի բնակիչները՝ ցիրուցան են եղել այլ վայրերում (թեմերում) և այժմ [այստեղ] կա 2560 [ծուխ] հայ:

Հաղախը մի ամբողջ խանություն է, և այստեղի բնակիչներից շատերը ցիրուցան են եղել ուրիշ երկրներում. և այժմ Հաղախում աղբրեջանցիները 3000 են և հայերը 1200 [ծուխ]:

Շամշաղինը մի ամբողջ խանություն է. Այստեղ ապրում են աղբրեջանցիներ 2200, հայեր ևս կան՝ 1200 [ծուխ]...:

Կախեթում ուղղափառ քրիստոնյաներ կան խիզաններով 7000 ծուխ, Կախեթի հայերն են 450 ծուխ, Կախեթի աղբրեջանցիները 1000 ծուխ:

Կախեթում... կան քրիստոնյա ուղղափառ [վրացիներ], հայեր և աղբրեջանցիներ 10,000 ծուխ<sup>3</sup>:

... Ավեր են Տաշիրը, Գուջարեթը և Սոմխիթը, որ մեծ և բազմամարդ երկիր է[ր], ուր քառասունից մեկն է մնացել...

Սարարաթաշվիյուն ավերված բազմամարդ երկիր է, ուր հարյուրից մեկն է մնացել՝ խիզաններ: Այս Սոմխիթն ու Սարարաթաշվիյուն ներքին Քարթլին է...:

Աղբրեջանցիներից կարելի է դուրս հանել զորքի մեջ 5.000, վրացիներից և հայերից՝ 18.000, միասին՝ 23.000 [հոգի]:

#### Մ Ա Ն Ո Ւ Ն Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Այս Սղնախը (Սիզնաղի) չպիտի շփոթել Սղնախ-Ղարաբաղի հետ, որ հաճախ հիշատակվում է Պապուհնա Օրբելյանի «Քարթլի անցքերը» երկում (տե՛ս այս աշխատության Ը գլուխը) և այլուր:

<sup>2</sup> Այժմյան Լենինգորի՝ Հարավ-Օսեթի ինքնավար մարզի սահմաններում:

<sup>3</sup> Տարորինակ է Կախեթի վիճակագրության այս կրկնությունը:



ԺԲ

Դ Ա Վ Ի Թ Ա Լ Ե Ք Ս Ի Մ Ե Ս Խ Ի Շ Վ Ի Լ Ի

«ՎՐԱՍՏԱՆԻՆ ԿԻՅ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (1784), «ՔԱՌԱՐԱՆ» (1804)

Դավիթ Մեսխիցիի XVIII դարի երկրորդ կիսի և XIX դարի առաջին քառյակի գործիչ է, Վրաց գրականության ականավոր դեմքերից մեկը, որը հայտնի է իր բազմակողմանի գործունեությամբ՝ իբրև բանաստեղծ, պատմաբան, փիլիսոփա, բառարանագետ և, որ գլխավորն է, կալիգրաֆ: Սա Թբիլիսիի Անչխիսատիի տաճարի ավագերեց Ալեքսիի որդին էր, ուստի և հաճախ «Ալեքսի-շվիլի» (Алексеев) է կոչվում, քան իր ազգանունով «Մեսխիցի» (Месхиев), երբեմն երկուսով միասին՝ «Ալեքսի-Մեսխիցի» (Алексеев-Месхиев), ինչպես տրված է սույն հատվածի վերնագրում: Դավիթը ծնվել է Թբիլիսիում 1744 թ., ապա կրթությունը ստացել է Անտոն I կաթողիկոսի մոտ և Թբիլիսիի սեմինարիայում (բացված 1755 թ.), ուր առաջին սեկտորը կամ «սքոլապետն» էր հայ քահանա տեր Փիլիպպե Ղայթմաղաշվիլին: 1782 թվականին էրեկլե թագավորի հրամանով նշանակվել է Թելավի սեմինարիայի սեկտոր և այդ պաշտոնում մնացել մինչև 1803 թիվը: Վախճանվել է Թբիլիսիում ծայրահեղ չքավորության մեջ 1830 թ. և, ըստ Պ. Իոսելյանի վկայության, թաղվել է Մթածմինդայի կամ Մամա-Դավիթի վանքի դավթում (դերեզմանի տեղն անհայտ է), ուր 1829 թ. թաղվեց Ա. Ս. Գրիբոեդովը: Դավիթ Մեսխիցիու կամ, ինչպես սովորաբար նրան կոչում են, Դավիթ Ռեկտորի կալիգրաֆիկ գործերից ամենանշանավորն է նրա «Ծաղկաբաղ»-ը, որ պարունակում է զանազան բանաստեղծների չափածո երկերը և, ի միջի այլոց, Շամչի-Մելքոյի (Մելքոն Դուլքանյանի) վրացերեն բանաստեղծությունները թվով 6, որ մենք օգտագործել ենք մեր համապատասխան աշխատության համար՝ «Շամչի-Մելքո» վերնագրով (որը պատրաստ է տպագրության), մասամբ հրապարակ են հանված Տ. Ռու-

խաձեի գրքում «Հին վրացական քնարերգության պատմությունից», վրացերեն Թբ., 1954, էջ 196—204:

Նույն Դավիթ Ռեկտորի պատմագրական - բանասիրական գործերից նախ և առաջ պիտի հիշատակել «Վրաստանին կից երկրների նկարագրությունը», որն անանուն հեղինակի 1769 թ. կազմած նույնանուն երկի (տես այս աշխատության ժ գլուխը) գրեթե բառացի կրկնությունն է, թեթև վերամշակումով, որ կատարվել է 1784 թվականին կամ սրանից հետո: Այս երկը հրատարակված է մեր գրքույկում՝ Լ. Մելիքսեթ-Ֆեկ, Վրաստանին կից երկրների նկարագրությունը XVIII դարի երկրորդ կիսի՝ իբրև նյութ Այսրկովկասի պատմական աշխարհագրության, քարտեզով, Վրաստանի Աշխարհագրական ընկերության հրատարակություն, վրացերեն, Թբ., 1936, էջ 15—29 (աջ սյունակ): Նույնը մեր ուսերեն թարգմանությամբ. Л. Меликсет-Бек-ов, «Описание сопредельных с Грузией стран» второй половины XVIII века. «Труды Тб. Гос. Унив.», т. XVIII, 1940, էջ 125—136 (աջ սյունակ):

Դավիթ Ռեկտորի երկրորդ գործը Սուլխան-Սարա Օրբեղիանու Բառարանի (տես սույն աշխատության II հատորը, էջ 118—124) մեկնությունն է, որ մենք համառոտ «Բառարան» ենք կոչում: Վերջինս հրատարակված չէ, սակայն նրա ընդհանուր բնութագիրը բնորոշ քաղվածքներով տրված է պրոֆ. Վ. Բերի-ձեի հատուկ հոդվածում «Դավիթ Ռեկտորը՝ բառարանագետ, Սարա Օրբեղիանու շարունակողը», վրացերեն, — Թբ. Պետ. համալսարանի Աշխատություններ, հ. I, 1936, էջ 310—332:

«Վրաստանին կից երկրների նկարագրությունը» բաղկացած է 13 գլխից հետևյալ հաջորդականությամբ. նկարագրություն՝ 1. Ախալցխի, 2. Վարսի, 3. Բայազետի, 4. Երևանի, 5. Գյանջայի, 6. Խամսայի, 7. Ղուբայի, 8. Կումուլսի, 9. Շաքիի, 10. Ալիսուլթանի, Ճարեցոց և կից ձորերի, 11. Խունձախի, 12. Դիդո-Քիստի, Ղլիդի, Զուրձուկի, Թուշ-Փշավ-Պեմսուրի և Խևիի, և 13. Քերիմ-խանի գործերի:

Սրանցից մի մասը (ինչպես և այս աշխատության ժ գլխում) անմիջապես Հայաստանի անցյալին է վերաբերում, չհաշված այն գլուխները, ուր հայերի մասին ևս կան տեղեկություններ, մանավանդ վիճակագրական տվյալներով, թե որտեղ, որքան հայ է ապրում կամ որքան զորք կարող է դուրս բերել պատերազմի պահին:

Այս բոլորը կրկնութունն է 1769 թ. անանուն աշխարհագրի սվյալների. ուստի և նրանց թարգմանութունը չենք տալիս: Ինչ վերաբերում է մեջբերումներին (մեր թարգմանությամբ) «Բառարան»-ից, այդպիսիները մենք կատարել ենք անմիջապես Դավթի ձեռագրից, որ մեզ սիրալիք տրամադրեց պրոֆ. Վ. Բե-րի ձեռն (որի սեփականութունն է այն), մասամբ նաև վերջի-նիս հոսվածից, որը վերևում հիշեցինք:

«Բ Ա Ռ Ա Ր Ա Ն»-Ի Ց

Արոցի՝ նույն Ղալուլին (Ղաիդ՝ուլի) է՛:

Ալանի՝ Հայկազունների (Հատուխանի) սահմանակից է: Ալանը Դաղստանցի է, և Դաղստանի տափաստանում ապրող լեզգիները: Ալիս գետը սկիզբ է առնում Փոքր Հայքից, անցնում է Սերաստիայի մոտով և ուղղվում է դեպի արևմուտք՝ Գամիրք, այսինքն Կասպագոլկիա, [որ] քաղաք [է] Նոր-Կեսարիայի (Նեո-Կեսարիայի) մոտերքում, և ապա անցնելով Հանգրա քաղաքով, Պաֆլագոնիայի միջով, թափվում է Պոնտոսի ծովը, այսինքն Սև ծովը:

Ամինաշատի՝ ... կաթուղիների (Փրանկների) տեղ ողորմյան (կիրիելիստնը):

Ամստերգամ՝ առաջին քաղաքն է Հուլանդիայում, որին հայերը Մարդամ (Միսրիգամ) են կոչում՝...

Արձանիզի՝ նույն արձանգի Բարթիս-Յլուրերայում՝:

Աղուանիա՝ երկու թեմ՝ առաջինը Մարքը (Միդիա) և երկ-րորդը՝ Ալբանիա կամ Արնատու, և երրորդն էլ Տիգրանի կողմից ժողոված զորքերը, որ են ալանացիք, հայկազունների (հատսյան-ների) սահմանակիցները, այսինքն դաղստանցիք և տափաստա-նում ապրող Դաղստանի լեզգիները:

Բիթլիս՝ հնում հայկական քաղաք էր, ուր նրանց (հայերի) իշխաններն ու ազնվականներն էին ապրում, այժմ գրաված ու-նին օսմանները: Այստեղ կա ծխախոտ (թամբաքո)՝ ամենալավը:

Միդիա՝ ...ընդարձակ երկիր է մեծն Ասիայի կամ Ազիայի, որին սահմանակից են՝ հյուսիսից Կասպից ծովը, արևելքից Վըր-կանը (Իրկանիա) կամ Աստրաբադը (Ասդրաբաթի) և Պարթիան, Պարթիան նույն Շաքի-Շիրվանն է, հարավից՝ Պարսկաստանն ու Ասորեստանը, արևմուտքից՝ Մեծ Հայքը, և այժմ պարունա-կում է Շիրվանի, Ղարաբաղի և այլ թեմերը: Երբեմն միդիա-ցոց իշխանութունը շատ տարածված էր, մինչև որ ասորեստան-

ցիք տիրեցին Հայկազանց (հատսյանների) ասորեստանցիներին, Պարսից և Միջագետքի մասերին: Միջագետքը Մեսոպոտամիան է, որ այժմ Դիարբեքիր է կոչվում:

Պարթի՝ նույն Ռանն է, որ է Ղարաբաղը, Շաքի-Շիրվանը, Ղարալը, Թալիշը: Որքան որ այս կողմերում երկրներ կան, բո-լորը կոչվում են Պարթիա: Գրիգոր՝ Հայոց Լուսավորիչն էլ այս-տեղացի էր: «Գործք Առաքելոց»-ում, ուր հիշվում են պարթևք, մարք (միդիացիք), ուժիկներ<sup>5</sup>, սրանք են պարթևները, մարք (միդիացիք), թավրիզեցիք, ուժիկներ, քյուրդեր:

Պատնեզի՝ ...հայերեն [բառ] է՛:

Պետրիծի՝ ...Քաղկեդոնի ժողովից [հետո]... հայերն անջա-վեցին ճշմարիտ դավանութունից և խոստովանեցին մի բնու-թյուն, մի ներգործութուն, մի կամք Քրիստոսի մեջ, նույն-պես և խաչեցարը, անխմոր և անջուր զոհարելութունը...: Աթեն-քում Իոանե [Պետրիծ]ու ընկերակիցներն էին հայեր[ից]՝ Դա-վիթ Անհապթ փիլիսոփան, որը հորինեց «Մահամանաց գիրքը», պյուրոնացոց դեմ, և մյուսը՝ Մովսես Խորենացին (Մոսես Խորա-նելի), որը հորինեց բառարան<sup>6</sup>:

Բանի՝ նույն Ղարաբաղն է, որն Ալի-սուլթանի [երկրի] մասն է՛:

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Արոցը նույն Աշոցքն է, հետագայում Ղալուլի-Ղաղանջի. Հմմտ. «Վրաց աղբյուների» I հատորը, էջ 148, ծանոթ:

<sup>2</sup> Հայերեն բառ է՝ ամենաւաս (հմմտ. «խորանաւաս»)՝ Քրիստի բար-բառին հասուկ արտասանությամբ՝ ամինաշատ:

<sup>3</sup> Հմմտ. Լեո, Հայկական տպագրութուն, I, ր. տպ., Թբ., 1904, էջ 443:

<sup>4</sup> Հայերեն բառ է, ազգավազած, զուցե «արժանիք», երեցութուն, ավագութուն, ըստ Դ. Չ ու ը ի ն ո Վ ի վրացերեն-առևերեն բառարանի (էջ 47) старшинство.

<sup>5</sup> «Գործք առաքելոց» (II, 8). «զիարդ լսեմք մեք յիւրաքանչիւր բար-բառս մեր, յորում ծնեալ եմք. պարթևք և մարք և իլամացիք և որ բնակ-եալ են ի Միջագետս»: Հմմտ. Ս. Меликсет-Бек, Armeno-Hebraica, «Тру-ды Гос. Ист.-Этногр. Музея евреев Грузии», т. III, Тбл., 1945, стр. 227—228, 258.

<sup>6</sup> Հմմտ. հայերեն «պատնեզ»-ը:

<sup>7</sup> Հմմտ. «Վրաց աղբյուրների» I հատորը, էջ 39, 40, 58, 60:

<sup>8</sup> Այստեղ գործ ունենք ակնհայտնի անաբոնիզմի հետ, քանի որ Դա-վիթ Անհապթն ու Մովսես Խորենացին իրար ժամանակակից լինելու դեպ-քում (VI դ.) ոչ մի կերպ չէին կարող լինել ընկերակիցներ Իոանե Պետրի-ծու, որը XI—XII դդ. գործիչ է: Գուցե այստեղ ակնարկ լինի այդ երեք

անձնագրության մեկնույն իղեղնոգիական ուղղության (հեղինակություն-հունաստի-րական) մասնակից լինելու մասին: Հմմտ. Լ. Մելիքսեթ-Ֆելկ, Հայ հին գրականության պատմությունը, վրացերեն, թր., 1941, էջ 11, 66—68, 80—86, Հմմտ. նաև Լ. Մելիքսեթ-Ֆելկ, Դավիթ Անհաղթի Վրաստանում լինելու հարցի շուրջը, — ՀՍՍՌ Գիտ. ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի «Գրական հետազոտություններ», I հ., Երևան, 1946, էջ 243—267:

<sup>9</sup> Ռանին (Րանի) նույն Առանն է:

ԺԳ

## Ի Ե Ս Ե Բ Ա Ր Ա Թ Ա Շ Վ Ի Լ Ի

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ - ԿՏԱԿԸ (1786)

Հին վրացական մեմուարային գրականության մեջ առանձնապես աչքի է բնկնում Իեսե Օսեի որդի Բարաթաշվիլու անվերնագիրը հրկասիրությունը, որին «Իմ գլխով անցածը» կարելի է կոչել:

Իեսե Բարաթաշվիլին ծնվել է 1728 թ., 1742 թվից սկսած Դեսեն այլևայլ գրքեր է արտագրում, վերջապես, ինքն էս հոգինում է 2 աշխատություն. 1. «Իմ գլխով անցածը» սկսած 1768 թվից և հասցրած մինչև 1786 թվականը, և 2. «Ժամանակագրությունը», որն ընդգրկում է «Ընտանեկան խրոնիկա»-ն. 1786 թվին Իեսեն 58 տարեկան հասակում սպանվել է ավազակներից:

Հայաստանի և հայերի մասին տվյալներ պարունակում է Իեսե Բարաթաշվիլու առաջին աշխատությունը՝ «Իմ գլխով անցածը», որը տալիս է բավական հարուստ նյութ Վրաստանի և հարևան երկրների քաղաքական կացության մասին, ինչպես վերև նշեցինք, 1768—1786 թթ. շուրջ, օրինակ՝ տեղեկություններ վրաց թագավորների քաղաքական-պետական մեջոցառումների և պատերազմական գործողությունների, Վրաստանի ներքին կենցաղի, հայ-վրացական փոխհարաբերությունների մասին և այլն:

«Իմ գլխով անցածը» 3 անգամ է հրատարակվել: Այդ հրատարակություններից կատարյալը և ամենալրիվն է Ա. Վ. Սեդուրի Իոսելիանու գրքում՝ «Իեսե Բարաթաշվիլու ինքնակենսագրություն-հիշատակարանը», վրացերեն, թրիլիսի, 1950, XXIX + 120 էջ:

Իեսե Բարաթաշվիլու մասին տես Ս. Կակարաձեի և Ա. Իոսելիանու հրատարակությունները, նաև՝ Քր. Շարաշիձե, Իեսե Օսեսձեի Քորանիկոնին, վրացերեն, — «Известия Института языка, истории и мат. культуры имени Н. Я. Марра», XIII, т. II, 1943, էջ 121—137:

Մեր թարգմանությունը Իսահ Օսեսանի «Ինքնակենսագրություն-կտակից» կատարված է համաձայն Ա. Իոսելիանու հրատարակության:

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1768—1786 թթ.]

Լավ գրել գիտեի եկեղեցական գրերով (խուցուրի),<sup>2</sup> զինվորական գրերով (մխեղրուլի) և բուլտրագիր տառերով (մգրգյովանի): Փոքր ինչ սովորեցի Վախտանգի հորից<sup>1</sup>, իսկ Պորփյուրոսի «Ներածականը»-ը (կաթագորիա)՝ Չաքարիա վարդապետից<sup>2</sup>...:

432 [=1745] թվին զ'անը<sup>3</sup> շնորհեց Թեյմուրազ թագավորին՝ Քարթլիի թագավորությունը, իսկ էրեկլե թագավորին՝ Կախեթի [թագավորությունը]:... Սույն ձևուան Թեյմուրազ թագավորն ելավ Գիվի Ամիլխոսրու դեմ մեծ զորքով. նրա հետն էր ինն հազար զվարճ ու ավղան, նաև Վրաստանի զորքը, չհաջված Ղազախ-Բորչալուինը: Ղազախ-Բորչալուն Իսաղ՝ փաշային ավին իբրև զուլբեկին, քանի որ Ղազախ-Բորչալուն զվարճների խաների ձեռին էր, որոնք Քարթլուումն էին նստած և, ի հարկև, Վրաց բատոնի կողքին էին միշտ լինում: Ղազախում Սֆանվերդի խանն էր նստած, որը Վրաց բատոնի հպատակն (ծառան) էր, և Բորչալուում, մեծ[անուն] մարդու որդի Մահմուդ իշխանը:

Քրոնիկոնի 453, Քրիստոսից 1765 թվականի մայիսի 15-ին... կիրակի օրը [էրեկլե] բատոնը ուղևորվեց Երևան. [վրացիները<sup>4</sup>] քյուրդերին ավերեցինք և անհլաս փերադարձանք...:

Քրոնիկոնի 457-ին [=1769 թվականին]... [էրեկլե] բատոնը քրդերի դեմ ելավ: Հոկտեմբերի 5-ին ուղևորվեց Մցխեթա, այնտեղից Դիզում վերադարձանք ու բարձրացանք Ծղնեթ, այնտեղից Կոջորով իջանք ու անցանք Դմանխա, ուսկից Ղարադաջով... հոկտեմբերի 13-ին [իջանք և] Արփաշայի ափին՝ Անիի բերդից ցած կանգ առանք: Բեռնակիր զորքը հետու էր մեզանից: Այն գիշերը [էրեկլե] բատոնին ոչ մի թիկնապահ (փեշիկ) չէր ուղեկցում: Երկու տղաներին վրանում թողինք և երկու տղաներ և ևս թիկնապահություն էինք անում: Կես գիշերին քրդերն իջել էին, իմ ձիաները բռնել էին, տղաները չէին իմացել, տարել էին: Իրոք, լավ ձիաներ կորցրի: Մյուս օրը վրանն ու իրերը եզների վրա բարձեցինք: Ես մի յարու խնդրեցի ու գուրս եկա: Հասանք Երևան, Շարուրում կանգ առանք...: Զիուց զուրկ, անզեն, հետխոտն գուրս եկա [այնտեղից], արևը վկա, և եկա Տփղիս...:

Քրոնիկոնի 462-ին [=1774 թ.] հունվարին քաղաքում տուն գնեցի Մելիք Ավետիքից: Սա ևս Չաքարա չերքեզից էր գնել... Միջնորդներ էին [Հ]ասրաթ (Ասրաթա) Արեսալումի որդին և Տուլոաշվիլի Գուրգենը... Այս տներում մանրավաճառ [Հ]արություն (Արութինա) Փարեշ Ասլանի որդին էր ապրում, 14 թումանի գրավը հանձն էր առել, մուրհակ էր ստացել մելիք Ավետիքից...:

Քրոնիկոնի 463-ին [=1775 թ.] մարտի 9-ին մի սենյակ ներքնահարկով (նկուղով)<sup>2</sup> թումանով գնեցի Մկրտչից (Միկիրաիչից)...

Քրոնիկոնի 464-ի [=1776 թվի] հունիսի 12-ին Արղութաշվիլուն Չուրիայի կեղծ արձանագրությունը կարգացի...:

... Բեղթաբեգի որդի Սուլխանը<sup>6</sup> [և] Գորջասպ մզիվանի որդի Սուլխանը այնտեղ էին, միասին նստած էինք...: Լուսացավ հունիսի 13-ը: Ինձ իջեցրին: Եկել էին Չաալ էշիկաղան, Շիոշ գանձարանապետը, թագավորի և թագուհու մզիվանները ու բազմաթիվ ժողովուրդ, և կարգացին սրտումը:

«Իսահն իր ստախոս լեզվի և ապերախտ մտքի համար ենթարկվի [հետևյալ պատիժներին].

1. Մեր տված իշխանության գիրը խլվի:
2. Մեր շնորհած կալվածքները խլվի:
3. Մեր տված՝ հայերի տները խլվի:
4. Արաշիձեներից գնած տունն էլ խլվի և այլն...:

Բորչալուից անցա Փամբակ... [Արքան] Ախտալա մեկնեց...:

Հունիսի 14-ին բատոնը Ախտալա մեկնեց...:

Երևանի խանի ազդեցան, որ զեղեցիկ էր և հարուստ օժիտի տեր, կին էին ուղու մերցնել և՛ Խոյի Ահմադ-խանի որդին, և՛ Գյանջայի Մա[հ]մադ-խանը, և՛ Շուշվա Իբրե[հ]իմ-խանը: Երևանի բեգլարբեգ Հուսեյն-Ալիխանը ամենքին գրեց, որ ունի էլ էրեկլե թագավորը կշրամայի տալ, նրան կտամ: Ահմադ-խանն երեք հազար թուման և հազար պալատական ծառաներ խոստացավ [էրեկլե] ափրոջ: Գյանջայի խանն ուղարկել էր իր եղբայր Ռա[հ]իմին, իր հոր գայու (բիձի) որդի Մա[հ]մադ-էմին-բեկին: Ոմանք արծաթ փող էին ուղարկել և ոմանք էլ արծաթի փոխարեն իբրև պատանդ սրանց և եղբայրներին, և աղաչում էին. «Իրանում չամաչացնես. այն ազդիկն իմ ուղածն է. հիսուն ծուխ հարուստ մարդկանց տեղահան արի, ավի, ձեզ ևս կներկայացնեմ նշանեց և օգնեց և օգնեց և օգնեց և օգնեց [էրեկլե]»:

[են] իր գորապետին (սարգալին) Երևանի խանի մոտ ուղարկեց մի այլ գործով և բերանացի հասկացնել տվեց. «Աղջիկդ Ահմադ-խանին տուր, որոշիր»։ Նրանք (խոյնեցիք) Շիրինին ընդունեցին և գորապետին (սարգալին) խիստ պարզեցրեցին։ Եվ նա վերադարձավ։ [Ապա էրեկլեն] ուղևորվեց Փամբակ և այնտեղից Երևանի խանի մոտ ուղարկեց Միսայելին...։ Միսայելը եկավ՝ թթու գինի էր ուղարկել, խաղող և գաթաներ (շաքարահացեր), և ամբողջապես տեղահան էր արել Երևանը ու բերդի մեջը գցել...<sup>5</sup>

[Քրոնիկոնի 467-ի (=1779 թ.)] մայիսի 20-ին... [էրեկլե] բատոնն ինձ ճանապարհ գցեց Ախտալա՝ հուլյաներին կարգի հրավիրելու [և] գնքսելու համար<sup>7</sup>։ Ես գնացի... և վերադարձա Ախտալայից հունիսի 5-ին։

Քրոնիկոնի 467-ի [=1779 թվի] օգոստոսի 19-ին [էրեկլե] բատոնը ուղևորվեց Երևան... Մարնեուլ հասավ 31-ին...

[էրեկլեն] Երևանի բերդին մոտեցավ. ոչ ոք նրա հուսով չէր, և զարմանալի էր, որ էրեկլե թագավորն այն ամբացրեց։ Չորք էլ ուներ բերդում և բերդն էլ խիստ ամբացրել էր։ Երեք հազար մարտիկ էր գուրս գալիս [այնտեղից]։ Դարան մտած լեզգիները սպանեցին Գիլի Չորաղ՝ աշվիլուն։ Տասներկու լեզգի էին ճարել ու կրակում էին։ Մի օր [էրեկլե թագավորը] հարյուր հեծյալ և մոտերկու հազար հետիոտն էր ուղարկել պատերազմի։ Բատոնի գորքը ցիրուցան էր։ Սկսել էինք հրացանաձգություն։ [Բատոնը] նախ Գիորգի արքայազնին էր ուղարկել, ապա Լեոնին։ Երբ նեղ տեղն էին ընկել, ինքը հասել էր օդնության, հազթեկ էր թեև էրեկլեի [կողմնակիցներից] Մաչարելուն սպանել էին։ Նոյեմբերի 10-ին [արքան] Տիգլիս վերադարձավ։

Ինձ թաղելու համար գուք նեղություն մի կրեք։ Մի քիչ բան ունիմ, և այն ինձ համար բավական է. դավթարում գրված է։ Գերեզման ունիմ և պատանք [էլ]։ Մարմարե արձանը [հայ] տերտերի մոտն է, այն էլ իմ [փող]ով գնեք. գնեք, ինչպես ասել եմ...։

[Քրոնիկոնի 473-ին (=1785 թ.)]... Օմար խանը\*... Ախտալան պղնձե ականով վերցրեց։ Բազմաթիվ վանականներ և քահանաներ սպանեց, [նույնպես և] բազմաթիվ աշխարհականներ։ [Լոռվա] մեղիքի որդիք այնտեղ էին, [և նրանց էլ] գերեց։ [Ապա] մոտեցավ Ուզունլարին, ուր և կանգ առավ։ Այնտեղ էլ շմնաց, անցավ Լոռի, այնտեղից Ախալքալաք, հասավ Սամցխե...։

\* 1951 թ. հրատարակության մեջ «Անձնանունների ցանկում» Օմար-խանը Օթար-խան է գարձել (տե՛ս էջ 116) sic.

Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Դժվար է ասել, թե Վախտանգի (թագավորի թե իշխանի) հորն ունի ի նկատի։

<sup>2</sup> Սոսքը Չաքարիա վարդապետ Մազինաշվիլու մասին է. տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, Հայերը վրաց հին դրականության մեջ, «Գեղարվեստ», VII, Տիգրիս, 1921, էջ 45։

<sup>3</sup> Նազրը, Պարսից շահ, 1736—1747 թթ.։

<sup>4</sup> Բարթիլի թագավոր Թեյմուրազ 1, 1744—1762 թթ.։

<sup>5</sup> էրեկլե II, Կախեթի թագավոր՝ 1744—1762, Բարթիլ-Կախեթի թագավոր՝ 1762—1798 թթ.։

<sup>6</sup> Վերջինիս մասին տե՛ս Ս. Меликсет-Беков, Усыпальница князей Бегтабеговых, Тифлис, 1914, Լ. Մելիքսեթ-Քեկ, Հայերը վրաց հին դրականության մեջ, «Գեղարվեստ», VII, 42—43։

<sup>7</sup> Ախտալայի հույն հանքագործների մասին տե՛ս՝ Материалы к истории горной промышленности Грузии, т. I, Тб., 1936, стр. 4—11.

ԺԿ

**ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՆԵՐ**

**«ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (1791)**

XVIII դարի վրաց գրականությունն առանձնապես հարուստ է, այսպես կոչված, «ժամանակագրություն»-ներով, որոնցից աչքի է ընկնում անանուն հեղինակների կազմած «Այլևայլ անցքերի նկարագրությունը՝ Քրիստոսի ծննդից սկսած և ամսաթվերի ցուցմունքով ըստ վրացական քրոնիկոնի»:

Վերջինս պարունակում է նաև ժամանակագրական աղյուսակներ, սկսած 1658 թ. և մինչև 1791 թ. ներառյալ, որի վրացերեն բնագիրն ըստ համապատասխան ձեռագրի, ուսուերեն թարգմանությամբ հանդերձ, հրատարակել է պրոֆ. է. Թաղաշյանը իր գրքույկում՝ «Материалы для истории Грузии», Тифлис, 1895, стр. 34—54.

Հրատարակիչը հավանական է գտնում, որ անանուն հեղինակները հայեր լինեին, և այս տեսակետը նա հիմնավորում է հետևյալ կերպ (տես նույն տեղ, էջ 31—32): «Авторами большинства записей, вошедших в нашу рукопись, вероятно, были армяне. Этим и можно объяснить довольно частые известия о смерти тифлисских меликов, которые, как известно, были из армян и имели большое значение для армянского населения г. Тифлиса. Для тифлисских армян смерть мелика была событием немаловажным; поэтому неудивительно, что кончину их они считали нужным передать памяти. Об одном из них, мелике Зурабе и его сыне Автандиле, автор записи не без сострадания замечает, что они без вины были умерщвлены палочными ударами. Для грузин, наоборот, мелики не имели такого значения, и поэтому в грузинских хрониках нет упоминания об их смерти, хотя о событиях XVII и XVIII веков грузинские историки дают более или менее подробные сведения... Еще более наглядным до-

казательством того, что некоторые записи, вошедшие в нашу рукопись, принадлежат армянам, служат армянские слова и названия, встречающиеся в тексте записей. Так, духовное лицо католикос названо в записи 1718 г. армянским словом «окевартер». В другом месте под 1742 г. упоминается о страшном землетрясении и указывается, что это случилось 24-го июля, в день субботний «Вартеура». «Вартеур» равняется армянскому слову «Вардавар» — Преображение. Нечего говорить, что, если бы эти записи принадлежали грузину, то мы не встретили бы подобных выражений в тексте»:

Այս նկատողության առթիվ միայն կարելի է առարկել, որ «օքեվարտեր» = «հոգևոր տեր» բառը գործածական է վրաց գրականության մեջ XVIII դարում անկախ այս կամ այն հեղինակի հայ լինելուց թե չլինելուց և, մասնավորապես, վրաց պատմիչների՝ Վաստուշտի, Օման Խերխեուլիձեի և ուրիշների մոտ:

**ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ [1658—1791 թթ.]**

1662—350. Խոջա-Մելիք Բերութը (Բերուդա)<sup>1</sup> վախճանվեց հուլիսի 7-ին...

1718—406. Սուրխափն ավերեց Բոլնիսները<sup>2</sup>...

1718—406. Քանդեցին կաթոլիկների (պատրերի) եկեղեցին, Հոգևոր տերը (օքեվարտերը)<sup>3</sup> հոկտեմբերին Տփղիսում էր գտնվում, 1734—422. Իսաղ-փաշան կախաղանի հանեց Տփղիսի Մելիք Աշխար[հ]-բեկին սեպտեմբերի 10-ին<sup>4</sup>:

1742—430. Իմամ-ղուլի-խանը<sup>5</sup>... առանց որևէ հանցանքի փայտի հարվածներով մահացրեց Տփղիսի մելիք Ջուրաբին ու նրա որդի Ավթանդիլին:

1742—430. Մի օրվա ընթացքում յոթն անգամ կրկնվեց երկրաշարժը... լուսնի չորրորդ օրը, հուլիսի 24-ին, Վարդավառի (Վարթեվուրի)<sup>6</sup> շարաթ օրը:

1751—439. Էրեկլե թագավորն ուղևորվեց Երևան, Երևանին մոտեցավ Թավրիզից ավղան Ազատ-խանը: Ճակատամարտը սոսկալի էր. Ազատ-խանը պարտվեց ու փախավ դեպի Նախիջևան՝ հուլիսի 28-ին:

1752—440. Թեյմուրազ թագավորն և Էրեկլե թագավորը գորքով ելան Տփղիսից դեպի Գյանջա, Գյանջայի խան Շա[հ]-վերդ-խանը, դուրս գալով բերդից, դիմավորեց թագավորին

մեծաքանակ ընծաներով և տեսնվեց թագավորները հետ: Թագավորներին այցելության եկան նաև ընծաներով Ղարադաղի կույր Քաղուժ-խանը և Շուշվա Փա[նահ-խան]ը: Այս խաներն ուղուժ էին, Հաջի-Չալարին հաշտեցնել թագավորների հետ: Թագավորները կարծում էին, որ այս խաները պայման ունին միանալու Հաջի-Չալարի հետ և բոլոր խաներին կալանավորեցին, ձեռները շղթաներով կապեցին և ընչազուրկ արին:...

1752—440. Փանահ-խանի որդին Հաջի-Չալարի մոտ գնաց Գյանջա, գորք հասցրեց, սկսվեց պատերազմ:... [Վրաց] թագավորները պարտվեցին: Թագավորական զորքը թագավորներով հանդերձ եկավ Տիֆլիս, իսկ ընչազուրկ խաները գնացին Գյանջա՝ Հաջի-Չալարի մոտ: Չատկի շարաթ օրն էր: Տիֆլիսեցի քաղաքացիներն առևտրական [գործերով] Գյանջա էին գնացել, և Հաջի-Չալարի մարդիկ նրանց կողոպտեցին մարտի 28-ին:

1768—556. Աղա-Մելիքը վախճանվեց սեպտեմբերի 18-ին:

1791—479. Փանահ-խանի որդի Իբրե[ն]խան-խանը և Օմար-խանը լեզգիների զորքով եկան Նախիջևանի վրա, սակայն պարտութուն կրեցին նոյեմբերի 21-ին:

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Թբիլիսիի մելիքը:
- 2 Հեռակապես, և հայոց «Խառն-սոփե[ն]», որ Բուխարի ձորումն է գտնվում:
- 3 Տե՛ս այս աշխատության Գ զլիի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. (էջ 88), ԺԵ զլիի 23-րդ ծանոթ. (էջ 181) և ԻԳ զլիի 7-րդ ծանոթ. (էջ 237): Ի նկատի ունի Աստվածատուր Լ կաթողիկոսին, 1715—1725 թթ.:
- 4 Հմմտ. Գ զլուիք:
- 5 Քարթլիի խան:
- 6 Հմմտ. Լ. Մելիքսեյ-Քեկ, Վարդապառը վրացոց մեջ. «Արարատ», 1918 թ. № 1—3, էջ 129—133:

ԺԵ

ՕՄԱՆ ԽԵՐԽԵՈՒԼԻՉԵ

«ԹԵՅՄՈՒՐԱԶԻ ՈՐԳԻ ԻՐԱԿԼԻ ԵՐԿՐՈՐԳԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ» (1795—1798)

Օման Խերխեուլիձեն վրաց պայտառական ավագ դիվանագիտի կամ դիվանապետն (միլիտանրեզի) է եղել, էրեկլե II թագավորի (1744—1798 թթ.) ժամանակակիցը: Նա գրել է էրեկլեի պատմությունը, սկսելով այն 1722 թվից և հասցնելով մինչև 1785 թվի, հեռակապես նրա երկն ընդգրկում է մոտավորապես 60—65 տարվա պատմություն: Երկուստ մի քանի անգամ հիշվում է Ղաջար Աղա-Մահմադ-խանի արշավանքը Վրաստան, որ տեղի ունեցավ 1795 թվի սեպտեմբերին: Հեռակապես երկը գրվել է կամ, ծայրահեղ դեպքում, խմբագրվել է 1795 թվից հետո, հավանական է 1795—1798 թթ.: Հեղինակի նպատակն է պարզել, թե «ինչպիսիք վաստակով է էրեկլեն ստացել Քարթլիի թագավորությունը», ապա և «ինչպես է նա (էրեկլեն) միացրել երկթագավորությունը (ասել է՝ Քարթլին և Կասեթը):

Օման Խերխեուլիձեի երկասիրությունը հրատարակված է պրոֆ. Դ. Չուրինովի լույս ընծայած «Քարթլի-Յիսովերա»-ի II մասում, ՄՊԲ, 1854, էջ 475—500, նաև արտատպված է Չ. Ճիճինսի հրատարակած «Վրաստանի կյանքը» (Մաքարթվելոս Յիսովերա) գրքում, Թբ., 1913, էջ 241—276: Նույնը կա և ֆրանսերեն թարգմանությամբ ակադ. Մ. Բրոսսեի՝ M. Brosset, Histoire de la Géorgie, II partie, II-e Livraison, SPB, 1857, էջ 203—227:

Հեղինակի ու նրա երկի մասին տես. Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական սրատմական գրականությունը, V—XVIII դարեր, վրացերեն, ա. տպ., Թբ., 1916, էջ 335—338, ռ. տպ. Թբ., 1945, էջ 376—379:

Քաղվածքների թարգմանությունները բերում ենք համաձայն Դ. Չուրինովի հրատարակության:

[1722—1780 թթ. ԱՆՅՔԵՐԸ]

1722 թ. ...Շահ-Սուլթան- [Հ]ուսեյնի<sup>1</sup> որդի Շահ-Քամազը<sup>2</sup>... Քարթլիի թագավորութունը հանձնեց Մահմադ-Ղուլի-խանին<sup>3</sup>... և ավեց նրան Գյանջան, Ղարաբաղն ու Երևանը...

1723 թ. Խոնթքարի սարասքյարն եկավ Ղարս և տեղեկացավ Քարթլիի գրության մասին... Իսկ [Վրաց Վաստանդ] թագավորն<sup>4</sup> ուղարկեց իր եղբայր Իեսեին<sup>5</sup>. սարասքյարն ելավ Ղարսից ու եկավ Շանրիան...

1734 թ. ...Հեզդիներն ավերում էին Քարթլին և Կախեթը, մանավանդ Սոմխիթ-Սարարաթիանոն...

1739 թ. ...Նազըր-շահը Ղարսի բերդին մոտեցավ:

1744 թ. Նազըր-շահը<sup>6</sup> ...Ղարսից վերադարձավ: Թեյմուրազ թագավորը<sup>7</sup>, տեղեկանալով սրտ մասին, գիմավորեց նրան Աշոցքում (Արոցում), որ է Ղայդ'ուլի (Ղալի'ուլի). այնտեղից եկավ Բորչալու, Գերեզի ավիլը... Նազըր-շահը վերադարձավ Ղազախով և Գյանջախով...

1747 թ. Իեսե թագավորի որդի Արդուլա-բեկը<sup>8</sup>... վրացիներին և ումանց ուրիշներին հանեց Սոմխիթ-Սարարաթաշվիլոյից և գավաճանեց Իրակլի թագավորին<sup>9</sup>, բերեց զղլրաշների Սատրիստիար խանին՝ զորքով հանդերձ. սրան հետևեցին Գյանջա-Ղարաբաղի խաները, Դաղստանի խան Ազատ-խանը և Վրաստանի քոչվորները, Շամշադինը, Ղազախը, Բորչալու-Գեմուրչասալին, Բայդարը և այլն...

1749 թ. Թեյմուրազ թագավորը ժամանեց Իրանից: Այդ պահին Իրանում Իրբեհիմ-շահին<sup>10</sup> սպանեցին, և ամբողջ Իրանը խառնվեց. սկսեցին իրար կոտորել, գերել և ավերել: Այս ժամանակ ոմն Մահմադ-խան Ադրբեջանի կողմերում ուժեղացել էր [և] շատ երկրներ էր ավերում, որի պատճառով երևանցիները դիմեցին Թեյմուրազ թագավորին և Իրակլի թագավորին. «Իրանում այլևս տեր չկա, և Մահմադ-խանը այս երկիրն ավերում է. դուք մեզ օգնության հասե՛ք, գրանից ազատե՛ք և մենք ձեզ կժառանգենք»: Լսելով այս՝ երկոքյան թագավորները զորքերով գնացին Երևանին օգնության: Բայց Իրակլի թագավորն հինգ հարյուր հոգով առաջ գնաց: Հենց որ Մահմադ-խանը տեղեկացավ սրա մասին, իր ամբողջ ուժովը դեմ ելավ և Իրակլի թագավորի հետ սկսեց պատերազմել: Ասաված Իրակլի թագավորին շնորհեց կարողութուն և հաղթութուն: Մահմադ-խանը փախավ և մտավ Ղարաբաղ (sic), քանի որ այնտեղ Խորվիրապի (Խարզվիրաբի) բերդը<sup>11</sup> ամրացրել էր և իր ընտանիքն էլ այնտեղ էր ապրել:

Իրակլի թագավորը հետամուտ եղավ [Մահմադ-խանին] և շրջապատեց ու զրավեց այն բերդը, [որտեղից է] Մահմադ-խանի ընտանիքը գուրս հանեց, և ինչ որ հարստութուն-գանձեր ուներ, բոլորը վերցրեց ու եկավ Երևան: Այստեղ Թեյմուրազ թագավորի և Իրակլի թագավորի մոտ եկան երևանցիները և նույնիսկ Երևանի խանն ևս: Ապա հարկատու հայտարարեցին իրենց և հանձն առան ծառայել [թագավորներին]: Եվ այս թագավորներն իրենց մարդուն նստացրին Երևանում և ուղևորվեցին [դեպի Վրաստան]: Մինչ թագավորներն այնտեղից կվերադառնային, Ղարաբաղի Փանահ-խանը, Գյանջախի խան Շա[հ]վերդ-խանը և Նուխու խան [Հ]աջի-Չալաբը՝ բոլորը հավաքվեցին Գյանջա-Ղարաբաղի և Շաքի-Շիրվանի զորքերով ու Ազատափայով եկան Ղազախ. և մինչ այդ թագավորներն ևս Երևանից Ղազախ ժամանեցին. այնպես որ այստեղ հավաքված խաներն ույլևս չհամարձակվեցին պատերազմ [մղելու], խույս տվին [կովից] և՛ ամբողջում փակվելով՝ սկսեցին բանակցել թագավորների հետ համերաշխութուն [հաստատելու] մասին, հաշտութուն [կնքեցին] ու վերադարձան: Իսկ թագավորները հաղթական եկան Տիգրիս: Եվ այդ օրվանից Երևանը հարկատու էր [մեր՝ Վրաց] թագավորին մինչև Ղազար-Մահմադ-խանի<sup>12</sup> գալը Վրաստան<sup>13</sup>: Թեև սա էլ բոլորովին չվերացրեց Երևանի հարկատվութունը (ծառայութունը) Վրաստանին:

1750 թ. Ղարաբաղի Փանահ-խանը մոտեցավ Գյանջախին... [Գյանջախի օգնության գնացին Վրաց] թագավորները զորքերով ...որոնք մտան Ղազախ... [Թագավորները] անցան Ղարաբաղ, և Փանահ-խանն էլ մեծ զորքով ընդդեմ ելավ պատերազմելու... Երկրորդ օրը երկուքյան թագավորները պատրաստվեցին ավերելու Ղարաբաղը, գնացին և Արաղի հայնկույս գտնվող Ղարաբաղի հողն (հայրենիքը) ավերեցին ու շատ [ավար] վերցրին: Եվ մնացին այնտեղ երկու ամիս և բոլոր զարսրազցիներին հնազանդեցրին, և Գյանջա-Ղարաբաղը հարկատու դարձրին...

1752 թ. երկոքյան թագավորներն ելան ձորն ու Շաքի-Շիրվանն ավերելու, զորքեր հավաքեցին և իջան Իորի վրա, ուր [սրանց] միացան Գյանջա-Ղարաբաղի խաները... Այս եղավ փետրվար ամսին: Իսկ նույն թվականի հունիս ամսին մեծ զորքով եկավ Ազատ-խանը և սկսեց ավերել ու թալանել Երևանը, քանի որ Ազատ-խանը տիրում էր Միգիային, որ է Ադրբեջան<sup>14</sup>, և կոչվում էր արևալու Պարսկաստանի: Այս պատճառով երե-



վանցիները Իրակլի թագավորին գրեցին. «Քանի որ մեզանից հարկ եք ստանում և ձեր հպատակության ներքո ենք գտնվում, ձեր պարտականությունն է ազատել մեզ այսպիսի բռնակալի ձեռից»։ Եվ խնդրեցին օգնություն, որի կապակցությամբ Իրակլի թագավորը հաճեց օգնել Երևանին, Երբ Մուսա-խանը, որ մոտեցել էր Երևանի բերդին, լսեց Իրակլի թագավորի գալը, նույն իսկ բռպեին հեռացավ բերդից։ Իսկ Իրակլի թագավորը հասավ Երևան և պարենավորումից կատարյալ դուրկ երևանցիներին ապահովեց մթերքով և հասցրեց պարեն, իսկ ինքը վերագարձավ Քանաքեռ (Քանակիրի) և կանգ առավ Ղարարուլախում՝ բացօթյա, Երևանի մոտերքում, որ գտնվում է Երևանից 12 վերստ<sup>15</sup>, այսինքն մեկ մղոն (աղաջ), հեռավորությամբ։

Այս Մուսա-խանը՝ Երևանից հեռանալով՝ իսկույն և եթ նամակ գրեց Ազատ-խանին և տեղեկացրեց նրան Միգրայում գտնվողին, Իրակլի թագավորի գալու և նրա բոլոր գործերի մասին։ Լսելով այս՝ [Ազատ-խանը] զայրացած ժողովեց զզլբաշավդանական զորքերը քառասուն հազարի չափ, այնպես որ [նրանց մեջ] տասերկու հազար աղեղնավոր մարդ կար, բացի թվանգչիներից, հետո էլ տասերկու թնդանոթ և երկու հարյուր հրանոթ (զամբուլակ)։ Նա (Ազատ-խանը) աննկատելի կերպով եկավ ու Գյաննի-չայի<sup>16</sup> վրա կանգ առավ։ Գյաննի-չայը գտնվում է Քանաքեռից (Քանաքիրից) քսան վերստի<sup>17</sup> հեռավորությամբ։ Եվ երեկոյան լուր հասցրին Իրակլի թագավորին. «Ազատ-խանը մեծ զորքով եկավ ու Գյաննի-չայի վրա կանգ առավ»։... Իրակլի թագավորի մոտ եկավ մի երևանցի ազրբեջանցի (թաթար)՝ Այրումլուի սուլթանը Ալա[ն]վերդի անունով... Երբ թագավորը նկատեց իր զորքի սակավաթիվ լինելը, երկըրպագեց Քրիստոսի խաչին արտասովորից և իր բոլոր մարտիկներին երկրպագել տվեց խաչին, և այդ ժամանակ այն ազրբեջանցի (թաթար) Ալա[ն]վերդի սուլթանն ևս եկավ ու դիմեց Քրիստոսի խաչին այսպիսի խոսքերով. «Եթե դու որևէ ուժ ունիս, այսօր կերևա», և մնաց Իրակլի մոտ։ Ապա Իրակլին հանգիստ կերպով առաջնորդեց հազար հինգ հարյուր հետևորտ մարտիկներին և, որտեղ էլ ամենից շատ էին կուտակված Ազատ-խանի ջոկատները, հենց դեպի այն կողմն ուղղվեց։ Եկավ կատաղած Ազատ-խանը և իր ջոկատներով շրջապատեց [Իրակլի զորքը] և չորս կողմից ևս այնքան մոտեցավ, որ նիզակ պտտելու տեղ չկար և նրանք (ազրբեջանցիները) այնպես առաջ էին կենդանի ձեռք

դեցել վրացիներին։ Ապա խաներից մեկը զեկուցեց Ազատ-խանին. «Թույլ տուր ինձ, որպեսզի գնամ և Իրակլի թագավորին կենդանի կալանավորված քեզ ներկայացնեմ»։ Նա թույլ տվեց, և հեծյալ [խան]ը շտապ-շտապ գնաց նիզակը ձեռին, որ պատրաստել էր կովի համար, և կանչեց. «Համաման հանիեր Իրակլի խան», այսինքն՝ «ճեր է Իրակլի թագավորը»։ Այդ ժամանակ նրա դեմ դուրս ելավ թագավորն և ասաց. «Ես եմ Իրակլի թագավորը»։ Եվ ասելուն պես թագավորը լցրեց հրացանը, և կրակեց այն, որը և դիպավ խանի սրտին. խանը վայր ընկավ ձիուց հենց Իրակլի թագավորի առջև։ Տեսնելով Իրակլի թագավորի այսօրինակ սխրագործությունը՝ վրացիք և կախեթցիք ևս արիացան և միանգամից կրակեցին իրենց հրացաններից և, որքան էլ մոտերքում զզլբաշներ և աղվաններ կային, բոլորին գլորեցին, և ընկան նրանք գետնի վրա։ Ապա Իրակլին հեծավ իր ձին և հրամայեց իր մարտիկներին ևս հեծնել։ Հեծան մարտիկները և թուր ու սրով զինված միանգամից գրոհ տվին և՛ հասնելով [պատերազմի դաշտը]՝ ձիերից վայր գցեցին զզլբաշավդաններին։ Իսկ այդ օրերին [վրացոց] հետ էր Այրումլուի սուլթան Ալա[ն]վերդին, որը սքանչելի[ագործություն] խնդրեց խաչից և քաջարի էր։ Իսկ Ազատ խանն ամոթահար փախուստի դիմեց։ Մինչդեռ այս հաղթանակի հետևանքով Իրակլի թագավորին մնաց 24 թնդանոթ, 200 հրանոթ (զամբուլակ) 100 ուղտով և բազմաթիվ դրոշակներ և 2.500 վրան, իսկ գերիների և տալար[-ոչխար]ի թիվը անհնարին էր հաշվել։ Իսկ այն Ալա[ն]վերդի սուլթանը խիստ զարմացած ասում էր խաչի առաջ. «Այս[պիսի] գործը մարդկային ուժով անհնարին էր. բայց այս խաչի ուժն այդ արավ»։ Դարձյալ ասաց. «Պաշ, սանա դ'ուրբան օլիմ», այսինքն՝ «Պաշ, քեզ դո՛ս գնամ»։ Բայց ընկղմվեց։ Իրակլի թագավորը ժամանեց Տփղիս հաղթական։ Եվ այս հաղթանակը տեղի ունեցավ հուլիս ամսին<sup>18</sup>։

1753 թ. ... մայիս ամսին [Հ]աջի-Չալարի որդի Ալաքիրիմը զորքեր հավաքեց, Շաքի-Շիրվանի զորքով եկավ Գյանջա, ուր նրան միացավ Ղարաբաղի խանը [իր] զորքերով, [միասին] եկան և Ղազախ-Բորչալուն տեղահան արին և ինքներն անվըրդով կանգ առան Բայդարում... Երկոքյան թագավորները Քարթլիի և Կախեթի չերքեզական զորքերով հանդերձ Տփղիսից ելան։ Հենց որ սրանք իջան Սողանլուղ, [Հ]աջի-Չալարի որդի Աղա-քիչին և այլ խաները, որոնք սրա հետո էին, Բայդարը

թողին և, վերագրանալով հասան Ղազարի... [Մյուս] խաներն ևս... հասլճեպ Թոռւզով Շամշադին հաչան...

1755 թ... Վրաստանի ադրբեջանցիները (թաթար) քոչվորներն ըստ սովորույթի սար բարձրացան, այնտեղից փախան ու Երևանյան հողն իջան: Լսելով այս, Իրակլի թագավորը մեկնեց Վերին Քարթլի, այնտեղ գտղտնի կերպով զորքեր հավաքեց օգոստոս ամսին, [այս] Թոթալեթով անցնելով՝ սեպտեմբեր ամսին Երևանյան հողը [իջավ] և Արազի ափին Ղարասու կոչված տեղում կանգ առավ, և Վրաստանից գնացած քոչվորներին բուլորին վերագրածրեց ու հոկտեմբեր ամսին նրանց իրենց տեղերում նստացրեց:

1760 թ. ... Զենդ Քյարիմ-խանն (Քարիմ-խանն)<sup>19</sup> ուժեղացավ... [և] աղվան Ազատ-խանին քչեց: Վերջինս այլևս չկարողացավ իր երկիրը գնալ և [իր] զորքով Ադրբեջանի կողմն եկավ ու ավազակա՝ նման շատ վատ գործեր կատարեց: Եվ Քյարիմ-խանը Իրակլի թագավորին նամակ գրեց՝ եղբայրաբար և սիրով լի. «Ազատ-խանն Ադրբեջանի կողմերն է եկել ու երկրները փչացնում ավերում է, և եթե նա ձեզանում որևէ տեղ երևա, բռնիր և ինձ մոտ ուղարկիր, որի համար Իրանի (Էրանի) հանգեպ մեծ երախտիք կունենաս»: Մինչդեռ Ազատ-խանն այդ տեղերում չդիմացավ և դեպի Դաղստան ուղևորվեց: Իրակլի թագավորը՝ իմանալով այս՝ կանխեց մինչ նրա գալը Ղազարի, և իր ամբողջ զորքով Ազատ-խանին կալանավորեց և Քյարիմ-խանին ուղարկեց, իսկ նրա զորքերն ամբողջապես արձակեց ու իրենց երկրներն ուղարկեց: Այս գործի առիթով Քյարիմ-խանը հույժ երախտավոր եղավ [Իրակլի թագավորին], որին շատ բնծաներ ուղարկեց և Երևանը հաստատեց նրա վրա և Երևանի խանին թուղթ գրեց. «Որքան էլ պետական հարկ լինի քեզ վրա դրված, բոլորը Իրակլի թագավորին պիտի տաս և նրան հնազանդվես, ինչպես էլ հնազանդության կարգն է»: Եվ Ադրբեջանի այլ խաներին ևս գրեց Իրակլի թագավորին հնազանդվելու մասին...

1767 թ. Երևանյան քյուրդերը նորից ուրացան [Իրակլի թագավորին] ու այլևս հարկ չէին վճարում [Վրաստանին]: Ուստի և Իրակլի թագավորը հունիս ամսին մեկնեց այնտեղ: Նրանք՝ իմանալով թագավորի գալը՝ փախան, Արազոփն (Արեզի) անցան և Արարատ լեռան հայնկույս գնացին: Իրակլի թագավորը հետամուտ եղավ նրանց, ավերեց քյուրդերին և տալիք հարկից շատ ավելի՝ տասնապատիկ հավաքելով եկավ Տփղիս...

1769 թ. Երևանյան քյուրդերը նորից ուրացան [Իրակլի թագավորին] ու այլևս հարկ չէին վճարում [Վրաստանին]: Ուստի [և Իրակլի թագավորն] երկրորդ անգամ գնաց զորքով, քյուրդերի [տեղը] հասավ, Արազի (Արեզի) այն կողմն ավերեց. զորքերը շատ [ավար] վերցրին ու եկան Տփղիս: Իսկ քյուրդերը վերագրածան Երևանյան երկիրը, նստեցին իրենց տեղերում և հարկեր էին վճարում [Իրակլի թագավորին] ու այսուհետև այլևս չէին համարձակվում ուրանալ և Իրակլի թագավորի հարկատու էին:

1772 թ. ... [Իրակլի թագավորը] շատ հետախուզություններ կատարեց ու աշխատանք թափեց, որպեսզի իր երկրում գտնի ոսկու և արծաթի հանքեր, և գտավ այն Սոմխիթի (Սոմխեթի. sic) երկրում՝ Ախտալայում<sup>20</sup>, որ է հայրենական [ժառանգություն] Սոմխիթի մելիք իշխանների, Եվ բերել ավեց Հունաստանից հույները՝ մի փոքրաթիվ խումբ, որոնք տեղյակ էին հանքային ոսկի և արծաթ հայելու գործին<sup>21</sup>: Ապա սկսեցին հանքագործությունը, որից [Իրակլի թագավորը] շատ օգուտ քաղեց...

Քյարիմ-խանը (Քարիմ-խանը) սիրո նամակ գրեց Իրակլի թագավորին, ուղարկելով նրան թուր և ձի՝ ոսկով սպառագինված: Ապա մտադիր եղավ դեսպան ուղարկել խոնթքարի մոտ և առաքեց իր արքունիքից Միրզա-Գուրգենին (Գուրգենա), ոմն հայի, որը Ղարաբաղից էր եկած...

...Այս [իսկ] պահին խաղաղություն ընկավ Քարթլ-Կախեթում, և Վրաստանում սկսեցին ավերված ավանների վերակառուցումը, և շատ գյուղեր շինվեցին Քարթլ-Կախեթում և Սոմխիթում:

1780 թ. Երևանի խան [Հ]ասան-Ալի-խանն ուրացավ [Իրակլի թագավորին] ու [երևանցիք] այլևս հարկ չէին վճարում [Վրաստանին]: Ուստի [և Իրակլի թագավորն] ուղարկեց դ՛որայասաուլ-բաշ իշխան Զազա Թարխնիշվիլուն, որ վերանորոգի իր գործադրած աշխատանքի հատուցումը Երևանի համար թափած արյան և ճենց այս [Հ]ասան-Ալի-խանին խանություն շնորհելու համար, քանի որ Իրակլի թագավորն էր տվել նրան Երևանի խանությունը: Թեև [թագավորն] այս բոլոր անցյալ գործերը հիշեցրեց նրան (Հասան-Ալի-խանին), սակայն նա չլսեց, քանի որ շատ գերիներ և մեծ հարստություն դիզելու հետևանքով իրեն ուժեղ էր զգում և անվայել արտահայտվեց

[Թագավորի նկատմամբ]: Իրակլի թագավորն իսկույն և եթ հրամայեց Քարթլ-Կախեթի զորքը ժողովել և լեզգիներին ևս կանչեց զորքի մեջ՝ մի քանի հազար [մարդ], և սույն թվի օգոստոս ամսին ելավ, գնաց ու կանգ առավ Շիրարաթ գյուղում, որ գտնվում է երկու մղոն (աղաջ) հեռավորութամբ Երևանից: Եվ [Վրաց] զորքը սկսեց Երևանի պաշարումը. և ոչ մի տեղ շինություն չմնաց, բացի Երևանից ու Էջմիածնից: Այս պահին Իրակլին հնազանդ էին Գյանջա-Ղարարաղը, և այնտեղից էլ մի քանի հազարանոց զորք միացավ նրան: Իսկ Երևանից գաղթած քոչվորները գնացել էին Բայազետի երկիրը, որ խոնթքարի իշխանության ներքո է: Գնացին Քարթլ-Կախեթի իշխանները և զորքը ու ամբողջապես ավերեցին Բայազետի հողը ու բազմաթիվ գերիներ ու ավար բերին: [Բայազետցիներին օգնության] եկան քյուրդերը: Սրանց ևս հաղթեցին ու խայտառակեցին: Եվ Ադրբեջանի բոլոր խաները հնազանդվեցին Իրակլի թագավորին: Եկան դեսպաններ, որոնք և բերին թանկագին ընծաներ Թավրիզի խանից, Սոյի խանից, Ուրմիի (Ուրումի) խանից, Շաղաղի խանից, Մարաշի խանից, Բայազետի փաշայից և Ղարսի փաշայից: Սրանց միացավ նաև Երևանյան հողում գտնվող Շա[հ]մադյան (Շամադիանդա. sic) քյուրդը. որը մեծ ուժի տեր մարդ էր և շատ քրդերի տիրակալ, և իր հպատակությունը հայտնեց [թագավորին]: Բացի դրանից, եկավ Շորադյալի (Շորագլի) սուլթան Ղա[ն]րամանը և Շորադյալի (Շորագլի) ամբողջ ժողովրդով ու հողով [թագավորի] հպատակ դարձավ: Եվ Երևանում եղած պահին Իրակլի թագավորն այնքան ուժեղացավ, որ [նույնիսկ] իրանցիք սպասում էին, որ նա անկասկած կայսր կգառնա (գախելմծիվդերա) և Իրանի (Էրանի) մասերն ևս կգրավի... Մի օր Իրակլի թագավորի որդի Գիորգին գնացել էր Երևանի բերդն ու քաղաքը դիտելու: Երևանցիները<sup>22</sup>, նկատելով իրենց մոտերքում ձիավորների մի փոքր խումբ, դուրս եկան [քաղաքից]. և քանի որ [թագավորի] ներողամտության հույսը չուներին, որոշեցին անձնազոհություն անել, և զայրացած հարձակվեցին Իրակլի թագավորի որդի Գիորգիի վրա, և տեղի ունեցավ սաստիկ պատերազմ: Եվ քանի որ այս երևանցիները մեծ մասամբ բերդի մոտերքում ապրողներն էին, այդ պատճառով քիչ նեղություն չպատճառեցին արքայազնին: Իսկ այս դեպքի մասին Գիորգին հաղորդեց [իր] հորը և զորք խնդրեց օգնության...

... Իրակլի թագավորը... հրամայեց իր որդի Լեոնին և զորականներին գնալ օգնության [Գիորգիին], և ինքը Իրակլի թագավորն ու նրա սպարապետներն (սարգալներն) ևս ձի հեծնեչով՝ շտապեցին պատերազմի: Երևանցիներն ևս դուրս եկան, որքան կարող էին կովել, և սկսվեց սաստիկ պայքար, [որը առեց] երեք ժամի չափ, թեև ի վիճակի չէին այսքան ժամանակ դեմ առ դեմ կովելու: Բայց երևանցիք ունեին խիստ ամուր ժայռեր և պարիսպներ, և Երևանի խանը իր մոտն էր պահում պատերազմասեր լեզգիներին, և դրանով էին [երևանցիները] զորավիգ: Իսկ սրա ականատես Իրակլի թագավորը զայրանում էր, ինչպես առյուծն այծերի դեմ, և այս ժամանակ նրան նկատողներից մեկն Երևանի բերդից թնգանոթ արձակեց Իրակլի թագավորի ուղղութամբ և մերձակա ժայռին դիպավ... Չայրացած [Իրակլի թագավորը] կոչ արավ նեղ տեղն ընկած զորականներին ու իսկույն և եթ հարձակվեց [թշնամու վրա], կոտորեց շատերին՝ ու ընաջինջ արավ Երևանի բոլոր ուժերն ու շատերին էլ կենդանի կալանավորեց, ապա հրաման արձակեց իր զորականներին, որպեսզի ամեն մեկն իր համար տուն շինի և ձմեռի այնտեղ: Այս քանի ականատեսներն ու լսողները ահ ու գողի մեջ ընկան, իսկ Երևանի խանը աղերսելով հանձն առավ վճարել չորս հազար թումանի չափ որոշակի, և առավիել ևս այլ հավելյալ ընծաներ մատուցանել [թագավորին]: Մինչդեռ Իրակլի թագավորը սրա իրավունքը չտվեց [խանին]... [Իրակլի թագավորը] վերադարձավ Երևանից երրորդ ամսին. հայ բնիկներից շատերին... տեղափոխեց Վրաստան, որոնք հիմա էլ գրտնրվում են մի քանի տեղերում, նաև բերեց գերիներ, իսկ զորքը [բերեց] անթիվ ավար: Շատ արժաթ մատուցեց [Իրակլի թագավորին] հոգևոր տերը (օքրիատերը)<sup>23</sup>, և արժաթի վերոհիշյալ գումարը հարկ դրեց Երևանին: Ապա, իբրև իր կառավարիչ (մոուրավ), նշանակեց այնտեղ Մուխրանի տեր՝ իր փեսա Իսանե Կոստանանի որդուն, և Երևանը Իրակլի թագավորի հարկատու [մնաց] մինչ Ղաջար Աղա-Մամադ-խանի<sup>24</sup> գալը: Մի քանի տարուց հետո... Իրակլի թագավորը՝ տիրելով Գյանջային ու ամբողջ նրա հողին՝ բարեկամություն էր հաստատել և Շուշվա խանի հետ, որի մարդկանցից մեկը Իրակլի թագավորի մարդկանցից մեկի հետ միասին կառավարում էին քաղաք Գյանջան... Օմար-խանը Ախտալայի հանքերը

(մադանը) հասավ, գրավեց Ախտալայի բերդը, ավերեց հանքերը (մադանը) և կալանավորեց այնտեղ գտնվող հույներին ու վրացի-հայերին և գնաց Ախալցխեի(Աղսխիսայի<sup>25</sup>) փաշայի մոտ:... [Ապա Օմար-խանն] անցավ լեռները և մտավ Ղարաբաղ՝ Իբրահիմ-խանի մոտ... Սուլյն թվականին Վրաստան էին փախել Ղազարի և Շամշադիլի քոչվորները և գտնվում էին Գյանջա-Ղարաբաղում (sic). և Ղարաբաղից փախան Իբրահիմ-խանի մեկիքները, հույժ հարուստ, ճորտերով և բերդ ու ամրոցներով ուժեղ, որոնք եկան Իրակլի թագավորի մոտ և խնդրեցին օգնություն, որպեսզի դորք տա իրենց ճորտերին տեղահան անելու նպատակով: Այս նպատակով [Իրակլի թագավորն] ուղարկեց այնտեղ իր որդի Յուլունին՝ կցելով նրան զորապետ (սարդալ) և Վրաստանի զորականներին: Երբ նրանք մտան Ղարաբաղի հողը, նրանց այնտեղ դիմավորեց զորքը և Իբրահիմ-խանի զորապետը (սարդալը), և իրավունք տվին տեղահան անելու մեկիքներին:... Այս պահին Իբրահիմ-խանի հետ համաձայնության համար Օմար-խանը Գաղստանի զորքով եկավ Ճար:...

... [Իրակլի թագավորին] հարկատու էին Գյանջան, Ղարաբաղն ու Երևանը, որոնք հնազանդ էին համապատասխան պարտականություններ կատարելով մինչև Ղաջար Աղա-Մահմադ խանի գալը:...

**Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր**

- 1 Հուսեյն կամ Հյուսեյն, Պարսից շահ, 1694—1722 թթ.:
- 2 Հետադաշում Թամազ II, Պարսից շահ, 1729—1736 թթ.:
- 3 Էրեկլե I (Նազար-Ալի-խանի) որդի՝ Կախեթի թագավոր Կոստանտինեն, մահմեդականացած:
- 4 Վախտանգ VI, Քարթլիի կառավարիչ՝ 1703—1711, թագավոր՝ 1719—1724:
- 5 Վրաց թագավոր՝ մահմեդական իսկ, 1714—1716:
- 6 Նազրը, Պարսից շահ, 1736—1747 թթ.:
- 7 Թեյմուրազ I, Քարթլիի թագավոր, 1744—1762 թթ.:
- 8 Արզուլարեկը՝ Վրաց մահմեդական իսկ թագավորի որդին էր: Հմմտ. սուլյն հատորի Ը գլխի 2-րդ ծանոթությունը (էջ 146):
- 9 Էրեկլե II, Կախեթի թագավոր՝ 1744—1762 թթ., միացյալ Քարթլ-Կախեթի թագավոր՝ 1762—1798 թթ.:
- 10 Իբրահիմ, Պարսից շահ, 1747—1749 թթ.:
- 11 Ասել է հին Արտաշատի տեղում, որ, ի հարկե, ոչ մի կերպ չի կապվում Ղարաբաղի (կամ գուցե Ղարազաղի) հետ, ինչպես Օման Խերխու-

լիձեն է նշում: Հավանական է, որ այս նշման մեջ գործ ունենք մի ինչ որ lapsus-ի հետ:

- 12 Աղա Մահմադ-խան, Ղաջար, Պարսից շահ, 1794—1797 թթ.:
- 13 1795 թ. սեպտեմբերին:
- 14 Սա ավանդական տեսակետ է, որով միդիացիք (մարք) ազբբեջանցիների նախնիներն են ճանաչվում:
- 15 Վերստ=ռուս. верста, որ ապացույց է հեղինակի տեղյակ լինելուն ռուսերեն գործածական բառերին, որոնք մուտք են գործում Վրաստան XVIII դարի վերջերից:
- 16 Նույն Ագատ գետը:
- 17 Տես 15-րդ ծանոթ.:
- 18 Հետևապես, Էրեկլե II Վրաց թագավորի կողմից Երևանի առանձին ժամանակն է 1752 թ. հուլիսը:
- 19 Քյարիմ կամ Քերիմ խան, Չենդական հարստությունից, Պարսից շահ, 1761—1779 թթ.:
- 20 Նույն Պղնձահանքը (Լոռու Պղնձահանքը) ըստ հայկական ազբյուրների, կամ Աղարակը՝ ըստ վրացականի:
- 21 Ախտալա-Շամրլուղի հույները հենց սրանց սերնդիցն են:
- 22 Այստեղ և ստորև «Երևանցիներ» ասելով հեղինակը ի նկատի ունի Երևանում կանգնած պարսկական կայսրը:
- 23 Տես այս աշխատության Գ գլխի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. (էջ 88), նաև ԺԹ գլխի 7-րդ ծանոթ. (էջ 209):
- 24 Տես 12 և 13-րդ ծանոթ.:
- 25 «Աղսխիսա» թուրքական ձևն է «Ախալցխե»-ի, որը հայերի կողմից աղավաղված է «Ախալցխա»-ի:

ԺԶ

Տ Ե Բ-Ս Տ Ե Փ Ա Ն Տ Փ Ղ Ի Ս Ե Ց Ի

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ն Ե Ր (1796—1798)

Տ Ե Բ-Ս տեփանը Վրաստանում գործող հայ գրագետ հոգևորականներից մեկն է, որը 1795 թվից Թբիլիսիի ավերումից հետո հանգես է գալիս Հաղրատի թեմի առաջնորդական փոխանորդ լուսարար [վարդապետ]ի դերում:

Այս տեր-Տտեփանի անունը առկա է մի շարք հիշատակարաններում, որոնք գրված են վրացերեն լեզվով և վրացերեն տառերով, միաժամանակ և Թբիլիսիի հայ բարբառի ազդեցութունը կրելով, և որոնք կցված են Սերոբ գրչի Տփղիսի ավերման պատմութունը պարունակող ձեռագրին (Վրաստանի պետ. Թանգարանի Armenica-ի № 21 դրչագիրն ըստ մեր կազմած ցուցակի):

Այս հիշատակարանները, անկախ նրա հեղինակ տեր-Ստեփանի՝ Սայաթ-Նովա—տեր-Ստեփանի հետ նույնացնելու խնդրից, մեծ նշանակութուն ունեն Հաղրատի վանքի և նրա Թբիլիսիի վանատան՝ բերդի մեծ եկեղեցու (այժմ Մեյգանի ս. Գևորգի) պատմության, մասնավորապես նրանց գրագարանի մասին գաղափար կազմելու համար, ուստի և բերում ենք թարգմանաբար ամբողջապես:

[Հ Ա Ղ Բ Ա Տ Ի Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ Դ Ա Վ Ի Թ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Հ Ա Վ Ի Լ-Դ Ա Ր Յ Ա Ն Ի Գ Ո Ի Յ Ք Ի Ց Ո Ի Ց Ա Կ Ը]

I. Քրոնիկոնի 484 [=1796 թ.]. ինչ որ հանդուցյալ առաջնորդ (արաջնուրթի) Դավիթ վարդապետի<sup>1</sup> կան-կարասիք կամ գրքեր կամ հագուստեղեն կամ պղնձե-ամանեղեն է, ընդ որ ստորև մի առ մի կ[ցուցյա]կազրվի: Ինձ՝ տեր-Ստեփանիս՝ հանձնվեց:

II. 1 մեծ կաթսա, 1 փոքր կաթսա, 7 մաթլարա, 4 պղնձե փոքր թաս, 3 մաջում, 1 մեծ թեփշի, 4 փոքր թեփշի, 1 փոքր

լագան, 1 նալրաքի, 1 գուլիս լվանալու թաս, 1 մաթլարա, 1 սղղնձե թունգի, 1 մեծ մաշխալա, 1 քափկիր, 1 կաշե մուշտակ, 1 մահուդի քաթիրա, 1 մահուդի փարաջա, 1 կարա, 1 աբրշումից գործված արխալուխ, 1 շապիկ զգեստավորվելու, 1 շապիկ ընկեր (պերանգիս ամխանագի), 1 շալի գոտի, 1 զույգ հողաթափներ զգեստավորվելու, 1 զույգ գուլթա (չուլթի), 1 կապույտ թաշկինակ, 1 մեռելի սավան:

III. Քրոնիկոնի 485 [=1797 թ.] հունվարի 3-ին: Ինչ որ նա (Դավիթ առաջնորդը) պղնձե ամանեղեն է տվել ինձ, ստորև գրված է:

7 թեփշի, 7 լամբաքի, 1 մեծ թեփշի, 1 պղնձե թաս, 3 մաթլարա, 3 կաթսա, 1 քափկիր, 1 չամչա, 1 լագան, 1 թունգի, 1 Ֆոնար:

IV. Ինչ որ հայերեն գ[ր]քեր (գիքերի) կամ գրքույկներ ունիմ, սա [ևս] ստորև գրված է և եկեղեցում պահեցինք:

Քրոնիկոնի 486 [=1798 թ.] օգոստոսի 1-ին. ինչ որ ժամի գրքեր[ից] ինձ մոտ է, մի առ մի գրված է ստորև:

- [1.] 1 Նոր<sup>2</sup> Աստվածաշունչ [Աստուածաշունչ, Ամստերդամ 1666 կամ Կ. Պոլիս 1705]:
- [2.] 1 Հին<sup>3</sup> Աստվածաշունչ [Ձեռագիր Աստուածաշունչ]:
- [3.] 1 Գիրք Սահմանաց [Գիրք Սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի, Ամստերդամ 1704 կամ Կ. Պոլիս 1731]:
- [4.] 2 Առաքել պատմագիր (Արաքել պատմագիրքի) [Գիրք պատմութեանց շարագրեալ Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, Ամստերդամ 1669]:
- [5.] 1 Աւետարան [Աւետարան, Վենետիկ 1680, 1685, 1710, 1732, 1759, կամ Ամստերդամ 1698 և այլն]:
- [6.] 1 Մաշտոց (Մաշտոց) [Մաշտոց, Ամստերդամ, 1667, 1676]:
- [7.] 1 Նարեկ (Նարեկ) [Նարեկ, Կ. Պոլիս, 1701, 1721, 1755, 1763, 1774, 1783]:
- [8.] 1 Մաթեոս մեկնիչ (Մաթեոզ մեկնիչի) [Մեկնութիւն սրբոյ աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մաթեոսի, արարեալ և շարագրեցեալ է Միթթարայ վարդապետէ Սեբաստացւոյ, Վենետիկ 1737]:
- [9.] 1 Գիրք առաքինությանց (Արաքինութեանց գիրքի) [Առաքինութեանց գիրք է լատիներէնէ ի հայ լեզու թարգմանեալ ի Միթթարայ վարդապետէ Սեբաստացւոյ, Վենետիկ 1721]:
- [10.] 1 Քերականութուն Բագդասարի (Բաղդասարիս) [Քերականութիւն Պաղտասար զպրի, Կ. Պոլիս, 1738, նույնը համատո՛ւ 1760]:

- քերարանութինի)
- [11.] 1 Պարտավճար Սիմեոնի (Պարտավճարի Սիմեոնիսա) [Գիրք որ կոչի Պարտավճար, ի Սիմեոն կաթողիկոսէ, էջմիածին, 1783]:
  - [12.] 1 Գիրք Խիկարի (Խիկարիս ծիգնի) [Գիրք Խիկարի, Կ. Պոլիս, 1708, 1731]:
  - [13.] 1 Գիրք աղօթից (Աղօթից գիրքի) [Գիրք աղօթից, Կ. Պոլիս 1721, 1734, 1747, կամ Վենետիկ 1793]:
  - [14.] 1 Գիրք յոթն իմաստասիրաց (Իոթն իմաստասիրաց գիրքի) [Գիրք եաւթն իմաստասիրաց, Կ. Պոլիս, 1807, 1731]:
  - [15.] 1 Քարոզգիրք Մատթեոսի (Քարոզգիրքի Մաթեուզիսա) [Քարոզգիրք Մատթէոսի, Վենետիկ, 1704, 1781]:
  - [16.] 1 հատոր Քարոզգիրք (հատուրի քարոզգիրքի) [Գիրք քարոզութեան արարեալ Գրիգոր վարդապետի Տաթևացւոյն, Ամառան հատոր, Կ. Պոլիս 1731, թիւ 2 մեռան հատոր, Կ. Պոլիս 1740]:
  - [17.] 2 Եզնի[իկ] կողբացու՝ առ Մեսրոպ (Իզնա կուլպացու Մեսրոպիս): [Գիրք ընդդիմութեանց արարեալ ի սրբոյ եզնիկ կողբացւոյ Հայոց վարդապետէ և յաշակերտէ մեծի թարգմանչին սրբոյն Մեսրոպայ, Իզմիր, 1762]:
  - [18.] 1 կաթողիկոսութեանց (կաթողիկոսութեանցի) [Կաթողիկէութեան? Կ. Պոլիս]:
  - [19.] 1 Արարչութեան Եվայի (Արարչութիանցի Իվայիսա) [Արարչութիւն եւայի յ յ]:
  - [20.] 1 Արարողութիւնք եկեղեցու (Սաղգրիս արարողութիանցի) [Արարողութիւն հանապարդեան եկեղեցւոյ Հայաստանեայց, Ամստերդամ, 1667]:
  - [21.] 1 Գիրք տոմարի (Տոմարիս ծիգնի) [Տոմարաց գիրք Հայոց, Հոմայեցոց և Պարգատոմար, ընդ որոց և Տաղ Յովասափու, մարմնախաղաց և երգահան, Ամստերդամ, 1668]:
  - [22.] 1 Փոքր Սաղմոս [Սաղմոս, Վենետիկ 1565, 1587, 1642, 1682, 1684, 1712, 1733, 1742, 1748, 1755, 1759, 1770, 1771, 1786, 1789, 1793, կամ Իլլոյ 1616, Լիվոնո 1643, Ամստերդամ 1661, 1664, 1713, 1714, Մարսել 1677, 1710, Կ. Պոլիս 1738, 1745, 1756, 1765, Թրիեստ 1787, Ն. Նախիջևան 1791]:
  - [23.] 1 Ոսանավորի գիրք (Վուտանավորիս ծիգնի) [ յ ]
  - [24.] 1 [2]րոսարան (Բոսարանի) [2րոսարան հոգեկիր Սիմեոն կաթողիկոսի, ՍՊԲ, 1777]:

- [25.] 1 Գիրք ընդհանրական (Գիրք ընդհանրական Երեսեի Շնորհալույ, ՍՊԲ, 1788):
  - [26.] 2 Մաղթանք (Պարակլիտի) [Աստուածաղբեր Սիմեոն կաթողիկոսի, ՍՊԲ, 1786]:
  - [27.] 1 Քրիստոնեական առ ընթերցողս (Քրիստոնեական ար ինթիրցողս) [ յ ]
  - [28.] Տաղարան [Տաղարան, Կ. Պոլիս 1698, 1701, 1740, 1788]:
  - [29.] 1 Տոնացույց (Տոնացուցի) [Տոնացոյց Հայաստանեայց եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1702, 1725, 1740, Վենետիկ 1782]:
  - [30.] 1 Հին<sup>4</sup> սաղմոս [Ձեռագիր Սաղմոս]
  - [31.] 1 Հին<sup>5</sup> ժամագիրք [Ձեռագիր ժամագիրք]
  - [32.] 1 Յոթն իմաստասիրաց (Իոթն իմաստասիրացի): [Եաւթն իմաստասիրք յ ]
- Կուսանցումն է՞
- [33.] 1 Սաղմոս [Տե՛ս Ա՛ 23]
  - [34.] 1 Հիսուս Որդի (Իսուս վուրդի) [Յիսուս Որդի Երեսեի Կյայեցւոյ, Վենետիկ 1643, 1660 (երկիցս), Մարսել 1702, Կ. Պոլիս 1724, 1746 (երկիցս), ՍՊԲ 1785, Մադրաս 1792]:
  - [35.] 1 Աւետարան [Տե՛ս Ա՛ 5]:
  - [36.] 1 Փոքրիկ Տաղարան [Տաղարան փոքրիկ շարահիւսեցեալ ի Սիմեոնէ կաթողիկոսէ, էջմիածին 1777, Մադրաս 1791]:
  - [37.] 1 Շարական [Շարական, Ամստերդամ 1664, 1685, 1702, 1718, Կ. Պոլիս 1727, 1736, 1742, 1768, 1784, 1790]:
  - [38.] 1 Հին<sup>7</sup> շարական [Ձեռագիր Շարական]
- Տեր-Առաքելի մոս է՞
- [39.] 1 Գիրք աստղաբաշխի (Աստղաբաշխիս ծիգնի) [Գիրք աստղաբաշխութեան յ ]
  - [40.] 1 Քարոզգիրք [Քարոզգիրք յ ]
  - [41.] 1 Գիրքիս մշտերի (յ)<sup>10</sup> [ յ ]\*

Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

1 Խոսքը վերաբերում է Հաղբատի թեմի առաջնորդ Դավիթ եպիսկոպոս Հավիլ-Դարյանին:  
 2 շնորք գործածվում է իբրև «տպագիր»-ի հոմանիշ:  
 3 «Հին» գործածվում է իբրև «ձեռագիր»-ի կամ «գրչագիր»-ի հոմանիշ:

\* Ընդամենը 41 միավոր, որոնցից առնվազն 4 ձեռագիր է:

4 Տես ծանոթ. 3:

5 Տես նույնը:

6 Ուզում է ասել, որ հետևյալ (ՁՁ 33—38) գրքերը Տփղիսի ս. Ստեփանոս Կոստանաց վանքն են եղել տարած:

7 Տես ծանոթ. 3:

8 Ուզում է ասել, որ հետևյալ (ՁՁ 39—41) գրքերը տեր-Առաքելն է տարել:

9 Այս նյութի շուրջը հմտ. նակ՝ Լ. Մեղիքսեթ-Բեկ, նոր նյութեր Սայաթ-Նովայի առասպելական «նահատակության» շուրջը, — «Գրուհատար» (Թբ.) 1935 թ., № 189, ուր մեծք արծարծել ենք այն թեզը, որ այս հիշատակարանների հեղինակ՝ տեր-Սեբեակն [Տփղիսեցին] նույն տեր-Սեբեակն Սայաթ-Նովան պիտի լինի, հետևապես 1796—1798 թթ. վարդապետ, որը չէր սպանվել Աղա Մահմադ-խանի կողմից: Սայաթ-Նովայի մեր ձեռքի տակ եղած գրքերը (մինչ 1766 թ.) և այս տեր-Ստեփանի գիրը (1796—1798 թթ.), որոնք բաժանված են իրարից մոտ 35 տարով, այնքան նմանություն ունեն, որքան սկանակ և հետադաշում զարգացած գրի տեր անձանց: Սայաթ-Նովայի մինչ 1766 թ. գրքերը տես Սայաթ-Նովայ, Թ. 1914, նկար IV. Ի. Գրիշաշվիլի, Սայաթ-Նովա, վրացերեն, Թբ., 1918, էջ 91. Գ. Լևոնյան, Սայաթ-Նովա, Եր., 1932, էջ 49—50: Գրացուցակը տես Լ. Մեղիքսեթ-Բեկ. Անտոն Լ-ի «Հակահառություն» լաթիներեն-հայերեն ազգյուրները՝ «Թբ. Պետ. համալսարանի Աշխատություններ», XXX—B., 1947, էջ 97—112 (104—108):

ԺԷ

ԱՆԱՆՈՒՆ ՊԱՏՄԻՉ

«ԿԱՆԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ» (1801)

Վախուշտի Բագրատիոն արքայազնի (տես այս աշխատության Գ գլուխը) կողմած «Կախեթի և Հերեթի պատմությունը», որ ընդգրկում է 687—1744 թթ. պատմությունը, ունեցավ իր շարունակողը, որը հանձն առավ գրելու հետագա անցքերի մասին սկսած 1744 թվից մինչև 1801 թվի: Այդ շարունակողը մի անանուն պատմիչ է, անկասկած, Վրաց վերջին թագավոր Գիորգի XII-ի որդի Դավիթ արքայազն-ուեղենտի (1800—1803 թթ.) մոտիկ անձնավորություն, որը հիշյալ Դավիթն ընդարձակ պատումներ-ներբողներ է նվիրում:

«Կախեթի պատմության շարունակությունը», որ հիմնականում, բացի վերջին մասերից, կրկնում է Պապունա Օրբելիանու (տես այս հատորի Ը գլուխը), Օման Խերխուլիձեի (ԺԵ գլ.) և ուրիշների հաղորդած փաստական տվյալները, հրատարակել է պրոֆ. Դ. Չուբինովը «Քարթլիս-Յիսուրբերա»-ի II մասում (ՍՊԲ, 1854, էջ 501—516), որն և օգտագործել ենք մենք ստորև:

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1744—1801 թթ.]

1745 թ. ... Իբրեհիմ-խան Ամիր-Ասլան-խանը<sup>1</sup> մոտեցավ Շուշիին: Իսկ [Տփղիս] քաղաքի բերդն ամրացրեց Դուրա-խան բեկը, որը պահապան էր նշանակված պարսիկների կողմից:...

1748 թ. ... Մա[հ]մադ-խան Ղաջարը, որ նազըր-շահի<sup>2</sup> սպաներից մեկն էր, մոտեցավ Երևանին և ճիգ ու ջանք էր թափում, որպեսզի այն գրավի: Երևանցիք [օղնություն] խնդրեցին թեյ-մուրազ թագավորից<sup>3</sup>, որը և գնաց իր զորքով, Մա[հ]մադ-խանին հաղթեց, շատ ավար վերցրեց, Երևանն ավերումից փրկեց: Ապա նա Երևանցիներին իրեն հարկատու դարձրեց ու վերադարձավ Տփղիս:

Շուշվա Փանահ-խանն եկավ Գյանջա: Թեյմուրազ թագա-  
վորն իր որդու հետ՝ միասին գնացին օգնության Գյանջային: Լսելով նրանց գալը, Փանահ-խանն ընդհատեց Գյանջայի պա-  
շարուժը և վերադարձավ Դարարադ: Տեղեկանալով սրա մասին՝  
[Վրաց] թագավորները հետամուտ եղան նրան և մտան Դարա-  
րադ: Դարաթափա կոչված վայրում տեղի ունեցավ ճակատամար-  
տը, և Փանահ-խանն այնտեղ պարտվեց, իսկ վրաց զորքն ավե-  
րեց բոլոր այն տեղերը մինչ Խուզափ[ե]րին և այնքան ավար  
գտան, որ ոչխարը մի արասով էր ծախվում, իսկ ձին, գոմեղը  
և կովը հինգ արասի: Եվ հաղթող վերադարձան՝ ավարով հան-  
դերձ:

1749 թ. ...Ազատ-խան ազվանն ուժեղացավ Պարսկաստա-  
նում և շարժվեց Երևանի դեմ: Երևանցիներն [օգնություն] խնդրեցին Թեյմուրազ թագավորից, որն ուղարկեց իր որդի  
Հրեկլեին երեք հազար հեծյալներով: Երբ Հրեկլեն հասավ Դրբխ-  
բուլախ, նա (Ազատ-խանն) ևս եկավ, հետն ունենալով տասն և  
ութ հազարից ավելի մարդ: Տեղի ունեցավ ճակատամարտ:  
Ազատ-խանը պարտվեց վրացիներից, Երևանը փրկեցին և [վրա-  
ցիք] հաղթող վերադարձան բազմաթիվ ավարով:...

1751 թ. ... Թեյմուրազ թագավորն իր որդի Հրեկլեի հետ  
միասին գնաց Գյանջա, ուր նրան ներկայացան Գյանջայի, Շուշ-  
վա և Դարադադի խաները, որոնց և Հրեկլե թագավորի հրամա-  
նով կալանավորեցին:...

...[Հաջի-Չալսարի որդի] Աղաքիշին՝ շրջելով Շամշադինն ու  
Ղաղախը՝ եկավ Բայդար:... Ապա [Վրաց] թագավորներն եկան  
Շամշադին՝ Թուլքի-Թափա կոչված տեղը, ուր տեղի ունեցավ  
ճակատամարտ, և Աղաքիշին պարտվեց:...

1753 թ. ... Բորչալուեցիք տեղահան եղան ու բնակություն  
հաստատեցին Դարասուում՝ Երևանի մոտ: Ապա Հրեկլե թագավորը  
զորք ժողովեց, եկավ Երևան, նրանց վրա հարձակվեց ու տեղա-  
փոխեց Բորչալու:...

1757 թ. ...Փաթալի-խան ավշարը, հալաքելով Ադրբեջանի  
հեծյալներին, [եկավ ու] մոտեցավ Շուշուն, և օգնություն խընդ-  
րեց [Վրաց] թագավորից, որը հեծելազորք ուղարկեց, իսկ երբ  
սրանց դեմ շարժվեց Քարիմ-խանը<sup>5</sup>, այն ժամանակ Վրաց հե-  
ծելազորքը վերադարձավ:...

1767 թ. ...[Հրեկլե] թագավորը դարձյալ զորք ժողովեց  
և հարձակվեց Երևանյան [երկրի] քյուրդերի վրա, որոնց

վրացիները գերեցին և մեծ ավարով վերադարձան: Այդ պահին  
Բամբակը ավեր էր: Նրա (Հրեկլեի) անդրանիկ որդի Գիորգին<sup>6</sup>  
խնդրեց այն տալ իրեն և նա [վերա]շինեց այն:...

1769 թ. ...Հրեկլե թագավորը կրկին արշավեց քյուրդերի  
վրա, ավերեց նրանց, և վրացիները մեծ ավարով վերադարձան:

1772 թ. ... Ժողովեցին դադախեցիք, բորչալուեցիք և փամ-  
բակեցիք և գերեցին Նախիջևանը. տեղացի Շաքուր[ա]լի-խանին  
հաղթեցին:...

1778 թ. ... Հրեկլե թագավորն և Շուշվա խան Իրրա[ն]իմը՝  
համաձայնության գալով՝ գրավեցին Գյանջան, կալանավորեցին  
Գյանջայի Մա[ն]մադ-խանին ընտանիքով հանդերձ, որին Շուշ-  
վա Իրրահիմ (Իրրեիմ) խանը գերի տարավ:...

1779 թ. ...Երևանի խան [Հ]ուսեյն-ղուլին հրաժարվեց հարկ  
վճարելուց վրացիներին, որի պատճառով [Հրեկլե] թագավորը  
գնաց նրա դեմ, Այնտեղ տեղի ունեցավ պատերազմ, ուր խի-  
ղախությամբ հանդես եկավ արքայազն Գիորգին: Այդտեղ Երե-  
վանյան զորքը հաղթվեց թագավորից, որը հարկատու դարձրեց  
[երևանցիներին] և շտապ վերադարձավ [Տփղիս]:...

1782 թ. ...Երևանի խան [Հ]ուսեյն-ղուլին մեռավ ու խան  
դարձրին նրա որդի Դուլամուլին: Քանի որ վերջինս թեթևամիտ  
էր, երևանցիները նրան սպանեցին: [Հրեկլե] թագավորը հար-  
կադրված եղավ ուղարկելու այնտեղ Միրզա Գուրգինա Էնակո-  
լովաշվիլուն<sup>7</sup>, և [Հ]ուսեյն-Ալիխանի կրտսեր որդի Մահմուդ-խա-  
նին խան դարձրին: Եվ սրան թագավորի հրամանով Երևանի խան  
հաստատեցին:...

1785 թ. ...Երևաց նուրսալ-րեկի որդի Օմար-խան Ավար-  
ցին, որն անցավ Խորին և Դարայազն (Ղա'րախ), անցավ Կու-  
րը, մոտեցավ Ախտալային, որն և գրավեց, ադա գնաց Ախալ-  
ցիխե:... Օմար-խանն անցավ Գյոքչան, հասավ Շամքոր, որն և  
ավերեց ու հեռացավ:

1786 թ. ...Նախիջևանցիք խոսվություն գցեցին և Նախի-  
ջևանից քշեցին իրենց Քալբալի-խանին, որն եկավ [Երևան] ու  
[օգնություն] խնդրեց Երևանի խան Մահմադից, իսկ Մահմադ-  
խանն [օգնություն] խնդրեց [Հրեկլե] թագավորից: Ապա թագա-  
վորն իր փեսա՝ Մուխրանի տեր Իոսանին ուղարկեց զորքով և  
Թնդանոթներով, որոնք երևանցիներին միացան, գնացին Նախի-  
ջևան, ուր և տեղի ունեցավ ճակատամարտ: Պարտվեցին Նախի-  
ջևանցիները, և խնդրեցին վրացական զորքից. «ՆՔՆ [վրացա-



կան] զորքը նախիջևանը թողնի (նախիջևանից հեռանա), նախիջևանցիք գարձյալ իրենց խան կկարգեն Քալբալիին: Եվ այս պայմանով [վրացական զորքը] հաղթական վերադարձավ Երևան, և Երևանից Քարթլի: Հաղախ[եցիք] ամբողջապես տեղահան եղան ու գնաց[ին] Շուշի, իսկ Շամշադեցի[ք]՝ Գյանջա: Մի տարուց հետո էրեկլե թագավորը ուսական և վրացական զորքի հետ գնաց, որպեսզի տեղահան անի քոչվորներին և Խամսայի մեկիջներին, որոնք պայման ունեին դրած թագավորի հետ: Մոտենալով Գյանջային՝ նա իր որդի Յուլսին զորքով ուղարկեց [Հարարադ]: Երբ սրանք հասան Ջեյրա, հանդիպեցին զարարադցոց զորքին: Հարարադցիք պարտվեցին: Շատ զարբազցիներ կոտորվեցին [վրացիներից]: Այս պահին Գյանջա եկավ սուրհանդակը (չափարը) Ռուսաստանից, ուր ետ էր կանչվում ուսաց զորքը: Երբ ուսաները ետ քաշվեցին, [էրեկլե] թագավորն այլևս կարևոր չհամարեց գնալ Հարարադի գեմ, և թագավորը վերադարձավ Գյանջա՝ տեղահան չանելով քոչվորներին: Իսկ ուս[աներ]ը 1787 թվին գնացին:

1789 թ. ...[Վրաց զորքը] հասավ Շամքոր, ավերեց Չընգըլին (Չինգիլը), տեղահան արավ Շամքորը: Այնտեղ եկավ Դարուբանդի Փաթալի-խանը և Շաքիի Մանադ-խանը, որոնք և որոշեցին երեքով Հարարադի գեմ գնալ, քանի որ Իբրեհիմ-խանը մոտացության էր ավել էրեկլե թագավորի լավությունը:

...Լեզգիները... մեասում էին Քարթլիին և Մոմխիթին...  
 ...Միքել Արղութաշվիլին առաջնորդում էր լեզգիներին որոնք կրժանիսր գրավեցին... այդ Միքել Արղութաշվիլու առաջնորդությամբ [լեզգիները] գրավեցին Հալաջին (Հալաջա), որտեղից և տարան երկու հարյուրից ավել հայ գերիներ:

...Թագավորի հրամանով Դավիթ արքայազնը՝ հազար մարդով հարձակվեց Հարսի վրա և գերեց Ինջադարանը, Փալգերեվանը և Ջամուշուն, և տարան հազարից ավելի գերի: Ապա ետևից նրանց մոտեցավ թուրքական մեծ զորքը՝ Խաթունի որդիները Ալի-բեկի և Մա[ն]մադ-բեկի ղեկավարությամբ: Այդտեղ ինքը Դավիթ արքայազնը քաջարի էր, որն իրեն իսկ ձեռքով սպանեց թուրքական ականավոր զորական Թիֆնիսի խան Թոփանչիբաշին... Աշիշ-բեկը հայտնի զորական էր ամբողջ Հարսում և քյուրդերի մեջ և որն Դավիթ արքայազնին թուրով յոթը հարված հասցրեց: Սակայն նրան պաշտպանեց վերտ զրահը, քանի որ նա շորի տակից հագած ուներ վերտ զրահ: Եվ

վերջինս արքայազնի ձեռքից [վիրավորվելով], մեռավ... Ապա լեզգիներն Ախալցխեից եկան Միքել Արղութաշվիլու առաջնորդությամբ և գրավեցին Գ[յ]աուրարսը...

1790 թ. ...[էրեկլե թագավորը] տեղահան արավ Շամշադին- [ցիներին] ու փոխարեց Շուլավեր: [Վրացիք]... հասնելով Շամշադին՝ Մանադ-խանի ու նրա զորքի վրա հարձակվեցին: Եվ ոչ միայն հաղթեցին Մանադ-խանին... Եվ չնայած, որ թագավորը Շամշադինը քանիցս գյանջեցիներին էր ավել, սակայն չէին հնազանդվում: Մի առ ժամանակ սպասելով՝ Ջավադ-խանը Գյանջայի և մեկիջների զորքով հարձակվեց ու գերեց Շամշադինը, և ուներ նա երեք հազարից ավելի զորք: [Շամշադինցոց] զազախեցիք եկան օգնության, իսկ զազախեցիք և շամշադինցիք երեք հարյուրից ավելի չէին: Սրանք հաղթեցին Ջավադ-խանին և գերեցին ութ հարյուրից ավելի գյանջեցիներ...  
 [Աղա Մանադ-խան]-Խոջան՝ Պարսկաստանի գործերից իրեն ազատ համարելով՝ եկավ ու մոտեցավ Շուշիին, քանի որ Շուշվա խան Իբրե[հ]իմը նրան չէր հնազանդվում: Սակայն նա չկարողացավ գրավել այս բերդը: Ապա Քարթլիի քոչվորները՝ հներն ու նորերը, և Հարարադի բնիկներից էլ շատերը՝ երկյուղ կրելով Խոջայից՝ [խնդրեցին օգնություն]. Ուստի և արքայազներ Յուլսինը և Ալեքսանդրեն՝ հարձակվեցին Գյանջայի վրա և գերեցին այն:...

1795 թ. ...Շուշվա Իբրե[հ]իմ-խանը եկավ Գյանջայի վրա: Քանի որ Գյանջայի խանը Հարարադի և Տիֆլիսի ավերման պատճառն էր, նա օգնություն խնդրեց թագավորից, որն ուղարկեց իր որդի Ալեքսանդրեին և թոռն Դավիթին... սրանց սըխազործություններից ապշած էին զարարադցիներն ու լեզգիները...

1796 թ. ...Աղա-Մա[ն]մադ խանը՝ Խորասանի գործերից ազատ զգալով իրեն՝ շարժվեց գեպի Շուշի: Տեղեկանալով նրա գալու մասին՝ Իբրե[հ]իմ խանն իր տուն ու տեղով քաշվեց Բեյլաքան, և Աղա-Մա[ն]մադ խանը գրավեց բերդը: Նույնտեղ նա սպանվեց իր ծառաներից [մեկի] ձեռքով 1797 թվին...

1798 թ. ...վեճ ծագեց Քարթլիի և Հարսի միջև: Ուստի և [Գիորգի] թագավորն ուղարկեց իր որդիներ Դավիթին և Իոանեին, որոնք հարձակվեցին Հարսի վրա և գրավեցին Հզլախախի շրջակայքը: Ապա մեծ զորքով դուրս եկավ Ալի-բեկը, և օսմանցիք վրացիներից պարտվեցին...

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Երևանի խան:
- 2 Նադբբ, Պարսից շահ, 1736—1747 թթ.:
- 3 Քեյմուրազ II, Քարթլիի թագավոր, 1744—1762 թթ.:
- 4 Խոսրոջ էրեկլե II-ի մասին է, որ Կախեթի թագավոր էր 1744—1762 թվականներին և Քարթլիի և Կախեթի՝ 1762—1798 թթ.:
- 5 Քերիմ-խանը, հետադառնում Պարսից շահ, 1761—1779 թթ.:
- 6 Գիորգի XII, Վրաց վերջին թագավորը, 1798—1800 թթ.:
- 7 Լեզոններ իմացող քաղաքագետ, որի մասին մանրամասն տե՛ս Գալուստ Շերմաղանեան, Նիւթեր ազգային պատմութեան համար. Երեւելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով, 1890, էջ 284—294:
- 8 Վրաց վերջին թագավոր Գիորգի XII-ի որդին, Վրաստանի սեփեաւ 1800—1803 թթ. (մանրամասն տե՛ս հետեյալ՝ ԺԹ գլխում):
- 9 Ալեքսանդրէ արքայազն՝ Սահակ Մելիք-Աղամալյանի փեսան, որի մասին խոսում են Ն. Աբովյանը (Վերջ Հայաստանի, գլ. III) և Րաֆֆին (Ալեքսանդր արքայազնը Պարսկաստանում), հմմտ. Լ. Մելիքսեթ-Քեկ, Ն. Աբովյանը Քրիստոսում և «Քուրքի ազնիվը» պատմվածքի տեղադրութիւնը, — «Գրական հանդես» (Թբ.) 1941 թ., № 1, էջ 34—35; հմմտ. ԺԹ գլխի 14-րդ ծանոթ. (էջ 210):

ԺԸ

ԻՌՆԱ ԳԵԳԵՎԱՆԻՇՎԻԼԻ

«ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ» (1805—1810)

Իրնա Գաբրիելի որդի Գեգեվանիշվիլին XVIII—XIX դդ. Վրաց նշանավոր ուղեգիրներից մեկն է, որի գրչին է պատկանում «Շրջագայութիւն» (Միմոսվլա) կամ «Ճանապարհորդութիւն» (Մոգպուրորա) վերնագրով երկը XVIII դ. 80—90-ական թվականներին կատարած իր ճանապարհորդութեան տպավորութիւններով:

Գեգեվանիշվիլին ծնվել է 1737 թ.: Իր կրթութիւնը ստանում է Անտոն I Վրաց կաթողիկոսի դեկավարութեամբ, և ապա վերջինից ձեռնադրվում է կուսակրոն սարկավագ՝ ընդունելով Իրնա անունը: Ապա Անտոնի գահընկեցութեանից հետո (1755) ուղեկցում է նրան Ռուսաստան և նրա հետ էլ վերադառնում է, նշանակվելով Մցխեթի բլրի ս. Խաչ վանքի (Ձվարխս-ժոնաստերի) վանահայր: 1775 թ. ձեռնադրվում է եպիսկոպոս, ստանալով Ռուխի և Սուրամի աթոռը՝ մետրապոլիտի կոչումով, որի կապակցութեամբ և հայանի է դառնում «Մրովելի», այսինքն «Ռուխեցի»-ի հորջորջումով: 1780 թ. մի ինչ որ անհայտ պատճառով կարգալուծ է արվում և ապաշխարանքի ուղարկվում Դավիթ-Գարեշայի անապատը (Ղարայազի մոտ), որտեղից փախչելով վեգերում է՝ Քութայիս, Տփղիս և այլուր, վերջը անցնում է Ախալցխիս, որ այն ժամանակ Թյուրքիայի սահմաններում էր մտնում, և տեղական փաշայի օժանդակութեամբ անցնում է Կ. Պոլիս, ուր տիեզերական հույն պատրիարքից վերականգնվում է հոգևոր կոչման մեջ և ապա սկսում իր երկարամյա ճանապարհորդութիւնը. շրջում է Միջերկրական ծովի ափազանով, անցնում է Կիև, սւր ֆնում է մոտ 3 տարի, վերջապէս 1795 թ. ուղևորվում է Մոսկվա, հաստատվելով Կրեմլի «Չուգովի» վանքում, ուր ֆնում է ցմահ՝ մինչ 1821 թ.:

Իոնա Գեղեվանիշվիլի Ռուսացիները (Մրովելիներ) իր ճանապարհորդութեան տպագրութեան յունները գրի է առել Մոսկվայում եղած ժամանակ՝ 1805—1810 թթ. միջոցին:

Իր «Ուղեգրութեան» մեջ Իոնան, ի միջի այլոց, տալիս է տեղեկութեաններ նկարագրած վայրերի հայերի մասին, որոնց հիշատակում է իրրե վաճառականների, նաև հայոց եկեղեցիների մասին, մանավանդ Երուսաղեմի «Քրիստոսի գերեզմանի» շուրջը, նշում է իր հանդիպումները Յասսայում սուսահայերի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հետ 1791 թվին և այլն:

Իոնա Գեղեվանիշվիլը գրվածքը հրատարակվել է վրացերեն, Պլատոն Իոսելիանու առաջարկով և ծանոթագրութեաններով, Թբիլիսում 1852 թվին առանձին գրքով՝ «Միմոսվյա անու մեղավոր» (Վերջագայութեան կամ ճանապարհորդութեան) վերնագրով, որտեղից և թարգմանել ենք համապատասխան հատվածները:

«ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ

...[Կ. Պոլսում]... քաղաքում, որ շրջապատված է պարսպով, քսան և չորս եկեղեցի կա վայելչատես՝ ուղղափառների, և մեկն էլ հայոց (sic), իսկ ֆրանկ-կաթոլիկների և ոչ մեկը՝...

...[Երուսաղեմում]... [Այլագ] շարաթ երեկոյան թուրքերը (թաթարները) փակեցին Քրիստոսի գերեզմանի [տաճարը], ուր դեռստալորված դնաց նազարեթի և Էպիտրոպի կամ Դիկեի մետրապոլիտ Գերասիմը (Ղերասիմոսը), և տարան կանթեղը. ապա դուռը լացին, և մտան Քրիստոսի գերեզմանի [տաճարը], որտեղից հանեցին վառած կանթեղը. իսկ վառած մոմերը մետրապոլիտը երկու ձեռքով տվեց ուղղափառներին, և [միայն] ձախ ձեռքով հայերին, որոնք էրմաններ (էրման) են... Սուրբ գերեզմանի [տաճարին] կից փոքր եկեղեցի է կառուցված՝ զպտական, դեպի ձախ ֆրանկների վանքն է, իսկ աջ կողմում բարձրաշեն հայոց եկեղեցին է գտնվում, արևմուտքից՝ ասորոց և մարոնիտ զպտները... Իսկ սուրբ գերեզմանի վրա վառած են կանթեղներ ամենայն օր և ամենայն ժամ՝ տասնևվեցը մեր ուղղափառների, տասնևերկուսը լատինացոց, ութը հայոց, չորսը զպտների, երկուսը մարիոնիտների և մեկն ասորոց<sup>2</sup>...

[Վեներաբիլ] քաղաքից դուրս ծովի կողմում գտնվում է հայ կաթոլիկների փոքր վանքը: Վանքում կա մի փոքր եկեղեցի:

տները փոքր են և շուրջը ծով է. ունեն իրենց լեզվով գրքեր ասպող տպարան<sup>3</sup>,...

[Յասսայում] տիրում էր ուրախութեան, տեղի ուներ պարահանդես ու մեծ ճաշկերույթ [պալատի] վերնատանը, տրված [Իշխան] Բեգրորդկոյի կողմից, ուր մուտքը հրավիրատոմսերով էր [1791 թ. դեկտեմբերին ուսու-տաճկական դաշնագիրը կնքելու առթիվ]: Ինձ ևս [Բեգրորդկոն] ուղարկել էր հրավիրատոմս: [Այնտեղ] էին Ամբրոսի [մետրապոլիտը], ես և Ծրոպոլի [եպիսկոպոս] Գրիգորը, նաև հայոց երեցապետ (արքեպեպ) Հովսեփը<sup>4</sup> և օտարերկրացի բազմաթիվ մարդիկ և բոլոր գեներալները և լեհաց հեծելազորքի մեծամեծները: Հենց որ հասանք տեղը, սկսվեց նիստը վերնատանը. Մտավ Ամբրոսին և նստեց Բեգրորդկոյի աջ կողմը, ես ևս անցա ու նրա կողքին նստեցի, ապա իմ կողքին Ծրոպոլի [եպիսկոպոս] Գրիգորը և նրա կողքին հայոց երեցապետ (արքեպեպ) Հովսեփը: Իսկ Բեգրորդկոյի ձախ կողմն անցավ ու նստեց կոմս Պոտոցկին՝ ասպետ կապույտ ժապավենով և ապա այլ լեհացիք, իսկ մյուս կողմում տեղիս զորապետները, համայն Ռուսիայի գեներալները՝ մաս չորս հարյուր հոգի, և Մոլդավիայի բոյարները, այսինքն ազնւրվածները...:

... Կոմս Ռուսյանցեվը, որը Ժիժ գետի ափին էր կանգնած, դնաց Ռուսիա. ապա և կոմս Բեգրորդկոն պատրաստվեց ուղևորվելու, և բոլոր հոգևորականներս եկանք հրաժեշտ տալու: Ինձ կցել էին հայոց երեցապետ (արքեպեպ) Հովսեփին, որն ասում էր, թե՛ «Բո այդտեղ՝ [սահմանից դուրս] մնալը լավ չէ, ավելի լավ է մտնես Ռուսիա, որը լավ է, քան Թուրքիան, և նրանց (թուրքերի) երկիրը, այս երկիրը Թուրքերին է մնում, իսկ քեզ համար ավելի լավ է Ռուսիան»: Եվ ես (Իոնան) նրա կամքին հնազանդվեցի: Երբ [Հովսեփն] ինձանից հեռացավ, հրամայեց. քո անունով հրամանագիրը շուտով կտտացվի...:

...Գեներալ անշեֆ Վոլկոնսկին ևս մեծ խնճուղք և ճաշկերույթ սարքեց,... [ուր] ներկա էին վերոհիշյալ երեցապետները...:

...Այս՝ [Ռոմանիա] քաղաքում բնակվում են վաճառականներ՝ մոլդավացիներ, հայեր ու հրեաներ<sup>5</sup>...

Յասսա քաղաքում... բնակվում են վաճառականներ՝ եվրոպացիներ, հայեր և հրեաներ...

[Աղա-Մահմադ-խանի կողմից Տիզիսի ավերումից հետո  
առևանգված] գրավեցին Գյանջան, որն Նիխավետապոլ կոչեցին, և  
Շուշվա բերդը և Շամախին (Շամախիա), Դարբանդը, Բաքուն:...

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Կասկածելի է, որ Խոնա Գեղեանի շվիլու ն. Գոլում գտնված ժամանակ՝ XVII դ. 80-ական թվականներին, այնտեղ միայն մի հայոց եկեղեցի լիներ, իսկ կաթոլիկների և ոչ մեկը:

<sup>2</sup> Նորայր վարդապետ (այժմ եպիսկոպոս) Գողարյան, Համառոտ ակնարկ հայ Նրուսաղեմի վրա, «Եջմիածին», 1951 թ. ապրիլ-հունիս, էջ 89—92, հուլիս-օգոստոս, էջ 77—80:

<sup>3</sup> Խոսքը Վենետիկի Մխիթարյան միաբանության տպարանի և հրատարակչության մասին է:

<sup>4</sup> Խոսքը Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի մասին է և վերջինիս գործունեության այն շրջանին է վերաբերում, երբ նա գտնվում էր Յասսայում. տես Լէօ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան, Թ., 1902, էջ 75—86. Գիւտ ա. ք. Աղանեան, Գիւտան Հայոց պատմութեան, գիրք Թ., Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մ. առաջին. 1778—1800, Թ. 1911, էջ 120, 121, 309:

<sup>5</sup> Մուղավիայի հայերի մասին տես Լ. Բարայան, Հայերը Մուղավիայում և Բուքովինայում, Թիֆլիս, 1911:

ԺԹ

ԴԱՎԻԹ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐԲԱՅԱՋՆ

«ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1814)

Արքայազն Դավիթ Բագրատիոնը Գիորգի XII Վրաց վերջին թագավորի որդին էր, ծնված 1768 թ., ապա 1795 թ. ուսաց գնդապետ, գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ, սենատոր և զանազան շքանշանների ասպետ, 1800—1803 թթ. միջոցին Վրաստանի ղեկավար, վախճանված Պետերբուրգում 1819 թ.:

Դավիթ արքայազնը գրականության մեջ հռչակ է ստացել իրրև պատմարան, հարել է «Վրացական» հոսանքին: Նրա գրական գործերից հայտնի են. 1. «Վրաստանի համառոտ պատմութիւն», որ հեղինակը գրել է ուսերեն և հրատարակել Պետերբուրգում 1805 թվին՝ Краткая история Грузии со времени первого в оной населения (նույնը՝ ր. հրատ. К. Н. Бегичев-ի առաջարանով, Թր., 1893). 2. «Վրաց օրենսգիրքը», որ գեռես հրատարակված չէ (վաղուց պատրաստել էր տպագրության հանդուրյալ վրացագետ Ս. Գորգաձեն). 3. «Նոր պատմութիւն», գրի առնված 1814 թվին, որը 2 հրատարակութիւն ունի. ա. Մ. Զանաշվիլու խմբագրութիւնը՝ «Նյութեր Վրաստանի պատմութիւն համար, ժողոված արքայազն Դավիթ Գիորգիի որդու ու նրա եղբայրների կողմից», վրացերեն, Թր., 1905, էջ 1—126, և ր. Թ. Լոմոսոբու խմբագրութիւնը՝ «Դավիթ արքայազն. Նոր պատմութիւն», Թր., 1941, էջ 1—44: Բացի դրանից Դավիթ արքայազնը հեղինակ է հատուկ զեկուցադրի ուսերեն լեզվով «Վրաստանի լավ կազմակերպման մասին» (И. К. Ениколопов, Две записки царевича Давида „О лучшем устройстве Грузии“, — „Материалы по истории Грузии и Кавказа“, 1942, выпуск I, Т. 1942, стр. 121—167).

Մրանցից երկրորդը տեղ-տեղ անանունի «Կախեթի պատ-

մության շարունակության» (տես այս հատորի ԺԷ գլուխը) կրկնությունն է ներկայացնում:

4. Կեկեկի ձեն (նոր գրավոր աղբյուրներ Հաշա-Գիորգիի պատմության, վրացերեն, — «Թր. պետ. համալսարանի Աշխատություններ», XVI, 1940, էջ 91, ծանոթ. 1) գտնում է, որ «նոր պատմություն» կոչված երկի հեղինակը Դավիթ արքայազնը չպիտի լինի, այլ՝ Բագրատ արքայազնը, քանի որ այնտեղ Դավթի մասին երրորդ գեմքով է խոսվում և, բացի դրանից, այն լի է սքանչելագործությունների նկարագրությամբ, որ Դավթ արքայազնին, իբրև «վոլտերականի», չի սազում: Սակայն այս գիտողությունները մեզ համոզեցուցիչ չեն թվում, քանի որ հեղինակը իրեն, իբրև պատերազմական և քաղաքական գործողություններում մասնակցողի, կարող էր երրորդ գեմքով հիշատակել, իսկ հրաշագործությունների նկարագրությունները կարող էին նշել երկասիրության լրացնող-շարունակողները կամ հետագա խմբագիրները, որոնցից մեկը՝ Բագրատ արքայազնը՝ այն հասցրել է մինչև 1824 թ., իսկ մյուսները մինչև 1840 թ.:

Ըստ իս, «նոր պատմություն»-ը, որ մեզ հասել է Բագրատ արքայազնի ինքնածնագիր «նոր պատմություն» մեջ մուծված, իսկ մի այլ ձեռագրում շարունակվում է մինչև 1840 թ., Չ շերտից է բաղկացած. մեկը հիմնական, որ Դավիթ արքայազնին է և առանց փակագծերի է բերված և մյուսը՝ անանունի կրկնությունը, որ մեր կողմից անկյունավոր փակագծերի մեջ է ամփոփված: Իսկ Բագրատ արքայազնի և հետագա շարունակողների գործերը օգտագործում ենք համապատասխան գլուխներում (ԻԳ և ԻԶ գլուխները):

Ստորև քաղվածքները մեր թարգմանությամբ բերում ենք ըստ Մ. Ջանաշվիլու և Թ. Լոմոսերու հրատարակությունների, որոնք իրար լրացնում են:

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1745—1812 թթ.]

1

1745 թվին... Իբրե[ն]իմ խանը... եկավ մոտեցավ Շուշիին Իսկ Տփղիս քաղաքի բերդն ամրացրեց Գուրա-խան բեկ Ղազախեցին, որը պահապան էր նշանակված պարսիկների կողմից:...

1748 թ. ... Մա[ն]մագ-խան Ղաջարը, որ Նադրի սպանողներից մեկն էր, մոտեցավ Երևանին և ճիգ ու ջանք էր թափում, որպեսզի այն գրավի: Երևանցիք [օգնություն] խնդրեցին Թեյմուրազ թագավորից, որն և դնաց իր զորքով, Մա[ն]մագ-խանին հաղթեց, շատ ավար վերցրեց, Երևանն ավերումից փրկեց, բայց [ամբողջ] Երևանն իրեն հարկատու դարձրեց, ապա վերադարձավ Տփղիս:

Նույն [1748] թվին... Շուշվա Փանահ-խանն եկավ Գյանջա և շրջապատեց այն: Լուելով այս, իսկույն և եթ Գյանջային օգնության գնաց Թեյմուրազ թագավորն իր որդի Հրեկլե թագավորի հետ միասին: Լուելով նրանց դայը՝ Փանահ-խանն ընդհատեց Գյանջայի պաշարումը և վերադարձավ Ղարաբաղ: Տեղեկանալով սրա մասին՝ [Վրաց] թագավորները հետապնդեցին նրան, մտան Ղարաբաղ: Ղարաթափա կոչված վայրում տեղի ունեցավ ճակատամարտ, և Փանահ-խանն այնտեղ պարտվեց, <և [նրա] թնդանոթներն ու զինարանը (թոփխանան) ամբողջ գրավեցին>: Վրաց զորքն ավերեց մինչ Խուզափերինի կամուրջը և այնքան ավար գտան, որ ոչխարը մի արասով էր ծախվում, իսկ ձին, գոմեշը և կովը հինգ արասի, Եվ [վրաց թագավորները] հաղթող վերադարձան՝ <նրանցից խլած թնգանոթները բերելով և դնելով Թելավի և Գորու բերդերում>...

1749 թ. ... Ազատ-խան աղվանն ուժեղացավ Պարսկաստանում և շարժվեց Երևանի դեմ: Երևանցիները նորից [օգնություն] խնդրեցին Թեյմուրազ թագավորից, որն ուղարկեց իր որդի Հրեկլեին երեք հազար հեծելազորքով: Երբ Հրեկլեն հասավ Ղըրխուրուխ, նա՝ (Ազատ-խանն) ևս եկավ, հետն սւնենալով տասն և ութ հազարից ավելի մարդ: Տեղի ունեցավ ճակատամարտ: Ազատ-խանը պարտվեց վրացիներից, Երևանը փրկեցին և [վրացիք] հաղթող վերադարձան բազմաթիվ ավարով:... [Թեյմուրազ] թագավորին ներկայացան [Գյանջայում] Գյանջայի, Շուշվա (վարխանտով՝ Շաքիի և Շիրվանի) և Ղարադաղի խաները, որոնց և Հրեկլե թագավորի հրամանով կալանավորեցին:

1751 թ. ... Աղաքիշին՝ շրջելով Շամշադին և Ղազախ՝ հասավ Բայդար:...

1752 թ. ... Բորչալուեցիք տեղահան եղան ու բնակություն հաստատեցին Ղարասուում՝ Երևանի մոտ: Ապա Հրեկլե թագավորը զորք ժողովեց, եկավ Երևան, տեղահան արավ սրանց ու տեղափոխեց նորից Բորչալու:...

1757 թ. ...Մահմադ-Հասան Ղաջարը... գրավեց Պարսկաստանի ավելի քան կեսը ու մոտեցավ Շուշուն... Իսկ երբ Շիրազում երևաց Քարիմ-խան Ջանդը, այս Մահմադ-[Հ]ասան Ղաջարը [Շուշիից] գնաց նրա դեմ:

<...Քելավի դպրոցում նա (Անտոն I կաթողիկոսը) դասատու նշանակեց հայ քահանա տեր: Փիլիպե Ղայթմազաշվիլուն, որը մեծ գիտնական էր և փիլիսոփա՝ ինչպես հին փիլիսոփայությունների տեղյակ, նույնպես և նորում հույժ փորձված...>:

Այս պահին ելավ Փաթալի-խան Ավշարը, որը զորք ժողովեց Արրբեջանում ու մոտեցավ Շուշուն, խնդրելով օգնություն [Վրաց] թագավորից, որն և հասցրեց նրան զորքը...

1767 թ. ...[Էրեկլե] թագավորը նորից զորք հավաքեց և հարձակվեց Երևանյան [երկրի] քյուրդերի վրա, որոնց գերեց, և վրացիները մեծ ավարով վերադարձան...

<1772 թվին... բորչալուեցի և մեր այլ քոչվորները ահ ու սարսափ գցեցին Ախալցխեի և Ղարսի կողմերում>:

Ապա ժողովեցան զաղախեցիք, բորչալուեցիք և փամ[մ]րակցիք, և գերեցին Նախիջևանը. տեղացի Շուքուր-Ալի-խանին հաղթեցին...

... Էրեկլե թագավորը սուլթանի Գուռն Ստամբուլ ուղարկեց իր գեոպան՝ երկիցս միրզա Գուրգինա Էնակոլովաշվիլուն...

Էրեկլե թագավորը և Շուշվա Իբրահիմ-խանը՝ համաձայնություն գալով՝ 1778 թվին, քրոնիկոնի 466-ին գրավեցին Գյանջան և կալանավորեցին Գյանջայի Մահմադ-խանին ընտանիքի հետ միասին, որին Շուշվա Իբրահիմ-խանը գերի տարավ...

1779 թ. ... Երևանի խան [Հ]ուսեյն-Ալիխանը հրամարվեց հարկ վճարելուց վրացիներին, որի պատճառով [Էրեկլե] թագավորը գնաց նրանց (երևանցիներ) դեմ: Այնտեղ տեղի ունեցավ պատերազմ, ուր խիզախությամբ հանդես եկավ արքայազն Գիորգին: Այդտեղ երևանյան զորքը հաղթվեց թագավորից, որն շտապ վերադարձավ [Տփղիս]...

1781 թ. ...մեռավ Երևանի խան [Հ]ուսեյն-ղուլին, և Էրեկլե թագավորը խան նստացրեց նրա որդի Ղուլամանին: Քանի որ վերջինս թեթևամիտ էր, երևանցիները նրան սպանեցին: [Էրեկլե] թագավորը հարկադրված եղավ ուղարկելու այնտեղ միրզա Գուրգինա Էնակոլովաշվիլուն, և [Հ]ուսեյն-Ալի-խանի

կրտսեր որդի Մահմադ-խանին խան դարձրին: Եվ սրան թագավորի հրամանով Երևանի խան հաստատեցին...

1785 թ. ...երևաց Օմար-խան Ավարցին, որն անցավ Իորին և Ղարաբաղի կողմերը, անցավ Կուրը, մոտեցավ Ախտալային, որն գրավեց, ապա գնաց Ախալցխեի... Շա[հ]վերդ-խանի որդի Ռա[հ]իմ-խանը, որին այն ժամանակ Իբրահիմ-խանը կալանավորել էր, Շուշուց ելավ և Գյանջայի խան դարձավ... Իսկ Օմար-խանն անցավ Գյոքչան, հասավ Շամքոր, որն ավերեց ու հեռացավ:

1786 թ. ...նախիջևանցիք խռովություն գցեցին և Նախիջևանից քշեցին իրենց Քալբալի-խանին, որն եկավ [Երևան] ու [օգնություն] խնդրեց Երևանի խան Մահմադից, իսկ Մահմադ-խանն [օգնություն] խնդրեց [Էրեկլե] թագավորից: Ապա թագավորն իր փեսա՝ Մուխրանի տեր Իոաննին ուղարկեց զորքով և թնդանոթներով, որոնք երևանցիներին միացան, դնացին Նախիջևան, ուր տեղի ունեցավ ճակատամարտ: Պարսկեցին Նախիջևանցիները և խնդրեցին վրացական զորքից, թե որ Նախիջևանից [վրացիք] հեռանան, նախիջևանցիք դարձյալ իրենց խան կկարգեն Քալբալիին: Եվ այս պայմանով [վրացական զորքը] հաղթական վերադարձավ Երևան և Երևանից Քարթլի: Ղազախ[եցիք] ամբողջապես տեղահան եղան, գնաց[ին] Շուշի և Շամշադիլ-Գյանջա: Մի տարուց հետո Էրեկլե թագավորը ուսական և վրացական զորքով գնաց, որպեսզի տեղահան անի քոչվորներին ու Թամսայի մեկիքներին, որոնք պայման ունեին զրած թագավորի հետ: Մոտենալով Գյանջային՝ նա իր որդի Յուլուին զորքով ուղարկեց [Ղարաբաղ]: Երբ սրանք հասան Ջեյրա, հանդիպեցին զարաբաղցոց զորքին: Ղարաբաղցիք սլարավեցին. շատ զարաբաղցիներ կոտորվեցին [վրացիներից]: Այս պահին Գյանջա եկավ սուրհանդակը (չափաբը) Ռուսաստանից, որին ունկնդիր եղավ ուսաց զորքը: Երբ Ռուս[ներ]ը ետ քաշվեցին, [Էրեկլե] թագավորն այլևս [կարևոր] չհամարեց գնալ Ղարաբաղի դեմ ու վերադարձավ Գյանջա...

1789 թ. ...[Վրաց զորքը] տեղահան արավ շամշադին[ցիներին]... [Էրեկլե] թագավորը հասավ Շամքոր: Այնտեղ եկավ Դալուբանդի Փաթալի-խանը և Շաքիի Մահմադ-խանը, որոնք և որոշեցին երեքով Ղարաբաղի դեմ գնալ, քանի որ Իբրահիմ-խանը մոռացություն էր ավելի Էրեկլե թագավորի լավությունը...  
...Լեզվերը զնատում էին Քարթլիին և Սոմխիթին...

Միքել Արղութաշվիլին առաջնորդում էր լեզգիներին, որոնք Կրծանիսը գրավեցին... ապա Միքել Արղութաշվիլու առաջնորդությամբ [լեզգիները] գրավեցին Ղալաչին (Ղալաչա), որտեղից և տարան երկու հարյուրից ավելի հայ գերիներու...

Սուրբ 1789 թվին [Էրեկլե] թագավորի հրամանով Դավիթ արքայազնը հազար մարդով գնաց դեպի Ղարս, գերեց Ինջադարանը... [սրբ] դեմ գուրս ելավ Ազիզ-բեկը, որն ամբողջ Ղարսի և քյուրդերի նշանավոր զորապետն էր և որն յոթ անգամ թրով հարվածեց արքայազնին: Սակայն սա անփասա ֆուսց, քանի որ ներքուստ ողազրահ ուներ հագած: Իսկ [Ազիզ-բեկը] արքայազնի ձեռքից մեռավ:... Լեզգիները Ախալցխեից եկան Միքել Արղութաշվիլու առաջնորդությամբ և գրավեցին Գ[յ]աուրարխը... Լեզգիները հազար հոգուց ավելի մտնելով Սագուրամո՝ երկու մասի բաժանվեցին. կեսը <քաղաքին կից՝ [Հ]ավլարարի Խոջամեյիքի ժամի՞ մոտերքում [արածվող]՝ Դարեջան թագուհու նախիրը քշեց...>...

1790 թ. ...[Էրեկլե թագավորը] ...տեղահան արավ շամշագիլ[ցիներին] ու փոխադրեց Շուլավեր: [Վրացիք]... հասնելով Շամշաղին՝ ավին այն գյանջեցիներին, սակայն շամշագիլիք չէին հպատակվում: Մի առ ժամանակ սպասելով՝ Ջավադ-խանը Գյանջայի [և] մեյիքների զորքով գրավեց Շամշաղինը և ուներ նա երեք հազարից ավելի զորք: [Շամշաղիցիներին] դադախեցիք եկան օգնության, իսկ դադախեցիք և շամշագիլիք երեք հարյուրից ավելի չէին: Սրանք հաղթեցին Ջավադ-խանին և գերեցին ութ հարյուրից ավելի գյանջեցիներու...

[Աղա-Մահմադ-խան]-Խոջան՝ Պարսկաստանի գործերից իրեն ազատ համարելով՝ եկավ մոտեցավ Շուշուն, քանի որ Շուշվա խան Իբրե[հ]իմը նրան չէր հնազանդվում: Սակայն նա չկարողացավ գրավել այս բերդը:...

<1795 թ. ...Աղա-Մահմադ-խանը Ղարաբաղից ուղղվեց դեպի Տիֆլիս... Խոջան ընտրեց ութ հազար զինվոր, որոնց գլուխ կանգնեց Նախիջևանի Քալբալի-խանը... Տիֆլիսի ավերման պահին նահատակվեցին... շատ տղամարդիկ և կանայք՝ ինչպես վրացիք, նույնպես և հայեր:...>

<1795 թ. ...Շուշվա Իբրա[հ]իմ-խանն եկավ Գյանջայի դեմ, քանի որ Գյանջայի խանն էր Ղարաբաղի ավերման պատճառը... Ղարաբաղիք և լեզգիները զարմանում էին վրացիների սխրագործություններից:...>

1796 թ. ...Աղա-Մահմադ-խանը՝ Խորասանի գործերից ազատ դալով իրեն՝ շարժվեց դեպի Շուշի: Տեղեկանալով նրա գալու մասին՝ Իբրե[հ]իմ-խանն իր առև ու տեղով քաշվեց Բելաքան, և Աղա-Մահմադ-խանը գրավեց բերդը: Նույնտեղ նա սպանվեց իր ծառայի ձեռքով 1797 թվին...

<Սուրբ իսկ թվին՝ 1798-ին՝... քանի որ ամենուրեք Վրաստանում տարածվել էր ժանտախտը, [Գիորգի] թագավորը մարդուղարկեց Ղուկաս հոգևոր տերը (օրջիվատերի) մոտ, և [Էջմիածնից] բերին մեր տեր Հիսուս Քրիստոսի գեղարդը. և ժանտախտն արագ չքացավ>...

1798 թ. ... վեճ ծագեց Քարթլիի և Ղարսի միջև: Ուստի և Գիորգի թագավորն ուղարկեց իր որդիք Դավթին և Իոաննին, որոնք պատերազմեցին Ղարսում և գրավեցին Ղալախախի շքրջակայքը: Ապա մեծ զորքով գուրս եկավ Ալի-բեկը և Օսմանյիք վրացիներից պարավեցին:...

II

1798 թվին ...Բարախան-ղ'անը Գիորգի թագավորին... խոստացավ տալ ինչպես Շաքի-Շիրվանը, նույնպես Գյանջա-Երևանը... Եվ Գիորգի Յիցիշվիլին Երևանից վերադարձավ [Տիֆլիս]...

1799 թվին ...մեռավ Ղուկաս հոգևոր տերը (օրջիվատերը)<sup>7</sup>, և հայերը մտադիր էին Ստամբուլի պատրիարք Դանիելին բազմեցնեն [հայրապետական աթոռի վրա]. սակայն Գիորգի թագավորը թույլ չտվեց այդ, այլ Ռուսաստանից բերել ավեց Արղության Հովսեփ վարդապետին: Սրանց երկուսի (Գիորգի թագավորի և Հովսեփի) ցանկությունն էր հունաց և հայոց դավանությունների միացում<sup>8</sup>: Եվ այս՝ [Հովսեփը] հոգևոր տեր (օրջիվատեր) էր նշանակվել: Սակայն մինչ նրա Տիֆլիս հասնելը Գիորգի թագավորը մեռավ և Հովսեփն էլ մեռավ Տիֆլիսում երկու ամսից հետո, 1801 [թվին]<sup>9</sup>: Հայերը նորից մտադիր էին Դանիելին [ընտրել] հոգևոր տեր (օրջիվատեր), սակայն Դավիթ արքայազնը, որն այն ժամանակ Վրաստանի կառավարիչն էր, հոգևոր տեր (օրջիվատեր) օժել ավեց Դավիթ վարդապետին, որ Վրաստանի հայերիցն էր՝ Էնագեթցի<sup>10</sup>: Այս առթիվ հայերն ամենուրեք հուզմունք առաջ բերին և Դանիելին Սուում օժեցին հոգևոր տեր (օրջիվատեր) և Էջմիածին տարան նրան՝ սուլթա-

նի հրամանով: Իսկ քանի որ Դավիթ հոգևոր տերը (օրջիվատերը) Պարսից հովանավորության ներքո էր, սա օժանդակություն խնդրեց Երևանի [Հ]ուսեյն Ալի-խանի որդի Մահմադ-խանից, որն և աջակցեց նրան: Դանիելին՝ գալուստ պես՝ կալանավորեց և Դավիթ հոգևոր տիրոջը (օրջիվատերին) հանձնեց: Իսկ Դավիթը Դանիելի մորուքը խուզել տվեց և բանտարկեց էջմիածնում: Լսելով այս՝ Ռուսիայում բնակվող [հայերը] խընդրեցին կայսրից<sup>11</sup>, որպեսզի Դանիելին հոգևոր տեր (օրջիվատեր) դարձնի, իսկ Եփրեմին Ռուսիայի առաջնորդ: Տեղեկանալով սրա մասին՝ կայսրը գրեց Վրաստանի կառավարիչ Գուգովիչին<sup>12</sup>, որպեսզի Դավթին գահընկեց անի և Դանիելին բազմեցնի էջմիածնի [հայրապետական գահի վրա]: Այսպես արին ուսները: Եվ Դավիթը փախավ Բարախան գետնի մոտ ու ճնաց այնտեղ՝ [Պարսկաստանում]<sup>13</sup>:

1800 թվին... Բարախան գետնը՝ լսելով ուսաց զորքի մուտքը Վրաստան՝ ուղարկեց իր սարգարին մեծ ուժով հանդերձ, որն և եկավ ու կանգ առավ Նախիջևանում:... Ապա գետնի հրամանով սարգարը Նախիջևանից վերադարձավ, իսկ այնտեղ ճնաց Ալեքսանդրե [արքայազնը]<sup>14</sup>, որն այնտեղից անցավ Զարաթղ՝ Իրրահիմ-խանի մոտ:... [Ապա] Ալեքսանդրե արքայազնը Զարաթղից վերադարձավ [Պարսկաստան]:

... Զարաթղում Իրրահիմ-խանի մոտ էր... Ալեքսանդրեն:...

1800 թվին... Ալեքսանդրեն, որը Զարաթղում էր, լսեց իր եղբոր՝ Գիորգի [Թագավորի] մահվան մասին... [և] եկավ Զազախ:...

1801 թվին... [Տփղիս] քաղաքի մեկիքն էր Դարչին (Դարչիս)<sup>15</sup>... կային և հայ քաղաքացիներ (մոքայաքներ)...

1803 թվին... Ալեքսանդրե և Թեյմուրազ արքայազները փախստական եղան և գնացին Զարաթղ և Զարաթղից Թավրիզ և Թավրիզից Թեհրան:...

1804 թվին... Յիցիանովը<sup>16</sup> գնաց Երևան՝ քաղաքը գրավելու նպատակով: Էջմիածին հասնելուն պես, նրա դեմ դուրս եկավ գետնի որդի Աբասը սակավաթիվ զորքով: Թեև նրանց միջև տեղի ունեցավ փոքր ինչ պայքար, սակայն անօգնական վիճակի մեջ ընկած պարսիկները հեռացան ու գնացին Գառնի, իսկ Յիցիանովն անցավ Զանգի գետն և մոտեցավ Երևանի բերդին: Տեղեկանալով սրա մասին՝ գետն Բարախանը զորք հավաքեց ու եկավ Գառնիի դեմ: Այս պահին Յիցիանովի զորքն իջավ: Նա ուղարկեց մայրը Մանտրեզորին երկու հարյուր զինվորով

և մի թնդանոթով դեպի Բամբակ, որպեսզի այնտեղից հարվածի պարսիկներին: Լսելով այս՝ գետնը նրանց հետամուտ լինելու ուղարկեց Ալեքսանդրե արքայազնին հազար պարսիկ զինվորներով, որոնք հասան նրանց Դարպասի մոտ և ամբողջապես կոտորեցին նրանց՝ մայրը Մանտրեզորով հանդերձ, իսկ թնդանոթները ու գնաց՝ գետնի մշտ, որը մեծարեց և առատ պարգեվատրեց [Ալեքսանդրեին]: Մի քանի օրից հետո սկսվեց պատերազմ Յիցիանովի և Բարախանի միջև: Յիցիանովն այնպես պարտվեց, որ գիշերով փախուստի գլմեց այն սակավաթիվ զորքով, որը պատերազմի ընթացքում Պարսից ձեռից փրկվել էր... [Ապա] Փառնաողը՝ Կախեթից անցնելով Զազախ՝ կալանավորվեց զազախեցիների կողմից:...

... Զետնը տեղեկացրեց Փամբակում գտնվող իր սարգար Փիրզուլի խանին, քանի որ [Յիցիանովի զորքը] կանգ էր առել Զարաթղիսայում, ուր ուսները պարեն ու զինապահեստ ունեին և այնտեղ մտել էին նաև Փամբակի և Լոռվա ձորի հայերը:... Այս պահին Ալեքսանդրե արքայազնը, Փառնաողը և Թեյմուրազը Փամբակում էին ժողոված Փիրզուլի խանի մոտ Վրաստանի քոչվորների զորքի հետ միասին: Մոտենալով ուսաց [զորքի] կայանին (գարպասին)՝ Փիրզուլի խանը հարձակվեց նրանց վրա և ամբողջապես բնաջինջ արավ նրանց, իսկ թնդանոթները և բոլոր գերիներին թնդանոթների հետ միասին ուղարկեց գետնին, որն առատ պարգևատրեց ինչպես սարգարին, նույնպես և արքայազներին:... Լսելով գետնի գալն Երևան՝ Յուլուս և Փառնաող արքայազները, որոնք այն պահին Իմերեթ էին գնացած, շտապեցին տեղից, որպեսզի գետնին ներկայանան:... Սուրամում կանգ առած ուսները՝ [լսելով] արքայազների ուղևորվելն Երևան՝ [հարձակվեցին նրանց վրա]... [ուսներն] այլևս չէին սպասում Յիցիանովին Երևանից:... Փառնաողը... Դավիթ-Գարեսլայի վանքով... անցավ Զազախ ու բարձրացավ հայոց Աղզան գյուղը, ... [ուր՝ շրջապատվելով] երկու հազար զազախեցիներով Դոնդուզի-օղլի հայի առաջնորդությամբ... ընկավ... ու կալանավորվեց:...

1805 թվին... Բարախանն եկավ Արդբիլ: Նրանից սարսուփահար եղած Շուշվա Իրրահիմ-խանը ուսաց հովանավորության ներքո անցավ, խնդրեց Յիցիանովից զորք, որպեսզի իր բերդը պաշտպանի: Յիցիանովը տվեց հինգ հարյուր ուս զինվոր: Բարախանն եկավ Արաղի (Արեզի) ափը և այնտեղից ու-



դարկեց իր որդի Արասին Վրաստան սակավաթիվ զորքով, որը հասավ Թարթար... [Յիցիանովն էլ] եկավ Շամշագիր... Աղստե-վի լեռան նեղ փեշը մտնելուն պես՝ [Բարա-խանին] գիմավորե-ցին զազախեցիք, որոնք մեծ ֆլաս հասցրին պարսիկներին...

Ապա Աղաջողի Սուլեյմանը գաղտնաբերելով ուղարկեց սար-դար Իրանե Ղափլանիշվիլուն այն ճանապարհով, ուր [Յիցիա-նովի հակառակորդները] երգվել էին Կենարար փայտին (Ձելի ճեշմարտիսա)<sup>17</sup> հավատարիմ լինելու Ալեքսանդրեին և Բարա-խանին այն պահին, երբ Յիցիանովն Երևանում կովի էր բռնը-ված։...

1806 թվին... Յիցիանովը... նույնպես խան նշանակեց Ջա-ֆար Ղուլի-խանին, որ Խոյի խանն էր, և դառն Բարա-խանից փախել էր և [Յիցիանովի] Երևանում եղած պահին ծառայու-թյուն էր նրան մատուցել։...

1806 թվին... Յիցիանովին հաջորդող կոմս Իվան Վասի-լյեվիչ Գուդովիչը... մի գիշեր հարձակվեց Ղարաբաղի Իբրահիմ-խանի վրա, որը թե [իր] բերդը և թե իր անձը Ռուսաստանին ծառայելու էր տվել... Իբրահիմ-խանը խնդրեց Գուդովիչից, որպեսզի նրան Ղարաբաղի խան [ճանաչի և] նշանակի, որին Գուդովիչը համաձայնվեց և խան նշանակեց և հարկ էլ դրեց՝ տարեկան տասն և չորս հազար հոլանդական ոսկի։ Եվ տվին այս խանին գեներալ-մայորի աստիճան, իսկ Ղարաբաղի երևելի անձանց ռուսական համապատասխան աստիճան[ներ], երգվեցին հավատարմության մասին և բաժանվեցին։ Իսկ Շուշվա բերդը ռուսների ձեռին էր։

1807 թվին... լուր ստացվեց Ղարաբաղ գեներալ-մայոր Նես-վետսկից, որը Գուդովիչի կողմից ուղարկված էր Ղարաբի գեմ չորս հազարից բաղկացած զորքով և որը Յուսուֆ-փաշայից պարտություն էր կրել և նրանից պարտված իր սակավաթիվ մնացած զորքով փախուստի էր գիմել Գ[յ]ումրիի բերդը, և խընդ-րում էր օգնություն։ Գուդովիչը դնաց։ Արվաշային հասնելուն պես՝ տեղի ունեցավ պատերազմ թուրքերի և ռուսների միջև։ Թուրքերը և Յուսուֆ-փաշան պարտվեցին և դնացին Ղարա...

1808 թվին, քրոնիկոնի 496-ին, հոկտեմբերի 5-ին, կոմս Գուդովիչն իր զորքով, նաև վրացական զորքով դնաց Երևանը գրավելու նպատակով։ Հասնելով այնտեղ, գրավեց քաղաքը և կանգ առավ Քանաքեռում։ Այդ պահին Երևանի բերդը հույժ ամրացրել էր դառնի սարգարը... տեղական խան Մահմադին

ընտանիքով հանդերձ դառնը.. Թեհրան էր տարել և չթողեց [վերա]դառնալ Երևան, քանի որ Մահմադ-խանն երկերեսանի էր և անհաստատ, և այս պատճառով դառնը՝ համոզված չլինելով նրա [հավատարմության] մեջ՝ իր պահապաններին մտցրեց բերդը և իր սարդարին նշանակեց բերդի պետ... Արաս-միրզան Նախի-ջևան եկավ Երևանին օգնություն հասցնելու համար։...

1808 թվին Գուդովիչը ժողովեց ռուսական և վրացական զորքերը, դնաց ու Երևանի բերդին մոտեցավ, սանդուխքներ դրեց ու հրամայեց զինվորներին բարձրանալ։ Իսկ զինվորները հենց սանդուխքով էլան, զվրաշները սկսեցին սաստիկ կրակել նրանց վրա հրացաններից և թնդանոթներից։ Ռուսները պարտ-վեցին և կոտորվեցին երկու հազարից ավելի։ Եվ քանի որ Գու-դովիչը չկարողացավ այլևս այնտեղ մնալ, վերադարձավ Ապա-րանի ճանապարհով. և այդ պահին սոսկալի սառնամանիք էր, հազարից ավելի զինվոր ձեռ ու ստից զրկվեց։ Պարսիկները հե-տամուտ եղան նրանց, բոլոր սայլերը խլեցին և հիվանդներից շատերին էլ գերի տարան։...

<Var. կոմս Գուդովիչի Երևանում եղած պահին նա տե-ղափոխված էր այլ պաշտոնի և նրա տեղ նշանակվել էր գեներ-ալ-շեֆ Տորմասով Ալեքսանդր Պետրովիչը<sup>18</sup>։ Վերջինս՝ հասնե-լով Տիլիս՝ ուղևորվեց Երևան, և հասավ այնտեղ... Կոմս Գու-դովիչը մտադիր էր նորից գրոհ տալ [Երևանի] բերդին, սա-կայն՝ վշտացած լինելով իր տեղափոխության առթիվ՝ հանվեց այնտեղից իր զորքով և շարժվեց Ապարանի ճանապարհով։ Այդ պահին սոսկալի սառնամանիք էր, և ցրտից շատ մարդիկ կո-տորվեցին Ապարանում, քանի որ ձմեռվա պահին լեռն անան-ցանելի է ձյունի պատճառով և փայտ էլ չի ճարվում։ Իմանա-լով այս՝ Արաս-միրզան ևս, որը Գառնիուհն էր կանգնած, հե-տամուտ եղավ ռուսներին մինչ Ապարան, ուր շատերին բնա-ջինջ արավ, նրանց իրերը հավիշտակեց և շատ մեծ ֆլաս հասց-րեց ռուսներին և վրացիներին, քանի որ այդ ժամանակ դեկ-տեմբեր՝ ամիսն էր, և հազիվ անցան ռուսների մնացորդները և վրացիներն ևս Բա[մ]րակով։ Իսկ Արաս-միրզան վերադարձավ Երևան, կրկին ամրացրեց Երևանը, շատացրեց Երևանի զորքը և հենց այնտեղ անց կացրեց ձմեռը։...>

1810 թվին... դառն Բարա-խանի որդի Մահմադ-Ալի-խանը եկավ և ամբողջ Փամբակը տեղափոխեց Երևան <var. ամբողջ Փամբակը տեղահան արավ և բնակեցրեց Երևանում>։...

...Տորմասովը... Ղարարադ էր գնացել պարսիկների հետ գաշնագիր կնքելու համար <var. Տորմասովը պարսաստվել էր գնալու Արագի (Արեղի) [ափը] Ղարարազում, քանի որ դանի մոտից եկել էր վեզիր միրզա Բուզուրզը, որպեսզի փոխադարձ գաշն և խաղաղություն կնքեն և ճշտեն Քարթլիի և Պարսկաստանի միջասահմանը>...

1810 թվին (sic)... մեռավ հայոց հոգևոր տեր (օրջիվատեր) Դանիելը<sup>19</sup>, և Ալեքսանդր [ոուսաց] կայսրը հոգևոր տեր (օրջիվատեր) նշանակեց Եփրեմին<sup>20</sup>, Այս Եփրեմը [Ալա-Մահմադ-խան] Պոջայի օրոք, երբ սա Տփղիսը գրավեց, սեփական փողով (սպիտակ || արծաթե [դրամ]ով) տեղացի գերիներին ազատեց մինչ հարյուր հոգի, ինչպես հայերին, նույնպես և վրացիներին: Սա Ռուսաստանի [հայոց] առաջնորդն էր, և հոգևոր տեր (օրջիվատեր) բազմեցրին...

...1810 թվին... Ալեքսանդրե արքայազնը Երևանից [Յուլոն արքայազնի որդի] Լևոնի մոտ սարն ուղարկեց Իեսե Դուլաձերին...

1811 թվին... Երևանի պետ Հուսեյն <-ղուլի խանը> Պարսկաստանից գնաց երկու հազար պարսկական զորքով ու հասավ Զավախեթի Ախալքալաքը. այնտեղ նա սպասում էր Ախալցխեթի փաշա Շարիֆին զորքով և Ալեքսանդրե [արքայազն]-ին. և մտադիր էր հարձակվել Սումխիթի վրա, [որ սակայն չհաջողվեց]... Ապա սարգարը վերադարձավ Երևան: Իսկ դանի որդի <Աբաս-միրզան> կանգնած էր Դաննիում, որտեղից Գյորգի թագավորի որդի Թեյմուրազը փախավ <խաչվերացի օրը՝ սեպտեմբերի 14-ին>...

1812 թվին <var. 1811 թվին>... Ախալքալաքը գրավելուց հետո մարկիզ [Պատուլուչին]<sup>21</sup> մտադիր էր [քանակցել] Երեվանի բեգլարբեգ Հուսեյնի հետ, որպեսզի բերվը հանձնի [ոուսներին], քանի որ նրան խոստանում էր տալ Երևանը ի նպատակություն: Հուսեյնը խոստացավ տալ: Սակայն անմիտ իտալացին չիմացավ Հուսեյնի նենգությունը և ուղարկեց գեներալ-մայոր Լիսանովիչին երկու հազար զորքով: Ապա Հուսեյնը շքազակա [տեղերից] զորք ժողովեց ու թաքցրեց էջմիածնում: Հենց որ ոուսներն եկան, պարսիկները ճակատամարտ ունեցան և փախուստի ենթարկեցին ոուսներին, և Մարկիզը խայտառակվեց այսպիսի անմիտ սխալ գործելու պատճառով:

...1812 թվին... Մարկիզը գնաց Ղարարադ, ուր նրան դիմավորեց տեղական Մեթի-խանը ու շատ ընծաներ մատուցեց նրան, քանի որ Ղարարադը ոուսներն ունեին գրաված... Այդ պահին Շուշլա մոտերքում, Ասկարան կոչված տեղում, կանգնած էր ութ հարյուր ոուս՝ ի պաշտպանություն Ղարարադի: Աբաս-միրզան, առաջնորդությամբ Զաֆար-ղուլիի, եկավ ու հարձակվեց ոուսների վրա: Տեղի ունեցավ այդտեղ պատերազմ: Ռուսները պարտվեցին պարսկական կանոնավոր զորքից, որ պարսկերեն սարբաստ է կոչվում, [և] որի հետն էր Աբաս-միրզան, քանի որ պարսիկները Փրանսիացիների օրինակով էին սովորեցրել զինվորներին...

... Այս պահին Մարկիզին փոխեցին ու նրա տեղ ուղարկեցին գեներալ-լեյտենանտ Ռուբինյան<sup>22</sup>, որին իբրև օգնական կցեցին գեներալ-մայոր Ախվերդովին, Տփղիսի նախկին նահանգապետին, որն ազգանունով Պուպուլաշվիլի է և Յիսինվալցի (Քրջխինվալցի) հայ:

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Այս՝ 1 մասի ծանոթագրությունները հիմնականում նույնն են, ինչ որ կցված է ժեզլին, իսկ մի քանիսը նոր են (տես ստորև):  
2 Հմմտ. այս աշխատության Ե. Ղլխի 2-րդ ծանոթ. (էջ 101):  
3 Պոսքը Պոջիվանքի մասին է: Հմմտ. ստորև 15-րդ ծանոթ.:  
4 1795 թ. Տփղիսի ավերման մասին գրականությունը տես Լ. Մ ե լ ի ֆ ս ե ր - Բ ե կ, Անանուն հայ պատմիչի նորագույն երկը Քրջիխի 1795թ. ավերման մասին, — ՇՄՄՄ Գիտ. ազգ. Հայկական Ֆիլիալի Տեղեկագիրք, 1941 թ., № 3—4, էջ 45—53:  
5 Ժանտախտի մասին տե՛ս Գ ի ւ տ ա. ք. Ա գ ա ն ն ե ա ն, Դիւան Հայոց պատմութեան, գ. Դ., Թ., 1898, էջ 701—703. А. Ернцов, О чуме в Тифлисе в 1797 году и о задержании царем Георгием XII в Грузии принадлежащего Эчмиадзинскому преотолу священного копья, — «Кавказская Старина», № 3, 1873 г., стр. 60—64:  
6 Ղուկաս 1 կաթողիկոս, 1780—1799 թթ.:  
7 Տե՛ս այս աշխատության Գ Ղլխի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. (էջ 88) և ժեզլին 23-րդ ծանոթ. (էջ 181):  
8 Սա մի կարևոր հանգամանք է, որ ի վիճակի է լույս սփռելու Հովսեփ Արղության նորընտիր (և չօծված) կաթողիկոսի մահվան կասկածելի հանգամանքների վրա: Հմմտ. այս աշխատության ԻԶ Ղլխի 21-րդ ծանոթ.:  
9 Հովսեփ Արղությանի մասին տե՛ս Ս. Ե Ր Ի Գ Ե ա ն ց, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և կովկասի Հայք XIX դարում, մասն Ա. (1800—1832), Թիֆլիս, 1894, էջ 1—16. Լ է օ, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, Թ., 104—14

1902. Եղիշէ ա. ք. Գեղամեան, Պատմական քաղվածքներ (արտատ. «Հովիւ» շաբաթաթերթից), պրակ Լ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան, Բաքու, 1909. Գիւտ ա. ք. Աղանեան, Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մասն առաջին. 1778—1800, Թ., 1911. Մաղաքիա ա. ե. Օրմանեան, Ազգասպատում, II, Կ. Պոլիս, 1913, էջ 3263—3281 (§§ 2232—2243). Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց էրեկլի II թագաւորի և Պապել I կայսեր հրովարտակաները Միաբարձեւներին, վրացերեն, — «Պատմութեան Տեղեկագիր», I, 1943, էջ 22—32:

10 Դավիթ-Դանիելյան վեհի մասին մանրամասն: Ս. Երիցեանց, նույնտեղ, էջ 17—41. Ե. ա. ք. Գեղամեանց, նույնտեղ, պրակ II, Բաքու, 1909: Գիւտ ա. ք. Աղանեան, Դիւան հայոց պատմութեան, գ. Ե. Դանիել կաթողիկոս, 1800—1808, Թ. 1904, գ. 2. Դավիթ կաթողիկոս, մ. առաջին, 1801—1802, Թ. 1904, գ. 3. Դավիթ կաթողիկոս, մասն երկրորդ, 1803—1804, Թ., 1908: Մաղաքիա ա. ե. Օրմանեան, Ազգասպատում, II, էջ 3281—3376 (§§ 2244—2308):

11 Աղեքսանդր I-ին:

12 Գեւ. Ի. Վ. Գուգովիչը՝ Վրաստանի կառավարիչ՝ 1806—1809 թթ.:

13 Դավիթ էնաղեթցին՝ կաթողիկոս 1801—1807 թթ., Դանիելը՝ 1807—1808 թթ.:

14 Ալեքսանդր արքայազնի մասին տես այս աշխատութեան ժէ գլխի 9-րդ ծանոթ. (էջ 192):

15 Դարչի Բեհրութովի մասին է խոսքը, մանրամասն տես է. Քաղաշ Վիլի, «Վրաստանի հնությունները», III, 1910, генеалогическая таблица рода Бebutовых.

16 Տիցիանովը կամ, ինչպես «Նոր պատմութեան» հեղինակն է միշտ անվանում, Տիցիզվիլին Վրաստանի կառավարիչն էր 1802—1806 թթ.:

17 Հովանական է, Զորադետի Հնեմանքի մասին լինի խոսքը: Հմմտ. այս աշխատութեան Գ. Վիլի վերջին պրակի 15-րդ ծանոթ. (էջ 89):

18 Գեւ. Ա. Գ. Տորմասովը Վրաստանի կառավարիչ՝ 1809—1811 թթ.:

19 Դանիել կաթողիկոսի մահը 1808 թվին էր:

20 Եփրեմ կաթողիկոսը 1809—1830 թթ.:

21 Մարկիզ Պաուլուչչին Վրաստանի կառավարիչ՝ 1811—1812 թթ.:

22 Գեւ. Ն. Ֆ. Ռոբիշչեվը Վրաստանի կառավարիչ՝ 1812—1816 թթ.:

Ի

### ՌԱՓԻԵԼ ԴԱՆԻԵԼԻ

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՀՆԴԿԱՍՏԱՆ» (1813—1815)

Ռափիել Դանիելեզովի (Դանիելեզովի)՝ Վրաստանի ազնւ-վականի ծննդյան, մահվան և կենսագրութեան հանգամանքները հայտնի չեն: Վրաց էրեկլի II թագաւորի հանձնարարութեամբ սա ճանապարհորդել է Հնդկաստան 1795 թվից սկսած մինչև 1813 թվը, որ և նկարագրել է առանձին գրքով: Գրքի վրացե-րեն ընադիրը, դժբախտաբար, մեզ չի հասել, սակայն հեղինակի վերագրածից Չ տարի հետո այն լույս է տեսել Մոսկվայում ռուսերեն թարգմանութեամբ, որ նվիրված է Ալեքսանդր I կայ-սեր, հետևյալ վերնագրով. «Путешествие в Индию грузинско-го дворянина Рафаила Данибегова. Перевод с грузинского», Москва, 1815, 06+56 էջ in 16<sup>o</sup>: Սույն աշխատութեանը ռու-սերենից վրացերենի վերածված հրատարակից նորերս առանձին գրքով՝ «Ռափիել Դանիելեզովի, Ճանապարհորդութեան գեպի Հնդկաստան», թարգմանութեան, առաջարան և հավելվածներ, հանդերձ ծանոթագրութեաններով Ս. Իորդանիշվիլու, Թբի-լիսի, 1950, XVIII+121 էջ, 4 քարտեզով:

Այս գրքի մանրամասն քննութեանը և բովանդակութեան հա-մառոտութեանը տալիս է հանգուցյալ պրոֆ. Ա. Խախանո-վը (Խախանաշվիլին) նախ իր լրագրական հոդվածում Путешествие в Индию грузинского дворянина Рафаила Да-нибегова («Новое Обозрение», 1891 г., № 2420), ապա իր՝ Վրաց գրականութեան պատմութեան III հատորում (Очерки по истории грузинской словесности, выпуск 3-й, Москва, 1901, стр. 308—312): Նույնը քննութեան է առնում և դոց. Տրիֆոն Ռուխաձեն «Անցումային շրջանի վրացական էպոսը», (վրացերեն, Թբ., 1939, էջ 110—115) գրքում, շեշտելով, որ Ռ. Դա-նիելեզովի իր ուղեգրութեանը գրել է վրացերեն և ապա ինքը վերածել այն ռուսերենի, ինչպես 1815 թվի հրատարակութեան

առաջարանումն է նշած. „перевел с грузинского на язык российский“ (էջ 110); Հմմտ. նաև Գ. Զարգալիշվիլի, Առաջին վրացի ճանապարհորդը Հնդկաստան, վրացերեն, — «Ախալցաղրդա Կոմունիստի», 1945 թ., № 130:

Իր ճանապարհորդության նկարագրության մեջ Ս. Գանիբեզովը տալիս է որոշ տվյալներ և Հայաստանի մի քանի վայրերի մասին հետևյալ մարշրուտով՝ Ախալցխիսե — Արդրում — Մուշ — Դիարբեքիր — Բաղդադ — Բեքա — Կալկաթա:

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ

1795 թվին, մարտի 15-ին, Վրաց էրեկլե թագավորի հանձնարարությամբ մեկնեցի Հնդկաստան հետևյալ հանգամանքների կապակցությամբ: Մագրասում ապրում էր մի հարուստ հայ, որը տարեց տարի էրեկլեին ընծաներ էր ուղարկում: Ի հատուցումն նրա, թագավորը շնորհեց նրան մեծ գյուղ Լոռին, և կայքագիրն իմ միջոցով ուղարկեց նրան: Հատնելով Մագրաս՝ ես այն հային կենդանի չգտա. նա իմ գալուց մի տարի առաջ մեռել էր: Հիշյալ կայքագիրը ես հանձնեցի նրա որդուն, որն այն պահին Մագրասումն էր գտնվում<sup>1</sup>:

Թողնելով Ախալցխիսեն և անցնելով Տաճկաց պետության հարավ-արևելյան մասով, ես քսան օրից հետո հասա Արզրում: Ախալցխիսեից մինչ հիշյալ քաղաքը ճանապարհը անցնում է բարձրաբերձ ժայռոտ լեռներով և բարձր բլուրներով, որոնց սքանչելի տեսքը հրապուրում է յուրաքանչյուր ճանապարհորդի ուշադրությունը. բայց ես ի վիճակի չեղա բավականաչափ հիանալու այս գեղեցիկ բնության սքանչելի տեսարանով: Արզրում քաղաքի դիրքը բավական հաջող է: Իր ընդարձակությամբ նա Ախալցխիսեից մեծ է: Առաջինում հին շենքեր բոլորովին չկան և չի էլ կարող լինել, քանի որ նրա բնակիչները շատ եռանդոտ են և հարուստ և, բացի դրանից, իրար հետ մրցելով՝ աշխատում են ունենալ լավ տներ. և այս պատճառով այս քաղաքում շատ հոյակապ շենքեր կան: Այս քաղաքի գեղեցկությունն են կազմում շատրվանները, որոնք բոլոր փողոցներում մարմարե լիճանից են շինված և շատ լավ էլ զարդարված: Չնայած իր հարուստ լինելուն, այս քաղաքը փայտից զուրկ է (շատ աղքատ է), այնպես որ բնակիչները, ստիպված են իբրև վառելիք գործածել տներում կենդանիների աթարը: Մնացած պիտույքների

[պարենավորման] կողմից բնակիչներն եթե միշտ ապահով չեն իրենց սեփական [շուկայով], գոնե ապահով են նրանով, ինչ որ մերձակա քաղաքներից են այնտեղ հասցնում:

Երկար [ժամանակ] չմնալով այդտեղ (Արզրումում)՝ ես ուղևորվեցի դեպի Մուշ, որն Արզրումից տասներկու օրվա ճանապարհով է հեռու: Մուշը մեծ քաղաք չէ՝ նրանից երեսուն վերստի հեռավորությամբ գտնվում է Տիրոջ մկրտչի՝ Հովհաննու գերեզմանը: Այս դագաղում հանգչում են Հիսուսի այս մեծ նախահարապետի (նախագուշակի) սուրբ մասունքները: Շիրիմի վրա, ուր դագաղն է դրված, կառուցված է հոյակապ եկեղեցի հանուն [սուրբ] Կարապետի<sup>2</sup>, լավ զանգակատնով, որոնք թե իրենց ուրույն գեղեցիկ ճարտարապետությամբ և թե դիրքով, քանի որ լեռան վրա են կանգնած, գեղեցիկ տեսարան են ներկայացնում: Այս լեռան մի քանի տեղից կենդանացուցիչ ջրի աղբյուրներ են բխում: Վանակահանները, որոնք ժամասացություն են կատարում հիշյալ եկեղեցում, միմիայն եփած կորեկով են կերակրվում:

Երկրպագելով Տիրոջ մկրտչի շիրիմին՝ ես շարունակեցի ճանապարհորդությունս, և ութ օրից հետո հասա Արգանա կոչված քաղաք:

Տիգրանակերտը՝ հինավուրց և հոյակապ քաղաք է, որ այժմ կոչվում է Դիարբեքիր: Այն գտնվում է Տիգրիս գետի ափին: Հին ժամանակները քաղաքը շրջապատված էր ամուր քարե պարսպով, բարձր աշտարակներով, որոնց ավերակներն են այժմ դիտվում միայն<sup>3</sup>. Իր ընդարձակությամբ և շրջակայքի գեղեցիկ տեսարաններով այս քաղաքը հուշակ ունի: Այստեղ գտնվում են մեծ քանակով պտղատու ծառեր, ուստի և սրա բնակիչները շատ լավ են ծավալում մրգավաճառը: Ափսոս միայն, որ այսպիսի հիանալի քաղաքում բնակիչները վատ[աբարո] են. նրանք ոչ միայն օտարերկրացիներին, այլև յուրախիններին ստում են: Արանց սրտերը միանգամայն զուրկ են իրենց նմանների նկատմամբ սիրո և քնքշություններից: Այս քաղաքում համեմատաբար ավելի հարուստ են հրեաները, որոնք այստեղ բավական [թվով] են բնակվում:

Բաղդադ... Բուն բարեկրոնացիներից զատ այստեղ ապրում են քաղմաթիվ այլ ժողովուրդներ, ինչպիսիք են՝ հնդիկներ, պարսիկներ, տաճիկներ, հայեր և եվրոպացիներ:

Ռեքս քաղաքը... Իմ այստեղ գալը մի կողմից շատ երջան-

կ[ալից] էր, իսկ մյուս կողմից և շատ դժբախտ[ալից]: Բախտավոր էի, քանի որ հենց այս պահին սկսել էին նալ կառուցել արքայի համար. հետաքրքիր էր տեսնել այս: Դրսից նալը ծածկեցին մաքուր ոսկով, իսկ ներքուստ այն պիտի ծածկեին թանկարժեք փայտեղենով: Իսկ դժբախտ էի այն պատճառով, որ ի վիճակի չէի դմայլվել ինձ համար այսպիսի հազվագյուտ տեսարանով, քանի որ մարդկանց ամբոխը շրջապատեց ինձ, կալանավորեց ու տարավ դեպի բանտ, սպառնալով ինձ գլխատել: Բայց ինչնու Քանի որ ես՝ ցանկանալով մոտենալ կառուցվող նալին և չկարողանալով այդ անել ցեխի պատճառով՝ անդիտակցարար անցա սյն տախտակով, որն այն նալի համար էր հատկացրած: Եվ թերևս ես կյանքից էլ զրկվեի, եթե չմիջամտեին այն մի քանի հայերը, որոնք այնտեղ հայտնի են իրենց հարստությամբ, և չհամոզեին մեծին, որ ես անդիտակցարար եմ արել:...

Կալիսթա քաղաք:... Այստեղ շատ հայեր կան, որոնք շատ շքեղ և փարթամ կյանք են վարում և առևտուր են անում օտարերկրացիներին հետ<sup>4</sup>:

**ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

<sup>1</sup> Շահամիր Շահամիրյանի մասին է խոսքը: Մանրամասնութունները՝ Մ. Տեր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ դաղութի պատմության համար, — Երևանի պետական համալսարանի Գիտական աշխատություններ, հ. XIII, 1940, էջ 5—99 (քարտեզով): Մանրամասն բիրտոգրաֆիան՝ Հովհ. Գեորգյան, Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիրտոգրաֆիա, Երևան, 1941, էջ 223—226:

<sup>2</sup> Մշո ս. Կարապետ հռչակավոր վանքի և սրբատեղի մասին է խոսքը («Մշո սուլթան սուրբ Կարապետ թարփուհ»):

<sup>3</sup> Տիգրանակերտի մանրամասն նկարագրությունը տե՛ս՝ Գարեգին վ. Սրվանձտեանց, Թորոս-Աղբար, մասն ք., Կ. Պոլիս, 1885, էջ 192—230 (հատկապես 198—205). W. Belck, Majafarkin und Tigranokerta, — «Zeitschrift für Ethnologie», 1899, SS. 263—275. C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, I, Berlin, 1910, SS. 381—429, 501—523. J. Marguier, Südarmenien und die Tigrisquellen, «Հանդէս ամսօրեայ» 1914, էջ 112—113. Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, стр. 69—85. Հակոբ Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմը, Երևան, 1940, էջ 56—72. Я. Манандян, Тигран второй и Рим, Ереван, 1943, стр. 56—71:

<sup>4</sup> Կալիսթայի մասին տե՛ս Լէօ, Հայկական տպագրություն, II, էջ 608—610:

ԻԱ

**Գ Ի Ո Ր Գ Ի Ա Վ Ա Լ Ի Շ Վ Ի Լ Ի**

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԳԵՊԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ» (1820)

Գիորգի Իռանեի որդի Ավալիշվիլին կամ Ավալովը XVIII դարի վերջերի և XIX դարի սկզբների գործիչ է: Ծնվել է 1769 թվին. 1784 թվից եղել է էրեկլե թագավորի կողմից Ռուսաստան ուղարկած դեսպանության քարտուղար. 1791 թ. ճանապարհորդել է Պարսկաստան, իսկ 1819—1820 թթ. կատարել է ճանապարհորդություն դեպի Երուսաղեմ հեռեկալ մարշրուտով. Տիգրիս—Գորի—Սուրամ—Քութայիս—Փոթի—Սուխում—Սեվաստոպոլ—Ղրիմ—Կ. Պոլիս—Աղեքսանդրիա—Գանիբե—Երուսաղեմ—Կիպրոս—Թարսուս—Կեսարիա—Արզրում—Ղարս—Շուլավեր—Տիգրիս: Վախճանվել է Մոսկվայում 1850 թվին և թաղված է Всехсвятск կոչված եկեղեցում՝ СОКОЛ մետրոպոլիտանին կից:

Դեպի Երուսաղեմ կատարած ճանապարհորդության նկարագրությունը, որ մեզ հասել է Վրաց մեջ գրականություն տարածող նախկին րնկերություն (այժմ Վրաստանի պետական թանգարանում) հավաքածուի № 450 ձեռագրում, դեռևս հրատարակված չէ: Սրա մասին տեղեկություններ է տալիս՝ նախնական հաղորդագրության ձևով՝ դոց. Տրիֆուն Ռուսաձեն «Անցումնային շրջանի վրացական էպոսը» (վրացերեն, Թբ., 1939, էջ 169—173) գրքում:

Սակայն մենք, չբավականանալով գրականության մեջ գոյություն ունեցող տեսություններով Գ. Ավալիշվիլու մասին, անձամբ ուսումնասիրեցինք հիշյալ unicum ձեռագիրը, որտեղից և քաղեցինք մեզ հետաքրքրող տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, որ սփռած է ամբողջ աշխատություն մեջ:

Գ. Ավալիշվիլու (Ավալովի) ուղեգրությունը պարունակող ձեռագիրը in quarto դիրքով, բաղկացած է 199 թերթից: Ուղեգրությունը կազմված է 2 մասից. առաջինը՝ 5ա—112ա էջերում, երկրորդը՝ 114ա—196ա, սկզբում տրված է առաջարան և վերջում՝ 197ա—199ա՝ ցանկ: Ուղեգրության վերնագիրն է.

«Ճանապարհորդութիւն Տփղիսից Երուսաղեմ Հունաստանով և վերադարձը Տփղիս Կիպրոս կղզով, Փոքր Ասիայով և Անատոլիայով, իշխան Գիորգի Ավալովի 1820 թվին»:

Գ. Ավալիշվիլու նկարագրութեան մեջ առանձնապես հետաքրքիր են վիճակագրական տեղեկութիւնները շրջած տեղերում ապրող հայերի և հայոց եկեղեցիների ու վանքերի մասին:

[ԱՅԼԵՎԱՅԼ ՏԵՂԵՐԻ ՀԱՅՅԵՐԸ]

Գործում... կան եկեղեցիներ՝ վրացական, կաթոլիկաց և հայոց՝ երեքը: Իսկ այս երեք ազգերը մոտ 1500 տուն են:...

Քուբայիսում... կա երեք եկեղեցի ուղղափառ քրիստոնյաների, մեկը կաթոլիկների, մեկը հայոց և մեկ էլ սինադոգա: Այստեղ բնակվող այս շորս ազգերի թիվը մոտավորապես 2000 տուն է:...

Երուսաղեմի... [Վրացական] սուրբ Սաչ վանքում... դոտ ինձ համար հետևյալ տպագիր գրքերը [թվով] 15<sup>2</sup>, մի գիրք [ևս] հայերեն...:

Հայոց (հառայան) երեք հոգևորականների [Հարության տաճարը] մտնելու մասին

Երբ մտանք այս (Հարության) տաճարի գալիթը, մեր սպասածից ավելի գտանք ուղղափառների բազմութիւն, ես առավել անվեհերութիւն և աղաղակ նրանց մեջ [գտնվող] բեզդեհեմցիների, որոնք արարեան գոչում էին. «Մեծ է և բարի մեր՝ ուղղափառ քրիստոնյաների՝ հավատքը, և վատ է Ֆրանկների, հայերի և ուրիշներինը. ելեք, թերահավատներ, այս սուրբ վայրից. երկարակյաց լինի մեր սուլթան Մահմադը»։ Այս առթիվ հայերը մի փոքր կատաղեցին, մեր խորանը մտան նրանց երեք հոգևորականները, որ նրանց պատրիարքի կողմից էին ուղարկված, համբուրեցին Միսայել սրբ[ագան] մեծորայոլիտի աջը և խնդրեցին, որպեսզի կարգուկանոնին հսկող թուրքերին հրամայե բեզդեհեմցիներին հարկադրի լուր: Բարձր սրբազան սուրբ տերը՝ հարգելով նրանց խնդիրը՝ հրամայեց հոգևորականներին արգելեն բեզդեհեմցիներին այսպիսի բաներ ստելու: Եվ թեև թուրքերը միանգամայն գո՛հ մնացին այս առաջարկից և սկսեցին մտրակել և սպառնալ [նրանց] բանտարկութեամբ, սակայն բեզդեհեմցիք [սկսեցին] ավելի ևս բարձրաձայն գոչել արարեան. «Մեծ է և բարի մեր՝ ուղղափառ քրիստոնյաների՝ հավատ-

քը, և վատ է Ֆրանկների, հայերի և ուրիշներինը. ելեք, թերահավատներ, այս սուրբ վայրից. երկարակյաց լինի մեր սուլթան Մահմադը»:

Իմ այցելութիւնը հայոց (հառայանների) վտնքը

Գնացի տյառնեղոր Հակովրոս սուրբ առաքյալի վանքը<sup>4</sup>, որ կառուցվել է Վրաստանի թագավորների կողմից, և այժմ... հայոց (հառայանների) ձեռքն է<sup>5</sup>, որպեսզի տեսնվեմ հայոց (հառայանների) Գարրիել պատրիարքի հետ<sup>6</sup>: Վերջինս ինձ բնորոնեց՝ ըստ սովորույթի՝ գրկարաց և վարդաջրով օծեց ինձ: Ապա իջա վանքը դիտելու՝ ներքին սքանչելի տեսարաններն ու շինութիւնները: Այս [վանքի] հյուսիսային մասում գտնվում է Հակովրոս առաքյալի գանգը, որ ամփոփված է պատի տակին... Երեկոյան պահին պատրիարքից ստացա մի ոչխար, մեծ կուժ գինի, մի քանի սպիտակ հաց և քաղցրեղեն (շաքարլամա):

Երուսաղեմի [Հարության տաճարի] հայոց խորանի մասին

Այստեղ [Քրիստոսի գերեզմանից] 17 քայլ հեռավորութեամբ դեպի հարավ հայոց (հառայանների) խորանն է...

Հարություն (Արտեմ) Արարատեցու մասին...

[Երուսաղեմում] ինձ մոտ եկալ Արտեմ Բողղանովիչ Արարատեցին և հրածեշտ տվեց ինձ Շամ գնալու պատճառով<sup>7</sup>...

[1573 թվին տեղի ունեցած սքանչելիքը]

1573 թվին, Երուսաղեմի (sic) Երեմիա պատրիարքի օրոք<sup>8</sup>, հայերը (հառայանները)<sup>9</sup> շատ փող ծախսելով՝ տեղական փաշայի միջոցով հաջողեցրին, որ սուլթանը հրաման արձակեր, որպեսզի մեծ շարաթ [երեկոյան թիշերը] հույներից ոչ ոք չգար սուրբ գերեզմանի մոտ աստվածային լույսը ստանալու համար, որ սփռվում է այնտեղից, այլ [գտն] միմիայն հայերը (հառայանները): Եվ այսպես, փաշան, որն իր արքայի հրամանն էր կատարում, թողեց [տաճարում] բավական բազմութիւն հայերից (հառայաններից), փակել տվեց տաճարի դուռը, որի առաջ կանգնած մնացել էր Երեմիա պատրիարքը բազմաթիվ հոգևորականներով և առ աստված ազերսող՝ ուղղափառներով հանդերձ: Ժամկետը լրանալուց հետո պատրիարքը կանգնել էր սրբուհի Հեղինեի (Էլենայի) եկեղեցու մի սյան մոտ՝ արտասովալից... և աղերսող [առ Քրիստոս]... Ապա այն պատի մեջ՝ արևմտյան դռան կից՝ ձեղքվեց քարը և այնտեղից սփռվեց աստվածային

լույսը, որը խափանված էր հայերի (հասոյանների) կողմից, և Երեմիա պատրիարքը շատապեց դեպի այն կողմը. վառեցին նրա մոմերը և ձայն տվին ժողովրդին, որը մասնակից էր նրա պաղատանքին: Իսկ հայերը (հասոյանները), որոնք տաճարի ներսուսն էին, խնդրած երջանկությունը չստացան... Այս բոլոր սքանչելիքների ականատես թուրքերը և անհավատները սկսել են բամբասել հայերին (հասոյաններին), որոնցից մեկը, ... որ բռնել էր սեպը, բարձրաձայն աղաղակեց:...

Ակոսում... [հանդիպեցինք] նախիջևանցի հայ հաջիներին՝ Սիմեոն-Երեմիային և Փասպար Խեչատուրովին... Երբորդ ժամին ինձ մոտ եկան արքեպիսկոպոսի կղբորորդին և հաջի Սիմեոն հայը:...

Քարսու քաղաքը... ավելի մեռած է, քան կենդանի, ուր ապրում են մահմեդականներ մինչ 1500 և հայեր մինչ 300 ծուխ:...

Կեսարիայում... [ծանոթացա] հայ[ազն] Օսեփ Քայա-օզլի Կարապետի հետ... էֆենդին ասաց՝ «Ես հայ եմ, Օսեփ Քայա-օզլի Կարապետ»...<sup>9</sup>:

Կեսարիա քաղաքում բնակվում են հույներ մինչ 400, հայեր մինչ 2000 և մահմեդականներ մինչ 10000 ծուխ: Առաջիններն ունեն մի եկեղեցի, երկրորդները երկու, իսկ վերջինները 87 աղոթատուն (ջամի):

Սուվազ քաղաքում... 8 ծուխ հույն կա, 1080 ծուխ հայ և 6773 ծուխ մահմեդական: Առաջիններն ունեն մի եկեղեցի, երկրորդները՝ երկու, իսկ վերջինները՝ 19 աղոթատուն (ջամի):

Շապին-Փարահիսար քաղաքում... 30 ծուխ հույն է, 400 հայ և 4000 մահմեդական: Առաջինները գրեթե չգիտեն իրենց մայրենի լեզուն և խոսում են թուրքերենի խառն հայերենով, չեն մտում առանց քահանայի և եկեղեցու: Հայերը ունեն մի աղոթատուն, իսկ մահմեդականները մի մզկիթ:...

Շահրիանում [հանդիպեցի] բայազետցի հայ քահանա տեր-Մարգարին, երեք թուրքի և երկու հայի:...

Արզրումում [հանդիպեցի] քաղաքացի Քոսա-օզլի-Մելքոյի հետ... հային հարցրի... ուղեկիցներս հայեր [էին]...:

Ղզլքիլիսայում [կա] վրաց եկեղեցի վրացական երկաթագիր և հայերեն արձանագրություններով, [որ] Քամար թագուհու կառուցվածն է:...

[Ահա] թոխաթեցի վաճառական՝ մղոսի Պողոս-աղա-Սա-ֆար-օզլի, Շապին-Փարահիսարցի հայ Օհանեզ Յարման-օզլի-Օղան-օզլի-Պետրոսը...:

Կարս քաղաքի մասին

Այս քաղաքը Օսմանյան պետութայն վերջին բունն է՝ Ռուսիային սահմանակից: [Այստեղի ազգաբնակչությունը] բաղկացած է 10000 ծուխ հայերից և թուրքերից: Առաջիններն ապրում են գերազանցապես պարսպից դուրս, արևմտյան կողմում, մինչ 500 ծուխ: Բերդը կանգուն է բարձր ժայռի վրա և սրան շրջապատող պարիսպների մեջ բնակվում են թուրք երեկիները՝ հոգեորականները, վաճառականները և քաղաքացիները:...

Երկոսասան առաքելոց [անվան] նախիկն եկեղեցի — շամիի մասին

Այստեղ սչինչ չկա նշանավոր, բացի հնագույն դարերի հայոց Աշոտ (Արշոտ) թագավորի (sic)<sup>10</sup> սրբատաշ քարից կառուցված մի եկեղեցուց հանուն երկոսասան առաքելոց, որի [արտաքին] տեսքը պարունակում է սպիտակ քարից կոնկրետ մարդու մեծությամբ [քանդակներ], որոնք պտտում են այս տաճարի շուրջը<sup>11</sup>, գմբեթի ստորև մեծ վանդակների միջում ամփոփված, [և] որոնք այժմ էլ վերամբարձ ձեռներով բռնած ունին այս գմբեթը: Այժմ սա անհավատների աղոթատուն (ջամի) է դարձած<sup>12</sup>:

Այս՝ [Կարս քաղաքը] շինված է շատ նեղ, աղտոտ և զզվելի ձորում, որով հոսում է մի փոքր գետ և որը բաժանում է բերդը քաղաքից, պտտում է գրեթե ամբողջ քաղաքի շուրջը և [ապա] միախառնվում է Արփաշայի հետ: Այստեղի բնակիչները չգիտեն այս գետի անունը, և կոչում են այն Կարսըն-սու, այսինքն Կարսի ջուր: Այստեղ չեն նկատվում ոչ այգիներ, ոչ ծաղկանոցներ և ոչ էլ բանջարանոցներ, որ պետք է լինեին քաղաքից դուրս՝ հյուսիսային կողմում, քանի որ արևելյան և արևմտյան կողմերը ժայռոտ են: Հարավայինը գրաված ունեն բնակիչները բնակվելու և վարուցանքի համար, իսկ հյուսիսայինում գտնվում է ձորը, ուր միշտ վաճառվում են թարմ մրրգեր, կանաչեղեն և այսպիսիք, և բոլոր պիտույքների էժանություն է այստեղ:

... Աստվոսյան ինձ մոտ եկան Տիգրիսի քաղաքացի հայ Պետրոս Սարքիսովը և կարճ ժամանակից հետո՝ Պետրե Հարաձեի և [նույն] Պետրոս Սարքիսովի հետ միասին մտա Տիգրիս, [ուղևորվելով] այն Սարքիսովի տունը, [ուր] ես պիտի բնակվեի:...

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Գորու հայերի մասին տե՛ս Գիւտ ա. ք. Աղանեանց, Վրաստանի հայերը.—«Տարաք», 1919 թ., №№ 1—12, էջ 44—46: Бюллетень КИАИ, № 4, Тифлис, 1928, стр. 15—16.

2 Երուսաղեմի ս. Պաշ վանքի վրացերեն ձեռագրերը ցուցակազրված են մի շարք վրացագետների կողմից. А. Цагарели, Сведения о памятниках грузинской письменности, вып. II, СПб., 1889, стр. 1—50, Н. Марр, Предварительный отчет о работах на Синае, веденных в сотрудничестве с И. А. Джаваховым, и в Иерусалиме, в поездку 1902 г.,— «Сообщения И. Палестинского О-ва», т. XIV, ч. 2, 1903, стр. 1—51, ավելի մանրամասն՝ Robert P. Blake, Catalogue des manuscrits géorgiens de la bibliothèque patriarcale grecque a Jérusalem, —extrait de la Revue de l'Orient Chrétien, 3-e serie, t. III (XXIII) № 3 et 4 (1922—1923), pp. 345—413, t. IV (XXIV) № 1 et 2 (1924), pp. 190—210; № 3 et 4 (1924), pp. 387—429, t. V (XXV) № 1 et 2 (1925—1926), pp. 132—135, և առանձին՝ Paris 1924 — 1926, 157 էջ: Н. Я. Марр, Краткое описание грузинских рукописей библиотеки греческого патриархата в Иерусалиме, Тб. 1955, 95. стр.

3 Մահմուտ Բ Ադիլ, Օսմանցոց սուլթան, 1808—1839 թթ.:

4 Երուսաղեմի հայոց պատրիարքարանի՝ ս. Հակոբրյանց մայրավանքի մասին է խոսքը:

5 Վրացական ավանդության համաձայն, Հակոբրյանց վանքը հիմնվել, շինվել ու բարեկարգվել է Վրաց թագավորների, մասնավորապես Գիորգի III-ի (1156—1184) կողմից (հմմտ. А. Цагарели, Памятники грузинской старины в святой земле и на Синае [«Православный Палестинский Сборник», т. IV, в. I], СПб., 1888. М. Г. Джанашивили, Грузинские обитатели вне Грузии. Тифлис, 1899), որ, սակայն, չի համապատասխանում իրականությանը, Մաղաքիա ա. Կ. Օրմանեան, Ազգապատում, III, Երուսաղէմ, 1927, էջ 239—242. հմմտ. Л. М. Меликсет-Бек, Armeno-Hebraica, —Труды Ист.-Этногр. Музея евреев Грузии», т. III, Тб., 1945, стр. 258—259 и прим. 1 стр. 259. Նորայր վ. (այժմ եպիսկոպոս) Գողարյան, Համառոտ ակնարկ հայ Երուսաղեմի վրա. «Էջմիածին» 1951 թ., ապրիլ-հունիս, էջ 89—92, հուլիս-օգոստոս, էջ 77—80:

6 Գաբրիել Նիկոմիդացի, պատրիարք Հայոց Երուսաղեմի, 1818—1840 թթ.:

7 Խոսքը Հարություն Արարատյանի մասին է, որի անվան հետ կապված է կեղծ համարվող ձեռագրերը. տե՛ս Жизнь Артемия Арапатского, уроженца селения Вагаршапат, писанная и переведенная им самим с армянского на русский, с приложением 6 гравированных эстампов, изображающих виды городов персидских, I—II, СПб., 1813, Նույնը հայերեն՝ Վարդապատեցի Յարութիւն Արարատեանի կեանքը. Թարգմանեց ուսերենից Գ[աբրիել] Գ[ողարյանց], Թիֆլիս, 1892, հմմտ. Ա[րիստակէս] Ծ[պիսկոպոս] Ս[եդրակեան], Յարութիւն Արարատյանի կեղծիքը, Բաքու, 1894. հմմտ. Ն. Մառիգրախոսականը այս վերջինի մասին՝ «Записки Вост. Отд. Рус. Арх. О-ва», т. IX, 1896, стр. 311—313:

8 1573 թվին Երուսաղեմի հունադավան պատրիարքական աթոռի վրա

հայտնի էր Գերմանոս I (1543—1579 թթ.), իսկ Երեմիա անունով ոչ հունադավան և ոչ էլ հայադավան պատրիարք Երուսաղեմում առհասարակ հայտնի չէ: Մյուս կողմից, Երեմիա II անունով հայտնի է Կ. Պոլսի հունաց պատրիարքը 1572—1579, 1580—1584, 1586—1595 թթ. շուրջ: Հետևապես, այսպեղ հեղինակը շփոթել է Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքների անուններն իրար հետ, կամ գուցե Երեմիա անունով մետրապոլիտ լինելը Երուսաղեմում, ինչպես, օրինակ, նա հիշում է Միսայիլին: Համենայն դեպս, նշում ենք, որ այդ պահին Երուսաղեմի հայոց պատրիարքն էր Անդրեաս Մերտինեցին (1551—1583 թթ.):

9 Այստեղ և ստորև զրույցը կեսաբիայի հայ գրաբարխան բարբառով է, և կարևոր նյութ է հայ բարբառագիտության պատմության համար, որ մենք տալիս ենք վրացատառ տեքստը հայատառի վերածելով (transliteration), ձեռ. էջ 173 ր—175 ր:

- Ահա այն բժիշկն, զոր տեսաք մեք այսօր:
- Պարոն Կարապետ, խնդրեա գայս բժիշկը, որ քեզ տուար տա:
- Աստված վկա, այս բժիշկն կարէ առողջացուցանել. պարոն Կարապետ, ես տեսնում եմ ի նոցանէ իմացած հաշիւն:
- Պարոն Օսեփ, նախ աջ ձեռդ ցոյց բժշկին և շի լինէր այն, շքւպէս ես եղէ:...

10 Գիտի լինի Աբաս I-ի 945 թ.

11 Տաճարի գմբեթի լուսանկարը տե՛ս Dr. J. Schwieger, Neue Wege zur Erforschung von Ursprungsfragen altarmenischer Kirchenbauter, — «Monumenta armenologica», Wien 1927 (=«Հանդէս ամսօրեայ», 1927 թ., № 11—12), Tafel VI, Abb. 14:

12 Կարսի մասին տե՛ս՝ Կրպէ (= Կարապետ Օհանջանեան), Կարս քաղաք, Մոսկուա, 1894:



ԻԲ

### Ն Ի Կ Ո Ղ Ո Ղ Գ Պ Պ Ի Ա Ն Ի

«ԱՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1823)

Նիկոլոզ Գիսրգիսի որդի Դադիանին Սամեգրելոյի իշխան Օտիայի (1728—1744) թոռն էր և Կայրա Ս-ի (1744—1788) եղբորորդին, որը հայտնի է իբրև Սամեգրելոյի խառն քաղաքական և պինդորական գործիչ: Մնւած լինելով 1774 թ. մտերքում, նա 1805 թ. գլխավորում էր այն պատգամավորութունը, որը Սամեգրելոյի գործերի կապակցութեամբ Պետերբուրգ էր գնացել Ալեքսանդր Ա կայսեր մտա ունկնդրութեան: Պետերբուրգից նա վերադառնում է զնգապետի աստիճանով և սպա գործում է իր հայրենիքում իբրև մեծ վեզիր, ղեկավարում է պինդորական արշավախմբերը, մանավանդ Թուրքիայի հետ կռոււմ 1828 թվին, երբ Փոթին ու Բեդիան վերջինիս չժից ազատվեցին. սպա նա ստանում է գեներալ-մայորի աստիճան և պանդան շքանշանների ասպետութեան: Մախճանով է 1834 թվին (համա. Ս. Յախ շվիլի, Նիկոլոզ Դադիանի, վրտցերեն.—«Լիտերատուրա գա իտելոսներա», 1944 թ., № 38):

Ն. Դադիանու որդին են պատկանում մի շարք գրական գործեր. 1. «Վրաց պատմութեանը». 2. «Ուղեգրութեաններ». 3. «Կատարյալաձ» — Սամեգրելոյի Դատաստանագիրքը. 4. «Բարոզգիրք» (Անտան ձգոնգիւղելու հետ միասին), և 5. Բանաստեղծութեաններ:

Այս գործերից ամենանշանավորն է «Վրաց պատմութեանը», որ բազմապիսի է 3 մասից. սակայն մասում տրված է Վրաստանի համառատ պատմութեանը հնագույն մամանակներից մինչև 1459 թ., այսինքն մինչ Վրաստանի բաժանումը 3 թաղավորութեանների և 5 իշխանութեանների. երկրորդում խոսվում է Վրաստանի մասին հիշյալ մամանակից մինչև Սալամոն I Իմերեթի թագավորը (1761—1784 թթ.), և վերջապես երրորդում ներկայացրած է Իմերեթի պատմութեանը

Սալամոն I-ից մինչ 1823 թ.: Հետևապես, այս պատմութեանն ավարտված պիտի լինի 1823 թվին: Մինչդեռ ա. և բ. մասերը գրեթե կրկնութեաններ և համառատութեաններ են Բարթիլոցիտորեայի, գ. մասը համեմատաբար ավելի ինքնուրույն և արժեքավոր գործ է, որը պարունակում է, ի միջի այլոց, և տեղեկութեաններ Հայաստանի և հայերի մասին:

Ն. Դադիանու պատմութեանը կրճատուճներով հրատարակվել է «Իվերիա» թերթում 1877 թ. №№ 5—18-ում: Վերջին (երրորդ) մասը ամբողջովին հրատարակել է ուսուցիչ թարգմանութեամբ հանդերձ պրոֆ. է. Թաղայշվիլին (E. Такайшвили, Описание рукописей Общества распространения грамотности среди грузинского населения, т. I, Тифлис, 1902—1904, стр. 14—56, пер. 57—104).

[1804—1815 թթ. ԱՆՏՔԵՐԻՑ]

Իշխան Յիցիանովն արշավեց Պարսկաստան և մոտեցավ Երևանի բերդին: [Յիցիանովի Երևանին] մոտենալու պահին Բարսիան զանն երկու հարյուր հազար զորքով օգնութեան հասավ Երևանի բերդին և շրջապատեց Յիցիանովին: Տեսնելով թշնամու մեծաքանակ լինելը և առավել՝ որ ինքը երեք հազարից ավելի զորք չունի, սրպեսզի բերդը պաշարի և զանի հետ պատերազմի, Յիցիանովը զգաց իր թուլութեանը. ուստի և թողեց բերդը, գեմ առ գեմ ելավ զանին, սաստիկ պայքարեց և խազաղ վերադարձավ Տիֆլիս:

...Այդ պահին օսմանցոց սարաքյարը՝ Յուսուֆ-փաշան մեծ զորքով եկավ Վրաստան պատերազմելու: Այստեղից նրա դեմ ելավ կոմս Գուդովիչը՝ պատերազմը տեղի ունեցավ Կարսում: Մարաքյարը ջախջախվեց, և փառավոր հաղթող հանդիսացավ կոմս Գուդովիչը:... Սրանից հետո կոմս Գուդովիչը գնաց և շրջապատեց Երևանի բերդը, սակայն՝ չնայած երկարատև պայքարին՝ չկարողացավ գրավել այն ու կրկին Վրաստան վերադարձավ:...

...Իմերեթի Սալամոն թագավորը, որն օսմանցիների մոտ էր գտնվում, գնաց Արզրում ու այնտեղից խնդրագիր ուղարկեց օսմանցոց կայսրին, Օտտոմանյան դռան, սպա անցավ Երևան ու այնտեղից աղերսեց Պարսկաստանի զանին, սակայն ոչ մի ակնդից օգնութեան չստացավ. և երկարատև աղերսներ ու

խնդրագրեր [ուղարկելուց] հետո եկավ Տրապիզոն, ուր հիվանդացավ և մեռավ 1815 թվին, և մեծ հանդիսավորությամբ թաղեցին այնտեղ<sup>2</sup>։...

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Ի. Վ. Գուգովիչը Վրաստանի կառավարիչ՝ 1806—1809 թթ.

<sup>2</sup> Թաղման ակնաստես է եղել Մինաս վ. Բժշկյանը, որը նկարագրել է այն իր գրքում՝ «Պատմութիւն Պանտոսի», Վենետիկ, 1819, էջ 76 (§ 123) և 103 (§ 153), հմտ. Ս. Мелнксет-Беков. Pontica-Transcaucasica Ethnica. «Советская Этнография», 1950 г., № 2, стр. 164, 165.

ԲԱԳՐԱՏ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐՔԱՅԱԳՆ

«ՆՈՐ ՊԱՏՈՒՄ» (1824)

Բագրատ Բագրատիոն արքայազնը Վրաց Գիորգի XII վերջին թագավորի որդին է, ծնված 1776 թ. և վախճանված 1841 թ. մայիսի 8-ին:

Այս Բագրատի գրչին է պատկանում մի երկասիրություն «Նոր պատում» (Ախալի մոթխրորա) վերնագրով, որը պարունակում է նյութեր Վրաստանի և կից երկրների պատմության վերաբերյալ՝ շուրջ 1753—1824 թթ.: Այս երկը հիմնականում ավարտված է 1814 թ., ապա ընդմիջումներով շարունակվել է մինչև 1819, նույնիսկ 1824 թվականը:

«Նոր պատումը» հրատարակվեց Թ. Լոմոսուրի խմբագրությամբ առանձին գրքով, որի վերնագիրն է. «Դավիթ արքայազն. Նոր պատմություն. Բագրատ արքայազն. Նոր պատում», վրացերեն, Թբ., 1941, էջ 49—161:

Այս երկը շատ և շատ կետերում շփվում է Դավիթ արքայազնի «Նոր պատմության» հետ, երբեմն բառացի կրկնություններով. սակայն միաժամանակ և տարբերվում է նրանից: Մինչդեռ Դավիթի «Նոր պատմությունը» գլուխների չի բաժանված, Բագրատ արքայազնի «Նոր պատումը» 115 պարագրաֆների է բաժանված, որ և նշում ենք մենք համապատասխան քաղվածքները թարգմանելիս:

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1753—1824 թթ.]

1. 1753 թվին. [Հ]աջի-Չալարը... գրավեց Նուխին և Շամախին (Շամախիան)... և՛ ժողովելով Շաքիի, Շիրվանի, Գյանջայի, Դարաբադի և Դաղստանի զորքերը՝ շարժվեց դեպի Քարթլի՝ այն նվաճելու նպատակով: Եկավ ու նվաճեց Վրաստանի մասերը՝ Շամշադինից մինչև Ալզեթ: Նկատելով այս՝ Թեյմուրազ

II թագավորն<sup>1</sup> ուղարկեց իր որդի Էրեկլեին<sup>2</sup> Կովկաս[յան լեռները] չերքեզներին բերելու նպատակով... Վրացիները հարձակվեցին Բայրաբում կանգ առած [Հ]աջի-Չալարի վրա... որը քաղվեց այնտեղից... Վրացիները հետամուտ եղան նրան ու վրահասան Ձեզամ գետի վրա<sup>3</sup>, որ Շամշադինուհն է, ճակատամարտ ունեցան, աստված մեր թագավորներին հաղթութուն շնորհեց...  
 2. 1754 թվին Թեյմուրազ թագավորն և Էրեկլե թագավորն իրենց զորքով գնացին Ղարաբաղը գրավելու համար... [Վրաց զորքը] Ղարաբաղի Փանահ-խանի հետ պատերազմեց: [Վրացիները] Փանահին հաղթեցին, [Փանահը] սաստիկ պարտվեց, զինարանը նրանից ամբողջովին խլեցին, մեծ ավար վերցրին ու հաղթանակով վերադարձան: Եվ նրա թնգանոթները պահվում են Թելավի բերդում: Այս պատերազմը մարտի 12-ին էր, որի մասին գրված է թնգանոթների վրա:

10. Էրեկլե թագավորը 1762 թվին ուղևորվեց՝ քրդերին դեպի Ալաղ[յ]աղ քշելու նպատակով: Քրդերը չուզեցին այլևս հպատակվել Էրեկլե թագավորին. ուստի և գերեց քրդերին, շատերին տեղահան արավ ու բերեց՝ բնակեցրեց Քարթլիում...  
 19. 1768 թվին Իմերեթից գաղթած Քայսուսը Լեանիի որդի Արաշիձեն բռնեց Ա[ր]ղրումի սարասքյարին ու մեծ զորքով տարավ Իմերեթ...  
 20. 1769 թվին Տիգրիսում երկաց կործանիչ ժանտախտը, որը շատ մարդիկ կոտորեց Քարթլիում, Կախեթում և Իմերեթում, և տեղեց ամբողջ տարի, [մինչև որ] այն չվտարվեց մեր տեր Հիսուս Քրիստոսի գեղարդի շնորհով, որը բերին Էջմիածնի վանքից, ուր այն սուրբ գեղարդը պահվում է:  
 22. 1778 թվին Էրեկլե թագավորը հաճեց գնալ՝ Երևանը նվաճելու նպատակով: Ժողովեց իր զորքը, շարժվեց ու հասավ Երևանի բերդին, որն և [պաշարեց] 4 ամիս [չարունակ]: Երևանի խան [Հ]ուսեյն-ալին շատ անգամ բնդդիմադրեց և՛ հաղթող դուրս գալով՝ սկսեց բերդն ամրացնել: [Էրեկլեն] շատ նեղ տեղը գցեց Երևանի բերդը, քիչ մնաց, որ այն գրավեր, սակայն Իմերեթի Սուլտան թագավորը խանգարեց Էրեկլե թագավորին, բերեց Ալեքսանդրե Բաքարի որդուն Պարսկաստանից ու ապրստամութուն կազմակերպեց Քարթլիում: Տեղեկանալով սրա մասին՝ Էրեկլե թագավորը և [Հ]ուսեյն-Ալիխանը դաշն կնքեցին: Էրեկլե թագավորն Երևանին տարեկան վեց հազար թուման հարկ նշանակեց, որը վրացիները ստանում էին մինչ

Գիորգիի<sup>4</sup> ժամանակը: Իսկ Էրեկլե թագավորը տեղահան արավ այնտեղի հայերին ու բնակեցրեց Ղարաբաղում և [Հ]ալաբարում, և վերադարձավ հաղթական...  
 28. 1785 թվին Պուլիսի տեր Օմար-խանը... ժողովեց Գաղստանի զորքը քսան հազարի չափ<sup>5</sup> և շարժվեց Վրաստանի վրա... [Էրեկլե] թագավորը գնաց Բորչալու, իսկ Օմար-խանը քաղվեց այնտեղից և Արծաթահանքին<sup>6</sup> մոտեցավ, Արծաթահանքը վերցրեց, բազմաթիվ տեղացի հույն բնակիչներին կոտորեց կամ գերի վերցրեց, Ուղու[ն]լարի ձորով անցավ, Լոռին մոտեցավ: Լոռին չկարողացավ վերցնել, քանի որ այն մոտերավ Մալաթիա Գլուրջիձեն ամրացրել էր: Լոռուց [Օմար-խանն] Ախալցխե անցավ, Ախալցխեից իջավ, Վահանին (Վախանի) մոտեցավ և քսան օրից հետո Վահանի (Վախանի) բերդը՝ վերցրեց... Եվգեն Աբաշիձեի դուստրերին գերեց... Գարնանը գնաց, անցավ Ղարաբաղ Իրրահիմ-խանի մոտ և նրան ի կնութուն տվեց Եվգենի դուստրերից մեկին, իսկ մյուսի հետ ինքն ամուսնացավ [և] Էրեկլե թագավորի հետ դաշինք կնքեց...  
 29. 1786 թվին Էրեկլե թագավորը գնաց՝ Գյանջան գրավելու նպատակով, հետև ունենալով ինչպես իր, նույնպես և սուսական զորքը... Գյանջայի բերդին մոտեցավ, նեղ տեղը գցեց այն... Թագավորի մոտ եկան Ղարաբաղի հայ մելիքները, որոնց [Էրեկլեն] ուղում էր տեղահան անել և իրենց քոչվորների հետ միասին Վրաստանում բնակեցնել: Նրանց տեղահան անելու համար Էրեկլե թագավորն ուղարկեց իր որդի Յուլուին, որին կցեց Վրաստանի մի քանի զորականներին: Այնտեղ Ղարաբաղի խան Իրրահիմը պատերազմի ելավ Ջեյրա կոչեցյալ վայրում: Ղարաբաղի խան Իրրահիմը պարտվեց, շատ դարաբաղյաներ կոտորվեցին, իսկ վրացիներից և ոչ մի մարդ չգոչվեց... մինչդեռ սուսական զորքը հրաման ստացավ վերադառնալ Ռուսիա, [և սուսները] քաղվեցին, գնացին: Տեանելով այս, Էրեկլե թագավորը գրեց իր որդի Յուլուին, որպեսզի վերադառնա բնակատեղը: Շտապ կերպով վերադառնալով՝ Յուլուն հաղթական եկավ իր հոր մոտ, ապա Էրեկլե թագավորն ևս եկավ Տիգրիս:  
 38. ...1795 թվի մայիսին Պոջա Աղա-Մահմադ-խան Ղաջարն<sup>8</sup> իր զորքով եկավ և մոտեցավ Ղարաբաղի Շուշա բերդին: 4 ամիս մնաց այնտեղ, [սակայն] Շուշին չկարողացավ վերցնել, [քանի որ] այն Շուշա Իրրահիմ-խանը շատ էր ամրացրել: [Պոջան] ուզեց վերադառնալ [Պարսկաստան], սակայն

Գյանջալի Ջավադ-խանը, քանի որ էրեկլե թագավորի հակա-  
 ոակորդն ու թշնամին էր, առաջնորդեց նրան դեպի Տիգրիս<sup>9</sup>...  
 Աղա-Մահմադ-խանը պահանջում էր [էրեկլե] թագավորից հնա-  
 զանդություն և դաշինք՝ խոստանալով տալ նրան Գյանջան,  
 Երևանը, Ղարաբաղը, Շաքին, Շիրվանը և [նույն] իսկ Ադրբեջանի  
 կառավարչությունն, ... [Առաջին] ճակատամարտը տեղի ունեցավ  
 սեպտեմբերի 11-ին Շաֆարադի [ծայր]ին<sup>10</sup>, ուր վրացիք պար-  
 տություն կրեցին պարսիկներից<sup>11</sup>...

39. 1796 թվին... էրեկլե թագավորը՝ զորք ժողովելով՝  
 գնաց Գյանջան նվաճելու, որն այն ժամանակ միացել էր Ղա-  
 րաբաղի Իբրահիմ-խանի հետ...

40. 1796 թվին... մեծ սով էր Քարթլիում, Գյանջա-Ղարա-  
 բաղում և Շաքի-Շիրվանում, այնպես որ հացի մի կողը դժվար  
 էր ճարվում և գնահատվում էր մի թուման...

41. 1797 թվին Աղա-Մահմադ-խանը՝ լսելով ուսանների նա-  
 հանջը [Վրաստանից՝] մեծ զորքով ուղղվեց դեպի Վրաստան,  
 եկավ Շուշի: Շուշվա Իբրահիմ-խանը վախից փախավ, գնաց  
 ձար: Իսկ Աղա-Մահմադ-խանը գրավեց Շուշին և՛ մնալով այն-  
 տեղ՝ զորք պատրաստեց, որն երկու մասի բաժանեց, մտադրը-  
 վելով մի մասն ուղարկել Քարթլիի դեմ և մյուսը՝ Կախեթի...  
 Մակայն աստված խախտեց նրա մտադրությունը, քանի որ  
 հունիսի 12-ի գիշերը Աղա-Մահմադ-խանին քնած վիճակում  
 Ղարաբաղի Շուշվա բերդում սպանեց իրեն իսկ պահապանը...  
 և աստված Քարթլին ու Կախեթը ավերումից փրկեց<sup>12</sup>...

43. 1798 թվին... Գիորգի Յիցիշվիլին... գնաց Փամբակ  
 (Փանրակի)... Սարգար Գիորգի Յիցիշվիլին, որը Պարսկաստա-  
 նում էր գտնվում,] Երևանյան սահմաններից վերադարձավ...

44. 1800 թվին Ղ'աեն Բարախանն<sup>13</sup> ուղարկեց իր սարգա-  
 րին Նախիջևան: Գիորգի թագավորի եղբայր Ալեքսանդրեն դու-  
 վաճանեց նրան, գնաց Նախիջևան սարգարի մոտ: Այդ պահին  
 սարգարը վերադարձավ Պարկաստան, իսկ Ալեքսանդրեն՝ մնա-  
 լով այնտեղ՝ ոչինչ չկարողացավ գլուխ բերել: Ալեքսանդրեն  
 Նախիջևանից անցավ Ղարաբաղ Իբրահիմ-խանի մոտ: Իսկ այդ  
 պահին Խունձախի տեր Օմար[-խան]ը տասերկու հազար զորքով  
 եկել, իջել էր ձար: Լսելով այս՝ Ալեքսանդրեն Ղարաբաղից ան-  
 ցավ ձար ու գնաց Օմարի մոտ, գանգառվելով [Գիորգիից] և խոս-  
 տանալով տալ նրան բազմաթիվ գերիներ և ավար... 1800  
 թվին... Օմար-խանը... Գյանջալից անցավ Ղարաբաղ իր փեսա

Իբրահիմ-խանի մոտ, որը [սակայն] նրան հյուրընկալություն  
 ցույց չտվեց:...

46. 1801 թվին... զաղախեցիները երգվեցին [Յուլուն և  
 Վախտանգ արքայազներին], քանի որ այն պահին Ղարաբաղից  
 Ղազախ էր եկել ու այնտեղ էր մնում Ալեքսանդրեն:... Ղարա-  
 բաղից նոր եկած Ալեքսանդրեն լսել էր իր եղբոր՝ Գիորգիի  
 մահվան ընթր... Տիգրիսի մեկիքն էր Դարչի (Դարչիա) Բերու-  
 թովը<sup>14</sup>... Կայսրը<sup>15</sup> հաստատեց Տիգրիսն իբրև նահանգ և բա-  
 ժանեց Քարթլին, Կախեթը և Սոմխեթը, որոնք են՝ 1. Տիգրիս,  
 2. Լոռի, 3. Թելավ, 4. Սղնախ, 5. Գորի, 6. Գուշեթ: Սրանք էին  
 գավառական գլխավոր քաղաքները<sup>16</sup>...

61. 1805 թվին Յիցիանովը<sup>17</sup> դիմեց Երևանի Մահմադ-  
 խանին՝ առաջարկելով համերաշխ լինել Ռուսիայի հետ և խընդ-  
 րեց թույլ տա Երևանի բերդում իր զորքը պահել, իսկ Երևա-  
 նին ինքը (Մահմադ-խանը) տիրի և հարկ վճարի, ինչպես [Վրաց]  
 թագավորների օրոք էր: Չկամենալով լսել այս առաջարկը՝  
 Մահմադ-խանը սրա մասին տեղեկացրեց դաեն Բարախանին,  
 որի կապակցությամբ դաենը դեսպան ուղարկեց Յիցիանովի  
 մոտ, գրելով, որ նա հրաժարվի Երևանը պահանջելուց, հակա-  
 ոակ դեպքում՝ կռվի դաենի հետ: Լսելով այս, Յիցիանովը...  
 գնաց Երևանի դեմ: [Յիցիանովի] Երևան հասնելուն պես, շահ-  
 զադե Աբաս-միրզան, Բարախանի որդին, տաս հազար զորքով  
 օգնության հասավ Երևանին: Սրա հետ ճակատամարտ ունեցավ  
 Յիցիանովը, և պատերազմը սաստիկ էր: Թեև զզլբաշները պայ-  
 քարում էին, գեներալ Սերգի Ալեքսանդրովիչ Գուշկովը չխու-  
 սափեց այն ամբողջություններից, որոնք՝ խիստ քարքարոտ և  
 ժայռոտ լինելով՝ Երևանի շուրջն են գտնվում: Գուշկովը իր  
 զորքը, որ կովկասյան գրենագերներից էր բաղկացած, տարավ  
 դեպի լեռները և բարձրացավ այն լեռան վրա, ուր զզլբաշներն  
 էին ամրացած, լսեց այդ բերդը, իսկ զզլբաշները փախուստի  
 դիմեցին ուսաններից, որոնք հետամուտ եղան նրանց մինչ  
 նրանց բանակատեղը, որը նույնպես հաղթանակով գրավեցին:  
 Այս պատերազմի միջոցին սպանեցին Քախոսրո Արաշիձեին,  
 Աեոնի որդուն, որը նոր էր եկել Ախալցխից և որը ուսանների  
 հետ էր: Իսկ ուսանները հասան մինչ էջմիածնի վանքը, որը  
 նույնպես խլեցին զզլբաշներից, ապա հասան Երևան քաղաքը,  
 որն և գրավեցին, և կանգ առան այնտեղ: Իսկ խանը և ժողո-  
 վուրդը բերդի մեջ ամրացան, քանի որ Երևանի բերդը խիստ

ամուր էր և թշնամուց անառիկ: Այս բոլորի մասին դաենի որդին գեկուցեց իր հորը: Ղահենը՝ լսելով այս՝ շարժվեց հարյուր հազար զորքով գեպի Երևան. եկավ և հասավ Երևան, ուր Յիցիանոսը էր գտնվում: Եվ ամեն օր տեղի ունեւր պատերազմ: Յիցիանովը ոռւսական քիչ զորք ունեւր, որից շատերը՝ շոգին ու օգին չդիմանալով՝ հիվանդացել էին և նուշխիակ մեռել: Ուստի և նրա հետ մնացել էր երկու հազար վեց հարյուր ոռւս զինվոր: Տեսնելով այս, այնտեղ գտնվող վրաց իշխաններն և քաղաքացիները սկսեցին հեռանալ ոռւսներից և ուղևորվեցին Տիփլիս: Այդ պահին դաեն Բարախանն այնպես էր ամբացրել Երևանի շուրջը գտնվող ճանապարհները, ուր ոչ մի զորք այնտեղ անցնել չէր կարող: Հեռացող վրացիների ճանապարհը կտրեց զվլբաշների զորքը, որը վրացիների մի մասը կոտորեց և մյուսը կալանավորեց բոլոր քաղաքացիների հետ միասին, որոնց թվումն էին Օրբելիանի Իոանե Դավթի որդին, Սարաթխանյի սարգարը, և սա կալանավորվեց իր երեք հարեզորորդոց հետ միասին, որոնց իբրև գերիներ ուղարկեցին դաենին... Իսկ գեպի Փամբակ դաենն ուղարկեց իր սարգար Փիր-ղուլիխանին ութ հազար զորքով, որպեսզի վերցնեն Ղարաքիլիսայի բերդը, որը ոռւսներն ամրացրել էին և այնտեղ պահում էին պարեն և զինանյութ (արծիճ և վառոդ): Հասնելով Փամբակ՝ Փիր-ղուլիխանը պատերազմում էր Ղարաքիլիսայի բերդի դեմ, սակայն չկարողացավ այն վերցնել, քանի որ ոռւսներն այն խիստ ամրացրել էին... Մինչդեռ Յիցիանոսը Երևան քաղաքում նեղ վիճակի մեջ էր գտնվում [և թեև] ամրանում էր, սակայն զինանյութը (գեղն ու արծիճը) պակասում էր: Ապա [Յիցիանովը] Փամբակ ուղարկեց Մանարեզոր ազգանունով մայորին ութսուն մարդով և նրանց հետ միասին դարարաղցի մելիք Արովի որդի Ռոստոմին վաթսուն դարարաղցի հայերով, և սրանց հետ երկու թնդանոթ: Սրանք՝ զաղտագողի ելնելով Երևանից՝ հասան Փամբակ: Տեղեկանալով սրա մասին՝ այնտեղ գտնվող սարգար Փիր-ղուլիխանն ուղևորվեց ու ճանապարհը կտրեց Համամլիում: Եկած ոռւսները ճակատամարտ ունեցան [զվլբաշների հետ], սակայն պարսիկները հաջողութուն ունեցան՝ բոլորին կոտորեցին, հայերից ոմանց գերեցին, և նրանց թնդանոթներն ու գերիներին ուղարկեցին Երևանում գտնվող դաենին, որի առթիվ դաենը Փիր-ղուլիխանին մեծ շնորհակալութուն հայտնեց ու խալաթ ևս նվիրեց:

62. 1805 թվին, Յիցիանովի Երևանում գտնվելու պահին, Վրաստանի ժողովուրդը... սպասում էր Յիցիանովի կործանումը Երևանում... Յուլթն և Փառնաող արքայազները... Իմերեթից... եկան Սուրամի մոտերքը... և ուղեցին Կուր [գետ]ով անցնել ու գնալ Փամբակ Փիր-ղուլիխանի մոտ... Լեզգիները հասցրին Փառնաող և Լեոն արքայազներին Փամբակ ու բերին սարգարի մոտ, ուր նրանք հանգիպում ունեցան իրենց եղբայր Ալեքսանդրի և եղբորորդի Թեյմուրազի հետ... Փառնաողը Փամբակից անցավ Թոխալեթ... Իսկ Յիցիանոսը իր զորքով գրոհ էր ապիս Երևանին... Այս պահին դաեն Բարախանն Երևանում լսեց, որ Պարսկաստանում խռովութուն է ընկել, որի պատճառով նահանջեց. իսկ Յիցիանովը խաղաղ վիճակում մնաց Երևանում, [ապա] տեղահան եղավ ու վերադարձավ Տիփլիս... [Ապա] Պավել Յիցիանովը բոլոր տեղերն ուղարկեց գրութուն, որպեսզի Փառնաողին կալանավորեն ու իրեն հանձնեն: Իսկ Փառնաողը՝ ելնելով Արագվայից և անցնելով Կուրը՝ հասավ Ղազախ, բարձրացավ Ալպան կոչված լեռնային գյուղը, ուր հայերն են ապրում... Ավախիշվիլի Սուլամոնը, որն այն պահին Ղազախի մոտը էր, ժողովեց զազախեցիներին երեք հարյուր հողու չափ և գիշերով հարձակվեց քնած Փառնաողի և նրա ուղեկիցների վրա, որոնց բոլորին կալանավորեց ու Յիցիանովին հանձնեց...

63. 1799 թվին, երբ էջմիածնում վախճանվեց Ղուկաս<sup>19</sup> հոգևոր տերը (օրքիվատերը)<sup>19</sup>, հայերը ցանկացան Ստամբուլից բերել այնտեղի պատրիարք Դան[ի]ելին ու նրան հոգևոր տեր (օրքիվատեր) բազմեցնել էջմիածնում: Լսելով այս՝ Գիորգի Թագավորը խնդրեց Պավել կայսրից, որպեսզի Ռուսիայից ուղարկի իշխան Արղության Հովսեփին (Արղութով Օսեփ)<sup>20</sup>, ոռւսահայոց քահանայապետին և հոգևոր տեր (օրքիվատեր) դարձնի էջմիածնում: Կասյրը լիովին կատարեց Թագավորի խնդիրը: Ապա երկպառակութուն առաջացավ հայերի միջև, ոմանք ուզում էին Հովսեփին, ոմանք Դան[ի]ելին, ում վրա հայերը մեծ հույսեր էին դնում: Լսելով այս՝ Հովսեփը խնդրեց կայսրից, որպեսզի գրի Ստամբուլ իր գեսպանին, որ Դանիելին էջմիածին չուղարկեն: Ապա կայսրը գրեց իր գեսպանին, որն և կատարեց հրամայածը՝ կալանավորելով Դանիելին և ուղարկելով նրան, իբրև բանտարկյալի, Բոխչա-Աղա, ուր նա մի առ ժամանակ մնաց: Իսկ 1801 թվին այս Հովսեփը իբրև հոգևոր տեր (օրքիվատեր) Ռուսիայից Տիփլիս եկավ, բայց Գիորգի Թա-

դավորին կենդանի չտեսավ: Այս պատճառով շատ տխրեց, քանի որ ուսաց կայսրին հաստատ խոսք էր տվել հայոց եկեղեցին և կրոնը (եկեղեցիները և կրոնները) ուսա[դավան] դարձնի: Տեղեկանալով սրա մասին՝ հայ հոգևորականները թուենավորեցին Հովսեփ հոգևոր տիրոջ (Օսեփ օրփիվատերի) և նա Տփղիսում մեռավ մարտ ամսի 10-ին և չարժանացավ օժման իրրև հոգեվոր տեր (օրփիվատեր)<sup>21</sup>: Դարձյալ ուզեցին Դանիելին բերել: Այս պահին Դավիթ անունով մի վարդապետ կար Վրաստանի էնագեթ գյուղից: Սա իր կողմնակից դարձրեց Վրաստանի արքայազն Դավթին և Երևանի խան Մահմադին, և էջմիածնի հայոց ժողովը նրան կաթողիկոս դարձրեց, և նույնիսկ նրան օժեցին: Լսելով այս՝ ուսա[հայոց] առաջնորդ Եփրեմ իր կողմնակից դարձրեց ուսահայերին, նույնպես և ստամբուլցիներին, որոնք խնդրեցին Ալեքսանդր կայսրից, որպեսզի Դավթին գահընկեց անի և Դանիելին նստացնի [կաթողիկոս]: Այս պահին հայերը Դանիելին բանտարկությունից ազատել էին: Լսելով այս՝ արքան կատարեց նրանց խնդիրը և գրեց Վրաստանի կառավարչին, որպեսզի Դանիելին դարձնի [կաթողիկոս]: Իսկ Դավթին գահընկեց անի: Գալով Ստամբուլից՝ Դանիելը գահընկեց արավ Դավթին և ինքը օժվեց [կաթողիկոս] 1804-ին: Դավթը հեռացավ, գնաց դան Բարախանի մոտ, որը նրան պատվով ընդունեց: Դավթը ընծաներ մատուցեց [զաննին], ուստի և նրան կրկին տվին հոգևոր տերություն (օրփիվատերորա) 1805 թվին: Դավթը՝ հասնելով էջմիածին՝ կալանավորեց Դանիելին, որի մորուքը խուզել տվեց, էջի վրա նստեցնել տվեց և այսպես՝ անարգանքի ենթարկելով՝ ըանտարկեց մի խցի մեջ, ուր Դանիելը վշտից մեռավ: Սակայն Դավթին իր նպատակին չհասավ, քանի որ հայերը նրան չէին հնազանդում<sup>22</sup>: Իսկ 1809 թվին Ալեքսանդր կայսրը հոգևոր տեր (օրփիվատեր) նստացրեց ուսահայոց երեցապետ (արքեպեպոս) Եփրեմին: Էջմիածին գալուն պես՝ հայերը նրան ընդունեցին [և] հոգևոր տեր (օրփիվատեր) օժեցին: Ղանն ևս հաստատեց նրան: Սա մտերմացավ Դավթ հոգևոր տիրոջ (օրփիվատեր) հետ, որին պատվով էր վերաբերում և իրեն մոտ պահեւ: Եվ այսուհետև խաղաղություն ընկավ հայոց մեջ<sup>23</sup>:

65. 1805 թվի հունիսի 3-ին Ցիցիանովը գնաց Գյանջա՝ նպատակ ունենալով նվաճել Ղարաբաղը: Ղարաբաղի Իբրահիմ-խանին նամակ գրեց, հրավիրելով նրան հավատարիմ մնալ արքային: Լսելով այս՝ Իբրահիմ-խանն ուրախությամբ հնազանդ

վեց Ցիցիանովին, եկավ Գյանջա ու հանձնեց նրան [Շուշվա] բերդի բանալին: Ապա եկած խանին Ցիցիանովը ևս մեծարեց ու վերստին շնորհեց նրան Ղարաբաղի խան[ություն]ը և նշանակեց հարկ՝ տարեկան տաս հազար ոսկի: Իսկ բերդի մեջ տեղավորեց եգերյան մի գունդ: Եվ մի առ ժամանակ Իբրահիմ-խանը խաղաղ էր: Սակայն... Նինիա [Ա]միրխավարին, որն երկտասարդ հասակից Ալեքսանդրե արքայազնի մոտ էր գտնվում, Պարսկաստանից դավաճանեց Ալեքսանդրե արքայազնին ու Ցիցիանովի մոտ փախավ Երևան, հաղորդելով զվառանքի ու զաննի բոլոր գործերի մասին, որի պատճառով [Ցիցիանովը] շատ սիրեց ու պատվեց նրան: Եվ սրան հանձնեց [Ցիցիանովը] Ղարաբաղի գործ[եր]ն ևս, որի կապակցությամբ Իբրահիմ-խանին մեղադրեցին նենգամտության մեջ, և մի գիշեր Իբրահիմ-խանի վրա հարձակում գործեցին [մայոր Դիմիտրի Տիխոնովիչ] Լիսանեիչն և [Նինիա Գորաշվիլին, որին] Թավրերա [էին կոչում]: Երբ Իբրահիմը կանգ էր առել Ասկարանի մի այգում, սպանեցին նրան, զավթեցին նրա ամբողջ գույքը և նրա ավարով (տավար[ոչխարով]) խիստ հարստացան:

66. 1806 թվին Ցիցիանովը գնաց Շաքի-Շիրվանը նվաճելու... Ապա գնաց Բագվի վրա: Այստեղ Բագվի խանը՝ [Հ]ուսեյն զուլին դավաճանություն սարքեց, որպեսզի սպանի Ցիցիանովին: Լսելով այս՝ այնտեղ ապրող հայերից մեկը հաղորդեց սրտ մասին Ցիցիանովին, որը [սակայն] իր հպարտ լինելու և անհեռատեսության շնորհիվ հավատ չընծայեց այն հային, բանտարկել տվեց և անողոք պատժեց նրան:...

67. 1806 թվին... Ախալքալաքում գտնվող կոմս Գուդովիչին (Ղուդովիչին)<sup>24</sup> լուր հասավ, որ Ա[ր]զրումի սարսափար [Հ]ուսեյնն ութսուն հազար զորքով գալիս է: Լսելով այս՝ կոմս Գուդովիչը թողեց Ախալքալաքի պաշարումը և գնաց դեմ առ դեմ նրա հետ պատերազմելու: Հասնելով Արփաչայ գետի [ափը]՝ հանդիպեց սարսափարին: Տեղի ունեցավ մեծ պատերազմ հունիսի 18-ին: Օսմանները պարտվեցին և փախան ուսաներից: Թուսներին մնաց օսմանցոց զինանոցը (թոփխանան) ու նրանց բանակ[ատեղը]:...

73. 1808 թվի հոկտեմբերի 5-ին կոմս Գուդովիչը գնաց՝ Երևանը նվաճելու: Հասնելով այնտեղ, նա վերցրեց Քանաքեռը ու կանգ առավ այնտեղ: Այդ ժամանակ Երևանի բերդը զաննի տարգարի կողմից ամրացրած էր. իր առաջին գալստյան մի-

Չոցին զսենն Երևանի Մահմադ-խանին ընտանիքով Թե[հ]րան էր կանչել իր մոտ ու չէր թողել Երևանում, քանի որ Մահմադ-խանն երկերեսանի էր և անհաստատ: Այս պատճառով զանքը՝ հավատ չընծայելով նրան՝ [Երևանի] թերզը մտցրեց իր պահապաններին ու Երևանի կառավարիչ նշանակեց տեղական իր սարգարին: Լսելով այս՝ Աբաս-միրզան, զսենն Բաքախանի որդին, Թավրիզից շարժվեց իր զորքով և իր նոր կանոնավոր զորաբաժնով և հրետանիով (արտիլերիայով), որոնց այդ պահին [դեկավարում] էին նապոլեոն կայսեր կողմից ուղարկված ֆրանսիացիները, որոնք [եկել էին] զվրաշներին կանոնավոր [զորք պահելու արհեստը] սովորեցնելու նպատակով, քանի որ զանի և ֆրանսիացիների միջև բարեկամություն էր հաստատվել... Աբաս-միրզան՝ հասնելով Նախիջևան՝ կանգ առավ այնտեղ, որպեսզի Երևանին օգնություն հասցնի: Լսելով այս՝ կոմս Գուգովիչն երկու [զորա]դուռնդ ուղարկեց, ... որոնք՝ հասնելով Նախիջևան՝ պատերազմ սկսեցին Աբաս-միրզայի հետ. տեղի ունեցավ մեծ ճակատամարտ, բայց ոչ մի կողմը չհաղթեց, քանի որ զվրաշները, որոնք նոր էին սովորել ֆրանսիացիներից [զինվորական գործը], լավ էին կռվում... Իսկ Գուգովիչի փոխարեն նրա Երևանում գտնվելու միջոցին, ուսաց արքունիքի կողմից նշանակվել էր գեներալ անչեֆ Ալեքսանդր Պետրովիչ Տորմասովը<sup>25</sup>, որն ուղևորվեց Երևան: Լսելով այս՝ կոմս Գուգովիչը վշտացած հեռացավ Երևանից, քանի որ այն պահին գրոհ էր տվել բերդին ու չէր տեսնում [հետևանքը], Երևանից քաշվեց ու վերադարձավ [Տիֆլիս]: Բերդապահները՝ տեսնելով այս՝ հարձակվեցին ուս զինվորների վրա և մի բառալիտն կոտորեցին ամբողջապես: Լսելով այս՝ Աբաս-միրզան դուրս եկավ Նախիջևանից, հետամուտ եղավ ուսներին ու շատ ֆլաս հասցրեց նրանց: Այդ պահին կոմս Գուգովիչն անցավ Ապարանի ձյունապատ լեռը, քանի որ գեկտեմբեր ամիսն էր, և շատ ուսներ ու վրացիներ կոտորվեցին սառնամանիքից և ձյունից, քանի որ այս լեռը շատ դաժան է ձմեռային սառնամանիքին: Այդ պահին հասնելով Երևան՝ Աբաս-միրզան վերատին խիստ ամբացրեց այն, զորքը շատացրեց ու ձմեռեց այնտեղ...

75. 1810 թվին Իմերեթի թագավոր Սոլոմոնը կրկին աշխատում էր ընդդիմադրել ուսներին և հրավիրում էր Ա[ր]զըրումի սարսափյարին [օգնություն]... Այդ ժամանակ Տորմասովը գնացել էր Արագի (Արեզի) ափը, ուր եկել էր զանի գեսպան

Միրզա-Բուզուրգը, որպեսզի փոխադարձ դաշինք [կնքեն] և իսաղաղություն հաստատեն, որոշելով Վրաստանի և Պարսկաստանի միջասանմանը... Տիֆլիսի նահանգապետն էր Ախվերդովը... Տորմասովը Արագի (Արեզի) ափին էր, և սպասում էր հաշտություն կնքելու զվրաշների հետ... Տիֆլիսում նահանգապետի կարգադրությամբ կալանավորեցին սստիկանապետ, այսինքն նացվալ Գավրիթ Գոստաշարաշվիլուն և բոլորովին անմեղ տասնապետներ (գեսպանիկներ) Պենտելաշվիլի Մաքսիմե Իոանեի որդուն<sup>26</sup>, Գոգիա Իմերցուն և գորեցի հայ Իոանեին: Այս չորսին հրացանով գնդակահարեցին Տիֆլիսում, [չ]ավարարի ջրափին, և թողված են [սրանք] [չ]ավարարումն իսկ՝ մեղիքի ժամի<sup>27</sup> հայնկույս գտնվող դաշտում, որոնց գերեզման[ներ]ի վրա ծագեց ի վերուստ իջնող լույս, և նրանք սրբոց շարքը դասվեցին...

77. ... 1810 թվին... զանի որդի Աբաս-միրզան շարժվեց Գարթլիի վրա: Փամբակ դալուն պես՝ նրան հասավ զանի հրամանը, որպեսզի Թավրիզ վերադառնա: Ես գնալիս Աբաս-միրզան մտավ Երևան ու կանգ առավ Գավալու (Գեվալու) կոչված վայրում, որն ինն մղոնով (աղաջով) է նրանից հեռու գտնվում... Վրացի իշխան Կիկոլա Բարաթովը, ազնվական Պետրե Լարաձեն, Լալան, Լոռեցի ազնվական Լեոնը և այլն ուղևորվեցին դեպի Ալագ[յ]աղի սարը և անցան այդ սարն ու հասան Շորապ[յ]ալ՝ ուսներին մոտ: Լսելով այս, Աբաս-միրզան հետամուտ եղավ նրանց, սակայն չհասավ:

84. 1810 թվին... Մարկիզ Պաուլիչից<sup>28</sup> պարաված սարգար [չ]ուսեյն-խանը հասավ Երևան: Այս հաղթանակն եղավ սեպտեմբերի 5-ին...

96. 1812 թվին ... Կախեթում սպասամբություն կազմակերպեցին և զիմեցին էրեկլե թագավորի որդի Ալեքսանդրեին, որն այն պահին Երևանումն էր գտնվում [օգնություն խնդրելով], և սկսեցին ամբանալ<sup>29</sup>: Լսելով այս՝ Վրաստանի կառավարչապետ Ռախիշվիլը<sup>30</sup> գրեց Ղարաբաղում կանգնած գեներալ-մայոր Կոտլյարևիսկուն (Կիտլերեվիցի), որպեսզի նա իր գորագնդով գնա և հարձակվի Աբաս-միրզայի վրա Արագի (Արեզի) [ափին] և պատերազմի նրա հետ... Գնալով Ղարաբաղից՝ գեներալ Կոտլյարևիսկին (Կիտլերեվիցի) Արագ (Արես) գետով անցավ և մի գիշեր, հոկտեմբերի 20-ին, հարձակվեց զվրաշների վրա Ասլանդուզ կոչված վայրում: Տեսնելով այս՝ զվրաշները փախուստի դիմեցին...

101. 1813 թվի դեկտեմբերի 18-ին Պարսկաստանի դահն Բարսխանը դաշինք կնքեց Ալեքսանդր Պավլովիչ կայսեր հետ<sup>31</sup>, և որոշեցին Վրաստանի սահմանն այսպես. Ռուսաստանին անցած զվրաշական խանութները (խանական երկրները). 1. Ղարաբաղի՝ մինչև Արագ (Արեգ), 2. Գյանջայի, 3. Շաքիի և ամբողջ Շիրվանի, 4. Դաղստանի, 5. Բաքվի, 6. Ղուբայի, Թալիշի, և 7. ամբողջ Դաղստանի... Իսկ դահնին մնաց Երևանն ու ներքին Պարսկաստանը Խուզարիներից հայնկույս...

115. 1817 թվին... Գիորգի քահանա Շավ-մելիքիշվիլին<sup>32</sup>, որը վաստակավոր մարդ էր, Մոսկվայում էր գտնվում:

1824 թվին հայերը կորցրին սուրբ Զատիկը և լիալուսնի պատճառով սխալվեցին<sup>33</sup>, Այսպես պատմեց ինձ տեր-Գեորգ քահանա Թելիթեցին, որն այժմ Պետերբուրգում է գտնվում, և հմուտ է ինչպես հայերենում, նույնպես և վրացերենում: 80 տարին մեկ անգամ այսպես հայերը Զատիկ հաշվում սխալվում են:

**ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 1 Թեյմուրազ II, Գարթլիի թագավոր՝ 1744—1762 թթ.:
- 2 Էրեկլե II, Կախեթի թագավոր, 1744—1762 թթ., Գարթլի-Կախեթի թագավոր՝ 1762—1798 թթ.:
- 3 Նույն Սադիբը կամ Բերդուշը, որը շփոթում են Գերգի հետ. հմտ. «Վրաց աղբյուրների» II հատորը, էջ 63—64:
- 4 Գիորգի XII, Վրաց վերջին թագավորը, 1798—1800 թթ.:
- 5 Ըստ «Վրաստանին կից երկրների նկարագրության» դույզ խմբագրությունների՝ 1769 և 1784 թթ., Դաղստանն ի վիճակի էր դուրս հանելու 22.000 զորք (հմտ. Л. Мелниксет-Беков, «Описание сопредельных с Грузией стран» второй половины XVIII века,—Труды Тбил. Гос. Унив.», т. XVIII, 1940, стр. 122, 134).
- 6 Այսինքն Ախտալային:
- 7 Ի նկատի ունի Թմոզվի (Թմկարերգի)—Վարձիայի դիմացը, Կուր գետի աջ ափին գտնվող «Վանիս-քվարի»-ն, Գոգաշին գյուղից ցած:
- 8 Աղա-Մահմադ-խան, Գարսից շահ, 1794—1797 թթ.:
- 9 Հմտ. Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, Թ., 1882, էջ XXXIX (ըստ ցանկի):
- 10 Որը հայտնի էր հայոց ուխտատեղիով (հմտ. Լ. Մելիքսեթ-Քեկ, Հայկական հնությունները Թբիլիսիի մոտիկ շրջակայքում. Շաքարադ-Թելիթ-Մավկիսի, վրացերեն, «Վրաստանի պետ. թանգարանի Տեղեկագիր», I, Թբ., 1922, էջ 90—92):
- 11 Տփղիսի ավերման վերաբերյալ հայ գրականության տեսությունը, տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, Անանուն հայ պատմիչի նորագյուտ երկը

- Թբիլիսիի 1795 թ. ավերման մասին,—«ՄՄՄՄ Գիտ. Ակադ. Հայկական ֆիլիալի Տեղեկագիր», 1941 թ., № 3—4, էջ 45—53:
- 12 Ոմանք 1797-ի փոխարեն 1796-ն են դնում:
- 13 Ֆատհ-Ալի, Գարսից շահ, 1797—1834 թթ.:
- 14 Հմտ. այս աշխատության ծՔ. գլուխը, 15-րդ ծանոթ. (էջ 210):
- 15 Խոսքը Ալեքսանդր I կայսեր մասին է:
- 16 Հմտ. Полное собрание законов Российской империи, I-е т. XXVI, №№ 20.007—20.009.
- 17 Գեո. Գ. Գ. Տիցիանովը (Տիցիշվիլին), Վրաստանի կառավարիչ, 1802—1806 թթ.:
- 18 Ղուկաս, ամենայն հայոց կաթողիկոս, 1780—1799 թթ.:
- 19 Հմտ. այս աշխատության Գ գլխի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. (էջ 88) և այլուր:
- 20 Հոգևեփ արքեպիսկոպոս Արզուբյանի մասին տե՛ս այս աշխատության ՃԸ գլխի 4-րդ ծանոթությունը (էջ 196) և Ի գլխի 9-րդ ծանոթ. (էջ 209—210):
- 21 Հմտ. այս աշխատության ծՔ գլուխը (էջ 203—204):
- 22 Դավիթ-Դանիելյան վեճի մասին տե՛ս այս աշխատության Ի գլխի 10-րդ ծանոթ. (էջ 210):
- 23 Եփրեմ, ամենայն հայոց կաթողիկոս, 1809—1830 թթ.:
- 24 Գեո. Ի. Վ. Գուգովիչը Վրաստանի կառավարիչ 1806—1809 թթ.:
- 25 Գեո. Ա. Գ. Տորմասովը, Վրաստանի կառավարիչ, 1809—1811 թթ.:
- 26 Իսահ Գենտելաշվիլու մասին այս աշխատության Թ գլուխը (էջ 146):
- 27 Խոջիվանքի մասին է խոսքը:
- 28 Մարկիզ Ֆ. Օ. Գաուլուշին Վրաստանի կառավարիչ 1811—1812 թթ.:
- 29 Կախեթի ապստամբության մասին տե՛ս Ալեքսանդր Փրոնելի (=Ալեքսանդր Ղիֆշիձե), Կախեթի ապստամբությունը (1812-թիվ) պատմական եղելություն, վրացերեն, Թ. 1907. Ար. Կիկվիձե, Գյուղացիական ապստամբությունները Կախեթում 1812 թ., վրացերեն, Թ. 1941: Օ. Ս. Մարկովա, Восстание в Кахетии 1812 г., Москва, 1951.
- 30 Գեո. Ն. Ֆ. Ռտիշեվը Վրաստանի կառավարիչ, 1812—1816 թթ.:
- 31 Խոսքը Գյուլստանի դաշնագրի մասին է:
- 32 Վրաց պալատական եկեղեցու քահանա (դրան երեց), որը Դավիթ Էնազեթցու օրոք այցելել էր Էջմիածինը (տե՛ս էջ 259):
- 33 Խոսքը Մոսկվայի մասին է:



ԻԿ

### ԻՈԱՆՆ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐՔԱՅԱԶՆ

«ԿԱԼՄԱՍՈՐԱ» (1800—1828)

Իոանն Բագրատիոն արքայազնը Վրաց վերջին թագավոր Գիորգի XII (XIII)-ի որդին էր: Ծնվել է 1772 թ., կրթությունը ստացել է Թելավի սեմինարիայում, 1795 թ. մասնակցել է Աղա-Մահմադ-խանի դեմ մղած պայքարում: 1801 թ. Քարթլ-Կախեթի Ռուսաստանին միացնելուց հետո անցնում է Ռուսաստան, բնակություն հաստատելով Պետերբուրգում, ուր և զբաղվում է զբոսայգի-գիտական գործունեությամբ, որտեղ և վախճանվում է 1839 թ.: Նրա թողած հարուստ գրադարանն ու ձեռագրերի հավաքածուն անցնում է Պետերբուրգի հանրային, այժմ Մալտիկով-Շչեգրինի անվան գրադարանին, коллекция Царевича Иоанна նոմենկլատուրայով:

Իոանն արքայազնը հեղինակ է «Կալմասորա» կոչված մեծ երկի, ուսուցիչների քառարանի, «Սեյլանիանի» վեպի և այլն: Բայց նրա գլուխ գործոցը «Կալմասորա»-ն է:

«Կալմասորա»-ն 3 հատորից բաղկացած սովոր աշխատություն է, որը հուշերի և ուղեգրություն-զրույցների (գիալոգ-ների) բնույթ է կրում՝ պատմական, աշխարհագրական, գրական-նազիտական, աստվածաբանական, մանկավարժական, փիլիսոփայական, բնագիտական և այլն բովանդակությամբ, որը և մի տեսակ հանրագիտարան-շտեմարանի նման է: Վերնագիրը՝ «Կալմասորա», որն, անկասկած, հայկական ծագում ունի (հմմտ. Հր. Աճ ա յ ա ն, Հայերեն արամտական բառարան, III, 858. Սաքա Օրբելիանի, Բառարան, 160), բաղկացած լինելով «կալ» և «մաս» արմատներից (այստեղից՝ «կալ+մաս-որա=կալմասունք»), նշանակում է հավատացյալներից ցորեն և դինի հավաքել՝ հոգուս վանքի: Եվ իբրև «հավաքող» դուրս է բերված Քարթլիի Քվարթախեի (Քվաթախեի) վանքի կուսակրոն կիսատարկավազ (իսոգիակոն) Իոնա Խելաշվիլին, որը Իոանն արքայազնի դասընկերն

է եղել Թելավի սեմինարիայից, և որին հեղինակը ման է անում այլևայլ տեղեր՝ սկսած Քարթլիից, Կախեթ, Սոմխիթ, նույնիսկ Հայաստան՝ հասկապես էջմիածին: Տեղ-տեղ գրված քում հանդես են գալիս և ուրիշ անձինք, օրինակ՝ նույն վանքի վանահայր Դոսիթեոս Փիցխելաուրին, Զուրաբ Ղամբարաշվիլին, որ գորեցի հայ էր, վրացադավանություն անցած, և այլն: Աշխատությունը սկզբից մինչև վերջը հիմնականում դիալոգի ձևով է գրված 1800—1828 թթ. միջոցին:

Հայաստանին և հայերին վերաբերյալ նյութը «Կալմասորա»-ում («Կալմասունք»-ում) ցրված է այս ու այն տեղ, ուր իբրև զրուցակիցներ հանդես են գալիս հայ տերտերը, հայ վարդապետը, նույնիսկ Սայաթ-Նովան՝ Հաղբատի վանքում, ամենայն հայոց կաթողիկոսը (Դավիթ Ղորղանյան էնադեթցին)՝ էջմիածնում, Սողոմոն Արղությանը՝ Սանահնում, Ալեքսանդրե արքայազնը՝ Բորչալուում և շատ ուրիշները:

«Կալմասորա»-ն ամբողջությամբ ցարդ հրատարակված չէ, այլ հրատարակի վրա է միմիայն առաջին և երկրորդ հատորները, և երրորդ հատորից լսի պատասխիկներ:

Առաջին հատորը այլևայլ խմբագրությամբ (ըստ տարբեր ձեռագրերի և տարբեր մտեցումով և մշակմամբ) հրատարակվել է առնվազն 3 կամ 4 անգամ (միշտ կրճատումներով). ա. Ժուռնալ «Յիսկարի»-ում (Թբ.) 1862 և 1867 թթ., բ. Դ. Զ. Բ ա ք Ր ա ձ ե ի առաջաբանով ու Զ. Ճ ի ճ ի ն ա ձ ե ի հրատարակությամբ Թբիլիսիում 1896 թ., գ. պրոֆ. Գ. Ա. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ու վերապատումով ու Թբիլիսիի Հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատարակությամբ (ապակետիպ), Թբ., 1933, և դ. պրոֆ. Կ. Կ ե կ ե լ ի ձ ե ի ու Ա. Բ ա Ր ա մ ի ձ ե ի խմբագրությամբ Թբիլիսիում 1936 թ.: Այս՝ վերջին հրատարակության հիման վրա է կատարված ուսերեն թարգմանությունը (զգալի հապավումներով հենց մեկ հետաքրքրող տեղերում), որ հրատարակվել է հետևյալ վերնագրով. Царевич Иоанн. Калмасоба или хождение по сбору Иоанна Хелашвили, иподиакона, родом из деревни Вакира в Кизике, принявшего монашество в Квабтахевском монастыре при настоятеле Досифее Пидхеллаури. Перевод с грузинского, введение и комментарии В ар ла ма Дон ду а, Тбилиси, 1945.

Երկրորդ հատորը հրատարակված է պրոֆ. Կ. Կ ե կ ե լ ի

ձեռն և Ա. Բարամի ձեռն խմբագրութեամբ, Թբիլիսիում 1948 թվին:

Անկախ այդ հրատարակութիւններից, առաջին հատորից մի հատված, ուր նկարագրած է Իոնա Խելաշվիլու հանդիպումը Սայաթ-Նովայի հետ—Հաղթատի վանքում, հրատարակել է Գ. Լեոնի ձեռն իր գրքում՝ «Բանաստեղծ Սաթնավան», վրացերեն, Թբ., 1930, էջ 28—31: Նույն հատվածի նշանակալից հապավումները և մի այլ հատված, ուր նկարագրած է Իոնա Խելաշվիլու այցելութիւնն էջմիածին, հրատարակված է մեր հոդվածում՝ Լ. Մելիքսեթ-Քեկ, Իոնա Խելաշվիլին Հայաստանում և Սայաթ-Նովան, վրացերեն,—«Վրաստանի պետ. թանգարանի Տեղեկագիր», IX—B, Թբ., 1936, էջ 128—129, 132—135:

Ինչպէրաբերում է այն նյութին, ուր Հայաստանն և հայերն են հիշվում, դասուկա է մյուս հատորներում, որոնցից ցարդ հրատարակված են. ա. հայ-վրացական դավանաբանական վեճը Գիորգի Հաշայի օրոք և Դանիել ասորոց վարդապետի մասնակցութիւնն այդ վեճում՝ Կ. Կեկելի ձեռն, Հաշա Գիորգիի պատմութեան նորագյուտ գրական աղբյուրներ, վրացերեն,—«Թբ. պետ. համալսարանի Աշխատութիւններ», XVI, 1940, էջ 98—100, բ. Տփղիսի մելիք Դարչի Բեհրութովի զրույցը Իոնայի հետ՝ Ս. Կակաբաձե, Կալմասորան Արևմտյան Վրաստանի մասին, վրացերեն,—«Պատմութեան ժողովածու», IV, 1929, էջ 37—39: գ. Հայ գիտնականները Վրաստանում՝ է. Թաղայշվիլի, «Վաղեմի Վրաստան», վրացերեն, I, Թբ., 1909, էջ 45—46 (ուր այդ հատվածի հեղինակ սխալմամբ Թեյմուրազ արքայազն է հայտարարված):

Ստորև՝ «Կալմասորա» — «Կալմասունք»-ից քաղված հատվածների թարգմանութիւնները մենք տալիս ենք համաձայն Կ. Կեկելի ձեռն և Ա. Բարամի ձեռն 1936 և 1948 թթ. հրատարակութիւնների, պակասները լրացնելով մեր, Գ. Լեոնի-ձեռն, Կ. Կեկելի ձեռն, Ս. Կակաբաձեի և է. Թաղայշվիլու այլ հրատարակութիւններից:

I

[ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ]

ՋՐՈՒՅՑ ԲՈՐՉԱԼՈՒՌԻՄ

Ալեքսանդրե [արքայազն].—Այլևայլ ազգերը, կարծեմ, այլևայլ կերպ են խաղում:

Իոնան. Անկասկած: Ասիայում բոլորովին այլ կերպ է... իսկ հայերն ավելի մեղ (վրացիներին) նման են խաղում: Օրինակ՝ երբ արքայազուհիների հարսանիքին կամ մեծ խնճուղների հավաքվում էին հայերը, [առանձնապես] համքարների (ասնաֆների) գասից, մարմնից փայտ էին կապում ու չթով ծածկում, գլուխ ու վիզը ձիու նման փայտից շինում և որևէ բանով փաթաթում ու վրայից փոքր զանգակներ կախում: Եվ այսպես էին պարում շատերը: Եվ շատ գեղեցիկ էին շարժում ոտները. և նրանց տեսքն այնպիսի էր, կարծես թե ձիու վրա էին նստած: Եվ սա հնուց՝ կոսպաշտութեան ժամանակից էր մնացել հայոց մեջ: Նույնպես՝ ուղտեր էին շինում կարպետներից և երկու մարդ կանգնեցնում ցածը. ուղտի էր նմանվում. և սրանք ևս դուռնա-բախր նվազելով հրաշալի կերպով պարում էին և փախչելիս ուղտերին նմանվում: Այսպես համապատասխան դեպքերում և բարեկենդանի շարժին էին խաղում<sup>2</sup>...

II

[ԻՈՆԱ ԽԵԼԱՇՎԻԼԻՆ ԲՈՐՉԱԼՈՒ-ՍՈՄԵԻԹ-ՓԱՄԲԱԿՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀԵՏ ՀԱՂՊԱՏՈՒՄ]

... Հեծան ձիաները, և Զուրաբն ու Իոնան ուղեորվեցին [Տփղիսից] դեպի Սոմխիթ: Հենց որ Սեյդաբադի այգիներն անցան, հանդիպեցին մի ձիավորի, որը Իոնայի վաղեմի ծանոթ Յարալ Շանշիաշվիլին էր և որը] հարցրեց. «Ո՞ւր եք մտադիր ճանապարհորդելու»: Իոնան. «Դեպի Սոմխիթ և նրա շրջակա վայրերը»:

Յարալը.— Իրոք որ լավ ժամանակ եք գտել զրոսնելու, Դավիթ արքայազնը այս երկու-երեք օրում Բորչալու է գնալու, Ալեքսանդրե արքայազնը՝ Շուլավեր, Փառնասոզ արքայազնը՝ Դեմուրչասալա:

[Մարաբդայում զեկուցեցին, որ] «այստեղ իջել է Գլարթախելի վանականը, որը Սոմխիթ է գնում...»:

[Ապա] Իոնան պատրաստվեց գնալու դեպի Բորչալու: Ձիաները հեծան և ուղևորվեցին դեպի Բորչալու ու մոտեցան Դեբեդ գետին, որը Բորչալուի միջոցն է անցնում. և դիտեցին այնտեղի դիրքն ու բերրը: Իոնան այն շատ հավանեց:... Դիտեցին բերրը... և ապա հարցրին. «Այստեղ կամ արդյոք մեկը՝ հայ կամ վրացի», և պատասխանեցին. «Այդտեղ առջևը փոքր գյուղ կա. դա զարաչիների (ղուրհիների) գյուղն է...»:

Մրանք [կրկին] ձի հեծան և ուղևորվեցին դեպի Ախտալա<sup>4</sup>. Դանդաղ շարժվելով ու հանգստանալով՝ երեկոյան պահին հասան Ախտալա. իջան, և Իոնան մարդ ուղարկեց Ախտալայի եպիսկոպոսի մոտ՝ գիշերելու համար իջևան խնդրելով: Նա (եպիսկոպոսն) իսկույն և եթ հատկացրեց իջևանի տեղ ու ընթրիքի իրեն մոտ հրավիրեց: Իոնան մի քիչ հանգստացավ և նշանակված ժամին գնաց երիցապետի (արքեպեպի) մոտ: Իոնան հենց որ եկավ երիցապետի մոտ, խոնարհարար համբուրեց [նրա աջը]: Նա ևս ողջունեց, հրամայեց նստել ու հարցուփորձ արավ ճանապարհորդության հանգամանքների մասին: Իոնան ամեն ինչ պատկերեց, և նրանք այլևայլ հարցերի շուրջը զրուցեցին, և ապա խոսք ընկավ հանքերի (մադանի) և մետաղների մասին: Ապա Իոնան ասաց. «Այս սարուձորը մետաղների մայր պիտի կոչել, քանի որ ամեն ինչով զարգարված է»:

Երիցապետը.— Իսկապես որ այդ անվան արժանի է. և ունիս արդյոք որևէ տեղեկություն հանքերի ու մետաղների մասին:

Իոնան.— Սակավ ինչ:

Երիցապետը.— Հապա, մինչև որ ընթրիքը պատրաստվի, որևէ բան ասենք մետաղների մասին:

Իոնան.— Ելիցի կամք Ձեր:...

Մյուս օրը երիցապետն իրեն մոտ կանչեց Իոնային, նվերներ տվեց ու մի նամակ էլ Միսխանայի հանքագործների պետի մոտ, որպեսզի սա հույների շրջանում նվիրատվությունների հավաքելուն օժանդակելու: Եվ այսպես, շնորհապարտ Իոնային ճանապարհ գցեց դեպի Միսխանա: Իոնան՝ հասնելով այնտեղ՝ լավ ընդունելություն գտավ հանքագործների պետի մոտ, որը բնակարան տվեց հանգստանալու. և ապա ցույց տվեց պղնձի և արծաթի ձուլումը: Այս արհեստը Իոնան շատ հավանեց: Ապա [միասին] ճաշեցին և մի քանի բաթման պղինձ նվիրեցին նրան:

Իոնան շնորհակալությամբ հրաժեշտ տվեց և շարունակեց ճանապարհը՝ դեպի Սանահին:

Հասնելով Սանահին՝ Իոնան հարցրեց Արղութաշվիլիների այնտեղ լինելու մասին: Պատասխանեցին, որ այնտեղ գտնվում է Սուլոմոնը: Չուրաբը գնաց, ողջունեց ու իջևանելու տեղ խընդրեց: Նա (Սուլոմոնը) իսկույն և եթ բնակարան հատկացրեց ու Իոնային իրեն մոտ ընթրիքի հրավիրեց: Ընթրիքի պահին Իոնան Սուլոմոնի մոտ գնաց: Հասնելով այնտեղ, Իոնան դիմեց. «Պաշտօնը Ձեզ, Մխարգրձել: Նա ևս շնորհավորեց, ողջունեց, հարցուփորձ արավ ճանապարհորդության հանգամանքների մասին: Իոնան ամեն ինչ ասաց և ապա ընթրիքի նստեցին: Վայելելով անուշ գինին՝ Սուլոմոնը վերցրեց գավաթը և տվեց Իոնային ու ինքն էլ ուրիշ գավաթ վերցրեց, լցրեց դինով և ասաց Իոնային. այս գինով հասարակության կենացը պիտի խմենք:

Իոնան.— Կարգն այսպես է, որ նախ՝ ովքեր մեր տերերն են, նրանց կենացը պիտի խմենք և ապա հասարակության:

Սուլոմոնը.— Այժմ մենք ենք մեր գլխի տերերը:

Իոնան.— Բոլորս տիրում ենք մեր գլխին, սա բնական է:

Սուլոմոնը.— Ոչ, հասարակությանն ևս մենք պետք է տերություն անենք:

Իոնան.— Ո՞վքեր են ձեր ընկերներն ու օգնականները:

Սուլոմոնը.— Սարդարը, մեղիքը, ամիլախվարին, էրիսթավը, թարխանը, էշկաաղաշին, սախլթխուցեօր և ես՝ Մխարգրձելը, իսկ հոգևորականներից՝ [վարդապետը], Թրիլելին և արքիմանդրիտը:

Իոնան.— Չունա-նաղարայից գատ՝ ձեզ էլ ոչինչ չի պակասում:

Սուլոմոնը.— Վիրավորում եմ այդ խոսքով արդյոք:

Իոնան.— Ո՛չ:

Սուլոմոնը.— Հապա ինչպես ես դատում:

Իոնան.— Մի օր այլևս տերեր չեն լինի և ոչ էլ դուք կլինեք:

Սուլոմոնը.— Շատ տեղ ուսուցանելի կա է:

Իոնան.— Ոչ ձեր խելքի տեր մարդիկ:

Սուլոմոնը.— Մենք սնխելք ենք:

Իոնան.— Աչքի հայացքից ոչ:

Սուլոմոնը.— Հետևապես, աչքումն ենք ունեցել խելքը:

Ի ո ն ա ն.— Դու խոստովանվիր. ուր էլ կարճիր կարա եք տեսնում, այն կողմն եք վաղում:

Ս ո լ ո մ ո ն.— Չգիտես, այսպիսի անձինք չի են իմաստու- թյամբ:

Ի ո ն ա ն.— Որձնք:

Ս ո լ ո մ ո ն ը.— Իսանեն, Կոստանտինեն, Գիորգին, Դարչին, Ալեքսանդրեն, Շանչեն, Սուլոմոնը, Արսենը, Օ[հ]անեսը, Էլեփ- թերը և ես:

Ի ո ն ա ն.— Անուններ լավ թվեցիր և խնդրում եմ հրամա- յք. Սալադ՝ բոյում և Բերուա նալբանդի խանութում սովորե- ցիք արդյոք այս իմաստութունը, թե՛ որևէ գոյրոցում ուսում- նասիրեցիր...

Ի ո ն ա ն.— Դուք այստեղի հանքերի մինրաշ եք և վերա- հսկող. գիտե՞ք արդյոք այս հանքերի արհեստը, կամ արծաթի հալումը, կամ արծաթից ոսկի հանելը, կամ այլ մետաղների երևան բերելը:

Ս ո լ ո մ ո ն ը.— Մաղանչի հո չեմ, որ գիտենամ:

Ի ո ն ա ն.— Վա՛յ իմ գլխին, դատարկ անուն ես ունեցի: Հուպա քնչ կիմանաս, եթե այդ ծառայողները արծաթ կամ ոսկի գողանան:

Ս ո լ ո մ ո ն ը.— Ինչ որ կտան, կտանձնեմ ու կգրանցեմ:

Ի ո ն ա ն.— Հապա երկրի կաստարելն էլ այս ձևով կսկսեք ու այդ խելքով երկիրը կշենացնեք:

Ս ո լ ո մ ո ն ը.— Ինչ որ իմ բնկերներն են անում, ես էլ նույնն եմ անում, և ավելի խելք ինձ ինչքն է պետք:

Ի ո ն ա ն.— Ձեր քեռին մախարբաշը, նադըր-շահի՞ վեժիր, եթե ձեզ տեսներ, ձեր խորհրդից չէր շեղվի:

Ս ո լ ո մ ո ն ը.— Նա խելոք էր:

Ի ո ն ա ն.— Իսկապես որ Պարսկաստանը, Թուրքստանը, Հնդկաստանը և ուրիշ տեղերը նա էր կառավարում. խելոք էր, թե ոչ, Բացի սրանից, հավատարմության մեջ դուք նրա նման չեք. որքան էր սիրում նա Վրաստանի թագավորներին և ինչ- պիսի օժանդակություն ջույց տվեց Թեյմուրազ թագավորին՝ և Էրեկլե թագավորին՝: Եվ սրա համար իբրև պարգև Արղու- թաշվիրին Մխարզթևություն ստացավ՝:

Ս ո լ ո մ ո ն ը.— Ես վաղուց էի Մխարզթևել. և ահա այս Սանահինն էլ սրանց իբրև դամբան ունիմ:

Ի ո ն ա ն.— Չվիրավորվեք, դուք Գյանջեցի եք, Թանից զամ Ղարաբաղից եկած, Գյանջայի հայ Արղութայի զավակներ, որը Չաքարիա Մխարզթևելի արտամուսնական զավակն էր, եկել եք [Վրաստան] Ռոստոմ թագավորի օրով՝: Իսկ երբ մախար- բաշը նադըր-շահի [վրա ազդելով]՝ զիջել տվեց Թեյմուրազ և Էրեկլե թագավորներին Քարթլին ու Կախեթը, իսկ Արղուլարե- կին հանեց տեղից, ապա [Էրեկլե] թագավորը ձեզ շնորհեց ադ- նըվականության աստիճան և այս դամբանն ու գյուղը, թեև հնում այս տեղն ու դամբանը Հայոց թագավորներինն էր, իսկ հետո Քամար թագուհու կողմից սա իբրև դամբան տրվեց Մխարզթևելներին՝ թագավորի սարգարծներին<sup>10</sup>, Եվ ի վերջո քո հորեղբայր Հովսեփ (Իսսեթ) վարդապետը Էրեկլե թագավորից [գիր] խնդրեց իր ազգատոհմի հաստատման մասին, և Էրեկլեն շնորհեց ձեզ այն, և նա հաստատել տվեց ձեզ այս թագավորի տված գրի ուժով՝ իբրև Մխարզթևության իշխանների՝ Ռու- սաստանի կայսր Պավել Գետրովիչի կողմից<sup>11</sup>, և գյուղն էլ այն- տեղ ձեռք բերեց:

Ս ո լ ո մ ո ն ը.— Ինչի իմ հորեղբայրն այդպես ողորմած էր՝ Էրեկլե թագավորը<sup>12</sup>,

Ի ո ն ա ն.— Ո՛չ միայն Հովսեփ (Իսսեթ) վարդապետը, այլև քո հորեղբայր Մովսեսը (Մոսեն) և քո հայր Բեժանը հավատար- մության և ծառայության շնորհիվ միշտ տեղ ունեին [Էրեկլե] թագավորի մոտ. և թե ինչպես Գիորգի թագավորը ողորմած է դեպի քեզ, բոլորը գիտեն այս: Եվ [գիտեն] ահա քո տան մար- գիին [եվս]՝ Միսեն և ուրիշները, որոնք աստիճանով և պատվով ձեզանից տարբեր են. սակայն երևում է, որ աղուհաց չգիտես, ինչպես ասված է՝ վրացին դեղնած կամ տեսքով գունաթափ, թուրքը սպիտակ-կարմիր և հայը թուխ (սև) գեմքով անվասա- հելի կլինի, և քո գեմքը դրսևորվում է հենց գործիդ հետ:

Ս ո լ ո մ ո ն ը.— Ի՞նչ անվասահելություն կլինի, եթե...

Ի ո ն ա ն.— Իա այն ժամանակ կլինի, եթե ազգատոհմը արու զավակ չի ունենա: Եվ այժմ քո հոգատարությամբ և խնա- միությամբ ոչոքի (ոչ մի ազդկա) այստեղ չեմ գտնի(?), ոչ Իսանեին թագավորություն, ... ոչ Շանչին՝ էրիսթավություն, ... ոչ Գիորգիին՝ ամիրախավարություն, ոչ Ալեքսանդրին՝ էշկա- ազատություն, ... ոչ Դարչին՝ քաղաքի մուրավություն, ոչ

<sup>10</sup> Այստեղ և ստորև բնագծումը մերն է. Լ. Մ.-Յ.

Սուրմոնին՝ Կղեկարիի էրիսթալություն, և ոչ էլ դուք կանեք Մխարզրձեղի պես սարգարություն, ոչ Քրիլելին կաթողիկոսություն, ոչ Օհանեսը հոգևոր տերություն (օրֆիլատերություն)<sup>33</sup> և ոչ էլեփթերը՝ Ալալիերդելություն, ուստի և խորհուրդ եմ տալիս ի գուր տեղը մոլեզին մի եղեք ձեզանով...

Եվ այսպես վերջացրին ընթրիքը:

Իոնան վեր կացավ, հրածեշտ տվեց Սուրմոնին: Սուրմոնը նվիրեց ճանապարհածախսի փող և մնաս բարով մաղթեց, ասելով, որ վաղ առավոտյան Մխխանա պիտի գնա: Եվ այդպիսով նրանք իրարից բաժանվեցին:

Այդ գիշերը Իոնան հանգստացավ: Հաջորդ օրը դիտեց տեղական կառուցվածքներն ու ամրոցները, խիստ հավանեց և ասաց. «Չարմանում եմ թագավորներից, թե ինչնու այստեղ ամրոցներ չեն կառուցել քաղաքների նման և ժողովուրդ չեն բնակեցրել: Այս հո բնությունից է ինքնին ստեղծված, որպես զորքի համար անանցանելի: Սակայն թվում է, որ նրանք սրա համար նախանձախնդիր օժանդակողներ (օգնականներ): չեն ունեցել, այլ եղել են իրենց սեփական անձի շահախնդիր»: Եվ անցավ նա դեպի Հաղբատ: Նույնն ևս դիտեց. և այնտեղի եկեղեցին և կառուցվածքներն ևս խիստ հավանեց: Այդ պահին ոմն հայ վանական հրավիրեց Իոնային իր խուցը, և սա հետևեց նրան: Հենց որ վարդապետը Իոնային հասցրեց իր խուցը, ողջունեց ու ճանապարհորդության հանգամանքների մասին հարցուփորձ արավ: Իոնան ամեն ինչ պատմեց, և ապա նստեցին, մի փոքր զրուցեցին և վարդապետը մատուցեց Իոնային նախաճաշիկ. և սկսեցին ուտել, և սրա հետ լավ գինի էլ մատուցեց Իոնային և ինքն էլ լավ կոնծեց: Ապա վարդապետը վեր բերեց սազը (չոնգուրը) և սկսեց նվագել, ապա սկսեց երգել՝ այսպես [ասելով]<sup>34</sup>.

Խեղճ իմ գըլուխ, ինչպես խաթի մեջ ընկար,  
Ողջ աշխարհում ծիծաղելի բան դարձար.  
Ուր էլ փախար, սայթաքեցիր՝ վայր ընկար,  
Վերջն էլ, հապտ, դու բեղովլաթ մարդ դարձար:

Ո՞ւմ մեղադրեմ, արդյոք ումնից այս եղավ,  
Այս բաներըն իմ խելքիցն է, որ եղավ:

Կարծես էի աշխարհումըս ես գոված,  
Գավաթի պես ոսկե տուփում ամփոփված.

Ի՞նչ պատահեց այս իմ գըլխին անիծված,  
Ինչ որ եղավ, ահամայից հո եղավ:

Ո՞ւմ մեղադրեմ, արդյոք ումնից այս եղավ,  
Այս բաներըն իմ խելքիցն է, որ եղավ:

Արքաներից մեջլիսներում հրավիրված,  
Իշխաններից պատված, հարգված, մեծարված.  
Ծիրանագույն կարա հագած, զըլպըլտված.  
Այժըմ անտ. քուրձը հագին սևացած:  
Այս վիճակըն առաջնորդից ինձ եղավ:

Ո՞ւմ մեղադրեմ, արդյոք ումնից այս եղավ,  
Այս բաներըն իմ խելքիցն է, որ եղավ:

Ես բրինձ էի, դարի լինելն ինչիս էր,  
Բաղե էի, ուրուր լինելն ինչիս էր.  
Աշխարհիկիս տերտերությունն ինչիս էր.  
Ինձ վարդապետ ձեռնադրվելըն ինչիս էր:  
Կարծեմ, որ իմ քամբախտ գըլխից այս եղավ:

Ո՞ւմ մեղադրեմ, արդյոք ումնից այս եղավ,  
Այս բաներըն իմ խելքիցն է, որ եղավ:

Իոնա [կիսա]սարկավազը տպշած նայում էր և ասաց. «Վան ողորմելին, ինչպես է ողբում աշխարհից հեռանալը». և ի վերջո ասաց. «Հայր [սուրբ], կուսակրոն (մոնոզոն) եք, դեպի ձախ չթեքվեք»:

Վարդապետը.— Երբ ես քո հասակումն էի, թե դեպի ձախ էի գլորվում և թե դեպի աջ:

Իոնան.— Վան իմ գլխին: Դրա համար եք ողբում:

Վարդապետը.— Սրա համար էլ եմ սղբում և քեզ համար էլ, որ երիտասարդ մարդ վանական ես դարձել:

Իոնան.— Ավելի լավ է, որ մարդն երիտասարդ հասակից ընտելանա լավին: Իու էլ որ երիտասարդ հասակից վանական դառնայիր, այժմ այսպիսի կսկիծի մեջ չէիր լինի:

Վարդապետը.— Եթե ինձ իմ առաջնորդը (վարդապետը) փրկեր, այն աշխարհականությունն այս կուսակրոնությունից դերադասելի էր:

Իոնան.— Հրամայեք, ով եք դուք:

Վարդապետը.— Ես խղճուկ Սաաթլաման<sup>15</sup> եմ, թե որ լսել եք:

Իոնան.— Այո, լսել եմ ձեր գովքը իբրև սազանդարի՝ քեֆերում. արդ հրամայեք, ինչպես պատահեց այս:

Սաաթլաման.— Ես լավ նվագում էի սազով (չոնգուրով) և, միաժամանակ, պարսկական ձայնի վերածեցի վրացական խաղերը: Այն դեռևս ընդունված չէր: Եվ երբ էրեկլե թագավորը խնճույք սարքեց և մեզ՝ նվագողներին՝ տարան նրա մոտ, այն ժամանակ ես պարսկական նվագը վրացերեն երգեցի: Արքան (բատոնը) շատ հավանեց և խալաթ պարգևեց ինձ: Ապա շատ ուրիշներն էլ [նույնպես] ասին և ինձ նմանվեցին: Ես ամեն տեղ ընդունված էի ոչ միայն երգով, կատակով ևս և նույնիսկ աշխարհիկ գործերում<sup>16</sup>, այնպես որ շատ բանով էի զբաղված: Ապա կուսակրոնություն ընդունեցի. և ահա այստեղ եմ, և այս կուսակրոնության միջոցին հորինած բանաստեղծությունս երգելով լսելի դարձրի ձեզ:

Իոնան.— Քանի որ աշխարհից հեռացաք, նվագելուց ու խաղերից ևս ձեռք պիտի վերցնեիք:

Սաաթլաման.— Իմ առաջնորդն (վարդապետն) էր, որ հրամայեց<sup>17</sup>, և ես այսպիսի պայման դրի, որ քանի որ այս սազը (չոնգուրը) այս լարերով է զարդարված և այն չի կտրվի, ձեռք չեմ վերցնի, այն պատճառով, որ երբ ինձ վարդապետ (վանական) ձեռնադրեցին, այս լարերը ծոցումս էին մնացել և սրանք ևս ինձ հետ օժվեցին (օրհնվեցին), և ահա այս օժված (օրհնված) լարերով է, որ նվագում եմ սազով (չոնգուրով):

Իոնան.— Եվ քանի որ ուխտդ պահել ես, ողորմություն կգտնես:

Եվ այսպիսի կատակով վերջացրին նախաճաշիկը:

Սաաթլաման.— Ինչ էլ որ լինի, կփրկվեմ, որովհետև այս մեր եկեղեցին քառասուն խորան (սեղան) ունի և եթե ոք մերոնցից վախճանվում է, քառասուն օր պատարագ են մատուցում ամեն տեղ. տասը պատարագ է մատուցվում քառասուն օրում: Եվ այսպես է ասված, որ ով քառասուն օրում կտա տաս պատարագ մատուցանելու իր ննջեցյալի համար, անպայման կփրկվի<sup>18</sup>, եթե վերջին օրը խոստովանվել ու ճաշակվել է:

Այս ժամի այսքան խորանները (սեղանները) Իոնային շատ ապշեցրին. կրկին դիտեց [բոլորը] և ասաց. «Իսկապես որ հին ճարտարապետները դժգոհելի են, որ այսքան լավ արհեստ են

մշակել ու կերտել, և սանդուխքներ շինել մի քարից և թաղերը լուսամուտներով դուրս բերել՝ հատակով հանդերձ: Այսպիսի կառուցվածք ես ոչ մի տեղ չեմ տեսել»: Եվ վերջապես հրաժեշտ տվեց Սաաթլամային և նորից դեպի Բորչալու ուղևորվեց:

Կեսօրին Սադախլո (Սադախլե) գյուղը հասան...

III

ԼԵՁՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ<sup>19</sup>

[Գալով Չուլարը՝ Ասլան Ղափլանիշվիլու մոտ, Իոնան զրուցում է Ասլանի հետ, ի միջի այլոց, լեզուների մասին].

Ասլանը.— Ո՞ր լեզուներն էին հնում ուրիշների համեմատությամբ ավելի ճոխ և տարածված ըստ գործածության:

Իոնան.— Հնարավոր է հաշվառման վերցնել ավելի քան չորս լեզուներ, այսինքն՝ հերրայերենը, արաբերենը, հունարենը և հոմեականը կամ լատիներենը և սրանց հետնորդները: Նմանապես հնագույն և ճոխ լեզուներն են ֆրանսերենը, իտալերենը, գերմաներենը (նեմեցուրի), սպանական (իշպանականը), պարսկականը, ջաղթալի լեզուն և ուսերեն-սլավականը, որոնց հետևում են հայերենն ու վրացերենը...

Ասլան.— Ո՞րքան նշանագիրներ կամ տառեր կան:

Իոնան.— Վրացերենում հաշվում են մինչ քառասուն տառ, արաբերենում՝ քսանեինը, հայերենում՝ նույնքան (sic), ուսերենում՝ երեսունևինգ, լատիներենում և այլ և՛լրոպական [լեզուներում]՝ քսան և չորս, հունաց, հնդկաց, հերրայեցոց, պարսից և թուրքաց (թաթարաց)՝ երեսունևերեք. իսկ չինացիների հաշիվ չկա...

Ասլան.— Ասիական կամ և՛վրոպական լեզուներից ո՞րն և ինչո՞վ է գոված:

Իոնան.— Ասիական լեզուների նշանակությունը այսպիսի է. արաբերենը՝ իմաստության և գիտության մեջ, պարսկերենը՝ զրույցի և փաղաքշակոն խոսքի մեջ, նույնիսկ բանաստեղծության մեջ էլ գոված է և լսողության համար անուշ (քաղցր), թուրքերենը (թաթարերենը)՝ մարտի կամ պատերազմի մեջ, վրացերենը՝ խնճույքի, զվարճության, կատակի և կերուխուսի ժամանակ, իսկ հայերենը՝ առևտրի մեջ (sic): Եվրո-

պական լեզուներից հելլենականը և լատիներենը՝ իմաստութեան և գիտութեան մեջ, ֆրանսերենը՝ զրույցի և փաղաքշական խոսքի մեջ, գերմաներենը (նեմեցուրի)՝ մարտի մեջ, իտալերենը՝ երգի և զվարճութեան մեջ, սպանականը (զիշպանիուրի)՝ անքաղաքավարի [վարմունքի] մեջ...

IV

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ<sup>20</sup>

Իոնան վերագարձով իր տուն: Ճանապարհին նա հանդիպեց քարտաշ տերտերին, որը մարմարե քար էր բերում [արդեն] տաշած: Տիրացուն շատ հավանեց այդ տերտերը հրավիրեց նրան իր մոտ և ասաց. «Քեզ ցույց կտամ արվեստս»: Տիրացուն ուղեկցեց նրան: Հենց որ տերտերի տունը հասան, հյուրասիրվեց նախաճաշիկով, և ապա դնացին տերտերի արվեստը դիտելու: Վանականը տեսավ մեծ թվով լավ տապանաքարեր՝ նրա ձեռքով տաշված և քանդակագործված տեսակ-տեսակ օրինակներով և վայելչատես հորինվածներով, և տիրացուն դիմեց նրան. «Տեր հայր, ինձ ասացին, որ հմուտ եք եղել քարտաշութեան և քանդակագործութեան արվեստին»:

Տերտերը.— Մեզանում եթե ոչ տափակ տաշած և ծաղկաձև թեթև դուրս կտրած տապանաքարերը, ուրիշ ոչնչին չեն նայում, և այս ուսումն ինձ համար անպետք մնաց:

Իոնան.— Իրավացի եք. բայց ռիտեղ սովորեցիք այս արվեստը:

Տերտերը.— Օսմանյան երկրում:

Իոնան.— Իսկապես, առաջ Հունաստանումն էր [զարգացած] այս արվեստը, իսկ հիմա չգիտեմ. արդյոք ինչպես հարկն էր, այնպես սովորեցրին, թե՛ ոչ:

Տերտերը.— Ո՛չ, հենց այնպես նայելով սովորեցի և օգնում էի, ում մոտ էլ դտնվում էի:

Իոնան.— Հապա, հիմնովին և լավ չեք յուրացրել քանդակագործութեան արվեստը:

Տերտերը.— Հրամայեք, թնչ է քանդակագործութեան արվեստը:

Իոնան.— Քանդակագործութեան արվեստը մեզ ուսուցանում է...

Տերտերը.— Այս արվեստը հնուց արդյոք հայտնի էր:

Իոնան.— Այս արվեստի հնությունը երևում է նրանով, որ Ռաքելը, Լաբանի դուստրը, իր հոր տնից բերեց կուռքերը...

Տերտերը.— Իսկ այժմ բազմատեսակ են շինում այդ թե՛ ոչ:

Իոնան.— Բազմատեսակ...

Տերտերը.— Որպիսի՞ քարեր են գործածվում տաշելու այս արվեստի համար:

Իոնան.— Այլևայլ տեսակի մարմարեղեն, սև քար...

Տերտերը.— Որպիսի՞ գործիքներ են պետք այսպիսի քարերը տաշելու համար...

Իոնան.— Պողպատից շինած այլևայլ տեսակ քլունգներ, բրիչներ...

Եվ այսպես ավարտվեց նրանց զրույցը:

Տիրացուն հրաժեշտ տվեց տերտերին և տուն վերագարձավ:

V

ԱՐՄԵՆԻԱՅԻ ԿԱՄ ՍԱՍՈՄԵՆԹՈՅԻ ՄԱՍԻՆ<sup>21</sup>

Գողերձն ասաց. «... Այժմ ուզում եմ հարցնել, ինչձեռն աշխարհագրութեան մեջ չհիշեցիր Մեծ Արմենիայի նկարագրությունը»: Վանականը ներողություն խնդրեց և ասաց. «Պատրը ինձ չհարցրեց և ես էլ այս պատճառով այլևս չհիշատակեցի»:

Գողերձը.— Ո՛ւր է դտնվում Արմենիան կամ Սասում-խեթոն»:

Իոնան.— Արմենիայի սահմանն է հյուսիսից Սաքարթվելոն, հարավից Իիարեքիլը, արևելքից Քյուրդստանը (Քուրթիստանի) և արևմտքից՝ Ալազուլիան (?), արևելյան պրովինցիան և Ասիայի Թյուրքիան կամ Տուրքիան: Արմենիայի երկարությունն է հազար հինգհարյուր վաթսուներեք և լայնությունը գրեթե նույնքան: Այս երկիրն ունի լավ օդ և լավ ապրելու տեղ է, սղջ և առողջ: Եփրատ գետը ոռոգում է երկրագործական աշխատանքների վայրերը, և ունի պտղաբեր տեղեր, խաղողի այգիներ, ապրշում, բամբակ և աղահանքեր. իսկ հացով այնքան էլ ապահովված չէ, քանի որ քիչ բերք է տալիս: Ունի նաև արծաթահանքեր: Հայերը կրոնով քրիստոնյաներ են, սակայն Դիոսկորոսի հետևորդներ, որին Քաղկեդոնի տիեզերական ժողովը նզովեց 451 թվին: Հայերը արտաքուստ գեղեցիկ են, թխահեր, սև աչք ու ունքերով, իսկ որոնք Վրաստանին կից

են ապրում, սպիտակ-կարմրագույն են: Սրանք համեստ նիստ-ուկաց ունին, մեծ հակում ունին դեպի առևտուրը և միաժամանակ խնայող-տնտեսներ (իկոնոմոսի) և տնային կարիքների գիտուններ, ուսման սիրահարներ և հեշտ ուսումնասիրում են այլևայլ լեզուներ և շատ լեզուներ էլ գիտեն: Հյուրասերներ են և օտարներին ընդունող, թշվառներին օգնող, սակայն մի փոքր նախանձոտ, գոռոզ... զինվորական գործերում միջին արիություն ունեցող, ոչ շատ քաջարիներ և ոչ էլ երկչոտներ: Առևտրական գործերով հեռավոր երկրներ գնացողներ, անխոնջ և համբերատարներ...

Արմենիան ընկած է [արևելյան] երկայնություն 56°-ից մինչև 60°, և [հյուսիսային] լայնություն 37°-ից մինչև 40°: Նրա հողերը բաժանված են Թյուրքիայի, Պարսկաստանի և Վրաստանի միջև. բայց կան և ազատ վայրեր, որոնք՝ լեռների և նեղ ճանապարհների շնորհիվ անմատչելի լինելով թշնամիների համար՝ միանգամայն ազատ են և անառիկ: Արդրումը՝ Արմենիայի առաջին քաղաքը, այժմ Թյուրքիային է պատկանում, Երևանը՝ Ասիական Արմենիայի աթոռ[անիսաը]՝ Պարսից տիրապետության ներքո է, թեև որպես Վրաստանի թագավորից գրավված, վերջինիս հարկ է վճարում: Բեթելը (sic), լավագույն քաղաքը, իշխանների տիրապետության ներքո է: Հայերի թիվը ամենուրեք, ինչպես այս ու այն տեղ ցրվածների, նույնպես էլ իրենց երկրում ապրողների, մոտ երեք միլիոն հոգի կլինի: Հնում հայոց թագավորները հողը էին և անվանի, մանավանդ Հունաց մեծն Կոնստանտին կայսեր օրոք: Թագավորության գերբը այսպիսի նշաններ ունեւր. Արարատ լեռը և վերևից Նոյան տապանը, միջում արևը, շուրջը առյուծներ և աղափին՝ ձիթենիի ճյուղը կտուցին: Սակայն այս գերբը մնաց հողևոր տիրոջ (օրքիվատերի), որն և վերապահեց այն էջմիածնի եկեղեցուն: Հին թագավորների եկամուտը մոտ հինգ միլիոն [թումանի] էր հասնում, իսկ այժմ հողևոր տերը (օրքիվատերը) ստանում է մոտ հիսուն թուման, նույնիսկ և ավելի, երբ տեղի ունի մեռնուօրհները:

Գողեր ձը.— Ի՞նչ է նշանակում հողևոր տերություն (օրքիվատերոբա):

Ի տ ն ա ն.— Ընդհանրական հայր, այսինքն հողվոց տեր, որն իսկապես այսպես է: Եվ սրան հնագանդ են բոլոր հայերը, որոնք և տալիս են նրան հասույթներ: Եվ սա է կարգադրություններ անում բոլոր երկրներում եղած հայերին, [սրա ձեռին է] հայ

եկեղեցիների և հողևորականների կառավարումը և դասավորումը, նաև աշխարհականների և հողևորականների հողևոր գործերի քննումը: Սրա տիտղոսն է. «Սրբաղնագույն և երանելի, ամենայն հայոց կաթողիկոս, հողևոր տեր և սուրբ էջմիածնի աթոռակալ»: Մնացածը տես ընդարձակ աշխարհագրության մեջ:

VI

ՎԱՐՔ ՄՐՔՅՅ<sup>22</sup>

Վարք սրբոց Գավթի և Կոստանտինի, Արզվեթի իշխանների, որոնք նահապետվեցան Մա[հ]մադի քրոջորդի Մուրվան Խուլից

Հունաց վրա Հերակլ առաջինի միապետության օրոք իշխանություն ստանալով, Մա[հ]մադի քրոջորդին՝ Մուրվան Խուլի կոչեցյալը դրավեց Արարիայի բոլոր տեղերը, նաև Պարսկաստանը... Մա՛ ժողովելով մահմեդականների (թաթարների sic) հեծելազորքը մինչ վեց հարյուր-հազար՝ շարժվեց մեր երկրի վրա, որին Գեորգիոս էին կոչում: Նախ նա մտավ Հայք (Սոմխիթի), ապա Ռան, որ է Ղարաբաղ, և Աղվանք (Ալվանիա); որ է Շիրվան, և դեպի Կովկաս: Եվ ավերեց բոլոր այս տեղերը, առավել դաշտավայրերը, քան լեռնաստանները, ապա մտավ Իվերիա, որ է Քարթլի, և այս էլ ավերեց...

VII

ԻՌՆԱ ԽԵԼԱՇՎԻԼՈՒ ԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ ՏՓՂԻՍԻ ՄԵԼԻՔ ԴԱՐՁԻ ԲԵՀՐՈՒԹԻ ՀԵՏՅՅ<sup>23</sup>

Զրույց-կատակներ

ա

[Գիորգի XII (XIII)] Թագավորի, մանվան առթիվ տխուր նստած Իոնա վանականը մի օր փոքր ինչ մտածմունքով տարվեց, քանի որ նկատեց անհամաձայնություն-տարածայնություն թագավորական տան մեջ, [նույնն և] իշխանների և այլ ազգերի մեջ և, սրա հետ, թագավորական տիտղոսի յուրացումը ուսաների կողմից, արքայազուհիների դաղթը... և սկսեց հրապարակները շրջել: Այդ միջոցին նա նկատեց մելիք կոչեցյալ Գարչիին<sup>24</sup>, որը հայտնի էր Բե[հ]թութ ազգանունով [և] որը անվայել կենցաղի հետևանքով աղեղի պես կոացել էր և ի վիճակի:



չէր գլուխը բարձրացնել՝ վերև նայելու համար, այլ միշտ դետ-  
նին ցած էր նայում: Մա ճանապարհին հանդիպեց վանականին,  
իսկույն և եթ ճանաչեց Իոնային, որը դիմեց նրան ասելով.  
«Մեղիք. թնչ ես փնտրում գետնին նայելով»:

Մեղիքը.— Բագրատիոնների հետքը. գուցե նրանցից մեկը  
Ձնացած լինի:

Իոնան.— Լավ են քեզ դաստիարակել, որ մարդու հետքն  
էլ քեզանից չի թաքնվում:

Մեղիքը.— Ռուսները դաստիարակեցին ինձ<sup>25</sup>:

Իոնան.— Նրանք լավ գիտեն գետնին ցած նայելու դաս-  
տիարակութունը. սակայն սա ձր լավության փոխարեն է:

Մեղիքը.— Ի՞նչ լավություն են արդյոք նրանք ինձ արել:

Իոնան.— Անեցի հայիդ իշխան (թավադ) դարձրին:

Մեղիքը.— Լսած կլինես, որ լավության համար ձվ է լա-  
վությամբ հատուցել:

Իոնան.— Այսպիսի խոսքերով Ես յուրացրել օձի բնավո-  
քությունը:

Մեղիքը.— Ոչ միայն ես, այլ և շատ ուրիշները:

Իոնան.— Քո հետնորդներից հետո շատերը լավ են լսել  
քո գործողությունը (օրգանը), քանի որ սողալով ման գալու  
ժամանակ օձին ես նման:

Մեղիքը.— Ես այլևս ուրիշների գործողության կարիք  
չունիմ, այլ ուրիշներն են ինձ ունկնդիր լինում, ինչպես օր-  
գանին:

Իոնան.— Ուրեմն, սատանա ես եղել:

Մեղիքը.— Դուք չէ՞ որ չեք ճանաչում հայերի հոգվոց  
փրկությունը, և ինչ որ ուզում եք, այն եք մեզ անվանում:

Իոնան.— Ճշմարիտն ասացիր այդ. սակայն... դու ամե-  
նափչացածն ես երևում իմ աչքում:

Մեղիքը.— Դու որ երկրորդ գալստյան պահին տասններ-  
կու առաքյալների հետ նստած լինես իրրև դատավոր, կարծում  
եմ, ավելի և ավելի կփչանաս:

Իոնան.— Իմ այնտեղ նստելը պետք չէ. դու հենց այս-  
տեղ փչացած ես. ուստի և մարդարեն ասում է...

բ

Իոնան.— Ո՞ր լավության համար է, որ քեզ՝ անեցի հա-  
յին՝ իշխան (թավադ) դարձրին:

Դարչին.— Նրանց հորաքրոջ որդիները, փեսաները և  
խնամիները սովորեցրին ինձ:

Իոնան.— Որո՞նք:

Դարչին.— Սարգար Իոանե՝ Մուխրանի տերը, Շանշե  
Էրիսթավի որդին, Բեգումի քրոջորդի՝ Գոգիա Ամիլախվարու  
որդին, Կատարինեի ամուսինը, Սուլոմոն մեյթար Թարխնիսշվի-  
լին, Ալեքսանդրե Մաղ՝աշվիլին, Շիոշ Թումանիշվիլին և, վեր-  
ջապես, Տփղիս-Միլիանի-Ռուխիի եպիսկոպոսը (Թբիլեյ-Միլի-  
նեյ-Մրովելի) և շամշադիցի Սուլոմոն Արղութաշվիլին:

Իոնան.— Իսկապես որ Բագրատիոնները փչացան, հապա  
թնչ է:

Դարչին.— Եթե արու զավակին կհասնի թագավորու-  
թյունը, հապա աղջկան չի՞ հասնի: Իոանե սարգարը Էրեկլե թա-  
գավորի մեծ աղջկա որդին է և Ղափլանիսշվիլին խանջալխան  
էր նստած իրրև նախ: Մուխրանի տերը մյուս աղջկա որդին է  
և Շա[ն]նաոդյան, և նրանք միթե՞ թագավոր չեն եղել: Ուրիշ-  
ները՝ սրանցից ոմանք արքունապետ (սալթիսուցես) են, ոմանք  
այլ պաշտոնյա էին լինում, իսկ ես հո մեղիք եմ և կլինեի [այդ-  
պիսին]:

VIII

ԴԱՎԻԹ ՇԻՆՈՂ ԱՐՔԱՅԻ ՄԱՍԻՆ<sup>26</sup>

...Սրա թագավորության օրոք կայացավ հայոց և վրաց  
տեղական ժողով, ուր ներկա էր և ինքը՝ թագավորը: Եվ հոգե-  
վորականությունը վեճ ուներ իրար հետ զավանական [խնդիր-  
ների] շուրջը և ոչ ոք չկարողացավ լռեցնել հայերին: Ապա թա-  
գավորը երեցապետներից թույլտվություն ստացավ և սկսեց վի-  
ճել հայերի հետ և բոլորին լռեցրեց: Սրանից հետո... հայերից  
շատերը ուղղափառության անցան<sup>27</sup>...

IX

[ՀԱՅԱԳԵՏ-ՎՐԱՅԻՔ ԵՎ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ]:<sup>28</sup>

Ա<sup>29</sup>

Շոթա Ռուսթավելու և այլ աշխարհական բանաստեղծների  
մասին

Շոթա Ռուսթավելին, ավագագույնը գրողների միջև Թա-  
մար թագունու օրոք, փիլիսոփա-աստվածաբան էր, հմուտ եկե-

Գաբրիել հայի մասին

[Պատառ Անդրոնիկազվիլուց հետո թոփշիրաշի պաշտոնում էրեկլե թագավորը] նշանակեց Գաբրիել հային, որը լավ գիտեր արտիլերիան: Սա եվս իր եղբոր հետ միասին զոհ գնաց էրեկլե թագավորի առաջ Աղա-Մահմադ-խանի հետ պատերազմում:

Ապա արտիլերիայի ծառայող կարգվեց Գեուրգ-աղան, որը Մոսկվայում էր կրթութուն ստացել: Սա եվս լավ գիտեր ինչպես արտիլերիան, նույնպես և բժշկութունը:

X

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆՑՑ

[Հնում Վրաստանում] ապրողները խոսում էին վեց տեսակ լեզվով, այն է՝ հայերեն (սոմխուրի), վրացերեն, խազարերեն կամ ջաղաթայի լեզվով, ասորերեն, հուևարեն և հերբայերեն: Սրանցից առաջին երկուսն էին ավելի գործածվում, այսինքն հայերենը և վրացերենը: Եվ այս ժողովուրդներից եվս ընդունեցին կոապաշտության, կախարդության և վհկության արվեստը:

XI

[ՀԱՅԵՐԸ ԻՐԻՅՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ]ՑՑ

Ի ո ն ա ն.— Անհնարին է, որ պարսկական նվազը միմիայն նրանց լեզվով և գործիքներով լինելը և որ վրացիները հնուց տեղյակ չլինեին գրան: Սակայն գրականության մեջ որս մասին ոչինչ չկա: Իսկ երբ Ռոստոմ թագավորը ստացավ Քարթլին, նա ամեն տեղ պարսկական կարգ ու կանոն մտցրեց, նմանապես՝ աներում [կարպետներ] փռելը, գետնին նստելը, ծառայողների կոչումների փոխելը, պարսկերեն լեզվով պաշտոնյաներին կոչելը և, միաժամանակ, սա (Ռոստամը) մտցրեց և տարածեց Վրաստանում [նվագարան] գործիքներն ու խաղերը: Սրանից հետո Վախտանգ թագավորը, ապա Թեյմուրազ թագավորը և, վերջապես, էրեկլե երկրորդ թագավորը, որը Պարսկաստանում և Հընդկաստանում էր եղել և նազըր-շահի մեծացրած էր, ինքն էլ թուրքերենի (թաթարականի) և պարսկերենի հմուտ և գործիքներին ու նվագներին կամ ձայներին ծանոթ, [չարունակեց] իր նախնիների սկսած գործը: Սրա (էրեկլեի) օրոք ավելի ևս տարածվեց պարսից նվագարան գործիքների ու խաղերի գործածու-

թյունը: Եվ աշխատեցին սրանց նմանեցնել և հարմարեցնել վրացական բանաստեղծութունները՝ պարսկական նվագների նման սաղ (չոնդուրով) և այլ գործիքներ գործածելով: Իսկ առաջինները, որոնք այս նվագները վրացերենի հարմարեցրին, հայերն էին՝ Սաաթլամա կոչեցյալ և այլ նվագողները, ապա Բեսարիոն Գարաշվիլին՝ առաջին բանաստեղծը [վրացիներից] և սքանչելի հորինողը:...

XII

[Զրույցներ էջմիածնում դավաճարանակաճ Խնդիրների շուրջը]<sup>37</sup>

- ա. Իոնա Խելազվիլու և մի ոմն վարդապետի միջև,
- բ. նույնի և հողևոր տիրոջ (օրքիվատերի) միջև,
- գ. նույնի և Վրաստանից եկած Գիորգի քահանա Շավ-Մելիքիսազվիլի միջև,
- դ. Գիորգի Շավմելիքիսազվիլու և հողևոր տիրոջ միջև, և այլն<sup>38</sup>,

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Այս հատվածում ամփոփված զիայոգի թարգմանութունը կատարված է ըստ «Կալմաստբա»-ի 1936 թ. հրատարակության, էջ 212—213:
- 2 Ծոսքը այսպես կոչված «Ղեկնորա»-ի մասին է:
- 3 Այս հատվածի թարգմանութունը կատարված է ըստ «Կալմաստբա»-ի I հատորի 1938 թ. հրատարակության, էջ 200, 220—228, ինչպես և Գ. Լեոնիձեի «Բանաստեղծ Սաաթլաման», գրքույկի (1930), էջ 28—31, և մեր «Իոնա Խելազվիլին Հայաստանում և Սայաթ-Նովան» հոդվածի (1936): Ռուսերեն թարգմանութունը Վ. Գոնչուլայի «Калмасоба» գրքում (1945), էջ 110—114, 212—213, րեբի, ինչպես և հայերենը Գ. Լեոնյանի հրատարակության մեջ (1931), էջ 33—34, թերի:
- 4 Ծոսքը Պղնձահանքի մասին է, որի շուրջը տե՛ս «Վրաց ազբյալների» II հատորը, էջ 64—68, ծանոթ. 8:
- 5 Նազըր, Պարսից շահ, 1736—1747 թթ.:
- 6 Թեյմուրազ II, Քարթլիի թագավոր, 1744—1762 թթ.:
- 7 էրեկլե II, կախեթի թագավոր, 1744—1762, Քարթլ-Կախեթի թագավոր 1762—1798 թթ.:
- 8 Հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաստանի թագավոր էրեկլե II-ի և Ռուսաց կայսր Պավել I-ի հրովարտակները Մխարզբձներին, — «Պատմության Տեղեկագիր», I, 1945, էջ 22—32:
- 9 Ռոստոմ, Քարթլիի թագավոր՝ 1632—1658 թթ.:
- 10 Այսինքն սպասարներին:
- 11 Տե՛ս 8-րդ ծանոթ.:



35 Ըստ «Կամատորա»-ի II հատորի 1948 թ. հրատարակության, էջ 228: Ելակետ ունի Լեոնտի Մրովելու երկր, տե՛ս «Վրաց աղբյուրներ», I, էջ 150:

36 Ըստ Գ. Լեոնիձեի հրատարակության՝ «Բանաստեղծ Սասթլաման», Քբ., 1930, էջ 16, ծանոթ. (վրացերեն):

37 Ըստ «Կամատորա»-ի II հատորի 1948 թ. հրատարակության, էջ 145—151, 153, և մեր համապատասխան հոդվածի (1936):

38 Այս գրույցները հիշեցնում են նմանօրինակ տիրահույսի էպիգրամներ էջմիածնի կյանքից, որ իր ժամանակ արձանագրվել է հայ մատենագրության մեջ, օրինակ՝ Խաչատուր վարդապետ Կեսարացու կապակցությանը, որ նշել է Առաքել Դավրիժեցին (Պատմութիւն Հայոց, գ. տպ., էջմիածին, 1896, էջ 398—400), հմմտ. Լ է օ, Հայկական տպագրութիւն. Ա. հատոր, բ. տպ., Քիֆլիս, 1904, էջ 187, նաև Հովհաննես Կաթողիկոսի նկատմամբ, որի մասին գրել է Ա. Երեցյանը (Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք, մասն բ., Քիֆլիս, 1898, էջ 526—543, մանավանդ 539):

Զրույցներն ինքնին ապացույց են այն իրողության, որ այստեղ կենտրոնում վրաստանցի և վրացախոս հայ կաթողիկոսն է, ասել է՝ Դավիթ Ղորղանյան էնագեթցին, որը կաթողիկոս օծվեց 1801 թ. գարնանը: Սրա կողմնակի ապացույցն է, ի միջի այլոց, նաև այն, որ Դավիթ Ղորղանյանի, դեռևս վարդապետի, 1784 թվին վախճանված մոր՝ Աննայի դամբանի հուշարձանը, Հոփսիմեի վանքի գերեզմանատանը երկկետու արձանագրություն ունի — հայերեն և վրացերեն, որ հրատարակել ենք մենք (Լ. Մեկիբսեր-Քեկ, Սայաթ-Նովա, վրացերեն, Քրիիսի, 1930, էջ 74—75):

ԻՆ

### ԱՆԱՆՈՒՆ ԸՆԱԳԵՏ

«ՏՓՂԻՍԻ ԵՎ ՍՈՄԵԻԹԻ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» (1837)

Անանուն հեղինակը, հավանական է՝ պատմաբան կամ հնագետ, 1837 թվին կազմել է վրացերեն լեզվով Տփղիսի և Սոմխիթի եկեղեցիների և վանքերի նկարագրությունը, ամփոփելով այն 2 տետրակի մեջ: Դրանցից առաջինը (A) պարունակում է Տփղիսի 3 թաղամասերում՝ բուն Տփղիսում, Հավլարբում և Դրսի թաղում (Գարեթուբանի) կամ, որ նույնն է, Տափիթաղում (Կալուսբանի) եղած վրաց եկեղեցիների տեսությունը, շուրջ 17-ի, իսկ երկրորդը (B)՝ բաղկացած լինելով 3 գլխից, պարունակում է տեսություններ՝ ա. Տփղիսում գտնվող հայադավան եկեղեցիների, թվով 22, բ. Տփղիսի կաթողիկոսների գույք եկեղեցիների, և գ. Սոմխիթի հայ-վրացական վանքերի, թվով 7:

Սոմխիթի հնություններին նվիրված գլուխը, որը Վախուշտիի Աշխարհագրության (տե՛ս այս աշխատության գ. գլուխը և առանձնապես նրա վերջին հատվածը) ազդեցությունն է կրում, տեղ-տեղ նույնիսկ բառացի կրկնություններով հանդերձ, ունի մի վերնագիր, որ բառացի թարգմանությունը նշանակում է՝ «Տփղիսի թեմերում և գավառներում (ուեղդներում) գտնվող եկեղեցական տեսարանների նկարագրությունը»:

«Նկարագրության» հեղինակն, անկասկած, վրացի է, մոտ կանգնած Վրաստանի ուղղափառ հոգևոր իշխանությանը, քանի որ հիշում է Եսրբազնագույն և կառավարիչ Սինողի անդամ՝ համայն Վրաստանի էքսարխոս Եվգենի արքեպիսկոպոսին» (1834—1844 թթ.): Միաժամանակ, նա հեռու չէ և հայ ու կաթողիկ հոգևորական շրջաններից, որտեղից էլ առատ նյութ է ստանում և օգտագործում իր «Նկարագրությունը» կազմելու համար:

Այդպիսի անձնավորություն վրացիներից, որը սերտ հարաբերություն ուներ ինչպես վրացական, նույնպես և օտարադավան հոգևորականության հետ, գուցե հայտնի պատմաբան -

հնագետ Պլատոն Իոսելիանին լինելը, որը մի ժամանակ՝ 1838—1842 թթ.՝ նույնիսկ Ներսիսյան թեմական հոգևոր դպրոցի դասատու էր (Աղ. Երիցեանց, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիզ, Թ. 1898, էջ 422—423, հմմտ. 303, հմմտ. Լ. Մեկիքսեթ-Բեկ, Մի Հայրոզ Պ. Իոսելիանու կյանքից. վրացերէն, — «Լիտերատուրուլի Սաքարթվիլո», 1938 թ., № 31), սակայն այսպիսի ենթադրութեան դեմ առարկում է այն հանգամանքը, որ այս նկարագրութեան տեղեկութեանները չեն համընկնում այն ամենի հետ, ինչ որ Տիֆլիսի եկեղեցիների մասին տալիս է նույն Պ. Իոսելիանին իր հայտնի աշխատութեան մեջ՝ Описание древностей города Тифлиса. Т., 1866, стр. 232—234: Անանուն հնագետի նկարագրութեանը կանխում է նաև ակադ. Մ. Բրոսսեի (M. Brosset) և Սարգիսեայ. Ջալալյանի տեսութեաններին:

Անանուն Վրաց հնագետի 1837 թ. նկարագրութեանը, համաձայն Վրաց մեջ գրագիտութեան տարածող նախկին ընկերութեան (այժմ Վրաստանի պետ. թանգարանի) հավաքածոյի № 3034 unicum ձեռագրի, հրատարակել ենք մենք 1923 թ.՝ Լ. Մեկիքսեթ-Բեկ, Նյութեր Տիֆլիսի և «Սոմխիթի» հնութեանների պատմութեան համար, վրացերէն, — «Զվենի մեցնիերերա», № 1, էջ 81—96:

Հայաստանի և հայերի հիշատակութեան, ինչպես և Տրիֆիսի և Սոմխիթի հայկական հնութեանների նկարագրութեանները պարունակող տեղերը անանուն հնագետի գործից մենք ստորև տալիս ենք A տետրակից՝ քաղվածաբար, իսկ B տետրակից ա. և գ. գլուխներն ամբողջապես:

ա

Սիոնի տաճարում... թաղված Իոանե Մանգլեի՝ ազգանունով Սաակաձեի՝ դերեղմանին՝ երկրպագելու համար, օգոստոսի 15-ի տոնին գալիս են Տիֆլիսում բնակվող բոլոր վրացիք և հայերն իսկ...

Հավլաբարում Ակաթիստոս կոչված մեծաշեն եկեղեցում հանուն աստվածածնի<sup>2</sup>,... [ինչպես] ասում են, թաղված է Քրիստոսի համար նահատակութեամբ սպանված սուրբ վկա Շուշանիկ թագուհին, որը նահատակվեց 432 թվին (sic) կոապաշտ դարձած իր ամուսին Վասքենից<sup>3</sup>...

... Մթածմինդա կոչված եկեղեցին... 1808 թվին Տիֆլիսում բնակվող կանայք՝ վրացուհիք և հայուհիք, իրենց միջև հատկապես ժողոված գումարով մաքրեցին հիմքից և 1810-ին նրանք ևս կառուցին [նորը]<sup>4</sup>....

բ

1837 ԹՎԻՆ ՕԳՈՍՏՈՍԻ 4-ԻՆ. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏՓՂԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅՈՑ (ՀԱՍՍՅԱՆՆԵՐԻ) ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԹԻՎՆ Է 22<sup>5</sup>

Առաջին: Հարանց վանք: Այստեղ է նստում էջմիածնից ուղարկված եպիսկոպոս կամ արքեպիսկոպոսը, առաջնորդ կոչվածը, Վրաստանի հայերի (հասոյանների) կառավարիչը: Քարուկրով կառուցված մեծ եկեղեցին հինգ խորան-սեղան ունի: Առաջինը՝ միջինը՝ հանուն ամենասրբուհի աստվածածնի, մյուսը՝ հյուսիսայինը՝ հանուն սուրբ առաքելոց, և երրորդը՝ հարավայինը՝ հանուն սուրբ Լուսավորչի՝ Գրիգոր Պարթևացու: Այս մեծ եկեղեցուն արևմտյան կողմից կցված է երկհարկանի եկեղեցի. ներքևի եկեղեցին է հանուն սուրբ Հակոբի, որն այժմ փակված է և վերևինը՝ հանուն ամենափրկչի: Եվ այս ամբողջ շենքը կառուցված է Տիֆլիսի քաղաքացիների (մոքալաքների)՝ Ավսարքիսովի, Բաստամովի, Նազարբեկովի, Օղասանց և վրացի իշխան Սուրգովի ծախքով 1480-ին (sic): Եվ այս շենքը մեծ ջանասիրութեամբ վերանորոգեց Տիֆլիսի քաղաքացիներից (մոքալաքներից) մեկը՝ սույն եկեղեցու ավազերեց տեր Ղազար Լազարովը 1800 թվին: Այս եկեղեցում ամփոփված է Մծբնա (Նիզիբիսի) եպիսկոպոս սուրբ Հակոբա մասունքը: Այս վանքը ունի հինգ դմբեթ, երկուսը փոքր և երեքը՝ մեծ: Այս եկեղեցին կանգուն է չորս սյան վրա (sic) և ծածկված է կարմիր կղմինդրով: Այստեղ ևս կա երկու հոյակապ զանգակատուն, որոնք շինված են ճարտարապետութեան [ոճ]ով: Այստեղ են մի ավագ քահանա և վեց քահանա<sup>6</sup>:

Երկրորդ: Տիֆլիսի բերդի տակը, վաճառաշահ հրապարակին կից կա դմբեթավոր եկեղեցի հանուն ամենասրբուհի աստվածածնի. Սա թեև բերդի ժամ է կոչվում, սակայն հնուց Հազրատի մայրավանքի (մետրապոլիտական) [եկեղեցի] է, որ հնուց շինված է բարեձնունդ ոմն Ումեկովի ծախքով, քարուկրից, կղմինդրով ծածկված, ունի երկրորդ փոքր դմբեթ ևս, իբրև զան-

գահատուն: Կանգուն է չորս սյան վրա: Այստեղ են մի ավագ քահանա և չորս քահանա<sup>7</sup>:

Երրորդ: Իշխան Բեհրութովների պալատին կից կա գմբեթավոր եկեղեցի հանուն սուրբ Գեորգի՝ Մողնին կոչեցյալը, որ կանգուն է չորս սյան վրա: Բացի մեծ գմբեթի, այս եկեղեցու երեք կողմում անկյուններում դրսից շինված են երեք փոքր գմբեթներ: Այս երեք փոքր գմբեթներից մեկը զանգակների համար է, իսկ [մնացած] երկուսը՝ դատարկ: Այս եկեղեցում ամփոփված է սուրբ Գեորգի մասունքը: Սա կառուցված է քաղաքացիներ (մոքալաքներ) Մանդենովի, Բաստամովի և Բաշինջաղելովի ծախքով: Ներքուստ ավելի դուրեկան տեսք ունի, քան թե դրսից: Այստեղ են մի ավագ քահանա և չորս քահանա: Այս եկեղեցու դավթում, հինգ սածեն հեռավորությամբ, կա մի այլ եկեղեցի՝ նույնպես սուրբ Գեորգի, նույնպես փոքր Մողնին կոչեցյալ, գմբեթավոր, քարուկրով կառուցված հնուց Տեր-Շմավոնովների ծախքով, որոնք [այժմ] իշխան Արիմելիքով են կոչվում: Սա էլ մեծ Մողնին է վերագրված<sup>8</sup>:

Չորրորդ: Թագավորական քարվանսարայի արևմտյան կողմում կա նորաշեն (ախալ շենի) կոչված մի եկեղեցի, հանուն վերափոխման աստվածածնի, գմբեթավոր, բարեկեն՝ աղյուսից և կրով, չորս սյան վրա կառուցված: Գմբեթը սև տաշած սալաքարով է ծածկված, իսկ թևերը կարմիր աղյուս-կղմինդրով: Դրսից սրա տեսքը ավելի դուրեկան է, քան ներքուստ: Հիմնադրված է նախ ոմն խոջա Նաղարի ծախքով և ապա շենքը շարունակել են և ավարտել՝ Տփղիսի կանանց և արանց ձեռներեցությամբ [համալսարան] միջոցներով՝ 1737 թվին. և նրանից հետո մինչև այժմ էլ շինվում է: Այստեղ են մի ավագ քահանա և հինգ քահանա:

Հինգերորդ: Սուրբ Նշանաց եկեղեցի կոչվածը հոյակապ է, գմբեթավոր, հանուն սուրբ Նիկողայոսի, չորս սյան վրա կառուցված: Սրա գմբեթը կանաչ աղյուսով է ծածկված, իսկ եկեղեցին ու թևերը կղմինդրով: Սրա մեջ կա երեք խորան. միջինը մեծ, հանուն սուրբ Նիկողայոսի, հյուսիսայինը՝ հանուն Անդրեաս առաքյալի, և հարավայինը՝ սուրբ Գեորգի: Այստեղ կա բազմամասն պատկեր սուրբ Նիկողայոսի, հույժ սքանչելագործ, որի մեջ ամփոփված է Անդրեաս առաքյալի ճակատը: Բացի սրանից, այս եկեղեցու ավագերեց Օհանես Զարափովի իր տանը պահում է ինչպես կենարար փայտը, նույնպես և այլ սրբոց մասունքները, որ նրա նախնիները ժառանգաբար թողի:

են նրան և որը շատերին բուժում է. սրանք պաշտելի են ինչպես հայերից, նույնպես և վրացիներից, իսկ հին ժամանակները թագավորական տնից ևս պաշտված են եղել: [Այս քահանան] երբեմն փոխադրում է այն իր տնից եկեղեցի, որպեսզի քրիստոնյաները պաշտեն և հավորեն այն, ու կրկին իր տունը վերագարձնում: Այս եկեղեցին կառուցված է քաղաքացի (մոքալաք) Ամիր Մամասախլիսի ծախքով, որի տոմից այժմ կենդանի է Զուրաբ Մելիքովը:

Վեցերորդ: Տփղիսից դեպի հարավ, քարափի թաղում, բարձրաբերձ ժայռի վրա կա եկեղեցի գմբեթավոր, վերափոխման աստվածածնի, Բեթղեհեմ կոչեցյալը: Այս եկեղեցին սրբատաշ քարից է կառուցված, գմբեթը նույնպես սրբատաշ սև քարով է ծածկված: Սույնպես և այս եկեղեցին ու նրա թևերն ամբողջապես սրբատաշ սև սալաքարով են ծածկված: Սրա մեջ կա երեք խորան. միջինը՝ աստվածածնի, հյուսիսայինը՝ Դրիգոր Լուսավորչի, և հարավայինը՝ [Հովհաննու] Մկրտչի: Այստեղ ամփոփված է ամենասրբուհի աստվածածնի սքանչելագործ պատկերը, որ հնուց է նկարած, [և] որին երկրպագում էին հայերը... Եկեղեցին իր բարձր դիրքով և գմբեթով Տփղիս քաղաքի բոլոր տեղերից լավ երևում է և զեղեցկացնում է քաղաքը: Եվ աստվածածնա այս պատկերի մասին ասում են, որ սա նկարած է այն մարի տախտակի վրա, որտեղ, Բեթղեհեմում, ծնվեց տեր փրկիչ Հիսուս Քրիստոսը: Սա կառուցված է 1500 թվին Տփղիսի քաղաքացիներ (մոքալաքներ) Պղափարուխի, տեր-Սարգսի, Նարիմանովների և Ղութլոռիների ծախքով: Վերջինիս թևերը և սալաքարերը պատրաստված են Վրաց իշխան Դիվի Ամիրխանուարովի Շահ-Ղուլի-խան կոչեցյալի ծախքով: Այստեղ են՝ մի ավագ քահանա և հինգ քահանա:

Յոթերորդ: Եկեղեցի հանուն Ավետյաց աստվածածնի, որը ջգրու կամ նախանձից գրդված է (Ջգրաշեն), շինված գմբեթավոր, չորս սյան վրա կանգուն, կարմիր աղյուսից և քարուկրով կառուցված, կղմինդրով ծածկված: Ունի երկու գմբեթ, մեկը մեծ և մյուսը փոքր: Այս փոքր գմբեթում կախված են զանգեր: Սա հիմնադրված է տեր-Փարսազան Մոխնովի ծախքով, որը հենց այս տաճարի ավագերեցն էր, ապա այս եկեղեցին շինված և ավարտված է իշխան [Հ]ակոբջան Ամատունովի ծախսով 1729 թվին: Այստեղ են՝ մի ավագ քահանա և վեց քահանա<sup>9</sup>:

Ութերորդ: Տփղիս քաղաքի դրսում կառուցված է մի եկե-

ղեցի գմբեթավոր, որ Քամոյանց ժամ է կոչվում, հանուն սուրբ Գեորգի, բավականին մեծ, կարմիր աղյուսով և քարուկրով՝ շինված քաղաքացի (մոքալաք) Խուղինովի և տեր-Գաբրիել Քամուկի ծախքով 1727 թվին: Ծածկված է կղմինդրով<sup>10</sup>:

Իններորդ: Բաղանիքների կամրջով տանող ճանապարհին կա եկեղեցի թեև ոչ մեծ, սակայն և ոչ փոքր, գմբեթավոր: Սա կառուցված է հին շենքի ձևով՝ հանուն Հրեշտակապետի: Սրա մասին ասում են, որ իբր թե հույների շինած է եղել՝ հանուն քառասնից վկայից. սակայն այս ասումները բանավոր է և ոչ մի գրության մեջ չի երևում: Սա նորոգեցին և [վերա]շինեցին Տփղիսեցի հայերը 1792 թվին: Այս եկեղեցին Տփղիսեցիք Բերդի փոքր ժամ են կոչում<sup>11</sup>:

Տասերորդ: [Հ]ավլարարում, [Հ]ավլարարի Վրաց եկեղեցուց մոտ, կա հայոց ժամ՝ հանուն սուրբ Մինասի, ոչ հեռու այն տեսարանից, որ բացվում է Տփղիսի Կուր ավաղոտ գետափի վերևից, առանց գմբեթի, որը հին տան նման է, շինված 1790 թվին [Հ]ավլարացիների ծախքով, կղմինդրով ծածկված, հանուն սուրբ Մինաս վկայի:

Տասնմեկերորդ: [Հ]ավլարարի միջում, ժողովրդական շենքերի կենտրոնում, կա եկեղեցի Շամքորեցոց կոչեցյալը, կառուցված 1775 թվին, հանուն աստվածածնի, առանց գմբեթի և փայտով ծածկված, որ կառուցվել է ժողովրդի ծախքով 1775 թվին<sup>12</sup>:

Տասնևերկերորդ: [Հ]ավլարարի դարիվերի դիտին, դեպի աջ, որտեղից տեսարան է բացվում դեպի Կուրը և այգիները, Մետեխի բերդի մեծ դռան դիմացը, կա փոքր ժամ գմբեթավոր, հանուն սուրբ Գեորգի, որ ծածկված է փայտով և շինված է Սուրբ Նշանի ավազերեց տեր-Օհաննես Ջարափովի ընտանիքի [ծախքով] 1775 թվին:

Տասնևերեքերորդ: Չուղուրեթ տանող ճանապարհի կողքին, արևելքից գտնվող ձորում, դեպի [Հ]ավլարար տանող դարիվերին կից, գտնվում է եկեղեցի գմբեթավոր վայելչատես, քարուկրով [շինված], հանուն սուրբ Կարապետին, որ կառուցված է՝ նախ հիմնադրությամբ քաղաքացի (մոքալաք) Ղազազովի ծախքով 1400 թվին, իսկ վերջին անգամ նորոգված 1790-ին: Այստեղ է ամփոփված սուրբ Կարապետի սքանչելագործ մասունքը, որը և տոնում է ժողովուրդը:

Տասնևոթերորդ: [Հ]ավլարարից դուրս, հարթավայր տեղում, [Հ]ավլարար թաղից մի փոքր հեռավորությամբ, կա եկե-

ղեցի փառաշեն գմբեթավոր, քարուկրով [կառուցված], պարսպով պատած, հանուն ամենասրբունի ծիրանագարդ աստվածածնի, որ Խոջա Բե[հ]բուզովի ժամ է կոչվում և որը կառուցված է հենց նույն իշխան Բե[հ]բուզովների ծախքով 1780 թվին և հետագայում նրանցից բազմիցս նորոգված: Այս եկեղեցին կառուցված է իշխան Բե[հ]բուզովներից իբրև իրենց դամբան<sup>13</sup>:

Կուր [գետ]ի կողմը, Կուկիա կոչված թաղում, կա եկեղեցի փոքր, հանուն ամենասրբունի աստվածածնի, կառուցված քարուկրով, առանց գմբեթի և աղյուսով ծածկված, որ շինել է տեղական ժողովուրդը 1807 թվին:

Երկրորդ [=տասնևեցերորդ]: Վերոգրյալ՝ առաջին տեղում նկարագրած մեծ Վանքին կից կա եկեղեցի հանուն սուրբ Գեորգի, որ Ղավլանենց է կոչվում, առանց գմբեթի, փոքր, կառուցված 1790 թվին այժմ հանդուցյալ տեր-Գրիգոր քահանա Սանուլովի ծախքով<sup>14</sup>:

Երրորդ [=տասնևյոթերորդ]: Վերա տանող ճանապարհի սկզբին, դեպի ձախ, ճանապարհից վերև, Կոմարովսկու տներից կից տեղում, կա եկեղեցի, առանց գմբեթի, հանուն սուրբ Գեորգի, Ջրկինյանց ժամ կոչեցյալը, որը կառուցել են քաղաքացի (մոքալաք) Ղազազովները 1717 թվին<sup>15</sup>:

Չորրորդ [=տասնևութերորդ]: Իշխան Բե[հ]բուզովների պալատին կից, անմիջապես ժայռի վրա կառուցված են վանական եկեղեցի, տներ և խցեր կույս վանականների բնակության համար, որը քարուկրով շինել է իշխան Աշխար[հ]բեկ Բե[հ]բուզովը 1717 թվին, հանուն առաքելապատիվ նախավկա և սարկավագապետ սուրբ Ստեփանոսի: Այստեղ ապրում են տասն չափ կույս վանականներ: Այս վանքում ամփոփված է նույն նախավկա սուրբ Ստեփանոսի մասունքը՝ աջը: Այս եկեղեցին փոքր է, փոքր գմբեթով ծածկված. և ինչպես մինչև այժմ ապրել են տասը, նույնպես և այժմ ապրում են նրանք իշխան Բե[հ]բուզովների ժառանգների [ծախքով]<sup>16</sup>:

[Տասնևիններորդ]: Տփղիսի հարավային կողմում՝ Քարափի թաղում, բարձր ժայռի վրա կառուցված է փոքր եկեղեցի փոքր գմբեթով, լավ և գեղեցկատեսիլ, հանուն սուրբ Գեորգի, ուր ամփոփված է սուրբ Գեորգի սքանչելագործ մասունքը: Այս եկեղեցին կառուցված է 1600 թվին ոմն զարիբ հայ վանականի սեփական ծախքով: Սա կղմինդրով է ծածկված և Քարափի եկեղեցի է կոչվում<sup>17</sup>:

[Քսաճերորդ]: Բաղանիքների կամրջից հայնկույս, մեծ դարիվեր դնացող խճուղու վերջում, կան այլևայլ շենքեր և բնակարաններ և սրանց միջում սուրբ Սարգսի եկեղեցին: Այս եկեղեցին կառուցել է յոթերորդ կետում նկարագրած Տփղիսի նորաշեն եկեղեցու ավագերեց տեր Սուքիասը 1737 թվին: Այս եկեղեցում գտնվում է սուրբ Սարգսի սքանչելագործ մասունքը, և այս սրբի հիշատակը տոնում են մաքսավորի և փարիսեցու շարաթ օրը, և այստեղ ժողովրդի մեծ բազմութուն է գալիս, մանավանդ կանանցից<sup>18</sup>:

[Քսաճևմեկերորդ]: [Հ]ավլարարից դեպի ձախ, դարիվերին կից, Կախեթ տանող ճանապարհի սկզբին կա եկեղեցի հանուն սուրբ Գեորգի, էջմիածնեցոց կոչեցյալը, ատանց գմբեթի, փոքր, փոքր զանգակատնով, փայտով ծածկված, որ կառուցվել է ժողովրդի ծախքով 1805 թվին<sup>19</sup>:

[Քսաճևերկուերորդ՝ երրորդին կից. տես վերևը]:

Գ

**ՏՓՂԻՍԻ ԹԵՄԵՐՈՒՄ ԵՎ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

[1]. Հաղրատն և Սանա[ն]ինը իրրև հոյակապ եկեղեցիներ, նույնպես և գյուղեր, [ասում են իբր թե] Վրաց թագավորների շինված են, իսկ հայերը գրում են, որ հայ թագավորներն են կառուցել. և ես այն կարծիքի եմ, որ այս վերջինը պիտի լինի ճիշտ: Սրանք խիստ գեղեցիկ և հոյակապ են: Հաղրատի եկեղեցին քառասուն խորան է պարունակում: Այնտեղ այնքան վանականներ կային, որ երբ ննջեցյալ էին բերում, մի օրում էին կատարում քառասունքը: Այս Հաղրատն այնպես փառավոր չէ, ինչպես հին ժամանակներում: Այստեղ Վրաստանի թագավորի հավանությունը նստում էր հայոց եպիսկոպոսը (ընդհարում սխալմամբ՝ կաթողիկոսը), որի մասին [նախօրոք] գրում էր էջմիածնի ընդհանրական [հայոց] հոգևոր տեր (օքեվարտեր) կաթողիկոսին, և նրա հոտն էին կազմում Քարթլիում բնակվող հայերը: Պատմությունից երևում է, որ Հաղրատն ու Սանահինը որպես գյուղեր, նույնպես [և] հոյակապ գմբեթավոր եկեղեցիներ, կառուցված են 961 թվին Բաղրատունյաց Աշոտ երրորդի, Շնորհալի (sic) կոչվածի, ամուսին Սոսրովանույշի հոգսով<sup>20</sup>:

2. Հաղրատից վերև կա փոքր վանք, կառուցված հանուն կենարար փայտին, որ գրաված ունին հայերը: Այստեղ փորված են բազմաթիվ այրեր և այդ այրերից մի քանիսի մեջ բազմա-

թիվ հին գրքեր կան և նրանց մուտքը փուլ գալու պատճառով խափանված է, և՛ անանցանելի լինելով՝ անգործածելի են մնացել<sup>21</sup>:

3. Հաղրատից ցած դեպի հյուսիս կա եկեղեցի Ագարակի, որն այժմ Ախտալա է կոչվում և որի գմբեթը քանդել է Լանգթեմուրը: Սա հոյակապ է, դեղեցկատեսիլ, հնում մետրապոլիտական և հոտով հանդերձ, իսկ այժմ երեցի բաժին. և գրաված ունին այն հունա-վրացական դավանանքին հետևողները<sup>22</sup>:

4. Ախտալայի դիմացը, դեպի արևելք, Բերդուջ լեռան մեջ, կա երկու վանք, որոնցից մեկը խելագարին խելքի է բերում, իսկ մյուսում բխում է աղբյուր, որի ջուրը եթե քառասուն օր [անընդհատ] խմել տրվի մոլեգին-կատաղածին, հաջորդ քառասուն օրն այլևս երկյուղալի չպիտի լինի նրա համար<sup>23</sup>...

Մ Ա Ն Ո Ւ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Հմմտ. П. Иоселиани, Описание древностей города Тифлиса, Тифлис, 1866, стр. 160—162. М. Ткемаладзе, Тифлисский Сионский кафедральный собор, Тифлис, 1904, стр. 9:—101:

<sup>2</sup> Սոսրը Մեսխիի տաճարի մասին է, որ կառուցել է Դեմետրե II Ինքնագոհ թագավորը (1270—1289 թթ.):

<sup>3</sup> Սոսրը Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկի մասին է, որի նահատակությունը իր ամուսին Վաղգեն բղջիկից տեղի է ունեցել 474 թ. (հմմտ. Յակոբ Յուրտաևեցի. Վկայաբանություն Շուշանկայ, հրատ. Իլիա Աբուլազեի, Թբ., 1938, էջ 032):

<sup>4</sup> Հայ կանանց մասնակցությունը Մթածմինդա եկեղեցու վերանորոգման գործում կարևոր մոմենտ է, որը, ըստ մեր հետազոտությունների, արձագանքում է Դավիթ Գարեջեցու (VI դ.) մեծ հեղինակությանը Վրաստանի հայերի աչքում, որը մենք մեկնում ենք Դավիթ Գարեջեցու և հայ Դավիթ «Անհաղթ» անունով հայտնի հայ իմաստասերներից մեկի նույնացման թեորիայով (սրա մասին մանրամասն մեր գեղուցումը՝ Դավիթ Անհաղթի Վրաստանում լինելու հարցի շուրջը, — «ՀՍՍՌ Գիտ. Ակադ. Մ. Արեղյանի անվան զբոսայգու ինստիտուտի Գրական հետազոտությունները, I, Եր., 1946, էջ 256—259):

<sup>5</sup> Թբիլիսիի հայոց եկեղեցիների ցուցակագրությունը և նկարագրությունը կարևոր նյութ է հայ գաղթականության պատմության համար Վրաստանում և, մասնավորապես, նրա մայրաքաղաքում: Որքան էլ այդ նկարագրությունը կապված է հայերեն արձանագրությունների ընթերցման և հրատարակության հետ, այդ մենք պատրաստ ունինք մի այլ աշխատության համար՝ «Վերահայոց վիմական տարեգիրը», որը պատրաստ է տպագրության: Այստեղ մենք բավականանում ենք միմիայն հիմնական գրականության նշումով. Ղուկաս վ. Ինճիճեան, Աշխարհաբարձի շուրջը մասանց աշխարհի Ասիոյ, Եվրոպոյ, Աֆրիկոյ և Ամերիկոյ. մասն առա-



ջին. Ասիա, հատոր Ա., Վենետիկ, 1806, էջ 276—279 (նկարագրութունը կատարված է 1795—1800 թթ.): Մինաս վ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքէն, Վեն., 1830, էջ 412—415 (նկարագրութունը 1824—1830 թթ.): Հմմտ. Լ. Меликсет-Бекоев, Тифлис в 1824—1830 годах в описании патера Миная Медичи,— «Тифл. Листок», 1913 г., № 283. его же. Старый Тифлис по описаниям А. Негри (1817 г.) и М. Медичи (1824—30 гг.),— *Arts*, 1918 г., № 2—3, стр. 108—114: Կարգ եկեղեցեաց Հայոց եղիւոց ի Տփղիս քաղաքի՝ ըստ կարդաւորելոյ տեաւն Ներսիսի վիճակավոր Արքեպիսկոպոսի նորին և Առաջնորդի. Յամի Տեառն 1827 ՌՄՀԶ: М. Grosset, Voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, III livraison, SPB. 1851 (cinquième rapport), pp. 1—26: Մարգիս վ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Բ., Տփղիս 1853, էջ 58—73: П. Иоселиани, Описание древностей города Тифлиса, Т., 1866, стр. 230—234: Գիւտ ա. ք. Աղանեան, Հայերը Վրաստանում, — «Տարազ», 1919 թ., № 1—18, էջ 43—45: Լ. Меликсет-Бекоев, Тифлис, его основание и краткий исторический очерк,— «Тифлис и его окрестности. путеводитель», Т., 1925, стр. 16—22: М. Полиевктов и Г. Натадзе. Старый Тифлис в известиях современников, Т., 1929, Н. Бадриашвили, Тифлис, кн. I, Т., 1934, стр. 92—95, 119—121.

6 Վանքի մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Յեկ, Տփղիսի Վանքի հիմնադրութեան հարցի շուրջը, վրացերեն, — «Թր. պետ. համալսարանի Տեղեկագիր», V, 1924, էջ 82—91: Նույնի՝ Գարեխաչի բազմայերանց հայկական էպիգրաֆիկան և այլն, վրացերեն, — «Известия Института ЯИМК, V—VI, Т., 1940, էջ 166:

7 Բերդի մեծ եկեղեցու մասին տե՛ս Ի. Орбели, Фрагмент крестного камня с арабской надписью в Тифлисе,— «Христ. Восток», т. VI, 1922, стр. 197—202. Լ. Меликсет-Бекоев, О междуособице в Тифлисе в 1197 году по поводу кривой Пасхи,— «Известия Кавк. Ист.-Арх. Института», т. III, 1925, стр. 49—50: Լ. Մելիքսեթ-Յեկ, Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց, Թր., 1928, էջ 252: Նույնի, Սայաթ-Նովա, վրացերեն, Թր., 1930, էջ 17—22:

8 Մողնու եկեղեցու մասին տե՛ս Սայաթ-Նովայի երգը «Հիմքը վերջապետին նուրեցին, չաղ արին Մողնու սուրփ Գեվուրք», գրված 1751 թ. (№ ԾԸ). Գ. Ասատուր, Սայաթ-Նովայի ձեռագիր մատյանը,— «Բանբեր Հայաստանի Գիտ. Ինստիտուտի», I—II, 1922, էջ 233. Լ. Մելիքսեթ-Յեկ, Սայաթ-Նովայի հայերեն խոսքերի վրացերեն թարգմանութունը, Թր., 1935, էջ 33—34, 110:

9 Խոսքը Ջորաջեն եկեղեցու մասին է, որը իբր թե կողքին գտնվող կաթոլիկների եկեղեցու ջգրով է շինված (հմմտ. М. Tamara ti, Rapport sur l'église latine de l'Assomption de Tiflis en Géorgie, Rome, 1903). այստեղ էր թաղված Սայաթ-Նովայի թու սեր Մովսեսը [1810—1883]. հմմտ. Լ. Մելիքսեթ-Յեկ, Սայաթ-Նովա, վրացերեն, Թր., 1930, էջ 159—160:

10 Սա նույն Տափթաղի եկեղեցին է, որի մոտ գտնվում էր վրացական «Կալուսեմիս» (Կալի թաղի) եկեղեցի:

11 Խոսքը Հրեշտակապետաց եկեղեցու մասին է, որն առաջ քառասնից

եկեղեցի է կոչվել և դիմում է գեուս VIII դարում, տե՛ս Լ. Меликсет-Бекоев, О междуособице в Тифлисе в 1197 г., по поводу Кривой пасхи.— «Известия Кавк. Ист.-Арх. Института», т. III, 1925, стр. 49—60. Լ. Մելիքսեթ-Յեկ, Սայաթ-Նովա, 75—77: Կ. Կեկելիձե, Վաղ Փետրվարի վրաց գրականութունը, I, վրացերեն, Թր., 1935, էջ 29:

12 Խոսքը կարմիր-Ավետարան կոչված եկեղեցու մասին է, որ վերանորոգել են Շամխորից գաղթած հայերը XIX դարի առաջին կեսին, և հենց այդ նոր շինքն է՝ գմբեթավոր, որ հասել է մեզ:

13 Խոսքը Խոջիվանքի մասին է: Հմմտ. է. Թաղայշվիլի, Վրաստանի հնութունները, վրացերեն, III, Թ., 1910, էջ XIII և ծանոթարանական տախտակը:

14 Օրբելյանների փողոցի մոտ էր:

15 Գրիբոեդովի փողոցի վրա էր, նկարչական ակադեմիայի կողքին:

16 Հմմտ. А. Кишмишев, Женский монастырь св. Стефана в Тифлисе,— «Тифл. Листок», 1912 г., № 36: А. Бебутов, По поводу статьи о женской монастыре св. Стефана в Тифлисе, там же № 58: Խորէն քահ. Խուցեան, Թիֆլիսի ս. Ստեփանոս կուսանաց անապատի պատմութիւնը, Թր., 1914. հմմտ. նաև 13-րդ ծանոթ.:

17 Խոսքը, այսպես կոչված, «Խիթո»-ի եկեղեցու մասին է:

18 Հմմտ. Գիւտ ա. ք. Աղանեան, Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԲ. Մանուէլ Կիւմիւրջանեցի, մասն I, Թր., 1917, էջ 175—179, 202—221:

19 Էջմիածնի շրջակայքից գաղթած հայերի կառուցած եկեղեցին է:

20 Հմմտ. այս աշխատութեան Գրիխի վերջին հատվածի 10—12 ծանոթութունները:

21 Տե՛ս նույնտեղ, ծանոթ. 15:

22 Տե՛ս նույնտեղ, ծանոթ. 18:

23 Տե՛ս նույնտեղ, ծանոթ. 19:

ԻՉ

ԱՆԱՆՈՒՆ ՊԱՏՄԻՉՆԵՐ

«ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (1827—1840)

Դավիթ Բագրատիոնի «Նոր պատմութիւնը», ինչպես վերև նշեցինք (ԺԹ գլուխը), անաղարտ կերպով չի հասել մեզ, այլ ենթարկվել է մասնակի վերամշակման և հավելումների մի շարք այլ անձանց կողմից: Ուստի և հասկանալի է, թե որքան մեծ աշխատանք էր պետք, որպեսզի Դավիթի երկասիրութեան հիմնական մասը զատեինք հավելում-կցորդներից, որ մեզ հաջողվեց անել հիմնական տեքստում, նշելով այն, ինչ որ Դավիթ գրչին չեն պատկանում, անկյունավոր փակագծերի մեջ: Միանգամայն հասկանալի է, որ Դավիթ արքայազնը, որ մահացավ 1819 թվին, չէր կարող շարունակել «Նոր պատմութիւնը» մինչև 1840 թ.: Շարունակողը չէր կարող լինել և Բագրատ Բագրատիոնը, քանի որ նա իր «Նոր պատմութիւնը» հիմնականում ավարտել է 1814 թ. և ապա ժամանակ առ ժամանակ կցել նրան նոր տեղեկութիւններ մինչ 1819 թ. և մի տեղեկանք էլ 1824 թվին: Հետևապես, պետք է ընդունել, որ Մ. Ջանաշվիլու հրատարակութեամբ 1905 թ. լույս տեսած «Նյութեր Վրաստանի պատմութեան համար՝ ժողոված արքայազն Դավիթ Գիորգիի որդու ու նրա եղբայրների կողմից» գործը, որը պարունակում է նյութեր շուրջ 1744—1840 թթ., միմիայն սկզբնական մասում է Դավիթ արքայազնի նորինածը, ասել է 1744—1814 թթ. (էջ 1—126): Իսկ մնացած մասը՝ շուրջ 1815—1840 թթ. (էջ 126—187) այլ անձանց գրածը պիտի լինի, որոնց անունները դեռևս մնում են անհայտ. ուստի և դրանց մենք անանուն պատմիչներ ենք կոչում: Եվ իրոք, որ այստեղ մենք այլ հեղինակի կամ, ավելի ճիշտն ասած, աննվազն 2 հեղինակների հետ գործ ունենք, երևում է նրանից, որ 1827 թ. ներքո արձանագրած մի դեպքի նշումից հետո ասված է. «Իսկ պարսիկների

և ուսաների հետագա անցքերը, ինչ որ տեղի ունեցան, մի առ մի նկարագրած, տես այս գրքի երկրորդ հատորում» (ըստ Մ. Ջանաշվիլու հրատ., էջ 175), որին հրատարակիչը կցել է հետևյալ ծանոթագրութիւնը. «Դժբախտաբար, հեղինակի կողմից նշած իր երկի «երկրորդ մասը» ձեռագրում չկա»: Սակայն պատմութիւնը սրանից հետո էլ շարունակվում է մինչև 1840 թիվը, որ, մեր կարծիքով, մի այլ հեղինակ պիտի գրի ասներ: Այնպես որ Դավիթ և Բագրատ Բագրատիոնների երկերի առաջին շարունակողի գրչին է պատկանում 1812—1827 թթ. պատմութիւնը, իսկ երկրորդին՝ 1828—1840 թթ.: Երկուսն էլ, անտարակույս, Պետերբուրգում ապրող վրացիներ են:

I  
[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1812—1827 թթ.]

1812 թվին... դա են Բարախանն իր որդի Արաս-միրզային ուղարկեց օժանդակելու Ալեքսանդրե [արքայազն]ին՝ Կախեթում... [Արաս-միրզան] եկավ ու կանգ առավ Արագի (Արեզի) հայնկույս՝ Ասլանդուղում: Եվ քանի որ լսեց Ալեքսանդրեի պարտութիւնը ուսաներից և նրա դնալը Դադաստան, Ռոտիշչևը՝ գրեց գեներալ-մայոր Պյոտր Ստեպանիչ Կոտլյարևսկուին (Կիտլերևսկի), որ Ղարաբաղում էր կանգնած գրուզինսկի գրեհադերսկի մի գնդով հանդերձ, որպեսզի տեղական Մեթի-խանին հետն աննելով՝ հարձակվի Արաս-միրզայի վրա: Լսելով այս՝ Կոտլյարևսկին (Կիտլերևսկի) գնաց՝ հետը տանելով նաև Ղարաբաղի խանին երկու հազարի չափ զորքով: Իջնելով Արագի (Արեզի) [ափը], կամրջակով անց կացրեց ու իր զորքը փոխադրեց [մյուս կողմը]: Իսկ երբ զինարանն էին անց կացնում, կամրջանալը խորտակվեց և երկու թնդանոթ-մարտկոցով (բատարեով) ջուրն ընկավ, և մնաց [միայն] երկու թեթև թնդանոթ, Չնկատելով այս՝ Կոտլյարևսկին (Կիտլերցկին) թողեց այնտեղ՝ ջրի մեջ՝ այն թնդանոթները և ինքը վրայով անցավ: Նրա ետևից գնացին զարաբաղցիները և թավրիզի ճանապարհով գիշերն աննկատելիորեն Պարսից ճամբարը հասան:...

1813 թվին... հարկադրված դա են Բարախանն ուղարկեց Շատաղի խան Արուլ-Հասան-խանին: Վերջինս եկավ Ղարաբաղ: Եվ Ռոտիշչևն էլ եկավ Տիգրիսից: Հանգիստում ունեցան Գ[յու]լիստանում՝ Ջերալում, ուր պարսիկներն ու ուսաները հաշտվեցին, տալով իրար փոխադարձ արակատա հաշտութեան և որոշելով

սահմաններն այսպես. Արագի (Արեգի) ափը, Մեղրին և Շորագյալը ոռոսներին Ֆնաց, նույնպես և խանությունները՝ 1. Ղարաբաղը, 2. Գյանջան, 3. Շաքին ու Շիրվանը, 4. Բաքուն, Թալիշը, Լենքորանը, Դարբանդը և ամբողջ Դաղստանը, 5. Դուբան... Իսկ զզլրաշներին մնաց Երևանն ու Էջմիածինը և Արագի (Արեգի)՝ Խուրդավերինի կամրջի հայնկույս [մասը]՝...

1817 թվին... [գերմանացի կոլոնիատները հաստատվեցին]... Շամխորում (Շանքորում), Սոմխիթում և այլուր...

1819 թվին... Ալեքսանդր կայսրը՝ զան Բարախանին ուղարկեց ընծաներ Իզմիրցի սպա Ավետիքի (Ավատիքի) ձեռքով։...

1819 թվին... [Տեղեկանալով Դաղստանի ժողովրդի հուզման մասին՝ Տիգրանում գտնվող գեներալ Երմոլովը՝ այս մասին գրեց Ղարաբաղի գավառի կառավարիչ հայ[ազգի] գեներալ Իշխան Ավերիան Գրիգորիչ Մադաթովին՝, որը Ղարաբաղի բնիկ էր և երիտասարդ հասակից գնալով Ռուսաստան՝ այնտեղ դիմավորական ծառայության էր մտել։... Քանի որ նա քաջարի գեներալ էր, պետք է ոռոսաց զորքը ժողովեր և Շաքիի ու Շիրվանի ժողովրդով գնար Դարբանդ [օժանդակելու Երմոլովի արշավանքներին Դաղստանի դեմ]։...

1820 թվին... Ստամբուլում տեղի ունեցավ հուզմունք հայերի և օսմանցիների միջև։ Հայոց Գրիգոր (Գրիգոր) պատրիարքը՝ լատինացոց հավատքի անցավ։ Սա գրդեց տեղացի հայերին, որպեսզի լատինացոց հավատն ընդունեն, իսկ հայերը՝ հանձն չառնելով այս՝ հարձակվեցին պատրիարքի վրա։ Պատրիարքը փախավ վեզիրի մոտ, գանգատվեց, որ իբր թե հայերն ապստամբություն են սարքում և նույնիսկ կաշառեց։ Այս պատճառով բազմաթիվ հայ երեւելիներին բանտարկեցին, իսկ օսմանցիները կոտորեցին նրանց ու հափշտակեցին նրանց գույքը։

1821 թվի փետրվարի 21-ին վախճանվեց Դայոս արքեպիսկոպոսը Վրացին, [աղբանուկով]։ Թաղաշվիլին, որը Աստրախանի թեմակալն էր։ Սա շատ աեղյակ էր ոռոսներեն, վրացերեն և հայերենին՝...

1822 թվին... ոռոսները Պարսկաստան քշեցին՝ Ղարաբաղի, այսինքն Ռանի, խան Մեխթիին, Իրրահիմ-խանի որդուն։ Սա գեներալ-մայոր և առպետ էր, և Ղարաբաղի խանությունը ստացել էր ոռոսներից և ուներ այն ցարդ։ [Այս եղալ] տեղական

հայ գեներալ Մադաթովի ներշնչմամբ (մեղադրանքի հետևանքով), և ոռոսները մտցրին այնտեղ իրենց կառավարչությունը, որի գլուխ կանգնեցրին Մադաթովին։ Իսկ [Մեխթիի] եղբորորդուն՝ Ջափար-ղուլի-աղային, որը Մա[հ]մադ-[Հ]ասան-Աղասիի որդին էր, տղայի հետ միասին, կալանավորեցին և որպես բանտարկյալ ուղարկեցին Ռուսիա, Սիմբիրսկ (Ցիրցկի) քաղաքը։...

1823 թվին... հայերը լիալուսնից [Ջատկի հաշվում] սխալվեցին՝, Այսպես պատմեց ինձ տերտերը՝ տեր-Գեորգ (Գեուրք) Թեղեթցին, որ այժմ այստեղ՝ Պետերբուրգում է ապրում և զարգացած և ուսյալ մարդ է, հմուտ ինչպես հայերենին, նույնպես և վրացերենին։ 80 տարին մեկ անգամ հայերը լիալուսնից [Ջատկի հաշվում] սխալվում են։...

1826 թվին... Երմոլովը Տիգրիսից ուղարկեց առաջընթաց երեք հազար հետիոտն և սակավաթիվ էլ վրացական հեծյալ զորքով գեներալ-մայոր Իշխան Մադաթովին Հաղախ, որպեսզի զզլրաշների վրա հարձակվի ու քշի նրանց։ Այս պահին Երևանի սարդար [Հ]ուսեյն-ղուլին եկավ ու զրավեց Հաղախն ու Շամշադինը... Շամշադինում սարդարի հետ էր Ալեքսանդրե [արքայազնը], Մադաթովը Հաղախում կանգնած՝ զզլրաշների զորքին հաղթեց, այստեղից Շամշադին գնաց։ Սարդարը Շամշադինից քաշվեց, Ջեզամի (Ջազամի) գլուխն անցավ ու այնտեղ կանգ առավ զորքով։ Գեներալ Մադաթովը Շամշադինից երկու հազար մարդով և 4 թնդանոթով ու երեք հարյուր վրացական հեծելազորքով դեպի Գյանջա ուղեւորվեց։...

Սեպտեմբերի 4-ին գեներալ Մադաթովը հասավ Գյանջա... Ղզլրաշները՝ ավերելով և կողոպտելով Գյանջան՝ թողին քաղաքն ու հեռացան։ Մադաթովն առանց կովի մտավ ու զրավեց Գյանջան։...

1826 թվին... Շահադեն նահանջեց ու պաշարած Շուշլա բերդի մարդկանց էլ հանեց ու քաշվեց դեպի Արագ (Արեգ), ուր և կանգ առավ։

Երևանի բերդի սարդար Մահմադ-[Հ]ուսեյն-խանի եղբայր Հասան-խանն եկավ մեծ զորքով... ու Լոռվա շրջակայքն ավերեց, քոչվորներին կողոպտեց... մինչ Սողանլուղ Սոմխիթի գյուղերն ավերեցին, ապա նահանջեցին։ Հասնելով Լոռի՝ Հասան-խանը գիշերով տեղահան եղավ այնտեղից։ Մրան վրա հասան երեք հարյուր ոռոս զինվորներ Եգերսկի [գնդից]՝ մի թնդանոթով։... Գեներալ-մայոր Իշխան Մենշիկովը... կապեց Լոռիից դեպի Ջա-

լավ-օղի տանող ճանապարհը... և հաղթեց [ղզլբաշներին]... Դղլբաշները տեղահան արին Փամբակը և Շորագյալը...

Սեպտեմբերի 30-ին Պասկևիչն<sup>10</sup> իր զորքով հասավ ու կանգ առավ Արագ (Արեղի) գետի մոտ... Իսկ գեներալ Երմոլովն անցավ Լագախ, որտեղ և կանգ առավ. ուզում էր կովի բռնվել Երևանի սարգարի հետ, որը Շամշադինում էր կանգնած: Սարգարը քաշվեց ու Շամշադինի լեռն[եր]ում կանգ առավ:

Այստեղից գեներալ-մայոր Դավիդովին ուղարկեց Բամբակի կողմերը: Ռուսական զորքը, որ կանգնած էր Լոսիում, և Քարթլիի զորքը և Սոմխիթ-Սարարաթիանոյի զորքը հետ տարավ... սրանք հասան Ադարա[կ] Փամբակի գլխին: Այնտեղ էր կանգնած Հասան-խանը մեծ զորքով: Մի փոքր կռիվ տեղի ունեցավ. ապա զզլբաշների զորքը քաշվեց ու գնաց Երևան:

1826 թվի նոյեմբերի 1-ին պարսիկներն ամբողջովին Արագով (Արեղով) անցան, Դարարաղի և Շաքի-Շիրվանի բազմաթիվ քոչվորներին տեղահան արին ու հեռները տարան:...

Գեներալ-ադյուտանտ Պասկևիչն իր զորքով կանգ առավ Դարարաղում՝ Ազմուղանի և Արաղի (Արեղի) միջև Չարեք (Չերկ) կոչված գետի վրա: Այս պատերազմում վիրավորվեց Ալիշահ շահադադի որդի Սեյիտուլ-մելիք-միրզան:... Ապա ուսաներն անցան Կուրը և ուղևորվեցին Դարարաղի կողմերը:...

Դղլբաշների զորքից, որը կանգնած էր Արաղի (Արեղի) վրա, հեծյալների մի քանի մասեր ելան ու գերեցին Դարարաղի մի քանի սահմանամերձ դյուղերը և վերադարձան:

Հոկտեմբերի 25-ին ռուսական զորքն անցավ Արագով (Արեղով), պատերազմեցին շահադեի հետ, շահադեն քաշվեց ու Արգրիլ գնաց: Ռուսները գրավեցին աղա[հանք]ի գյուղերը և այլն:

Հոկտեմբերի 27-ին գեներալ Պասկևիչը կանգ առավ Դարափաշալ կոչված գետ[ի ափ]ին, ... և՛ հետամուտ լինելով Դարարաղից տեղահան արած ժողովրդին, որին զզլբաշները հետներն էին տանում [հասավ] Քալանթար-բուլաղ կոչված աղբյուրի մոտ, որը Արաղից (Արեղից) 20 վերստ հեռու է գտնվում. ստիպեց թողնել 200 ծուխ:...

Գեներալ Պասկևիչը՝ անցնելով Դարարաղի կողմերը՝ վերադարձրեց Շաքիից, Շիրվանից և Դարարաղից տեղահան արած քոչվորներին... ապա՝ անցնելով Արագը՝ կանգ առավ Չարեք (Չերկ) գետ[ի ափ]ին Դարարաղում: Այս եղամ հոկտեմբերի 30-ին:

1826 թվի դեկտեմբերի 28-ին գեներալ-լեյտենանտ իշխան Մադաթովը իր զորքի մի մասով անցավ Արագ (Արեղ) գետով և ուղղվեց դեպի Դարարաղի կողմերը... և ազատեց... Դարարաղից տեղահան հանած քոչվորներին...

1827 թվի հունվարի 1-ին... Մադաթովն ուղարկեց [իր] հեծելազորքը, զարարաղցի հայերին և շաքի-շիրվանցիներին... քոչվորների վրա հարձակում գործելու համար:...

...Ապա... գեներալ Մադաթովը՝ վերադառնալով Դարարաղից՝ գրավեց փոքր քաղաք Լարը (Լարի):...

...Ապա [Մադաթովը] հասավ Արագ, անցավ Արագով ու եկավ Դարարաղ խիստ հաղթական...

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1828—1830 թթ.]

1828 թվին... Վրաստանի կառավարչապետ կոմս Պասկևիչը գնաց Դարսով Ախալցխիսեն գրավելու համար: Պասկևիչը Դարսը պաշարեց և կովով վերցրեց այն հունիսի 30-ին:... Իսկ հուլիսի 14-ին Պասկևիչը կովով վերցրեց Զավախեթի Ախալքալաքը:... Օգոստոսի 15-ին Պասկևիչը վերցրեց Ախալցխիսեն:...

Սույն իսկ թվին Պասկևիչն Երևանից ուղարկեց գեներալ-մայոր Ճավճավաձեին զորքով Բայազետը գրավելու համար: Ճավճավաձեն հասավ այնտեղ և վերցրեց Բայազետը օգոստոսի 29-ին:

Սույն իսկ թվին, օգոստոսի 28-ին, Պասկևիչը պատերազմով վերցրեց Արդահանը:...

1827 թվին ռուսներն Արասաբաղի բերդն և Նախիջևանը վերցրին, շահադեին հաղթեցին:

Օգոստոսին Արաս-միրզա շահադեն եկավ Երևան, պատերազմեց գեներալ-լեյտենանտ Կրասովսկու հետ: Մեծ պատերազմ ունեցան: Էջմիածինը ռուսների ձեռին էր. զզլբաշները չկարողացան խլել Կրասովսկին այնտեղ ամրացավ: Մրան կառավարչապետ Պասկևիչն օգնության հասավ Նախիջևանից: Սա որ եկավ, շահադը Էջմիածնի պաշարումը թողեց ու կանգ առավ Դավալուում (Դեվալուում). այնտեղ նրա եղբայր Ալի-Նալի-միրզան ևս եկավ զորքով, քաշվեցին ու գնացին ներքև: Պասկևիչը Սարդարաբաղը վերցրեց սեպտեմբերի 15-ին, ապա Երևանի բերդին մոտեցավ և 6 օրից հետո վերցրեց. և Հասան-խանին երեք հարյուր հոգով կալանավորեց:

1830 թվի հունիսի 27-ին Տիգրիսում տարածվեց Հնդկաստանից եկող մի հիվանդութուն, որ խոլերա (խոլերնի) է կոչվում. սա շատ մարդիկ կոտորեց աստծո անեծքով մեր մեղքերի պատճառով: Եվ այդ երևաց աստվածածնու պատկերի վրա, որն ամփոփված է Նորաշեն կոչված հայոց՝ եկեղեցում. պատկերը կարճես կենդանի աստվածածինը լիներ՝ յացող և արտասովալից [աչքերով]...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Ալեքսանդրե արքայազնի մասին տե՛ս այս աշխատության ժէ գլխի 9-րդ ծանոթ.:
- 2 Գեն. Ն. Ֆ. Ռտիշչեվը, Վրաստանի կառավարչապետ, 1811—1816 թթ.:
- 3 Ի նկատի է առնված Գյուլստանի գաշնազիրը:
- 4 Ալեքսանդր I կայսրը, 1801—1825 թթ.:
- 5 Գեն. Ա. Գ. Երմոլովը, Վրաստանի կառավարչապետ, 1816—1827 թթ.:
- 6 Գեն. Վ. Գ. Մադաթովի մասին տե՛ս՝ Գեներալ-լեյտենանտ Վ. Գ. Մադաթովը, Երևան 1942-Генерал-лейтенант В. Г. Мадатов, Ереван 1942.
- 7 Այստեղ ժամանակագրութունը խախտված է: Գրիգոր [Պամեսցին]. Կ. Գոլսի պատրիարք էր 1801—1802 թթ., մինչդեռ 1820 թվին Կ. Գոլսի պատրիարքն էր Գողոս Գրիգորյան Ազրիանապոլսեցին (1815—1823):
- 8 Գայոսի մասին տե՛ս՝ Կ. Կեկելիձե, Վրաց հին գրականության պատմութունը, հ. I, Թբ., 1951, էջ 360—363. Проф. Н. Н. Пальмов, К сведениям о личности архидиакона Ганоза, впоследствии архиепископа Астраханского и Ставропольского,—„Христ. Восток“, т. II, 1913, стр. 36—53. Ա. Պապիգեանց, Երգք Սերովրէ վարժապետի Պատկանեան, Մոսկվա, 1857, էջ 64 (Առ հայրապետն Գայոս): Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների պոլեմիկացիաների կառուցումը, I, վրացերեն, Թբիլիսի, 1949, էջ 298:
- 9 Պոսքը Մադատկի մասին է:
- 10 Գեն. Ի. Ֆ. Պասկեվիչ, Վրաստանի կառավարչապետ, 1827—1831 թթ.:

Ի՛է

ԹԵՅՄՈՒՐԱԶ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐՔԱՅԱԶՆ

ՆԱՄԱԿՆ Մ. ԲՐՈՍՍԵԻՆ (1836), «ՎՐԱՍԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» (1843), «ՕՐԱԳԻՐ» (?)

Թեյմուրազ Բագրատիոնը Վրաց վերջին թագավոր Գիորգի XII (XIII)-ի որդին էր: Ծնվել է 1782 թ., աշակերտել է Գավիթ Ալեքսի-Մեսխիշվիլուն (տես այս աշխատության ժԲ գլուխը): Քարթլիի և Կախեթի 1801 թ. Ռուսաստանին միանալուց հետո՝ մի առժամանակ համագործակցելով իր հորեղբայր Ալեքսանդրե արքայազնի հետ՝ փախչում է Պարսկաստան, սակայն 1810 թ. հաշտվում է կատարված իրողության հետ, վերադառնում է Վրաստան, ապա անցնում Ռուսաստան և նվիրվում գիտական գործունեության: Պետերբուրգում կեցած պահին ընտրվում է Ռուսական Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Սրան, իբրև վրացերենի ուսուցչի, աշակերտում է ապագա հայտնի վրացագետ և հայագետ, ակադ. Մ. Բրոսսեին: Նույն Պետերբուրգում Թեյմուրազը մնում է ցմահ, վախճանվում է 1846 թվին և թաղվում Ալեքսանդր-Նեվսկու մայրավանքի (լավրայի) Ավետյաց եկեղեցում:

Թեյմուրազ արքայազնը հեղինակ է մի շարք երկերի, որոնց մեջ առանձին ուշքի են ընկնում «Վրաստանի պատմութունը», «Ճանապարհորդութունը զեպի Եվրոպա և այլևայլ տեղեր» և բանաստեղծութունները: Բացի գրանից, մեզ հասել են նրա նամակները՝ գրված ակադ. Մ. Բրոսսեին և «Օրագիրը», որ դեռևս հրատարակված չէ: Նրա գրական-գիտական գործունեության մանրամասն տեսութունը կազմել է գոց. Շոթա Մեսխիան՝ «Թեյմուրազ արքայազնի կյանքն ու գործունեությունը», վրացերեն, — „Материалы по истории Грузии и Кавказа“, 1939, вып. I, էջ 17—78:

Մ. Բրոսսեին ուղղված Թեյմուրազի նամակները, որ պահվում են Վրաց մեջ գրագիտություն տարածող նախկին ըն-

կերության (այժմ Վրաստանի պետ. թանգարանի) հավաքածոյի № 4794-ի ներքո, դեռևս հրատարակված չեն: Իսկ «Վրաստանի պատմութիւնը», որն ընդգրկում է Վրաստանի և հարևան երկրներին անցյալի տեսութիւնը հնագույն ժամանակներից մինչև IV դար Ք. հետո և ավարտվել է 1843 թվին, լույս է տեսել վրացերեն՝ Թուսաց Գիտութիւնների ակադեմիայի հրատարակութեամբ, Պետերբուրգում 1848 թվին հետեյալ վերնագրով՝ «Պատմութիւն ի սկզբանէ Իվերիայի, այսինքն Գեորգիայի, որ է համայն Վրաստան»: «Օրագրից» մի հուշ հրատարակեց բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին իր բանասիրական հոդվածներից մեկում («Կոմունիստի» օրաթերթ, 1935 թ., № 229):

Հակոբակ Շ. Մե ս ի տ յ ի կարծիքի (օր. cit., էջ 73—74), մենք գտնում ենք, որ Թեյմուրազ արքայազնը ուսումնասիրած չէ հայերենը (գրաբարը) և բնագրում չի օգտագործել Մովսես Խորենացու և Միքայել Չամչյանի պատմութիւնները. և ոչ էլ օգտագործել է այդպիսիների վրացական թարգմանութիւնները (Л. Меликсет-Беков, Эксперты из древней „Истории Армении“ по грузинской рукописи XVII века, — „Известия Кавк. Ист.-Арх. Института“, т. II, Лнгр. 1927, стр. 135—142.

Լ. Մ Ե Լ Ի Բ Ա Ե Թ - Բ Ե Կ, Վրաց ազդյուրները Հայաստանի և հայերի մասին, I, 71—76. Ն ու յ ն ի՝ Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ի վրացերեն թարգմանութիւնը, վրացերեն, — «Վրաստանի պետ. թանգարանի Տեղեկագիր», VIII, 1935, էջ 55—58. Ն ու յ ն ի՝ Հայոց հին գրականութեան պատմութիւնը, վրացերեն, Թր., 1941., էջ 228—229): Ավելի հավանական է, որ Թեյմուրազը ձեռքի տակ ունենար Մ. Խորենացու պատմութիւնը ուսերեն թարգմանութեամբ՝ Հովսեփ սարկավազ Հովհաննիսյանի, Պետերբուրգի 1809 թ. հրատարակութեամբ (Армянская история, сочиненная Моисеем Хоренским, перевел с армянского архидиакон Иосиф Иоаннесов, СПб, 1809), կամ լատիներեն թարգմանութեամբ և հրատարակութեամբ եղբայր Վիստոնների, Լոնդոնում 1736 թ. (Mosis Chorenensis Historiae Armenicae libri III... Latine verterunt... Gulielmus et Georgius Gul. Whistoni Filii, London, 1736), իսկ Մ. Չամչյանի պատմութիւնը՝ անգլերեն թարգմանութեամբ, որ հրատարակվել է 1790 և 1827 թթ. (Father Michael Chamich. History of Armenia. From b. C. 2247 to the year of Christ 1780. Translated

from the original armenian by Johannes Abdal, I and II, Calcutta, 1790, 1827):

Թեյմուրազ արքայազնի պատմութիւնը, գրված 1843 թ., հիմնականում չի պարունակում ոչ մի այնպիսի նյութ Հայաստանի և հայերի նկատմամբ, որ չլինի հիշված Մ. Խորենացու պատմութեան մեջ, որն և օգտագործում է և նույնիսկ տեղ-տեղ քննադատում Թեյմուրազը (էջ 44—47), կամ օգտագործած չլինի ըստ Մ. Չամչյանի պատմութեան, կամ վերջապես ըստ հույն և լատին պատմիչների: Ի նկատի ունենալով, որ Թեյմուրազ արքայազնի պատմութիւնը վերաբերում է հնագույն շրջանին, ասել է՝ անհիշատակ ժամանակներից սկսած մինչև քրիստոնեութիւն ընդունելը, որ արդեն հայտնի է ուրիշ ազդյուրներից, ինչպիսիք են Լեոնտի Մրովելին և Վասուշտին, մենք ավելորդ ենք համարում ասլ այստեղ երկար ու ընդարձակ մեջբերումների թարգմանութիւններն այդ պատմութիւնից, այլ բավականանում ենք մի հատվածի թարգմանութեամբ, որը վերաբերում է Մ. Խորենացու քննադատութեանը, և մի ուրիշի էլ՝ ակադ. Մ. Բրոսսեին ուղղված 1836 թ. 28 II թվակիր նամակից, որ վերաբերում է հայոց և վրաց տառերի «գյուտի» խնդրին:

[ՎՐԱՑԱԿԱՆ ՏԱՌԵՐԸ]

Մեր՝ [Վրացական] և ոչ մի այբուբեն և ոչ մի գիր ոմն հայ Մեսրոպի կամ որևէ ուրիշի հորինածը չէ, և սրա ապացույցը հին դրամներն են, որ առկա են խուցուրի աստթավրուլի [նշաններով] գրված և որ փորագրված են Քրիստոսի ծնունդից առաջ<sup>1</sup>:

[ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ]

... Մովսես Խորենացին (Մոսե Խորանելի)<sup>2</sup> իր Պատմութեան առաջին գրքի վեցերորդ գլխում գրում է այսպես. «Բել, այսինքն Բիլ կամ Բասլ, հայոց նահապետ (նախահայր) Հայկի (Հասսի) ժամանակակից էր, որի մասին շատերն են պատմում և շատերն էլ այլևայլ կերպ են ասարխոսում: Իսկ ես ասում եմ, որ նա, որին Մատուռնաս և Բել են կոչում, ներքոթն է՝ Սրանով երևան եկավ, որ հայ պատմիչ Մովսես Խորենացին (Մոսե Խորանելի) ներքոթին Բասլ է կոչում, որին հետագայում ասորեոտանցիք սխալմամբ իբրև աստված էին պաշտում: Սա-

կայն ընդհանուր պատմության սյուները (դոգմատները) Բաալին Ներրոթ չեն կոչում, և ոչ մի պատմարան ընդհանուր Ասիայի, կամ Եվրոպայի, կամ որևէ ուրիշը բացի միմիայն հայ պատմիչներից, չի պատմում, որ Հայկը (Հատուր) սպաներ Ներրոթին կամ Բաալին:

Մանրթուխուն [Թեյմուրազի]: Բուն Ասորեստանի պատմության հեղինակը, այսինքն նրա ժողովողը, գրում է այսպես. «Մովսես Խորենացին (Մոսե Խորանեյին) մանրակրկիտ հետազոտություն սկսեց Բաալի մահվան շուրջը, քանի որ այն արտագրեցի քաղցեական մի ձեռագրից, որ Մենդոց [գրքի] առաջին թագավորների շարքումն էր հիշված»: Սակայն այս մանրամասնությունները չեն նկատվում ասորեստանյան ոչ նոր և ոչ էլ հին պատմությանց մեջ: Մովսես Խորենացին (Մոսե Խորանեյին) գրում է այսպես. «Քաջ Հայկը (Հաիկ)<sup>2</sup>, այսինքն Հատուր, որ նախանձում էր Բաալին [թագավորական] դաս բարձրանալու առթիվ, նրա դեմ սկսեց պայքարել. սակայն հաջողությունը վիճակվեց աստղապաշտ թագավորին, այսինքն Բաալին, [մեծա]մասնությանը, [մինչդեռ] պարտված [փոքրա]մասնությունը իրենց՝ Հայկազանց (Հատույանների) թագավորի դեմ դարձավ չարաչար, և Հայկը (Հատուր) քաշվեց Արմենիայի երկրի (կողմանց) Արարատ լեռը, [ուր] և հաստատվեց իր որդով և տուն ու տեղով, որոնց թիֆն էր երեք հարյուր հոգի...»:

[Ապա՝ բերելով Մ. Խորենացու պատմության I գրքի XI գլխի բովանդակությունն աղավաղված ձևով՝ հեղինակը նշում է.]

Այսպես են Խորենացու (Խորանեյի) պատմվածքները, որը ոչ մի այլ պատմիչ, ոչ արևելյան և ոչ էլ արևմտյան, չի վավերացնում:...

Մովսես Խորենացին (Մոսե Խորանեյի) իր գրքում՝ առաջին հատորի տասերորդ գլխում<sup>4</sup> պատմում է Բելի (Բիլի) և Հայկի (Հատուի) պայքարի և նրա՝ [Բելի] Հայկից (Հատուից) սպանվելու մասին, իսկ այլ հայ պատմիչները գրում են Ներրոթի Հայկից (Հատուից) սպանվելու մասին:

Իսկ նույն գրքի չորրորդ գլխում Մովսես Խորենացին (Մոսե Խորանեյին) այսպես է գրում Նոյի ծննդաբանության մասին. «Քամից ծնվեց Խուս<sup>5</sup>, Խուսը ծնեց Մեսրայիմ, իսկ Մեսրայիմը ծնեց Ներրոթին»: Այս [կարգը] մինչ Ներրոթ պահպանված է Սրբազան Պատմության Հին Ուխտի Մենդոց գրքում<sup>6</sup>: Իսկ Մովսես Խորենացին (Մոսե Խորանեյին) ավելացնում է. «Ներրոթը ծնեց Բաալին, Բարիան ծնեց Անեբին, Անեբը ծնեց Արբեյին, որ նրանց նկարագրության համաձայն նույն Բելուս կամ Բիլն է, որ նույն Բաալն է. Արբեյը ծնեց Նինոսին, որ Սեմիրամիդայի ամուսինն էր, քանի որ Նինոսի հայրը հինգերորդ ծնունդն էր Ներրոթից. հետևապես Ներրոթն այլ է և Բիլն այլ, քանի որ Նինոսի հայրը, ինչպես ընդհանուր պատմությունն է մեզ ուսուցանում, Բիլն է. և լուրմ են Ներրոթի սպանման մասին Հայկից (Հատուից), մինչդեռ Խորենացին (Խորանեյին) Հայկի (Հատուի) ձեռքով սպանել է տալիս Բելին, այսինքն Բիլին, որին նրանք Արբեյ կամ Արբիլ են կոչում, և որը նույն Բիլն է: Իսկ Բիլի արշավանքների մասին տիեզերական բոլոր պատմությունները հակասակն են ասում:...

Բիլին, Բարիան ծնեց Անեբին, Անեբը ծնեց Արբեյին, որ նրանց նկարագրության համաձայն նույն Բելուս կամ Բիլն է, որ նույն Բաալն է. Արբեյը ծնեց Նինոսին, որ Սեմիրամիդայի ամուսինն էր, քանի որ Նինոսի հայրը հինգերորդ ծնունդն էր Ներրոթից. հետևապես Ներրոթն այլ է և Բիլն այլ, քանի որ Նինոսի հայրը, ինչպես ընդհանուր պատմությունն է մեզ ուսուցանում, Բիլն է. և լուրմ են Ներրոթի սպանման մասին Հայկից (Հատուից), մինչդեռ Խորենացին (Խորանեյին) Հայկի (Հատուի) ձեռքով սպանել է տալիս Բելին, այսինքն Բիլին, որին նրանք Արբեյ կամ Արբիլ են կոչում, և որը նույն Բիլն է: Իսկ Բիլի արշավանքների մասին տիեզերական բոլոր պատմությունները հակասակն են ասում:...

ՕՐԱԳՐԻՑ

1810 թ. դեկտեմբերի 14-ին [եւ՝ Թեյմուրազս՝ և Սուլոմոն Ռադմաձեն] Երևանյան երկրից՝ Արագի (Արեղի) և Սև ջրի (Ղարասուի) միախառնման տեղից ելանք և հասանք Պետերբուրգ 1811 թվի հունվարի 22-ին, կյուրակեին:...

Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Հմմտ. Ի վ. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ի, Վրաց գրի գիտությունը կամ հնագրությունը, վրացերեն, Թբ., 1949, էջ 154—238, 266—272 մանավանդ 195—203 (տախտակներով): Ն ու յ ն ի՝ Հայոց հին պատմական գրականությունը, վրացերեն, Լ, Թբ., 1935, էջ 171—183. Կ. Կ ե կ ե լ ի ձ ե, Վրաց հին գրականության պատմությունը, հ. 1, Թբ., 1951, էջ 69—70: Լ. Մ ե լ ի ք ս ե թ Բ ե կ, Հայոց հին գրականության պատմությունը, վրացերեն, Թբ., 1941, էջ 12—13 և ծան. 1: Գ. Ի ն գ ո ռ ո զ՝ վ ա, Անտիկ շրջանի վրացական գրի հուշարձանները, վրացերեն՝ ռուսերեն ամփոփումով, — «Известия Института ЯИИМК, X, 1941, էջ 411—427: Վրաստանի պատմությունը հնագույն ժամանակից մինչև մեր օրերը, ձեռագրի իրավունքով (մակետ), վրացերեն, Թբ., 1940, էջ 62—63: Վրաստանի պատմությունը հնագույն ժամանակից մինչև XIX դարի սկիզբը, վրացերեն, Թբ., 1948, էջ 92—94, և այնտեղ կցված տախտակը. История Грузии. Часть I. С древнейших времен до начала XIX века. Т., 1950, стр. 93—95 и таблица там же.

<sup>2</sup> Խորենացու «Խորանեյի» հորջորջումը, թվում է, Թեյմուրազը գործածում է Դավիթ Արեքսի-Մեսիթիվիլու ազգեցությամբ (հմմտ. այս աշխատության ծԲ գլուխը):

<sup>3</sup> «Ղալկ» ձևն ինքնին աղացույց է Թեյմուրազի կախման ռուսերեն թարգմանությունից, ուր ունինք Гайк:

<sup>4</sup> Պիտի լինի՝ առաջին գրքի (հատորի) V գլխում:

<sup>5</sup> Հայերեն բնագրում՝ Քուչ:

<sup>6</sup> Հմմտ. Մանգոց գրքի X, 6՝ «Եւ որդիք Բամաց՝ Քուչ և Մեսարիմ, Փուզ և Բանան»:

ԻԸ

## ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՆԵՐ

«ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

XVIII—XIX դդ. վրաց գրականությունն առանձնապես հարուստ է անանուն հեղինակների կազմած «քրոնոգրաֆիա»—«կինկլոս»-ներով («Ժամանակագրություն»—«Գավազանագիրք»-ներով): Այդ «քրոնոգրաֆիա»—«կինկլոս»-ներից մի քանիսը պարունակում են տեղեկություններ Հայաստանի և հայերի մասին:

Ահա այդ հուշարձանների մասուցած տեղեկություններն ևս:

I

Էրիսթաֆների օրհներգությունը կցված կինկլոսներում 1072—1605 թթ. շուրջը (հրատ. Е. Такайшвили, Хроника Эриставского Акафиста, — «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», XXIX, 1901, стр. 103—114).

266—1578 թ. Սվիմոն թագավորը՝ վերագառնալով օտարությունից (գերությունից)՝ գրավեց Գորվա բերդը, նվաճեց Քարթլին, Սոմխիթն ու Լոռին:

273—1585 թ. Սվիմոն թագավորը և [Մանազ-]փաշան ճակատամարտ ունեցան Լոռիում: Թագավորը հաղթեց, ուսումններից սպանվեց մինչև 472 հոգի:

273—1585 թ. թագավորը գրոհ տալով վերցրեց Լոռի այրերը թվով մինչ իննը:

273—1585 թ. ապրիլի 1-ին Սվիմոն թագավորը մոտեցավ Լոռվա բերդին և հունիսի 10-ին գրավեց այն:

287—1599 թ. ... Սվիմոն թագավորը գերի ընկավ, իսկ Ջափար-փաշան նվաճեց ամբողջ Սոմխիթն ու Լոռին:

II

Վրաց մեջ գրագիտությունն տարածող նախկին ընկերություն (այժմ Վրաստանի պետ. թանգարանում) հավաքածուի № 252 ձեռագիր-ժողովածուին կցված կինկլոսներում 1444—1702



**ԹԹ.** շուրջը (հրատ. Ե. Такайшвили, Материалы для истории Грузии, Т., 1895, стр. 24—29):

244—1556. Այս թվին շահ թամազը<sup>2</sup> նստեց Քարթլիում և Սոմխիթում...

## III

Իկորթայի վանքի «Տոնական»-ին կցված կրնկոսում 1431—1737 թթ. շուրջը (հրատ. Ս. Կակարաձե, Իկորթայի № 6 Տոնականի քրոնիկան, վրացերեն, Թբ., 1912, էջ 4—6):

1431 թ. Ալեքսանդրե թագավորը<sup>3</sup> գրավեց Լոռին...

1729 թ. Այս թվին հայերը շեղվեցին<sup>4</sup>:

## IV

Ղանչաթի վանքի «Տոնական»-ին կցված կրնկոսներում 1444—1754 թթ. շուրջը (հրատ. Ե. Такайшвили. Канчаестский „жам-гулани“ и исторические приписки его кинкроса,— „Сборник материалов для описания местностей и племен Кавказа“, вып. XXIX, 1901, стр. 123—137).

227—1539. Այս թվին հայերը շեղվեցին ու Թեոդորոսի (Թեոդորի) կիրակին ուտիս ունեցան<sup>5</sup>...

323—1635. Այս թվին խոնթքարն<sup>6</sup> եկավ և Երևանը գրավեց...

414—1726. Այս պահին Քարթլին թուրքերի (թաթարների) ձեռնին էր, և իրանական երկրին՝ թավրիզից հայսկույս քաղաքներին, երկրներին՝ Երևանին, Շեմախային և ուրիշ շատ [տեղեր]ին տիրել էին ու ստրկացրել:

## ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Սվիմոն I, Քարթլիի թագավոր, 1538—1600 թթ.:

<sup>2</sup> թամազ I, Պարսից շահ, 1525—1575 թթ.:

<sup>3</sup> Ալեքսանդրե I, Քարթլիի թագավոր, 1413—1442 թթ.:

<sup>4</sup> Խոսքը ծոպատկի մասին է:

<sup>5</sup> Նույնը:

<sup>6</sup> Մուրադ IV Ղազի, Օսմանցոց սուլթան, 1622—1639 թթ.:

<sup>7</sup> Տե՛ս 5-րդ ծանոթ.:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ XII—XVIII ԴԴ.  
ՎՐԱՑ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Ա

## ԱՆԱՆՈՒՆ (XII Գ.)

«ՎԻՍՐԱՄԻԱՆԻ»

(ՁԱՆՐԱԴԳԻՆ ԳՈՒՐԳԱՆԻԻ ՎԻՍ-ՈՒԱՄԻՆ-Ի ՎՐԱՑԱԿԱՆ ՎԵՐՍԻԱՆ)

Ճահրադդին Գուրգանիի «Վիս-ո-Ռամին» սիրավեպի (գրք-ված 1048 թվին)\* վրացական վերսիան, որ ներկայացնում է իրենից ազատ թարգմանություն պարսկերենից և վերամշակում անհայտ անձնավորության (մի ենթադրությամբ՝ Սարգիս Թմոզվելու) կողմից, համենայն դեպս, ոչ ուշ քան XII դարի վերջերը, — «Վիսրամիանի» վերնագրով և արձակագիր ձևով է հասել մեզ: Այս վերսիան հրատարակվել է 3 անգամ. ա. Ի. Ճավճավաձեի, Ալ. Սարաջիշվիլու և Գ. Ումիկաշվիլու խմբագրությամբ, 1884 թ., բ. Ալ. Բարամիձեի, Գ. Ինգուրոզվաջի և Կ. Կեկելիձեի խմբագրությամբ և Յուստին Արուլաձեի աշխատակցությամբ (Իբրև բառարան կազմողի) 1938 թ., գ. Սոլոմոն Ղուբանեյշվիլու խմբագրությամբ, 1949 թ. (Վրաց հին գրականության ծաղկաքաղ, II, Թբ., էջ 140—186): Նույնը ուսերեն լույս է տեսել 2 տարբեր թարգմանությամբ. մեկը՝ Բ. Խուրդենկոյի, ակադ. Հ. Օրբելու խմբագրությամբ 1938 թվին — «Висрамиани. Грузинский роман XII века и персидская поэма XI века Вис и Рамин. В изложении и переводах Б. Т. Руденко и М. Л. Дьяконова». М.-Л., 1938 (Висрамиани — грузинский роман XII века. Изложение и перевод Б. Т. Руденко, стр. 1—153), մյուսը՝ Ս. Իորդանիշվիլու, Վ. Էլսների խմբագրությամբ, 1949 թվին — «Висрамиани, Роман, Перевод с древнегрузинского, предисловие и комментарии С. Иорданишвили. Литературная редакция В. Эльснера. Тбилиси, 1949, VIII+381 стр., նաև անգլերեն՝ O. Wardrop-ի թարգմանությամբ 1914 թ. (Visramiani... Translated from the georgian versium by Oliver Wardrop, London, 1914).

\* Հրատարակված թեհրանում 1865 և 1935 թթ.:

Այս վեպում ուղադրության արժանի է. ա. Շիրինի հիշատակությունը՝ 3 անգամ (գլ. 2, 24, 82), բ. Արտավազգի՝ 1 անգամ (գլ. 37), և գ. Հայաստանի՝ 3 անգամ (գլ. 1, 35, 89):

\* \* \*

ՀԱՅԱՍՏԱՆԸ

Գլ. 1 ... [Սուլթան Տուղուրբեկը՝ ... լսելով ավագների և մեծամեծների խորհուրդը և զորք ժողովելով]՝ կոչ արավ երեք թագավորություններին. ապա՝ բաժանելով զորքը՝ ուղարկեց, մի [մասը]՝ Քիրման, մեկը Մոսուլ, մեկը Ասփազ, մեկը Հայոց գավառները, մեկը Հունաստան: Եվ ամեն տեղից բոլորը վերադարձան մեծ հաղթանակով:

Գլ. 35 ... Մոաբադ շահ արքան հաղթող և ուրախ վերադարձավ պատերազմից... Նա եկավ իր երկիր Խորասանը և մասով Մարավ քաղաքը: Ամբողջապես գրավել էր Ռանի և Հայքի երկրները, և պատանդներ ու հարկ էր վերցրել հունաց թագավոր-կայսրից:...

Գլ. 89 ... Վիսը ծնեց երկու որդի... մեկին կոչեցին Խորշեդ, մյուսին Ջիմշեդ:... Մեկին տվին ի սեփականություն Խորասանն ու Խվարազմը, մյուսին Ասորիքը (Շամի երկիրը), Եգիպտոսը և Ղիրոանը:... Իսկ Առանը, Հայքը և ամբողջ Ասրպատականը [Ռամինն] իրեն վերապահեց:...

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

<sup>1</sup> Տուղրբեկի մասին տե՛ս Вл. Гордлевский, Государство Сельджукидов Малой Азии, М.-Л., 1941, стр. 23, 81, 141, 158:

Բ

Չ Ա Խ Ր Ո Ւ Խ Ա Չ Ե (XII Դ.)

«ԹԱՄԱՐԻԱՆԻ»

Չախրուխաձեն XII դարի բանաստեղծ է, նեղինակ Թամար թագուհուն նվիրված ներբողյանների, որոնց ընդհանուր թիվը է 115՝ յուրաքանչյուրը 8 տողից: Մի ժամանակ Ն. Մառը Չախրուխաձեին նույնացնում էր Շոթա Ռուսթավելու հետ:

Ներբողյանները, որ ամբողջացրած են մի ընդհանուր վերնագրի՝ «Թամարիանի»-ի տակ, նրատարակված են 7 անգամ. ա. Պ. Իոսելիանոսը՝ 1838 թ., բ. Դ. Չուրինովի՝ 1863 թ., գ. Չ. Ճիճինաձեի՝ 1882 թ., դ. Ն. Մառի՝ 1902 թ., ե. Ս. Կակարաձեի՝ 1913 թ., զ. Նույնի՝ 1937 թ., և է. Ս. Ղ'ուբանեյշվիլու՝ 1949 թ. (հիշյալ ծաղկաքաղում, II, 188—198): Ակադ. Ն. Մառի նրատարակությանը կցված է ուսումնասիրություն՝ Н. Марр. Древне-грузинские описцы (XII в.). II. „Певец Тамары“ [Тексты и Разыскания по армяно-грузинской филологии], IV, СПб., 1902, էջ ոգ.—րմ, 77—106): Ռուսերեն չափածո թարգմանությունը տե՛ս գրքում. „Чахрухадзе. Тамариани. Перевод с грузинского Шалва Нуцубидзе“, Тбилиси, 1942 (վերջինում ամեն մի տուն երկուսի է բաժանված, ամբողջը 228 տուն):

Այս երկում Հայաստանի և հայերի հիշատակությունն առկա է 18, 32, 33, 58, 74 և 112-րդ տներում (համաձայն Ս. Կակարաձեի նրատարակության):

- տուն 18 «Երդնկայի տերը՝... Սեգոր քանդողը...»:
- » 32 [Թամարն]
  - «Գառնի կանչեց ինձ՝ նրան գովարանողիս...»:
- » 33 «[Թշնամուն]... զիճիր Ռանին:...
  - Երբեմն թո՛ղ որ Ամբերգին մոտենա...»:

- տուն 58 «Մինչև որ Արման[շահ]ը ձեռները ոլորի,  
Ուրախությունից հոգին կվառվի»:
- » 74 «Բորքարն՝ ինչո՞ւ է վազում, վազում 'Իվին՝  
Երբեմն բերկրանքին մութ սահման դնելու,  
Այլոց տիրոզներին, հարկ գլխոզներին  
Սաստիկ ա՛ն ու երկյուղ նորից ավելացնելու:  
Մի օր Տառյում, ավելցավ Օսեթը,  
Իսպիր և Շիրվանը դժվար է շրջել»...
- » 112 «Ո՞վ է քեզ նման չքնադ-գեղեցիկ  
Վարքով և մտքով, ոգով ոնց հստակ:  
Ո՞վ է Անիում: Ովքե՞ր և ուր...»:

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1 Նույն Արուբեքը՝ Ազրբեջանի աթարակը:

9

Ա Ն Ա Ն Ո Ւ Ն (XVII Դ.)

«ՌՌՍՌԻԳԱՆԻԱՆԻ»

Անանուն հեղինակի կամ հեղինակների գրչից ելած առասպելական բնույթ կրող «Ռուսուդանիանի» ընդարձակ վեպը (պոեմը), որ ցարդ հրատարակված չէ. հայտնի է միմիայն այն քաղվածքների հիման վրա, որ առկա է XIX—XX դդ. գիտական գրականության մեջ՝ ահագ. Մ. Բրոսսեի, պրոֆ. Դ. Չուբինովի, պրոֆ. Ալ. Խախանովի, ահագ. Ն. Մառի, պրոֆ. Ա. Ծանիձեի, պրոֆ. Ալ. Բարամիձեի և ուրիշների հրատարակություններում, մասամբ նաև ուսերեն թարգմանությամբ Ն. Մառի (Н. Марр. Грузинский извод сказания о трех остроумных братьях из Русуданиани,— „Восточные заметки, Сборник статей“, СПб, 1895, стр. 221—259):

Այս երկը ոմանք՝ ինչպես, օրինակ, Չուբինովը և Խախանովը, վերագրում են XIII դ., ոմանք՝ օր. Բրոսսեն՝ XV դ., մյուսները՝ օր. է. Թաղ՝ այլ վիճի, XVI դ., վերջապես Ն. Մառը, Կ. Կեկելիձեն և Ա. Բարամիձեն՝ XVIII դ. (համա. Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմությունը. հին գրականություն, վրացերեն, II, Թբ., 1952, էջ 320—325. Ալ. Բարամիձե, Էսքիզներ վրաց գրականության պատմությունից, վրացերեն, II, 1940, էջ 86—113):

«Ռուսուդանիանի»-ի լավագույն և լրիվ ձեռագիրը Վրաստանի Կենտրոնական պատմական արխիվի հավաքածուի № 102-ն է (XVII—XVIII դդ.), որից (էջ 257ա—257բ) մենք և քաղել ենք ստորև թարգմանաբար օգտագործվող հատվածը «արևելյան նվագի» մասին:

[ԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՎԱԳԸ]

Չարկեցին քնարին (չանգի), վնին (բարբիթի), ծնծղային (ծինծիլա), երգեհոնին (օրդանո), տավիղին (մուղնի), քյաման-

չային (քամանչա) և թամբուրին (թանրուրի)<sup>1</sup>, և այս բոլորի նվագումով ու այսպիսի հրաշայի ձայներով երգում էին այնպես, որ մարդու ականջը սրանից դուրեկան բան լսած չպիտի լիներ: Գալիս էին օտար թոշունները և ձայնակցում էին քրնջույ՝ ձայնին: Այսպես չերեացին այն տան ավագագույն քնարերգուները (մեշանդե), ինչպես հայերն էին առել պարսկական հրաշալի եղանակով:

**ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

<sup>1</sup> Արեւելյան գործիքների գործածության մասին Վրաստանում տե՛ս Իվ. Չավաթիշվիլի, Վրացական երաժշտության պատմության հիմնական խնդիրները, վրացերեն, Խր., 1938:

Դ

**ՓԱՐՍԱԳԱՆ ԳՈՐԳԻՉԱՆԻՉԵ (XVII Դ.)**

«ԽՈՍՐՈՎ ԵՎ ՇԻՐԻՆ»

Փարսագան Գորգիջանիձեն արդեն ծանոթ պիտի լինի ընթերցողին այս աշխատութեան II հատորի ԺԴ գլխից (էջ 82—117), ուր ներկայացրած է, ըստ կարելիության մանրամասն կերպով, նրա կենսագրության և գրական գործունեության բնութագիրը համապատասխան քաղվածքներով հանդերձ, թարգմանաբար՝ նրա «Վրաստանի պատմություն» և «Օսմանցոց թագավորների պատմությունը» երկերից:

Այստեղ մենք, սակայն, թույլ ենք տալիս մեզ կրկնելու այն, ինչ որ գրել էինք «Խոսրով և Շիրին» վեպի շուրջը (էջ 86—87):

«Չնայած այն հանգամանքին, որ Փարսագան Գորգիջանիձեի «Վրաստանի պատմության» ա. մասը լուրջ պատմական երկասիրութեան տպավորութեամբ չի թողնում, այլ առասպելի բնույթ է կրում, — գրում էինք մենք, — այնուամենայնիվ այն առանձնապես հետաքրքիր է հայագիտական տեսակետով, քանի որ պարունակում է, ի միջի այլոց, Հայոց դարձի պատմությունն ու Խոսրովի և Շիրինի զրույցն ամենայն մանրամասնութեամբ, որը հեղինակը գրի է առել գլխավորապես բանավոր ավանդությունների հիման վրա, մասամբ օգտագործելով (Հայոց դարձի վերաբերմամբ), ինչպես մենք պարզապես ունինք, և գրավոր աղբյուրները, բայց այլանդակ ձևով (Ագոթանդեղոս, Խորենացի, Գաշաճի Թուղթ, Վարդաթա Խաչի պատմությունն ըստ «Յայսմաուուրք»-ի և այլն)»: Ապա պետեզելով նույն II հատորում Հայոց դարձի պատմությունն ըստ Փարսագան Գորգիջանիձեի «Վրաստանի պատմության» անտիպ ա. մասի՝ ամբողջական թարգմանութեամբ, մենք խոստանում էինք Խոսրովի և Շիրինի զրույցը, որն «ավելի գեղարվեստական քան պատմական երկի նշանակութուն ունի»:

հրապարակ հանել այն հատորում, ուր, ի միջի այլոց, «ամփոփած կունենանք համապատասխան նյութեր վրացական զեղարվեստական գրականությունից» և այլն:

Ահա այդ խոստումն է, որ մենք այժմ կատարում ենք, տալով մեր թարգմանությամբ «Խոսրով և Շիրին» վեպի այն վերսիան, որ Փարուզան Գորգիջանիձեն մտցրել է իր «Վրաստանի պատմության» ա. մասում և որը, ի դեպ հիշենք, վերջերս հրատարակվեց պրոֆ. Ալ. Բարամիձեի կողմից. «Խոսրով-Շիրինիանի»-ի վրացական վերսիաների շուրջը, վրացերեն, — «Գրական հետազոտություններ», 1, Թբ., 1943, էջ 102—106: Մեր ձեռքի տակ է եղել ՍՍՌՄ Գիտ. ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի, նախկին Ասիական թանգարանի, Georgian հավաքածուի № 6 ձեռագիրը (էջ 30—37), նաև Տիդիսի նախկին Եկեղեցական թանգարանի (այժմ Վրաստանի պետ. թանգարանում) հավաքածուի № 1787 գրչագիրը (էջ 3բ—4ա):

Ե Ն Ո Ս Բ Ո Վ Ե Վ Շ Ի Ր Ի Ն Ե 1

[1] էրանի արքայի գլխով անցածը...

Բաղդադի խալիֆայի գործը և Վրաստանի վրա արշավելը: Բահր-Չուրինյաններ, Սելջուկյան, Խորազմյան, Չինգիզյան, Օսման-Չուգյան, Քուրաքանյան, Թուրքմանյան և Իսմեիլյան սուլթանների ուժեղացումը... Շահ-Սեֆությամբ են հիշատակվում և թագավորում<sup>2</sup> (sic): Ինչպիսի սրանցից հնում բան եղավ Վրաստանում, այս է:

Խոսրով Պարտավելյանը, Տրդատ արքայի որդին, հայոց արքան, վախճանվեց, և նրանից երկու արու զավակներ մնացին: Նա ուներ քույր՝ Մահրանու, որը Տրդատ արքայի դուստրն էր. Խոսրովի որդու անունն էր Տիրան (Տերան), որը մանուկ էր և նրա տեղ հորաքույրն (բնագրում՝ մամարիդա. sic) էր թագավորում: Խոսրովն ուներ դուստր Շիրին անունով, որին դաստիարակում էր հորաքույրը: Եվ այսպես է ասված, որ սքանչելիությամբ և չքնադությամբ, քնքշությամբ և գեղեցկությամբ, բոյով և գլխամագով, ձայնով և վարքով ծնված այս աղջկան ոչ ոք չկար հավասար: Թուսաստանի արքան կամեցել էր ուղել, և դեռ չէին տարել<sup>3</sup>. Ձմռանը Պարտավում (Բարդայում) էր լինում և ամռանը Լոռի էր գնում<sup>4</sup>: Գնացող-եկողները այնպիսի դոժք ասացին Շիրինի մասին Խոսրով արքային, որը Բայանց սեռից էր և էրանի և Արարատանի արքա, որ այս Խոսրով արքան՝ չտես-

նելով Շիրինին՝ անհամբեր նրա սիրահարն էր դարձել: Եվ Շիրինին կցեցին վանական հագուստ հագած սքեմավոր տղամարդիկ և կանայք, որոնք բազում աղոթքով սիրելի դարձան Շիրինին, որը նրանց պատվով էր վերաբերում և նրանց խոսքը չէր կոտրում<sup>5</sup>: Եվ նրանք առավել Խոսրով արքայի գովքն էին ասում, և ուր էլ Շիրինը գնում էր, ծառից կախում էին Խոսրովի, իրրև կենդանիի և ձի հեծածի, նույնությամբ նկարը: Եվ Շիրինը զարմանում էր և հարցնում նրանց. «Երնեկ թնչ պիտի լինի, որ ուր էլ գնում եմ, այս չքնադությունն եմ տեսնում»: Իսկ նրանք այսպես էին բացատրում. «Աստծո ողորմածությունն է դեպի ձեզ, որ ամեն տեղ Խոսրով արքայի [պատկերն] են կախ տալիս, որ քեզ ամուսնացու ենք նշել և քեզնից զատ մարմնավորներից և ոչ մեկին այսպիսի ողորմածություն ըստին չի ընկել»: [Շիրինին] այս շատ դուր եկավ, նա ուրախացավ, և հարցրեց նրանց. «Հապա թնչ պիտի անեմ»: Նրանք այսպես պատասխանեցին. «Մերոնցից մեկնումեկի ձեռքով այս նկարը Խոսրովին ուղարկեք և հաղորդեցեք, որ աստծու հրամանը կատարվել է, որ այս տեսքի և չքնադության տերը մեզ ևս տիրի, տնողեցեք, թե ձեր նկարն է, տեղեկացրեք մեզ»<sup>6</sup>:

Գործի գլուխ գալը շատ դուր եկավ նրանց: Վանականը նկարը հանեց և դնաց, և սքեմավորը աղջկա մոտ մնաց: Իսկ Շիրինն անհամբերության մեջ էր և լուր էր սպասում Խոսրովից: Երկու ամսից հետո մի բարի վարդապետ պատասխան բերեց և Շիրինի փեսան ու չքնադությունն ու հագուստը տախտակի վրա նկարած մատուցեց նրան, հետն էլ Խոսրով արքայի նամակը Շիրինին՝ կնքված՝ նրա ձեռն հանձնեց: [Շիրինը] համբուրեց կնիքը և բացեց ծայրը և՛ կարգաց թե ոչ՝ սկսեց լալ և արտասուք թափեց, ապա շունչ առավ և հարցրեց. «Ի՞մ տեսքն ու հագուստը նա սրտեղից գիտեր»: Ձեկուցին. «Ինչպես աստված ողորմած է դեպի քեզ, նույնպես ողորմած է դեպի նա»: Այստեղ աստված քեզ ցույց տվեց նրա [պատկերը], և այնտեղ նրան ցույց է տվել քո [պատկերը]: Աղջիկն ասաց. «Հապա թնչպես վարվեմ, որ լավ լինի. հորաքրոջս տեղեկացնենք»: Նրանք այսպես պատասխանեցին. «Երեք օր պաս պահենք և աստծուն աղոթենք և աղաչենք, որ նա հայտնի, թե որն է լավ, որ այնպես վարվենք: Եվ դու չքավորներին մի բան տո՛ւր»:

Չքավորներին և որբնայրիներին ու որբերին շատ բան բաժանեցին. և իրենք էլ պաս պահեցին և Շիրինին էլ պահել:

տվին: Այն վանականը, որը Պոստոլի նկարը տարել էր և Շիրի-  
 նինը բերել, վերին աստիճանի լավ նկարիչ էր և Լոռուց մինչև  
 Մադիան գնալ-դալը այնպես էր նկարել, որ ուր էլ ջուր, աղ-  
 բյուր, բլուր, լեռ, սար ու դաշտ, գառովեր-զառովայր, գյուղերն  
 ու քաղաքները տանող ճանապարհներ և կայաններ և օրվա ըն-  
 թացքում անցնելիք տարածութունն այնպես էր նշել, որ ոչ մի  
 ուղեցույց էլ պետք չէր: Եվ այս նկարը թաքցնելով գովեց և  
 երեք օր պաս պահելուց հետո՝ չորրորդ օրն առավոտյան ժա-  
 մերգության միջոցին վանականը բարձրաձայն փառարանութուն  
 և գոհութուն աստծուն բացականչեց: Շիրինն այնպես դարմա-  
 ցավ վանականի բարձրաձայն բացականչութունից, որ հարց-  
 րեց. «Ի՞նչ պիտի լինի քո այդպես բարձր բացականչութունը»:  
 Նա այսպես ավետեց. «Երանի՛ քեզ, որ աստված քեզ այսպիսի  
 սղորմածութուն շնորհեց, որ այստեղից մինչև Մադիան ճանա-  
 պարհը քեզ նկարված օրվեց»: Նամանավանդ Շիրինն ուրախա-  
 ցավ, և բացին թուղթը, ուր ճանապարհներն էին վրան նկա-  
 րած, և այն տեղերը, ուր ճանապարհների անուններն էին գրը-  
 ված: Եվ նկարիչը բերանացի ցուցմունք տվեց և աղջիկն էլ հա-  
 վատաց երկնքից իջնելը, և հարցրեց վանականին. «Ի՞նչ պիտի  
 անել»: Նա պատասխանեց. «Ձեր հոր ձին, որի անունն է Շար-  
 դիզի՞, ձեր հորաբրոջ ախոռումն է կապած. խելոք է՝ ինչպես  
 մարդ և սրընթաց՝ ինչպես քամին և չնոգնող, և յոթ օր ու  
 գիշեր քաղց ու ծարավին այնպես կգիմանա, որ չի նկատվի.  
 պատերազմում ինչպես հեծյալը, նույնպես և ինքը կսկսի պա-  
 տերազմել՝ առաջից կծելով և ասպատակումով և ետևից աքացի  
 տալով. այն խնդրիր քո հորաբրոջից, նրա վրա հեծիր և ճանա-  
 պարհի պատկերը հետո՞ տան, և նա Պոստոլ արքայի մոտ Մա-  
 դիան կտանի: Շիրինը լսեց վանականի խոսքը և հորաբրոջից  
 խնդրեց Շարդիզին և վրան հեծավ:

[2] Լոռուց [գնացած] Շարդիզ ձիով Շիրինի կորուստը,  
 Տրդատ արքայի թոռնիկի, Հայոց խոսքով արքայի դստեր  
 և հորաբրոջ և եղբայրների ողբ ու լացը [այս առթիվ]

Ահա Հայոց Պոստոլ արքայի թույր Մահրանու թագուհուն  
 գեկուցին. «Շարդիզ ձին քո եղբորորդի Շիրինի գլուխը թոցրել  
 է. ձիով մարդկանց հետապնդել տվինք, մինչև Գյոքչայի ծովը  
 հետքը տեսան, իսկ դենը չկարացին ստուգել. և չգիտեն՝ ար-

դյոք ծովը ընկավ, թե՛ ձին որևէ տեղ կորցրեց: Թագուհին սկսեց  
 գլխին խփել և երեսը գջլել: Եվ արքունիքում էին թագավոր-  
 ները՝ սկսած Դարուբանդից մինչև Երզնկա, որոնք ամենուրեք  
 որոնելու մարդիկ հղեցին, բայց ոչ մի տեղից ոչ մի բան չմա-  
 ցան. և Լոռուց տեղահան եղան և Մուղան ձմեռանոցը գնացին,  
 կանգ առնելով Կուր և Արագի միախառնման տեղում: Եվ Շի-  
 րինի ողբն ու քելեխն (աղապն) էին կատարում, երբ էրանի  
 Պոստոլ արքան այնտեղ հասավ: Ինչպես Շիրինը նրա ետևից  
 էր գնացել, նույնպես և Պոստոլը Շիրինին փնտրելու էր եկել,  
 և ճանապարհին իրարից շեղվել էին: Սակայն Պոստոլը իր մորը  
 պատվիրել էր, թե որ Հայոց արքայադուստրը գա, այս ու այս  
 այգում իջեցրեք և լավ դիմավորեցեք:

[3] Այստեղ՝ Շիրինի հասնելը Մադիան և խոսքովի գալը Մուղան՝  
 իբար որոնելու նպատակով

Այստեղ [խոսվում է թե ինչպես] ընթրիքի միջոցին Շիրի-  
 նը հասավ Մադիան՝ արքունիքը, և խփեց դուռը և արքայա-  
 մայրն ընդառաջ ելավ և տարավ նրան արքայական պալատը և  
 այգիում իջեցրեց [ձիուց], վերին աստիճանի սիրալիք դիմավո-  
 րեց, գուրգուրեց և բազում ակնեղեն-մարգարիտներ մատուցեց,  
 սակայն Պոստոլին չտեսավ: Ակնեղեն-մարգարիտները [Շիրինը]  
 սայլորի չըր տեղ ընդունեց, և ինչ որ փնտրում էր, այն չգտավ:  
 Երեք օր սպասեց և չգիմացավ, ապա հարցրեց, թե որ ճանա-  
 պարհով է Պոստոլը գնացել: Եվ ոչ ոքին չնախազուշացնելով՝  
 հեծավ Շարդիզի վրա և արքայի հետքով սլացավ. և հարց ու  
 փորձ անելով՝ հասավ Մուղան: Սակայն թագուհին և Հայոց ար-  
 քան՝ երիտասարդ Տիրանը (Տերանը) և նրանց թագավորներն  
 ու իշխանները չէին իմացել, որ Պոստոլը էրանի թագավոր է  
 եղել:

Մինչդեռ ձայն տարածվեց, որ անհետացած Շիրինը Շար-  
 դիզ ձիով եկել է. ընկավ մեծ ուրախութուն և ժողովուրդը (եր-  
 կիրը) արքայական ճամբարի առաջ հավաքվեց և՛ երկրպագելով  
 մեծամեծներին՝ փառարանեցին աստծուն. ոմանք Շիրինին էին  
 համբուրում, իսկ ոմանք Շարդիզի ոտները, և հորաբույրն և եղ-  
 բայրները վզից էին փաթաթվում: Սկսվեց նրանց մեջ մեծ ուրա-  
 խութուն և խրախճանք, երգեցողութուն և նվագում, և հրա-  
 պարակում գնդակախաղ, ձիարշավ և նետածգութուն: Եվ Շիրինը

աչքերն այս ու այն կողմն ուղղելով՝ փնտրում էր էրանի արքա Սոսրովին: Անսպասելիորեն դուրս ընկավ կապույտ նժույգի վրա նստած, գնդակը ձեռին, դեմքով գեղատեսիլ և ասպատակությամբ աննման, նորաբողբոջ բեխ-մորուքով էրանի արքան: Եվ գնդակը ոչ ոք չկարողացավ խլել, և գնդակն երբեմն այս կողմն էր գցում, երբեմն այն կողմը, և ոչ ոք դուրս չէկավ նրան հավասար:

[4.] Այստեղ խոսքով արքայի տեղեկանայր Մահբանու թագուհուց, նրա և Շիրինի սիրահարությունը և իրար փնտրողների Մուղանում հանդիպումը

Հայտարարվեց: էրանի արքա Սոսրովին Հայոց արքայի գահի վրա բազմեցրին և Շիրինին և հորաքույր Մահբանու թագուհուն և նրա եղբայր Տիրան (Տերան) թագավորին կողքին նստացրին. և տվին Շիրինին, որ թագուհի լինի: Եվ միմիայն նորեկ Սոսրովին հանձնեցին տերութունը, և նա մեծ շուքով Բաղդադի երկիրը մեկնեց, որպեսզի գարնանը ժամանի՝ հարսանիքը կատարելու:

Լսելով Շիրինի փախցնելը և Սոսրովի հետ նրան նշանելը՝ Ռուսաստանի արքան զորք ժողովեց և ավերեց [երկիրը] սկսած Արագ գետից մինչև Դարուբանդ, և Դարուբանդի բերդը խլեց<sup>8</sup>: Այս գեպքի մասին տեղեկացրին Մագիանում նստած Սոսրով արքային, որը հավաքեց էրանի, Հայոց և Վրաց զորքը և արշավեց Ռուսաստանի դեմ, և Իդիլի<sup>9</sup> գետից հայտկույս գտնվող Ռուսաստանի մասերն ավերեց և բազմաթիվ գերիներ և ավար բերին, և՛ Դարուբանդի բերդին պահապաններ նշանակելով՝ վերադարձավ:

Եվ Սոսրովի դեմ նրա հպատակ Բահրամ Չուրինը դուրս եկավ և իշխանութունը խլեց: Եվ Շիրինը մնաց հոր տանը: Եվ Սոսրովը գնաց [Բյուզանդական] կայսեր մոտ և զորք խնդրեց օգնութուն հասցնելու: Կայսրն իր գուստը Մարիամին տվեց որպեսզի էրանում թագուհի դառնա: Եվ արշավեց Բահրամի դեմ, նա ևս լավ պատրաստված դեմ դուրս եկավ և բազմիցս պատերազմեց: Եվ Սոսրով արքան հաղթող եղավ, Բահրամը փախավ և Հնդկաստանում ապավինեց: Իսկ Սոսրովը որտեղ և որքան էլ թշնամիներ և անհնազանդներ ուներ, բոլորին բնաջինջ արավ և հավատարիմներին շենացրեց (հարստացրեց):

[5.] Այստեղ՝ խոսքով էրանի արքայի հարսանիքը Հայոց խոսքով արքայի որդի Տրդատի դուստր Շիրինի հետ և նրա Մագիան հասցնելը

Սրանց առակը և զրույցը բազում է և առանձին կա ասված չափածոյով: Եվ նրանց վարքումն էլ երկար պատմութուններ է գրած<sup>10</sup>: Եվ բազում, լավագույն և թանկագին օժիտով, գանձարանով և աղխով տարան Մագիան և այնտեղ՝ նրանց օրենքի համաձայն՝ քառասուն օր հարսանիք կատարեցին: [Շիրինը] հղիացավ, [նրանից] արու զավակներ ծնվեցին: Եվ սկսեցին զարմանալի քննութուն: Շիրինը խիստ գեղեցիկ և բարեբարո էր: Սոսրովն ուրիշ կինարմատից որդի ուներ, որի անունն էր Շիրուա: Աստված խոսվեց, իր խորթ մոր վրա սիրահարվեց և հորը սպանեց և խորթ մոր հետ ուղեց ամուսնանալ: Շիրինը այսպես ապսպրեց. «Թե ինձ հետ ես ուզում ամուսնանալ, այն ինչ որ քո հայրն ամենից շատ էր սիրում, այն նրա հոգու [փրկության] համար տամ և կուզեմ քեզ»: Նա թույլ տվեց, [և] ինչ որ չքավորներին արվելու էր՝ տվեց. ինչ որ թագավորների և իշխանների վայել էր՝ ուղարկեց նրանց. ինչ որ այրելու բան կար, կրակը գցեց. ինչ որ կտորվելու էր՝ կտորատեց. ինչ որ կտրելու էր՝ կտրտել տվեց. ինչ որ սպանելու էր՝ սպանել տվեց. ինչ որ թափելու էր՝ թափել տվեց: Ինքը զլուլտվեց և ուրախ[ուրախ] ամուսնու մահձին հետեց և Շիրուային ապսպրեց. «Քո հորը՝ Սոսրով արքային, մատուցում կամփոփեմ և այսպես զլուլտված քեզ մոտ կգամ»: Շիրուան ուրախ էր. իսկ թեմն ու երկիրը Շիրինին հայնոյում էր, թե ինչու համար Սոսրովին թողեց և Շիրուային ուղեց:

Հենց որ Սոսրով արքայի [դին] գերեզման հասցրին, բոլորը դուրս գնացին: Շիրինը [իր] ամուսնու մատուռին մոտեցավ, հետն ծածուկ ունենալով սրած խանչալը: Այն խանչալի կոթը Շիրինը Սոսրով արքայի վրա գրեց և ծայրը իր սրտին կպրեց, և այնպես պինդ սղմեց, որ խանչալի ծայրը Շիրինի թիկունքով անցավ, և նա իր սիրելի ամուսնու վրա մեռավ: Իրսում Շիրուան, թագավորները և իշխանները սպասում էին [նրան], տեսան՝ ուշացավ, մտան [մատուռը]: Նկատեցին՝ Շիրինը [իր] ամուսնու վրայից մեռած: Ավելի մեծ լաց ու կոծ սկսեցին:

Իսկ Շիրուան՝ հայրասպանը՝ Շիրինին ուղեկու համար երկու աշխարհներում ամաչեցրած, արքունի տունը գնաց: Եվ



էրանցիք ատոււմ, պախարակում և նգովում էին նրան: Զորքը և թագաւորներն ու իշխանները նրանից երես դարձրին: Եվ Շիրուան երկյուզից զոհեց հոգին և ուրացավ աստծուն, և ոմանց գազտնի և ոմանց բացահայտ կերպով սպանել տվեց: Եվ Խոսրով արքայի որդուց՝ Շիրինից էին նրանք ծնված, թե ուրիշներից, ոմանց կոտորեց և ոմանց էլ սպանում էր մահով: Կայսեր դուստր Մարիամը՝ փախչելով՝ գլուխը բաց և լացով էրանցիներից խնդրեց օգնութուն հասցնել [վրեժը հանելու] հայրասպան և եղբայրներին կոտորող Շիրուայից: Եվ էրանցիք տեսան կայսեր դուստր Մարիամին, որը գլխարաց լաց էր լինում, և սպանեցին Շիրուային: Այսպես չափածո են ասել՝ հայրասպանը վեց ամսուց ավել չի թագաւորի<sup>10</sup>: Շատ առակ կարճ եմ ասել<sup>11</sup>:

**Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր**

1 Փարսադան Գորգիջանիձեի հաղորդած այս վերսիան «Խոսրով և Շիրին» պոեմի, ինչպես հայտնի է հիմնովին տարբերվում է Նիդամի Գանջեվի և ուրիշների մշակած վերսիաներից: Այս հանգամանքը վրացագետները (Իվ. Ջավախիշվիլին, Ալ. Բարամիձեն և այլն) բացատրում են նրանով, որ Փարսադանը ձեռքի տակ է ունեցել մի ինչ որ, դեռևս անհայտ հայկական՝ գրավոր, թե քանավոր աղբյուր: Համենայն դեպս, որ այս պատումի մեջ ամեն ինչ իրար հետ շփոթած և խառնված է և ժամանակագրութունն էլ ամենակողիտ կերպով խախտված, ապացույց է նրան, որ այստեղ մենք գործ ունենք վիպական և ոչ թե պատմագրական գրույցի հետ:

2 Տարօրինակ է արևելյան բանականների հարստութունների այս ձևով և այսպիսի հաջորդականությամբ հիշատակելը:

3 Այստեղ թերևս Անդրեյ Բոկոլյուբսկու որդի Յուրիի կամ Գեորգի Ռուսի՝ Վրաց թամար թագուհու հետ ամուսնանալու հեռավոր արձագանքը լինի:

4 Այստեղ, անկասկած, թամար թագուհու ճամբարի ամառ-ձմեռը տեղից տեղ անցնելու տրագիցիայի հեռավոր արձագանքը լինի (հմմտ. «Վրաց աղբյուրների» II հատորը, էջ 35):

5 Հմմտ. Սերեոսի վերսիան գլ. ժա—ժը, խդ՝ Սերեոսի եպիսկոպոսի Գատմութիւն, չորրորդ տպագրութիւն... ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան 1939, էջ 47—48, 125—126: Նաև՝ Л. Меликсет-Беков, Архетип поэмы „Хосров и Ширин“ в армянской редакции VII века, — „Сообщения Академии Наук Грузинской ССР“, т. III, 1942, № 10, стр. 1091—1098:

6 Այստեղ, անկասկած, շփումն կա Հոնիփսիմյանց վկայաբանության որոշ կետերի հետ, որ ինքը Փարսադանն է օգտագործել (տես «Վրաց աղբյուրների» II հատորը, էջ 93, 99):

7 Շարդիզը որոշ կետերում հիշեցնում է «Սասնա ծռեր»-ի Գուռլիկ-Ջալալին:

8 Այստեղ, կարծես, հեռավոր արձագանք լինի, բայց ազավազված ձևով օգտագործած, Գեորոս I-ի 1722 թ. արշավանքի պատմութունը ղեպի կասպից ծովը և Դարբանդ:

9 Հմմտ. Путешествие Ибн-Фадлана на Волгу. Перевод и комментарии И. Ю. Крачковского, М.-Л., 1939.

10 Այս ակնարկը, ինչպես ճիշտ նկատեց Ալ. Բարամիձեն («Խոսրով-Շիրինիանի»-ի վրացական վերսիաների շուրջը, վրացերեն, «Գրական հետազոտութուններ», I, 1943, էջ 69), հեռավոր արձագանքն է Ֆիրդուսու Շահնամի:

11 Այս խոսքերը վկայում են, որ Փարսադանի ձեռին եղել են Խոսրով և Շիրինի վեպի ինչպես չափածո, նույնպես և արձակ վերսիաները:

b

## ՍՈՒԼՆԱՆ-ՍԱՐԱ ՕՐԲԵԼԻԱՆԻ (XVII—XVIII դդ.)

## «ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԿԵՂԾԻՔԻ»

Սուլխան-Սարա Օրբելիանին նույնպես ծանոթ պիտի լինի մեր ընթերցողին այս աշխատության II հատորի ժե. գլխից (էջ 118—125), ուր ընդհանուր գծերով ներկայացրած է նրա կենսագրությունը և գրական գործունեության տեսությունը համապատասխան քաղվածքներով հանդերձ (թարգմանաբար) նրա «Բառարան» և «Ճանապարհորդություն դեպի Եվրոպա» երկերից։ Մեր աշխատության II հատորը լույս ընծայելուց հետո (1936) Սուլխան-Սարա Օրբելիանի երկերի հրատարակության գործը զգալիորեն առաջադիմել է։ Այսպես, օրինակ, հրատարակվել է «Ճանապարհորդություն դեպի Եվրոպա» երկը, որը մենք օգտագործել էինք նորագույն ձևագրից. երկը մեծ խնամքով է լույս ընծայված առանձին գրքով. «Սուլխան-Սարա Օրբելիանի. Ճանապարհորդություն դեպի Եվրոպա, Սուլոմոն Իորդանի շվեդերու խմբագրությամբ, առաջարանով, ծանոթագրություններով և բառարանով», Թբ., 1940: Անկախ սրանից, կրկին անգամ և մեծ խնամքով հրատարակվել է «Իմաստություն կեղծիքի» գործը, որ պարունակում է 171 առակ, նույնպես առանձին գրքով. «Սուլխան-Սարա Օրբելիանի. Իմաստություն կեղծիքի, Փիորգի Լեոնիձեի առաջարանով և Սուլոմոն Իորդանի շվեդերու խմբագրությամբ», Թբ., 1938: Բացի դրանից, նույն գործն առկա է ուսուցիչական 2 տարրեր թարգմանությամբ. մեկը՝ Ա. Յագարելու՝ 150 առակ պարունակող «Сулхан-Саба Орбелиани. Мудрость лжи. Перевод с грузинского Ал. Цагарели. Редакция, предисловие, комментарии С. Иорданишвили, литредакция Ю. Тынянова», Тб., 1939, մյուսը՝ Ելենա Դոդոբերիձեի՝ 152 առակ— «Сулхан-Саба Орбелиани. О мудрости вымысла, Москва, 1951:

Որքան մեզ հայտնի է, «Իմաստություն կեղծիքի» լրիվ հայերեն թարգմանությունը, կատարված Ֆիլ. գիտ. դոկտոր Արմենակ Մուրվալյանի աշխատությամբ, հանձնված է ապագրության Հայպետհրատին։ Նույն Հայպետհրատի տրամադրության տակ է գտնվում նույն գործի հատընտիրը՝ շուրջ 41 առակ Հարություն Միրիմանյանի թարգմանությամբ, որը հեռակալ վերնագիրն է կրում. «Սուլխան-Սարա Օրբելյան, Գիրք Իմաստության կեղծիքի (Առակներ). վրացերենից թարգմանեց Հար. Միրիմանյան»։

Մեր նպատակի համար հիշատակելի է միայն մի առակ (№ 115), որը «Ճապակազուխ» վերնագիրն է կրում՝ ըստ «Իմաստություն կեղծիքի»-ի վերջին (1938 թ.) հրատարակության (նույնը ուսուցիչական. Сковороды вместо голов, II. Человек со сковородной головой):

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

<sup>1</sup> Грузинская книга, библиография, том первый, 1629—1920. Das Georgische Buch. Vollständige Bibliographie, I. Band.. 1629—1920. Վրացական ՄՍՌ Գրապարտի հրատարակություն, Քբ., 1941 (վրացերեն), էջ 61—62, №№ 57, 58:

Կ Ց Ո Ր Կ

ՔՐԻԼԻՍԻԻ ՏՊԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ  
ԵՎ ՊՈՂՈՍ ՕՀԱՆԻՍՅԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԵՅԻՆ

Առաջին տպարանը Վրաստանում՝ դա Վախտանգ VI թագավորի հիմնածն է Քրիլիսիում, ուր 1709—1728 թթ. բնթացքում տպագրվում են մի շարք եկեղեցական գրքեր (ավետարան, սաղմոս, մաշտոց, ճաշոց և այլն) և, բացի դրանից, «Վարդենա՝ վոր»-ի անգրանիկ հրատարակությունը (1712): 27 տարվա բնդհատումից հետո՝ 1749 թվից այդ տպարանը վերսկսում է իր գործունեությունը, որը, սակայն, շարունակվում է մինչև 1772 թիվը և նորից ընդհատվում: Խնդիր է դրվում տպարանի վերակառուցման մասին, որը լուծվում է 1781 թվին, երբ ըստ էրեկլե II թագավորի հրամանի, Կոստանդնուպոլսից հրավիրվում է հայազն Պողոս տիրացու Օհանիսյանը:

Ահա այդ Պողոս Օհանիսյանի ջանքերով վերակառուցված տպարանում 1782 թվից սկսած տպագրվում են մի շարք խոսքուրիատառ վրացերեն գրքեր, որոնց վերջաբաններում հիշվում է այդ Պողոսի երախտիքը Քրիլիսիի տպարանի վերակառուցման գործում:

Այդպիսիներն են.

1. «Գովք առաջին՝ նոր տպարանի մասին» (Շեսխմա պիրվելի ախլիսա ամիս ծիգնթսարեճդավիսաթվիս) Պողոս Օհանիսյանի, Քբ., 1782, 30 էջ, 11×16 սմ.: Գրքի վերջաբանում մանրամասն խոսվում է էրեկլե II-ի կողմից Կոստանդնուպոլսից «տպագրիչ» (մեստամբե) Պողոս Օհանիսյանին հրավիրելու և նրա միջոցով Քրիլիսյան տպարանի վերանորոգման պատմությունը:

2. «Մաշտոց» (Կոնդակի), Քբ., 1783, 320 էջ, 17×21 սմ.: Գրքի վերջաբանում հիշվում է «տիրացու Պողոս, տիրացու Օհանեսյան հայազն (հասոյան) Կոստանդնուպոլսեցին», իբրև վերակառուցող Քրիլիսյան տպարանի:

ՈՒՂՂՈՒՄ

«Ճանապարհորդություն դեպի Եվրոպա» երկից «Վրաց աղբյուրների» II հատորում (էջ 125) բերած 3-րդ հատվածը՝ «Կ. Պոլիս» վերնագրով, որը Ս. Իորդանի շվիլում 1940 թ. հրատարակության 148 էջին է համապատասխանում, ուղղել այսպես.

Կոստանդնուպոլսում, Ղալաթիայում, Բերայում և Ուսքուլթարում հարկ են վճարում տասնհինգ տարեկանից մինչև վաթսուներեկանը:

Հուլյնը՝ քառասուն երեք հազար հոգի է:

Հայը՝ տասներեք հազար:

Հրեան՝ տասներկու հազար:

Կաթոլիկը (Փրանկը)՝ երկու հազար հոգի:

Քրիստոնյա եկվորը՝ չորս հազար:

Գերի զինանավ[եր]ից\* կամ այլ՝ երկու հազար:

Թուրքը (Թաթարը)՝ չորս հարյուր յոթանասուն և հինգ հազար:

Կաթոլիկ[ներ]ը (Փրանկ[ներ]ը) և Թուրք[եր]ը (Թաթար[ներ]ը) հարկ չեն վճարում:

\* Բնագրում՝ «կատարդիսա», այսինքն զինանավ, катер:

## Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Հեղինակը անհրաժեշտ է համարում նշել, որ «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ներկա՝ III հատորում անկարելի եղավ տեղ տալ Փետրալիզմի շրջանի մի շարք վրաց հեղինակներին, որոնց անունները հիշված են հատորիս «Առաջաբան»-ում (էջ 5—6, օրինակ՝ Թեյմուրազ II, Միրիան, Փեշանգ-Փաշվի Բերտղ'աձե, Նոզար Յիցիշվիլի, Բեսարիոն Գարաշվիլի (Բեսիկի), Գարսևան Ճավճավաձե, Իոսեթ Թրիլեիլի, Մաքսիմե և Զաքարիա Գարաշվիլի): Մրանց նվիրված գլուխները աննշան մեջբերումներով հանդերձ, տպագրության միջոցին, մեզանից միանգամայն անհավթ պատճառներով, ստիպված եղանք հանել: Հավանական է, որ այդ նյութերին անդրադառնանք տվյալ գործիս վերջին՝ IV հատորում, որը մոտիկ ապագայում պիտի հանձնենք արտադրության:

Լ.Մ.-Բ.

Քրեիլ-ի  
17.X.1955

Ց Ա Ն Կ Ե Ր

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ\*

Աբամելիք—Տես Աբիմելիքով	136, 137, 138, 139, 142, 143, 145,
Աբաշիձե Եվզեն—227	169, 172, 173, 174, 175, 176, 188,
Աբաշիձե Իոանե—40	199
Աբաշիձե Լեվան—226, 229	Ազատ-Մովսես — 52. հմմ. Մովսես
Աբաշիձե Քայխոսրո—226, 229	Ազատ
Աբաշիձեներ—165	Ազարիա Սսեցի, կաթողիկոս—99
Աբաս-ձիբզա, որդի Բարախանի—204,	Աղիզ-բեկ—202
206, 207, 208, 209, 229, 234, 235,	Աղորկ—32, 34
275, 279	Աթաբակ—16
Աբաս-չահ—19, 20, 63, 64, 68, 73,	Աթաբեկ մելիք—64
76, 78. Տես Շահ-Աբաս	Աթամ մելիք—107, 109
Աբգավար—71	Ալահվերդի սուլթան Այրուսլուի—174
Աբգար—298	Ալեքսանդր I կայսր Ռուսաց—208, 232,
Աբղուլարեկ, Աբղուլ-բեկ, արքայազն—	236, 276
26, 27, 117, 119, 123, 124, 125,	Ալեքսանդրե արքայազն, Էրեկլե II-ի
126, 172, 245	որդի—191, 204, 205, 206, 208,
Աբղուլ-խան—138, 142	228, 229, 231, 233, 235, 241, 244,
Աբղուլ-փաշա—109	245, 275, 277
Աբեսալոմ—165	Ալեքսանդրե արքայազն, Բաբար Թա-
Աբիմելիքով—266	զավորի որդի—226
Աբով մելիք—Տես Մելիք-Աբով—230	Ալեքսանդրե, Իմերեթի Թագավոր—20,
Աբուբեքիր—53	21, 53, 54
Աբուբեքր աթաբեկ—294. հմմ. Բորբար	Ալեքսանդրե II, Կախեթի Թագավոր—
Աբուլսվար—43	17, 18, 19, 63, 72, 76
Ադամ—Տես Արդամ	Ալեքսանդրե III, Կախեթի Թագավոր—
Ադամ մելիք—Տես Մելիք Ադամ, Մե-	120
լիք Աթամ	Ալեքսանդրե Մաղաշվիլի—255
Ադարնասե (=Ատրնեբսեհ)—71	Ալեքսանդրե I մեծ, Վրաց Թագավոր—
Ադարնասե (=Ատրնեբսեհ) պատրիկ—	68, 70, 75, 288
67	Ալի-բեկ—190, 191, 203
Ադարնասե (=Ատրնեբսեհ) Թագավոր	Ալի-խան—117, 118, 119, 124
կուրապալատ—39, 85	Ալի-խան-Հասան—Տես Հասան Ալի-խան
Ադերկ—32, 77	—142, 147, 189
Ադատ-խան—76, 107, 109, 134, 135,	Ալի-խան Շուքուր—200

\* Այս ցանկում, ինչպես և հաջորդ՝ տեղանունների ցանկում, մտել են միմիայն այն օրինակները, որոնք հիշվում են վրաց պարսկերենների բուն տեքստում: Լ.Մ.-Բ.:

Ալի-զուլի բեկ—27  
 Ալի-նալի խան—26  
 Ալի-Միրզա—27  
 Ալի-նալի-Միրզա—279  
 Ալի-շահ—125, 278  
 Ալի-սուլթան—161  
 Ախալցխեցի Իսահան—47, 48, 49  
 Ախալցխեցի Շավա—48, 49  
 Ախալցխեցի Վալերիան, գեներալ—209. հմմ.  
 Պապուկյան—235  
 Ախարանյան—13  
 Ահմադ ամիրա—41  
 Ահմադ խան—165, 166  
 Աղա-Մահմադ խան խոջա—191, 196,  
 202, 203, 208, 227, 228, 258  
 Աղա-Մելիք—170  
 Աղաջան-Յուզբաշ—124, 125  
 Աղաջուղի Սուլեյման—206  
 Աղա-բեյ—141, 142, 188, 199  
 Աղբաղա—15  
 Աղսարթան—68  
 Ամատունի—Տես Ամատունով  
 Ամատունով Հակոբջան—267  
 Ամբաղուկ—32  
 Ամբրոսի մետրապոլիտ—195  
 Ամիրխոսրի, Ամիրխոսրի—24, 118,  
 126, 127, 243  
 Ամիրխոսրի, Ամիրխոսրի Գիվի—26,  
 120, 164  
 Ամիրխոսրի, Ամիրխոսրի Գոգիա—255  
 Ամիրխոսրի, Ամիրխոսրի Նինիա—233  
 Ամիրխոսրի, Ամիրխոսրի Քոխա—73  
 Ամիր-Ասլան խան—123, 187  
 Ամիր-Մամասախլիսով—627. հմմ. Մա-  
 մասախլիսով  
 Ամիր-Միրզա—47  
 Ամիր-Շահ—53  
 Ամիրզոհան խան—20, 64, 68, 73  
 Ամիրոնյան—126, 128  
 Ամորանի—Տես Շահխարման  
 Այդար-բեկ—25  
 Անգրեան առաքյալ—266  
 Անգրոնիկաշվիլի Պատա—258  
 Անեբ—285

Անհաղթ Դավիթ—161, 257. հմմ. Դա-  
 վիթ Անհաղթ  
 Աննա, Վրաց թագուհի, գուսար Սենե-  
 թերիմ Արծրունու—64  
 Անտոն 1, Վրաց կաթողիկոս—109,  
 200, 257  
 Աշիշ-բեկ—190  
 Աշխարհբեկ—110  
 Աշխարհբեկ Բեհրուլով—269. Տես Բեհ-  
 րուլով  
 Աշխարհբեկ մելիք—65, 169  
 Աշոտ—219  
 Աշոտ մեծ—39  
 Աշոտ Ողորմած (Շնորհալի?) Բագրա-  
 տունի—270  
 Աջուկա—64  
 Առաքել պատմագիր (Դավրիժեցի)—183.  
 Առաքել տեր—185  
 Ասամ—71  
 Ասլան Ղափլանիշվիլի—249  
 Ասլան փաշա—70, 73, 76  
 Ասուր—71  
 Ասրաթա—165. Տես Հասրաթ  
 Ասփազուր—35  
 Ավագ—13  
 Ավագ աթարակ—49, 50, 51  
 Ավալիսշվիլի Սուլոմոն—231  
 Ավալիսշվիլի Քալխոսրո—26  
 Ավանան—31  
 Ավատիք Իզմիրցի—Տես Ավատիք Իզ-  
 միրցի  
 Ավարցի Օմար-խան—189  
 Ավատիք Իզմիրցի—276  
 Ավատիք մելիք—165  
 Ավերբան Մազաթով—276. Տես Մա-  
 ղաթով Վալերիան  
 Ավթանդիլ, Ջուրաբի որդի, մելիք—169  
 Ավթանդիլ, մելիք Սոմխիթի—145  
 Ավթանդիլ Փալավանդիշվիլի—27  
 Ավչար Ճատալի խան—200  
 Ավարբիսով—265  
 Ատրնեբան—Տես Աղարնասե  
 Արարատեցի (= Արարատյան) Արամ  
 Բողզանովի—217  
 Արբել—284

Արզամ—34  
 Արզուզ—42  
 Արխատուկ—100  
 Արզութա—245  
 Արզութաշվիլի, Արզութասշվիլի—78,  
 120, 125, 244  
 Արզութաշվիլի, Արզութասշվիլի Բե-  
 ժան—245  
 Արզութաշվիլի, Արզութասշվիլի Հով-  
 սեփ—203, 231, 245  
 Արզութաշվիլի, Արզութասշվիլի Մի-  
 թել—190, 191, 202  
 Արզութաշվիլի, Արզութասշվիլի Սո-  
 լոմոն  
 Արզության—Տես Արզութաշվիլի, Ար-  
 ղութասշվիլի  
 Արզութով—231. հմմ. Արզության  
 Արզուն-խան—51  
 Արմազ—37  
 Արմազեկի—32, 33, 34  
 Արման շահ—294  
 Արշակ Թագ.—32  
 Արշակ որդի Արշակի—32  
 Արշակ որդի Միրզանի—32  
 Արշակունի, Արշակունիանի, Արշակու-  
 նիներ—32, 34, 35, 40, 77, 78  
 Արշիլ, Կախիթի թագավոր—27, 70, 99  
 Արշիլ, Վրաց թագավոր—38  
 Արսեն Իզախիսեցի—256  
 Արսեն կաթ.—98, 244  
 Արտազ, Արտակ Թագ.—32  
 Արտաշան (ա Արտաշես) Թագ.—33  
 Արտավազ—292  
 Արտեմ Արարատյան—217. հմմ. Արա-  
 րատեցի Արտեմ  
 Արութիան—165  
 Արութիան Գասպարի—108  
 Արքայանիներ—42  
 Ափուղ-Մահմադ-փաշա—108

Բաալ—283, 284, 285  
 Բաբխան շահ, զ'ան—203, 204, 205,  
 206, 223, 228, 229, 230, 231, 232,  
 234, 236, 275, 276  
 Բաբխա—284, 285  
 Բագրատ աթարակ—55

Բագրատ Ապուշ—40  
 Բագրատ Իմերեթի թագավոր—16, 55,  
 62, 72, 75  
 Բագրատ կույր—73  
 Բագրատ Վրաց Բագրատունիների նա-  
 խանայր—71  
 Բագրատ IV, Վրաց թագավոր—40, 41,  
 68  
 Բագրատ V, Վրաց թագավոր—13, 14,  
 15, 52, 53, 70  
 Բագրատ VI, Վրաց թագավոր—16, 18  
 Բագրատ VII, Վրաց թագավոր—64  
 Բագրատիոնի, Բագրատիոնների, Բագ-  
 րատունի, Բագրատունիք—40, 71,  
 77, 85, 254, 255, 270  
 Բաղիմ-բեկ—136  
 Բաղուրի—Տես Բայանզուր  
 Բաղուկ—32, 23  
 Բաթու-զ'ան—50  
 Բակուր [Վարդա]—37  
 Բակուր—38, 39  
 Բակուրիսան Գրիգոր—41  
 Բահման-խան—130, 134, 135, 136,  
 138, 139, 143, 144, 146  
 Բահրամ Ջուրին—302  
 Բահր-Ջուրիսյաններ—298  
 Բաղասար քերակ.—183  
 Բայազիթ սուլթան—61  
 Բայազիթ խոնթաբ—15  
 Բայանզուր—27  
 Բաշինջաղ'ելով—266  
 Բաստամով—265, 266  
 Բարաթանք, Բարաթաշվիլիներ—15, 78.  
 Բարաթով Կիկոլա—235  
 Բարդոս—31  
 Բարզուղիմես առաք.—102  
 Բարտոմ Թագ.—32  
 Բաբար—77, 226  
 Բաբար Թագ.—25, 26, 27  
 Բեբուկա—Տես Բեբուկ, Բեհրուկ  
 Բեբուկ Խոջա—268  
 Բեբուկով, Բեբուկովներ—268  
 Բեբուկով Խոջա—268  
 Բեգթարեկ—165  
 Բեզուլ—255  
 Բեզբորոզկա էշի.—195

Բեժան Արդութաշվիլի—245  
 Բեյ—283, 284, 285. հմմ. Բաալ, Բիլ  
 Բեյուս—284  
 Բեհրութ, Բեհրութովներ—266  
 Բեհրութով Աշխարհբեկ—269  
 Բեհրութով Դարչիա—229, 253  
 Բեհարին Գարաշվիլի—257, 258, 259.  
 հմմ. Գարաշվիլի Բեհարին  
 Բեհրուս նալբանդ—244  
 Բեքբա—51  
 Բեքբա-գահն—51  
 Բեքբա—62  
 Բեքբա Ջաղ'ելի—51, 52, 73, 76  
 Բիլ—Տես Բաալ, Բեյ  
 Բիվրիտիանի—Տես Բյուրաայան  
 Բյուրաայան—33  
 Բորալ—71  
 Բորաբար—47  
 Բորբար—294. հմմ. Արուրեբբ  
 Բուզուրդ միրզա—208, 235  
  
 Գարաշվիլի—121  
 Գարաշվիլի Բեհարին—257, 258, 259  
 Գարրիել հայ—258  
 Գարրիել Ճղ'ոնդեղելի—70  
 Գարրիել, պատրիարք Հայոց Երուսա-  
 ղեմի—217  
 Գարրիել Բամոնյեզ—Տես Բամոնյեզ—268  
 Գազելի—78  
 Գազիկ թագ. Կորեկյան—40, 68  
 Գախանա—Տես Գայանե  
 Գամբեկել—46  
 Գայանե—36  
 Գայիոս Թաղաշվիլի—256, 276, Տես  
 Թաղաշվիլի Գայիոս  
 Գաշիոս—82  
 Գասպար Պեչատուրով—218  
 Գասպարաշվիլի Արութինա—108 — Տես  
 Գասպարյան  
 Գասպարյան Հարություն—108  
 Գարմիանացիք—44  
 Գեղեվանիշվիլի Իոնա—195  
 Գեորգ ս.—256, 266, 268, 269  
 Գեորգ բ. Թելեթեցի—236, 277  
 Գեուրդ-աղա—258  
 Գեբասիմ, Գեբասիմոս մետրապոլիտ—  
 194

Գիլաբ—54  
 Գիլաբ [Թավրիթ]—75  
 Գիորգի արքայազն, Գիորգի XII (XIII)  
 Վրաց թագավոր—166, 178, 179, 189,  
 191, 200, 203, 204, 208, 227, 228,  
 229, 231, 245, 253  
 Գիորգի I, Վրաց թագավոր—40  
 Գիորգի II, Վրաց թագավոր—41  
 Գիորգի III, Վրաց թագավոր—43, 44,  
 45, 113  
 Գիորգի IV, Վրաց թագավոր Հաշա—  
 48, 49, 50  
 Գիորգի V, Վրաց թագ., Գայծառ—52  
 Գիորգի VI, Վրաց թագավոր, Կրտսեր  
 —13  
 Գիորգի VII, Վրաց թագավոր—14, 15,  
 53, 54, 70  
 Գիորգի VIII, Վրաց թագավոր—55, 68,  
 75  
 Գիորգի X, Վրաց թագավոր—19, 20,  
 63, 76  
 Գիորգի XI, Վրաց թագավոր—21  
 Գիորգի Գոչիա, Իմերեթի թագավոր—25  
 Գիորգի Իմերեթի թագավոր—70  
 Գիորգի, որդի Դեմետրի, արքայազն  
 —72  
 Գիորգի Թուս—46  
 Գիորգի Շավմեղիշվիլի—236, 259.  
 Տես Շավմեղիշվիլի  
 Գիորգի Տիցիշվիլի—203, 228, Տես Տի-  
 ցիշվիլի  
 Գիվի Ամիլախվարի—120, 164  
 Գիվի Ամիլախվարի Շահ Դուլի Խան—  
 267, Տես Ամիլախվարի  
 Գիվի Ջուղաշվիլի—166. Տես Ջուղա-  
 ղաշվիլի  
 Գլախա Նաթիշվիլի—256. Տես Նաթի-  
 շվիլի  
 Գլուրջիկ Մալաբիա—227  
 Գոգազլա—13  
 Գոգիա Ամիլախվարի—255. Տես Ամի-  
 լախվարի  
 Գոգիա Իմերցի—235  
 Գոգեթի—251  
 Գոշիկ վանական (=Գոշ Միթիար)—98

Գոստաշարաշվիլի Դավիթ—235  
 Գորաշվիլի Նինիա Թավրեզ—233  
 Գորգասալ Վախտանգ—38, 79  
 Գորջասալ—165  
 Գուգուզիշ Իվ. Վաս. գեն—204, 206, 207,  
 223, 233, 234  
 Գուգան Տայեցի—45, 46  
 Գուրամ մամիալ—71  
 Գուրգեն Կուրապալատ—39  
 Գուրգեն Տուրաշվիլի—165  
 Գուրգենիա Միրզա Էնկուրիաշվիլի—  
 177, 189, 200. Տես Էնկուրիաշվիլի  
 Գուրիել, Գուրիելյան—16, 52, 70  
 Գուշկով Ս. Ա. գեն.—229  
 Գվանցա—50  
 Գվարամ իշխանաց իշխան—39, 40  
 Գվարամ կուրապալատ—39  
 Գվարամ մամիալ—39  
 Գրիգոր Բակուրիսձե (=Գրիգոր Բա-  
 կուրյան) 41  
 Գրիգոր, Երուզուլի եպիսկոպոս—195  
 Գրիգոր Լուսավորիչ, Գարթեզ—38, 98,  
 99, 161, 265, 267  
 Գրիգոր կաթ. Սսի—99  
 Գրիգոր Կեչարեցի—98  
 Գրիգոր, պատրիարք Հայոց Կ. Պոլսի—  
 276  
 Գրիգոր Սանուրով—269. Տես Սանուրով  
 Գրիգոր, Տաթևացի—93, 94, 98  
  
 Դադիան-Գուրիելյան—52  
 Դադիանի, Դադյան, Դադյաններ—16,  
 20, 21, 70  
 Դադիանի Դարեջան—134  
 Դադիանի Վարդան—46  
 Դան—71  
 Դանիել, պատրիարք Հայոց Կ. Պոլսի,  
 Կաթողիկոս ամենայն Հայոց—203,  
 204, 208, 231, 232  
 Դավիդով, գեն.—278  
 Դավիթ, Ալեքսանդր I-ի որդի—68  
 Դավիթ Անհաղթ—161, 257  
 Դավիթ Ապուշ—40  
 Դավիթ, Ասրնեբսեհի որդի—71  
 Դավիթ Արզվիթցի—253

Դավիթ արքայազն, Գիորգի XII (XIII)  
 Թագավորի որդի—190, 191, 202,  
 203, 232, 241  
 Դավիթ Գարեսյեցի—205  
 Դավիթ Գոստաշարիշվիլի—235  
 Դավիթ Էնկուրիցի—203, 204, 232  
 Դավիթ Կոնստանտինի որդի, թագ.—16  
 Դավիթ Կորեկյան—67  
 Դավիթ Հավել-Դարյան—182, 183  
 Դավիթ Հերեթի թագավոր—40  
 Դավիթ Նարին—50, 51  
 Դավիթ II Շինոզ, թագ.—42, 255  
 Դավիթ Սոսյան—47, 48  
 Դավիթ փիլիսոփա—99  
 Դավիթ բ.—250, 257  
 Դավիթ Օրբելյան—230. Տես Օրբելյան  
 Դավիթ VI թագ.—52  
 Դավրիշ-Մահմուդ—16, 17, 68  
 Դարեջան Դադիանի—134  
 Դարեջան Թագուհի—70, 73, 202  
 Դարչի, Դարչիա Բեքութ—204, 229,  
 244, 245, 253, 254  
 Դեզիս-Իմեղի—72  
 Դեմետրի արքայազն, Ալեքսանդր Իմե-  
 ռեթի թագավորի որդի—53, 70  
 Դեմետրի գանձարանապետ—45  
 Դեմետրի I Վրաց թագավոր—43, 45  
 Դեմետրի II Վրաց թագավոր, Ինքնա-  
 զոհ—51, 72  
 Դեմետրի Օրբելիանի—119, 134. Տես  
 Օրբելիանի  
 Դեմուրչան-ալի—132  
 Դերոկ—34  
 Դեպոստոս Գրոկո—256  
 Դեպոստիան Իջուլ—75  
 Դեպոստիան Շերմազան—75  
 Դեպոստիան Վախուշտ—75  
 Դինար Թագուհի—40, 67  
 Դիոսկուրոս—251  
 Դուլաձե Իսեհ—208  
 Դոմենտի կաթողիկոս—65  
 Դոնգուզի-օղլի—205  
 Դոսիթեսոս Նեկրեսեցի—256  
 Դուրա-Խան բեկ—187, 198  
 Դվինցի Նիափորա—35, 37

- Փոփոխականներ—184
- Եզրագրություն—257
- Եզրագրություն—42, 45
- Եզրագրություն—184
- Եզրագրություն Արաշիձե—227. Տես Արաշիձե
- Երեմիա պատգամներ—217, 218
- Երեմիա Արմենոս—218
- Երեմիա Ա. Պ., գեո.—276, 277, 278
- Երեմիա ա. ե., կաթողիկոս—204, 208, 232
- Զատի Էջիկազա—165
- Զատի Քարխնիշի—177
- Զատի Ղափլանի որդի—107
- Զատի մելիք—13
- Զատի Օրբելիանի—120, 130, 134, 135, 136, 138, 143
- Զագեն—37
- Զաղա Քարխնիշի—130
- Զարափոփ Օհանյան—266, 268
- Զարդե—33, 34
- Զաքարիա Լալախանաշի—256. Տես Լալախանաշի
- Զաքարիա Մաղինաշի—99, 164, 257. Տես Մաղինաշի
- Զաքարիա Մխարրաձե—13, 46, 47, 48, 50, 245
- Զաքարիա Չերքեզ—165
- Զենդ-Քյարիմ-խան—176
- Զերդալի-խան—136, 142
- Զուրաբյալան—125
- Զուրար Էրիսթավիտի—143
- Զուրար մելիք—169, 241, 243
- Զուրար Մելիքով—267
- Զուրիա—165
- Զրկինյան—269
- Էզնատե Օնիսիմի որդի Մարտոփոփեցի—256
- Էդրոս—31
- Էյզուզ—45
- Էլենա—40, 217
- Էլիփթեր Ալավերդի—244, 246
- Էլիզբար—145
- Էնակոլոփաշի Միրզա Գուրգինա—177, 189, 200
- Էսախա իշխան—15

- Էրաստ Ղափլանիշի—65
- Էվգեն Աբաշիձե—227
- Էրեկի I Քազավոր Վրաց—24, 25, 64, 69, 76
- Էրեկի II Քազավոր Վրաց—107, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 141, 146, 164, 165, 166, 169, 188, 189, 190, 199, 200, 201, 202, 212, 226, 227, 228, 235, 244, 245, 248, 255, 258. Տես Երակի II
- Էրիսթավի Շանշե—255
- Էրիսթավիտի Չուրար—143
- Բազենոս—102
- Բալի-բեկ—124, 125
- Բաղաշի Քայրոս—256, 276
- Բաղի-բեկ—143
- Բամազ-խան—26, 65, 66, 76
- Բամազ մուրադ—127, 128
- Բամազ-շահ—16, 17, 18, 26, 61, 62, 65, 68, 69, 70, 72, 75, 76, 172, 173, 288
- Բամազաշի—121
- Բամար Քաղ. Իմերեթի—70
- Բամար Քաղուհի (Քազավոր)—45, 46, 47, 48, 49, 218, 245, 255, 293
- Բանդուշ—51
- Բավրեզ Գորշի—233
- Բավրիմ—55
- Բավրիմ-Գիլաք—75
- Բարգամոս, Բարգամոսյան—Տես Քորզոմ, Քորզոմյան
- Բարխնիշի Չաղա—130, 177
- Բարխնիշի Շիոշ—255
- Բարշ—31
- Բելիթցի Գեորգ (Գեուրգ) քահ.—236, 277
- Բեմուր-Լենգ—13, 14, 15, 53, 55, 75, 271. հմմ. Լանգ-Քեմուր
- Բեյմուրազ արքայազն—204, 203, 271, 284, 285
- Բեյմուրազ Կախեթի տեր—19, 20, 68, 69, 73, 76
- Բեյմուրազ II Քազավոր Վրաց—99, 100, 109, 118, 119, 120, 122, 123,

- 126, 127, 128, 129, 130, 131, 134, 135, 136, 138, 139, 164, 169, 172, 188, 225, 226, 226, 244, 245, 258
- Քեոզորոսի կյուրակի—26, 288
- Քորզոմ, Քորզոմյան—31, 35, 83
- Քորեցի—44
- Քոփանշի բաշ—190
- Քուժանիշի Շիոշ—255
- Քուժանով Օթար—110
- Քուրբանյան—298
- Փղալան, Պարսից Քաղ.—32
- Խասե Մաշաբևի—121
- Խրրահիմ փաշա—26
- Խրրահիմ Ամիր-Ասլան խան—187
- Խրրահիմ խան—165, 170, 179, 180, 189, 190, 191, 198, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 227, 228, 229, 232, 233, 276
- Խրրահիմ շահ—172
- Խրրահիմ սուլթան—126
- Խզնատիոս—99
- Խզնատիոս—Տես Էզնատե
- Խեսե Դուլաձե—203. Տես Դուլաձե
- Խեսե Քաղ.—26, 165, 172
- Խեսե իշխան—53
- Խյոմիթցի Ավատիք (Ավետիք)—276
- Խյոմիթցի Արսեն—256
- Խմամ-դուլի-խան—117, 169
- Խշխանիկ Քաղուհի—39, 67
- Խոանե Աբաշիձե—40
- Խոանե աթարակ—49
- Խոանե Ախալցխեցի—47, 48, 49
- Խոանե Գորեցի, հայ—235
- Խոանե կաթողիկոս, ժամանակակից Դավիթ Շիոնդի—43
- Խոանե կաթողիկոս, ժամանակակից Քամար Քաղուհու—47
- Խոանե, հայր Քավթարի—45
- Խոանե Մանգլիշի Սասկաձե—264
- Խոանե Մխարրաձե—46, 47
- Խոանե, Մոխրանի տեր—179, 189, 201, 205
- Խոանե, որդի Գիորգի—191, 203

- Խոանե, որդի Դավիթ Օրբելիանի—230, 244, 245
- Խոանե, որդի Լիպարիտ Օրբելի—41, 44
- Խոանե սարգար—255
- Խոանե Պետրիժի—161
- Խոբ—37
- Խոնա Գեղեվանիշի—195
- Խոնա Պելաշի—241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 258, 259
- Խոսեբ Արղութաշի—Տես Լովսեփ Արղության
- Խոսելիանի Էզնատե (Իզնատիոս) Օնիսիմի որդի—256
- Խովանե Ղափլանի որդի—107, 206
- Խովանե Պենտելենց—149
- Խովանե Օրբելիանի—143
- Խորամ—64
- Իջու—62
- Իջու Դիասամիձե—75
- Իսահակ—99. Տես Սահակ
- Իսահակ—71
- Իսաղ-փաշա—26, 65, 70, 74, 164, 169
- Իսկանդար փաշա—17
- Իսմայելացի—44
- Իսմայիլ շահ—16, 72, 76
- Իսմայիլյան—298
- Իվանե Աղրուզայի որդի—15
- Իվանի Մխարրաձե—46, 47, 49, 53
- Իրակի II, Վրաց Քազավոր—99, 100, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180. Տես Էրեկի II
- Լարան—251
- Լաղարով Ղազար ք.—265
- Լալա—235
- Լալա-փաշա—73
- Լալախանաշի Չաքարիա—256
- Լանգ-Քեմուր—13, 14, 15, 53, 55, 75, 271, հմմ. Բեմուր-Լենգ
- Լաշա-Գիորգի—48, 50. Տես Գիորգի Լաշա
- Լարաձե Պետրի—219, 235
- Լեկանոս—31



Լեոն, Լեվան Արաշիձե—226, 229  
 Լեոն, Լեվան արքայազն, Էրեկլե 11-ի որդի—179, 231  
 Լեոն, Լեվան թագավոր Կախեթի—17, 68, 75, 99  
 Լեոն, Լեվան Լոռեցի—235  
 Լեոն, Լեվան Յուզբնի որդի—208  
 Լեվոնի տոմար—103  
 Լիսաննգի Նիսիարի Տիսոնովիչ, մայր—208, 233  
 Լիպարիտ Օրբելի—40, 41, 45  
 Լուսբասր թագ.—16, 17, 62, 72, 75

Խաթուն—190  
 Խաչատուրով Գասպար—218  
 Խելաշվիլի Իոնա—253, 259  
 Խիկար 184  
 Խոթամիսշվիլի Ռեվադ—145  
 Խոշակ—13, 50, 51.—Տես Խվաշագ  
 Խոջա-Նազար 266  
 Խոջա Փարուխ—267  
 Խոջա Ադա Մահմադ խան — Տես Ադա-Մահմադ խան խոջա  
 Խոջա-խան—117, 129  
 Խոջա մելիք Բերուբով—169, 202, 268  
 Խոսրո Ղուլարադաս—20  
 Խոսրով թագ. 35, 38  
 Խոսրով Գարտավելյան—298, 299, 300, 301, 302, 303, 304  
 Խոսրովանուշ թագուհի—270  
 Խոսրովյաններ—37  
 Խորագյան 298  
 Խորանելի—Տես Խորենացի  
 Խորաշան թագուհի—20  
 Խորենացի Մովսես—161, 283, 284, 285  
 Խորշեդ—292  
 Խուզինով—268  
 Խուլ Մուրվան—39, 253—Տես Մուրվան խուլ  
 Խուս—284  
 Խուսուր-Բուլղա—51, 52  
 Խվարեշան թագուհի—68

Կասս—32  
 Կասիմ—39

Կավկասոս—31, 83  
 Կարապետ պարոն—221  
 Կարապետ ս.—213, 268  
 Կատարինե—255  
 Կատրամիզե, Կատրոնիկա—42, 43  
 Կիկոլա Բարաթով—235. Տես Բարաթով  
 Կիսլեբեգի, Տես—Կոտլյարեգի—235  
 Կիրելի Յիցիշվիլի—27. Տես Յիցիշվիլի  
 Կիրիոն կաթ.—98  
 Կոմարովսկի—269  
 Կոնստանտին Արզրիթցի—253  
 Կոնստանտին կայսր Հունաց—252  
 Կոնստանտին արքա (պարոն) Կախեթի—25  
 Կոնստանտին արքայազն (=Մահմադ-դուլի խան)—25, 69  
 Կոնստանտին III, թագավոր Գարթլի, 61  
 Կոնստանտին, սալթուկեցի—128, 244  
 Կոնստանտին, տեր Մուխրանի—126  
 Կոստանդին, Կոստանտին, թագավոր Ափխազաց—39, 69  
 Կոստր.—35. հմմ. Խոսրով  
 Կոտլյարեգի գեներ.—235, 275  
 Կորիկի, Կվիրիկի թագավոր—41  
 Կվիրիկի քորիկոզ Կախեթի—40, 67  
 Կվիրիկի թագավոր հայոց—68  
 Կրասովսկի գեներ.—279

Հարեթ—31  
 Հակոբ (Իոր)—37  
 Հակոբ Ակնեցի (Անգեղ?)—98  
 Հակոբ Մծրնա հայրապետ—265  
 Հակոբյան Ամատունով—267  
 Հակովբոս առաքյալ—217  
 Համազասպ թագ.—34  
 Հայկ—31, 37, 283, 284, 285, հմմ. Հասս  
 Հայկազունք—160, 161, 284  
 Հասս—Տես Հայկ  
 Հասոյան—Տես Հայկազունք  
 Հաջի-խան—118  
 Հաջի-Չալար—129, 130, 131, 132, 133, 134, 138, 139, 140, 141, 142, 143, 154, 170, 173, 188, 225, 226

Հասան Ալիխան—142, 177  
 Հասան-բեկ—16, 17  
 Հասան-խան—277, 278, 279  
 Հասան-Միրզա արքայազն—126, 129, 145  
 Հասրաթ—165. հմմ. Ապաթա  
 Հարություն Գասպարյան—108  
 Հարություն վաճառական—165. հմմ. Արութինա  
 Հեղինե—40  
 Հեղինե սրբ.—217. հմմ. Էլենա  
 Հերակլ արքա Վրաց—306. Տես Էրեկլե, Իրակլի  
 Հերակլ կայսր Հունաց—253  
 Հերոս—31, 83  
 Հովհան Մանդակունի—99  
 Հովհան Ոսկերեբան—93, 113  
 Հովհան Որոտնեցի—98  
 Հովհան Օձնեցի—98  
 Հովհաննես Կարբեցի, Կաթողիկոս—246. հմմ. Օհանես  
 Հովհաննես Մկրտիչ—213, 267  
 Հովսեփ Արղուբյան—195, 203, 231, 232, 245  
 Հուսեյն-Ալիխան—189, 200, 204, 226  
 Հուսեյն խան Բազվի—233  
 Հուսեյն զան—21  
 Հուսեյն Ղուլի, խան Երևանի—189, 200, 208, 277  
 Հուսեյն սարաքյալ—233  
 Հռիփսիմե սրբ.—36

Ղազարով, Ղազարովներ—268, 269  
 Ղազան-զան—52  
 Ղազար Հազարով—265  
 Ղազար Ջահկեցի կաթող.—93, 94, 98, 103  
 Ղահրաման, սուլթան Եսթրաղյալի—178  
 Ղայթմազաշվիլի Փիլիպպե—99, 100, 200  
 Ղայկ—284, հմմ. Հայկ  
 Ղաջար Մահմադ խան—173, 179, 180, 187, 199  
 Ղափլան—107  
 Ղափլան Օրբելիանի—122, 123, 124  
 104—21

Ղափլաններ, Ղափլանիշվիլի—255, 269  
 Ղափլանիշվիլի Ասլան—249  
 Ղափլանիշվիլի Էրաստ—65  
 Ղափլանիշվիլի Քայխուրդ—26, 27, 66, 78  
 Ղրղր-Արսլան—47  
 Ղիասաղզին սուլթան—50  
 Ղիլիզդո—70  
 Ղուարդարե աթարակ—13, 16, 62  
 Ղուարդարե աթարակ—73, 76  
 Ղուբասար—45  
 Ղուղովիչ—Տես Գուղովիչ—233  
 Ղութլոով, Ղութլոովներ—267  
 Ղուլարադաս Խար—20  
 Ղուլաման խան—200  
 Ղուլամուլի խան—189  
 Ղուկաս կաթող.—102, 203, 231

Ճավնավաձե Ալ. գեներ.—279  
 Ճղոնդիզի Գաբրիել—70  
 Մադաթով գեներ.—276, 277, 279  
 Մադինաշվիլի Ջաքարիա—257  
 Մայաքիա Գլորջիձե—227. Տես Գլորջիձե  
 Մալուք—13  
 Մահրանու—298, 300, 302  
 Մահմադ—253  
 Մահմադ-Ալի-խան, որդի Բարախանի—207, 232  
 Մահմադ-բեկ, որդի Խաթունի—190  
 Մահմադ [Դավթիշ]—68  
 Մահմադ-Էմին-բեկ—165  
 Մահմադ-խան—190  
 Մահմադ-խան Գյանջայի—165, 189, 200  
